



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



# 2019 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



**ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

**ԵՐԵՎԱՆ 2020**

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 14

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.... 16

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ..... 16

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 31

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ..... 37

1. Համագործակցությունը հանրային մարմինների հետ..... 37

2. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրագրողների և փաստաբանների հետ..... 40

ԳԼՈՒԽ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՑԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ..... 43

1. Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ հանրային վստահությունը և միջազգային գնահատականները ..... 44

2. Պաշտպանի համագործակցության նոր ձևաչափը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հետ..... 47

3. 2019 թվականի ընթացքում Պաշտպանի իրականացրած ծրագրերը ..... 48

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ..... 51

1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը..... 51

2. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ ..... 52

ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 55

ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 62

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... 62

1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ.. 62

1.1Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելը..... 62

1.2Սասնակի կենսաթոշակ նշանակելը..... 64

1.3Կենսաթոշակատուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի վճարումը ..... 70

1.4Մոցիալական ապահովության իրավունքի իրացման սահմանափակումներ միջազգային համաձայնագրերում անհրաժեշտ կարգավորումների բացակայության պատճառով ..... 71

1.5Փաստացի աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում չհաշվառելը..... 73

1.6Աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելը ..... 78

1.7Կենսաթոշակի անկանխիկ վճարման հետ կապված խնդիր .....	81
1.8ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարումը.....	82
1.9Սոցիալական ապահովության համակարգում իրավունքների խախտումներ ոչ պատշաճ (թերի) վարչարարության հետևանքով և իրազեկման պակասը՝ որպես խախտումների հիմնական պատճառ	
85	
2. Սոցիալական ապահովության իրավունքն աշխատավայրում դժբախտ պատահարների, հիվանդության դեպքում.....	87
2.1Մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի սահմանափակումը.....	87
2.2Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցումը.....	90
3. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը .....	92
3.1Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու հարցում երեխայի հայր և մայր ծնողների համար տարբերակված կարգավորումներ.....	92
3.2Երեխայի ծննդյան նպաստի վճարման կարգի և օրենքով նախատեսված ժամկետների վերաբերյալ իրազեկման պակասը.....	94
3.3Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման կարգի և ժամկետների հետ կապված պրակտիկայում հանդիպող այլ խնդիրներ.....	95
3.4Օտարերկրյա պետությունում ծնված երրորդ կամ հաջորդ երեխաների ծննդյան կապակցությամբ Հայաստանում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու գործընթացում առաջացող խնդիր.....	96
4. Սոցիալական աջակցության իրավունք.....	99
4.1Ընտանիքների անապահովության գնահատումը.....	99
4.2Նպաստի իրավունքից օգտվելիս գազի սահմանված չափաքանակն անցնելը .....	103
4.3Ավանդների փոխհատուցում .....	104
4.4ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների փոխհատուցման խնդիր.....	106
4.5Անօթևանների կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ .....	108
ԳԼՈՒԽ 2. ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԹ	112
1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի սահմանափակելը .....	112
2. Սեփականության իրավունքի սահմանափակումը գործարքի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում չկատարելու հետևանքով .....	120
3. Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելը .....	121
4. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հատուցումը. 124	
5. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցումը.....	127
6. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան հատկացնելը .....	131



7. Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցումը և բնակավայրերի բնակիչների իրավունքների պայահովումը.....	133
8. Սահմանամերձ բնակավայրերի վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում .....	135
9. Քաղաքաշինական նորմերը և կանոնները չպահպանելու հետևանքով գույքային իրավունքների խախտումը .....	138
<b>ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b> .....	140
1. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը.....	140
2. Գործադուլի իրավունքի սահմանափակումը.....	143
3. Աշխատանքային իրավահարաբերություններում արհմիությունների դերի բարձրացումը.....	146
4. Աշխատանքային իրավունքների ոստահարման դեպքեր.....	149
5. Աշխատանքային իրավունքների ոլորտում առկա գործնական այլ խնդիրներ.....	162
6. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության բավարար չափանիշների բացակայությունը .....	167
7. Ոստիկանության ծառայողի նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և նոր աշխատանքի անցնելու հնարավորության սահմանափակումը.....	168
8. Գործատուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման օրենսդրական խնդիրները .....	171
<b>ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b> .....	174
1. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները նախադպրոցական կրթական հաստատություններում .....	175
2. Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հարցը .....	178
3. Հանրակրթական ուսումնական հաստատություն երեխայի ընդունելության ընթացակարգերի ոչ լիարժեքությունը .....	181
4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը.....	182
5. Կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով.....	185
6. Ներառական և հատուկ կրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի հասանելիությունը.....	188
7. Բողոքներ հանրակրթական ուսումնական հաստատություններում դրամահավաքի և այլ անօրինական գործողությունների վերաբերյալ .....	190
8. Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ինչպես նաև ջեռուցման խնդիրներ .....	191
9. Չրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում.....	195

10. Մանդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում  
202

ԳԼՈՒԽ 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ..... 204

1. Անվճար բժշկական օգնության և սպասարկման կարգավորումներն օրենքով չնախատեսելը 204

2. Խտրական վերաբերմունքը պացիենտների նկատմամբ..... 205

3. Պալիատիվ բուժօգնությունը..... 207

4. Բժշկական գաղտնիքի պահպանումը ..... 209

5. Բժշկական օգնության հասանելիության խնդիր..... 210

6. Անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության հետ կապված խնդիր..... 212

7. Չարորակ ուռուցքաբանական հիվանդությունների բուժօգնության ոլորտի խնդիրներ..... 214

8. Պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետության խնդիր ..... 217

9. Իրազեկվածության պակասը կամ բացակայությունը՝ որպես իրավունքների խախտմանը նպաստող պայման ..... 219

10. Պացիենտին դեղորայքով չապահովելը, անվճար տրամադրվող դեղորայքի որակը և հիմնական դեղերի ցանկի ընդլայնման հետ կապված խնդիրներ ..... 220

11. Միրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններ ..... 223

12. Ստոմատոլոգիական բժշկական օգնությունը պետական պատվերի շրջանակներում կամ արտոնյալ պայմաններով ..... 224

ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 226

1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայությունը ..... 226

2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը, շրջակա միջավայրի մշտադիտարկման պետական միասնական քաղաքականությունը ..... 228

3. ՓՇԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը..... 231

4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ ..... 233

ԲԱԺԻՆ 5. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ..... 238

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների մասին անձանց պատշաճ չճանուցելը..... 238

2. Պարտապանի՝ օրենսդրությամբ սահմանված մեկնարկային գնից ցածր գին ունեցող միակ բնակարանն արգելանքից չհանելը..... 243

3. Կատարողական վարույթի շրջանակներում բռնազանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելը և բռնազանձում տարածելը..... 245

4. Իրավահաջորդներին կատարողական վարույթին մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայությունը..... 246

5. Պետական մարմինների միջև տեղեկատվության ոչ պատշաճ փոխանակումը և դրա բացասական ազդեցությունը մարդու իրավունքների վիճակի վրա .....	247
6. Կատարողական թերթի պարզաբանման պահանջով հարկադիր կատարողի՝ դատարան չլինելը 249	
7. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միասնական պրակտիկայի բացակայությունը մի շարք հարցերի առնչությամբ.....	252
<b>ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ</b> .....	255
<b>ԲԱԺԻՆ 7. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b> .....	258
1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա.....	258
2. Էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցուցադրումը ցերեկային ժամերին.....	261
3. Սոցիալական ցանցերում վիրավորանքի, արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքը.....	262
4. Անձնական տվյալների պաշտպանությունը «Դատալեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում .....	268
<b>ԲԱԺԻՆ 8. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ</b> .	270
<b>ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ՕՐԵՆՄԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	272
1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը 272	
2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան .....	281
3. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը .	284
4. «Փաստացի քրեական հետապնդման» վտանգները և անձի պաշտպանության երաշխիքները .	289
5. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը.....	293
6. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրները .....	296
7. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու պրակտիկան.....	299
8. Քրեական գործի շրջանակներում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքի պրակտիկան.....	306
9. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործումը և դրանց չարաշահման վտանգը քրեական դատավարությունում.....	308
10. Քրեական դատավարությանը մասնակցող, ինչպես նաև հանցագործության մասին հաղորդում տվող անձանց պաշտպանությունը .....	313

11. Քրեական գործով վարույթի ընթացքում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտությունը.....	317
12. Մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցությունները ձայնագրելու և որպես ապացույց քրեական գործում օգտագործելու պրակտիկան .....	319
13. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան.....	323
14. Գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների անլիարժեքությունը .....	330
<b>ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶՍՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՄԱՀՄԱՆԱՓՈՒՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ</b> .....	339
1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները.....	339
2. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու թերի կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները .....	341
<b>ԳԼՈՒԽ 3. ԱԶՍ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ</b> .....	344
1. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան....	344
2. Դատարանի կողմից մեղադրյալի էլքը ՀՀ-ից թույլատրելու դեպքում ՄԷԿՏ համակարգում տվյալներ չմուտքագրելու ոչ իրավաչափ պրակտիկան.....	347
3. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը և կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու ոչ իրավաչափ պրակտիկան.....	352
4. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ ՀՀ-ից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան.....	355
<b>ԳԼՈՒԽ 4. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ</b> .....	357
1. Փաստաբանի մասնագիտական գործունեությունը ու նրա դերի ճիշտ ընկալումը հասարակությունում .....	357
2. Իրավաբանական օգնության իրավունքը և փաստաբանի մատչելիությունը՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի այլ իրավունքների ապահովման երաշխիք .....	359
3. Մեղադրյալի և փաստաբանի հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառելու, որպես ապացույց քրեական գործի շրջանակում օգտագործելու ոչ իրավաչափ պրակտիկան.....	365
<b>ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ</b> .....	369
1. 2008 թվականի մարտի 1-ի 10 գոհերի մահվան վերաբերյալ և դրան փոխկապակցված մյուս քրեական գործերի քննությունը .....	369
2. 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների կապակցությամբ քննվող քրեական գործերը և դրանցում ներգրավված անձանց մասնակցությամբ այլ գործեր .....	375
3. Իրավապաշտպանների նկատմամբ թույլ տրված արարքների առնչությամբ քրեական վարույթները.....	378
4. Զանգվածային լրատվության միջոցների գործունեության երաշխիքների ապահովումը.....	379

ԲԱԺԻՆ 9. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆ: ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ  
.....386

1. Հավաքի մասնակից՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների գործնական երաշխավորման խնդիրների շարունակականությունը..... 388
2. Սահմանված ժամկետներից ավելի անձին անազատության մեջ պահելը. ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը ..... 390
3. Ազատությունից զրկված անձի իրավունքը՝ իր նախընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը ..... 391
4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ ..... 393
5. Հավաքների ընթացքում տեղի ունեցած դեպքերի արդյունավետ քննության ապահովումը..... 397
6. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու ընթացակարգերի իրավաչափ նպատակի չպահպանումը..... 400
7. Երեխաների մասնակցությունը հավաքներին. «երեխայի լավագույն շահը» և «զիտակցված մասնակցությունը»՝ որպես իրավունքի իրական երաշխավորման նախադրյալներ ..... 402
8. Հավաքների ազատության երաշխավորման հարցում Ոստիկանության պրակտիկայի կատարելագործմանն ուղղված ռազմավարական փոփոխությունների անհրաժեշտությունը ..... 404
9. Իրավունքահեն մոտեցումը և մարդու իրավունքների կրթության առանցքային դերը հավաքների ազատության երաշխավորման ոստիկանական պրակտիկայում..... 410
10. Հավաքների ազատությունն ամրագրող ներպետական օրենսդրության համապատասխանությունը միջազգային մոտեցումներին..... 412

ԲԱԺԻՆ 10. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.....417

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ..... 421

1. ՀԴՄ-ների կիրառության կանոնների խախտման համար տուգանքների անհամաչափությունը և անհատական մոտեցման բացակայությունն օրենքով ..... 421
2. Հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի աշխատանքների թափանցիկության ապահովումը ..... 423
3. Մաքսակետերում գոյացող հերթերը և պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելը..... 425
4. Հարկային և մաքսային ստուգումների թափանցիկության ապահովումը..... 426
5. Ապրանքը մաքսագերծելիս գործարքի գնի մեթոդը չկիրառելը..... 428
6. Մտավոր սեփականությամբ պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավատերերի իրավունքների երաշխավորումը ..... 429
7. Գրքերի բոլոր տեսակների օտարումն ավելացված արժեքի հարկից ազատելը ..... 431
8. Հակամենաշնորհային կոմպլանսի ինստիտուտի ներդրումը որպես գործարարության պաշտպանության երաշխիք ..... 432

9. Հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի օրենսդրությամբ կարգավորման բացակայություն.....	435
10. Շրջիկ և շրջածախ առևտրի կազմակերպում.....	436
<b>ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	438
1. Մատուցված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը.....	438
2. Խմելու ջրի մատակարարման խափանումներ .....	441
3. Առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով ջրամատակարարում իրականացնող ընկերության կատարած վերահաշվարկի հետ անհամաձայնություն.....	442
4. Ֆիզիկական ներգործության միջոցով գազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում առանց մեղքի ապացուցման բաժանորդին պատասխանատվության ենթարկելը.....	443
5. Էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցումներ և Էլեկտրամատակարարող ընկերության ներկայացրած վճարման հաշիվների հետ անհամաձայնություն .....	444
6. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ.....	446
<b>ԲԱԺԻՆ 11. ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b> .....	447
1. Դատարան ներկայացվող ածանցյալ և հիմնական պահանջների ընդդատությունը և փոխկապակցվածությունը .....	447
2. Մնանկության գործերով վարույթների հետ կապված խնդիրներ.....	449
3. Խտրականությունը սեռական կողմնորոշման հիմքով.....	451
4. Աղմուկի հետևանքով համակեցության կանոնների խախտումը.....	452
5. Հանրային ուղևորատար տրանսպորտի գերծանրաբեռնվածության, սպասարկման որակի և այլ խնդիրներ.....	455
6. Ճանապարհների անբարեկարգությունը .....	457
7. Արտաքին լուսավորությամբ ապահովելու անհրաժեշտություն.....	458
8. Թափառող շների վնասագերծման և ստերիլիզացման խնդիր .....	460
<b>ԲԱԺԻՆ 12. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ</b> .....	462
<b>ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ</b> .....	464
1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ.....	464
2. Հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը .....	466
3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում .....	468
<b>ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ</b> .....	471
1. Զինվորական հաշվառման և գորակոչի կազմակերպման գործընթացը .....	471

2. Զորակոչված քաղաքացիներին ծառայության վայրեր նշանակելու գործընթացը.....	474
3. Զինվորական հաշվառման փաստաթղթեր ստանալու իրավունքը .....	476
4. Զինվորական գրքույկում մարտերին մասնակցելու վերաբերյալ գրառում չկատարելը.....	477

**ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ .....**

1. Առողջական վիճակի պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության խնդիրները.....	479
2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը .....	485
3. Զինապարտ քաղաքացիների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը.....	485
4. Բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների հայեցողության սահմանը.....	488
5. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը .....	491

**ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ՁՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ .....**

1. Անընդհատ և շարունակական կրթության իրավունքը .....	493
2. Նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու իրավունքը .....	495
3. Կրթությունը շարունակելու նպատակով տարկետում ստանալու համար ուսումնական հաստատությունից տեղեկանք ներկայացնելու պահանջը.....	497
4. Ընտանեկան պայմաններից ելնելով գորակոչից տարկետում ստանալու իրավունքը.....	498

**ԳԼՈՒԽ 5. ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ.....**

1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում .....	501
2. Զինծառայողների առաջնահերթ հետազոտման, փորձաքննության և բուժման իրավունքը.....	506
3. Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը.....	507
4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը .....	514
5. Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը.....	515

**ԳԼՈՒԽ 6. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ .....**

1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը.....	516
2. Պայմանագրային զինծառայողներին շաբաթ օրը ծառայության ներգրավելը, այլ զորամաս տեղափոխելը և գործուղելը.....	519
3. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը .....	523
4. Առողջական վիճակով պայմանավորված զինվորական ծառայությունից արձակելը.....	525
5. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս.....	527

**ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ .....**

.....	533
-------	-----

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ	533
2. Իրավունքի գերակայության ներքո ամուր կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գրավական	536
3. Հրաման չկատարելու և զինգրքույկը կորցնելու համար կարգապահական տույժ կիրառելու պրակտիկան	541
4. Պարտադիր զինծառայողին մշտական տեղակայման գորամասից այլ գորամաս տեղափոխելու պրակտիկան	546
<b>ԳԼՈՒԽ 8. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ</b>	549
1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային իրազեկումը	549
2. Զինված ուժերում բռնության արգելքը	554
<b>ԳԼՈՒԽ 9. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ</b>	557
1. Կանանց կարևորությունը զինված ուժերում	557
2. Զինված ուժերում կանանց իրավունքների երաշխիքները	559
3. Զինված ուժերում կանանց ներգրավվածությունը և առաջխաղացումը	563
<b>ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b>	569
1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը	569
2. Զինծառայողների կենսաթոշակի իրավունքի ապահովումը	582
3. Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու պրակտիկան	588
4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը	589
5. Արտոնություններ զինծառայողների և նրանց ընտանիքների համար	594
<b>ԲԱԺԻՆ 13. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b>	597
1. Կանանց նկատմամբ բռնություն և ընտանիքում բռնություն	599
1.1 Ընտանիքում բռնության դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական թերի կարգավորումներ կամ կարգավորումների բացակայություն	602
1.2 Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ	608
1.3 Պետության կողմից տրամադրվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն	610
1.4 Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն	617
1.5 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական պատրաստվածություն և իրազեկման պակաս	619
2. Թրաֆիքինգ և շահագործում	622
3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ	623



4. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին .....	626
5. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ .....	629
6. Աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ .....	631

**ԲԱԺԻՆ 14. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՎ ՆԱԽՏԵՍՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ .....**

1. Այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ.....	640
1.1 Մինևույն հաստատությունում տարբեր խնդիրներ ունեցող երեխաների գտնվելը.....	641
1.2 Ընդունելության համար օրենսդրությամբ անհրաժեշտ համարվող փաստաթղթերի ոչ լիարժեք լինելը.....	643
1.3 Շենքային և բնակության պայմանները .....	644
1.4 Բժշկական օգնություն և սպասարկում .....	649
1.5 Սննդի կազմակերպում .....	651
1.6 Վերաբերմունքը հաստատությունների սաների նկատմամբ.....	654
1.7 Հաստատության սաների դիմում կամ բողոք ներկայացնելու իրավունքը .....	657
2. Մանկական աղքատության հիմնախնդիրը .....	658
3. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը .....	663
4. Երեխայի ինքնության իրավունքը.....	668
5. Խնամակալության և հոգաբարձության մարմինները (հանձնաժողովները).....	671
6. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելը և նրանց աջակցություն տրամադրելը 674	
7. Ապահիստիտոցիոնալացումը և ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը .....	676
8. Երեխաների որդեգրման գործընթացը և ոլորտի խնդիրները .....	684
9. Երեխայի լավագույն շահերի ապահովումը ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթների ընթացքում .....	689

**ԲԱԺԻՆ 15. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՎ ՆԱԽՏԵՍՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ.....**

1. Հասարակությունում առկա կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ .....	700
2. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգը 704	
3. Ֆիզիկական միջավայրի մատչելիություն .....	706
4. Փոխադրամիջոցների մատչելիություն.....	711

5.Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիություն.....	714
6.Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին.....	718
7.Կրթության իրավունք.....	721
8.Առողջապահական ծառայությունների մատչելիություն.....	730
9.Աշխատանք և զբաղվածություն.....	733
10. Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք....	736
11. Մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաների համար կացարանների և զբաղվածության ապահովումը.....	739
12. Քաղաքական իրավունքներ.....	740
13. Հաշմանդամություն ունեցող կանայք.....	743
14.Հաշմանդամության սահմանման ոլորտում առկա խնդիրներ.....	745
<b>ԲԱԺԻՆ 16. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....</b>	<b>749</b>
1.«Տարեց» ամբողջական հասկացության բացակայությունը.....	749
2.Տարեցների սոցիալական ապահովության խնդիր.....	750
3.Օրենսդրական խնդիրներ տարեցների խնամք իրականացնող հաստատություններ տեղավորվելու հետ կապված.....	752
4.Մշտադիտարկման այցեր տարեցների խնամք իրականացնող հաստատություններ.....	755
4.1Տարեցների բնակության պայմանները տուն-ինտերնատներում.....	755
4.2Տարեցների անձնական խնամքը տուն-ինտերնատներում.....	758
4.3Տարեցների սնունդը, բժշկական օգնությունն ու սպասարկումը տուն-ինտերնատներում.....	759
4.4Մշակութային կյանքին մասնակցությունը, զբաղվածությունը, կապն արտաքին աշխարհի հետ, ինչպես նաև բողոք ներկայացնելու իրավունքը.....	759
4.5Միջանձնային հարաբերությունները, խնամյալների հանդեպ բռնությունը և վատ վերաբերմունքը, եկամուտների պաշտպանված չլինելը.....	761
4.6Տուն-ինտերնատների աշխատակազմը.....	762
<b>ԲԱԺԻՆ 17. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....</b>	<b>764</b>
1. Ընդհանուր տեղեկություն փախստականների և ապաստանի վերաբերյալ.....	764
2. Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղությունները.....	766
3. 2019 թվականի հիմնական զարգացումները.....	767
4. 2019 թվականին արձանագրված հիմնական խնդիրները.....	768

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը տարիների բարդ աշխատանքի ու անաչառ կեցվածքի շնորհիվ արձանագրել է կայացման բարձր նշանոտ ու շարունակաբար աճող միջազգային ու հանրային հեղինակություն:

2019 թվականին վերահաստատվեց Մարդու իրավունքների պաշտպանին շնորհված ամենաբարձր «A» միջազգային կարգավիճակը՝ դրանով հավաստելով գործունեության լիարժեք համապատասխանությունը Փարիզյան և միջազգային այլ սկզբունքներին համապատասխան: Ընդ որում, միջազգային անկախ հանձնախումբը 2019 թվականի զեկույցում գովեստի է արժանացրել այն, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը բարդ իրավիճակներում գործունեություն ծավալելիս զգայուն հարցերի վերաբերյալ հնչեցնում է հրապարակային գնահատականներ:

Այսօր Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես Օմբուդսմանի ու մարդու իրավունքների ազգային հաստատության գործունեությունն ընդգրկում է երկրի իրավական ողջ համակարգը և իրականացվում է ինչպես անհատական կամ խմբային բողոքների քննարկման, այնպես էլ մարդու իրավունքների համակարգի կատարելագործմանը նպաստելու հիմնարար ուղղություններով: Այս առաքելությունն իրականացվում է Պաշտպանի սահմանադրական կարգավիճակի ուժով՝ առաջնորդվելով անաչառ ու ապաքաղաքական աշխատանքի հիմնարար սկզբունքներով:

Մարդու իրավունքների պաշտպանի շարունակական զարգացման մասին են վկայում Պաշտպանին հասցեագրվող բողոքների և դրական լուծում ստացած գործերի աճը, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական և գործնական երաշխիքները: 2019 թվականի Պաշտպանի ինստիտուտի գործունեությունն իրականացվել է հասարակական կազմակերպությունների, միջազգային գործընկերների և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության և իրավունքի զերակայության սկզբունքի հիման վրա:

2019 թվականը մեր երկրում նշանավորվեց դատաիրավական, քրեակատարողական, սոցիալական ապահովության և մի շարք այլ ոլորտներում, կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում բազմաձևավալ բարեփոխումներ նախատեսող հիմնարար ռազմավարությունների ընդունմամբ: Այդ փաստաթղթերով ամրագրված նպատակներն այնպիսին են, որ անմիջականորեն առնչվում են մեզանից յուրաքանչյուրին: Տարին հարուստ էր նաև դատական իշխանությանն առնչվող գործընթացներով, այդ թվում՝ հանրային լայն ուշադրության ներքո գտնվող դատավարություններով:

2019 թվականի ընթացքում մարդու իրավունքների համակարգի մեծագույն մարտահրավեր էր վիրավորանքը, արժանապատվությունը վիրավորող և ատելության խոսքի աճը: Սոցիալական մեղիայի մշտադիտարկումը վկայում է, որ սոցիալական ցանցերը լի են վիրավորանքով ու իրար նսեմացնող «քննարկումներով»: Ընդ որում, առավել ագրեսիվությամբ են առանձնանում առերևույթ կեղծ օգտատերերի ու խմբերի գրառումները, որոնց թիվը զգալիորեն ավելացել է: Այս վիճակը սկզբունքորեն է անթույլատրելի, այն խաթարում է համերաշխության մթնոլորտը երկրում և միասնականությունը հասարակությունում:

Պետք է հարգանքով վերաբերվել յուրաքանչյուր մարդու արժանապատվությանը. այն անխախտելի է, մեզանից յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների անփոխարինելի հիմքն է: Այս կերպ է ձևավորվում համերաշխությունը հասարակությունում ու ապահովվում փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Երկրի ժողովրդավարական զարգացման հիմնարար ցուցիչներից է խոսքի ազատությունը: Այս բարձր արժեքի

պաշտպանությունը բոլորիս պարտականությունն է: Սրա հետ էլ ուղղակիորեն կապվում է այլակարծության խթանումը: Դա մեր երկրին հիմա հատկապես անհրաժեշտ է:

Մեր երկրում արձանագրված ժողովրդավարական շարունակական զարգացումների արդյունքները պետք է ծառայեցնել հանրային իշխանության համակարգն ինստիտուցիոնալ ամուր հիմքերի վրա դնելուն՝ շարունակաբար ամրապնդելով քաղաքացիական հասարակությունը և երկրի քաղաքացիների վստահության վրա: Քաղաքացիների վստահությունն էլ հենց իշխանության հիմքն է՝ լինելով պետության ամրության հիմնարար գրավականը: Բոլորիս խնդիրն է համատեղ ջանքերով նպաստել այդ վստահության ամրապնդմանն ու ամրության պահպանմանը: Պետք է բացառվի արձանագրված ձեռքբերումներից ցանկացած հետնահանջ:

Այս ամենով հանդերձ, երկրում պետք է երաշխավորված լինի պետական իշխանության իրականացումը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանմանն ու հավասարակշռմանն հիման վրա: Այդ իշխանություններից յուրաքանչյուրը պետք է հարգանքով վերաբերվի մյուսին և առաջնորդվի միայն իրեն վերապահված կարգավիճակի հրամայականով ու սահմաններով: Այս մոտեցումը հնարավորություն կտա բոլոր ջանքերն ուղղել իրավական պետության և ժողովրդավարական զարգացման որակապես նոր փուլի հաստատմանը:

Թվարկված հիմնարար նպատակները պահանջում են, որպեսզի երկրում տեղի ունեցող յուրաքանչյուր գործընթաց անվերապահ հիմնված լինի իրավունքի գերակայության և մարդու իրավունքների առաջնահերթության վրա:

Այս հիմնարար գաղափարները պետք է լինեն նաև Հայաստանի Հանրապետության իրավապաշտպան ողջ համակարգի զարգացման հիմքում:

**ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

**ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

Հիմնադրման օրից սկսած Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն անցել է իրավական զարգացման մի քանի փուլ՝ ենթարկվելով շարունակական կատարելագործման: Այդ փուլերից յուրաքանչյուրը հիմնված է եղել ժամանակի հրամայականի, քաղաքացիների ու աշխատանքի իրական արդյունքներ ապահովելու գաղափարի վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության զարգացման համար շրջադարձային նշանակության կարևորություն ունեցան 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն այն մասով, որ վերաբերում էին Պաշտպանի գործունեությանն ու անկախության երաշխիքներին: Այս փոփոխությունները և դրա հիման վրա 2016 թվականին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական նոր օրենքը որակապես նոր հիմքեր ապահովեցին մեր երկրի իրավական համակարգում Պաշտպանի տեղի ու դերի համար: Այդ իրավական նոր փոփոխություններն էին, որ ժամանակի պահանջներին համապատասխան հնարավորություն ապահովեցին զարգացնելու աշխատանքի նոր ուղղություններ (մարդու իրավունքների կրթություն, սեփական գործունեության արդյունքների վրա հիմնված օրենսդրական նախագծի մշակում և այլն):

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Պաշտպանին դիմելն առանձին հոդվածով ամրագրվեց իբրև սահմանադրական բացարձակ իրավունք՝ սահմանվելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ 2-րդ գլխում: Ավելին, Սահմանադրությամբ սահմանվեց Պաշտպանին վերաբերյալ առանձին գլուխ, որով նախատեսվեցին Պաշտպանի գործառույթներին և լիազորություններին, ընտրությանը, ինչպես նաև գործունեության երաշխիքներին վերաբերող կարգավորումներ: Սահմանադրության փոփոխությունների հիմքով 2016 թվականին ընդունվեց և 2017 թվականին ուժի մեջ է մտավ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը<sup>1</sup>, որն ավելի բարձր իրավական ուժ ունի, քան մյուս օրենքները:

Օրենսդրական նշված փոփոխություններով ընդլայնվեցին Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության երաշխիքները, ինչպես նաև իրավասության ոլորտները: Օրինակ՝ նախատեսվեց, որ Պաշտպանը, բացի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դեմ ներկայացված բողոքներից, իրավասու է քննարկել նաև հանրային ծառայության ոլորտում գործող, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ հարցերը: Ամրագրվեց, որ Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և

<sup>1</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Օրենք:

պաշտպանություն իրականացնող մարմին: Նշված օրենսդրական փոփոխություններն առավել մանրամասն քննարկվում են Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ:

Կատարված փոփոխություններից հետո՝ 2018 թվականի հունիսի 13-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը: Դրանով նախատեսվել է, որ Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

Սկզբունքային կարևորության հարց է այն, որ այս նոր իրավական լուծումները հնարավորություն տվեցին ավել ուժեղացնել Մարդու իրավունքների պաշտպանի մասնագիտական մոտեցումները՝ աշխատանքին ներգրավելով բժիշկների, հոգեբանների, սոցիալական աշխատողների և այլն: Դրանից բացի, Պաշտպանի գործունեությանն առավել լայն ներգրավում ապահովվեց քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու անկախ մասնագետների համար:

Կոնկրետ իրավիճակների վերաբերող բողոքների ու դիմումների քննարկման ընթացքում արձանագրված գործնական խնդիրների հաշվառմամբ, քննարկվող փոփոխություններով առաջարկվել են հատուկ խմբերի անձանց վերաբերյալ դիմումների քննարկման օրենսդրական լուծումներ: Մասնավորապես, այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով Պաշտպանին դիմելու իրավունք ունեցող անձանց շարքում ամրագրվել են նաև ազատությունից զրկված անձանց և զինծառայողների մերձավոր ազգականներին: Այսպիսի լուծումը թույլ կտա գործնականում իրականացնել նշված խմբերի անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն՝ ապահովելով նրանց իրավունքների ենթադրյալ խախտումների դեպքում Պաշտպանի աջակցությունը ստանալու հնարավորությունը նաև այն դեպքերում, երբ վերջիններս հնարավորություն չեն ունենա անձամբ դիմելու Պաշտպանին: Այս նույն սկզբունքով, կարևոր էր նաև անձի իրավունքների պաշտպանության նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի դիմելու հասարակական կազմակերպությունների հնարավորության ամրագրումը:

## **1. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները**

Պաշտպանի գործունեության արդյունավետությունն ու աշխատանքի նոր ուղղությունների զարգացումը մեծապես պայմանավորված է նրանով, թե որքանով են ուժեղ դրա համար անհրաժեշտ երաշխիքները, գործունեության արդյունքներն ապահովող պայմանները:

Այդ երաշխիքները հատկապես ուժեղացվեցին 2017 թվականին՝ սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ նույնիսկ ապահովելով այնպիսի պայմաններ, որոնք յուրահատուկ են միջազգային առաջատար փորձի տեսանկյունից:

Նախ, կարևոր էր սահմանադրական օրենքի մակարդակով ամրագրելը, որ Պաշտպանի աշխատակազմում<sup>2</sup> պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների

<sup>2</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Աշխատակազմ:

վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ առանց Պաշտպանի գրավոր համաձայնությամբ: Ընդ որում, այս նույն պահանջը վերաբերում է նաև խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակներում Պաշտպանի հետ համատեղ աշխատող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին: Այս նոր լուծումը կարևոր է հատկապես բողոք ներկայացրած անձանց վստահության տեսանկյունից:

Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածով սահմանվեց առանձին հանցակազմ, որը պատասխանատվություն է նախատեսում Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, իսկ 2017 թվականից սկսած՝ նաև Պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

Սահմանադրությամբ և դրա հիման վրա ընդունված սահմանադրական օրենքով սահմանվեց Պաշտպանի ֆինանսական անկախության երաշխիքներ: Նախ, Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պետությունն ապահովում է Պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը:

Դրանից բացի, յուրաքանչյուր տարի Պաշտպանի և Աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

Պաշտպանի համար նախատեսված երաշխիքներից գատ, օրենսդրությամբ գործում է Աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքները: Մասնավորապես, սահմանադրական օրենքով սահմանվում է, որ նրանց նկատմամբ որևէ հիմքով քրեական հետապնդում հարուցվելու կամ նրան ազատությունից որևէ կերպ զրկելու դեպքում վարույթն իրականացնող մարմինն այդ մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել Պաշտպանին: Ավելին, ամրագրվում է նաև, որ Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձինք և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները կարող են բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ՝ միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:

Նշված երաշխիքներից գատ ներպետական օրենսդրությամբ նախատեսվում են Պաշտպանի և Աշխատակազմի գործունեության այլ երաշխիքներ, որոնք նպաստում են կառույցի լիազորությունների արդյունավետ իրականացմանը:

## **2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղությունները**

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ընդգրկել է երկու հիմնարար ուղղություն՝ կոնկրետ դեպքերով բողոքների ու դիմումների քննարկում և համակարգային խնդիրների լուծմանն ուղղված քայլեր: Վերջինն իր հերթին հետապնդում է նաև կանխարգելիչ նպատակ՝ բացառելու համար ապագայում իրավունքների խախտման դեպքերը:

Անհատական դեպքերի վերաբերյալ դիմումների ու բողոքների քննարկումներն իրականացվում են Օրենքով նախատեսված երկու հիմնարար ուղղությամբ՝ բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով: Հատկանշական է, որ նման դեպքերի ուսումնասիրման ընթացքում բարձրացվեն նաև համակարգային խնդիրներ: Անհատական դեպքերի քննարկման շրջանակում իրականացվում են Օրենքով

նախատեսված գործողությունները: Օրինակ՝ պարզաբանումներ են պահանջվում իրավասու պետական մարմիններից և կազմակերպություններից, իրականացվում են հարցերի՝ ներպետական և միջազգային վերաբերելի կարգավորումների վերլուծություններ և այլն: Իրականացված գործողությունները հետապնդում են Պաշտպանի սահմանադրական լիազորության՝ մարդու խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման իրականացում: Այս առումով անհրաժեշտ է արձանագրել, որ 2018 թվականի ընթացքում աճել է Պաշտպանին հասցեագրված բողոքների, ինչպես նաև դրական արդյունքով ավարտված գործերի թիվը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երկրորդ հիմնարար ուղղությունը համակարգային խնդիրների վերհանումն ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշումն է: Ինչպես արդեն նշվեց, նման խնդիրների հայտնաբերման հիմնական ուղղություններից է անհատական դիմումների քննարկումը: Այս առումով հատկանշական է, որ խնդրի համակարգային լինելու համար պարտադիր պայման չէ դիմումների մեծ քանակը, դա կարող է արձանագրվել նույնիսկ մեկ դիմումի քննարկման շրջանակում: Օրինակ՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին արձանագրված որոշումը կարող է նախանշել նաև օրենսդրական խնդիր:

### 2.1 Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման ոլորտում

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն իր բնույթով պետք է լինի նաև կանխարգելիչ: Անհատական դիմումների քննարկումից և օրենքով վերապահված այլ գործառույթների իրականացումից վերհանված խնդիրներին հաճախ կարիք է լինում ցուցաբերել ինստիտուցիոնալ մոտեցում: Այդ առումով Պաշտպանի գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում.
2. օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում.
3. մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին գրավոր կարծիքների տրամադրում.
4. Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում:

Այս հիմնական ուղղություններով աշխատանքն իրականացվում Պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն առնչվող սահմանադրական լիազորության շրջանակում: Սա թույլ է տալիս ոչ միայն նպաստել ներպետական օրենսդրության զարգացմանը, այլ նաև անհատական դիմումներից, մշտադիտարկումներից և այլ աղբյուրներից վերհանված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկել:

#### 2.1.1 Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում

Դեռևս 2017 թվականից գործադրվել է նոր պրակտիկա, որը ենթադրում է, որ մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ մշակվում են



օրենսդրական նախագծեր, դրանք շրջանառվում են իրավասու պետական մարմինների, ինչպես նաև համապատասխան հասարակական կազմակերպությունների շրջանակներում և ներկայացվում կառավարության և խորհրդարանի քննարկմանը:

➤ Կալանավորված անձանց տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ արգելքի համակարգի բարեփոխում

Պաշտպանը մշակել է օրենքների նախագծեր, որոնցով առաջարկվում է հետևյալը.

○ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների հետ արգելելը նախատեսել՝ որպես դատավարական հարկադրանքի միջոց,

○ նշված դատավարական հարկադրանքի միջոցը մինչդատական վարություն կիրառել միայն քննիչի պատճառաբանված միջնորդությամբ՝ դատախազի որոշմամբ կամ դատախազի սեփական նախաձեռնությամբ,

○ դատական քննության փուլում կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցը կիրառել դատարանի որոշմամբ,

○ սահմանել կալանքի տակ գտնվելու ընթացքում մերձավոր ազգականի հետ մեղադրյալի տեսակցությունն արգելելու հստակ հիմքեր,

○ դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառել միայն կալանավորված անձի այն մերձավոր ազգականի նկատմամբ, ում տվյալները հստակ նշված են որոշման մեջ,

○ նախատեսել դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառելու վերաբերյալ որոշումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարությին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկելու հստակ պահանջ,

○ նախատեսել քննիչի միջնորդությամբ կամ դատախազի նախաձեռնությամբ հարկադրանքի նշված միջոցի ժամկետի երկարացման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը վերանայելու և այդ մասին պատճառաբանված որոշում կայացնելու պահանջ,

○ դատավարական հարկադրանքի միջոցի հետագա կիրառման անհրաժեշտության վերացման դեպքում նախատեսել դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կողմից այն վերացնելու պարտականություն,

○ նախատեսել դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին որոշումներ բովանդակելու պահանջ:

➤ Փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու քրեականացում

Սույն նախագծով առաջարկվում է ընդլայնել փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար քրեական պատասխանատվության շրջանակները՝ պաշտոնատար անձից բացի որպես հանցակազմի սուբյեկտ ամրագրելով նաև ցանկացած այլ անձի, ով կխոչընդոտի փաստաբանի օրինական գործունեությանը:

Նախագծով առաջարկվում է նաև առանձին դրույթով պատասխանատվություն նախատեսել փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելու միջոցով:

➤ Մահմանադրական դատարանի որոշումների կատարում օրենսդրական փոփոխությունների միջոցով

Դեռևս 2018 թվականին Պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմերն իրականացրել են ՀՀ սահմանադրական դատարանի 2015-2016 թվականների որոշումների կատարման վիճակի համատեղ ուսումնասիրություն:

Այդ ուսումնասիրության արդյունքում մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ ուղղված Սահմանադրական դատարանի որոշումներում բարձրացված օրենսդրական բացերի ու թերությունների վերացմանը:

➤ Հեռուստատեսությամբ և ռադիոյով շահումով խաղերի հեռարձակման կարգավորում

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով կամ այլ օրենսդրական ակտով նախատեսված չեն հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման իրավական կարգավորումներ: Մինչդեռ, այդ իրավական բացը գործնականում կարող է դառնալ մարդու իրավունքների խախտման պատճառ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել է օրենքի նախագիծ, որով առաջարկվում է՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը փոփոխել այնպես, որ նման խաղերը հեռարձակել հնարավոր լինի միայն գիշերային ժամերին՝ 24:00-ից մինչև 06:00-ը: Առաջարկվում է նաև սահմանել, որ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հեռարձակողը պարտավոր է հրապարակել առկա զանգերի ծավալի և միացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ողջ եթերի ընթացքում տեղյակ պահել զանգի վճարովի լինելու մասին, և, դրա հետ մեկտեղ, սակագնի վերաբերյալ հավաստի ինֆորմացիան պետք է լինի տեսանելի կամ լսելի: Առաջարկվում է սահմանել նաև նախազգուշացում անչափահասների մասնակցության արգելքի վերաբերյալ:

➤ Հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտի ներդրումը որպես գործարարության պաշտպանության երաշխիք

Պաշտպանի աշխատակազմում մշակված օրենսդրական նախագծերի փաթեթով առաջարկվում է գործարարների շահերի պաշտպանության նպատակով ներդնել նոր ինստիտուտ՝ հակամենաշնորհային կոմպլաենս:

Այն հակամենաշնորհային օրենսդրության պահանջներին համապատասխանության ներքին ապահովման համակարգ է, որը սահմանվում է տնտեսվարող սուբյեկտի ներքին ակտով: Հակամենաշնորհային կոմպլաենսն ուղղված է հակամենաշնորհային օրենսդրության պահանջների պահպանմանը և խախտումների կանխարգելմանը:

Կոմպլաենսի՝ որպես հակամենաշնորհային քաղաքականության գործիքի ներդրումը մեր իրավական համակարգում հնարավոր է, օրինակ՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համապատասխան նոր լիազորության օրենսդրական ամրագրմամբ՝ սահմանելով հակամենաշնորհային պահանջների պահպանման արտաքին կանոններ, որոնք տնտեսվարողի համար իբրև հիմք կծառայեն արդեն ներքին միջոցառումներ սահմանելու համար՝ ուղղված հակամենաշնորհային քաղաքականության պահանջների պահպանման ընթացիկ վերահսկողությանը:

➤ Մտավոր սեփականությամբ պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավատերերի իրավունքների երաշխավորումը

Օրենսդրական ակտերի նախագծերի մեկ այլ փաթեթով Պաշտպանն առաջարկում է նախատեսել մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման գործընթացի վերաբերյալ գործերով դատարանը, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնում է եռօրյա ժամկետում: Հայցադիմումը

վերադարձնելու դեպքում այն կրկին ստացվելուց հետո դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է ոչ ուշ, քան այն կրկին ստացվելու հաջորդ օրը:

Առաջարկվում է նաև սահմանել, որ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ որոշում է մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման բաց թողնումը մաքսային մարմինների կողմից ժամանակավորապես՝ մինչև գործով վերջնական դատական ակտի կայացումը, կասեցնելու հարցը: Պետք է նաև սահմանել, որ պատասխանողի շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ դատարանը որոշում է կայացնում կասեցված ապրանքների մաքսային արժեքի հինգ տոկոսի չափով ապահովված գումարը պետական գանձապետական հաշվից դատարանի դեպոզիտ փոխանցելու մասին:

➤ Գրքերի բոլոր տեսակների օտարումն ավելացված արժեքի հարկից ազատելը

Պաշտպանի առաջարկած մեկ այլ օրենսդրական առաջարկությամբ նախատեսվում է գրքերի բոլոր տեսակների (այդ թվում՝ էլեկտրոնային) օտարումն ազատել ԱԱՀ-ից:

Մասնավորապես, առաջարկվում է ձեռագիր, տպագիր, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա զետեղված գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական կամ այլ բովանդակությամբ ստեղծագործության օտարումն ազատել ԱԱՀ-ից:

➤ Չինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին համար արտոնություններ

Աշխատակազմում մշակվել են ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծեր, որոնք վերաբերել են զինձառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական արտոնություններ տրամադրելուն.

○ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք վերապահել պայմանագրային զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինձառայողների և պարտադիր զինձառայություն անցնող զինձառայողների ընտանիքների անդամներին և մի շարք այլ կատեգորիայի անձանց,

○ մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալն աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ ստանալու հնարավորություն ընձեռել պայմանագրային զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինձառայողների և պարտադիր զինձառայություն անցնող զինձառայողների ընտանիքների անդամներին և մի շարք այլ կատեգորիայի անձանց,

○ աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրել ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինձառայողների ծնողներին և ամուսիններին՝ տարեկան մինչև 14 օր տևողությամբ,

○ աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (այսուհետ՝ քվոտա) սահմանել նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում լիազորված մարմնում հաշվառված և համապատասխան մասնագիտություն ունեցող անձանց համար,

○ աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման չափանիշ համարել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայողական պարտականությունները

կատարելիս կամ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամ հանդիսանալը և այլն:

**2019 թվականի ընթացքում ընդունվել են Պաշտպանի մշակած օրենքների նախագծեր և մշակվել են կառավարության որոշումների նախագծեր:**

➤ Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության կատարելագործում

Ընդունված փոփոխությունները միտված են եղել քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձի կապի ամրապնդմանը մերձավոր ազգականների հետ:

Փոփոխություններով, մասնավորապես, նախատեսվել է.

○ ազատազրկման դատապարտված և կալանավորված անձանց կարճատև և երկարատև տեսակցություններ, ինչպես նաև կարճատև մեկնումներ տրամադրելու հիմքում պետք է դնել ոչ թե անձի կատարած հանցագործության ծանրության աստիճանը, այլ հաշվի առնել վերջինիս անհատական վարքագիծը և ռիսկայնությունը,

○ կալանավորված անձանց համար երկարատև տեսակցության հնարավորություն,

○ մերձավոր ազգականների հետ կապն ապահովելու նպատակով՝ դատապարտյալին քրեակատարողական մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխելու օրենսդրական հիմք,

○ առանց խնամքի մնացած երեխա ունեցող դատապարտյալի համար կարճաժամկետ մեկնում տրամադրելու հնարավորություն՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով,

○ քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու խնդրանքի հիման վրա վերցված ժամանակավոր վկայականը կամ նույնականացման քարտը տրամադրելու պարտականություն ոչ միայն ազատազրկման դատապարտված, այլ նաև կալանավորված և ձերբակալված անձանց համար,

○ վերացվել է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց անջատ պահելու օրենսդրական կանոնը,

○ ստացիոնար բուժման մեջ գտնվելու ընթացքում անձի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի հետաձգման օրենսդրական պահանջ:

➤ Գնումների կազմակերպման գործընթացի հստակության ապահովումը

Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկի հիման վրա, Վարչապետի հանձնարարությամբ, Ֆինանսների նախարարությունը մշակել է կառավարության որոշման նախագիծ: Այլ հարցերի թվում ամրագրվել է, որ գնումների գործընթացում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցի մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրելով հայտնաբերված անհամապատասխանությունները:

➤ Ֆիզիկական անձանցից անձնական օգտագործման գույքն օտարելու դեպքում եկամտային հարկի գանձումը

Պաշտպանն առաջարկել է Հարկային օրենսգրքում.

○ ձեռնարկատիրական համարվող գործունեության հասկացությունը վերաձևակերպել և անձի կողմից անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման նույն

տեսակի գույքի օտարումը որպես ձեռնարկատիրական որակելու համար ամրագրել պարբերականության պայմանի առկայության պարտադիրությունը,

○ բացառել ըստ գույքի նշանակության տեսակների հարկման նկատմամբ առկա տարբերակված մոտեցումը (արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույք):

Այսպիսով, այս փոփոխությունների արդյունքում ֆիզիկական անձանց պատկանող գույքի, ինչպես նաև հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումը չի համարվի ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում և եկամտային հարկի հարկման բազան որոշելիս ֆիզիկական անձանց կողմից նշված գույքի օտարումից ստացվող եկամուտները կհամարվեն նվազեցվող:

➤ *Զինվորական կարգապահության ամրապնդման և ծառայողական քննության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանության նախագծեր*

Զինվորական կարգապահության ամրապնդման, ինչպես նաև ծառայողական քննության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով դեռևս 2017 թվականին Պաշտպանը մշակել և շրջանառել էր «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Հաշվետու տարում այն ընդունվել է, և օրենքում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

○ իրավախախտումը նախատեսվել է համարել ծանրացող միայն այն դեպքերում, երբ դատվածությունը հանված կամ մարված չէ.

○ սահմանվել է կարգապահական տույժի ենթարկվելու մասին հրամանին ծանոթանալու պատշաճ ընթացակարգ և զինծառայողի կողմից այն բողոքարկելու իրավունքի ապահովման նպատակով նախատեսվել է, որ կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Զինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում է նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները.

○ ծառայողական քննության ընթացքում զինծառայողների ընթացակարգային իրավունքների պաշտպանության նպատակով ամրագրվել է, որ ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին գրավոր բացատրում է օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները.

○ բողոքարկման արդյունքում զինծառայողին տրված կարգապահական տույժը հանելու կառուցակարգի հստակեցման նպատակով սահմանվել է, որ բողոքարկման արդյունքներով վերադաս հրամանատարը (պետը) հնարավորություն ունի գրավոր հրաման ընդունել զինծառայողին տրված կարգապահական տույժը չեղյալ ճանաչելու կամ ուժի մեջ թողնելու մասին:

*2.1.2 Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելը*

➤ Երեխաների և անգործունակ չափահասների՝ որպես պացիենտների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության և այլ իրավունքների վերաբերյալ

Սահմանադրական դատարանն ընդհանուր հիմք էր հանդիսացել այն, որ օրենսդրությամբ անձի օրինական ներկայացուցչի համաձայնությունն արդեն իսկ համարվում էր բավարար պայման երեխաների և անգործունակ չափահասների հոգեբուժական օգնության, այդ թվում՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու համար: Արդյունքում, խախտվում էին լսված լինելու և իրազեկված համաձայնությունը տալու նրանց իրավունքները:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունվարի 30-ի թիվ ՍԴՈ-1504 որոշմամբ<sup>3</sup> Սահմանադրությանը հակասող է ճանաչել երեխաների և անգործունակ չափահասների բուժման հարցերում վերջիններիս կարծիքը հաշվի չառնելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները:

➤ Ոստիկանության ծառայողի իրավունքների ապահովումը նրա նկատմամբ քրեական հետապնդման իրականացման դեպքում

Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարանն ներկայացված դիմումով ներկայացվել է խնդիրն առ այն, որ գործող օրենսդրությամբ ոստիկանության ծառայողի նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակում նա միաժամանակ զրկվում էր աշխատավարձից, սեփական նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և այլ պաշտոնի նշանակվելու հնարավորություններից, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանք կատարելուց:

Ստեղծված իրավիճակում ոստիկանության ծառայողը, վերջնական դատական ակտով մեղավորությունն ապացուցված չլինելու պարագայում, իր և ընտանիքի առաջնահերթ կարիքների բավարարման խնդրի առաջ էր կանգնում:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2020 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1507 որոշմամբ<sup>4</sup> Սահմանադրությանը հակասող է ճանաչել վիճարկվող կարգավորումները:

➤ Ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայությունը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով այն, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքով նախատեսված չէ դատարաններում գործերը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրական պահանջի պատշաճ ապահովման ճկուն մեխանիզմ:

Խոսքը վերաբերում է օրենսգրքի 9-րդ հոդվածին, որով միայն սահմանվել են դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի առնվող հանգամանքները: Նշված հոդվածով ամրագրված չէ ողջամիտ ժամկետում գործի դատական քննության խախտված իրավունքի վերականգնման օրենսդրական հնարավորությունը: Ստացվում է, որ օրենսդրական գործող կարգավորումների պայմաններում դատարանում գործի քննությունը կարող է տարիներով ձգձգվել և անհետևանք մնալ դատարանի համար, իսկ անձի համար առաջացնել սահմանադրական իրավունքների խախտում:

<sup>3</sup>Տե՛ս Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունվարի 30-ի թիվ ՍԴՈ-1504 որոշումը՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1504.pdf>:

<sup>4</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-1507 որոշումը՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1507.pdf>:

*2.1.3 Մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գրավոր կարծիքների տրամադրում*

2019 թվականի ընթացքում Պաշտպանին կարծիքի է ներկայացվել Սահմանադրական օրենքների, օրենսգրքերի և նոր կարգավորման առարկա ունեցող կամ ամբողջովին փոփոխվող օրենքների և այլ իրավական ակտերի 241 նախագիծ, որոնցից 143-ով ներկայացվել են թվով 780 նկատառում և առաջարկ՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները, ինչպես նաև ներպետական իրավական ակտերի կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան:

Հատկանշական է Պաշտպանի ակտիվ մասնակցությունը 2019 թվականի ընթացքում ռազմավարական ոլորտային փաստաթղթերի մշակմանը:

*2.1.4 Սահմանադրական դատարան հատուկ կարծիքներ ներկայացնելը*

Այս պրակտիկան ներդրվել է 2016 թվականից. Մարդու իրավունքների պաշտպանը դատարանին ուղղված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող դիմումների վերաբերյալ ներկայացնում է հատուկ դիրքորոշում (amicus brief):

2019 թվականին Պաշտպանը Սահմանադրական դատարան է ներկայացրել է 10 հատուկ դիրքորոշում:

Հաշվետու տարում Սահմանադրական դատարան ներկայացված դիրքորոշումները հիմնականում վերաբերել են՝

- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշման բողոքարկման օրենսդրական կառուցակարգերի բացակայությանը,
- գրավի կիրառմանը՝ որպես կալանքին այլընտրանք, այլ ոչ որպես ինքնուրույն խափանման միջոց,
- կալանքի վերաբերյալ որոշում կայացնելուն առնչվող օրենսդրությամբ հստակ դատավարական ժամկետների բացակայությանը և այլն:

2019 թվականին Պաշտպանը տպագրել և հրատարակել է 2018-2019 թվականներին Սահմանադրական դատարան ներկայացված Պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիրը<sup>5</sup>:

*2.2 Պաշտպանի միջազգային կոնվենցիոն կարգավիճակները*

Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնատար անձ է, որ ունի բնույթով բացառիկ միջազգային կոնվենցիոն կարգավիճակներ:

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ:

«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 13-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին:

<sup>5</sup>Տե՛ս «2018 – 2019 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիրը»

<https://ombuds.am/images/files/ae7a4051057f9cfca8cd65d5e9e81a15.pdf>:

### *2.3 Արտահերթ հրապարակային զեկույցներ, ուղեցույցներ և այլ փաստաթղթեր*

Պաշտպանի աշխատանքի հիմնարար սկզբունքներից է կատարված աշխատանքի հրապարակայնության և թափանցիկության ապահովումը:

Նման սկզբունքով աշխատանքի դրսևորումներից է առանձին թեմաներով արտահերթ զեկույցների, ուղեցույցների և այլ փաստաթղթերի հրապարակումը:

Զեկույցներում ներկայացվում են անհատական դիմումների և այցերի արդյունքում վեր հանված խնդիրներ, որոնք առավել խորությամբ ուսումնասիրվում և մանրամասն վերլուծության են ենթարկվում: Կատարված աշխատանքի հիման վրա իրավասու մարմիններին ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ, իսկ դրանց կատարման նկատմամբ իրականացվում է հետագա հետևողական մշտադիտարկում:

#### *2.3.1 Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ արտահերթ զեկույց*

Պաշտպանի աշխատակազմը մշտադիտարկման այցեր է իրականացրել Երևանի և մարզերի 201 ուսումնական և նախակրթական ուսումնական հաստատություն՝ 121 դպրոց և 80 մանկապարտեզ:

Հրապարակվել է արտահերթ զեկույց, որն արձանագրում է Հայաստանի դպրոցներում ու մանկապարտեզներում սանհանգույցների սանիտարահիգիենիկ պայմանների անբավարար վիճակը, տաք ջրի բացակայությունը, հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարությունների բացակայությունը, ինչպես նաև խմելու ջրից օգտվելու եղանակներն անընդունելի լինելը<sup>6</sup>:

#### *2.3.2 Եվրոպական միության իրավունքին ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխանության վերաբերյալ արտահերթ զեկույց*

Զեկույցում՝

○ ուսումնասիրվել են ԵՄ-ՀՀ համաձայնագրով նախատեսված՝ աշխատանքային իրավունքների պարտավորությունների շրջանակն ու բովանդակությունը.

○ իրականացվել է ՀՀ աշխատանքային օրենսդրության վերլուծություն՝ Եվրոպական միության աշխատանքային իրավունքում առկա չափանիշների լույսի ներքո՝ վեր հանելով դրանց տարբերությունները, առկա հակասությունների պատճառները.

○ մշակվել են առաջարկներ գործող ՀՀ աշխատանքային օրենսդրությունը Համաձայնագրով նախատեսված պահանջներին համապատասխանեցնելուն ուղղված անհրաժեշտ քայլերի ուղղությամբ<sup>7</sup>:

#### *2.3.3 Երեխաների և անգործունակ չափահասների՝ որպես պացիենտների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության և այլ իրավունքների վերաբերյալ արտահերթ զեկույց*

Զեկույցում արձանագրված է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ անձի օրինական ներկայացուցչի համաձայնությունն արդեն իսկ համարվում է բավարար պայման

<sup>6</sup>Տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը՝

<https://www.ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf>:

<sup>7</sup>Տե՛ս «Եվրոպական միության իրավունքին ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխանության վերաբերյալ» արտահերթ զեկույցը՝ <https://www.ombuds.am/images/files/e2d81a6b598cc4cbf523b51cc1fb4b2e.pdf>:



երեխաների և անգործունակ չափահասների հոգեբուժական օգնության, այդ թվում՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու համար: Արդյունքում, խախտվում են լաված լինելու և իրազեկված համաձայնությունը տալու նրանց իրավունքները:

Այս դեպքերում, սակայն, փաստացի նրանք պահվում և բուժվում են իրենց կամքին հակառակ, այսինքն՝ հարկադրաբար՝ դրանով իսկ մեխանիկորեն զրկվելով դատարանում հարկադիր բուժման հարցը բարձրացնելու հնարավորությունից<sup>8</sup>:

### *2.3.4 «Ոստիկանության ծառայողի իրավունքների ապահովումը նրա նկատմամբ քրեական հետապնդման իրականացման դեպքում» արտահերթ զեկույց*

Գործող օրենսդրությամբ ոստիկանության ծառայողի նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակում վերջինս միաժամանակ զրկվում է աշխատավարձի վճարման, սեփական նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու, ինչպես նաև այլ պաշտոնի նշանակվելու հնարավորություններից, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանք կատարելուց:

Արդյունքում, ոստիկանության ծառայողը, վերջնական դատական ակտով մեղավորությունն ապացուցված չլինելու պարագայում, իր և ընտանիքի առաջնահերթ կարիքների բավարարման խնդրի առջև է կանգնում<sup>9</sup>:

### *2.3.5 Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման սեղմագիր*

Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է 2018 թվականի տարեկան հաղորդման սեղմագիրը: Փաստաթղթում պարզ տարբերակով ներկայացված է տարբեր ոլորտներում առկա խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հիմնական առաջարկները:

Սեղմագրում տեղ են գտել վիճակագրական տվյալներ 2018 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեության վերաբերյալ, Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ռազմավարական զարգացման ուղղությունները և այլն:<sup>10</sup>

### *2.3.6 «2018 – 2019 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիր» տեղեկագիր*

Սահմանադրական դատարան հատուկ դիրքորոշումներ ներկայացնելու պրակտիկան ներդրվել է 2016 թվականից սկսած:

Դիրքորոշումները վերաբերում են գրավի՝ որպես կալանքին այլընտրանքային խափանման միջոցի կարգավորումներին, դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերի որոշակիությանը և որոշումների բողոքարկման ընթացակարգերին, աշխատանքի էական պայմանների փոփոխմանը՝ որպես աշխատանքային պայմանագրի լուծման հիմք և այլն<sup>11</sup>:

<sup>8</sup>Տե՛ս «Երեխաների և անգործունակ չափահասների՝ որպես պացիենտների ֆիզիկական եվ հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության և այլ իրավունքների վերաբերյալ» արտահերթ զեկույցը՝ <https://www.ombuds.am/images/files/f5dcd3eb211993d573b3aab9bc85ffd9.pdf>

<sup>9</sup>Տե՛ս «Ոստիկանության ծառայողի իրավունքների ապահովումը նրա նկատմամբ քրեական հետապնդման իրականացման դեպքում» արտահերթ զեկույցը՝ <https://ombuds.am/images/files/baebdf8240ed105ac51eb72b4fe8a4f9.pdf>

<sup>10</sup>Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման սեղմագիրը՝ <https://ombuds.am/images/files/65e47bb9cc0a1b202820d98080fd856f.pdf>:

<sup>11</sup>Տե՛ս «2018 – 2019 թվականներին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշումների սեղմագիր» տեղեկագիրը՝ <https://ombuds.am/images/files/ae7a4051057f9cfca8cd65d5e9e81a15.pdf>

*2.3.7 «Ջրամատակարարման ոլորտում սպառողների իրավունքների վերաբերյալ» ուղեցույց*

Ուղեցույցը մշակվել է Աշխատակազմի կողմից և վերաբերում է միայն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում կողմերի իրավունքներին և պարտականություններին:

Ուղեցույցը կազմվել է՝ հիմք ընդունելով Պաշտպանի աշխատակազմի դիտարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմումների և բողոքների ուսումնասիրության արդյունքները: Նպատակն է բարձրացնել սպառողների իրազեկվածության մակարդակը ջրամատակարարման ոլորտում<sup>12</sup>:

*2.3.8 «Գազամատակարարման ոլորտում սպառողների իրավունքների վերաբերյալ» ուղեցույց*

Ուղեցույցը մշակվել է Պաշտպանի աշխատակազմի կողմից և վերաբերում է միայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում կողմերի իրավունքներին և պարտականություններին: Այն կազմվել է՝ հիմք ընդունելով Պաշտպանի աշխատակազմի դիտարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմումների և բողոքների ուսումնասիրության արդյունքները:

Ուղեցույցի նպատակն է բարձրացնել սպառողների իրազեկվածության մակարդակը գազամատակարարման բնագավառում<sup>13</sup>:

*2.3.9 «Հարկ վճարողների հարկային ստուգումների իրականացման վերաբերյալ» ուղեցույց*

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ դեպքերում տնտեսվարողները տեղեկացված չեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ինչի արդյունքում հաճախ տուժում են հարկային վարչարարությունից, հարկային մարմինների կայացրած վարչական ակտերից, հարկային մարմիններում առկա քաջքշուկներից և այլն: Խնդիրը հատկապես առնչվում է հարկային մարմինների ստուգումներին:

Ուղեցույցի նպատակն է բարձրացնել հարկ վճարողների իրազեկվածության մակարդակը, հատկապես հարկային ստուգումների ոլորտում<sup>14</sup>:

*2.3.10 «Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների վերաբերյալ» ուղեցույց*

Ուղեցույցը ներառում է հարցերի պատասխաններ, որոնք կօգնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց լիարժեք իրացնել իրենց իրավունքները (ինչպես ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը, ու՛մ կարող է դիմել հաշմանդամություն ունեցող անձն իր իրավունքների պաշտպանության համար, ինչպես ս պաշտպանել իրավունքների վարչական և դատական կարգով և այլն)<sup>15</sup>:

<sup>12</sup>Տե՛ս «Ջրամատակարարման ոլորտում սպառողների իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/e85963fc669ee0ff95677b6a37abd139.pdf>:

<sup>13</sup>Տե՛ս «Գազամատակարարման ոլորտում սպառողների իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/562998b27eeecf270018ffeb3203bb30.pdf>:

<sup>14</sup>Տե՛ս «Հարկ վճարողների հարկային ստուգումների իրականացման վերաբերյալ» ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/04e4f6a893b0e7a2afa1be04d5147837.pdf>:

<sup>15</sup>Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/6b1240e8a415a6a64093981708d29cc3.pdf>:

*2.3.11 «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների վերաբերյալ» ուղեցույց*

Ուղեցույցում մանրամասն ներկայացված են՝

- Ի՞նչ է ընտանիքում բռնությունը,
- Որո՞նք են ընտանիքում բռնության տեսակները,
- Ինչպե՞ս ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը,
- Ի՞նչ կարող է անել աջակցության կենտրոնը եւ այլն<sup>16</sup>:

*2.3.12 «Պետական տարիքային կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ» ուղեցույց*  
*Ուղեցույցում մանրամասն նշվում են.*

- Ո՞ւմ պետք է դիմել կենսաթոշակ ստանալու համար,
- Ե՞րբ պետք է դիմել տարիքային կենսաթոշակ ստանալու համար,
- Որո՞նք են տարիքային կենսաթոշակ ստանալու պայմանները,
- Ի՞նչ պետք է նշվի դիմումում,
- Ինչպե՞ս ստանալ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը եւ այլն:<sup>17</sup>

*2.3.13 «Աշխատողների իրավունքների վերաբերյալ» ուղեցույց*

Ուղեցույցում մանրամասն ներկայացված են՝

- Աշխատողների իրավունքները,
- Գործատուների պարտականությունները,
- Ինչպե՞ս ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը<sup>18</sup>:

---

<sup>16</sup>Տե՛ս «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/d60e88d51cd786ea089b8f327568fb16.pdf>

<sup>17</sup>Տե՛ս «Պետական տարիքային կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ» ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/43a561e6d6f4118aac055f20bb855660.pdf>

<sup>18</sup>Տե՛ս «Աշխատողների իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/7b34d18bae3af252c627266d076e29c5.pdf>

## ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանի գործունեության կարևորագույն սկզբունքներից են թափանցիկությունը, հրապարակայնությունը, հանրության հետ հետադարձ կապի, ինչպես նաև հասարակության իրազեկվածության բարձրացման ապահովումը: Այդ սկզբունքների ամրապնդման համար 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմն իրականացրել է հանրային բնույթի մի շարք միջոցառումներ, ասուլիսներ, քննարկումներ, սեմինարներ, իրազեկման արշավներ առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության և հասարակությունում առկա կարծրատիպերի հաղթահարման նպատակով:

Մասնավորապես, Պաշտպանը «Դեմ եմ բռնությանը» կոչով նախաձեռնել է իրազեկման ծրագիր<sup>19</sup> ուղղված կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման հարցում Պաշտպանի դերին, ինչպես նաև օրենքի իրազեկմանը:

Արշավի շրջանակում սոցիալական ցանցերում ակտիվորեն տարածվել է «Դեմ եմ բռնությանը» կոչով լուսանկարի շրջանակ, որին միացել են պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, քաղաքացիներ՝ իրենց սոցիալական ցանցերի էջերի լուսանկարներն ուղեկցելով այդ կոչով: Սոցիալական ցանցերում իրազեկման արշավն ուղեկցվել է #դեմեմբռնությանը, #againstviolence հեշթեգերի ներքո:

Եվրոպական միության «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության և մանկական հիմնադրամների աջակցությամբ իրականացված արշավի շրջանակում նկարահանվել և հրապարակվել է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ օրենքի իրազեկման տեսանյութ<sup>20</sup>: Հրապարակվել է նաև ընտանիքում բռնության բացասական հետևանքների մասին պատմող կարճ տեսանյութ<sup>21</sup>՝ համերաշխ ընտանիքի օրինակով, որտեղ կինն ու տղամարդն ունեն հավասար հնարավորություններ և պարտականություններ, իսկ սիրո և համերաշխության մթնոլորտում մեծանում են երեք երեխա, որոնցից մեկն ունի հաշմանդանություն: Մա նաև ուղերձ է բազմազավակությունն ու ներառականությունը խրախուսելու:

Արշավին միացել է հայտնի դերասան Մկրտիչ Արզումանյանը, ում մասնակցությամբ նկարահանվել է ընտանիքում սիրո և համերաշխության կարևորության մասին կարճ տեսանյութ<sup>22</sup>:

Առաջին անգամ արշավի շրջանակում Պաշտպանի աշխատակազմն օգտվել է նաև տեղեկատվական նոր տեխնոլոգիաներից՝ նպատակ ունենալով շարժել երիտասարդների հետաքրքրությունը: Մասնավորապես, հայտնի դերասանի կոչ պարունակող պաստառները տեղադրվել են Երևան քաղաքի կանգառներում, իսկ «Arloopa» հավելվածի միջոցով

<sup>19</sup> Տե՛ս «Դեմ եմ բռնությանը» կոչով իրազեկման ծրագրի ամբողջական տեղեկատվությունը, հասանելի է <https://bit.ly/33kQEOeR> հղումով:

<sup>20</sup> Տե՛ս «Պաշտպանության ի՞նչ հնարավորություններ ունեն ընտանիքում բռնության ենթարկված անձինք» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=2zBYXLSchJo&t=2s> :

<sup>21</sup> Տե՛ս «Պաշտպանը հրապարակել է տեսանյութ ընտանիքում բռնության կանխարգելման վերաբերյալ (#դեմեմբռնությանը)» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=71ekTG512eU> :

<sup>22</sup> Տե՛ս «Հայտնի դերասան Մկրտիչ Արզումանյանը ուղերձով միացել է #դեմեմբռնությանը կոչին» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=NcQtmRK6uaw> :

հնարավոր է եղել ակտիվացնել լուսանկարը և դիտել տեսաուղերձ: Պատրաստվել է նաև իրազեկումը տեսանյութ՝ ինչպես օգտվել հավելվածից<sup>23</sup>:

Իրազեկման միջոցառումների շրջանակում Աշխատակազմը պատրաստել և հրատարակել է նաև տեղեկատվական ուղեցույցներ: Հայերեն և անգլերեն հրապարակվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար ընտանիքում բռնության հարցերի վերաբերյալ ուղեցույց<sup>24</sup>, ինչպես նաև աշխատակազմի թեժ գծի աշխատակիցների համար տեղեկատվական ուղեցույցի հակիրճ տարբերակ՝ գրպանի ուղեցույց<sup>25</sup>: Քաղաքացիների համար պատրաստվել և հրապարակվել է ընտանիքում բռնության խնդիրներով Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու վերաբերյալ տեղեկատվական բուկլետներ<sup>26</sup> հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և բրայլյան գրով:

Իրազեկման արշավի ողջ ընթացքն ակտիվորեն լուսաբանվել է զանգվածային լրատվության միջոցներով:

Որպես իրազեկման արշավի արդյունք՝ ավելացել է Մարդու իրավունքների պաշտպանին ընտանիքում բռնության դեպքերի մասին հասցեագրվող բողոքների թիվը: Մասնավորապես, Պաշտպանին 2019 թվականին հասցեագրվել է շուրջ 100 բողոք, որը գրեթե երկու անգամ ավելի է նախորդ տարվա 50 բողոքի համեմատ: Ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների գերակշիռ մասը վերաբերել է տղամարդ ամուսնու կողմից կնոջ նկատմամբ կիրառված բռնությանը:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը, հաշվի առնելով երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման գործընթացի կարևորությունը և բոլորի հետ հավասար պայմաններում հանրակրթական դպրոցներում երեխայի կրթություն ստանալու իրավունքը, նախաձեռնել է ներառական կրթության խրախուսմանն ուղղված իրազեկման արշավ<sup>27</sup>: Ծրագրի մեկնարկը Մարդու իրավունքների պաշտպանը սկսել է Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան համար 20 հիմնական դպրոցից<sup>28</sup>, որը ներառական կրթության իրականացման երկարամյա փորձ ունի: Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, ներառական կրթության ոլորտի փորձագետ Անահիտ Բախշյանը և հաշմանդամություն ունեցող Գոհար Նավասարդյանը երեխաների հետ զրուցել են ներառական կրթության կարևորության մասին:

<sup>23</sup> Տե՛ս «Երևանի կանգառներում հայտնվել են «խոսող» պաստառներ», հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=v871TbipCNg> :

<sup>24</sup> Տե՛ս «Ուղեցույց Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար ընտանիքում բռնության հարցերի վերաբերյալ» հրապարակումը՝ <https://www.ombuds.am/images/files/c43aaffe5e52d0c0339b54f1c8ce2d61.pdf> (հայերեն) և <https://www.ombuds.am/images/files/cbaf349474c3b1df6360239ab99049db.pdf> (անգլերեն) :

<sup>25</sup> Տե՛ս «Տեղեկատվական ուղեցույց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի ապահովման վերաբերյալ» հրապարակումը՝ <https://ombuds.am/images/files/31ddbacead324a8aeb47db306740b4ed.pdf> (հայերեն) և <https://ombuds.am/images/files/a2c1d66e7b1ba0d71e665ccb07a1976.pdf> (անգլերեն) :

<sup>26</sup> Տե՛ս «Ինչպե՞ս ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ընտանիքում բռնության խնդիրներով» տեղեկատվական ուղեցույցը՝ <https://www.ombuds.am/images/files/29000cb4a9e43cef508ac5a785871b94.pdf> (հայերեն) և <https://www.ombuds.am/images/files/d6ec6bfde5d4ef77d92c445ec7348f22.pdf> (անգլերեն), <https://ombuds.am/images/files/5ef0d43bba310fb7be5f36b8edcbbdeb.pdf> (ֆրանսերեն), <https://ombuds.am/images/files/4ce82aa3104db3c76de4a3dfb15d60d6.pdf> (ռուսերեն):

<sup>27</sup> Տե՛ս «Փոխիրաշխարհը» կոչով իրազեկման ծրագրի ամբողջական տեղեկատվությունը, հասանելի է <https://bit.ly/2IMPIW7> հղումով:

<sup>28</sup> Տե՛ս «#փոխիրաշխարհը. Պաշտպանը սկսում է ներառական կրթության խրախուսմանն ուղղված իրազեկման արշավը» հրապարակումը՝ [https://www.youtube.com/watch?v=if7J\\_5Hu2f4](https://www.youtube.com/watch?v=if7J_5Hu2f4):

Արշավի շրջանակում սոցիալական ցանցերում ակտիվորեն տարածվել է «Փոխիր աշխարհը» կոչով լուսանկարի շրջանակ, որին միացել են պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, քաղաքացիներ՝ իրենց սոցիալական ցանցերի էջերի լուսանկարներն ուղեկցելով այդ կոչով, իսկ ընդհանուր միջոցառումները «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում իրականացվել է #փոխիրաշխարհը և #changetheworld հեշթեգերի ներքո:

Իրազեկման արշավի ընթացքում հայտարարվել է «Իմ ընկեր...» վերնագրով շարադրությունների մրցույթին հանրակրթական դպրոցների 5-9-րդ դասարանների աշակերտների շրջանում<sup>29</sup>: Շարադրությունների միջոցով յուրաքանչյուր երեխա իր օրինակով պետք է ցույց տար, թե ինչպես կարող է իր ընկերոջ նկատմամբ վերաբերմունքով փոխել աշխարհը՝ դարձնելով այն ներառական ու համերաշխ:

Իրազեկման միջոցառումների շրջանակում Պաշտպանի աշխատակազմը պատրաստել և հրապարակել է ներառական կրթության խրախուսմանն ուղղված տեսանյութերի շարք<sup>30</sup>, որտեղ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և չունեցող երեխաները ներկայացրել են իրենց պատկերացումները ներառական կրթության մասին: Նույն երեխաներն ընդգրկվել են նաև իրազեկման այլ միջոցառումներում: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի Հանրային Ռադիոյի հետ համագործակցության արդյունքում ներկայացրել է «Միասին կարող ենք փոխել աշխարհը»<sup>31</sup> միջազգային երգի պրեմիերա: Երգը կատարել է «Նոր ալիք» մրցույթում Հայաստանը ներկայացրած Մերի Քոչարյանը, ձայնակցել են ներառական կրթության խրախուսմանն ուղղված արշավի 5 հերոս երեխաները:

Շարադրությունների մրցույթի արդյունքներով Երևանից և մարզերից ստացվել է ավելի քան 700 ստեղծագործական աշխատանք: Մասնագիտական ժյուրին մանրամասն քննարկել է աշխատանքները և հաղթող ճանաչել 30 երեխայի տարբեր մարզերից<sup>32</sup>: Մրցույթի հաղթողներին պարգևատրելու և իրազեկման արշավի արձանագրած արդյունքները ներկայացնելու համար կազմակերպվել է միջոցառում, որին ներկա են գտնվել պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք: Միջոցառումը վարել է հայտնի հաղորդավարուհի Նազենի Հովհաննիսյանը<sup>33</sup>:

«Սելվ դը չիլդրեն», «Վորլդ Վիժն» և «ՅՈՒՆԻՍԵՖ» միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչությունների, «Անտարես» և «Բուկինիստ» հրատարակչական ընկերությունների, Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատանը, Վիվա Սելլ ընկերության

<sup>29</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը ներառական կրթության խրախուսման համար հայտարարում է շարադրությունների մրցույթ» հրապարակումը՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/971>:

<sup>30</sup>Տե՛ս «#փոխիրաշխարհը. Մանեի երազանքի ճանապարհը» հրապարակումը՝ [https://www.youtube.com/watch?v=EY806m\\_sdR4](https://www.youtube.com/watch?v=EY806m_sdR4):

Տե՛ս «#փոխիրաշխարհը. Էլիզայի երազանքի ճանապարհը» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=TI4irH9J1F4> :

Տե՛ս «#փոխիրաշխարհը. Արամի երազանքի ճանապարհը» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=h4ZYAhtC9JY>:

Տե՛ս «#փոխիրաշխարհը. Արեգի երազանքի ճանապարհը» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=YPNeqjyKMSI&t=12s>:

<sup>31</sup> Տե՛ս «Together we can change the world» երգի վերաբերյալ հրապարակումը՝ <https://bit.ly/2w9Lkbl> :

<sup>32</sup> Տե՛ս «Յուրաքանչյուր երեխայի պետք է տալ աշխարհը փոխելու հնարավորություն. Մարդու իրավունքների պաշտպանն ամփոփել է #փոխիրաշխարհը իրազեկման արշավը» հրապարակումը՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/984> :

<sup>33</sup> Տե՛ս «Շարադրությունների մրցույթի ամփոփում» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=XxCEUaib4w8>:

հետ համագործակցության արդյունքում հաղթող երեխաները ստացել են մրցանակներ: Հատուկ մրցանակ է սահմանվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Երեխաների շարադրությունները կարևոր աղբյուր են հանդիսացել ոլորտի խնդիրները վերհանելու և համապատասխան առաջարկներ ներկայացնելու համար:

Արշավի ողջ ընթացքը լուսաբանվել է զանգվածային լրատվության միջոցներով: Շարունակելով ներառական հասարակություն ունենալու գաղափարախոսությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանի Ամանորի և Սուրբ Ծննդյան շնորհավորական բացիկները 2019 թվականին խորհրդանշական են եղել. աշխատակազմի համար պատրաստել են «ԻՄ ՈՒՂԻՆ» սոցիալ-վերականգնողական զբաղվածության ցերեկային կենտրոնի երեխաները<sup>34</sup>, իսկ բացիկների վրա առկա QR կոդի սկանավորումը հնարավորություն է տվել վայելել #փոխիրարշխարհը ներառական կրթության խրախուսման ուղղված տեղեկատվական արշավի շրջանակում պատրաստված «Միասին կարող ենք փոխել աշխարհը» երգը:

Զանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանքը Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից է: Նրանց միջոցով է հասարակությունն իրացնում տեղեկացված լինելու իրավունքը, հետևաբար լրատվամիջոցների և լրագրողների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս հասարակությանը ճիշտ պատկերացում կազմել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի վերաբերյալ: Այս կարևոր սկզբունքի ապահովման համար Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականին լրագրողների համար կազմակերպել է աշխատանքային ժողովներ, սեմինարներ:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համագործակցության արդյունքում 2019 թվականի մայիսին լրագրողների համար կազմակերպել է Պաշտպանի իրավասությունների և աշխատանքի ուղղություններին նվիրված սեմինար<sup>35</sup>: 20-ից ավելի լրատվամիջոցների ներկայացուցիչներ հնարավորություն են ունեցել հիմնարար պատկերացում կազմել Պաշտպանի աշխատանքի վերաբերյալ:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում 2019 թվականի հունիս<sup>36</sup> և հոկտեմբեր<sup>37</sup> ամիսներին կազմակերպվել է ևս 2 սեմինար, որոնք վերաբերել են կրկին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի ուղղություններին, փակ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության վիճակին, ինչպես նաև խոսքի ազատության և մասնավոր կյանքի վերաբերյալ իրավական կարգավորումներին ու միջազգային չափանիշներին: Սեմինարներին մասնակցել են ավելի քան 40 լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Շարունակելով արդյունավետ պրակտիկան՝ 2019 թվականի սեպտեմբերին «Save the Children» կազմակերպության հետ համագործակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը լրագրողների համար կազմակերպել է երկօրյա սեմինար<sup>38</sup>՝ ներկայացնելով Պաշտպանի հրապարակած ձեռնարկը երեխաներին վերաբերող թեմաների լուսաբանման

<sup>34</sup> Տե՛ս «Ամանորի և Սուրբ Ծննդյան այս տարվա մեր շնորհավորական բացիկները խորհրդանշական են» հրապարակումը՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/photos/a.538216176365851/1282179105302884/?type=3&theater>:

<sup>35</sup> Տե՛ս «Սեմինար Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի ուղղությունների, սկզբունքների, լրագրողությունների մասին» հրապարակումը՝ [https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1099002146953915?\\_tn=--R](https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1099002146953915?_tn=--R):

<sup>36</sup> Տե՛ս «Ի՞նչ սկզբունքներով է աշխատում Մարդու իրավունքների պաշտպանը» հրապարակումը՝ [https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1123880607799402?\\_tn=--R](https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1123880607799402?_tn=--R):

<sup>37</sup> Տե՛ս «Երկօրյա սեմինար լրագրողների համար» հրապարակումը՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/951>:

<sup>38</sup> Տե՛ս «Ինչպե՞ս լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը» հրապարակումը՝ <https://www.facebook.com/Armenianombudsman/photos/a.553075014879967/1187030281484434/?type=3&theater>:



առանձնահատկությունների մասին: Հատկանշական է, որ նմանատիպ սեմինարներն ունենում են նաև կանխարգելիչ նշանակություն երեխաներին վերաբերող լուսաբանումների հարցում: Չնավորված դրական համագործակցության արդյունքում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ հաճախ լրատվամիջոցները հրապարակումներից առաջ քննարկում են լուսաբանման նրբությունները:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման լուսաբանմանը նվիրված ևս մեկ սեմինար կազմակերպվել է 2019 թվականի նոյեմբերին Եվրոպայի խորհրդի հետ համատեղ: Միջազգային փորձագետը երկու օր լրագրողների հետ քննարկել է թեմայի լուսաբանման առանձնահատկությունները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու համար ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակում վերազինվել է [www.ombuds.am](http://www.ombuds.am) կայքէջը: ***Հայաստանում առաջին անգամ կայքի համար ստեղծվել է հայկական համակարգ, որը հնարավորություն է տալիս ձայնային կառավարման միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց օգտվել կայքից:*** Նորացված կայքում առկա են կարգավորումներ նաև թույլ տեսողություն ունեցող անձանց համար: Նույն ծրագրի շրջանակում ստեղծվել է բջջային հեռախոսի հավելված ինչպես IOS, այնպես էլ Android համակարգերի համար, որը բեռնելով քաղաքացիները կկարողանան ծանոթանալ ինչպես Պաշտպան գործունեությանը, այնպես էլ ստանալ իրազեկման բնույթի նյութեր:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում պատրաստվել են ընդհանուր թվով 8 տեսանյութեր կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ<sup>39</sup>, որոնք տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով: 1 տեսանյութ պատրաստվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ԱԺ արտահերթ ընտրական գործընթացի անկախ դիտարկման վերաբերյալ<sup>40</sup>, որը նաև հեռարձակվել է Հանրային Հեռուստարևիկեությունով:

<sup>39</sup> Տե՛ս «Որո՞նք են կանանց իրավունքների խախտմանը նպաստող պայմաններն աշխատավայրում» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=moHHqZAc5qU&t=5s> :

Տե՛ս «Ի՞նչ աշխատանքային արտոնություններ ունեն հղի և մինչև 3 տարեկան երեխա խնամող կանայք» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=TUM-fwrOLNs> :

Տե՛ս «Ի՞նչ կարգով կարելի է ստանալ տարիքային կենսաթոշակ. Պաշտպանը հրապարակել է իրազեկող տեսանյութ» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=rHAYwR2KAMQ> :

Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն իրացնել իր իրավունքները» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=qL60ILwters&t=8s> :

Տե՛ս «Պաշտպանը հրապարակել է իրազեկող տեսանյութ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման վերաբերյալ» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=2ayUDQllpvo&t=3s> :

Տե՛ս «Հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=SrHoHKYpgSA&t=12s> :

Տե՛ս «Ի՞նչ խնդիրների են բխվում կանայք Հայաստանում» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=GbG-qz4nd4s&t=23s> :

Տե՛ս «Ինչպե՞ս է ձանաչվում անձի հաշմանդամությունը» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=twqRgKMeGLE&t=3s> :

<sup>40</sup> Տե՛ս «Պաշտպանը կիրականացնի ԱԺ արտահերթ ընտրական գործընթացի անկախ դիտարկում» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=IswjYWZ9s0U> :



2019 թվականին շարունակվել են Հայաստանում Բուլղարիայի դեսպանության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում» ծրագրով նախատեսված աշխատանքները: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են ընդհանուր թվով 11 տեսանյութեր<sup>41</sup> ինչպես սպառողների իրավունքների, այնպես էլ այլ ոլորտներում մարդկանց իրավունքների վերաբերյալ, որոնք տարածվել են ինչպես սոցիալական ցանցերով, այնպես էլ հեռարձակվել են «Երկիր մեդիա» և «Կենտրոն» հեռուստաընկերություններով:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հանրային կապերի բաժինը շարունակել է 2017 թվականից իրականացվող՝ դրական ելքով գործերի վերաբերյալ հաջողված պատմությունների հրապարակումը տեսանյութերով: Վերջին տարիներին ակտիվորեն զարգանում է նաև պարզ ինֆոգրաֆիկաների ոճով Պաշտպանի զեկույցների հանրայնացման պրակտիկան, որոնց տարածվում են ինչպես զանգվածային լրատվության միջոցներով, այնպես էլ սոցիալական ցանցերով՝ Ֆեյսբուքով, Թվիթերով, Ինստագրամով, Յութուբով և Տելեգրամով:

---

<sup>41</sup> Տե՛ս «Ինչպե՞ս և ե՞րբ դիմել Մարդու իրավունքների պաշտպանին» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=XlkAWkf3x6w&t=17s> :

Տե՛ս «Լույսի, զագի կամ ջրի մատակարարման հետ կապված ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով կարող եք դիմել Պաշտպանին» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=GD1gK4StVgw&t=2s> :

Տե՛ս «Ե՞րբ և ինչպե՞ս դիմել Պաշտպանին, եթե հարկային կամ մաքսային մարմինը խախտել է ձեր իրավունքը» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=vQxLc3dkFPE> :

Տե՛ս «Ինչպե՞ս գրանցել ԱԶ», հասանելի է <https://www.youtube.com/watch?v=trCBGWAExkM&t=16s> :

Տե՛ս «Ե՞րբ և ո՞ր դեպքում կարելի է բողոքարկել պետական մարմնի կայացրած վարչական ակտը» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=pIOTF35i0bA> :

Տե՛ս «Ո՞ր դեպքում կարող է բռնագանձվել մարդու դրամական միջոցները» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=MJc3OxoiKdM&t=37s> :

Տե՛ս «Ինչպե՞ս գրանցել ՍՊԸ և ի՞նչ խախտումների դեպքում դիմել Մարդու իրավունքների պաշտպանին» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=0WvkGGhSgko&t=3s> :

Տե՛ս «Ինչո՞ւ է կարևոր ՀԴՄ-ի կիրառումը և ո՞ր դեպքերում գործարարները կարող են դիմել Պաշտպանին» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=L4XncypksfE> :

Տե՛ս «Ի՞նչ պետք է իմանա աշխատանքի ընդունվելու համար փորձաշրջան անցնող քաղաքացին» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=38HXX5P5kAM&t=10s> :

Տե՛ս «Ե՞րբ է լուծվում աշխատանքային պայմանագիրը» հրապարակումը՝ [https://www.youtube.com/watch?v=Gm\\_6gzct1tw&t=22s](https://www.youtube.com/watch?v=Gm_6gzct1tw&t=22s) :

Տե՛ս «Նվազագույն ի՞նչ իրավունքներ ունեն ազատությունից զրկված մարդիկ» հրապարակումը՝ <https://www.youtube.com/watch?v=r5iHE71xMK4&t=12s> :

### **ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

#### **1. Համագործակցությունը հանրային մարմինների հետ**

Մարդու իրավունքների պաշտպանը, լինելով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված անկախ պաշտոնատար անձ և օժտված լինելով Սահմանադրության մակարդակով ամրագրված կարգավիճակով, կազմում է մեր երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Սա ենթադրում է նաև համագործակցություն հանրային իշխանության բոլոր մարմինների հետ:

Սահմանադրության 191-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրվում է, որ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:* Այս սահմանադրական երաշխիքը կարևոր նշանակություն ունի Մարդու իրավունքների պաշտպանի անկախության ու աշխատանքի արդյունավետության տեսանկյունից:

Չնայած Սահմանադրության մակարդակում նման պարտականության առկայությանը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր սկզբունքներից է գործընկերային աշխատանքի և գործընկերների նկատմամբ հարգանքի սկզբունքը՝ հետապնդելով երկրում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման մակարդակի բարձրացման նպատակ: Բավարար երաշխիքների առկայության պայմաններում փոխգործակցային եղանակով աշխատանքն արդյունավետության և խնդիրների լուծման կարևոր նախապայմաններից է:

**Մյուս կողմից, արդյունավետ աշխատանքի երաշխիք է վեր հանված խնդիրների լուծման նկատմամբ հետևողականությունը: Անհրաժեշտ է աշխատել այնպես, որ հանրային մարմիններն իրենք զգան Օմբուդսմանի մշտական հետևողականությունը և բարձր պրոֆեսիոնալ մոտեցումների կարևորությունը: Այս կերպ է նաև ավելանում Օմբուդսմանի հեղինակությունն ու խոսքի ուժը հանրային իշխանության համակարգում:**

Պաշտպանի գործունեության համար սկզբունքային նշանակություն ունի համատեղ աշխատանքը խորհրդարանի հետ: Կրելով խորհրդարանական իրավապաշտպանի բարձր կոչումը՝ Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու սահմանադրական գործառույթով: Դրանից բացի, խորհրդարանը անգնահատելի դեր ունի երկրի մարդու իրավունքների համակարգի շարունակական զարգացման, երկրում կարծրատիպեր կոտրելու և իրավական բարեփոխումների սպառիչ իրացման, հետևաբար՝ մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ նպաստավոր միջավայրի երաշխավորման հարցում:

2019 թվականի ընթացքում նույնպես երկու կառույցների միջև շարունակվել է արդյունավետության բարձր մակարդակ ունեցող համագործակցությունը: Սահմանադրական երկու հաստատությունների համագործակցության արդյունավետության համատեքստում խորհրդանշական է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 15-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված միջազգային համաժողովի անցկացումը խորհրդարանի հարկի տակ, որին մասնակցել են մեծ թվով հյուրեր Հայաստանից և արտերկրից:

Չնավորված իրավական ավանդույթի ուժով Մարդու իրավունքների պաշտպանը և Ազգային ժողովի նախագահը հաճախ հանդիպում են՝ քննարկելու համար մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող խնդիրները, օրինակ՝ վիրավորանքի ու

ատելության խոսքի կանխարգելման հարցում համատեղ աշխատանքը: Միաժամանակ, առկա է սերտ փոխգործակցություն Ազգային ժողովի նախագահի տեղակալների, մշտական հանձնաժողովների, միջազգային կազմակերպություններում խորհրդարանական պատվիրակությունների, ինչպես նաև պատգամավորների հետ՝ անհատական մակարդակում:

Կարևոր է Պաշտպանի աշխատանքն ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, ինչպես նաև մյուս մշտական հանձնաժողովի հետ: Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքն ունի գրեթե ամենօրյա բնույթ: Այն արդյունավետ է ինչպես հանձնաժողովի ղեկավարի ու նրա տեղակալի, այնպես էլ բոլոր պատգամավորների հետ: Հատկապես պետք է կարևորել փակ հաստատություններում մարդու իրավունքների, հանդուրժողականության ու համերաշխություն ապահովելու հարցում հանձնաժողովի կարևորելը: Արդյունավետ և օպերատիվ է Մարդու իրավունքների պաշտպանի համատեղ աշխատանքը Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ: Օրինակ՝ հանձնաժողովի ղեկավարի հետ արդյունավետ քննարկումների արդյունքում դրական եզրակացությամբ ԱԺ լիազուստ նիստի օրակարգ է ներկայացվել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշակած օրենսդրական նախագծերի փաթեթը, որն ուղղված էր ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի և այլ իրավունքների:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, Պետական-իրավական հարցերի, Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների համագործակցության շրջանակներում կազմակերպվել է այց «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն: Արդյունքում, պայմանավորվածություն է ձևավորվել վեր հանված խնդիրները քննարկել Կառավարության և Երևանի քաղաքապետարանի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է Ազգային ժողովի՝ հանրային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ խորհրդարանական լսումների կազմակերպման ձևավորված պրակտիկան: Այն կարևոր հարթակ է ոչ միայն իրավասու պետական մարմինների և քաղաքացիական հասարակության, այլ նաև հանրության շահագրգիռ ներկայացուցիչների համար՝ քննարկելու տարբեր ոլորտներում առկա մարտահրավերները: Պաշտպանի մասնակցությամբ ինչպես մշտական հանձնաժողովներում նիստերի և աշխատանքային հանդիպումների, այնպես էլ խորհրդարանական լսումների ձևաչափով 2019 թվականին կազմակերպվել են մարդու իրավունքներին առնչվող թեմաներով քննարկումներ: Դրանք միտված են եղել ազատությունից զրկված անձանց իրավունքներին, բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու համատեքստում սեփականության իրավունքին, դատական բարեփոխումներին, փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքներին առնչվող և այլ ոլորտներում առկա օրենսդրական ու գործնական խնդիրների լուծմանը:

Անհատական մակարդակում համագործակցությունն ԱԺ պատգամավորների հետ դրսևորվել է, բայց չի սահմանափակվել անհատական դեպքերի վերաբերյալ քննարկումներով և համատեղ լուծումներ գտնելով՝ ընդգրկելով մարդու իրավունքներին առնչվող վերլուծությունների և վերհանված խնդիրների վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը:

Համագործակցության արդյունավետության տեսանկյունից կարևոր է նաև Ազգային ժողովում Պաշտպանի ներկայացուցչի դերը: Նա մասնակցում է ԱԺ աշխատակազմի և փորձագետների մասնակցությամբ մարդու իրավունքներին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ քննարկումներին, խորհրդարանական լսումներին և

աշխատանքային հանդիպումներին: Դրանց ընթացքում ներկայացվում են Պաշտպանի՝ անհատական դիմումների քննարկման և մշտադիտարկման առանցքային գործառնությունների իրականացման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները, որոնք պահանջում են օրենսդրական լուծումներ: 2019 թվականի ընթացքում Ազգային ժողովի հետ համատեղ աշխատանքներ են տարվել ընտրական, զինվորական ծառայության, քրեակատարողական, խոսքի ազատության և այլ ոլորտների օրենսդրական ակտերի կատարելագործման ուղղությամբ:

Նույն սկզբունքով, առանցքային է նաև աշխատանքը դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի հետ: Ի տարբերություն Սահմանադրական դատարանի՝ մյուս դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի հետ համագործակցությունը հիմնականում վերաբերում է դատական պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը և քննարկումներին: Կարևոր է նաև փոխգործակցությունը Վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման ապահովման, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացման լիազորությամբ օժտված մարմնի հետ:

Սահմանադրական դատարանի հետ համագործակցությունը դրսևորվում է Սահմանադրական դատարանի դիմումներ ներկայացնելով, ինչպես նաև մարդու իրավունքներին կամ ազատություններին վերաբերող գործերով Սահմանադրական դատարան օժանդակ դիրքորոշումներ (*amicus curiae*) ներկայացնելով: Դրանց հիմքում ընկած են լինում ինչպես Պաշտպանին ներկայացված անհատական դիմումների վերլուծությունները, այնպես էլ միջազգային կոնվենցիոն մեխանիզմների մանդատի շրջանակներում իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքները:

Սահմանադրական դատարանում նույնպես գործում է Պաշտպանի ներկայացուցչի ինստիտուտը: Վերջինս, մասնավորապես, պատասխանատու է ինչպես Պաշտպանին հասցեագրվող՝ Սահմանադրական դատարանի դիմելու խնդրանք պարունակող դիմումների, այնպես Պաշտպանի անմիջական դիտարկման արդյունքների վրա հիմնված սահմանադրաիրավական խնդիրների ուսումնասիրման և համակարգման համար: Պաշտպանի ներկայացուցչի աշխատանքի մեկ այլ ուղղություն վերաբերում է Սահմանադրական դատարանում քննվող գործերի պարբերական մշտադիտարկմանը և ըստ Պաշտպանի գործունեության առաջնահերթությունների՝ դրանց վերաբերյալ հատուկ դիրքորոշումների ներկայացմանը: Սա ապահովում է Պաշտպանի «դատարանի ընկեր» կարգավիճակում հատուկ կարծիք ներկայացնելու գործառնության արդյունավետությունը և համակարգվածությունը:

Կարևոր է նաև Պաշտպանի համագործակցությունը Կառավարության հետ: Կառավարության հետ ձևավորվել է գործնական սերտ համագործակցության պրակտիկա, որը ենթադրում է առօրյա աշխատանքում տեղեկատվության օպերատիվ փոխանակման հնարավորություն: Գրեթե բոլոր մարմիններում առանձնացված են պատասխանատու աշխատակիցներ, ովքեր Աշխատակազմի ներկայացուցիչների հետ պարբերաբար իրականացնում են իրավունքների իրացման ապահովմանն ուղղված աշխատանքային քննարկումներ: Օրինակ՝ բարձր արդյունավետության համագործակցություն է հաստատված ՀՀ պաշտպանության նախարարության հետ՝ ինչպես Պաշտպանի ու Նախարարի միջև, այնպես էլ գորամասերի ու Մարդու իրավունքների և բարեկարգության կենտրոնի հետ:

Մարզպետարանների հետ աշխատանքում նույնպես առկա են դրական արդյունքներ: Օրինակ՝ պետք է առանձնացնել Գեղարքունիքի մարզպետարանի հետ աշխատանքը: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի և Գեղարքունիքի մարզպետի համատեղ աշխատանքով վերանորոգվել են մարզի մանկապարտեզի ու բնակելի շենքի

տանիքները: Պաշտպանի և մարզպետի համատեղ այցի ընթացքում արձանագրվել են այս աշխատանքների լիարժեք իրականացումը:

Կարևոր է համագործակցությունը նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ, քանի որ նրանք առավել մոտ են կանգնած համայնքներին և անմիջականորեն են տեղակացված առկա խնդիրների մասին: Օրինակ՝ դրական օրինակներից է համագործակցությունը Նոյեմբերյանի համայնքապետարանի կամ Երևանի քաղաքապետարանի հետ:

Երևան քաղաքի դեպքում խոսքը վերաբերում է ինչպես Երևանի քաղաքապետին, այնպես էլ Երևան քաղաքի ավագանուն: Քաղաքապետի ու քաղաքապետարանի պաշտոնատար անձանց հետ տեղի են ունենում պարբերական քննարկումներ թե անհատական, թե համակարգային բնույթի հարցերի շուրջ: Ավագանու դեպքում Երևան քաղաքում առկա համակարգային բնույթի խնդիրների վերաբերյալ մասնագիտական քննարկումներ են տեղի ունեցել «Լույս» խմբակցության ղեկավարի ու խմբակցության մի շարք անդամների հետ: Մասնավորապես, անհատական մոտեցման սկզբունքով քննարկվել են Երևանի քաղաքապետարանի իրավասության տիրույթում գտնվող անհատական բնույթի խնդիրներ: Խմբակցության ղեկավարի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին ողջունելի առաջարկ է արվել նաև այն մասին, որ անհրաժեշտ է ունենալ հատուկ ներկայացուցիչներ, որոնք նաև կմասնակցեն ավագանու քննարկումներին: Ընդ որում, այս առաջարկը բարձրացվել է նաև ԱԺ մարդու իրավունքների և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ինչպես նախագահի, այնպես էլ փոխնախագահի կողմից:

Հարկ է ընդգծել նաև, որ 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմում գործադրվեց նոր պրակտիկա՝ ամփոփելու Պաշտպանի տարեկան հաղորդումներում ու զեկույցներում տեղ գտած առաջարկներն ըստ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և գործողությունների ծրագրերի ձևաչափով (աղյուսակի տեսքով) ներկայացնելու դրանց կատարման համար պատասխանատու հասցեատերերին: Նման պրակտիկան ոչ միայն տարիների կտրվածով Պաշտպանի առաջարկների կատարման աստիճանի համեմատական դիտարկման հնարավորություն է ընձեռում, այլև ավելի է մեծացնում իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետվողականությունը՝ քայլեր ձեռնարկելու մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող խնդիրների լուծման ուղղությամբ: Բացի այդ, մարդու իրավունքների և ազատությունների վիճակը գնահատող, համակարգային խնդիրները վեր հանող այդ համապարփակ փաստաթուղթը պետք է ծառայի իբրև ցուցիչ՝ մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ոլորտներում առաջնահերթությունների թիրախավորման համար:

## **2. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրագրողների և փաստաբանների հետ**

Աշխարհում մարդու իրավունքների ազգային հաստատությունների կամ օմբուդսմանների առաքելության կարևոր ուղղություններից է քաղաքացիական հասարակության իբրև լիարժեք գործընկերոջ հետ փոխգործակցությունը: Հանդիսանալով պետական մարմին, Պաշտպանի հաստատությունը կարևոր օղակ է հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների միջև՝ պարբերաբար ստեղծելով հարթակներ համապատասխան ոլորտներում առկա խնդիրների վերհանման, դրանց քննարկման և լուծումների նախանշման համար: Ուստի, Պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություն է այդ կազմակերպությունների աշխատանքի խթանումը, պետական մարմիններում նրանց գործունեությունը և բարձրացված հարցերը տեսանելի դարձնելը:

Հասարակական կազմակերպությունների և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համագործակցության շրջանակում է նաև առանձին ոլորտներում

արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված համատեղ քայլերի ձեռնարկումը: Այս առումով կարևոր է նաև անհատական գործերի վերաբերյալ ըստ անհրաժեշտության տեղեկությունների օպերատիվ փոխանակումը:

Կարևորելով աշխատանքի այս առանձնահատկությունը, 2019 թվականին շարունակվել են աշխատանքները հասարակական կազմակերպությունների հետ ինչպես կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների պաշտպանության, խոշտանգումների կանխարգելման, փախստականների և ապաստան հայցող անձանց, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ այլ ոլորտներում<sup>42</sup>:

Քաղաքացիական հասարակության հետ աշխատանքը կազմակերպվում է տարբեր եղանակներով, այդ թվում՝ Պաշտպանին առընթեր խորհրդատվական խորհուրդների միջոցով: Նման խորհուրդները ստեղծվում են առանձին ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի բարելավման և առկա խնդիրների վերհանման ու քննարկման նպատակով: Հանդիպումների ընթացքում քննարկվում են ինչպես համակարգային խնդիրներ, այնպես էլ անհատական դեպքեր և դրանց լուծման ուղիներ:

Կազմակերպվում են նաև խորհուրդների ընդլայնված կազմով նիստեր, որոնց մասնակցում են նաև ոլորտի իրավասու պետական մարմինները: Նման միջոցառումները երկրում մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման գործում Պաշտպանի՝ որպես քաղաքացիական հասարակության և պետական մարմինների միջև կապող օղակի դերի կարևոր օրինակ են:

2019 թվականին տեղի են ունեցել Պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի նիստեր: Նիստին քննարկվել են զինված ուժերում կարգապահության ամրապնդման և մահվան դեպքերի նվազման, զինապարտների առողջության պահպանման, զինված ուժերում կանանց ներգրավման, զինվորական ծառայության անցնելու և ծառայությունից արձակվելու գործընթացում առաջացող խնդիրները: Քննարկվել են նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովման, օրինակ՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության իրավունքի իրացման հարցը: Հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման մեջ արտացոլված ՀՀ զինված ուժերում առկա խնդիրներն ու առաջարկվող լուծումները և դրանց կատարման մակարդակը: Նիստին մասնակցել են Պաշտպանության նախարարության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի, Անվտանգության խորհրդի քարտուղարության և Արդարադատության նախարարության ներկայացուցիչներ:

Պաշտպանի գործունեության ուղղությունների զարգացմանը զուգահեռ քննարկվում են նաև այլ ուղղություններով խորհուրդներ ստեղծելու հարցը: Մասնավորապես, նախատեսվում է Պաշտպանին առընթեր խորհրդատվական խորհուրդներ ձևավորել նաև հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտներում:

Խորհուրդների ձևաչափերից բացի, ակտիվորեն գործադրվել են համատեղ աշխատանքի այլ մեխանիզմներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է քննարկումներին, վերապատրաստման դասընթացներին՝ մասնակցությանը, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին՝ մասնակցությանը, Աշխատակազմի համակարգմամբ իրականացվող ծրագրերին՝ նրանց ներգրավմանը և այլն:

Այս մասում պետք է առանձնացնել Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը լրատվամիջոցների և լրագրողների հետ:

<sup>42</sup> Մանրամասն տե՛ս սույն զեկույցի համանուն բաժիններում բաժիններում:

Լրագրողներին Մարդու իրավունքների պաշտպանը համարում է իր ռազմավարական գործընկերներ և հետևաբար՝ նրանց հետ համատեղ աշխատանքն իրականացվում է հենց այդ հիմնարար սկզբունքից ելնելով: Հարցն այն է, որ լրագրողներն են, որ ապահովում են խոսքի, կարծիքի արտահայտման, տեղեկություններ ստանալու մարդկանց իրավունքների սպառիչ իրացումը: Լրագրողն է, որ իր բարդ աշխատանքով ապահովում է քաղաքացիական վերահսկողությունը պետության նկատմամբ, մեծ հաշվով հենց լրագրողի մասնագիտական գործունեության շնորհիվ է մարդը պատկերացում կազմում այն մասին, թե ինչո՞ւ են զբաղված հանրային մարմինները երկրում:

Կարևոր է լրագրողների դերը երկրում առանձին հարցերի վերաբերյալ կարծրատիպեր կոտրելու և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ դրական միջավայր ապահովելու հարցում:

Ցավոք, առկա են լրագրողների աշխատանքի սխալ ընկալումներ ոչ միայն հասարակությունում, այլ նաև պետական համակարգում: Ցանկացած պաշտոնատար անձ պետք է հստակ գիտակցի, որ պատկերացումն այն մասին, թե լրագրողը խոչընդոտում է իր աշխատանքը, ընդամենը կարծրատիպ է ու ոչ ճիշտ պատկերացման արդյունք է:

Մյուս կողմից, լրագրողի մասին ճիշտ պատկերացումներ ձևավորելու տեսանկյունից կարևոր է լրագրողների կողմից պատասխանատու լրագրության սկզբունքներին համապատասխան մասնագիտական գործունեություն ծավալելը՝ սկսած լրագրողական նյութի համար վերնագիր ընտրելուց մինչև այդ նյութի բազմակողմանիության ապահովումը: Դա լրագրողին դարձնում է անխոցելի և հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել նրանց մասնագիտական աշխատանքի պաշտպանությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի կարևոր գործընկերներ են փաստաբանները: Այստեղ պետք է նախնառաջ առանձնացնել արդյունավետ աշխատանքը Փաստաբանների պալատի ու Փաստաբանական դպրոցի հետ: Պարբերաբար անցկացվող համատեղ քննարկումներն ու ծրագրային նախաձեռնությունները նպաստում են թե՛ փաստաբանի դերի բարձրացմանը երկրում, թե՛ մարդու իրավունքների վիճակի շարունակական բարելավմանը:

Փաստաբանի մասնագիտական աշխատանքը կարևոր է նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունավետության տեսանկյունից:

#### ԳԼՈՒԽ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՆԿԱՏԱՍԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2019 թվականի մարտին վերահաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի քարտուղարությամբ գործող Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից այս բարձր կարգավիճակի հաստատումը վկայում է Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի լիարժեք անկախության, վստահելիության ու արդյունավետ աշխատանքի մասին: Գնահատման համար ուսումնասիրությունը ներառել է նաև 2016-ից մինչև 2018 թվականների ժամանակահատվածը: *Անկախ հանձնախումբը հավատագրման զեկույցում ընդգծել է, որ որոշումում է մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը՝ նշելով, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը բարդ իրավիճակներում գործունեություն ծավալելիս զգայուն հարցերի վերաբերյալ հնչեցնում է հրապարակային գնահատականներ<sup>43</sup>:*

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության այս վերանայումը կատարվում է ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներով սահմանված մարդու իրավունքների ազգային ինստիտուտներին առաջադրվող անկախության պահանջներին համապատասխանության տեսանկյունից: Անկախ հանձնախմբի կողմից առաջարկված «A» կարգավիճակը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանն իրավունք է վերապահում մասնակցել միջազգային կառույցների, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի աշխատանքներին և որոշումների կայացմանը, հանդես գալ հատուկ ելույթներով, օգտվել միջազգային համապատասխան կառույցների ղեկավար մարմիններում ընտրվելու և այդ մարմինների ընտրություններին քվեարկության իրավունքից:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից միջազգային համագործակցության ոլորտում իրականացվել են ծրագրեր, կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 15-ամյա գործունեությանը նվիրված բարձրաստիճան միջազգային համաժողով, կազմակերպվել են Պաշտպանի հանդիպումներ, մշակվել և միջազգային գործընկեր կազմակերպություններին են ներկայացվել Պաշտպանի արտահերթ զեկույցներ և ծրագրային նոր առաջարկներ, իրականացվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրման և այլ աշխատանքներ:

Հաշվետու տարում հատուկ ուշադրություն է դարձվել նաև համագործակցությանը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե հետ՝ ՀՀ դեմ քննվող գործերով որպես երրորդ կողմ ներգրավվելու և ՀՀ դեմ կայացված վճիռների վերաբերյալ հատուկ դիրքորոշում ներկայացնելու միջոցով: Մշտական կապ է հաստատված նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի, Միավորված ազգերի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի և այլ միջազգային կառույցների հետ:

<sup>43</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախումբի» զեկույցը, <https://nhri.ohchr.org/EN/AboutUs/GANHRIAccreditation/Documents/SCA%20Report%20March%202019%20-%20EN%20.pdf> :



Հաստատության միջազգային համագործակցության մեկ այլ հիմնարար ուղղության համար կարևոր նախապայման էր հաստատության գործունեության բարձր արդյունավետությունը տարբեր ոլորտներում: Մասնավորապես, դրանով պայմանավորված Պաշտպանի աշխատանքը համապատասխան ասպարեզներում ճանաչվելով լավագույններից մեկն աշխարհում՝ պատճառ է հանդիսացել, որպեսզի տարբեր երկրների մարդու իրավունքների ազգային հաստատություններ ուսումնասիրեն կառույցի փորձը:

Մասնավորապես, Պաշտպանի հաստատության փորձն ուսումնասիրելու նպատակով 2019 թվականի հուլիսին փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել է Բուլղարիայի օմբուդսմանի աշխատակազմի աշխատակիցների և փորձագետների 4-օրյա այցը Հայաստան, որի ընթացքում ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործառնությունները, լիազորությունների շրջանակը, հանրային ծառայությունների ոլորտում իրականացվող իրազեկման ծրագրերը, ինչպես նաև Հայաստանի կանխարգելման ազգային մեխանիզմի գործադրման նոր սկզբունքները<sup>44</sup>:

### ***1. Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ հանրային վստահությունը և միջազգային գնահատականները***

2019 թվականի ընթացքում Պաշտպանի և Աշխատակազմի գործունեությունը բարձր գնահատականի է արժանացել միջազգային և ներպետական տարբեր հարթակներում: Դրանք հիմնականում հնչել են Պաշտպանի գործունեության անաչառության, բարձր մասնագիտական սկզբունքների պահպանման և անկախության բարձր մակարդակի հաշվառմամբ: Դրանք առավելապես դրսևորվել են հանրապետությունում 2018 թվականի ապրիլ – մայիս ամիսներին տեղի ունեցած դեպքերի ընթացքում ցուցաբերած պրոֆեսիոնալիզմի և կատարած ծավալուն աշխատանքի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 15 ամյակին նվիրված միջոցառման ընթացքում ներկաները բարձր են գնահատել Պաշտպանի աշխատանքը: Մասնավորապես, **ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) տնօրենն** ընդգծել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի համար Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ համագործակցության դերը և նախանշել է, որ ապագա համագործակցության շրջանակներում ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը շարունակելու է աջակցություն տրամադրել Հայաստանի ազգային կանխարգելման մեխանիզմին: Այդ աջակցությունը հիմնականում ուղղված է լինելու ազատագրկման վայրերում կատարված սեռական բռնության ոլորտի մշտադիտարկման մեջ ազգային կանխարգելման մեխանիզմի դերի բարձրացմանը:

Միջոցառման մասնակից **ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը** կարևորել է Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը և ԵԱՀԿ-ի հետ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համագործակցությունը: Հարլեն Դեզիրն անդրադարձ է կատարել մամուլի և խոսքի ազատության ոլորտներում Մարդու իրավունքների պաշտպանի կատարած աշխատանքին և 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին հանրապետությունում տեղի ունեցած դեպքերի ընթացքում Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի ցուցաբերած աշխատանքի համար:

**Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության տնօրեններից մեկը**, ով նույնպես մասնակցում էր միջոցառմանը, արձանագրել է, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ԵՄ-ի համար հիմնական գործընկեր է և Հայաստան-ԵՄ Մարդու

<sup>44</sup> Տե՛ս «Բուլղարիայի օմբուդսմանի աշխատակազմն ուսումնասիրում է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի փորձը» հրապարակումը <https://www.ombuds.am/am/site/ViewNews/912>:

իրավունքների շուրջ երկխոսության մշտական մասնակիցը: Նա նշել է նաև, որ վերջին 15 տարիների, և հատկապես վերջին տարվա ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում բազմում բարելավումներ են նկատվում: Անդրադառնալով Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությանը՝ տնօրենը արձանագրել է, որ ԵՄ-ն այս հարցում խրախուսում է Կառավարության, Ազգային ժողովի և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և քաղաքացիական հասարակության հետ իրենց համագործակցության շարունակումը և բարելավումը:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 15 ամյակին նվիրված միջոցառման ընթացքում Պաշտպանի աշխատանքը բարձր են գնահատել նաև տարբեր երկրների **մարդու իրավունքների ազգային հաստատությունների ղեկավարներ և օմբուդսմաններ**: Հատուկ ընդգծվել է կառույցների միջև առկա արդյունավետ փոխգործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ոլորտներում:

**Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը (ENNHRI)** հրապարակել է փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման վերաբերյալ հատուկ զեկույց, որտեղ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի փորձը փախստականների և ապաստան հայցող անձանց, այսինքն՝ միգրանտների իրավունքների ապահովման ոլորտում համարվել է առաջատարներից մեկը Եվրոպայում<sup>45</sup>:

Զեկույցում անդրադարձ է կատարվել Պաշտպանի՝ հատուկ հաստատություններ իրականացվող մշտադիտարկման այցերին: Նշվել է նաև Հայաստանի և Վրաստանի օմբուդսմանների աշխատակազմերի կողմից սահմանային անցման կետերում համատեղ մշտադիտարկման փորձը:

Որպես դրական օրինակ՝ նշվել է Պաշտպանի, ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչության ու Հայկական Կարմիր խաչի ընկերության համագործակցության շրջանակներում շահագրգիռ կողմերի համար կազմակերպված վերապատրաստումներն ու քննարկումները:

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը միջազգային զեկույցում անդրադարձ է կատարել նաև «Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ զեկույցին՝ մատնանշելով կատարված ուսումնասիրությունները, օրենսդրության և Միգրացիոն ծառայության որոշումների վերաբերյալ Պաշտպանի առաջարկները:

Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ **ԱՄՆ պետական դեպարտամենտի** 2019 թվականի զեկույցում անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությանը: Դրանում, մասնավորապես, նշվում է, որ հաստատությունը շարունակում է արձանագրել քաղաքացիների բողոքների և այցերի թվի աճ, ինչը պայմանավորված է Պաշտպանի հաստատության նկատմամբ բարձր վստահության և հանրային ակնկալիքների աճով: Պաշտպանի հաստատությունն ավելացրել է հասանելիությունը մարզերում և բարձրացրել մարզերում աշխատող մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ համագործակցության մակարդակը: Պետական դեպարտամենտի զեկույցում նշվել է նաև,

<sup>45</sup> Տե՛ս Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) զեկույցը՝ <http://ennhri.org/wp-content/uploads/2020/03/Protecting-human-rights-of-migrants-at-the-borders-Evidence-and-work-of-European-NHRIs-December-2019.pdf>:

որ 2019 թվականին Պաշտպանն իրականացրել է ընտանիքում բռնության կանխարգելման հանրային իրազեկման արշավ:<sup>46</sup>

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությանը բարձր գնահատական է տվել նաև ամերիկյան **Միջազգային հանրապետական ինստիտուտը (International Republican Institute, IRI)**: Ըստ Միջազգային հանրապետական ինստիտուտի հեղինակած զեկույցի՝ Հայաստանում հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը վայելում է հանրային բարձր վստահություն<sup>47</sup>: Մասնավորապես, 2019 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների տվյալներով Միջազգային հանրապետական ինստիտուտը նշել է, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանին վստահում է հարցվածների 63%: Արդյունքում, համեմատելով 2018 թվականի համանուն հարցման արդյունքները 2019 թվականի ցուցանիշի հետ՝ արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության նկատմամբ հանրային վստահության ցուցանիշի աճ մոտ 5 տոկոսով:

**«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» միջազգային հասարակական կազմակերպությունը** բարձր է գնահատել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կատարած աշխատանքը՝ դրա մասին նշելով Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության մեջ: Ուսումնասիրությունը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը դիտարկում է որպես պետական մարմին, որին Հայաստանի բնակիչները կոչվում են կոռուպցիոն դեպքի կամ վարքագծի մասին տեղեկատվություն փոխանցելու նպատակով: Արձանագրվել է նաև, որ Հայաստանի բնակչության համար Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ընկալվում է որպես «ընդհանրապես չկոռումպացված» պետական հաստատություն (հարցվածների 36%-ի կարծիքով):<sup>48</sup>

Վարչավայում տեղի ունեցած ԵԱՀԿ բարձրաստիճան համաժողովի ընթացքում 2018 թվականի սեպտեմբերի 17-ին Եվրոպական միության և դրա անդամ երկրների անունից Միացյալ Թագավորությունը հայտարարություն է հրապարակել, որում հատկապես ընդգծվել է Պաշտպանի և Աշխատակազմի դրական դերն 2018 թվականին տեղի ունեցած խաղաղ հավաքների մշտադիտարկման հարցում: **«Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքն օրինակ է մեզ բոլորիս համար»,- նշված է հայտարարությունում:**

ԵԱՀԿ մշտական խորհրդի ապրիլի 26-ի նիստում Եվրոպական միությունն իր դիրքորոշումն է ներկայացրել «Հայաստանում ժողովրդավարական գործընթացների վերաբերյալ»: ԵՄ-ն ողջունել է Աշխատակազմի աշխատանքը ոստիկանության բաժիններ՝ այցերի, բողոքների քննարկման և քաղաքացիների հետ առանձնազրույցների առնչությամբ՝ կարևորելով խոսքի ու կարծիքի, ինչպես նաև միավորումների ու խաղաղ հավաքների հիմնարար ազատությունները:

2018 թվականի մայիսի 28-ին Պաշտպանը Ստրասբուրգում աշխատանքային հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն Քրիստոս Ջիակոմոպոլոսի հետ: Հայաստանում

<sup>46</sup> Տե՛ս «Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ» ԱՄՆ պետական դեպարտամենտի 2019 թվականի զեկույցը, հասանելի է <https://www.state.gov/reports/2019-country-reports-on-human-rights-practices/armenia/> հղումով, 2019թ.:

<sup>47</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության բնակիչների հանրային կարծիքի հարցում Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից» զեկույցը [https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri\\_poll\\_armenia\\_september-october\\_2019.pdf](https://www.iri.org/sites/default/files/wysiwyg/iri_poll_armenia_september-october_2019.pdf):

<sup>48</sup> Տե՛ս «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի» ուսումնասիրությունը, <https://transparency.am/files/publications/1582895418-0-947745.pdf?v=4> :

ապրիլ և մայիս ամիսներին տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված վերջինս ընդգծել է Պաշտպանի կարևոր դերը հավաքների մասնակիցների իրավունքների երաշխավորման, հանդուրժողականության մթնոլորտի ապահովման հարցերում: Կարևորվել է Պաշտպանի ցուցաբերած անաչառ մոտեցումն ու արդյունավետ աշխատանքը, ինչպես նաև արագ արձագանքը խնդիրներին:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինությունը շնորհակալություն է հայտնել Պաշտպանին Եվրոպայի խորհրդի հետ գերազանց համագործակցության համար և բարձր է գնահատել վերջինիս արդյունավետ ջանքերն այդ օրերին մարդու իրավունքների երաշխավորման հարցում՝ արտահայտելով հետագա համագործակցության պատրաստակամությունը մարդու իրավունքների կարևոր հարցերի առնչությամբ:

2018 թվականի մայիսի 28-ին Պաշտպանը Ստրասբուրգում աշխատանքային հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի հետ: Հանդիպման ընթացքում, նախևառաջ քննարկվել է Պաշտպանի աշխատանքն ու 43 գնահատականներն ապրիլ և մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ: Մասնավորապես, քննարկման առարկա է դարձել Պաշտպանի գործունեությունը՝ կապված խաղաղ հավաքների մասնակիցների իրավունքների պաշտպանության, ոստիկանության գործողությունների դեմ բողոքները քննարկելու ու գնահատականի արժանացնելու հետ և այլն: ԵՆ գլխավոր քարտուղարը բարձր է գնահատել Պաշտպանի աշխատանքն այդ ժամանակաշրջանում և նշել, որ այն մարդու իրավունքների տեսանկյունից ունեցել է կարևոր նշանակություն քաղաքացիների իրավունքների երաշխավորման նպատակով:

## ***2. Պաշտպանի համագործակցության նոր ձևաչափը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հետ***

Որպես աշխատանքի նոր ուղղություն՝ կարևոր է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ համագործակցությունը: Եվրոպական դատարանի ձևավորած իրավական չափանիշները երկրի իրավական համակարգի զարգացման համար ունեն անկյունաքարային նշանակություն: Դրա հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի դեմ քննվող գործերին որպես երրորդ կողմ ներգրավվելը, ինչպես նաև Հայաստանի վերաբերյալ վճիռների կատարման առնչությամբ հատուկ դիրքորոշումներ ներկայացնելը նպատակ ունեն նպաստել Հայաստանի իրավական համակարգում Եվրոպական դատարանի իրավական չափանիշների առավել արդյունավետ ներդրմանը:

Պաշտպանի փորձը ցույց է տալիս, որ 2018 թվականից սկսած այս պրակտիկայի ներդրումը իրական արդյունքներ է տալիս՝ շնորհիվ նաև Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության հետ բարձր որակի համագործակցության: Այս հարցերում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև արդյունավետ համագործակցությունը Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի հետ:

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե է ներկայացրել «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման վերաբերյալ դիրքորոշումը՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մասին: Նույն տարում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատել է Պաշտպանի միջնորդությունը՝ ներգրավվելու որպես երրորդ կողմ «Հակոբյանն ընդդեմ Հայաստանի» գործով: Եվրոպական դատարանում գործի քննությանը մասնակցությունը հնարավորություն է տվել Պաշտպանին իր լիազորությունների իրականացման արդյունքում ձեռք բերված՝ կոնկրետ գործին առնչվող տեղեկությունները ներկայացնել դատարանին: Մասնավորապես, Եվրոպական դատարանին տրամադրվել են

տեղեկություններ կապված պետության կողմից անազատության մեջ գտնվողին պատշաճ և անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու հետ: Դատարանին ներկայացվել են նաև քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության ապահովմանն առնչվող խնդիրները, որոնք վերաբերում են գանգատով բարձրացված հարցերին:

2019 թվականի ընթացքում շարունակվել է աշխատանքը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե հետ: Մասնավորապես, Նախարարների կոմիտե է ներկայացվել հատուկ դիրքորոշում՝ կապված ազատությունից զրկված անձի առողջության պահպանման իրավունքի հարցով «Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի կատարման հետ:

Դիրքորոշման մեջ անդրադարձ է կատարվել նշված վճռի կատարման համար սկզբունքային մի շարք հարցերի, որոնք վկայում են ազատությունից զրկման վայրերում պատշաճ բժշկական օգնության և սպասարկման ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտության մասին: Այդ ուղղությամբ Պաշտպանի կողմից արվել են կոնկրետ առաջարկություններ: Այս հարցերի հետ կապված Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը համագործակցել է Արդարադատության նախարարության և Եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի հետ:

Ձևավորված պրակտիկան շարունակվում է նաև 2020 թվականի ընթացքում: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանը, Հելսինկյան կոմիտեի հետ համատեղ 2019 թվականին մշակել և 2020 թվականին առաջին անգամ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե են ներկայացրել հատուկ դիրքորոշում՝ կապված ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքների պաշտպանության հարցով «Պողոսյանն ընդդեմ Հայաստանի» Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճռի կատարման հետ: Այս հատուկ դիրքորոշումն առանձնահատուկ է, քանի որ այն ներկայացվել է ոլորտում գործող քաղաքացիական հասարակության դերի խթանման կարևորության հրամայականից ելնելով:

### ***3. 2019 թվականի ընթացքում Պաշտպանի իրականացրած ծրագրերը***

Հայաստանում մարդու իրավունքների համակարգի կատարելագործման, Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման և երկրում միջազգային չափանիշների արդյունավետ ներդրման տեսանկյունից անփոխարինելի նշանակություն ունի Պաշտպանի համագործակցությունը միջազգային գործընկերներ հետ, նրանց հետ ծրագրերի իրականացումը:

#### ***2.1 Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում***

2019 թվականին Աշխատակազմը Միացյալ Թագավորության կառավարության և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ շարունակել է և ավարտին է հասցրել «Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում» ծրագիրը:

#### ***2.2 Մարդու իրավունքներ և կանայք Հայաստանի զինված ուժերում***

2019 թվականին Աշխատակազմը Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ մեկնարկել է «Մարդու իրավունքներ և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագիրը:

Ծրագրի աջակցությամբ 2019 թվականի հոկտեմբերին կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինձառայողների իրավունքների հարցերով

փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստը, որի ժամանակ ներկայացվել և քննարկվել է Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման մեջ արտացոլված ՀՀ զինված ուժերում առկա խնդիրներն ու առաջարկվող լուծումները:

2.3 Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում հանրային ծառայության բնագավառում գործող կազմակերպությունների կողմից սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության դեսպանության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում» ծրագրով նախատեսված աշխատանքները: Ծրագրի նպատակն է ամրապնդել Աշխատակազմի կարողությունները՝ քննարկելու հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից սպառողների իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները, ինչպես նաև բարձրացնել Պաշտպանի դերի, մանդատի և նոր լիազորությունների վերաբերյալ իրազեկվածությունը շահառուների և հասարակության շրջանում:

2.4 Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ 2019 թվականին շարունակվել են «Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խթանում բոլորի համար» ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքները: Ծրագրի նպատակն է բարձրացնել Աշխատակազմի կարողությունները, բարձրացնել հասարակության իրազեկվածությունը մարդու իրավունքների և այդ իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ: Այս ծրագրի արժեքը նրանում է, որ Երևանում, Շիրակի, Գեղարքունիքի և այլ մարզերում հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի, ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են քննարկումներ՝ նվիրված աշխատանքային իրավունքների խախտումների կանխարգելմանը, առողջության պահպանման իրավունքին և կանանց, երեխաների նկատմամբ բռնության ազդեցությանը:

2.5 Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացում

Ծրագրի իրականացմամբ զարգացել է Պաշտպանի կարողությունները՝ Հայաստանում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պահպանության մակարդակը բարձրացնելու համար:

Ծրագրի շրջանակում ազատությունից զրկման վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված տեղեկատվական թերթիկն ու պաստառը թարգմանվել են վեց լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն, արաբերեն, պարսկերեն): Դրանցում մատչելի ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի մանդատը, լիազորությունները, ինչպես նաև Պաշտպանին դիմելու կարգը և ազատությունից զրկված անձանց կողմից իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունները: Նյութերի նպատակն է օտարերկրացի և հայերեն լեզվին չտիրապետող ազատությունից զրկված անձանց հասանելի դարձնել անհրաժեշտ տեղեկությունը:

2.6 ԵՄ բյուջետային աջակցության ծրագիր

ԵՄ բյուջետային աջակցման ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի հիմնադրամների հետ համագործակցությամբ իրականացվել է կանանց իրավունքների և ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունների զարգացում: Ծրագրի աջակցությամբ կանանց իրավունքների և ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում իրականացվել է ուղեցույցների, իրավական չափանիշների և տեղեկատվական հոլովակների պատրաստում և հրապարակում:

Եվրոպական միության «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի շրջանակում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ անգամ մշակվել են խոշտանգումների կանխարգելման ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի իրավական չափանիշները հայերեն<sup>49</sup> և անգլերեն: Չափանիշները հրապարակվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կազմակերպած կլոր սեղան քննարկման ժամանակ: Հրապարակված չափանիշների մեջ ներառվել են Մարդու իրավունքների պաշտպանի իրավաբանությունը և ազատությունից զրկման վայրերում մարդու իրավունքների ապահովմանն առնչվող խախտումներն արձանագրելիս Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության սկզբունքները: Իրավական չափանիշները կազմված են հատուկ սկզբունքով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի, միջազգային այլ կազմակերպությունների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունքների հիման վրա: Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի իրավական չափանիշները կարող են իրավունքի աղբյուր հանդիսանալ դատավորների, դատախազների և քննիչների համար, դրանով իսկ նպաստելով մարդու իրավունքի պաշտպանության բարելավմանը:

Վերը նշված ծրագրերի շրջանակներում իրականացված իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները ներկայացված են սույն հաղորդման «Պաշտպանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը» պարագրաֆում:


---

<sup>49</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի իրավական չափանիշները» զեկույցը  
<https://ombuds.am/images/files/9a19f177a2f51324a5fcf7d45758e104.pdf> (հայերեն) և  
<https://ombuds.am/images/files/93189aacc95a0241c91efbcd8a4a217c.pdf> (անգլերեն):



**ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ**

**1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը**

Հաշվետու ժամանակահատվածում Աշխատակազմի կառուցվածքում կատարվել են փոփոխություններ: Ստեղծվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժինը: Բաժնի հիմնական գործառույթն է աջակցել Պաշտպանին իրականացնել Օրենքով իրեն վերապահված՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության գործառույթը: Այս և այլ փոփոխությունների հաշվառմամբ ստորև ներկայացվում է Աշխատակազմի կառուցվածքը







## 2. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ

Պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է մարդու իրավունքներին կրթությունը: Դրա շահառու խմբերը ներառում են ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ և այլն:

Աշխատանքի արդյունավետության պահպանման և զարգացման տեսանկյունից հիմնարար նշանակություն ունի աշխատակազմի պրակտիկ հմտությունների և տեսական գիտելիքների պարբերական զարգացումը: Այդ նպատակով տարբեր ծրագրերի համատեքստում կազմակերպվել են Աշխատակազմի ներկայացուցիչների վերապատրաստումներ:

### 2.1 Մարդու իրավունքների կրթություն

Հաշվետու տարում Պաշտպանը շարունակել է աշխատանքի մեկ այլ կարևոր ուղղության՝ մարդու իրավունքների կրթության, զարգացումը: Սահմանադրական օրենքի մակարդակում ամրագրված է, որ Պաշտպանը կարող է իրականացնել Աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ: Հիմք ընդունելով այս լիազորությունը, 2019 թվականին շարունակվել է իրականացնել վերապատրաստումներ և իրագրվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ:

Նշված գործառնության շրջանակում դեռևս 2018 թվականին Աշխատակազմում ստեղծվել է Հետազոտական և կրթական կենտրոնը: Դրա գործունեության նպատակն է ոչ միայն նպաստել նորմատիվ իրավական ակտերի և դրանց կիրառության պրակտիկայի կատարելագործմանը, այլ նաև մարդու իրավունքների կրթության կազմակերպմանը տարբեր շահառու խմբերի համար:

Կենտրոնը Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների համար իրականացնում է մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ:

2019 թվականին մարդու իրավունքների կրթության ոլորտում կազմակերպված միջոցառումներ են իրականացվել ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների, այնպես էլ պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպություններ, լրագրողների, ինչպես նաև հատուկ խմբերի ներկայացուցիչների, օրինակ՝ փախստականներ և ապաստան հայցող անձանց համար:

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար կազմակերպվել են դասընթացներ: Հանդիպումները վերաբերել են Պաշտպանի լիազորություններին, փակ հաստատություններ իրականացվող այցերին, ՔԿՀ-ում հացադուլ հայտարարած անձի իրավունքներին, ինքնասպանության դեպքերին, ատելության խոսքին և այլ թեմաներ:

Կազմակերպվել է նաև հատուկ դասընթաց-քննարկումների շարք Քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների, այդ թվում՝ բժիշկների, հոգեբանների, ազատությունից զրկված անձանց հետ անմիջականորեն շփում ունեցող անվտանգության ապահովման բաժնի և հերթապահ խմբի աշխատակիցների համար:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է նաև 6-օրյա վերապատրաստումներ հոգեբուժական հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց համար:

Միջոցառման ընթացքում քննարկվել են հոգեբուժական հիվանդանոցային բժշկական օգնությանն ու սպասարկմանն առնչվող համակարգային խնդիրները, ներառյալ՝ զսպան միջոցների կիրառման, պացիենտների զննության և հետազոտման չափանիշների, ստացիոնար ընդունելու և դուրս գրելու ընթացակարգերի, իրազեկման և իրազեկված համաձայնության ստացման, հարկադիր և ոչ հոժարակամ բուժման, սկրինինգային հետազոտությունների կազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ:

### 2.1 Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացում և փորձի միջազգային փոխանակում

Պաշտպանի աշխատակազմի մասնագիտական կատարելագործման նպատակով պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ մարդու իրավունքներին առնչվող թեմաներով: 2019 թվականի ընթացքում Աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են հետևյալ հիմնական վերապատրաստման դասընթացներին և փորձի փոխանակման այցերին՝

- վերապատրաստումներ ընտանիքում բռնության կանխարգելման հարցերով (ընտանիքում բռնության տեսակները, ազդեցությունը կանանց և երեխաների վրա և այլն).
- վերապատրաստում-քննարկում Պաշտպանի աշխատակազմի և ՀԿ-ների համար Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գնահատման հատուկ դիրքորոշումներ ներկայացնելու վերաբերյալ.
- երկօրյա դասընթաց կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով արված առաջարկների կատարման նկատմամբ հսկողության, դրա մեխանիզմի կատարելագործման և այդ ոլորտում Պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդման հարցերով<sup>50</sup>.
- դասընթացավարների վերապատրաստման եռօրյա դասընթաց՝ նվիրված անվտանգության ոլորտում կառավարման և վերահսկման մեխանիզմներին (ԵԱՀԿ-Հայաստան նոր համագործակցության շրջանակում).
- «Ագաթ» ՀԿ-ի դասընթաց հատուկ Պաշտպանի աշխատակազմի համար խոսքի և լսողության խնդիրներ ունեցող մարդկանց հետ ժեստերի լեզվով հաղորդակցվելու հարցով: Ժեստերի լեզվի մասնագետը ներկայացրել է շուրջ 300 առաջնային ժեստ.
- ազատությունից զրկված փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների ապահովման մշտադիտարկման աշխատաժողով (կազմակերպվել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ).
- «Հայաստանում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում փորձի փոխանակման միջազգային այց Իսպանիա՝ նախապես հատուկ սկզբունքով կազմված համատեղ այցերի ու գործնական քննարկումների ծրագրով.
- խոշտանգումների կանխարգելման մեխանիզմի այց Տալլին՝ Էստոնիայի մարդու իրավունքների ազգային հաստատություն՝ համատեղ այցերի և գործնական քննարկումների ծրագրով.
- վերապատրաստման այց ք.Ստրասբուրգ (Ֆրանսիա) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննվող գործերում որպես երրորդ կողմ ներգրավման, դատարանի վճիռների կատարման հարցերով և այլն:

<sup>50</sup> Տե՛ս «Դասընթաց խոշտանգումների կանխարգելման ոլորտում Պաշտպանի առաջարկների կատարման նկատմամբ հսկողության կատարելագործման վերաբերյալ» հրապարակումը <http://www.ombuds.am/am/site/ViewNews/755>:

## ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին տարիներին էականորեն աճել է Պաշտպանին ներկայացվող դիմումների ու բողոքների թիվը: Դրանց համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2015 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 5,214, 2016 թվականին՝ 5,113, 2017-ին՝ 6,417, իսկ 2018 թվականին այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելացել է՝ դառնալով 10,754 դիմում-բողոքներ:

2019 թվականին կրկին արձանագրվել է դիմում-բողոքների աճ: Այսպես, 2019 թվականին, նախորդ տարվա համեմատ, դիմում-բողոքների թիվն ավելացել է՝ 22%-ով կամ 2386-ով, դառնալով՝ 13,140 դիմում-բողոք: Ինչպես երևում է դիմում-բողոքների աճը կրում է շարունակական բնույթ և 2019 թվականի տվյալները վկայում են դրա շեշտակի աճի մասին:

Դիմում-բողոքների թվի աճով և մշտադիտարկման լիազորություններով պայմանավորված ավելանում են նաև իրականացվող այցերը:

Այսպես, 2015 թվականին ընդհանուր առմամբ իրականացվել է 586 այց, 2016 թվականին՝ 415, 2017 թվականին՝ 614, 2018 թվականին՝ 864, իսկ 2019 թվականին այն կրկին ավելացել է՝ դառնալով 910:


Զուգահեռ աճում է նաև անհատական գործերով աշխատանքի արդյունավետությունն ու դրական գործերի քանակը:

Այսպես, Պաշտպանի իրավասությանը վերաբերող անհատական գործերով վերջին 5 տարիների տվյալների համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2015 թվականին դրական լուծում ստացած բողոքների թիվը կազմել է 498, 2016 թվականին՝ 444, 2017 թվականին այդ ցուցանիշը շուրջ երկու անգամ ավելացել է՝ դառնալով 845, 2018 թվականին գրեթե կրկնակի ավելացել է՝ դառնալով 1,593: Դրական լուծում ստացած բողոքների թիվը շարունակել է բարձր մնալ նաև 2019 թվականին՝ կազմելով 1,287 դիմում-բողոք:


Աճի միտում ունեն նաև Պաշտպանի աշխատակազմի թեժ գիծ հեռախոսահամարներին ստացվող հեռախոսազանգերը: Այսպես, 2016 թվականին ստացված հեռախոսազանգերի թիվը կազմել է 2,086, 2017-ին՝ 1,876, 2018-ին՝ 2,802, իսկ 2019 թվականին այդ ցուցանիշն աճել է երկու անգամից ավելի՝ դառնալով 6,210 հեռախոսազանգ:

Վիճակագրական տվյալները վկայում են նաև Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի թվի էական աճի մասին: Այսպես, 2016 թվականին Պաշտպանին կարծիքի են ներկայացվել մոտ 90 իրավական ակտերի նախագծեր, 2017 թվականին՝ 144, 2018 թվականին՝ 185, իսկ 2019 թվականին այն կազմել է 241:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ




**ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԴԻՍՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ**




- Երևան - 4953
- Արմավիրի մարզ - 516
- Շիրակի մարզ - 459
- Արարատի մարզ - 274
- Արագածոտնի մարզ - 137
- Վայոց ձորի մարզ - 52
- Գեղարքունիքի մարզ - 696
- Վոսաթի մարզ - 491
- Լոռու մարզ - 317
- Սյունիքի մարզ - 230
- Տավուշի մարզ - 99
- Հասցե չպարունակող բոլորներ - 4916

## ՏՎՅԱԼՆԵՐ ԱՅՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<sup>1</sup>




<sup>1</sup> Կանխարգելման ազգային մեխանիզմի ազատությունից զրկման վայրեր այցերի թվի նվազումը նախորդ տարվա համեմատ պայմանավորված է անհատական և մշտադիտարկման այցերի տառանջատմամբ:

**ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝  
ԸՍՏ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**






**2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ**



## 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՅԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Chart Area



### ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

#### ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սոցիալական ապահովության իրավունքի պահպանումը ենթադրում է պետության գործունեության ուղղություն, որն առնչվում է մարդկանց սոցիալական պաշտպանությանը: Բնակչության սոցիալական պաշտպանությունը կամ սոցիալական ապահովությունը մարդկանց օրենսդրորեն ամրագրված իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների ամբողջությունն է, որն ապահովում է ընդունելի կենսամակարդակ:

Այս իրավունքի ապահովումը պայմանավորում է մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական պաշտպանությունը:

#### **1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ**

##### **1.1 Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելը**

2019 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ բողոքներ: Խնդիրներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականին նույնաբովանդակ են և վերաբերում են արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ մարդկանց դիմումները մերժելուն պատճառաբանությամբ, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող նրանց աշխատանքային ստաժը չի բավականացնում, քանի որ ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների համապատասխան իրավական ակտում նրանց մասնագիտությունները տառացիորեն ներառված չեն:

Առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած անձանց արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու կարգն ու պայմանները սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: Օրենքը համապատասխան պայմանների առկայության դեպքում հնարավորություն է տալիս արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակել 55 կամ 59 տարին լրացած անձանց (Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մաս):

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունները, աշխատանքները, մասնագիտությունները, պաշտոնները և ցուցանիշներն ընդգրկված են N 1, թիվ N 2 կամ N 3, N 4 ցուցակներում: N 1 և N 2 ցուցակները սահմանված են ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն որոշմամբ, իսկ այն արտադրությունները, աշխատանքները, մասնագիտությունները, պաշտոնները և ցուցանիշները, որոնք ընդգրկված են N 3 և N 4 ցուցակներում՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշմամբ: Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների N 1 և N 2 ցուցակները կիրառելու կանոնները սահմանված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի N 66-Ն հրամանով:

Տարիներ շարունակ Պաշտպանին հասցեագրված բողոքներով մարդիկ իրենց դժգոհությունն են հայտնել, որ փաստացի կատարել են արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք, աշխատել առողջության համար վտանգավոր պայմաններում, սակայն

կատարած աշխատանքն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող համապատասխան ցանկերում բառացիորեն ներառված չլինելու հիմնավորմամբ գրկվել են կենսաթոշակից: Խնդիրն առաջանում է միայն այն պատճառով, որ մարդկանց փաստացի կատարած աշխատանքն աշխատանքային գրքույկում գրառվել է այլ անվանմամբ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ դիմողը 1981 թվականից մինչ օրս, 2019 թվականի դրությամբ 37 տարի աշխատել է հեռուստակայանում որպես ճարտարագետ: Ըստ բողոքի՝ աշխատանքային գրքույկում աշխատած 18 տարիները նշվել է որպես ճարտարագետ, իսկ մնացած տարիների զբաղեցրած պաշտոնի անունն առանց նրա իմացության փոխվել է որպես կայանի պետ, որը վնասակար պայմաններում կատարվող աշխատանք չէ, մինչդեռ, դիմողի պնդմամբ՝ այդ 37 տարիների ընթացքում իր աշխատանքի բնույթը չի փոխվել: Նշվածի պատճառով դիմողը գրկվել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքից: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի N 66-Ն հրամանով հաստատված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների N 1 ցուցակը և արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների N 2 ցուցակը կիրառելու կանոնների 682-րդ կետի համաձայն՝ «ՈԻԿՎ, ՈԻՎՁ, ՍՎՁ ճառագայթման աղբյուրներով աշխատող ղեկավարներն այդպիսի կենսաթոշակի իրավունք չունեն: Այդ իրավունքից օգտվում են բանվորները և մասնագետները: Մասնագետների շարքն են դասվում ճարտարագետները (ինժեներները) և ավագ ճարտարագետները (ինժեներները), տեխնիկները և ավագ տեխնիկները, ռադիոտեխնիկները և ավագ ռադիոտեխնիկները (...): Հարկ է նկատել, որ ըստ բողոքի՝ դիմողի՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքներ կատարելու փաստը հաստատել է նաև հեռուստակայանը համապատասխան տեղեկանքով, որը, սակայն, Նախարարությունը համարել է առանց հիմքերի տրված ոչ պատշաճ փաստաթուղթ:

Խնդրահարույց է, որ դիմողի կատարած աշխատանքի բնույթի վերաբերյալ հավելյալ ուսումնասիրություններ և ստուգումներ կենսաթոշակային մարմինը չի իրականացրել, չի ճշտել դիմողի օգտին հնարավոր բոլոր հանգամանքները:

Նշված դեպքը և Պաշտպանին հասցեագրված այլ բողոքներ վկայում են ոլորտում առկա թերի վարչարարության մասին: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Հակառակ դեպքում անձի հաղորդած տվյալների հավաստի լինելու փաստի ուժով վարչական մարմինը պարտավոր է կենսաթոշակ նշանակել արտոնյալ պայմաններով»:

Մինչդեռ, բողոքների քննությունը ցույց է տվել, որ արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը չի ապահովում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում՝ պարզելու համար մարդկանց կատարած փաստացի աշխատանքի իրական բնույթը, արդյունքում ծանր և վնասակար աշխատանքի

փաստացի կատարումը բավարար չի լինում արտոնյալ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու համար:

Այս կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է, որ այն պայմաններում, երբ կենսաթոշակ նշանակելիս սոցիալական ապահովության տարածքային բաժինները չեն իրականացնում պատշաճ վարչարարություն, չեն իրականացնում համապատասխան ստուգումներ իրականությունը բացահայտելու կապակցությամբ, խնդիրները շարունակական բնույթ են կրելու:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝*

1. արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունն ու բնույթը՝ Կառավարության որոշումներով մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին չտալով տառացի և նեղ մեկնաբանություն,

2. իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա իրականացնել պատշաճ վարչարարություն՝ ի հայտ բերելու քաղաքացու օգտին հանգամանքները և կատարելագործելու Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշումներով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակները:

## **1.2 Մասնակի կենսաթոշակ նշանակելը**

2019 թվականին լուծվել է նախորդ տարիների ընթացքում Պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրաձայնված համակարգային խնդիրը, որը վերաբերում էր մասնակի կենսաթոշակ նշանակելիս համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառելուն: 2019 թվականի հուլիսի 1-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասից հանել մասնակի կենսաթոշակ նշանակելիս համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառելու վերաբերյալ դրույթը:

Տարիներ շարունակ Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում արձանագրել է, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում անհրաժեշտ է հաշվառել նաև համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը: Մինչև 01.07.2019 թվականը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում էր, որ համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվառվում: Նման օրենսդրական կարգավորման հետևանքով խտրականություն էր դրվում միայն մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք կատարած և մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքին զուգահեռ այլ աշխատանք կատարած աշխատակիցների միջև այն դեպքում, երբ երկուսն էլ փաստացի կատարել էին նույն աշխատանքը: Խնդրահարույց էր, որ հիմք էր ընդունվում, որ անձը մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքից զատ այլ աշխատանք էլ էր կատարել այն դեպքում, երբ օրենսդրությունը նրան տվել է այդ հնարավորությունը: Այդպիսով, կարծես նսեմացվում և արժեզրկվում էր համատեղությամբ աշխատանք կատարած աշխատակիցների աշխատանքը, չնայած նրան, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող գործունեությունն իր բնույթով կարող է համատեղությամբ իրականացվել՝ առանց իմաստազրկելու կենսաթոշակի էությունն ու նպատակը:

Հարկ է նկատել, որ համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառելու պահանջ էր բովանդակում նաև

Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 28-րդ կետը, որն ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 268-Ն որոշմամբ:

Չնայած որոշակի դրական փոփոխություններին՝ Պաշտպանին հասցեագրվող բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցում առկա համակարգային խնդիրներ, որոնք մնում են չլուծված: Խնդիրների մեծ մասի մասին բարձրաձայնել է Պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում: Այսպես, ինչպես նախորդ տարիներին, 2019 թվականի ընթացքում նույնպես մարդիկ իրենց դժգոհությունն են հայտնել, որ մասնակի կենսաթոշակ նշանակելը մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ իրենց զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ աշխատել են, ներառված չեն համապատասխան իրավական ակտում:

Խնդրահարույց է Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկը, այն ամբողջական չլինելը, լիազոր մարմնի՝ ցանկում ընդգրկված պաշտոններն ու մասնագիտությունները տառացի ու նեղ մեկնաբանելու և ցանկում չընդգրկված մասնագիտությունների ու պաշտոնների բնույթն ու էությունը հաշվի չառնելու պրակտիկան:

Նախորդ տարիներին Պաշտպանը բարձրացրել էր Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկի կատարելագործման հարցը, սակայն ցանկում թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկում իրականացվող փոփոխությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված, քանի որ փոփոխությունների անհրաժեշտությունն անընդհատ առաջանում է. այդ մասին են վկայում Պաշտպանին հասցեագրվող բողոքները:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը 25.06.1981-20.06.1983 թվականները և 25.05.1985-20.01.1987 թվականները դպրոցում աշխատել է որպես լաբորանտ, իսկ 1993 թվականից 2019 թվականի դրությամբ՝ ուսուցիչ: Խնդիրն այն է, որ կենսաթոշակային մարմինը դիմողի՝ դպրոցում որպես լաբորանտ աշխատած տարիները չի հաշվառել մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում՝ այն հիմնավորմամբ, որ Կառավարության N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածում ընդգրկված չէ լաբորանտը, ինչի պատճառով էլ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը 12 օրացուցային տարի չի կազմել, արդյունքում դիմողին մերժվել է մասնակի կենսաթոշակի նշանակումը:

Մեկ այլ դեպքով քաղաքացուն մասնակի կենսաթոշակ չի նշանակվել՝ պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության N 665-Ն որոշմամբ հաստատված 6-րդ հավելվածում սահմանված պաշտոնների ցանկում դասախոսի պաշտոնը նախատեսված չէ: ՀՀ կառավարության N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ մասնակի կենսաթոշակի իրավունք են տալիս տնօրեն (դիրեկտոր), տնօրենի (դիրեկտորի) տեղակալ, դասատու, ուսուցիչ, մանկավարժ, արտադրական ուսուցման վարպետ (վարպետ-դաստիարակ, վարպետ-դասատու) աշխատանքները: Այս կապակցությամբ հարկ է վկայակոչել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնց համաձայն՝ «արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում նախատեսվում են մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմեր: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող

կազմակերպությունների մանկավարժական կազմում ընդգրկվում են դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները: Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «դասախոսը ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող է»: Փաստորեն, նշված օրենքով դասախոսը ևս համարվում է մանկավարժական աշխատող և համարժեք է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նշված «դասատու», «ուսուցիչ», «մանկավարժ» հասկացություններին: Նշվածը, սակայն, հաշվի չի առնվել և վերը նշված ցանկով նախատեսված պաշտոնների նեղ մեկնաբանման պատճառով դիմողին մերժվել է մասնակի կենսաթոշակ նշանակելը:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով դիմողին մասնակի կենսաթոշակ նշանակվելը մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ այն կազմակերպությունը, որտեղ դիմողն աշխատել է, Կառավարության N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածով նախատեսված չէ, մինչդեռ, պաշտոնների և մասնագիտությունների ցանկում դիմողի մասնագիտությունը («ուսուցիչ») առկա է: Կազմակերպությունն ուսումնաարտադրական կոմբինատ է, որտեղ դիմողն աշխատել է որպես ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ուսուցչուհի: Ուշագրավ է այն, որ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածի կազմակերպությունների ցանկում նախատեսված է «այլ տեսակի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոց և ուսումնարան»-ը, որը համարժեք է ուսումնաարտադրական կոմբինատին: Ավելին, ուսումնաարտադրական կոմբինատում աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառելու առաջարկություն արել է նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, սակայն ինչպես վերը նկարագրված դեպքերում, այս դեպքում նույնպես Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն այն անտեսել է: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշվածը պատճառաբանում է, որ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1959 թվականի «Լուսավորության, առողջապահության և գյուղատնտեսության աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակների մասին» N 1397 որոշմամբ հաստատված հիմնարկությունների, կազմակերպությունների և պաշտոնների ցանկում ուսումնաարտադրական կոմբինատը նախատեսված չէ: Մինչդեռ, հարկ է նկատել, որ ուսումնաարտադրական կոմբինատները ստեղծվել են 1980-ական թվականներին: Հետևաբար, նշված որոշմամբ նախատեսված լինել չէին կարող: Նախարարությունը «այլ տեսակի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոց և ուսումնարան»-ի ուսումնաարտադրական կոմբինատին համապատասխան լինելու հնարավորությունը պարզելու նպատակով հարցում է կատարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, որտեղից նշել են, որ ուսումնաարտադրական կոմբինատը դպրոցներին կից կառույց էր, որտեղ հարևան դպրոցների 9-10-րդ դասարանների աշակերտներին մասնագիտացում տալու նպատակով կազմակերպվում էր աշխատանքի ուսուցման դասաժամեր: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշման՝ «ուսումնաարտադրական կոմբինատ» կազմակերպությունը ոչ դպրոց է, ոչ ուսումնարան, իսկ «դպրոցներին կից կառույց» կազմակերպությունները մասնակի կենսաթոշակի իրավունք տվող կազմակերպությունների ցանկում նշված չեն, հետևաբար այդ կազմակերպություններում աշխատած ժամանակահատվածները մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվել չեն կարող: Փաստորեն, նշված դեպքում նույնպես Նախարարությունը հաշվի չի առել կազմակերպությունում կատարված աշխատանքի բնույթն ու էությունը և առաջնորդվել է իրավական ակտի զուտ տառացի ու նեղ մեկնաբանմամբ:

Կենսաթոշակային մարմնի ձևավորած պրակտիկան ցույց է տալիս, որ Կառավարության N 665-Ն որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված ցանկացած այլ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող փաստացի կատարված աշխատանք չի հաշվառվում մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում, նույնիսկ հաշվի չի առնվում այն, որ այլ իրավական ակտերում նշված աշխատանքն իր բնույթով և էությամբ համարժեք է ցանկում ընդգրկված մասնագիտություններին և պաշտոններին: Ավելին, լիազոր մարմինը հիմք չի ընդունում կրթության ոլորտի լիազոր մարմին՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրությունները՝ այս կամ այն աշխատանքների բնույթի և էության վերաբերյալ համապատասխան պարզաբանումներով և առաջարկներով, թեև դրանք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իմաստով պաշտոնական պարզաբանումներ լինել չեն կարող: Այսինքն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն անտեսում է ոլորտին տիրապետող պետական մարմնի տրամադրած տեղեկատվությունները, որոնք հստակ կողմնորոշիչ նշանակություն ունեն անձանց կատարած աշխատանքի, պաշտոնի կամ մասնագիտության բուն էության բացահայտման հարցում:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես ցույց է տալիս, որ մասնակի կենսաթոշակի նշանակման հետ կապված խնդիրները հիմնականում վերաբերում են լիազոր մարմնի այն դիրքորոշմանը, որ Կառավարության կիրառելի որոշմամբ սահմանված չէ այս կամ այն մասնագիտությունը կամ հաստիքը, որը հնարավորություն կտա մասնակի կենսաթոշակի իրավունք տվող ստաժի:

Հատկանշական է, որ բարձրացված խնդրով դատարան դիմելու դեպքում դիմողները հիմնականում հաջողության են հասնում, նշվածի մասին է վկայում համապատասխան դատական պրակտիկան, քանի որ դատարանը մասնակի կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու վերաբերյալ գործերով վերլուծելով օրենսդրությունը, հայցվորների աշխատանքային գրքույկների, գործատուի(ների) տրամադրած տեղեկանքների, ՀՀ կրթության և գիտության նախարարության գրությունների (պարզաբանումների) հիման վրա բացահայտել է մարդկանց կատարած բուն գործառույթները և դրանց համապատասխանությունը Կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված աշխատանքներին կամ մասնագիտություններին (թիվ ՎԴ2/0584/05/13, ՎԴ/2704/05/15, ՎԴ/6796/05/12, ՎԴ/6221/05/12, ՎԴ/6796/05/12, ՎԴ/0357/05/15 վարչական գործերով կայացված վճիռներ):

Այսինքն, դատարանը քաղաքացիների կատարած աշխատանքը, բուն գործառույթները բացահայտելիս հիմք է ընդունում նաև ոլորտին տիրապետող պետական մարմնի տեղեկություններն ու առաջարկները, ինչը, սակայն, չի անում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը նորմատիվ իրավական ակտի դրույթների իմաստի պարզմանն ուղղված գործընթաց է՝ դրանց ոչ բավարար հստակության, տարաբնույթ ընկալման, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած հարցերի պարզման անհրաժեշտության դեպքերում»: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «օրենսդրական ակտի (բացառությամբ Սահմանադրության) և Կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում կարող է տալ ակտը կիրառող պետական կառավարման համակարգի մարմինը (...): Մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին, կամ պարզաբանում կարող են տալ մի քանի իրավասու մարմիններ՝ համատեղ: Մեկ հարցի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում կարող է տրվել միայն մեկ անգամ, եթե նախկինը հետ չի կանչվել»:



Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առաջարկությունները, հայտնած տեղեկություններն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իր պաշտոնական պարզաբանումներում պետք է հիմք ընդունի, քանի որ կրթության ոլորտում առկա աշխատանքների, մասնագիտությունների բուն էության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն կարող է տրամադրել միայն ոլորտին տիրապետող պետական մարմինը:

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ մասնակի կենսաթոշակի իրավունք սովորական մասնագիտությունների և պաշտոնների ցանկում վերջին անգամ փոփոխություն կատարվել է 2017 թվականին, այն է՝ երկու լրացում: Ներկայումս շրջանավոր փոփոխություններով նշված ցանկում նախատեսվում է կատարել ևս մի քանի լրացումներ: Փոփոխությունների նախագիծը ներկայացվել է Պաշտպանին՝ կարծիքի: Պաշտպանն առաջարկել է նախագծում քննարկել լրացումների գծիկով գրությամբ ձևակերպումները սյունակում ավելացնելու հարցը ևս, քանի որ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ մասնակի կենսաթոշակի նշանակումը մերժվում է հիմք ընդունելով նաև աշխատանքային գրքույկում նշված այդ գրառումները:

2019 թվականի ընթացքում մասնակի կենսաթոշակի նշանակման հարցում համակարգային բնույթ է ձեռք բերել նաև ՍՍՀՄ ընտրովի պաշտոններում մարդկանց աշխատած ժամանակահատվածը մասնակի կենսաթոշակի իրավունք սովորական աշխատանքային ստաժում չհաշվառելու խնդիրը:

Ինչպես արդեն նշվեց, մասնակի կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու վերաբերյալ կարգավորումները սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, իսկ այդ իրավունքը սովորական մասնագիտությունների և պաշտոնների ու կազմակերպությունների անվանումների ցանկը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ: ՍՍՀՄ ընտրովի պաշտոնները մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք սովորական մասնագիտությունների և պաշտոնների ցանկում ընդգրկված չեն: Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրված բողոքներով մարդիկ վկայակոչել են ՍՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՍՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը, որի համաձայն՝ «սովետի մարմնում ընտրովի պաշտոնում դեպուտատի աշխատանքի ժամանակն աշխատանքային ստաժ է համարվում այն մասնագիտությամբ, որով դեպուտատն աշխատել է մինչև սովետի մարմնում ընտրովի պաշտոնում ընտրվելը»:

Հարկ է նկատել, որ այն մարդիկ, ովքեր ՍՍՀՄ ընտրովի պաշտոններ են զբաղեցրել, վերը նշված օրենքի ուժով իրավունք են ձեռք բերել, որ հետագայում իրենց աշխատանքային ստաժում սովետի մարմնում ընտրովի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը հաշվարկվելու է այն մասնագիտությամբ, որով իրենք աշխատել են մինչև սովետի մարմնում ընտրովի պաշտոնում ընտրվելը, սակայն, քանի որ ներկայիս օրենսդրությամբ այդ արտոնությունը սահմանված չէ, գրկվել են այդ իրավունքից: Մտահոգիչ է նաև այն, որ լինում են դեպքեր, երբ մասնակի կենսաթոշակ նշանակելիս չի բավականացնում համապատասխան տարիների մասնագիտական ստաժը միայն այն պատճառով, որ ներկայիս իրավակարգավորումներով ՍՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՍՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված արտոնությունը սահմանված չէ:

Կարևոր է նկատել, որ ՍՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՍՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի ուժով ընտրովի պաշտոն զբաղեցնելիս պահպանվել է մասնագիտական աշխատանքային ստաժի անընդհատությունը:

Դիմողներն արդարացի մտահոգություն են հայտնել առ այն, թե ինչպես պետք է իրացվի նախկինում ՄՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՄՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքով տրված արտոնությունը՝ այն դեպքում, երբ անձն, ընդհատելով իր մանկավարժական գործունեությունը, սովետի մարմնում ընտրովի պաշտոն է զբաղեցրել՝ ձեռք բերելով «իրավաչափ ակնկալիք» հետագայում մանկավարժական ստաժի անընդհատությունը պահպանվելու կապակցությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը 04.10.2006 թվականի թիվ ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության է նաև ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի<sup>51</sup>:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի, Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ «գույք» հասկացությունը թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ունի ինքնավար իմաստ, որը նյութական իրերի սեփականությամբ չի սահմանափակվում և անկախ է ներպետական իրավունքում առկա դասական դասակարգումներից:

Յուրաքանչյուր դեպքում քննարկման խնդիր այն է, թե արդյոք գործի հանգամանքներն ընդհանուր առմամբ անձին շնորհում են թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքը:

Ինչպես նշվեց, գույք ձեռք բերելու իրավաչափ ակնկալիքը թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված լինելու համար անհրաժեշտ է, որպեսզի այն ձեռք բերելը սահմանված լինի ազգային օրենսդրությամբ՝ օրենքով, իրավական այլ ակտով կամ դատարանի որոշմամբ փաստվի դրա գոյությունը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակի կենսաթոշակ ձեռք բերելու իրավաչափ ակնկալիքի գոյությունը փաստվել է ՄՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՄՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, հետևաբար, ակնհայտ է նաև այն, որ մասնակի կենսաթոշակ ստանալու համար այդ իրավունքից օգտվող անձինք անկասկած ունեցել են (ունեն) ողջամիտ և իրավաչափ սպասումներ, որ հետագայում իրենց մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվարկվելու է նաև ընտրովի պաշտոնում նրանց աշխատած ժամանակահատվածը:

Հետևաբար, մասնակի կենսաթոշակ ստանալու համար ՄՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՄՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով տրված իրավունքից օգտվող անձինք կարող են օգտվել 1-ին արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանությունից:

*Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ հիմք ընդունելով դրանց էության բացահայտման հետ կապված ոլորտի լիազոր մարմնի առաջարկությունները, չտալով Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման՝ մասնակի կենսաթոշակի*

<sup>51</sup> St' u Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի (Burdov v. Russia) գործով 2002 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 59498/00, կետ 40:

իրավունք տվող մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին տառացի և նեղ մեկնաբանություն,

2. մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառել նաև ՄՄՀՄ ընտրովի պաշտոններում մարդկանց աշխատած ժամանակահատվածը:

### **1.3 Կենսաթոշակատուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի վճարումը**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի հաղորդմամբ անդրադարձ էր կատարվել մահվան օրվա դրությամբ մահացածի հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված անձին ընտանիքի այլ անդամ չդիտարկելու և որպես ընտանիքի այլ անդամի, չվճարված կենսաթոշակի գումարը չվճարելու հարցին<sup>52</sup>: Այն չի չլուծվել նաև 2019 թվականի ընթացքում:

Օրինակ՝ 2019 թվականի բողոքներից մեկի համաձայն՝ դիմողը հանգուցյալ կենսաթոշակատուի հետ եղել է փաստական ամուսնական հարաբերությունների մեջ, մահվան օրվա դրությամբ բնակվել և հաշվառված է եղել նույն հասցեում: Կենսաթոշակատուի մահվանից հետո քաղաքացին դիմել է կենսաթոշակային մարմին մահացածի չստացած կենսաթոշակն ստանալու խնդրով, սակայն բանավոր մերժվել է օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվելու հիմնավորմամբ:

Խնդիրն այն է, որ կենսաթոշակային մարմինը հաշվի չի առնում փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող ամուսինների՝ միմյանց հետ համատեղ ապրելու և համատեղ ամուսնական կյանք վարելու փաստը: Հաշվի չի առնում նաև այն, որ դիմողը, եթե ոչ որպես ամուսին, այլ որպես ընտանիքի այլ անդամ կարող է ստանալ կենսաթոշակատուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքը սահմանում է միայն «մերձավոր ազգականներ» հասկացությունը: Օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ մերձավոր ազգականներ են ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականները՝ ծնողներն ու զավակները, պապը, տատն ու թոռները, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրներն ու քույրերը, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակները:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը չի կարգավորել, թե օրենքի իմաստով ովքեր են համարվում կենսաթոշակատուի ընտանիքի այլ անդամներ: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում օգտագործվել է «ընտանիքի այլ անդամներ» նոր հասկացություն, ինչը, սակայն, Ընտանեկան օրենսգրքով բացահայտված չէ: Հասկացության բացահայտումը, փաստորեն չի տրվել նաև Օրենքով: Հետևաբար, պարզ չէ, թե կենսաթոշակային մարմինն ինչ իրավական նորմով է առաջնորդվում՝ տալով նեղ մեկնաբանություն Օրենքի վերը նշված դրույթին:

Ընտանիքի անդամ հասկացությունը բացահայտված է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում, որի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ ընտանիքի անդամներ են համարվում անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները:

<sup>52</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 68-70:

Այս առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացրել էր հարցադրում այն մասին, թե փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող, հաստատությունից դուրս ապրող, միևնույն հասցեում հաշվառված և համատեղ բնակվող անձանցից որևէ մեկի մահվան դեպքում մահացած կենսաթոշակատուի չվճարված կենսաթոշակի գումարը պրակտիկայում վճարվում է արդյոք դիմողին: Նախարարությունը, սակայն, այս հարցին անդրադարձ չի կատարվել այս հարցին:

Մեկ այլ բողոքի հետ կապված՝ նախարարության դիրքորոշման համաձայն՝ կենսաթոշակային օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում անձի՝ ընտանիքի այլ անդամի կարգավիճակը չի փոխկապակցվում փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվելու փաստին: Այս դեպքում հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում կենսաթոշակատուի մահվան օրվա դրությամբ նրա հետ նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված լինելը:

Այսպիսով, միևնույն հասցեում հաշվառված և համատեղ բնակվող անձանցից որևէ մեկի մահվան դեպքում մյուսին՝ որպես ընտանիքի այլ անդամի, մահացածի չվճարված կենսաթոշակի գումարը չի վճարվում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքով իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրական գործող կարգավորումներին:*

#### ***1.4 Սոցիալական ապահովության իրավունքի իրացման սահմանափակումներ միջպետական համաձայնագրերում անհրաժեշտ կարգավորումների բացակայության պատճառով***

Նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել էր այլ երկրների հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում պայմանագրի (համաձայնագրի) բացակայության պատճառով կենսաթոշակի անցնելիս աշխատանքային ստաժում այդ պետություններում աշխատած ժամանակահատվածի չհաշվարկման հարցը<sup>53</sup>:

Կենսաթոշակի իրավունքը փոխկապակցված է տվյալ պետությունում աշխատանքային գործունեությանը: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված են աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանք հաշվառելու պայմանները: Աշխատանքային գործունեության ժամանակահատվածները հաշվառվում են աշխատանքային ստաժում, եթե վճարվել են եկամտային հարկ կամ կենսաթոշակային վճար, կամ սոցիալական վճարներ: Խնդրահարույց է այն, որ մարդիկ, ունենալով այլ պետություններում իրենց աշխատանքային գործունեության ժամանակահատվածների համար համապատասխան վճարումների կատարված լինելը հավաստող փաստաթղթեր, աշխատանքային ստաժում այդ ժամանակահատվածները չեն ներառվում, քանի որ վճարումների կատարված լինելը հավաստող փաստաթղթերի առկայությունը կենսաթոշակային մարմինը բավարար չի գնահատում: Նշվածը հիմնավորվում է այդ երկրների հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում պայմանագրի (համաձայնագրի) բացակայությամբ:

Պաշտպանն առաջարկել էր ընդլայնել Հայաստանի Հանրապետության հետ համապատասխան համաձայնագրի ունեցող երկրների շրջանակը: 2018 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն աշխատանք է

<sup>53</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 76-77:

իրականացրել ԵԱՏՄ անդամ պետությունների հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքելու ուղղությամբ: 2019 թվականի դեկտեմբերի 20-ին Սանկտ-Պետերբուրգում ստորագրվել է «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատողների կենսաթոշակային ապահովության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր): Չնայած դրական տեղաշարժին, բարձրացված խնդիրը համակարգային առումով շարունակում է մնալ չլուծված: ՀՀ քաղաքացիների՝ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր չկնքած երկրներում 1992 թվականից հետո աշխատած ժամանակահատվածը ՀՀ կենսաթոշակային օրենսդրության համաձայն՝ աշխատանքային ստաժում չի հաշվառվում: Այլ երկրում ձեռք բերած ստաժը Հայաստանում կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառելը հնարավոր է կենսաթոշակային ապահովության ոլորտում փոխհամագործակցության առկայության դեպքում (երբ առնվազն հնարավոր կլինի կարգավորել ստաժի հաստատման, ստաժերը փոխադարձ ճանաչելու և կենսաթոշակի իրավունքն իրացնելու համար այլ անհրաժեշտ հարցեր):

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խնդիրները ոչ միայն վերաբերում են այլ երկրների հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում պայմանագրի (համաձայնագրի) բացակայությանը, այլ նաև առկա համաձայնագրերով սոցիալական ապահովության իրավունքի իրացումն ապահովելու համար անհրաժեշտ կարգավորումների բացակայությանը:

Օրինակ՝ 2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ դիմողը եղել է Ուկրաինայի քաղաքացի, բնակվել այնտեղ, այնուհետև տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն և ստացել ՀՀ քաղաքացիություն: ՀՀ տեղափոխվելուց և քաղաքացիություն ստանալուց հետո դիմողի կենսաթոշակային գործը տեղափոխվել է ՀՀ: Ուկրաինայի կենսաթոշակային ֆոնդում դիմողի անվամբ մնացել է 500-600 ԱՄՆ դոլարի չափով չվճարված կենսաթոշակի գումար: Քաղաքացին դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կենսաթոշակի չստացված գումարը ՀՀ կենսաթոշակային մարմնի միջոցով ստանալու խնդրանքով, սակայն արդյունքի չի հասել՝ պատճառաբանությամբ, որ այլ պետություններում նշանակված կենսաթոշակի չվճարված գումարը պահանջելու և Հայաստանի Հանրապետությունում վճարելու կարգ ՀՀ կենսաթոշակային ոլորտը կարգավորող օրենսդրությամբ, ինչպես նաև համաձայնագրով նախատեսված չէ:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ-ն ստորագրել է Համաձայնագիր, սակայն դրա շրջանակներում մասնակից պետությունում նշանակված կենսաթոշակի չվճարված գումարն այլ մասնակից պետության կողմից պահանջելու վերաբերյալ իրավական հիմքեր նախատեսված չեն:

Բարձրացված խնդրով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ ներկայում 2 պետությունից կենսաթոշակ ստանալու դեպքերում ավել վճարված կենսաթոշակի գումարները հետգանձելու փոխհամաձայնեցված մեխանիզմներ նախատեսվում է սահմանել միայն Ռուսաստանի Դաշնության հետ: Մասնավորապես, նախարարությունը տեղեկացրել է, որ ՌԴ կենսաթոշակային հիմնադրամն առաջարկ է արել՝ ՌԴ կենսաթոշակային հիմնադրամի և Սոցիալական ապահովության ծառայության միջև կենսաթոշակային և սոցիալական ապահովության ոլորտում տեղեկատվական փոխգործակցության համաձայնագիր կնքելու վերաբերյալ (ներկայացվել է համաձայնագրի նախագիծ): Ըստ նախարարության հայտնած տեղեկությունների՝ այս պահին ՌԴ գործընկերներին առաջարկվել է քննարկել կենսաթոշակային ապահովության հարցերին առնչվող՝ իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները համաձայնագրի կարգավորման առարկա դարձնելու հարցը: Ռուսական կողմի համաձայնության դեպքում

կներկայացվի առաջարկություն՝ միաժամանակ 2 պետությունից կենսաթոշակ ստանալու դեպքերում ավել վճարված կենսաթոշակի գումարները հետգանձելու փոխհամաձայնեցված մեխանիզմներ սահմանելու հարցը քննարկելու վերաբերյալ:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են համաձայնագրերի շրջանակներում միաժամանակ 2 պետությունից կենսաթոշակ ստանալու դեպքերում ոչ միայն ավել վճարված կենսաթոշակի գումարները հետգանձելու փոխհամաձայնեցված մեխանիզմներ ստեղծելու, այլ նաև մասնակից պետությունում նաև նշանակված կենսաթոշակի չվճարված գումարն այդ երկրներից հետ պահանջելու վերաբերյալ համապատասխան մեխանիզմների առկայության անհրաժեշտության մասին:

Մտահոգիչ է մեկ այլ խնդիր ևս, որն արձանագրվել է նաև Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի վարում առանձնացված հաշվառում առ այն, թե քանի բողոք է հասցեագրվում նախարարությանը՝ որևէ պետության հետ պայմանագիր չունենալու կամ համաձայնագիր լինելու, սակայն համաձայնագրում համապատասխան մեխանիզմները կամ կարգավորումները բացակայելու պատճառով մարդկանց սոցիալական ապահովության իրավունքների սահմանափակման վերաբերյալ: Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում տարանջատված հաշվառման բացակայությունը հնարավորություն չի տալիս վեր հանել համաձայնագիր չլինելու կամ համաձայնագրերում անհրաժեշտ կարգավորումների բացակայության պատճառով առաջացող խնդիրները: Տվյալ պարագայում հարց է առաջանում, թե ինչպես են որոշվում այն երկրները, որոնց հետ անհրաժեշտ է պայմանագրերի կնքում: Վիճակագրության վարումը թույլ կտա նախագծել առաջիկա քայլերը և նախանշել այն պետությունների ցանկը, որոնց հետ առաջնային կերպով պետք է աշխատանքներ սկսվեն համապատասխան համաձայնագրի կնքման կամ համաձայնագրերի շրջանակներում համապատասխան կարգավորումներ նախատեսելու ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. վարել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն սույն բաժնում նկարագրված խնդիրներով ներկայացված դիմումների առանձին հաշվառում,*

*2. ընդլայնել սոցիալական ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության հետ համապատասխան համաձայնագիր ունեցող երկրների շրջանակը,*

*3. կնքված համապատասխան համաձայնագրերում սահմանել փոխհամաձայնեցված մեխանիզմներ՝ լուծելու կենսաթոշակային ապահովության ոլորտում առաջացող խնդիրները:*

### **1.5 Փաստացի աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում չհաշվառելը**

Լուծման է ենթակա տարիներ շարունակ Պաշտպանի տարեկան հաղորդումներով բարձրացվող՝ մարդկանց փաստացի աշխատած ժամանակահատվածը կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում չհաշվառելու համակարգային հարցը:

Քաղաքացիները աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրների հիմնականում բախվում են, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն կարողանում ներկայացնել աշխատանքային ստաժը հաստատող կամ դա ապացուցող փաստարկներ: Այդ պահանջը հստակ սահմանված է օրենսդրությամբ:

Այս խնդիրներն առաջանում են սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի պահպանված չլինելու կամ արխիվ հանձնված չլինելու դեպքերում, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն գործում (վերացված կամ լուծարված են լինում) բոլոր այն կազմակերպությունները, որտեղ անձինք աշխատել են:

Մտացվում է, որ գործատուների բարեխիղճ չլինելու (սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չպահպանելու կամ դրանք արխիվ չհանձնելու) և պետական պատշաճ վերահսկողության բացակայության (սոցիալական վճարներ կատարելու ուղղությամբ) պատճառով մարդիկ բախվում են խնդիրների, որոնց լուծման ճանապարհը մնում է դատարան դիմելը:

Այս խնդրի արդիականության մասին են վկայում 2019 թվականին նույնպես Պաշտպանին շարունակաբար հասցեագրվող բողոքները:

Աշխատանքային ստաժը հաստատող կամ ապացուցող փաստարկներ ներկայացնել չկարողանալու հետևանքով կենսաթոշակ նշանակելիս անձի աշխատանքային ստաժում փաստացի աշխատած ժամանակահատվածները չհաշվառելու խնդիրը բազմիցս բարձրացրել է Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում՝ առաջարկելով նախատեսել աշխատանքային ստաժի հաստատման կենսաթոշակառուի համար մատչելի մեխանիզմ: Մասնավորապես, առաջարկվել է վերացնել 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն աշխատանքային գործունեությունը հաստատելու համար աշխատանքային գրքույկից բացի սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պահանջն այն կենսաթոշակառուների համար, ովքեր նշված ժամանակահատվածում աշխատել են պետական հաստատություններում:

Խնդրի լուծման նպատակով 2019 թվականին շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը համապատասխան դրույթներ է պարունակում՝ ուղղված վերոնշյալ խնդրի որոշ չափով կարգավորմանը: Նախագծով առաջարկվում է հիշյալ որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.5-րդ կետով, ըստ որի՝ «մինչև 1996 թվականի նոյեմբերի 10-ն աշխատած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում (առանց ենթակա կազմակերպությունների)»:

Հաշվի առնելով, որ Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքներով քաղաքացիները հայտնել են դժգոհություններ այն մասին, որ իրենց աշխատանքային ստաժում չեն հաշվառվել պետական կազմակերպություններում աշխատած ժամանակահատվածները՝ Մարդու իրավունքների պաշտպանը նախագծի վերաբերյալ կարծիքում առաջարկել է, որ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր չպահանջվեն նաև այն անձանցից, ովքեր աշխատել են Նախագծով նախատեսված մարմինների ենթակա կազմակերպություններում:

Նախագիծն ընդունվել է 2020 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 268-Ն որոշմամբ: Պաշտպանի առաջարկն առ այն, որ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր չպահանջվեն նաև այն անձանցից, ովքեր աշխատել են քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեների ենթակա կազմակերպություններում, ընդունվել է ի գիտություն:

Ողջունելի է կենսաթոշակառուի համար մատչելի մեխանիզմներ ներդնելու առաջընթացի միտումը, սակայն անհրաժեշտ է, որ գործընթացը լինի շարունակական:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներով արձանագրվել են աշխատանքային ստաժի հաշվառման հարցերին վերաբերող այլ խնդիրներ ևս:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով բարձրացվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 907-Ն որոշմամբ ստեղծված և 2017

թվականի հունվարից գործունեությունը դադարեցրած 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց և 1992 թվականին Հայաստանի Հանրապետության Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված անձանց աշխատանքային ստաժը սահմանող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեությունը վերականգնելու և այդպիսով մարդկանց կենսաթոշակի իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու հարցը: Հանձնաժողովը գործել է 2009-2016 թթ. (շուրջ 7,5 տարի):

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի թվով 2 խոշորացված համայնքի կազմում ընդգրկված 11 բնակավայր վերաբնակեցված են Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված քաղաքացիներով: Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային մարմնի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ 1956-1966թթ. ծնված և վերոնշյալ կատեգորիայի մեջ ընդգրկված քաղաքացիների մոտավորապես 10%-ի աշխատանքային գրքույկները մնացել են Ադրբեջանի Հանրապետությունում կամ Արծվաշենում: Արծվաշեն գյուղից մարդիկ տեղահանվել են 1992 թվականի օգոստոս ամսին, իսկ Ճամբարակի տարածքային ներկայացուցչությունում նշված գյուղի գյուղական խորհրդի, խորհրդային տնտեսության և այլ կազմակերպությունների փաստաթղթերի էլքային տարեթվերը վերաբերում են 1986-1987 թվականներին:

Խնդիրն այն է, որ Հանձնաժողովի բացակայությամբ պայմանավորված, Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված քաղաքացիների համար աշխատանքային ստաժը հաստատելու միակ միջոցը մնում է դատարան դիմելը, քանի որ նշված անձանց դեպքում օբյեկտիվ պատճառներով անհնար է ձեռք բերել աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթեր: Ի տարբերություն ՀՀ տարածքում աշխատած անձանց, որոնց համար որոշ դեպքերում հնարավոր է լինում ներկայացնել աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթեր, նշված անձանց դեպքում այդ հնարավորությունն իսպառ բացակայում է: Անհրաժեշտ է նշել, որ Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված քաղաքացիների դեպքում աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելն իր հերթին առաջացնում է դժվարություններ: Գլխավոր խնդիրն այստեղ այն է, որ մարդիկ ունենում են լրջագույն բարդություններ հայցադիմումը Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ոչ թե Ճամբարակի, այլ Սևանի նստավայր ներկայացնելու դեպքում՝ կապված ծախսերի և ճանապարհների հետ (Սևան քաղաքից դեպի Ճամբարակ հեռավորությունը 60 կմ է):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առաջարկել է քննարկել նշված անձանց սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք իրացմանն ուղղված արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու անհրաժեշտությունը: Ըստ նախարարության դիրքորոշման՝ շուրջ 30 տարի անց հանձնաժողովի միջոցով աշխատանքային ստաժ հաստատելը բովանդակային առումով լինելու է չհիմնավորված, չպատճառաբանված, ոչ արդյունավետ և սուբյեկտիվ: Նախարարության պատճառաբանությամբ՝ շուրջ 30 տարի առաջ տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ հանձնաժողովի միջոցով աշխատանքային ստաժ հաստատելը չի բխում խտրականության արգելքի սկզբունքից, քանի որ այդպիսով տարբերակված մոտեցում կդրսևորվի, օրինակ, հանձնաժողովի կողմից սահմանված ստաժ ունեցող և խնդրո առարկա տարիներին Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասում նշված հիմքերով աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության խնդիր ունեցող այլ անձանց նկատմամբ:

Հանձնաժողովի գործունեությունը չվերսկսելու հարցի կապակցությամբ հարկ է նկատել հետևյալը. խտրականությունը որոշակի անձանց, կազմակերպությունների կամ



պետությունների իրավունքների սահմանափակումն է կամ դրանցից զրկելը՝ հիմք ընդունելով ռասայական, ազգային, սեռային, պետական պատկանելությունը, ինչպես նաև գույքային դրությունը, քաղաքական և կրոնական համոզմունքները և այլ հատկանիշներ<sup>54</sup>: Խտրականության հասկացությանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ արձանագրելով, որ խտրականությունը տարբերակված վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի<sup>55</sup>:

Ադրբեջանից բռնագաղթած և Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված քաղաքացիներն այլ քաղաքացիների համեմատ աշխատանքային ստաժի հաստատման գործընթացում գտնվում են նվազ բարենպաստ վիճակում, ոչ հավասար իրավիճակում, ուստի նշված դեպքում կարելի է վկայակոչել «հավասարին՝ հավասար, անհավասարին՝ անհավասար» կանոնը: Այսինքն՝ որոշ հանգամանքների ներքո անհավասար վերաբերմունքը կարող է արդարացված լինել:

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով բարձրացվել է մեկ այլ համակարգային խնդիր, որը վերաբերում է մարդկանց՝ կլինիկական օրդինատուրայում սովորելու տարիներն աշխատանքային ստաժում չհաշվառելու հարցին:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ «կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում է ուսումնական հաստատություններում, բացառությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների, առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի»:

ՀՀ կառավարության 1996 թվականի փետրվարի 16-ի «Աշխատանքային ստաժում հաշվառվող աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակները, հաշվառման կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 41-Ն որոշմամբ (ուժը կորցրել է 2003 թվականի հունիսի 24-ին) հաստատված կարգի 3-րդ կետի «թ» ենթակետի համաձայն՝ «կենսաթոշակ նշանակելիս ընդհանուր աշխատանքային ստաժում հաշվառվում են (...) կլինիկական օրդինատուրայում (...) ուսուցման ժամանակաշրջանը»: Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության վերը նշված որոշումն ուժը կորցնելուց հետո վերացվել է որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի «թ» ենթակետով նախատեսված արտոնություն սահմանող դրույթը՝ կապված կլինիկական օրդինատուրայում ուսուցման ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկելու առանձնահատկության հետ: Մարդիկ Պաշտպանին հասցեագրված բողոքներով իրենց դժգոհությունն են հայտնել, որ օրենսդիրը, սահմանելով ուսումնական հաստատությունում անձանց ուսման ժամանակահատվածն աշխատանքային ստաժում 6 տարուց ոչ ավելի հաշվառելու դրույթը, հաշվի չի առել բժշկի մասնագիտությամբ սովորելու ժամանակահատվածը, ի տարբերություն մյուս մասնագիտությունների, ավելի երկարաժամկետ լինելու հանգամանքը և այդպիսով անտեսել է կլինիկական օրդինատուրայում ուսուցման ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվարկելու առանձնահատկության անհրաժեշտությունը:

Հարկ է նկատել, որ մինչև 2008 թվականը ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածները հաշվառվել են ապահովագրական ստաժում: Նշվածն ամրագրվել է «Պետական կենսաթոշակների մասին» 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքում, որի 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «ուսումնական

<sup>54</sup> Տե՛ս <http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>, էջ 174-175:

<sup>55</sup> Տե՛ս Վիլլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Willis v. United Kingdom) գործով 2002 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 36042/97, կետ 48:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 199:

հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածները հաշվառվում են ապահովագրական ստաժի մեջ, եթե ուսման տարիներին կամ ուսումն ավարտելուց հետո՝ տասը տարվա ընթացքում, ֆիզիկական անձը վճարումներ է կատարել վճարման պահին գործող օրենսդրությամբ վարձու աշխատողի համար սահմանված պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության վճարի նվազագույնի չափով»։ Դրույթը գործել է մինչև 26.12.2008 թվականը, որից հետո կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ ապահովագրական (աշխատանքային) ստաժի առկայության դեպքում ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը, սակայն վեց տարուց ոչ ավելի, հաշվառվել է ապահովագրական ստաժում:

Ապահովագրական ստաժի հասկացությունը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքով, որի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «աշխատանքային ստաժը կարող է լինել ապահովագրական ստաժ, որում հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ չարգելված աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածների հանրագումարը, որի ընթացքում քաղաքացին ենթակա է եղել ապահովագրության, նրա համար և (կամ) նրա կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են պարտադիր սոցիալական ապահովության վճարումներ»։ Աշխատանքային օրենսգիրքը նաև սահմանում է ընդհանուր աշխատանքային ստաժը, որում հաշվարկվում է քաղաքացու՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել աշխատանքային ստաժում:

Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշել է, որ խնդիրը ոչ թե բժշկի մասնագիտությամբ սովորելու ժամանակահատվածի ի տարբերություն մյուս մասնագիտությունների, ավելի երկարաժամկետ լինելու հանգամանքը հաշվի չառնելն է, այլ այն, որ օրենսդիրը սահմանել է աշխատանքային ստաժում հաշվառման ենթակա ուսման ժամանակահատվածի առավելագույն շեմ՝ անկախ մասնագիտական կրթության տարբեր հաստատություններում (ծրագրերով) սովորած լինելուց: Նախարարությունը կլինիկական օրդինատուրայում մարդկանց սովորելու տարիները նրանց աշխատանքային ստաժում չհաշվառելը հիմնավորում է նաև նրանով, որ քանի դեռ ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածները դիտարկվել են որպես ապահովագրական ժամանակահատվածներ (դրանց համար կատարվել են ապահովագրական վճարներ), դրանք ապահովագրական ստաժում հաշվառվել են առանց որևէ սահմանափակման: Որպես այլ գործունեության ժամանակահատված դիտարկելուն զուգահեռ, խնդրո առարկա ժամանակահատվածի համար օրենսդիրը սահմանել է առավելագույն շեմ՝ 6 տարուց ոչ ավելի:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ Պաշտպանը բարձրացրել է ոչ թե կլինիկական օրդինատուրայում սովորած տարիներն ապահովագրական ստաժում հաշվառելու, այլ այդ ժամանակահատվածը համապատասխան ապահովագրական ստաժի առկայության դեպքում՝ որպես այլ գործունեության ժամանակահատված, ընդհանուր աշխատանքային ստաժում հաշվառելու և խնդրո առարկա ժամանակահատվածի առավելագույն շեմը վերանայելու հարցերը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. կատարել օրենսդրական փոփոխություն՝ սահմանելով, որ 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքային գործունեությունը հաստատելու համար աշխատանքային գրքույկից բացի սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ չներկայացվեն այն կենսաթոշակառուներին, ովքեր*

նշված ժամանակահատվածում աշխատել են պետական հաստատություններում, ինչպես նաև սահմանել, որ նման պահանջ չներկայացվի ոչ միայն այն դեպքում, եթե անձն աշխատել է քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում, այլ նաև այն դեպքում, եթե մարդիկ աշխատել են այդ մարմիններին ենթակա կազմակերպություններում,

2. վերականգնել ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 907-Ն որոշմամբ ստեղծված և 2017 թվականի հունվարից գործունեությունը դադարեցրած 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց և 1992 թվականին Հայաստանի Հանրապետության Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված անձանց աշխատանքային ստաժը սահմանող հանձնաժողովի գործունեությունը, ինչպես նաև քննարկել նմանատիպ իրավիճակում գտնվող անձանց դեպքում այլ հանձնաժողովների ստեղծման անհրաժեշտությունը,

3. կլինիկական օրդինատուրայում սովորած տարիները համապատասխան ապահովագրական ստաժի առկայության դեպքում՝ որպես այլ գործունեության ժամանակահատված, հաշվառել ընդհանուր աշխատանքային ստաժում, ինչպես նաև վերանայել խնդրո առարկա ժամանակահատվածն աշխատանքայի ստաժում հաշվառելու առավելագույն շեմը:

## **1.6 Աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելը**

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթ, 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի:

Դեռ Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձ էր կատարվել կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելու խնդրին: Դատական կարգով հաստատման անհրաժեշտությունն առաջանում էր գործատու կազմակերպությունների բացակայության, չգործելու կամ համապատասխան փաստաթղթերի ձեռք բերման անհնարինության դեպքում: Այսինքն՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի պահանջներին համապատասխան, այն է՝ «աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ Կառավարության սահմանած այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով», անձինք իրավաբանական նշանակություն ունեցող այս կամ այն փաստը հաստատելու պահանջով պետք է դիմեն դատարան: Համապատասխանաբար, աշխատանքային ստաժը հաստատելու մասին դատական ակտը հիմք է այդ ակտով հաստատված ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու և ուժի մեջ մտած դատական ակտի կայացման օրվանից կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու համար:

Նշված կարգավորումից ենթադրվում է, որ աշխատանքային ստաժը հաստատող կամ ապացուցող փաստարկներ ներկայացնել չկարողանալու պատճառով վիճելի ժամանակահատվածում աշխատած լինելու փաստն ապացուցելու միակ միջոցը կենսաթոշակառուի համար մնում է դատարան դիմելը, ուստի ապացուցման բեռն ամբողջությամբ ընկնում է կենսաթոշակառուների վրա:

2019 թվականին բարձրացված խնդրով Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ մարդիկ աշխատանքային ստաժի հաստատման հետ կապված խնդիրների ու բարդությունների են բախվում նույնիսկ դատարան դիմելու դեպքում: Մասնավորապես, ստիպված են լինում անցնել դատական երկար և բարդ գործընթացների միջով՝ հայտնվելով դատական քաշքշուկների մեջ:

Դատարանի կայացրած դատական ակտով մի դեպքում կարող է հաստատվել անձի՝ որոշակի ժամանակահատվածում աշխատած լինելու փաստը (օրինակ՝ թիվ ԱՐԱԴ/2592/02/18, ԼԴ1/0812/02/18, ԼԴ4/0558/02/18, ԼԴ4/0561/02/18 և այլ քաղաքացիական գործեր), մյուս դեպքում՝ որոշակի ժամանակահատվածում աշխատելու աշխատանքային ստաժը (օրինակ՝ թիվ ԱՐԴ/3654/02/18, ԼԴ1/0820/02/18, ԱՐԴ/3187/02/18, ԱՐԴ/3114/02/18 և այլ քաղաքացիական գործեր): Այն դեպքում, երբ դատական ակտով հաստատվում է անձի՝ որոշակի ժամանակահատվածում պարզապես աշխատած լինելը, այդ դատական ակտերն օրենսդրության ուժով կենսաթոշակային մարմնի համար բավարար հիմք չեն տվյալ ժամանակահատվածն անձի աշխատանքային ստաժում հաշվառելու համար, քանի որ դատական կարգով հաստատված չի լինում աշխատանքային ստաժը կամ աշխատավարձ ստանալը:

Խնդրահարույց է նաև այն, որ աշխատանքային ստաժը հաստատելու մասին դատական ակտը հիմք է այդ ակտով հաստատված ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու և ուժի մեջ մտած դատական ակտի կայացման օրվանից կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու համար: Քաղաքացիներն արդարացիորեն իրենց դժգոհությունն են հայտնում, որ աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատվելու պարագայում կենսաթոշակն ավելի վաղ ժամկետից չի վերահաշվարկվում, այլ վերահաշվարկվում է դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո:

Օրինակ՝ 2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ 01.08.1943-01.07.1947 թվականներին աշխատել է ՀՀ գյուղերից մեկի կոլտնտեսությունում որպես բանվոր, 1990 թվականին լրացել է դիմողի կենսաթոշակային տարիքը և նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: Դիմողը 2016 թվականին դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 4 տարիների աշխատանքային ստաժը հաշվառելու խնդրանքով, սակայն մերժվել է՝ աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերի բացակայության պատճառաբանությամբ: Աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթեր չեն հայտնաբերվել նաև «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ում: Հաշվի առնելով, որ արխիվում նույնպես աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթեր չեն հայտնաբերվել, դիմողն իր աշխատանքային ստաժը ստիպված է եղել հաստատել դատական կարգով: Օբյեկտիվ պատճառներով պայմանավորված վերջինս իր դատական պաշտպանության իրավունքից կարողացել է օգտվել 2017 թվականին: 7 ամիս հետո դիմողի հայցը բավարարվել է: Ըստ դիմողի՝ ընդամենը 4 տարվա աշխատած ժամանակահատվածն իր աշխատանքային ստաժում չհաշվարկելու պատճառով իրեն չվճարված կենսաթոշակի գումարը կազմել է մոտավորապես 1.500.000 ՀՀ դրամ:

Հարկ է նկատել, որ նշվածի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշման համաձայն՝ դատարանի կայացրած վճռով ծագած իրավունքները ձևակերպվում են դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո: Նշվածը հիմք ընդունելով էլ կենսաթոշակային մարմինը քաղաքացիների կենսաթոշակն ավելի վաղ ժամկետից չի վերահաշվարկում:

2019 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ այն մասին, որ կենսաթոշակային մարմինը միջամտում է ընդհանուր իրավասության դատարանում հատուկ վարույթներով քննվող ստաժի հաստատման գործընթացին՝ ներկայացնելով դիրքորոշում դիմումն առանց քննության թողնելու կապակցությամբ, իբր թե կողմերի միջև առկա է վեճ: Նշված

միջամտության հետևանքով դատարաններում արդեն որոշակի ժամանակ քննվող հատուկ վարույթները թողնվում են առանց քննության: Այնուհետև մարդը ստիպված է լինում վարչական դատավարությամբ սահմանված կարգով կենսաթոշակային մարմնին պարտավորեցնել կենսաթոշակ նշանակելիս հաշվառել իր համապատասխան աշխատանքային ստաժը և բավականին ժամանակ կորցնում:

Այսպես, բողոքներից մեկով անձին 2017 թվականին նշանակվել է կենսաթոշակ: Աշխատանքային ստաժում չի հաշվառվել աշխատած մոտ 13 տարվա ժամանակահատվածը: Կենսաթոշակառուն փաստաբանական ծառայության միջոցով խնդրո առարկա աշխատանքային ստաժը հաստատելու պահանջով 2018 թվականի հոկտեմբեր ամսին դիմել է ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը 2019 թվականի մարտ ամսին դիմումը թողել է առանց քննության՝ հիմք ընդունելով երրորդ անձ կենսաթոշակային մարմնի դիրքորոշումը և միջնորդությունն առ այն, որ դիմումը բավարարելու դեպքում կայացվելիք ակտով կհաստատվի փաստ, որը կենթադրի որոշակի գործողությունների կատարում՝ կենսաթոշակի նշանակում: Ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որը 2019 թվականի սեպտեմբեր ամսին կայացրած որոշմամբ բողոքը մերժել է: Անձը ներկայում, արդեն 2020 թվականին կրկին փաստաբանի միջոցով կենսաթոշակի վերահաշվարկի խնդրով ստիպված է դիմել վարչական դատարան:

Պաշտպանին ուղղված մեկ այլ բողոքով էլ մարդուն 2016 թվականի հունվար ամսին նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: Վերջինիս աշխատանքային ստաժում չի հաշվառվել մոտ 10 տարվա աշխատանքային ստաժ: Կենսաթոշակառուն դիմել է ընդհանուր իրավասության դատարան, 2017 թվականի հուլիս ամսին դատարանի վճռով հաստատվել է աշխատանքային ստաժը: Այնուհետև, վճիռը ներկայացրել է կենսաթոշակային մարմնին կենսաթոշակի վերահաշվարկ կատարելու պահանջով: Նշվածին հետևել է կենսաթոշակային մարմնի դատարանի վերը նշված վճռի բողոքարկումը վերաքննության կարգով: Արդյունքում Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2018 թվականի ապրիլ ամսի որոշումով վերաքննիչ բողոքը բավարարվել է. ամբողջությամբ բեկանվել է քաղաքացիական գործով դատարանի 2017 թվականի վճիռը և կենսաթոշակառուի դիմումը թողնվել է առանց քննության:

Հետագայում, աշխատանքային ստաժում չհաշվարկված աշխատելու տարիները ներառելով կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջով 2018 թվականի հոկտեմբեր ամսին կենսաթոշակառուն դիմել է ՀՀ վարչական դատարան, որն էլ 2019 թվականի փետրված ամսին պահանջը բավարարել է: Կենսաթոշակառուի կենսաթոշակը վերահաշվարկվել է կենսաթոշակը նշանակելուց 3 տարի անց մի շարք դատական ատյաններին դիմելու և բարդ դատավարական ընթացակարգերն անցնելու հետո միայն:

Այսպիսով, վարչական մարմինը ձևավորել է պրակտիկա, երբ անտեսում է, որ օրենքի պահանջից ելնելով՝ աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելու համար կենսաթոշակառուն պետք է դիմում ներկայացնի որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատում: Հակառակ դեպքում, օրենսդրի կողմից անհրաժեշտ է սահմանել ոչ թե աշխատանքային ստաժի դատական կարգով հաստատման պահանջ, այլ վարչական մարմնի հետ վեճի լուծում վարչական դատավարության կարգով՝ որպես խնդրի կարգավորման միակ հնարավոր տարբերակ:

Կենսաթոշակային մարմինը հաշվի չի առնում, որ տվյալ դեպքում դատական պաշտպանությանը դիմում են 63 տարին լրացած մարդիկ, այն էլ փաստաբանական վճարովի ծառայությունների միջոցով: Միաժամանակ, ստաժի հաստատման դատական գործընթացի (հատուկ վարույթների) տևողությունն առավել կարճաժամկետ է, քան վարչական դատավարությունը: Նման գործելաոճի հետևանքով կենսաթոշակառուները

կորցնում են բավականին երկար ժամանակահատվածի կենսաթոշակի գումարներ, քանի որ կենսաթոշակի վերահաշվարկ կատարվում է կենսաթոշակատուի օգտին վերջնական դատական ակտը կայացնելուց հետո: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ աշխատանքային ստաժի հաստատման համար դատարան դիմելու մշակույթը կենսաթոշակատուների մոտ մեծ դժվարությամբ էր ձևավորվել, ուստի խնդրահարույց է վարչական մարմնի՝ դատական ընթացակարգի առավել բարդեցման նման գործելաձևը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. նախատեսել աշխատանքային ստաժի հաստատման կենսաթոշակատուի համար մատչելի մեխանիզմ՝ ապացուցման բեռը կենսաթոշակատուի վրայից հնարավորինս թոթափելու նպատակով,*

*2. ձեռնարկել հստակ և տեսանելի քայլեր դատական գործընթացներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լրացուցիչ արհեստական բարդություններ ստեղծող պրակտիկան վերացնելու ուղղությամբ:*

### **1.7 Կենսաթոշակի անկանխիկ վճարման հետ կապված խնդիր**

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակատուներից: Կենսաթոշակատուներն իրենց բողոքներում նշում են, որ կենսաթոշակի վճարումը շարունակելու համար չեն ունենում տասներկու ամիսը մեկ անգամ բանկ ֆիզիկապես ներկայանալու հնարավորություն, ինչի պատճառով զրկվում են կենսաթոշակից:

Օրինակ՝ բողոքներից մեկով՝ դիմողի հայրը 78-ամյա կենսաթոշակատու է: Պաշտպանին դիմելու պահին լրանալիս է եղել բանկ ներկայանալու՝ օրենքով նախատեսված 12-րդ ամիսը: Ըստ բողոքի՝ դիմողի հայրը չի կարող ներկայանալ բանկ, քանի որ ենթարկվել է գլխուղեղի վիրահատության և գտնվում է Հայաստանի բժշկական հաստատությունում:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքի համաձայն՝ դիմողը բնակվում է հանրակացարանային շենքի 4-րդ հարկում, շինությունը չունի վերելակ: Դիմողն ունի 2-րդ խմբի հաշմանդամություն, տեղաշարժվում է անվասայլակի օգնությամբ: Պաշտպանին դիմելու պահին լրանալիս է եղել բանկ ներկայանալու՝ օրենքով նախատեսված 12-րդ ամիսը: Դիմողն իր դժգոհությունն է հայտնել Պաշտպանին, որ անձամբ բանկ ներկայանալ չկարողանալու պատճառով զրկվելու է կենսաթոշակից:

Ներկայացված երկու դեպքերում էլ խնդիրը Պաշտպանի աշխատակազմի և բանկերի աշխատակիցների հետ համագործակցության արդյունքում լուծվել է:

Թեև կոնկրետ դեպքերով խնդիրը Պաշտպանի աջակցությամբ կարգավորվել է, սակայն համակարգային առումով այն 2019 թվականի ընթացքում շարունակել է չլուծված մնալ:

Կենսաթոշակի վճարումը շարունակելու համար բանկ ներկայանալու պահանջն ամրագրված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում: Կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակատուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակատուի դեպքում՝ կենսաթոշակատուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

Պաշտպանը բազմիցս է բարձրացրել կենսաթոշակատուի՝ տարեկան առնվազն մեկ անգամ բանկ ներկայանալու պարտավորությունը վերացնելու հարցը: 2019 թվականի

ընթացքում ևս առաջարկվող կարգավորումները՝ բանկ ներկայանալու պարտավորության մասով, որևէ բովանդակային առումով որևէ փոփոխության չեն հանգեցրել:

2020 թվականի մարտի 4-ին Ազգային ժողովն ընդունել է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը: Փոփոխությամբ անձամբ բանկ ներկայանալու պահանջը վերացվել է, նախատեսվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը բանկը կարող է հաստատել նաև առանց կենսաթոշակատուի բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով: «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտնելու 2020 թվականի հունիսի 25-ին: Նախատեսվել է նաև, որ օրենքի հրապարակումից հետո 3 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունելու է համապատասխան իրավական ակտ, որպեսզի Կառավարության սահմանած կարգով ապահովվի փոփոխված դրույթի կիրառումը:

Նշված փոփոխությամբ հարցն, ըստ էության, լուծվում է:

*Հաշվի առնելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտնելու 2020 թվականի հունիսի 25-ին՝ անհրաժեշտ է հետևել, որպեսզի մինչև օրենքի ուժի մեջ մտնելը պրակտիկայում խնդիրներ չառաջանան: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այս նպատակով նույնպես կիրականացվեն անհրաժեշտ դիտարկումներ:*

### **1.8 ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարումը**

Կենսաթոշակի իրավունքին առնչվող արդիական խնդիր է Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների չվճարված կենսաթոշակը ստանալու հնարավորության բացակայությունը: Խնդրի արդիականության մասին է վկայում նաև 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվող դիմումների շարունակականությունը: Մասնավորապես, դիմումներից մեկով քաղաքացին հայտնել է, որ վերջինիս՝ 10 տարուց ավելի Հայաստան վերադառնալու անհնարինությունը պայմանավորված է եղել օբյեկտիվ պատճառներով (երկարատև բուժման հիմքով), ինչը մեխանիկորեն հանգեցրել է կենսաթոշակի վճարման դադարեցման:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հայտնել են, որ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 2019 թվականի ընթացքում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու հիմքով դադարեցվել է թվով 40314 անձանց կենսաթոշակի (նպաստի) վճարում, որից 5200 անձանց կենսաթոշակի (նպաստի) վճարումը չի վերսկսվել:

Բանն այն է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ դրույթները կենսաթոշակի ստացման շարունակականությունն ապահովելու համար ամրագրում են կենսաթոշակատուի համար նախատեսված որոշ պարտականություններ: Մասնավորապես, Օրենքի 35-րդ հոդվածի 6-ին մասի համաձայն՝ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակատուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակատուի դեպքում՝ կենսաթոշակատուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) *կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:*

Կենսաթոշակը նաև վճարվում է կենսաթոշակառուի տված և նոտարի վավերացրած լիազորագրով, սակայն **կենսաթոշակը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝** սկսած կենսաթոշակը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը<sup>56</sup>:

Արդյունքում, օրենսդիրը կենսաթոշակառուին տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու, լիազորագրի գործողության ժամկետը լրանալու կամ կենսաթոշակը տասներկու ամիս անընդմեջ լիազորագրով վճարելու կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկու ամսվա ժամկետը լրանալու, ինչպես նաև սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայացնելու) դեպքերը դիտարկում է կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմք: Իսկ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան **նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար**, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ ստացվում է, որ օրենսդիրը Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների համար հնարավորություն չի նախատեսում վիճարկման առարկա դարձնել բաց թողնված տասներկու ամսվա ժամկետը հարգելի համարելու փաստը:

Կենսաթոշակի իրավունքի երաշխավորման կարևորության, ինչպես նաև խնդրի համակարգային բնույթի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմում համապարփակ վերլուծություն է իրականացվել:

Այսպես, Սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի», թույլ է տալիս արձանագրել, որ կենսաթոշակի իրավունքի պաշտպանության միջոցները համընկնում են անձի սեփականության իրավունքի պաշտպանության բոլոր երաշխիքներին:

Սահմանադրական դատարանը՝ 2008 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշմամբ նշել է, որ *«ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանություն տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:*

ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-723 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, **պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:**

Բացի այդ, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ցանկացած տեսակի սոցիալական ապահովագրության համակարգին պարտադիր ներդրումներ կատարելու փաստը ստեղծում է Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով

<sup>56</sup> Տե՛ս «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 35, մաս 11:



պաշտպանված իրավունք, եթե վճարված ներդրումների մակարդակի և տրամադրված նպաստների միջև առկա է ուղղակի կապ<sup>57</sup>:

Հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները՝ անվիճելի է դառնում այն, որ կենսաթոշակի նշանակման պահից կենսաթոշակառուին տրամադրման ենթակա գումարները հանդիսանում են իր սեփականությունը, հետևաբար, վերջինս ունեցել է այդ գումարներն իր հայեցողությամբ օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրավունք: Իսկ տարեկան առնվազն մեկ անգամ բանկ չներկայանալու փաստը չի ենթադրում, որ կենսաթոշակառուն սեփականության իրավունքով իրեն պատկանող դրամական միջոցներից հրաժարվելուն ուղղված որևէ գործողություն է կատարել:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսվում է, որ *Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:*

Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը և, առաջին հերթին՝ պետության պարտականությունը՝ կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ և արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում:

Սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորվում է նաև միջազգային իրավական փաստաթղթերով: Օրինակ, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածն ամրագրում է, որ սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության յուրաքանչյուր մարդու իրավունքը:

Մինչդեռ, նման խնդրահարույց կարգավորումներ նախատեսելու արդյունքում արտերկրում բնակվող կենսաթոշակառուները հայտնվում են մի իրավիճակում, երբ կենսաթոշակ չստանալով՝ վերջիններս հնարավորություն չեն ունենում հոգալ նյութական և սոցիալական նվազագույն կարիքները:

Ոլորտի բարեփոխումների ուսումնասիրությունը, ինչպես նաև բարձրացված խնդրի առկայությունը ցույց են տալիս, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները չեն արտացոլվել օրենսդրական մակարդակում և լուծում չի տրվել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին հայտարարությունը չստորագրելու և բանկ չներկայացնելու օբյեկտիվ հանգամանքները պարզելու, ըստ այդմ՝ նաև կենսաթոշակի չվճարման պատճառները գնահատելու, անձին՝ իր իրավունքների պաշտպանության հնարավորություններ ընձեռելու և սեփականության իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ:

Հատկանշական է, որ թե՛ Արդարադատության նախարարության<sup>58</sup>, թե՛ Ազգային ժողովի կողմից<sup>59</sup> փորձ է արվել օրենսդրական ճանապարհով կարգավորել Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարման խնդիրը: Մասնավորապես, նշված հարցի կարգավորման կապակցությամբ առաջարկվել է երկարաձգել կենսաթոշակի վճարման համար անհրաժեշտ լիազորագրի գործողության ժամկետը՝ ապահովելու կենսաթոշակի ստացման շարունակականությունն ու անընդհատությունը: Նախագծային լուծումները, իհարկե, դրական քայլ են, որոնք, սակայն, վերաբերելու են միայն ապագայում

<sup>57</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ» ուղեցույցը; հասանելի է [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_1\\_Protocol\\_1\\_ENG.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_1_Protocol_1_ENG.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>58</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1174> հղումով, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>59</sup> Տե՛ս <http://parliament.am/transcript.php?AgendaID=3645&day=29&month=05&year=2019&lang=arm> հղումով, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

առաջացող իրավահարաբերություններին: Վերոնշյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է արտերկրում ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարման խնդիրը դիտարկել ինչպես ներկայում, այնպես էլ նախկինում կենսաթոշակ չստանալու տեսանկյունից՝ հիմք ընդունելով կենսաթոշակի՝ որպես սեփականության հանդիսանալու փաստը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ամրագրել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հնարավորությունը:*

**1.9 Սոցիալական ապահովության համակարգում իրավունքների խախտումներ ոչ պատշաճ (թերի) վարչարարության հետևանքով և իրազեկման պակասը՝ որպես խախտումների հիմնական պատճառ**

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ սոցիալական ապահովության համակարգում ոչ պատշաճ (թերի) վարչարարության հետևանքով իրավունքների խախտումների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պրակտիկայում շատ են դեպքերը, երբ Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային մարմիններում մարդկանց սոցիալական ապահովության այս կամ այն իրավունքի իրացումն ապահովելու համար մարդկանցից չի վերցվում դիմում: Մարդիկ շատ դեպքերում պատշաճ չեն տեղեկացվում կամ նրանց չի տրամադրվում խորհրդատվություն անհրաժեշտ փաստաթղթերի կամ այդ փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու և այդ ժամկետը բաց թողնելու հետևանքների մասին:

Օրինակ՝ 2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ քաղաքացին հայտնել է, որ դիմել է Սոցիալական ապահովության պետական ծառայություն հանգուցյալ կենսաթոշակառուի 7 ամսվա չստացած կենսաթոշակը, ինչպես նաև թաղման նպաստն ստանալու խնդրանքով, սակայն ստացել է բանավոր մերժում՝ օրենքով սահմանված կարգով կենսաթոշակառուի հետ գրանցված ամուսնության մեջ չգտնվելու հիմնավորմամբ: Նույն օրը կենսաթոշակառուի մահվան փաստի վերաբերյալ քաղաքացու բանավոր տեղեկության հիման վրա դադարեցվել է կենսաթոշակառուի կենսաթոշակ ստանալու իրավունքը: Քաղաքացին նույն օրը դիմել է նաև թաղման նպաստ ստանալու խնդրանքով, սակայն արդյունքի չի հասել: Վերջինս նույն հարցերով Սոցիալական ապահովության պետական ծառայություն դիմել է նաև մի քանի ամիս անց, սակայն կրկին արդյունքի չի հասել: Երկու դեպքում էլ պետական մարմնի աշխատակիցները դիմողից դիմում չեն վերցրել և չեն էլ տեղեկացրել այդպիսի հնարավորության մասին և հենց այդ պատճառով նա բաց է թողել օրենքով սահմանված ժամկետը: Այդպիսով, ոչ պատշաճ վարչարարության հետևանքով դիմողը զրկվել է հանգուցյալ կենսաթոշակառուի չստացած կենսաթոշակը և թաղման նպաստը ստանալու իրավունքից: Նշվածն արձանագրվել է նաև Պաշտպանի կայացրած «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշմամբ:

Խնդրահարույց է նաև կենսաթոշակային մարմին դիմող մարդկանց իրենց իրավունքների մասին ոչ լիարժեք տեղեկությունների տրամադրումը կամ դրանք առհասարակ չտրամադրումը:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով՝ դիմողի ամուսնու մահվանից հետո նրա երկու երեխաները ստացել են կերակրողին կորցնելու դեպքում նպաստ: Երեխաներից մեկի չափահաս դառնալուց հետո նպաստը դադարեցվել է: Այն վերականգնելու նպատակով դիմողն այցելել է Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին, սակայն ծառայությունում չի տրամադրվել տեղեկություն այն մասին, որ եթե 18 տարին լրացած անձն առկա ուսուցմամբ սովորում է ուսումնական

հաստատությունում, ապա նպաստի վճարումը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով շարունակվել մինչև նրա 23 տարեկանը լրանալը: Արդյունքում, դիմողի 18 տարին լրացած որդին 6 ամիս շարունակ գրկվել է կերակրողին կորցնելու դեպքում նպաստից:

Այսպես, Պաշտպանին 2019 թվականին բողոքների քննարկումը ցույց է տվել, որ Սոցիալական ապահովության ոլորտում մեծ թվով խախտումների արդյունք և իրավունքի իրացման խոչընդոտ է Սոցիալական ապահովության տարածքային մարմինների ոչ պատշաճ վարչարարությունը:

Շատ հաճախ մարդիկ, օրինակ, օրենքով սահմանված ժամկետները բաց են թողնում հենց սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցների անբարեհաճ, անփույթ և անբարեխիղճ աշխատանքի հետևանքով, քանի որ պատշաճ տեղեկացված չեն լինում անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու, կամ դրանք որևէ սահմանափակ ժամկետում ներկայացնելու և այդ ժամկետը բաց թողնելու հետևանքների մասին:

Միաժամանակ, կենսաթոշակային մարմնի աշխատակիցների անբարեխիղճ և ոչ իրավաչափ աշխատանքի և գործելաճի վերացման և համապատասխանաբար վերջիններիս պատասխանատվության պատշաճ կառուցակարգերը կա՛մ չեն գործում կա՛մ չունեն արդյունավետություն: Բարձրացված խնդրով պատշաճ կառուցակարգերի ներդրման անհրաժեշտության մասին բարձրաձայնել է Պաշտպանը նաև իր նախորդ հաղորդումներում ու զեկույցներում:

Սոցիալական ապահովության տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու նպատակով պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր գործողությունները, որոնց համար իրենք օրենքով լիազորված են, յուրաքանչյուր դեպքում անձից նախ պետք է վերցվի կենսաթոշակի նշանակման կամ այդ իրավունքի իրացման հետ կապված անհրաժեշտ դիմում, տրամադրվի պատշաճ որակի խորհրդատվություն, այնուհետև պահանջվեն անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնցով մարդիկ իրենց դժգոհությունն են հայտնել կենսաթոշակային օրենսդրության վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության պակասից:

Սոցիալական ապահովության ոլորտում իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը հաճախ կարող է խոչընդոտել նման իրավունքների խախտումների կանխարգելմանը: Պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ մարդիկ, տեղյակ չլինելով իրենց իրավունքների, օրենքով սահմանված որոշակի արտոնությունների մասին, չեն կարողանում իրացնել, պաշտպանել իրենց իրավունքները, հասնել դրանց վերականգնմանը:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողն ունի 35 տարվա աշխատանքային ստաժ, սակայն տեղեկացված չի եղել, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ տարիքային կենսաթոշակ նշանակվում է, եթե անձն ունի առնվազն 35 տարվա աշխատանքային ստաժ: Արդյունքում դիմողը, իրազեկված չլինելով օրենքով տրված նման արտոնության մասին, կենսաթոշակային մարմին չի դիմել 62 տարեկանում և գրկվել է մեկ տարի շուտ կենսաթոշակի անցնելու իրավունքից:

Անհրաժեշտ է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և Սոցիալական ապահովության պետական ծառայությունը բավարար և պատշաճ միջոցներ ձեռնարկեն սոցիալական ապահովության իրենց իրավունքների մասին հանրությանն իրազեկելու ուղղությամբ:

Պաշտպանը տարեկան հաղորդումներում բազմիցս բարձրաձայնել է տարբեր ոլորտներին, այդ թվում՝ սոցիալական ապահովության ոլորտին վերաբերող հարցերի վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության խնդրի մասին: Ավելին, քաղաքացիների

իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով Պաշտպանը շարունակաբար հրապարակում է իրազեկող տեսանյութեր, այդ թվում՝ կենսաթոշակային ոլորտին վերաբերող (կենսաթոշակի անցնելու կարգ, պայմաններ և այլն):

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սոցիալական ապահովության տարածքային բաժինների աշխատակիցների մոտ իրենց աշխատանքի հանդեպ պատասխանատվությունն ավելի բարձրացնելու ուղղությամբ, յուրաքանչյուր դեպքով ապահովել կենսաթոշակային մարմին ներկայացող մարդկանցից դիմումների հանձնումը,*

2. *գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար մարդկանց սոցիալական ապահովության իրավունքին առնչվող անհրաժեշտ և ամբողջական տեղեկատվության տրամադրումը,*

3. *իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ՝ սոցիալական ապահովության իրավունքի մասին գիտելիքների բարձրացման նպատակով (օրինակ՝ լրատվության միջոցներով, իրազեկման թերթիկների, ուղեցույցների հրապարակում, տեղեկատվական տեսահոլովակների պատրաստում և այլն):*

## **2. Սոցիալական ապահովության իրավունքն աշխատավայրում դժբախտ պատահարների, հիվանդության դեպքում**

### **2.1 Մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի սահմանափակումը**

2019 թվականի ընթացքում շարունակում է չլուծված մնալ 2004 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների պատճառով մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի իրացման սահմանափակման խնդիրը, որի մասին բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում և հաղորդումներում: Խնդիրն ի հայտ է եկել «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների դիմումների ուսումնասիրությամբ:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը: Այն սահմանում է կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասի փոխհատուցման կարգը (վնասի փոխհատուցումը շարունակում է նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին): Տվյալ փոփոխության հետևանքով փոխհատուցում ստանալու երաշխիքը վերացվել է այն դեպքերի համար, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

Միևնույն ժամանակ, սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 914-Ն որոշմամբ: Մինչդեռ, սույն որոշումը կարգավորում է միայն դրա ընդունումից հետո նման հնարավոր դեպքերը:

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողի ամուսինն աշխատել է մասնավոր կազմակերպությունում ստացել է աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղում, պատճառված վնասի համար

սահմանվել է փոխհատուցում: Դիմողի ամուսնուն վճարվող վնասի փոխհատուցումը դադարեցվել է կազմակերպության լուծարման հետևանքով: Կազմակերպության գործունեությունը դադարեցվել է 2000 թվականի դեկտեմբերի 30-ին: Վնասի հատուցման գործընթացը շարունակելու նպատակով դիմողի ամուսինը Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային մարմին դիմել է 2005 թվականին, սակայն ստացել է մերժում:

ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը, որը սահմանում է, որ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Տվյալ փոփոխության հետևանքով փոխհատուցում ստանալու երաշխիքը վերացվել է այն դեպքերի համար, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

Խնդիրն այն է, որ կազմակերպության գործունեությունը թեև դադարեցվել է 2000 թվականի դեկտեմբերի 30-ին, սակայն վնասի հատուցումը շարունակելու խնդրանքով դիմողի ամուսինը չի դիմել մինչև 2004 թվականը կենսաթոշակային մարմին: Նշվածի հետևանքով էլ դիմողի ամուսնու վնասի հատուցումը սոցիալական ապահովության մարմինը չի իրացրել, ինչի արդյունքում դիմողի ամուսինը չի կարողացել օգտվել 2000 թվականից մինչև 2004 թվականը և հետագայում ևս զրկվել է աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման հետևանքով պատճառված վնասի համար հատուցում ստանալու իրավունքից:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ նման դեպքերում հստակ պետք է ապահովվի անձի սոցիալական երաշխիքներից օգտվելու իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքների իրականացման ապահովման նպատակով պետությունը պետք է սահմանի հստակ կանոնակարգեր: Ըստ «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի կոնվենցիայի 11-րդ հոդվածի՝ ազգային օրենսդրությունը, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, նախատեսում է այնպիսի դրույթներ, որոնք գործատուի կամ ապահովագրողի անվճարունակության դեպքում բոլոր հանգամանքներում առավել համարժեք կերպով կապահովեն փոխհատուցման վճարումը պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց: Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 17-ին: «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները: Վերոնշյալ փաստաթղթերն ամրագրում են օրենսդրական հստակ և գործուն մեխանիզմների առկայություն, որպիսին Հայաստանում ներդրված չէ, իսկ նախկին մեխանիզմի ուժը կորցնելու պարագայում օրենսդրական բացի պատճառով անձինք փաստացի զրկվում են իրենց իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Բարձրացված խնդրի լուծման կապակցությամբ 2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի

նախագիծը<sup>60</sup>, որի ընդունմամբ հնարավոր կլինի համապատասխան ենթաօրենսդրական ակտի մշակման և ընդունման արդյունքում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնել կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունք ունեցող, սակայն այդ հատուցումը չստացող անձանց համապատասխան հատուցման գումարների վճարումը: Ընդ որում, նախատեսված հատուցումը կատարվելու է դիմելուն նախորդած երեք տարիների համար միանվագ, և այնուհետ ամենամսյա վճարումների տեսքով: Նախագիծն ուսումնասիրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:

Այսպես, ի թիվս այլ նկատառումների՝ բարձրացվել է երեք տարիների սահմանափակման հարցը, որի արդյունքում առաջարկվել է քննարկել ավելի երկար ժամանակահատված սահմանելու հնարավորությունը:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը և խնդրի համակարգային բնույթը՝ Մարդու իրավունքների պաշտպանը ձեռնամուխ է եղել հարցի կարգավորմանը:

2019 թվականի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության և իրավասու այլ պետական մարմինների ներկայացուցիչների միջև: Հանդիպումների ընթացքում լսելի են դարձել հաշմանդամություն ունեցող օդաչուների խնդիրները, մանրամասն քննարկվել են հետագա քայլերը և հարցի լուծման ուղղությամբ ձեռք են բերվել պայմանավորվածություններ:

Հարկ է նկատել, որ վերոնշյալ նախագիծը 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ դեռ չի ընդունվել, ինչը փաստում է օրենսդրական հստակ և գործուն մեխանիզմների բացակայության մասին, որի հետևանքով սահմանափակվում է աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. ընդունել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունման արդյունքում կստեղծվի օրենսդրական հիմք՝ աշխատողների կյանքին և առողջությանը պատճառված վնասը պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնելու նպատակով,

2. ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման չափը, կարգը և առանձնահատկությունները 2004 թվականից հետո լուծարված կազմակերպություններում՝ դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով վնաս ստացած աշխատողների մասով,

3. հնարավորինս սեղմ ժամկետում 2004 թվականից հետո լուծարված կամ սնանկ ճանաչված իրավաբանական անձանց, այդ թվում՝ «Հայկական Ավիատեխնիկ» ՓԲԸ-ի աշխատակիցներին տրամադրել աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում:

<sup>60</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1865/about> հղումով:

## ***2.2 Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցումը***

Մեկ այլ խնդիր է աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման հետևանքով պատճառված վնասի հատուցման չափի ոչ բավարար լինելը:

Աշխատավայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքով, Քաղաքացիական օրենսգրքով, Կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Աշխատանքային օրենսգրքի 234-րդ հոդվածի համաձայն՝ եթե աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից չապահովագրված աշխատողը հիվանդացել է մասնագիտական հիվանդությամբ, ստացել է խեղում կամ մահացել է գործատուն կրում է նյութական պատասխանատվություն: Գործատուն հատուցում է իր պատճառած վնասը Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Մինչև Քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը (ուժի մեջ է մտել 01.01.1999թ.) վնասի հատուցումը կատարվում էր Որոշմամբ հաստատված կանոններով: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքացիական օրենսգրքի 1078-1087 հոդվածների գործողությունը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մինչև 1999 թվականի հունվարի 1-ը, սակայն ոչ շուտ, քան մինչև 1996 թվականի հունվարի 1-ը:

Որոշմամբ հաստատված կանոններով աշխատանքային խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման չափը որոշվում է աշխատողի՝ մինչև խեղումը, մասնագիտական հիվանդությունը կամ առողջության այլ վնասում ստանալը ստացած միջին ամսական վաստակից ելնելով՝ մասնագիտական անաշխատունակության կորստի աստիճանին համապատասխան: Կառավարության 1997 թվականի հուլիսի 9-ի N 258 որոշմամբ լրացվել է Որոշման դրույթները, ըստ որի, սահմանված կարգով հաշվարկված վնասի փոխհատուցման չափը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի նվազագույն չափից: Նշված փոփոխությունը պայմանավորված էր ռուբլին ՀՀ դրամով փոխարինելու անցումային շրջանով: Այս դեպքում, եթե աշխատավարձից հաշվարկված վնասի հատուցման գումարի չափը ցածր էր ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկային չափից՝ 1000 ՀՀ դրամից, որպես վնասի հատուցման չափ նշանակվում և վճարվում էր 1000 ՀՀ դրամ (գործել է մինչև 2005 թվականի հունվարի 1-ը): Կառավարության 2004 թվականի հունիսի 25-ի N 1040-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 1-ից) կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ սահմանված կարգով հաշվարկված վնասի փոխհատուցման չափը չի կարող պակաս լինել ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի 20 տոկոս գումարի և դրա նկատմամբ հաշվարկված աշխատողի աշխատունակության կորստի աստիճանով հաշվարկված գումարի հանրագումարից:

Նշվածից կարելի է ենթադրել, որ վնասի համար հատուցման չափի փոփոխությունը պայմանավորված է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխությամբ:

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքի համաձայն՝ աշխատանքային պարտականությունները կատարելիս դժբախտ պատահարի հետևանքով քաղաքացու առողջությանը պատճառվել է վնաս և պատճառված վնասի համար 1990-ական թվականներից սկսած նշանակվել է վնասի հատուցում: Սակայն, ըստ դիմողի՝ վճարվող

հատուցման չափը ցածր է, 1990-ական թվականներից սկսած մինչ օրս հատուցման չափի էական փոփոխություն չի եղել: Դիմողի պնդմամբ՝ հատուցման գումարի չափը չի բավարարում իր սոցիալական պահանջմունքները:

ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579-Ն որոշման մեջ փոփոխությունները վերջին անգամ կատարվել են 2004 թվականին, իսկ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով հաշվարկվող և վճարվող գումարի փոխհատուցման կարգը չի վերանայվել: Նշվածը չի բխում իրենց սեփական կարիքները հոգալ չկարողացող անձանց համար բավարար կենսամակարդակ ապահովելու և նրանց սոցիալական ապահովմանն ուղղված պետության՝ համալիր միջոցառումներ իրականացնելու պահանջից:

2019 թվականի հոկտեմբերի 3-ին առաջին ընթերցմամբ ընդունվել է ««Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, ըստ որի՝ նվազագույն ամսական աշխատավարձը 2020 թվականի հունվարի 1-ից սահմանվել է 68.000 (վաթսուներեք հազար) դրամ: ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափը 68.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ սահմանելու պարագայում աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման հետևանքով անձանց առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարի չափը ենթարկվել է չնչին փոփոխության (Պաշտպանին դիմած քաղաքացու դեպքում վնասի փոխհատուցման չափն ավելացել է ընդամենը 3000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով):

Քանի որ միայն նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխությամբ վնասի հատուցման չափն էականորեն չի փոփոխվում՝ Պաշտպանն առաջարկել է 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ սահմանված աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցման կարգի վերանայում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ նշել է, որ պետական բյուջեի հնարավորությունների շրջանակներում ապագայում ևս քննարկվելու է աշխատանքի վայրում դժբախտ դեպքի հետևանքով աշխատողի առողջությանը պատճառված վնասի հատուցման չափի բարձրացման հարցը:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման դեպքերում հստակ պետք է ապահովվի անձի սոցիալական երաշխիքներից օգտվելու իրավունքը, պետությունը հստակ կանոնակարգեր պետք է սահմանի այդ իրավունքների իրականացման ապահովման նպատակով: Այսպես, «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի կոնվենցիայի<sup>61</sup> 8-րդ հոդվածի համաձայն՝ ազգային օրենսդրությունն անհրաժեշտության դեպքում նախատեսում է վերահսկողության միջոցներ, ինչպես նաև վերանայման մեթոդներ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վերանայել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579-Ն որոշմամբ սահմանված՝ աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցման կարգը:*

<sup>61</sup> Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 17-ին:



### **3. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը**

#### **3.1 Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու հարցում երեխայի հայր և մայր ծնողների համար տարբերակված կարգավորումներ**

2019 թվականի ընթացքում դիտարկված խնդիրներից է երեխայի ծննդյան միանվագ նպաստը ստանալու իրավունքի իրացման հարցում հայր և մայր ծնողների նկատմամբ խտրական մոտեցումը:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման հարցում խնդրահարույց է ՀՀ Կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ N 275-Ն որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 8-րդ կետի գործնական կիրառումը:

Մասնավորապես, սույն դրույթի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն արդեն իսկ արձանագրել է, որ օրենսդրական այդ դրույթով, փաստորեն, հայր ծնողի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող մայր ծնողի համեմատությամբ, որի արդյունքում վերջինս գտնվում է ավելի բարենպաստ վիճակում: Օրենսդրական այս ձևակերպումից, պարզ չէ, թե ինչ օրինական նպատակ է հետապնդում կամ ինչ առանձնահատկություններով է պայմանավորված նման տարբերակված մոտեցումը:

Ուստի, տվյալ դեպքում տարբերակված կարգավորումներն օբյեկտիվ ու հիմնավոր չեն: Դրանք հանգեցնում են նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի:

Պաշտպանն այս եզրահանգումը ներկայացրել է Սահմանադրական դատարան՝ «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշման Հավելված N 1-ի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի առնչությամբ հատուկ դիրքորոշման մեջ:

ՀՀ սահմանադրական դատարանը 2019 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-1438 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման թիվ 1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ արձանագրելով տարբերակված մոտեցում մոր և հոր նկատմամբ: Դատարանը նշել է, որ որոշմամբ ամրագրված տարբերակված մոտեցումը զուրկ է օբյեկտիվ հիմքից, քանի որ օրենսդիրն, ըստ էության, նախատեսել է երեխայի խնամքի հարցը որոշելու մի քանի ընթացակարգ, և անձի կողմից այս կամ այն ընթացակարգի ընտրությունը չի կարող վերջինիս համար բացասական իրավական հետևանքներ առաջացնել՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստը ստանալու իրավունքի իրացման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ երեխայի լավագույն շահերի առավել ապահովման նպատակով, մինչև վիճարկվող դրույթը նույն որոշման պահանջներին համապատասխանեցնելն իրավակիրառ պրակտիկական պետք է առաջնորդվի այնպիսի մոտեցմամբ, որ որևէ էական տարբերություն չպետք է լինի այն հարցում, թե նոր ծնված երեխայի հորից սերված երեխաների խնամքը հոր կողմից իրականացվել է դատարանի որոշմամբ, թե երեխայի մոր հետ փոխադարձ համաձայնությամբ:

Արդյունքում, Սահմանադրական դատարանի նշյալ որոշման կատարումն ապահովելու նպատակով 2019 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել և շրջանառության մեջ է դրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:

Միաժամանակ, նախագծով նախատեսվում է որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի «դ» պարբերությամբ սահմանել, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից)՝ նոր ծնված երեխայի հորից սերված երեխաները և զավակները, եթե դատական կարգով կամ նոտարական ակտով հաստատված է այն փաստը, որ անչափահաս տարիքում այդ երեխաների խնամքը (երեխաների դաստիարակությունը, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունը) իրականացրել է նոր ծնված երեխայի հայրը կամ դատարանի վճռով այդ երեխաների բնակության վայրը սահմանված է եղել նրանց հոր բնակության վայրը կամ դատական կարգով հաստատված է երեխաների՝ հոր հետ բնակվելու (հոր բնակության վայրում բնակվելու) փաստը:

Նախագիծն ուսումնասիրվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում և տրվել է եզրահանգում այն մասին, որ այնուամենայնիվ, երեխայի հոր և մոր նկատմամբ ներկայացվող, խտրականություն պարունակող խնդրահարույց ձևակերպումները պահպանվում են: Ըստ այդմ, հարցը դիտարկվել է խտրականության արգելքի սկզբունքի և ներկայացվող պահանջների միասնականության տեսանկյունից:

Այսպես, Նախագծով նոր ծնված երեխայի հոր համար երեխայի կարգաթիվը որոշելու գործընթացում նախատեսվում են այլ ընթացակարգեր՝ սահմանելով որոշակի պահանջներ (օրինակ՝ դատարանի վճռով երեխաների բնակության վայրը հոր բնակության վայրում սահմանելը, դատական կարգով կամ նոտարական ակտով երեխաների խնամքն անչափահաս տարիքում նոր ծնված երեխայի հոր կողմից հաստատված փաստը): Մինչդեռ, նման պահանջ ներկայացված չէ նոր ծնված երեխայի մոր համար:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ օրենսդրական կարգավորումներ իրականացնելիս պետք է հիմք ընդունվի ընդհանուր սկզբունքը, որ ծնողներին հնարավորություն տրվի հավասարապես հոգ տանել իրենց երեխաների մասին: Մասնավորապես, ծնողների վրա է դրված երեխաների դաստիարակության, այդ թվում՝ առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման հարցերի լուծման պարտականությունը, ընդ որում, նշված պարտականությունը ծնողների միջև բաշխված է հավասարապես, ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ՝ իհարկե հաշվի առնելով երեխաների շահերը:

Այս համատեքստում ուշադրության է արժանի ոչ թե ծնողների և երեխաների ֆիզիոլոգիական կապը, այլ սոցիալական կապը, որն ուղղված է սոցիալական ապահովության իրավունքի իրականացման ապահովմանը և ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը:

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով միննույն իրավիճակում գտնվող անձանց՝ ծնողների համար նախատեսել նույն ընթացակարգերը, որոնց արդյունքում ոչ մի ծնողի համար՝ անկախ սեռից, անհամաչափ բեռ չի առաջանա երեխայի ծննդյան միանվագ նպաստը ստանալու իրավունքի իրացման տեսանկյունից:*

### **3.2 Երեխայի ծննդյան նպաստի վճարման կարգի և օրենքով նախատեսված ժամկետների վերաբերյալ իրազեկման պակասը**

2019 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են քաղաքացիների՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման կարգի և ժամկետների վերաբերյալ իրազեկված չլինելու պատճառով նպաստի որոշակի մասից կամ ամբողջությամբ զրկվելուն:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով այն անձի անվամբ բացված միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով: Եթե միանվագ դրամական վճարների հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում, անձը չի ներկայացնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը, ապա միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրված նպաստի գումարը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում վերադարձվում է ՀՀ պետական բյուջե:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձը հաճախորդի (միանվագ դրամական վճարների հաշվի տիրոջ) իրավունքներ ձեռք է բերում բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու (միանվագ դրամական վճարների հաշվին առկա միջոցները դուրս գրելու կարգադրություն անելու) պահից: Եթե միանվագ դրամական վճարների հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում, անձը չի ներկայացնում նշված պահանջը, ապա հաշվին առկա միջոցները միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում վերադարձվում են ՀՀ պետական բյուջե:

Այսպես, 2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով՝ 2017 թվականին քաղաքացին դիմել է Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին երրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու խնդրանքով, որը նշանակվել է: 2019 թվականին դիմել է բանկ պետական աջակցության հաշվին մուտքագրված գումարն ստանալու համար, սակայն մերժվել է հաշվեհամարին գումար չլինելու պատճառաբանությամբ: Խնդիրը պարզելու նպատակով քաղաքացին դիմել է Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին, որտեղ տեղեկացրել են, որ նշանակման պահից սկսած 12 ամսվա ընթացքում այն չստանալու պատճառով գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Դիմողի պնդմամբ՝ ինքն ի սկզբանե տեղեկացված չի եղել օրենքով նախատեսված նման պահանջի մասին, Սոցիալական ապահովության տարածքային բաժին նպաստ նշանակելու հարցով դիմելու պահին նույնպես նշվածի մասին վերջինս չի իրազեկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում վերը նշված դրույթն ավելացվել է 2017 թվականին և 2017 թվականից մինչ օրս տվյալ դրույթի կիրարկման կապակցությամբ իրազեկման աշխատանքներ չեն իրականացվել: Նշվածի մասին վկայում են Պաշտպանին հասցեագրվող բողոքները: Չնայած պետական աջակցության հաշվին մուտքագրված ծննդյան միանվագ նպաստի օրենքով նախատեսված մասը օրենքով սահմանված ժամկետում չդիմելու դեպքում չվճարելը նախատեսված է օրենքով, այնուամենայնիվ հանրությանը չիրազեկելը հանգեցնում է իրավունքների խախտման: Անձը զրկվում է երեխային հասանելիք նպաստի համապատասխան գումարից միմիայն սահմանված ժամկետում դիմելու մասին իրազեկված չլինելու պատճառով:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել երեխայի ծննդյան նպաստի վճարման կարգի և օրենքով նախատեսված ժամկետների վերաբերյալ մարդկանց իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ:*

### **3.3 Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման կարգի և ժամկետների հետ կապված պրակտիկայում հանդիպող այլ խնդիրներ**

Երեխայի ծննդյան նպաստի վճարման կարգի և օրենքով նախատեսված ժամկետների վերաբերյալ իրազեկման պակասի խնդիրներին սերտորեն փոխկապակցված են երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման կարգի և ժամկետների հետ կապված իրավակիրառ պրակտիկայի խնդիրները, որոնց մասին բարձրաձայնել էր Պաշտպանը 2018 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>62</sup>:

Խնդիրները վերաբերել են երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակումը մերժելուն՝ պայմանավորված դիմումն օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում չներկայացնելու հետ և դրանից բխող անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի ներկայացման կարգի և ժամկետների չպահպանելուն: Նշվածի կապակցությամբ Պաշտպանին բողոքներ հասցեագրվել են նաև 2019 թվականին:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է նոր ծնված երեխայի ծննդյան ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում:

Վերը նշված 12 ամսվա ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դրույթ, որպես պայմանականորեն բացառիկ հնարավորություն, նախատեսում է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշումը:

Որոշումից ստացվում է, որ լրացուցիչ փաստաթղթերն առաջին անգամ դիմելուց և մերժվելուց հետո 6-ամսյա ժամկետում ներկայացնելու հնարավորությունը վերաբերում միայն այն դեպքերին, երբ տարածքային բաժինը կայացրել է ՀՀ կառավարության N 275-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 17-րդ կետի 1-ին ենթակետի որոշումը, այսինքն՝ մերժել է նպաստ նշանակելը, բայց նաև լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին տեղեկացրել է ծնողին: Մակայն Որոշմամբ նախատեսված են նպաստ նշանակելը մերժելու հիմքեր, որոնց դեպքում կիրառելի չեն լրացուցիչ փաստաթղթերը պահանջելու անհրաժեշտությունը և, հետևաբար 6-ամսյա ժամկետում չներկայացնելու հետևանքները: Օրինակ Որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 3-րդ ենթակետի հիմքով նպաստ նշանակելու մերժումը հիմնված է նպաստի իրավունք չունենալու վրա: Մինչդեռ, ծնողն իր երեխայի ծննդյան փաստի ուժով արդեն ձեռք է բերում երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք:

Դեռ նախորդ տարվա հաղորդմամբ անդրադառնալով իրավունքը ձեռք բերելու ժամկետով (տասներկուամսյա) պայմանավորված սահմանափակումներին՝ վկայակոչվել էր ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-1167 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը: Դիրքորոշմամբ դատարանը կարևորել է տասներկու ամսվա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորությունը, քանի որ նման իրավակարգավորման բացակայությունը չի պայմանավորվում հանրային արժեքների պահպանման պահանջով և նպատակաուղղված

<sup>62</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 70-75:

չէ սեփականատիրոջ և այլոց իրավունքների ու հանրային շահերի միջև ողջամիտ հավասարակշռության ապահովմանը:

Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերում են պետական մարմնի՝ նոր ծնված երեխայի որոշած կարգաթվի հետ ծնողի անհամաձայնության հետևանքով լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու սահմանված ժամկետները բաց թողնելուն: Օրինակ, երրորդ երեխայի ծնվելու դեպքում ծնողը դիմում է ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի համապատասխան ծննդյան միանվագ նպաստի չափով նպաստ ստանալու համար, սակայն նշանակվում է ավելի ցածր կարգաթվի համապատասխան ծննդյան նպաստ: Պատճառը հիմնականում ընտանիքում երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնվող փաստաթղթերի ոչ բավարար լինելն է: Այս դեպքերում է, որ ծնողը ձեռնամուխ է լինում փաստաթղթեր ձեռք բերելու համար համապատասխան ասյաններ դիմել, գերակշռող դեպքերում այն դատարանն է: Դատական գործընթացի տևողությունից է կախված ծնողին այդ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու համար տրված 6-ամսյա ժամկետի պահպանումը: Այստեղ է, որ առաջանում է օրենքով նախատեսված այդ 6-ամսվա ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հնարավորություններ սահմանել:

Այսպիսով, ինչպես նշվեց վերևում, դատական գործընթացի ժամանակահատվածով պայմանավորված ծնողը լրացուցիչ փաստաթուղթը չի ներկայացնում առաջին դիմումը ներկայացնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, արդյունքում նախորդ դիմումը ներկայացնելու օրը չի համարվում դիմելու օր, ինչի պատճառով էլ համարվում է ժամկետը բաց թողնված կամ լավագույն դեպքում նշանակվում է այլ կարգաթվի համապատասխան չափով երեխայի ծննդյան միանվագ նպաստ:

Միաժամանակ, դատական կարգով երեխայի խնամքի հետ կապված փաստ հաստատելուց հետո ծնողը նաև պետք է ձեռնամուխ լինի ՀՀ վարչական դատավարությամբ սահմանված կարգով պարտավորեցնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը ծննդյան միանվագ նպաստ տրամադրելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունել:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրահանգել, որ այն մարդիկ, ովքեր, ֆինանսական միջոցների սղությունից կամ այլ դժվարություններից (նորածին երեխա են խնամում) ելնելով, չեն կարողանում երեխայի ծննդյան համապատասխան չափով նպաստ ստանալու իրենց իրավունքի պաշտպանության նպատակով դիմել դատարան, գրկվում են պետական մարմինների առջև արդյունավետ պաշտպանության իրավունքից: Փաստացի պետական իրավասու մարմինը մերժում է անձին նպաստի նշանակելն այն դեպքում, երբ նույն խնդրով ծնողի պահանջը մեծ հավանականությամբ իր բավարարումը կստանա դատարան դիմելու դեպքում (այդ մասին է վկայում դատական պրակտիկան):

*Այսպիսով, ելնելով երեխայի լավագույն շահի ապահովման կարևորությունից՝ անհրաժեշտ է երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերը նախորդ դիմումը ներկայացնելու օրվանից հետո ներկայացնելու համար սահմանել ողջամիտ ժամկետներ՝ հաշվի առնելով դատական երկար և անմատչելի ընթացակարգերը:*

### **3.4 Օտարերկրյա պետությունում ծնված երրորդ կամ հաջորդ երեխաների ծննդյան կապակցությամբ Հայաստանում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու գործընթացում առաջացող խնդիր**

2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներով բարձրացվել է օտարերկրյա պետությունում ծնված երրորդ կամ հաջորդ երեխաների ծննդյան կապակցությամբ

Հայաստանի Հանրապետությունում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու գործընթացում առաջացող խնդիր:

Խնդիրն այն է, որ մարդիկ ՀՀ կենսաթոշակային մարմին օբյեկտիվ պատճառներով չեն կարողանում ներկայացնել ընտանիքում երրորդ և հաջորդ երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրած օտարերկրյա պետությունից երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստն ստացած չլինելու վերաբերյալ փաստաթուղթ, ինչի պատճառով զրկվում են Հայաստանի Հանրապետությունում երեխայի ծննդյան միանվագ նպաստն ստանալու իրավունքից: Նշված փաստաթուղթը ներկայացնելու պահանջն ամրագրված է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ:

Օրինակ՝ 2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկի համաձայն՝ դիմողի երրորդ երեխան ծնվել է Ռուսաստանի Դաշնությունում, երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինը: Երրորդ երեխայի համար ծննդյան միանվագ նպաստ նշանակելու խնդրանքով սահմանված ժամկետում քաղաքացին դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայություն, սակայն մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ չի ներկայացրել Ռուսաստանի Դաշնությունում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստն ստացած չլինելու վերաբերյալ փաստաթուղթ: Ռուսաստանի Դաշնությունից հրաժարվել են դիմողին տրամադրել փաստաթուղթ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստն ստացած չլինելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ ոչ երեխան և ոչ էլ երեխայի ծնողները չեն հանդիսացել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ:

Պաշտպանը քննարկման ընթացակարգի շրջանակում գրություն է հասցեագրել Աշխատանքի և սոցիալական հարցերին նախարարություն: Արդյունքում, հարցում է կատարվել ՌԴ իրավասու մարմին՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակված չլինելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու համար և պատասխանի արդյունքներով քաղաքացուն նշանակվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստ՝ երրորդ երեխայի համար սահմանված չափով:

Չնայած կոնկրետ դեպքով բարձրացված խնդիրը Պաշտպանի աջակցությամբ ստացել է լուծում, սակայն խնդիրը համակարգային առումով շարունակում է մնալ չլուծված:

Հարկ է նկատել, որ վերը նշված խնդրին մարդիկ բախվում են ոչ միայն պահանջվող փաստաթուղթը Ռուսաստանի Դաշնությունից ստանալ չկարողանալու, այլև այն դեպքերում, երբ երեխան ծնվել է օտարերկրյա այլ պետությունում, ուստի խնդիրն առաջանում է նաև օտարերկրյա այլ պետություններից ևս վերը նշված տեղեկատվությունը ստանալ չկարողանալու դեպքում: Նշվածի մասին են վկայում 2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքները:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը սահմանող ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման համաձայն՝ «եթե ծնողն օտարերկրյա քաղաքացի է, ինչպես նաև, եթե դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի ծնողին՝ ընտանիքում երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստի համար, և նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը, ապա ներկայացվում է նաև այլ պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստն ստացած չլինելու վերաբերյալ փաստաթուղթ»:

Սահմանված է նաև, որ եթե ներկայացվում է նպաստը երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով վճարելու մասին դիմում, և նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Արցախի Հանրապետության իրավասու մարմինը, ապա

երեխայի ծննդյան կապակցությամբ Արցախի Հանրապետությունում նպաստ ստացած չլինելու մասին տեղեկատվությունն Արցախի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստանում է ծառայությունը՝ դիմումը ներկայացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Այս դեպքում համապատասխան ժամկետը հաշվարկվում է Արցախի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանն ստանալու օրվանից:

Հարկ է նկատել, որ երեխայի ծննդյան կապակցությամբ այլ երկրում նպաստ ստացած չլինելու մասին տեղեկատվություն ստանալու պարտավորություն Սոցիալական ապահովության պետական ծառայության համար՝ բացի Արցախի Հանրապետությունից, նախատեսված չէ: Այդպիսի պարտավորություն Սոցիալական ապահովության պետական ծառայության համար նախատեսված չէ նաև սոցիալական համագործակցության համաձայնագրի առկայությամբ:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «պետական նպաստների տրամադրման նպատակն է անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը»:

Ըստ Սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՄԴՈ-649 որոշմամբ արտահայտված դիրքորոշման՝ երեխաների նպաստին անմիջապես վերաբերող դրույթ ՀՀ Սահմանադրությունը չի պարունակում, և այդ իրավունքը պետք է դիտարկել Սահմանադրության 37-րդ հոդվածի համատեքստում, որում նշված է ընդհանրապես սոցիալական ապահովության իրավունքը՝ բացի հոդվածում թվարկվածից, նաև «օրենքով նախատեսված այլ դեպքերում», որոնց շրջանակում էլ գտնվում է երեխայի նպաստի իրավունքը: Այն պետք է դիտարկել նաև Սահմանադրության 34 հոդվածի համատեքստում, որում նշված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի [...] իրավունք», ինչպես նաև Սահմանադրության 48 հոդվածի 1-ին կետի առնչությամբ, որով պետության հիմնական խնդիր են հռչակվում ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությունն ու հովանավորումը:

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում, վարչական մարմինն ինքն է պարտավոր ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Մյուս կողմից, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝

բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Ուստի, այլ պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստը ստացած չլինելու վերաբերյալ տեղեկատվությունը Սոցիալական ապահովության պետական ծառայությունը կարող է ստանալ ոչ միայն անձի միջոցով, այլև համապատասխան պետության կենսաթոշակային մարմնին հարցում կատարելու միջոցով: Տվյալ դեպքում, դիտարկելով այլ պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստն ստացած չլինելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալը Սոցիալական ապահովության պետական ծառայության պարտականություն, առաջնորդվում ենք նպաստի տրամադրման նպատակային նշանակությամբ, այդպիսով նաև առաջնահերթ ուշադրություն դարձնելով երեխայի լավագույն շահին, արդյունքում նախապատվությունը տալով անձի համար լավագույն իրավաչափ լուծմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված Պաշտպանի գրությամբ առաջարկվել է միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման նպատակով համապատասխան կառուցակարգեր և մեխանիզմներ սահմանելու ուղղությամբ:

Բարձրացված հարցով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ խնդրո առարկա տեղեկատվության հասանելիությունը, որպես անձնական տվյալ, սահմանափակված է և այն փոխանցվում է այլ պետություն միջազգային պայմանագրի հիման վրա (կամ տրամադրվում են անձամբ տվյալներ սուբյեկտին): Այս բնագավառում ՀՀ և ՌԴ միջև գործող՝ 09.09.1994թ. «Երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների, փոխհատուցումային վճարումների և ալիմենտների վճարման բնագավառում քաղաքացիների երաշխիքների մասին» համաձայնագրի անդամ պետությունների միջև անձնական տվյալների փոխանակում նախատեսված չէ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. ընդլայնել նշված բնագավառում Հայաստանի Հանրապետության հետ համապատասխան համաձայնագիր ունեցող երկրների շրջանակը,*

*2. առկա և հետագայում կնքվելիք համապատասխան համաձայնագրերում սահմանել փոխհամաձայնեցված մեխանիզմներ՝ լուծելու անձնական տվյալների փոխանակման առնչությամբ առաջացող խնդիրները:*

#### **4. Սոցիալական աջակցության իրավունք**

##### **4.1 Ընտանիքների անապահովության գնահատումը**

Դեռ 2018 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձ էր կատարվել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առկա խնդիրներին, մասնավորապես, համակարգում գործածվող ոչ պատշաճ վարչարարությանը, սոցիալական աջակցության տարածքային բաժինների ոչ մասնագիտական մոտեցմանն ու պահելաձևին, ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի կիրառման թերություններին, անապահովության գնահատման միավորի վրա մարդկային գործոնի՝ սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցների ունեցած մեծ ազդեցության և այլն: Տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր բարձրացնել համակարգի հասցեականությունը և թափանցիկությունը, վերահսկողությունը տեսուչների նկատմամբ՝



չարաշահումների վերհանման, կանխման և պատասխանատվության ենթարկելու նպատակով:

2019 թվականին որպես ընտանիքների անապահովության համակարգի հասցեականության և թափանցիկության արձանագրված զարգացումներ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացրել է, որ վերանայվել են անապահովության գնահատման մոտեցումներն ու մեթոդաբանությունը՝ հիմք ընդունելով ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը՝ հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին ուղղելու սկզբունքային մոտեցումը: Նշել են, որ «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի հասցեականության բարձրացումը գտնվում է Նախարարության մշտական ուշադրության ներքո և պարբերաբար աշխատանքներ են իրականացվում այդ ուղղությամբ՝ կատարելով փոփոխություններ ոլորտը կարգավորող իրավական ակտերում (իրավակիրառական կամ բովանդակային), ինչպես նաև այդ ակտերով սահմանված պահանջների կատարման ուսումնասիրություններ: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ սահմանված կարգով յուրաքանչյուր ամիս սոցիալական աջակցության տարածքային գործակալություններին (բաժիններին) են տրամադրվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում հաշվառված անձանց մասին ՀՀ նախարարություններից, պետական այլ մարմիններից և կազմակերպություններից ստացված տվյալները, որոնց հիման վրա կատարվում են սոցիալական աջակցության տրամադրման հասցեականության ճշգրտման աշխատանքներ: Տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներին մշտապես տրամադրվում է մեթոդական և գործնական աջակցություն՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ, ըստ անհրաժեշտության կազմակերպվում են նաև վերապատրաստման դասընթացներ:

Որպես դրական տեղաշարժ՝ Նախարարությունն ընդգծել է, որ Կառավարության մի շարք որոշումներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 145-Ն որոշման մեջ, որոնցով վերանայվել են անապահովության գնահատման մոտեցումներն ու մեթոդաբանությունը՝ հիմք ընդունելով ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը՝ հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին ուղղելու սկզբունքային մոտեցումը:

Չնայած ոլորտում առկա դրական տեղաշարժին, այնուամենայնիվ, 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ սոցիալապես անապահով ընտանիքի համար կենսական կարևորություն ունեցող աջակցության տրամադրման ժամանակ մարդիկ բախվել են մի շարք խնդիրների:

Սոցիալական աջակցության տրամադրման ոլորտում դեռևս առկա են ոչ պատշաճ վարչարարության շարունակական դրսևորումներ: Վարչարարության համար կարևոր նշանակություն ունի սոցիալական աջակցության իրավունքի իրացման սկզբնական փուլը՝ դիմում-հայտարարագիր լրացնելը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են, որ լայն տարածում ունեն այն դեպքերը, երբ սոցիալական աջակցության մարմնում անձանց չեն առաջարկվում լրացնել դիմում-հայտարարագրեր: Բանավոր մերժվում է նպաստների նշանակման գործընթացի վարումը՝ ներկայացնելով անապահովության միավորը

չբավարարելու համոզմունք: Արդյունքում, անձինք երբեմն զրկվում են նպաստն ստանալու իրավունքից, այդ թվում՝ հրատապ օգնությունից: Մարդիկ զրկվում են նաև հետագայում իրենց իրավունքները պաշտպանելու և պետական մարմին իր դիմելը հիմնավորելու հնարավորությունից:

Ոչ պատշաճ վարչարարության խնդիրն ակնառու է նաև տնային այցելություններ իրականացնելիս: Այս դեպքում չեն գործում անապահովության գնահատման գործընթացին անմիջականորեն մասնակցող սոցիալական աջակցության տեսուչների գործողությունները գնահատելու պատշաճ վերահսկման մեխանիզմներ: Հետագայում չարաշահումներ հայտնաբերելիս պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է նպաստառուի վրա և վերջինս զրկված է մնում տվյալ ժամանակաշրջանի ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքից:

Նպաստ (կամ միանվագ դրամական օգնություն) ստանալու համար իրեն աղքատ համարող, որևէ աջակցություն ակնկալող ընտանիքի չափահաս անդամներից մեկը, մյուսների համաձայնությամբ, դիմում է իր ընտանիքի փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին՝ ներկայացնելով դիմում-հայտարարագիր և անհրաժեշտ փաստաթղթեր, որոնք նկարագրում են ընտանիքի կազմը և պայմանները: Ներկայացված տվյալներով ինքնաշխատ՝ համակարգչային ծրագրով որոշվում է այդ ընտանիքի անապահովության միավորը, իսկ դրանով էլ՝ նպաստի իրավունքը՝ դիմելու հաջորդ ամսից և նպաստի չափը:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկվելու համար նշանակություն ունի ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը (հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաները, կենսաթոշակառուները, տարեցները, երեխաների առանձնահատուկ խմբերը), բնակարանային պայմանները, ընտանիքի անդամների աշխատունակությունը և այլ ցուցանիշներ: Սոցիալական աշխատողի իրականացրած տնային այցելության ընթացքում լրացվում են այդ ցուցանիշները, այնուհետև համադրվում տեղեկատվական բազաներում առկա տեղեկատվության հետ:

Սոցիալական աջակցության ոլորտում իրականացվող քաղաքականության խնդիրն է ոչ միայն աղքատ ընտանիքների գոյատևմանն աջակցելը կամ լավագույն դեպքում նյութական աղքատության մեղմումը, այլև աղքատության մշակույթի հաղթահարմանը նպաստելը: Հաճախ աղքատ մարդկանց չի հաջողվում սեփական ուժերով հաղթահարել ձևավորված պրակտիկաներն ու կարծրատիպերը, անհրաժեշտ ունակությունների անբավարարության, սոցիալական մեկուսացվածության և անհավասար մեկնարկային հնարավորությունների և այլ պատճառներով:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունները վկայում են նաև ընտանիքների անապահովության գնահատման միավորի վրա մարդկային գործոնի՝ սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցների ունեցած մեծ ազդեցության մասին: Անապահովության միավորի հաշվարկումը հիմնված է գնահատման անուղղակի ցուցանիշների, ոչ բավարար տեղեկատվության և սոցիալական աշխատողի սուբյեկտիվ եզրակացության վրա: Օրինակ՝ բնակարանը վերանորոգել են, թե՛ ոչ, ընտանիքի անդամը բացակայում է, թե՛ ոչ, ընտանիքը տիրապետում և օգտագործում է ավտոմեքենա, թե՛ ոչ: Սրանով են հիմնականում պայմանավորված կոռուպցիոն պահպանվող ռիսկերը, ընտանեկան և սոցիալական նպաստների հասցեականության խնդիրները: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ սոցիալական աշխատողը լինի մարդկային բարձր որակներով ու մասնագիտական հմտություններով օժտված անձ:

Տարածված անթույլատրելի պրակտիկա է սոցիալական աջակցության մարմինների տեսուչների՝ նպաստը չվճարելու վերաբերյալ սպառնալիքներ հնչեցնելը, անհարկի

դժվարություններ ստեղծելը՝ նպաստի իրավունքը դադարեցված լինելու դեպքերում խոչընդոտը վերանալուց հետո ամիսներ անց վերականգնման դիմումներ ընդունելը, անհիմն տեղեկանքներ պահանջելը և այլն:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացու տեղեկացմամբ՝ ընտանիքում կան երեք անչափահաս, ընտանիքում միակ աշխատողն ամուսնու հայրն է: Դիմել է սոցիալական աջակցության տարածքային մարմին ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերելու ակնկալիքով, որտեղից տեղեկացրել են, որ անապահովության միավորը չի բավարարում: Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ նշված անձի տվյալներով դիմում-հայտարարագիր առկա չէ: Առաջարկվել է գրավոր դիմել սոցիալական աջակցության մարմնին: Բողոք ներկայացրած անձը հետագայում տեղեկություն է ներկայացրել, որ Պաշտպանի աջակցությամբ նշանակվել է հրատապ օգնություն:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ սոցիալական աջակցության մարմինը սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին:

Մեկ այլ բողոքով էլ միայնակ անժառանգ կենսաթոշակառուն հայտնել է, որ մեկ տարի է նպաստի իրավունքը դադարել է. հերթական փաստագրման ժամանակ, տեսուչը, իմանալով, որ բանկում ավանդ ունի ներդրած, որից ստանում է ամսական 14.000 դրամ եկամուտ, հորդորել է այս անգամ չլրացնել դիմում-հայտարարագիրը՝ համոզմունք առաջացնելով, որ այն անօրինական է: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի ուղղորդմամբ ներկայացել է սոցիալական աջակցության տարածքային մարմին, որտեղ արժանացել է ոչ միայն վատ և արհամարհական վերաբերմունքի, այլև տեղեկացվել, որ այժմ դիմում-հայտարարագրեր լրացնելու ժամանակը չէ և անհրաժեշտ է ներկայանալ հաջորդ ամիս: Պաշտպանի աջակցությամբ վերականգնվել է դիմողի սոցիալական նպաստի իրավունքը:

Մեկ այլ բողոք էլ վկայում է անապահովության գնահատման համակարգում նպաստառուի վերաբերյալ ոչ ամբողջական տվյալներ մուտքագրելու մասին: Թեև համակարգն ինքնաշխատ եղանակով է հաշվարկում անապահովության միավորը, այդ միավորի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները համակարգ մուտքագրում է տարածքային բաժնի աշխատակիցը, ով կարող է օբյեկտիվորեն չգնահատել անձի փաստացի սոցիալական վիճակը կամ պարզապես անուշադրության, անգործության, իրականացված ոչ պատշաճ վարչարարության պատճառով թերի տվյալներ մուտքագրել համակարգ: Հաշվարկված անապահովության միավորը չի արտահայտելու անձի սոցիալական իրական դրությունը: Այսպես, նորածին երեխայի հետ հանրակացարանում բնակվող քաղաքացին դիմել է սոցիալական աջակցության գործակալություն, որտեղ տեղեկացրել են նախկին ամուսնու բնակության վայրի վերաբերյալ տեղեկանքի պարտադիր առկայության դեպքում դիմում-հայտարարագիր ներկայացնելու հնարավորության մասին: Նպաստառուն տեղյակ չի եղել նախկին ամուսնու բնակության վայրի մասին, ինչպես նաև հնարավորություն չի ունեցել բացահայտել այն: Պաշտպանի միջամտությամբ նշանակվել է ընտանեկան նպաստ առանց այդ փաստաթղթի առկայության, քանի որ երեխայի նկատմամբ անգամ հայրություն ճանաչված չի եղել:

Խնդրահարույց պրակտիկայի մեկ այլ դրսևորում է պետական մարմին դիմող մարդկանց ոչ լիարժեք տեղեկությունների տրամադրումը կամ դրանք առհասարակ չտրամադրելը: Օրինակ՝ գործերից մեկով դիմողին չի տեղեկացվել նպաստի իրավունք ձեռք բերելուն խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ: Երբ դիմողը բողոք է ներկայացրել Մարդու

իրավունքների պաշտպանին սոցիալապես ծանր վիճակի և նպաստի իրավունք ձեռք չբերելու մասին, համապատասխան ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ խոչընդոտող հանգամանքը տվյալ ընտանիքի բնակության հասցեում փաստացի բացակա այլ անձանց հաշվառումն է: Հետագայում մարդուն տրված իրավական խորհրդատվության, և համապատասխանաբար որոշ գործողություններ իրականացնելուց հետո ընտանիքը հաշվառվել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում:

Այսպիսով, առանցքային խնդիր է սոցիալական աջակցության համակարգի ծառայողների կողմից նպաստառուների հանդեպ անբարեհաճ վերաբերմունքի և արատավոր պրակտիկայի իսպառ վերացումը: Նշվածի հետևանքով անապահովները սոցիալական աջակցություն տրամադրող աշխատակիցների մեջ տեսնում են ոչ թե իրենց աջակիցներին, այլ՝ իրենց հանդեպ անբարյացակամ տրամադրված հանրային ծառայողների:

Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ և սոցիալական աջակցության մարմինների հետ համագործակցության արդյունքում հաճախ վերականգնվում է խախտված իրավունքը, սակայն դա խնդրի ամբողջական լուծում չէ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. իրականացնել վերահսկողություն սոցիալական աջակցության մարմինների նկատմամբ պատշաճ վարչարարություն իրականացնելու, նրանց պատասխանատվությունն իրենց աշխատանքի հանդեպ ավելի բարձրացնելու, մարդկանց սոցիալական աջակցության համակարգին առնչվող անհրաժեշտ և ամբողջական տեղեկությունների տրամադրումն ապահովելու նպատակով,*

*2. կատարելագործել ընտանիքների անապահովության գնահատման բանաձևի կիրառումը, որը հնարավորություն կտա մարդկային գործոնի նվազագույն մասնակցությունը:*

#### **4.2 Նպաստի իրավունքից օգտվելիս գազի սահմանված չափաքանակն անցնելը**

Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր 12 ամիսների ընթացքում ընտանիքի սպառած բնական գազի սահմանված չափաքանակն անցնելու պատճառով նպաստի իրավունքը դադարելու վերաբերյալ խնդիրը: Բարձրացվել էր նաև հանրապետության ամբողջ տարածքում կլիմայական տարբեր պայմաններով անապահովության նպաստ ստացող ընտանիքների սպառած բնական գազի սահմանված չափաքանակը նույն չափորոշիչով սահմանելու խնդիրը<sup>63</sup>: Տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր բնական գազի միջին ամսական սահմանային չափաքանակներն ավելացնել:

Բարձրացված խնդրի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ներկայացվել էր պարզաբանում այն մասին, որ ընտանիքների անապահովության համակարգում ընդգրկված ընտանիքների 12 ամիսների ընթացքում բնական գազի սահմանված չափաքանակն ավելացնելու նպատակով 2017-2018 թվականների ընթացքում իրականացվել է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում՝ ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակների կիրառման փորձնական ծրագիր, որում հաշվի էր առնվել ՀՀ բնակլիմայական պայմանները՝ տարբեր տարածաշրջաններում ձմեռային ամիսների տարբեր տևողությունը և խստությունը: ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվել է բնական գազի սպառման սահմանային չափաքանակը սահմանել փորձնական ծրագրի իրականացման արդյունքների ամփոփմամբ

<sup>63</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 94-97:

և մինչև 2018 թվականի օգոստոսի 15-ը ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ ընտանիքի սպառած բնական գազի սահմանային չափաքանակի մասին: Ըստ Նախարարության՝ փորձնական ծրագրի արդյունքներն ամփոփվել են և համապատասխան առաջարկը ներառվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում: Ներկայացված նախագծով առաջարկվել է ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ հաշվի առնվող ցուցանիշներում դիտարկել ընտանիքի մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում սպառած բնական գազի քանակը (գործող կարգի համաձայն՝ հաշվի է առնվում 12 ամիսների ընթացքում սպառած բնական գազը): Այս նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքներն ամփոփվել են և նախագիծը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

Չնայած Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2019 թվականի ընթացքում բնական գազի սահմանված չափաքանակն անցնելու հիմքով որևէ ընտանիք նպաստի իրավունքից չի զրկվել՝ համապատասխան փորձնական ծրագրի ավարտման պատճառով, այնուամենայնիվ խնդիրը վերջնականապես համակարգային առումով լուծված չէ. նախագիծը 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ ընդունված չէ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է սեղմ ժամկետներում ընդունել օրենսդրական փոփոխություններ ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ հաշվի առնվող ցուցանիշներում ընտանիքի սպառած բնական գազի քանակի վերաբերյալ՝ հաշվի առնվող ցուցանիշներում դիտարկելով ընտանիքի մայիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում սպառած բնական գազի քանակը:*

### **4.3 Ավանդների փոխհատուցում**

2019 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ սահմանամերձ համայնքներում հաշվառված չլինելու պատճառով դրամական ավանդների դիմաց փոխհատուցում չստանալու խնդրի վերաբերյալ: Խնդիրն այն է, մարդկանց դրամական ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելը մերժվել է, քանի որ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ սահմանամերձ համայնքներում հաշվառված չեն եղել զինվորական ծառայության զորակոչվելու պատճառով:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ունի ներդրած դրամական ավանդ: Ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ստացել մերժում՝ պատճառաբանությամբ, որ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված չի եղել սահմանամերձ համայնքում: Դիմողը մինչև 2013 թվականի օգոստոսի 29-ը հաշվառված է եղել սահմանամերձ համայնքի բնակչության պետական ռեզիստրում, սակայն զինվորական ծառայության զորակոչվելու պատճառով հանվել է հաշվառումից: Զորացրվելուց հետո՝ 2015 թվականի հուլիս ամսին կրկին հաշվառվել է իր մշտական բնակության վայրի բնակչության պետական ռեզիստրում:

ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 460-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում): Որոշմամբ հստակ սահմանված է նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը:

Որոշմամբ նախատեսված է, որ նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեն նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներառյալ խորհրդային ռուբլով դրամական ավանդ ներդրած, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում՝ բնակչության պետական ռեզիստրում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված (այսուհետ՝ սահմանամերձ համայնքներում հաշվառված) անձինք, այդ թվում՝ եթե ավանդը ներդրել է մահացած ամուսինը՝ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում:

Հարկ է նկատել, որ «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեզիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման թիվ 1 հավելվածի 8-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ բնակչության պետական ռեզիստրում անձի մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն փոխվում է զինձառայության գորակոչվելիս:

Զինվորական ծառայության գորակոչվելու պատճառով հաշվառումից դուրս գալու և դրա հետևանքով 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ սահմանամերձ համայնքներում հաշվառված չլինելու պատճառով մարդիկ գրկվել են ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից: Մինչդեռ, դրույթը սահմանելու օրենսդրի նպատակն է սահմանված ժամանակահատվածում սահմանամերձ համայնքում փաստացի բնակություն ունեցող ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորություն ընձեռելը: Նման իրավակարգավորման պարագայում մարդկանց կամքից անկախ չի ապահովվում ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու նրանց իրավունքի իրացումը:

Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է փոփոխություն կատարել Որոշման թիվ 1 հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում՝ նախատեսելով բացառություն զինվորական ծառայության գորակոչվելու պատճառով 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ սահմանամերձ համայնքներում հաշվառումից հանված անձանց համար: Պաշտպանի առաջարկն ընդունվել է: Կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 153-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել Կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 460-Ն որոշման մեջ:

Բացի վերը նշված փոփոխությունից, Որոշման մեջ փոփոխության է ենթարկվել ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք տվող տարիքային շեմը: Սահմանվել է նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը մինչև 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված մարդկանց 1934 թվականի փոխարեն:

2019 թվականին շարունակվել է նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը մինչև 1934 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձանց: Իհարկե ողջունելի է, որ ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք տվող տարիքային շեմի փոփոխությամբ ավանդի դիմաց փոխհատուցում ստացող անձանց շրջանակն ընդլայնվելու է 2020 թվականին: Հարկ է նկատել, որ գործընթացն արդարացիորեն չի գոհացնում քաղաքացիներին: Այդ մասին են վկայում 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները: Մարդիկ իրենց դժգոհությունն են հայտնել, որ փոխհատուցման սահմանված հասցեատերերը, ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք տվող տարիքային շեմը ցածր է, արդյունքում մինչև հասնի իրենց փոխհատուցում տրամադրելու ժամանակը, շատերը պարզապես այլևս կենդանի չեն լինի: Բացի այդ էլ՝ ավանդատուի փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքը համարվում է

անձի հետ անխաղճիորեն կապված իրավունք, այն չի կարող անցնել այլ անձի (բացառությամբ՝ գոհվածների ժառանգների), լինել գրավի առարկա, մտնել ժառանգության զանգվածի մեջ: Ուստի, ոչ մի կերպ չի ապահովվում ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքի լիարժեք իրացումը:

Ավանդների փոխհատուցման գործընթացի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշման համաձայն՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի ավանդատու քաղաքացիների նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման գործընթացը որպես սոցիալական աջակցության ծրագիր ՀՀ-ում սկսվել է 2006 թվականին: Ծրագրի իրականացման հենց սկզբից պետությունը որդեգրել է դրամական ավանդների դիմաց սոցիալապես խոցելի ավանդատուներին օգնության տրամադրման քաղաքականությունը՝ ավանդների փոխհատուցման տրամադրման համար կիրառելով սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները, որոնք սահմանվում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

Հարկ է նկատել, որ ավանդների փոխհատուցման գործընթացում պետությունը նախատեսել է սոցիալապես խոցելի ավանդատուների սահմանափակ շրջանակ, ինչը չի բխում սոցիալական աջակցության սուբյեկտների հասցեականությունից և սոցիալական աջակցության սկզբունքներից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ընդլայնել նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը:*

#### ***4.4 ԽՍՀՄ Խնայքանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների փոխհատուցման խնդիր***

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած բողոքներով մարդիկ բարձրացրել են ԽՍՀՄ Խնայքանկից իրենց ձեռք բերած արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների համար փոխհատուցում չստանալու հարցը: Խնդիրն այն է, որ քաղաքացիները ԽՍՀՄ Խնայքանկից ձեռք բերած արժեթղթերը ժամանակին չեն ձևակերպել ավանդ, ինչպես նաև դրանք չեն փոխանակել այլ վճարային արժեթղթերով: Այս հարցի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին պարզաբանել են, որ գնված արժեթղթերի համար կարող է փոխհատուցում տրամադրվել միայն այն դեպքում, եթե մինչև 1993 թվականի հունվարի 1-ն արժեթղթերը ձևակերպել են ավանդ:

Ընդ որում, նշված դեպքում փոխհատուցումը պետք է տրամադրվի ՀՀ կառավարության որոշումներով սահմանված՝ ավանդների փոխհատուցման կարգին համապատասխան, քանի որ ներկայում վերը նշված կամ այլ որոշումներով ավանդ չձևակերպված արժեթղթերի համար փոխհատուցման ընթացակարգեր սահմանված չեն:

Գնված արժեթղթերն այլ վճարային արժեթղթերով փոխարինելու կամ ավանդ ձևակերպելու հնարավորություն մարդկանց տրվել է ՀՀ կառավարության 1992 թվականի մարտի 26-ին ընդունված թիվ 181 որոշմամբ: Որոշումն ուժը կորցրել է 2000 թվականի հունվարի 11-ին թիվ 4 որոշմամբ: Նշված որոշմամբ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները 1993 թվականի հունվարի 1-ից կարող են իրենց մոտ եղած արժեթղթերը փոխանակել այլ վճարային արժեթղթերով, ինչպես նաև խնայքանկում ձևակերպել որպես ավանդ՝ հաշվեգրելով 1991 թվականի մարտին սահմանված 40 տոկոսի և 1992 թվականի հունվարի 1-ից սկսած՝ 9 տոկոսի չափով փոխհատուցումներ, անկախ ավանդի ձևակերպման ժամկետից:

Բողոքի քննարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը գրություններ է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ վարչապետի աշխատակազմ: Պետական մարմիններին ներկայացվել է, որ ՀՀ կառավարության 1992 թվականի մարտի 26-ի նշված որոշմամբ արժեթղթերի փոխանակումն այլ վճարային արժեթղթերով կամ դրանց որպես ավանդ ձևակերպումը սահմանված չի եղել որպես իմպերատիվ պահանջ: Դա հաշվի առնելով էլ շատերն իրենց ձեռք բերած արժեթղթերը չեն ձևակերպել ավանդ:

Նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգով պահանջվում է, որ մարդիկ իրենց մոտ եղած արժեթղթերը ձևակերպած լինեն որպես ավանդ մինչև 1993 թվականի հունվարի 1-ը, մինչդեռ, ՀՀ կառավարության 1992 թվականի մարտի 26-ի վերը նշված որոշմամբ մարդկանց հնարավորություն է տրվել արժեթղթերը որպես ավանդ ձևակերպել 1993 թվականի հունվարի 1-ից հետո մինչև որոշումն ուժը կորցնելը՝ 2000 թվականի հունվարի 11-ը: Ստացվում է, որ նույնիսկ եթե մարդիկ ՀՀ կառավարության 1992 թվականի մարտի 26-ի վերը նշված որոշմամբ 1993 թվականից հետո արժեթղթերը ձևակերպած լինեին որպես ավանդ, այդ դեպքում էլ չէին կարողանալու փոխհատուցում ստանալ ներկայիս ավանդների փոխհատուցման կարգին համապատասխան: Հետևաբար, կարող ենք փաստել, որ նշված գործընթացների արդյունքում ոչ մի կերպ չի ապահովվել գնված արժեթղթերի դիմաց հետագայում փոխհատուցում ստանալու մարդկանց իրավունքի իրացումը, իսկ ներկայում էլ բացակայում են որպես ավանդ չձևակերպված արժեթղթերի դիմաց փոխհատուցման տրաման ընթացակարգերը:

Այսպիսով, վերոգրյալի համատեքստում պետք է նշել, որ օրենսդրական թերի կարգավորումները կամ համապատասխան կարգավորումների բացակայությունը չի կարող անձի իրավունքների խախտման պատճառ դառնալ: Ուստի, մարդիկ չպետք է զրկվեն ԽՍՀՄ Խնայքանկից ձեռք բերված արժեթղթերի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից:

Պաշտպանի գրություններով, ուղղված ՀՀ ֆինանսների նախարարությանը և ՀՀ վարչապետի աշխատակազմին, առաջարկվել է միջոցներ ձեռնարկել նշված իրավունքի իրացումն ապահովելու համար փոխհատուցման ընթացակարգերի սահմանման կապակցությամբ:

Ֆինանսների նախարարությունը, հաշվի առնելով բարձրացված հարցի սոցիալական բնույթը, դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և առաջարկել այն քննարկել բացառապես սոցիալական առաջնահերթությունների համատեքստում՝ բացահայտելով ԽՍՀՄ Խնայքանկից ՀՀ քաղաքացիների ձեռք բերած արժեթղթերի համար փոխհատուցման տրամադրման հնարավորությունները, հնարավոր խոչընդոտներն ու խնդիրները: ԽՍՀՄ Խնայքանկից ձեռք բերված արժեթղթերի համար փոխհատուցման տրամադրման հարցը քննարկվել է հետևյալ հարցադրման համատեքստում. արդյոք անհրաժեշտ է տրամադրել փոխհատուցում: Եթե այո, ապա փոխհատուցումը որքանով է համահունչ ՀՀ կառավարության քաղաքականության հիմնական ուղղություններին և ընդգրկվում սոցիալական առաջնահերթությունների շրջանակում:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ նախկին ԽՍՀՄ Խնայքանկից ձեռք բերված արժեթղթերը նույնական են նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում այլ հանրապետություններում գործած խնայքանկերից ձեռք բերած արժեթղթերին, անվանական և թվագրված չեն: Մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ՀԽՍՀ հանրապետական բանկից տվյալ անձի ձեռք բերած լինելը ճշտելու նպատակով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գրություն է ուղարկել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ: Բանկը պատասխանել է, որ չի կարող տրամադրել պահանջվող տեղեկությունը: Ըստ այդմ էլ



նախարարությունը տեղեկացրել է, որ ԽՍՀՄ Խնայքանկի ՀՀ քաղաքացիների ձեռք բերած արժեթղթերի դիմաց փոխհատուցման տրամադրման հարցը ներկայում լուծել հնարավոր չէ:

ԽՍՀՄ ամբողջ տարածքում այլ հանրապետություններում գործած խնայքանկերից ձեռք բերված արժեթղթերի անվանական և թվագրված չլինելու հետ կապված անհրաժեշտ է նշել, որ այդ պահին գործող արժեթղթերի թողարկման կարգին համապատասխան դրանք չեն եղել անվանական և թվագրված, ուստի նշվածը չի կարող համարվել պատշաճ պատճառաբանություն և խոչընդոտել իրավունքի իրացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի բոլոր դիտարկումները բխում են նաև ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությունից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախատեսել համապատասխան օրենսդրական կարգավորումներ արժեթղթերի դիմաց փոխհատուցումը տրամադրելու նպատակով:*

#### **4.5 Անօթևանների կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ**

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր քաղաքացի ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրավունքի իրականացման համար»:

Ի ապահովում վերոգրյալ սահմանադրական նորմի՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ կացարանը տրամադրվում է որոշակի բնակության վայր չունեցող անձին՝ որպես ժամանակավոր օթևան, մինչև 90 օր տևողությամբ: Որոշակի բնակության վայր չունեցող անձին՝ որպես ժամանակավոր օթևան՝ կացարան և այլ սոցիալական ծառայություններ տրամադրելու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում):

Որոշման իմաստով՝ որոշակի բնակության վայր չունեցող կամ անօթևան է համարվում հատուկ սոցիալական կարիքներ ունեցող անձը, ով չունի բնակարան կամ ընտանիքում առկա միջանձնային անառողջ հարաբերությունների հետևանքով առաջացած անհաղթահարելի խոչընդոտների պատճառով ի վիճակի չէ ապրել սեփական բնակարանում կամ ձեռք բերել բնակարան, ով սոցիալապես ու հոգեբանորեն մեկուսացված է և կարիք ունի ապաստարանի ու սոցիալական աջակցության:

Վերը նշված կարգավորումների ուժով մեր պետությունն անօթևաններին բավարար կենսամակարդակով ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտականություն է ստանձնել:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անօթևանություն գոյություն ունի բոլոր երկրներում, սակայն անօթևան մարկանց քանակի մասին պաշտոնական տվյալները քիչ են, քանի որ վիճակագրություն չի վարվում: Վիճակագրական տվյալները հատկապես կարևոր են անօթևանության պատճառների վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու, ինչպես նաև դրա դեմ պայքարի ռազմավարություններ մշակելու համար<sup>64</sup>:

Եվրոպական միության երկրներում ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անօթևան մարդկանց մատուցվող ծառայությունների շրջանակը բավականին լայն է: Դրանք

<sup>64</sup> Տե՛ս Եվրոպական հանձնաժողովի զբաղվածության, սոցիալական և հավասար հնարավորությունների հարցերով զբաղվող գրասենյակի՝ «Անօթևանության չափումը Եվրամիության մակարդակում» ուսումնասիրությունը; հասանելի է <https://clck.ru/MjWZ2> հղումով, էջեր 4-6:

են՝ 1. կացարաններ անօթևանների համար (վթարային ապաստարաններ, ժամանակավոր հանրակացարաններ), 2. ոչ բնակելի ծառայություններ (ցերեկային կենտրոններ, խորհրդատվական ծառայություններ և այլն), 3. այլ խումբ անձանց խնամք իրականացնող հաստատություններ, որոնցից կարող են օգտվել նաև անօթևան մարդիկ (հյուրանոցային համարներ, ճաշարաններ և այլն), 4. Բնակչության բոլոր խմբերին մատուցվող ծառայություններ, որոնցից կարող են օգտվել անօթևան մարդիկ (օրինակ՝ առողջապահական և սոցիալական խնամքի ծառայություններ), 5. մասնագիտացված օժանդակ ծառայություններ (հոգեկան առողջության պահպանման և նարկոլոգիական կենտրոններ): Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չնայած տարբեր երկրներում խնամքի ծառայությունների նման բազմազանությանը՝ առավել նպատակահարմար է առանձին ծառայությունների առկայությունը, որոնք խնամք կտրամադրեն հենց անօթևան մարդկանց, դա կնպաստի անօթևանության մակարդակի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրմանը<sup>65</sup>: Օրինակ՝ Հունգարիայի օրենսդրությամբ (1993 թվականի Սոցիալական ակտ) սահմանված է անօթևանների խնամքի ծառայությունների շրջանակը, որոնք նախատեսված են միայն անօթևանների համար (անօթևանների հանրակացարան, ժամանակավոր ծառայություններ մատուցող հաստատություն, գիշերային ապաստարան, ժամանակավոր հանրակացարան անօթևանների համար, ցերեկային խնամք տրամադրող ծառայություն և ցերեկային կենտրոն)<sup>66</sup>:

Անօթևանների ժամանակավոր խնամք Հայաստանում ներկայում իրականացնում է միայն մեկ բարեգործական հիմնադրամ և այդ ծառայությունը միակն է մեր երկրում:

Պետությունն ունի որոշակի մասնակցություն հիմնադրամի գործունեության ու ծառայությունների մատուցմանը: Այն արտահայտվում է դրամաշնորհի ձևով հիմնադրամին տրամադրվող ֆինանսական աջակցությամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և հիմնադրամի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրավունքի ունի ցանկացած ժամանակ ստուգել հիմնադրամի՝ անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը:

Կացարանի շահառուների իրավունքների պաշտպանվածության իրավիճակին ծանոթանալու, նրանց խնամքի պայմաններն ուսումնասիրելու և հնարավոր խախտումների դեպքում դրանց վերացմանը նպաստելու նպատակով 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմն իրականացրել է այց: Այցի ընթացքում ուսումնասիրությունների, տնօրինության և շահառուների տեղեկությունների, ինչպես նաև Կացարանի գործունեություն կանոնակարգող փաստաթղթերի վերլուծությունը վկայել է, որ Կացարանում առկա մարդու իրավունքների մի շարք խախտումներ ոչ պատշաճ և թույլ վերահսկողության հետևանք են: Արձանագրվել է, որ մոնիթորինգը, որպես կանոն, կրում է փաստաթղթային բնույթ՝ հաշվետվությունների տեսքով, քիչ են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լիազոր ներկայացուցիչների վերահսկող այցերը, ավելին՝ դրանք հիմնականում նախապես հայտարարված են արվում: Շահառուների տեղեկություններով նախարարության լիազոր ներկայացուցիչները երբեք չեն այցելում իրենց և այցերի դեպքում հանդիպում են միայն տնօրինության հետ:

<sup>65</sup> Տե՛ս Եվրոպական հանձնաժողովի զբաղվածության, սոցիալական և հավասար հնարավորությունների հարցերով զբաղվող գրասենյակի՝ «Անօթևանության չափումը Եվրամիության մակարդակում» ուսումնասիրությունը; հասանելի է

[https://ec.europa.eu/employment\\_social/social\\_inclusion/docs/2007/study\\_homelessness\\_en.pdf](https://ec.europa.eu/employment_social/social_inclusion/docs/2007/study_homelessness_en.pdf) հղումով, էջ 72:

<sup>66</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 76:

2019 թվականին Պաշտպանի ներկայացուցիչների «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի անօթևանների ժամանակավոր կացարան (այսուհետ՝ Կացարան) իրականացրած այցի շրջանակներում ուսումնասիրվել են Կացարանի բնակելի տարածքը, սանիտարական և կոմունալ հարմարությունները, շահառուների խնամքի, բուժօգնության, սննդի տրամադրման, շահառուների իրավունքների և հիմնարար ազատությունների վիճակը և համապատասխան փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ թեև ՀՀ օրենսդրությամբ անօթևանների կացարանում առավելագույն բնակեցման ժամկետ սահմանվել է 90 օրը, ինչը սահմանված է նաև օրենսդրությամբ, այնուամենայնիվ, Կացարան կատարված այցի ընթացքում պարզվել է, որ շահառուներից շատերը Կացարանում բնակվում են 90 օրից ավելի, իսկ ոմանք այնտեղ բնակվում են տարիներ շարունակ՝ օրենսդրական պահանջն ապահովելու նպատակով իրականացնելով ֆորմալ փաստաթղթաշրջանառություն:

Թեև ձևավորված պրակտիկան ունի մարդասիրական հիմնավորումներ՝ հաշվի առնելով, որ Կացարանն իր բնույթով միակն է Հայաստանի Հանրապետության տարածքում, այնուամենայնիվ, այցի ընթացքում իրականացված դիտարկումներն առաջացնում են խորին մտահոգություններ: Մասնավորապես, շահառուների հետ առանձնագրույցներից պարզ է դառնում, որ լինում են դեպքեր, երբ Կացարանի աշխատողների կողմից սահմանված առավելագույն 90 օրյա ժամկետը շահառուների հետ հաղորդակցության ընթացքում օգտագործվում է որպես առանց կացարանի թողնելու սպառնալիք:

Այցի ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ: Այսպես՝

1. շենքային և ենթակառուցվածքների պայմաններն անբավարար են (Կացարանն ունի վերանորոգման կարիք, շենքը հարմարեցված չէ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին, շահառուներն ապահովված չեն հանգստի սենյակներով),

2. Կացարանում օդային և ջերմային ռեժիմը պատշաճ պահպանված չէ,

3. առկա են լոգարանների և սանհանգույցների սանիտարահիգիենիկ ոչ պատշաճ և ենթակառուցվածքների անբավարար պայմաններ (լոգասենյակի խցիկները չունեն դռներ, սանհանգույցների դռներից բացակայել են դռների փականները, եղել են զուգարաններ, որոնք դուռ չեն ունեցել, իրարից առանձնացված են եղել միայն միջնորմերով, երկու զուգարաններից բացակայել են զուգարանակոնքերը՝ հատուկ կարիքներ ունեցող շահառուների՝ սանհանգույցից օգտվելու հնարավորությունն ապահովելու համար և երեքական լվացարան՝ որոնցից մի քանիսից բացակայել են ծորակները լոգասենյակում և սանհանգույցներում բացակայել են հիգիենայի պարագաներ, լոգարաններն ու սանհանգույցները հարմարեցված չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար),

4. շահառուները չունեն բավարար անձնական տարածք (սենյակները գերբնակեցված են, շահառուներն ապահովված չեն զգեստապահարաններով և կողապահարաններով),

5. շահառուների պատշաճ անձնական խնամք չի ապահովվում (շահառուները չունեն անհատական խնամքի և հիգիենայի պարագաներ, լոգանքի ոչ պատշաճ կազմակերպում),

6. առկա են ճաշարանի, խոհանոցի սանիտարահիգիենիկ և ենթակառուցվածքների անբավարար պայմաններ (ունեն վերանորոգման կարիք, բացակայում է օդափոխության համակարգը),

7. չի ապահովվում սննդի պատշաճ կազմակերպումը (չի իրականացվում ճաշատեսակների պատշաճ նմուշառում, սնունդը միատեսակ է, ճաշարանն ապահովված չէ պատշաճ գույքով և սպասքով, ապահովված չեն սանիտարահիգիենիկ նորմերը, առկա չեն ախտահանման և մաքրման աշխատանքների իրականացումը հավաստող փաստաթղթեր, հայտնաբերվել է ժամկետանց սննդամթերք, չեն վարվում խոհանոցին և սննդամթերքի պահեստի աշխատողներին վերաբերվող սանիտարական գրքույկներ, խոհանոցում և

**սննդամթերքի պահեստում առկա սննդի և այլ ապրանքատեսակների հաշվառման մատյաններ),**

8. չի իրականացվում պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում (բացակայում է բժշկական միջամտությունների սենյակը, չի ապահովվում դեղերի և դեղանյութերի պահպանման պատշաճ պայմաններ, ինչպես նաև դրանց անվտանգ պահպանությունը, չեն վարվում համապատասխան գրանցամատյաններ, չի ապահովվում բժշկական թափոնների պատշաճ հավաքում և պահպանում),

9. չի տրամադրվում հոգեբանական պատշաճ օգնություն

10. չի ապահովվում մասնավոր և ընտանեկան կյանքի, ինչպես նաև հաղորդակցության ազատության իրավունքի իրացումը (հեռախոսակապից օգտվելու իրավունքի սահմանափակում, բողոքարկման կառուցակարգերի բացակայություն, զբաղվածության ապահովման խնդիր):

11. առկա է շահառուների նկատմամբ վատ վերաբերմունք, եկամուտների անպաշտպանվածություն,

12. սահմանված չեն վարքագծի կանոններ:

Հարկ է նշել, որ արձանագրված խնդիրները՝ համապատասխան վերլուծություններով և առաջարկներով տեղեկանքի ձևով ուղարկվել են լիազոր մարմիններ: Մարդու իրավունքների պաշտպանը, կարևորելով արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ոլորտի նախաձեռնած քայլերը, ձեռնարկելու է հետևողական քայլեր արձանագրված խնդիրների լուծմանը նպաստելու ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *ապահովել միասնական վիճակագրության վարումը՝ անօթևանների վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով,*

2. *վերանայել ժամանակավոր կացարանի տրամադրման 90 օրյա ժամկետը՝ բացառելով անձի իրավունքների սահմանափակման և չարաշահումների հավանականությունը կանոնակարգի կիրառման ընթացքում,*

3. *վերանայել Կացարանի գործունեության, շահառուներին մատուցվող ծառայությունների մոնիթորինգի, վերահսկողության մեխանիզմներն ու ընթացակարգերը՝ ապահովելու ծառայությունների որակի պատշաճ մատուցման ստուգումը,*

4. *ձեռնարկել հետևողական քայլեր Կացարանում արձանագրված խնդիրները լուծելու ուղղությամբ:*

## ԳԼՈՒԽ 2.ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեփականության իրավունքի երաշխավորումն ու ապահովումը պետության առաջնահերթ պարտականությունն է: Սեփականության իրավունքի պաշտպանության հիմքերը դրված են Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են սեփականության իրավունքի խախտումների մասին բողոքներ: Հարկ է նկատել, որ սեփականության իրավունքի խախտման կարևոր ցուցանիշ կազմող խախտումները բաժին են ընկնում տարիներ շարունակ մեր երկրում լուծում չստացած խնդիրներին: Այդպիսիք են պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների, սահմանամերձ բնակավայրերի վթարային բնակելի տների բնակիչների, «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների սեփականության իրավունքի սահմանափակումները:

### ***1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի սահմանափակելը***

ՀՀ Սահմանադրությունը, որպես սեփականության օտարման նախապայման, նախատեսել է բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայությունը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնավորվի հետապնդվող հանրային շահի բացառիկ լինելը, ինչն այն գերակա է դարձնում սեփականատիրոջ շահի նկատմամբ:

Երևանի կառուցապատման ծրագրերով առաջ է եկել քաղաքացիների սեփական բնակարանները, շինությունները և հողատարածքները հասարակական կարիքների համար վերցնելու անհրաժեշտություն: Այդ անհրաժեշտությունը օտարման գործընթացի սկզբնական փուլում սահմանվել է ոչ թե օրենքով, ինչպես նշված է Սահմանադրական դատարանի 1998 թվականի ՄԴՈ-92 որոշմամբ, այլ ՀՀ կառավարության մի շարք որոշումներով: Առանձին օրենքի բացակայության հետևանքով է, որ այդ գործընթացում զանգվածաբար խախտվել են սեփականատերերի և օգտագործողների իրավունքները, և գործընթացի տնտեսական արդյունքը գնահատվել է բացասական:

Հայտնի է, որ Երևանի կառուցապատման ծրագրերով 2000-ական թվականից սկսած քաղաքացիների սեփական բնակարանները, շինությունները և հողատարածքները հասարակական կարիքների համար Կառավարության որոշումներով ճանաչվել են բացառիկ՝ գերակա հանրային շահ և օտարվել են «Պետական կարիքների համար» հիմնավորմամբ: «Հյուսիսային պողոտա և Կասկադ», «Գլխավոր պողոտա» ծրագրերն իրականացվել են հենց այդ ճանապարհով, այդ ծրագրերի իրականացման անվան տակ տեղի է ունեցել սեփականության վերաբաշխում, անթույլատրելիորեն անարդարացի վերաբաշխում, որի ընթացքում, ի հաշիվ հարյուրավոր ընտանիքների ունեզրկման, անօրինական շահույթ են ստացել առանձին «գործարարներ», և Երևան քաղաքի կենտրոնական հատվածները կենտրոնացվել են առանձին անհատների ձեռքերում: Երևան քաղաքի բարեկարգման ու կառուցապատման լայնածավալ ծրագրի իրականացման հետ կապված՝ քաղաքացիներից վերցվել են նրանց սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքներն ու բնակարանները, և հարյուրավոր ընտանիքներ դարձել են անօթևան:

Կառավարության այդ որոշումներով չի բացահայտվել «պետական կարիք» հասկացության բովանդակությունը, չի ընդունվել առանձին օրենք, որով սահմանված լինել գույքի օտարման բացառիկ կարևորությունն ու նշանակությունը, օտարման գոտին և գերակա շահը, հասարակության և պետության այն կարիքները, որոնց բավարարմանը

պետք է ուղղված լիներ օտարվող անշարժ գույքը: Կառավարությունն ինքն է սահմանել նման գոտիներ և որոշում է ընդունել ի կատարումն իր իսկ ընդունած որոշման՝ իրացնողին իրավունք վերապահելով սահմանելու և սեփականատիրոջն առաջարկելու հատուցման չափը և ապա հենց իր առաջարկը, և ոչ թե բանակցություններով ձևավորված գինը:

Կառավարությունը, հանդիսանալով տվյալ գործարքում կողմ և հարաբերությունը կարգավորող իրավական ակտ ընդունող, մյուս կողմի՝ սեփականատիրոջ նկատմամբ ձեռք է բերել գերադասելի կարգավիճակ և դատական վեճի դեպքում, երբ սեփականատերը վիճարկել է իր գույքի օտարման կարգն ու պայմանները, վեճը լուծելիս դատարանը հենվել է վեճի կողմ հանդիսացող կառավարության ընդունած իրավական ակտի վրա, այսինքն՝ նման վեճի լուծումը՝ հօգուտ վեճի կողմ հանդիսացող կառավարության, կանխորոշված է եղել:

Օտարվող սեփականության սեփականատերը և օտարման արդյունքում ազդեցության ենթակա այլ քաղաքացիները, որպես կանոն, նախօրոք տեղեկացված չեն եղել և մասնակից չեն դարձվել համապատասխան որոշումների ընդունմանը, ինչը հետագայում հանգեցրել է նրանց գույքային իրավունքների խախտման: Խնդրահարույց է այն, որ մի քանի տասնյակ ընտանիքներ, մեծ մասը բազմանդամ, որոնք սեփականատերեր են համարվել դեռևս 30-40-ական թվականներից, դիտվել են միայն որպես տվյալ բնակարանների օգտագործողներ և վտարվել աննշան փոխհատուցմամբ: Դատարաններն անտեսել են իրացնողի ներկայացրած պայմանագրերի միակողմանի կազմված լինելը, բացառապես բավարարել են պայմանագիր կնքելուն հարկադրելու և զբաղեցրած տարածքից վտարելու վերաբերյալ իրացնողի ներկայացրած հայցերը:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը 2006 թվականի թիվ ՄԴՈ-630 որոշմամբ արձանագրել է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման օրենսդրորեն կարգավորումը պետք է պարտադիր կարգով հիմքում ունենա այն ելակետային դրույթը, որ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել կամ դադարել միայն Սահմանադրության 31-րդ հոդվածով (նախկին խմբագրությամբ) նախատեսված դեպքերում՝ երաշխավորելով սահմանադրական համապատասխան պահանջների կատարումը:

Այս որոշմանը հաջորդեց «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի ընդունումը:

Բարձրացված խնդրին բազմիցս անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը 2009 թվականին կայացրած վճռով Մինասյանն ու Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով և գտել է, որ խախտվել է սեփականատիրոջ իրավունքը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի հիմքով: Այս վճիռը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կայացրած առաջին վճիռն է Երևան քաղաքում պետության և հասարակության կարիքների համար իրացման գոտում գտնվող սեփականության օտարման արդյունքում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ<sup>67</sup>:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի այս վճռի լույսի ներքո առավել կարևորվում է նախնական համարժեք փոխհատուցման նշանակությունը բացառիկ հանրային գերակա շահ ճանաչված տարածքների օտարման դեպքում:

Երևան քաղաքում պետության և հասարակության կարիքների համար իրացման գոտում գտնվող սեփականության օտարման արդյունքում Եվրոպական կոնվենցիայի 1-ին

<sup>67</sup> Տե՛ս Մինասյանն ու Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի (Minasyan and Semirjan v. Armenia) գործով 2009 թվականի հունիսի 23-ի վճիռը, գանգատ թիվ 27651/05:

արձանագրության 1-ին հոդվածի խախտում է արձանագրվել նաև Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2019 թվականի մայիսի վճռով, որում դատարանը նշել է, որ Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հետ համատեղելի լինելու համար գույքից զրկելը պետք է բավարարի հետևյալ երեք պայմանը՝

1) այն պետք է իրականացվի ազգային իշխանությունների կողմից ցանկացած կամայական գործողություն բացառող՝ «օրենքով նախատեսված պայմաններին համապատասխան»,

2) պետք է բխի «հանրային շահերից»,

3) դրանով պետք է հաստատվի արդարացի հավասարակշռություն սեփականատիրոջ իրավունքների և համայնքային շահերի միջև<sup>68</sup>:

Կարևորում ենք նաև եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության դեմ քննված գործերով ստորև ներկայացված դատական ակտերը:

Այսպես, Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի գործով եվրոպական դատարանը 2018 թվականի հոկտեմբերի 11-ի վճռով արձանագրել է, որ կիրառելով անշարժ գույքի գնահատման համեմատական մեթոդը, փորձագետները որոշել են դրա շուկայական արժեքը՝ ելնելով նույն շրջանում այլ հողատարածքների վաճառքի գներից: Դատարանը նշել է, որ այդ պայմաններում չպետք էր բացառել, որ դիմումատուներն ամենայն հավանականությամբ կկանգնեին այլ շրջանում համարժեք հողատարածք ձեռք բերելու լուրջ դժվարությունների առջև և գուցե իրենց տրված փոխհատուցման գումարի սահմաններում ընդհանրապես չկարողանային հողակտոր ձեռք բերել այլ տարածքում:

Դատարանը նաև արձանագրել է, որ նույնիսկ օրենքով նախատեսված շուկայական արժեքի գումարին հավելվող գումարի տրամադրման պարագայում այդպիսի փոխհատուցումը կարող է դիտվել ոչ համարժեք, եթե օտարվող գույքը հանդիսացել է անձի եկամուտների հիմնական, եթե ոչ միակ աղբյուրը: Ուստի, դատարանը եկել է եզրահանգման, որ անձանց տրվել է ոչ համարժեք փոխհատուցում<sup>69</sup>:

Ալիխանյանն ու Մելիքսեթյանն ընդդեմ Հայաստանի գործով 2019 թվականի մարտի 14-ի վճռով եվրոպական դատարանը նշել է, որ ներպետական դատարանները չեն դիտարկել այն հարցը, թե, արդյոք, տրամադրվող փոխհատուցումը կծածկի դիմումատուների՝ ապրուստը հոգալու միջոցներից զրկվելու հետ կապված փաստացի կորուստը կամ, արդյոք, այն բավարար կլինի, որ նրանք համարժեք հող ձեռք բերեն այն տարածքում, որտեղ նրանք ապրում են: Սույն գործով դատարանը նաև նշել է, որ փաստացիորեն դիմումատուները զրկված էին եղել այլընտրանքային գնահատման եզրակացություն ներկայացնելու՝ օրենքով նախատեսված հնարավորությունից (այլ լիցենզավորված գնահատողներ հրաժարվել են իրականացնել այլ գնահատում), իսկ ներպետական դատարանը չի իրականացրել փորձաքննություն նշանակելու իր իրավունքը՝ դիմումատուների գույքի իրական շուկայական արժեքը պարզելու համար<sup>70</sup>:

Չնայած Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի դեմ կայացված մի շարք որոշումներին, որոնցում արձանագրվել է Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում և միաժամանակ Հայաստանի Հանրապետության վրա դրվել է

<sup>68</sup> Տե՛ս Թադևոսյանն ընդդեմ Հայաստանի (Tadevosyan v. Armenia) գործով 2019 թվականի մայիսի 16-ի վճիռը, զանգատ թիվ 69936/10, կետ 44:

<sup>69</sup> Տե՛ս Օսմանյանը և Ամիրադյանն ընդդեմ Հայաստանի (Osmanyanyan and Amirghanyan v. Armenia) գործով 2018 թվականի հոկտեմբերի 11-ի վճիռը, զանգատ թիվ 71306/11, կետ 69:

<sup>70</sup> Տե՛ս Ալիխանյանն ու Մելիքսեթյանն ընդդեմ Հայաստանի (Alikhanyan and Meliksetyan v. Armenia) գործով 2019 թվականի մարտի 14-ի վճիռը, զանգատ թիվ 4168/10, կետ 58:

դիմումատուներին որոշակի գումարներ վճարելու պարտավորություն՝ համակարգային առումով առ այսօր շարունակում է չլուծված մնալ պետության կողմից բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու և ըստ այդմ՝ քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար ձեռքբերող կազմակերպություններին օտարելու, սակայն այդ կազմակերպությունների կողմից տարածքների նախկին բնակիչներին համարժեք փոխհատուցում չտրամադրելու հարցը:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքը նույնպես խնդրի վերջնական լուծմանը չի հանգեցրել: Օրենքում առկա մի շարք խնդիրներ բարձրաձայնվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներում: Որպես առանցքային համակարգային խնդիր նշվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մի շարք բնակելի տարածքներ պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և ըստ այդմ՝ 2007 թվականից սկսած նշված տարածքները ձեռքբերող տարբեր կազմակերպություններին օտարելուց հետո այդ տարածքների նախկին բնակիչներին կազմակերպությունների կողմից համարժեք փոխհատուցում չտրամադրելու հարցը:

Միաժամանակ, խնդրահարույց են դիտարկվել օրենքում տեղ գտած ձևակերպումները՝ կապված օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցում տրամադրելու պահանջի հետ: Օրենքում տեղ գտած կարգավորումների ուժով՝ սեփականությունը կարող է օտարվել ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն, և այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը: Ընկերությունները, առաջնորդվելով վերը նշված կարգավորմամբ, համապատասխան տարածքներում նախկինում բնակվող անձանց հետ կնքել են իրացված տարածքների փոխարեն կառուցվելիք բազմաբնակարան շենքերում բնակարաններ տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր: Տարիներ շարունակ (շուրջ 10 և ավել տարի) չեն տրամադրվել ո՛չ բնակարանները և ո՛չ էլ համարժեք փոխհատուցումը:

Այսպիսով, օրենքի ոչ բոլոր հոդվածներում է ամրագրվել «նախնական համարժեք փոխհատուցում» եզրույթը, փոխարենը որոշ տեղերում օգտագործվում է միայն «համարժեք փոխհատուցում» տերմինը, իսկ փոխհատուցման տրման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմանները ու կողմերի պատասխանատվությունը որոշելը թողնված է կողմերի հայեցողությանը:

Մարդու իրավունքների Պաշտպանին հասցեագրած բողոքների շրջանակներում ուսումնասիրվել են ընկերությունների և օտարված տարածքների նախկին բնակիչների միջև կնքված պայմանագրերը: Պարզվել է, որ վերոնշյալ իրավանորմի հիման վրա կողմերի համաձայնությամբ որոշվել է բողոք ներկայացրած անձանց սեփականության իրավունքով պատկանող օտարվող գույքի դիմաց տրամադրել հետագայում կառուցվելիք բազմաբնակարան շենքերում բնակարաններ: Այսինքն՝ պայմանագրով, ըստ էության, տարածամկետվել է փոխհատուցման տրամադրումը հստակ կանխորոշված ժամկետով: Նշված ժամկետը սպառվել է, իսկ համարժեք փոխհատուցումը տարիներ շարունակ չի տրվել, մի շարք դեպքում էլ տարիներ անց տրվել է, սակայն ոչ համարժեք:

Ուսումնասիրելով բողոքներում շարադրված հանգամանքները վերոնշյալ իրավական նորմերի լույսի ներքո՝ գալիս ենք եզրահանգման, որ օտարված տարածքների նախկին բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող Կենտրոն վարչական շրջանի Արամի, Բուզանդի, Ֆիրդուսի, Հանրապետության, Եկմալյան, Խանջյան փողոցներում և Կոնդ թաղամասում գտնվող բնակելի տարածքներն օտարվել են 30 (երեսուն) ամսյա



Ժամկետում նորակառույց բազմաբնակարան շենքերում բնակարաններ ձեռք բերելու, այսինքն համարժեք փոխհատուցում ստանալու օրինական ակնկալիքով: Երկար տարիներ հաշվի չի առնվել, որ նյութական միջոցը ձեռք բերելու օրինական ակնկալիքը, ըստ ՄԻԵԴ դիրքորոշումների, ևս գույք է համարվում:

Վերոգրյալից հետևում է, որ քաղաքաշինական նպատակներով որպես բացառիկ՝ գերակա հանրային շահ հասարակության և պետության կարիքների համար վերոնշյալ տարածքների օտարումը չի բխել հանրության շահերից: Նախ՝ նշված տարածքներից շատերում որպես փոխհատուցում կառուցվող շինությունները (բազմաբնակարան շենքեր) չեն ծառայել իրենց նպատակին. որոշները մինչ օրս էլ կիսակառույց են, նաև չեն բխել հանրության շահերից, քանի որ օտարված տարածքների նախկին իրավատերերը ստիպված են եղել տարիներ շարունակ բնակվել վարձակալական հիմունքներով:

Հաշվի առնելով օրենքի ուժով պայմանագրերի կնքման ձևավորված բացասական պրակտիկան՝ անհրաժեշտ է խնդիրը կարգավորել ոչ թե ՀՀ կառավարության գերակա շահ ճանաչելու մասին յուրաքանչյուր որոշման մեջ օտարվող տարածքի դիմաց ապագայում կառուցվելիք շենքից բնակարանի տրամադրումը որպես փոխհատուցման ձև բացառող դրույթ սահմանելով, որը ևս ողջունելի է, այլ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում (ներկա խմբագրմամբ անվանափոխվել է): Որպես փոխհատուցման տրամադրման ձև պետք է սահմանել միայն նախնական համարժեք եղանակով տրամադրումը և տարածել նախկինում ծագած և մինչ օրս չկատարված իրավահարաբերությունների վրա:

2019 թվականի ընթացքում լուծում չի ստացել պետության սուբսիդիար պատասխանատվության հարցը: «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում պետության սուբսիդիար պատասխանատվության շրջանակը շատ նեղ է և բացակայում են օտարման գործընթացի նկատմամբ պետական լիարժեք վերահսկողության մեխանիզմները:

Այսպես, օրենքով պետության սուբսիդիար պատասխանատվությունը ծագում է ձեռքբերողի կողմից միայն հատուկ նշված որոշակի գործողությունների չկատարման դեպքում: Մինչդեռ, Պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պետության սուբսիդիար պատասխանատվություն չի սահմանվել այն դեպքերի համար, երբ ձեռքբերող կազմակերպությունների և օտարված բնակելի տարածքների իրավատերերի միջև կնքվել են պայմանագրեր: Այդ պայմանագրերի ուժով ձեռքբերող կազմակերպությունները պարտավորվել են հստակ կանխորոշված ժամկետներում կառուցել բազմաբնակարան շենքեր և տրամադրել բնակարաններ, սակայն ինչ-ինչ պատճառներով կառուցապատման ծրագիրը ձախողվել է և շենքերի կառուցման աշխատանքները տարիներ շարունակ մնացել են անավարտ և որպես արդյունք փոխհատուցումները չեն տրամադրվել կամ ձեռքբերող կազմակերպությունների կողմից օտարված գույքի դիմաց իրավատերերին վճարվել է փոխհատուցում, որը համարժեք չի եղել այդ պահին գործող շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավել գումարին:

Մասնավորապես, օրենքի դրույթը պետության սուբսիդիար պատասխանատվության ոլորտը նեղացնում է՝ այն կապելով ձեռքբերողի կողմից որոշակի պարտականությունների չկատարման հետ, որը տվյալ դեպքում չի հանդիսանում պետության կողմից անձանց սեփականության իրավունքի պաշտպանության բավարար երաշխիք: Հաշվի առնելով վերոգրյալը՝ շատ կարևոր է ընդլայնել պետության սուբսիդիար պարտավորության շրջանակը և այն տարածել ձեռքբերող կազմակերպությունների և շահառուների միջև ոչ միայն ապագա, այլ նաև նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ՝ այդ մասով ևս կատարելով օրենսդրական համապատասխան փոփոխություն, քանզի ըստ

ձևավորված բացասական պրակտիկայի՝ ձեռքբերող կազմակերպությունները երկար տարիներ չեն կատարել գույքի օտարման պայմանագրերով ստանձնած պարտավորությունները կամ կատարել են երկար տարիներ անց և ոչ համարժեք:

Հարկ է ընդգծել, որ ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի հոկտեմբերին նախաձեռնել է «Պետության կողմից «Հյուսիսային պողոտա-Կասկադ» ծրագրով բացառիկ՝ գերակա շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի ոտնահարման խնդիրները» խորագրով խորհրդարանական լսումներ: Որպես հիմնական զեկուցող հանդես է եկել Մարդու իրավունքների պաշտպանը. ներկայացնելով հանրային գերակա շահի ճանաչման գործընթացում սեփականության իրավունքի պաշտպանության նախկինում առկա և ներկայումս արդիական հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ համապատասխան առաջարկներ և դիտարկումներ:

Ընթացիկ տարում համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմի պարզաբանումների համաձայն՝ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ի N 332-Ն որոշմամբ Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ: Տարածքի ձեռքբերողներ են հանդիսացել «Միթի Սենթր Դիվելոպմենթ» ՓԲ ընկերությունը և 16 կազմակերպություն: Սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի հունվարի 1-ը: Սահմանվել է նաև, որ որոշմամբ նախատեսված բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում օտարվող սեփականության սեփականատերերի կամ այլ իրավունքներ ունեցողների և նույն որոշման հավելվածներում նշված տարածքները ձեռք բերողի միջև կնքվող պայմանագրերում անհրաժեշտ է բացառել, որպես օտարվող տարածքի փոխհատուցման ձև, ապագայում կառուցվելիք շենքից գույքային միավորի տրամադրումը: «Միթի Սենթր Դիվելոպմենթ» ՓԲԸ կողմից ՀՀ կառավարության որոշումների գործողությունների ընթացքում անշարժ գույքի սեփականատերերի հետ կնքված պայմանագրերով առկա պարտավորությունները կատարվել են, բացառությամբ թվով 9 գույքի օտարման մասով, որոնց հետ բանակցությունները տարվում են: ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1528-Ն որոշմամբ Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզ. Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ, տարածքի ձեռքբերող է ճանաչվել «Ի ԷՍ ՄԻ» ՓԲ ընկերությունը, իսկ սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետ է սահմանվել 28.12.2020 թվականը: Որոշմամբ ընդունվել է ի գիտություն, որ նախատեսված հանրության գերակա շահ ճանաչված տարածքներում օտարվող սեփականության սեփականատերերի կամ այլ իրավունքներ ունեցողների և նույն որոշման հավելվածներում նշված տարածքները ձեռք բերողի միջև կնքվող պայմանագրերում անհրաժեշտ է բացառել, որպես օտարվող տարածքի փոխհատուցման ձև, ապագայում կառուցվելիք շենքից գույքային միավորի տրամադրումը: ՀՀ կառավարության որոշումների գործողությունների ընթացքում անշարժ գույքի սեփականատերերի հետ կնքված պայմանագրերով առկա պարտավորությունները կատարվել են: ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի N 347-Ն և 2009 թվականի փետրվարի 19-ի N 168-Ն որոշումներով Երևանի Կոնդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքի ձեռքբերող է ճանաչվել «Դաունթաուն Երևան» ՓԲ ընկերությունը: ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 1237-Ն որոշմամբ տարածքում ընդգրկված, սակայն չիրացված անշարժ գույքի նկատմամբ նախկինում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետ կապված սահմանափակումները վերացել են, չիրացված տարածքների մասով «Դաունթաուն Երևան» ՓԲ ընկերության հետ պայմանագիրը լուծվել է: Քանդված գույքերի մասով պարտավորությունների հատուցումը ստանձնել է «Ի ԷՍ ՄԻ» ՓԲ ընկերությունը, որը

քաղաքացիների հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսել է կառուցել 2 շենք՝ Պարոնյան 42 և 42/1 հասցեներում, որոնց շինարարության ավարտը նշվում է 2021 թվականի հունվարի 19-ը: Ներկայում բնակիչների հետ կնքվում են պայմանագրեր և տրամադրվում են գնման իրավունքի վկայականներ: Նախկին սեփականատերերից որոշ մասի հետ արդեն իսկ կնքվել են հրաժարագին պայմանագրեր՝ դրամական փոխհատուցում ստանալու վերաբերյալ: Փոխհատուցման եղանակն ընտրած անձանց հետ շարունակվում են կնքվել կառուցվող շենքից անշարժ գույքերի գնման իրավունքի պայմանագրեր, արդեն իսկ կնքվել է 69 պայմանագիր: ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 9-ի N 1833-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006-2018 թվականներին ընդունված որոշումների հետագա ընթացքը քննարկելու և անհրաժեշտ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշմամբ նախատեսված է համապատասխան վերլուծության արդյունքում մինչև 2022 թվականի առաջին կիսամյակն Ազգային ժողով ներկայացնել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որի արդյունքում կնվազեն հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման արդյունքում մարդու սեփականության իրավունքի խախտման դեպքերը, սեփականության իրավունքի խախտման դիմաց մարդկանց կտրամադրվի արդարացի փոխհատուցում:

Իհարկե, ողջունելի է Կառավարության նշված համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ներկայիս ձեռնարկվող քայլերը, սակայն հիմնախնդրի ամբողջական կարգավորման համար անհրաժեշտ է վերհանել իրավախախտման բոլոր դեպքերը, գործուն քայլեր ձեռնարկել դրանց կարգավորման ուղղությամբ՝ վերացնելով դրանց ծագման հիմք հանդիսացող գործոնները:

Օրինակ, ըստ բողոքների՝ մինչ օրս լուծում չի ստացել Եկմայան 6-14 հասցեներում Ա/2 Գագիկ Պապոյանի (իրավահաջորդ «Նարեկգրադ» ՍՊ ընկերություն) կողմից իրականացրած անշարժ գույքի իրացման աշխատանքների արդյունքում տուժած անձանց խնդիրը: Այսպես, Կառավարության որոշումներով Եկմայան 6-14 հասցեներում գտնվող բնակելի տարածքները քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով ճանաչվել են բացառիկ՝ գերակա հանրային շահ և օտարվել են Գագիկ Պապոյան Ա/2-ին, այնուհետև իրավահաջորդ «Նարեկգրադ» ՍՊ ընկերությանը: 2008 թվականին կնքվել են իրացված տարածքների փոխարեն Երևանի Եկմայան փողոցում կառուցվելիք բազմաբնակարան շենքում բնակարաններ տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր: Պայմանագրերի ուժով՝ ընկերությունը պարտավորվել էր 30-ամսյա ժամկետում ավարտել շենքի կառուցումը, սակայն կառուցապատող կազմակերպության կողմից քաղաքաշինական ծրագրի իրականացումը ձախողվել է: Երևանի քաղաքապետն անցկացրել է հասարակության և պետության կարիքների համար օտարվող հողամասը ձեռք բերողի հրապարակային սակարկություններ՝ պայմանով, որ տարածքի ձեռք բերողը պետք է ստանձնի հողամասի նախկին ձեռք բերողների բոլոր պարտավորությունները: Հայտարարվել են մի շարք մրցույթներ, սակայն մրցույթները չեն կայացել մասնակիցների հայտ չլինելու պատճառով: Արդյունքում, մինչ օրս ոչ շենքն է կառուցվել, ոչ էլ տրվել է համարժեք գումարային հատուցում օտարված բնակելի տարածքների դիմաց:

Մեկ այլ դեպքում՝ Երևանի Փոքր Կենտրոնում իրացված անշարժ գույքի դիմաց որպես հրաժարագին 2017 թվականին 1 քմ-ի համար վճարվել է 650 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ

դրամ գումարի հաշվարկով փոխհատուցում, մինչդեռ, այլ անձանց պատկանող նույն տարածքում իրացված գույքի դիմաց վճարվել է 1 քմ-ի համար 1000, 800 և 750 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի հաշվարկով փոխհատուցում: Երևանի Կոնդ թաղամասի նախկին բնակիչներից մեկը որպես հրաժարագին 1 քմ-ի համար ստացել է ընդամենը 450 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի հաշվարկով փոխհատուցում: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ նշված գումարով վերջիններս չեն կարողացել առաջնային (կառուցապատողից) կամ երկրորդային շուկայից ձեռք բերել կորցրած գույքին համարժեք բնակելի նշանակության անշարժ գույք: «**Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին**» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում (...) համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը:» Նշվածը վկայում է, որ ձեռքբերող կազմակերպությունները իրավատերերի օտարված բնակելի տարածքների դիմաց, խախտելով օրենքի պահանջը, նույն **տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության** գոտում գտնվող բնակելի տարածքի դիմաց վճարել են տարբեր չափերի և շուկայական գնին ոչ համարժեք փոխհատուցում: Հարկ է նշել, որ օրենսդրորեն սահմանված չեն պետության միջամտության համապատասխան մեխանիզմներ որպես հրաժարագին կնքված գործարքներն արտադատական կարգով վերանայելու և ըստ այդմ արդարացի փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. փոփոխել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ այս հոդվածում ևս ամրագրելով «նախնական համարժեք» փոխհատուցում եզրույթը,

2. Նշված հոդվածից հանել պայմանագրով (կողմերի համաձայնությամբ) համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն և պատասխանատվությունը որոշելու հնարավորությունը,

3. «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները,

– կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանել պետության սուբսիդիար պատասխանատվություն՝ այն տարածելով ոչ միայն ձեռքբերող կազմակերպությունների և շահառու անձանց միջև ապագայում, այլ նաև նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ,

– սահմանել պետական վերահսկողության մեխանիզմներ սեփականության օտարման գործընթացում ձեռքբերողի կողմից շահառուի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ՝ նախատեսելով համապատասխան պատասխանատվության միջոցներ,

– «փոխհատուցում» բառը ցանկացած հոդվածում օգտագործել «նախնական համարժեք» բառերի հետ միասին, այն տարածելով նախկինում ծագած, սակայն մինչ օրս չկատարված իրավահարաբերությունների նկատմամբ:

4. Սահմանել որպես հրաժարագին հրաժարված, սակայն համարժեք փոխհատուցում չստացած անձանց հետ կնքված գործարքներն արտադատական կարգով վերանայելու օրենսդրական մեխանիզմներ:

**2. Մեփականության իրավունքի սահմանափակումը գործարքի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում չկատարելու հետևանքով**

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են բողոքներ, որոնք վերաբերել են նոտարական վավերացում ստացած գործարքի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար դիմումները 30-օրյա ժամկետի խախտմամբ հարգելի պատճառով ներկայացնելու, սակայն իրավունքների պետական գրանցում չկատարելու համակարգային խնդիրն: Խնդիրն այն է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 6-րդ մասն՝ **այն մասով, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքներն այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում պետական գրանցման ներկայացնելու պահանջը չպահպանելը՝ առանց ժամկետը բացթողնելու պատճառները հաշվի առնելու, հանգեցնում է գործարքի անվավերությանը: Խնդրահարույց է նաև Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ այն մասով, որ խոչընդոտում է հարգելի պատճառով 30-օրյա ժամկետի խախտմամբ ներկայացված դիմումների հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:**

Օրինակ՝ բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ աճուրդային կարգով և համապատասխանաբար կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով ձեռք է բերել հողատարածք: Այնուհետև, մի քանի օր անց ինքնազգացողությունը կտրուկ վատացել է, ստացել է կաթված և անգիտակից վիճակում տեղափոխվել «Էրեբունի» բժշկական կենտրոն: Որոշ ժամանակ անց «Էրեբունի» բժշկական կենտրոնից դուրս է գրվել, սակայն շուրջ 6 ամիս եղել է անկողնային վիճակում և բժիշկների հսկողության ներքո: Ապաքինվելուց հետո դիմել է Կադաստրի կոմիտե հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու հարցով: Ստացել է պատասխան առ այն, որ անհրաժեշտ է ներկայացնել առուվաճառքի պայմանագիրը հարգելի պատճառով 30-օրյա ժամկետում չներկայացնելը հիմնավորող իրավահաստատող փաստաթուղթ: Դիմողը ներկայացրել է «Էրեբունի» բժշկական կենտրոնի էպիկրիզ, սակայն գրությամբ տեղեկացվել է, որ նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվել է Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքերով, քանի որ օրենքով սահմանված ժամկետում առուվաճառքի պայմանագիրը չներկայացնելու վերաբերյալ հարգելի պատճառով որպես իրավահաստատող փաստաթուղթ ներկայացված փաստաթուղթը՝ էպիկրիզը, բավարար չէ իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

Կադաստրի կոմիտեն Պաշտպանին պատասխանել է, որ 2019 թվականի դեկտեմբերի 11-ին տեղի է ունեցել Կադաստրի կոմիտեի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի հերթական նիստը և քննարկվել է բողոքում ներկայացված գույքի նկատմամբ հարգելի պատճառով 30 աշխատանքային օրվա խախտմամբ ներկայացված դիմումի հիման վրա իրավունքների պետական գրանցում իրականացնելու հարցը: Հիմք ընդունելով հանձնաժողովի և Կադաստրի կոմիտեի ղեկավարի դիրքորոշումները՝ քննարկման արդյունքում հաշվի է առնվել այն, որ դեռևս իրավական կարգավորումներ չեն տրվել նմանատիպ հարցերի լուծման համար, ուստի այն կարող է լուծվել դատական կարգով:

Մրա հետ կապված՝ անհրաժեշտ է նշել, որ Կադաստրի կոմիտեի այդ դիրքորոշումները հակասում են սահմանադրական իրավունքի հետ կապված Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը: Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ նման դիրքորոշումը չի բխում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության սկզբունքից: Իրավունքի

պաշտպանության միջոցներն անձի համար պետք է լինեն ոչ թե այլընտրանքային, այլ իրավական:

Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թվականի մարտի 9-ի ՍԴՈ-1448 որոշմամբ Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի **հետ կապված քննարկման առարկա է դարձել խնդրո առարկա հարցը:**

Սահմանադրական դատարանը մասնավորապես գտել է, որ օրենսդրի կողմից սահմանված կարգավորումն անհրաժեշտ չէ, քանի որ որպես ավելի մեղմ միջոց կարող էր նախատեսվել դրույթ՝ ժամկետը բաց թողնելը վերականգնելու վերաբերյալ, եթե բաց թողնելը տեղի էր ունեցել առանց անձի մեղքի: Գործարքի անվավերությանը հանգեցնելու կամ առոչինչ լինելու սահմանումը՝ որպես իրավական հետևանք, անհամաչափ սահմանափակում է սեփականության իրավունքի ձեռքբերման նկատմամբ օրինական ակնկալիքի իրավունքը: Կարող են լինել դեպքեր, երբ անձի կողմից ժամկետը չպահպանելն ամեննին նրա մեղավորությունից չբխի: Այս հանգամանքն օրենսդիրը պետք է հաշվի առնի համապատասխան հարցը կարգավորելիս: Հաշվի առնելով այն, որ օրենսդիրն Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասում ընտրել է միջոցներից այն մեկը, որն էապես ավելի խիստ է միջամտում անձի սեփականության իրավունքին, քան դա կարող էր լինել վերոնշյալ բացառությունը սահմանված լինելու դեպքում, այն պիտանի, սակայն Սահմանադրության 78-րդ հոդվածի իմաստով անհրաժեշտ միջոց չէ: Ուստի գործարքի անվավերության իրավական հետևանքներ կարող է առաջացնել միայն անձի մեղավորությամբ Օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելը:

Սահմանադրական դատարանի որոշման ընդունումից հետո շրջանառության մեջ է դրվել Օրենքի վերոնշյալ հոդվածներում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը: Այն դեռևս 2019 թվականի հուլիսի 15-30-ն ընկած ժամանակահատվածում անցել է հանրային քննարկում, սակայն Կառավարությունը նշված օրենքի նախագիծը չի ներկայացրել Ազգային ժողովի քննարկմանը:

Այսպիսով, Պաշտպանին հասցեագրած բողոքների քննարկման արդյունքներով կարելի է եզրակացնել, որ մարդիկ չեն կարողանում գրանցել պատշաճ ձևով ձեռք բերված, սակայն օրենքով սահմանված ժամկետում հարգելի պատճառով պետական գրանցման չներկայացրած անշարժ գույքը: Կարելի է արձանագրել, որ 2019 թվականի ընթացքում շարունակվել է հակասահմանադրական նշված պրակտիկան: Մինչդեռ, բարձրացված հարցն ունի հրատապ կարգավորման անհրաժեշտություն, քանի որ անխզելիորեն կապված է մարդկանց սեփականության իրավունքի իրացման հետ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հնարավոր սեղմ ժամկետում Ազգային ժողով ներկայացնել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածներում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքի նախագծ, որով կլուծվի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար դիմումը 30-օրյա ժամկետի խախտմամբ հարգելի պատճառով ներկայացնելու դեպքում արտադատական կարգով իրավունքների պետական գրանցման հարցը:*

### **3. Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելը**

Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրել են բողոքներ բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելու հետևանքով առաջացող տարատեսակ խնդիրների մասին:

Շենքում պարտադիր նորմերի պահպանման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է տվյալ համայնքի ղեկավարը՝ ըստ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի:

ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» թիվ 1161-Ն որոշման համաձայն՝ «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության՝ շենքը կրող կառուցվածքների, շենքի միջհարկային ծածկերի (առաստաղների, հատակների), նկուղների, ձեղնահարկի, տեխնիկական հարկերի, տանիքի, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերի, աստիճանավանդակների, աստիճանների, վերելակների, վերելակային և այլ հորերի, մեխանիկական, էլեկտրական և այլ սարքավորումների ու տարածքների պահպանմանը ներկայացվող քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային և կոմունալ սպասարկման պահանջների ապահովմանն ուղղված պարտադիր նորմերը ներառում են այնպիսի նվազագույն ծավալի պարտադիր իրականացման ենթակա կազմակերպական և տեխնիկական համալիր միջոցառումներ ու աշխատանքներ, որոնց ժամանակին չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին»:

Բողոքներից մեկով Երևան քաղաքի վարչական շրջաններից մեկի բազմաբնակարան շենքի բնակիչը Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ իրենց շենքի տանիքը գտնվում է անմխիթար վիճակում, ինչն անձրևաջրերի արտահոսքի պատճառ է դարձել: Դրա հետևանքով վնասվել են իր բնակարանի գույքը, ինչպես նաև շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող տարածքները: Ըստ բողոքի՝ անձն իր միջոցների հաշվին կատարել է տանիքի կապիտալ վերանորոգում, սակայն քամիների, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների կողմից տանիքում կաբելային հեռուստատեսային սարքավորումներ տեղադրելու արդյունքում տանիքի թիթեղները քանդվել են: Տանիքը վերանորոգելու համար բողոք ներկայացրած անձը բազմիցս դիմել է համատիրության նախագահին և Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, սակայն արդյունքի չի հասել: Նշվածի կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից պարզաբանել են, որ Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից 2019 թվականին կատարվել են տանիքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2020 թվականի ծրագրում ընդգրկելու համար: Նշված հիմնախնդիրն առավել ակնառու է ՀՀ մարզերում, որտեղից ևս Պաշտպանի աշխատակազմ ստացվել են բողոքներ:

Ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության մարզերում կարևոր հիմնախնդիրներից է նաև շենքերում տեղակայված վերելակների տեխնիկական վիճակը: Վերելակները և դրանց կազմում օգտագործվող՝ անվտանգության ապահովման սարքերը պետք է համապատասխանեն դրանց անվտանգ շահագործման տեխնիկական պահանջներին՝ բացառելով մարդկու կյանքին և առողջությանը վնաս պատճառելու բոլոր ռիսկերը: Մինչդեռ, Երևանում և հանրապետության այլ քաղաքներում *շահագործվող* բազմաթիվ *վերելակներ հնամաշ են* և վթարային:

Օրինակ՝ բողոքներից մեկով անձը նշել է, որ վերելակով շենքի 9-րդ հարկից 1-ին հարկ իջնելիս վերելակը 2-րդ հարկում չարգելակելով՝ վայր է ընկել, հարվածի արդյունքում անձը ստացել է որոշակի մարմնական վնասվածքներ: Ըստ բողոքի՝ վերելակն ընկել է զրոյական հարկում: Բողոքում նշված անձը փորձել է սեղմել ահազանգի կոճակը, որը չի աշխատել: Այնուհետև, ինչ-որ եղանակով բացելով դռները՝ դուրս է եկել վերելակից: Ըստ բողոքի՝ հետագայում պարզվել է, որ բացակայում են ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի թիվ 692-Ն որոշմամբ և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված վերելակի անվտանգության ապահովման

համակարգերը: Նշվածի կապակցությամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունից պարզաբանվել է, որ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի՝ «տեխնիկական անվտանգության փորձաքննությունն իրականացվում է 3 փուլով՝

1) նախագծային փաստաթղթերի փորձաքննության փուլ, որն իրականացվում է նախագծման փուլի ավարտին, մինչև նախագծային փաստաթղթերի հաստատման պահը,

2) գործարկման փուլ, որն իրականացվում է նախքան գործարկման աշխատանքները սկսելը,

3) շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննության փուլ, որն իրականացվում է նույն օրենքով սահմանված կարգով արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառման գրանցամատյանում (ռեեստր) գրանցվելուց հետո»:

Ըստ պարզաբանման բողոքում նշված հասցեի շենքի վերելակի նկատմամբ վերը նշված փորձաքննություններից իրականացվել են երկու փուլը՝ նախագծային փաստաթղթերի փորձաքննություն և 04.04.2012 թվականին ստացել դրական եզրակացություն, իսկ 15.01.2018 թվականին՝ վկայագրի և գործարկման նախագծային փաստաթղթերի եզրակացություն: Վերելակը փաստացի շահագործող լիազորագրային կառավարիչը 2018 թվականի մարտի 1-ին դիմում է ներկայացրել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն՝ վերելակը ռեեստրում գրանցելու նպատակով և 05.03.2018 թվականին ստացել է վկայական, որից հետո մեկ տարվա ընթացքում պետք է ապահովվի վերելակի տեխնիկական անվտանգության փորձաքննության 3-րդ փուլը: Հաշվի առնելով այն, որ վերելակը շահագործվել է առանց ռեեստրում գրանցման՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ներկայիս՝ Կառավարությանը ենթակա Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին) պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից հարուցվել է վարչական վարույթ, 2018 թվականին արձակվել է կարգադրագիր՝ վերելակի շահագործումը դադարեցնելու մասին՝ մինչև վերելակի համապատասխանեցումը տեխնիկական անվտանգության նորմերի պահանջներին և կիրառվել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված 1.000.000 ՀՀ դրամ տուգանք՝ նույն օրենքի պահանջները խախտելու հիմքով:

Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ թեև «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում սահմանված է, որ շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտը տարեկան առնվազն մեկ անգամ ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության, ինչպես նաև արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում պարտադիր գրանցման, սակայն պրակտիկայում նշված պահանջների պահպանումը շատ դեպքերում արտադրական վտանգավոր օբյեկտը շահագործողները (շենքի կառավարման մարմին) չեն ապահովում, ինչի հետևանքով վտանգվում է մարդկանց կյանքը և առողջությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *պատշաճ վերահսկողություն իրականացնել համայնքների տարածքում ընդգրկված բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի պահպանման նկատմամբ՝ առաջացած տարատեսակ խնդիրների և հատկապես տանիքների և վերելակների վերանորոգման, հիմնանորոգման կամ փոխարինման ուղղությամբ ձեռնարկելով գործուն միջոցներ,*

2. *բազմաբնակարան շենքերում վերելակների տեխնիկական անվտանգության ապահովման նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն՝ կիրառելով պատասխանատվության միջոցներ և դադարեցնելով դրանց շահագործումը:*



**4. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հատուցումը**

2019 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերում են կոռպերատիվ հիմունքներով բազմաբնակարան շենք կառուցելու և բնակարաններ հատկացնելու նպատակով կանխավճարային մուծումներ կատարելու, Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկման հետևանքով կառուցվելիք շենքերը կիսակառույց մնալու և բնակարաններով չապահովվելու և (կամ) դրամական օժանդակություն չտրամադրելու խնդրին:

ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 2-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 432-Ն որոշման համաձայն՝ անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերին նախատեսվել է տրամադրել համապատասխան դրամական օգնություն, ինչը, սակայն, կոռպերատիվների բազմաթիվ անդամների մինչ օրս չի վճարվել: Ընդ որում՝ նշված դրամական օգնությունը նախատեսվել էր տրամադրել ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 12-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված օգնության տրամադրման ժամանակացույցի մասին» թիվ 229 որոշմամբ հաստատված ժամանակացույցով նշված հերթականությամբ: Ըստ այդ հերթականության՝ դրամական օգնության տրամադրման գործընթացն ընդհանուր առմամբ նախատեսվել էր ավարտել 2011 թվականին:

Հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունը 2018 թվականին ներկայացրել է պարզաբանում, համաձայն որի՝ ՀՀ 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայատերերի՝ Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց պետության կողմից դրամական օգնության տրամադրման նպատակով միջոցներ նախատեսված չեն: Ըստ ֆինանսների նախարարության՝ իրականացվել են անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների վերաբերյալ առկա տեղեկատվության համադրման, ճշգրտման, թվայնացման աշխատանքներ և ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի «ՀՀ կառավարության 1997 թվականի ապրիլի 30-ի թիվ 110 և 2000 թվականի օգոստոսի 2-ի թիվ 432 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2000-Ն որոշմամբ սահմանված բանաձևով կատարվել է հաշվարկ: Ըստ այդ հաշվարկի՝ չվճարված անավարտ շինարարության բնակարանաշինարարական թվով 37 կոռպերատիվի փայատերերին վճարման ենթակա դրամական օգնության չափը մոտավոր կազմում է 731.000.000 (յոթ հարյուր երեսունմեկ միլիոն) ՀՀ դրամ:

Բարձրացված հարցի վերաբերյալ Պաշտպանին 2019 թվականին ՀՀ վարչապետի աշխատակազմից ներկայացվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումը, համաձայն որի՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով «Անավարտ շինարարության բնակարանաշինական կոռպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրում» ծրագրի իրականացման համար նախատեսված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացնել 730.880.800 (յոթ հարյուր երեսունմեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար ութ հարյուր) ՀՀ

դրամ: Քանի որ Ծրագրի իրականացումը ՀՀ ֆինանսների նախարարությունից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է փոխանցվել 2020 թվականին, որը նոր է սոցիալական ոլորտի համար՝ դրա իրականացման հետ կապված հարցերը ներկայում գտնվում են ուսումնասիրության փուլում, որից հետո կսկսվի օգնության տրամադրման ընթացակարգերը սահմանելու գործընթաց: Անավարտ շենքերի կառուցումն ավարտին հասցնելու և բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերին բնակարանային պայմաններով ապահովման խնդիրը լուծելու ուղղությամբ նախարարությունը քայլեր չի ձեռնարկում՝ նման լիազորություն, ինչպես նաև հնարավորություններ չունենալու պատճառով:

Իհարկե, կարևոր է, որ «Անավարտ շինարարության բնակարանաշինական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրում» ծրագրի իրականացման համար 2020 թվականին նախատեսված է դրամական օգնություն, սակայն հարկ է նշել, որ անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամներն ունեն ոչ թե ուղղակի դրամական օգնության, այլ անավարտ շենքերի կառուցումն ավարտին հասցնելու աջակցության և բնակապահովման կարիք: Նշվածն արձանագրվել է և խնդիրը լուծելու առաջարկությունն արվել է Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման մեջ<sup>71</sup>:

Հանրապետությունում առկա անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամներից շատերը մինչ օրս ապահովված չեն բնակարաններով: Ավելին՝ հանրապետությունում առկա են դեպքեր, երբ կոոպերատիվների փայատերերի անդամավճարների հիման վրա կառուցվող, սակայն անավարտ մնացած բնակելի շենքերը սեփականության իրավունքով հատկացվել են համապատասխան համայնքներին, որոնց կողմից դրանք հետագայում օտարվել են այլ անձանց և (կամ) կազմակերպությունների: Հաշվի չեն առել նաև այդ կոոպերատիվի անդամների շահերը և կրած կորուստները փոխհատուցելու հարցը: Օրինակ՝ բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ 1985 թվականից հանդիսանում է կոոպերատիվի անդամ: 1990 թվականի Երթաղխորհրդի գործկոմի որոշմամբ շենք է հատկացվել այդ կոոպերատիվին: Ինքը և կոոպերատիվի մնացած անդամները կատարել են վերոնշյալ շենքի կառուցման համար նախատեսված բոլոր փայավճարները, սակայն կառուցապատումը մնացել է անավարտ, թեև շենքը շահագործման պետք է հանձնվեր դեռևս 1991 թվականին: Կոոպերատիվի անդամները 2009 թվականին դիմել են Երևանի քաղաքապետարան նշված շենքի կառուցապատումն ավարտելու կամ իրենց այլ բնակարաններ հատկացնելու խնդրանքով: Փայատերերը տեղեկացել են, որ նշված շինությունը կառուցվել է փայատիրական հիմունքներով, այլ ոչ թե պետական միջոցների հաշվին և դրա նկատմամբ պետությունը պարտավորություններ չունի: Կիսակառույց շենքն ընդգրկված չէ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում: Այնուհետև, տեղեկացել են, որ Երևանի քաղաքապետարանը, առանց կոոպերատիվի անդամների գիտության, աճուրդային կարգով վերոնշյալ շենքն օտարել է այլ ընկերության: Կոոպերատիվի որոշ անդամների ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների քննարկման արդյունքում Պաշտպանի աջակցությամբ և Երևանի քաղաքապետարանի միջամտությամբ 2018 թվականի ընթացքում ընկերությունը որպես փոխհատուցում (յուրաքանչյուր շահառուին) տրամադրել է 700.000 ՀՀ

<sup>71</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 116-117:

դրամ: Սակայն բողոքը ներկայացրած անձը փոխհատուցում չի ստացել: Վերջինիս բողոքի շրջանակներում Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 1996 թվականի նոյեմբերի 15-ի «Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության պետական (հանրային) բնակելի տները (բնակարանները) սեփականաշնորհելու մասին» թիվ 358 որոշման սահմանված կարգի 3-րդ կետի համաձայն՝ բնակելի տների շինարարությունն ավարտելու նպատակով ապագա բնակարանատերերը պատգամավորների գյուղական, քաղաքային խորհուրդների գործադիր մարմինների և պետական կառավարման տարածքային մարմինների աջակցությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծում են սեփականատերերի միավորումներ, որոնք իրականացնում են բնակելի տան շինարարության պատվիրատուի պարտականությունները՝ ինչը տվյալ դեպքում չի իրականացվել: Սեփականատերերի միավորումներ չձևավորելու դեպքում պատվիրատուի պարտականություններն իրականացնում են համապատասխանաբար պատգամավորների գյուղական և քաղաքային խորհուրդների գործադիր մարմինները, համապատասխան մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը կամ հանրային բնակարանային ֆոնդի սեփականատերերը: «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «անավարտ բնակելի շենքերը, որոնցում սահմանված կարգով կատարված է բնակարանների հատկացում, սեփականության իրավունքով հատկացվում են համապատասխան համայնքներին»:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 1997 թվականի հունիսի 18-ի «Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության պետական (հանրային) բազմաբնակարան բնակելի տների բնակարանների սեփականաշնորհման կարգը հաստատելու մասին» թիվ 191-Ն որոշմամբ հաստատված կարգի կանոնների համաձայն՝

- անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի տների շինարարությունն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 358 որոշման 3-րդ կետով սահմանված կարգի:

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մեկ տարվա ընթացքում անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի տների բնակարանների հատկացումից քաղաքացիների հրաժարվելու և սեփականատերերի միավորումներ չձևավորվելու դեպքում անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի տները սահմանված կարգով ներկայացվում են աճուրդի՝ համաձայն սահմանված կարգի:

- անավարտ շինարարության բազմաբնակարան այն բնակելի տները (բնակարաններ), որոնք սեփականության իրավունքով ստանալուց հրաժարվել են քաղաքացիները, ներկայացվում են աճուրդի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի ապրիլի 22-ի «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների աճուրդով վաճառքի ու պետական ձեռնարկություններն առանց գնման իրավունքի աճուրդով վարձակալության հանձնելու ընդհանուր կարգը հաստատելու մասին» թիվ 196 որոշման:

ՀՀ կառավարության 1996 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 358 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի համաձայն՝

- քաղաքացիներին ամրակցված այն սակավաբնակարան բնակելի տները և բնակարանները, որոնք սեփականության իրավունքով քաղաքացիները հրաժարվել են ստանալ, ներկայացվում են աճուրդի՝ համաձայն ՀՀ կառավարության 1994 թվականի ապրիլի 22-ի «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների աճուրդով վաճառքի ու պետական ձեռնարկություններն առանց գնման իրավունքի աճուրդով վարձակալության հանձնելու ընդհանուր կարգը հաստատելու մասին» թիվ 196 որոշման:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ վիճարկվող շենքը Երևանի քաղաքապետարանի կողմից 2013 թվականին աճուրդային կարգով վաճառելու իրավունքի ծագման համար շահառուների, այն է՝ կոոպերատիվի անդամների կողմից Երևանի քաղաքապետարանն պետք է ներկայացվեր կիսակառույց շենքը սեփականության իրավունքով ստանալուց հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, ինչը, տեղի չի ունեցել: Հետևաբար, բացակայում են այն իրավական հիմքերը, որոնց ուժով Երևանի քաղաքապետարանն իրավասու է եղել աճուրդային կարգով վաճառել նշված անշարժ գույքը, իսկ անշարժ գույքը ծանրաբեռնված է այլ անձանց իրավունքներով, որոնք չեն հրաժարվել իրենց պատկանող գույքից:

Երևանի քաղաքապետարանի ոչ պատշաճ վարչարարության արդյունքում կոոպերատիվի անդամների կողմից կառուցվող, սակայն անավարտ մնացած շենքը, առանց իրենց իմացության և սեփականության իրավունքով ստանալուց հրաժարվելու մասին համաձայնության, վաճառվել է այլ կազմակերպությանը՝ դրա դիմաց շահառուներին փոխհատուցում չտրամադրելով:

Նշվածը խնդրահարույց է նաև ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն հռչակելու և յուրաքանչյուր անձի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ, տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքի իրացման տեսանկյունից:

Օրինական հիմքով սեփականություն ձեռք բերելու իրավունքը պետությունից պահանջում է օրինական հիմքն այնպես կարգավորել, որ դրանից անձը վնաս չկրի, այլ երաշխավորի սեփականությունն ձեռք բերելու իրավունքը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *բացահայտել անավարտ շենքերը սեփականության իրավունքով համապատասխան համայնքներին հատկացնելու, այլ անձանց և (կամ) կազմակերպություններին օտարելու, սակայն կոոպերատիվների փայտերերին դրամական օգնություն չտրամադրելու դեպքերը և տրամադրել կոոպերատիվների փայտերերին համարժեք փոխհատուցում և (կամ) բնակարաններ:*

2. *Կառավարության համաֆինանսավորմամբ, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների ներգրավմամբ ավարտին հասցնել անավարտ շենքերի կառուցումը՝ կոոպերատիվների փայտերերին բնակարաններով ապահովելու համար:*

**5. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցումը**

2019 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանը բողոքներ է ստացել 1991 թվականից «Դալմայի» այգիներում հողամասեր վարձակալած և (կամ) զբաղեցրած անձանցից: Ըստ բողոքների՝ ՀՀ կառավարության որոշմամբ 2003-2004 թվականներին, առանց իրենց իմացության, համաձայնության և գնման նախապատվության իրավունքը հաշվի առնելու, հողամասերը Երևանի քաղաքապետարանն աճուրդային կարգով օտարել է առանձին անհատներին ու կազմակերպություններին: Առանց ֆինանսական և (կամ) գույքային որևէ փոխհատուցման: Բողոքների համաձայն՝ նշված գործընթացը կազմակերպվել և իրականացվել է Հայաստանի Հանրապետության համար 2001 թվականի հոկտեմբերի 30-ից ուժի մեջ մտած Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության մատչելիության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998 թվականի Օրհուսի կոնվենցիայի դրույթների խախտմամբ: Բողոք ներկայացրած անձինք նախապես չեն իրազեկվել շրջակա

միջավայրի նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ և որոշումներ ընդունելու գործընթացին չի ապահովվել նրանց մասնակցությունը:

Բողոքների քննարկման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ 2019 թվականին Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ Երևանի «Դավմայի» այգիների հողօգտագործողների կողմից կազմված և Երևանի քաղաքապետարան ներկայացված ցուցակի համաձայն՝ Երևանի «Դավմայի» այգիներում հողամասեր զբաղեցրած 48 անձանց հողամասերի ներկայիս սեփականատերերի կողմից գումարներ են տրամադրվել 41 անձի (ընդհանուր 27.748.900 ՀՀ դրամի և 266.320 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով): Հետագայում նոր անձինք են ներկայացել և հայտնել իրենց նախկինում ունեցած իրավունքների մասին և խնդրել փոխհատուցումներ, արդյունքում, անձանց թիվը դարձել է 12: Պարզաբանվել է նաև, որ Երևան համայնքը կամ Երևանի քաղաքապետարանն օրենքով կամ իրավական այլ ակտերով չի կրում փոխհատուցում տրամադրելու որևէ պարտականություն:

Բարձրացված խնդրի վերաբերյալ 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքի համաձայն՝ անձինք 1991 թվականից սկսած վարձակալության պայմանագրերի հիման վրա (10 տարի ժամկետով), այնուհետև նշված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ տիրապետել են Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղուն (Մոնթե Մելքոնյան փողոցին) հարող հողատարածքները: Երևանի քաղաքապետի 2018 թվականի ապրիլին կայացրած որոշմամբ նշված հատվածի ընդհանուր հողատարածքն օտարվել է «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» ՀԿ-ին: Ըստ բողոքի՝ հողատարածքը Երևանի քաղաքապետարանի կողմից օտարվել է ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումը, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի խախտմամբ, այն է՝ ոչ թե աճուրդային կարգով, այլ ուղղակի վաճառքի միջոցով:

Ըստ բողոքի՝ հողատարածքն օտարվել է առանց հողօգտագործողների գնման նախապատվության իրավունքը հաշվի առնելու:

Հատկանշական է, որ Պաշտպանին բողոք ներկայացրած անձինք հայցադիմում են ներկայացրել Երևանի քաղաքապետարանի դեմ՝ Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցին հարող «Դավմայի այգիներ» տարածքում գտնվող 0,42 հա հողամասի աճուրդներն անվավեր ճանաչելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջների մասին: Հայցը մերժել է այն հիմքով, որ բողոք ներկայացրած անձի հետ կնքված վարձակալության պայմանագրերը կնքվել են ոչ պատշաճ կողմի, այն է՝ Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի հետ: Համաձայն նախկին ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի՝ քաղաքների և քաղաքատիպ ավանների սահմանագծի մեջ եղած բոլոր հողերը գտնվում են ժողովրդական պատգամավորների քաղաքային և ավանային խորհուրդների տնօրինության ներքո, իսկ նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների քաղաքային (ավանային) խորհուրդները որպես սեփականություն և օգտագործման համար հողամասեր են տրամադրում իրենց տնօրինության տակ գտնվող հողերից: Հետևաբար հողամասի վարձակալության պայմանագրերը վերը նշված իրավական հիմնավորմամբ պետք է կնքվեին ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի և հայցվորների միջև, ուստի օրենսդրությամբ նման լիազորություն չունեցող մարմնի կնքած պայմանագիրն անվավեր է:

Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ գործող ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց

իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք: Նշյալ իրավունքն այդ անձանց նախապատվության իրավունքն է՝ իրավաբանորեն ձևակերպելու այդ հողամասերի նկատմամբ իրենց օգտագործման իրավունքը՝ այդ հողամասերը նույն պայմաններով այլ անձանց տրամադրելու հնարավորության ծագման դեպքում: Նման հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց պետք է փոխարենը տրամադրվեն այլ հողամասեր կամ պետք է հատուցվեն նրանց վնասները՝ նախատեսված հիմքերով: ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով սվյալ հողամասերը ձեռք բերելը կամ, եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար:

Նշվածից հետևում է, որ եթե վիճարկվող հողատարածքները քաղաքացիներն օգտագործել են առանց իրավաբանական ձևակերպման (հաշվի առնելով, որ կնքված պայմանագրերն անվավեր են), ապա հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ հողամասերն այլ անձանց օտարելուց առաջ պետք է այգիների նախկին հողօգտագործողներին դրանք գնելու առաջարկություն արվեր: Հողօգտագործողների հրաժարվելու դեպքում միայն համապատասխան փոխհատուցման դիմաց դրանք կարող էին օտարվել այլ անձանց: Այսպիսով, չի պահպանվել սահմանված ընթացակարգը, ինչպես նաև չեն փոխհատուցվել նախկին հողօգտագործողների կրած վնասները: Նշվածն արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման մեջ<sup>72</sup>:

Հարցի կարգավորման համար էական նշանակություն ունի նաև նախկինում մարզի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանի ներկայիս համայնքի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանին քաղաքացիաիրավական իրավունքները և պարտականությունները փոխանցելու, այն է՝ իրավահաջորդության որոշման հարցը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի թիվ 465-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 13-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1788-Ն որոշումը: Որոշման հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժինը «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը 2009 թվականի օգոստոսի 25-ին հանել է հաշվառումից:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ Երևան համայնքը «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի իրավահաջորդը չէ, այդ հիմնարկի իրավունքներն ու պարտականություններն օրենքի ուժով կրում է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Կառավարության:

<sup>72</sup>Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 109-111:

Հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2009 թվականի հուլիսի 24-ի թիվ ԵՔԴ/0363/05/08 քաղաքացիական գործով կայացրած նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ ժողովրդական պատգամավորների խորհրդի պետական կառավարման մարմինների լուծարման դեպքում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի լուծարումից հետո վերջինիս ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերից բխող իրավունքների և պարտավորությունների կրողը պետությունն է՝ Հայաստանի Հանրապետությունը:

Նախկին Երևանի քաղաքային ու Երևան քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների և Երևանի մարզի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանի իրավահաջորդության հետ կապված Վարչապետի աշխատակազմի պարզաբանումների համաձայն Վարչապետի աշխատակազմում տեղի ունեցած աշխատանքային քննարկման ժամանակ ուսումնասիրվել է Պատգամավորների շրջանային, Երևանի քաղաքային և Երևան քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների լուծարումից հետո դրանց իրավահաջորդության և Երևանի մարզի կարգավիճակ ունենալու ժամանակահատվածում ընդունված Երևանի քաղաքապետի որոշումների իրավահաջորդության հարցերի հնարավոր տարբերակները: Արդյունքում, առաջարկվել է Պատգամավորների շրջանային, Երևանի քաղաքային և Երևան քաղաքի շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների լուծարումից հետո որպես վերջիններիս իրավահաջորդ դիտարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, սակայն գործադիր կոմիտեների կողմից ընդունված միայն այն որոշումների մասով, որոնք այլ անձանց համար իրավունքներ և պարտականություններ չեն առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում: Հակառակ դեպքում հարցն արդեն պետք է լուծվի դատական կարգով: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է նաև մտահոգություն, որ ո՛չ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով հաստատված հավելվածի 14-րդ կետով, և ո՛չ էլ ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 659-Լ որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված որևէ իրավասությունից ուղղակիորեն չի բխում, որ նախարարությունը կարող է ունենալ քննարկվող լիազորությունը: Ուստի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն առաջարկվել է վերլուծել իրենց իրավասության շրջանակը՝ համապատասխան լիազորությունը սահմանելու համար, քննարկելով նաև վերոնշյալ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության հարցը: Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պարզաբանումների՝ Նախարարության կողմից մշակվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկվում է մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքի, շրջանային խորհուրդների և նրանց գործադիր մարմինների կողմից ընդունված և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի փոփոխման, լրացման, ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց կատարումն ապահովելու լիազորությունը պատվիրակել Երևանի քաղաքապետին՝ սահմանելով, որ յուրաքանչյուր դեպքում աշխատանքների կատարմանը ներգրավվելու է համապատասխան բնագավառի պետական լիազոր մարմինը:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է ընդգծել, որ կարևոր են նշված համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները, քանի որ խնդրի լուծման արդյունքում ոչ միայն «Դալմայի այգիների» վարձակալները և (կամ) հողօգտագործողները, այլ նախկին գործկոմների և մարզի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի որոշումների հետ կապված այլ խնդիրներ ունեցող բազմաթիվ անձինք հնարավորություն կունենան

արտադատական կարգով իրենց խախտված իրավունքների վերականգնման պահանջով դիմելու իրավասուբյեկտին՝ իրավահաջորդին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *հողամասերը վաճառելու դեպքում հաշվի առնել գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց շահերը, իսկ նման հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց փոխարենը տրամադրել այլ հողամասեր կամ հատուցել նրանց վնասները,*

2. *պետության պարտավորության կատարման համար հնարավոր սեղմ ժամկետներում կատարել օրենսդրական փոփոխություններ, այն է՝ Երևան քաղաքի շրջանային խորհուրդների ու նրանց գործադիր մարմինների և մարզի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանի իրավահաջորդությունը փոխանցել ներկայիս համայնքի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանին:*

## **6. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան հատկացնելը**

2019 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան հատկացնելու խնդրի վերաբերյալ: Մարդիկ դիմել են Պաշտպանին՝ հայտնելով, որ անհիմն կերպով չեն հաշվառվել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում, սակայն օրենսդրության անկատարության հետևանքով ներկայում չեն կարողանում վերահաշվառվել համապատասխան ցուցակներում և ստանալ բնակարանային կամ գումարային փոխհատուցում:

Բարձրացված հարցի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում 2019 թվականին արձանագրվել է համակարգային բնույթ կրող խնդիրը: Օրինակ՝ բողոքներից մեկով անձը նշել է, որ 1988 թվականի երկրաշարժի հետևանքով կորցրել է Գյումրի քաղաքում գտնվող իր ընտանիքին պատկանող 3 սենյականոց բնակարանը, որի դիմաց 1994 թվականին Գյումրու քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ միայն իր հորն է հատկացվել 1 սենյականոց բնակարան: Ըստ բողոքի՝ իրեն բնակարան չի հատկացվել՝ պատճառաբանությամբ, որ 1994 թվականին նշված բնակարանի հասցեի հաշվառումից հանված է եղել: Մինչդեռ, վերջինս 1976 թվականից հաշվառված է եղել նշված հասցեով և հաշվառումից հանվել է միայն 1999 թվականին: Ինչը հավաստվել է նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացված տեղեկանքով:

Պաշտպանին ներկայացված Գյումրու քաղաքապետարանի պարզաբանումների համաձայն՝ ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1024-Ն որոշմամբ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետ է սահմանվել 2008 թվականի նոյեմբերի 1-ը: Քանի որ 2008 թվականի նոյեմբերի 1-ից հետո տեղական ինքնակառավարման մարմինների՝ երկրաշարժից անօթևան մնացած ընտանիքների հաշվառման լիազորությունները դադարել են, ուստի բողոքը ներկայացրած անձին հնարավոր չէ ընդգրկել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում:

ՀՀ Շիրակի մարզպետարանի պարզաբանումների համաձայն՝ Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սակայն տարբեր պատճառներով դեռևս բնակարանային փոխհատուցում չստացած ընտանիքների բնակապահովման խնդիրը լուծելու նպատակով ՀՀ Շիրակի մարզպետը ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին (ներկայիս՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների



նախարարին) 2019 թվականին ապրիլ ամսին առաջարկել է վերանայել ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթները: Ներկայացրել է նաև օրենսդրական առաջարկություններ ու դրանց հիմնավորումները:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից Պաշտպանին են ներկայացվել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման պետական քաղաքականությունը վերանայելու և բնակարանային ապահովման ծրագրերի շահառուների ընտրության նոր մոտեցումներ ձևավորելու նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ քննարկման արդյունքները: Քննարկման արդյունքներով ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու ՀՀ Շիրակի մարզպետի առաջարկները Կոմիտեն համարել է ընդունելի և համահունչ՝ աղետի գոտու հիմնախնդիրների լուծմանն ուղղված ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված սկզբունքներին ու դրանց համատեքստում Կոմիտեի կողմից տարվող քաղաքականությանը: Վերջին 20 տարվա ընթացքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման ծրագրերը, այդ թվում՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ներկայում պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրերն իրականացվել են Որոշման համաձայն: Կոմիտեն նպատակահարմար է գտնում բարձրացված հարցերը կանոնակարգել փուլային եղանակով՝ յուրաքանչյուր խմբի համար նոր իրավական ակտերի ընդունման, այլ ոչ թե Որոշման մեջ փոփոխություններ կատարելու ձևաչափով: Սկզբնական փուլով՝ Ծրագրի ավարտմանը զուգահեռ (նախատեսվում է ավարտել 2020 թվականին), ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 23-ի թիվ 361-Ն և ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 1658-Ա որոշումների համաձայն՝ ներկայում կանոնակարգման փուլում է գտնվում Սպիտակի երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունների ազատման, քանդման և դրանցում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հիմնախնդիրը: Բնակարանային հերթացուցակի հաշվառումից դուրս մնացած անօթևան անձանց վերահաշվառման և բնակապահովման հարցի կարգավորման համար համապատասխան օրենսդրական փոփոխություններ են նախատեսվել:

Հարկ է ընդգծել, որ Կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշմամբ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետը մինչև 2008 թվականի նոյեմբերի 1-ը սահմանելու և այդ ժամկետը լրանալուց հետո անձանց համար բացասական իրավական հետևանքներ նախատեսելու հետևանքով խոչընդոտվել է անձի՝ սեփականության նկատմամբ իրավաչափ սպասելիքների իրացման հնարավորությունը: Այդ կարգավորումներն արդյունավետ չեն անձի՝ սեփականության նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքի իրացման տեսանկյունից: Այդ կարգավորումների արդյունքում սահմանափակվում է անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը: Որոշման ընդունման հետևանքով համայնքի ղեկավարի հաշվառում իրականացնելու լիազորությունը փաստացի դադարեցվել է և հերթացուցակներում ու հաշվառման մատյաններում ոչ իրավաչափ չհաշվառված բազմաթիվ քաղաքացիներ զրկվել են վերահաշվառվելու և առաջնահերթ բնակարան ստանալու իրենց իրավունքից: Տվյալ դեպքում ստեղծվել է իրավիճակ, որ Գյումրու քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի կողմից անձի մասին տեղեկությունների ոչ պատշաճ ստուգման արդյունքում անձի տվյալները չեն հաշվառվել բնակարանի կարիքավոր քաղաքացիների ցուցակում և հաշվառման մատյանում: Գյումրու համայնքապետարանը ներկայում օժտված չէ նշված սխալն ուղղելու և վերահաշվառում կատարելու լիազորությամբ:

Բարձրացված խնդրի կապակցությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Պաշտպանին վերոնշյալ գրությամբ ներկայացվել են Նախարարության և Կոմիտեի միջև տեղի ունեցած քննարկման արդյունքների վերաբերյալ դիրքորոշում, ըստ որի՝ հերթացուցակում չհաշվառված անձանց այդ թվում՝ բողոքը ներկայացրած անձի բնակապահովման հարցին հնարավոր է անդրադառնալ համապատասխան իրավական հիմքերի ստեղծման և անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Ժամկետների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ընդունել Կառավարության որոշում բնակարանային հերթացուցակի հաշվառումից դուրս մնացած անօթևան անձանց վերահաշվառման և բնակապահովման հարցի կարգավորման նպատակով:*

## **7. Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցումը և բնակավայրերի բնակիչների իրավունքների ապահովումը**

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման հետևանքով մարդկանց տարատեսակ իրավունքների խախտմանը: Մինչ օրս լուծում չի ստացել Պաշտպանի դեռևս 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրաձայնված՝ Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման հետևանքով սեփականությունից անարգել օգտվել չկարողանալու խնդիրը: Մասնավորապես, ՀՀ Արարատի մարզի Բաղրամյան, Բերքանուշ, Մրգավան և Դալար համայնքների բնակիչների խնդիրը՝ կապված «Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրան սահման» Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման հետևանքով ընդհանուր օգտագործման ճանապարհին հարող նախկին անցուղու փակման, դրա հետևանքով վերոնշյալ գյուղերի բնակիչների կողմից ավտոմայրուղու հակառակ կողմում գտնվող և իրենց կողմից մշակվող, գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ և արոտավայրեր համապատասխան գյուղատնտեսական տեխնիկա տեղափոխելու, ինչպես նաև խոշոր եղջերավոր անասուններին արոտավայրեր տանելու հարցի հետ<sup>73</sup>:

Ընթացիկ տարում բողոքներով բարձրաձայնվել է՝ Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհը հարակից տարածքում բնակվող բնակիչների բնակարաններից շատ մոտ հեռավորության վրա կառուցելու հետևանքով բնակավայրի բնակիչների համար խնդիրներ առաջանալու վերաբերյալ հարցը: Մասնավորապես, 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմում քննարկվել է Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան փողոցի թիվ 8, 10 և 14 շենքերի բնակիչների բողոքը: Ըստ բողոքի՝ Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Երևանը շրջանցող հատվածի մի մասը՝ Զորավար Անդրանիկ և Առնո Բաբաջանյան փողոցների խաչմերուկից մինչև Գուսան Շերամ և Տիչինա փողոցների խաչմերուկն ընկած ճանապարհահատվածը, անցնում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքով: Բողոքի համաձայն՝ նախագծով սահմանվել է, որ արագընթաց ավտոճանապարհը Բաֆֆու և Առնո Բաբաջանյան փողոցների խաչմերուկով չի անցնելու, այլ փոխարենը կառուցվելու է ճանապարհային հանգույց և ճանապարհին Առնո Բաբաջանյան փողոցից կտրուկ թեքվելու է դեպի բնակելի թաղամաս, այն է՝ անցնելու է Առնո Բաբաջանյան փողոցի թիվ 8, 10 և 14 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային

<sup>73</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 117-119:

տարածքով՝ թիվ 10 շենքից ընդամենը 5-7 մ հեռավորության վրա: Բողոքի համաձայն՝ Առնո Բաբաջանյան փողոցի թիվ 10 շենքին այդքան մոտ շինարարությունը կվտանգի շուրջ 30 տարի առաջ շահագործման հանձնված բազմաբնակարան բնակելի շենքի սեյսմակայունությունը: Ըստ բնակիչների՝ ավտոճանապարհին անցնելու է բնակարանների ննջասենյակների պատուհաններին շատ մոտ հեռավորության վրա, շահագործվելու է շուրջօրյա, հետևաբար ավտոմեքենաների աղմուկը խաթարելու է բնակիչների քունը, ինչը բացասական ազդեցություն կունենա մարդկանց առողջության վրա:

Նշվածի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ կառուցվող Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածն արագընթաց ճանապարհ չէ և նախատեսված է արագության սահմանափակում 60 կմ/ժ: Համաձայն նախագծի՝ այն հատվածում, որտեղ ամենամոտն է շենքերին՝ (թիվ 14 շենք), հեռու է շենքից 8 մ: Այդ հատվածում թիվ 14 շենքը չունի դեպի Բաբաջանյան փողոց նայող լուսամուտներ: Նախագծի համաձայն թաղամասն ապահովված է երկկողմանի մուտքով/ելքով (ներկայումս էլ երկու մուտք/ելք է), որոնք անմիջապես լուծում են հրշեջ ծառայության, շտապօգնության և այլ ավտոմեքենաների մուտք/ելքը: Անկախ վերոգրյալից՝ բարձրացված հարցի կարգավորման համար Երևանի քաղաքապետարանը մշակում է մի քանի այլընտրանքային լուծումներ, որոնք առաջիկայում կքննարկվեն թաղամասի բնակիչների հետ: Փոխադարձ ընդունելի լուծման գալու պարագայում կիրականացվեն համապատասխան նախագծային փոփոխություններ:

Վերոգրյալի կապակցությամբ թաղամասի բնակիչները լրացուցիչ դիմումով տեղեկացրել են, որ Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի Երևանը շրջանցող հատվածի նպատակներից մեկը քաղաքը բեռնատար տրանսպորտային միջոցներից ազատելն է, այսինքն՝ այդ ճանապարհով Առնո Բաբաջանյան փողոցի թիվ 4, 6, 8, 10 և 14 շենքերի մոտով շուրջօրյա անցնելու են բեռնատար և այլ տեսակի տրանսպորտային միջոցներ: Առաջարկվող նախագծով Բ-4 թաղամասը կունենա 1 հատ մուտք/ենք և 3 հատ միայն մուտք, բոլորն էլ Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհից: Հետևաբար, թաղամաս մտնելու համար նախ պետք է լինելու մտնել Հյուսիս-հարավ ավտոճանապարհի: Բաֆֆու փողոցից անմիջական մուտքը վերանայու է: Բաֆֆու փողոցի կողմից թաղամաս մտնելը հարմար է լինելու միայն թիվ 1 մուտք/ենքից, որը կբերի խցանումների, քանի որ այն միակ էլքն է թաղամասից: Նախատեսվում է շրջադարձ Հյուսիս-հարավ ավտոճանապարհի վրա, սակայն հայտնի չէ Բ-4 թաղամասից ինչ հեռավորության վրա, որպեսզի վարորդները կարողանան կատարել շրջադարձ և օգտվել թաղամաս մտնող 2-րդ, 3-րդ և 4-րդ մուտքերից: Փորձառու վարորդների կարծիքով այդ շրջադարձը նպատակահարմար չէ, քանի որ հանդիպակաց ուղղությամբ 60 կմ/ժ (չհաշված 10 կմ/ժ թույլատրելի շեղումը) արագությամբ ընթանալիս անդադար երթևեկության դեպքում (առանց լուսացույցի) հնարավոր չի լինելու անվտանգ կատարել շրջադարձ, իսկ երկար սպասելը կհանգեցնի խցանումների: Նախագծով նախատեսված 3-րդ և 4-րդ մուտքերը դուրս են գալիս բնակելի շենքերի անմիջապես շքամուտքերի դիմաց, ինչը վտանգավոր է բնակիչների, հատկապես՝ երեխաների համար: Թաղամասի բնակիչները խնդրում են Հյուսիս-հարավ ավտոճանապարհի այդ հատվածը թաղամասից հեռացնել՝ չփակելով թաղամասի ներկայումս առկա 2 հատ մուտք/ելքերը և հաշվի առնելով նշված խնդիրները:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 263-Ն հրամանով հաստատված հավելվածի համաձայն՝ «շրջանցիկ ճանապարհների հողային պաստառի եզրից մինչև բնակելի և ամառանոցային

կառուցապատումը պետք է ընդունել սույն շինարարական նորմերի համաձայն, ընդունելով՝ I, II և III կարգի ճանապարհների համար՝ 100 և 50 մ՝ և IV կարգի ճանապարհների համար 50 և 25 մ-ից ոչ պակաս: Ավտոմոբիլների ադմուկից և արտանետած գազերից կառուցապատումը պաշտպանելու համար ճանապարհի երկայնքով անհրաժեշտ է նախատեսել 10 մ-ից ոչ պակաս լայնությամբ անտառաշերտ:

Միջպետական նշանակության I-III կարգի ավտոմոբիլային ճանապարհները, պետք է նախագծել բնակավայրերի բնակեցման տարածքների շրջանցումով՝ բնակավայրի համար նախատեսելով առանձին մուտքեր:

Բացառիկ դեպքերում, երբ տեխնիկատնտեսական կամ այլ նկատառումներով անհրաժեշտություն է առաջանում հանրապետական նշանակության II և III կարգի ճանապարհներն անցկացնել բնակեցման գոտու միջով, պետք է նախատեսել տարանջատման հատուկ ինժեներական կառուցվածքներ՝ ուղեկամուրջներ, թունելներ, սրահներ, հանույթներ և այլն, ապահովելով համապատասխան սանիտարական և բնապահպանական նորմատիվ պահանջները:

Այն դեպքերում, երբ ավտոմոբիլային ճանապարհի անցկացման ժամանակ մերձակա կառուցապատման տարածքում տրանսպորտային ադմուկի մակարդակը գերազանցում է թույլատրելի նորմերը, անհրաժեշտ է նախատեսել հատուկ ադմկապաշտպան միջոցառումներ (ճանապարհի անցկացումը հանույթով, ադմկապաշտպան հողաթմբերի, ադմկակլանիչ և այլ կառուցվածքների շինարարություն, ծառատունկ և այլն), որոնք կապահովեն ադմուկի մակարդակի իջեցումը մինչև ՀՀՇՆ 22-04 շինարարական նորմերով սահմանված ցուցանիշը:»

Այսպիսով, վերոնշյալ քաղաքաշինական նորմերի ուսումնասիրությունից հետևում է, որ իրականացվող շինարարության, այն է՝ Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման վիճարկվող հատվածը նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների իրականացումը չի լինի շինարարական նորմերին համապատասխան: Հարցն այն է, որ Երևանի քաղաքապետարանից ստացված պարզաբանումների համաձայն՝ նախագծով նախատեսվող ավտոճանապարհի շենքերից ամենամոտ հեռավորությունը 8 մ է, որը չի համապատասխանում վերոնշյալ պահանջներին և թաղամասի բնակիչների համար առաջացնելու է (ավտոմոբիլների ադմուկ, արտանետած գազեր) և բողոքում նշված մի շարք այլ խնդիրներ:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

*1. հնարավոր սեղմ ժամկետներում գործուն միջոցներ ձեռնարկել Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Բերքանուշ համայնքի հատվածում վերգետնյա կամուրջ կառուցելու ուղղությամբ,*

*2. ձեռնարկել միջոցներ Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոմայրուղու աշխատանքային նախագիծը ՀՀ-ում գործող քաղաքաշինական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:*

## **8. Սահմանամերձ բնակավայրերի վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում**

2019 թվականին շարունակվում է չլուծված մնալ սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով անհատական բնակելի տների 4-րդ աստիճանի վթարային (բնակության համար ոչ պիտանի) լինելը: Մինչ օրս նշված բնակելի տների բնակիչներին պետական աջակցությամբ վերաբնակեցում չի եղել, չի լուծվել շուկայից բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն տրամադրելու կամ

բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում նոր բնակելի տների կառուցման և հատկացման հարցը:

Ըստ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (ՀՀ ՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր» շիննորմեր, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումներ»), 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի կոնստրուկցիաների վիճակը վթարային է, շենքերը վտանգավոր են հետագա շահագործման համար: Այդ շենքերի բնակիչները ենթակա են վերաբնակեցման:

Այսօր մի շարք այլ համակարգային խնդիրների հետ մեկտեղ հանրապետության տարածքում առկա է բնակարանային ֆոնդի բնակիչների անվտանգության ապահովման խնդիրների լուծման հարցը: Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վատթարացմանն այլ գործոնների հետ մեկտեղ հանրապետության սահմանամերձ բնակավայրերում նպաստել են լայն զարգացում ունեցող արտածին (էկզոգեն) երկրաբանական երևույթները, որոնց շարքում առանձնահատուկ տեղ են գրավում գրավիտացիոն պրոցեսները՝ սողանքները, քարաթափերը:

Նկատի ունենալով, որ բնակարանային ֆոնդի նշված հատվածում (սահմանամերձ բնակավայրերում) բնակվում են սոցիալապես առավել խոցելի խմբերում ընդգրկված ընտանիքներ, որոնք իրենց միջոցներով հնարավորություն չունեն հոգալու բնակարանային խնդիրները, նրանց բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել նշված համակարգային խնդրի լուծման համար պետական աջակցության համապատասխան միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից տրամադրվել է Քաղաքաշինության կոմիտեից ստացած տեղեկությունը, համաձայն որի՝ «Քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը նախատեսված է եղել հայեցակարգի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկով: Սակայն, ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 31-ի N 45 արձանագրային որոշմամբ այդ միջոցառումների ժամկետները հետաձգվել են, իսկ 2016 թվականի մայիսի 19-ի N 19 արձանագրային որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել վերը նշված միջոցառումների ժամանակացույցը:

Ըստ պարզաբանման՝ ՀՀ տարածքում քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հարցը կարող է դիտարկվել ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 9 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ ՀՀ տարածքում քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հայեցակարգով ձևավորված մոտեցումների համաձայն իրականացվելիք ծրագրերի շրջանակներում՝ դրանց իրականացման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության պարագայում (ծրագրերի իրականացման ժամկետները, առաջնահերթությունները կհստակեցվեն բուն ծրագրերի մշակման ժամանակ):

Փաստորեն, վերոնշյալ հայեցակարգի կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացման ժամկետները նախ փոխվել են, այնուհետև ժամանակացույցը ընդհանրապես ուժը կորցրած է ճանաչվել: Արդյունքում, վերոնշյալ սոցիալական կարևոր

նշանակություն ունեցող և բազմաթիվ խնդիրներ լուծող միջոցառումները մինչ օրս կյանքի չեն կոչվել և շարունակում են անկատար մնալ:

Բարձրացված համակարգային խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկած միջոցների վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պարզաբանել է նաև, որ 2019 թվականի ընթացքում ՀՀ Արմավիրի, ՀՀ Արագածոտնի և ՀՀ Լոռու մարզերի սահմանամերձ բնակավայրերում սողանքներ չեն եղել և սողանքների հետևանքով անհատական բնակելի տներ չեն վնասվել: ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Քարահունջ գյուղում սողանքի հետևանքով բնակության համար վտանգավոր 8 տան բնակիչներ փոխհատուցում չեն ստացել, որոնք չեն բավարարել Կառավարության համապատասխան որոշման չափանիշներին (մնացածները ստացել են նախորդ տարիներին): Վնասվածության աստիճանի ուսումնասիրություններ անհատական բնակելի տների մասով մարզպետարանի և բնակիչների կողմից չեն պատվիրակվել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին: Առանց հիմնավորված մասնագիտական եզրակացության, հաստատված և փորձաքննության անցած նախահաշիվների, համաձայն բյուջետային գործընթացի մասին գործող մեթոդական ցուցումների՝ հնարավոր չէ փոխհատուցման տրամադրումը ներառել պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում: ՀՀ կառավարության կողմից 2012 թվականից առ այսօր ՀՀ Տավուշի մարզում 4-րդ կարգի վթարային տների համար փոխհատուցում, ինչպես նաև վերանորոգման կամ կառուցման նպատակով գումարներ չեն հատկացվել: ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի նիստի N 9 արձանագրային որոշման համաձայն, Մարզպետարանի կողմից 09.11.2013թ. գրությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարությանն է տրամադրվել մարզի 17 բնակավայրում տեխնիկական զննում անցած քանդման ենթակա 191 անհատական բնակելի տների վերաբերյալ տեղեկատվություն, պետական աջակցության տրամադրման առաջնահերթ ծրագրի մշակման նպատակով: Սողանքային երևույթների ուսումնասիրության և հատուցման հարցն ընդգրկված է 2019-2021 միջնաժամկետ ծախսային ծրագրում: ՀՀ Վայոց ձորի սահմանամերձ բնակավայրերում սողանքի հետևանքով 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող անհատական բնակելի տների ցանկն ընդգրկված է մարզի միջնաժամկետ ծախսային ծրագրում: 2019 թվականին ֆինանսական միջոցների բացակայության պատճառով փոխհատուցում չի հատկացվել:

Պետք է արձանագրել, որ, այնուամենայնիվ, 2019 թվականի ընթացքում լուծում չի ստացել Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված ՀՀ Վայոց ձորի սահմանամերձ Խաչիկ բնակավայրի, ինչպես նաև այլ նմանատիպ բողոքներով բարձրացված բնական և տեխնածին աղետների հետևանքով քանդման ենթակա բնակելի տների բնակիչների վերաբնակեցման հարցը: Խաչիկ բնակավայրի հետ կապված՝ լուծում չի ստացել նաև բնակելի տների տեխնիկական վիճակի կատարված հետազննությունների արդյունքներով նախկինում (3-րդ աստիճանի վթարային զնահատված), իսկ, բողոքների համաձայն՝ ներկայում բնակության համար ոչ պիտանի դարձած բնակելի տների պետական բյուջեի միջոցների հաշվին կրկնակի հետազննության իրականացման հարցը: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հանրապետության բնակավայրերում առկա է բնական և տեխնածին աղետների հետևանքով քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածության և քանդված մոտ 1200 բնակելի տուն: Մտահոգիչ համարելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ քանդված բնակելի տների նախկին բնակիչներից շատերը, լքելով իրենց տները, դարձել են անօթևան, իսկ վթարային և ծայրահեղ վթարային բնակելի տների բնակիչները շարունակում են բնակվել իրենց տներում՝ վտանգելով իրենց կյանքը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. սողանքային վտանգի և ռիսկի աստիճանի գնահատման նպատակով սահմանամերձ բնակավայրերում պետական միջոցների հաշվին իրականացնել բնակելի տների տեխնիկական վիճակի գնահատման հետազննություններ, այդ թվում սահմանամերձ բնակավայրերում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնել նախկինում 3-րդ աստիճանի վթարային գնահատված բնակելի տների կրկնակի հետազննություն,

2. ընդունել «Քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում,

3. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրապետության 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար նախատեսել դրամական միջոցներ՝ ապահովելով շահառու անձանց վերաբնակեցումը:

### **9. Քաղաքաշինական նորմերը և կանոնները չպահպանելու հետևանքով գույքային իրավունքների խախտումը**

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են քաղաքաշինական նորմերը և կանոնները չպահպանելու հետևանքով մարդկանց գույքին վնաս հասցնելուն և այլ խնդիրներ առաջացնելուն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է վարչական մարմնի վարչարարություն իրականացնելիս համաչափ չգործելուն: Վարչական մարմնի ակտերը, այդ թվում՝ գործողությունները, պետք է լինեն իրավաչափ: Մի խումբ անձանց համար բարենպաստ որոշում ընդունելու հետևանքով մեկ այլ խումբ անձանց համար չպետք է առաջանան ոչ բարենպաստ իրավական հետևանքներ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքով մարդը տեղեկացրել է, որ կառուցապատողը ձեռք է բերել իրեն սեփականության իրավունքով պատկանող տան հարևանությամբ գտնվող հողամասը՝ 3 հարկանի շենք կառուցելու համար: Ստանալով հարևանությամբ բնակվող այլ անձանց համաձայնությունը՝ բողոք ներկայացրած անձի անմիջապես պատկից տարածքում փորել է մեծ չափերի փոսորակ և սկսել է կառուցել բազմաբնակարան շենք: Ըստ բողոքի՝ նշված բազմաբնակարան շենքի հիմքը փորելու ընթացքում կառուցապատողի կողմից հանվել են մեծ ժայռաբեկորներ, որի հետևանքով խարխուլվել են իր բնակելի տան հիմքերը (բնակելի տունը դարձել է վթարային): Միաժամանակ, փակվել է դեպի բնակելի տուն ներթափանցող արևի լույսը: Բողոքի համաձայն՝ շինարարությունը կանխելու նպատակով բազմիցս դիմել է Երևանի քաղաքապետարան և այլ իրավասու պետական մարմիններին, սակայն արդյունքի չի հասել: Բողոքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևանի քաղաքապետարանը կառուցապատողին տրամադրել է նախագծման թույլտվություն, որի համար, ըստ քաղաքապետարանի պարզաբանումների, հիմք է հանդիսացել համապատասխան ընկերության կողմից ինսուլացիոն ազդեցության վերաբերյալ տրված մասնագիտական եզրակացությունը: Ըստ Քաղաքապետարանի՝ նախատեսվող շենքի փոսորակի իրականացման ժամանակ կառուցապատողի կողմից իրականացվել են բնակելի տան հիմքերի ամրակայման աշխատանքներ, ինչի հավաստիությունը փաստելու վերաբերյալ կառուցապատողի կողմից Երևանի քաղաքապետարան են ներկայացվել անհրաժեշտ լուսանկարներ: Բարձրացված հարցերի կարգավորման ուղղությամբ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի ձեռնարկած միջոցառումների արդյունքում կառուցապատող և բողոքող կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

Օրինակ՝ բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ հարևան բնակելի տան բնակիչը Երևանի քաղաքապետարանի տված շինարարության թույլտվության հիման վրա, սակայն, առանց իր համաձայնության, իր բնակելի տան դեմհանդիման գտնվող պատի վրա (հեռավորությունը կազմում է 3-4 մ) կատարել է լուսային բացվածքների բացման շինարարական աշխատանքներ, որի հետևանքով խախտվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 81-րդ կետերի ուժով՝ լուսամուտից լուսամուտ դիտելիությունը բացառող շինարարական նորմերի պահանջը: Բողոքի համաձայն՝ վերոգրյալի կապակցությամբ դիմել է Երևանի քաղաքապետարան, սակայն արդյունքի չի հասել:

Նշվածի կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից պարզաբանել են, որ գոյություն ունեցող բնակելի տունը վերակառուցելու համար Աջափնյակ վարչական շրջանի դեկավարի տրամադրած շինարարության թույլտվության համար հիմք է հանդիսացել ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա մշակված և համաձայնեցված նախագիծը: Կառուցապատողը, ունենալով անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթեր, սկսել է շինարարական աշխատանքներ: Տեղագնությամբ պարզվել է, որ կառուցապատողի բնակելի տան վերակառուցման աշխատանքներն իրականացվել են համաձայնեցված նախագծից էական շեղումով՝ իրականացվել է մանսարդային հարկի շինարարական աշխատանքներ:

Հարկ է նշել, որ վերը նկարագրված երկու դեպքում վարչական մարմինները չեն իրականացրել պատշաճ վարչարարություն: Առաջին դեպքում վարչական մարմնի կողմից, առանց տեղանքը պատշաճ ուսումնասիրելու, կառուցապատողին տրվել են համապատասխան քաղաքաշինական փաստաթղթեր, արդյունքում այլ անձի գույքին հասցվել է վնաս և առաջացել են քաղաքաշինական, ինսուլացիոն, հրդեհային անվտանգության նորմերի պահպանման տեսանկյունից խնդիրներ: Երկրորդ դեպքում՝ վարչական մարմնի կողմից տրվել են քաղաքաշինական փաստաթղթեր, սակայն պատշաճ հսկողություն չի իրականացվել կառուցապատողի կողմից շինարարության ընթացքում նախագծային էական շեղումներ թույլ չտալու ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. վարչարարություն իրականացնելիս պահպանել քաղաքաշինական նորմերի և կանոնների պահանջները, պատշաճ հսկողություն իրականացնել կառուցապատողին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների պահանջների կատարման նկատմամբ՝ բացառելով տրված շինարարության թույլտվության արդյունքում այլ անձանց իրավունքների խախտումը,*

*2. պատշաճ և հետևողականորեն իրականացնել ինքնակամ շինարարության դեպքերի կանխարգելում, կասեցում և դրանց հետևանքների վերացումը:*



### ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Աշխատանքային իրավունքների ապահովումը պետք է լինի պետության առաջնահերթությունների ցանկում՝ որպես գրավական ՄԱԿ-ի կայուն զարգացման թիվ 8 նպատակի իրագործման, այն է՝ խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար:

Աշխատանքն առմամբ ոչ միայն յուրաքանչյուրիս կենսաապահովման, այլև անհատական և մասնագիտական կայացվածության և ի վերջո քաղաքացիական հասարակության ձևավորման նախապայմաններից է: Եվ այս առումով, աշխատանքային իրավունքների երաշխավորման հարցում պետությունների հանձնառությունը նախևառաջ պետք է պայմանավորված լինի հասարակության բնականոն զարգացումն ապահովելու հեռանկարով:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները և ուսումնասիրությունները վկայում են, որ շատ խնդիրներ մնում են չբարձրաձայնված՝ այդպիսով հանգեցնելով աշխատանքային իրավունքների ոտնահարման դեպքերի շարունակականության: Սա պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնցից են՝ օրենսդրական թերի կարգավորումները և բացերը, աշխատանքը կորցնելու մտավախությունը, իրավունքների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը և այլն:

#### ***1. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը***

Անցած տարիների ընթացքում՝ սկսած 2015 թվականից, Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները թե՛ տարեկան հաղորդումների շրջանակում, թե՛ հանրային քննարկումների ընթացքում բարձրաձայնել են աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայության և դրանից բխող խնդիրների մասին: Բազմիցս ներկայացվել է այն տեսակետը, որ աշխատանքային իրավունքների առավել պաշտպանվածության համար հարկ է ստեղծել նման արտադատական մարմին կամ գործող տեսչական մարմին վերապահել այնպիսի լիազորություններ, որոնցով վերջինս, բացի աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողությունը և վերահսկողությունը, իրավասու լինի նաև վերահսկել աշխատանքային իրավունքների պահպանումը և հանդես գալ որպես այդ իրավունքների խախտումները կանխարգելող արտադատական մարմին:

Նմանատիպ մարմին՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը, որն օժտված էր գործատուների կողմից ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահպանման նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնելու հիմնական գործառնություն, Հայաստանի Հանրապետությունում գործում էր 2004 թվականից: Սակայն 2013 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ

աշխատանքի պետական տեսչությունը վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության<sup>74</sup>:

Վերջինս, լինելով ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավահաջորդը, այնուամենայնիվ 2015 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխության արդյունքում չունենալով նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություն:

Խնդիրն առավել առարկայական է նաև այն նկատառմամբ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ևս աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու լիազորություններ չունի, ինչի պատճառով, օրինակ՝ աշխատավարձի վճարման, աշխատաժամանակի և հանգստի ռեժիմների պահպանման, աշխատանքային հարաբերությունների ծագման և դադարման, նվազագույն երաշխիքների ու հատուցումների տրամադրման ոլորտները դուրս են մնացել պետական հսկողության և վերահսկողության տիրույթից:

Արդյունքում, աշխատանքային ոլորտում առկա առերևույթ խնդիրների և իրավունքների խախտումների առկայության պարագայում ծագող աշխատանքային վեճերի լուծման միակ հնարավոր տարբերակը դատարան դիմելն է: Մինչդեռ, մարդիկ շատ հաճախ խուսափում են իրենց խախտված իրավունքների վերականգնման համար դիմել դատարաններ՝ հաշվի առնելով դատարաններում գործերի քննության տևականությունը, ձգձգումները, գործատու-աշխատող հարաբերությունները չվնասելու մտավախությունը և այլն:

Միջազգային մի շարք փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարող ենք հստակորեն փաստել աշխատանքային հարաբերությունների մշտադիտարկման անհրաժեշտության և կարևորության մասին:

Այսպես, Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիայով սահմանվում է անդամ պետությունների պարտավորությունը ստեղծելու արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում աշխատողների աշխատանքային պայմաններին ու պաշտպանությանը վերաբերող իրավական կարգավորումների կիրառումն ապահովող համակարգ<sup>75</sup>: Կոնվենցիայում առկա է հստակ կարգավորում, որ աշխատանքային հարաբերությունների վերահսկման լիազոր մարմինը կազմակերպական առումով պետք է ստեղծվի կենտրոնական մարմիններին կից, նրանց հսկողության ներքո:

Նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի տեսչության համակարգի գործառույթներն են՝ աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքի պայմանների և պաշտպանության հետ կապված իրավական դրույթների կատարման ապահովումը, ինչպիսիք են աշխատանքային օրվա տևողության, աշխատավարձի, անվտանգության, առողջապահության և բարեկեցության դրույթները, երեխաների և երիտասարդների աշխատանքին առնչվող դրույթները և նմանատիպ այլ հարցերը՝ այնքանով, որքանով դրանց կատարումն ապահովելու համար լիազորված են աշխատանքի տեսուչները, այդ դրույթների պահպանման առավել արդյունավետ միջոցների մասին գործատուներին և աշխատողներին տեխնիկական տեղեկատվություն և խորհուրդներ տրամադրելը, ինչպես նաև գործող իրավական դրույթներով հատուկ չկարգավորված թերությունների և չարաշահումների մասին իրավասու մարմնին տեղեկացնելը:

<sup>74</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշումը:

<sup>75</sup> Տե՛ս «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» ԱՄԿ թիվ 81 կոնվենցիա, հոդվածներ 1-3:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով և սահմանվում է, որ յուրաքանչյուր կողմ, ազգային պայմաններին համապատասխան, պետք է ունենա աշխատանքային վերահսկողության համակարգ<sup>76</sup>:

Պետք է արդարացիորեն նշել, որ պետությունն արդեն իսկ նախաձեռնել է որոշակի քայլեր ներկայացված խնդրի լուծման ուղղությամբ: Այսպես, ՀՀ կառավարության «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N-1978 որոշման առաջին հավելվածում նշվում է, որ աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունն անկյունաքարային նշանակության խնդիր է: Նշված խնդրի լուծման ուղղությամբ, ըստ վերը նշված փաստաթղթի՝ նախատեսվում է սեղմ ժամկետներում ՀՀ աշխատանքային օրենսգրքում և ոլորտի այլ իրավական ակտերում փոփոխությունների իրականացման հիման վրա ստեղծել աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային ազատությունների և իրավունքների պահպանման ու պաշտպանության ապահովման, աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի խախտումների վերացման ու կանխարգելման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասություն ունեցող արտադատական մարմին: Մասնավորապես, վերը նշված որոշման երկրորդ հավելվածով հաստատված միջոցառումների ծրագրի 71-րդ կետով նախատեսվում է մինչև 2020 թվականի երկրորդ կիսամյակ օրենսդրորեն ամրագրել աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական և արդյունավետ պետական վերահսկողության համակարգի ներդրումը:

Դրանից բացի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված պարզաբանումների համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների հետ համագործակցության արդյունքում ընդունվել են աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության շրջանակների ընդլայնում նախատեսող իրավական հիմքերը: Մասնավորապես, 2021 թվականի հուլիսի 1-ից սկսած՝ առողջության պահպանման և անվտանգության ապահովման նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողությունից զատ իրականացվելու է վերահսկողություն նաև աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի այլ պահանջների, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ: Ըստ նախարարության 2020 թվականի հունվարին տրված պարզաբանման՝ մշակման և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման փուլում է գտնվում նշված օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը:

Աշխատողների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակասը հաջորդն է այն հանգամանքներից, որը բերում է իրավունքների խախտումների և դրանց չբացահայտման: Իրազեկման պակասը բացասական ազդեցություն ունի նաև աշխատանքային իրավունքների խախտման կանխարգելման նկատմամբ: Աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումներ ներկայացրած անձանց հետ առանձնազրույցները բացահայտում են այն իրողությունը, որ նրանցից շատերը տեղյակ չեն իրենց իրավունքների վերականգնման օրենսդրական մեխանիզմների մասին, չեն կարողանում իրացնել սեփական իրավունքները: Պետք է հստակորեն փաստել, որ աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունն ուղիղ համեմատական է աշխատանքային իրավունքների խախտումների նախականիմանը և խախտված իրավունքների վերականգնմանը:

<sup>76</sup> Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, մաս 3, հոդված Ա, կետ 4:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս հանդես է գալիս աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկող միջոցառումներով, ինչպես նաև հրապարակում իրազեկող տեսանյութեր: Աշխատանքային իրավունքների հետ կապված առավել հաճախ բարձրացվող հարցերի հաշվառմամբ՝ այդ իրազեկող տեսանյութերը մատչելի ձևով անդրադարձ են կատարում, օրինակ, աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերին կամ երեխա խնամող անձանց աշխատանքային իրավունքներին ու երաշխիքներին: Ավելին, 2019 թվականի փետրվար ամսին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է աշխատողների իրավունքների վերաբերյալ ուղեցույց, որը նույնպես ուղղված է եղել հասարակությունում աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրավունքների իրազեկման բարձրացմանը<sup>77</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականի ընթացքում շարունակել է իրականացնել անձանց՝ աշխատանքային իրավունքների իրազեկման բարձրացմանն ուղղված քայլեր, հանրությանն է ներկայացրել իրազեկող տեսանյութեր<sup>78</sup> և այլն:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքում և ոլորտի այլ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնց հիման վրա կստեղծվի արտադատական մարմին՝ աշխատանքի պայմանների, աշխատողների ազատությունների և իրավունքների պահպանման ու պաշտպանության ապահովման, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի խախտումների վերացման ու կանխարգելման նկատմամբ վերահսկողության իրավասությամբ,

2. զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության ուղիների վերաբերյալ:

## **2. Գործադուլի իրավունքի սահմանափակումը**

Գործադուլի իրավունքն արձանագրված է ինչպես միջազգային փաստաթղթերով, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրությամբ: Այսպես, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածով սահմանվում է դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետության պարտավորությունն ապահովել գործադուլի իրավունքը՝ այն տվյալ երկրի օրենքներին համապատասխան իրականացնելու պայմանով<sup>79</sup>: Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով խարտիայի կողմերը ճանաչում են շահերի բախման դեպքում աշխատողների և գործատուների համատեղ գործողությունների անցկացման իրավունքը՝ ներառյալ

<sup>77</sup> Տե՛ս «Ուղեցույց աշխատողների իրավունքների վերաբերյալ», հասանելի է <https://www.ombuds.am/images/files/7b34d18bae3af252c627266d076e29c5.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>78</sup> Տե՛ս «Ե՞րբ է լուծվում աշխատանքային պայմանագիրը», հասանելի է <https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/227> հղումով: «Ի՞նչ աշխատանքային արտոնություններ ունեն հղի և մինչև 3 տարեկան երեխա խնամող կանայք», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/792> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>79</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, հասանելի է <http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գործադուլների իրավունքը՝ այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից<sup>80</sup>:

ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածով սահմանվում է աշխատողների՝ իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը: Նույն հոդվածով ամրագրված է նաև, որ գործադուլի իրականացումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

Մինչդեռ, պետք է նշել, որ աշխատանքային օրենսգրքի՝ գործադուլի իրավունքի իրացումը կարգավորող նորմերը նեղացնում են գործադուլ հայտարարելու աշխատողի սահմանադրական իրավունքի բովանդակությունը:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գործադուլը *կոլեկտիվ աշխատանքային վեճի լուծման նպատակով* մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է: Գործադուլի հասկացությունը տվող վերոնշյալ կարգավորման վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ աշխատողների գործադուլի իրավունքն Աշխատանքային օրենսգրքով սահմանափակվում է կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ: Գործադուլի՝ սույն կարգավորմամբ տրված հասկացության խնդրահարույց լինելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանների նախորդ տարիներին հրապարակված զեկույցներում բարձրաձայնվել է՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործադուլը կհամարվի՝ անօրինական, եթե այն իրականացվի ոչ թե կոլեկտիվ աշխատանքային վեճի, այլ մեկ ուրիշ՝ սոցիալական, տնտեսական կամ այլ իրավունքների պաշտպանության համար: Նշվածն էլ ավելի խնդրահարույց է դառնում այն հանգամանքի հաշվառմամբ, որ անօրինական գործադուլի պարագայում կիրառվելու են Աշխատանքային օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում է ներկայացրել նաև Սահմանադրական դատարանը 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՍԴՈ-677 որոշմամբ: Դատարանը նշել է, որ գործադուլի իրավունքն առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին<sup>81</sup>: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը ևս ընդունելի չի համարում այն կարգավորումը, որ աշխատողի գործադուլի իրավունքը սահմանափակվում է միայն կոլեկտիվ վեճի առկայությամբ: Սակայն, պետք է փաստել, որ այս տարիների ընթացքում օրենսդրական փոփոխություններ չեն իրականացվել, և գործող կարգավորումը մինչ օրս շարունակում է մնալ խնդրահարույց: Մինչդեռ, օրինակ, 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին գործնականում ևս պարզ դարձավ, թե որքան կարևոր դեր են խաղում ոչ միայն կոլեկտիվ աշխատանքային վեճերի, այլ նաև այլ հանգամանքների առնչությամբ իրականացվող գործադուլները:

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը «Գործադուլի վերաբերյալ ԱՄԿ սկզբունքները» աշխատությունում հստակ նշում է, որ գործադուլի միջոցով ներկայացվող

<sup>80</sup> Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պահանջները կարող են վերաբերել աշխատանքային պայմաններին, արհմիությունների իրավունքների երաշխավորմանը կամ ունենալ քաղաքական բնույթ<sup>82</sup>:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի մայիսի 16-ին ՀՀ կառավարությունն ընդունել է N 650-Լ որոշումը, որով հաստատվել է ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը:

Ցանկի 4-րդ նպատակի 4.2-րդ միջոցառմամբ նախատեսվում է աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթների համապատասխանության վերլուծության, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների վերհանման արդյունքում, ինչպես նաև որոշակի խմբերի համար աշխատանքային պայմանագրի լուծման պարագայում առանձին երաշխիքների սահմանման նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների նախագծի մշակում և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացում՝ մինչև 2021 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ: Նշված միջոցառման շրջանակներում նախատեսվելու է նաև փոփոխություն կատարել գործադուլին վերաբերող կարգավորման մեջ՝ համապատասխանեցնելով այն միջազգային պայմանագրերի պահանջներին:

Չնայած վերոգրյալին՝ հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքում աշխատողների գործադուլի անցկացման իրավունքն ընդլայնելու (գործադուլի անցկացման հնարավորության ընձեռում նաև կոլեկտիվ աշխատանքային վեճի բացակայության պայմաններում) ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ 2019 թվականին չեն իրականացվել, և խնդիրը շարունակել է մնալ արդիական:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունք ունի արհեստակցական միությունը՝ նույն օրենսգրքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով: Գործադուլը հայտարարվում է այն դեպքում, եթե այդ մասին որոշումը գաղտնի քվեարկությամբ հավանության է արժանացել կազմակերպությունում գործադուլ հայտարարելիս՝ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի կողմից կամ կազմակերպության առանձնացված (կառուցվածքային) ստորաբաժանումում գործադուլ հայտարարելիս՝ այդ ստորաբաժանման աշխատողների երկու երրորդի կողմից: Եթե կազմակերպության առանձնացված ստորաբաժանումում գործադուլ հայտարարելը խոչընդոտում է կազմակերպության մյուս ստորաբաժանումների բնականոն գործունեությանը, ապա գործադուլ հայտարարելու որոշումը պետք է հավանության արժանանա այդ ստորաբաժանման աշխատողների երկու երրորդի կողմից, որը չի կարող պակաս լինել կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի կեսից:

«Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածի հիմքով գործադուլ հայտարարելու համար աշխատողների ընդհանուր թվի 2/3-ը չապահովելու պատճառով գործադուլ չիրականացնելու դեպքեր չեն արձանագրվել: Գործադուլ հայտարարելու գործընթացում

<sup>82</sup> Տե՛ս «Գործադուլի վերաբերյալ ԱՄԿ սկզբունքները», Բ. Գերնիգոն, Ա. Օդերո, Հ. Գուիդո, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ժնև, էջ 13; հասանելի է [http://ilo.org/wcmsp5/groups/public/@ed\\_norm/@normes/documents/publication/wcms\\_087987.pdf](http://ilo.org/wcmsp5/groups/public/@ed_norm/@normes/documents/publication/wcms_087987.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

առկա հիմնական խոչընդոտը կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի 2/3-ի համաձայնությունն ապահովելն է, որի կապակցությամբ «Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով 2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ստեղծված աշխատանքային խմբին առաջարկել է Օրենսգրքի 74-րդ հոդվածում 2/3-րդ թիվը փոխարինել 1/3-րդ թվով՝ հիմք ընդունելով Աշխատանքի միջազգային կազմակերպության փորձագետների դիտողությունները և առարկությունները նշված դրույթի վերաբերյալ:

Վերոգրյալ կարգավորումները գործադուլի իրավունքի իրացման ճանապարհին առաջացնում են դժվարություններ այն կազմակերպությունների համար, որտեղ բացակայում են արհեստակցական միություններ: Գործադուլ հայտարարելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնության պահանջն էլ իր հերթին գործնականում հնարավորություն չի տալիս իրացնելու ՀՀ սահմանադրության 58-րդ հոդվածով սահմանված գործադուլի իրավունքը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. օրենսդրորեն ամրագրել գործադուլի իրավունքի առավել ընդգրկուն բովանդակություն,*
- 2. գործադուլի իրականացման ավելի լայն կարգ սահմանել, որը թույլ կտա գործադուլ իրականացնել ոչ թե աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի, այլ, օրինակ, մեկ երրորդի համաձայնությամբ:*

### ***3. Աշխատանքային իրավահարաբերություններում արհմիությունների դերի բարձրացումը***

Արհմիությունները կարևոր դեր ունեն սոցիալական գործընկերության բոլոր մակարդակներում: Արհմիությունների դերի բարձրացումը և ինստիտուցիոնալ հզորացումն անհրաժեշտ է նաև աշխատողների իրավունքների և սոցիալական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Արհեստակցական միությունների գործառույթները, լիազորություններն ամրագրված են «Արհեստակցական միությունների մասին» և աշխատանքային օրենսդրությամբ: Չնայած օրենսդրական հիմքերի առկայությանը՝ թե՛ ոլորտի մասնագետները, թե՛ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մշտապես բարձրաձայնում են առկա խնդիրների և արհմիությունների հզորացման կարևորության մասին:

Առկա իրավիճակն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևով բացասական ազդեցություն է ունենում աշխատողների իրավունքների և սոցիալ-տնտեսական երաշխիքների ապահովման վրա:

Ավելին, աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների ոչ բավարար ներգրավվածության խնդիրը հաշվի առնելով՝ Պաշտպանը սկզբունքային մտահոգություն է հայտնել կողմերի հայեցողությամբ հարցերի ավելի լայն շրջանակ սահմանելու՝ համապատասխան գերատեսչությունների շրջանառած օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ: Այսպես, դեռևս 2018 թվականից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, այնուհետև ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը շրջանառել են «Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որում մի շարք կարգավորումների շարքում ներկայացվել էին այնպիսիք, որոնցով սահմանվում էին աշխատանքային հարաբերությունների որոշ առանձնահատկություններ կողմերի համաձայնությամբ կարգավորելու և դրանք աշխատանքային պայմանագրում ամրագրելու

հնարավորություն: Մասնավորապես, նախատեսվում էր Աշխատանքային օրենսգրքի «Ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդներ» վերտառությամբ 160-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել, որ ամենամյա երկարացված և ամենամյա լրացուցիչ արձակուրդների տևողությունները սահմանվում են կողմերի համաձայնությամբ և ամրագրվում աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում, իսկ «Արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի վարձատրությունը» վերտառությամբ 184-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում էր ամրագրել, որ արտաժամյա աշխատանքի և գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար ժամային դրույքաչափից բացի վճարվող հավելումների չափը որոշվելու է կողմերի համաձայնությամբ և ամրագրելու աշխատանքային և (կամ) կոլեկտիվ պայմանագրերում:

Մի շարք երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Մալթայի<sup>83</sup> և այլ երկրների համապատասխան փորձի ուսումնասիրմամբ կարող ենք արդարացիորեն փաստել, որ վերոգրյալ կարգավորումները միջազգային չափանիշների<sup>84</sup> համապատասխանության տեսանկյունից վիճահարույց չեն: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային իրավունքների խախտումների տարածվածությունը, իրազեկման պակասը, աշխատանքային վեճերի լուծման ճկուն կառուցակարգերի բացակայությունը, ինչպես նաև սույն գլխում բարձրացված խնդիրները մտահոգության հիմք են ստեղծում, որ առաջարկվող կարգավորումները ռիսկեր են պարունակում աշխատողների պաշտպանվածության տեսանկյունից:

Այսպես, նախևառաջ աշխատանքային հարաբերությունները կողմերի համաձայնությամբ կարգավորելու և դրանք աշխատանքային պայմանագրով նախատեսելու հնարավորության ամրագրումն ու այդպիսով կողմերի հայեցողության մեծացումը կարող է հանգեցնել գործատուների տարբեր բնույթի չարաշահումների:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կատարած ուսումնասիրությունների և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի հետ քննարկումների արդյունքները փաստում են, որ Հայաստանի Հանրապետությունում արհեստակցական միություններն ակտիվորեն ներգրավված չեն աշխատանքային իրավահարաբերություններում: Այս առումով ընդունելի չէ այն տրամաբանությունը, որ օրենսդրական նման փոփոխությունների և աշխատանքային մի շարք հարաբերություններ կողմերի համաձայնությամբ կարգավորելու և դրանք աշխատանքային պայմանագրում ամրագրելու հնարավորության օրենսդրական ամրագրումը հնարավորություն կտա ապահովել արհեստակցական միությունների դերի բարձրացումը, աշխատանքային

---

<sup>83</sup> Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ սահմանված է, որ արտաժամյա աշխատանքի կազմակերպման և իրականացման պայմանները որոշվում է աշխատանքային պայմանագրով (հասանելի է <https://www.gov.uk/overtime-your-rights> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ): Իտալիայի աշխատանքային օրենսդրությամբ սահմանվում է, որ կոլեկտիվ պայմանագրով կարող են նախատեսվել արտաժամյա աշխատանքի տարբեր սահմանաչափեր (հասանելի է [https://www.ilo.org/ifpdial/information-resources/national-labour-law-profiles/WCMS\\_158903/lang--en/index.htm](https://www.ilo.org/ifpdial/information-resources/national-labour-law-profiles/WCMS_158903/lang--en/index.htm) հղումով): Ըստ Մալթայի աշխատանքային օրենսդրության՝ արտաժամյա աշխատանքը կարող է կատարվել կողմերի համաձայնությամբ, որն իրականացվում է աշխատողի համար հանգստի նվազագույն տևողությունների պահպանմամբ (հասանելի է [https://www.ilo.org/ifpdial/information-resources/national-labour-law-profiles/WCMS\\_158914/lang--en/index.htm](https://www.ilo.org/ifpdial/information-resources/national-labour-law-profiles/WCMS_158914/lang--en/index.htm) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ):

<sup>84</sup> Օր.՝ ԱՄԿ թիվ 98 կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի պայմանների կարգավորումը կոլեկտիվ պայմանագրերի կնքման ճանապարհով իրականացնելու համար, այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է, երկրի պայմաններին համապատասխան, միջոցներ են ձեռնարկվում մի կողմից ձեռնարկատերերի կամ ձեռնարկատերերի կազմակերպությունների և մյուս կողմից աշխատավորների կազմակերպությունների միջև կամավորության հիման վրա վարվող բանակցությունների գործընթացի լրիվ զարգացումը և օգտագործումն աջակցելու և խրախուսելու նպատակով:



հարաբերություններում սոցիալական գործընկերության դերի խորացումը և աշխատանքային հարաբերությունների համար զարգացման արդյունավետ, մրցակցային և կայուն հենքի ապահովումը:

Բանն այն է, որ աշխատանքային իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքների, այդ թվում՝ լրացուցիչ վարձատրության (հավելումներ, հավելվածարներ, լրավճարներ և այլն) սահմանման և դրանց հետագա փոփոխությունների վերաբերյալ կողմերի բանակցությունները, որպես աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեթոդ, կարող են հաջողել, երբ արհեստակցական միություններն ակտիվորեն ներգրավված լինեն աշխատանքային իրավահարաբերություններում: Այլ կերպ ասած, առավել նպատակահարմար է վերը նշված կարգավորումներն իրավական դաշտ ներմուծել արհմիությունների դերի և իրավահարաբերություններում ներգրավվածությունը բարձրացնելուց հետո միայն:

Հայաստանում արհմիությունների վերաբերյալ առկա խնդիրները բարձրաձայնվել են նաև ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ 2019 թվականի զեկույցում<sup>85</sup>: Մասնավորապես, հատուկ զեկուցողը մտահոգություն է հայտնել, որ Հայաստանում արհմիությունները շատ թույլ են, բացի այդ՝ արհմիությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և քաղաքական կազմակերպությունների միջև բացակայում են արդյունավետ քննարկումները: Հատուկ զեկուցողը մտահոգիչ է համարել նաև աշխատաշուկայի վերաբերյալ առկա ոչ բավարար օրենսդրական կարգավորումները, որոնք հնարավորություն են տալիս գործատուներին աշխատողներին ազատելու աշխատանքից առանց նրանց համար բավարար երաշխիքներ սահմանելու: ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի համոզմամբ՝ իրավական կարգավորման նման շրջանակը կարող է խոչընդոտել արհմիություններ ստեղծելու, կազմակերպելու և դրանց անդամակցելու՝ աշխատողների ազատությանը, քանի որ թե՛ պետական և թե՛ մասնավոր հատվածի գործատուներն ունեն գրեթե անսահմանափակ հայեցողություն և հեշտությամբ կարող են արդարացումներ գտնել այն աշխատողներին աշխատանքից ազատելու համար, ովքեր փորձել են ստեղծել և կազմակերպել «անցանկալի» արհմիություններ:

Պետք է նշել, որ 2019 թվականին ՀՀ կառավարությունը շրջանառում էր «Աշխատիր, Հայաստան» նախաձեռնությունը<sup>86</sup>, որի հիմնական ուղղություններից մեկն Արհմիությունների ինստիտուտի դերի բարձրացումն է: Մասնավորապես, ըստ նշված փաստաթղթի՝ նախատեսվում է իրականացնել արհմիությունների կոնֆեդերացիաների և ճյուղային արհմիությունների ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում, «Արհեստակցական միությունների մասին» օրենքի լրամշակում և ընդունում, արհմիությունների կոնֆեդերացիայի և ճյուղային արհմիությունների կարողությունների զարգացում և արհմիութենական շարժումը խթանող միջոցառումների իրականացում: Դրանց իրականացմամբ կապահովվեն նախադրյալներ արհմիությունների հզորացման և աշխատանքային հարաբերություններում բարձր ընդգրկվածության և ակտիվության համար, սակայն ներկա պահին խնդիրն արդիական է և մտահոգիչ:

<sup>85</sup> Տե՛ս ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույց, 2019 թվականի մայիսի 13, էջ 14: հասանելի է [https://ap.ohchr.org/documents/dpage\\_e.aspx?si=A/HRC/41/41/Add.4](https://ap.ohchr.org/documents/dpage_e.aspx?si=A/HRC/41/41/Add.4), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G19/136/82/PDF/G1913682.pdf?OpenElement>

հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>86</sup> Հասանելի է <https://www.e-draft.am/projects/2010> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենսդրական և գործնական քայլերով բարձրացնել արհմիությունների դերը և աշխատանքային իրավահարաբերություններում ներգրավվածությունը, ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը:*

#### **4. Աշխատանքային իրավունքների ոսնահարման դեպքեր**

2019 թվականի ընթացքում աշխատանքային իրավունքների ապահովման հետ կապված բողոքների շարունակականությունն ու մեծաքանակությունը վկայում են, որ ոլորտում դեռևս առկա են համակարգային խնդիրներ: Մասնավորապես, բողոքների քննարկման արդյունքներով կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները.

- 1) գործատուներն աշխատանքից ազատվող աշխատողների հետ վերջնահաշվարկ չեն կատարում,
- 2) աշխատողներն անհիմն ազատվում են աշխատանքից,
- 3) գործատուները չեն պահպանում աշխատողներին կարգապահական տույժերի ենթարկելու կարգը,
- 4) գործատուներն աշխատողների աշխատավարձերից անհիմն պահումներ են կատարում,
- 5) աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ այդ մասին գործատուներն աշխատողներին օրենքով սահմանված ժամկետներում չեն ծանուցում,
- 6) առանց աշխատողների համաձայնության գործատուները նրանց այլ աշխատանքի են փոխադրում և այլն: Այսպես.

##### **4.1 Աշխատանքից ազատվելիս վերջնահաշվարկի տրամադրման խնդիրներ**

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձինք բարձրացրել են աշխատանքից ազատվելիս իրենց հետ վերջնահաշվարկ չկատարելու խնդիրը<sup>87</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելը գործատուների պարտականությունն է, այլ ոչ թե իրավունքը: Մա ուղղակիորեն բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, որի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն *պարտավոր է* աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե նույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ:

Հարկ է նկատի ունենալ, որ նշված նորմով սահմանված՝ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսելու հնարավորությունը վերաբերում է ոչ թե վերջնահաշվարկ կատարելու կամ չկատարելու կողմերի հայեցողությանը, այլ վերջնահաշվարկի *կատարման կարգին*, օրինակ՝ ժամկետին, քանի որ հոդվածի նույն մասով սահմանված է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը: Գործատուն որևէ կերպ իրավասու չէ սահմանափակելու աշխատողի՝ աշխատանքից ազատվելուց հետո վերջնահաշվարկ ստանալու՝ սահմանափակման ոչ ենթակա իրավունքը: Թերևս միայն օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-ին մասով ամրագրված հիմքն է՝ նույն գործատուի կամ օրենքով սահմանված կարգով իրավահաջորդ ճանաչված գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրվելը

<sup>87</sup>Նշված խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ: Հասանելի է

<http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f463c0e6c42f12cb497d483739dec.pdf>

հղումով, էջեր 124-125:

(տեղափոխվելը), որի դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում: Օրենքով ամրագրված այս բացառության հիմքում թերևս ընկած է այն տրամաբանությունը, որ այլ աշխատանքի փոխադրմամբ չեն դադարում նույն սուբյեկտների միջև գործատու-աշխատող իրավահարաբերությունները՝ ըստ այդմ պահպանելով աշխատողի աշխատանքային իրավունքների շարունակականությունը (աշխատանքային ստաժի, արձակուրդի իրավունքի հաշվարկում և այլն):

Նշված խնդրի մասնավոր դրսևորումներից է վերջնահաշվարկը ոչ պատշաճ կատարելը: ՀՀ աշխատանքային օրենսգրքում հստակ թվարկված չեն վերջնահաշվարկի մեջ ներառվող գումարները, սակայն աշխատանքային օրենսդրության ընդհանուր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կատարվող վերջնահաշվարկի գումարի մեջ, աշխատողի չստացած աշխատավարձից և դրան հավասարեցված այլ եկամուտներից բացի, ներառվում են նաև չօգտագործված ամենամյա արձակուրդի դիմաց տրվող դրամական փոխհատուցման, ինչպես նաև արձակման նպաստի գումարները:

Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությանը դիմած քաղաքացիներից մեկը տեղեկացրել է, որ աշխատանքից ազատվելուց հետո վերջնահաշվարկ կատարելիս իրեն տեղեկացրել են, որ իր չօգտագործած ամենամյա արձակուրդի միայն 7 օրերի դիմաց են իրեն վճարելու, մինչդեռ, դիմողն ունեցել է ամենամյա արձակուրդի 20 չօգտագործված օր: Աշխատանքային օրենսդրությունն իրավական որևէ հիմք չի տալիս գործատուներին վերջնահաշվարկը մասնակի կատարելու կամ վերջնահաշվարկ կատարելիս որոշ տեսակի գումարներ չհաշվարկելու համար: Նշված դեպքում, թեև Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ քաղաքացու հետ վերջնահաշվարկը կատարվել է պատշաճ կարգով, նրան վճարվել է ամենամյա արձակուրդի չօգտագործած բոլոր 20 օրերին համարժեք գումար, սակայն խնդիրը համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ: Նմանատիպ մեկ այլ դեպքով էլ վերջնահաշվարկ կատարելիս գործատուն հրաժարվել է աշխատանքից ազատված աշխատողին վճարել փոխհատուցում նրա 7 տարվա չօգտագործած ամենամյա արձակուրդների դիմաց: Պաշտպանի միջամտությամբ գործատուի և աշխատողի միջև կազմվել է վճարման ժամանակացույց, որի հիման վրա ամեն ամիս անձին մաս-մաս վճարում է կատարվում նրա 7 տարիների չօգտագործած արձակուրդների դիմաց՝ նկատի ունենալով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

#### 4.2 Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը՝ օրենսդրության պահանջների խախտմամբ

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ շարունակում է արդիական մնալ օրենսդրական պահանջների խախտմամբ անձանց աշխատանքից ազատելու խնդիրը: Աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ մանրամասն կարգավորումներ է նախատեսում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ գլուխը, որի պահանջները գործատուները ոչ միշտ են պահպանում:

Այսպես, բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ աշխատել է ՀՀ ոստիկանությունում, գտնվում է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում: Դիմողը 2019 թվականին ծանուցվել է բաժանմունքի լուծարմամբ պայմանավորված՝ իրեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքում) աշխատանքից ազատելու մասին: Նշվածին անմիջապես հետևել է նրան ՀՀ աշխատանքային

օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով (արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում) աշխատանքից ազատելու մասին գործատուի հրամանը: Ընդ որում, աշխատանքից ազատելիս դիմողին այլ աշխատանք չի առաջարկվել: Աշխատանքից ազատվելով՝ դիմողը միաժամանակ զրկվել է մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստից:

Թեև կոնկրետ դեպքում Պաշտպանի գործուն աջակցությամբ քաղաքացին վերականգնվել է նախկին աշխատանքում, այդուհանդերձ, աշխատանքային իրավունքների երաշխավորման տեսանկյունից համակարգային առումով մտահոգության տեղիք է տալիս աշխատանքային օրենսդրության դրույթների ոչ ճիշտ մեկնաբանությունն ու կիրառությունը, որոնք վերաբերում են աշխատողին աշխատանքից ազատելու օրենսդրական արգելքներին ու ընթացակարգային երաշխիքներին:

Այսպես, աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը բխում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքներից: ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-902 որոշմամբ արձանագրել է, որ աշխատանքի ընտրության ազատությունը ներառում է, ի թիվս այլնի, աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաև *արդեն ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը*: Մեկ այլ՝ 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1449 որոշմամբ Դատարանը վերահաստատել է, որ Սահմանադրության՝ «Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները» վերտառությամբ 57-րդ հոդվածը, որն ամրագրում է աշխատանքի ընտրության ազատությունը և երաշխավորում աշխատանքային իրավունքները, ի թիվս այլնի, ամրագրում է *յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունքը*:

Խնդրի կապակցությամբ հարկ է անդրադառնալ նաև ոլորտի վերաբերյալ առկա միջազգային կարգավորումներին: Այսպես, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 24-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանվել է, որ աշխատանքից ազատելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են ճանաչել բոլոր աշխատողների իրավունքը, երաշխավորել, որ նրանց աշխատանքից ազատելու դեպքում չպետք է դադարի առանց նման ազատման համար հիմնավորված պատճառների, որոնք կապված են նրանց ընդունակության կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին մասի համաձայն՝ աշխատող կանայք մայրության դեպքում հատուկ պաշտպանվածության իրավունք ունեն: Ավելին, Խարտիայի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ ընտանեկան պարտականություններ ունեցող, ամուսնացող կամ ամուսնանալու ցանկություն ունեցող բոլոր աշխատող անձինք ունեն այդ ամենի իրավունքն առանց խտրականության ենթարկվելու և, որքան հնարավոր է, առանց աշխատանքի և ընտանեկան պարտականությունների հակասության: Խարտիայի 8-րդ հոդվածն ամրագրում է նաև աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքը, որի 2-րդ մասի համաձայն՝ աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են *համարել անօրինական գործատուի՝ կնոջն աշխատանքից ազատման ծանուցում տալն այն ժամանակաշրջանից սկսած, երբ կինը ծանուցում է իր գործատուին իր հղիության մասին, մինչև նրա մայրությանը հասկացված արձակուրդի*

վերջը, կամ՝ նրան աշխատանքից ազատման ծանուցում տալն այնպիսի ժամանակ, որ ծանուցման ժամկետը կվերջանա վերոնշյալ ժամանակաշրջանում:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, 6-րդ հոդվածով ամրագրելով աշխատանքի իրավունքը, առանձին՝ 10-րդ հոդվածի 2-րդ մասով ևս սահմանում է, որ նույն դաշնագրին մասնակցող պետությունները ընդունում են, որ հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի մայրերին՝ *մինչև ծննդաբերությունը և դրանից հետո ընկած խելամիտ ժամանակաշրջանի ընթացքում*: Վերոնշյալ միջազգային փաստաթղթերը և ՀՀ օրենսդրության կարգավորումները վկայում են, որ պետությունն ընդունում է որոշակի խումբ անձանց, օրինակ՝ հղի կանանց և մինչև մեկ տարեկան երեխա խնամողների համար հատուկ արտոնությունների նախատեսումը, ինչպիսին է գործատուի նախաձեռնությամբ որոշակի դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծման արգելքը:

Անդրադառնալով արձակուրդում գտնվող աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու վերը նշված դեպքին, հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը *գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից*: Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն արգելում է *աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ աշխատողի՝ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում*:

Ավելին, Սահմանադրական դատարանը, 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1449 որոշմամբ քննարկման առարկա դարձնելով աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողին օրենքով տրված երաշխիքները, նշել է, որ «Օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանվում են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքները, որոնք աշխատողների իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ են: *Եթե գործատուն նախատեսում է աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատում և դրա արդյունքում այս կամ այն աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի լուծում, ապա այդ գործընթացը նախաձեռնելու պահից գործատուն պետք է ստուգի արդյոք Օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված այս կամ այն երաշխիքը տարածվում է տվյալ աշխատողի վրա*: Այսպիսով, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում առկա են ընդհանուր և հատուկ երաշխիքներ: *Ընդհանուր երաշխիքը գործատուի կողմից իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու պարտականությունն է*: Միաժամանակ, օրենսդրությամբ նախատեսված են նաև *հատուկ երաշխիքներ, որոնք արգելում են աշխատանքային պայմանագրի լուծումը, ուստի այդ պարագայում համապատասխան երաշխիքներից օգտվող աշխատողներին այլ աշխատանք առաջարկելու անհրաժեշտություն չկա, քանի որ նշված աշխատողների հետ աշխատանքային պայմանագրի լուծումն արդեն իսկ արգելված է*»:

Մեկ այլ դեպքով, անձը տեղեկացրել է, որ ուսուցչի հաստիքին զուգահեռ տևական ժամանակ զբաղեցրել է ուսումնական գծով փոխտնօրենի պաշտոնը: Դիմողին գործատուն բանավոր կերպով տեղեկացրել է, որ ազատված է փոխտնօրենի պաշտոնից: Դիմողն այդպես էլ չի ստացել իրեն աշխատանքից ազատելու մասին հրամանը: Դրանից բացի, իբրև աշխատանքային օրենսդրության պահանջների խախտում՝ կոնկրետ դեպքում դիտարկվել է, որ աշխատողին տրված ծանուցագրում նշվել է միայն աշխատանքային պայմանագրի

լուծման պատճառը (աշակերտների թվի և բյուջեի կրճատում), իսկ պայմանագրի լուծման հիմքը բացակայել է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ի թիվս այլնի, աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ նշվում են աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը: Ակնհայտ է, որ դիմողին աշխատանքից ազատելիս չեն պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերը նշված պահանջները:

Իբրև բարձրացված խնդրի լուծում՝ իրավասու մարմինը (մարզպետարանը) Պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել է, որ դիմողը վերականգնվել է փոխտնօրենի պաշտոնում:

Անձի՝ որպես աշխատողի իրավունքների վերականգնման առումով, սակայն, ձեռնարկված քայլերը բավարար չեն եղել, քանի որ քաղաքացին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված լրացուցիչ դիմումով տեղեկացրել է, որ *ինքը ոչ թե վերականգնվել է նախկին աշխատանքում, այլև դպրոցի տնօրենն իր հետ կնքել է աշխատանքային նոր պայմանագիր:*

Մրա հետ կապված, հարկ է նկատել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ գործատուի իրավական ակտն անվավեր ճանաչելով: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի ընդհանուր ուսումնասիրությունից հետևում է, որ աշխատողի խախտված իրավունքների վերականգնումը ենթադրում է ոչ թե նրա հետ նոր աշխատանքային պայմանագիր կնքելը, այլ նրան նախկին աշխատանքում վերականգնելը, ինչը կարող է ապահովվել նրան աշխատանքից ազատելու մասին հրամանն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելով: Նշված հիմնավորումները մարզպետարանին ներկայացնելուց հետո Պաշտպանին դիմած քաղաքացու աշխատանքային իրավունքները լիովին վերականգնվել են. դպրոցի տնօրենի հրամանով անվավեր է ճանաչվել դիմողին փոխտնօրենի պաշտոնից ազատելու մասին հրամանը, և Պաշտպանի աջակցությամբ դիմողը վերականգնվել է նախկին աշխատանքում:

#### 4.3 Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության օրենսդրական չափանիշների բացակայությունը

2019 թվականին բողոքներ են եղել, որ հաստիքների կրճատման հիմքով անձանց աշխատանքից ազատելու դեպքում գործատուները ոչ արդար մոտեցում են ցուցաբերել: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հաստիքների կրճատման հիմքով աշխատանքից ազատելիս կրճատվող հաստիքները զբաղեցնող աշխատողների ընտրության չափանիշների բացակայության խնդրին<sup>88</sup>:

Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ բարձրացված մտահոգություններն արդարացված են այն առումով, որ հաստիքի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշելիս գործատուն առաջնորդվում է սեփական հայեցողությամբ, ինչի հետևանքով լինում են դեպքեր, երբ

<sup>88</sup> Խնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ. հասանելի է <http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/0e3f463c0e6c42f12cb497d483739dec.pdf>

հղումով, էջ 126:

աշխատանքից ազատվում է առավել երկար աշխատանքային ստաժ, առավել բարձր դասային աստիճան կամ կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող աշխատողը՝ տեղը զիջելով այդ չափանիշներին նվազ բավարարող աշխատողին:

Ուստի, գործնականում առաջ եկած խնդիրների լուծումը, մեր համոզմամբ, պետք է տրվի հաստիքների կրճատման հիմքով աշխատողներին աշխատանքից ազատելու դեպքում կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատողների միջև ընտրության որոշակի չափանիշների սահմանմամբ: Ստացված դժգոհությունների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ ըստ Պաշտպանին դիմած քաղաքացիների պնդման՝ հաստիքների կրճատումը շատ հաճախ «անցանկալի» աշխատողներից ազատվելու միջոց է գործատուների համար, ինչն անթույլատրելի է: Սա խնդիր է, որին հնարավոր է լուծում տալ օրենսդրական համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով, քանի որ փորձը վկայում է, որ գործատուները բարեխղճորեն չեն իրացնում հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունն այս կամ այն աշխատողին տալու իրենց հայեցողությունը: Հատկանշական է, որ օրենսդրական այս բացը լրացնելուն ուղղված նախագծային տարբեր լուծումներ եղել են, որոնցից ոչ մեկն օրենսդրական ամրագրում չի ստացել:

Մասնավորապես, օրենսդրական նախաձեռնություններից մեկով առաջարկվել էր Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով, որի համաձայն՝ *«Անկախ գործատուի սեփականության ձևից և կազմակերպարարական տեսակից, աշխատողների հաստիքները կամ թվաքանակը կրճատվելու, ինչպես նաև հավասար որակավորման կամ արտադրողականության դեպքում աշխատելու նախապատվությունը տրվում է՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս գոհված, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի ընտանիքի անդամներին՝ ծնողին, կնոջը, երեխային, ինչպես նաև ընտանիքի անդամ հանդիսացող քրոջը և եղբորը, եթե նրանց ընտանիքում ինքնուրույն վաստակով այլ աշխատող չկա:»<sup>89</sup>:*

Օրենսդրական փոփոխությունների մեկ այլ նախագծով առաջարկվում էր օրենսգրքում ամրագրել «Հղի կանանց, մինչև երեք տարեկան երեխա խնամող և անչափահաս երեխա ունեցող աշխատողների երաշխիքները» վերտառությամբ դրույթ, համաձայն որի՝ *«Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով աշխատողների քանակի և հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողներին, այս պայմանի հավասարության դեպքում՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող աշխատողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ առավել շատ անչափահաս երեխա ունեցող աշխատողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող աշխատողին:»<sup>90</sup>:*

Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ ներկայացված առաջարկների հիմքում ընկած է որոշակի խումբ անձանց նախապատվությունը՝ սոցիալական գործոնով պայմանավորված: Սոցիալական բաղադրիչի հաշվառման ընդհանուր մոտեցումը սկզբունքորեն ընդունելի համարելով՝ կարծում ենք, որ քննարկվող չափանիշների ամրագրումը պետք է իրականացվի նաև աշխատողի գործնական հատկանիշների, մասնագիտական պատրաստվածության և որակավորման չափանիշների հաշվառմամբ:

<sup>89</sup> Հասանելի է <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9351&Reading=0> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>90</sup> Հասանելի է <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4968&Reading=0&lang=arm&enc=utf8> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

#### 4.4 Աշխատողին կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով աշխատանքից ազատելը

2019 թվականի ընթացքում դիտարկված խնդիրներից է կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով անձին աշխատանքից ազատելը սահմանված կարգի խախտմամբ: Խնդիրը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով անձին աշխատանքից ազատելու հնարավորությունը սահմանված չէ աշխատանքային պայմանագրով, սակայն գործատուի քայլերը միտված են կենսաթոշակային տարիքի հասած աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելուն: Այսպես, նման դեպքերում գործատուներն առանց որևէ իրավաչափ հիմնավորման կենսաթոշակային տարիքը լրացած աշխատողների հետ կնքում են որոշակի ժամկետով պայմանագիր (ինչը, որպես կանոն, չի գերազանցում 1 տարվա ժամկետը), այնուհետև պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո այդ հիմքով աշխատողներին ազատում են աշխատանքից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, բացառությամբ նույն օրենսգրքի 95-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Նույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր է կնքվում, եթե աշխատանքային հարաբերությունները չեն կարող որոշվել անորոշ ժամկետով՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքի բնույթը կամ կատարման պայմանները, եթե նույն օրենսգրքով կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ: Սա աշխատանքային պայմանագիրը որոշակի ժամկետով կնքելու ընդհանուր սկզբունք է, որից բացի օրենսդիրը նախատեսել է նաև այլ դեպքեր, երբ աշխատանքային պայմանագիրը պետք է կնքվի որոշակի ժամկետով, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով:

Թեև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետը նախատեսում է տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող և վաթսուներեք տարին լրացած կամ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող և վաթսուհինգ տարին լրացած անձանց հետ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրեր կնքելու գործատուի հնարավորությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ հնարավորության իրացումը չպետք է զուգորդվի օրենսդրության պահանջների խախտմամբ:

Հարկ է նկատել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքը որպես ընդհանուր սկզբունք սահմանում է աշխատանքային պայմանագրերն անորոշ ժամկետով կնքելը: Օրենսդրությունը չի նախատեսում կարգավորումներ՝ կապված անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի վերածելու հետ: Առկա օրենսդրական բացը գործատուներն ի շահ իրենց են օգտագործում՝ նշված երևույթը քողարկելով կողմերի փոխադարձ համաձայնության սկզբունքի ներքո: Այսինքն, իրավիճակը պարզաբանում են նրանով, որ իրենց և աշխատողների միջև առկա փոխադարձ համաձայնությամբ նրանք փոխում են պայմանագրի տեսակը՝ անորոշը դարձնելով որոշակի: Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները հակառակն են փաստում: Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում գործատուներն աշխատողներին պատշաճ չեն տեղեկացնում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հետևանքների մասին: Ավելին, հաճախ աշխատողները պարզապես տեղյակ չեն լինում, թե ինչ տեսակի փաստաթուղթ են իրենք ստորագրում, քանի որ իրենց հնարավորություն չի տրվում դրանց բովանդակությանը ծանոթանալու: Խնդիրն առավելապես տարածված է ուսումնական հաստատություններում:

Սահմանադրական դատարանն իր 2011 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ ՍԴՌ-991 որոշմամբ անդրադարձել է աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով



գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման իրավակարգավորման սահմանադրականությանը՝ նշելով, որ կենսաթոշակային տարիքի հասած անձի հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիրը լուծելիս և (կամ) որոշակի ժամկետով պայմանագիր կնքելիս ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսելի կարգով անհրաժեշտաբար պետք է երաշխավորվեն ՀՀ Սահմանադրության 37-րդ (ներկայիս՝ 83-րդ) հոդվածով նախատեսված նրա սոցիալական ապահովության իրավունքի իրացման բավարար պայմաններ՝ կապված սոցիալական ապահովության հնարավոր ծավալի և ձևերի հետ:

Սահմանադրական դատարանի դիրքորոշման համաձայն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի կիրառումն իր սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան լիարժեք երաշխավորելի է այն դեպքում, երբ **օրենսգրքով նախանշվեն ընթացակարգեր, որոնք կոչված լինեն գնահատելու կենսաթոշակային տարիքի հասած անձի աշխատունակությունը (աշխատանքային պիտանիությունը),** հետևաբար՝ նաև աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի և գործատուի միջև երկկողմ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորություն կնախատեսեն՝ *բացառելով գործատուի սուբյեկտիվ հայեցողությունն այդ հարցում:*

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է նաև, որ մինչկենսաթոշակային տարիքում կնքվող աշխատանքային պայմանագրի հիմնական ձևն անորոշ ժամկետով պայմանագիրն է, որի գործողության *դադարման հիմքերն ու կարգը* պետք է նախատեսվեն օրենքով և որոշվեն իրավունքի ուժով, *իսկ դադարեցումը* պետք է պայմանավորված լինի միայն իրավաչափ պատճառներով, ինչը, իր հերթին, հստակ պետք է նախատեսվի օրենքով: Այսպիսով, Սահմանադրական դատարանը վաղուց փաստել է, որ **անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության դադարեցման հիմքերն ու կարգն անհրաժեշտ է նախատեսել օրենքով:**

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրի հիմքում ընկած է աշխատողների՝ իրավական գործող կարգավորումներին իրազեկ չլինելը: Փաստ է, որ եթե կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով անձին աշխատանքից ազատելու հնարավորություն չնախատեսող պայմանագրի հիման վրա աշխատանքի ընդունված աշխատողները չհամաձայնեն և չստորագրեն գործատուների՝ իրենց տրամադրված որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերը, ապա աշխատանքից կարող են ազատվել միայն ընդհանուր հիմունքներով, բայց ոչ՝ կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով:

*Այսպիսով, անհրաժեշտ է՝*

1. *օրենսդրությամբ սահմանել չափանիշներ, որոնցով առաջնորդվելով միայն գործատուներն իրավասու կլինեն անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերը վերածելու որոշակի ժամկետով կնքվածի,*

2. *զանգվածային լրատվության միջոցներով շարունակաբար հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության ուղիների վերաբերյալ:*

#### 4.5 Աշխատողի դիմումի հիման վրա աշխատանքային պայմանագրի լուծման կարգի չպահպանումը

Աշխատանքից անհիմն ազատման խնդիր է արձանագրվել, երբ խախտվել է աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման կարգը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի

լրանալը՝ այդ մասին առնվազն **երեսուն օր** առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին: Ծանուցման ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը և աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ:

Ըստ Պաշտպանին ներկայացված բողոքի՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողը հոկտեմբեր ամսին գործատուին դիմում է ներկայացրել նույն օրվանից իրեն աշխատանքից ազատելու մասին: Գործատուն, հիմնվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորման վրա, դիմումում նշված ժամկետում աշխատողին չի ազատել աշխատանքից, իսկ այդ ժամկետի ավարտից հետո աշխատողը շարունակել է կատարել իր աշխատանքային պարտականությունները՝ վարձատրություն ստանալով այդ ընթացքում կատարած աշխատանքի համար:

Խնդրահարույց է, որ գործատուն, հիմք ընդունելով աշխատողի՝ հոկտեմբեր ամսին ներկայացրած դիմումը, նրան աշխատանքից ազատել է նույն թվականի դեկտեմբեր ամսին միայն, այսինքն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո: Բարձրացված խնդրի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշման համաձայն՝ *ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 30-օրյա ժամկետի ավարտից հետո՝ 1 ամիս անց գործատուն, հիմք ընդունելով աշխատողի նախկինում գրված և ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով ընթացք չտրված դիմումը, չէր կարող աշխատողին ազատել աշխատանքից:* Պարզաբանվել է նաև, որ տվյալ իրավիճակում գործատուն պետք է ընդուներ համապատասխան իրավական ակտ, որը հիմք կձևառայեր աշխատողի աշխատանքից ազատման դիմումին ընթացք չտալուն, քանի որ հակառակ դեպքում, Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների համաձայն, գործատուն պարտավոր էր ընթացք տալ աշխատողի դիմումին:

Նման պարզաբանման հիմքում ընկած տրամաբանության հաշվառմամբ՝ հարկ է արձանագրել, որ եթե ծանուցման 30-օրյա ժամկետի լրանալուց հետո ոչ աշխատողը, ոչ էլ գործատուն չեն օգտվել Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հնարավորությունից, այսինքն՝ աշխատողի և գործատուի միջև **աշխատանքային հարաբերությունները շարունակվել են**, ապա 30-օրյա ժամկետի ավարտից հետո (աշխատանքից ազատվելու մասին դիմումում նշված ավելի երկար ժամկետի դեպքում՝ դրա ավարտից հետո) գործատուն չէր կարող, հիմք ընդունելով աշխատողի նախկինում գրված և Օրենսգրքով սահմանված կարգով ընթացք չտրված դիմումը, աշխատողին ազատել աշխատանքից:

#### 4.6 Աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և աշխատանքից ազատելու ընթացակարգերի չպահպանումը

Աշխատանքային իրավունքներին առնչվող բողոքներում բարձրացված խնդիրներից է այն, որ աշխատողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, սակայն այդ մասին պատշաճ չեն տեղեկացվել, և իրենց բացատրություն ներկայացնելու հնարավորություն չի տրվել:

Այսպես, դեպքերից մեկով անձը տեղեկացրել է, որ դպրոցում իբրև ուսուցիչ է աշխատել, և աշխատանքից բացակայելու համար ստացել է կարգապահական տույժեր, որոնց մասին չի ծանուցվել: Այնուհետև, դրանց հետևել է ընթացիկ ամսվա աշխատավարձը չստանալը, ինչի կապակցությամբ աշխատողը դպրոցի տնօրինությունից պարզաբանումներ է պահանջել, ինչին ի պատասխան՝ բանավոր տեղեկացվել է աշխատանքից ազատվելու մասին: Նշված

դեպքում անձին աշխատանքից ազատելը տեղի է ունեցել աշխատանքային օրենսդրության պահանջների մի շարք խախտումներով:

Նախ, կարգապահական տույժերի կիրառման մասով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Այս հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ իր 2013 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԵԿԴ/2998/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ՝ արտահայտելով դիրքորոշում առ այն, որ *մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է, այն աշխատողից պետք է պահանջվի մինչև կարգապահական տույժի կիրառումը՝ սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ*: ՀՀ վճռաբեկ դատարանը, վերոնշյալ որոշման մեջ անդրադառնալով *մինչև կարգապահական տույժ կիրառելը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն չպահանջելու հետևանքներին, վկայակոչել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, որն աշխատողին հնարավորություն*

սահմանված ցանկացած վարձատրություն կամ վաստակ, որը գրավոր կամ բանավոր պայմանագրի հիման վրա գործատուն վճարում է աշխատողին կատարած կամ կատարվելիք աշխատանքի կամ մատուցած կամ մատուցվելիք ծառայությունների համար: Նույն կոնվենցիայի 6-րդ հոդվածն արգելում է գործատուներին որևէ ձևով սահմանափակել աշխատողների՝ աշխատավարձի տնօրինման ազատությունը, իսկ 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ աշխատավարձը պետք է վճարվի կանոնավոր կերպով:

Իր բնույթով աշխատավարձն իրավունք է աշխատողի համար և պարտականություն՝ գործատուի համար<sup>92</sup>:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649 որոշման մեջ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ աշխատավարձը քաղաքացու սեփականությունն է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է դիրքորոշում առ այն, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը<sup>93</sup>: Չարգացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումը՝ ՀՀ Սահմանադրական դատարանը 2010 թվականի հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-902 որոշմամբ արձանագրել է, որ այն անձը, ով աշխատանքից ազատվել է անօրինական կարգով, ունի լեգիտիմ ակնկալիք շարունակելու ստանալ վարձատրություն իր աշխատանքի դիմաց: Հետևաբար, ըստ Սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ աշխատողին գործատուի կողմից անօրինականորեն աշխատանքից ազատելը համարվում է նրա գույքային իրավունքների խախտում:

Հարցի կապակցությամբ նույնաբովանդակ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ 2007 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 3-1603(ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ արձանագրելով, որ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր աշխատող ունի իր կատարած աշխատանքի համար աշխատավարձ ստանալու իրավունք: Աշխատավարձի վճարման օրվանից աշխատողի մոտ ծագում է գործատուից այն պահանջելու իրավունք: Վճռաբեկ դատարանի նույն որոշման համաձայն՝ աշխատավարձի վճարման համար սահմանված ժամկետից դրա նկատմամբ ծագում է աշխատողի սեփականության իրավունքը, հետևաբար գործատուն, ժամանակին չվճարելով աշխատողի աշխատավարձը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի իմաստով ապօրինի պահում է վերջինիս դրամական միջոցները:

Մինչդեռ, Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ գործատուն չի վճարել աշխատողի ընթացիկ ամսվա աշխատավարձը: Հարկ է նշել, որ կատարած աշխատանքի համար աշխատողին աշխատավարձ չվճարելու հնարավորություն աշխատանքային օրենսդրությունը չի նախատեսել: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է կարգավորումներ աշխատավարձի վճարումն ուշ կատարելու վերաբերյալ՝ 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանելով, որ եթե գործատուի մեղքով աշխատավարձի վճարումը կատարվում է նույն օրենսգրքով, կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտումով, ապա գործատուն աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան

<sup>92</sup> Հասանելի է <https://pdfs.semanticscholar.org/255e/2a60866a892bc414cfd52a4f8cc9aa876d38.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>93</sup> St u Srgon n nողեմ Iտրվաթիայի (Trgo v. Croatia) գործով 2009 թվականի հունիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 35298/04, կետ 44:

վճարման ենթակա գումարի չափը: Ընդ որում, հարկ է նկատել, որ վերը նշված օրենսդրական դրույթն ինքնին նպատակ չունի ամրագրելու գործատուի՝ աշխատավարձի վճարման սահմանված ժամկետները չպահպանելու հնարավորությունը, այլ այն դիտարկելով իբրև օրենսդրության պահանջների խախտում՝ ամրագրում է նման խախտումների համար տուժանքների վճարման պահանջ:

Նշված օրինակում թեև Պաշտպանի աջակցությամբ քաղաքացուն վճարվել է նրա աշխատանքային վերջին ամսվա աշխատավարձը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուժանքը, սակայն մտահոգիչ է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի նման ակնհայտ խախտումները գործնականում թույլ են տրվում, ինչը նաև վերահաստատում է աշխատանքային օրենսդրության պահանջների և աշխատողների իրավունքների վերաբերյալ շարունակական իրազեկման անհրաժեշտությունը:

Աշխատավարձից պահումներ կատարելն աշխատավարձի չվճարման հետ կապված խնդրի մեկ այլ դրսևորում է: Բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ պահումներ կատարելու ամենատարածված դեպքերն են՝ աշխատանքից ուշանալը, դեկավարի հանձնարարությունը չկատարելը, համապատասխան հանդերձանքով աշխատանքի չներկայանալը, աշխատանքային ժամին սնվելը կամ դուրս գալն աշխատավայրից և այլն: Ընդ որում, դիտարկվել է ոչ իրավաչափ պրակտիկա, երբ աշխատավարձից պահումներ կատարելու դեպքեր սահմանվում են գործատուների ներքին իրավական ակտերով:

Օրինակ, շինարարական կազմակերպությունում աշխատող՝ Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ գործատուի պնդմամբ՝ էթե ինքը սաղավարտ չլրի, ապա կարող է տուգանվել 40.000 ՀՀ դրամ գումարով: Դրական գնահատելով նմանատիպ աշխատանքներ կատարող աշխատողների անվտանգության ապահովման համար միջոցներ ձեռնարկելը, սակայն, պետք է նկատի ունենալ, որ այդ միջոցները պետք է լինեն բացառապես օրինական և բիսեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորումներից:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արդարացի վարձատրման իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են թույլատրել աշխատավարձից պահումները միայն ազգային օրենքներով կամ կանոնակարգերով սահմանված պայմաններով և դրանցում նկարագրված չափով կամ կոլեկտիվ համաձայնագրերի կամ արբիտրաժային վճիռների համաձայն: Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատավարձի պաշտպանության» վերաբերյալ թիվ Co95 կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատավարձից պահումներ կատարելը թույլատրվում է միայն այն պայմաններում և այն չափով, որոնք սահմանված են ազգային օրենքներով, կարգավորումներով, կոլեկտիվ պայմանագրերով կամ արբիտրաժային վճիռներով: Հարկ է նկատել, որ մեր օրենսդրությունն աշխատավարձից պահումներ կատարելու դեպքերը կոլեկտիվ պայմանագրերով սահմանելու հնարավորություն չի նախատեսել: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատավարձից պահումները կարող են կատարվել օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Նույն հոդվածի 2-րդ մասով սպառիչ թվարկված են այն դրամական միջոցները, որոնք գործատուին ունեցած աշխատողի պարտքերը մարելու համար նրա աշխատավարձից կարող են պահվել (դրանք են՝ աշխատավարձի հաշվին աշխատողին տրված կանխավճարը, հաշվարկային մեխանիկական սխալների հետևանքով կատարված ավել վճարումները, գործուղման կամ աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ առանձին գործողությունների կատարման համար աշխատողին տրված կանխավճարի չծախսված և ժամանակին չվերադարձված գումարը և աշխատողի մեղքով գործատուին պատճառված վնասի հատուցման գումարը): Նշված իրավակարգավորումից հետևում է, որ գործատուներն իրավունք չունեն իրենց

ներքին իրավական ակտերով աշխատողների աշխատավարձերից պահումներ կատարելու այլ դեպքեր սահմանել, քան սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածով: Այդպիսիք, այնուամենայնիվ, սահմանվելու դեպքում պարզապես իրավական որևէ ուժ չեն ունենա, քանի որ կհակասեն ՀՀ աշխատանքային օրենսգրքի նշված նորմով սահմանված կարգավորմանը: Աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար գործատուները իրավասու են աշխատողներին ենթարկելու կարգապահական պատասխանատվության, բայց ոչ գույքային:

#### 4.8 Ծանուցման հետ կապված խնդիրներ

2019 թվականի ընթացքում շարունակել է չլուծված մնալ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողին նախապես ծանուցելու համար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ժամկետների չպահպանման խնդիրը: Խնդրի արդիականության մասին են վկայում 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները, որոնցով քաղաքացիները տեղեկացրել են, որ գործատուներն իրենց ազատել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկով, սակայն այդ մասին նախապես չեն ծանուցվել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածը գործատուների համար սահմանում է սեփական նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելուց առաջ այդ մասին աշխատողներին կոնկրետ ժամկետներում ծանուցելու իմպերատիվ պահանջ: Թեև նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ օրենքով նախատեսված ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը, սակայն ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործատուները ոչ պատշաճ ծանուցման դեպքում հրաժարվում են աշխատողներին վճարել անգամ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուժանքը:

#### 4.9 Առանց աշխատողի համաձայնության՝ այլ աշխատանքի փոխադրելու ոչ իրավաչափ պրակտիկան

Աշխատանքային օրենսդրության պահանջների խախտման գործնական դրսևորումներից է առանց աշխատողի համաձայնության նրան այլ աշխատանքի փոխադրելը:

Օրինակ, դեպքերից մեկով անձն աշխատել է պետական ոչ առևտրային կազմակերպություններից մեկում որպես հաշվապահ, սակայն որոշ ժամանակ անց նրա հաստիքն առանց իր իմացության և համաձայնության փոփոխվել է «հաշվապահ-գանձապահի», ինչի մասին վերջինս տեղեկացել է, երբ ծանուցվել է հենց այդ՝ «հաշվապահ-գանձապահի» հաստիքի կրճատման մասին: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման ուժով՝ աշխատանքի էական պայմանների (աշխատանքի վայր, աշխատանքի վարձատրության չափ և (կամ) այն որոշելու ձև, արտոնություններ, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմ, տարակարգեր և պաշտոնների անվանումներ, աշխատանքային պայմանագրի տեսակ) փոփոխման դեպքում գործատուն աշխատողին պետք է ծանուցի նույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանված են աշխատանքի էական պայմանների փոփոխության մասին գործատուի՝ աշխատողին ծանուցելու ժամկետները, որոնք չպահպանելու դեպքում ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար աշխատողին տուժանք վճարելու գործատուի

պարտականությունը սահմանված է նույն հոդվածի 2-րդ մասով: Հետևաբար, առանց աշխատողի համաձայնության՝ նրան այլ պաշտոնի տեղափոխելու յուրաքանչյուր դեպքում գործատուները պետք է աշխատողներին վճարեն ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված տուժանք:

Նույն օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը գործատուն կարող է փոփոխել միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում, որի մասին գործատուն գրավոր ձևով պետք է ծանուցի աշխատողին ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մինչև նոր պայմանների ուժի մեջ մտնելը:

Օրենսդրական կարգավորումների համադիր դիտարկումից ստացվում է, որ առանց աշխատողի գրավոր համաձայնության աշխատանքի էական պայմաններից միայն վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը կարող է փոխվել, այն էլ՝ միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում: Մինչդեռ, բողոքներով արձանագրվել են դեպքեր, երբ աշխատողների զբաղեցրած պաշտոնների անվանումները փոփոխվում են, ինչի մասին վերջիններս տեղեկանում են, որպես կանոն, աշխատանքից ազատվելու ժամանակ, իսկ քանի որ այդ փոփոխության մասին նրանք ժամանակին պատշաճ չեն ծանուցվել, հետևաբար նաև համաձայնություն չեն տվել:

Օրինակ, անձն աշխատել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցում որպես սոցիալական մանկավարժ, մինչդեռ, իրեն ամենամյա վճարովի արձակուրդ տրամադրելու մասին տնօրենի հրամանից տեղեկացել է, որ ինքը զբաղեցնում է ոչ թե սոցիալական մանկավարժի մեկ ամբողջական դրույք, այլ ուսուցչի օգնականի և սոցիալական մանկավարժի 0,5-ական դրույքներ: Նշված դեպքում ևս հաստիքի փոփոխության մասին աշխատողը պատշաճ չի ծանուցվել և չի տվել իր համաձայնությունը: Ընդ որում, այս դեպքում հաստիքի փոփոխությունից հետո դիմողը սկսել է ավելի քիչ վարձատրվել: Երևանի քաղաքապետարանն արձանագրել է, որ դպրոցի տնօրենի՝ աշխատողի դրույքաչափի փոփոխության մասին հրամանով խախտվել են նրա աշխատանքային իրավունքները, սակայն դպրոցի տնօրենի նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել, քանի որ խախտումը կատարելու օրվանից արդեն 6 ամիս անցել է:

Այսպիսով, աշխատանքային իրավունքների խախտման հնարավոր դեպքերը բացառելու համար անհրաժեշտ է՝

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքով հաստիքների կրճատման հիմքով աշխատողներին աշխատանքից ազատելու դեպքում կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատողների միջև սահմանել ընտրության հստակ չափանիշներ,

2. պատշաճ վերահսկողություն իրականացնել իրեն ենթակայության գործող կառույցներում աշխատանքային իրավունքների ոտնահարման հնարավոր դեպքերը կանխելու և արդեն տեղի ունեցած խախտումները վերացնելու նպատակով:

## 5. Աշխատանքային իրավունքների ոլորտում առկա գործնական այլ խնդիրներ

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին դիմած քաղաքացիներն իրենց աշխատանքային իրավունքների խախտման այլ դեպքերի մասին են բարձրաձայնել: Տարածված և համակարգային խնդիրներից է աշխատանքի ընդունվելիս աշխատողների հետ աշխատանքային պայմանագրեր չկնքելը, աշխատողին աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը, կատարած արտաժամյա աշխատանքի համար աշխատողին չվարձատրելը և այլն: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման խնդիրների հիմքում

հիմնականում ընկած է աշխատանքային ոլորտում առկա իրավակարգավորումների վերաբերյալ իրազեկման պակասը: Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը հիմք կարող է լինել աշխատանքային իրավունքների խախտումների կանխման և խախտված իրավունքների վերականգնման համար: Այսպես.

Աշխատանքի ընդունվելիս աշխատողների հետ աշխատանքային պայմանագրեր չկնքելը

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

Մարդու իրավունքների պաշտպանին դիմած քաղաքացիները բարձրացրել են իրենց աշխատանքային տարբեր իրավունքների խախտման դեպքեր, որոնց հիմքում ընկած է եղել հետևյալ պատճառը. գործատուները չեն պահպանել աշխատանքային հարաբերությունների ծագման՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգը: Ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը թույլ է տալիս խնդրի վերաբերյալ գալ այն ընդհանուր եզրահանգման, որ գործատուներն աշխատանքի ընդունվել պատրաստվող անձանցից պահանջում են միայն անձնագիր կամ սոցիալական քարտ և նրանց հայտարարում, թե այդ փաստաթղթերի հիման վրա վերջիններիս օրինական կարգով ընդունել են աշխատանքի: Արդյունքում, քաղաքացիները հայտնվում են մոլորության մեջ, քանի որ վերջիններս վստահ են լինում իրենց՝ օրինական հիմունքներով աշխատելու փաստի մեջ մինչև այն պահը, երբ բախվում են աշխատանքային այս կամ այն իրավունքի ոտնահարմանը: Խնդիրը բացահայտվում է, երբ, օրինակ, գործատուները ուշացնում են աշխատավարձի վճարումը, աշխատավարձից կատարում են պահումներ, անձին ամենամյա արձակուրդ չեն տրամադրում, և ի վերջո՝ առանց որևէ անհատական իրավական ակտի հայտարարում են, որ «աշխատողներն» ազատված են աշխատանքից: Ստացվում է, որ աշխատանքային հարաբերությունների ծագման՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգը չպահպանելը շղթայական կապով հանգեցնում է աշխատանքային այլ իրավունքների ոտնահարման:

Թեև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169<sup>5</sup>-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում այն գործատուների համար, ովքեր առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատանքի ընդունման պահանջները բավարարող աշխատանքային պայմանագրի աշխատող են պահում, այնուամենայնիվ ստեղծված իրավիճակում պետք է կարևորվի ոչ միայն օրենսդրական պարտադիր նորմերը չպահպանած գործատուի պատասխանատվության հարցը, այլև փաստացի աշխատանք կատարած և գործատուի հետ փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրականության հարցը քննարկման առարկա է դարձել ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ, որով Դատարանն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը: Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ



յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստումը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այդ թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար:

Աշխատանքային պայմանագրի հասարակ գրավոր ձևը չպահպանելու իրավական հետևանքների, մասնավորապես՝ օրենքով սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունն այլ ապացույցներով հիմնավորելու հնարավորության առնչությամբ հստակ դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3-1848(ՎԴ) որոշմամբ՝ նշելով, որ ի հավաստումն աշխատանքային պայմանագրի և դրա պայմանների գոյության՝ դատավարության մասնակիցները կարող են ներկայացնել ցանկացած ապացույցներ, որոնք վկայի ցուցմունք չեն:

Ողջունելի է թե՛ Սահմանադրական դատարանի և թե՛ ՀՀ վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, որը փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված անձին հնարավորություն է տալիս ՀՀ աշխատանքային օրենսգրքով իր՝ որպես աշխատողի համար՝ նախատեսված աշխատանքային բոլոր իրավունքներից օգտվել՝ դատական կարգով իրենց՝ փաստացի աշխատանք կատարած լինելն ապացուցելով: Մինչդեռ, մյուս կողմից մտահոգիչ է, որ դրա համար անձինք պետք է լրացուցիչ միջոցների դիմեն, ինչը հաճախ բեռ է նրանց համար (ֆինանսական, դատավարության տևականության, երբեմն էլ նաև՝ ապացուցման միջոցներ չունենալու առումով):

Իրազեկման պակասից բացի խնդրի հիմքում նաև այլ գործոններ են ընկած: Խոսքն այն իրավիճակների մասին է, երբ աշխատողներն իրենք են գործատուներից պահանջում իրենց հետ կնքել աշխատանքային պայմանագրեր: Մինչդեռ, առանց օրինական հիմքերի անձանց աշխատուժն օգտագործելը որոշ գործատուների ուղղակի պահանջն է: Իբրև հետևանք՝ այդ ոչ իրավաչափ պահանջի հետ չհամաձայնող անձն աշխատանքի չի վերցվում, իսկ գործատուն նախապատվությունը տալիս է նրանց, ովքեր, կենսապահովման նվազագույն պահանջումների բավարարման համար վաստակ ունենալու խնդրի առաջ կանգնած լինելով, ընդունում են առանց աշխատանքային պայմանագրի առկայության փաստացի աշխատելու առաջարկը:

Ասվածը ևս մեկ անգամ վկայում է աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման և աշխատանքային իրավունքների պահպանման նկատմամբ արդյունավետ հսկողական մեխանիզմների ներդրման համալիր միջոցառումների անհրաժեշտության մասին:

#### Աշխատողին աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը

«Հարկադրել» տերմինն ինքնին հուշում է, որ խոսքն իրավական որևէ հիմք չունեցող՝ ոչ իրավաչափ երևույթի մասին է: Պաշտպանին քաղաքացիներ են դիմել այն խնդրի բարձրաձայնմամբ, թե գործատուների հետ որոշակի անձնական խնդիրներ ունեն, ինչի հետևանքով գործատուները ստիպում են նրանց աշխատանքից ազատման դիմում գրել և ազատվել աշխատանքից: Աշխատանքից ազատվելու համար դիմում գրել կամ չգրելը թեև աշխատողի իրավունքն է, և նա է միայն իրավասու որոշելու ազատվել աշխատանքից, թե ոչ: Այնուամենայնիվ, երևույթը մեր իրականությունում իր ուրույն դրսևորումն ունի: Խոսքը, մասնավորապես, այն իրավիճակների մասին է, երբ «անցանկալի» աշխատողից ազատվել ցանկացող գործատուի պահանջը չկատարելուն անմիջապես հետևում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման՝ ՀՀ աշխատանքային

օրենսգրքի 113-րդ հոդվածով սահմանված հիմքերից որևէ մեկի «արհեստական» կիրառությունը, որպեսզի աշխատողին աշխատանքից ազատելն առերևույթ օրինական լինի՝ օրենսդրության պահանջի տառի պահպանմամբ:

Տարածված իրավիճակներից է, երբ գործատուները սկսում են «անցանկալի» աշխատողներին անտեղի ենթարկել կարգապահական տույժերի, ինչից հետո ազատում են աշխատանքից ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով (աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելը): Նույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասն էլ իր հերթին սահմանում է, որ գործատուն իրավունք ունի նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումն աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ:

Այն աշխատողները, ովքեր ենթարկվում են գործատուի սպառնալիքներին և սեփական դիմումի հիման վրա ազատվում են աշխատանքից, ոչ միայն կորցնում են իրենց աշխատանքը՝ որպես եկամտի աղբյուր, այլև կանգնում են հետագայում իրենց խախտված իրավունքների վերականգնման գործնական անհնարիության առջև: Բանն այն է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է դատական կարգով նախկին աշխատանքում վերականգնվելու հնարավորությունը, եթե աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ աշխատողը համաձայն չէ:

Սեփական դիմումի հիման վրա աշխատանքից ազատվելու դեպքում նախկին աշխատանքում վերականգնվելը թերևս միայն հնարավոր է աշխատանքից ազատման դիմումը դատական կարգով անվավեր ճանաչելու դեպքում: Այսինքն, երբ անձը վիճարկում է փաստաթղթի վավերությունը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորման վրա, որը սահմանում է, որ խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որն անձն ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով իր համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններով, որից օգտվել է մյուս կողմը (ստրկացուցիչ գործարք), տուժողի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Ինքնին հասկանալի է, որ սա ևս բարդ և ժամանակատար գործընթաց է, ինչը կրկին լրացուցիչ բեռ է դառնալու գործատուների սպառնալիքների ներքո աշխատանքից ազատման դիմում ներկայացրած և նախկին աշխատանքում վերականգնվել ցանկացող աշխատողների համար:

Նման դեպքերի ուսումնասիրությունը ևս մեկ անգամ փաստում է, որ օրենսդրական պահանջների գործնական պահպանման, աշխատողի իրավունքների իրացման և վերջինիս պաշտպանվածության ապահովումը ենթադրում է այնպիսի ինստիտուտների զարգացում, ինչպիսիք են՝ արհմիությունները, արտադատական վերահսկողական մարմինը, ինչպես նաև աշխատողների՝ իրենց իրավունքների և դրանց պաշտպանության հնարավորությունների մասին շարունակական իրազեկման կարևորությունը:

#### Կատարված արտաժամյա աշխատանքի համար աշխատողին չվարձատրելը

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործատուն կարող է աշխատողին ներգրավել արտաժամյա աշխատանքների միայն նույն օրենսգրքի 145-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերում, իսկ օրենսգրքի 145-րդ հոդվածը

սպառիչ է սահմանում այդ բացառիկ դեպքերը (կատարվում է պետության պաշտպանության, ինչպես նաև տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացման համար անհրաժեշտ աշխատանք, իրականացվում է այնպիսի մեխանիզմների կամ սարքավորումների նորոգման կամ վերականգնման աշխատանքներ, որոնց անսարքության հետևանքով ընդհատվել է զգալի թվով աշխատողների աշխատանքը, աշխատանքի չի ներկայացել հերթափոխային աշխատողը, ինչը կարող է հանգեցնել աշխատանքի անընդհատության խաթարման և այլն): Նույն օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից: Նույն օրենսգրքի 184-րդ հոդվածի համաձայն՝ արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար, ժամային դրույքաչափից բացի, վճարվում է հավելում՝ ժամային դրույքաչափի 50 տոկոսից ոչ պակաս չափով (...):

ՀՀ վճարեկ դատարանը 2016 թվականի հուլիսի 22-ի թիվ ԵԷԴ/3838/02/14 գործով կայացված որոշմամբ նշել է, որ փոխհատուցման բնույթ կրող վճար է, օրինակ՝ աշխատավարձի կազմի մեջ մտնող հավելումը՝ հաշվի առնելով, որ վերջինս վճարվում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքների համար:

Պաշտպանին դիմած քաղաքացիները տեղեկացրել են, որ աշխատելով որպես մաքրուհի, բանվոր, վարորդ կամ նմանատիպ այլ աշխատանք կատարելով՝ գործատուի պահանջով շատ հաճախ աշխատում են օրական մինչև 11-13 ժամ:

Մինչդեռ, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 146-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուի պահանջով արտաժամյա աշխատանքն իրար հաջորդող երկու օրվա ընթացքում չպետք է գերազանցի 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը: Մտահոգիչ է, որ աշխատանքային պայմանագրերում նշվում է աշխատաժամանակի այնպիսի սահմանաչափ, ինչը պահանջվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով, սակայն աշխատողի փաստացի կատարած արտաժամյա աշխատանքը չի արձանագրվում: Դա իր հերթին հանգեցնում է նրան, որ աշխատողը բխվում է իր կատարած արտաժամյա աշխատանքի փաստն ապացուցելու խնդրի առջև:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտաժամյա աշխատանքի ներգրավելու անհրաժեշտության դեպքերում գործատուն այդ մասին ողջամիտ ժամկետներում տեղեկացնում է աշխատողին, բացառությամբ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերի: Հարկ է նկատել, որ օրենսդրությամբ սահմանված չեն աշխատողին արտաժամյա աշխատանքի ներգրավելու բավարար ընթացակարգային նորմեր: Ուստի, պետք է այնպիսի մեխանիզմ գործի, որ գործատուի պահանջով աշխատողին արտաժամյա աշխատանքի ներգրավելու յուրաքանչյուր դեպք ունենա պատշաճ իրավական և փաստական հիմք: Այդպիսով, կվերանա գործատուի պահանջով արտաժամյա աշխատանք կատարած լինելու փաստն ապացուցելու խնդիրը:

Հետևաբար, այն դեպքերում, երբ աշխատողն արտաժամյա աշխատանքի է ներգրավվում գործատուի պահանջով, ապա դա պետք է գործատուի հրամանով պատշաճ ձևակերպվի, և այդ արտաժամյա աշխատանքի համար աշխատողը վարձատրվի ՀՀ աշխատանքային օրենսգրքին համապատասխան:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ այս կարգավորումն իր հերթին չպետք է հիմք ծառայի գործատուների համար աշխատողներին այն աստիճան ծանրաբեռնելու, որ

վերջիններս իրենց կամքով մնան արտաժամյա աշխատանք կատարելու և, փաստորեն, չվարձատրվեն: Ուստի, աշխատողի կամքով արտաժամյա աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքով անհրաժեշտ է բացահայտել այն պատճառները, որոնք ընկած են աշխատանքային օրվա ավարտից հետո հավելյալ աշխատանք կատարելու անհրաժեշտության հիմքում, նաև պարզել, թե տրված առաջադրանքը հնարավոր է արդյոք ողջամտորեն կատարել մեկ աշխատանքային օրվա ընթացքում, թե ոչ: Այսինքն, սկզբունքը պետք է մեկը լինի. արտաժամյա աշխատանք թույլատրվում է օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում՝ համապատասխան երաշխիքների պահպանմամբ, իսկ նման հիմքերի բացակայության դեպքում արտաժամյա աշխատանքի ներգրավումն իրավաչափ չէ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. զանգվածային լրատվության միջոցներով շարունակաբար հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության ուղիների վերաբերյալ,

2. օրենսդրորեն ամրագրել, որ աշխատողին արտաժամյա աշխատանքում ներգրավելը պետք է ձևակերպվի գործատուի ներքին իրավական ակտով, և դրա համար աշխատողն ընթացիկ ամսվա աշխատավարձի հետ միասին վարձատրվի:

6. Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության բավարար չափանիշների բացակայությունը

Դեռևս 2017 թվականից Պաշտպանի տարեկան հաղորդումներում ներկայացվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրության հետ կապված հստակ մեխանիզմների բացակայության հարցը:

2019 թվականին ևս Պաշտպանին հասցեագրվել է բողոք, որով Ստեփանավան քաղաքի դպրոցներից մեկի տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի հավակնորդներից մեկը բարձրացրել է հարց՝ կապված ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ սահմանված կարգավորների հետ, քանի որ դրանում առկա են մի շարք անորոշ և խնդրահարույց կարգավորումներ: Մասնավորապես, որոշման հավելվածի 28-րդ կետով սահմանվում է, որ մրցույթին մասնակցելու համար մեկ հավակնորդ դիմելու և մրցույթում հաղթող չձանաչվելու պարագայում կրկնակի քվեարկություն չի անցկացվում և կարգի համաձայն, հայտարարվում է նոր մրցույթ: Այն պարագայում, երբ հավակնորդների թիվը մեկից ավելի է, ապա՝ հավակնորդների թիվը 2 լինելու և տնօրեն չընտրվելու դեպքում կրկնակի քվեարկություն չի անցկացվում, և խորհուրդը երեք աշխատանքային օրվա ընթացքում մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում ՀՀ փոխվարչապետին, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների դեպքում համապատասխան լիազորված պետական մարմին է ներկայացնում խորհրդի նիստի արձանագրության և տնօրենի պաշտոնի հավակնորդների անձնական գործերի պատճենները:

Նույն Հավելվածի 28.1-րդ կետի համաձայն՝ 28-րդ կետերով նախատեսված դեպքերում ներկայացված փաստաթղթերի հիման վրա, 5 աշխատանքային օրվա ընթացքում, հաստատության՝ մարզային ենթակայության դեպքում ՀՀ փոխվարչապետը լիազոր մարմնի ղեկավարին գրությամբ առաջարկում է հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունը՝ օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքելու համար: ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի ենթակայության

ուսումնական հաստատությունների դեպքում հավակնորդին ընտրում և օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր են կնքում համապատասխան լիազոր մարմինները: Ընտրության արդյունքների մասին լիազոր մարմինը գրությամբ տեղեկացնում է հաստատության խորհրդին՝ հավակնորդներին պատշաճ կերպով տեղյակ պահելու համար: Վերը նշված կարգավորումների ուսումնասիրությամբ հարկ է փաստել, որ բաց է մնում ՀՀ փոխվարչապետի կողմից հավակնորդներից որևէ մեկի թեկնածությունն առաջարկելու չափորոշիչների և համապատասխան չափանիշների վերաբերյալ հարցը:

Վերը նշված կարգավորումների ուսումնասիրությամբ կարող ենք արձանագրել, որ փաստորեն, որոշմամբ չեն սահմանվել այնպիսի հստակ չափանիշներ, որոնց հիման վրա պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի մասնակցին կտրվեն առաջնահերթություն:

Նշված խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված տեղեկությունների համաձայն՝ կազմվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության նիստի քննարկմանը: Ըստ Նախարարության՝ նախագծի քննարկումը հետաձգվել է՝ պայմանավորված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ կարգավորումներ իրականացնելու անհրաժեշտությամբ: Սակայն վերջինիս իրականացման քայլերի վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրվել:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ 2019 թվականի ողջ ընթացքում խնդիրը շարունակել է մնալ չլուծված: Ավելին, դեռևս չեն ուրվագծվում այն ժամկետները, որի շրջանակներում խնդիրը կստանա լուծում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ սահմանել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության հստակ չափանիշներ՝ հավակնորդներից որևէ մեկի թեկնածության առաջարկման և ըստ այդմ՝ տնօրենի համապատասխան թեկնածուին ընտրելու համար, ինչպես նաև հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել փոփոխությունների նախագիծը:

7. Ոստիկանության ծառայողի նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և նոր աշխատանքի անցնելու հնարավորության սահմանափակումը

Ոստիկանության ծառայողի նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու և նոր պաշտոնի նշանակվելու հնարավորության սահմանափակման խնդիրն արդիական է եղել նաև 2019 թվականին: Ընդ որում, հարկ է արձանագրել, որ նշյալ խնդիրը բարձրաձայնվել է դեռևս 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներով:

Խնդրի համակարգային բնույթի, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների ճանապարհով իրավական լուծումների բացակայությամբ պայմանավորված Մարդու իրավունքների պաշտպանը խնդրո առարկա դրույթի իրավաչափությունը սահմանադրականության տեսանկյունից վիճարկելու նպատակով դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան:

Բանն այն է, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում են ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող՝ վարձատրությամբ կատարվող աշխատանքի սահմանափակումները: Մասնավորապես, օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոստիկանության ծառայողն իրավունք չունի կատարել այլ վճարովի

աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ էլույթների համար»:

Ոստիկանության ծառայողի՝ այլ վճարովի աշխատանքով (բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից) զբաղվելու օրենսդրական սահմանափակման պայմաններում «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասն ամրագրում է, որ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցման պարագայում վերջինիս աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում: Իսկ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից:

Ստացվում է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ ոստիկանության ծառայողն իր նկատմամբ քրեական հետապնդման և լիազորությունների կասեցման հետևանքով միաժամանակ զրկված է լինում և՛ այդ ժամանակահատվածի համար աշխատավարձի վճարման հնարավորությունից, և՛ սեփական նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու հնարավորությունից, այլ պաշտոնի նշանակվելու կամ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից բացի այլ աշխատանք կատարելու հնարավորությունից: Արդյունքում, ոստիկանության ծառայողը, վերջնական դատական ակտով մեղավորությունն ապացուցված չլինելու պարագայում, իր և ընտանիքի առաջնահերթ կարիքների բավարարման խնդրի առջև է կանգնում:

Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը հիմնված է եղել ոչ միայն խնդրո առարկա կարգավորումների և սահմանադրաիրավական երաշխիքների՝ օրենսդրական մակարդակում վերլուծության, այլև Պաշտպանին ներկայացված բողոքների քննարկման հիման վրա:

Դիմումում Պաշտպանն արձանագրել է, որ խնդրահարույց իրավակարգավորումների հետևանքով խախտվում է Սահմանադրությամբ երաշխավորված մի շարք իրավունքներ, մասնավորապես՝ աշխատանքի ազատ ընտրության, մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքները, ինչպես նաև խտրականության արգելքի, անմեղության կանխավարկածի և համաչափության սահմանադրական սկզբունքները:

Այդ նպատակով վերլուծության են ենթարկվել ինչպես Սահմանադրության և օրենքների կարգավորումները, այնպես էլ ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների համապատասխան իրավական դիրքորոշումները: Ուսումնասիրվել են նաև միջազգային չափանիշները և Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

Արդյունքում, 2020 թվականի փետրվարի 25-ին Սահմանադրական դատարանը ՍԴՈ–1507 որոշմամբ բավարարել է Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը: Մասնավորապես, սույն որոշմամբ դատարանը որոշել է «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ ոստիկանության ծառայողի նկատմամբ բացառապես քրեական հետապնդում հարուցելու (իրականացնելու) փաստով պայմանավորված՝ լիազորությունները կասեցնելու, ինչպես նաև ոստիկանության ծառայողի աշխատավարձի վճարման ժամկետային սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչել

Սահմանադրության 29-րդ, 49-րդ, 66-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր, իսկ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասը՝ մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը ոստիկանության ծառայողի նոր պաշտոնի նշանակվելու բացարձակ արգելք, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ոստիկանության ծառայությունից ազատվելու արգելք նախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 29-րդ, 49-րդ, 66-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը՝

- հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին որևէ միջամտություն պետք է իրականացվի ոչ խտրական հիմքերով՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, թե ոչ, և անկախ որևէ այլ հանգամանքից, որը օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով չի հանգեցնում նրա պաշտոնավարման իրավունքին իրավաչափ միջամտության:

- հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, պետք է հիմքում ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում, բացի դրանից, լինի համաչափ:

- հանրային ծառայությունը կարգավորող օրենքներում չպետք է ամրագրվեն սուկ քրեական հետապնդման հարուցման փաստով պայմանավորված այնպիսի հավելյալ սահմանափակումներ, որոնք, մի կողմից՝ դուրս են հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությունից, մյուս կողմից՝ չունեն առարկայական արդարացում հատուկ օրենքում:

- հաշվի առնելով հանրային ծառայողների առավել մեծ մասի և, ընդհանրապես, որևէ այլ՝ մասնավոր անձի նկատմամբ ինքնին քրեական վարույթ հարուցելու համար իրավական խոչընդոտների նվազ լինելը՝ հանրային ծառայողի պաշտոնավարման նկատմամբ քրեական դատավարության օրենքով չնախատեսված այլ՝ հավելյալ սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես սուբսիդիարության կանոնի համաձայն, այն է՝ եթե քրեադատավարական միջոցների կիրառմամբ հնարավոր չէ հասնել Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված համապատասխան իրավաչափ նպատակի կենսագործմանը: Ընդամին՝ քրեադատավարական ներգործության միջոցներ կիրառելու անհրաժեշտության բացակայության պայմաններում սուկ քրեական հետապնդման հարուցման փաստի ուժով հավելյալ օրենսդրական սահմանափակումներ ամրագրելը չի կարող հետապնդել Սահմանադրության տեսանկյունից արդարացված որևէ նպատակ, ուստի չի կարող արդարացվել ո՛չ հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությամբ, ո՛չ էլ հանրային ծառայության որևէ կոնկրետ տեսակի առանձնահատկություններով:

- հանրային ծառայության անցնելու և զբաղեցված պաշտոնում առանց չարդարացված միջամտության պաշտոնավարելու իրավունքը ենթադրում է նաև այդ պաշտոնից սեփական նախաձեռնությամբ ազատվելու անարգել հնարավորություն՝ անկախ պաշտոնեական լիազորությունների իրականացման կապակցությամբ կարգապահական, քրեական կամ այլ պատասխանատվության ընթացակարգի առկայությունից: Հանրային ծառայության պաշտոնից սեփական նախաձեռնությամբ ազատվելու իրավունքը նույնքան պաշտպանված է Սահմանադրության 49-րդ հոդվածով, որքան հանրային ծառայության անցնելու իրավունքը<sup>94</sup>:

<sup>94</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 25-ի «Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումների հիման վրա՝

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է նաև արտահերթ գեկույց քրեական հետապնդման ընթացքում ոստիկանության ծառայողների իրավունքների երաշխավորման վերաբերյալ, որի նպատակն է լայն հանրությանը ներկայացնել ոստիկանության ծառայողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելիս նրանց իրավունքների երաշխավորմանն առնչվող օրենսդրական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկները<sup>95</sup>:

8. Գործատուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման օրենսդրական խնդիրները

2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել դիմումներ, որոնցով բարձրացվել են գործատուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման հետ կապված օրենսդրական խնդիրները: Մասնավորապես, ըստ դիմումների՝ խնդիրն այն է, որ պարտապանի սնանկության պարագայում աշխատավարձի գծով պահանջատեր պարտատիրոջ պահանջները կառավարչի կողմից վարվող պարտատերերի պահանջների գրանցամատյանում չեն կարող ընդգրկվել որպես ստորադաս չապահովված պահանջներ, և աշխատավարձի գծով պահանջները պետք է բավարարվեն արտոնյալ կարգով:

Այսպես, «Սնանկության մասին» օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ: Նույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է պարտատերերի չապահովված պահանջները բավարարման հերթականությունը, որի «ը» կետով բավարարվում են ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները՝ համաձայն նույն օրենքի 83-րդ հոդվածի:

Օրենքի 83-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ ստորադաս չապահովված պահանջների խմբին դասվում են նաև աշխատավարձի գծով այլ պահանջները:

Օրենսդրական մեջբերված դրույթների համադիր վերլուծությունից ստացվում է, որ աշխատանքային իրավունքներից բխող պահանջներն առաջնահերթ բավարարման ենթակա պահանջներ չեն: Բանն այն է, որ օրենքի ուժով ստորադաս են դիտարկվում աշխատավարձի գծով այլ պահանջները, աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը, իսկ սահմանված ժամկետում պահանջը չներկայացնելու դեպքում՝ դրանք ևս դիտարկվում են իբրև ստորադաս չապահովված պահանջներ: Մինևույն ժամանակ, առկա չեն նաև աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման այլընտրանքային մեխանիզմներ:

Այսինքն, ստացվում է, որ թեև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները պարտատերերի չապահովված պահանջների բավարարման երրորդ հերթում են, օրենքի քննարկվող դրույթների վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ պահանջատեր պարտատերերի կողմից սահմանված ժամկետում դատարան չներկայացված

---

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը՝ հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՄԴՈ-1507 որոշումը, հասանելի է <http://www.concourt.am/armenian/decisions/common/2020/pdf/sdv-1507.pdf> հղումով:

<sup>95</sup>Չեկույցը հասանելի է <https://www.ombuds.am/images/files/baebdf8240ed105ac51eb72b4fe8a4f9.pdf> հղումով:



աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները և աշխատավարձի գծով այլ պահանջները, անկախ իրենց բնույթից, կառավարչի կողմից վարվող պարտատերերի պահանջների գրանցամատյանում ընդգրկվում են որպես ստորադաս չապահովված պահանջներ և բավարարվում հողվածում ամրագրված հերթականության ութերորդ հերթով:

Մինչդեռ, հարկ է նշել, որ նման օրենսդրական կարգավորումները հակասում են Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին: Այսպես, ՀՀ կողմից վավերացված «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» կոնվենցիայի<sup>6</sup> 5-րդ հոդվածով ամրագրվում է աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների արտոնյալ կարգավիճակն այսինքն՝ այն ձևով, որ անվճարունակ գործատուի ակտիվներից դրանք բավարարվեն մինչև ոչ արտոնյալ պարտատերերի պահանջների բավարարումը:

Նույն կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսվում է, որ ազգային օրենսդրությամբ աշխատողների պահանջներին գերակայություն է տրվում շատ այլ արտոնյալ պահանջների համեմատ. մասնավորապես՝ պետության և սոցիալական ապահովության համակարգերի պահանջների: Դրա հետ մեկտեղ, նույն հոդվածը սահմանում է, որ եթե աշխատողների պահանջները, նույն կոնվենցիայի 3-րդ բաժնին համապատասխան, պաշտպանված են երաշխիքային հաստատությունների միջոցով, ապա այդպիսի պաշտպանված պահանջները կարող են ստորադասվել պետության և սոցիալական ապահովության համակարգերի պահանջների համեմատ:

Այսինքն, կոնվենցիայի դրույթներից բխում է, որ աշխատանքային հարաբերություններից բխող պարտավորությունները բավարարվում են առաջնահերթությամբ մինչ այլ պահանջների բավարարումը: Ավելին, ըստ կոնվենցիայի՝ պետության նկատմամբ պարտավորությունները չեն կարող գերակայել աշխատանքային հարաբերություններից բխող պարտավորությունների նկատմամբ: Իսկ նշվածից բացառություն, այն է՝ պետության հանդեպ պարտավորությունների սոցիալական ապահովության համակարգերի պահանջների առաջին հերթով բավարարում, կոնվենցիայով թույլատրվում է միայն այն դեպքում, երբ աշխատանքային հարաբերություններից բխող պարտավորությունների բավարարման համար ստեղծված են երաշխիքային հաստատություններ:

Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի Հանրապետությունը, կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, պարտավորություններ է ստանձնել նշված կոնվենցիայի երկրորդ (աշխատողների պահանջների պաշտպանությունն արտոնությունների միջոցով) և երրորդ (աշխատողների պահանջների պաշտպանությունը երաշխիքային հաստատությունների միջոցով) բաժիններով՝ կարող ենք փաստել, որ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման երկու ուղղություն է նախանշված՝ սահմանել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների գերակայություն շատ այլ արտոնյալ պահանջների նկատմամբ կամ աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարումն ապահովել երաշխիքային հաստատությունների միջոցով:

Ստացվում է, որ գործող օրենսդրությամբ նշված երկու ուղղություններով էլ ապահովված չէ կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարումը:

Մասնավորապես, օրենսդրական կարգավորումները ցույց են տալիս, որ սահմանված ժամկետում չներկայացված աշխատանքային հարաբերություններից բխող պահանջները և աշխատավարձի գծով այլ պահանջները բավարարվում են մի շարք պահանջների բավարարումից հետո և չնայած այդպիսի պահանջների առաջնահերթ բավարարման

<sup>6</sup> Տե՛ս ՄՄԿ-ի «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» կոնվենցիա, ընդունվել է 03.06.1992թ.:

կոնվենցիոն պահանջին՝ ազգային օրենսդրությամբ վերոնշյալ պահանջների՝ այլ պահանջների նկատմամբ ստորադասման հնարավորություն է ստեղծվում: Նման պարագայում, օրենսդրությամբ այդ պահանջների ստորադասման պայմաններում, կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով քննարկվող պահանջների բավարարումը պետք է իրականացվի երաշխիքային հաստատությունների միջոցով:

Մինչդեռ, Հայաստանում չկան նաև այնպիսի երաշխիքային հաստատություններ, որոնց միջոցով կապահովվի աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարումը: Բացի դրանից, «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» հանձնարարականով<sup>97</sup> սահմանված կարգով չկան նաև այնպիսի ֆոնդեր, որոնց միջոցով կբավարարվեն աշխատողների արտոնյալ պահանջներն արագացված կարգով:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների պայմաններում ներպետական օրենսդրությամբ առկա չեն համապատասխան կարգավորումներ՝ ուղղված գործատուի սնանկության պարագայում աշխատանքային հարաբերություններից բխող որոշակի պահանջների՝ այլ պահանջների նկատմամբ առաջնահերթությունն ապահովելուն, այդ պահանջների բավարարման համար երաշխիքային հաստատությունների ներդրմանը: Արդյունքում, ներդրված չեն նաև գործուն մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն կոնվենցիայով ամրագրված դրույթների իրագործմանը, ինչի հետևանքով անձինք փաստացի զրկվում են իրենց իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

Օրենսդրական կարգավորումներն այդպիսով սահմանափակում են աշխատողների պահանջների՝ որպես ապահովված պահանջների բավարարման կոնվենցիայով ամրագրված հնարավորություններն ու պետության հանդիպակաց պարտավորությունները:

Հարկ է նշել, որ խնդրի ուսումնասիրությունների շրջանակներում պարզվել է, որ նույն կոնվենցիան մասամբ կամ ամբողջովին վավերացրել են նաև մի շարք այլ երկրներ, որոնց մի մասը կոնվենցիայով պարտավորվել է ստեղծել երաշխիքային հաստատություններ, մի մասը՝ սահմանել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման արտոնյալ կարգ, մի մասն էլ՝ երկուսը միասին:

Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունը<sup>98</sup>, Ուկրաինայի Հանրապետությունը ընդունել են միայն Կոնվենցիայի 2-րդ բաժնի պարտավորությունները, որով պարտավորվել են և համապատասխանաբար սահմանել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման արտոնյալ կարգ: Ավելին, թեև Ուկրաինան պարտավորություններ չի ստանձնել Կոնվենցիայի 3-րդ բաժնով, այն քայլեր է ձեռնարկել երաշխիքային հաստատությունների ստեղծման ուղղությամբ<sup>99</sup>:

Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ նույնիսկ այն պետությունները, որոնք չեն վավերացրել «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների

---

<sup>97</sup> Տե՛ս «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» հանձնարարական, ընդունվել է 1992 թվականին, հասանելի է [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100\\_INSTRUMENT\\_ID:312518:NO](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100_INSTRUMENT_ID:312518:NO) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>98</sup> Տե՛ս Ռուսաստանի Դաշնության «Սնանկության մասին» օրենք, հասանելի է <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?rnd=7AEF7D51E5815E9F3A880CB65725420B&req=doc&base=LAW&n=342182&REFDOC=328335&REFBASE=LAW#2iesock47mu> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>99</sup> Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների և առաջարկությունների կիրառման վերաբերյալ փորձագետների հանձնաժողովի 2012 թվականին Ուկրաինային ուղղված ուղիղ հարցում հասանելի է [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100\\_COMMENT\\_ID:3081258](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100_COMMENT_ID:3081258) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պաշտպանության մասին» կոնվենցիան, ևս նախատեսում են գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունը երաշխիքային հաստատությունների միջոցով: Օրինակ, Միացյալ Թագավորության «Աշխատանքային իրավունքների մասին» ակտի 182-րդ հոդվածի համաձայն՝ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողի պահանջները բավարարվում են Ազգային երաշխիքային հիմնադրամի հաշիվներից<sup>100</sup>:

Ավելին, ներկայացվածի կապակցությամբ հարկ է նշել, որ երաշխիքային հաստատությունների ստեղծման անհրաժեշտությունն ընդգծվել է նաև Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի գործատուի անվճարունակության դեպքում աշխատողի պաշտպանության մասին 2008/94/ԵՀ հրահանգի<sup>101</sup> 3-րդ հոդվածով, որի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն երաշխիքային հաստատությունների կողմից, նույն հրահանգի 4-րդ հոդվածին համապատասխան, աշխատողների աշխատանքային պայմանագրից կամ աշխատանքային հարաբերություններից բխող չբավարարված պահանջների՝ ներառյալ ազգային օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում արձակման վճարի, բավարարման երաշխավորումն ապահովելու ուղղությամբ:

Նշված խնդիրներն արտացոլվել են նաև ««Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի<sup>102</sup> վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքում, որում նշվել է աշխատանքային հարաբերություններից բխող պարտավորությունների բավարարման առաջնահերթության ամրագրման անհրաժեշտությունն ու պետության նկատմամբ պարտավորությունների գերակայության անթույլատրելիությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների՝ անհրաժեշտ է՝

1. օրենսդրորեն ամրագրել գործատուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման առաջնահերթ կարգը, որով կբացառվի աշխատանքային հարաբերություններից բխող որևէ պահանջի ստորադասումը,

2. ներդնել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման համար երաշխիքային հաստատություններ:

#### ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերով: ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով սահմանվել է

<sup>100</sup> Տե՛ս Միացյալ Թագավորության «Աշխատանքային իրավունքների մասին» ակտ, հասանելի է <https://www.legislation.gov.uk/ukpga/1996/18/section/182?fbclid=IwAR3zdL9H-wsPD7P762bIwBUSStLh7Y3y7jPHJB1sZOK9YI5iMSiKQAXoSQA> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>101</sup> Տե՛ս Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի գործատուի անվճարունակության դեպքում աշխատողի պաշտպանության մասին 2008/94/ԵՀ հրահանգ, հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A32008L0094> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>102</sup> Տե՛ս ««Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, հասանելի է <https://www.e-draft.am/projects/2014/about> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կրթության իրավունքը՝ որպես անձի հիմնական իրավունք, իսկ 15-րդ հոդվածով ամրագրվել է, որ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Կրթության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ վավերացրած մի շարք միջազգային պայմանագրերով՝ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայով, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայով, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրով և այլն: ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է, ի թիվս այլնի, ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները (4-րդ նպատակ):

Սույն գլխում անդրադարձ է կատարվում կրթության իրավունքի ապահովման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներին կրթության տարբեր մակարդակներում:

Անհատական բողոքների քննարկման և մշտադիտարկման աշխատանքների իրականացման արդյունքում արձանագրվել են կրթության իրավունքի սահմանափակման խնդիրներ, որոնցից են՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը, կրթությունից դուրս մնալը, ներառական և հատուկ կրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի հասանելիությունը, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային անբավարար պայմանները, ինչպես նաև ջեռուցման հետ կապված խնդիրները, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիությունը և այլն:

Դեռևս առկա են համակարգային խնդիրներ, որոնք խոչընդոտում են կրթության իրավունքի լիարժեք իրացմանը:

1. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումները նախադպրոցական կրթական հաստատություններում

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում և զեկույցներում տարիներ շարունակ բարձրաձայնվում է նախադպրոցական կրթական հաստատությունների հասանելիության խնդիրը, որը 2019 թվականին ևս շարունակել է չլուծված մնալ:

Կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է և ամրագրված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ ՀՀ վավերացրած մի շարք միջազգային փաստաթղթերով: ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով սահմանվել է կրթության իրավունքը՝ որպես անձի հիմնական իրավունք, իսկ 15-րդ հոդվածով ամրագրվել է, որ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների 4-րդ նպատակի համաձայն՝ բոլոր աղջիկները և տղաները պետք է ունենան որակյալ վաղ մանկության զարգացում, խնամք և նախադպրոցական կրթություն, որպեսզի նրանք պատրաստ լինեն նախնական կրթության:

Երեխայի զարգացման առաջին տարիները կարևոր են երեխայի սոցիալականացման և բնականոն զարգացման համար, ուստի նախադպրոցական ուսումնական հաստատությունը վաղ հասակում երեխայի կրթության իրավունքի իրականացման կարևոր ինստիտուտ է:

Մինչդեռ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ նախադպրոցական կրթական հաստատությունների անհասանելիության խնդիրների վերաբերյալ: Բողոքների ուսումնասիրությունը թույլ է տվել վեր հանել երեխայի համար նախադպրոցական կրթության սահմանափակման մի շարք համակարգային խնդիրներ:

Հայաստանում մինչև 5 տարեկան ավելի քան 171,000 երեխա մանկապարտեզ չի հաճախում<sup>103</sup>: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները և ուսումնասիրությունները վկայում են, որ այս ցուցանիշների պատճառները տարբեր են: Օրինակ՝ նախադպրոցական կրթությունից դուրս մնալու պատճառներից է Երևանում և որոշ մարզերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների գերծանրաբեռնվածությունը: Պաշտպանին ուղղված բողոքներ վկայում են, որ խնդիր է մարզերում և հատկապես գյուղական համայնքներում նախադպրոցական հաստատությունների բացակայությունը: Ավելին, ոչ բոլոր մանկապարտեզներն ունեն վաղ տարիքի երեխաների համար նախատեսված խմբեր: Այս պատճառով մինչև երեխայի 3 տարին լրանալը հնարավոր չի լինում կազմակերպել երեխայի կրթությունը նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

Վիճակագրական տվյալները վկայում են թե՛ նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ներգրավվածության ցածր մակարդակի, թե՛ վաղ խմբերի անբավարարության մասին:

Այսպես, ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2019 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցի» համաձայն՝ 2018 թվականին ՀՀ-ում գործել է 884 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 686-ը՝ մանկապարտեզ, 67-ը՝ մսուր-մանկապարտեզ, 131-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 824-ը համայնքային ենթակայության է, 10-ը՝ գերատեսչական և 50-ը՝ ոչ պետական<sup>104</sup>: Տվյալների վերլուծությունը վկայում է, որ երեխաների ընդգրկվածությունը հատկապես ցածր է մարզերում: Այսպես, երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում 0-5 տարեկան բնակչության թվաքանակից ընդհանուր կազմել է 32.6% (քաղաքներում՝ 38%, գյուղերում՝ 22.6%, իսկ 0-2 տարեկան բնակչության 4.8%, 3-5 տարեկան բնակչության՝ 58.4%<sup>105</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանին պետական իրավասու մարմինների ներկայացրած տվյալները ևս վկայում են այն մասին, որ երեխաների խմբերը, հատկապես վաղ տարիքի դեպքում բավարար չեն: Երևանի քաղաքապետարանի «Մանկապարտեզ» կառավարման համակարգի տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականի փետրվար ամսվա դրությամբ մանկապարտեզ հաճախում է 30431 երեխա, և հերթագրված է 8461 երեխա: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան քաղաքում գործում է 161 մանկապարտեզ, 974 խումբ՝ վաղ տարիքի (2-3 տարեկան)՝ 88 խումբ, կրտսեր նախադպրոցական (3-5 տարեկան)՝ 569 խումբ և ավագ նախադպրոցական (5-6 տարեկան)՝ 317 խումբ:

Մարզերի նախադպրոցական ուսումնական հաստատություններում վաղ տարիքի խմբերը նույնպես զգալիորեն ավելի քիչ են, քան այլ խմբերը: Օրինակ՝ Գեղարքունիքի մարզում գործում է համայնքային ենթակայության 51 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ հաճախում են 4199 երեխա, որից ընդամենը 123-ն են հաճախում վաղ տարիքի խումբ, իսկ կրտսեր և ավագ խմբերում սովորում են համապատասխանաբար 2597 և 1479 երեխա: Լոռու մարզում գործում է 72 համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություն, որոնցից՝ 14-ը կրտսեր տարիքի, 59-ը կրտսեր և ավագ տարիքի երեխաներ են հաճախում: Միայն Վանաձորի երեք մանկապարտեզ

<sup>103</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՄԵՖ), հասանելի է <https://cutt.ly/Ltd9oC5> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>104</sup> Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2019 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցը», հասանելի է [https://www.armstat.am/file/article/poverty\\_2019\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf) հղումով, էջ 159, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>105</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2019\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf) հղումով, էջ 160, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ունի վաղ տարիքային խումբ: Նշված 72 մանկապարտեզների 182 խմբեր հաճախում է 5146 երեխա՝ վաղ տարիքի խմբերում՝ 241 երեխա, կրտսեր խմբերում՝ 3340 երեխա և ավագ տարիքի խմբերում՝ 1565 երեխա:

ՀՀ Վայոց ձորի մարզում վաղ տարիքի մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններ գոյություն չունեն առհասարակ, իսկ այդ տարիքային խմբի երեխաների խնամքը իրականացվում է 3 մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործում են 16 կրտսեր և 16 ավագ խմբեր:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության խնդիրը տարածված է ամբողջ հանրապետությունում: Այսպես, Արմավիրի մարզի 97 համայնքներից 54-ում առկա չէ նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մարզում գործում է 63 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Արագածոտնի մարզի 72 համայնքներից 38-ում առկա չէ նախադպրոցական ուսումնական հաստատություն և 6 համայնքում գործում է վաղ մանկական զարգացման կենտրոն: Արարատի մարզում կրտսեր և ավագ տարիքի երեխաների համար գործում է 81 մանկապարտեզ (3-ը գործունեությունը սկսել են 2019 թվականից) և 32 նախակրթարան: Մարզի 6 համայնքներում չկան նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Գեղարքունիքի մարզի 57 համայնքից 9-ում առկա չէ նախադպրոցական ուսումնական հաստատություն: Կոտայքի մարզի 15 բնակավայրում առկա չէ նախադպրոցական ուսումնական հաստատություն: Լոռու մարզի 53 համայնքում առկա չէ նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից 17 համայնքի դպրոցում գործում է նախակրթարան, որտեղ 5 տարեկան երեխաները ստանում են նախադպրոցական կրթական ծառայություն: Շիրակի մարզի 42 համայնքներից 20-ում առկա չեն նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Մարզի Սպանդարյան, Գեղանիստ համայնքներում և Ախուրյան խոշորացված համայնքի Կամո բնակավայրում կառուցվել, իսկ Մարմաշեն միավորված համայնքի Կապս բնակավայրում վերակառուցվել ու շահագործման են հանձնվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների նոր շենքեր, որոնք դեռևս չեն գործարկվել: Սյունիքի մարզի բոլոր 8 համայնքներում նախադպրոցական ուսումնական հաստատություններ առկա են, սակայն տվյալ համայնքի ոչ բոլոր բնակավայրերում: Տավուշի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատություն չի գործում 15 բնակավայրում: Վայոց ձորի մարզն ունի 8 համայնք, որից 6-ը խոշորացված: Միայն Եղեգիս խոշորացված համայնքում նախադպրոցական ուսումնական հաստատություն չկա:

Վաղ տարիքի երեխաների խմբերի անհամեմատ փոքր քանակը նախադպրոցական ուսումնական հաստատությունների առհասարակ բացակայության խնդրի հետ մեկտեղ ստեղծում են մի իրավիճակ, որ մինչև երեխայի 3 տարին լրանալը կամ հանրակրթական ուսումնական հաստատություն հաճախելը վերջինիս կրթությունը կազմակերպել հաճախ հնարավոր չի լինում:

Նախադպրոցական կրթությունից դուրս մնալու պատճառներից է նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների գերծանրաբեռնվածությունը: Մրա հետ կապված 2019 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանը բողոքներ է ստացել: Խնդիրը հիմնականում տարածված է Երևան քաղաքում, երբ ծնողներն իրենց բնակության վայրին համապատասխան նախադպրոցական ուսումնական հաստատություններում չեն կարողանում ապահովել երեխաների կրթությունը: Հերթում սպասելու արդյունքում լրանում է երեխայի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելու տարիքը, իսկ որոշ դեպքերում որպես այլընտրանք ծնողներին առաջարկվում է երեխայի կրթությունը կազմակերպել ծնողի բնակության և աշխատանքի վայրից հեռու գտնվող նախադպրոցական

ուսումնական հաստատություն, ինչն իր հերթին հավելյալ բարդություններ է ստեղծում և որոշ դեպքերում անհնար դարձնում երեխայի կրթությունը:

Հերթագրման խնդիրների լուծման առնչությամբ հարկ է նշել, որ Երևանի քաղաքապետարանը 2019 թվականի ապրիլից գործարկում է «Մանկապարտեզ» կառավարման համակարգը երեխաների հերթագրման և ընդունելության գործընթացների կազմակերպման նպատակով: Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ համակարգի գործարկումից առ 2020 թվականի փետրվար ամիսը բողոքներ չեն ստացել: Միննույն ժամանակ, պետք է արձանագրել, որ նման բողոք հասցեագրվել է Մարդու իրավունքների պաշտպանին: Մասնավորապես, բարձրացված խնդիրը վերաբերել է երեխայի մանկապարտեզի էլեկտրոնային համակարգում հերթագրումից դուրս մնալուն: Հերթագրումից դուրս մնալու հետևանքով, լինելով 2016 թվականից հերթագրված, երեխան չի կարողացել հաճախել իր բնակավայրին մոտ գտնվող այլ մանկապարտեզ, քանի որ բնակավայրին մոտ երկրորդ մանկապարտեզում համապատասխան տարիքային խումբ չի ձևավորվել: Արդյունքում, ծնողին առաջարկվել է, որ երեխան այցելի մեկ այլ մանկապարտեզ, որը վերջինների բնակավայրից հեռու է գտնվում:

Հերթագրման հետ կապված խնդիրները պայմանավորված են նաև նախակրթության ոլորտում առկա օրենսդրական թերի և ոչ միասնական կարգավորումներով, մասնավորապես՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունման միասնական կարգի բացակայությամբ: Այսպես, առկա չէ որևէ կենտրոնական մարմնի կողմից հաստատված ՀՀ-ում նախնական ուսումնական հաստատություն ընդունման կարգը: Փոխարենը, յուրաքանչյուր համայնք ինքնուրույն է կարգավորում այդ խնդիրը:

Խնդրի առնչությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեղեկատվության համաձայն՝ նախարարությունը մշակել է ««Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Նախագծի 20-րդ հոդվածով նախադպրոցական կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի լիազորություններում ամրագրված է՝ «10) սահմանում է նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը» դրույթը:<sup>106</sup> Իսկ օրենքի նախագծի ընդունումից հետո կմշակվեն ենթաօրենսդրական ակտեր, այդ թվում՝ նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ավելացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը հանրապետության ամբողջ տարածքում, հատկապես մինչև 3 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար,

2. ներդնել միասնական կենտրոնացված համակարգ և ապահովել առկա համակարգի անխափան աշխատանքը երեխաների՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունման համար,

3. օրենսդրորեն ամրագրել երեխաների՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունելության կարգ:

2. Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հարցը

Շարունակում է չլուծված մնալ հանրապետության մարզերում համայնքային նախադպրոցական հաստատությունների վճարովի լինելու հարցը, որի վերաբերյալ

<sup>106</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1574/about> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանը բողոքներ է ստացել նաև 2019 թվականի ընթացքում: Խնդիրն այն է, որ Երևան քաղաքում նախադպրոցական կրթությունն անվճար է, իսկ մարզերում՝ վճարովի: Բացի այդ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարները տարբերվում են համայնքից համայնք: Ավելին, Երևանում հաշվառում չունեցող երեխաների համար Երևանում նախադպրոցական կրթությունը վճարովի է, երբ Երևան քաղաքում այդ կրթությունն այլ երեխաների համար անվճար է կազմակերպվում<sup>107</sup>:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը բողոքներ է ստացել, որոնց համաձայն՝ շատ դեպքերում վարձավճարների տրամադրման անհնարինության պատճառով հնարավոր չի լինում երեխայի կրթությունը կազմակերպել նախադպրոցական ուսումնական հաստատությունում, երեխաներն ուսումնական հաստատության բացակայության կամ դրա գերծանրաբեռնվածության պատճառով ստիպված են լինում այցելել այլ ուսումնական հաստատություն, որտեղ վճարն ավելի բարձր է կամ այդ համայնքում հաշվառված չլինելու պատճառաբանությամբ ավելի մեծ չափի վարձավճար է սահմանվում: Այլ համայնքում կամ բնակության վայրին ոչ հարմար ուսումնական հաստատություն այցելելու համար վճարվող գումարից զատ ծնողների համար ավելանում են նաև հավելյալ այլ ծախսեր: Տվյալ համայնքում նախադպրոցական ուսումնական հաստատության բացակայության պատճառով ծնողները ստիպված են լինում երեխաներին տանել այլ համայնքի մանկապարտեզ, որտեղ վճարը բարձր է, և բացի այդ ավելանում են այլ ծախսեր, որոնք ապահովել չկարողանալու պատճառով երեխաները պարզապես դուրս են մնում նախադպրոցական կրթությունից<sup>108</sup>:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում քաղաքապետը կազմակերպում է Երևանի ենթակայության դպրոցների, մանկապարտեզների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները: 2016 թվականի մարտի 4-ի թիվ 706-Ա որոշմամբ հաստատվել է «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 31-ի N 1101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշումը, որի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար, այդ թվում, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Երևան քաղաքում:

Ի տարբերություն այս կարգավորման՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները: Այս կարգավորման պարագայում յուրաքանչյուր համայնք սահմանում է տարբեր վճարների չափեր նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

ՀՀ Արմավիրի մարզի համայնքներից ստացած տեղեկատվության համաձայն՝ 63 նախադպրոցական ուսումնական հաստատություններից միայն Արևադաշտ համայնքում է գործում անվճար (ամբողջ ֆինանսավորումն իրականացվում է եկեղեցու կողմից): ՀՀ

<sup>107</sup> Տե՛ս Երևանի քաղաքապետի 2016 թվականի մարտի 4-ի «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 31-ի N 1101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 706-Ա որոշումը, հասանելի է <https://www.yerevan.am/am/mayors-decisions/706-a-3/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>108</sup> Տե՛ս <https://hetq.am/hy/article/113582> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



Արագածոտնի մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները վճարովի են: Անվճար դարձնելու համար համայնքները չունեն անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, հետևաբար այդ ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել: 2019 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններն անվճար դարձնելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Կոտայքի մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները չի նախատեսվում դարձնել անվճար, սակայն Մեղրաձոր համայնքում գործող 2 նախադպրոցական ուսումնական հաստատությունները գործում են անվճար, Քանաքեռավան համայնքում 2018 թվականից քայլեր են իրականացվում 2021 թվականից համայնքային ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունը դարձնել անվճար: Լոռու մարզի Շնող համայնքի երկու նախադպրոցական ուսումնական հաստատությունները, Դսեղ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունը և Օձուն համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունն անվճար են: Մինչդեռ, օրինակ, չի նախատեսվում անվճար դարձնել Շիրակի մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները: Սյունիքի մարզի 8 համայնքներից միայն Քաջարան համայնքում է, որ 2018 թվականից «Լեռնաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծառայությունները համայնքի ավագանին դարձրել է անվճար: Մյուս համայնքներում դեռևս նմանատիպ ձեռնարկումներ նախատեսված չեն: Վայոց ձորի մարզի 7 համայնքներից ստացած տեղեկատվության համաձայն՝ որևէ համայնք չի նախատեսում նախադպրոցական ուսումնական հաստատությունները դարձնել անվճար, և 2019 թվականին այդ ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել:<sup>109</sup>

Տարբեր մարզերից ստացված տվյալների ամփոփմամբ՝ կարելի է նշել, որ հանրապետության մարզերում նախադպրոցական կրթությունը վճարովի է իրականացվում՝ մի քանի սակավաթիվ բացառությամբ և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններն անվճար դարձնելու ուղղությամբ 2019 թվականին քայլեր չեն ձեռնարկվել մի շարք մարզերում, մասնավորապես, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 6-րդ կետ համաձայն՝ երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է: Ավելին, ըստ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ նախադպրոցական կրթության ոլորտում պետական քաղաքականության խնդիրներն են՝ նախադպրոցական կրթության զարգացմանն աջակցելը, պետական կրթական չափորոշիչների շրջանակներում նախադպրոցական կրթության ծրագրերում ընդգրկվածության ավելացումը, երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը նպաստելը:

Համայնքային ենթակայության և ոչ միայն նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հարցը երեխայի կրթության իրավունքի իրականացման խոչընդոտ է, ուստի, խնդիրը պետք է հատուկ ուշադրության ներքո լինի, և հստակ քայլեր պետք է իրականացվեն կրթությունը մատչելի և հասանելի դարձնելու ուղղությամբ:

<sup>109</sup> Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների, 2020 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել և հատկացնել հավելյալ ֆինանսական միջոցներ անվճար նախադպրոցական կրթությունը Երևանում և մարզերում բոլոր երեխաների համար ապահովելու նպատակով:

3. Հանրակրթական ուսումնական հաստատություն երեխայի ընդունելության ընթացակարգերի ոչ լիարժեքությունը

Համակարգային առումով շարունակվում է չլուծված մնալ երեխաների՝ իրենց բնակության վայրին մոտ հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունվելու անհնարինության հարցը, որը կրթության ոլորտի շարունակական խնդիրներից է: Մասնավորապես, հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդունելության ընթացակարգերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք օրենսդրորեն լիարժեք կարգավորված չեն, ինչի արդյունքում երեխաների կրթության իրավունքի իրացումը չի ապահովվում:

Խնդիրն այն է, որ ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն ընդունելության առաջնահերթությունների օբյեկտիվ չափանիշներ: Համապատասխան իրավական հիմքի բացակայությունն ուսումնական հաստատությունների հայեցողական որոշման կայացման առիթ է հանդիսանում՝ առաջնահերթ ուշադրություն չարժանացնելով երեխաների լավագույն շահին և չառաջնորդվելով վարչարարության հիմնարար սկզբունքներով: Վերջինս նաև երեխաների ուսումնական հաստատություն ընտրելու իրավունքի խախտման է հանգեցնում:

Նախընտրելի ուսումնական հաստատություն հաճախելու անհնարինության իրավիճակում այլ ուսումնական հաստատություն հաճախելը չի բխում երեխաների լավագույն շահից հաշվի առնելով երեխաների անվտանգության հարցը և ծնողների կողմից լրացուցիչ ֆինանսական ծախս կատարելու անհրաժեշտությունը, քանի որ հիմնականում ընդունելության կարգով նախապատվության տալու չափորոշիչների բացակայության հետևանքով երեխաները հաճախում են այլ ավելի հեռու գտնվող ուսումնական հաստատություններ: ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանի հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդունելությունը դպրոցում, որպես կանոն, կազմակերպվում է երկու փուլով՝ տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև 30-ը և օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ներառյալ, իսկ նույն հավելվածի 14-րդ կետը սահմանում է երեխային (սովորողին) դպրոց ընդունելու կամ տեղափոխելու դեպքում ծնողի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Մակայն իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդունելության ընթացակարգի վերաբերյալ որոշումների կայացման հստակ չափորոշիչներ սահմանված չեն. սահմանված չեն որոշումների կայացման ժամկետներ, չկան դպրոցի ընդունելության համար ծնողի կողմից անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու համար իրազեկման վերաբերյալ սահմանված կարգեր: Խնդիրն այն է, որ իրազեկում պատշաճ չի իրականացվում, այսինքն՝ անհրաժեշտ փաստաթղթերի կամ ընդունելության ժամկետների վերաբերյալ հստակ տեղեկությունը մատչելի կերպով չի ներկայացվում ծնողներին: Իրազեկման այս բացակայության հետևանքով առաջանում են մի շարք այլ ընթացակարգային խնդիրներ. ծնողներին երբեմն խնդրում են ավելի ուշ ներկայացնել փաստաթղթերը, իսկ հետագայում՝ մերժում երեխայի ընդունելությունը ժամկետների բացթողնման արդյունքում տեղերի լրացված լինելու կամ այլ պատճառաբանությամբ:

Հարկ է նկատել, որ բարձրացված խնդիրները վերլուծվել են Մարդու իրավունքների պաշտպանի՝ դեռևս 2017 թվականին կայացված իրավունքների կամ ազատությունների

խախտման առկայության մասին որոշմամբ: Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում խնդիրների դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք շարունակական բնույթ են կրում:

Խնդրի լուծման նպատակով պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ընդունելությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել օրենսդրությամբ սահմանված միասնական կարգով, որի պարագայում ընդունելության իրականացման վերաբերյալ կարգավորումները հստակ և կանխատեսելի կլինեն ծնողների համար: Ուստի, անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն հրամանի հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման» կարգում:

Այս առնչությամբ անհրաժեշտ է ընդգծել, որ թե՛ 2017 թվականի, թե՛ 2019 թվականի կայացված «Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին» որոշումներում առաջարկվել է քննարկել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը: Չնայած որոշումներում բարձրացված՝ օրենսդրական կանոնակարգումների անհրաժեշտության մասին Պաշտպանի եզրահանգումներին՝ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր դեռևս չեն ձեռնարկվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ընդունել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640 հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանը կամ այլ իրավական ակտերով սահմանել հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության հստակ և միասնական ընթացակարգեր,

2. ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության ընթացակարգերի պահանջների կատարումը:

4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը

Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձման խնդիրը շարունակվել է չլուծված մնալ 2019 թվականին, որն արձանագրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում:

Խնդիրն այն է, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է միայն առաջինից չորրորդ դասարանի աշակերտների՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերը, իսկ այլ դասարանների աշակերտների դասագրքերի համար սովորողների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից դասագրքերի օգտագործման դիմաց վճարվում են ներդրումային գումարներ, որոնց չափը հաստատվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2009 թվականի օգոստոսի 21-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման

կարգը հաստատելու մասին» № 752-Ն հրամանի (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Հրաման) հավելվածի 5-րդ կետի: Ընդ որում, այդ ներդրումային գումարների վճարումը դասագրքերի տրամադրման համար պարտադիր պայման է:

Ավելին, ներդրումային վճարների վերաբերյալ խոցելի խմբերի երեխաների դասագրքերի համար որևէ բացառություն նախատեսված չէ: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ աշակերտների թվի, ֆինանսավորման իրականացման բանաձևը, որում ներառված է նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի համար փոխհատուցվող գումարի չափը: Ըստ այդմ՝ հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը քննարկվում և ձևավորվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում, որը հաստատվում է տնօրենի կողմից:

Սակայն իրավական ակտերով նախատեսված չեն այն հստակ չափանիշները, սկզբունքները և փաստերը, որոնց հաշվառմամբ պետք է ընտրվեն ծրագրի շահառու երեխաները: Նշված չափանիշների բացակայությունը լայն հայեցողություն է տալիս գործող իրավական ակտերը կիրառողներին՝ գործնականում առաջացնելով զգալի խնդիրներ: Ներկայիս թերի կարգավորումների պատճառով երեխաների սոցիալական կարիքների գնահատումը փաստորեն իրականացվում է երկակի չափորոշիչների հիման վրա, որոնք հենված են սուբյեկտիվ մոտեցումների վրա: Սա անընդունելի է և պարունակու են նաև կոռուպցիոն ռիսկեր:

Բացի լայն հայեցողության խնդրից՝ հաճախ երեխաները կամ նրանց ընտանիքները խուսափում են այդ արտոնությունից չօգտվելու մասին բարձրաձայնելուց, քանի որ հաճախ այս իրավիճակը հանգեցնում է խտրական վերաբերմունքի, նույնիսկ ուսումնական հաստատության անձնակազմի կողմից: Ավելին, նման իրավիճակում, երբ բացակայում են հստակ կողմնորոշիչ չափանիշներ, սոցիալական նույնանման պայմաններում ապրող երեխաները խտրականության են ենթարկվում, քանի որ այդ պարագայում ստացվում է, որ ներդրումային գումարների գանձումը տարբեր կերպ է իրականացվում հանրապետության տարբեր բնակավայրերում:

Անվճար միջնակարգ կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, որի համաձայն՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Ավելին, ՀՀ Սահմանադրության՝ անձի հիմնարար իրավունքներն ամրագրող 2-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

Ճանաչելով անվճար միջնակարգ կրթության իրավունքը և այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ, դրա բաղկացուցիչ մասը կազմող դասագրքերի համար նախատեսելով վճար՝ օրենսդրական որևէ տարանջատում չկա խոցելի խմբերի երեխաներին դասագրքերով ապահովելու վերաբերյալ: Ավելին, դասագրքերով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովելու առկա ծրագրային միջոցների իրականացմամբ ավելանում է առանձին խումբ երեխաների առանձնացումը հասակակիցներից և խոցելիությունը՝ հանգեցնելով խտրական վերաբերմունքի: Խնդրի առնչությամբ պետք է նշել, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է, ի թիվս այլնի, ապահովել կրթության բոլոր մակարդակներում կրթության հավասար հասանելիությունը խոցելի խմբերի անձանց,

մասնավորապես, հաշմանդամություն ունեցող մարդկանց, համայնքաբնակ (indigenous) անձանց և խոցելի վիճակում գտնվող երեխաների համար<sup>110</sup>:

Խնդրի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, որի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 12-ի ՄԴՈ-1419 որոշմամբ հայտնել է, որ պետությունը պարտավոր է երաշխավորել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող բավարար որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր: Ավելին, սահմանադրական դատարանը ևս ընդգծել է սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը սահմանելու անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում փոխհատուցման կարգը խնդրահարույց է դասագրքերի հասանելիությունը երաշխավորելու առումով առնվազն երկու պատճառով: Նախ՝ նշված կարգը չի հստակեցնում ընտանիքի՝ «սոցիալապես անապահով» կարգավիճակ ձեռքբերելու և այդ կարգավիճակով պայմանավորված՝ դասագրքերն անվճար կամ էականորեն նվազեցված գնով հասանելիությունն ապահովելու հստակ ընթացակարգեր: Երկրորդ՝ մարդու հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը՝ տվյալ դեպքում սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, պետք է ամրագրվեն օրենքով և ի կատարումն այդ օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Հարցի կապակցությամբ դեռևս 2018 թվականի սեպտեմբերի 19-ին ՀՀ կրթության և գիտության նախարարությունից տեղեկացրել են, որ հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 12-ի ՄԴՈ-1419 որոշմամբ ներկայացված դիրքորոշումները՝ նախարարությունը մշակում է և շրջանառության մեջ կդնի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում տրամադրելու և չափանիշներ սահմանելու վերաբերյալ կարգ, որով կերաշխավորվեն սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր:

2020 թվականի մարտի 6-ին ընդունված ««Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասում լրացում կատարել, որի համաձայն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունն է, ի թիվս այլնի, հաստատել Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը: Այս դրույթի սահմանումը ենթադրում է ենթաօրենսդրական ակտի ընդունում, սակայն օրենքում, ի տարբերություն դրա այլ հոդվածներով ամրագրված դրույթների, որոնք ենթադրում են այլ ենթաօրենսդրական ակտի ընդունում, սահմանված չէ դրա ընդունման որևէ ժամկետ և հստակ չէ 2020 թվականի մարտի 6-ին ընդունված օրենքով ամրագրված կարգի մշակումը, որով պետք է սահմանվեն խնդրո առարկա չափանիշներ:

Ուստի, պետք է ընդգծել, որ Սահմանադրական դատարանի դեռևս 2018 թվականի հունիսի 12-ին հայտնած դիրքորոշումը, համաձայն որի՝ սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը,

<sup>110</sup> ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, 4.5 նպատակ:

պետք է ամրագրվեն օրենքով և ի կատարումն այդ օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, 2018 և 2019 թվականների ընթացքում չի իրականացվել. «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» օրենքն ընդունվել է միայն 2020 թվականի մարտի 6-ին, իսկ օրենքի տվյալ դրույթի կատարումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ չի ընդունվել: Ավելին, նախագիծ չի մշակվել և չի շրջանառվել: Ճանաչելով անվճար միջնակարգ կրթության իրավունքը և ամրագրելով ՀՀ-ում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական պարտադիր կրթությունը՝ կրթության իրավունքի իրացման համար անհրաժեշտ բաղկացուցիչ մասը կազմող դասագրքերի համար նախատեսված վճարն առանց խոցելի խմբերի երեխաների համար որևէ տարանջատման օրենսդրական այս թերության վերցման հարցը պետք է լուծում ստանա հրատապության կարգով, քանի որ այն անմիջականորեն առնչվում է յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքին, սոցիալական արդարությանը և այլ հիմնահարցերին:

Ուստի, անհրաժեշտ է հստակ չափանիշներ ամրագրել խոցելի ընտանիքների կողմից դասագրքերի ներդրումային գումարների վճարման աջակցության տրամադրման համար՝ ապահովելով ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 12-ի ՍԴՈ-1419 որոշման կատարումը:

#### 5. Կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով

Համակարգային առումով շարունակվում է չլուծված մնալ կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության ապահովման խնդիրը, որը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումներում և զեկույցներում մշտապես բարձրաձայնվել է: Խնդրին հատկապես մանրամասն անդրադարձ է կատարվել նաև «Հայաստանի Հանրապետության կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում<sup>111</sup>:

2019 թվականին ևս չի լուծվել «կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացությունը որևէ իրավական ակտով սահմանելու հարցը, ինչն ինքնին առաջացնում է խնդիրներ: Հասկացության սահմանումը չափանիշների ամրագրում է, որը կհստակեցնի նաև կրթությունից դուրս մնալու խնդրի լուծման շուրջ այլ հարցերի իրականացումը: Խնդրի շրջանակներում չափազանց կարևոր է հստակ վիճակագրական տվյալների հավաքագրումը և մշակումը: Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ հստակ և միասնական վիճակագրության վարումը կարևոր է խնդրի լուծման միջոցառումների համար, սակայն օրենսդրական այս բացը, երբ չկա հստակ սահմանում, խոչընդոտ է միջոցառումների ձեռնարկման և դրանց իրականացման արդյունավետության բարձրացման համար:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019 թվականի զեկույցի համաձայն՝ 2018-2019 ուսումնական տարվա սկզբին Հայաստանում

---

<sup>111</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը, հասանելի է <http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանրակրթությունից դուրս է մնացել 367 երեխա<sup>112</sup>: Նույն զեկույցի համաձայն՝ դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 83%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 91.1%, հիմնական դպրոցում՝ 89.4%, ավագ դպրոցում՝ 59.9%: Մեծային հավասարության ցուցանիշը կազմել է 1.04, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 1.01, հիմնական դպրոցում՝ 1.01, ավագ դպրոցում՝ 1.04<sup>113</sup>:

Նշված զեկույցի համաձայն՝ հանրակրթական դպրոցներից ուսումնական անավարտ թողած աշակերտների թվաքանակը 2018/2019 ուսումնական տարվա սկզբին ամենաբարձրը կազմել է Երևան քաղաքում՝ 179 աշակերտ, Արարատի մարզում՝ 35 աշակերտ և Շիրակի մարզում՝ 33 աշակերտ:

Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառները տարբեր են, ինչպես օրինակ՝ ոչ բավարար սոցիալական պայմանները, ծնողների թույլ չտալը, երեխայի հաշմանդամությունը, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ոչ պատշաճ արձագանքը, երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելը, իսկ առանձին էթնիկ խմբերի դեպքում անգամ երեխաների վաղ ամուսնությունը: Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի 2019 թվականի զեկույցի՝ հանրակրթությունից դուրս մնացած 367 երեխայից 105 դեպքերում պատճառը սոցիալ-տնտեսական վատ պայմաններն են, 196 դեպքերում՝ ծնողների՝ երեխային դպրոց չուղարկելը կամ թույլ չտալը<sup>114</sup>:

Բացի այդ, վաղ տարիքում աշխատելն արգելք է հանդիսանում երեխայի կրթության իրավունքի իրականացման համար հատկապես մարզերում: Այսպես, 2017 թվականի «Երեխաների կարծիքով...» համազգային հարցման համաձայն՝ Հայաստանի որոշ մարզերում երեխաները դասերից բացակայում են հենց նման պատճառաբանությամբ: Այսպես, աշխատանքում ներգրավված լինելու պատճառով դպրոց հաճախել չկարողացող աշակերտների ամենամեծ տոկոսները գրանցվել են Գեղարքունիքի (26%), Տավուշի (19%) և Վայոց Ձորի (15%) մարզերում<sup>115</sup>:

Մեկ այլ խնդիր է հանրակրթական ուսումնական հաստատություններում հաշվառված և փաստացի հանրակրթական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների թվի անհամապատասխանության հարցը: Վերջինս խոչընդոտ է վիճակագրական տվյալների ճշգրտության, և ըստ այդմ, խնդիրների դեմ պայքարի և դրա կանխարգելման արդյունավետության համար: Խնդիրն այն է, որ ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է աշակերտների թվին համապատասխան՝ պատճառ դառնալով երեխաների բացակայության հարցին հետևողական չլինելու համար<sup>116</sup>: Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու խնդրին անդրադարձ է կատարել նաև Կանանց

<sup>112</sup> Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2019 թվականի զեկույցը, հասանելի է [https://www.armstat.am/file/article/poverty\\_2019\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf) հղումով, էջ 162, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>113</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2019\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf) հղումով, էջ 162, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>114</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/poverty\\_2019\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf) հղումով էջ 162, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>115</sup> Տե՛ս «Երեխաների կարծիքով...» համազգային հարցումը, հասանելի է [https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/YV\\_brief%20version\\_Final%20%20Oarm.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/YV_brief%20version_Final%20%20Oarm.pdf), հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>116</sup> Տե՛ս Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, հասանելի է <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում<sup>117</sup>:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ, նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը 2016 թվականին մշակել և դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (ԴԿՏՀ) ներդրել է «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների հաշվառման» ենթահամակարգը (մոդուլը): Սակայն այս համակարգը լիարժեք չի գործում, քանի որ իրավական կարգավորումները դեռևս առկա չեն: Խնդիրն այն է, որ չի ընդունվել դեռևս 2017 թվականից մշակված «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը», որով սահմանվելու են այդ գործընթացի մասնակից՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, բոլոր պատասխանատու կառույցների և շահագրգիռ մարմինների պարտավորությունների շրջանակները: Նշված գործընթացին զուգահեռ իրականացվել է նաև ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններ 2017-2018, 2018-2019, 2019-2020 ուսումնական տարում առաջին դասարան ընդունված երեխաների մասին տեղեկատվության հավաքագրում՝ Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի (ԴԿՏՀ) միջոցով:

Նախարարության տվյալների համաձայն՝ մշակվել է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի նպատակը յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրացումը, դպրոցահասակ երեխաների հաշվառման գործընթացի կանոնակարգումը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, բոլոր պատասխանատու կառույցների և շահագրգիռ մարմինների պարտավորությունների իրականացման ապահովումն է՝ երեխաների՝ հանրակրթության մեջ ընդգրկման գործընթացում: Նախարարությանը մշակել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայում գտնվում է ՀՀ Ազգային ժողովում, որի ընդունումից հետո դրա հիման վրա պետք է ընդունվի «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգի» նախագիծը:

Այսպես, 2019 թվականին ևս չեն ընդունվել նշված օրենսդրական փոփոխությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն տարիներ շարունակ չլուծվող այս խնդրի կարգավորման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. օրենսդրորեն ամրագրել «կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացությունը՝ նախատեսելով հստակ չափանիշներ, որոնցով հնարավոր կլինի գնահատել երեխայի կարգավիճակը,
2. ընդունել «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը»,
3. վարել միասնական և տարանջատված վիճակագրություն կրթությունից դուրս մնացած երեխաների թվի, կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ,
4. ձեռնարկել քայլեր նման դեպքերը կանխելու համար: Այսպիսի քայլեր կարող են լինել՝
  - աջակցությունը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ բնակության վայրից հեռու գտնվող ուսումնական հաստատություններ հասնելու գործում,

<sup>117</sup> Տե՛ս ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ Հայաստանի 5-6-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2016 թվականի նոյեմբերի 18, կետ 22 և 36, հասանելի է <http://www.refworld.org/pdfid/583863b34.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



- իրազեկման աշխատանքներ իրականացնել ծնողների և երեխաների հետ, մասնավորապես, տարբեր ընտանիքներում, որտեղ երեխայի՝ կրթությունից դուրս մնալու պատճառ է ծնողների թույլ չտալը,

- հաշմանդամության հիմքով կրթությունից դուրս մնալու բացառումը՝ ապահովելով կրթական ծրագրերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մատչելիությունը:

## 6. Ներառական և հատուկ կրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի հասանելիությունը

Համակարգային առումով շարունակվում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման խոչընդոտ հանդիսացող տարբեր խնդիրները: 2019 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքներով բարձրաձայնվել են երեխայի կրթության իրավունքի իրականացման սահմանափակման մասին: Մասնավորապես՝ հանրակրթական և հատուկ դպրոցներում հատուկ դասագրքերի սղության կամ առհասարակ բացակայության հարցերը: Ներառական կրթություն իրականացնող, ինչպես նաև հատուկ դպրոցներում տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ բավարար դասագրքերի ապահովման խնդիրը շարունակվում է մտահոգիչ մնալ նաև 2019 թվականի ընթացքում:

Դեռևս 2017 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել է բրայլյան համակարգով և խոսող դասագրքերի ցանկի ուսումնասիրություն, որի արդյունքները ևս վկայում են դասագրքերի մատչելիության խնդրի առկայության մասին: Խնդիրն այն է, որ որոշ դեպքերում դասագրքերն առկա են, սակայն պիտանի չեն, քանի որ ծրագրային առումով դրանք շատ հին են, այդ թվում, առկա են սովետական դասագրքեր:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող մարմին 2019 թվականին Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց այց է իրականացրել, որի ընթացքում իրականացվել է դպրոցում սովորող և խնամվող երեխաների խնամքի պայմանների, նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման վիճակի, ինչպես նաև երեխաների կրթության իրավունքին առնչվող հարցերի ուսումնասիրություն: Այցի ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, մասնավորապես, արձանագրվել է, որ դպրոցը չունի բավարար քանակությամբ բրայլյան համակարգով դասագրքեր և երեխաների ընդհանուր ուսուցումը հիմնականում կազմակերպվում է սովորական դասագրքերով, ինչը մեծ խնդիր է տեսողության խնդիրներ ունեցող երեխաների համար: Ըստ այցի պահին ներկայացված պարզաբանումների՝ դպրոցը չունի համապատասխան ֆինանսավորում բրայլյան համակարգով դասագրքերի տպագրության համար:

Հարկ է նկատել, որ բարձրացված խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է դեռևս 2017 թվականին: Տվյալ խնդիրն առկա է եղել նաև նախորդ այցերի ընթացքում, ինչը վկայում է, որ խնդիրը շարունակական բնույթ է կրում և 2019 թվականին ևս լուծում չի ստացել:

Ուսուցման գործընթացում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին համապատասխան սարքավորումներով և գրականությամբ ապահովելուն ուղղված քայլերի ձեռնարկման հետ կապված՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի՝ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության

կազմակերպմանն օժանդակող միջոցառումների» շրջանակում ձեռք են բերվել 2000 հատ բրայյան տետրեր՝ Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 դպրոցից ստացված հայտերի հիման վրա: Տպագրման է հանձնվել 6 անուն հանրակրթական դասագիրք՝ բրայյան տառատեսակով: Բացի այդ, տպագրվել են՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ձեռնարկ(3)» մեթոդական ուղեցույցն իր բրոշյուրներով, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում» մեթոդական ուղեցույց-ձեռնարկները՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ: Վերջինները նախատեսված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող՝ ներառական դպրոցների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների համար:

Կրթության իրավունքի իրականացման համար ուսուցման գործընթացի անբաժանելի և կարևոր մաս է կազմում դասագրքերի և ուսուցման ու դասապրոցեսի համար անհրաժեշտ այլ նյութերը (տետր, դիդակտիկ նյութեր և այլն): Վերջինների մատչելիության և ամբողջական հասանելիության ապահովման անհրաժեշտությունը հատկապես ընդգծվում է ներառական կրթության իրականացմամբ: Ներառական կրթության անցումը հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության մաս է կազմում, ինչն ամրագրված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում, որի 4-րդ հոդվածի 2.1 մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրականացումը, վերջինիս մատչելիությունն ամրագրված է ինչպես ներպետական, այնպես էլ՝ միջազգային փաստաթղթերով: Ավելին, պետությունը ստանձնել է ներառական և որակյալ կրթությանն առնչվող մի շարք պարտավորություններ: ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն 2017 թվականի պարբերական զեկույցում հայտնել է, որ չնայած ներառական կրթության աճող միտմանը՝ մտահոգիչ են հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների մատչելիության և խելամիտ հարմարեցումների, ինչպես նաև վարչական և ուսումնական կազմի ներառական կրթության մասին ոչ բավարար աջակցությունը և դասընթացների բացակայությունը, ինչպես նաև ներառական կրթությունը քաղաքային և համայնքային բնակավայրերում խթանող համապարփակ ռազմավարության բացակայության փաստով<sup>118</sup>:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2013 թվականի եզրափակիչ դիտարկումներում նշվում է, որ պետությունը պետք է շարունակի հաշմանդամություն ունեցող երեխաներին հիմնական կրթական համակարգում ներառմանն ուղղված իր ջանքերը, որն իրականացնելիս առանձին ուշադրության պետք է արժանանան հատուկ ուսումնական հաստատություններում ընդգրկված և մարզային շրջանների հաշմանդամություն ունեցող երեխաները:

<sup>118</sup>Տե՛ս ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն 2017 թվականի պարբերական զեկույցը, հասանելի է <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPrICAqhKb7yhspZQ2sppBOANJSxHHwrsEJbjcpUWkg%2bMkKIITZvw7JK%2buYWfpBtdMIEVnF0fSZiwodb8OBMgU4q3E3dlH%2fYkMw%2fe0juigiYWKOfVf6vzhs77> հղումով, 41-րդ պարբերություն, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Խնդրի առնչությամբ պետք է նշել, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է նաև ապահովել կրթության բոլոր մակարդակներում կրթության հավասար հասանելիությունը խոցելի խմբերի անձանց, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց, համայնքաբնակ անձանց և խոցելի վիճակում գտնվող երեխաների համար, ինչպես նաև նպատակ է հետապնդել կառուցել և բարելավել կրթական հաստատությունները, որոնք երեխաների, հաշմանդամություն ունեցող մարդկանց և գենդերային զգայունություն ունեն և պետք է ապահովել անվտանգ, բռնությունից զերծ, ներառական և արդյունավետ կրթական միջավայրեր բոլորի համար<sup>119</sup>: Պետք է նշել, որ 2014 թվականին «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պետությունը որդեգրել է ներառական կրթության մատչելիության պետական քաղաքականություն, որն ուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Այն ենթադրում է ներառական կրթության և յուրաքանչյուրի համար կրթության մատչելիության ապահովմանն ուղղված մի շարք քայլերի ձեռնարկում՝ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդնում մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ չնայած ձեռնարկված քայլերի, այնուամենայնիվ, գործնականում խնդիրները շարունակում են չլուծված մնալ<sup>120</sup>: Ճանաչելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը՝ պետության ջանքերը պետք է նպատակաուղղված լինեն յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար պայմանների և հավասար հնարավորության որակի ապահովմանը: Կրթության իրավունքի իրականացման համար նվազագույն պայման է մատչելի դասագրքերի ապահովումը, որը տարիներ շարունակ մնում է չլուծված՝ սահմանափակելով հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնական իրավունքի իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ապահովել մատչելի դասագրքերի անհրաժեշտ քանակ ամբողջ հանրապետության ներառական, ինչպես նաև հատուկ կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում,

2. ավելացնել ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին համապատասխան մատչելի դասագրքերի տպագրության ֆինանսավորումը:

7. Բողոքներ հանրակրթական ուսումնական հաստատություններում դրամահավաքի և այլ անօրինական գործողությունների վերաբերյալ

Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականին բողոքներ է ստացել նախորդ տարիներին բարձրացված ուսումնական հաստատություններում անօրինական դրամահավաքի, ինչպես նաև տնօրինության կամ ուսուցչական անձնակազմի իրավասությունների չարաշահման խնդիրների վերաբերյալ: Չնայած խնդիրների զգալի

<sup>119</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, 4.5 և 4.a նպատակներ, հասանելի է <https://sustainabledevelopment.un.org/sdg4> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>120</sup> Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման խոչընդոտ հանդիսացող տարբեր խնդիրների, ինչպես նաև դասագրքերի մատչելիության խնդրի մանրամասները նկարագրված են սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

նվազմանը՝ այդուհանդերձ դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք շարունակվում են հատկապես մարզերում:

2019 թվականի ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմի կողմից թույլ տված ոչ օրինական գործողությունների վերաբերյալ ստացել է 136 ահազանգ, իսկ դպրոցներում կատարվող անօրինական դրամահավաքի վերաբերյալ ստացել է 71 ահազանգ:

Ի պատասխան 2019 թվականի ընթացքում նշված ոլորտում խախտումների նվազեցման և համանման դեպքերը կանխելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հարցման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պարզաբանել է, որ հարցադրման առնչությամբ տեղեկություն առկա չէ: Նման պարզաբանման պարագայում, պարզ չէ, թե նշված և այլ ահազանգերի դեպքում ինչ քայլեր են ձեռնարկվել:

Խնդրի առնչությամբ հարկ է նշել, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից դեռևս 2016 թվականին մշակվել և 2018 թվականի հունվար ամսին շրջանառվել է կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի նախագիծը, սակայն այն 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ չի ընդունվել<sup>121</sup>:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշումը ևս առանձին կրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման և բացառման համար գործողություններ չի ներառում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. մանրամասն ուսումնասիրել նման դեպքերի առաջացման հիմքերը և պատճառները.
2. ուժեղացնել և թիրախավորել դպրոցներում անօրինականության, ներառյալ ցանկացած պատրվակով դրամահավաքության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման և սանկցիավորման մեխանիզմները,
3. մշակել և ընդունել կրթության ոլորտում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր խնդիրների դեմ համալիր պայքարի իրականացման համար:

8. Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ինչպես նաև ջեռուցման խնդիրներ

Շարունակվում են չլուծված մնալ ուսումնական հաստատություններում շենքային և գույքային անբավարար պայմանների և ջեռուցման հետ կապված խնդիրները, որոնք տարիներ շարունակ բարձրաձայնվել են Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում ու հաղորդումներում, ինչպես նաև հատուկ զեկույցներում:

Հանրակրթական ու նախադպրոցական կրթական ուսումնական հաստատությունների շենքային ու գույքային անբավարար պայմանների և ջեռուցման խնդիրների մասին Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ նաև 2019 թվականի ընթացքում: Այս խնդիրները բարձրաձայնվել են նաև Պաշտպանի աշխատակազմ այցելած հանրապետության տարբեր ուսումնական հաստատությունների աշակերտների կողմից, ինչպես նաև Պաշտպանի և աշխատակազմի ներկայացուցիչների մարզային հանդիպումների ընթացքում: Բացի այդ, խնդիրներն արձանագրվել են Մարդու

<sup>121</sup> Տե՛ս <https://transparency.am/files/publications/1489693195-0-123422.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ մշտադիտարկման ընթացքում հանրապետության մի շարք նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններ 2019 թվականին կատարած այցերի ժամանակ:

Խնդիրն այն է, որ ուսումնական հաստատություններում ոչ միայն խնդրահարույց է գույքային կամ ուսուցման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների կամ գույքի բացակայությունը, այլև ուսումնական հաստատություններ շենքային պայմանները վտանգում են երեխայի և ուսուցչական և վարչական անձնակազմի աշխատանքը, դասապրոցեսը, առողջությունը և կյանքը: Մի շարք ուսումնական հաստատություններ գործում են վթարային շենքերում, չկան բավարար քանակի դասասենյակներ, ոչ միայն նյութական պայմաններով բացարձակ անընդունելի վիճակում են, այլ նաև առկա դասարաններն էլ չունեն անհրաժեշտ կահավորում, քիչ չեն դեպքերը, երբ առհասարակ բացակայում են կամ բարեկարգ չեն մարզական դահլիճները:

Դպրոցական շենքերի շուրջ 80%-ը չի համապատասխանում շինարարական նորմերին և չափանիշներին՝ վտանգելով ավելի քան 280.000 աշակերտների: Շենքային վատ պայմանները լուրջ խնդիր են երեխաների համար՝ հատկապես գյուղական բնակավայրերում և հաշմանդամություն ունեցող սովորողների համար: Դպրոցական շենքերը և դասասենյակները նրանց համար հաճախ անմատչելի են<sup>122,123</sup>: Այսպես, Վանաձորի 3 մանկապարտեզները երկրաշարժից հետո գործում են տնակներում՝ անբավարար պայմաններում<sup>124</sup>:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմանների վերաբերյալ 2019 թվականի ընթացքում ստացվել է 3 բողոք, և բոլոր 3 դեպքում դասապրոցեսի խաթարում չի եղել:

Խնդրի առնչությամբ պետք է նշել, որ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, սեյսմիկ անվտանգության խնդիրների շուրջ միջոցառումների իրականացումը ներառված է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման 1-ին հավելվածի 169-րդ կետով, սակայն միջոցառումների ժամկետներ են նախատեսված են 2021 և 2023 թվականների համար: Բացի այդ, ՀՀ կառավարության նիստի 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 30 արձանագրության 3.2.7-րդ կետը սահմանում է դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման միջոցառում: Հանրակրթական ուսուցման շենքային պայմանների բարելավման հարցը ներառված է նաև ՀՀ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-Լ N 45-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N

<sup>122</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), հասանելի է <https://cutt.ly/itd6fO9> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>123</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

<sup>124</sup> Տե՛ս <https://www.aravot.am/2019/12/05/1081699/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

184-Ա որոշման հավելվածով ամրագրված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրում:

Ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմաններից զատ կան նաև ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման և այլ խնդիրներ: Այս խնդիրները ոչ միայն խոչընդոտում են դասապրոցների բնականոն ընթացքին կազմակերպումը և երեխայի կրթության իրավունքի իրականացմանը, այլև վտանգավոր են երեխայի առողջության, անվտանգության և զարգացման համար: ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում (ավագ դպրոցներ և հիմնական դպրոցներ) ջեռուցման խնդիրների վերաբերյալ 2019 թվականին ստացվել է 37 ահազանգ: Բողոքները վերաբերել են դպրոցների վատ ջեռուցմանը:

Այսպես, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2018 թվականի» վիճակագրական ժողովածուի տվյալների՝ 2018-2019 թվականների ուսումնական տարում Հայաստանում գործող 1409 դպրոցներից միայն 564-ն ունեն բավարար շենքային պայմաններ: 459 դպրոցներ կարիք ունեն հիմնանորոգման, իսկ 386 դպրոց՝ ընթացիկ նորոգման<sup>125</sup>: Ավելին, ըստ առկա տվյալների՝ Հայաստանի 425 դպրոցներ սեյսմիկ անվտանգության բարելավման կարիք ունեն: Այդ դպրոցներից շուրջ 60-ը 3-րդ, 4-րդ կարգի վթարային են<sup>126</sup>:

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ դեռևս 2015 թվականին ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը»: Ծրագրի շրջանակում նախատեսված է 46 դպրոցների ուժեղացում կամ նորերի կառուցում<sup>127</sup>:

Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների՝ 2019 թվականին նախարարության հատկացումների տնտեսման և վերաբաշխման արդյունքում 8 դպրոցներում նախատեսվել են 184 մլն դրամի վերակառուցման ու շինարարական աշխատանքներ<sup>128</sup>: Ուսումնական հաստատությունները նախորդ տարիներին դիմել են նախարարությանը, բայց բյուջեում գումարների բացակայության պատճառով մերժում են ստացել: Խոսքը դպրոցների ջեռուցման, էլեկտրամատակարարման համակարգերի, տանիքների վատթար վիճակի և բնականոն գործունեության համար անհրաժեշտ մի շարք խնդիրների բարելավման մասին է: Այդ դպրոցներն են՝ Արագածոտնի մարզի Վարդենիսի միջնակարգ դպրոց, Արարատի մարզի Մասիսի թիվ 5 ավագ դպրոց, Երևանի Գ. Չոհրապի անվան թիվ 97 ավագ դպրոց, Երևանի թիվ 195 ավագ դպրոց, Վանաձորի Մ. Խորենացու անվան թիվ 17 ավագ դպրոց, Ախուրյանի Ն. Աղբալյանի անվան ավագ դպրոց, Սարդարապատի միջնակարգ դպրոց, Վարդենիսի Հ. Համբարձումյանի անվան ավագ դպրոց: ՀՀ Կոտայքի մարզպետի 2019 թվականի համապատասխան որոշմամբ, մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված վերաբաշխումների արդյունքում մարզի 4 միջնակարգ դպրոցների՝ Ֆանտան, Գետամեջ, Փյունիկ, Արտավազ, հատկացվել է 5 մլն-ական դրամներ լոկալ ջեռուցման համակարգերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ իրականացնելու նպատակով: Նոր Արտամետի միջնակարգ, Գառնի Բանավանի հիմնական դպրոցները ևս

<sup>125</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf) հղումով, էջ 70, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>126</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/27221091.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>127</sup> Տե՛ս 2018 թվականի դեկտեմբեր 13-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի 25-րդ հարցի հիմնավորումները, հասանելի է [https://www.e-gov.am/sessions\\_old/archive/2018/12/13/](https://www.e-gov.am/sessions_old/archive/2018/12/13/) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>128</sup> Տե՛ս <http://escs.am/am/news/5424> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

վերաբաշխումների արդյունքում տեղադրել են լոկալ ջեռուցման համակարգեր, իսկ Արագյուղի միջնակարգ դպրոցը լոկալ ջեռուցման համակարգ է տեղադրել համայնքի աջակցությամբ<sup>129</sup>:

Սակայն ուսումնական հաստատությունների մշտադիտարկման արդյունքների համադրված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն, քանի որ հանրապետության հատկապես համայնքային մի շարք պետական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանները բավարար չեն դասընթացի բնականոն կարգի իրականացման համար, ինչը հանգեցնում է երեխայի կրթության իրավունքի իրականացման սահմանափակման:

Շարունակում է խնդրահարույց մնալ նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում ջեռուցման ապահովումը, որի վերաբերյալ 2019 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ևս ստացել է անհազանգեր: Օրինակ՝ Արմավիրի մարզի մանկապարտեզների 65%-ն այս տարվա ձմռան ամիսներին չեն գործում: Դրանց զգալի մասը գյուղական համայնքների մանկապարտեզներն են: Պատճառն այն է, որ մանկապարտեզները չունեն լոկալ ջեռուցման համակարգեր կամ թեև ունեն, սակայն ֆինանսական միջոցները բավարար չեն դրանք գործարկելու համար<sup>130</sup>: Տարիներ շարունակ ընդունված սովորույթային ուժով դպրոցը ջեռուցելը սկսվում է նոյեմբերի 15-ից, ինչը, սակայն, օրենսդրությամբ պարտադիր պահանջ չէ: ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրամանի համաձայն՝ դասարաններում, ուսումնական կաբինետներում, դասախոսությունների լսարանում, գրադարանում, բուժկետում (բժշկի կաբինետ), մարզադահլիճի հանդերձարաններում, լաբորատորիաներում, խմբակային պարապմունքների սենյակներում, հանդիսությունների դահլիճում ապահովվում է օդի առնվազն 18-22 աստիճան ցելսիուս, իսկ ուսումնական արհեստանոցներում, նախասրահում, հանդերձարանում և ռեկրեացիաներում ցուրտ եղանակային պայմաններում՝ առնվազն 18-20 աստիճան ցելսիուս, իսկ մարզադահլիճում՝ 17-19 աստիճան ցելսիուս: ՀՀ առողջապահության նախարարի նշված հրամանով որևէ ամրագրում (այդ թվում՝ սահմանափակում) առկա չէ հանրակրթական ուսումնական հաստատությունը ջեռուցելու ժամանակի վերաբերյալ: Չնայած նշված օրենսդրական կարգավորմանը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում հանդիպումների ընթացքում աշակերտների կողմից մատնանշվել է ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու, ինչպես նաև որոշ դեպքերում դրա բացակայության մասին: Գործնականում, ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու դեպքում հաշվի չի առնվում հանրակրթական ուսումնական հաստատության տեղակայվածությունը (օրինակ՝ բարձրադիր համայնքներում տեղակայված դպրոցներում անհրաժեշտ է ջեռուցումը սկսել ավելի վաղ քան նոյեմբերի 15-ը), ինչպես նաև հաշվի չեն առնվում նաև տվյալ տարվա բնակլիմայական պայմանները:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կենտրոնացված կամ անհատական ջեռուցում առկա է 961 դպրոցներում, 9-ում ջեռուցումը բացակայում է, իսկ 469 դպրոցներում ջեռուցումն իրականացվում է էլեկտրաջեռուցիչներով կամ վառարանով<sup>131</sup>,

<sup>129</sup> Տե՛ս <https://www.armtimes.com/hy/article/176914> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>130</sup> Տե՛ս <https://hetq.am/hy/article/111690> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>131</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2018\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf) հղումով, էջ 70, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



որոնց օգտագործումն արգելված է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 12-Ն հրամանով: Չնայած, որ հանրակրթական դպրոցների շենքային և գույքային պայմաններում խնդիրներ առկա են թե՛ քաղաքային, և թե՛ մարզային ու գյուղական դպրոցներում, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առավել խոցելի են այս առումով գյուղական դպրոցները<sup>132, 133</sup>:

Ճանաչելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը՝ պետության ջանքերը պետք է նպատակաուղղված լինեն յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար պայմանների և հավասար հնարավորության որակի ապահովմանը: Կրթության իրավունքի իրականացման համար նվազագույն պայման է մատչելի դասագրքերի ապահովումը, որը տարիներ շարունակ մնում է չլուծված՝ սահմանափակելով հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնական իրավունքի իրականացումը:

Խնդրի դիտարկումները ցույց են տալիս, որ 2019 թվականին ևս շարունակվել են չլուծված մնալ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային անբավարար պայմանների և ջեռուցման հետ կապված խնդիրները, որոնք արգելք են կրթության իրավունքի իրականացման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ավելացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների բարելավման համար հատկացվող ֆինանսական միջոցներ,

2. ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարումը՝ ուժեղացնելով վերահսկողությունը դրա խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ:

9. Ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում

Հանրապետության ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից: 2019 թվականին ևս խնդիրները շարունակվել են, որ մասին

<sup>132</sup> Տե՛ս [http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ\\_Equity\\_MainData\\_PPT.pdf](http://www.osf.am/wp-content/uploads/2017/09/Educ_Equity_MainData_PPT.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>133</sup> Խնդրի մասին բարձրաձայնել է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ հատուկ նշելով թե՛ շենքային և գույքային անբարեկարգ պայմանների, թե՛ ջեռուցման հետ կապված խնդիրներն ու հորդորել պետությանը ներդրումներ կատարել դպրոցների ենթակառուցվածքների բարելավման նպատակով:

(Տե՛ս ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, հասանելի է

<http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ):

Նման առաջարկ է արել նաև ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ ընդգծելով ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված ֆինանսական միջոցների առավել արդյունավետ կերպով օգտագործման անհրաժեշտությունը:

(Տե՛ս ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 2-3-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, հասանելի է

<http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguOgwxwB0Dv54x9D%02FtTVTtkqVIVcgKieaWt6S0CJmSRHd2YbUGKlOrDzjo9z47iNYCZgmYgy27A6%2F5jw0ZBjno1v pNcA> հղումով 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ):



Պաշտպանը կրկին ստացել է բողոքներ: Այդ նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2018 թվականից սկսած հատկապես ուժեղացված մշտադիտարկման աշխատանքներ են իրականացվել հանրապետության ուսումնական հաստատություններում՝ վեր հանելով ջրի և սանիտացիայի հասանելիության առկա վիճակը, բացերը, խնդիրները և առաջնահերթությունները:

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման ընթացքում հաճախ են եղել դեպքեր, երբ հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիություն բավարար կերպով կամ առհասարակ ապահովված չի եղել<sup>134</sup>:

Այսպես, մշտադիտարկման այցերի ընթացքում վեր են հանվել փաստեր, որոնք վկայում են ջրամատակարարման բացակայության մասին: Մասնավորապես, մշտադիտարկված 121 դպրոցից շուրջօրյա խմելու տնտեսական հոսող ջրով ապահովված են եղել 105-ը, իսկ մնացած 16 դպրոցից 1-ի (Սյունիքի մարզի) ներսում ջուր չկա, իսկ մյուս դպրոցում 3 օրը մեկ անգամ գրաֆիկով (Սյունիքի մարզի), իսկ 14 դպրոցում տրվում է ժամային գրաֆիկով: Օրինակ, Սյունիքի Խնածախ համայնքի միջնակարգ դպրոցում կատարված այցելության ընթացքում, դպրոցի վարչակազմի կողմից ստացվել է տեղեկություն, առ այն, որ դպրոցի համար խմելու ջուրը բերվել է մոտակա աղբյուրից, իսկ երեք օրը մեկ անգամ տրվում է խմելու համար անպիտան ջուր (խողովակների հին լինելու պատճառով ջրի գույնը և համը փոխված են լինում), որը հավաքվելով բաքերում, օգտագործվում է սանհանգույցներում: Բացի աղբյուրից բերվող ջրից, երեխաները նաև սեփական շշերով են ջուր բերում դպրոց: Ջուրը գրաֆիկով է հասանելի նաև, օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 90 դպրոցում՝ առավոտյան 10-ին և երեկոյան ժամերին, Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի դպրոցում՝ յուրաքանչյուր օր առավոտյան 8:30-ից մինչև 14:00-ն, Վերնաշենի դպրոցում՝ 9:00-ից 12:00-ն:

Ընդ որում, ի տարբերություն քաղաքային համայնքների, գյուղական համայնքներում խնդիրն առավել նկատելի է: Այսպես, ջրամատակարարումը բացակայում է բացառապես մարզային դպրոցներում (օրինակ՝ Արագածոտնի մարզի 15 դպրոցում, Գեղարքունիքի մարզի 13 դպրոցում, Շիրակի մարզի 12 դպրոցում)<sup>135</sup>: Նշվածը չափազանց խնդրահարույց է և ներկայացնում է ընդհանուր պատկերը Երևանում և մարզերում գործող հաստատությունների վերաբերյալ: Ստացվում է, որ Երևանում սովորող երեխաները մշտապես կարող են օգտվել խմելու հոսող ջրից, մինչդեռ, մարզերում ջրի հասանելիության ապահովման համար կիրառվում են տարբեր մեթոդներ (հաճախ նաև անձնական միջոցների հաշվին):

Նշված խնդրի հետ մեկտեղ, հարկ է նշել նաև, որ ուսումնասիրված մի շարք դպրոցներում ջուրն անհասանելի էր ծորակների ոչ սարքին լինելու կամ դրանց բացակայության պատճառով: Ավելին, ուսումնասիրության ընթացքում հանդիպել են այնպիսի դեպքեր, երբ ամբողջ դպրոցում առկա է եղել ընդամենը մեկ ծորակ, ինչը բավարար չի կարող համարվել ջրի հասանելիության իրավունքի իրացման տեսանկյունից:

Ավելին, ի տարբերություն հանրակրթական ուսումնական հաստատությունների, գործող օրենսդրությամբ բացակայում են նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մասնավորապես՝ համապատասխան շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ:

<sup>134</sup> Մանրամասն տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը:

<sup>135</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2017\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf) հղումով, էջ 104, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ուսումնասիրության է ենթարկվել նաև խմելու նպատակով ջրի օգտագործման եղանակներն: Ուսումնական հաստատություններում խմելու ջրի հասանելիությունն ունի կենսարար նշանակություն: Մասնավորապես՝ հատուկ ուշադրության է արժանի այն, թե ինչպես են երեխաներն օգտվում խմելու ջրից: Վերջինս շատ կարևոր է երեխաների շրջանում ջրով փոխանցվող բակտերիալ, վիրուսային, սնկային և մակաբուծային հիվանդությունների առաջացման, դրա տարածման և ռիսկերի կառավարման տեսանկյունից<sup>136</sup>:

Այցերի ընթացքում վեր են հանվել այնպիսի դեպքեր, երբ երեխաները ջուր խմում են միայն ցայտադրուրից, քանի որ դա միակ հնարավորությունն է: Օրինակ, Սյունիքի մարզի միջնակարգ դպրոցներից մեկի ներսում ջուրը հասանելի չէ, ուստի երեխաները ջուր խմելու համար ստիպված են լինում օգտվել դպրոցի շենքից դուրս գտնվող ցայտադրուրից: Նշվածը հատկապես խնդրահարույց է ձմեռային կամ ցուրտ եղանակին խմելու ջրից օգտվող երեխաների առողջության պահպանման տեսանկյունից:

Ավելին, մշտադիտարկված հաստատություններից որոշներում թեև դպրոցի ներսում կամ հաստատության բակում առկա էր ցայտադրուր, սակայն դրանք սարքին չէին կամ ջուրը փակված էր լինում գլխավոր փականով: Դպրոցների վարչակազմի տրամադրած տվյալների համաձայն՝ որոշ դպրոցներում երեխաներն օգտվում են բուֆետներում առկա բաժակներից, իսկ որոշ դպրոցներում տրամադրվում են մեկանգամյա օգտագործման բաժակներ: Մակայն, այցերի ընթացքում հանդիպել են դեպքեր, երբ ջուր խմելու համար նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակներն օգտագործվելուց հետո հավաքվում, լվացվում և նորից տրամադրվում էին երեխաներին: Որոշ դպրոցներ երեխաների համար բաժակներ առհասարակ նախատեսված չեն եղել:

Հաշվի առնելով ջրի հասանելիության կարևորությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ այստեղ ևս մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են խմելու ջրից օգտվելու տարբեր եղանակները: Գյուղական նախադպրոցական հաստատություններում 34% դեպքերում երեխաները ջուր են խմում ընդհանուր բաժակից, իսկ քաղաքային հաստատություններում տվյալ տոկոսային հարաբերակցությունը կազմում է 22%:

Ուսումնասիրվել է նաև սանհանգույցների հասանելիությունը: Կատարված այցի և ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանվել մի իրավիճակ, երբ զուգարանակոնքերը թեև տեսողական առումով գտնվել են սարքին վիճակում, սակայն պարզվել է, որ ջրթող բաքերը գտնվել են անսարք վիճակում: Ինչ վերաբերում է հաստատության յուրաքանչյուր հարկում աղջիկների և տղաների առնվազն մեկական սանհանգույց տեղակայված լինելու պահանջին, ապա պարզվել է, որ հետազոտությանը մասնակցած 121 դպրոցի 35% շենքերի յուրաքանչյուր հարկում ըստ սեռերի առանձնացված սանհանգույցներ բացակայում են: Այցերի ընթացքում արձանագրվել են նաև մի շարք խնդրահարույց և անթույլատրելի դեպքեր, երբ սանհանգույցներում զուգարանակոնքերը տեղադրված չեն եղել փակ խցիկներում, ինչը ևս խնդրահարույց է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության, սեռական դաստիարակության և հոգեբանական կերտվածքի

<sup>136</sup> Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ինֆեկցիոն բնույթի հիվանդությունների 80%-ը հիմնականում պայմանավորված է ջրային գործոնով, որը կապված է ջրամատակարարման սանիտարահիգիենիկ նորմերի խախտման և խմելու ջրի անբավարար որակական ցուցանիշների հետ: Ջրի միջոցով տարածվող հիվանդությունները լինում են ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն: Ջրամատակարարման կազմակերպման և շահագործման սանիտարական նորմերի, կանոնների խախտումը բերում է ինֆեկցիոն հիվանդությունների բռնկմանը: Ջրի միջոցով տարածվում են խոլերան, որովայնային տիֆը և պարատիֆերը, դիզենտերիան, սալմոնելոզը և այլն: (Նյութն ամբողջությամբ հասանելի է <http://www.armwater.am/files/adb/Gap/Gender%20training%20 2015.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ):

տեսանկյունից: Ավելին, ներկայացվածն անընդունելի է նաև երեխայի լավագույն շահի տեսանկյունից: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է նաև, որ հաստատությունների սանհանգույցներում գուգարանակոնքերը միմյանցից անջատված չեն եղել նույնիսկ միջնորմերով:

Առանձնացված սանհանգույցների բացակայությունը խնդրահարույց է երեխաների շրջանում առկա բռնության դեպքերի ռիսկի ավելացման տեսանկյունից: Հատկապես տարբեր տարիքային խմբերի երեխաների՝ նույն սանհանգույցից օգտագործումը կարող է ռիսկային լինել տարիքով ավելի փոքր երեխաների համար: Ավելին, բավարար իրազեկման պակասի պարագայում բռնության տեսանկյունից կարող է չափազանց ռիսկային լինել նաև դեռահաս աղջիկների և տղաների նույն սանհանգույցից օգտվելը:

Մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ շենքի ներսում չէր գործում սանհանգույց՝ դրսում տեղակայված լինելու պատճառով: Սույնի վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ տեղեկություն է տրամադրվել ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, ըստ որի՝ վերջինիս ենթակայության տակ գտնվող հետազոտված 74 դպրոցից 3-ն ունի շենքից դուրս գտնվող սանհանգույց, որոնք հիմնականում օգտագործվում են որպես պահուստային: Զեկույցի մշակման շրջանակներում ուսումնասիրվել է նաև սանհանգույցների՝ ուսումնական հաստատության շենքից դուրս գտնվելու հարցն: Այսպես, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների ամփոփման արդյունքում կարելի է փաստել, որ մարզերում գործող դպրոցներ կան, որոնց սանհանգույցները տեղակայված են ուսումնական հաստատության շենքից դուրս: Ըստ ներկայացված տվյալների՝ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության 118 հանրակրթական ուսումնական հաստատության 13-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս, Արարատի մարզպետարանի ենթակայության 107 դպրոցից 6-ի սանհանգույցը գտնվում է դպրոցական շենքից դուրս, 16 դպրոց սանհանգույց ունի և՛ ներսում, և՛ դրսում: ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատությունից և համայնքային ենթակայությամբ գործող 61 նախադպրոցական ուսումնական հաստատությունից 31 հանրակրթական ուսումնական և 6 նախադպրոցական հաստատություններում սանհանգույցը գտնվում հաստատության շենքից դուրս: Շիրակի մարզպետարանի ենթակայության 148 ուսումնական հաստատությունից 33-ի սանհանգույցն է գտնվում հաստատությունների շենքերից դուրս: Սյունիքի մարզպետարանի ենթակայության 111 հանրակրթական ուսումնական հաստատությունից 21-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս: Վայոց ձորի մարզում 45 հաստատությունից 10-ի սանհանգույցն է գտնվում շենքից դուրս, իսկ Տավուշի մարզպետարանի ենթակայության 46 հաստատությունից 30-ի սանհանգույցը գտնվում է հաստատության շենքից դուրս:

Ուսումնասիրվել է նաև ջրի և սանիտացիայի հասանելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Այսպես, մշտադիտարկված 121 դպրոցից միայն 8-ում են առկա հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ: Չնայած դրանց առկայությանը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ որոշ դեպքերում տվյալ սանհանգույցների մուտքերը սակավաշարժուն խմբերի երեխաների համար առաջացնելու էին ինքնուրույն օգտվելու հետ կապված խոչընդոտներ, օրինակ՝ մուտքի դռան շրջանակը հատակի մակերևույթի նկատմամբ ուներ որոշակի բարձրություն:

Ի պատասխան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից տեղեկացրել են, որ նշված զեկույցում բարձրացված խնդիրների լուծման նպատակով 2019 թվականին մեկնարկված կապիտալ ներդրումային ծրագրում ընդգրկված միջոցառումներից արդեն իսկ իրականացվել են՝ նոր

շենք կառուցելու նպատակով 5 ավագ դպրոցի, շենքային պայմանների վերակառուցման կարիք ունեցող 4 ավագ դպրոցի, նոր մարզադահլիճների կառուցման կարիք ունեցող 10 հանրակրթական ուսումնական հաստատության, մարզադահլիճների շենքային պայմանների վերակառուցման կարիք ունեցող 20 հանրակրթական ուսումնական հաստատության, արդիականացման կարիք ունեցող 10 ավագ դպրոցի, խոցելի երեխաների սոցիալական ներառման պայմանների կարիք ունեցող 30 հանրակրթական ուսումնական հաստատության տեղում ուսումնասիրման, ընտրության, ցանկերի հաստատման և նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքները:

Ինչպես նաև 2019 թվականի ընթացքում ՀՀ մարզերում իրականացված ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները (դրանք ներառում են նաև ջրի և սանիտացիայի հասանելիության բաղադրիչը)։ ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ, «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագրով՝ ՀՀ Սյունիքի մարզում, Մխիթան, Գորիս, Կապան քաղաքների և նշված տարածաշրջանների գյուղերի 9 հանրակրթական ուսումնական հաստատություններում և Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում, իրականացվել են շինարարական աշխատանքներ՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ռեսուրս սենյակներ և կոմունալ պայմաններ ստեղծելու նպատակով, ՀՀ Լոռու մարզում ուսումնասիրվել ու ընտրվել են 18 հանրակրթական ուսումնական հաստատություններ և Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը՝ դրանցում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ռեսուրս սենյակներ և կոմունալ պայմաններ ստեղծելու նպատակով: 2019 թվականի ընթացքում «Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում» ծրագրում ընդգրկվելու նպատակով տեղում ուսումնասիրվել են հանրակրթական դպրոցներ, որից հետո Քաղաքաշինության կոմիտեի կողմից իրականացվել են հաստատված 22 դպրոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքները:

Նույն հարցի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնել են, որ նախարարությունը մշակել է ՀՀ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի ու սանհանգույցների սանիտարահիգիենիկ վիճակի և «ֆիզկուլտուրա» առարկայի (պարապմունքի) դասավանդման համար նախատեսված պայմանների 2019 թվականի ուսումնասիրության ծրագիրը» հաստատելու մասին առողջապահության նախարարի հրամանի նախագիծը, իսկ արդյունքներն ու արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները ներկայացվել են շահագրգիռ կառույցներին: Բացի այդ, ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշման 2-րդ հավելվածի 86-րդ կետով սահմանված ժամկետում (2020-2022 թվականների ընթացքում) կիրականացվեն փոփոխություններ գործող սանիտարական կանոններում և նորմերում:

Խնդրի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից հայտնել են, որ «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում նշված Ավան վարչական շրջանի «Երևանի հ.72 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների տաք ջրի մատակարարման խնդիրը կարգավորված է, Երևանի էրեբունի վարչական շրջանի հ.178 հիմնական դպրոցում

վերանորոգվել է երկու սանհանգույց, իսկ 2-ը նախատեսված է նորոգել 4-րդ եռամսյակում: Շենգավիթ վարչական շրջանի Վ. Համբարձումյանի անվան հ.12 հիմնական դպրոցում արձանագրված խնդիրը շտկվել է, իսկ Էրեբունի վարչական շրջանի հ.38 հիմնական դպրոցում առկա թերությունները կվերացվեն ամռան ամիսներին: Մ. Մխոյանի անվան հ.68 հիմնական դպրոցը ներառված է Երևանի ենթակայության հիմնանորոգման ենթակա շուրջ 10 դպրոցների և 69 մանկապարտեզների ցանկում:

Մարզային ուսումնական հաստատությունների՝ արտահերթ զեկույցում արձանագրված խնդիրների վերաբերյալ 2019 թվականի հուլիս և 2020 թվականի մարտ ամիսներին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների ամփոփումից կարելի է եզրակացնել, որ մշտադիտարկված հաստատություններից մի քանիսում խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվել են քայլեր, սակայն արձանագրված խնդիրներն ամբողջական լուծում չեն ստացել 2019 թվականին ևս, որոնցից մի մասի լուծումը, ըստ ներկայացրած պարզաբանումների, պլանավորվում է իրականացնել հաջորդ տարիներին:

Տվյալների ամփոփումը ցույց է տալիս, որ թեև ձեռնարկված քայլերի՝ ոչ բոլոր հաստատություններում են խնդիրները լուծվել կամ դրանց վերացման շուրջ քայլեր իրականացվել: Ուստի, «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում ներառված առաջարկների կատարումը պետք է դիտարկել մասնակի կատարված:

Ավելին, պետության հավաքագրած համապարփակ ուսումնասիրության և միասնական, ինչպես նաև սեգրեգացված (օրինակ՝ ըստ մարզերի, գյուղական համայնքների, դպրոցների մեծության) առկա վիճակագրական տվյալների պակասը թույլ է տալիս ենթադրել, որ անհրաժեշտ է ոլորտում իրականացնել ուսումնասիրություն առկա բոլոր խնդիրների և դրանց առաջացման պատճառների հստակ նախանշման համար: Բացի այդ, ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր ընդունվել և/կամ փոփոխվել են վերջին տարիներին և վերաբերում են նոր կառուցվող կամ վերակառուցվող հաստատություններին:

Արդյունքում՝ զգալի տարբերություն է նկատվում նոր կառուցվող և մինչև այդ նորմերի ընդունումը կառուցված հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության մակարդակների միջև: Նշված իրավիճակը բնականաբար անթույլատրելի է, քանի որ երեխայի առողջության պահպանումը պետք է ապահովված լինի նույն մակարդակներում և հիմնված լինի երեխայի լավագույն շահի սկզբունքի վրա: Ուստի, անհրաժեշտ է նաև հատուկ գնահատում իրականացնել այն հաստատությունների վերաբերյալ, որոնք կառուցվել են մինչև նորմերի թարմացումը:

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած Մշտադիտարկման արդյունքում պարզվել է նաև, որ ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջների չապահովվածության խնդիրը ոչ միայն հատկացված ֆինանսական միջոցների անբավարարության, այլ նաև ներպետական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների մասին իրազեկվածության պակասի արդյունք է: Մասնավորապես, հաստատություններում իրականացված հարցումների արդյունքում արձանագրվել է, որ հաստատության անձնակազմը պատշաճ կերպով իրազեկված չէ մանկական նախադպրոցական օբյեկտների կառուցվածքի, գույքով ու սարքավորումներով ապահովման վերաբերյալ նորմատիվային դրույթների և դրանց չկիրառման հետևանքով հնարավոր բացասական հետևանքների մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. օրենսդրությամբ շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական

կարգավորումներ ամրագրել նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար,

2. քայլեր ձեռնարկել ջրանջատման բացառապես բոլոր դեպքերի մասին իրական իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

3. մշակել հստակ ժամանակացույց մինչև ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի ընդունումը կառուցված շենքերում ցայտաղբյուրի առկայությունն ապահովելու համար,

4. որպես միջանկյալ լուծում՝ անհրաժեշտ է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանում կատարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների տարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել մեկանգամյա օգտագործման բաժակների նախատեսումը,

5. վերանայել վերոնշյալ հրամանի 9-րդ կետի պահանջը, ցայտաղբյուրի քանակի վերաբերյալ համապատասխան նորմեր նախատեսել՝ հաշվի առնելով դպրոցում երեխաների քանակը,

6. ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանում կատարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների տարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել հստակ ամրագրված նորը, ըստ որի՝ երեխաներին կտրամադրվեն բացառապես անհատական օգտագործման այնպիսի բաժակներ, որոնք նրանց համար հեշտ տարանջատելի լինեն մյուս բաժակներից կամ մեկանգամյա օգտագործման բաժակներ,

7. որպեսզի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը վարեն ջրի և սանիտացիայի հասանելիության տարբերակված վիճակագրություն՝ հիմնված տարբեր չափանիշների վրա,

8. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «www.emis.am» կայքում առկա «Դպրոցների էլեկտրոնային անձնագրերի քարտեզ» բաժնում ավելացնել յուրաքանչյուր դպրոցում ջրի և սանիտացիոն հասանելիության և մատչելիության վերաբերյալ տեղեկություններ,

9. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «www.emis.am» կայքում հասանելի դարձնել նախադպրոցական կրթական հաստատությունների վերաբերյալ տվյալները,

10. համակարգային ուսումնասիրության ենթարկել բոլոր հաստատություններում (այդ թվում՝ մինչև համապատասխան նորմերի փոփոխությունը կառուցված և վերակառուցված) գործող նորմերին համապատասխանությունը,

11. մշակել գործողությունների ազգային ծրագիր, որը կհաստատվի կառավարության որոշմամբ և որը կնախատեսի միջոցառումներ առ այն, որպեսզի հստակ նշված ժամանակացույցում բոլոր հաստատությունները համապատասխանեցվեն գործող նորմերին,

12. գործողությունների ազգային ծրագրում ներառել նաև այլ միջոցառումներ՝ ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության բարձրացման ուղղությամբ: Ընդ որում, անհրաժեշտ է ներդնել հատուկ մեխանիզմ, որը կիրականացնի պարբերական և մշտական մշտադիտարկում՝ նորմերի յուրաքանչյուր փոփոխության պարագայում նախանշելով հաստատություններում համապատասխան գործողությունների անհրաժեշտությունը,

13. գանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև կրթական համակարգերի միջոցով իրականացնել իրազեկման աշխատանքներ ուսումնական հաստատությունների աշակերտների, վերջիններիս ծնողների շրջանում ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ,

14. քայլեր ձեռնարկել հաստատությունների անձնակազմի շրջանում օրենսդրական պահանջների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ,

15. հաստատություններում երեխաների համար տեղադրել իրազեկող և մատչելի պաստառներ սանիտացիայի և հիգիենայի վերաբերյալ:

10. Մենդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում

2019 թվականին ևս շարունակվել է չլուծված մնալ հանրապետության ուսումնական հաստատություններում սենդի անվտանգության հարցը: Խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում, որոնց մասին բողոքեր է ստացվել նաև 2019 թվականին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ՀՀ տարբեր մարզերի և Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների աշակերտների հետ հանդիպումների ընթացքում պարզ է դարձել, որ հանրապետության մի շարք ուսումնական հաստատությունների սենդի կետերում վաճառվում են այնպիսի սննդատեսակներ, որոնց վաճառքն ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սենդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանի 26-րդ կետով: Ուսումնական հաստատություններում սենդի անվտանգության խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեն<sup>137</sup>:

Ուսումնական հաստատություններում արգելված սննդամթերքի (օրինակ՝ գազավորված ըմպելիքներ, պիստակ, նուշ, գետնանուշ, ծիրանի կորիզի միջուկ, կետչուպներ, մայրնեզ և այլ արգելված սննդամթերք) առկայության խնդիրներ արձանագրվել են նաև տարբեր մարզերում և Երևան քաղաքում տարբեր տարիների այցերի ընթացքում:

Մինչդեռ, ի պատասխան 2019 թվականի ընթացքում մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սենդի որակի վերաբերյալ բողոքների ստացման և խնդրի շուրջ ձեռնարկված քայլերի հարցման՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ խնդրի վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:

ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի 48-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ղեկավարը սենդի կազմակերպման և դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձն է: Ավելին, ըստ նույն հրամանի՝ ուսումնական հաստատությունում սովորողների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաստատության ղեկավարի կողմից ապահովվում են՝ սանիտարական կանոնների առկայությունը, սանիտարական կանոնների կատարման ապահովումը և այլն:

<sup>137</sup> Տե՛ս ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, հասանելի է

<http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ուսումնասիրվել է նաև հատուկ կրթահամալիրներում սննդի վերաբերյալ իրավիճակը: Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականին իրականացված մշտադիտարկման այցերի հետևանքով պարզվել է, որ մի շարք հաստատություններում առկա են խնդիրներ՝ կապված խոհանոցների սանիտարահիգիենիկ վիճակի, հացի պահման պայմանների, ճաշատեսակների նմուշների պահման, ճաշացանկերի հետ<sup>138</sup>:

Ուստի, վերոնշյալ իրավական ակտերով սահմանված իրավասու պետական մարմինները պետք է ապահովեն հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպումը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանմամբ:

---

<sup>138</sup> Երեխաների խնամք և դաստիարակություն իրականացնող հաստատություններում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքների մանրամասները նկարագրված են սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:



ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքը: Ըստ այդմ, պետությունը ստանձնել է մարդու՝ առողջության պահպանման իրավունքն առողջության հնարավորինս բարձր չափորոշիչներով ապահովելու պարտականություն:

2019 թվականի ընթացքում անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման և երաշխավորման նպատակով ձեռնարկվել են տարբեր քայլեր, որոնք դրական լուծումներ են տվել ոլորտում առկա մի շարք խնդիրներին: Այնուհանդերձ, առողջության պահպանման իրավունքի արդյունավետ և լիակատար իրացման համար եղել են որոշ խոչընդոտներ, որոնք նկարագրված են սույն գլխում:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումներով մարդիկ բարձրաձայնել են բժշկական օգնության հասանելիության, դեղորայքով չապահովելու, անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության վերաբերյալ խնդիրներ:

1. Անվճար բժշկական օգնության և սպասարկման կարգավորումներն օրենքով չնախատեսելը

Անվճար բժշկական օգնության և սպասարկման կարգավորումներն օրենքով չնախատեսելու խնդրին Պաշտպանն անդրադարձել է 2018 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>139</sup>: Ընդգծվել է ոլորտում առկա օրենսդրական անկատարությունների հարցը: Մասնավորապես՝ բարձրացվել է բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգն օրենքով չսահմանելու հետևանքով առողջության պահպանման իրավունքի ոչ լիարժեք ապահովման հարցը և առաջարկվել դրանք սահմանել օրենքով:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Օրենսդրությամբ սահմանված է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը: Սահմանադրության վերոնշյալ դրույթը գործնականում ապահովված չէ, քանի որ անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը սահմանված է ոչ թե օրենքով, այլ կառավարության որոշումներով և նախարարի հրամաններով, որոնք ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտեր են և հանգեցնում են մարդկանց իրավունքների իրացման խոչընդոտների: Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը, բնակչության հերթագրման կարգը և այլ դրույթներ սահմանված են ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ:

Այս կապակցությամբ դեռևս 2019 թվականի ՀՀ առողջապահության նախարարության պարզաբանմամբ՝ ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր:

<sup>139</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 161-163:

Վերահաստատելով 2018 թվականի տարեկան հաղորդմամբ արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ կառավարության որոշմամբ դրանք սահմանելն անկանխատեսելի է դարձնում առողջապահական համակարգը և դրա շրջանակներում իրականացվող գործընթացները շահառուների համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը սահմանել օրենքով:

## 2. Խտրական վերաբերմունքը պացիենտների նկատմամբ

Անձի առողջության պահպանման հիմնարար իրավունքի տարրերից մեկը խտրականության արգելքն է: Ինչպես անձի առողջության պահպանումն է ՀՀ Մահմանադրությամբ և վավերացված միջազգային փաստաթղթերում ամրագրված որպես մարդու հիմնարար իրավունք, այնպես էլ խտրականության արգելքը որպես մարդու իրավունքների հիմնարար սկզբունք ճանաչված է ներպետական և միջազգային չափանիշներով, և առողջության պահպանման իրավունքի հիմնական մասն է<sup>140</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները ևս վկայում են բժշկական հաստատություններում պացիենտների նկատմամբ խտրական վերաբերմունքի դեպքերի մասին: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է առողջական կամ այլ դրությամբ պայմանավորված (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց (խնդիրը հատկապես բարձրաձայնել են Դաունի համախտանիշով ապրող երեխաների ծնողները), ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, ինչպես նաև Հեպատիտ B և C-ով ապրող անձանց) խտրական և անհարգալից վերաբերմունքի դեպքերին:

Խտրականության արգելքն, ամրագրված լինելով ՀՀ Մահմանադրության 29-րդ հոդվածով, առողջության պահպանման իրավունքի համատեքստում սահմանվել է նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի արժանանալ հարգալից վերաբերմունքի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից: Վերոնշյալ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են ապահովել հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտների նկատմամբ:

Նշված իրավունքների պաշտպանության երաշխիքներ են ամրագրված նաև մի շարք միջազգային փաստաթղթերով: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ դաշնագրով հռչակված իրավունքներն իրականացվեն առանց որևէ խտրականության: Պետությունը ներպետական օրենսդրության համաձայն, ինչպես նաև վավերացնելով միջազգային մի շարք փաստաթղթեր՝ պարտավորվել է ապահովել անձի առողջության պահպանման

<sup>140</sup> Տե՛ս <http://www.ohchr.org/Documents/Publications/Factsheet31.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հիմնարար իրավունքը՝ երաշխավորելով դրանց ազատ իրականացումն առանց որևէ արգելքի<sup>141</sup>:

Առողջապահության նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում պացիենտների նկատմամբ բուժաշխատողների՝ խտրական վերաբերմունքի վերաբերյալ նախարարություն է ստացվել է 39 բողոք:

Խտրական վերաբերմունքի դրսևորումն ուղիղ համեմատական է անձի առողջության պահպանման հիմնարար իրավունքի իրացմանը: Խտրական և տարբերակված վերաբերմունքի առկայության պարագայում բուժման կարիք ունեցող մարդիկ շատ հաճախ խուսափում են այցելել բժշկական հաստատություններ: Հարցն առավել խնդրահարույց է դառնում այն նկատառմամբ, երբ խտրական վերաբերմունք են դրսևորում բուժաշխատողները՝ պայմանավորված անձի մոտ այս կամ այն հիվանդության առկայությամբ (օրինակ՝ Հեպատիտ B կամ C):

Խտրական վերաբերմունք ծնող պատճառներից մեկն բուժաշխատողների կարողությունների պակասն է, ինչը հանգեցնում է բժշկական էթիկայի կանոնների խախտման: Այստեղ կարևոր է պետության համապատասխան քաղաքականության մշակումը, մասնավորապես բժշկական հաստատություններում բուժաշխատողների անհավասար և խտրական վերաբերմունքը մեկընդմիջտ բացառելու համար: Առողջապահության նախարարության փոխանցմամբ իրականացվում են միջոցառումներ խտրականության դրսևորման դեպքերը նվազեցնելու և բացառելու ուղղությամբ: Մասնավորապես, ըստ նախարարության տվյալների՝ Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի «Ընտանեկան բժշկություն» ամբիոնն իրականացրել է «Հաղորդակցությունը և պացիենտի ուսուցումը ընտանեկան բժշկի պրակտիկայում» թեմայով մեկ շաբաթ տևողությամբ կատարելագործման դասընթացներ, որի շրջանակում ներկայացվել և քննարկվել են հաղորդակցության և պացիենտի ուսուցման հիմնական սկզբունքները, բուժական գործընթացի յուրաքանչյուր փուլում հաղորդակցման առանձնահատկությունները, ինչպես նաև բժիշկ-պացիենտ փոխհարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, ինչը նպատակ է ունեցել նպաստել բժշկական անձնակազմի ու պացիենտների օպտիմալ հարաբերակցության, ինչպես նաև յուրաքանչյուրի աշխատանքի ծավալի ու գործառույթների հստակեցմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից է առողջապահության բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումն, ինչպես նաև առողջապահության բնագավառում մարդու իրավունքների պահպանումն ու պաշտպանությունն՝ անհրաժեշտ է՝

1. մշակել համապատասխան ձեռնարկ որոշակի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձանց, ՄԻԱՎ/ԶԻԱՀ, Հեպատիտ B, C և այլ հիվանդ խտրականության ենթարկվող անձանց) հետ բուժաշխատողների աշխատանքի վերաբերյալ,

2. ավելացնել համապատասխան դասընթացների թիվը (դիպլոմային և հետդիպլոմային)՝ բուժաշխատողների տարբեր հիվանդությունների տարածման ուղիների և անվտանգության միջոցների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար:

<sup>141</sup> Տե՛ս օրինակ, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիա (5-րդ հոդված), Երեխաների իրավունքների պաշտպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիա:

### 3. Պալիատիվ բուժօգնությունը

Հասարակական և միջազգային մի շարք կազմակերպություններ տարիներ շարունակ անդրադարձել են պալիատիվ բուժօգնության բացակայության և ներդրման արդյունավետության հարցին<sup>142,143</sup>: Հարցը մշտապես գտնվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո: Խնդրի վերաբերյալ մշտապես բարձրաձայնվել է տարեկան հաղորդումներում, սակայն այն շարունակում է մնալ չլուծված և արդիական:

«Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարությանն ու պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարության 2017-2019 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին մահերի թվաքանակը կազմել է 27714, իսկ գրանցված մահերի 60-70%-ին՝ մոտ 20000 հիվանդի, անհրաժեշտ է եղել պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում<sup>144</sup>: Նման թվերը ևս մեկ անգամ ապացուցում են հարցի արդիականության և կարևորություն մասին:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N-1978 որոշմամբ հաստատվել է պալիատիվ բուժօգնության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես, նշված որոշման 2-րդ հավելվածի 51-րդ կետով նախատեսվում է բարձրացնել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին հանրային իրազեկվածությունը՝ զանգվածային լրատվության, տեղեկատվական նյութերի միջոցով հանրային իրազեկման աշխատանքներ կազմակերպվելով և պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման հարցերի վերաբերյալ քարոզարշավներ իրականացնելով: Նույն հավելվածի 52-րդ կետով նախատեսվում է իրականացնել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ (այդ թվում՝ ոլորտի իրավակարգավորումների) շարունակական կրթական ծրագրեր՝ բուժաշխատողների և ուսանողների համար՝ բուժհաստատություններում և ուսումնական հաստատություններում:

Ներպետական օրենսդրությամբ առկա են պալիատիվ բուժօգնության տրամադրման վերաբերյալ կարգավորումներ:

Չնայած օրենսդրական կարգավորումների, այնուամենայնիվ հարկ է փաստել, որ առկա խնդիրների լուծման համար դրանք բավարար չեն: Մասնավորապես, ըստ ոլորտի մասնագետների՝ առկա կարգավորումների խրթինության և դրանց կյանքի կորման ժամանակատարության պատճառով խաթարվում են տրամադրվող ծառայությունների լիարժեք և արդյունավետ տրամադրումը: Պացիենտների համար պալիատիվ խնամքի ապահովման համար հստակորեն անհրաժեշտ են քայլերի իրականացում ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ գործնական մակարդակներում: Ավելին, ըստ ոլորտի մասնագետների՝ մեր երկրում մորֆինի և դրա այլընտրանքային տարբերակների քանակը համարժեք չէ նման պատրաստուկների կարիքն ունեցող բոլոր հիվանդներին<sup>145</sup>, իսկ տնային

<sup>142</sup> Տե՛ս <http://www.who.int/mediacentre/factsheets/fs402/en/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>143</sup> Դեռևս 2011 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակով տեղի ունեցած հանդիպման ժամանակ մշակված քաղաքական հռչակագրով պետություններն ընդգծել են պալիատիվ խնամքի ներդրման անհրաժեշտությունը: Հասանելի է [http://www.hrw.org/sites/default/files/wr2014\\_web\\_0.pdf](http://www.hrw.org/sites/default/files/wr2014_web_0.pdf),

<http://apps.who.int/iris/bitstream/10665/250584/1/9789241565417-eng.pdf?ua=1>, <https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/armenia>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>144</sup> Տե՛ս <https://www.e-gov.am/protocols/item/709/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>145</sup> Տե՛ս <http://www.who.int/mediacentre/factsheets/fs402/en/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պայմաններում պալիատիվ բուժում իրականացնելու հարցը շարունակում է մնալ խնդրահարույց:

Չնայած վերոգրյալին՝ անհրաժեշտ է խոսել նաև տարիների ընթացքում ոլորտում գրանցված առաջընթացների մասին: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N 4 արձանագրային որոշման ընդունումը, որով առանձնացվել են ռազմավարական նպատակներ, որոնց իրագործումը կարող է ապահովել պալիատիվ բուժօգնության և սպասարկման տրամադրման մի շարք խնդիրների լուծում: Այդ պատճառով ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 45-Ն հրամանով հաստատվել է պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչը, որով սահմանվում են բնակչությանը ցուցաբերվող պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման հիմնական սկզբունքները և պալիատիվ բժշկական օգնության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Առողջապահության նախարարությունն արտահիվանդանոցային պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա է տրամադրվել Երևանի քաղաքապետարանի «Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին և ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքում տեղակայված «Մասիս հոսպիս» ՍՊԸ-ին:

2019 թվականին, առաջին անգամ, պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ներդրման նպատակով, Առողջապահության նախարարությունը վերոնշյալ ընկերություններում տեղադրվել է պետական պատվեր՝ արտահիվանդանոցային և արտագնա պալիատիվ բուժօգնության գծով, ինչի շնորհիվ ներկայում պալիատիվ բուժօգնության թիմի մասնագետները(բժիշկ, բուժքույր, հոգեբան և սոցիալական աշխատող) ցուցաբերում են պալիատիվ բուժօգնության ծառայություններ պալիատիվ բուժօգնության կարիք ունեցող շահառուներին:

2019 թվականի վերջում Առողջապահության նախարարությունն արտահիվանդանոցային պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տեսակի լիցենզիա է տրամադրել նաև Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում տեղակայված «Կարդիոմեդ» ընտանեկան բժշկության կենտրոն» ՍՊԸ-ին, Արարատի մարզի Արարատ քաղաքում տեղակայված «Արարատի հիվանդանոց» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում տեղակայված «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ին, Տավուշի մարզի Իջևան քաղաքում տեղակայված «Իջևանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ին:

Վերը նշված քայլերի ներկայացման հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ներկայում որևէ իրավական փաստաթղթով պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման հետագա ներդրման և զարգացման նպատակով միջոցառումների նոր ծրագրի մշակում նախատեսված չէ: Ըստ Առողջապահության նախարարության՝ իրականացվում են որոշակի աշխատանքներ, մասնավորապես՝ 2020 թվականին նախատեսվում են ԱԱՊ հաստատությունների բժիշկների և բուժքույրերի համար Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում կազմակերպել երկշաբաթյա վերապատրաստման դասընթացներ պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. նախատեսել ծրագրի իրականացման մշտադիտարկում իրականացնող հստակ մեխանիզմ,

2. այդ մեխանիզմում նախատեսել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը:

#### 4. Բժշկական գաղտնիքի պահպանումը

2019 թվականի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմումները, ինչպես նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներում ներկայացված տեղեկությունների մշտադիտարկումը ևս մեկ անգամ ապացուցում են տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանի՝ առողջության պահպանման իրավունքի հիմնարար տարրերից մեկի՝ 146՝ բժշկական գաղտնիքի պահպանության համար օրենսդրական երաշխիքների բացակայության վերաբերյալ բարձրաձայնումները: Օրենսդրական թերի կարգավորումները, իրազեկվածության պակասը, մասնագիտական ցածր կարողություններ և բժշկական էթիկայի խախտումներն են այն հիմնական պատճառները, որոնց արդյունքում արձանագրվում են բժշկական գաղտնիքի խախտման դեպքեր:

Գործնականում գրանցվում են դեպքեր, երբ պացիենտի բուժօգնության արդյունքները կամ անձի վերաբերյալ բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունները տրամադրվում են այլ անձանց և լրատվամիջոցներին, կամ մի պացիենտին բուժօգնություն, խորհրդատվություն է տրամադրում մեկ այլ պացիենտի ներկայությամբ:

Ստեղծված իրավիճակն առավել խնդրահարույց է դառնում այն նկատառմամբ, որ նման խախտումների դեմ պայքարի գործուն մեխանիզմներ, իսկ օրինակ՝ բժշկական տվյալների պահպանման պահանջ բուժաշխատողին ներկայացնելու օրենսդրական գործիքակազմ առկա չէ: Շատ դեպքերում պացիենտը չի ցանկանում նման պահանջ ներկայացնել բուժաշխատողին՝ զգուշանալով, որ իր նկատմամբ կարող է դրսևորվել բացասական վերաբերմունք:

Բժշկական գաղտնիքի պահպանությունը, որպես առողջության պահպանման իրավունքի հիմնական տարր, սահմանված է մի շարք միջազգային փաստաթղթերում: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2015)5 հանձնարարականի հավելվածի 9.5-րդ կետի համաձայն՝ առողջական տվյալները, որոնց վրա տարածվում է բժշկական խորհրդապահություն պահպանելու անհրաժեշտություն, պետք է միայն հասանելի լինեն և մշակեն այն անձիք, որոնց համար ուղղակիորեն կամ մասնագիտական գաղտնիքի կամ խորհրդապահության այլ կանոններով սահմանված է նման պարտավորություն: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (89)14 հանձնարարականի 40-րդ կետի համաձայն՝ հանրային առողջապահական մարմինն խորհուրդ է տրվում խստորեն հարգանք դրսևորել խորհրդապահության պահպանման նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում առողջապահական ոլորտի աշխատողների համար իրականացնել հատուկ քաղաքականություն և առաջ քաշել կրթական ծրագրեր՝ հստակեցնելով ՄԻԱՎ վարակի խորհրդապահության անհրաժեշտության հետ կապված հարցերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում անդրադարձել է բժշկական տվյալների պաշտպանության կարևորությանը:

Անձնական տվյալների պաշտպանությունը՝ որպես անձի հիմնական իրավունք, ամրագրված է ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Սահմանադրական այս իրավունքն իր ամրագրումն է գտել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում: Սակայն այս իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման: Այսինքն՝ որպես բացառություն օրենքով կարող են սահմանվել այդպիսի գաղտնիքը հրապարակելու դեպքեր, որոնք, սակայն պետք է լինեն հստակ, որոշակի և հետապնդեն իրավաչափ նպատակ:

<sup>146</sup> Տե՛ս <http://www.who.int/genomics/public/patientrights/en/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Խնդրի լուծման ուղղությամբ դեռևս 2018 թվականին շրջանառված ՀՀ առողջապահության նախարարության մշակած «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է ընդունման փուլում, ինչը փաստում է, որ 2019 թվականի ընթացքում համապատասխան օրենքը դեռևս ընդունված չի եղել և կարգավորումները չեն գործել:

Առողջապահության նախարարության համաձայն՝ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի «Հանրային առողջապահության կազմակերպում և կառավարում» ամբիոնի կրթական ծրագրերում (բժիշկների կատարելագործում և կլինիկական օրդինատուրա) ընդգրկված է «Առողջապահական իրավունք» դասընթացը, որի շրջանակներում դասավանդվում է բժիշկների և պացիենտների իրավունքների, պարտականությունների, բժշկական գաղտնիքի պահպանման, խտրական վերաբերմունքի բացառման, պատասխանատվության և պացիենտների գոհունակության հիմնահարցերը: Մակայն, ըստ Առողջապահության նախարարության՝ բժշկական գաղտնիքի պահպանման և իրավական կարգավորումների մասին իրազեկման հատուկ արշավներ չեն իրականացվել: Նախարարությունից տեղեկացրել են, որ լրագրողների համար իրականացվող սեմինար քննարկումների ժամանակ խոսվել է նաև բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունների հրապարակման անթույլատրելիության մասին:

Այդուհանդերձ, դիտարկված խնդիրները վկայում են, որ չնայած ձեռնարկված քայլերին՝ բժշկական գաղտնիքի պահպանման օրենսդրական և գործնական լիարժեք կառուցակարգեր դեռևս ներդրված չեն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հնարավորինս սեղմ ժամկետում ամրագրել բժշկական գաղտնիքը սահմանող, վերջինիս մշակման և տարածման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ,
2. լրատվության միջոցներով պացիենտներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին,
3. համապատասխան որակավորման դասընթացների միջոցով բուժաշխատողներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման կարևորության և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին:

## 5. Բժշկական օգնության հասանելիության խնդիր

Կենսական կարևոր նշանակություն ունի բնակչության առողջության պահպանման ու բարելավման արդյունավետ համակարգի ձևավորումը, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման հասանելիության ու որակի ապահովումը, դեղերի շրջանառության կարգավորման կազմակերպումը, բնակչության առողջության կորստի հետ կապված ֆինանսական ռիսկերի նվազեցումը:

Բուժօգնության հասանելիությունը (հատկապես բնակչության սոցիալապես անապահով խավերի համար) ունի հիմնարար նշանակություն:

Պաշպանին հասցեագրվել են բողոքներ, որ անհրաժեշտ բուժօգնությունը չեն կարող ստանալ ֆինանսական միջոց չունենալու կամ տվյալ հիվանդության բուժօգնությունը Հայաստանում առկա չլինելու պատճառով:

Օրինակ՝ բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ իր մոտ ախտորոշվել է աջ ակնագնդի գոյացություն (մելանոմա): Դիմել է տարբեր ակնաբուժական կենտրոններ, ինչպես նաև ակնաբույժների, ովքեր հավաստիացրել են, որ աչքի մելանոմայի բուժօգնություն Հայաստանում չի իրականացվում և առաջարկվել է շտապ ցուցումով բուժօգնություն ստանալ արտերկրում, մասնավորապես՝ Ռուսաստանի

Դաշնությունում: Միաժամանակ, խորհուրդ է տրվել բուժօգնության դիմել հնարավոր սեղմ ժամկետում, այլապես այն կլինի անարդյունավետ: Պացիենտը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացրել նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր ակնաբանի մասնագիտական խորհրդատվությունն առ այն, որ խորհուրդ է տրվում բրախիթերապիա արտերկրում: Քաղաքացին ընդգրկված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (անապահովության միավոր՝ 37), չի կարող ինքնուրույն հոգալ բուժօգնության ծախսերը: Աջակցության համար դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն և ստացել ոչ պատշաճ պատասխան, մասնավորապես՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեն բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ներառված անձինք (ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշում) և առաջարկվել է ուղեգրով դիմել բժշկական հաստատություն:

Հաշվի առնելով, որ ցուցված բուժօգնությունը չի իրականացվում Հայաստանում, խնդրել է Պաշտպանի աջակցությունը նշված խնդրի լուծման հարցում:

Կոնկրետ իրավիճակը հետևյալն է. դիմողն ընդգրկված է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին /հատուկ/ խմբերի ցանկում և կարող է օգտվել սահմանված արտոնություններից: Սակայն ունենալով արտոնություն՝ չի կարող ստանալ անհրաժեշտ բուժօգնություն Հայաստանում դրա բացակայության պատճառով, իսկ արտերկրում՝ ֆինանսական բավարար միջոցներ չունենալու պատճառով:

Դիմողի բուժօգնությունը կազմակերպելուն աջակցելու առաջարկով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ առողջապահության նախարարություն, որտեղից տեղեկացրել են, որ պացիենտին ուղղորդվել է ՌԴ՝ Հելմհոլցի անվան աչքի հիվանդությունների գիտահետազոտական կլինիկա, քանի որ նրան, առողջական վիճակից ելնելով, ցուցված է բրախիթերապիա, որը ՀՀ-ում չի իրականացվում և բուժման այլընտրանքային տարբերակներ ցուցված չեն:

Մարդու իրավունքների պաշտպանի այն հարցին, թե արդյոք քայլեր ձեռնարկվում են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված անձանց (պացիենտին) աջակցելու նպատակով այն դեպքում, երբ ցուցված բուժօգնության տեսակը բացակայում է Հայաստանում և բուժման այլընտրանքային տարբերակներ ցուցված չեն, Նախարարությունը չի անդրադարձել, այլ նշել է միայն օտարերկրյա պետություն զինծառայողին բուժման (հետազոտության) ուղարկելու գործընթացն իրականացնելու կարգը (համաձայն՝ ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 410-Ն որոշման):

Պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են նաև, որ որակյալ բուժօգնությունը բնակչության սոցիալապես անապահով խմբին պատկանող անձանց համար մատչելի չէ: Ըստ դիմողների՝ բուժման արդյունքում նրանց առողջական վիճակի լավացում չի նկատվել, ավելին՝ երբեմն էլ հիվանդությունը բարդացել է:

Հաճախ Պաշտպանին դիմողները նշում են, որ այնպիսի հետազոտություններ, ինչպիսիք դուպլեքսը, կոմպյուտերային տոմոգրաֆիան և մագնիտառեզոնանսային տոմոգրաֆիան բավականին թանկարժեք են: Այդ պատճառով էլ ծայրահեղ դեպքերում են անցնում այդ հետազոտությունները:

Մեկ այլ բողոքի համաձայն՝ բողոք ներկայացրած անձը, ում ընտանիքն ընդգրկված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, տարվա երկրորդ



կեսին չի կարողացել երեք ամսական երեխայի ՄՌՏ (անզգայացումով) հետազոտությունն իրականացնել, քանի որ պետական պատվերն արդեն սպառված է եղել: Դիմողի պնդմամբ՝ չի կարող վճարովի հիմունքներով դիմել բժշկական հետազոտության, քանի որ այն թանկարժեք է, սակայն անհրաժեշտ է հնարավորինս վաղ իրականացնել հետազոտությունը երեխայի հետագա բուժման տակտիկան որոշելու համար:

Պաշտպանի միջամտությամբ ՀՀ առողջապահության նախարարության և Նաիրի բժշկական կենտրոնի համագործակցությամբ իրականացվել է անհրաժեշտ բուժօգնությունն անվճար հիմունքներով:

Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ այն մասին, որ պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն ստանալու դեպքում արժանանում են անտարբեր վերաբերմունքի, ստանում անորակ բուժօգնություն, այդ թվում՝ ստոմատոլոգիական բուժօգնություն:

Ըստ բողոքների՝ շատ են դեպքերը, երբ վճարովի սկզբունքով բուժման դեպքում բժշկական անձնակազմը բարիդրացիական վերաբերմունք է ցուցաբերում, բուժօգնության որակը բարձր է և բուժօգնությունն արդյունավետ, առողջական վիճակը լավացել է: Դիմողների համոզմամբ՝ որակական տարբերություններն առավել քան ակնհայտ են և որակյալ բուժօգնությունը մեծ հաշվով ստացվել է վճարովի սկզբունքով բուժօգնության ժամանակ:

Բնակչության բոլոր խավերին անհրաժեշտ բուժօգնությունը հասանելի դարձնելու, բուժօգնության գնային քաղաքականությունը վերանայելու վերաբերյալ Առողջապահության նախարարությունից տեղեկացրել են, որ հանրային քննարկման է դրվել համապարփակ ապահովագրության հայեցակարգը, որով ներկայացվել է նաև հաստատված մեթոդաբանությամբ հաշվարկված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է՝

1. վերանայել բժշկական օգնության և սպասարկման տեսակների և ծառայությունների միջին գները՝ ըստ բժշկական օգնության կազմակերպման ձևերի, նախատեսել զեղչման մեխանիզմներ բնակչության բոլոր խավերին բուժօգնությունը հասանելի (մատչելի) դարձնելու նպատակով,

2. մշակել չափորոշիչներ Հայաստանում անհրաժեշտ բուժօգնությունն առկա չլինելու դեպքում պացիենտին աջակցելու վերաբերյալ,

3. պարբերաբար իրականացնել ստուգումներ պետական պատվերի շրջանակներում իրականացվող և վճարովի սկզբունքով իրականացվող բուժօգնության, այդ թվում՝ ստոմատոլոգիական բուժօգնության նույնական որակ ապահովելու, ինչպես նաև բուժանձնակազմի խտրական վերաբերմունքը բացառելու նպատակով:

6. Անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության հետ կապված խնդիր

Բնակչության բոլոր խմբերին տրամադրվում է անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում մի շարք հիվանդությունների և վիճակների դեպքում, որոնք սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 65-Ն հրամանով: ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի փետրվարի 7-ի թիվ 229-Ս հրամանով սահմանված են այն հիվանդությունները և վիճակները, որոնց ժամանակ բնակչության բուժօգնությունը և սպասարկումն իրականացվում է համավճարային սկզբունքով՝ պետության կողմից բուժման արժեքի մասնակի փոխհատուցմամբ:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ վերակենդանացման բաժանմունքում բուժում ստացած քաղաքացիներից այն մասին, որ որպես համավճար վճարում են կատարել այն դեպքի համար, երբ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման ուժով համավճարը չի տարածվել որոշմամբ հաստատված վերակենդանացման միջոցառումներ պահանջող հիվանդությունների և վիճակների վրա:

Ուսումնասիրությունը վկայում է, որ այդպիսի իրավիճակ հնարավոր է այն դեպքում, երբ վերակենդանացման բաժանմունքում բուժման կարիք ունեցող անձի հիվանդությունը որակվում է որպես անհետաձգելի դեպք, պատմագիրը բացվում հենց դրան համապատասխան, այնուհետև գանձվում է սահմանված համավճարը: Մինչդեռ, եթե դեպքը գնահատվի վերակենդանացման միջոցառումներ պահանջող, ապա տրամադրվող բուժօգնությունը կկազմակերպվի պետական պատվերի շրջանակներում:

Կարծում ենք, որ անհետաձգելի վիճակների և հիվանդությունների առկա ցանկի ոչ հստակ լինելը գործնականում կարող է ստեղծել անորոշ վիճակ՝ կապված պետական պատվերի շրջանակներում կամ համավճարային կարգով բուժօգնության տրամադրման հետ: Հարցն այն է նաև, որ բնակչությանը (18 տարեկան և բարձր տարիքի անձանց համար) պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկի վերակենդանացման միջոցառումները և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդություններն ու վիճակները սահմանափակ են կամ ընտրված են հիվանդության ծանր տեսակները: Օրինակ՝ 2-րդ և ավելի աստիճանի շոկային վիճակներ, ծանր աստիճանի պրեէկլամպսիա և էկլամպսիա և այլն: Ուստի, այս հարցի կարգավորումը պետք է քննարկվի՝ հաշվի առնելով պրակտիկան:

Երբեմն հիվանդի վիճակը պետք է գնահատվի որպես «անհետաձգելի բուժօգնության կարիք ունեցող», սակայն հաստատված ցանկում այդ հիվանդությունը կամ ախտորոշումն այլ կերպ է նշված. Կամ բուժումը կկազմակերպի պետական պատվերի շրջանակում, եթե ախտորոշման հետ միաժամանակ նշված լինի հիվանդության բարդացած լինելու մասին, օրինակ՝ սուր, բարձր, 2-րդ և ավելի աստիճան և այլն: Սա խնդիր է նկատի ունենալով, որ վիճակները գնահատելու համար սահմանված չեն չափանիշներ: Պարզ է, որ բժշկի հայեցողությանն է թողնված իրավիճակի գնահատումը: Արդյունքում՝ հիվանդության պատմագիրն էլ բժշկի կողմից կարող է բացվել ինչպես պետական պատվերով, այնպես էլ՝ համավճարի սկզբունքով բժշկական ծառայություն մատուցելու համար:

Այսպիսով, անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող վիճակների և հիվանդությունների ցանկի անկատարությունն ստեղծում է հայեցողության հնարավորություն, ինչն էլ գործնականում բուժօգնության դիմող մարդկանց համար առաջացնում է բացասական հետևանքներ բժշկական հաստատություններում:

Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ երբեմն հիվանդը կատարում է ամբողջական վճարում մատուցված ծառայության դիմաց՝ տեղյակ չլինելով, որ տվյալ ախտորոշման բուժօգնության վճարումն իրականացվում է համավճարային կարգով: Հետագայում ծանոթ-բարեկամից տեղեկանում է, որ տվյալ բժշկական օգնության ծառայությունը տրամադրվում է արտոնյալ պայմաններով՝ համավճարային սկզբունքի կիրառմամբ: Օրինակ, բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ շտապ օգնության մեքենայով տեղափոխվել է բժշկական կենտրոն: Նրա մոտ ախտորոշվել է պարանոցային հղիություն: Արյունահոսություն: Շտապ ցուցումով կատարվել է վիրահատություն. Արգանդի էքստիրպացիա առանց հավելումների:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ կատարված վիրահատության համար պահանջել են վճարել 480.000 դրամ: Այնուհետև, իմանալով, որ երեք անչափահաս երեխայի մայր է՝ տեղեկացրել են, որ կարող են վճարել 380.000 դրամ, ինչն արվել է: Հետագայում

տեղեկացել են, որ կատարված բուժօգնությունը պետք է տրամադրվեր արտոնյալ պայմաններով:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ բժշկական կենտրոնի վարչակազմն իրեն չի տեղեկացրել, որ կատարված բժշկական ծառայության դիմաց վճարումը պետք է իրականացվի համավճարային սկզբունքով: Պաշտպանի աջակցությամբ խնդիրը լուծվել է, պացիենտին վերադարձվել է ավել վճարված 80.000 ՀՀ դրամ գումարը:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է՝

1. ուժեղացնել հսկողությունը բժշկական փաստաթղթերի, մասնավորապես՝ պատմագրերի վարման նկատմամբ՝ համավճարային սկզբունքով փոխհատուցվող և պետության կողմից երաշխավորված անվճար դեպքեր չխախտելը բացառելու նպատակով,

2. իրականացնել իրազեկումներ պացիենտներին համավճարային սկզբունքով մատուցվող ծառայությունների վերաբերյալ ինչպես առանձին բուժհաստատություններում, այնպես էլ երկրի մակարդակով:

7. Չարդրակ ուռուցքաբանական հիվանդությունների բուժօգնության ոլորտի խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել ուռուցքաբանական առողջական խնդիր ունեցող քաղաքացիներ՝ նշելով, որ բժշկական հաստատություն դիմելուց հետո ողջամիտ ժամկետում բուժօգնություն չեն ստացել: Խնդիրը, մասնավորապես, կապված է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ուռուցքաբանական բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար բնակչության հերթագրումներին:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայություններն իրականացվում են տվյալ կազմակերպության տարեկան պայմանագրային գումարի շրջանակներում՝ ամսական կտրվածքով հաստատված տվյալ ծրագրի համամասնությունների չափով: Պայմանագրային գումարի ամսական համամասնության սպառման դեպքում բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է հերթագրման եղանակով:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունները վկայում են, որ քաղցկեղ ունեցող պացիենտները, ունենալով բժշկի, բժշկական կազմակերպության ընտրության իրավունք, առավելապես դիմում կամ ուղեգրվում են Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն: Դիմում են նշված կենտրոն, քանի որ այն համարվում է ուռուցքաբանության բնագավառում ՀՀ առաջատար բազմապրոֆիլ կենտրոն, որտեղ կատարվում է ժամանակակից ուռուցքաբանությանը համապատասխան ախտորոշում և բուժում:

Մարդիկ նշում են, որ մյուս բժշկական կազմակերպություններ հիմնականում չեն դիմում անգամ սակավ հերթերի կամ նույնիսկ հերթերի բացակայության պարագայում, ինչն իր հերթին առաջացնում է բարդություններ Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի պայմանագրային գումարների հաշվարկման և պլանավորման գործընթացում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պացիենտների դիմելիությամբ պայմանավորված պայմանագրային գումարի ամսական համամասնության վաղ սպառման պատճառով Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն դիմելիս քաղցկեղ ախտորոշում ունեցող պացիենտը հերթագրվում է: Այս դեպքում էլ 2-3 և ավել ամիս հետո է ստանում բուժօգնություն: Սա իր հերթին նշանակում է, որ ժամանակին և

արդյունավետ բուժօգնություն ստանալը հատկապես այդ շրջանակի անձանց համար դառնում է ոչ մատչելի և կարող է առողջական վիճակի անդառնալի վատթարացման պատճառ հանդիսանալ: Դրա համար էլ հերթագրված կամ հերթագրման ենթակա պացիենտները հաճախ հրաժարվում են սպասել իրենց հերթին և նախապատվությունը տալիս են հերթագրման կարգից դուրս արտահերթ բուժօգնություն ստանալ վճարովի սկզբունքով (կամ համավճարի կիրառմամբ), ինչի հետևանքով էլ երբեմն չեն կարողանում վճարել բուժման ծախսերի մյուս մասնաբաժինը:

Ստացվում է, որ օնկոլոգիական հիվանդությունների դեպքում պացիենտի հերթագրման պարագայում ծագում է կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգ, քանի որ օնկոլոգիական հիվանդությունները պահանջում են անհետաձգելի գործողություններ հիվանդությունը բուժելու կամ հիվանդության հետագա զարգացումը կանխարգելելու համար:

Հաշվի առնելով սա՝ բժշկական կենտրոնում, որպես լուծում, պացիենտին առաջարկվում է բուժօգնությունն ստանալ վճարովի հիմունքներով:

Խնդրի կապակցությամբ Պաշտպանին ՀՀ առողջապահության նախարարությունից ներկայացված պարզաբանման համաձայն՝ պետական բյուջեից Առողջապահության նախարարությանը տրամադրված գումարից 416.173.000 (չորս հարյուր տասնվեց միլիոն հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ հատկացվել է Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնին՝ ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների մատուցման համար, ինչն էապես կնպաստի ուռուցքաբանական և արյունաբանական առողջական խնդիրներ ունեցող հերթագրված անձանց՝ ողջամիտ ժամկետում բուժօգնություն ստանալու հարցի կարգավորմանը: Պաշտպանը կրկնակի հարցում է ներկայացրել Նախարարություն առ այն, թե արդյոք նշված միջոցների տրամադրումից հետո իրականացվել են դիտարկումներ հերթագրված պացիենտների բուժօգնությունը ողջամիտ ժամկետում տրամադրելու հարցը պարզելու նպատակով, ինչպես նաև կատարվել են արդյոք ուսումնասիրություններ բուժօգնություն ստանալու հերթագրումը նվազագույնի հասցնելու ուղղությամբ արդյունավետ միջոցների կիրառման և ֆինանսական միջոցների նախատեսման վերաբերյալ:

Նախարարությունից տեղեկացրել են, որ 2019 թվականին ՀՀ պետական բյուջեով ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծրագրով հատկացված միջոցների ավելացումները հնարավորություն տվեցին մյուս ծառայությունների հետ միասին փուլային կարգով լուծումներ իրականացնելու նաև չարորակ նորագոյացությունների բուժման մասով, ինչն էլ բերեց հերթերի զգալի նվազեցմանը:

Ողջունելի է, որ 2019 թվականի հուլիսի 4-ից ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության և սպասարկման ճառագայթային թերապիա ծառայության մասով կատարվել են մի շարք փոփոխություններ:

Հասկանալի է, որ ձեռնարկված այս քայլով ուռուցքաբանական և արյունաբանական ախտորոշումներով հիվանդների համար ճառագայթային բուժումն առավել հասանելի և մատչելի է դառնում, որի արդյունքում բարելավվել են ուռուցքաբանական հիվանդների ապրելիության, հիվանդացության, մահացության առողջապահական ցուցանիշները, կնվազեն պացիենտների ուղղակի վճարները, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ նրանց կյանքի որակի վրա:

Չնայած ոլորտում տեղի ունեցած բարեփոխումներին, այնուամենայնիվ շարունակվում են Պաշտպանին հասցեագրվել բողոքներ հաստատված չարորակ ուռուցք ունեցող անձանցից, որոնց հետագա բուժօգնությունը կազմակերպելու համար անհրաժեշտ են

հարակից վճարովի հետազոտություններ: Ըստ դիմողների՝ դրանք մատչելի չեն, վճարել չկարողանալու պատճառով շատ դեպքերում ստիպված դիմում են քիմիաթերապիա կամ ճառագայթային բուժօգնության՝ առանց հավելյալ հետազոտությունների արդյունքների:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ մոր մոտ հայտնաբերվել է չարորակ ուռուցք: Ճառագայթային և քիմիաթերապևտիկ բուժօգնության կազմակերպման համար անհրաժեշտ են մի շարք հետազոտություններ, մասնավորապես, կոմպյուտերային տոմոգրաֆիա, իմունոհիստոլոգիա, որոնց համար չեն կարող վճարել: Դիմողը խնդրել է Պաշտպանի աջակցությունը դրանք Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանական ազգային կենտրոնում անվճար կազմակերպելու հարցում, քանի որ ֆինանսական միջոցներ չունեն, ընտանիքն ընդգրկված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում: Կենտրոնից ստացել է տեղեկություն այն մասին, որ արտահիվանդանոցային պայմաններում դրանք նշված կենտրոնում չեն իրականացվում, ուստի առաջարկվել է դիմել մեկ այլ բժշկական կենտրոն, որտեղ տեղադրված է պետական պատվեր:

Մեկ այլ բողոքով էլ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը տեղեկացրել է, որ որն ունի օնկոլոգիական առողջական խնդիր, մասնավորապես ձվարանի քաղցկեղ, որի հետևանքով որովայնում հեղուկ է հավաքվել և անհրաժեշտ է կատարել լապարացենտեզ (հեղուկի հեռացում) բուժօգնություն: Այն ստանալու նպատակով պոլիկլինիկայից տրամադրած ուղեգրով (քանի որ պոլիկլինիկայում նման ծառայություն չեն մատուցում) դիմել է Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն, սակայն հրաժարվել են այն իրականացնել պետական պատվերի շրջանակներում (սոնոգրաֆիա հետազոտության համար պահանջել են 18.000 դրամ, իսկ լապարացենտեզի՝ 25.000 դրամ):

Դիմողին Պաշտպանի աշխատակազմում տեղեկացվել է, որ նշված լապարացենտեզ բուժօգնության համար ուռուցքաբանության ազգային կենտրոնում պետական պատվեր տեղադրված չէ: Այն իրականացվում է ամբուլատոր պայմաններում և վճարովի հիմունքներով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով դիմողի առողջական ծանր վիճակը՝ բժշկական կենտրոնի տնօրենը հայտնել է պատրաստակամություն համագործակցության շրջանակներում այն իրականացնել անվճար հիմունքներով:

Նախարարության պարզաբանման համաձայն՝ լապարացենտեզ բուժօգնությունը և իմունոհիստոլոգիա հետազոտությունը ներառված չեն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ցանկում և բնակչության բոլոր խմբերին տրամադրվում են վճարովի պայմաններով: 2019 թվականի ընթացքում ստացվել է 27 բողոք՝ լապարացենտեզ բուժօգնությունը և քաղցկեղով պացիենտներին ցուցված իմունոհիստոլոգիա հետազոտությունը պետական պատվերով կամ արտոնյալ պայմաններով չիրականացնելու վերաբերյալ:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներում կրկին բարձրացվել է քիմիաթերապևտիկ բուժօգնության, մասնավորապես՝ քիմիապրեպարատների բարձր գների խնդիրը: ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 1-ում նշված սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց համար չարորակ ուռուցքաբանական հիվանդությունների քիմիապրեպարատների ծախսը կատարվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված քիմիաթերապևտիկ միջոցառումների նվազագույն սխեմաների շրջանակներում, կազմակերպության միջոցներով գնված և հիվանդին հատկացված քիմիապրեպարատների փաստացի ծախսի չափով՝ ոչ ավելին՝ քիմիաթերապևտիկ 1 կուրսի համար 30 հազար դրամ, իսկ մեկ հիվանդի համար՝ տարեկան 150 հազար դրամ: Փոխհատուցումը կատարվում է մեկ տարվա ծախսի չափով: Կազմակերպության միջոցներով գնված և հիվանդին տրամադրված քիմիապրեպարատների ծախսը մեկ կուրսի համար 30 հազար դրամը կամ տարեկան կտրվածքով 150 հազար դրամը գերազանցելու դեպքում փոխհատուցում է հիվանդը:

Բողոք ներկայացրած անձինք պնդում են, որ փոխհատուցման չափը փոքր է, քանի որ կախված քանակից՝ 150 հազար դրամը գերազանցելու դեպքում վճարել չկարողանալու պատճառով բուժօգնությունը չեն շարունակում:

Որոշ բողոքներով էլ պացիենտները դժգոհել են կազմակերպության միջոցներով գնված և հիվանդին հատկացված քիմիաթերապիայի արդյունքից և հրաժարվել կրկին դիմելուց: Վերջիններիս պնդմամբ՝ այլ կենտրոններում քիմիաթերապիայի մեկ հատի արժեքը 120 հազար դրամ է, որի պատճառով էլ չեն օգտվել անհրաժեշտ ծառայությունից:

Ըստ դիմողների՝ բուժման ծախսերն ավելանում են կախված հիվանդության բարդությունից:

Նախարարության տեղեկացմամբ՝ 2019 թվականի ընթացքում ստացվել է 91 բողոք՝ քիմիաթերապիայի բուժման (համավճարային եղանակ, քիմիաթերապիայի) մատչելի չլինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. պարբերաբար իրականացնել ուսումնասիրություն չարորակ նորագոյացությունների բուժօգնությունը հնարավորինս վաղ կազմակերպելու և Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում հերթագրման նվազեցումն ապահովելու նպատակով,

2. Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում տեղադրել պետական պատվեր հաստատված չարորակ ուռուցքով պացիենտների արտահիվանդանոցային պայմաններով անհրաժեշտ հետազոտություններն իրականացնելու համար՝ հաշվի առնելով, որ այն Հայաստանում մասնագիտացված, բազմապրոֆիլ ուռուցքաբանական օգնություն ապահովող հաստատություն է,

3. «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների փոխհատուցման սկզբունքները շարունակաբար ընդլայնել, վերանայել քիմիաթերապիա բուժօգնության գնային քաղաքականությունը:

8. Պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետության խնդիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի քննարկմանը ենթակա առողջապահության ոլորտին վերաբերող բողոքները հիմնականում վերաբերում են Նախարարությունից ոչ բովանդակային և ըստ էության պատասխան ստանալուն: Այսպես, բողոք ներկայացրած անձը, ով տարեց է, միայնակ անժառանգ կենսաթոշակառու, դիմել է Պաշտպանին՝ հայտնելով, որ աչքը բժշկական կենտրոնում վիրահատել են, որի արդյունքներից դժգոհ է: Դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն՝ նախարարի հետ ընդունելություն կազմակերպելու խնդրանքով, սակայն ստացել է մերժում՝ «Նախարարությունն իրավասու չէ բժիշկների գործողությունները քննարկել» պատճառաբանությամբ:

ՀՀ առողջապահության նախարարության հետ Պաշտպանի աշխատակազմի համագործակցության շրջանակում պատրաստակամություն են հայտնել կազմակերպել նախարարի հետ ընդունելություն:

Մեկ այլ բողոքով էլ քաղաքացին տեղեկացրել է, որ որովայնի սուր ցավերի առկայությամբ տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ «Փայծաղի ախտահարում» ախտորոշում արձանագրվելուց հետո հինգ օր բուժօգնություն է ստացել ստացիոնար պայմաններում, որի համար վճարել է 130.000 դրամ: Վերջինիս հավաստմամբ՝ կենտրոնում մատուցվել է ոչ պատշաճ որակի բժշկական օգնություն. ստացել է միայն ցավազրկող ներարկումներ, արդյունքում բուժօգնությունն ապարդյուն է եղել: Բացի

ոչ պատշաճ բուժօգնությունից, նշել է նաև, որ բժշկական կենտրոնում արժանացել է կոպիտ և վատ վերաբերմունքի: Խնդրել է Պաշտպանին պարզելու՝ արդյոք բուժօգնությունը բավարար ծավալով է ստացել, քանի որ երբ փորձել է տեղեկանալ, բժիշկը նրան հստակ և ժամանակին չի տեղեկացրել՝ ինչի համար է կատարել վճարումը և ինչ բուժում է ստացել, ինչպես նաև նրան չի տրամադրել հաստատության կողմից մատուցվող և տնօրենի հաստատած ծառայությունների գնացուցակը:

Պաշտպանը բողոք ներկայացրած անձի համաձայնությամբ դիմումը քննարկման նպատակով վերահասցեագրել է ՀՀ առողջապահության նախարարություն, որտեղից էլ բարձրացված խնդիրների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար քաղաքացու դիմումն ուղարկվել է բժշկական կենտրոն: Հետագայում Պաշտպանին որպես պատասխան ուղարկվել է բժշկական կենտրոնի պարզաբանումները: Սրանով ավարտվել են Նախարարության գործողությունները: Բժշկական կենտրոնի ներկայացրած պարզաբանումներն ամբողջությամբ հակադարձում են բողոք ներկայացրած անձին. «...Հիվանդը ստացել է կոնսերվատիվ բուժում (ֆիզ. լուծ., նոշպա, սպազմալզոն, դեքսալզին, մետոկլոպրամիդ, դիկլոֆենակ, ռինգերի լուծույթ), հիվանդը ենթարկվել է լաբորատոր և գործիքային հետազոտությունների և այլն: Վերաբերմունքը և շփումը հիվանդի հետ եղել է բարիդրացիական, հարգալից, առանց կոնֆլիկտների և կոպտության: Նկարագրված փաստերը զրպարտություն են բուժող բժշկի, բաժանմունքի և հիվանդանոցի նկատմամբ»:

Ներկայացվածը, ըստ բողոք ներկայացրած անձի, բոլորովին չի համապատասխանում իրականությանը:

Ինչ է ստացվում: Երկու կողմերն իրար հակասող հանգամանքներ են ներկայացնում: Սակայն վարչական մարմինը որպես կանոն չի իրականացնում ստուգումներ, քննարկումներ հիվանդի հետ, բավարարվում է միայն բժշկական կենտրոնի պարզաբանմամբ: Արդյունքում, բարձրացված հարցը բավարարում չի ստանում:

Պետք է նշել, որ նշված դրույթը չպահպանելու դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների բողոքարկման և պատասխանատվության հստակ մեխանիզմներ սահմանված չեն:

Ըստ բողոքների՝ որպես կանոն, պացիենտները մասնավոր բժշկական կենտրոնների, ինչու չէ նաև մարզպետարանների, համայնքների ենթակայության կենտրոնների բժիշկներից բողոք ունենալու դեպքում դիմում են Նախարարություն, սակայն արդյունքի չեն հասնում: Ստանում են «Նախարարությունը բժշկին պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ օժտված չէ» պատասխան, որն էլ առաջացնում է դժգոհություն քաղաքացիների մոտ:

Պացիենտը իրավունք ունի իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության հարցով դիմել նաև ՀՀ առողջապահության նախարարությանը:

Վարչական մարմինն էլ պարտավոր է ապահովել դիմումում նշված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. քաղաքացիների բողոքները քննել ըստ էության,
2. ապահովել պացիենտների բողոքների քննման մասնագիտացված և արդյունավետ մեթոդներ,
3. բժշկական հաստատություններում ստեղծել պացիենտների իրավունքների պաշտպանության մեխանիզմ:

9. Իրազեկվածության պակասը կամ բացակայությունը՝ որպես իրավունքների խախտմանը նպաստող պայման

Պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են, որ բազմաթիվ քաղաքացիներ չեն տիրապետում իրենց իրավունքներին:

Քաղաքացիների իրավունքների վերաբերյալ իրավական նորմեր, ինչպես օրինակ տեղեկացված լինելու, պետական պատվերով բուժօգնությունից օգտվելու իրավունքները, բժշկական կազմակերպությունների՝ այդ իրավունքների ապահովմանն ուղղված պարտականությունները և այլ դրույթներ սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի անհատական հրամաններով, ինչը հանդիսանում է լուրջ խոչընդոտ քաղաքացիների կողմից իրենց իրավունքներին ծանոթանալու տեսանկյունից: Խնդիրն այն է, որ անհատական իրավական ակտերը հիմնականում չեն հրապարակվում, ինչպես նաև բացակայում են «Առլիս» Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգից: Բացի այն, որ անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության բնագավառը կարգավորող իրավական ակտերից ոչ բոլորն են հասանելի, այդ իրավական ակտերն այնքան էլ պարզ և մատչելի չեն քաղաքացիների համար: Քաղաքացիների համար հասանելի չէ նաև այն տեղեկությունը, թե որ բժշկական կազմակերպություններն են տվյալ տարվա համար ՀՀ առողջապահության նախարարության հետ բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի համար կնքել պայմանագրեր պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին: Չնայած դրանց ցանկը հրապարակված է ՀՀ առողջապահության նախարարության [moh.am](http://moh.am) պաշտոնական կայքում, այնուամենայնիվ այն խնդիր է մեծահասակ կամ ժամանակակից տեխնիկային չտիրապետող քաղաքացիների համար: Վերջիններս խորհրդատվություն կամ տեղեկություն են ստանում Պաշտպանի աշխատակազմում կամ թեժ գծով հեռախոսազանգերի միջոցով:

Չնայած որոշ իրավակարգավորումների՝ Պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են, որ անվճար բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ պացիենտներին տեղեկություն հիմնականում չի տրամադրվում: Դրանից բացի, ոչ բոլոր բժշկական կազմակերպություններում են փակցված անվճար բուժօգնությանն առնչվող հարցերի և բողոքների ներկայացման վերաբերյալ տեղեկությունները կամ փակցված են ոչ այնքան տեսանելի վայրում:

2019 թվականի ընթացքում հասցեագրվել են բողոքներ, որ պետական պատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով ուղեգրեր չեն տրամադրվում, քանի որ ընդգրկված չեն պետական պատվերի շրջանակներում ստանալու իրավունք ունեցող անձանց խմբում, իսկ բուժօգնությունն էլ մատչելի չէ:

Պետք է նշել, որ ուղեգիր տրամադրող կազմակերպությունները՝ պոլիկլինիկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները, շատ դեպքերում պացիենտներին չեն տեղեկացնում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման համար ՀՀ քաղաքացիներին ուղեգիր տրամադրելու կարգը: Բազմաթիվ են դեպքերը, երբ քաղաքացիներն անվճար բուժօգնություն ստանալու իրենց իրավունքի մասին տեղեկանում են Պաշտպանին դիմելուց հետո, իսկ բուժօգնությունն ստանալուց հետո գոհունակությամբ տեղեկացնում են Պաշտպանին:

Վերոգրյալ խնդրի առնչությամբ Նախարարության պարզաբանմամբ՝ Առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 2852-Ա հրամանով հաստատվել են թվով 7 ձևաչափի տեղեկատվական պաստառներ՝ պետական պատվերի շրջանակում ամբողջ բնակչության համար անվճար հիվանդանոցային,



արտահիվանդանոցային, սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված քաղաքացիների համար հատուկ և դժվարամատչելի հետազոտությունների, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների, ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև համավճարային սկզբունքի կիրառմամբ ծառայությունների վերաբերյալ: Արդեն շուրջ 200 հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տեսանելի վայրերում փակցված են վերոհիշյալ պաստառները: Նախարարությունը նշել է նաև որոշակի լուսաբանումների մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հնարավորինս հասանելի դարձնել ՀՀ առողջապահության նախարարի պետական պատվերին վերաբերող բոլոր անհատական իրավական ակտերը,
2. հրապարակել, ինչպես նաև պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում ուղեգրի տրամադրման հետ մեկտեղ տրամադրել պետական պատվեր իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը,
3. ապահովել իրազեկման հետ կապված բժշկական կազմակերպությունների պարտավորություններին վերաբերող պահանջների կատարումը և ուժեղացնել վերահսկողությունը դրա նկատմամբ,
4. բացի պաստառներից և լուսաբանումներից, բժշկական կենտրոնների տեսանելի վայրերում տեղադրել ինտենսիվ կարճ տեսանյութեր պացիենտների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

10. Պացիենտին դեղորայքով չապահովելը, անվճար տրամադրվող դեղորայքի որակը և հիմնական դեղերի ցանկի ընդլայնման հետ կապված խնդիրներ

Բնակչությանն անվճար և արտոնյալ պայմաններով դեղերը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով կամ առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված անձանց և առանձին հիվանդություններով տառապող անձանց:

ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 642-Ն որոշման համաձայն՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով բնակչության սոցիալապես անապահով խմբերին դեղերով ապահովում է սպասարկող պոլիկլինիկական՝ մասնագետի նշանակմամբ (Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկին համապատասխան):

Տարվա ընթացքում ստացված բողոքները վկայում են այն մասին, որ դեղորայքային ապահովման գործընթացներում դեռևս առկա են խնդիրներ:

Պաշտպանին բողոքներով անձինք տեղեկացրել են, որ սոցիալական վիճակից ելնելով, հնարավորություն չունեն այս կամ այն դեղորայքը ձեռք բերել: Բողոքների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ դիմողների մեծ մասը պատկանում է անվճար կամ արտոնյալ պայմաններով ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական հաստատությունների միջոցով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում բողոքների քննարկման ընթացքում այդ անձինք նախ իրազեկվել են իրենց իրավունքների, ինչպես նաև միջազգային կամ մարդասիրական կազմակերպությունների կողմից տրամադրվող դեղեր ձեռք բերելու ընթացակարգի մասին: Դրանից բացի, Պաշտպանի միջամտությամբ ստացել այն դեղերը, որոնք տեղ են գտել ՀՀ հիմնական դեղերի ցանկում:

2019 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող բնակչության սոցիալապես

անապահով խմբերից այն մասին, որ հիվանդանոցում ստացիոնար բուժօգնության ընթացքում անվճար ստացել են միայն առաջին անհրաժեշտության դեղերը, իսկ մյուս դեղերը գնել են իրենք կամ մերձավոր ազգականները, քանի որ, ըստ բժիշկների, անհրաժեշտ է եղել առավել արդյունավետ դեղորայք:

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված է պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը, մասնավորապես՝ հիվանդին հիվանդասենյակով ապահովումը, մասնագիտացված խորհրդատվությունները, վիրահատությունները, դեղերով ապահովումը և այլն: Այսինքն, նույնիսկ արտոնյալ պայմաններով տրամադրվող բուժօգնության դեպքում համավճարով հիվանդը պետք է վճարի բուժման համար նախատեսված վճարը և բուժման ընթացքում լրացուցիչ վճար չպետք է կատարի: Սա նշանակում է, որ համավճարով բուժում ստացող քաղաքացին պետք է ստանա այն նույն ծավալի բուժօգնությունը, ինչը նախատեսված է պետության կողմից երաշխավորված ամբողջությամբ անվճար բուժօգնության համար: Հետևաբար, անվճար կամ արտոնյալ պայմաններով բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը չտրամադրելը իրավաչափ չէ:

Շարունակվել են բողոքներ անվճար տրամադրվող դեղորայքի անարդյունավետության վերաբերյալ: Սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված քաղաքացիները տեղեկացրել են, որ հրաժարվել են դրանցից՝ նախընտրելով սեփական միջոցներով ձեռք բերել որակյալ դեղեր:

Ստացվել են բողոքներ այն մասին, որ պոլիկլինիկաներից չեն ստանում բժշկի նշանակած դեղամիջոցները, այլ հիմնականում դրանց համարժեք փոխարինողները որպիսիք առկա են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված դեղերի ցանկում: Այս պարագայում բազմաթիվ շահառուներ հրաժարվում են ստանալ իրենց հասանելիք դեղերը երբեմն նաև իրենց բուժող բժշկի ցուցումով:

Բողոքները վկայում են, որ անվճար կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրվող դեղը դրական ազդեցություն չի ունենում առողջության պահպանման կամ վերականգնման և բուժման համար, ինչի հետևանքով անձինք ստիպված են լինում գնել արդյունավետ դեղամիջոցը, որի պատճառով չեն օգտվում դեղը ստանալու իրենց իրավունքից:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանին ՀՀ առողջապահության նախարարությունից պարզաբանել են, որ «Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկ»-ը մշակվում և վերանայվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության երաշխավորությունները, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված բուժման ուղեցույցները: Ցանկում դեղերն ընդգրկվում են միջազգային համընդհանուր (չպատենտավորված) անվանումներով՝ նշելով դեղաչափը և դեղաձևը: ՀՀ-ում պետական գրանցում ունեցող բոլոր դեղերի որակը երաշխավորված է, քանի որ մինչև շուկայահանման թույլտվություն տալը դեղի որակը, անվտանգությունն ու արդյունավետությունը հաստատող փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ գործող օրենսդրության համաձայն: Բուժկանխարգելիչ հիմնարկները, դեղատները և դեղերի իրացմամբ ու կիրառմամբ զբաղվող հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են Կառավարության լիազորած մարմնին անհապաղ տեղեկացնել դեղերի անհայտ կողմնակի ազդեցության բոլոր դեպքերի մասին: Առողջապահության նախարարության և «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղերի անցանկալի և վնասակար ազդեցությունների մշտադիտարկումն իրականացնելու նպատակով մշակվել է դեղերի կողմնակի ազդեցությունների գրանցման քարտ-հայտագրերի ձևերը: Առողջապահության

նախարարի հանձնարարությամբ իրականացվում է բոլոր դեղերի արդյունավետության և դրանց կիրառումից առաջացած կողմնակի երևույթների դիտարկումները:

Նախարարության տեղեկացմամբ՝ 2019 թվականի ընթացքում բուժաշխատողներից պետական պատվերով կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի որակի վերաբերյալ դժգոհություններ չեն եղել: Քաղաքացիներից եղել են պահանջներ «Արփիմեդ» ՍՊԸ արտադրության «Օլանզապին 10 մգ» դեղը փոխարինել Eli Lilly and Company (USA) ընկերության արտադրության «Զիպրեքսա 10մգ» դեղով՝ ստացվել է մոտ 15 դիմում:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ խնդրի առաջացման պատճառը, ըստ օրենքի, պետության կարիքների համար անհրաժեշտ դեղերի՝ ընդհանուր պետական գնումների ընթացակարգով գնումների իրականացումն է: Վերջինիս պարագայում մրցույթում հաղթում է, ի թիվս այլ պահանջներին համապատասխանող և միևնույն ժամանակ նվազագույն գին ներկայացրած հայտը: Պետական գնումների մրցույթներում գնվող դեղորայքի որակի պահանջը ստորադասված է առավել ցածր գնի պահանջին, ինչի պատճառով մրցույթը շահած դեղորայքի մատակարարը թեև ցածր գնով, սակայն շատ դեպքերում ոչ պատշաճ որակի դեղ է մատակարարում: Պետական գնումների շրջանակներում ընտրություն անելիս հիմք է ընդունվում միայն ազդող նյութը և ցածր գինը, ինչի արդյունքում ձեռք բերված դեղերը ցածր որակ ունեն և արդյունավետ չեն:

Պետք է նշել, որ նշանակված դեղորայքը ստանալու առավել արդյունավետ և դյուրին ճանապարհ քաղաքացիները Պաշտպանին ներկայացրած դիմումներով առաջարկել են պետության կողմից երաշխավորված հասանելիք գումարի չափով պացիենտին սերտիֆիկատ տրամադրելու կարգ սահմանելը: Նշվածը պացիենտին հնարավորություն կտա պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով ստացող դեղերի փոխարեն լավ որակի դեղ ձեռք բերելու ցանկության դեպքում, վճարելով լրացուցիչ գումար, ձեռք բերել հենց նշանակված դեղը, այլ ոչ թե համարժեք, բայց անարդյունավետ փոխարինողները:

Եղել են բողոքներ առհասարակ ՀՀ հիմնական դեղերի ցանկում ներառված չլինելու պատճառով դեղորայք չտրամադրելու, ինչպես նաև հիվանդանոցներում երբեմն անհրաժեշտ և արդյունավետ դեղորայք չլինելու վերաբերյալ: Այս դեպքերում բժիշկն առաջարկում է պացիենտին գնել անհրաժեշտ թանկարժեք կամ դժվարամատչելի դեղորայքը (այդ թվում՝ չգրանցված) դեղամիջոցներ ներմուծող կազմակերպություններից՝ կատարվող վաճառքից շահույթ ստանալու ակնկալիքով:

ՀՀ հիմնական դեղերի ցանկն ընդլայնելու վերաբերյալ Նախարարությունից տեղեկացրել են, որ այն հաստատվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ լիազոր մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: Ցանկը լրամշակվել է և հաստատվել Առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 07-Ն, 2018 թվականի մայիսի 31-ի թիվ 14-Ն, 2019 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 39-Ն հրամաններով, որտեղ հաշվի են առնվել քաղաքացիների պահանջները, բողոքները և առաջարկները: Ցանկը համալրվել է, որի արդյունքում նախկին 326 անվանման փոխարեն (2013թ.) ներկայում ներառված է 435 անվանում դեղ: 2020 թվականի մարտ ամսին նախատեսվում է ՀՀ «Հիմնական դեղերի ցանկի» լրամշակում, ինչը կարևոր է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. արտոնություններ ունեցող անձանց պատշաճ կարգով իրազեկել դեղեր ստանալու իրենց իրավունքի վերաբերյալ,
2. իրականացնել հսկողություն ստացիոնար բուժօգնություն ստացող պացիենտներին հասանելիք դեղորայքն ամբողջությամբ տրամադրելու նպատակով,
3. վերանայել պետության կարիքների համար գնվող դեղերի գնումների գործընթացը, խստացնել վերահսկողությունը պետական գնումներով ձեռք բերվող դեղորայքին առաջադրված պահանջների կատարման, դեղերի որակի նկատմամբ, պատշաճ կերպով

ուսումնասիրել հիվանդների բողոքները՝ պետական պատվերով տրամադրվող դեղերի որակի վերաբերյալ,

4. սահմանել այնպիսի կարգ, որ տրամադրվող դեղերի գները սահմանվեն և այդ սահմանում դեղերը ձեռք բերվեն դեղատներից կամ բուժհաստատությունից, իսկ պետական պատվերի շրջանակներում սահմանված գումարը գերազանցելու դեպքում նշված դեղի համար պետության կողմից փոխհատուցվող գումարից տարբերությունը վճարի պացիենտը (այս դեպքում կարելի է ներդնել նաև հավաստագրի եղանակը),

5. Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը շարունակական ընդլայնել:

11. Միրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններ

Միրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնությունը կարող է բնորոշվել, որպես Հայաստանում բուժօգնության թանկարժեք և դժվարամատչելի տեսակ, հատկապես նրանց համար, ովքեր սոցիալապես անապահով են: Մինչև 2007 թվականը նշված վիրահատությունը, թեև իրականացվում էր Հայաստանում, սակայն այն բնակչության սոցիալապես խոցելի խմբերի համար մատչելի չէր: ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 880-Ն որոշմամբ լրացում կատարվեց ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման մեջ: Սահմանվեց, որ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 36.00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներն իրավունք ունեն պետական բյուջեի միջոցների հաշվին ստանալու սրտի վիրահատության հետ կապված բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:

ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի թիվ 782-Ն որոշմամբ ընդլայնվել է սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններից անվճար հիմունքներով օգտվող շահառուների շրջանակը, նախկինում սահմանված 36.00 անապահովության միավորի փոխարեն սահմանվել է 30.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ:

Այդուամենայնիվ, կան որոշ բողոքներ: Այսպես, բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ կենսաթոշակառու է: Ունենալով 60 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժ, լինելով վաստակավոր դասախոս, ունենալով գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի կոչում՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնում սրտաբանական ծառայությունները, մասնավորապես կորոնարոանգիոգրաֆիան և սրտի կորոնար անոթի ստենոտավորումը կատարվել են վճարովի հիմունքներով: Մատուցված սրտաբանական ծառայությունների դիմաց վճարել է 1.500.000 ՀՀ դրամ, իսկ դրանից հետո դեղերի համար օրական վճարում է երկուսից երեք հազար դրամ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ հաշվի չի առնվել նաև իր թոշակառու լինելը և շուրջ 2,5 միլիոն դրամի պարտք է կուտակել:

Մեկ այլ դիմում-բողոքով էլ քաղաքացին տեղեկացրել է, որ հորը կատարել են սրտի կորոնար անոթի ստենոտավորում (ախտորոշում՝ սրտամկանի սուր ինֆարկտ) պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով, մյուս երկու անոթը՝ վճարովի հիմունքներով: Դիմել է առողջապահության նախարարին, ում հրամանով բժշկական կենտրոնին փոխանցվել է 500. 000 ՀՀ դրամ գումար, մնացած 750.000 ՀՀ դրամ գումարը չի կարող վճարել այն չունենալու պատճառով:

Մյուս դիմումով քաղաքացին տեղեկացրել է, որ բարեկամն ունի սրտի կորոնար անոթների ստենոսավորման կարիք, սակայն ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով չի կարող դիմել բուժօգնության:

Մեկ այլ դիմումով քաղաքացին տեղեկացրել է, որ մայրը, կենսաթոշակառու է, ունի սրտի առողջական խնդիր, անհրաժեշտ է կատարել սրտի բաց վիրահատություն: Ֆինանսական բավարար միջոց չունենալու պատճառով չեն կարող դիմել բուժօգնության: Թեև սոցիալապես անապահով են, սակայն չեն պատկանում արտոնություններ ունեցող անձանց խմբին:

Բոլոր այս դեպքերում օրենսդրությունը հնարավորություն չի ընձեռում ապահովել վերջնական արդյունք դիմողի համար: Ուստի, նրանց իրավունքների պաշտպանությունն ավարտվել է ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 57-Ն հրամանով հաստատված, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների չափորոշիչների պարզաբանմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններից անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ընդլայնել շարունակական տարբերակով,

2. անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունք չունեցող, սոցիալապես անապահով անձանց համար ծառայություններից օգտվելու հնարավոր տարբերակներ մշակել:

12. Ստոմատոլոգիական բժշկական օգնությունը պետական պատվերի շրջանակներում կամ արտոնյալ պայմաններով

2018 թվականի բյուջեով կրճատվել էր ստոմատոլոգիական բժշկական օգնության ծրագրի համար նախատեսված ծախսերը, որի հետևանքով էլ սահմանափակվել էր շահառուների ցանկը, ներդրվել էր համավճարի սկզբունքը: 2019 թվականի բյուջեով դարձյալ նախատեսվել է ավելացնել նշված ծախսերը, ուստի, որպես արդյունք, նորից համալրվել է ստոմատոլոգիական ծառայություններից անվճար և արտոնյալ պայմաններով օգտվող շահառուների ցանկը, ինչպես նաև ծառայությունների տեսակները:

Այսպես՝ 2018 թվականին ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված նպաստառուներից անվճար բուժօգնության իրավունք ունեին 35.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող անձինք, ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված՝ 30.01-35.00 անապահովության միավոր ունեցող մինչև 18 տարեկան երեխաներն ու 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք:

Ողջունելի է, որ 2019 թվականին ստոմատոլոգիական ծառայությունների ոլորտում տեղի ունեցած փոփոխություններով նախատեսվել է անվճար բժշկական օգնություն մատուցել ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 30.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող բոլոր նպաստառուներին: 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, մինչև 7 տարեկան երեխաներին, մինչև 18 տարեկան սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաներին, նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց ստոմատոլոգիական բուժօգնությունը մինչև նախկինում մատուցվում էր համավճարային սկզբունքով: 2019 թվականի ընթացքում նրանց այդ բուժօգնությունը կազմակերպվել է անվճար:

Գովելի է, որ միաժամանակ փոփոխություններով ավելացվել է նաև մատուցվող ծառայությունների հետևյալ տեսակները՝ մինչև 18 տարեկան երեխաների լորձաթաղանթի հիվանդությունների բուժում, 18 տարեկանից բարձր անձանց կարիեսի բուժում, լրիվ կամ

մասնակի շարժական թիթեղային պրոթեզի վերանորոգում և պրոթեզավորման համար անհրաժեշտ ատամնաշապիկի պատրաստում ու տեղադրում (յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ):

2019 թվականին ստացվել են բողոքներ տուն-ինտերնատի խնամյալներից ստոմատոլոգիական ծառայություններից օգտվել չկարողանալու վերաբերյալ:

Այսպես, տուն-ինտերնատներ կատարված այցերի շրջանակում տարեցները բարձրացրել են բողոքներ ստոմատոլոգիական ծառայություններն արտոնյալ պայմաններով իրականացնելու վերաբերյալ: Նրանք ունեն հիմնականում ատամնաշարի պրոթեզավորման կարիք: Ըստ խնամյալների՝ չեն աշխատում, կենսաթոշակ չեն ստանում, ուստի չեն կարող ձեռք բերել ատամնաշարի պրոթեզներ, ատամնաշապիկներ:

Եղել են բողոքներ 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանցից ստոմատոլոգիական ծառայություններից մատչելի չլինելու պատճառով օգտվել չկարողանալու վերաբերյալ:

Ներկա իրավակարգավորումներով տուն-ինտերնատներում խնամվող անձինք, ինչպես նաև 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք ստոմատոլոգիական ծառայություններից անվճար հիմունքներով կարող են ստանալ միայն ատամի հեռացում ծառայությունը:

Բարձրացված հարցի կապակցությամբ Նախարարությունից տեղեկացրել են, որ երբ շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող անձը նաև առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձ է, մասնագիտացված ստոմատոլոգիական բժշկական օգնությունը տրամադրվում է պետական պատվերի շրջանակներում ամբողջությամբ անվճար:

2020 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկին զուգահեռ կիրականացվեն ակտուարական հաշվարկներ առավել խոցելի (այդ թվում ծերանոցներում խնամվող անձանց) անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին խմբերի համար, որի արդյունքում համավճարային սկզբունքից անցում կկատարվի ամբողջովին անվճար բժշկական օգնության և սպասարկման մատուցմանը:

2019 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ նաև ՀՀ մարզերում մանկական ստոմատոլոգիական ծառայությունների համար պետական պատվեր առկա չլինելու վերաբերյալ:

Այսպես, ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկա համայնքի բնակիչը տեղեկացրել է, որ ընտանիքը նպաստառու է, 10 տարեկան երեխային անհրաժեշտ է ատամի կարիեսի բուժում, սակայն ատամնաբուժական կլինիկաները հրաժարվում են իրականացնել անվճար հիմունքներով: Առողջապահության նախարարության տեղեկացմամբ՝ մարզում մանկական ատամնաբուժական ծառայություն պետական պատվերի շրջանակներում չի իրականացվում: Հայտնել են պատրաստակամություն խնդրի լուծման համար: Երեխայի ատամի կարիեսի բուժումն իրականացվել է մեծահասակների՝ պետական պատվեր իրականացնող կլինիկայում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. պետության կողմից երաշխավորված անվճար ատամնաբուժական ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկել տուն-ինտերնատների խնամյալներին, ինչպես նաև 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց,

2. մշակել մեխանիզմ բոլոր մարզերի ինչպես վարչական կենտրոններում, այնպես էլ կենտրոններից հեռու գտնվող քաղաքներում, գյուղական բնակավայրերում մանկական ստոմատոլոգիական ծառայությունների առկայությունն ապահովելու համար:

#### ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ զեկույցներով ու տարեկան հաղորդումներով, հրապարակային այլ դիրքորոշումներով բարձրացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի խնդիրները, որոնք արդիական են և մարդու իրավունքների պաշտպանության համար ունեն կարևոր նշանակություն:

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության համար: Վերջինիս պահպանումը, բարելավումը և վերականգնումը պետության առջև դրված առանցքային նպատակներից մեկն է: Պետությունը, հաշվի առնելով ապագա սերունդների առջև պատասխանատվությունը, պետք է որդեգրի հստակ քաղաքականություն և, ըստ այդմ, իրականացնի քայլեր՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման խթանմանը՝ դրա հիմքում անշեղորեն պահպանելով կայուն զարգացման սկզբունքը: Վերը նշվածն արտացոլում է գտել ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածում, իսկ նշված նպատակներին հասնելու համար ՀՀ-ն վավերացրել է ոլորտը կարգավորող մի շարք միջազգային պայմանագրեր, ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր: Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, պետք է փաստել, որ ոլորտում առկա են համակարգային խնդիրներ:

1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայությունը

2019 թվականի ընթացքում շարունակվել է արդիական լինել շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության հարցերը: Իբրև միջազգային պահանջ՝ այն իր արտացոլումն է գտել «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիայի (Օրհուսի կոնվենցիա)<sup>147</sup> Կողմերի հանդիպմամբ (Meeting of the Parties) հաստատված մի շարք որոշումներում:

Այսպես, Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված՝ Հայաստանի վերաբերյալ VI/8ա որոշմամբ առաջարկվում է շարունակել աշխատանքները՝ ուղղված հանրային լսումների պատշաճ իրականացմանը (կետ 3(ա)), շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտորդություններ և առաջարկություններ ներկայացնելու համար ավելի երկար ու ողջամիտ ժամկետների սահմանմանը (կետ 3(բ)), Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված արդարադատության մատչելիության ապահովմանը (կետ 3(գ)): Նույն որոշմամբ Կողմերի հանդիպման ընթացքում հաստատվել է Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեի 2017 թվականի եզրակացությունը, որ չնայած ոլորտում

<sup>147</sup> Տե՛ս «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիա, հասանելի է <http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ձեռնարկված քայլերին՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի կատարել Կողմերի հանդիպմամբ հաստատված որոշման մի շարք պահանջներ<sup>148</sup>:

Ըստ այդմ, Օրհուսի կոնվենցիայի և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի միջև առկա են որոշակի հակասություններ՝ կապված հանրության ծանուցման ժամկետների հետ: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է լիազոր մարմնի պարտականությունը հանրությանը ծանուցել ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին լուսամտերից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

Այս առումով ուշագրավ են նախկին կարգավորումները, որոնք գործել են մինչև 2014 թվականին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Այսպես, 1995 թվականին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը ծանուցումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լուսմներ (որի արարողակարգը որոշում է ՀՀ կառավարությունը)՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության, լուսմների տեղի և ժամկետի մասին<sup>149</sup>: Նույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում է, որ լիազորված մարմինը, ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը 30 օրացուցային օրվա ընթացքում կազմակերպում ու ապահովում են հասարակայնության կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը և լուսմները<sup>150</sup>:

Օրենքի հիշյալ դրույթների և կիրառվող պրակտիկայի՝ Օրհուսի կոնվենցիային անհամապատասխանության հարցը բարձրացված է նաև Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված որոշումներում<sup>151</sup>: Այս առումով, Կողմերի հանդիպման արդյունքում խնդրահարույց են համարվել օրենքով նախատեսված ժամկետները:

Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն քննարկել է նաև հասարակական կազմակերպությունների համար արդարադատության մատչելիության հարցը: Անդրադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ Կոմիտեն դրական է գնահատել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի փոփոխությունները, որոնց համաձայն՝ հասարակական կազմակերպությունը իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Դրա հետ մեկտեղ, Կոմիտեն մտահոգիչ է համարել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, որոնք հայց ներկայացնելու համար որպես նախապայման են նախատեսում հիմնադրությային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցած լինելը կամ հանրային քննարկումներին

<sup>148</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2017 թվականի VI/8ա որոշում, հասանելի է [https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>149</sup> Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

<sup>150</sup> Տե՛ս «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 8:

<sup>151</sup> Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության վերաբերյալ Օրհուսի կոնվենցիայի անդամ-պետությունների Կողմերի հանդիպմամբ հաստատված որոշումների կատարումն անդամ-պետությունների կողմից, հասանելի <http://www.unece.org/env/pp/ccimplementation.html> հղումով հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



մասնակցելու հնարավորության բացակայությունը: Մասնավորապես, Կոմիտեն նշել է, որ այդպիսի կարգավորումը, որով նախապայմաններ են սահմանվում արդարադատության մատչելիության համար, չի համապատասխանում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասին<sup>152</sup>:

Անկախ և անաչառ մարմնի կողմից վեճերի քննման ընթացակարգերի անհրաժեշտության մասին են վկայում նաև Օրհուսի կոնվենցիայի դրույթները: Մասնավորապես, Էկոլոգիական իրավունքների խախտման համար դատական և արտադատական պաշտպանության դիմելու իրավունքի ճանաչումը կարևորում է Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածով:

Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 483-Ն որոշման հավելված 1-ի 57-րդ կետով որպես միջոցառում նախատեսված է. «Շրջակա միջավայրի օրենսդրությունը և ոլորտի քաղաքականությունը համապատասխանեցնել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության, որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում»: Նույն միջոցառման իրականացման համար ժամկետ է սահմանված 2017-2019թթ. պարբերաբար: Չնայած ներկայացվածին՝ նախատեսված միջոցառումը մինչ օրս չի կատարվել, ինչի արդյունքում շարունակում է արդիական մնալ կենտրոնացված մշտադիտարկող անկախ և անաչառ արտադատական մարմնի ստեղծման հարցը: Ուստի, ոլորտի խնդիրների համակարգային լուծման ուղղությամբ դեռևս պետք է իրականացնել շարունակական գործողություններ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն Կողմերի հանդիպմամբ ընդունված հանձնարարականների՝ անհրաժեշտ է՝

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ վերջինիս 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կարգավորումները համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և սահմանելով հանրային լուսման վերաբերյալ հանրությանը ծանուցելու առավել երկար ժամկետներ,

2. օրենսդրորեն երաշխավորել հասարակական կազմակերպությունների արդարադատության մատչելիության իրավունքը՝ Համապատասխանության կոմիտեի առաջարկություններին համահունչ,

3. քայլեր ձեռնարկել ուղղված՝ Օրհուսի կոնվենցիայով նախատեսված անկողմնակալ անկախ արտադատական մարմնի ստեղծմանը:

2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը, շրջակա միջավայրի մշտադիտարկման պետական միասնական քաղաքականությունը

Շրջակա միջավայրի լրջագույն մարտահրավերներից է ջրերի աղտոտումը: Թափոնները, որոնք պոչամբարներում պարունակվող ծանր մետաղներ են և կուտակվում են ջրամբարներում, գետերի հուններում, վտանգավոր են շրջակա միջավայրի, այդ թվում՝ ջրային էկոհամակարգի համար: Շրջակա միջավայրի վրա վատ են անդրադառնում ոչ միայն

<sup>152</sup> Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին զեկույց հասանելի է [http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE\\_MP.PP\\_2017\\_33\\_E.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE_MP.PP_2017_33_E.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանքարդյունաբերության հետևանքով առաջացող քիմիական նյութերն ու թափոնները, այլև կենցաղային թափոնները: Դրանք աղտոտում են մթնոլորտային օդը, ընդերքը, ջրերն ու հողերը:

2019 թվականի ընթացքում ևս այս խնդիրները շարունակել են առկա լինել: Այդ մասին են փաստում ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքները, որոնց համաձայն՝ օրինակ, Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս, որն էլ ամենացածրն է): Ավելին, արդյունքները ցույց են տվել, որ ընդհանուր առմամբ 2019 թվականի ընթացքում գետի որակը չի համապատասխանել սահմանված նորմայի չափանիշներին<sup>153</sup>: Գետառի որակի և աղտոտվածության խնդիրը բարձրացրել են նաև բնապահպանները<sup>154</sup>:

Այս խնդիրն առկա է այլ ջրային օբյեկտներում ևս. 2019 թվականի 3-րդ եռամսյակի ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքները վկայում են, ընդհանուր առմամբ, ջրային օբյեկտների որակային ցուցանիշների խնդրահարույց լինելու մասին:

Խնդրահարույց է նաև աղբի տեսակավորման հետ կապված հարցը: Վտանգավոր թափոնները կուտակելու կամ վնասազերծելու համար նախատեսված հատուկ վայրեր չկան: Արդյունքում, այդ թափոնները կուտակվում են ընդհանուր աղբավայրերում, իսկ չտեսակավորված, խառը կենցաղային թափոնները խիստ վտանգավոր են: Մասնագիտացված աղբավայրերի (շինարարական, արտադրական թափոնների) բացակայության պատճառով շատ հաճախ այդ թափոնները հայտնվում են պատահական, ոչ այդ նպատակի համար նախատեսված վայրերում և հանդիսանում շրջակա միջավայրի աղբոտման պատճառ:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ թափոնների գործածության բնագավառում առաջացող խնդիրներից է նաև այն, որ աղբահանություն և սանիտարական մաքրություն իրականացնող ընկերությունները լիցենզավորված չեն, սակայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «14.Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ» բաժնի 1-ին կետի՝ վտանգավոր թափոնների գործածությունը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

Ըստ նախարարության՝ փոփոխություն է կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-Ն որոշման մեջ, որով «Վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա» արտահայտությունը փոխարինվել է «Վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա» արտահայտությամբ: Սակայն փոփոխության չեն ենթարկվել և չեն վերաձևակերպվել տնտեսվարողներին նախկինում տրամադրված՝ գործող «Վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաները»: Շրջակա միջավայրի նախարարության տեղեկությունների համաձայն՝ նման պարագայում խնդիրներ է առաջացել նախկինում լիցենզիա ստացած տնտեսվարողների շրջանում: Մասնավորապես, խնդիրն այն է, որ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա ստացած տնտեսվարողները իրավասու են իրականացնել միայն այն գործողությունը, որի համար ստացել են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական

<sup>153</sup> Տե՛ս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնի «ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին» տեղեկագիր 2019 թվականի երրորդ եռամսյակ, հասանելի է <http://mnp.am/uploads/1/1572329534/III%20Ermsyak%202019.pdf>, հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>154</sup> Տե՛ս <https://ecolur.org/hy/news/waste/---/10798/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

եզրակացության: Նշված խնդիրը խոչընդոտ է առաջացնում թափոնների կառավարման ոլորտում:

2019 թվականի ընթացքում ձեռնարկվել են որոշակի քայլեր՝ ուղղված ոլորտի խնդիրների վերացմանը: Մասնավորապես, շրջանառվել է «Աղբահանության համակարգի ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է ներդնել հանրապետության ողջ տարածքում գոյացող աղբի հավաքման, տեղափոխման և անվտանգ հեռացման կամ օգտահանման ու վերամշակման կայուն համակարգ<sup>155</sup>:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ թեև Երևանն աղբի տեսակավորման դեռ չի անցել, սակայն առաջիկայում քաղաքապետարանը կսկսի աղբի տեսակավորման փորձնական ծրագիր<sup>156</sup>:

Այս առումով, հարկ է նշել, որ «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսվում է թափոնների օգտահանմանն ու դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումներ իրականացնող կազմակերպությունների արտոնություններ ստանալու հնարավորությունը:

Թափոնների օգտահանմանն ու դրանց գոյացման ծավալների նվազեցմանն ուղղված միջոցառումների խթանման նպատակով, ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումների, 2019 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ է մտել «ՀՀ հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-63-Ն օրենքը, որի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 52-րդ կետի համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվում են էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը: Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ այն գործում է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը:

Շրջակա միջավայրի նախարարության տվյալների համաձայն՝ մշակվել է «Թափոնների կառավարման հայեցակարգային մոտեցումներ» փաստաթուղթը, որի հիմնադրույթները նպատակաուղղված են մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների անբարենպաստ ազդեցության ռիսկերի նվազեցմանը, թափոնների առաջացման կանխարգելմանն ու կրճատմանը, դրանց օգտահանմանը և վերամշակմանը, «արտադրողների ընդլայնված պատասխանատվության» սկզբունքի ներդրմանը:

Բնապահպանական խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն ունի ոլորտի մարմինների իրավասությունների բաշխմանն ու դրանց համակարգված իրականացման հարցը:

Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում արդիական է եղել տարբեր նախարարությունների ենթակայության ներքո գործող մոնիթորինգային մարմինների գործունեության միասնականացման և համակարգման խնդիրը: Բանն այն է, որ տարբեր մարմինների կողմից («Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն», «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» և «Անտառային մոնիթորինգի կենտրոն») շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկման պայմաններում չի ապահովվել պետական միասնական քաղաքականությունը:

Հարկ է նաև նկատել, որ ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 81-Ն որոշմամբ վերը նշված մոնիթորինգի կենտրոնների միաձուլման արդյունքում ստեղծվել է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային

<sup>155</sup> Տե՛ս «Աղբահանության համակարգի ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, հասանելի է <https://www.e-draft.am/projects/2003/about> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>156</sup> Հասանելի է <https://www.yerevan.am/am/news/aghbi-tesakavorman-vtangavor-t-ap-onneri-inch-pes-naew-aghbahanowt-yan-ayl-khndirneri-masin/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կազմակերպությունը՝ որպես շրջակա միջավայրի մոնիթորինգի միասնական քաղաքականության ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխություն: Ասվածը վկայում է, որ բարձրացված խնդիրը դեռևս արդիական է եղել 2019 թվականի ընթացքում:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. օրենսդրական փոփոխությունների միջոցով ստեղծել արտոնություններ տրամադրող ու տնտեսական խրախուսանքի այլ միջոցներ կիրառող ծրագիր (քաղաքականություն) այն տնտեսվարողների նկատմամբ, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն,

2. ստեղծել աղբի տեսակավորման և վերամշակման գործուն և կայուն համակարգ համապետական մակարդակով՝ ապահովելով դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:

### 3. ՓՇԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը

2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան կայուն զարգացման 2030 օրակարգում ներառված՝ Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակները, որոնք ընդունվեցին աշխարհի երկրների առաջնորդների 2015թ. սեպտեմբերի ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ: Կայուն զարգացման նպատակներից մեկը վերաբերում է ջրի և սանիտացիայի հասանելիության խնդրին: Օրակարգ 2030-ի 6-րդ նպատակն է ապահովել ջրի ու սանիտարական պայմանների հասանելիությունը և դրանց կայուն ձևով կառավարումը՝ այդ ճանապարհին լուծելով անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր, հավասար հասանելիությունից ընդհուպ մինչև բոլորի համար համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման և ջրամատակարարման ու ջրահեռացման կառավարման բարելավման ոլորտներում առկա խնդիրները<sup>157</sup>:

Գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրները մշտապես առկա են Հայաստանի Հանրապետությունում: Այս խնդիրների պատճառը ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու վատնումն է: Ջրային ռեսուրսների գերօգտագործման հիմնական աղբյուրը ՓՇԷԿ-երն են և դրանց շահագործման ընթացքում եղած խախտումները: Ջրային ռեսուրսների գերօգտագործման խնդիրն ու դրանց կայուն կառավարման հարցը շարունակաբար բարձրացվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

2019 թվականը ևս անմասն չմնաց ՓՇԷԿ-երի վերաբերյալ մարդկանց դժգոհություններից: Մասնավորապես, 2019 թվականի հունիս ամսին Արագածոտնի մարզի Արագած գյուղի բնակիչները բողոքի ակցիա էին կազմակերպել ընդդեմ Գեղարոտ գետի վրա կառուցված ՓՇԷԿ-երի («Գեղարոտ» և «Արագած-1») շահագործմանը՝ պահանջելով դադարեցնել ՓՇԷԿ-երի շահագործումը, քանի որ բնակիչների պնդմամբ՝ ՓՇԷԿ-երի շահագործումը հանգեցրել էր ջրի որակի փոփոխմանն ու այդ ջրով ոռոգված բերքի փչանալուն:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2019 թվականի օգոստոսի 13-ի հրամաններով կասեցվել են Գեղարոտ գետի վրա կառուցված «Գեղարոտ» և «Արագած-1» ՓՇԷԿ-երի շահագործման նպատակով տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները:

<sup>157</sup> Տե՛ս Կայուն զարգացման նպատակ 6, հասանելի է <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2019 թվականի ընթացքում խնդիրներ են արձանագրվել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի Դարանակ բնակավայրի Դարանակ գետի «Դարանակ» ՓՀԷԿ-ի հետ կապված<sup>158</sup>:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ ջրային ռեսուրսների փաստացի վիճակի պահպանության նկատմամբ ուսումնասիրությունների ընթացքում 2019 թվականին հայտնաբերվել է 382 խախտում, որոնցից 89-ը հայտնաբերվել է ՀԷԿ-երում և ՓՀԷԿ-երում ջրօգտագործման թույլտվությունների պայմանների խախտման կամ ապօրինի ջրօգտագործման դեպքերում:

Ըստ նախարարության՝ 2019 թվականի ընթացքում տեղադրվել և կնքվել են առցանց ջրաչափեր 97 ՓՀԷԿ-ում: 2019 թվականի ընթացքում 152 ծանուցված ՓՀԷԿ-ից ջրաչափեր են տեղադրվել և կնքվել 133 ՓՀԷԿ-ի ջրառի կետում:

2019 թվականի հունիսի 28-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվել են նոր ՓՀԷԿ-երի կառուցման համար արգելված գոտիները և կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններին տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժման լրացուցիչ հիմքերը, օրինակ, այն դեպքերում, երբ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է ջրակոհամակարգերի պահպանման գոտիներում, գետերի հոսքի ձևավորման տարածքներում:

Ավելին, նշված մերժման հիմքերը սահմանող նույն 30.1-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է Կառավարության պարտավորությունը սահմանել այն գետերի ցանկը, որոնց վրա արգելվում է կառուցել ՓՀԷԿ-եր:

Ըստ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրած տեղեկությունների՝ մի շարք ստուգված սուբյեկտներում արձանագրված խախտումների կապակցությամբ նշանակվել են վարչական տույժեր, իրականացվել են բացատրական, խորհրդատվական և իրազեկման աշխատանքներ՝ կապված բնապահպանական օրենսդրության հաճախ հանդիպող խախտումների հետ: 2019 թվականի ընթացքում ինչպես ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, այնպես էլ պետական կառավարման համակարգի այլ մարմինների և քաղաքացիների կողմից ստացված խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա, էլնելով այդ խախտումների ռիսկայնության աստիճանից և տեսչական մարմնի ռեսուրսներից, ջրօգտագործող 40 (քառասուն) ընկերություններում տեսչական մարմինն իրականացրել է ստուգումներ, որոնց արդյունքում նշանակվել է՝ 6,700,000 (վեց միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամի տուգանք և հաշվարկվել 657,186,135 (վեց հարյուր հիսուն յոթ միլիոն հարյուր ութսուն վեց հազար հարյուր երեսուն հինգ) ՀՀ դրամի վնաս: Թվով 5 (հինգ) ընկերության գործ գտնվում է բողոքարկման փուլում՝ ՀՀ վարչական դատարանում:

Այնուամենայնիվ, վերոնշյալ փաստերը վկայում են, որ խնդիրը համակարգային և պարբերական ուսումնասիրման պետք է ենթարկվի:

Արձանագրելով 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքները՝ այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուժեղացնել ՓՀԷԿ-երի շահագործման նկատմամբ վերահսկողությունը, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման հետևանքով առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:

<sup>158</sup> Մանրամասն տե՛ս <https://www.ecolur.org/hy/news/energy/---/11091/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

#### 4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ

Ամուլսար լեռան վրա կատարվող ոսկու հանքի շինարարական աշխատանքների և հետագայում հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների և անհատ բնապահպանների կողմից: Խնդրի շրջանակներում ինչպես 2018, այնպես էլ 2019 թվականներին բողոքներով Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել թե՛ շրջակա բնակավայրերի բնակիչները, թե՛ հանքի շահագործման համար թույլտվություն ստացած ընկերությունը, թե՛ այդ ընկերության աշխատակիցները: Բողոքներից բացի, հաշվի առնելով հարցի կարևորությունը և հանրային հետաքրքրությունը՝ Պաշտպանն իրականացրել է նաև քննարկվող խնդրի ամբողջական դիտարկում՝ իր իրավասությանն առնչվող մասով: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ խնդրի դիտարկումն իրականացվել է շահագրգիռ բոլոր կողմերի մտահոգությունների ու տեղեկությունների հավաքագրման նպատակով՝ բացառապես Մարդու իրավունքների պաշտպանի իրավասության սահմաններում:

Բարձրացված խնդիրներից մեկը «Լիդիան Արմենիա» կազմակերպության կազմած «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիր փոփոխված նախագծի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» փաստաթղթին տրված դրական եզրակացությունն առոչինչ ճանաչելու և հանքավայրի շինարարական աշխատանքները կասեցնելու հարցն է: Այս առումով, շատ բնապահպաններ ու փորձագետներ պնդում են, որ Ամուլսարի հանքի շահագործումը սպառնում է առաջացնել լուրջ էկոլոգիական վտանգներ: Ավելին, ըստ վերջինների՝ պետական փորձաքննական եզրակացությունը տրվել է առանց փորձաքննության իրականացման<sup>159</sup>:

Ամուլսարի հանքավայրի շահագործման բնապահպանական և սոցիալական հետևանքների վերաբերյալ մի շարք հետազոտություններ են կատարվել, այդ թվում՝ ուղղված հանքավայրի շահագործման սոցիալական հետևանքների վերաբերյալ ազդակիր համայնքների բնակչության ընկալումների ու գնահատականների պարզմանը<sup>160</sup>, ինչպես նաև հանքավայրի շահագործման բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման վերլուծությանն ու կենսաբազմազանության վրա դրա շահագործման ազդեցության պարզմանը<sup>161</sup>:

Հարկ է նշել, որ Ամուլսարի հանքավայրի շահագործման համար ՀՀ բնապահպանության նախարարի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հաստատված թիվ ԲՓ-35 պետական փորձաքննական եզրակացությամբ դեռ 2016 թվականի ապրիլի 29-ին:

Ամուլսարի հանքավայրի շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և դրա հնարավոր ռիսկերը ուսումնասիրելու նպատակով Ամուլսարի հանքավայրի տարածքում արված միջազգային բնապահպանական փորձաքննության արդյունքների հրապարակումից հետո Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ

<sup>159</sup> Հասանելի է <https://www.econews.am/?p=8721&l=am>, <https://www.ecolur.org/hy/news/mining/--/10594/>, հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>160</sup> Տե՛ս «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման վերաբերյալ սոցիալական հետևանքների գնահատականն ազդակիր համայնքների բնակչության կողմից՝ սոցիոլոգիական հետազոտություն, 2018 թվականի հոկտեմբերի 2-6, հասանելի է <https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-1-Social-min.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>161</sup> Տե՛ս «Կենսաբազմազանության փոխհատուցումը և Հայաստանում Ամուլսարի ոսկու ծրագրի «Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում» փաստաթղթի այլ խնդիրները» 2019 թվականի հունվար, հասանելի է <https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-2-Biodiversity-min.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պայքարող բնապահպանների և ակտիվիստների բողոքի ակցիաները նոր թափ ստացան: Բողոքի ակցիաներ են իրականացվել թե՛ հանրապետության մայրաքաղաքում՝ ՀՀ կառավարության շենքի դիմաց, թե՛ հանքավայրի ազդակիր համայնքներում:

Խնդրի շրջանակներում Ամուլսարի հանքի շահագործման վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու, հարակից համայնքների բնակիչների և բնապահպան մասնագետների հետ հանդիպելու և քննարկումներ կազմակերպելու, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներ ունենալու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները 2019 թվականի օգոստոսի 23-ից 25-ը գործուղվել են Վայոց ձորի մարզ (Գնդեվազ, Ջառիթափ և Սարավան գյուղական համայնքներ, Ջերմուկ քաղաք) և Սյունիքի մարզ (Գորայք գյուղական համայնք): Այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպել են նաև երեք պահակակետերում գտնվող բնապահպան ակտիվիստների հետ:

Գնդեվազ համայնքում Պաշտպանի ներկայացուցիչներն առանձնազրույցներ են ունեցել Ամուլսարի հանքի շահագործման կողմնակիցների և դրան ընդդեմ արտահայտվող անձանց հետ:

Թեև այցի պահին Պաշտպանի ներկայացուցիչները քաղաքում Ոստիկանական ուժերի կուտակում չեն նկատել, սակայն բնակիչներից մեկը, ով նշված հարցով ահազանգել էր Պաշտպանի թեժ գծին, հանդիպման ընթացքում նշել է, որ նախորդ 2 օրերին եղել են Ոստիկանական ուժերի կուտակումներ:

Հարցի կապակցությամբ համայնքի ղեկավարի և Ոստիկանության Ջերմուկի բաժնի պետի պարզաբանումների համաձայն՝ կապված զբոսաշրջային շարժի ակտիվությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների բովանդակությունը ևս վկայում է, որ Ամուլսարի հանքավայրը հիմք է հանդիսացել ոչ միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ քննարկումների, այլև բնապահպանների և Ամուլսարի հանքավայրի աշխատողների միջև լարվածության ու նույնիսկ բախումների համար: Մասնավորապես, 2018 թվականին Պաշտպանին իրենց բողոքն են հասցեագրել «Լիդիան Արմենիա» ընկերության 174 կին աշխատակիցներ, ովքեր տեղեկացրել են, որ գրեթե երկու ամիս մի խումբ անձինք փակել են իրենց աշխատավայր տանող ճանապարհը, ինչի՝ հետևանքով իրենք չեն կարողանում մուտք գործել աշխատավայր: Վերջիններիս պնդմամբ՝ Ամուլսարի հարակից համայնքներում, հատկապես՝ Ջերմուկում և Գնդեվազում, այդ անձանց կողմից ենթարկվում են հարձակումների, իրենց հասցեին հնչում են սպառնալիքներ, և գործադրվում են ճնշումներ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին նույնաբովանդակ բողոք են հասցեագրել «Լիդիան Արմենիա» ընկերության 192 աշխատակիցներ ևս:

ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի 2019 թվականի զեկույցում նշվում է, որ հատուկ զեկուցողն այցելել է Ամուլսար հանքավայրի հարող տարածք և լսել հանքավայրի հասանելիությունն արգելափակած բողոքի ակցիա անող անձանց մտահոգությունները:

Նշվածի կապակցությամբ զեկույցում ընդգծվում է, որ կարևոր է, որ կառավարությունը խորհրդակցի համայնքների հետ շահագործման սոցիալական և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև դրանից բխող օգուտների մասին: Ըստ հատուկ զեկուցողի՝ ստեղծված իրավիճակը շտկելու համար առաջին քայլը, որ կառավարությունը պետք է ձեռնարկի՝ խորհրդատվություններ անցկացնելն է՝ հավաստիանալու, որ այս



ծրագրերը համապատասխանում են գործարարության և մարդու իրավունքների ուղենիշային սկզբունքներին<sup>162</sup>:

ՄԱԿ-ի նշված հատուկ զեկուցողն առանձին հանդիպում է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանի հետ: Պաշտպանը նույնպես կարևորել է բոլոր կողմերին լսելը, ինչպես նաև Կառավարության կողմից այդ քաղաքականությունը շարունակելը:

Այս առումով, պետք է կարևորել Հայաստանի վարչապետի կողմից հարցն իր անմիջական ուշադրության ներքո պահելը՝ ինչպես պետական մարմինների հետ քննարկումների, այնպես էլ անմիջականորեն Վայոց Ձորի մարզ այցերի ու բնակիչների հետ հանդիպումների ձևաչափերով: Ընդ որում, կարևոր է, որ դա իրականացվում է հրապարակայնություն ապահովելով:

Հարկ է նկատել, որ 2018 թվականի ընթացքում կատարված տեսչական ստուգումների արդյունքում արձանագրվել էին շինարարական աշխատանքների ընթացքում օրենսդրության պահանջների և հանքավայրերի շահագործման մի շարք խախտումներ<sup>163</sup>:

Ինչ վերաբերում է 2019 թվականի ընթացքում նման ստուգումների իրականացմանը, ապա ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Ամուլսարի հանքավայրում տեսչական ստուգումներ չեն իրականացվել: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության տվյալների համաձայն՝ հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման (շահագործման) աշխատանքներ չեն կատարվել:

Ասվածի հաշվառմամբ՝ հարկ է ընդգծել, որ Ամուլսարի հանքավայրի շինարարության և շահագործման խնդիրն ընկալվում է իբրև համազգային խնդիր: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ Կառավարությունը շարունակի իրազեկման աշխատանքներ իրականացնի ոչ միայն ազդակիր համայնքի, այլև ողջ բնակչության շրջանում:

Վերոնշյալ տվյալներից կարելի է հետևություն անել, որ առկա է համակարգային խնդիր. մի կողմից անհրաժեշտ է հաշվի առնել հարակից համայնքների բնակիչների իրավունքները և իրականացնել իրավիճակի անկախ և համալիր գնահատում, մյուս կողմից էլ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել աշխատողների իրավունքների ոտնահարման և վերջիններիս իրավունքների դեմ ոտնձգությունների բացահայտման ուղղությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացված հարցերից է «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների իրականացման հարցը: Թեղուտի հանքավայրի շահագործման արդյունքում առաջացած խնդիրներին 2019 թվականի ընթացքում բազմիցս անդրադարձել են նաև բնապահպանները<sup>164</sup>:

Լեռնահանքային արդյունաբերությունն ունի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա: Հանքաքարի արդյունահանումն ու հարստացումը ուղեկցվում է տարբեր տոքսիկ քիմիական նյութերով և ծանր մետաղներով աշխատանքային և շրջակա միջավայրի աղտոտմամբ, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի վրա: Այդ ամենի հետևանքով խաթարվում է նաև բնակչության

---

<sup>162</sup> Տե՛ս ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույ, 2019 թվականի մայիսի 13, էջ 10: Հասանելի է <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G19/136/82/PDF/G1913682.pdf?OpenElement> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>163</sup> Մանրամասն տե՛ս «2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, էջեր 204-205, հասանելի է <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>164</sup>Տե՛ս <https://www.ecolur.org/hy/news/mining/-3-/11709/>, <https://www.ecolur.org/hy/news/mining/-/11903/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



առողջության պահպանումը, մասնավորապես՝ օդ-ջուր-հող-գյուղմթերք համակարգով ծանր մետաղների, այդ թվում՝ տոքսիկության առաջին դասի տարրերի, սնման շղթայի տարբեր օղակներ ներթափանցման արդյունքում առաջ են գալիս էկոլոգիական և բնակչության առողջության հետ կապված ռիսկեր<sup>165</sup>:

Հարկ է նշել, որ Թեղուտի հանքավայրը վերագործարկվել է 2019 թվականին: Թեղուտի հանքավայրի շահագործումը դադարեցվել էր 2018 թվականին: Թեղուտի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրները բարձրաձայնվում են և՛ շահագործման ռիսկերի ու հանքավայրի պոչամբարի անկայունության<sup>166</sup>, և՛ հանքավայրի շահագործման դրական եզրակացության բացակայության<sup>167</sup> վերաբերյալ: Բնապահպանների պնդմամբ՝ վերագործարկվելուց առաջ Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրը նոր բնապահպանական փորձաքննություն չի անցել, մինչդեռ, հանքի շահագործման համար տրված բնապահպանական ԲՓ-135 դրական եզրակացության գործողության ժամկետն ավարտվել է 2014թ. նոյեմբերի 7-ին:

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը 2019 թվականի ընթացքում իր լիազորությունների շրջանակներում ուսումնասիրություններ է իրականացրել «Թեղուտ» ՓԲ ընկերությունում՝ պոչամբարի պատվարի և պատնեշի ամրությունը ստուգելու և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու հետագա շահագործման վերաբերյալ: Ուսումնասիրության և տեղատեսության արդյունքները վկայել են, որ ստուգումների պահին պատնեշը գտնվել է կայուն վիճակում: Ուսումնասիրության և վարույթի շրջանակներում «Թեղուտ» ՓԲ ընկերությանը տրվել է պարտադիր կատարման ցուցում՝ իրականացնելու փորձաքննություն և փորձաքննության արդյունքներից պարզել հետագա շահագործման հնարավորության մասին<sup>168</sup>:

Ինչ վերաբերում է Թեղուտի հանքավայրի շահագործման փորձաքննական եզրակացության ժամկետին՝ իրավական հիմքերի հստակեցման նպատակով իրավասու մարմիններին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին պարզաբանման պահանջ է ներկայացվել առ այն, թե Թեղուտի հանքավայրի շահագործման ԲՓ-135 դրական եզրակացությունը ե՞րբ է տրվել, գործողության ի՞նչ ժամկետով և ի՞նչ փորձաքննական եզրակացության հիման վրա է ներկայում Թեղուտի հանքավայրը շահագործվում: Հարցմանն ի պատասխան՝ իրավասու մարմիններից ստացվել է սահմանափակ և ոչ լիարժեք պատասխան՝ հայտնելով, որ Թեղուտի հանքավայրի շահագործման դրական եզրակացությունը տրվել է 2006 թվականին:

Ավելին, ըստ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի՝ 2019 թվականի ընթացքում Թեղուտի հանքավայրում ստուգումներ չեն իրականացվել:

Մտահոգության տեղիք է տալիս նաև առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության՝ գործունեություն ծավալելու արձանագրված խախտումների քանակական աճը, ինչը վկայում է խնդրի արդիականության մասին: Այսպես, ի տարբերություն 2018 թվականի տվյալների (արձանագրվել էր 1 դեպք), 2019 թվականի ընթացքում իրականացված ստուգումների և վարչական վարույթների արդյունքում

<sup>165</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի «ՌԻՈ+20» զագաթնաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարության՝ «Մինչև 2030թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի համատեքստում» հայեցակարգ, Նախագիծ 25.01.2016թ., հասանելի է <https://www.ecolur.org/files/uploads/pdf/RIO%2020%20hayecakarg/rio20hayetsakarg.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>166</sup> Հասանելի է <https://www.azatutyun.am/a/30085282.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>167</sup> Տե՛ս <https://www.ecolur.org/hy/news/mining/-/11903/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>168</sup> Մանրամասն տե՛ս <https://www.utsib.am/am/news/74>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

արձանագրվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով նախատեսված փորձաքննության ենթակա գործունեություն առանց համապատասխան փորձաքննական եզրակացության՝ 10 (տասը) դեպք: Կայացվել է վարչական տուգանք նշանակելու մասին 10 (տասը) որոշում՝ 850 000 (ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել պատշաճ վերահսկողություն Թեղուտի հանքավայրի շահագործման գործընթացի նկատմամբ՝ օրենսդրության պահանջների պահպանման տեսանկյունից:

Պատշաճ վարչարարության՝ յուրաքանչյուրի իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ: Պատշաճ վարչարարության իրավունքի հետ կապված՝ սույն բաժնում քննարկվում են հարցեր, որոնք վերաբերում են պարտապանի՝ օրենսդրությամբ սահմանված մեկնարկային գնից ցածր գին ունեցող միակ բնակարանն արգելանքից չհանելու, կատարողական թերթի պարզաբանման պահանջով հարկադիր կատարողի՝ դատարան չդիմելու, որոշ հարցերում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միասնական պրակտիկայի բացակայության և մի շարք այլ խնդիրների:

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների մասին անձանց պատշաճ չծանուցելը

Համակարգային բնույթ են ձեռք բերել և 2019 թվականի ընթացքում ևս չլուծված են մնացել կատարողական վարույթի շրջանակներում քաղաքացիներին պատշաճ ծանուցելու հետ կապված գործնական խնդիրները: Մասնավորապես, 2019 թվականին շարունակվել են արձանագրվել դեպքեր, երբ մարդիկ ծանուցված չեն եղել իրենց նկատմամբ կատարողական վարույթ հարուցվելու, իրենց գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դրվելու և հարկադիր կատարողի այլ որոշումների մասին: Առանձին դեպքերում պատշաճ ծանուցման պահանջը չապահովելն իրավակիրառողը պայմանավորել է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մուտքագրվող կատարողական թերթերի, կատարողական մակագրության թերթերի և վարչական որոշումների մեծաքանակ ծավալը և կառույցի գերծանրաբեռնված լինելը: Մինչդեռ, վարչարարության շրջանակներում պատշաճ ծանուցման պահանջը ոչ միայն պայմանավորված է պատշաճ վարչարարության սկզբունքներով, այլև ինքնին երաշխիք է անձի այլ սուբյեկտիվ իրավունքների իրացման համար (սեփականության իրավունք, իրավական պաշտպանության միջոցների հասանելիության իրավունք և այլն):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ անձը պարտավոր չէ վարչական ակտի ընդունման մասին տեղեկանալ պաշտոնական տեղեկագրից (էլեկտրոնային եղանակով), այլ պետք է անձամբ ծանուցվի իր նկատմամբ կայացված վարչական ակտի և հարուցված վարչական վարույթի մասին<sup>169</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը 2015 թվականի մայիսի 26-ի թիվ ՍԴՌ-1210 որոշմամբ արձանագրել է, որ պատշաճ ծանուցման ինստիտուտը, որը հնարավորություն է տալիս փաստացի իրազեկված լինել վարչական տուգանքների նշանակման մասին, կարևոր երաշխիք է անձի իրավունքների պաշտպանության հարցում, այդ թվում՝ ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության հարցերում:

Բարձրացված խնդրի կապակցությամբ հատկանշական է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով կայացված դիրքորոշումը, որով դատարանը նշել է, որ վարչական մարմնի ծանուցման ձևն ընտրելու հայեցողությունը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց

<sup>169</sup> Տե՛ս Սերգիդեյև և Քրիստոֆորուս ընդդեմ Կիպրոսի (Serghides and Christoforou v. Cyprus) գործով 2002 թվականի նոյեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44730/98, կետ 69:

իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

2019 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով և լրացումներով փորձ է արվել լուծել ծանուցման ոլորտի խնդիրները, սակայն, չնայած դրան, նոր կարգավորումների կիրառման արդյունքում կատարողական վարույթների կողմերը մեծամասամբ շարունակում են փաստացի ծանուցված չլինել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների մասին: Գործնականում պատշաճ ծանուցման հետ կապված խնդիրների շարունակականությունը վկայում է, որ այդ կարգավորումները միայն ձևականորեն են ապահովում Ծառայության որոշումների մասին կատարողական վարույթի կողմերի «պատշաճ» ծանուցումը: Այսպես,

1.1 Հարկադիր կատարողի որոշումների պատճեններն անձանց պատվիրված փոստով չուղարկելը.

2019 թվականի օգոստոսի 4-ին ուժի մեջ է մտել ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-126-Ն օրենքը, որով հարկադիր կատարողի որոշումների և ծանուցումների ուղարկման (հանձնման) նոր կարգ է սահմանվել: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ գործող օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին հոդվածով սահմանվում է, որ հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումներն ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն, իսկ նույն հոդվածով նախատեսված դեպքերում ուղարկվում են էլեկտրոնային փոստի հասցեով կամ հաղորդակցության այլ միջոցներով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումներն ուղարկվում են պատվիրված նամակով, եթե կատարողական վարույթի ընթացքում իրականացվող գործողությունների կատարման համար որոշակի ժամկետի հաշվարկը պայմանավորված է համապատասխան որոշումը կամ ծանուցումն ստանալու փաստով:

Մինչդեռ, նախկինում գործող օրենսդրական կարգավորումները պարտավորեցնում էին հարկադիր կատարողի բոլոր որոշումների պատճենները կատարողական վարույթի կողմերին ուղարկել պատվիրված փոստով: Ուշագրավ է, որ չնայած օրենսդրական այս պահանջին՝ հարկադիր կատարողները մինչև 2019 թվականի օգոստոսի 4-ը կատարված օրենսդրական փոփոխություններն իրենց կայացրած ոչ բոլոր որոշումներն էին կատարողական վարույթի կողմերին ուղարկում պատվիրված փոստով՝ նշվածը պատճառաբանելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մուտքագրվող կատարողական թերթերի, կատարողական մակագրության թերթերի և վարչական որոշումների մեծաքանակ ծավալով և կառույցի գերծանրաբեռնված լինելով: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի դեռևս 2018 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ հարկադիր կատարողի որոշումները կատարողական վարույթի կողմերին պատվիրված փոստով չուղարկելը չի կարող արդարացվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գերծանրաբեռնված լինելու պատճառով: Մյուս կողմից, եթե «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, օրինակ՝ «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշումը ստանալու փաստը չէր պայմանավորում որոշակի ժամկետի հաշվարկով, ապա դա դեռևս չի նշանակում, որ այդ որոշումը կարող էր և պատվիրված փոստով չուղարկվել:

Օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ փաստորեն, ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-126-Ն օրենքով կատարողական վարույթի՝ ֆիզիկական անձ կողմի համար, ըստ

էութեան, Էական որևէ փոփոխություն չի կատարվել: Պարզապես, մինչ այդ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ձևավորված իրավակիրառ պրակտիկան օրենսդրական ամրագրում է ստացել՝ չափանիշի իջեցմամբ:

1.2 Հարկադիր կատարողի որոշումներն ու ծանուցումները հասցեատիրոջն ուղարկելու մասին ապացույցը կատարողական վարույթին կցելու անարդյունավետությունը.

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումները փոստային առաքմամբ ուղարկելու դեպքում կատարողական վարույթին կցվում է հասցեատիրոջն ուղարկելու մասին ապացույց (...): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ հարկադիր կատարողի որոշումները կատարողական վարույթի կողմերին պարզապես ուղարկելը դեռևս չի երաշխավորում վերջիններիս՝ այդ որոշումների մասին պատշաճ ծանուցվելը: Հետևաբար, հարկադիր կատարողի որոշումներն ու ծանուցումները հասցեատիրոջը փոստային առաքմամբ ուղարկելու մասին ապացույցը կատարողական վարույթին կցելը դիտարկվող խնդրին որևէ լուծում չի տալիս: Դա վկայում է միայն հարկադիր կատարողի՝ իր պարտականությունները պատշաճ կատարելու, ոչ թե այդ որոշումները կամ ծանուցումները՝ վարույթի կողմերի պատշաճ ստանալու մասին:

1.3 Պարտապանների գույքի վրա արգելանք դնելու կամ սահմանափակում կիրառելու մասին նրանց պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելու անարդյունավետությունը.

Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու կամ սահմանափակում կիրառելու մասին վերջինիս իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու միջոցով ծանուցելու կարգը գործում է դեռևս 2018 թվականի ապրիլի 1-ից: Պաշտոնական էլեկտրոնային փոստի գործնականում կիրառման շուրջ առաջացող բարդությունների մասին ավելի մանրամասն ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>170</sup>: Այս կապակցությամբ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ից ստացված տեղեկությունների համաձայն՝ անձնական պաշտոնական էլեկտրոնային փոստարկղ մուտք գործելու ընթացքում դժվարությունների հանդիպելու դեպքում քաղաքացիների համար հասանելի է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի սպասարկման կենտրոնը, որը հնարավորություն է ունենում ընդհուպ մինչև հեռահար կերպով միանալու դիմող քաղաքացու համակարգչին և իրականացնելու բոլոր անհրաժեշտ կարգավորումները: Թեև դրական պետք է գնահատել նման հնարավորության առկայությունը՝ սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ մասին ևս պետք է քաղաքացիները որևէ կերպով իրազեկ լինեն: Ուստի, անհրաժեշտ է հասարակության լայն շրջանակներին իրազեկել իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելիս դժվարություններ առաջանալու դեպքում այն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի միջոցով իրականացնելու հնարավորության մասին:

Խնդրի կապակցությամբ առաջացած մտահոգությունը պայմանավորված է նրանով, որ 2019 թվականի ընթացքում նույնպես Պաշտպանն արձանագրել է այն խնդիրը, որ մարդիկ իրենց գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքների մասին տեղեկացել են միայն բանկերում կամ այլ կառույցներում գործարքներ կատարելիս: Նշվածը վկայում է պարտապանների գույքի վրա արգելանք դնելու կամ սահմանափակում կիրառելու մասին

<sup>170</sup> Տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և զգալիությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 214: Հասանելի է <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf> հղումով:

նրանց պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելու անարդյունավետության մասին:

1.4 Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հարկադիր կատարողի ոչ բոլոր որոշումների հրապարակումը.

Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր կատարողական վարույթը կասեցնելու և գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին հարկադիր կատարողի որոշումներից բացի մյուս որոշումները «azdarar.am» կայքում չտեղադրելու խնդիրը: Նշված խնդրի լուծման կապակցությամբ Պաշտպանն առաջարկել էր Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ձևավորված իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրական կարգավորումներին՝ ապահովելով «azdarar.am» կայքում հարկադիր կատարողի՝ կատարողական վարույթի շրջանակներում կայացրած բոլոր որոշումների հրապարակումը:

Մինչդեռ, ընթացիկ տարում «azdarar.am» կայքում պարբերաբար կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդիրը շարունակում է արդիական մնալ. «azdarar.am» կայքում կրկին հրապարակվում են միայն կատարողական վարույթը կասեցնելու, ինչպես նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին հարկադիր կատարողի որոշումները:

Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված պարզաբանումների համաձայն՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական azdarar.am ինտերնետային կայքում հայտարարությունների քանակի աճով պայմանավորված՝ հաճախակի խնդիրներ են առաջանում կայք մուտք գործելու և վարելու հետ, դանդաղում է աշխատանքը, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել արդիականացնել կայքը և համապատասխանեցնել արդի պահանջներին: Վերոգրյալի առնչությամբ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրով նախատեսվում է արդիականացնել ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքը:

Այնուամենայնիվ, ևս մեկ անգամ անհրաժեշտ է շեշտել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը «azdarar.am» կայքում հրապարակվող որոշումների տեսակների և շրջանակի վերաբերյալ որևէ վերապահում չի կատարում: Հետևաբար, օրենքի 13-րդ հոդվածով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակման են ենթակա հարկադիր կատարողի բոլոր որոշումները:

1.5 Պարտապաններին յուրաքանչյուր աշխատանքային օր հնարավոր վտարման կատարողական գործողությունների իրականացման մասին ծանուցելու անթույլատրելիությունը.

2019 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել նաև հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին պարտապաններին պատշաճ ծանուցելու ընթացակարգերի չպահպանման վերաբերյալ: Մասնավորապես, Պաշտպանին դիմած քաղաքացիներից մեկը տեղեկացրել է, որ ծանուցվել է հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին, սակայն այդ օրը հարկադիր վտարման կատարողական գործողություններ չեն իրականացվել, դրանք հետաձգվել են, որից հետո տեղի ունեցած հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին արդեն պատշաճ չի ծանուցվել: Դիմումի քննարկման շրջանակներում Հարկադիր

կատարումն ապահովող ծառայությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ պարտապանն արդեն իսկ համապատասխան գրությամբ տեղեկացված է եղել յուրաքանչյուր աշխատանքային օր հնարավոր վտարման կատարողական գործողությունների մասին, սակայն նա կրկին ծանուցվել է հետաձգվելուց հետո տեղի ունեցած հարկադիր վտարման կատարողական գործողությունների մասին:

Նշված իրավիճակում թեև պահպանվել է հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին պարտապանին պատշաճ ծանուցելու կարգը, սակայն Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված պարզաբանումներում տեղ գտած որոշ ձևակերպումներ մտահոգությունների տեղիք են տալիս: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է պաշտոնական այն մոտեցմանը, որ թեև հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին երկրորդ անգամ պարտապանը ծանուցվել է, սակայն դա պարտադիր չի եղել, քանի որ մինչ այդ նշանակված վտարման կատարողական գործողությունների իրականացման օրվա և ժամանակի, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատանքային օր հնարավոր վտարման կատարողական գործողությունների իրականացման մասին արդեն իսկ պարտապանը ծանուցված է եղել: Խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված տեղեկությունների համաձայն՝ իրավակիրառ պրակտիկայում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ և 64.1-րդ հոդվածներով, պարտապանին վտարելիս վերջինիս առաջարկում է 7 օրվա ընթացքում ինքնակամ ազատել վտարվող հասցեն՝ միաժամանակ տեղեկացնելով, որ կամավոր չազատելու դեպքում 8-րդ օրվանից սկսած Ծառայությունն իրականացնելու է վտարման աշխատանքներ այնքան ժամանակ, մինչև վտարման գործողությունների փաստացի կատարումը:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հարկադիր կատարողը պատշաճ ձևով ծանուցում է պարտապանին հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին: Պետք է նկատի ունենալ, որ հարկադիր կատարողի որոշումը կարող է համարվել պատշաճ ձևով ծանուցված, եթե ծանուցումն իրականացվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան: Նշված օրենքի ընդհանուր ուսումնասիրությունից հետևում է, որ օրենքը հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին պարտապանին ծանուցելու՝ հարկադիր կատարողի պարտականությունը չի պայմանավորում հարկադիր վտարման միայն առաջին օրով: Հետևաբար, հարկադիր կատարողը պարտավոր է պարտապանին պատշաճ ծանուցել հարկադիր վտարումների բոլոր օրերի և ժամանակի մասին: Բնակիչները պետք է նախապես ստանան վտարման որոշման մասին ծանուցում՝ համապատասխան ձևով և լեզվով<sup>171</sup>:

Ասվածը բխում է հենց օրենսդրական ձևակերպումներից այն առումով, որ իբրև պահանջ ամրագրվում է ոչ միայն ծանուցման պարտադիրությունը, այլև հարկադիր վտարման՝ իբրև անձի իրավունքներին միջամտություն ենթադրող գործողության կոնկրետ ժամանակի մասին: Օրենսդրական նման պահանջի կոնկրետացումը, մեր համոզմամբ, ինքնանպատակ չէ, քանի որ անձի համար այդպիսով պետք է ապահովվի որոշակիություն ոչ միայն առհասարակ վտարման հնարավորության, այլև դրա փաստացի իրականացման վերաբերյալ:

<sup>171</sup> Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպություն, «Հարկադիր վտարումներ»: Հասանելի է <https://www.ohchr.org/Documents/Publications/FS25.Rev.1.pdf> հղումով, էջ 31:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ընդհանրական ծանուցումների առկա պրակտիկան, համաձայն որի՝ իրավաչափ է դիտարկվում պարտապանին ծանուցելը ոչ թե հարկադիր վտարման յուրաքանչյուր օրվա և ժամանակի, այլ յուրաքանչյուր աշխատանքային օր հնարավոր վտարման կատարողական գործողությունների իրականացման մասին, չի բխում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջից: Այդպիսով, նման իրավակիրառ պրակտիկան իրավաչափ չէ և հետևաբար, չի կարող ընդունելի համարվել, քանի որ այն ներպետական օրենսդրությամբ իրավական հիմք չունի: Ուստի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի պատշաճ կատարումը պահանջում է, որ հարկադիր կատարողները պարտապաններին ծանուցեն հարկադիր վտարման յուրաքանչյուր օրվա և ժամանակի մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին պատշաճ ծանուցումն ապահովելու և այդ որոշումների մասին քաղաքացիների չծանուցման հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է՝

1. ուժեղացնել հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

2. պաշտոնական էլեկտրոնային փոստից օգտվելը քաղաքացիների համար մատչելի և հասանելի դարձնելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ (օրինակ՝ իրազեկման թերթիկների, ուղեցույցների հրապարակում, տեղեկատվական տեսահոլովակների պատրաստում, սեմինար-քննարկումների կազմակերպում և այլն),

3. հասարակությանն իրազեկել իրենց պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելիս դժվարություններ առաջանալու դեպքում այն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի միջոցով իրականացնելու հնարավորության մասին,

4. իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրական գործող կարգավորումներին, որպեսզի ապահովվի «azdarar.am» կայքում հարկադիր կատարողի՝ կատարողական վարույթի շրջանակներում կայացրած բոլոր որոշումների հրապարակումը,

5. պարտապաններին ծանուցել հարկադիր վտարման յուրաքանչյուր օրվա և ժամանակի մասին:

2. Պարտապանի՝ օրենսդրությամբ սահմանված մեկնարկային գնից ցածր գին ունեցող միակ բնակարանն արգելանքից չհանելը

2019 թվականի ընթացքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկը վերաբերում է կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի միակ բնակարանի վրա դրված արգելանքը չվերացնելու խնդրին այն դեպքում, երբ այդ բնակարանի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է օրենսդրությամբ սահմանված չափից:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար սահմանելու մասին» թիվ 808-Ն որոշման 1-ին կետով որպես քաղաքացի-պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար սահմանվել է 4.900.000 ՀՀ դրամը: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված է այն գույքի ցանկը, որոնց վրա բռնագանձում չի կարող տարածվել: Մասնավորապես, նշված հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ բռնագանձում չի կարող տարածվել քաղաքացի-պարտապանին պատկանող միակ այն բնակարանի կամ դրա բաժնի վրա, որը պարտապանի համար հանդիսանում է



մշտական բնակության միակ վայր, և որի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից:

Ուշագրավ է, որ այն դեպքերում, երբ կատարողական վարույթի շրջանակներում արգելանք է կիրառվում, օրինակ՝ պարտապանի հաշմանդամության կենսաթոշակի վրա, որի, ինչպես և անձի միակ բնակարանի վրա բռնագանձում չի կարող տարածվել, հետագայում այդ փաստը պարզվելուց հետո Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը վերացնում է հաշմանդամության կենսաթոշակի վրա կիրառված արգելանքները: Նույնն է իրավիճակը միակ բնակարանի վրա արգելանք դնելու դեպքում: Հետևաբար, փորձագետի եզրակացության հիման վրա դրա՝ բռնագանձման ոչ ենթակա լինելու փաստը պարզվելուց հետո մինչ այդ կիրառված արգելանքները ենթակա են վերացման:

Բարձրացված խնդրի կապակցությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դիրքորոշման համաձայն՝ ստեղծված իրավիճակում պարտապանի միակ բնակարանի վրա կիրառված արգելանքը ենթակա չէ վերացման, քանի որ չի բացառվում, որ հետագայում հնարավոր լինի պարտապանին պատկանող միակ բնակարանի վրա բռնագանձում տարածել, եթե դրա արժեքը գերազանցի ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված միակ բնակարանի իրացման արժեքը կամ պարտապանը ձեռք կբերի այլ բնակարան: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ կատարողական գործողությունների կատարման հիմքում չի կարող դրվել հետագայում որևէ հանգամանքի վրա հասնելու հնարավորությունը կամ հավանականությունը, հետևաբար բացակայում է պարտապանի միակ բնակարանի վրա կիրառված արգելանքի պահպանման իրավական հիմքը:

Փաստորեն, միակ բնակարանի վրա դրված արգելանքը չվերացնելը պայմանավորված է ոչ թե գործող օրենսդրական կարգավորումներով, այլ այն ենթադրությամբ, թե որոշակի ժամանակ անց այն կարող է դառնալ բռնագանձման ենթակա գույք՝ պայմանավորված գույքի արժեքի բարձրացմամբ: Արդյունքում, կատարողական վարույթը կարող է տարիներ շարունակ ձգձգվել, ինչը կարող է հանգեցնել կատարողական վարույթի ժամկետների անորոշության և սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակման: Օրինակ՝ վերը նշված դեպքում պարտապանի միակ բնակարանի վրա կիրառված արգելանքը չհանելու փաստով պայմանավորված՝ վերջինս չի կարողացել վերավարկավորում իրականացնել, ինչն անձին լրացուցիչ գույքային վնաս է պատճառել:

Այսպիսով, կոնկրետ իրավիճակում բռնագանձման ոչ ենթակա՝ անձի միակ բնակարանի վրա կիրառված արգելանքը չվերացնելը դառնում է ինքնանպատակ, քանի որ օրենսդրական գործող կարգավորումների պայմաններում այդ գույքը, մինչև այն է, իրացման ենթակա չէ: Պարզապես պետք է առաջնորդվել պարզ տրամաբանությամբ, ըստ որի՝ եթե գույքի հարկադիր իրացումն անհնար է, ապա անհրաժեշտ է վերացնել դրա նկատմամբ կիրառված արգելանքը: Նույն տրամաբանությունն է ընկած «Կատարողական վարույթի վերաբերյալ» Ուկրաինայի օրենքի<sup>172</sup> 59-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի հիմքում, ըստ որի՝ պարտապանի գույքի կամ դրա մի մասի վրա կիրառված արգելանքը վերացվում է փորձագետի գրավոր եզրակացության հիման վրա, երբ գույքի վիճակի վատթարացմամբ կամ մաշվածությամբ պայմանավորված՝ անհնար կամ աննպատակահարմար է գույքի վաճառքը: Նշված դեպքում թեև գույքի նկատմամբ կիրառված արգելանքը վերացնելը պայմանավորվում է դրա մաշվածությամբ կամ գույքի վիճակի վատթարացմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է գույքի հարկադիր իրացման անհնարինության կամ աննպատակահարմարության, սակայն պետք է նշել, որ քննարկվող իրավիճակում էական չէ

<sup>172</sup> Հասանելի է <https://zakon.rada.gov.ua/laws/show/1404-19> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գույքի հարկադիր իրացման անհնարինության հանգեցնող պատճառը (դա կլինի գույքի մաշվածությունը, թե օրենսդրական այն դրույթը, որը թույլ չի տալիս տվյալ տեսակի գույքը հարկադիր իրացնել):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. վերացնել կատարողական վարույթների շրջանակներում կիրառված բոլոր այն արգելանքները, որոնք կիրառվել են պարտապանների միակ այն բնակարանների նկատմամբ, որոնց մեկնարկային գինը հավասար կամ ցածր է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 808-Ն որոշմամբ սահմանված չափից,

2. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածում պարտապանի գույքն արգելանքից հանելու հիմքերի շարքում ներառել գնահատման արդյունքներով պարտապանի միակ բնակարանի արժեքի՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափից կամ դրանից ցածր լինելը պարզվելու դեպքը:

3. Կատարողական վարույթի շրջանակներում բնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելը և բնագանձում տարածելը

Տարիներ շարունակ Պաշտպանի տարեկան հաղորդումներով բարձրաձայնվել է բնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա կատարողական վարույթի շրջանակներում արգելանք դնելու և դրանք բնագանձելու խնդիրը: Խնդրի արդիականության մասին են վկայում 2019 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակաբար հասցեագրվող բողոքները, որոնցով մարդիկ տեղեկացրել են, որ իրենց նկատմամբ հարուցված կատարողական վարույթների շրջանակներում հարկադիր կատարողներն արգելանք են կիրառել այնպիսի դրամական միջոցների վրա (օրինակ՝ հաշմանդամության կենսաթոշակ, պետական նպաստ և այլն), որոնք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի կարգավորումների ուժով բնագանձման ենթակա չեն:

Ըստ Պաշտպանին դիմած քաղաքացիների՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթի շրջանակներում բնագանձում է տարածվել դիմողների հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարների վրա՝ չնայած նրան, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ կատարողական թերթով բնագանձում չի կարող տարածվել այն դրամական գումարների վրա, որոնք վճարվում են հաշմանդամություն ունեցող անձանց: Խնդիրը մեծապես կախված է «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի բովանդակությունից և դրանում ներառվող տեղեկություններից:

Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի դրույթների չպահպանման կապակցությամբ ստացված բողոքներից մեկի քննության շրջանակներում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից պարզաբանվել էր, որ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ նշվում են սոցիալական ապահովության պետական ծառայության տրամադրած այն հաշվեհամարները, որոնց վրա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի հիմքով բնագանձում չի տարածվում, սակայն պրակտիկայում լինում են դեպքեր, երբ նշված գումարները փոխանցվում են փոփոխվող կամ անհատական հաշվեհամարներից, որոնց մասին հարկադիր կատարողը չի կարող տեղեկություն ունենալ: Այս կապակցությամբ Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր հաշմանդամության կենսաթոշակի վրա բնագանձում տարածելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով լրացուցիչ միջոցներ ձեռնարկել

հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարները բացահայտելու ուղղությամբ՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ բռնագանձման ոչ ենթակա հաշվեհամարները նշելուց բացի պարտապաններին ծանուցելով Օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված բռնագանձման ոչ ենթակա գումարներն այլ անհատական հաշվեհամարներով ստանալու դեպքում այդ հաշվեհամարների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը հարկադիր կատարողին ներկայացնելու մասին:

Սակայն հարկ է նկատել, որ ընթացիկ տարում գործուն միջոցներ չեն ձեռնարկվել բարձրացված խնդրի կարգավորման, մասնավորապես՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի բովանդակության մեջ վերը նշված տեղեկությունները ներառելու ուղղությամբ: Ասվածի մասին է վկայում այն, որ 2019 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակաբար բողոքներ են հասցեագրվել բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելու և դրանք բռնագանձելու խնդրի վկայակոչմամբ:

Պաշտպանին ներկայացված բողոքների համաձայն՝ եղել են իրավիճակներ, երբ պարտապաններն իրենք են հարկադիր կատարողներին տեղեկացրել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի ուժով բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելու փաստի մասին, ինչը, սակայն, հարկադիր կատարողները պատշաճ ուշադրության չեն արժանացրել՝ պարտապաններից պահանջելով նշված փաստը հիմնավորող ապացույցներ ներկայացնել:

Հարկադիր կատարողները պարտապաններից ապացույցներ պահանջելը պատճառաբանում են նրանով, որ պարտապանի ներկայացրած ապացույցի հիման վրա արգելանքը վերացնելն ավելի քիչ ժամանակատար է, քան հաշվեհամարի՝ կենսաթոշակային, պետական նպաստի կամ հաշմանդամության լինելու վերաբերյալ տեղեկությունը համապատասխան պետական մարմնին հարցում անելու միջոցով պարզելը:

Ընդ որում, նման պրակտիկայի պատճառներից է շատ դեպքերում պարտապանների տեղեկացված չլինելը պահանջվող տեղեկատվությունը Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով պետական մարմիններին հարցում կատարելով պարզելու հնարավորության մասին: Մինչդեռ, Պաշտպանի աշխատակազմում բողոքների քննարկման ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ տարիքային աշխատանքային կենսաթոշակի վրա կիրառված արգելանքը մասնակի վերացնելու համար պարտապանը չի կարողացել անհրաժեշտ փաստաթուղթը ներկայացնել հարկադիր կատարողին՝ պայմանավորված առողջական խնդիրներով: Պարտապանը դիմել է Պաշտպանին՝ ցանկանալով տեղեկանալ, թե ինչ այլ եղանակով է հնարավոր անհրաժեշտ փաստաթուղթը ներկայացնել հարկադիր կատարողին: Թեև Պաշտպանի աջակցությամբ նշված խնդիրը լուծվել է, մասնակի վերացվել է պարտապանի տարիքային աշխատանքային կենսաթոշակի վրա կիրառված արգելանքը, սակայն կոնկրետ խնդրի վերաբերյալ առկա հնարավոր լուծումների մասին պարտապանների տեղեկացվածության խնդիրը համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ:

4. Իրավահաջորդներին կատարողական վարույթին մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայությունը

Պաշտպանի դեռևս 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին կատարողական վարույթին մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայության վերաբերյալ խնդիրը: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերից

մեկի դուրս գալու դեպքում (քաղաքացու մահ, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում) հարկադիր կատարողը պարտավոր է կատարել նրա փոխարինում՝ օրենքով, դատարանի վճռով կամ պայմանագրով որոշված իրավահաջորդով: Օրենքը, սակայն, չի նախատեսում հստակ կառուցակարգեր կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին կատարողական վարույթի մասնակից դարձնելու ընթացակարգերի վերաբերյալ:

Նման օրենսդրական բացը, ի վերջո կարող է հանգեցնել դատական ակտի չկատարման: Խոսքն այն իրավիճակների մասին է, երբ օրինակ՝ պահանջատերը մահանում է, վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, սակայն հարկադիր կատարողն ընթացակարգերի բացակայության պատճառով չի կարողանում պահանջատիրոջը նրա իրավահաջորդով փոխարինել, քանի որ նա հայտնվում է պահանջատիրոջ բոլոր իրավահաջորդներին հայտնաբերելու խնդրի առաջ: Այդպիսի մեխանիզմի բացակայությունն էլ հենց հանգեցնում է տվյալ դեպքում պարտապանի շահերի ոտնահարման (պահանջատիրոջը նրա իրավահաջորդով փոխարինելու դեպքում պարտապանը գուցե հաշտության համաձայնության գա վերջինիս հետ, ինչը կատարողական վարույթը կարճելու հիմք է, որն էլ իր հերթին հիմք է պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները վերացնելու համար):

Հարկ է նշել, որ նշված խնդրի լուծման կապակցությամբ Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ համապատասխան առաջարկներ էին ներկայացվել, որոնք, սակայն, որևէ արձագանք չեն ստացել: Մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված տեղեկությունների համաձայն՝ իրավահաջորդներին հայտնաբերելու և կատարողական վարույթին ներգրավելու համար Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն օրենսդրական որևէ փոփոխություն կամ լրացում չի ձեռնարկել, սակայն երբ ստանում է տեղեկատվություն կատարողական վարույթի կողմերի իրավահաջորդների առկայության վերաբերյալ, իր նախաձեռնությամբ վերսկսում է կատարողական վարույթը և վերջիններիս ներգրավում որպես կողմ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. նախատեսել օրենսդրական մեխանիզմներ կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին կատարողական վարույթի մասնակից դարձնելու ուղղությամբ, մասնավորապես՝ կատարողական վարույթի կողմերի մահվան փաստը հայտնի դառնալուց հետո ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն վարույթի կողմի մահվանից 6 ամիս հետո կատարվելիք հարցման միջոցով պարզել վերջինիս իրավահաջորդների առկայության փաստը,

2. հարցման արդյունքներով պայմանավորված՝ օրենսդրական մեխանիզմներ նախատեսել հայտնաբերված իրավահաջորդների՝ կատարողական վարույթին մասնակցությունն ապահովելու համար:

5. Պետական մարմինների միջև տեղեկատվության ոչ պատշաճ փոխանակումը և դրա բացասական ազդեցությունը մարդու իրավունքների վիճակի վրա

Կատարողական վարույթին առնչվող շարունակական խնդիրներից է նաև պետական այլ մարմինների տրամադրած տեղեկությունների ոչ հավաստիությունը, ինչի հետևանքով չի ապահովվում կատարողական վարույթի հետագա ընթացքն օրենքի պահանջների պահպանմամբ: Այս խնդիրը պահանջում է հրատապ լուծում, քանի որ այն ունի համակարգային բնույթ և բացասական ազդեցություն է ունենում մարդու իրավունքների

վրա՝ բացասական հետևանքներ առաջացնելով ինչպես կոնկրետ մարդկանց համար, այնպես էլ պետական մարմինների աշխատանքի արդյունավետության տեսանկյունից:

Այսպես, Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր այն խնդիրը, որ պարտապանի գույքի հայտնաբերման նպատակով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե ուղարկած հարցումներին ի պատասխան՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ներկայացվել էին սխալ տեղեկություններ: ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տրամադրած տեղեկությունների՝ իրական փաստերին չհամապատասխանելու խնդիր արձանագրվել է նաև 2019 թվականի ընթացքում քննարկված բողոքներով: Մասնավորապես, արձանագրվել է, որ թեև Կոմիտեին գրություն հասցեագրելու օրվա դրությամբ կոնկրետ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ առկա են եղել սահմանափակումներ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն ուղղված Կոմիտեի պարզաբանմամբ նշվել է, որ անշարժ գույքի վրա սահմանափակումներ առկա չեն: Նշված տեղեկատվության հիման վրա հարկադիր կատարողը կարճել է կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (հարկադիր կատարողը կարճում է կատարողական վարույթը, եթե կատարողական թերթը փաստացի կատարվել է կամ դրանից բխող պարտավորությունը դադարել է օրենքով սահմանված այլ հիմքով), քանի որ կատարողական թերթի պահանջն է եղել կոնկրետ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ առկա բոլոր սահմանափակումները վերացնելը: Ստացվում է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ներկայացված սխալ տեղեկատվության հետևանքով չի ապահովվել դատական ակտի կատարումը, իսկ կատարողական վարույթը կարճվել է օրենքի խախտմամբ:

Որպես օրինակ բերվող՝ նշված բողոքի քննարկման շրջանակներում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն առաջարկվել է Կոմիտեին համապատասխան պատասխանատվության ենթարկելուն ուղղված միջոցներ ձեռնարկել, մինչդեռ, Ծառայությունը բավարարվել է միայն հորդորելով Կոմիտեին այսուհետ Ծառայությանն առավելապես ստույգ տեղեկատվություն տրամադրել:

Ինչպես արդեն նշվել է, Կոմիտեից Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն ուղղված պատասխան-գրություններում սխալ տեղեկություններ ներկայացնելու խնդիրն արդիական է եղել նաև նախորդ տարում, ինչի մասին բարձրաձայնվել է Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ: Խոսքն այն դեպքի մասին է, երբ նույն անձի անվամբ առկա գույքերի վերաբերյալ այդ անձի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կատարած հարցումներին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն տվել էր տարբեր, իրարամերժ պատասխաններ (Ծառայությանը տրված պատասխանում Կոմիտեն նշել է, որ պարտապանի անվամբ անշարժ գույք չկա գրանցված, իսկ պարտապանի հարցմանն ի պատասխան՝ Կոմիտեի տված տեղեկանքով հավաստվում է այն, որ պարտապանի անվամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով գույք կա գրանցված): Նշված դեպքում ևս Կոմիտեի տրամադրած տեղեկության ոչ հավաստի լինելու պատճառով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ձեռնարկած գործողությունները չեն բխել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից: Խնդիրն այն է, որ հարկադիր կատարողն արգելանք էր դրել պարտապանի ամուսնու աշխատավարձի վրա, քանի որ պարտապանի անվամբ գույք և դրամական միջոցներ չէր հայտնաբերել Կոմիտեից ստացված ոչ հավաստի տեղեկատվության պատճառով: Մինչդեռ, Ծառայությանը ստույգ տեղեկատվություն ներկայացվելու դեպքում արգելանք չէր դրվի պարտապանի ամուսնու աշխատավարձի վրա:

Նկարագրված դեպքերի շարունակականությունը ևս մեկ անգամ փաստում է, որ պետական մարմինների միջև ճշգրիտ տեղեկատվության տրամադրմանն ուղղված

բավարար քայլեր չեն ձեռնարկվում՝ թե՛ տեղեկատվական համակարգերի կատարելագործման, թե՛ պատասխանատվության միջոցների կիրառման առումով:

Այսպիսով, հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և վերջինիս հետ համագործակցող պետական մարմինների միջև արդյունավետ փոխգործակցության միջոցով ապահովել լիարժեք և ճշգրիտ տեղեկատվության փոխանակումը:

#### 6. Կատարողական թերթի պարզաբանման պահանջով հարկադիր կատարողի՝ դատարան չդիմելը

2019 թվականի ընթացքում Պաշտպանին դիմած քաղաքացիները նշել են, որ հարկադիր կատարողները հրաժարվում են դիմել դատարան կատարողական թերթում տեղ գտած խրթին, անհարթ, անհասկանալի, տարակերպ մեկնաբանման տեղիք տվող և անորոշ ձևակերպումների պարզաբանման պահանջով: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կատարողական թերթում նշված պահանջները պարզ չլինելու դեպքում հարկադիր կատարողն իրավունք ունի դիմել կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու համար: Քաղաքացիների տեղեկացմամբ՝ հարկադիր կատարողները՝ հրաժարվում են կատարողական թերթի պարզաբանման պահանջով դատարան դիմել՝ պատճառաբանելով, որ դա իրենց իրավունքն է և կախված է իրենց հայեցողությունից:

Վարչական մարմինն իրեն վերապահված հայեցողական լիազորությունները պետք է իրացնի այնպես, որ դրանք բխեն վարչարարության օրինականության սկզբունքից, իսկ անձանց համար առաջացած հետևանքները չոտնահարեն նրանց իրավունքները: Հայեցողությունը մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից մեկն ընտրելու հնարավորությունն է, այն հասցեատիրոջ համար լավագույնն ընտրելու վարչական մարմնի անուղղակի պարտականությունն է:

Սկզբունքորեն պետք է ի նկատի ունենալ, որ եթե իրավասու պետական մարմնի կամ դրա ներկայացուցչի իրավասությունը կոնկրետ հարցի առնչությամբ օրենսդրական տառի առումով ամրագրված է իբրև «իրավունք», այդուհանդերձ դա պետք է դիտարկել իբրև լրացուցիչ օրենսդրական գործիքակազմ օրենքով իր առջև դրված խնդիրները լիարժեք լուծելու համար: Անգամ հայեցողական լիազորություններն իրականացնելիս պետությունը, միևնույն է, կաշկանդված է մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման պարտականությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Այս ձևակերպումից հետևում է, որ հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի որևէ օրենքով, այդ լիազորությունը վարչական մարմնի՝ մեկ հարցի մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրականացնելու մեջ է, իսկ այդ ընտրությունը վարչական մարմնի իրավունքն է, այսինքն՝ կախված օրենքի կարգավորումից և կոնկրետ իրավիճակից՝ դա կարող է նշանակել նաև վարչական մարմնի գործելու կամ չգործելու, որոշում ընդունելու կամ ընդհանրապես որևէ որոշում ընդունելուց ձեռնպահ մնալու հայեցողություն, բոլոր այդ լուծումները պետք է լինեն հնարավոր և իրավաչափ:

Հարկ է նկատել, որ վարչական մարմինների հայեցողական լիազորությունները որևէ պարագայում չի կարելի դիտարկել որպես կամայականության հիմք և հայեցողությունը դիտարկել որպես վարչական մարմնի բացարձակ ազատություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային վճիռներում արձանագրել է, որ օրենքը, որը հայեցողական լիազորություն է սահմանում, պետք է բավարար հստակությամբ նշի այդ հայեցողության շրջանակները<sup>173</sup> և կատարման եղանակները<sup>174</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հայեցողական լիազորությունների իրացման հարցին, 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ նշել է, որ պետաիշխանական լիազորություններով օժտված յուրաքանչյուր պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:

Վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորության ոչ պատշաճ կիրառության (անգործություն ցուցաբերելու) օրինակ է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ կատարողական թերթի պարզաբանման պահանջով դատարան չդիմելը: Այսպես, դեպքերից մեկով դատարանը բավարարել է հայցվորի հայցը՝ որոշելով պատասխանողից նրանց անչափահաս երեխաների համար մինչև նրանց չափահաս դառնալը հայցվորի օգտին բռնագանձել ալիմենտ (...): Նշված վճռի հիման վրա հարուցվել է կատարողական վարույթ, որից հետո տարիներ անց երեխաներից մեկը չափահաս է դարձել, սակայն նրա համար նախատեսված ալիմենտի բռնագանձումները շարունակվել են: Չափահաս երեխայի համար ալիմենտ բռնագանձել շարունակելը Ծառայությունը պատճառաբանել է նրանով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ուժով՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, իսկ կատարողական թերթում նշվել է, որ ալիմենտը պետք է բռնագանձվի «... մինչև նրանց չափահաս դառնալը», մինչդեռ, չափահաս է դարձել երեխաներից միայն մեկը: Ստացվում է, որ Ծառայության դիրքորոշման համաձայն՝ նշված իրավիճակում երկու երեխաների համար ալիմենտի բռնագանձումը պետք է շարունակվի մինչև մյուս երեխան էլ չափահաս դառնա: Ծառայությունը միաժամանակ անտեսել է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով սահմանված կարգավորումը, ըստ որի՝ դատական կարգով բռնագանձվող ալիմենտի վճարումը դադարում է երեխայի չափահաս դառնալով: Այնուամենայնիվ, կատարողական թերթում նշված ձևակերպումը խոչընդոտներ չէր առաջացնի, եթե Ծառայությունը կատարողական թերթի պարզաբանման պահանջով դիմեր դատարան: Ակնհայտ է, որ դատարանը նման ձևակերպում տալիս նկատի չի ունեցել այն, որ ալիմենտի բռնագանձումը պետք է շարունակվի մինչև երկու երեխաներն էլ չափահաս դառնան, քանի որ նրանք նույն տարիքի չեն եղել, հետևաբար միաժամանակ չէին կարող

<sup>173</sup> Տե՛ս Դե Թոմմասոն ընդդեմ Իտալիայի (*De Tommaso v. Italy*) գործով 2017 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 43395/09, կետ 109, Միլվերը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (*Silver and Others v. United Kingdom*) գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռը, գանգատ թիվ 7136/75, կետ 88, Խյուստով ընդդեմ Ռուսաստանի (*Khlyustov v. Russia*) գործով 2013 թվականի հոկտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 28975/05, կետ 70:

<sup>174</sup> Տե՛ս Նավալնին ընդդեմ Ռուսաստանի (*Navalnyy v. Russia*) գործով 2018 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 29580/12, կետ 115, Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի (*Hasan and Chaush v. Bulgaria*) գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 30985/96, կետ 84, Մաեստրին ընդդեմ Իտալիայի (*Maestri v. Italy*) գործով 2004 թվականի փետրվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 39748/9, կետ 30, Լաշմանկինը և այլք ընդդեմ Ռուսաստանի (*Lashmankin v. Russia*) գործով 2017 թվականի մայիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 57818/09, կետ 411:

չափահաս դառնալ: Բնականաբար խոսքն այստեղ յուրաքանչյուր երեխայի չափահաս դառնալու մասին կարող է լինել: Հակառակ պարագայում, երբ հարկադիր կատարողն ալիմենտ է բռնագանձում չափահաս երեխայի համար՝ դա պատճառաբանելով կատարողական թերթում նշվածով և դրա տառացի մեկնաբանությամբ, այդպիսով դուրս է գալիս ալիմենտի վճարման պարտականության՝ օրենքով ամրագրված բովանդակային շրջանակներից, քանի որ ալիմենտը վճարվում է երեխաների համար, իսկ 18 տարին լրացած անձն այլևս երեխա չէ:

Նորմի տառացի մեկնաբանության սկզբունքը բացառիկ չէ, այն չպետք է հանգեցնի անհեթեթության: Նորմի տառացի մեկնաբանության արդյունքում անհեթեթության չհանգելու սկզբունքը տառացի մեկնաբանության սկզբունքի բաղադրիչն է, առանց որի այն չի կարող ծառայել օրենքի գերակայությանը<sup>175</sup>:

Մեկ այլ դեպքում հայցվորը հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացրել դատարան, որով խնդրել է հայցագնի չափով (օրինակ՝ 10.000.000 ՀՀ դրամ) արգելանք դնել պատասխանողին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա: Դատարանի «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին» որոշմամբ հայցվորի միջնորդությունը բավարարվել է մասնակի՝ որոշվելով 10.000.000 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք դնել պատասխանողին պատկանող գույքի վրա, իսկ մնացած մասով միջնորդությունը մերժվել է: Հարուցված կատարողական վարույթի շրջանակներում հարկադիր կատարողն արգելանք է կիրառել պարտապանին պատկանող դրամական միջոցների վրա՝ չնայած նրան, որ «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին» որոշմամբ պետք է արգելանքներ կիրառվեն միայն պարտապանին պատկանող գույքի վրա:

Սկզբունքորեն ընդունելով հարկադիր կատարողի այն պարզաբանումը, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածը որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ գույք է դիտարկում նաև դրամական միջոցը՝ միաժամանակ պետք է նշել, որ նշված դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունն ի սկզբանե պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա արգելանք դնելու պահանջ է բովանդակել: Այն, որ միջնորդությունը մասնակի է բավարարվել, նշանակում է, որ դատարանը բավարար է համարել հայցագնի չափով պատասխանողի միայն գույքի վրա արգելանք դնելը, իսկ նույն չափով նաև դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասով հայցվորի միջնորդությունը մերժվել է: Պետք է նկատել, որ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը կատարողական թերթն է, իսկ տվյալ դեպքում կատարողական թերթում նշված չի եղել, թե «միջնորդությունը մնացած մասով մերժել» ասվածը միջնորդության որ մասին է վերաբերել, քանի որ այն կարող էր մեկնաբանվել այլ կերպ: Այդուհանդերձ, ուշագրավ է, որ Պաշտպանին դիմած քաղաքացին ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ուղղված դիմումին կից ներկայացրել է «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին» դատարանի որոշման պատճենը, որի ուսումնասիրությունից հարկադիր կատարողը կարող էր պարզել, որ «միջնորդությունը մնացած մասով մերժելը» վերաբերում է պարտապանի դրամական միջոցներին և այդպիսով՝ արգելանք չկիրառել նրա դրամական միջոցների վրա: Այդ դեպքում «գույք» եզրույթը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում մեկնաբանելու անհրաժեշտություն չէր առաջանա: Կատարողական թերթի մեկուսի՝ դատական ակտից անկախ դիտարկումը թեև կարող էր այլ մեկնաբանության տեղիք տար, սակայն դատարանի որոշման բովանդակությունն այլ եզրահանգման հիմք պետք է հանդիսանար: Ստեղծված իրավիճակում հստակությունը թերևս կարող էր

<sup>175</sup> Հասանելի է

<https://digitalcommons.wcl.american.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1523&context=aulr>

հղումով, էջ 134, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



ապահովվել կատարողական թերթի պարզաբանման պահանջով դատարան դիմելով, ինչը, սակայն, չի արվել:

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

1. կատարողական թերթի տառացի մեկնաբանության արդյունքում անորոշության, դատական ակտի և դրա հիման վրա տրված կատարողական թերթի պահանջների միջև անհամապատասխանության և նմանատիպ այլ դեպքերում կիրառել կատարողական թերթի պահանջով դատարան դիմելու լիազորությունը:

7. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միասնական պրակտիկայի բացակայությունը մի շարք հարցերի առնչությամբ

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում առանձին հարցերի կապակցությամբ չկա ձևավորված միասնական պրակտիկա: Արդյունքում, նույնաբովանդակ խնդրի լուծումը Ծառայության տարածքային մի մարմնում կարող է մի ձևով տրվել, տարածքային մեկ այլ մարմնում՝ այլ ձևով:

Օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննարկվել են երկու առանձին, բայց նույնաբովանդակ բողոքներ, որոնք վերաբերել են պարտապանի՝ հետախուզման մեջ գտնվելու պայմաններում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված կարգավորումների շրջանակներում (միայն) պարտապանին սեփականության իրավունքով պատկանող բնակարան կամ այլ շինություն անարգել մուտք գործելու հնարավորությանը: Նկատենք, որ խոսքը վերաբերում է նշված հոդվածի՝ մինչև 2019 թվականի օգոստոսի 4-ը գործող կարգավորմանը: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի 1-ին պարբերության մինչև 2019 թվականի օգոստոսի 4-ը գործող կարգավորման համաձայն՝ կատարողական գործողությունների կատարման նպատակով (բռնագանձում, վտարում, բնակեցում և այլն) հարկադիր կատարողն իրավունք ունի անարգել մուտք գործելու պարտապանին սեփականության իրավունքով պատկանող բնակարան կամ այլ շինություն:

Բողոքներից մեկով պարտապան դիմողը տեղեկացրել է, որ հարկադիր կատարողը սպառնացել է ջարդել իր բնակարանի դուռը և անարգել, հարկադրաբար մուտք գործել այնտեղ, եթե ինքը կամովին թույլ չտա մտնել: Բողոքի քննարկման շրջանակներում բարձրացվել է առանց համապատասխան դատական ակտի առկայության պարտապանի՝ բնակարան հարկադրաբար մուտք գործել պատրաստվելու հարցը, ինչին ի պատասխան՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից վկայակոչվել է օրենսդրական վերը նշված կարգավորումը և պարզաբանվել, որ այդ կարգավորման հաշվառմամբ պարտապանի բնակարան հարկադրաբար մուտք գործելու հարց չի քննարկվել, և հետևաբար, բնակարան հարկադրաբար մուտք գործելը թույլատրող համապատասխան դատական ակտ առկա չէ: Ծառայության նմանատիպ պարզաբանումից ենթադրելի է, որ Օրենքի 43.1-րդ հոդվածի 1-ին պարբերությունը հարկադիր կատարողներին հնարավորություն է տալիս առանց դատական ակտի առկայության անարգել մուտք գործել բնակարաններ:

Ուշագրավ է, որ նույնաբովանդակ մեկ այլ բողոքի քննարկման շրջանակներում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը պարզաբանել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով պարտապանին սեփականության իրավունքով պատկանող կամ այլ շինություն անարգել, այդ թվում՝ բնակարանը կամ այլ շինությունը բացելու միջոցով մուտք գործելու իրավունքը կիրառելի է դարձել 2019 թվականի օգոստոսի

4-ից, երբ ուժի մեջ է մտել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-126-Ն օրենքը: Հետևաբար, մինչ այդ իրավունք չեն ունեցել առանց դատարանի որոշման հարկադրաբար մուտք գործել պարտապանի բնակարան կամ այլ շինություն: Փաստորեն, նույն խնդրի վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ներկայացվել են իրարամերձ դիրքորոշումներ:

Մինևույն ժամանակ, հարկ է նկատել, որ ներկայում խնդրի կարգավորման որոշակիությունն ապահովվել է օրենսդրական փոփոխությունների արդյունքում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանվել է, որ կատարողական գործողությունների կատարման նպատակով (բռնագանձում, վտարում, բնակեցում և այլն) հարկադիր կատարողն ունի պարտապանին սեփականության իրավունքով պատկանող բնակարան կամ այլ շինություն անարգել, այդ թվում՝ բնակարանը կամ այլ շինությունը բացելու միջոցով մուտք գործելու իրավունք: Մակայն փաստն այն է, որ մինչ այդ չի եղել միասնական պրակտիկա:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ձևավորված ոչ միասնական պրակտիկայի մեկ այլ օրինակ է աշխատավարձի վրա դրված արգելանքը մասնակի վերացնելու համար աշխատանքի վայրից ներկայացվող տեղեկանքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները պարտապաններին տարակերպ ներկայացնելը: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել այն խնդրի վկայակոչմամբ, թե անձինք դիմել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որպեսզի պարզեն, թե ինչ տեղեկանք է անհրաժեշտ ներկայացնել աշխատանքի վայրից իրենց աշխատավարձերի վրա դրված արգելանքները մասնակի վերացնելու համար: Խնդրահարույցն այն է, որ Ծառայությունից պարտապաններին տրվել են թերի տեղեկություններ, որոնց համապատասխան կազմված և ներկայացված տեղեկանքները հարկադիր կատարողները չեն ընդունել՝ պատճառաբանելով, որ դրանցում նշված չի եղել, օրինակ՝ գործատուի այն հաշվեհամարը, որից պարտապանին փոխանցվում է աշխատավարձ, մեկ այլ դեպքում չի նշվել բանկային այն հաշվեհամարը, որով պարտապանը ստացել է իր աշխատավարձը և այլն: Արդյունքում, պարտապաններն ավելորդ քաշքշուքի մեջ են ընկել, տեղեկանքը ներկայացրել են երկու, երբեմն նաև երեք անգամ՝ այդ ողջ ժամանակահատվածի ընթացքում գրկված լինելով աշխատավարձի՝ իրենց հասանելիք մասը տնօրինելու հնարավորությունից:

Խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին պարզաբանվել է, որ ներկայում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ պարտապանի աշխատավարձի վրա բռնագանձումն օրենքով նախատեսված չափով իրականացնելու համար գործատուից համապատասխան տեղեկանքի բովանդակության վերաբերյալ պարտապանները տեղեկանում են կապի բոլոր հնարավոր միջոցներով, այդ թվում՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով հարցումների (օրինակ՝ Ծառայության ֆեյսբուք սոցիալական հարթակի միջոցով), զանգերի, վարչական շենք այցելությունների միջոցներով: Ըստ Նախարարությունից 2020 թվականի փետրվարի 20-ին ստացված պարզաբանումների՝ շրջանառության մեջ է գտնվում «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական այլ մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծը, որի ընդունումից հետո կգործարկվի էլեկտրոնային նոր համակարգ Պետական եկամուտների կոմիտեի հետ ևս:

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

1. կատարողական վարույթին առնչվող բոլոր հարցերի կապակցությամբ ապահովել միասնական իրավակիրառ պրակտիկա՝ չբացառելով նաև օրենսդրական տարակերպ

մեկնաբանման տեղիք տվող նորմերի պրակտիկ կիրառման վերաբերյալ շրջաբերականների հրապարակումը և տարածումը Մառայության տարածքային բոլոր ստորաբաժանումներում,

2. տեղեկատվական պաստառների կամ այլ միջոցներով հասարակության լայն շրջանակներին հասանելի դարձնել աշխատավարձի վրա դրված արգելանքը մասնակի վերացնելու համար անհրաժեշտ տեղեկանքի բովանդակությանը:

## ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մարդու հիմնական իրավունքներից մեկն ընտրական իրավունքն է: Այդ իրավունքի իրացման միջոցով մարդը հնարավորություն է ստանում ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև անմիջականորեն կամ ընտրված ներկայացուցչի միջոցով հանրային կառավարմանը մասնակցելու: Ընտրական իրավունքն իր արտացոլումն է գտել թե՛ ներպետական, թե՛ միջազգային մի շարք փաստաթղթերում, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդված 21), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (հոդված 25) և այլն:

Ընտրական իրավունքի իրացման շնորհիվ են երկրում ձևավորվում ժողովրդավարական ինստիտուտներն ու երկրի կառավարման համակարգը: Որքան ազատ ու անխոչընդոտ է ընտրական իրավունքի իրացման հնարավորությունն, այնքան մեծ է քաղաքացու կամքի հրապարակային արտահայտման արդյունքում նոր ձևավորված մարմնի նկատմամբ վստահությունը: Ընտրական իրավունքի և մասնավորապես պետությունների համար միջազգային իրավական կարգավորումներով ընտրական համակարգի կանխորոշման վերաբերյալ դիրքորոշումներ են հայտնել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն<sup>176</sup>, Վենետիկի հանձնաժողովը<sup>177</sup>՝ նշելով, որ պետությունն ինքն է որոշում իր ընտրական համակարգը, որը պետք է հարգվի որպես ազգային մակարդակով որոշվող խնդիր: Նման դիրքորոշում է ներկայացրել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 2012 թվականի մարտի 13-ի՝ Սակոմանոն և այլք ընդդեմ Իտալիայի գործով՝ հստակ ամրագրելով, որ ընտրական համակարգ որոշելու հարցում պետությունն ունի հայեցողական լիազորության բավականին լայն շրջանակներ:

Ընտրական իրավունքն ամրագրված է ՀՀ սահմանադրությամբ, որի 2-րդ հոդվածով սահմանվում է ժողովրդի՝ իր իշխանությունն ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով իրականացնելու իրավունքը: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածն իր հերթին նախատեսում է ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքը:

Ընտրական իրավունքի իրացման կանոնակարգումները տրված են նաև «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով:

Այդպիսով, քաղաքացին ընտրությունների և հանրաքվեների միջոցով արտահայտում է սեփական կամքը, այդ կերպ մասնակցելով ժողովրդաիշխանության իրականացմանը: Չէ որ ընտրություններն ու հանրաքվեներն են այն առանցքային գործիքները, որոնց միջոցով ամրապնդվում է ժողովրդավարությունը, ուստի անթույլատրելի է այդ գործընթացում ցանկացած խախտում և բացթողում:

Վերը նշվածի իրագործման համար անհրաժեշտ է ներպետական օրենսդրության կատարելագործումը միջազգային չափանիշների և կարգավորումների լույսի ներքո:

Հարկ է նշել, որ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին երկրում տեղի ունեցած ժողովրդավարական զարգացումներից հետո Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի ոլորտում արձանագրվեցին հիմնարար փոփոխություններ: Այդ իրադարձությունների շնորհիվ հենց այդ ժամանակահատվածում ակնհայտորեն աճեց հանրային իշխանությունների նկատմամբ վստահությունը, ինչն էլ իր հերթին հանգեցրեց նաև ընտրական ոլորտում դրական զարգացումների: Մասնավորապես հստակեցվեցին ընտրակաշառքների կամ ընտրողների նկատմամբ ապօրինի ազդեցություն գործադրելու

<sup>176</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե, 1981-2014թթ. 25-րդ մեկնաբանություն, 21-րդ պարբերություն:

<sup>177</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողով, 2002թ., Ուղենիշներ, բաժին 2.4-րդ:

արատավոր դեպքերի դեմ պայքարի ուղղությունները, հոչակվեց քաղաքական գործընթացներին դպրոցների ու մանկապարտեզների ներգրավումը բացառելու հրամայական, իսկ տեղի ունեցած ընտրությունների պատկերը հնարավորություն տվեց արձանագրել, որ զգալիորեն նվազել են ընտրական գործընթացի հետ կապված Ոստիկանության գործողությունների դեմ բողոքները:

Նախկին տարիներին Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում էր տեղական և համապետական ընտրությունների ընթացքում տեղի ունեցած տարաբնույթ խախտումներ կամ արատավոր երևույթներ, որոնք տեղ են գտել նաև նախորդ տարիներին հրապարակված հաղորդումներում: Նախընտրական հատվածում և ընտրությունների օրերին դիտարկվում էին համակարգային բնույթ կրող այնպիսի արատավոր երևույթներ, ինչպիսիք էին նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ներգրավվածությունը քաղաքական գործընթացներին, լրագրողների ու դիտորդների աշխատանքների խոչընդոտները և համակարգային բնույթ ստացած այլն:

Թեև 2019 թվականին համապետական ընտրություններ տեղի չեն ունեցել, սակայն տեղական մակարդակում տեղի ունեցած ընտրությունների ընթացքում չեն բարձրաձայնվել լրագրողների ու դիտորդների աշխատանքների խոչընդոտելու համակարգային դեպքեր ու խախտումներ և այլն: Վերջինս բնականաբար 2018 թվականին համապետական և տեղական մակարդակներում անցկացված ընտրությունների ժամանակ առկա վիճակի տրամաբանական արգասիքն է: Միայն այս կերպ կարող է երկրում շարունակաբար ամրապնդվել ժողովրդավարությունը: Ժողովրդավարական նման զարգացումները բնականորեն տանում են այնպիսի հանրային իշխանություն, որի հիմքը քաղաքացիների բարձր վստահությունն է:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ընտրական գործընթաց անպայմանորեն գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո: Ընտրությունների օրերին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը որպես հաստատված աշխատելառճ գործում է արտակարգ ռեժիմով՝ հետևելով և արձագանքելով մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների, իրավունքների իրացման խնդիրների առաջացման, լրագրողների աշխատանքային գործունեության խոչընդոտման դեպքերին՝ սերտ համագործակցության մեջ գտնվելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ՀՀ դատախազության հետ:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իր մասնակցությունն է բերում ընտրական համակարգի և օրենսդրության կատարելագործման աշխատանքներում ևս: Նշվածի վերաբերյալ հարկ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմի ներկայացրած մի շարք առաջարկներ, որոնք նաև առկա են ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի և Վենետիկի հանձնաժողովի նախկինում տված մի շարք հանձնարարականներում, դեռևս օրենսդրական մակարդակում մնացել են անկատար, այդ թվում՝ նրանք, որոնք առնչվում են քարոզարշավի ֆինանսական հաշվետվություններից կազմակերպչական ծախսերի բացառմանը, ընտրական հարցերով բողոք բերելու իրավունքի նեղ սահմանմանը, թեկնածուների համար քաղաքացիության և բնակության վայրի Սահմանադրությամբ սահմանված պահանջներին, խորհրդարան անցնելու համար դաշինքների համար սահմանված նվազագույն շեմերին և ընտրությունների առաջին փուլից հետո ձևավորվող կոալիցիաների մասնակիցների թվի սահմանափակումներին:

Հարկ է նշել, որ Պաշտպանը տեղեկատվության հրապարակային միջոցներով և թեժ գծով ստացած առերևույթ հանցագործությունների վերաբերյալ նյութերն իրավապահ մարմիններին փոխանցելուց հետո յուրաքանչյուր գործով հետևողական է գործի քննության ընթացքին՝ հետամուտ լինելով մարդու իրավունքների անշեղ պահպանմանը: Հիմնական քրեական գործով վարույթը, ըստ ՀՀ հատուկ քննչական ծառայության տեղեկացմամբ, որպես

մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով 2018 թվականին այն կասեցվել է:

Մարդու իրավունքների պաշտպանը անհրաժեշտ է համարում հատուկ նշել, որ Առհասարակ, 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների իրադարձություններից առաջ արձանագրված խախտումների, այդ թվում՝ քրեորեն հետապնդելի արարքների կապակցությամբ հարուցված քրեական վարույթները պետք է մինչև վերջ ստանան բացահայտում: Անհրաժեշտ է պարզել այդպիսի գործերով բոլոր հանգամանքները և երաշխավորել դրանցով քրեական պատասխանատվության լիարժեք իրացումը դրանք հաստատվելու դեպքում:

Խոսքը վերաբերում է բոլոր գործերին՝ սկսած դպրոցների տնօրեններին և մանկավարժական կոլեկտիվներին ապօրինի գործընթացների մեջ ներգրավելուց մինչև լրագրողների ու դիտորդների աշխատանքի խոչընդոտներ (օրինակ՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության տարածած ձայնագրությունները):

Միայն այդ կերպ է հնարավոր վերացնել այդպիսի արատավոր երևույթների հավանականությունը հետագայում և ընտրական իրավունքների պաշտպանությունը Հայաստանում դնել ամուր հիմքերի վրա՝ ինստիտուցիոնալ առումով որևէ հետնահանջ արձանագրված ձեռքբերումներից չունենալու համար:

Ասվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է օրենսդրորեն և գործնականում ապահովել ընտրական իրավունքի ազատ իրականացմանն երաշխավորմանն ուղղված արդյունավետ կառուցակարգեր՝ խարսխված ինստիտուցիոնալ հիմքերի վրա:

ԲԱԺԻՆ 7. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղեկություններ ստանալու հարցումներին պատասխանների տրամադրման որակի, մերժումների բնույթի ու առհասարակ, այդ հարցումների նկատմամբ հանրային մարմինների վերաբերմունքի հարցերը, դրանց դիտարկումը Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է:

Տեղեկություններ ստանալու իրավունքի և հասարակական իրազեկվածության ապահովման տեսանկյունից առանցքային դերակատարություն ունի մամուլը: Հետևաբար, լրագրողների կողմից տեղեկություններ ստանալու հետ կապված հարցերը ևս առանձին ուշադրության առարկա են: Խոսքը հատկապես վերաբերում է հանրային նշանակության կամ հետաքրքրության առարկա տեղեկատվության մատչելիության ապահովմանը:

Պետական իշխանությունների թափանցիկությունը լավ կառավարման հիմնական առանձնահատկությունն է և ցուցիչ, թե արդյոք հասարակությունն իսկապես ժողովրդավարական է և բազմակարծ: Պաշտոնական փաստաթղթերին հասանելիության իրավունքը էական նշանակություն ունի մարդկանց ինքնագարգացման և մարդու հիմնարար իրավունքների իրականացման հարցում: Այն նաև ամրապնդում է պետության նկատմամբ հանրային վստահությունը:

Տեղեկատվության մատչելիության հետ կապված խնդիրների դիտարկումը հիմնվում է Պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության և դրանց վիճակագրության վարման արդյունքների վրա:

Այսպես, 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել է տեղեկատվության ազատությանը վերաբերող 98 դիմում-բողոք:

Բողոքների հիմնական մասն ուղղված է եղել Պաշտպանության նախարարությանը, Ոստիկանությանը, համայնքապետարաններին, Առողջապահության նախարարություն:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ պետական մարմինները քաղաքացիների տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանում են օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, ինչի հետևանքով խախտվում է անձի՝ սահմանված ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը: Ավելին, տեղեկությունների տրամադրումը հաճախ մերժվում է այն պատճառաբանությամբ, որ պահանջվող տեղեկատվության մեջ առկա են մարդու անձնական կյանքին վերաբերող տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն:

Ստացվում է, որ տեղեկատվության սահմանափակման՝ օրենքով ամրագրված հիմքի վկայակոչմամբ մերժվում է նաև այլ տեղեկությունների տրամադրումը: Այլ կերպ ասած, դիտարկված պրակտիկան չի համապատասխանում օրենսդրական այն պահանջին, որ եթե պահանջվող տեղեկատվության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Մինչդեռ, տեղեկություն տնօրինողը պետք է տրամադրի այն տեղեկությունները, որոնց տրամադրումն արգելված չէ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով (տվյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված տվյալները պարունակող հատվածները ծածկելու միջոցով): Օրենսդրական պահանջներին չհամապատասխանող նման պրակտիկան հիմք է տալիս եզրահանգելու, որ իրավակիրառողն ինքը բավարար չափով իրազեկված չէ օրենքի կարգավորումների և որպես տեղեկություն տնօրինողի՝ իր պարտականությունների մասին:

Ոլորտում առկա խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդրական կառուցակարգերը ևս չեն համապատասխանում միջազգային իրավական չափանիշներին:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի իմաստով տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներից է տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը: Ըստ այդմ, տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը: Մինչդեռ, կարծում ենք, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման համար անհրաժեշտ են համապատասխան իրավական կառուցակարգեր և գործունե կարգավորումներ, որոնք պետք է սահմանվեն օրենքով<sup>178</sup>:

«Տեղեկատվության ազատության» ՀՀ օրենքը չի սահմանում նաև էլեկտրոնային եղանակով հարցում կատարելու և հարցման պատասխան ստանալու վերաբերյալ կարգավորումներ, ինչպես նաև գրավոր հարցման համար, ի թիվս այլ պահանջների, սահմանվում է դիմողի քաղաքացիությունը և ստորագրությունը: Մինչդեռ, նշվածը դժվարացնում է ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքի գործնական իրացումը:

2019 թվականի ընթացքում քայլեր են ձեռնարկվել Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի ստորագրման առնչությամբ: Այն ընդունվել է 2008 թվականի նոյեմբերի 27-ին և ԵԽ անդամ երկրների ստորագրման համար բաց է եղել 2009 թվականից:

Հիմք ընդունելով տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության արդյունքները՝ Պաշտպանը կարևորում է Կոնվենցիայի ստորագրումը՝ որպես տեղեկատվության ազատության լիարժեք երաշխավորմանն ու ՀՀ ներպետական օրենսդրությունն ու պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված գործընթաց:

Ոլորտի հասարակական կազմակերպությունները ևս բարձրաձայնում են տեղեկատվության ազատության իրավունքին առնչվող խախտումների մասին:

Այսպես, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հրապարակել է այն գերատեսչությունների ցանկը, որոնք 2019 թվականի ընթացքում անպատասխան են թողել կամ տրամադրել են անհիմն պատասխաններ կամ մերժումներ տեղեկություն ստանալու հարցումներին: Օրինակ, ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը համապատասխան հայցվող տեղեկությունը տրամադրել է խիստ թերի պատասխան, իսկ ՀՀ ոստիկանությանն ուղղված հարցումը մնացել է անպատասխան<sup>179</sup>:

2019 թվականի ընթացքում Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն արձանագրել է լրագրողների ու լրատվամիջոցների տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտման 108 դեպք: Դրանցից միայն 4-ի դեպքում է հայց ներկայացվել դատարան, իսկ 2 դեպքում՝ դիմում Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն՝ մերժման հիմքերը ստուգելու նպատակով<sup>180</sup>:

<sup>178</sup> Մանրամասն տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

<sup>179</sup> Տե՛ս «Սև ցուցակ 2019», հասանելի է <http://www.foi.am/hy/years/> հղումով:

<sup>180</sup> Տե՛ս «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՋԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2019 թվականի տարեկան զեկույց», հասանելի է



Վերոնշյալը թույլ է տալիս փաստել, որ ոլորտում առկա խնդիրների հետևանքով բավարար կերպով չի երաշխավորվում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքը:

Խնդրի շարունակականության մասին է վկայում այն, որ 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին մի շարք լրատվական գործունեություն իրականացնողներ հասցեագրել են հարցադրումներ՝ կապված հայցվող տեղեկությունների տրամադրումը պետական մարմինների կողմից մերժելու իրավաչափության հետ:

Ներկայացված իրավիճակների ուսումնասիրության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է իրավական չափանիշներ լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու հարցման և այդ առնչությամբ պետական մարմնի պարտականության վերաբերյալ:

Պաշտպանը ներկայացրել է եզրահանգում այն մասին, որ օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու լրագրողի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ներկայացուցչի պարտականությունն առաջնորդվելու լրագրողի օրինավորության, նրա բարեխիղճության ու ազնվության կանխավարկածով: Միաժամանակ, տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման հարցը, երբ դա վերաբերում է անձնական տվյալներին, շրջանակների որոշակիացման հարցում առաջ է բերում մրցակցող այլ իրավաչափ շահերի, կոնկրետ դեպքում՝ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակության բացահայտման անհրաժեշտություն՝ քննարկվող երկու իրավական արժեքների հավասարակշռման տեսանկյունից:

Նշյալ չափանիշները պետք է ուղենիշ լինեն լրատվական գործունեություն իրականացնողի՝ անձնական տվյալների պարունակող տեղեկություններ ստանալու հարցման, այդ առնչությամբ պետական մարմնի պարտականության, ինչպես նաև այլ անձանց անձնական տվյալների պաշտպանության ճիշտ հարաբերակցություն ապահովելու հարցում՝ այդպիսով նպաստելով երկրի իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը<sup>181</sup>:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվության հարցերով պատասխանատու անձանց համար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ու վերջինիս կիրարկման մեխանիզմների վերաբերյալ բավարար գիտելիքների ստացումը,

2. վերանայել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ միջազգային չափանիշներին համապատասխանության շրջանակներում,

3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում մանրամասն կառուցակարգեր նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից տեղեկությունների հայցման և ստացման կարգի վերաբերյալ,

4. ստորագրել Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիան:

<https://khosq.am/reports/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%b4-%d5%ad%d5%b8%d5%bd%d6%84%d5%ab-%d5%a1%d5%a6%d5%a1%d5%bf%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%be%d5%ab%d5%b3%d5%a1%d5%af%d5%ab-20/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>181</sup> Տե՛ս «Լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ ստանալու հարցման և այդ առնչությամբ պետական մարմնի պարտականության վերաբերյալ իրավական չափանիշներ», 30.03.2018թ., հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/376> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2. Էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ցուցադրումը ցերեկային ժամերին

2019 թվականին լուծվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2014 թվականից բարձրաձայնվող այն խնդիրը, որ Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանված չեն:

Մինչդեռ, նշված չափորոշիչների սահմանման պահանջն ամրագրված է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով:

Այսպես, Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Բացի այդ, նման հաղորդումների բովանդակության գնահատման չափորոշիչները վերանայելու վերաբերյալ համապատասխան միջոցառում է նախատեսվել «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշման 1-ին հավելվածի 27-րդ կետով:

Արդյունքում, 2018 թվականին մշակվել է համապատասխան որոշման նախագիծը, որը ներկայացվել է նաև Պաշտպանին՝ կարծիքի: Այսպես, Պաշտպանի աշխատակազմում համապարփակ ուսումնասիրություն է կատարվել և միջազգային չափանիշների քննարկման արդյունքում ներկայացվել է կարծիք:

2019 թվականի օգոստոսի 14-ի թիվ 91-Ա որոշմամբ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը սահմանել է Էրոտիկ բնույթի, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները: Որոշման մեջ արտացոլվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները: Օրինակ՝ Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների ցանկի հետ կապված առաջարկվել էր ավելացնել նաև սեռական գործողություններին վերաբերող խոսակցությունները, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հաղորդումների ցանկի հետ կապված առաջարկվել էր լրացնել նաև բռնության ողջունումը կամ այն ցանկալի դարձնելը:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի թիվ 90-Ա որոշմամբ սահմանվել են նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները:

Բացի այդ, հարկ է նկատել, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 15-րդ մասն ամրագրում է, որ նման հաղորդումների եթեր հեռարձակումը ժամը 24.00-ից մինչև 6.00-ն ընկած ժամանակահատվածից դուրս, բացառությամբ բաժանորդային հեռարձակման՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Նշված չափանիշների սահմանումը կարևոր է՝ հաշվի առնելով հեռուստատեսությամբ ցուցադրվող տեղեկատվության կարևորությունը հասարակության յուրաքանչյուր ներկայացուցչի՝ հատկապես երեխաների զարգացման և դաստիարակության վրա: Միննույն ժամանակ, այս փուլում ուշադրության արժանի է նշյալ չափորոշիչների գործնականում գնահատումը և կիրառումը իրավասու մարմնի կողմից:

3. Սոցիալական ցանցերում վիրավորանքի, արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքը

Ատելության ցանկացած խոսք, սպառնալիք, բռնության կոչ բռնության ցանկացած դրսևորում, ինչպես նաև անձի արժանապատվությունը նվաստացող հրապարակային ցանկացած խոսք անթույլատրելի է: Ատելությունը, սպառնալիքը կամ բռնության կոչը չի պաշտպանվում խոսքի ազատության երաշխիքներով:

ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները երաշխավորում են բոլորի հավասարությունն օրենքի առջև և յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը:

Սահմանադրությունն ամրագրում է նաև, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

Իբրև մարդու հիմնական իրավունք՝ Սահմանադրությամբ երաշխավորվում է մարդու արժանապատվության անխախտելիությունը:

Ըստ այդմ, պետության իրավասու մարմինները կրում են հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ապահովման պարտականությունը:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշտական ուսումնասիրության են ենթարկվել զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ սոցիալական ցանցերի հրապարակումները:

Արդյունքում, պետք է արձանագրել, որ ինչպես 2018 թվականի, այնպես էլ 2019 թվականի ընթացքում ուսումնասիրությունները վկայել են արժանապատվությունը նվաստացնող կամ վիրավորող ու ատելության խոսքի ու բռնության ակնհայտ աճի մասին, ինչը նպաստում էր իրավիճակի լարմանը:

Բռնությունը կամ բռնության սպառնալիքն անթույլատրելի են սկզբունքորեն՝ անկախ նրանից՝ երբ և ում կողմից է արվում կամ ում է ուղղված: Դրանք վտանգում են մարդու իրավունքների համակարգը երկրում և խաթարում համերաշխությունը հասարակությունում: Առանց այդ էլ վիրավորանքն ու ատելության խոսքը վտանգավոր չափերի են հասել:

Ավելին, իրենց հայտարարություններում առանձնապես պետք է զգույշ լինեն այն անձինք, ովքեր զբաղեցնում են պետական պաշտոն, ում քաղաքացին ընկալում է պետության ներկայացուցիչ: Ընդ որում, որքան բարձր է անձի պաշտոնն ու ստանձնած պատասխանատվությունը, այնքան ավելի բարձր են պահանջները նրա վարքագծի ու խոսքի նկատմամբ: Անթույլատրելի են նաև պետական մարմինների կողմից իրավական բովանդակությունից զուրկ և թեմային առնչություն չունեցող այնպիսի ձևակերպումներն ու գնահատականները, որոնք կարող են հասարակության մոտ զգայական արձագանքներ առաջացնել կամ անմիջականորեն նպաստել դրանց ձևավորմանը:

Օրինակ՝ առանձին դեպքերում պաշտոնատար անձինք անում են հայտարարություններ ու տալիս գնահատականներ, որոնք ակնհայտորեն առաջացնում են անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ հասարակական

ընկալումներ այն պայմաններում, երբ առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: Արդյունքում, առաջանում է հանրային բարձր ճնշում դատարանի նկատմամբ:

Սա այն գործոններից է, որ նպաստել է նաև փաստաբանների մասնագիտական աշխատանքի վերաբերյալ սխալ ընկալումների ձևավորմանը, սոցիալական մեղիայում փաստաբաններին ուղղված վիրավորական մեկնաբանություններին ու նույնիսկ սպառնալիքներին: Այսպիսի մեկնաբանություններ են արձանագրվել նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնող մի շարք անձանց կողմից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փաստաբանը ներկայացնում ու պաշտպանում է անձի, ում պետությունը կասկածում կամ մեղադրում է կոնկրետ, բայց ենթադրյալ հանցանքի կատարման մեջ: Փաստաբանի առաքելությունն է այդ անձի համար քրեական վարույթի ընթացքում ապահովել որակյալ իրավաբանական օգնություն, իրավական պատշաճ պաշտպանություն մեղադրանքից: Սա որևէ կերպ չի նշանակում, թե փաստաբանն արդարացնում է հանցագործությունները կամ ապահովում անպատժելիություն<sup>182</sup>:

Դիտարկումը վկայում է, որ առկա են նման ընկալումների խորացման վտանգավոր միտումներ՝ առավել ևս հաշվի առնելով, որ ակնհայտորեն ավելացել է այն անձանց թիվը, ովքեր ընդգրկված են սոցիալական ցանցերում քննարկումներին: Ընդ որում, զգալի թիվ են կազմում նաև առերևույթ կեղծ օգտատերերը, ում մեկնաբանություններն առանձնանում են ագրեսիվությամբ: Այս ամենն իր հերթին հանգեցրել է այլակարծության հանդեպ անհանդուրժողականության խորացման<sup>183</sup>:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային հայտարարությամբ բազմիցս կոչեր է արել հանրային, այդ թվում՝ քաղաքական ու հասարակական գործիչներին հրապարակային խոսքում զերծ մնալ ցանկացած այնպիսի ձևակերպումից, որը կարող է ընկալվել՝ որպես բռնություն, բռնության սպառնալիք կամ անգամ բռնության հավանականություն և առաջացնել լարվածություն<sup>184</sup>:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա նման իրավիճակ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունն ինքը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների ձևավորմանը, միննույն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու համար:

Բանն այն է, որ սոցիալական ցանցերում իրար վիրավորելն ու արժանապատվությունը նվաստացնելը կարող է առավել վտանգավոր հետևանքներով տեղափոխվել իրական կյանք: Մինչդեռ, նմանատիպ դեպքերում խնդրի մասին պետք է տեղեկացնել պատկան մարմիններին, այլ ոչ թե դիմել «ինքնադատաստանների»: Պետությունն էլ իր հերթին պետք է ապահովի արագ և արդյունավետ արձագանքը:

Ուստի, վերոնշյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է սոցիալական ցանցերում չներքաշվել այնպիսի «քննարկումների» մեջ, որոնք ծաղրում, վիրավորում կամ նվաստացնում են մարդու արժանապատվությունը:

<sup>182</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքները» գլխում:

<sup>183</sup> Տե՛ս «Քրեական գործերի քննության գործընթացում նկատվում են իրավունքների ոտնահարման վտանգավոր միտումներ», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/510> հղումով, 11.08.2018թ.:

<sup>184</sup> Տե՛ս «Քաղաքական խոսքում անգամ բռնության հնարավորության մասին հիշատակումը նույնքան բացարձակ մերժելի է, որքան ցանկացած այլ ոլորտում», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/957> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության կենտրոնում են եղել 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին առնչվող դատական վարույթի հետ կապված գործընթացները:

Արդյունքում, Պաշտպանի աշխատակազմի նպատակային դիտարկումը ցույց է տվել, որ համացանցում ու հատկապես սոցիալական ցանցերում բարձր է անհանդուրժողականությունը, հնչում է ատելության խոսք, առկա են սպառնալիքներ ու անզամ բռնության կոչեր: Այս կապակցությամբ հանրային պաշտոն զբաղեցնող և հանրային գործունեություն ծավալող անձինք հատկապես պարտավոր են խստորեն պահպանել երկրի Սահմանադրությամբ, օրենքներով կամ իրավական մյուս ակտերով իրենց վերապահված իրավական կարգավիճակի սահմանները և սեփական վարքագծի օրինակով նպաստել համերաշխության մթնոլորտի ու փոխադարձ հարգանքի երաշխավորմանը<sup>185</sup>:

Հատկապես մտահոգիչ է վերոնշյալ գործընթացներում երեխաներին ներգրավելու փորձերը: Այսպես, 2019 թվականի մայիսի 14-ին Երևանի ընդհանուր իրավասությունների դատարանի բակում բողոքի ակցիայի ժամանակ երկու մասի բաժանված ակցիաներն ուղեկցվել են փոխադարձ վիրավորանքներով, անհանդուրժողականություն ու ատելության խոսք պարունակող վանկարկումներով: Ակցիային մասնակցել են նաև երեխաներ: Նրանց մոտ առկա պաստառների վրա նույնպես եղել են վիրավորանքի, անհանդուրժողականության ու ատելության խոսքի տարրեր պարունակող գրառումներ<sup>186</sup>:

Լրատվամիջոցներում տարածված տեսանյութերում երեխաներն իրենք են նշել, որ մասնակցում են ակցիային առանց ծնողների իմացության և չեն կարողացել հստակ բացատրել իրենց մասնակցության նպատակը, ինչպես նաև չեն կարողացել բացատրել իրենց պարզած պաստառների վրայի գրառումները<sup>187</sup>:

Որոշ դեպքերում սոցիալական ցանցերում վիրավորանքն ու ատելության խոսքը, մասնավոր կյանքին միջամտությունը իրականացվում է մասնագիտական քննարկումներն ու պաշտոնական իրավական ընթացակարգերն անտեսելու ու հարցադրումներն առավելապես հուզական դիտանկյունից քննարկելու պայմաններում:

Օրինակ, հաշվի առնելով 2019 թվականին դատապարտյալի ներման գործընթացի շուրջ քննարկումների վերաբերյալ հարցի հասարակական լայն արձագանքը՝ Մարդու իրավունքների պաշտպանն անթույլատրելի է համարել, որ քննարկումը զուգորդվում է հարցի, այդ թվում՝ հանցանքի համար պատիժ կրող անձի, նրա կնոջ, հարցի վերաբերյալ կարծիք հայտնող այլ անձանց նկատմամբ վիրավորանքով և նրանց մասնավոր ու ընտանեկան կյանքին շարունակական միջամտությամբ: Դիտարկմամբ արձանագրվել են նաև տուժողի իրավահաջորդների նկատմամբ վիրավորանքի, նրանց մասնավոր և ընտանեկան կյանքին միջամտության ու կրկնակի զոհացման (վիկտիմիզացիայի) դեպքեր:

Իհարկե, որևէ հարցի հանրային ազատ քննարկումը ժողովրդավարական կարևոր ձեռքբերում է: Դրանով հանդերձ՝ ցանկացած այդպիսի քննարկում պետք է ընթանա այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու համերաշխության մթնոլորտում:

<sup>185</sup> Տե՛ս «Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են գործել իրենց կարգավիճակի սահմաններում և ցուցաբերել զսպվածություն դատարանի վարույթում գտնվող գործով», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/854> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>186</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը հորդորում է ձեռնպահ մնալ երեխաներին բողոքի ակցիաների ներգրավելու այնպիսի փորձերից, որոնք չեն բխում նրանց շահերից», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/781> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>187</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը հորդորում է ձեռնպահ մնալ երեխաներին բողոքի ակցիաների ներգրավելու այնպիսի փորձերից, որոնք չեն բխում նրանց շահերից», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/781> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Այս հարցում չափազանց կարևոր է նաև լրատվամիջոցների ու լրագրողների դերը: Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը բոլոր լրատվամիջոցներին ու լրագրողներին խնդրել է հեռացնել վիրավորանք կամ ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները՝ անկախ նրանից դրանք արվում են առերևույթ կեղծ, թե իրական օգտատերերի կողմից<sup>188</sup>:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հաճախ հաշվի չի առնվում արտահայտվող խոսքի բովանդակությունը կամ դա արվում է միայն կարծիք հայտնողի անձը հաշվի առնելով: Մինչդեռ, այն վտանգավոր է երկրում համերաշխության ու հանդուրժողականության և ի վերջո մարդու իրավունքների համակարգի տեսանկյունից:

Ավելին, մարդիկ շատ հաճախ տեղեկացված չեն կարծիքի արտահայտման իրավունքի և ատելության խոսքի սահմանագծի մասին, ինչն ավելի է դժվարացնում դրա դեմ պայքարը:

Այս առումով չափազանց կարևոր են պետության՝ ատելության խոսքի դեմ պայքարի այնպիսի ամուր իրավական հիմքեր ստեղծելուն ուղղված ջանքերը, որոնք յուրաքանչյուր դեպքում կապահովեն անհրաժեշտ հավասարակշռություն խոսքի ազատության և այլոց իրավունքների և արժանապատվության պաշտպանության միջև:

Արդյունքում, ՀՀ արդարադատության նախարարությունը շրջանառության մեջ է դրել և հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է քրեականացնել բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը:

Վերոնշյալ նախագիծը ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

Նախ, հարկ է նշել, որ ատելության խոսքի դեմ պայքարում պետությունների պարտավորություններն ամրագրող միջազգային իրավական գործիքների, ինչպես նաև եվրոպական երկրների քրեական օրենսդրության մոտեցումները հիմք են տալիս ընդհանուր եզրահանգման, որ «ատելության խոսքը» իբրև խոսքի ազատության չարաշահման և մարդու իրավունքների դեմ ոտնձգող ոչ իրավաչափ երևույթ, պայմանավորվում է որևէ պաշտպանվող հիմքով անձի կամ անձանց խմբի նկատմամբ «ատելության» դրսևորմամբ: Ուստի, արարքի քրեականացումը պետք է պայմանավորված լինի հստակ խնդիրների կանխարգելմամբ:

«Ատելության խոսքի»՝ միջազգային իրավական ընկալմամբ բովանդակության և Նախագծով առաջարկվող լուծումների համադրումը, սակայն, ցույց է տալիս, որ կարծիքի ներկայացված նախագծի կարգավորումները սահմանում են ոչ այնքան ատելության խոսքի առավել վտանգավոր դրսևորումները, որքան, ըստ էության, քրեականացնում է անձի կյանքի կամ առողջության դեմ ոտնձգությանը՝ բռնության հնարավոր գործադրմանն ուղղված գործողությունները՝ իբրև նման ոտնձգությունների կանխման քրեաիրավական գործիք: Ուստի, առաջարկվել է լրացվող հանցակազմը խմբագրել՝ պաշտպանվող հատկանիշներն օրենսդրորեն ամրագրելով կա՛մ իբրև հանցակազմի պարտադիր հատկանիշ, կա՛մ որպես արարքի ծանրացնող հանգամանք: Արդյունքում, նշյալ առաջարկն ընդունվել է, և Նախագծով կատարվել է փոփոխություն:

Մասնավորապես, նախագծի լրամշակման արդյունքում նախատեսվում է օրենսգիրքը լրացնել 226.2-րդ հոդվածով<sup>189</sup>, որը սահմանում է քրեական պատասխանատվություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ

<sup>188</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը դատապարտյալի ներման գործընթացի շուրջ քննարկումների վերաբերյալ», հասանելի է [https://ombuds.am/am/site/ViewNews/673\\_հղումով](https://ombuds.am/am/site/ViewNews/673_հղումով), 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>189</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հասանելի է [http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=56051\\_հղումով](http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=56051_հղումով):

սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար<sup>190</sup>:

Ատելության խոսքի դեմ պայքարին ուղղված ՀՀ օրենսդրության բարեփոխումների քննարկումների նպատակով Ազգային ժողովում ստեղծվել է նաև աշխատանքային խումբ<sup>191</sup>:

Մինչույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ատելության խոսքի ծայրահեղ դրսևորումների քրեականացումը խնդրի դեմ պայքարի միայն մեկ ուղղություն է: Ատելության խոսքի այլ դրսևորումները ենթադրում են կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

Այս առումով, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության վերաբերյալ կարծիքում նշվել է, որ պետք է թիրախավորվեն ատելության խոսքի այլ կառուցակարգեր, օրինակ՝ իրականացնել իրազեկման աշխատանքներ, լրատվության միջոցների հետ պարբերաբար քննարկումների միջոցով նպաստել ատելության խոսքի դրսևորման դեպքերի նվազեցմանը:

Արդյունքում, որպես ռազմավարական ուղղություններ ամրագրվել են ատելության խոսքի համար պատասխանատվության սահմանումը և իրազեկվածության բարձրացումը<sup>192</sup>:

Խնդրի կանխարգելման հարցում առանցքային դերակատարություն ունի նաև զանգվածային լրատվամիջոցների դերը: Այս առումով, հարկ է ընդգծել, որ սոցիալական ցանցի կեղծանունով կամ անանուն աղբյուրից վերցված տեղեկությունների տարածումը լրատվամիջոցների կամ լրագրողների կողմից հակասում է «պատասխանու լրագրություն» և «բարեխիղճ հայտարարություն» (fair comment) լրագրողական մասնագիտական, ինչպես նաև օրինականության և կոնվենցիոն պահանջներին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատության իրականացումը կապված է «պարտավորությունների» և «պատասխանատվության» հետ, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխիղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով»<sup>193</sup>: Պատասխանատու լրագրության սկզբունքը պահանջում է, որ լրատվամիջոցները օգտվեն վստահելի աղբյուրներից, քանի որ առաջին, առաջնահերթ է, որ տարածված տեղեկությունը լինի ճշգրիտ ու վստահելի, երկրորդ, անանուն աղբյուրից վերցրած տեղեկության համար պատասխանատվության կարող է ենթարկվել լրատվամիջոցը՝ հատկապես ատելության խոսքի դեպքում:

<sup>190</sup> «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 2020 թվականի մարտի 5-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ [http://parliament.am/draft\\_history.php?id=11244](http://parliament.am/draft_history.php?id=11244):

<sup>191</sup> Տե՛ս «ԱԺ-ում ատելության խոսքի դեմ պայքարող աշխատանքային խումբ է ստեղծվել», հասանելի է <https://www.panarmenian.net/arm/news/276098/> հղումով:

<sup>192</sup> Տե՛ս ՀՀ կառավարության «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշումը, կետ 42, 44:

<sup>193</sup> Տե՛ս Բլադետ Տրոմսոն ու Տենսասն ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaas v. Norway) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը (ՄՊ), գանգատ թիվ 21980/93, կետ 65:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ճանաչելով համացանցի «կարևոր դերը» «հանրության համար լուրերի մատչելիությունն ապահովելու և ընդհանրապես տեղեկությունների ավելի արագ տարածման գործում, այնուամենայնիվ, նշել է, որ համացանցը տպագիր մամուլից տարբերվող տեղեկատվության և հաղորդակցության միջոց է: Համացանցում տեղադրվող բովանդակությունն ու դրա միջոցով կատարվող հաղորդակցությունները մարդու իրավունքների և ազատությունների իրացմանը վնաս պատճառելու ավելի մեծ սպառնալիք են պարունակում, քան մամուլը<sup>194</sup>:

Դելֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ օգտատերերի կողմից համացանցում արտահայտչական գործունեության ծավալումն արտահայտվելու ազատության աննախադեպ հնարավորություն է ստեղծում: Սա անվիճելի է և նախկինում այլ առիթների ժամանակ Դատարանի կողմից արդեն ճանաչվել է<sup>195</sup>: Մակայն, այս առավելությունների հետ մեկտեղ որոշակի վտանգներ ևս կարող են ստեղծվել: Զրպարտիչ և այլ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ ատելության խոսքը և բռնություն հրահրող կոչերը կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում: Այս երկու միմյանց հակասող իրականություններն ընկած են այս գործի հիմքում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն, որ Կոնվենցիայի 10-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներն արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի: Այսպիսով, չնայած Դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ խոսքի ազատության իրացման տեսանկյունից համացանցը կարևոր առավելություններ է տալիս, այն նաև հաշվի է առնում, որ զրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա անձնական իրավունքների խախտման համար արդյունավետ միջոց:

Դատարանը, սույն գործով անդրադառնալով նաև համացանցում ատելության խոսքի և բռնության հրահրող կոչերի տարածումը սահմանափակելու պարտականությանը, նշել է, որ ատելության խոսքի արդյունքում պոտենցիալ տուժողի՝ համացանցն անընդմեջ մշտադիտարկելու հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան ընդարձակ կոմերցիոն համացանցային լրատվական պորտալի՝ այդպիսի մեկնաբանությունների տեղադրումը կանխելու կամ դրանք արագ հեռացնելու հնարավորությունները՝ կարևորելով իր կողմից ներդրված «նկատելուն պես հեռացնելու» համակարգի (notice-and-take-down system) կիրառումը<sup>196</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է լայնամասշտաբ արշավներ իրականացնել, ինչպես նաև հասարակության լայն շերտերի ներգրավմամբ կազմակերպել դասընթացներ ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության, այլակարծության և խոսքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի անհրաժեշտության վերաբերյալ:

<sup>194</sup> Տե՛ս «Պրավոյե Դելոյի» խմբագրական խորհուրդը և Շտեկելն ընդդեմ Ուկրաինայի (Editorial Board of Pravoye Delo and Shtekel v. Ukraine) գործով 2011 թվականի մայիսի 5-ի վճիռը, զանգատ թիվ 33014/05, կետ 63:

<sup>195</sup> Տե՛ս Ահմեդ Յիլդիրիմն ընդդեմ Թուրքիայի (Ahmet Yildirim v. Turkey), թիվ 3111/10, կետ 48, ՄԻԵԴ 2012, և (թիվ 1 և 2)Թայմս Նյուսփեյփերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Times Newspapers Ltd v. UK), թիվ 3002/03 և 23676/03, կետ 27:

<sup>196</sup> Տե՛ս Դելֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի (Delfi AS v. Estonia) գործով 2015 թվականի հունիսի 16-ի վճիռը, զանգատ թիվ 64569/09, կետեր 110, 157-159 (հայերեն թարգմանությամբ):



4. Անձնական տվյալների պաշտպանությունը «Դատալեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում

2019 թվականի ընթացքում վեր հանված խնդիրներից է անձնական տվյալների պաշտպանության օրենսդրական ոչ լիարժեք կարգավորվածությունը դատական ակտերի հրապարակման շրջանակում:

Այսպես, Պաշտպանին ներկայացված մի շարք դիմումներով քաղաքացիները բարձրաձայնել են այն հարցը, թե ինչ ընթացակարգով կարող են տեղեկատվական համակարգից հեռացվել իրենց անձնական տվյալներ, այդ թվում՝ անձնական և ընտանեկան կյանքի մանրամասներ պարունակող դատական ակտերը:

Խնդրի կապակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ անձնական տվյալներ պարունակող դատական ակտերի ապանձնավորման կարգին վերաբերող օրենսդրական կարգավորումները նախատեսվել են 2018 թվականից սկսած:

Այսպես, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը, որն ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, ամրագրում է հրապարակման ենթակա դատական ակտերում զետեղված անձնական տվյալների ապանձնավորման վերաբերյալ կարգավորումներ:

Սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը հրապարակվում են ապանձնավորված կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել անձնական տվյալների ապանձնավորման այլ դեպքեր: Ապանձնավորման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

Ըստ այդմ, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան ապանձնավորվում են ֆիզիկական անձանց վերաբերյալ սահմանված անձնական տվյալները: Միննույն ժամանակ, հրապարակման ենթակա դատական ակտում դատավարության մասնակցի՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դիմումի հիման վրա կարող են ապանձնավորվել նաև օրենսդրությամբ սահմանված՝ ֆիզիկական անձանց վերաբերյալ անձնական տվյալ հանդիսացող այլ տեղեկություններ:

Հարկ է նկատել, որ «Դատական համակարգ» համակարգչային ծրագիրն ավտոմատ կերպով դատական ակտի տեքստում նույնականացնում և ապանձնավորում է սույն կարգում նշված ապանձնավորման ենթակա անձնական տվյալները՝ պահպանելով ապանձնավորման գործընթացին ձեռքով միջամտելու հնարավորությունը, իսկ անձնական տվյալների ապանձնավորման նկատմամբ հսկողությունն իրականացնում է տվյալ ակտն ընդունող դատավորը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ ստացվում է, որ անձնական տվյալների ապանձնավորման գործընթացն իրականացվում է կայացվող դատական ակտի ընդունման փուլում, այսինքն՝ սույն կարգավորումները տարածվում են Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշման ընդունումից հետո կայացրած դատական ակտերի վրա: Ստացվում է նաև, որ որոշման ընդունումից առաջ հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման կարգ սահմանված չի եղել: Ասվածը հիմք է տալիս ենթադրելու, որ ապանձնավորման գործող կարգը կիրառելի է ընթացիկ դատական գործերի նկատմամբ: Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրված դիմումները վերաբերել են մինչև 2018 թվականը կայացված դատական ակտերի ապանձնավորմանը: Ավելին, դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիրը դեռևս ներդրված չէ, և համապատասխան դիմումի հիման վրա ներկայում հնարավոր է սահմանափակել միայն

դատական գործի վիճակագրական քարտի հասանելիությունը: Այս մասին է վկայում ՀՀ քարձրագույն դատական խորհրդի տրամադրած տեղեկատվության արդյունքները:

Սա նշանակում է, որ չնայած առկա օրենսդրական պահանջի՝ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալները չեն ապանձնավորվում: Արդյունքում, չի պահպանվում մարդու անձնական տվյալների գաղտնիությունը: Սա իր հերթին նշանակում է, որ մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի մանրամասներն առանց որևէ ողջամիտ հիմնավորման շարունակում են հասանելի լինել հրապարակային տիրույթում: Ստացվում է՝ բավական է մարդը գոնե մեկ անգամ առնչվի դատական համակարգի հետ, իր անձնական ու ընտանեկան կյանքը դառնում է հանրային սեփականություն: Նկարագրվածն անընդունելի է մարդու իրավունքների տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հնարավորինս սեղմ ժամկետում ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիրը,

2. հասարակությանն իրազեկել այն մասին, որ ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված դիմումի հիման վրա հնարավոր է սահմանափակել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների հասանելիությունը:

ԲԱԺԻՆ 8. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Քրեական արդարադատությունն այն ոլորտներից է, որտեղ բարձր են մարդու իրավունքների ոտնահարման ռիսկերը: Այս ոլորտը մի կողմից կարևորագույն նշանակություն ունի, քանի որ կոչված է ապահովելու հանցավոր ոտնձգություններից պետության ու մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչը բարձրացնում է թե՛ քրեական հետապնդում իրականացնող, թե՛ դատական մարմինների պատասխանատվությունն այդ խնդիրների լուծման հարցում: Մյուս կողմից, քանի որ մարդը այս ոլորտ հիմնականում ներգրավվում է հարկադրանք կիրառելու իրավասություն ունեցող և հրապարակային չգործող, իսկ մի շարք դեպքերում էլ գաղտնիության պայմաններում գործող մարմինների կողմից, մեծանում է նրա իրավունքների ոտնահարման ռիսկը: Ուստի, քրեական արդարադատության ոլորտում հատկապես պետք է ամուր լինեն մարդու իրավունքների երաշխիքները, իսկ իրավապահ մարմինների ու դատարանի՝ գործողություններն ու անգործությունը, որոշումները վիճարկելու ընթացակարգերը՝ արդյունավետ:

Ցավոք, մեր երկրում քրեական արդարադատության համակարգը բնույթով այնպիսին է, որ ստեղծում է մարդու իրավունքների ոտնահարման լուրջ ռիսկեր, և դա տարիների ընթացքում ստացել է տարբեր դրսևորումներ: Պատճառները, իհարկե, տարբեր են. նախաքննության չարդարացված մեծ դերը, քրեական գործերի ծանրության կենտրոնը իրավապահ մարմիններից դատարաններ չտեղափոխելը, մինչդատական վարույթի ընթացքում փաստաբանի անհավասար հնարավորությունները քրեական հետապնդման մարմինների համեմատությամբ և այլն:

Քրեական արդարադատության ոլորտը բնույթով այնպիսին է, որ մարդու իրավունքների խախտումների վտանգներն այստեղ առավել մեծ են ու շատ հարցեր տարիների սխալ պրակտիկայի արդյունք է: Այդ պրակտիկայի յուրաքանչյուր արատավոր դրսևորման վերացումը պետք է դրվի ինստիտուցիոնալ, օրենսդրական հիմքերի վրա, որպեսզի բացառվի իրավունքը խախտող պրակտիկայի որևէ դրսևորում: Այսպես, Հայաստանի իրավական համակարգի համակարգային խնդիրներից տարիներ շարունակ եղել է նախնական կալանքների կիրառության անթույլատրելի պրակտիկա կամ մարդկանց բերման ենթարկելը իրավունքների կոպիտ խախտումներով: 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների իրադարձություններից հետո, երբ երկրում փոխվեց քաղաքական իշխանությունը, նշված ոլորտներում ունեցանք զգալի բարելավումներ: Մասնավորապես, ակնհայտորեն նվազել են կալանքի համար դատարան ներկայացվող միջնորդությունները կամ բերման ենթարկելու ընթացքում մարդու իրավունքների խախտումները: Սա, իհարկե, պետք է համարել ողջունելի:

Սակայն այս ամենը դեռ դրված չէ ինստիտուցիոնալ հիմքերի վրա, չկա համապատասխան օրենսդրություն, դեռ շարունակում են գործել «ավանդույթներ», որոնք դառնում են մարդու իրավունքների խախտումների պատճառ: Սա նշանակում է, որ պետք է առաջնահերթ ամրապնդել օրենսդրությունը և թույլ չտալ, որպեսզի նման հարցերը կապված լինեն որևէ քաղաքական բնույթի փոփոխությունից:

Այս առումով, քրեական արդարադատության ոլորտի համակարգային բնույթի հարցերից մեկը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմանը: Այն 2019 թվականի ընթացքում ևս չընդունվեց: Նախագիծը սկզբունքային փոփոխություններ պարունակող փաստաթուղթ է, որ կարող է լուծել համակարգային նշանակության բազմաթիվ խնդիրների ու մարդու իրավունքների խախտումների բազմաթիվ պատճառների

վերացմանը՝ սկսած մարդու նկատմամբ քրեական հետապնդում սկսելուց մինչև դատավարության ավարտը:

2019 թվականի ընթացքում դատական ու իրավապահ համակարգի մարմինների հետ Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունն ընդհանուր առմամբ արդյունավետ է եղել:

2019 թվականի ընթացքում լուծումներ են ստացել ինչպես Պաշտպանը բարձրացրած կոնկրետ դեպքերով, այնպես էլ համակարգային բնույթ ունեցող խնդիրներ:

Հարկ է ընդգծել նաև, որ ոլորտի պատասխանատու պետական մարմինների կողմից անհրաժեշտ տեղեկություններ են տրամադրվել ինչպես գրավոր ընթացակարգով քննարկված անհատական բողոքների վերաբերյալ, այնպես էլ 2019 թվականի տարեկան ամփոփիչ հաղորդման համար Մարդու իրավունքների պաշտպանի առաջադրած հարցադրումների կապակցությամբ: Դրական է, որ առանձին մարմիններ իրականացրել են նաև նոր ուսումնասիրություններ (օրինակ՝ Դատախազություն, Ոստիկանություն, և Քննչական կոմիտե), ինչը Մարդու իրավունքների պաշտպանին հնարավորություն է տվել իրականացնել ավելի համապարփակ ուսումնասիրություններ:

ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը

Անմեղության կանխավարկածի սկզբունքն արդար դատաքննության իրավունքի անփոխարինելի բաղադրիչ է: Այս հիմնարար սկզբունքի պահպանման պահանջը վերաբերում է բոլորին, այդ թվում՝ պաշտոնատար անձանց ու լրատվամիջոցներին՝ յուրաքանչյուրին ըստ իրավասության կամ կարգավիճակի: Իրավական ցանկացած ընթացակարգ պետք է իրականացվի դրա համար նախատեսված պարտադիր կանոնների խստիվ պահպանմամբ: Այդ պարտադիր կանոններից շեղումը չի կարող արդարացվել անգամ իրավաչափ որևէ նպատակով:

Անկյունաքարային նշանակության այդպիսի պահանջ է քրեադատավարական ցանկացած ընթացակարգի ժամանակ անմեղության կանխավարկածի երաշխավորումը: Անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը: Այն պետք է խիստ պահպանվի ցանկացած գործով վարույթի ընթացքում՝ անկախ նրանից, թե ինչ արարքի մասին է խոսքը, հասարակության շրջանում ինչ վարկ ունի անձը և այլն:

Այս պահանջն առաջնահերթ ուղղված է հանրային իշխանության բոլոր մարմիններին ու պաշտոնատար անձանց և նշանակում է, որ նրանք պարտավոր են ձեռնպահ մնալ անձի մեղավորության մասին կանխակալ ու վաղաժամ գնահատականներից՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

Իրենց հրապարակային դիրքորոշումներում կամ հայտարարություններում առանձնապես պետք է զգույշ լինեն այն մարմինները, որոնք պատասխանատու են քրեական հետապնդման համար և ում քաղաքացին ընկալում է պետության՝ իրավախախտումների, այդ թվում նաև հանցավորության դեմ պայքարի ոլորտի մարմին:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդրահարույց իրավիճակներ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների, դրա արդյունքում արդարադատություն իրականացնող և դրանց օժանդակող մարմինների նկատմամբ ճնշման ձևավորմանը, միևնույնն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու, դատական իշխանության անկախության բարձր արժեքի երաշխավորումը, ինչպես նաև այդ գործընթացի մասնակիցների մասնագիտական աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը, ինչպես նաև ձևավորել անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի մասին հասարակական ընկալում կամ նպաստել դրան: Դա էլ իր հերթին առաջացնում է այլ հետևանքներ. բարդություններ փաստաբանի աշխատանքում, քանի որ որոշ դեպքերում նրանց հանրությունը սկսում է ընկալել՝ որպես «հանցագործների պաշտպաններ», բարդություններ լրագրողի աշխատանքում, ճնշում դատարանի նկատմամբ և այլն: Ուստի, անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է անշեղորեն պահպանվի ցանկացած քրեական գործով վարույթի ընթացքում՝ անկախ նրանից, թե ինչ հանցավոր արարքի մասին է խոսքը, հասարակության շրջանում ինչ վարկ ունի անձը և այլն:

Մյուս կողմից, հանրային իշխանությունը պետք է գործի թափանցիկության և հաշվետվողականության պահանջների պահպանմամբ: Այս առումով, ողջունելի է այն միտումը, որ իրավապահ մարմիններն առավել մեծ ծավալի տեղեկություններ են տրամադրում հանրությանը իրենց կողմից քննվող գործերի ու դրանց ընթացքի մասին: Հատկապես կարևոր է օբյեկտիվ տվյալներ պարունակող նյութերի տարածումը (օրինակ՝ տեսանյութեր, որոնք հասարակությանը հնարավորություն են տալիս պատկերացում ձևավորել կոնկրետ հանցավոր արարքով պատճառված վնասի չափի կամ բնույթի մասին և այլն):

Այսպիսի պրակտիկան ուղղակիորեն բխում է այդ գործերի նկատմամբ հանրային վստահության և քաղաքացիական վերահսկողության ապահովման հիմնարար գաղափարից: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ կատարված դատավարական գործողություններն ու արդյունքները կարող են ներկայացվել՝ դրանց անհերքելիության և ապացուցված փաստեր լինելու հաստատմամբ: Մա լրջորեն կարող է խաթարել հիմնարար իրավական պահանջն այն մասին, որ որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, և դրանով հանդերձ՝ ապացույցների գնահատման քրեադատավարական սկզբունքները:

Նշվածի հետ միասին, իրավապահ մարմինների կողմից տարածվող իրազեկող տեսանյութերում կամ տեքստային հայտարարություններում հաճախ են լինում վիճահարույց, այդ թվում՝ մինչև դատավճռի կայացումն անձին՝ որպես հաստատված փաստ հանցանքի կատարում վերագրող, անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումներ: Ավելին, 2019 թվականին ևս արձանագրվել են հանցավորության դեմ պայքարի ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից այնպիսի հայտարարություններ, որոնք հասարակությունում ստեղծում էին կոնկրետ քրեական հետապնդման ենթարկվող անձի մեղավորության մասին կանխակալ պատկերացումներ:

Համատարած պրակտիկա է գրեթե յուրաքանչյուր հայտարարության վերջում ծանուցման ձևով անմեղության կանխավարկածի մասին մեջբերումները: Մինչդեռ, ակնհայտ է, երբ հայտարարության տեքստն ինքնին պարունակում է անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումներ, իսկ այդ ծանուցումները պարզապես կրում են ձևական բնույթ և չեն ծառայում նպատակին:

Քննարկվող խնդրի կապակցությամբ 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են անհատական բողոքներ:

Այսպես, Պաշտպանին դիմել է հասարակական կազմակերպության նախագահ նշելով, որ Ոստիկանությունը հրապարակել է տեսանյութ, որտեղ իրեն վերագրվում է առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարելու փաստ: Ընդ որում, ըստ անձի՝ որպես տեղեկությունների աղբյուր նշվում են Ոստիկանության իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները: Անձի պնդմամբ՝ նշված հաղորդագրության հրապարակման օրվա դրությամբ ինքը նույնիսկ կասկածյալի կարգավիճակ չի ունեցել, ավելին՝ մինչ տեսանյութի հրապարակումը ընդամենը մեկ անգամ «հրավիրվել է» Ոստիկանություն:

Պաշտպանի աշխատակազմում տեսանյութի ուսումնասիրմամբ պարզվել է, որ տեսանյութում նկարագրվել է ենթադրյալ հանցագործության կատարման սխեման, ընդ որում դա ներկայացվել է որպես հաստատված փաստ: Թեև տեսանյութում անձի դեմքը չի ցուցադրվել, սակայն հրապարակման բանավոր տեքստն անհրաժեշտ ու բավարար տվյալներ է պարունակել հասարակական կազմակերպությունը և դրա նախագահին հասարակության մեջ նույնականացնելու համար: Տեսանյութով ներկայացված անհատական տվյալների միջոցով հնարավոր է եղել ոչ միայն նույնականացնել անձին, այլև դրանք ձևավորել են անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի մասին կանխակալ

պատկերացումներ: Ավելին, անմեղության կանխավարկածի մասին ծանուցումը տեղադրված է եղել տեսանյութի ոչ այդքան տեսանելի հատվածում՝ մանր տառաչափով:

Ձևավորված հասարակական բացասական ընկալման մասին է վկայել նաև այն, որ, անձի պնդմամբ, տեսանյութի հրապարակումից հետո առանձին բանկեր հրաժարվել են գործարքներ կատարել հասարակական կազմակերպության հետ: Բացի այդ, ըստ Պաշտպանին դիմած անձի, հասարակական կազմակերպության շահառուներից մի քանիսն այդ տեսանյութի հրապարակումից հետո դիմել են կազմակերպությանը և հայտնել, որ չեն ցանկանում շարունակել աշխատել իրենց հետ:

Վերը նշված դիրքորոշումների հաշվառմամբ համապատասխան գրություն է հասցեագրվել Ոստիկանություն: Գրությամբ նաև ընդգծվել է, որ հայտարարության վերջում ծանուցման ձևով անմեղության կանխավարկածի մասին մեջբերումները, երբ հայտարարության տեքստն ինքնին պարունակում է անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումներ, այդ ծանուցումները պարզապես կրում են ձևական բնույթ և չեն ծառայում նպատակին: Դրանից բացի, ընդգծվել է, որ օրենսդրական ձևակերպումը «վազող տողի» միջոցով հրապարակման վերջում տեղադրելն անմեղության կանխավարկածի պահպանման տեսանկյունից բավարար երաշխիք չէ: Ընդգծվել է նաև, որ թեև իշխանությունները կարող են կատարվող քննությունների մասին տեղեկացնել հասարակությանը, այնուամենայնիվ իշխանությունները դա պետք է անեն զուսպ և նրբանկատորեն, ինչպես որ պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ ունեցած հարգանքը:

Բողոքի քննարկման արդյունքում խնդրո առարկա տեսանյութը համացանցից հեռացվել է: Մինևույն ժամանակ Ոստիկանությունը տեղեկացրել է, որ առերևույթ հանցագործության մեջ կասկածվող անձանց վերաբերյալ հրապարակվող տեսանյութերում անմեղության կանխավարկածի սկզբունքի պահանջների առավելագույնս պահպանման նկատառումներից ելնելով դրա վերաբերյալ ծանուցումները կտրվեն նաև ձայնային եղանակով և տեսանյութի վերջում այն կտեղադրվի խոշոր տառաչափով:

Մեկ այլ դեպքով, Պաշտպանին դիմել է քրեական գործով մեղադրյալի պաշտպանը: Նրա պնդմամբ՝ մասնավոր լրատվական միջոցը դեպքի վերաբերյալ հրապարակել է հոդված, որում տեղ են գտել քրեական վարույթով նախաքննական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ինչպես նաև մեղադրյալին անհատականացնող տվյալներ (անուն և ազգանուն, տարիք, բնակության վայր, մականուն), հրապարակվել է մեղադրյալի լուսանկարը: Ըստ փաստաբանի՝ լուսանկարից ակնհայտ է, որ դրանք կատարվել են Ոստիկանության ստորաբաժանումում:

Փաստաբանի պնդմամբ՝ հոդվածում նշված տեղեկությունները և լուսանկարները տիրապետել են բացառապես Ոստիկանության ծառայողները, իսկ տեղեկատվության արտահոսքի արդյունքում խախտվել է իր պաշտպանյալի անձնական տվյալների պաշտպանության, ինչպես նաև անմեղության կանխավարկածի իրավունքները:

Նշված հոդվածը ևս Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է: Ուսումնասիրմամբ պարզվել է, որ նույն քրեական գործով մեղադրյալի դատավարական կարգավիճակ են ունեցել երեք անձ, որոնց վերաբերյալ անհատականացնող տվյալներ և լուսանկարներ են հրապարակվել: Ընդ որում, հատկանշական է, որ երեք լուսանկարում էլ մեղադրյալները նկարահանվել են մինևույն վայրում, ենթադրաբար՝ Ոստիկանություն ստորաբաժանումում: Նշված բողոքը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

Վերը նշվածի հաշվառմամբ Պաշտպանը վերահաստատում է դիրքորոշումն առ այն, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է խստորեն պահպանվի ոչ միայն իրավապահ մարմինների, այլև պետական մյուս բոլոր մարմինների կողմից: Սա նաև

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն իրավաբանության հրամայականն է:

Այսպես, Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը եկել է այն հետևության, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը (Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան): Տվյալ գործով Ֆրանսիայի պառլամենտի պատգամավորի սպանության քննության վերաբերյալ հասարակությանը տեղեկություններ տալու նպատակով հրավիրված մամլո ասուլիսի ընթացքում Ֆրանսիայի իրավապահ մարմնի ներկայացուցիչներից մեկը հայտարարել էր, որ տվյալ անձը հանցակցել է սպանությանը<sup>197</sup>: Չնայած դրան՝ Ֆրանսիայի Կառավարությունը Եվրոպական դատարանում պնդել էր, որ տվյալ հայտարարությունը վնաս չի հասցրել անձի անմեղության կանխավարկածի իրավունքին, քանի որ այն կրել է տեղեկատվական բնույթ և չի կաշկանդել դատարանին, ավելին՝ բոլոր պնդումները կարող էին հերքվել հետագա քննության ընթացքում:

Եվրոպական դատարանը, սակայն, չի համաձայնել նման մեկնաբանմանը, քանի որ, Դատարանի դիրքորոշմամբ, բարձրաստիճան պաշտոնատար անձինք առանց որևէ պարզաբանման կամ ենթադրության համոզել են հասարակությանը հավատալ, որ դիմողը մեղավոր է, չնայած նրան, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքները դեռ հետազոտված չեն եղել: Տվյալ գործով Եվրոպական դատարանը հաստատել է, որ պաշտոնատար անձանց իրավունք է տրված հանրությանը տեղեկացնելու քննության ընթացքի մասին, սակայն միշտ անհրաժեշտ է նշել, որ այս կամ այն անձը, ճիշտ է, կասկածվում կամ մեղադրվում է հանցագործության կատարման մեջ, բայց նրա մասնակցությունը հանցագործության կատարմանը պետք է հաստատի դատարանը: Այդ պարագայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտում չի տեսնում:

Հատկանշական է, որ վերը նշված դիրքորոշմանը հանգելիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկել է անմեղության կանխավարկածի ու արտահայտվելու ազատության հարաբերակցությունը, նշելով, որ անմեղության կանխավարկածի պահպանման սկզբունքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ իշխանությունների համար հանրությանը քննվող քրեական գործերի մասին տեղեկություններ տրամադրելու համար, այնուամենայնիվ իշխանությունները դա պետք է անեն զուսպ և նրբանկատորեն, ինչպես որ պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ ունեցած հարգանքը:

Ընդ որում, Եվրոպական դատարանի որոշումից հետևում է, որ ոստիկանության, ինչպես նաև մյուս գերատեսչությունների պաշտոնատար անձանց կողմից զանգվածային լրատվության միջոցներում արվող հայտարարությունները, որոնցում մինչև դատական քննությունը պնդում են որոշակի անձի հանցագործ լինելու մասին, համարվում է անմեղության կանխավարկածի խախտում: Եվրոպական դատարանն առանձին շեշտել է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատարանի կամ դատավորի, այլև պաշտոնատար այլ անձանց կողմից:

Կարևոր է նաև նշել, որ անմեղության կանխավարկածի պահպանման անհրաժեշտությունը չի բացառում քրեական հետապնդման մարմինների կողմից անձին հանցանքի կատարման փաստ վերագրելը, կասկածանքի կամ մեղադրանքի ձևով քրեական հետապնդում իրականացնելը: Այսպես, 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՌ-871 որոշմամբ արձանագրվել է, որ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության

<sup>197</sup> Տե՛ս Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allenet de Ribemont v. France) գործով 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, կետեր 36-37:



կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել: Ուստի, կոնկրետ քրեական գործով վարույթն իրականացնող քննիչի, հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող կամ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի հայտարարությունն անձի մեղավորության մասին չի կարող դիտվել անմեղության կանխավարկածի խախտում: Տրամաբանությունն այն է, որ եթե մեղադրանքի կողմը վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով չի հանգում հետևության, որ անձը կատարել է իրեն վերագրվող արարքը, ապա պետք է քրեական հետապնդումն անհապաղ դադարեցվի: Եթե քրեական հետապնդումը շարունակվում է, ապա մեղադրանքի կողմը ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ ձևավորել է դիրքորոշում անձի մեղավորության մասին, ուստի հրապարակային հայտարարություններում ևս կարող է ներկայացնել իր դիրքորոշումը:

Նույնաբովանդակ եզրահանգման եկել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Դակթարասն ընդդեմ Լիտվայի գործով Կառավարությունը նշել է, որ դատախազի որոշումը չի խախտել անմեղության կանխավարկածի իրավունքը, դա արվել է բողոքաբերի կողմից ներկայացված պահանջը՝ վարույթը դադարեցնելու մասին մերժելու նպատակով: Ավելին, Կառավարության դիրքորոշմամբ՝ դատախազը պետք է համոզված լինի, որ մեղադրյալը կատարել է ենթադրյալ հանցագործությունը, հակառակ դեպքում հետապնդումը չպետք է շարունակվի: Այս համատեքստում Դատարանը գտել է, որ իրավունքի խախտման փաստ առկա չէ:

Քննարկման է արժանի նաև այն հարցը, թե արդյոք անձի մեղավորության մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը, թե՛ ոչ: Մանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության որոշմամբ Եվրոպական դատարանը եկել այն եզրահանգման, որ «Հանձնաժողովը նաև հնարավոր համարեց, որ մեղադրյալի դեմ որոշ անբարենպաստ հրապարակումներ, որ գրվում են մինչև դատական քննությունը, օրինակ՝ ի դեմս մամուլում անողոք արշավի, վնասում են անմեղության կանխավարկածի սկզբունքը: Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զանգվածային լրատվության միջոցների նմանօրինակ արշավներն ազդել են դատավորների կամ երդվյալների վրա այն աստիճան, որ նրանք մոռացել են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանության մասին»: Փաստորեն, ըստ Եվրոպական դատարանի մեղադրյալի վերաբերյալ անբարենպաստ հրապարակումները հնարավոր է, որ անմեղության կանխավարկածի խախտման հանգեցնեն, եթե դրանք որևէ կերպ ազդեն դատարանի կարծիքի վրա:

Չնայած դրան, Եվրոպական դատարանը մեկ այլ գործով, քննարկելով մամուլի հրապարակումների առնչությունն անմեղության կանխավարկածի իրավունքին, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ազգային դատարանները, որոնք ամբողջովին կազմված են մասնագետ դատավորներից, սովորաբար, ի տարբերություն երդվյալ ատենակալների անդամների, ունենում են համապատասխան փորձ ու վերապատրաստում, որը նրանց թույլ է տալիս դիմակայել ցանկացած արտաքին ազդեցությանը<sup>198</sup>:

<sup>198</sup> Տե՛ս Կրակսին ընդդեմ Իտալիայի (*Craxi v. Italy*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի մարտի 5-ի վճիռը, զանգատ թիվ 34896/97, կետ 104, Միրչեան ընդդեմ Ռումինիայի (*Mircea v. Romania*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի վճիռը, զանգատ թիվ 41250/02, կետ 75:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշմամբ անմեղության կանխավարկածի խախտում է այն դեպքը, երբ դատական որոշման կամ պաշտոնատար անձի կողմից արված հայտարարության մեջ կարծիք է արտահայտվում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղքի վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով<sup>199</sup>: Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ անմեղության կանխավարկածը կխախտվի, եթե պաշտոնատար անձը կարծիք արտահայտի հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղավորության վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով: Նույն որոշմամբ դատարանն ընդգծել է պաշտոնատար անձանց կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով չմեղադրված և չդատապարտված անձանց մասին<sup>200</sup>:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ անմեղության կանխավարկածը պահանջում է, որ իրենց պարտականությունները կատարելիս դատարանի անդամները չունենան կանխակալ կարծիք այն մասին, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող արարքը, իսկ ապացուցման պարտականությունը պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած կասկած պետք է մեկնաբանվի հօգուտ մեղադրյալի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում է համարել այն իրավիճակը, երբ մեղադրյալը դեռևս օրենքին համապատասխան մեղավոր չի ճանաչվել, սակայն նրա վերաբերյալ ընդունված դատական որոշումից կարելի է կարծիք կազմել, որ նա մեղավոր է<sup>201</sup>:

Քննարկված մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի հանրային անձ լինելով պայմանավորված պետական պաշտոն զբաղեցնող անձինք (այդ թվում՝ Գլխավոր դատախազը և օրենսդիր մարմնի ղեկավարը) պետք է հանրությանն իրազեկեն առաջադրված մեղադրանքի մասին, այնուամենայնիվ Դատարանը չի համաձայնվել Կառավարության այն պնդման հետ, որ այս հանգամանքը կարող է արդարացնել տվյալ պաշտոնատար անձանց կողմից մամուլին տված հարցազրույցներում ընտրված բառերի օգտագործումը<sup>202</sup>:

Պաշտպանի աշխատակազմը հետևողականորեն ուսումնասիրում է իրավապահ մարմինների քրեական հետապնդման ենթարկվող անձանց մասին հաղորդումները:

Այս առումով հատկանշական է, որ առանձին դեպքերում իրավապահ մարմինների տված հրապարակումներն ունեն բարձր մշակվածություն և անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդիր չեն առաջացնում: Օրինակ՝ Քննչական կոմիտեի պաշտոնական հաղորդումներում, որպես կանոն, մեղադրյալի անհատականացնող տվյալ չի ներառվում, նշվում են մեղադրյալի անվան և ազգանվան առաջին տառերը, իսկ լուսանկար չի հրապարակվում:

Ոստիկանության հրապարակումներում, ընդհանուր առմամբ, նշվում են քրեական հետապնդման ենթարկվող անձի տարիքը, երբեմն՝ բնակության վայրը, զբաղմունքը, իսկ լուսանկարում դեմքի հատվածը մշակվում է այնպես, որ նույնականացնել հնարավոր չլինի:

<sup>199</sup> Տե՛ս Գարիցկին ընդդեմ Լեհաստանի (Garycki v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02, կետ 66:

<sup>200</sup> Տե՛ս Դակթարասն ընդդեմ Լիտվայի (Daktaras v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, կետ 41:

<sup>201</sup> Տե՛ս Բարբերան և այլոք ընդդեմ Իսպանիայի (Barbera, Messegue and Jabardo v. Spain), 1988 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 10590/83, կետեր 77, 91:

<sup>202</sup> Տե՛ս Բուտկևիչուսն ընդդեմ Լիտվայի (Butkevicius v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 48297/99, կետ 50:

Որոշ դեպքերում հրապարակվում է նաև անձին Ոստիկանության ստորաբաժանում բերման ենթարկելու տեսանյութը, որում նա, որպես կանոն, դեմքի հատվածը մշակվում է այնպես, որ նույնականացնել հնարավոր չլինի, իսկ որոշ դեպքերում էլ նկարահանումը կատարվում է այնպիսի դիրքից, որ անձի դեմքն առհասարակ տեսանելի չլինի: Չնայած նշված պրակտիկային, արձանագրվել են նաև դեպքեր, որ այս չափանիշները չեն պահպանվել, հրապարակվել է անձի անունն ու ազգանունը, ինչպես նաև ցուցադրվել է լուսանկար:

Պաշտպանը հարկ է համարում հատուկ արձանագրել, որ դատական ու իրավապահ մարմինների գործունեության, այդ մարմիններում քննվող գործերի վերաբերյալ տեղեկություններ լրատվամիջոցներով ստանալը մարդու հիմնարար իրավունքներից է: Դա խոսքի ազատության կարևոր բաղադրիչ է:

Հասարակության իրազեկվածության և հավաստի տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովման տեսանկյունից կարևորագույն առաքելություն ունեն լրագրողները, ովքեր իրենց մասնագիտական աշխատանքով ապահովում են հասարակության մոտ պատկերացումների ձևավորումը երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ և այդպիսով քաղաքացիական վերահսկողության առկայությունը: Լրագրողներն ապահովում են պաշտոնական տեղեկատվության փոխանցումը հանրությանը և այդ կերպ դառնում հանրային կարծիքի ձևավորմանը նպաստող կարևորագույն օղակ՝ ապահովելով պետության և հասարակության միջև ինֆորմացիոն պատշաճ հաղորդակցությունը: Դրա հետ մեկտեղ, լրագրողի աշխատանքը պետք է հիմնված լինի իրավունքի գերակայության ու քրեական վարույթին ներգրավված անձի իրավունքների նկատմամբ հարգանքի վրա: Լրագրողները պետք է ունենան քրեական արդարադատության ոլորտին վերաբերող տեղեկություններ ստանալու և ազատորեն տարածելու հնարավորություն:

Դրա հետ միասին, Հայաստանի միջազգային պարտավորությունները կոնկրետ քրեական գործերին վերաբերող տեղեկություններ լրագրողների տարածելու հարցում առաջադրում են հատուկ պահանջներ: Մասնավորապես, «Լրատվամիջոցներով քրեական վարույթներին վերաբերող տեղեկությունների տրամադրման մասին» Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի Rec(2003)13 հանձնարարականի 2-րդ սկզբունքի համաձայն՝ անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս է: Ըստ նշված միջազգային կանոնի՝ հետևաբար, ընթացիկ քրեական վարույթին վերաբերող կարծիքները և տեղեկությունները կարող են տրամադրվել կամ տարածվել լրատվամիջոցներով, եթե դա չի խախտում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը: Նույն հանձնարարականը մեղադրյալին վերապահում է պաշտպանության արդյունավետ միջոցի հնարավորություն, եթե խախտվել է արդար դատաքննության իրավունքը:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) «Լրագրության էթիկայի մասին» թիվ 1003 (1993) բանաձևի 22-րդ կետի համաձայն՝ լրագրության մեջ տեղեկությունները և կարծիքները պետք է հարգեն անմեղության կանխավարկածը, հատկապես այն գործերով, որոնք դեռ ավարտված չեն և պետք է ձեռնպահ մնալ գնահատականներից: Հետևաբար, անմեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքը պետք է պահպանվի նաև լրատվամիջոցների ու լրագրողների աշխատանքում: Մա բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Դյու Ռոյը և Մալուրին ընդդեմ Ֆրանսիայի գործով<sup>203</sup> վճռի 34-րդ կետից, որի համաձայն՝ ընթացիկ քրեական վարույթի վերաբերյալ նյութ

<sup>203</sup> St' u Դյու Ռոյը և Մալուրին ընդդեմ Ֆրանսիայի (Du Roy and Malaurie v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 34000/96, կետ 34:

պատրաստող լրագրողները պարտավոր են հարգել մեդադրյալի անմեղ համարվելու իրավունքը:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Պաշտպանն արձանագրում է, որ ցանկացած պարագայում լրատվամիջոցի հրապարակման կամ տեսանյութի ձևակերպումները պետք է լինեն այնպիսին, որ ինքնին չստեղծեն կանխակալ ազդեցություն անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում: Խոսքը նաև վերաբերում է հրապարակմամբ օգտագործվող ձևակերպումներին ու բառապաշարին:

Հանրային ու հատկապես՝ իրավապահ մարմինները իրենց գործունեության ընթացքում պարտավոր են խստորեն պահպանել անմեղության կանխավարկածի հիմնարար պահանջն՝ իր բոլոր բաղադրիչներով: Այդ պահանջի խաթարումը խնդրահարույց է ոչ միայն անձի իրավունքների, այլ նաև քննության որակի ու արդյունքների նկատմամբ հավաստիության տեսանկյունից: Հրապարակման համար լրատվամիջոցներին տեղեկություններ տրամադրելիս անմեղության կանխավարկածի երաշխավորման սկզբունքով ղեկավարվելը պարտադիր է:

Այդ թվում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ պետական իրավասու մարմինները պետք է առավել ուշադիր լինեն անձի մեղավորության վերաբերյալ գնահատականներում՝ բացառելով մինչև իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը նրա մեղավորության վերաբերյալ որևէ կանխակալ վերաբերմունք: Ասվածը հատկապես կարևորվում է պետական մարմինների, մասնավորապես իրավապահ առաքելություն իրականացնող մարմնի, պաշտոնական լրատվական միջոցներով որոշակի գնահատականի մասով:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ անմեղության կանխավարկածի օրենսդրական ձևակերպումը «վազող տողի» միջոցով հրապարակման վերջում տեղադրելը դեռևս բավարար երաշխիք չէ անմեղության կանխավարկածի պահպանման տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ է հետամուտ լինել, որ հրապարակումների բովանդակությունը, դրանում առկա ձևակերպումները լինեն այնպիսին, որ ընթերցողը հստակ գիտակցի, որ դրանք զուտ նախնական տեղեկություններ են և ենթակա են քննարկման դատարանի կողմից:

Միաժամանակ Պաշտպանը կարևորում է, որ իրավապահ մարմինները զանգվածային լրատվության միջոցներին փոխանցեն տեղեկություններ այնպիսի ծավալով, որ այդ տեղեկությունների հրապարակումն անձի իրավունքների երաշխավորման առումով խնդրահարույց չլինի: Չպետք է մոռանալ, որ ի տարբերություն զանգվածային լրատվության միջոցների, իրավապահ մարմիններն իրականացնում են մասնագիտական գործունեություն և իրենց լիազորությունների շրջանակում համարվում են մարդու իրավունքի պաշտպանության երաշխավոր և պատասխանատու:

Քրեական վարույթի հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ մեկ այլ խնդրի նա: Պաշտպանին հասցեագրված բողոքների դիտարկումը և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ գործնականում վարույթի մասին տեղեկություններ չեն կարողանում ստանալ քրեական դատավարության մասնակիցները՝ տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և այլն:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով նշել են, որ քրեական գործի շրջանակում առերեսվել են մի քանի անձի հետ, ապա դիմել են վարույթն իրականացնող մարմին և Դատախազություն՝ խնդրելով տրամադրել իրենց մասնակցությամբ իրականացված առերեսումների արձանագրությունների պատճենները, սակայն մերժում են ստացել:

Գրեթե նույնաբովանդակ խնդրին անդրադարձել է Սահմանադրական դատարանը դեռևս 2012 թվականի հունվարի 24-ի ՄԴՈ-1008 որոշմամբ: Քննարկվող դեպքում քրեական գործով տուժողի իրավահաջորդը և նրա ներկայացուցիչները միջնորդություններ են ներկայացրել քննչական մարմին՝ խնդրելով տրամադրել քրեական գործով ապացույց ճանաչված նոթատետրի, տուժողի ձեռագրի ազատ նմուշների էջերի լուսապատճենները, դեպքի վայրի զննման արձանագրության, տուժողի հագուստի զննման արձանագրության լուսապատճենները: Քննիչի որոշումներով նշված միջնորդությունները մերժվել են:

Նկարագրված իրավիճակը քննարկելով քրեադատավարական նորմերի վերլուծությամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն առանձնացնում է մինչև նախնական քննության ավարտը (գործով մեղադրական եզրակացություն կազմելը) տուժողի և/կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի համար մատչելի՝ գործի նյութերի որոշակի ողջամիտ շրջանակ, որոնց վերաբերյալ տուժողի տեղեկացվածությունը նախնական քննության փուլում ապահովում է տուժողի՝ բացարկներ հայտնելու, միջնորդություններ հարուցելու, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքներն իրացնելու հնարավորությունը և այդպիսով երաշխավորում է նաև տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը մինչդատական վարույթի ընթացքում:

Ինչ վերաբերում է նախնական քննության տվյալներին, ապա գործող օրենսդրությամբ դրանք կարող են հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ և կարող են մատչելի դառնալ տուժողին միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից իր հայեցողության իրացման արդյունքում: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչպես դա նախատեսված է Քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով:

Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ, այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ:

Սահմանադրական դատարանը մատնանշել է նաև եվրոպական երկրների փորձը, ըստ որի՝ այդ երկրների օրենսդրությամբ սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը: Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն: Ըստ այդմ, Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ այս ուղղությամբ Քրեական դատավարության օրենսդրության զարգացումը լրացուցիչ երաշխիքներ կստեղծի տուժողի շահերի պաշտպանության և նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում:

Թեև կոնկրետ որոշմամբ խնդիրը քննարկվել է տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի իրավունքների ապահովման տեսանկյունից, սակայն նշված իրավավերլուծությունը հավասարապես վերաբերելի է քրեական դատավարության մասնակիցներին: Չնայած ակնկալվում էր, որ նշված որոշումը պրակտիկայի զարգացման

համար ուղենշային կլինի, սակայն իրականում քննչական մարմինները շարունակում են նախաքննության տվյալների գաղտնիության «շահարկմամբ» մերժել պահանջվող տեղեկությունների տրամադրումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է պրակտիկայում բացառել նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի կամայականության դրսևորումները՝ առաջնորդվելով բացառապես նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակի հետապնդմամբ:

## 2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան

Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի գործնական ապահովման խնդիրներին ևս Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձ է կատարել 2017, 2018 թվականի տարեկան հաղորդումներով<sup>204</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2019 թվականին ևս բողոքներ են ստացվել այն մասին, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կայացման ենթակա որոշումներից որևէ մեկը:

Պաշտպանին ներկայացված բողոքները փաստում են, որ հանցագործության մասին հաղորդումը որպես ահազանգ դիտարկելու, ստուգման ընթացակարգը եզրակացությամբ ավարտելու, հաղորդում ներկայացրած անձին չպատասխանելու կամ գրությամբ պատասխանելու անընդունելի պրակտիկան շարունակվում է:

Մարդու իրավունքների պաշտպանի բողոքների քննարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ իրավապահ մարմինների կողմից հանցագործության մասին հաղորդումն ընդունելուց և գրանցելուց հրաժարվելու նախկինում ձևավորված պրակտիկան, ընդհանուր առմամբ, զգալիորեն շտկվել է: Թեև նման բողոքներ Պաշտպանի աշխատակազմում 2019 թվականին չեն ստացվել, սակայն առանձին դեպքերում, երբ Պաշտպանի ներկայացուցիչները քաղաքացիներին առաջարկել են իրենց հայտնի տեղեկությունների վերաբերյալ ներկայացնել հանցագործության մասին հաղորդում, նրանք հայտնել են մտահոգություններ այն մասին, որ հնարավոր է հաղորդումը պատշաճ չարձանագրվի կամ քննության չառնվի:

Հանցագործության մասին հաղորդումներին ընթացք տալու օրենսդրական կարգավորվածության առումով հարկ է առանձնացնել ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման ընդունումը<sup>205</sup>: Մասնավորապես, որոշման 62-րդ կետն ամրագրում է, որ հանցագործության մասին հաղորդումների ստուգումն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, որի

<sup>204</sup> Առավել մանրամասն տե՛ս 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 194-199 և 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 288-291:

<sup>205</sup> Որոշումն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

արդյունքում ընդունվում է նույն օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը:

Որպես խնդրի լուծմանն ուղղված կարգավորում՝ Կառավարության որոշմամբ նախատեսվում է նաև քաղաքացիների իրավունքների պարզաբանմամբ կտրոն-ծանուցագրերի տրամադրում՝ անձանց իրազեկվածությանը նպաստելու նպատակով: Կառավարության վերը նշված որոշման ընդունումն ինքնին դրական է այն առումով, որ այդպիսով ամրագրվեցին իրավախախտումների ընդունման, գրանցման, հաշվառման և ստուգման ոչ դատավարական հարցերի կարգավորման իրավական հիմքերը<sup>206</sup>: Հարկ է նկատել, որ Կառավարության որոշմամբ ամրագրված՝ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ ստուգում իրականացնելու պահանջը վերաբերում է հանցագործության մասին հաղորդմանը: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներում բարձրացված բուն խնդիրն էլ այն է, որ անձանց հաղորդումները, որպես այդպիսին, չեն դիտարկվել իբրև հանցագործության մասին հաղորդում:

Ասվածի հետ կապված, Կառավարության որոշման՝ հասկացությունները սահմանող 3-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին հաղորդումները՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով նախատեսված քրեական գործ հարուցելու առիթներն են:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է, որ. «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

- 1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին,
- 2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները,
- 3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:»:

Իսկ օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով կարգավորվում են քրեական գործ հարուցելու վերը նշված առիթներին ներկայացվող առավելապես տեխնիկական պահանջները (ռեկվիզիտները): Ասվածը նշանակում է, որ հանցագործության մասին հաղորդմանը, որպես այդպիսին, ներկայացվող բովանդակային պահանջ օրենսդրորեն նախատեսված չէ:

Այդ բովանդակային պահանջները հստակեցված են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումներով: Մասնավորապես՝

- քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը.
- առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն.
- կոնկրետ հանցագործության մասին տվյալներ բովանդակելու պահանջը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար.

<sup>206</sup> Բանն այն է, որ մինչև Կառավարության վերոնշյալ որոշման ընդունումը՝ այդպիսի իրավական հիմք էին ծառայում ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999 թվականի թիվ 12/354 համատեղ հրամանի պահանջները: Մինչդեռ, այդ հրամանի՝ որպես նորմատիվ իրավական ակտի պետական գրանցումն ապահովված չէր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

• հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանականություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր.

• այդ չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը<sup>207</sup>:

Ասվածի հաշվառմամբ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ հաղորդումների քննարկման և լուծման դատավարական ընթացակարգի նախաձեռնումը պայմանավորված է ոչ թե հանցագործության մասին ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման արդյունքներով, այլ հիմնված է նախնական ստուգման արդյունքների, այսինքն՝ այն եզրահանգման վրա, որ ներկայացված հաղորդման մեջ առկա են տվյալներ, որոնք կարող են որևէ կերպ առնչվել քրեական օրենքով արգելված արարքին:

Այս առումով, կարծում ենք, որ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողությունը, դրա հիման վրա ընթացակարգ նախաձեռնելու առումով, պետք է սահմանափակվի միայն ներկայացված տեղեկության՝ ենթադրյալ հանցագործության հետ հնարավոր կապի ստուգմամբ՝ առանց իրավական գնահատական տալու դրանց ճշմարտացիությանն ու հիմնավորվածությանը:

Ավելին, պետք է նաև նշել, որ օրենքը քրեական հետապնդման մարմնին չի էլ վերապահել մինչև քրեական գործի հարուցումը լայն գործիքակազմ հանցագործության մասին տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման համար: Այսինքն՝ քրեական վարույթի կոնկրետ փուլում օրենքը նման բարձր չափանիշի բավարարման պահանջ հասկանալիորեն չի էլ դրել: Գործող օրենսդրությամբ՝ քննչական կամ այլ դատավարական գործողությունները ողջ ծավալով «հասանելի են դառնում» վարույթն իրականացնող մարմնին միայն քրեական գործը հարուցելուց հետո:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրմամբ կարելի է արձանագրել նաև, որ մարդիկ իրազեկ չեն Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին: Բազում դեպքերում անձինք դիմում են Ոստիկանություն, համոզված լինելով, որ իրենց կողմից ներկայացվածը հանցագործության մասին հաղորդում է՝ անտեղյակ լինելով Վճռաբեկ դատարանի կողմից հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդմանն առաջադրվող չափանիշներին: Ուստի նաև ակնկալում են, որ այն կրնդունվի որպես հանցագործության մասին հաղորդում և օրենքով սահմանված կարգով ընթացք կտրվի: Նման դեպքերում Պաշտպանի աշխատակազմի կողմից անձանց պարզաբանվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան դիրքորոշումները: Հետևաբար, անհրաժեշտ է Ոստիկանություն դիմած անձին որևէ եղանակով իրազեկել Վճռաբեկ դատարանի որոշումներով հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդումներին առաջադրվող չափանիշների մասին: Չնայած նման առաջարկ ներկայացվել էր նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ, սակայն գործնականում այդ առումով փոփոխություններ չեն արձանագրվել:

<sup>207</sup> Հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման՝ քրեադատավարական կարգավորումների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունն տե՛ս նաև 2016 թվականի տարեկան զեկույցի էջեր 137-140:



Հատկանշական է նաև, որ հանցագործության մասին հաղորդմամբ բովանդակվող տեղեկությունների օրենսդրական կարգավորման մոտեցում է որդեգրվել Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որի 173-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական գնահատականներն ու գործող քրեադատավարական օրենքի պահանջները, կարծում ենք, ապահովում են բավարար որոշակիություն՝ հանցագործության մասին հաղորդման ստուգման և քրեադատավարական ընթացակարգերի կիրառման առումով: Այդուհանդերձ, «հանցագործության մասին հաղորդման» հասկացության օրենսդրական ամրագրումը՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված տարրերի ու հատկանիշների արտացոլմամբ, կարող է նպաստել իրավակիրառ պրակտիկայում բարձրացված խնդիրների բացառմանը:

Վերը նշվածի հաշվառմամբ անհրաժեշտ է՝

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել «հանցագործության մասին հաղորդման» հասկացությունը՝ օրենսդրական մակարդակում հստակեցնելով հաղորդման բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ իբրև քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու առումով,

2. հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումները քննարկելիս՝ գործնականում ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավամեկնաբանման հաշվառմամբ: Քրեադատավարական օրենքի դրույթները պետք է անվերապահորեն կիրառվեն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման հենց սկզբնական փուլից,

3. տարբեր եղանակներով հաղորդում ներկայացնող անձին իրազեկել Վճռաբեկ դատարանի որոշումներով հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդումներին առաջադրվող չափանիշների մասին (օրինակ՝ Ոստիկանության բաժիններում տեսանելի վայրերում փակցնել այդ մասին տեղեկատվական թերթիկներ):

3. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը

Լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անկյունաքարն են հանդիսանում:

Այդ իրավունքներն ունեն նաև սահմանադրաիրավական երաշխիքներ. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանվում է, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:

Անձի հիմնական իրավունքները և ազատություններն օրենքով սահմանափակելիս սահմանադրաիրավական սկզբունքների հետևողական կենսագործման հրամայականը հատկապես կարևորվում է քրեական արդարադատության ոլորտում, որտեղ անձի իրավունքների խախտման վտանգն ավելի մեծ է:

Այս առումով, հարկ է անդրադառնալ քրեական գործով վարույթի շրջանակներում բացատրություններ տալիս համապատասխան դատավարական երաշխիքների ապահովման խնդրին:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝ նախքան քրեական գործ հարուցելը վարույթն իրականացնող մարմինը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

Մեջբերված նորմից բխում է, որ հանցագործության մասին ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը կարող է, ի թիվս այլնի, պահանջել նաև բացատրություններ: Այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու առիթն օրինական և հիմքերը բավարար լինելու հարցը որոշելու տեսանկյունից վերցված բացատրությունը կարող է էական նշանակություն ունենալ և հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու համար: Շատ հաճախ նյութերի նախապատրաստման փուլում բացատրություն տված անձինք էլ հետագայում՝ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում, հայտնվում են կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում:

Ակնհայտ է, որ բացատրությունները վերցվում են հարուցված քրեական գործի շրջանակներից դուրս և այն անձանցից, ովքեր դեռևս չունեն որևէ դատավարական կարգավիճակ, իսկ քրեական դատավարության օրենսդրությամբ բացատրություն վերցնելու ընթացակարգ նախատեսված չէ: Բացակայում են անհրաժեշտ օրենսդրական լծակները, որոնք կպարտավորեցնեն վարույթն իրականացնող մարմինն անձին տեղեկացնելու իր իրավունքների և պարտականությունների (հատկապես՝ լուծություն պահպանելու, բացատրություն չտալու իրավունքի), համապատասխան գործողության արդյունքում վրա հասնող հնարավոր հետևանքների վերաբերյալ:

Ուստի, այս առումով, համապատասխան կանոնակարգումների բացակայությունը կարող է հանգեցնել բացատրություն տված անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման, քանի դեռ օրենսդրորեն անձին իր նվազագույն իրավունքների մասին իրազեկելու և դրանց իրացումն ապահովելու անհրաժեշտ երաշխիքներ չեն նախատեսվել:

Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովման պատշաճ մեխանիզմների բացակայության մասին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներով:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ շարունակվել են ստացվել բողոքներ, հատկապես՝ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի միջոցով, այն մասին, որ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում չեն պահպանվում բացատրություններ տվողի համապատասխան դատավարական երաշխիքները: Այլ խոսքով, բացատրություն տվող անձինք մինչ փաստի առթիվ իրենց հայտնի տեղեկությունները տրամադրելը պատշաճ կերպով չեն տեղեկացվում Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երաշխավորված իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Չնայած դրանց, գերակշիռ դեպքերում նյութերի նախապատրաստման փուլում բացատրություն տված անձինք կամ նրանց մերձավոր ազգականները հետագայում՝ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում, հայտնվում են կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում:

Օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում մեծապես խախտվում է անձի բացատրություն տալու նպատակով վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին պատշաճ ծանուցվելու իրավունքը:

Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել այն մասին, որ ՀՀ ոստիկանությունից պարբերաբար կանչում են բացատրություն տալու, ինչն իրենց անհանգստություն է պատճառում: Քաղաքացիները մեծամասամբ ցանկանում են տեղեկանալ չներկայանալու իրավական հետևանքների մասին:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը բացատրություն տալու հնարավորություն նախատեսելով հանդերձ՝ չի նախատեսում ինչպես բացատրություն վերցնելու, այնպես էլ անձին բացատրություն տալու նպատակով կանչելու կարգ: Մա հանգեցնում է քրեական հետապնդման մարմինների կողմից կամայական վերաբերմունքի: Մասնավորապես, հարցաքննության կանչելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումները կամայականորեն և խեղաթյուրված կերպով կիրառում են բացատրություն տալու նկատմամբ. գրավոր ծանուցագիր չուղարկելով հանդերձ, անձին զգուշացնում են չներկայանալու դեպքում բերման ենթարկելու հնարավորության մասին: Նման պրակտիկան անթույլատրելի է, քանի որ քրեական վարույթի ամենասկզբնական փուլում դնում է անձի իրավունքների ռոնահարման հիմքերը:

Անհրաժեշտ է նկատել, որ թեև նյութերի նախապատրաստության ընթացքում անձի տված բացատրությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ապացույցի ինքնուրույն տեսակ չէ, այնուամենայնիվ լիմում են դեպքեր, երբ բացատրությունը ճանաչվում է որպես այլ փաստաթուղթ և օգտագործվում որպես ապացույց, ինչն անթույլատրելի է: Այդ մասին են վկայում նաև դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները: Այսպես, օրինակ, 2018 թվականին կայացված դատավճիռներից մեկով առաջին ատյանի դատարանն արդարացիորեն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ ընդգծելով որ «(...) Դատաքննությամբ հետազոտվել են նաև որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված (...) բացատրություն վերցնելու և (...) լրացուցիչ բացատրություն վերցնելու արձանագրությունները:

Դատարանը գտնում է, որ նշված արձանագրությունները չեն կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույց հետևյալ պատճառաբանությամբ. Դատարանն արձանագրում է, որ որպես այլ փաստաթուղթ ապացույց կարող են ճանաչվել այն փաստաթղթերը կամ այլ տեսակի կրիչները, որոնք պատրաստվել, կազմվել և լրացվել են ոչ դատավարական գործունեության ժամանակ: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ նշված անձանցից բացատրություններ և լրացուցիչ բացատրություն վերցվել են հետաքննության մարմնի աշխատակցի կողմից դատավարական գործունեություն իրականացնելու պայմաններում և քննիչը, նշված արձանագրությունների վերաբերյալ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչելու մասին որոշում կայացնելով, դատավարական գործողության էական խախտում է թույլ տվել: Վերոգրյալի հիման վրա դատարանը որոշում է հաստատել որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված (...), բացատրություն վերցնելու ու (...) լրացուցիչ բացատրություն վերցնելու արձանագրությունները որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությունը և դրանք հանել ապացույցների ծավալից»<sup>208</sup>:

Այլ քրեական գործով պաշտպանական կողմը միջնորդել է անթույլատրելի ճանաչել այլ փաստաթուղթ ճանաչված փաստացի կասկածյալի կարգավիճակում գտնվելու ընթացքում անձի կողմից տրված բացատրության արձանագրությունը: Այս կապակցությամբ դատարանն արձանագրել է՝ «(...) Դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն վերցնելիս պարտավոր է ապահովել արդար դատաքննության իրավունքի մաս կազմող երաշխիքների կենսագործման իրական հնարավորություն և այդ դեպքում միայն բացատրությունը որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչելը և օգտագործելը չի կարող համարվել անթույլատրելի: Սույն գործի փաստերը վերլուծելով վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Դատարանն

<sup>208</sup> Տե՛ս թիվ ՄԴ/0035/01/18 գործով 2018 թվականի սեպտեմբերի 4-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=35465847065579997](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065579997) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

արձանագրում է, որ (...) դեռևս սույն գործով նյութերի նախապատրաստման փուլում, երբ հետաքննության մարմնի կողմից բերման է ենթարկվել ոստիկանության բաժին փաստացի լինելով կասկածյալի կարգավիճակում, սակայն քրեական գործ հարուցված չլինելու պայմաններում չունենալով իրավական կարգավիճակ, տեղեկացվել է մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին (...), որպիսի պայմաններում բացատրությունն այլ փաստաթղթի ձևով ապացույցի տեսակ ճանաչելը չի կարող հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտման, ուստի Դատարանը գտնում է, որ բացատրությունը որպես այլ փաստաթուղթ ապացուցողական զանգվածում ընդգրկելը տվյալ դեպքում իրավաչափ է, ուստի պաշտպանի միջնորդությունը ենթակա է մերժման»<sup>209</sup>:

Մեկ այլ՝ 2013 թվականին կայացված դատավճիռներից մեկով ևս առաջին աստիճանի դատարանն արդարացիորեն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ ընդգծելով. «(...) Դատարանը հարկ է համարում նշել, որ նման պրակտիկայի դեպքում մեղադրյալի կողմից ցուցմունքներ չտալու իրավունքը կամ «լռություն պահպանելու» իրավունքը՝ երաշխավորված ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, դառնում է վերացական ու ոչ իրական, քանի որ համանման հանգամանքներում անձի կողմից տրված բացատրությունը տվյալ դեպքում առանց որևէ պատճառաբանության օգտագործվում է նրա դեմ՝ մասնավորապես՝ առանց վերջինիս պարզաբանելու բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքի և նրա կողմից տրված բացատրությունը նրա դեմ օգտագործելու հնարավորության մասին»<sup>210</sup>:

ՀՀ դատախազության կոլեգիան, 2016 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում անդրադառնալով անձից բացատրություն վերցնելու արձանագրությունն այլ փաստաթուղթ ճանաչելու վերաբերյալ առկա պրակտիկայի թույլատրելիության հարցին, արձանագրել է, որ բացատրության արձանագրությունը որպես այլ փաստաթուղթ, այլ ապացույցների թվում կարող է դրվել մեղադրանքի հիմքում, եթե բացատրություն տված անձի հարցաքննությունը հնարավոր չի եղել իրականացնել այնպիսի պատճառներով, որոնք բացառել են նրա՝ նախաքննական մարմնի ներկայանալու հնարավորությունը:

Փաստորեն, գործնականում, ըստ էության, չեն բացառվում նյութերի նախապատրաստման ժամանակ անձի տված բացատրությունն այլ փաստաթուղթ ճանաչելը և որպես ապացույց մեղադրանքի հիմքում դնելը: Կարծում ենք՝ քրեադատավարական օրենսդրությամբ համապատասխան կարգավորումներ, հստակ ընթացակարգեր ու անհրաժեշտ իրավական երաշխիքներ նախատեսված չլինելու պայմաններում նման պրակտիկան անթույլատրելի է, քանի որ անխուսափելիորեն հանգեցնելու է անձի հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ պաշտպանության իրավունքի խախտման:

Պետք է նկատել նաև, որ եթե նույնիսկ բացատրությունները չդրվեն մեղադրանքի և կայացվող դատական ակտերի հիմքում, այնուամենայնիվ դրանք վարույթի համար ունեն առանցքային նշանակություն, քանի որ շատ հաճախ հենց անձի տված բացատրությունն է քրեական գործ հարուցելու հիմք հանդիսանում, երբեմն նաև քրեական հետապնդում իրականացնելու համար: Ստացվում է, որ առանց հիմնական իրավունքների վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվելու, պաշտպանի բացակայությամբ տրված բացատրությունը

<sup>209</sup> Տե՛ս թիվ ՏՂ/0008/01/18 գործով 2018 թվականի մայիսի 22-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=32369622321748403](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321748403) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>210</sup> Տե՛ս թիվ ԵԱՆԴ/0092/01/12 գործով 2013 թվականի մայիսի 15-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=1125899906864517](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=1125899906864517) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կարող է հետագայում օգտագործվել հենց բացատրություն տված անձի դեմ: Բացի այդ, քրեական գործի նյութերում անձի տված բացատրության առկայությունն ինքնին անձի մեղավորության հարցը լուծելիս կարող է որոշակի ազդեցություն ունենալ վարույթն իրականացնող մարմնի մոտ համապատասխան ներքին համոզմունք ձևավորելու հարցում, թեպետ ֆորմալ առումով այն որպես ապացույց չի կարող օգտագործվել: Հետևաբար՝ անձի իրավունքների անհամաչափ սահմանափակումները բացառելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել նյութերի նախապատրաստության ընթացքում անձից բացատրություն վերցնելու համապատասխան կառուցակարգ, որը կապահովի վերջինիս՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված իրավունքների իրացումը ու կսահմանի համարժեք դատավարական երաշխիքներ:

Միևնույն ժամանակ, բացատրության արձանագրությունը կարող է օգտագործվել քրեական վարույթի ընթացքում, եթե այն տրվել է քրեադատավարական համապատասխան երաշխիքների պահպանմամբ: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հովհաննեսյանն ընդդեմ Բուլղարիայի գործով կայացրած վճռում<sup>211</sup>: Դատարանը, մասնավորապես նշել է, որ երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն վերցնելիս կասկածյալի հնարավոր կարգավիճակ ունեցող անձի համար ապահովել է արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող երաշխիքների կենսագործման իրական հնարավորություն, ապա բովանդակային առումով այդ ապացույցը չի կարող արժեզրկվել, որպիսի պարագայում այն այլ փաստաթղթի ձևով ապացույցի տեսակ ճանաչելը չի կարող հանգեցնել քրեական վարույթի արդարացիության ապահովման սկզբունքի խախտմանը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի ուսումնասիրությունից երևում է, որ բացատրություն վերցնելու ընթացակարգ նախագծով չի սահմանվում: Դա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ, ի տարբերություն գործող օրենսդրության, նախագծում քրեական գործի հարուցման փուլ առանձնացված չէ, և հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից նախաձեռնվում է քրեական վարույթ՝ դրանով իսկ վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն ընձեռելով գործի դնել քրեադատավարական ողջ գործիքակազմը, իրականացնել բոլոր այն անհրաժեշտ քննչական և դատավարական գործողությունները, որոնց զգալի մասն այսօր կարող են իրականացվել բացառապես հարուցված քրեական գործի պայմաններում՝ միևնույն ժամանակ անձի իրավունքների ապահովման տեսանկյունից նախատեսելով գործուն դատավարական երաշխիքներ:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը ողջունում է, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ նախատեսված է նաև օրենսդրորեն սահմանել բացատրություն վերցնելու կարգ:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ նախատեսվող փոփոխությունները դեռևս օրենսդրորեն չեն ամրագրվել, իսկ խախտումները նշված ընթացակարգի բացակայությամբ պայմանավորված շարունակվում են՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝

1. որպես հարցի արագ լուծում՝ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը դեռևս առկա է. անհրաժեշտ են փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն բացատրություն վերցնելու

<sup>211</sup> St' u Հովհաննեսյան ընդդեմ Բուլղարիայի (Hovhannesyanyan v. Bulgaria) գործով գործով 2010 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 31814/03, կետեր 36-44:

այնպիսի հստակ ընթացակարգ սահմանելուն, որը կապահովի անձի՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պատշաճ կերպով իրազեկված լինելու, բացատրության հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկացվելու իրավունքի կենսագործումը,

2. որպես խնդրի երկարաժամկետ լուծում՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը կվերացնի այս պրակտիկան, քանի որ դատավարության փուլերի հայեցակարգային նոր մոտեցումներով պայմանավորված՝ Նախագծում բացակայում են քրեական գործի հարուցման նախապատրաստման փուլը և դրանով հանդերձ բացատրություն վերցնելու ինստիտուտը:

4. «Փաստացի քրեական հետապնդման» վտանգները և անձի պաշտպանության երաշխիքները

2016, 2017 և 2018 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումներում «փաստացի քրեական հետապնդման» խնդիրը ներկայացվել է թե՛ սահմանադրաիրավական և միջազգային իրավական մոտեցումների վերլուծությամբ, թե՛ քրեադատավարական կարգավորումների լիարժեքության տեսանկյունից<sup>212</sup>:

2019 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ, որ, օրինակ, անձինք, հարցաքննվելով որպես վկա, այնուհետև միևնույն գործով վարույթի շրջանակներում ներգրավվել են որպես մեղադրյալ: Բողոքներից մեկով փաստաբանը նույնիսկ տեղեկացրել է, որ իր վստահորդին հեռախոսակապի միջոցով որպես վկա կանչել են ՀՀ քննչական կոմիտե և չեն թույլատրել դուրս գալ վարչական շենքի տարածքից: Իրավասու պաշտոնատար անձի հետ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի հեռախոսագրույցի արդյունքում պարզվել է, որ նա արդեն ձերբակալվել է և ունի կասկածյալի դատավարական կարգավիճակ:

Նկարագրվածն առնվազն վկայում է անձի ազատությունից զրկված լինելու և քրեական հետապնդման ենթարկվելու մասին՝ առանց օրենքով պահանջվող կանոնների պատշաճ պահպանման:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդին վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննել են կասկածանքի շուրջ: Ընդ որում, Պաշտպանի աշխատակազմում նշված բողոքի քննարկման ընթացքում պարզ է դարձել, որ Ոստիկանության բաժնում նախքան հարցաքննությունն սկսելն անձը զգուշացվել է սուտ ցուցմունք տալու դեպքում նախատեսված քրեական պատասխանատվության մասին, միաժամանակ տեղեկացվել է, որ հարցաքննվելու է կասկածի շուրջ և նրան ներկայացվել է ՀՀ քրեական դատավարության 63-րդ հոդվածով սահմանված կասկածյալի իրավունքները: Բացի դրանից, այս գործով չէր ապահովվել նաև փաստաբանի մուտքը՝ պատճառաբանելով, որ վկան հրաժարվել է փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իր իրավունքից:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անձի՝ միևնույն քրեական գործով վարույթի շրջանակներում կարգավիճակի փոփոխությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե վարույթն իրականացնող մարմնի կողմից քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման, այդ թվում՝ անձին հարցաքննելու ընթացքում

<sup>212</sup> Առավել մանրամասն տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 122-125:

ապահովվել են վերջինիս՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու համարժեք դատավարական երաշխիքները:

Այլ է իրավիճակը, երբ անձը հարցաքննության է կանչվում վկայի դատավարական կարգավիճակով՝ դրանից բխող իրավունքների և պարտականությունների համապատասխան ծավալով, սակայն վարույթն իրականացնող մարմնի մոտ արդեն իսկ առկա է քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարման անձի առնչության վերաբերյալ կասկած: Խնդրահարույց է, երբ այդպիսի «կասկածի» առկայությամբ անձի՝ վկայի դատավարական կարգավիճակով նրա մասնակցությամբ իրականացվում են քննչական և այլ դատավարական գործողություններ, որոնք նպատակ ունեն ձեռք բերելու այդ անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցներ: Այս դեպքում անձի իրավունքներն էականորեն սահմանափակվում են, իսկ երաշխիքների իմաստն էլ նենգափոխվում է (օրինակ՝ լռելու իրավունքի մասին ծանուցելու փոխարեն զգուշացվում է սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքում սահմանված քրեական պատասխանատվության մասին):

Բացի դրանից, հանցանք կատարած լինելու կասկածանքի առկայության պայմաններում անձին վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննելով՝ էականորեն սահմանափակվում է նրա փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսվում է, որ Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ:

Ընդ որում, վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձը նշված իրավունքից չի օգտվում, ուստի այս դեպքում անձին որպես վկա հարցաքննելու ընթացքում փաստաբանից հրաժարվելու պատճառաբանությամբ փաստաբանի մուտքը չապահովելը և փաստաբանից նրա ներկայությամբ հրաժարվելու հնարավորություն չտալը հանգեցնում է տվյալ անձի պաշտպանության իրավունքի խախտման:

Հաշվի առնելով փաստացի քրեական հետապնդման դեպքերը և դրանով պայմանավորված անձանց իրավունքների սահմանափակումների շարունակականությունը, Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում անդրադարձ կատարել «մեղադրվող» և «քրեական մեղադրանք» եզրույթներին:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ «մեղադրվող» և «քրեական մեղադրանք» եզրույթներն ունեն ինքնավար բնույթ և պետք է մեկնաբանվեն Կոնվենցիայի իմաստով, այլ ոչ թե միայն ներպետական իրավունքում դրա ունեցած նշանակությանը համապատասխան:

Այս համատեքստում մեղադրանքը ենթադրում է ոչ միայն հանցագործություն կատարած լինելու կասկածանքի առկայության մասին պետական իշխանության իրավասու մարմնի պաշտոնական հայտարարություն, այլև ցանկացած միջոց, որն էականորեն ազդում է կասկածյալի կարգավիճակի վրա<sup>213</sup>:

<sup>213</sup> Տե՛ս Եկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73, Քասսն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Casse v. Luxembourg) գործով 2006 թվականի ապրիլի 27-ի վճիռը, գանգատ թիվ 40327/02, կետ 71, Մերվեսն ընդդեմ Ֆրանսիայի (Serves v. France) գործով 1997 հոկտեմբերի 20-ի վճիռ, գանգատ թիվ 20225/92, կետ 42, Թեոդոր Գարսիան ընդդեմ Իսպանիայի (Tejedor García v. Spain) գործով 1997 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 25420/94, կետ 27:

Ասվածը նշանակում է, որ քրեական մեղադրանքն առկա է նաև քրեորեն հետապնդելի արարք կատարելու մեջ ողջամիտ կասկածի առկայության դեպքում, և դրա առկայությունը չի կարող պայմանավորվել միայն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու քրեադատավարական ընթացակարգի հետ:

Ընդ որում, «քրեական մեղադրանքի» սկզբնական պահի որոշումը սկզբունքային նշանակություն ունի, քանի որ այն կանխորոշում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի ծագման պահը՝ «քրեական մեղադրանքի» առնչությամբ:

Ի տարբերություն 2005 թվականի Սահմանադրությամբ «ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքի» երաշխավորմանը՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 67-րդ հոդվածն ամրագրում է «հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուրի»՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ դրա առանձին տարրերի մատնանշմամբ (այդ թվում՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը): Սահմանադրական այս դրույթը, կրկնելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի երաշխիքները, ըստ էության ելնում է անձի՝ «հանցագործության համար մեղադրվողի» կարգավիճակի ինքնավարության գաղափարից:

Մինչդեռ, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը «քրեական մեղադրանքի» բնորոշման ոչ ֆորմալ մեկնաբանության իրավական կառուցակարգեր չի նախատեսում: Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ և 64-րդ հոդվածներով ամրագրված՝ կասկածյալի և մեղադրյալի օրենսդրական բնորոշումներից բխում է, որ անձը համապատասխան դատավարական կարգավիճակ, հետևաբար նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանությունն իրականացնելու իրավունք է ձեռք բերում քրեական հետապնդման մարմնի կողմից դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ անձին մեղադրանք առաջադրելու դեպքերում: Այլ կերպ ասած, անձի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակի ձեռքբերումը կախվածության մեջ է դրվում անձին ներկայացված պաշտոնական մեղադրանքից կամ վերջինիս համար ակնհայտ՝ իրավունքների սահմանափակում ենթադրող հարկադրանքի միջոցների կիրառումից:

Մրա հետ կապված, դեռևս 2016, 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներում Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել էր, որ խնդրի օրենսդրական կարգավորմանն ուղղված հայեցակարգային փոփոխություններ են նախատեսված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով<sup>214</sup>:

Ասվածի կապակցությամբ՝ հարկ է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենսդրական փոփոխությունների նախաձեռնմանը<sup>215</sup>, որոնցով ամրագրվեցին ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման հետ կապված կառուցակարգերը՝ անձին արգելանքի վերցնելու պահից: Նախ, օրենսդրորեն ամրագրվեցին «արգելանքի վերցված անձի»

<sup>214</sup> Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 110-րդ հոդվածն ամրագրում է, որ ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո վեց ժամը լրանալու պահից ձեռք է բերում սույն օրենսգրքով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքները և պարտականությունները: Մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի նվազագույն իրավունքներ, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունք, հասանելի է [http://www.parliament.am/draft\\_docs5/K-084lr\\_19102016.pdf](http://www.parliament.am/draft_docs5/K-084lr_19102016.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>215</sup> Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշված նախագծի վերաբերյալ ներկայացվել են մի շարք սկզբունքային նկատառումներ, այդ թվում՝ անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի երաշխավորման դատավարական կառուցակարգերի լիարժեքության տեսանկյունից:



իրավունքները՝ այդպիսով կարգավորելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով լրացվող օրենսդրական բացը<sup>216</sup>: Բացի այդ, օրենսդրորեն ամրագրվել է փաստի ուժով անձի իրավունքների ձեռքբերման՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով որդեգրված մոտեցումը: Մասնավորապես, օրենսդրական փոփոխություններով ամրագրվում է մինչև ձերբակալման արձանագրությունը նրան հայտարարելն արգելանքի վերցված անձի իրավունքները, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունքը: Նույն դրույթի համաձայն՝ անկախ ձերբակալման արձանագրությունն անձին հայտարարելու հանգամանքից՝ փաստացի արգելանքի վերցվելուց չորս ժամ հետո անձը ձեռք է բերում կասկածյալի վերաբերելի իրավունքները և պարտականությունները:

Օրենսդրական այս փոփոխություններն, իհարկե, դրական քայլ են՝ ազատությունից զրկված անձի՝ այդպիսի սահմանափակման սկզբնական փուլից սկսած իրավունքների ամրագրման տեսանկյունից: Մինևույն ժամանակ, «փաստացի քրեական հետապնդման» դեմ արդյունավետ իրավական կառուցակարգերը պետք է ենթադրեն նաև դրա հետևանքները չեզոքացնելուն ուղղված օրենսդրական հնարավորություն:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ բարձրացվում է «փաստացի քրեական հետապնդման» խնդիր, քննարկման առարկա պետք է հանդիսանա նաև դրա շրջանակներում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցը: Ասվածի օրենսդրական ուղղակի ամրագրման մոտեցում դրսևորվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որի 97-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք *inter alia* ձեռք են բերվել մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու:

Գործող քրեադատավարական օրենսդրությունը «փաստացի քրեական հետապնդման» հետևանքով ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության մասին ուղղակի դրույթ չի պարունակում: Փոխարենը, վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ որպես ապացույց չեն կարող օգտագործվել այն նյութերը, որոնք, մասնավորապես, ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական՝ քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ:

Օրենսդրական փոփոխություններից զատ անհրաժեշտ է ուժեղացնել գերատեսչական վերահսկողությունը «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ դեպքերը բացառելու նպատակով:

Հատկանշական է, որ «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեում 2019 թվականի ընթացքում իրականացվել է միայն 1 նախնական ուսումնասիրություն, որի արդյունքներով քննիչի արարքներում կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չեն հայտնաբերվել, և նրա անմիջական վերադասի մասնակցությամբ Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում հրավիրված օպերատիվ խորհրդակցության ընթացքում վարույթն իրականացնող մարմինն հանձնարարվել է բացառել նման խախտումները:

Նման հանձնարարականի առկայության փաստն, իհարկե, ինքնին ողջունելի է, սակայն նմանատիպ խախտումների դեպքում քրեական հետապնդման մարմինների նկատմամբ անբարենպաստ իրավական հետևանքների բացակայությունը կարող է հող նախապատրաստել խախտումների շարունակականության համար:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝

<sup>216</sup> Տե՛ս Գագիկ Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործով կայացված որոշումը:

1. անկախ անձի՝ քրեադատավարական օրենքի իմաստով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելուց՝ վերջինս պետք է օգտվի քրեական հետապնդման ենթարկվող անձի վերաբերելի բոլոր իրավունքներից այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները (որոշումները) հիմք են տալիս ողջամտորեն ենթադրելու, որ առկա է տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանք,

2. անհրաժեշտ է բացառել անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանքի առկայության պայմաններում նրան որպես վկա կեղծ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքում սահմանված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու դեպքերը,

3. անհրաժեշտ է ուժեղացնել գերատեսչական վերահսկողությունը «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ դեպքերի նկատմամբ,

4. «փաստացի քրեական հետապնդման» պրակտիկայի կանխարգելումը պետք է իրականացվի ոչ միայն գերատեսչական վերահսկողության շրջանակներում, այլև պետք է քննարկման առարկա դառնա կոնկրետ քրեական գործով վարույթի շրջանակներում դրա բացասական հետևանքների չեզոքացումը:

5. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը

Քրեական դատավարությանը մասնակցող անձինք օրենքով սահմանված կարգով կրում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտականություն:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գիծ հեռախոսահամարին անգամ ահազանգեր են ստացվել հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները չպահպանելու մասին:

Մասնավորապես, անձինք հայտնել են, որ հեռախոսազանգի միջոցով իրենք հրավիրվել են քննչական բաժին՝ հարցաքննության, սակայն չեն տեղեկացվել՝ կոնկրետ ինչ գործի շրջանակներում, ինչ կարգավիճակով, և թե այդ կարգավիճակից բխող ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն: Թեժ գծին ստացված բանավոր բողոքներով անձինք ցանկացել են տեղեկանալ, թե արդյոք այդ եղանակով հարցաքննության կանչելն իրավաչափ է, և արդյոք իրենք այդպիսի դեպքերում պարտավոր են ներկայանալ վարույթն իրականացնող մարմին:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել հետևյալ խնդիրները՝

- անձին՝ որպես առանց հարգելի պատճառի քննության չներկայացող դատավարության մասնակցին բերման ենթարկելն այն դեպքում, երբ ծանուցագիրը սահմանված ժամկետում վերջինիս հանձնված չի եղել.

- հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները չպահպանելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ հարցաքննության կանչելու կարգն ամրագրող 205-րդ հոդվածի համաձայն.

«1. Վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները:

(...)

3. Հարցաքննության կանչված անձը պարտավոր է քննիչին ներկայանալ նշանակված ժամկետում կամ նրան նախապես իրազեկել չներկայանալու պատճառները: Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում հարցաքննության կանչված անձը կարող է բերման ենթարկվել սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված հիմքով, իսկ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել նաև սույն օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ(...):»:

Օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ բերման ենթարկելն առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմինն ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ ծանուցման և դրանով պայմանավորված բերման ենթարկելու քրեադատավարական կարգավորումների վերլուծությունը հիմք է տվել եզրակացնելու, որ՝

- վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

- «ծանուցագիր» եզրույթի գործածումն ու դրա բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները կանխորոշում են դրա գրավոր ձևի պարտադիրությունը, իսկ անձին բանավոր ծանուցելու պրակտիկան հակասում է քրեադատավարական օրենքի պահանջներին.

- վարույթն իրականացնող մարմին ներկայանալու ծանուցագիրն անձին ժամանակին հանձնելու, վերջինիս կողմից այդ ծանուցագիրը ստացած լինելու և հետևաբար նաև չներկայանալու պատճառների մեջ հավաստիանալու դատավարական որևէ կարգավորում նախատեսված չէ.

- վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, թերևս ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

- մինչդեռ, բերման ենթարկելը՝ որպես անձի իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ զուգորդվող դատավարական հարկադրանքի միջոց, կարող է ուղղված լինել նաև բերման ենթարկվողի՝ օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների մասնակցության ապահովմանը.

- անձին բերման ենթարկելու վարույթն իրականացնող մարմնի որոշման պատճառաբանվածության պահանջը ենթադրում է, որ այդպիսի որոշում կարող է կայացվել միայն անձի պատշաճ ծանուցման և նշանակված ժամկետում ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին անձի կողմից չտեղեկացնելու դեպքում.

- վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անհրաժեշտության մասին անձին ծանուցելու պատշաճությունն իր հերթին պետք է կանխորոշվի ոչ միայն ծանուցագիրն անձին հանձնելու փաստով, այլև դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ, ինչպես նաև ծանուցագիրն այնպիսի ողջամիտ ժամկետում հանձնելով, որ անձը ժամանակին ներկայանալու կամ չներկայանալու պատճառների մասին հայտնելու հնարավորություն ունենա:

Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշմամբ՝ անձի պատշաճ ծանուցման և վերջինիս բերման ենթարկելու որոշման իրավաչափության ապահովման նպատակով քրեական գործով վարույթի շրջանակներում ծանուցման հետ կապված հարաբերությունները պետք է հստակ կանոնակարգման ենթարկվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով<sup>217</sup>: Չնայած այդպիսի փոփոխություններ 2017 թվականին նախաձեռնվել էին, սակայն դրանք կյանքի չկոչվեցին:

Մարդու իրավունքների պաշտպանի նկատառումներն ու դիրքորոշումները հանգում են նրան, որ ծանուցագրի բովանդակությունը վարույթն իրականացնող մարմինն ներկայանալու պարտականություն ունեցող անձի համար որոշակիության ապահովման նպատակով պետք է ներառի նաև տեղեկություններ հարուցված քրեական գործով վարույթի վերաբերյալ: Նաև պետք է օրենսդրորեն ամրագրվի կոնկրետ գործի շրջանակներում տվյալ կարգավիճակով առաջին անգամ ծանուցվող անձին վերջինիս դատավարական իրավունքների և պարտականությունների ցանկն ուղարկելու պահանջ: Բացի այդ, օրենքով նախատեսված դեպքերում անձին սահմանված ժամկետից ուշ ծանուցելը չի կարող բացասական հետևանքներ առաջացնել անձի իրավունքների ապահովման տեսանկյունից, իսկ ծանուցման պատշաճությունը հաստատելու համար պետք է այդ մասին օրենսդրական առարկայական չափանիշներ ամրագրվեն:

2019 թվականի ընթացքում արձանագրվել են հատուկ միջոց ձեռնաշղթաների գործադրման խնդրահարույց պրակտիկա, մասնավորապես՝ դրանց անհարկի կիրառության դեպքեր:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը հստակ ամրագրում է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում կարող են ձեռնաշղթաներ գործադրվել: Այսինքն, ձեռնաշղթաները չեն կարող կիրառվել ցանկացած իրավիճակում և մշտապես:

Օրինակ, Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնագրույցների ընթացքում ազատությունից զրկված մի շարք անձինք պնդել են, որ ձեռնաշղթաների գործադրման համար անհրաժեշտ հիմքերից որևէ մեկը չի արձանագրվել, իրենք որևէ գործողություն չեն կատարել կամ հայտարարություն չեն արել, որը կվկայեր ներկայացված պահանջին չենթարկվելու մասին, դիմադրություն ցույց չեն տվել: Որոշ դեպքերում պնդել են, որ պատրաստակամություն են հայտնել ներկայանալ վարույթն իրականացնող մարմին, սակայն, այնուամենայնիվ ֆիզիկական ուժի գործադրմամբ տեղափոխվել են բաժին:

Ավելին, դեպքերից մեկով նույնիսկ անձը Ոստիկանության բաժին բերման է ենթարկվել առանց համապատասխան որոշման, Ոստիկանության պարզաբանմամբ՝ օրինակ խուլիգանություն կատարելու կասկածանքով, այդ մասին կազմվել է արձանագրություն, սակայն անձը ներկայացվել է քրեական գործով վարույթն իրականացնող քննչական մարմին՝ այլ քրեական գործով որպես վկա հարցաքննության:

Ասվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ.

1. Քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է ամրագրել վարույթն իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ անձին ծանուցելու ընթացակարգերը՝ ծանուցման ժամկետների, եղանակների, ծանուցագրի բովանդակության և դրանց առնչվող անձի իրավունքների ու երաշխիքների հետ կապված հարցերի կարգավորմամբ,

2. գործնականում բացառել դեպքերը, երբ անձը բերման է ենթարկվում առանց վարույթն իրականացնող մարմին ներկայանալու պատշաճ ծանուցման,

3. Բացառել օրենքով սահմանված հիմքերի բացակայության դեպքում բերման ենթարկվող անձի նկատմամբ ձեռնաշղթաների գործադրման պրակտիկան,

<sup>217</sup> Տե՛ս նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդման էջեր 146-149:

4. իրավապահ մարմինների համապատասխան ներկայացուցիչների համար կազմակերպել հատուկ դասընթացներ՝ ուղղված նշված խնդիրների լուծմանը:

6. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրները

Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվում նաև քրեական գործերի նախաքննության ընթացքում քննչական մարմինների գործողությունների վերաբերյալ:

Նախաքննության ընթացքի կապակցությամբ ներկայացված բողոքների քննությունն ունի որոշակի բարդություն՝ նկատի ունենալով քրեական դատավարության սուբյեկտակազմը և նրանց հստակ իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքացիներն անհատական ընդունելությունների և խորհրդատվությունների ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչներին հաղորդում են այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ են տալիս դիտարկել քննչական մարմինների գործողություններում առկա պրակտիկ խնդիրներն ու օրենսդրական դաշտը:

Այս իմաստով, անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ Պաշտպանի աշխատակազմում անհատական բողոքները քննարկվում են այնպես, որ քրեական գործի արդյունավետ քննությանը որևէ խոչընդոտ կամ միջամտություն չարվի:

2019 թվականի ընթացքում քրեական գործերի նախաքննության ընթացքին առնչվող բողոքների մասով անհրաժեշտ է նշել, որ դրանց մի մասը վերաբերել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքին: Այսպես, մի դեպքում անձը բողոք է ներկայացրել այն մասին, որ առանց հանցագործության մասին հաղորդում տված անձի հետ առերեսվելու իրեն առաջադրվել է մեղադրանք: Մեկ այլ դեպքում կալանավորված անձը նշել է, որ հեռախոսային խոսակցությունները լսվել են, արդյունքում՝ առաջադրվել է մեղադրանք, սակայն ինքը չի առերեսվել այն անձի հետ, ում հետ խոսակցությունների գաղտնալսման արդյունքում իրեն մեղադրանք է առաջադրվել:

Ազատությունից զրկելու վայրերում տեղի ունեցած առանձնագրույցների ընթացքում կալանավորված անձինք բարձրացրել են նաև նույն քրեական գործով մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող մյուս անձանց հետ չառերեսվելու հարց:

Նշված բողոքների ու տեղեկությունների հաշվառմամբ, որոշում է կայացվել հերթական տարեկան հաղորդմամբ ևս անդրադարձ կատարել մեղադրյալի հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի ապահովմանը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...), դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից<sup>218</sup>:

<sup>218</sup> Տե՛ս Ունտերպենտինգերն ընդդեմ Ավստրիայի (Unterpentinger v. Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31-33-րդ կետեր, Հուլիի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի (Hulki Güneş v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28490/95, 53-54-րդ կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի (Gossa v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 47986/99, 54-55-րդ կետեր, Բալսյե-Լիդեյկենեն ընդդեմ Լիտվայի (Balsytė-Lideikienė v. Lithuania)

Անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել<sup>219</sup>:

Հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու իրավաչափության հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը<sup>220</sup>:

Վճռաբեկ դատարանն, ի թիվս այլնի, արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում իրավակիրառողին մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքն իրացնել նաև նախաքննության փուլում՝ առերեսում քննչական գործողության միջոցով: Ավելին, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ ցուցմունք տալուց հրաժարվելու՝ մեղադրյալի սահմանադրական իրավունքի իրացումն ինքնին չի բացառում առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը<sup>221</sup>:

Ինչ վերաբերում է արդեն դատական վարույթի ընթացքում այդ իրավունքի ապահովմանն, ապա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ հարցին անդրադարձել է նաև Հայաստանի դեմ կայացված՝ Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի վճռում: Դրանով, մասնավորապես նշվել է, որ «բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում՝ հակափաստարկ ունենալու հնարավորությամբ: Սակայն սա չի նշանակում, որ որպեսզի վկաների ցուցմունքներն օգտագործվեն իբրև ապացույց, դրանք անպայման պետք է տրված լինեն միայն հրապարակային դատաքննության ընթացքում»: Դատարանի գնահատմամբ՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներն որպես ապացույց դիտարկելն ինքնին չի հակասում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքին, եթե ընդհանուր առմամբ երաշխավորվել են պաշտպանական կողմի իրավունքները: Դատարանի իրավաբանությամբ՝ որպես կանոն, այս իրավունքների իրականացումը պահանջում է, որ մեղադրյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային, ինչպես ցուցմունք տալու պահին, այնպես էլ գործի քննության հետագա փուլերում<sup>222</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև մշակել է մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքի խախտումը ստուգելու թեստը: Թեստն ամփոփվել է Մեծ պալատի՝ Ալ-Խավազան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության և Չաթչաշվիլին ընդդեմ Գերմանիայի վճիռներում:

Գնահատելու համար՝ արդյոք առկա է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտում, թե ոչ, անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

- 1) արդյոք առկա է վկայի բացակայության հարգելի պատճառ,

---

գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 72596/01, 86-րդ կետ, Չական ընդդեմ Ալբանիայի (Caka v. Albania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 44023/02, 102-րդ կետ, և այլն:

<sup>219</sup> Տե՛ս Մադալը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Sadak and others v. Turkey) (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96 և այլն, 65-րդ կետ:

<sup>220</sup> Տե՛ս *mutatis mutandis* Համայակ Չալիկոյի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշման 22-24-րդ կետերը:

<sup>221</sup> Տե՛ս *mutatis mutandis* Մարիբել Վարազդատի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0189/01/12 որոշման 27-28-րդ կետերը:

<sup>222</sup> Տե՛ս Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի (Mamikonyan v. Armenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 25083/05, 42-րդ կետ:

2) արդյոք բացակայող վկայի նախկինում տված ցուցմունքը մեղադրյալի դատապարտման համար ունի վճռորոշ նշանակություն կամ բացառապես հիմնված է դրա վրա,

3) արդյոք առկա են բավարար հակակշռող հանգամանքներ, այդ թվում քրեադատավարական երաշխիքներ, որոնք չստուգված ապացույցի ընդունման արդյունքում կկոնսոլիդացնեն պաշտպանության բացերը:

Թեստի առաջին հարցի բացասական պատասխանը դեռևս չի կարող բավարար լինել անձի իրավունքի խախտումը ճանաչելու համար: Այս հարցի պատասխանը ենթակա է գնահատման երկրորդ հարցի համատեքստում՝ պարզելու նպատակով, թե մեղադրյալի դատապարտումը վճռորոշ չափով կամ բացառապես հիմնված է եղել այդ ցուցմունքի վրա, թե ոչ: Վկայի բացակայության պատճառով դատաքննության ընթացքում համարվում է «հարգելի», եթե այն, ըստ էության, օբյեկտիվ դիտորդի համար ցույց է տալիս բացակայության պատճառի փաստական կամ իրավական հիմքերը: Այդպիսին կարող է լինել, օրինակ, այդ վկայի վատառողջ լինելը կամ այլ պատճառներ: Դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառ չի կարող գնահատվել այն պայմաններում, երբ դատարանների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել նրա գտնվելու վայրը պարզելու և ներկայությունն ապահովելու ուղղությամբ: Թեստի երկրորդ հարցը վերաբերում է գործով ձեռք բերված ապացույցներին, մասնավորապես, թե տվյալ ցուցմունքը մեղադրյալի դատապարտման համար միակ ապացույցն է, թե ունի վճռորոշ նշանակություն: Երրորդ հարցադրումն այն է, թե արդյոք պետությունը որևէ այլ եղանակով կարող է հաստատել տվյալ ապացույցի արժանահավատությունը:

Չնայած նրան, որ մեղադրյալի հակընդդեմ հարցման իրականացման նպատակով առերեսումն իրականացնելը վարույթի արդյունավետության տեսանկյունից ունենում է կարևոր նշանակություն, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ դա բացասական հետևանքներ է առաջացնում դատավարության մասնակիցների և մասնակցող անձանց համար: Օրինակ, 2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքով պնդում է արվել այն մասին, որ նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու դեպքի քննության ընթացքում իրականացվել է առերեսում մեղադրյալի և տուժողի միջև, որից հետո նախկին ամուսինը կատարել է հանրորեն վտանգավոր արարք՝ կնոջն առևանգելու ձևով: Նշված դեպքի կապակցությամբ, թեև հարուցվել է քրեական գործ, սակայն, հասկանալի պատճառներով դեպքը հանրային մեծ հետաքրքրության է արժանացել: Թե քննչական գործողությունը և թե դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունները հուզական խիստ բացասական ազդեցություն են ունեցել կնոջ վրա:

Նման խնդիրներ գործնականում առաջ են գալիս նաև սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների կամ անչափահասների ներգրավմամբ քրեական գործերով վարույթների քննության ընթացքում:

Այսպես ասած, խոցելի համարվող վկայի կամ տուժողի ու մեղադրյալի համաժամանակյա հարցաքննությունների խնդրահարույց կողմերի մասին բարձրաձայնվել է նաև միջազգային դատական պրակտիկայում: Կայացրած վճիռներից մեկով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անչափահասի նկատմամբ տեղի ունեցած սեռական ոտնձգության գործով տուժողը չի ներկայացվել դատարան, քանի որ, ըստ բժշկական տեղեկանքի, նրա ունեցած հիվանդությամբ պայմանավորված եղել է առողջական վիճակի վատթարացման վտանգ: Ներպետական դատարանները թեև նշել են, որ դատարանում տուժողի հարցաքննության բացակայությունն էական բացթողում է, սակայն դա արդարացրել են երեխայի հոգեկան վիճակի վերաբերյալ բժշկական տեղեկանքով: Վճռով դատարանը նշել է, որ անչափահաս գոհերի մասնակցությամբ իրականացվող քրեական դատավարության ընթացքում պետք է հաշվի առնել նրանց շահերի պաշտպանությունը,

սակայն արձանագրվել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտում, քանի որ տուժողի ցուցմունքները հանդիսացել են մեղադրյալի դատապարտման միակ ուղղակի ապացույցը, իսկ նրա նկատմամբ հոգեբանական փորձաքննությունը նշանակված է եղել տևական ժամանակ անց<sup>223</sup>:

Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման համատեքստում հարկ է անդրադառնալ մեկ այլ խնդրի ևս, որը բարձրացվել է փաստաբանների կողմից: Այսպես, Պաշտպանի աշխատակազմ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ առերես հարցաքննությունների ընթացքում վարույթն իրականացնող մարմինը թույլ չի տալիս փաստաբանին հարցեր տալ առերեսվող անձին: Փաստաբանները նշել են, որ այս առումով պրակտիկան միատեսակ չէ, քննչական որոշ ստորաբաժանումներում փաստաբանին թույլատրվում է հարցեր ուղղել առերեսվողին, որոշ ստորաբաժանումներում՝ չի թույլատրվում:

Նման պրակտիկան խնդրահարույց է ոչ միայն փաստաբանի մասնագիտական երաշխիքների իրացման, այլև կասկածյալի ու մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից: Խնդիրն առավել ակնառու է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի առկայության պայմաններում («Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով»), ուստի տվյալ հարցը վերանայելու և միասնական պրակտիկա ձևավորելու կարիք է զգացվում:

Վերոնշյալ դրսևորումների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.

1. քննչական գործողությունները պլանավորելիս առանձնակի ուշադրության արժանացնել նաև քրեական գործի բնույթին և դատավարության խոցելի մասնակիցների ու մեղադրյալների օրինական շահերի արդարացի հակակշռմանը,

2. առավելագույն ջանքեր գործադրել, այդ թվում՝ մեղադրյալի լռելու պարագայում վերջինիս հակընդդեմ հարցման իրավունքի արդյունավետ իրացման համար: Վերը քննարկված իրավական պահանջները պետք է անվերապահորեն կատարվեն անկախ քրեական գործի բնույթից, ծավալից կամ այլ հանգամանքներից,

3. բացառել առերեսման ժամանակ փաստաբանի կողմից առերեսվողին հարցեր ուղղելը չթույլատրելու պրակտիկան:

7. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու պրակտիկան

2019 թվականի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ դարձյալ բողոքներ են ստացվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու մասին:

Այդ բողոքների, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների կայացրած որոշումների ուսումնասիրությունները վկայում են, որ խնդիրներն այս առումով համակարգային են, անթույլատրելի պրակտիկան՝ շարունակական: Քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորված անձի տեսակցություններն արգելող որոշումները ոչ միշտ են բավարար չափով պատճառաբանված: Մեծամասամբ վարույթն իրականացնողը

<sup>223</sup> St' u Պ. Մ.-ն ընդդեմ Գերմանայի (P. S. v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 33900/96, 30-31-րդ կետեր:



բավարարվում է օրենսդրական նորմերի վկայակոչմամբ, և առհասարակ չի կատարվում համադրում գործի փաստական հանգամանքների, գործով ձեռք բերված փաստական տվյալների հետ: Ինչ վերաբերում է կայացված որոշման վերանայմանը, ապա որոշ դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն անհարկի ձգձգում է կամ ընդհանրապես չի քննարկում հիշյալ սահմանափակման շարունակական կիրառման անհրաժեշտության հարցը:

Նման պայմաններում սահմանափակումը հաճախ կիրառվում է ինքնանպատակ, առանց իրավաչափ շահի հետապնդման, ավելին, ունենում է կալանավորված անձին հոգեճնշելու, նրանից քննության համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու միտում: Ստացվում է, որ անձին ազատությունից զրկելուց զատ, նրան պատճառվում են լրացուցիչ զրկանքներ՝ ընտանիքի հետ կապը սահմանափակելու ձևով:

Ստացված բողոքներից մեկով կալանավորած կինը հայտնել է, որ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ իր տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների (այդ թվում՝ ընտանիքի անդամների հետ) իրավունքի նկատմամբ սահմանվել է անհիմն արգելք: Ըստ բողոք ներկայացրած անձի կիրառված սահմանափակման արդյունքում չի կարողանում տեսակցել չորս տարեկան մանկահասակ երեխային: Նա նշել է, որ երեխան հոգեկան ծանր ապրումներ ունի: Կալանավորված անձի բարձրացրած հարցը դրական լուծում է ստացել Դատախազության և Քննչական կոմիտեի հետ պաշտոնական հաղորդակցությունից հետո:

Կալանավորված մեկ այլ կին բողոքով հայտնել է, որ արգելանքի պատճառով չի կարողանում տեսակցել մոր և երեք (մեկ, երեք և վեց տարեկան) երեխաների հետ, և իր համար անհասկանալի է, թե մանկահասակ երեխաները ինչպես կարող են խոչընդոտել քննությանը: Նշել է նաև, որ երեք մանկահասակ երեխաներից մեկը մոր խնամքին է, իսկ երկուսը գտնվում են մանկատանը: Բողոքի քննարկման արդյունքում վարույթն իրականացնող մարմինը թույլատրել է կալանավորված անձին հեռախոսագանգի միջոցով կապ հաստատել ընտանիքի անդամների հետ, ավելին՝ նաև տեսակցել անչափահաս երեխաներին: Պաշտպանի ներկայացուցիչների հերթական այցի ընթացքում արձանագրվել է, որ կալանավորված անձը տեսակցություն է ունենում իր անչափահաս երեխաների հետ, այցից հետո նաև թույլատրվել է մեկ տարեկան երեխային պահել քրեակատարողական հիմնարկում:

Նույնաբովանդակ հարց բարձրացրել է նաև Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալ Արսեն Բաբայանը: Մասնավորապես, Պաշտպանին ներկայացված բողոքով Ա. Բաբայանն ու իր փաստաբանը նշել են, որ քրեական վարույթն իրականացնող քննիչի կողմից անհիմն որոշում է կայացվել արգելել արտաքին աշխարհի հետ իր շփումը՝ հեռախոսագանգերի և տեսակցությունների միջոցով, այդ թվում՝ մերձավոր ազգականների հետ: Հարցի հետ կապված կորկրետ հարցադրումներով և առաջարկով գրություն է ուղարկվել Գլխավոր դատախազություն, հետագայում Դատախազությունը պարզաբանել է, որ վարույթ իրականացնող մարմնի որոշմամբ տեսակցությունների նկատմամբ սահմանված արգելքը վերացվել է: Այս գործով, օրինակ, իրավացի խնդիր էր բարձրացված արգելքի հետևանքով Ա.Բաբայանի իրավունքի նկատմամբ ոչ իրավաչափ միջամտության հետ կապված:

Հարկ է նկատել, որ գործնականում տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելվում են միաժամանակ: Սովորաբար նախ վերացվում է տեսակցություններ ունենալու արգելքը, իսկ հեռախոսային խոսակցությունների արգելքը ևս որոշ ժամանակահատված շարունակվում է պահպանվել: Նման մոտեցումը վարույթն իրականացնող մարմինը պատճառաբանում է հեռախոսային խոսակցությունների վերահսկողության մեխանիզմի բացակայությամբ: Մասնավորապես, ըստ քննչական

մարմինների, հեռախոսազանգերի դեպքում չկա որևէ գործիքակազմ պարզելու համար, թե իրականում ում հետ է կալանավորված անձը խոսում:

Այս առումով անվիճելի է, որ ինչպես թերի իրավակարգավորումները, այնպես էլ անձի վարքագծի իրավաչափության վերահսկողության մեխանիզմների բացակայությունը չի կարող հանգեցնել անազատության մեջ գտնվող անձի իրավունքի ոչ համաչափ սահմանափակմանը: Ուստի հարցի լուծման համար չպետք է իրավիճակային լուծում առաջարկել մարդու իրավունքի սահմանափակման տեսանկյունից: Համակարգային լուծման համար անհրաժեշտ են այլընտրանքային մոտեցումներ:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցությունները ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապի երկու տարբեր, ինքնուրույն միջոցներ են, ուստի ամեն դեպքում պետք է քննարկվի դրանցից յուրաքանչյուրի սահմանափակման անհրաժեշտության հարցը. ոչ մի դեպքում չպետք է մեկի սահմանափակումն ինքնին հանգցնի մյուսի սահմանափակմանը:

Արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու և մերձավոր ազգականների հետ տեսակցելու իրավունքի իրացման օրենսդրական և գործնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իրավակիրառ պրակտիկայում առաջ եկող խնդիրները, ի թիվս այլնի, նաև օրենսդրական թերի և ոչ հստակ կարգավորումների արդյունք են:

ՀՀ օրենսդրությունն այս առումով թեև բովանդակում է որոշակի կարգավորումներ, այնուհանդերձ դրանք բավարար չեն իրավունքի իրական երաշխավորման համար: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ այն չի պարունակում կալանավորված անձի՝ օրինական ներկայացուցչի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության և հեռախոսային խոսակցությունների արգելքի կիրառելիության հստակ չափանիշներ՝ այն կապելով միայն «քննության շահ» գնահատողական և որոշակիության սկզբունքին չհամապատասխանող եզրույթի հետ: Միաժամանակ, հոդվածը չի բովանդակում տեսակցությունների արգելքի պատճառաբանության և հիմնավորվածության, ինչպես նաև որոշման պարբերական վերանայման վերաբերյալ հստակ պահանջներ:

Չնայած դրան, ոլորտը կանոնակարգող միջազգային օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել անձի նկատմամբ արգելքի կիրառման հստակ չափանիշները:

Այսպես, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ-ն) իրավաբանության համաձայն՝ ազատագրված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մերձավոր ազգականների հետ: Ղեկավար սկզբունք պետք է լինի՝ արտաքին աշխարհի հետ շփման աջակցությունը: Այդպիսի շփման որևէ սահմանափակում պետք է հիմնավորված լինի միմիայն անվտանգության շահերի ողջամիտ պաշտպանությամբ (...)<sup>224</sup>:

<sup>224</sup> Տե՛ս 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր հաշվետվության 51-րդ կետը:

Այս առումով, ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2011 թվականի զեկույցում նշել է, որ անհրաժեշտ է ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ ապահովելու համար, որ ազատությունից զրկված անձանց՝ տեսակցություններ ունենալու և հեռախոսակապից օգտվելու իրավունքներն անհիմն կերպով չսահմանափակվեն<sup>225</sup>:

Կալանավորված անձանց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու կարևորությունն ընդգծվել է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 2-րդ մասի 24.1-րդ կանոնում, ըստ որի՝ ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակների, հեռախոսակապի կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ:

Դրա հետ մեկտեղ, ըստ 24.2-րդ կանոնի՝ հաղորդակցությունները և տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների կամ վերահսկման, ելնելով քրեական գործի քննությունը շարունակելու անհրաժեշտությունից՝ կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, ինչպես նաև հանցագործության կանխարգելման և հանցագործությունից տուժածների պաշտպանության համար: Այնուհանդերձ, այդ սահմանափակումները, ներառյալ՝ դատական մարմինների որոշումներով նախատեսված կոնկրետ սահմանափակումները, պետք է ցանկացած պարագայում թույլատրեն շփումների թույլատրելի նվազագույն մակարդակ:

Միաժամանակ, 99-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք պետք է ունենան տեսակցություններ և պահպանեն կապն ընտանիքի և այլ անձանց հետ այնպես, ինչպես դա նախատեսված է դատապարտյալների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործով դատական մարմնի կողմից որոշակի ժամանակահատվածով կիրառվել է արգելք:

Հիշյալ կանոնների մեկնաբանությունների համաձայն՝ այն կանոնները, որոնց հիման վրա կիրառվում է սահմանափակումն ունեն կարևոր նշանակություն: Դրանք պետք է հստակ ձևակերպված լինեն, «համապատասխանեն գործող օրենսդրությանը», ինչպես պահանջում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասը և չպետք է թողնվեն ազատությունից զրկման վայրի վարչակազմի հայեցողությանը<sup>226</sup>: Սահմանափակումները պետք է հասցվեն նվազագույնի և համապատասխանեցվեն անձի անհատական ռիսկայնության աստիճանին: Այսպես, օրինակ՝ նամակագրությունը կարող է ենթարկվել ստուգման (արտաքին գնման)՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով, սակայն նամակագրության բովանդակությանը ծանոթանալը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա է հստակ տեղեկություն այն մասին, որ նամակագրության բովանդակությունը հակաիրավական բնույթ է կրում: Այն դեպքում, երբ առկա է անվտանգության սպառնալիք պետք է ոչ թե չտրամադրել տեսակցություններ, այլ ուժեղացնել հսկողություն դրանց անցկացման ընթացքում<sup>227</sup>:

<sup>225</sup> Տե՛ս ԽԿԿ-ի զեկույցը 2010 թվականի մայիսի 10-ից 21-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ: Փաստաթուղթ թիվ CPT/Inf (2011) 24, կետ 124-126: Ձեկույցի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով. <http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf>:

<sup>226</sup> Տե՛ս Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, զանգատ թիվ 26772/095:

<sup>227</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանությունները, էջ 13 (հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.refworld.org.ru/docid/55c36e8b4.html>):

Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» նույնպես պարունակում են դրույթներ ազատությունից զրկված անձանց շփումն արտաքին աշխարհի հետ ապահովելու նպատակով: Այսպես, ըստ ստանդարտ կանոնների 37-րդ կետի՝ ազատությունից զրկված անձանց պետք է հնարավորություն տալ ինչպես գրավոր հաղորդակցության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում, կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարկ ունեցող ընկերների հետ:

Հատկանշական է, որ ազատությունից զրկված անձանց տեսակցության իրավունքն ուղղակիորեն փոխկապակցված է վերջիններիս երեխաների հիմնարար իրավունքների հետ, որոնք, մասնավորապես, սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 9-րդ հոդվածով, որի համաձայն՝ համապատասխան պետական մարմինները պետք է ապահովեն երեխաների՝ իրենց ծնողների հետ կապ պահպանելու իրավունքի իրականացումը (...):

Հեռախոսազանգերի կամ տեսակցությունների հնարավորության բացարձակ արգելքի վերաբերյալ ԽԿԿ-ն նշել է, որ նման ցանկացած սահմանափակում պետք է հստակորեն հիմնավորվի նախաքննության պահանջներով, ենթակա լինի հաստատման վարույթին առնչություն չունեցող մարմնի կողմից և կիրառվի հստակ ժամանակահատվածի համար: Գրավոր որոշումը պետք է պարունակի կիրառված յուրաքանչյուր սահմանափակման հիմքերը և պետք է տրամադրվի ազատությունից զրկված անձին և (կամ) նրա փաստաբանին: Սահմանափակումները պետք է պարբերաբար վերանայվեն՝ դրանց շարունակական անհրաժեշտության առկայությունը քննարկելու համար<sup>228</sup>:

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավական կարգավորումների լույսի ներքո մանրագին վերլուծության ենթարկելով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելն արգելելու հարցերը՝ կարելի է ենթադրել, որ.

1. ինքնին քրեական գործի քննության փաստը չի կարող հանդիսանալ ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքի սահմանափակման հիմք: Նման հաղորդակցման ցանկացած սահմանափակում պետք է ունենա հատուկ և անհատականացված հիմնավորում,

2. տեսակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակից պետք է առանձնացնել ազատությունից զրկվածի ընտանիքի անդամներին կամ մերձավոր ազգականներին ու նրանց հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել ավելի խիստ պահանջներ.

3. ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ ձերբակալվածի կամ կալանավորվածի տեսակցության իրավունքը սահմանափակելու լիազորությամբ չպետք է օժտված լինի վարույթն իրականացնող մարմինը,

4. այս իրավունքը սահմանափակող որոշումները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

5. դրանք պետք է անհապաղ հանձնվեն կալանավորվածին և/կամ նրա փաստաբանին՝ բողոքարկման իրավական հնարավորությունից լիարժեք օգտվելու նպատակով,

6. ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքը սահմանափակող որոշումը պետք է պարբերաբար վերանայվի՝ անկախ ազատությունից զրկված անձի ցանկությունից կամ վերաբերմունքից:

<sup>228</sup> Տե՛ս ԽԿԿ-ի 2010 թվականի փետրվարի 5-ից 15-ը Վրաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցը, կետ 108:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմը դեռևս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ դեռևս 2018 թվականին մշակել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ: Նախագծով առաջարկվում են կարգավորումներ, որոնք ուղղված են կալանավորված անձի՝ մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելու հստակ մեխանիզմի նախատեսմանը, ազգային օրենսդրության միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովմանը:

Մասնավորապես՝ առաջարկվում է.

1) կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների հետ արգելելը նախատեսել որպես դատավարական հարկադրանքի միջոց,

2) նշված դատավարական հարկադրանքի միջոցը մինչդատական վարույթում կիրառել միայն քննիչի պատճառաբանված միջնորդությամբ՝ դատախազի որոշմամբ կամ դատախազի սեփական նախաձեռնությամբ,

3) դատական քննության փուլում կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցը կիրառել դատարանի որոշմամբ,

4) սահմանել կալանքի տակ գտնվելու ընթացքում մերձավոր ազգականի հետ մեղադրյալի տեսակցությունն արգելելու հստակ հիմքեր,

5) դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառել միայն կալանավորված անձի այն մերձավոր ազգականի նկատմամբ, ում տվյալները հստակ նշված են որոշման մեջ,

6) նախատեսել դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառելու վերաբերյալ որոշումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկելու հստակ պահանջ,

7) նախատեսել քննիչի միջնորդությամբ կամ դատախազի նախաձեռնությամբ հարկադրանքի նշված միջոցի ժամկետի երկարացման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը վերանայելու և այդ մասին պատճառաբանված որոշում կայացնելու պահանջ,

8) դատավարական հարկադրանքի միջոցի հետագա կիրառման անհրաժեշտության վերացման դեպքում նախատեսել դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կողմից այն վերացնելու պարտականություն,

9) նախատեսել դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին որոշումներ բովանդակելու պահանջ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ նախագծի ընդունման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 137-րդ կետում:

Պաշտպանն ընդգծում է, որ մինչև օրենսդրական համապատասխան փոփոխություններն անհրաժեշտ է պրակտիկական զարգացնել այն ուղղությամբ, որ վարույթն իրականացնողի կողմից կայացված յուրաքանչյուր որոշմամբ հստակ ամրագրվի անձանց շրջանակ, որոնց հետ արգելվում են կալանավորված անձանց տեսակցությունների ու հեռախոսային խոսակցությունները: Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար վերանայել որոշումն ու արգելքի անհրաժեշտության վերացման դեպքում վերացնել կայացված որոշումը:

Բացի դրանից, 2019 թվականի ընթացքում արձանագրվել է նաև դեպք, որ դեռևս նախաքննության փուլում կալանավորված մեղադրյալի տեսակցությունների և

հեռախոսային խոսակցությունների արգելք է սահմանվել վարույթն իրականացնող քննիչի որոշմամբ, այնուհետև քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, բայց քրեակատարողական հիմնարկը շարունակել է չթույլատրել կալանավորված անձին տեսակցել ընտանիքի ու արտաքին աշխարհի հետ, նշված արգելանքը հանվել է միայն մասնակի, կոնկրետ շրջանակի անձանց համար՝ հղում կատարելով դեռևս մինչդատական վարույթում ընդունված դատավարական որոշումներին:

ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք: Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 33-րդ հոդվածի ուժով՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասով՝ հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Սահմանադրությունից գատ, անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքը երաշխավորվում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով (այնուհետ՝ Եվրոպական կոնվենցիա): Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այս իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է (...) ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Հոդվածի ձևակերպումից ստացվում է, որ միջամտությունը՝ նախևառաջ պետք է նախատեսված լինի օրենքով: Այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ (ընդ որում, նպատակների ցանկը սպառիչ է): Եվ, պետք է լինի այդ նպատակին համաչափ: Այսինքն, միջամտությունը պետք է լինի այն չափով, որքան անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում իրավաչափ նպատակին հասնելու համար:

Ինչպես վերը նշվեց, միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները պետության համար սահմանում են հատուկ պահանջներ, որոնք վերաբերում են ազատությունից զրկված անձանց սոցիալական շփումներին, մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի հետ կապին:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակման պայմաններում պետության պարտավորվածությունն ավելի

է մեծանում՝ հնարավորինս խթանելու ազատությունից զրկված անձի բավարար սոցիալական շփումներն ու կապերը: Ընդ որում, ազատությունից զրկված անձի և, հատկապես, կալանավորված անձի համար սոցիալական շփումների երաշխավորումը դիտարկվում է նրա նկատմամբ վատ վերաբերմունքի տեսանկյունից:

Մասնավորապես, «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի արտաքին աշխարհի հետ կապի վերաբերյալ 99-րդ կանոնի համաձայն՝ այն դեպքերում, երբ չկա անհատական գործի շրջանակներում դատարանի կողմից կոնկրետ ժամանակահատվածում կոնկրետ արգելք նախատեսելու մասին պահանջ, ապա կալանավորված անձինք պետք է հաղորդակցվեն ընտանիքի անդամների և այլ անձանց հետ նույն եղանակով, ինչ դատապարտյալները:

Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով 2015 թվականի հունիսի 30-ի վճռում արձանագրել է, որ կալանքն, ինչպես անձին ազատությունից զրկելու յուրաքանչյուր այլ միջոց, հանգեցնում է նրա անձնական և ընտանեկան կյանքի սահմանափակում: Այնուամենայնիվ, դատապարտյալի՝ իր ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի կարևոր մասն է կազմում վարչակազմի կողմից նրա կապը մերձավոր ազգականների հետ ապահովելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ապահովմանն աջակցելը<sup>229</sup>:

Ուստի, անհրաժեշտ է պրակտիկան զարգացնել այն ուղղությամբ, որ քրեական գործով դատաքննության մեկնարկի դեպքում միջոցներ ձեռնարկվեն պարզելու համար մինչդատական վարույթում կիրառված արգելանքի վերաբերյալ վարույթն իրականացնող դատարանի դիրքորոշումը:

8. Քրեական գործի շրջանակներում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքի պրակտիկան

2019 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ քրեական գործերի նախնական քննության վերաբերյալ: Կրկին ստացվել են բողոքներ նախաքննության ընթացքում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա կալանք դնելու վերաբերյալ:

Օրինակ՝ բողոքներից մեկով մեղադրյալը հայտնել է, որ կալանք է դրվել իրեն պատկանող ողջ գույքի և դրամական միջոցների վրա, չնայած նրան, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի չափն անհամեմատ ավելի փոքր է:

Բողոքներից մեկ ուրիշով փաստաբանը հայտնել է, որ քրեական գործով քաղաքացիական հայցը և դատական ծախսերն ապահովելու նպատակով կալանք է դրվել մեղադրյալին փաստացի պատկանող գույքի վրա: Ընդ որում, իրավասու մարմինն իր գործողության իրավաչափությունը հիմնավորել է այն հանգամանքով, որ վարույթի ընթացքում ստացել են տեղեկություններ այն մասին, որ թեև որպես գույքի սեփականատեր օրենքի տեսանկյունից համարվում է այլ անձ, սակայն պարզվել է, որ դա իրականում փաստացի պատկանում է մեղադրյալին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածների վերլուծությունից ակնհայտ է, որ կանխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցը կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու՝

1. քաղաքացիական հայցը,

<sup>229</sup> Տե՛ս Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի (Khoroshenko v. Russia) գործով Եվրոպական դատարանի 2015 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 41418/04, կետ 106:

2. գույքի հնարավոր բռնագրավումը,
3. դատական ծախսերը:

Անդրադառնալով քննարկվող քրեադատավարական ինստիտուտին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սեփականություն հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն<sup>230</sup>: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն իր այս դիրքորոշումը հիմնավորել է հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Մասնավորապես, Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում, մեկնաբանելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, Եվրոպական դատարանը նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ<sup>231</sup>:

Չնայած նշված «արդարացի հավասարակշռության» պահանջին, վարույթն իրականացնող մարմինների կողմից երբեմն արգելանք է կիրառվում մեղադրյալին պատկանող ամբողջ գույքի վրա: Նման պրակտիկան, իհարկե, անընդունելի է՝ հատկապես, որ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրմամբ հաճախ պարզվում է, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի չափն անհամեմատ ավելի փոքր է:

Սա ոչ իրավաչափորեն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում մեղադրյալի համար, քան իրականում անհրաժեշտ է քաղաքացիական հայրը, գույքի հնարավոր բռնագրավումը կամ դատական ծախսերն ապահովելու համար:

Ի պատասխան Մարդու իրավունքների պաշտպանի հարցումներին՝ Դատախազությունը պարզաբանել է, որ մեղադրյալին պատկանող գույքի արժեքը որոշվում է դատաապրանքագիտական փորձաքննության նշանակմամբ և կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված՝ հաշվի է առնվում գույքի կազմը, արժեքը, պատճառված վնասի չափը, դատական ծախսերը, գույքի ընդհանուր զանգվածում

<sup>230</sup> Տե՛ս Ալլա Մեկոյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0185/11/11 քրեական գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի որոշում:

<sup>231</sup> Տե՛ս Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի (Borzhonov v. Russia) գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, զանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:



մեղադրյալի մասնաբաժինը, ներկայացված քաղաքացիական հայցի հայցագնի չափը: Դատախազության պարզաբանմամբ՝ 2019 թվականի ընթացքում մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի 26 որոշում է բողոքարկվել, որոնցից 6 որոշում է վերացվել դատախազի կողմից: Բացի այդ, Դատախազությունը պարզաբանել է, որ դատախազի կողմից սեփական նախաձեռնությամբ վերացվել է երկու անձի գույքի վրա դրված արգելանքը, իսկ մեկ քրեական գործով դատախազը քրեական գործի ուսումնասիրության արդյունքում իր սեփական նախաձեռնությամբ վարույթն իրականացնող մարմնին ցուցում է տվել վերանայել կայացված որոշումը և կալանք դնել մեղադրյալին պատկանող հստակ գույքի վրա՝ հաշվի առնելով, որ համատեղ սեփականության դեպքում կալանքը դրվում է միայն մեղադրյալի բաժնի վրա: Պարզաբանվել է նաև, որ մեղադրյալին պատկանող ողջ գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ ներկայացվել է 11 բողոք, որից 2-ը բավարարվել են դատախազի որոշմամբ, իսկ մնացածը մերժվել են: Մերժման որոշումները բողոքարկվել են դատական կարգով, որոնցից 3-ով դատարանը խախտում է ճանաչել և պարտավորեցրել է վարույթն իրականացնող մարմնին վերացնել այն՝ ամբողջ գույքի վրա կալանք դնելու անհրաժեշտության բացակայությամբ:

Ի գիտություն ընդունելով Դատախազության՝ որպես քրեական վարույթի նկատմամբ հսկողության հանձնառություն ունեցող մարմնի պարզաբանումները՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է միասնական պրակտիկայի ապահովման նպատակով խստորեն հետևել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը նշված որոշմամբ ամրագրված դիրքորոշումներին և բոլոր հնարավոր միջոցների կիրառմամբ բացառել մեղադրյալին պատկանող ամբողջ գույքի վրա անհամաչափ կալանք դնելու՝ պրակտիկայում դեռևս շարունակվող դեպքերը:

Այսպիսով, վերը նշվածի հաշվառմամբ, կարելի է պնդել, որ անհրաժեշտ է բացառել քրեական գործով վարույթի շրջանակներում այնպիսի գույքի վրա կալանքի կիրառությունը, որն օրենքով ենթակա չէ բռնագանձման կամ կալանքը պետք է դնել այն չափով, որ չափով ենթակա է բռնագանձման:

9. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործումը և դրանց չարաշահման վտանգը քրեական դատավարությունում

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման և դրանց շահագործման հետ կապված հարցերը մտահոգիչ էին 2018 թվականին, երբ արձանագրվել էր նաև նման դեպքերին առնչվող բողոքների աճ:

Հարկ է նկատել, որ ի տարբերություն 2018 թվականի, 2019 թվականի ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների հիման վրա մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու մասին որոշումներ կայացնելու վերաբերյալ բողոքներ Պաշտպանի աշխատակազմ չեն ստացվել:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել է բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների հիման վրա իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական գործողություններ կատարելու և որոշումներ կայացնելու պրակտիկայի ուսումնասիրությունը:

Հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունները, դրանց արդյունքում ստացված տվյալների կարևորությունն ու չարաշահման հնարավոր վտանգները՝ սույն հաղորդմամբ անդրադարձ է կատարվել հատկապես օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման խնդիրներին:

Դատախազությունը պարզաբանել է, որ միջոցներ է ձեռնարկում միայն օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալների հիման վրա անձի իրավունքների սահմանափակում ենթադրող դատավարական որոշումների կայացումը բացառելու ուղղությամբ: Որպես օրինակ՝ նշվել է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից միայն օպերատիվ տեղեկությունների հիման վրա բնակարանի խուզարկությունը թույլատրելու վերաբերյալ որոշում կայացնելու փաստի առթիվ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը հաղորդում է ներկայացրել Դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին, հաղորդման արդյունքներով հարուցվել է կարգապահական վարույթ, այնուհետև՝ կարճվել՝ դատավորի արարքում դատավարական իրավունքի նորմի կոպիտ խախտման բացակայության պատճառաբանությամբ: Ըստ պաշտոնական պարզաբանման՝ Գլխավոր դատախազի կողմից նույն փաստի առթիվ Արդարադատության նախարարին կրկին հաղորդում է ներկայացվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ, որի հիման վրա դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Խնդրի կապակցությամբ Դատախազությունից նաև տեղեկություն է տրամադրվել, որ 2019 թվականի ընթացքում 1 քրեական գործի շրջանակներում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալների հիման վրա 9 անձանց բնակարաններում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել դատարան, որոնք մերժվել են:

Իհարկե, ողջունելի է դատարանների նման մոտեցումը, սակայն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների հիման վրա կարող են ընդունվել նաև նախնական դատական վերահսկողության ենթակա որոշումների շրջանակից դուրս անձի իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական այլ որոշումներ:

Պաշտպանի դիտարկմամբ՝ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման ու դրանով պայմանավորված անձի իրավունքների երաշխավորման խնդիրը պայմանավորված է հենց այդ տվյալների գաղտնիությամբ: Իսկ քրեական հետապնդման մարմիններն, օգտվելով առիթից, որ դրանք գաղտնի են անձի համար, ուստի վերջինս չունի նաև դրանից պաշտպանվելու արդյունավետ միջոց, չարաշահում են այդ տվյալներն ու օրենսդրական ընդհանրական ձևակերպումներով կայացնում են որոշումներ, որոնք հանգեցնում են անձի իրավունքի ոչ համաչափ սահմանափակման:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով որպես օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման սկզբունք, ի թիվս այլնի, նախատեսված է նաև գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահության սկզբունքները: Բացի այդ, նույն օրենքի 4-րդ հոդվածի ուժով՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք:

Գործնականում ստացվում են իրավիճակներ, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողության հիմքում դրվում է բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալը: Նման պրակտիկան, իհարկե, վիճահարույց է մարդու իրավունքների տեսանկյունից, քանի որ փաստորեն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի ձեռքբերման ընթացքը, դրա արդյունքը գաղտնի են մնում անձի համար, ում իրավունքի սահմանափակում ենթադրող որոշում է կայացվում:

Վարույթն իրականացնող մարմինը պետք է համակողմանիորեն գնահատի օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալն ու որոշի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում միայն այդ տվյալի հիման վրա անձի իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու իրավաչափությունը:

Օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալի գնահատման և դրանով պայմանավորված այդ տվյալի օգտագործման թույլատրելիության հարցը մանրամասն քննարկման առարկա է դարձել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ, որով հարցը քննարկվել է օպերատիվ-հետախուզական տվյալի հիման վրա բնակարանի խուզարկության համար տրված թույլտվության իրավաչափության տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը, նախ, արձանագրել է, որ այդ տվյալներն ապացույցների նկատմամբ ստորադաս բնույթ ունեն, սակայն որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող առարկաների կամ անձանց գտնվելու վերաբերյալ, հետևաբար, ըստ Վճռաբեկ դատարանի, օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալները վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսելն անթույլատրելի է:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինը զրկված է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները գնահատելու հնարավորությունից, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք:

Վճռաբեկ դատարանն ավելի է կոնկրետացրել իր դիրքորոշումը՝ առանձնացնելով օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալների գնահատման հստակ չափորոշիչներ: Այսպես, Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ՝ տվյալները գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի միջոցառման՝

- կոնկրետ տեսակին օրենքով առաջադրվող պահանջները,
- արդյունքների ամրագրման եղանակը,
- աղբյուրի՝ օրենքով սահմանված կարգով բացահայտման հանգամանքը և այլն:

Այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել:

Բացի այդ, իր որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալների՝ բավարարության տեսանկյունից գնահատումը պետք է հանգեցնի այն ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության կատարման արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները: Ընդ որում, օրենսդրորեն նախատեսված չէ տվյալների համակցության վերաբերյալ պահանջ:

Այլ խոսքով՝ տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա<sup>232</sup>:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ դիրքորոշումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությանը: Այսպես, Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանը գտել է, որ առկա տվյալներն ունակ էին հանգեցնել համոզման, որ գողացված իրերը կարող էին պահվել Դիմումատուի բնակարանում: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ նման կասկած հարուցող փաստերը կարիք չունեն լինելու նույն մակարդակի, ինչպիսիք անհրաժեշտ են մեղադրանք առաջադրելու կամ անձին դատապարտելու համար: Նշելով նաև, որ ներպետական դատարանը կասկածը հաստատված է համաբեկ՝ հղում կատարելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տվյալների վրա, գտել է, որ հավելյալ տվյալներ պահանջելն իրավացիորեն արդարացված չէր լինի՝ հաշվի առնելով քննության վաղ փուլը և մասնավորապես այն փաստը, որ որոշ էական ապացույցներ (այն է՝ գողացված իրերը) դեռ պետք է բացահայտվեին<sup>233</sup>:

Չնայած նրան, որ Վճռաբեկ դատարանը վերոնշյալ դիրքորոշումներին հանգել է բնակարանի խուզարկության իրավաչափության համատեքստում, սակայն, ըստ էության Դատարանի դիրքորոշումները ընդհանրական բնույթ ունեն և պետք է կիրառվեն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի հաշվառմամբ անձի իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական գործողություններ կատարելիս և դատավարական որոշումներ կայացնելիս:

Կարևորելով հատկապես քննության վաղ փուլում օպերատիվ-հետախուզական միջոցառումների դերը հանցավորության դեմ պայքարում՝ Պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ գործնականում առկա է օպերատիվ-հետախուզական տվյալների չարաշահման վտանգավոր միտում հատկապես անձանց օպերատիվ տվյալների հիման վրա հանցանք կատարելու կասկածանքով իրավասու մարմին ներկայացնելու նպատակով արգելանքի վերցնելու դեպքերում:

Քրեական հետապնդման մարմինները, օգտվելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիության հանգամանքից, օպերատիվ տվյալներն ստուգելու պատճառաբանությամբ մարդկանց պարբերաբար բերման են ենթարկում, որը նրանց նկատմամբ ճնշում գործադրելու նպատակ է հետապնդում:

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է, որ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով:

<sup>232</sup> Տե՛ս Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 գործով կայացված որոշումը:

<sup>233</sup> Տե՛ս Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի (Ratushna v. Ukraine) գործով 2010 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 17318/06, կետեր 77, 80:

Ընդ որում, քրեական դատավարության ոլորտին վերաբերող գործերով ազատությունից ենթադրաբար զրկելու հանգամանքը գնահատելիս Եվրոպական դատարանը էական գործոն չի համարում անազատության մեջ պահելու հարաբերականորեն կարճ տևողությունը<sup>234</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության մեջ «հիմնավոր կասկածի» առկայությունը պարտադիր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1«գ» ենթակետի ներքո անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպքի պարագայում: Այսինքն՝ հանցանք կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու ցանկացած եղանակ կարող է իրավաչափ համարվել, եթե առնվազն առկա է հանցանք կատարած լինելու «հիմնավոր կասկած»:

Հանցանք կատարելու «հիմնավոր կասկածը» ենթադրում է այնպիսի փաստերի և տեղեկությունների առկայություն, որոնք օբյեկտիվ դիտորդի համար բավարար կլինեն հաստատելու տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու հնարավորությունը<sup>235</sup>:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ ահաբեկչական հանցագործություններն այս առումով գտնվում են հատուկ կարգավիճակում: Կյանքի կորստի և մարդկային տառապանքի վերահաս սպառնալիքի դեպքում (the attendant risk of loss of life and human suffering) ոստիկանությունը պարտավոր է գործել առավելագույն հրատապությամբ՝ առաջնորդվելով բոլոր տեղեկություններով, այդ թվում՝ գաղտնի աղբյուրներից ստացված: Բացի դրանից, Ոստիկանությունը հաճախ կարող է ստիպված լինել ձերբակալել կասկածվող ահաբեկչին այնպիսի տեղեկության հիման վրա, որը հավաստի է, սակայն որն առանց տեղեկության աղբյուրը վտանգի ենթարկելու չի կարող բացահայտվել կասկածյալի համար կամ ներկայացվել դատարանում մեղադրանքը պաշտպանելու համար<sup>236</sup>:

Ոստի անհրաժեշտ է բացառել անձին այլ ավելի ցածր հանրային վտանգավորություն ունեցող հանցանքի կատարման կասկածանքով ազատությունից զրկելու դեպքերը՝ միայն օպերատիվ այնպիսի տեղեկությունների հիման վրա, որոնց աղբյուրները հետագայում չեն կարող բացահայտվել:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների բացահայտված չլինելու պարագայում մարդու իրավունքի ապահովման տեսանկյունից գործ ունենք երաշխիքների ավելի ցածր շեմի հետ: Հենց սրանով է պայմանավորված Պաշտպանի դիրքորոշումն առ այն, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի բացահայտված չլինելու դեպքում է հատկապես անհրաժեշտ այն համադրել առկա այլ փաստական տվյալների հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ գործնականում առկա է օպերատիվ-հետախուզական տվյալների չարաշահման վտանգավոր միտում: Նշվածի հաշվառմամբ անհրաժեշտ է քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական տվյալներն օգտագործելիս առաջնորդվել Վճռաբեկ դատարանի կողմից առաջադրված չափանիշներով, կասկած հարուցող տվյալները գնահատման ենթարկելու հնարավորության

<sup>234</sup> Տ'ես Ռանցեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի (Rantsev v. Cyprus and Russia) գործով 2010 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 25965/04, կետ 317, Իսկանդարովն ընդդեմ Ռուսաստանի (Iskandarov v. Russia) գործով 2011 թվականի փետրվարի 21-ի վճիռ, գանգատ թիվ 17185/05, կետ 140:

<sup>235</sup> Տ'ես Ֆոքսը, Քեմբլը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռ, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32, Իլգար Մամմադովն ընդդեմ Ադրբեյջանի (Ilgar Mammadov v. Azerbaijan) գործով 2014 թվականի մայիսի 22-ի վճիռ, գանգատ թիվ 15172/13, կետ 88:

<sup>236</sup> Տ'ես վերը նշված Ֆոքսը, Քեմբլը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռ, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, նույն տեղում:

բացակայության դեպքում դրանք համադրել ձեռք բերված այլ փաստական հանգամանքների, փաստական տվյալների հետ կամ դրանք բացառապես օգտագործել Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ստուգողական ընթացակարգերն ապահովելուց հետո:

10. Քրեական դատավարությանը մասնակցող, ինչպես նաև հանցագործության մասին հաղորդում տվող անձանց պաշտպանությունը

Քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Սա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված երաշխիք է, որը միտված է պաշտպանելու քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Գործող օրենսդրությունը սահմանել է պաշտպանության հետևյալ միջոցները՝

1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում:

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը:

3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը:

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը:

5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը:

6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը:

7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը:

8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը:

9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը:

10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը:

11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը:

12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ, իսկ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում:

2019 թվականին պաշտպանության միջոցների կիրառման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ քրեական գործով տարբեր

դատավարական կարգավիճակներ ունեցող անձանց կողմից: Այսպես, մի դեպքում՝ տուժողը նշել է, որ քրեական գործն ըստ էության քննության նպատակով ուղարկվել է դատարան, թեև տվյալ պահին իր անձնական անվտանգությունն ապահովվում է, սակայն մտավախություն ունի, որ նույնիսկ տվյալ անձանց դատապարտվելուց հետո անվտանգության խնդիր կունենա:

Մեկ այլ դեպքում՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակում պաշտպանության միջոց կիրառելու վերաբերյալ խնդրանքով դիմել է լրագրողի փաստաբանը:

Մի ուրիշ դեպքում էլ նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու ենթադրյալ դեպքի քննության ընթացքում կնոջ նկատմամբ պաշտպանության միջոց ձեռնարկված չի եղել, մեղադրյալի և տուժողի միջև իրականացված առերեսումից հետո նախկին ամուսնու կողմից կատարվել է հանրորեն վտանգավոր արարք՝ կնոջն առևանգելու ձևով: Նշված դեպքը տեղի է ունեցել Հայաստանի մարզերից մեկում, և Պաշտպանին ներկայացվել էր ահագանգ, ըստ որի՝ կինն ու նրա փաստաբանը պետք է վերադառնան Երևան քաղաք, սակայն մտավախություն ունեն, որ նման միջադեպ դարձյալ կկրկնվի: Ոստիկանության հետ համագործակցության արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել նշված անձանց մինչև Երևան քաղաք տեղափոխել Ոստիկանության ուղեկցմամբ: Սակայն, տեղին է նկատել, որ նման դեպք չէր լինի, եթե վարույթն իրականացնող մարմինն ի սկզբանե որոշում կայացնէր պաշտպանության որևէ միջոց կիրառելու մասին (օրինակ՝ պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը):

ՀՀ դատախազության տեղեկացմամբ՝ 2019 թվականին 17 քրեական գործով կիրառվել է պաշտպանության միջոց 23 անձի նկատմամբ, որից՝ քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին նախազգուշացնելը պաշտպանության միջոցը կիրառվել է 2 անձի նկատմամբ 2 քրեական գործերով, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը պաշտպանության միջոցը կիրառվել է 11 անձի նկատմամբ 10 քրեական գործերով, անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը պաշտպանության միջոցը կիրառվել է 7 անձի նկատմամբ 2 քրեական գործերով, բնակության այլ վայր փոխադրելը պաշտպանության միջոցը կիրառվել է 1 անձի նկատմամբ 1 քրեական գործով, ծառայության վայրը փոխելը պաշտպանության միջոցը կիրառվել է 2 անձի նկատմամբ 2 քրեական գործերով:

ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկության համաձայն՝ 2019 թվականի ընթացքում անձի կյանքի և առողջության, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների առթիվ հարուցված 14 քրեական գործով 21 անձի նկատմամբ որոշում է կայացվել պաշտպանության միջոց կիրառելու մասին, որից 15-ը՝ անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանություն, 3-ը՝ նախազգուշացում, 3-ը՝ ծառայության վայրը փոխել: Հատկապես ուշադրության է արժանի այն, որ ըստ Քննչական կոմիտեի տվյալների՝ ընտանիքում բռնությունից տուժած անձանց նկատմամբ պաշտպանության միջոց չի կիրառվել, պաշտպանության ենթակա անձանցից պաշտպանության միջոց կիրառելու մասին դիմումներ չեն ստացվել:

Քրեական դատավարության օրենսգրքով ամրագրվել է, որ պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ: Չնայած դրան, այս ինստիտուտի ներդրումից ի վեր պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները որևէ իրավական ակտով կանոնակարգման չեն ենթարկվել:

Պաշտպանի համոզմամբ հենց ընթացակարգային նորմերի բացակայությունն է գործնականում խնդիրներ առաջ բերում: Ընթացակարգային նորմերի բացակայությամբ է

պայմանավորված նաև այն, որ իրավակիրառողները հաճախ խուսափում են կիրառել պաշտպանության միջոցներ:

Նշված խնդրի լուծման նպատակով 2019 թվականին մշակվել և Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին է ներկայացվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները սահմանող՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները, ինչպես նաև պաշտպանվող անձի և պաշտպանության միջոցի իրականացման վերաբերյալ տեղեկությունները չհրապարակելու մասին գրավոր նախազգուշացման ձևը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծ:

Մշակված նախագիծն ուսումնասիրվել է Պաշտպանի աշխատակազմում և, ընդհանուր առմամբ դրական գնահատելով նախաձեռնությունը, ներկայացվել են որոշ նկատառումներ: Մասնավորապես.

Նախագծով՝ պաշտպանությունն իրականացվում է այն դեպքում, երբ պաշտպանվող անձի կյանքին, առողջությանը, գույքին, իրավունքներին ու օրինական շահերին իրական վտանգ է սպառնում՝ քրեական դատավարության անձի մասնակցությամբ պայմանավորված: Հարկ է նկատել, սակայն, որ Քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք: Այսինքն՝ Օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար նշանակություն ունեցող տվյալներ հայտնելու հետևանքով անձի, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը վտանգվելու դեպքում պաշտպանության իրավունք ունեն թե՛ քրեական դատավարությանը մասնակցող, թե՛ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ: Այսինքն, գործնականում պաշտպանության միջոց կիրառելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև տվյալ անձի և նրա ընտանիքի անդամների ու մերձավորների համար:

Դրանից բացի, Նախագծի ուսումնասիրմամբ պարզվել է, որ դրանով կարգավորվում են Քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված պաշտպանության ոչ բոլոր միջոցները: Օրինակ, Նախագծի կարգավորումից դուրս է մնացել պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելու միջոցը: Ուստի առաջարկվել է կարգավորումների լիարժեքության տեսանկյունից կարգավորման առարկա դարձնել պաշտպանության բոլոր միջոցները՝ անկախ նրանից, թե դրանք պետք է իրականացվեն Ոստիկանության, թե այլ մարմնի կողմից:

Բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ սովորաբար պաշտպանության միջոցները չեն կիրառվում պաշտպանության համար դիմող անձի կողմից հայտնած տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու գործնական խնդիրների պատճառով:

Անձի իրավունքների երաշխավորման տեսանկյունից առավել խնդրահարույց է առանց ինքնության մասին տեղեկություններ հրապարակելու դատարանում պաշտպանվող անձին



հարցաքննելը: Չնայած, որ այդ դեպքում պաշտպանության է առնվում ցուցմունք տվող անձը, սակայն մյուս կողմից դա կարող է վտանգել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը<sup>237</sup>:

Պաշտպանության միջոցների հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ՝ հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ, սակայն հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանքները մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը:

Վճռաբեկ դատարանը ևս քննարկվող հարցում խիստ մոտեցում է որդեգրել: Մասնավորապես, Հ. Սահակյանի վերաբերյալ կայացրած որոշմամբ Դատարանը նշել է, որ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից, ուստի առանց պաշտպանության կողմին ծանոթանալու հնարավորություն տալու, առանց դատաքննության ընթացքում հետազոտվելու՝ որևէ ապացույց չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում: Այլ կերպ, ըստ Վճռաբեկ դատարանի, չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից, իսկ այդ արգելքը խախտելն ինքնին կազմում է քրեադատավարական օրենքի էական խախտում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հաստատուն նախադեպային իրավունքին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այսինքն՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում, ուստի այս պարագայում հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռությունը հնարավոր է ապահովել հանրային շահերի առավել մեծ ընդգրկմամբ<sup>238</sup> (Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ մանրամասն խոսվել է սույն գլխի մեկ այլ պարագրաֆում):

Վերը նշված դիրքորոշումների հաշվառմամբ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է՝

<sup>237</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդհանուր հետևությունն այն է, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա ապահովված չէ նրա արդար դատաքննության իրավունքը (օրինակ Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի, գանգատ թիվ 9120/80, 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ, 31-33-րդ կետեր): Այնուհետև, զարգացնելով իր դիրքորոշումը, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել (Մադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1), գանգատներ թիվ 29900/96 և այլն, 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռ, 65-րդ կետ):

<sup>238</sup> Տե՛ս Համայնակ Սահակյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10քրեական գործով կայացրած որոշումը, 21-23-րդ կետեր:

1. քայլեր ձեռնարկել քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները կանոնակարգող իրավական ակտի ընդունման ուղղությամբ,

2. գործնականում մանրամասն ուսումնասիրման առարկա դարձնել պաշտպանության միջոց կիրառելու մասին միջնորդությունները, այդ թվում՝ դրա արժանահավատությունը ստուգելու միջոցով:

11. Քրեական գործով վարույթի ընթացքում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտությունը

Մարդու իրավունքների պաշտպանի 2016, 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներով մանրամասն անդրադարձ է կատարվել անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովման, սեփականության իրավունքին միջամտության համաչափության խնդիրներին:

Մասնավորապես, իրականացնելով սահմանադրական, կոնվենցիոն և ներպետական օրենսդրական համապատասխան նորմերի համակարգված վերլուծություն, այդ հաղորդումներում արձանագրվել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ որպես իրեղեն ապացույց ճանաչված առարկաները պահվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ մինչև գործով վերջնական դատական ակտի կամ որոշման կայացումը:

Միևնույն ժամանակ, սեփականության օբյեկտ հանդիսացող որոշակի առարկաների դեպքում օրենսդիրը նախատեսել է իրեղեն ապացույցների պահպանման նշված կանոնից բացառություն, համաձայն որի՝ գույքը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին վերադարձվում է քրեական գործի քննության ընթացքում:

Մրա հետ կապված, հարկ ենք համարում նշել, որ թեև քրեադատավարական օրենքը վարույթն իրականացնող մարմնի՝ իրեղեն ապացույցները նախքան քրեական գործով վարույթի ավարտը վերադարձնելու պարտականության որևէ կոնկրետ դատավարական ժամկետ չի սահմանում, այդուհանդերձ, օրենսդրական այս պահանջի՝ սեփականության իրավունքի պաշտպանության կարևորությունից բխում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է պատշաճ ջանասիրություն ցուցաբերի իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու ուղղությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ շարունակում է ստանալ թե գրավոր և թե բանավոր բողոքներ: Բողոքներով անձինք տեղեկացրել են, որ քրեական վարույթի շրջանակներում Ոստիկանության բաժնում պահվող կամ քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված տրանսպորտային միջոցը քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու կամ առանց պատճառաբանությամբ չի վերադարձվել սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին: Որոշ դեպքերում անձինք ընդգծել են, որ տրանսպորտային միջոցը պահվում է բաց տարածքում, առանց ծածկի, և հսկողության (օրինակ՝ առկա չեն տեսախցիկներ կամ տարածքը ցանկապատված չէ): Մի քանի դեպքում անձինք նշել են, որ տրանսպորտային միջոցը խիստ անհրաժեշտ է, ամենօրյա աշխատանքի համար, ապրուստի միակ միջոցն է:

Բողոքների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ քաղաքացիներն ու իրավապահ մարմինները հաճախ են բախվում նշված խնդրին գլխավորապես փորձաքննության նշանակման դեպքում դրանց եզրակացությունները տևական ժամանակ անց ստանալու պատճառով: Երբեմն նաև իրավապահ մարմիններ որպես արդարացում նշում են վարույթն իրականացնողի ծանրաբեռնվածության խնդիրը: Օրինակ, արձանագրվել են դեպքեր, երբ

տրանսպորտային միջոցը հետ չի վերադարձվել պատճառաբանությամբ, որ անհրաժեշտություն կա այն խուզարկելու, սակայն վարույթն իրականացնողը ծանրաբեռնվածության պատճառով չի կարողանում սեղմ ժամկետում դիմել դատարան՝ խուզարկության վերաբերյալ դատական ակտը ստանալու և այն իրականացնելու համար:

ՀՀ քննչական կոմիտեի պարզաբանմամբ՝ 2019 թվականի ընթացքում սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու հնարավորությունից զրկված լինելու դեպքերով քաղաքացիների կողմից ներկայացվել է 6 բողոք: Քննչական կոմիտեի պնդմամբ՝ անձի սեփականությունը վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ պահվում է մինչև նշանակված փորձաքննությունների կապակցությամբ եզրակացությունները ստանալը, իսկ եզրակացությունների տրամադրման ժամկետներն անմիջականորեն պայմանավորված են փորձագիտական հաստատությունների ծանրաբեռնվածության աստիճանով:

Քրեական գործերով իրեղեն ապացույցների, առգրավված իրերի, առարկաների և այլ արժեքների կորուստը, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի գույքային իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումները բացառելու նպատակով դեռևս 2018 թվականի դեկտեմբերի 18-ին տրվել էր համապատասխան շրջաբերական<sup>239</sup>:

Պաշտպանը կարևորում է Քննչական կոմիտեի նախաձեռնողականությունը գործնականում առաջացող խնդիրների լուծման ուղղությամբ, ընդգծում, որ քրեական գործով վարույթի շրջանակներում անձանց իրավունքների սահմանափակման վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն պետք է ունենա քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր: Ընդ որում, թեև այդպիսի սահմանափակումը «օրենքով նախատեսված լինելու» և «իրավաչափ նպատակ հետապնդելու» պահանջներին բավարարելու ուժով սկզբնապես կարող է իրավաչափ լինել, այդուհանդերձ, դրա շարունակականությունը կարող է առաջ բերել այդ իրավունքին միջամտության համաչափության խնդիր: Ավելին, անթույլատրելի և օրենքին հակասող է իրավակիրատ պրակտիկայի ցանկացած դրսևորում, երբ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը պահպանվում է՝ դրա փաստական և իրավական հիմքերի բացակայության պայմաններում:

Ուստի, վերը նշվածի հաշվառմամբ, կարելի է պնդել, որ՝

1. քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված՝ իրեղեն ապացույցները քրեական գործի հետ պահելու ընդհանուր կանոնից բացառության առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քննարկել այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը, իսկ չթողնելու պարագայում պետք է ներկայացնի պատշաճ հիմնավորում,

2. վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ցուցաբերվի բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ իրեղեն ապացույց ճանաչված՝ անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ,

3. պետք է բացառվի քրեական գործով վարույթի շրջանակներում գույքի վրա կալանքի կիրառությամբ անձանց սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն, որը հիմնված չէ փաստական և իրավական հիմքերի վրա:

<sup>239</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 302-303:

12. Մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցությունները ձայնագրելու և որպես ապացույց քրեական գործում օգտագործելու պրակտիկան

ՀՀ Սահմանադրության մակարդակով երաշխավորված է հաղորդակցության, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը: Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ բացառապես Սահմանադրությամբ նախատեսված նպատակների համար և երաշխիքների պահպանմամբ:

Դրա հետ մեկտեղ, քրեադատավարական գործող օրենսդրությունը կանոնակարգում է միայն քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից անձի հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակման հիմքերն ու ընթացակարգը: Անձի նշված իրավունքը, սակայն, կարող է սահմանափակվել նաև հաղորդակցության մասնակիցներից մեկի կողմից:

Հարկ է նշել, որ պետական մարմինների կողմից հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը սահմանափակելու դեպքերում օրենքով սահմանված կարգով և համապատասխան դատավարական երաշխիքների պահպանմամբ միջամտության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցն ինքնին խնդրահարույց չէ, ի տարբերություն հաղորդակցության մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունների:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրությունը ևս վկայում է մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես ապացույց քրեական գործում օգտագործելու ընթացքում առկա խնդիրների մասին: Մրա հետ կապված 2019 թվականին ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ առկա է նաև ոչ միատեսակ պրակտիկա:

2019 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել այն մասին, որ քրեական գործով վարույթն իրականացնող մարմինները մերժել են մասնավոր անձանց կողմից ներկայացված՝ քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտող ձայնագրությունները քննարկման առարկա դարձնել և օգտագործել որպես ապացույց: Դրան զուգահեռ, արձանագրվել են դեպքեր, երբ նույնաբնույթ ձայնագրությունները քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների կողմից ճանաչվել են որպես ապացույց և կցվել քրեական գործին:

Ուստի սույն թեմայի շրջանակում Պաշտպանը հարկ է համարում անդրադառնալ հաղորդակցության մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես ապացույց քրեական գործում օգտագործելու թույլատրելիության հարցին:

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում հանրային և մասնավոր անձանց գործողությունների իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը դրանք նույն հարթության մեջ չի դիտարկում:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ մասնավոր (հեռախոսային) խոսակցության ձայնագրումը զրուցակցի կողմից և նման ձայնագրությունների անձնական օգտագործումն, ըստ էության (per se), չեն խախտում Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, եթե դա իրականացվել է մասնավոր միջոցներով: Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ այս իրավիճակն իր բնույթով տարբերվում է քրեական կամ այլ գործի քննության համատեքստում ի շահ այդ քննության մասնավոր անձի կողմից հաղորդակցության գաղտնի դիտարկումից և

դրա ձայնագրումից, որն իրականացվում է քննություն իրականացնող պետական մարմինների լռելյայն համաձայնությամբ և վերջիններիս տեխնիկական աջակցությամբ<sup>240</sup>:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մասնավոր անձի գործողություններն իրավական կարգավորման ենթակա չեն և (a priori) չեն կարող որակվել որպես դատավարական գործողություններ, այդուհանդերձ դրանք էական դեր ունեն դատավորի համոզմունքի ձևավորման համար՝ նշելով, որ ներկայացվող ապացույցների թույլատրելիությունը կանոնակարգող իրավական կարգավորումների բացակայությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում<sup>241</sup>:

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը ոչ իրավաչափ է համարել դատարանի կողմից գործի ըստ էության քննության փուլում ներկայացված խոսակցությունների ձայնագրությանը պատշաճ գնահատական չտալը<sup>242</sup>:

Բացի դրանից, Եվրոպական դատարանը նաև գտել է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության հիման վրա դիմումատուին դատապարտելը չի հանգեցրել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման: Այդ ձայնագրությունը, որով հիմնավորվել էր դիմումատուի կողմից կնոջ սպանության դրոշմության փորձի կատարումը, ներկայացվել էր քննիչին և հետագայում օգտագործվել դատարանում՝ մերժելով ձայներիզը գործի նյութերից հեռացնելու մասին դիմումատուի պահանջը<sup>243</sup>:

Վերը նշված միջազգային իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ մասնավոր անձանց կողմից կատարված ձայնագրառումներն ինքնին անթույլատրելի չճանաչելը և դրանց՝ որպես ապացույց օգտագործելն ամբողջությամբ չբացառելը ողջամիտ է:

Անձի կողմից կատարված գաղտնի ձայնագրության արդյունքները որպես ապացույց օգտագործելու խնդրին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը Մելինե Մարգարյանի գործով՝ եզրահանգում անելով այն մասին, որ գործի քննության ընթացքում տուժող կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացված՝ իր ամուսնու կողմից կատարված՝ իր և ամբաստանյալի միջև տեղի ունեցած խոսակցության ձայնագրառումը պարունակող լազերային սկավառակն անթույլատրելի ապացույց է: Վճռաբեկ դատարանը դա հիմնավորել է նրանով, որ ձայնագրությունը կատարվել է քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի՝ վկայի կողմից, չի պահպանվել այդ գործողության՝ օրենքով սահմանված կատարման կարգը, քանի որ ամբաստանյալի և տուժողի խոսակցությունների լսման և ձայնագրառման միջոտրություն դատարան չի ներկայացվել, դատարանը համապատասխան որոշում չի կայացրել<sup>244</sup>:

Սակայն հետագայում, մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերանայել և զարգացրել է Մելինե Մարգարյանի գործով արտահայտված իրավական

<sup>240</sup> Տե՛ս Վան Վոնդելն ընդդեմ Նիդերլանդների (V. Vondel v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 38258/03, կետ 49:

<sup>241</sup> Տե՛ս Թուրքուին ընդդեմ Ֆրանսիայի (Turquin v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2002 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 43467/98:

<sup>242</sup> Տե՛ս Նեչիպորուկ և Յոնկալո ընդդեմ Ուկրաինայի (Nechiporuk and Yonkalo v. Ukraine) գործով Եվրոպական դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի վճիռը, գանգատ թիվ 42310/04, կետ 276-281:

<sup>243</sup> Տե՛ս Սչենկն ընդդեմ Շվեյցարիայի (Schenk v. Switzerland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1988 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10862/84, կետեր 47-49:

<sup>244</sup> Տե՛ս Մելինե Մարգարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0081/01/11 գործով կայացված որոշումը:

դիրքորոշումները<sup>245</sup>, ինչը ողջունելի է և հատկապես կարևոր է մասնավոր անձանց կողմից կատարված ձայնագրառումներն ինքնին անթույլատրելի ճանաչելու պրակտիկան վերացնելու համար:

Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը չպետք է նույնացնել քրեական հետապնդման մարմինների կողմից քրեադատավարական ճանապարհով անձի հաղորդակցության վերահսկման, այդ թվում՝ նրանց իրազեկվածությամբ՝ քրեական կամ այլ պաշտոնական քննության համատեքստում համագործակցող անձանց կողմից իրականացված ձայնագրառման հետ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանց համար սահմանված չափանիշները չպետք է մեխանիկորեն կիրառել մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցությունների ձայնագրության նկատմամբ: Նշված չափանիշները ենթակա են վերագրման պետական իշխանության մարմիններին, ովքեր, ի տարբերություն մասնավոր անձանց, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց ճանաչելու և քրեական դատավարությունում օգտագործելու հնարավորությունը գնահատելիս քրեադատավարական կարգավորումները չպետք է մեկնաբանվեն չափազանց ձևականացված: Այսինքն՝ հեռախոսային խոսակցության ձայնագրությունը մասնավոր անձի կողմից կատարելն ինքնին չպետք է դիտարկվի որպես անվերապահ հիմք՝ դրա օգտագործումը քրեական դատավարությունում բացառելու համար:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է կատարել, որ մասնավոր անձի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրումը կարող է ճանաչվել որպես ապացույց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթուղթ, և ենթարկվել իրավական գնահատման՝ ըստ անհրաժեշտության նաև հիմք հանդիսանալով քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման համար<sup>246</sup>:

Ուստի, Պաշտպանը, նկատի ունենալով և ողջունելով Վճռաբեկ դատարանի խնդրի կապակցությամբ որդեգրած մոտեցումը, արձանագրում է, որ պետական մարմիններն իրենց գործունեության ընթացքում պետք է հետևեն վերը նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին և ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու հարցը քննարկելիս առաջնորդվեն դրանցով:

Մինևույն ժամանակ հարկ է ընդգծել, որ հաշվետու տարվա ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հաղորդակցության մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների կողմից ճանաչվել են որպես ապացույց և կցվել քրեական գործին: Նշվածի կապակցությամբ Դատախազությունից ևս տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ 2019 թվականի ընթացքում մեկ քրեական գործով մասնավոր անձի կողմից ներկայացված հեռախոսային խոսակցությունների ձայնագրումը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ այլ փաստաթուղթ է ճանաչվել և կցվել քրեական գործին:

Ընդ որում, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի ուսումնասիրությամբ նաև պարզվել է, որ հաղորդակցության մասնավոր սուբյեկտների կողմից կատարված

<sup>245</sup> Տե՛ս Վահիկ Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԼԴ/0002/01/18 գործով կայացված որոշումը:

<sup>246</sup> Տե՛ս նույն տեղում:

ձայնագրությունները քրեական գործին կցելուց հետո բողոք ներկայացրած անձի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ (անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը) և 146-րդ (նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը) հոդվածների հատկանիշներով նոր քրեական գործ հարուցելու խնդրանքով, սակայն միջնորդությունը մերժվել է: Հատկանշական է, որ բողոքի կապակցությամբ Դատախազությունից պարզաբանվել է, որ հաղորդակցությունը ձայնագրած անձանց գործողություններն ուղղված են եղել ենթադրյալ հանցագործությունների բացահայտմանը՝ այդ կերպ ապահովելով նաև հանրային շահի գերակայության սկզբունքի կիրառումը, և դրանք չեն կարող համարվել ապօրինի: Ուստի, Դատախազությունը գտել է, որ ձայնագրությունները չեն կարող քննարկվել ՀՀ քրեական օրենսգրքի տիրույթում, մասնավորապես 144-րդ և 146-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համատեքստում:

Մրա հետ կապված Պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրություններն ինքնին անթույլատրելի ապացույց չդիտարկելու վերաբերյալ առկա գնահատականները չեն բացառում նմանատիպ ձայնագրությունները ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համատեքստում դիտարկելու հնարավորությունը:

Նախ, Պաշտպանն ընդգծում է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտման բացակայությունը դեռևս չի նշանակում, որ չի կարող առկա լինել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Այդ մասին է վկայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումն այն մասին, որ խոսակցության ապօրինի ձայնագրության օգտագործումը չի զրկում մեղադրյալին արդար դատաքննության իրավունքից, նույնիսկ եթե այն ձեռք է բերվել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմամբ<sup>247</sup>:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածները հենց կոչված են ապահովելու անձի վերը նշված սահմանադրական իրավունքները և պաշտպանելու անձի անձնական ու ընտանեկան կյանքն անհարկի միջամտությունից:

Ուստի անհրաժեշտ է պարզել խոսակցության ձայնագրատմամբ անձի՝ Սահմանադրությամբ հատուկ երաշխավորված իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության աստիճանը, դրանով պայմանավորված նաև քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցակազմերի առկայության հարցը: Հակառակ պարագայում, անձի անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի նման եղանակով անհարկի սահմանափակումները կկրեն համատարած բնույթ:

Խնդիրը հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ ձայնագրությունը կատարվում է խոսակցության մասնակից չհանդիսացող երրորդ անձանց կողմից: Այն դեպքում, երբ ձայնագրությունը կատարվում է զրուցակցի կողմից արարքի հանրային վտանգավորությունն ավելի ցածր է, քանի որ հաղորդակցության մասնակիցը ողջամտորեն կարող է ենթադրել, որ իր ներկայացրած տեղեկությունների բովանդակությունը

<sup>247</sup> Տե՛ս Թուրքուին ընդդեմ Ֆրանսիայի (Turquin v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2002 թվականի հունվարի 24-ի որոշումը, զանգատ թիվ 43467/98:

հետագայում կարող է բացահայտվել վարույթն իրականացնող մարմին: Ուստի գրուցակցի անձով պայմանավորված ընտրում է ներկայացվող տեղեկությունների բովանդակության շրջանակը: Մյուս կողմից, երրորդ անձի կողմից ձայնագրությունը կատարելու դեպքերում անձը գրկված է նման հնարավորությունից, ուստի կատարված արարքի հանրային վտանգավորությունն այս դեպքում համեմատաբար ավելի բարձր է:

Այս կապակցությամբ հատկապես ողջունելի է, որ Վճռաբեկ դատարանն իր վերոնշյալ որոշմամբ սահմանել է նաև այն հակակշռող գործոնները, որոնք իրավակիրատողները պետք է գնահատեն մասնավոր անձի կողմից օրենքով չկանոնակարգված եղանակով կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունն ըստ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների որոշելիս<sup>248</sup>:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է՝

1. վերացնել մասնավոր անձանց կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացված ձայնագրությունները որպես ապացույց օգտագործելն ինքնին անթույլատրելի ճանաչելու պրակտիկան,

2. մասնավոր անձանց կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացված ձայնագրությունները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցը լուծել Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումների, և հատկապես հակակշռող գործոնների լույսի ներքո:

### 13. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան

Կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկայի հարցը շարունակում է մնալ արդիական: Արդիականությունը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ այն գործող օրենսդրությամբ սահմանված խափանման միջոցներից ամենախիստն է, որն ուղեկցվում է անձին անձնական ազատությունից զրկելով և դրանից բխող այլ իրավունքների սահմանափակումով, այլ նաև, առանձին դեպքերում կրում է շարունակական բնույթ և նույնիսկ գործնականում դեպքեր են լինում, երբ մինչև վերջնական դատական ակտի կայացումն անձը գտնվում է նախնական կալանքի տակ: Ակնհայտ է, որ կալանավորումը՝ որպես խափանման միջոց է ընտրվում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման նպատակից ելնելով, և այդ խափանման միջոցի ընտրությունը, ի թիվս այլնի, պայմանավորված է այլընտրանքային արդյունավետ խափանման միջոցների բացակայությամբ:

2019 թվականի ընթացքում կալանքի կիրառելիության վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ստացվել ՀՀ դատախազությունից և ՀՀ քննչական կոմիտեից:

Այսպես, Դատախազության տեղեկություններով՝ 2019 թվականի ընթացքում ներկայացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 1984 միջնորդություն, որից 1802-ը բավարարվել է, (այսինքն՝ ներկայացված միջնորդությունների 90.8%-ը բավարարվել է): 2019 թվականի ընթացքում քննիչի կողմից կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդություններից դատախազի կողմից հետ է վերցվել 5 միջնորդություն (նախորդ տարի՝ 8):

Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունների քանակը կազմել է 1866, այսինքն՝ 2019 թվականին այդ միջնորդություններն աճել են շուրջ 118-ով:

<sup>248</sup> Տե՛ս Վահիկ Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի ապրիլի 11-ի վերը նշված որոշումը:



Այնուամենայնիվ, 2017 թվականի համեմատությամբ (երբ միջնորդությունների քանակը կազմել է 2363) 2019 թվականին դրական դինամիկան պահպանվել է: Մա կարևոր է՝ հաշվի առնելով դատախազության հսկողական գործառույթները մինչդատական վարույթի ընթացքում և դերը պրակտիայի ձևավորման հարցում:

Ինչ վերաբերում է դատախազի կողմից կալանքը որպես խափանման միջոց վերացնելուն, ապա, Դատախազության հավաստմամբ 2019 թվականի ընթացքում սեփական նախաձեռնությամբ այդպիսի 1048 (նախորդ տարի՝ 1328) որոշում է կայացվել:

Միաժամանակ, Դատախազությունից տեղեկացրել են, որ 2019 թվականին ներկայացված միջնորդություններից 198-ի դեպքում անձի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով: Ինչպես Պաշտպանի կողմից նշվել է դեռևս 2017 թվականի Տարեկան հաղորդմամբ՝ անձին կալանքից գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011 թվականից մինչև 2017 թվականներին շարունակել է տատանվել 4-7% միջակայքում<sup>249</sup>: Այս առումով կարելի է արձանագրել, որ 2018 թվականին գրավի կիրառման դեպքերն աճել են՝ հասնելով 11.1%-ի, իսկ 2019 թվականին նվազել, հասնելով 10.9 %-ի:

Քննչական կոմիտեից տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ 2018 թվականի ընթացքում 1664 մեղադրյալի նկատմամբ միջնորդություն է հարուցվել խափանման միջոց կալանք ընտրելու մասին, բավարարվել է 1530-ը: 151 անձի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը փոխարինվել է գրավով, 115 անձի նկատմամբ կիրառվել է այլ խափանման միջոց, այդ թվում 108 անձի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին, 2 անձնական երաշխավորություն, 5 դեպքում հրամանատարության հսկողության հանձնելը: Ընդ որում, դատախազի համաձայնությամբ 6 դեպքում գրավի ձևով ընտրված խափանման միջոցը քննիչի որոշմամբ փոփոխվել կամ վերացվել է:

Դատախազության և քննչական կոմիտեի կողմից ստացված տվյալների համադրմամբ ստացվում է, որ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների 85.1%-ը հարուցվել են Քննչական կոմիտեում քննվող քրեական գործերով:

Ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվող բողոքները հիմնականում վերաբերում են դրա հիմքերի բավարարությանն ու արժանահավատությանը, իսկ ավելի հաճախ՝ դրա շարունակականությանը: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքով անձը նշել է, որ որդու նկատմամբ քրեական գործով որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, շուրջ 11 ամիս նա գտնվում է անազատության մեջ, գործը գտնվում է դատաքննության փուլում, վերացել են խափանման միջոց կալանքի հիմքերը, սակայն դեռևս շարունակվում է պահվել կալանքի տակ: Որոշ դեպքերում՝ կալանավորված անձինք նշել են, որ քրեական գործի շրջանակներում իրենց մասնակցությամբ որևէ քննչական գործողություն չի իրականացվում կամ այլևս առհասարակ որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի իրականացվում, չնայած դրան՝ շարունակվում են պահվել կալանքի տակ:

Ուշադրության է արժանի ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալ Արսեն Բաբայանին ազատությունից զրկելու ու նրա կալանավորման հետ կապված հարցը: Խնդիրն այն է, որ այս գործը նույնպես ցույց տվեց համակարգային իրավական խնդրի առկայության մասին:

<sup>249</sup> Առավել մանրամասն տե՛ս 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 231:

Մասնավորապես, Ա. Բաբայանը ձերբակալվել է այնպիսի քրեական գործով, որոն նրան մեղսագրվող արարքը նախատեսված է եղել Քրեական օրենսգրքի այն հոդվածով, որի վրա տարածվում է 2018 թվականի համաներման մասին օրենքը և գործի քննության վերջում դատարանի կողմից անգամ դատապարտման դեպքում նա չի կարող ենթարկվել ազատազրկման: Ըստ նրա փաստաբանների՝ անհիմն է եղել Ա. Բաբայանին ձերբակալելիս քննիչի պատճառաբանությունն այն մասին, որ նա կարող է դիմել փախուստի: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանի մոտ պնդում է արել նաև Ա. Բաբայանը ՔԿԶ-ում իր հետ առանձնագրույցի ընթացքում:

Ա. Բաբայանի ձերբակալությունն իրականացվել է Քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու կասկածանքով, որը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2018 թվականի համաներման մասին օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է. «Քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2018 թվականի հոկտեմբերի 21-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ անմիջականորեն մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է տուժողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան չորս տարի ժամկետով ազատազրկում»:

Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 17-րդ կետը քրեական հետապնդում է համարում այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը: Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով՝ համաներման մասին օրենքի ընդունման հիմքով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Համաներման մասին օրենքի 4-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում համաներման կիրառման համար դատապարտյալի համաձայնությունը չի պահանջվում:

Հաշվի առնելով Ա. Բաբայանի և փաստաբանի մտահոգությունները՝ Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ հանդես է եկել հրապարակային հայտարարություններով<sup>250</sup>:

Պաշտպանի դիրքորոշումը հանգում է նրան, որ մեջբերված օրենսդրական դրույթները ենթադրում են, որ եթե նույնիսկ անձն իր նկատմամբ համաներման մասին օրենքի կիրառման դեմ առարկում է, այդ գործով դատապարտման պարագայում անգամ նա որևէ դեպքում ազատազրկման ենթարկվել չի կարող:

Նշվածը նաև նշանակում է, որ ազատազրկման ձևով անձի դատապարտման հեռանկարի բոլոր դեպքերում բացառումը կարող է այդ քրեական գործով նրա անձնական

<sup>250</sup> Հասանելի են <https://ombuds.am/am/site/ViewNews/980> և <https://ombuds.am/am/site/ViewNews/974> հղումներով:

ազատության իրավունքին միջամտող դատավարական գործողությունները դարձնել ինքնանպատակ և այդպիսով՝ ոչ իրավաչափ:

Նկարագրվածն ավելի է մեծացնում վարույթն իրականացնող մարմնի դատավարական բեռը նման յուրաքանչյուր դեպքում ապահովելու իր գործողությունների միանշանակությունը՝ հետապնդած իրավաչափ նպատակի և դրան հասնելու համաչափ միջոցների տեսանկյունից: Սա նշանակում է նաև, որ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ցույց տալ, որ անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակումը նրան պատժելու կամ զրկանքների ենթարկելու նպատակ չի հետապնդում:

Ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի տևականության հարցը քննարկելիս Պաշտպանը հարկ է համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Եվրոպական դատարանի կայուն իրավաբանությամբ՝ հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ<sup>251</sup>: Ընդ որում, այս դիրքորոշումն առաջ է քաշվել նաև Հայաստանի դեմ կայացված վճիռներից մեկում: Այսպես, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն ամրագրել է, որ ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որն արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը: Դատարանի արձանագրմամբ դրանք պետք է ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում<sup>252</sup>, ընդ որում, ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան<sup>253</sup>:

Եվրոպական դատարանի կողմից ամրագրված «համարժեքությունն» ըստ իրավական չափանիշների կարող է արտահայտվել հետևյալով՝

- ա) փախուստի վտանգ,
- բ) արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգ,
- գ) հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգ,
- դ) հանրային անկարգության վտանգ:

Փախուստի վտանգը գնահատելու համար Եվրոպական դատարանը համակողմանի քննարկման առարկա է դարձնում անձի բնավորությունը, նրա բարոյականությունը, բնակության և աշխատանքի պայմանները, ունեցվածքը, ընտանեկան կապերը և հետապնդման երկրի հետ ունեցած բոլոր տեսակի այլ կապերը<sup>254</sup>:

<sup>251</sup> Տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) գործով 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, զանգատ թիվ 33376/07, կետ 91, տե՛ս նաև Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի (Smirnova v. Russia) գործով 2003 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, զանգատներ թիվ 46133/99 և 48183/99, կետ 58, Բեսսինն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 9190/03, կետ 53, Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի (Khodorkovskiy v. Russia) գործով 2011 թվականի մայիսի 31-ի վճիռը, զանգատ թիվ 5829/04, կետ 182:

<sup>252</sup> Տե՛ս Լեթելիերն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France) գործով 1991 թվականի հունիսի 26-ի վճիռը, զանգատ թիվ 12369/86, կետ 35:

<sup>253</sup> Տե՛ս Քլոութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, զանգատ թիվ 12718/87, կետ 44:

<sup>254</sup> Տե՛ս Բեկինն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 9190/03, կետ 58:

Ընդ որում, Եվրոպական դատարանը հստակ արձանագրել է, որ, օրինակ, մշտական բնակչության վայր չունենալն ինքնին չի կարող բավարար համարվել փախուստի վտանգի մասին հետևություն կատարելու համար<sup>255</sup>:

Փախուստի վտանգը գնահատելու համար կարևոր է անձին սպառնացող պատժի խստությունը, սակայն այս հանգամանքը ևս չի կարող արդարացնել անձի երկարատև նախնական կալանքը<sup>256</sup>:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգը չի կարող վերացական լինել: Այն պետք է հիմնված լինի հստակ փաստական տվյալների վրա<sup>257</sup>: Այսպես, Խանգաղյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն իրավաչափ է համարել վարույթի նկատմամբ միջամտություն կատարելու վտանգի առկայության մասին ազգային դատարանների հետևությունը՝ վկայակոչելով այն հանգամանքը, որ լինելով նախկին քննիչ, անձը մեղադրվել է իր գործունեության հետ առնչվող հանցագործության կատարման համար, որը ենթադրաբար կատարել է ոստիկանության այլ ծառայողների հետ<sup>258</sup>:

Հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգը, ըստ Եվրոպական դատարանի, պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ հաշվի առնելով մեղադրյալի անցյալը և նրա անձը<sup>259</sup>, ընդ որում՝ նախկինում դատապարտված լինելը կարող է ողջամիտ հիմնավորում լինել նոր հանցանք կատարելու մտավախության համար<sup>260</sup>: Միաժամանակ, ընտանիք և աշխատանք չունենալը դեռևս չի կարող վկայել այն մասին, որ մեղադրյալը հակված է նոր հանցանք կատարելուն<sup>261</sup>:

Հանրային անկարգության վտանգը, որն ի դեպ, ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ, վերաբերում է այն դեպքերին, երբ հանցագործության առանձնակի ծանրությունը և դրա նկատմամբ հանրային արձագանքը կարող են հանգեցնել հասարակական հուզումների: Ընդ որում, անհրաժեշտ է, որ ներկայացվեն փաստեր առ այն, որ մեղադրյալի ազատ արձակումը իսկապես խաթարելու է հանրային կարգը<sup>262</sup>:

Կալանքի տևականության հարցը նաև քննարկման առարկա է դարձել քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանման համատեքստում: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել առ այն, որ իրավասու մարմինները պետք է «հատուկ ջանասիրություն» դրսևորեն նաև այն գործերով, որոնցով անձը դատական քննության ընթացքում գտնվում է կալանքի տակ<sup>263</sup>:

---

<sup>255</sup> Տե՛ս Սուլաոջան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, զանգատ թիվ 55939/00, կետ 64:

<sup>256</sup> Տե՛ս Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia) գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, զանգատ թիվ 5826/03, կետ 145, տե՛ս նաև Բլիժկովն ընդդեմ Բուլղարիայի գործով 1997 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, զանգատ թիվ 33977/96, կետ 80-81:

<sup>257</sup> Տե՛ս Բեկինն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, զանգատ թիվ 9190/03, կետ 59:

<sup>258</sup> Տե՛ս Խանգաղյանն ընդդեմ Հայաստանի (Khanzadyan v. Armenia) գործով 2014 թվականի մորտի 11-ի որոշումը, զանգատ թիվ 68571/11, կետ 39:

<sup>259</sup> Տե՛ս Բլուրթն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, զանգատ թիվ 12718/87, կետ 40:

<sup>260</sup> Տե՛ս Սելչուկն ընդդեմ Թուրքիայի (Selçuk v. Turkey) գործով 2006 թվականի հունվարի 10-ի վճիռը, զանգատ թիվ 21768/02, կետ 34:

<sup>261</sup> Տե՛ս Սուլաոջան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, զանգատ թիվ 55939/00, կետ 64:

<sup>262</sup> Տե՛ս Պրենսիպն ընդդեմ Մոնակոյի (Prencipe v. Monaco) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, զանգատ թիվ 43376/06, կետ 79:

<sup>263</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Աբդոելլան Նիդերլանդների (Abdoella v. the Netherlands) գործով 1992 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, զանգատ թիվ 12728/87, կետ 24, Կալաշնիկովն

Այդ թվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների ներքո՝ Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 18-ին Լ. Վարդանյանի և Ջ. Այվազյանի վերաբերյալ կայացված որոշմամբ ընդգծել է, որ ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից հատուկ ջանասիրության պետք է արժանան այն գործերը, որոնք հնարավորին սեղմ ժամկետում քննության չառնելն էապես վնաս կհասցնի արդարադատության շահերին, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Վճռաբեկ դատարանն առանձնացրել է նաև քրեական գործերի այն կատեգորիաները, որոնք պետք է հատկապես ուշադրության արժանան ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից: Վճռաբեկ դատարանի դասակարգմամբ՝ առաջնային կարող են ուշադրության արժանանալ այն գործերը, որոնցով «անձինք գտնվում են կալանքի տակ (հատուկ ուշադրության են արժանի ավելի երկար ժամանակահատված կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ գործերը)»:  
Համեմատության համար նշենք, որ դրանից հետո կարող են ուշադրության արժանանալ դատական կազմի փոփոխության կամ այլ հիմքով վերսկսված դատական քննությամբ գործերը, դատական վերանայման արդյունքում բեկանված և նոր քննության ուղարկված գործերը, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման արդյունքում վերսկսված գործերը, խոցելի խմբեր համարվող՝ անչափահասների, հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց վերաբերյալ գործերը, պետության պոզիտիվ պարտականության ներքո գտնվող՝ կյանքի իրավունքի պաշտպանության, խոշտանգումների բացարձակ արգելքի ենթադրյալ խախտումներին վերաբերող գործերը<sup>264</sup>:

Վերոգրյալի հաշվառմամբ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումը և ընդգծում, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել շարունակական կալանքի պրակտիկան Եվրոպական դատարանի իրավաբանությանը համահունչ դարձնելու, անհիմն կալանքի դեպքերը բացառելու և կալանքի տակ գտնվող անձանց մասնակցությամբ քրեական գործերն առաջնահերթ քննելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն դրսևորելու հարցում:

Խափանման միջոցների համակարգին անդրադարձ է կատարվել ՀՀ սահմանադրական դատարանը ՄԴՈ-1480 որոշմամբ: Սահմանադրական դատարանը համադրելով և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավանորմերը հանգել է հետևության, որ որոշակի հանգամանքների համակցության պարագայում ազատությունից զրկելու հետ չկապված վեց խափանման միջոցներից յուրաքանչյուրի կիրառումն սկզբունքորեն կարող է ապահովել այն նույն ցանկալի արդյունքը, ինչ ազատությունից զրկելուն հանգեցնող միակ խափանման միջոցը՝ կալանավորումը: Հետևաբար, ըստ Սահմանադրական դատարանի, քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է իրական հնարավորություն ունենա ոչ միայն հիմնավորված ենթադրության մակարդակով գնահատել կասկածյալի կամ մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի այս կամ այն դրսևորման հավանականությունը, այլև անկաշկանդ կիրառել հենց այն խափանման միջոցը, որն, իր համոզմամբ, պիտանի և անհրաժեշտ է նախանշված նպատակին հասնելու համար և կարող է արդյունավետ կերպով չեզոքացնել ենթադրյալ ոչ պատշաճ վարքագծի բացասական հետևանքները:

Քննարկելով գործող իրավակարգավորումները Սահմանադրական դատարանը գտել է, որ անձին չի տրամադրվում նաև հնարավորություն՝ խափանման այլ, ավելի մեղմ միջոցի կիրառման շնորհիվ ի սկզբանե խուսափել ազատագրվումից, քանի որ կալանավորումը

ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v. Russia) գործով 2002 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 132:

<sup>264</sup> Տե՛ս Լիլիթ Վարդանյանի և Ջարինե Այվազյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի ԵԱՔԴ/0016/01/14 որոշումը, կետ 20:

մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները չեն կարող ապահովել կամ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և հանրային շահերի համարժեք պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց (*ultima ratio*), միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա, իսկ օրենսդրությամբ ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը:

Որոշման արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասը, 137-րդ հոդվածի 4-րդ մասը և 139-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը սահմանում են որպես կալանավորման այլընտրանք՝ կալանավորումից կախյալ խափանման միջոց, ճանաչվել է Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին հակասող: Նկատի ունենալով, որ նշված որոշումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին՝ վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա խափանման այլ միջոցները՝ որպես կալանավորման այլընտրանք, ինչպես նաև գրավը՝ որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու համար, Սահմանադրությանը հակասող ճանաչված վերոնշյալ դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու որոշման պահանջներին:

Այս կապակցությամբ տեղին է նկատել, որ դեռևս 2018 թվականին մշակվել էր օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով ևս առաջարկվում էր կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կիրառելի դարձնել միայն այն դեպքում, երբ խափանման այլ միջոցների կիրառումը բավարար չէ մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար: Նման կարգավորման անհրաժեշտության մասին, ի դեպ, նշվել է ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում<sup>265</sup>, այնպես էլ հրապարակային հայտարարություններում:

Նաև Սահմանադրական դատարանի նշված որոշման հաշվառմամբ 2019 թվականին մշակվել և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիք ներկայացնելու համար ուղարկվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ Նախագիծը պարունակում է կարևոր իրավադրույթներ, որոնք էականորեն կարող են բարելավել խափանման միջոցների ընտրության պրակտիկան: Դրա հաշվառմամբ՝ Պաշտպան ընդգծում է սեղմ ժամկետներում Նախագծի ընդունման անհրաժեշտությունը<sup>266</sup>:

<sup>265</sup> Տես, օրինակ, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 229:

<sup>266</sup> Դեռևս 2018 թվականին Դատախազությունը մշակել էր օրենսդրական փոփոխությունների նախագիծ. դրանով առաջարկվում է ներդնել այլընտրանքային խափանման միջոցներ, որով կնվազեցվեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու բարձր ցուցանիշները: Մասնավորապես, առաջարկվում է որպես խափանման

14. Գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների անլիարժեքությունը

2019 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ կապված քրեական գործերի քննության ձգձգման վերաբերյալ:

Այսպես, բողոքներից մեկով մեղադրյալը տեղեկացրել է, որ դեռևս 2016 թվականի հուլիս-օգոստոս ամիսներից ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործի շրջանակներում իրեն մեղադրանք է առաջադրվել: Անձի պնդմամբ՝ մեղադրանք առաջադրելուց անցել է շուրջ երեք տարի, սակայն քրեական գործը դեռ գտնվում է նախաքննության փուլում, չնայած նրան, որ սկզբնական գործը, որից իր նկատմամբ գործ է անջատվել, հարուցումից շուրջ 8-9 ամիս անց ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար: Մեղադրյալի պնդմամբ՝ քրեական գործով նախաքննությունն փաստացի չի իրականացվում, քանի որ չեն կատարվում քննչական կամ այլ դատավարական գործողություններ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ բողոք ներկայացրած անձը խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը քրեական գործով նախաքննության ավարտ հայտարարելու հարցում: Բողոքի քննարկման արդյունքում քրեական հետապնդումն անձի նկատմամբ դադարեցվել է:

Խնդիրը հատկապես սուր է դրված այն քրեական գործերով, որոնց շրջանակներում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց է ընտրված կալանավորումը: Նման բողոքներ Պաշտպանի աշխատակազմին ներկայացվում են քրեակատարողական հիմնարկներ կատարվող այցերի և առանձնագրույցների ընթացքում: Նույնաբովանդակ հարցեր ներկայացվում են նաև կալանավորված անձանց մերձավոր ազգականների կողմից: Օրինակ, մի դեպքում կալանավորված անձի մայրը հայտնել է, որ որդու նկատմամբ քրեական գործով որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, շուրջ 11 ամիս նա գտնվում է անազատության մեջ, գործը գտնվում է դատաքննության փուլում, իսկ դատական նիստերն անհիմն ձգձգվում են:

Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենսդրական պահանջից ելնելով՝ առանձին գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից քննության առարկա չեն դարձել: Այդուհանդերձ, երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակին ընդհանուր անդրադարձը պայմանավորում է նաև քրեական գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդրի ուսումնասիրություն՝ միջազգային իրավական չափանիշների, դատարանակազմական և

---

միջոց ներդնել տնային կալանքն ու վարչական վերահսկողության հանձնելը, սակայն, Նախագծով գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց չի ներդրվում:

Այլընտրանքային խափանման միջոցների անխափան կիրառման, մեղադրյալի վարքի նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման համար կարևոր է էլեկտրոնային հսկողության միջոցների լիարժեք կիրառման ապահովումը: Էլեկտրոնային հսկողության միջոցների տեխնիկական, կազմակերպական և մեթոդաբանական անհրաժեշտ նախադրյալների վերաբերյալ խնդիրները մանրամասն արձանագրվել և վերլուծվել են Մարդու իրավունքների պաշտպանի «Պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկում» արտահերթ հրապարակային զեկույցում: Ուստի, էլեկտրոնային հսկողության կիրառման օրենսդրական հիմքերի ամրագրումը միայն բավարար չէ դրանով հետապնդվող նպատակի իրագործման տեսանկյունից: Ավելին, այլընտրանքային խափանման միջոցների և էլեկտրոնային հսկողության միայն Քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված լինելը՝ ոչ պատշաճ իրավակիրառմամբ, կարող է հանգեցնել պետության պարտականության չկատարման՝ առաջ բերելով այդպիսի հսկողության ներքո գտնվող անձի արդարացի բողոքի:

Չնայած Նախագիծը պարունակում է արժեքավոր իրավակարգավորումներ, սակայն դրա ընդունման կապակցությամբ դեռևս գործուն քայլեր չեն ձեռնարկվել:

դատավարական օրենսդրական կանոնակարգումների վերլուծություն: Նշվածի հաշվառմամբ 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներում<sup>267</sup> կատարվել էր ներպետական և միջազգային իրավական ակտերի մանրամասն վերլուծություն:

ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածը երաշխավորում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական այս իրավունքի բովանդակության անքակտելի և կարևորագույն տարր է գործի քննության և եզրափակիչ ակտի կայացման ողջամիտ տևողության պահպանումը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի ուժով՝ «Յուրաքանչյուր ոք, (...) իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) դատարանի կողմից ողջամիտ ժամկետում (...) դատաքննության իրավունք»:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականը նշում է, որ հանցագործությունների բացահայտման հապաղումը վարկաբեկում է քրեական դատավարությունը և ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում արդարադատության պատշաճ իրականացման վրա<sup>268</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն DH (97) հանձնարարականում, որն ընդունվել է Իտալիայում ձևավորված քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտման պրակտիկայի կապակցությամբ, ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է ներկայացնում իրավունքի գերակայության համար»: Ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ իրավական վարույթի տևողության ժամկետը գնահատելիս Եվրոպական դատարանն առաջնորդվում է նաև այն սկզբունքով, որ ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել միայն պետության մեղքով տեղի ունեցած ձգձգումներով:

2010 թվականի փետրվարի 24-ի նիստի ընթացքում ընդունվել է Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)3 հանձնարարականը, որում ընդգծվել է պայմանավորող կողմերի պարտավորությունն ապահովելու Կոնվենցիայով վերապահված իրենց իրավունքներն ու ազատությունները, որոնք ներառում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված ողջամիտ ժամկետում գործի քննության և 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները:

Ողջամիտ ժամկետում գործի քննության երաշխիքի նպատակը դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունն է քննության չափից ավելի ձգձգումներից, որոնք կարող են խաթարել արդարադատության իրականացման արդյունավետությունը կամ դրա նկատմամբ վստահությունը<sup>269</sup>:

<sup>267</sup> 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 235-241 և 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 305-312:

<sup>268</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականը՝ [http://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkunanteklifi/recR\(87\)18e.pdf](http://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkunanteklifi/recR(87)18e.pdf):

<sup>269</sup> Տե՛ս ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, դասավանդման նյութ, Դ. Մելքոնյան:



Եվրոպական դատարանը, խոսելով պատշաճ քննության մասին, սահմանում է նաև գործը ողջամիտ ժամկետում քննելու պետության պարտականությունը<sup>270</sup>՝ այն դիտարկելով իբրև պետական մարմինների գործողությունների նկատմամբ հասարակական վստահության կարևոր պայման<sup>271</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով փաստում է, որ քրեական գործով «ողջամիտ ժամկետը» սկսում է հաշվվել այն պահից, երբ առաջադրվում է մեղադրանքը: Դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունը սկսելու պահից:

Ժամկետի հաշվարկն ավարտվում է, երբ ավարտվում է քննությունն ամենաբարձր աստիճանի դատարանում, այն է՝ երբ կայացվում է վերջնական որոշում: Այսինքն՝ գործի քննության ընդհանուր տևողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ աստիճաններում<sup>272</sup>:

Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում, պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում և այլն)<sup>273</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ՝ դատարանների քրոնիկ ծանրաբեռնվածությունը ևս չի կարող արդարացնել վարույթի չափազանց երկար տևողությունը<sup>274</sup>:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը ներպետական վարույթի տևողության ողջամտությունը յուրաքանչյուր դեպքում գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Չնայած դրան՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառելի են բոլոր գործերի նկատմամբ:

Ըստ այդմ, ողջամիտ ժամկետի հետ կապված՝ Եվրոպական դատարանը ելնում է հետևյալ չափանիշներից՝

#### 1. գործի բարդությունը.

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանը ելակետային է համարում մի շարք չափանիշներ, նշելով, որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին՝ հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և

<sup>270</sup> Տե՛ս Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v. Turkey) գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22495/93, կետեր 102-104:

<sup>271</sup> Տե՛ս Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի (Mahmut Kaya v. Turkey) գործով 2000 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 22535/93, կետեր 106-107:

<sup>272</sup> Տե՛ս Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատավարություններում դատավորի դերի վերաբերյալ (հաշվի առնելով վեճերի լուծման այլընտրանքային միջոցները) Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդի (CCJE) կողմից Նախարարների կոմիտեի ուշադրությանը ներկայացնելու համար 2004 թվականի Նոյեմբերի 22-ից 24-ն ընդունված թիվ 6 (2004) կարծիքը, կետ 98:

<sup>273</sup> Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73:

<sup>274</sup> Տե՛ս Պրոբստմեյերն ընդդեմ Գերմանիայի (Probstmeier v. Germany) գործով 1997 թվականի հուլիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 20950/92, կետ 64:

վկաների թվաքանակը, միջազգային գործոնները, դատավարությանը նոր անձանց ներգրավումը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը և այլն: Անդրադառնալով գործի բարդությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն կարող է կապված լինել ինչպես փաստերի, այնպես էլ իրավական տեսակետների հետ<sup>275</sup>, օրինակ, գործում մի քանի կողմ ներգրավելու<sup>276</sup>, տարբեր ապացույցներ ձեռք բերելու<sup>277</sup>, փորձագետի եզրակացությունն ստանալու հետ<sup>278</sup> և այլն:

2. Դիմողի համար ողջամիտ ժամկետի չպահպանման հետևանքները.

Դիմողի համար այդպիսի հետևանքները վերջինիս իրավունքների ապահովման այն հնարավոր ռիսկերն են, որոնք կարող են վրա հասնել դատավարական ժամկետների ձգձգման պատճառով:

3. Համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը.

Համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվություն ասելով ի նկատի է առնվում վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և ժամանակին ուսումնասիրումը: Ընդ որում, միջազգային իրավական մոտեցումների համաձայն՝ պետք է արձանագրել, որ գործի քննության ձգձգումը հանգեցնում է ողջամիտ ժամկետների խախտման, եթե դա պայմանավորված է սուբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների գերժանրաբեռնվածությունը, դատավորների ոչ արհեստավարժությունը և այլն. նման դեպքերում պետությունն է կրում որակյալ և արագ արդարադատություն ապահովելու պարտականությունը:

4. Դիմողի սեփական վարքագիծը.

Դիմողի սեփական վարքագծի հետ կապված՝ Եվրոպական դատարանն արձանագրում է, որ վերջինս պետք է «ցուցադրի քննության՝ իրեն անմիջականորեն վերաբերող բոլոր փուլերին մասնակցելու պատրաստակամություն, ձեռնպահ մնա դատավարությունը ձգձգող հնարքներից, ինչպես նաև դատավարությունն արագացնելու նպատակով առավելագույնս օգտագործի ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցները»<sup>279</sup>: Եթե գործի քննության ձգձգումը տեղի է ունենում դիմողի մեղքով, ապա դա, անկասկած, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է<sup>280</sup>:

Արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետների երաշխավորումն առաջին հերթին կանխորոշվում է դատարանակազմական և դատավարական լիարժեք կառուցակարգերով և դրանց պատշաճ գործադրմամբ: Հետևաբար, դատավարական ողջամիտ ժամկետների պահպանումն իր հերթին փոխպայմանավորված է մի շարք ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ գործոններով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների ծանրաբեռնվածության համաչափությունը, գործի քննության անխոչընդոտ ընթացքն ապահովելու դատավարական հստակ կառուցակարգերը,

<sup>275</sup> Տե՛ս Քաթ Կլիշչե դե լա Գրանզեն ընդդեմ Իտալիայի (Katte Klitsche de la Grange v. Italy) գործով 1994 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 12539/65, կետ 55:

<sup>276</sup> Տե՛ս Ն.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (H. v. United Kingdom) գործով 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9580/81, կետ 72:

<sup>277</sup> Տե՛ս Հյումենն ընդդեմ Լեհաստանի (Humen v. Poland) գործով 1999 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 26614/95, կետ 63:

<sup>278</sup> Տե՛ս Պանդոլֆելլի և Պալումբոն ընդդեմ Իտալիայի (Pandolfelli and Palumbo v. Italy) գործով 1992 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 13218/87, կետ 17:

<sup>279</sup> Տե՛ս Ալիմենտարիա Սանդերս ընդդեմ Իսպանիայի (Alimentaria Sanders S. A. V. Spain) գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 11681/85, կետ 35:

<sup>280</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Երևան, 2010թ., էջեր 232-233, հասանելի է <https://www.osce.org/hy/yerevan/74940?download=true> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ վարքագիծը և այն ապահովող օրենսդրական լծակները, դատավարական ժամկետների սահմանումը:

Մինևույն ժամանակ, հարկ է նկատել, որ ողջամիտ ժամկետը վերացական հասկացություն չէ. այն մեծապես կախված է կոնկրետ գործի առանձնահատկություններից, և տևողության միևնույն թվային ցուցանիշը կարող է մի դեպքում համարվել ողջամիտ, մյուս դեպքում՝ ոչ:

Հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է<sup>281</sup>:

Գործի քննության ողջամիտ ժամկետների միջազգային իրավական մոտեցումների տրամաբանությամբ՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն իր հերթին արձանագրել է, որ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում: Խորհուրդն արձանագրել է, որ գործի քննության ժամկետները որոշելիս գործի քննության ժամկետի սկիզբ քրեական գործերով պետք է համարել այն պահը, երբ առաջադրվում է մեղադրանքը, որը կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան, այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննություն սկսելու պահից<sup>282</sup>:

Օրենսդրական մակարդակում դատավարական ողջամիտ ժամկետների պահպանման խնդիրն անհրաժեշտ ենք համարում դիտարկել երկու հարթությունում՝

1. դատական իշխանության կազմակերպման և գործունեության հիմունքների ու սկզբունքների տեսանկյունից.

Գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումն ուղղակիորեն կապված է դատական համակարգի կառուցվածքից, դատավորների թվաքանակից, դատարանների նստավայրերի, դրանց սպասարկման տարածքների և դատավորների բաշխման ու թվակազմի սահմանումից և այլն:

Այս առումով թերևս ողջունելի է ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2018 թվականի հունվարի 25-ին ուժի մեջ մտած օրենքով ստեղծվեց Երևան քաղաքում առաջին աստիճանի ընդհանուր իրավասության մեկ դատարանը, որի դատական տարածքը Երևան քաղաքի տարածքն է, իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ընդունմամբ սահմանվեց, որ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների թվակազմը ֆիքսված չէ, և Բարձրագույն դատական խորհրդին տրվեց առանձին դատարանների դատավորների թվակազմը Կառավարության համաձայնությամբ ավելացնելու լիազորություն:

Միաժամանակ, վերը նշված սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ ամրագրվեցին դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելու չափանիշները: Մասնավորապես, հոդվածի առաջին մասով ամրագրվեց, որ գործի քննությունը և լուծումը պետք է

<sup>281</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ1/0012/13/09 և ԼԴ/0082/13/09 որոշումները:

<sup>282</sup> Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 98 որոշում. [http://www.court.am/files/news/101\\_am.pdf](http://www.court.am/files/news/101_am.pdf):

իրականացվեն ողջամիտ ժամկետում: Նույն հոդվածի 2-րդ մասով՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը (տևողության մեջ հաշվարկվում է վերաքննիչ և վճռաբեկ դատական ատյաններում բողոքների քննության ժամանակահատվածը նույնպես),

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

2. Քրեադատավարական ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների տեսանկյունից.

Գործող քրեադատավարական կառուցակարգերը քրեական գործերի քննության ժամկետների պահպանման առումով լիարժեք չեն: Այսպես, օրենսգրքի՝ դատավարական ժամկետներ ամրագրող կարգավորումները հանգում են հետևյալին՝

1. հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում,

2. քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը,

3. միևնույն ժամանակ, նախաքննության ժամկետը քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա կարող է երկարացնել հսկող դատախազը՝ միջնորդությունը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելով: Նախաքննության ժամկետի մասնակի երկարացումը ենթակա է պատճառաբանման: Նախաքննության ժամկետը յուրաքանչյուր դեպքում կարող է երկարացվել մինչև երկու ամիս ժամանակով:

Ստացվում է, որ թեև մինչդատական վարույթի փուլերի՝ հետաքննության և նախաքննության առավելագույն ժամկետներն օրենքով ամրագրված են, այդուհանդերձ, վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նախաքննության երկամսյա ժամկետը երկարացնել՝ ընդ որում առանց օրենսդրական սահմանափակման: Չնայած յուրաքանչյուր դեպքում նախաքննության ժամկետը երկարացնելու պատճառաբանվածության պահանջին՝ օրենսդրական այդպիսի կառուցակարգը կարող է խնդրահարույց լինել քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքների, այդ թվում՝ իր գործի քննության ողջամիտ ժամկետների երաշխավորման տեսանկյունից,

4. գործի դատական քննության նախապատրաստման փուլի հետ կապված օրենսգրքի 292-րդ հոդվածն ամրագրում է, որ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործում եղած նյութերը և քրեական գործն իր վարույթն ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում է որոշում,

5. օրենսգրքի 293-րդ հոդվածի համաձայն՝ դատական քննությունը պետք է նշանակվի դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելու պահից 10 օրվա ընթացքում,

6. քրեադատավարական օրենքը գործի դատական քննության առավելագույն ժամկետներ չի նախատեսում՝ միաժամանակ ամրագրելով անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 194-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է, որ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝

–երկու ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.

–չորս ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով.

–ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով.

–տասը ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով:

Իսկ երկրորդ մասով՝ բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, նախատեսված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող են երկարացվել առավելագույնը երկու ամսով:

Նախագծի վերոնշյալ լուծումները, փաստորեն, ամրագրում են անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու առավելագույն ժամկետները:

Պաշտպանի աշխատակազմում ստացված տվյալների ամփոփմամբ պարզվել է նաև, որ քրեական գործերի քննության ձգձգման պատճառ է նաև իրավական օգնության կարգով ստացված հարցումները թարգմանելու խնդիրը:

Քրեական գործի նյութերի թարգմանությունների տևական լինելու փաստը Մարդու իրավունքների պաշտպանին անհանգստացնում է հատկապես քրեական գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջի ապահովման տեսանկյունից: Այս մասին առավել մանրամասն խոսվել է 2018 թվականների տարեկան հաղորդմամբ<sup>283</sup>:

Ողջամիտ ժամկետի պահպանման կարևորությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1074 որոշմամբ: Դատարանը նշել է, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դատարանի դիրքորոշմամբ՝ դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությանն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:

Հաշվի առնելով ձևավորված պրակտիկան և առկա օրենսդրական բացի՝ հաղթահարման նպատակով՝ Պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան, բացի այդ՝ ընթացիկ տարում հրապարակվել է նաև արտահերթ հրապարակային զեկույց<sup>284</sup>:

Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով դիտարկվել է ոչ միայն քրեական, այլև առհասարակ դատավարության բոլոր տեսակներում առկա՝ գործի քննությունը ողջամիտ ժամկետում ապահովելու խնդիրը: Ընդ որում՝ խնդիրը դիտարկվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի լույսի ներքո, որը Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվելու դեպքում յուրաքանչյուրի համար երաշխավորում է պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրությամբ: Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ միջոցն արդյունավետ է, եթե այն կանխում է ենթադրյալ խախտումը կամ դրա

<sup>283</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման 310-311 էջեր:

<sup>284</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/e722139fe25348c1076dae0df9496c55.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

շարունակականությունը կամ ապահովում է արդեն տեղի ունեցած խախտման համար համարժեք փոխհատուցում<sup>285</sup>:

Խնդրի բազմակողմանի ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ որպես ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովման միջոց ծառայող՝ դատական ակտերի բողոքարկման, ընթացիկ դատական գործերով մեկ այլ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի հարցի քննարկման և ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգերը, ինչպես նաև դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգերն արդյունավետ միջոց չեն:

Այդ մասին է վկայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Մասնավորապես, Եվրոպական դատարանն իր վճիռներից մեկում արձանագրել է, որ ավելի բարձր աստիճաններին դիմելը չի կարող համարվել որպես արդյունավետ միջոց գործի քննության տևողությունը վիճարկելու համար<sup>286</sup>: Արդեն տեղի ունեցած անհարկի ձգձգումների համար դրամական փոխհատուցում տրամադրելը չի բացառում, որ այլ անտեղի ձգձգումներ տեղի չեն ունենալու<sup>287</sup>: Որևէ ապացույց չկա, որ վնասի փոխհատուցման միջոցն ավելի արագ կքննվի, քան սովորական քաղաքացիական հայցը, որը կարող է մի քանի տարի տևել և անցնել դատական բոլոր աստիճաններով: Ժամանակի նման վատնումը չի կարող համատեղելի լինել վարույթն ավելի արագացնելու պահանջի հետ<sup>288</sup>: Գործը քննող դատավորի նկատմամբ կարգապահական գործողությունն արդյունավետ միջոց կարող է համարվել միայն, եթե դա ուղղակի և անմիջական հետևանք է առաջացնում այն վարույթների համար, որոնք վիճարկվում են<sup>289</sup>:

Այն դեպքում, երբ դատական համակարգը թերի է կարգավորված Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված ողջամիտ ժամկետի պահանջն ապահովելու համար, ամենաարդյունավետ լուծումն այն միջոցն է, որը նախատեսված է դատական գործընթացներն արագացնելու համար, որպեսզի կանխվի դրա չափից դուրս երկար տևողությունը: Նման միջոցն ունի անհերքելի առավելություն այն միջոցի նկատմամբ, որն ապահովում է միայն փոխհատուցման տրամադրումը, քանի որ այն կանխում է նույն վարույթի հաջորդող խախտումների հայտնաբերումը և պարզապես չի վերականգնում արդեն կատարված խախտումը<sup>290</sup>: Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայով ամրագրված իրավունքներից մեկի խախտման դեպքում մինչև խախտումը

<sup>285</sup> Տե՛ս Վլադը և այլք ընդդեմ Ռումինիայի (Vlad and others v. Romania) գործով 2013 թվականի նոյեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 40756/06, 41508/07 և 50806/07, կետ 111: Ուազերմանն ընդդեմ Ռուսաստանի (Wasserman v. Russia (No 2)) գործով 2008 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 21071/50, կետ 45: Կուդլան ընդդեմ Լեհաստանի (Kudła v. Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը: գանգատ թիվ 30210/96, կետ 158: Դորանն ընդդեմ Իռլանդիայի (Dorann v. Ireland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 50389/99, կետ 59:

<sup>286</sup> Տե՛ս Հարթմանն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Hartman v. Czech Republic) գործով 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 53341/99, կետ 82:

<sup>287</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0ff-FgFx4u24Ar\\_eyCxdaKzIe6gmmUqjmLIVVdiIcU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0ff-FgFx4u24Ar_eyCxdaKzIe6gmmUqjmLIVVdiIcU70XtZMIHOyKK8CU) հղումով, էջ 31, կետ 171, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>288</sup> Տե՛ս Իլիչն ընդդեմ Սերբիայի (Ilić v. Serbia) գործով 2008 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 30132/04, կետ 65: ՄաքՖարլեյնն ընդդեմ Իռլանդիայի (McFarlane v. Ireland) գործով 2010 թվականի սեպտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 31333/06, կետ 123:

<sup>289</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0ff-FgFx4u24Ar\\_eyCxdaKzIe6gmmUqjmLIVVdiIcU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0ff-FgFx4u24Ar_eyCxdaKzIe6gmmUqjmLIVVdiIcU70XtZMIHOyKK8CU) հղումով, էջ 28, կետ 147, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>290</sup> Տե՛ս Ֆինգերն ընդդեմ Բուլղարիայի (Finger v. Bulgaria) գործով 2011 թվականի օգոստոսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 37346/05, կետ 83(d):

եղած դրությունը վերականգնելը գերադասելի է դրամական փոխհատուցում տրամադրելուց<sup>291</sup>: Լավագույն լուծումը, անվիճելիորեն, կանխարգելումն է: Նման միջոցն անհերքելի առավելություն ունի իրավական պաշտպանության այնպիսի միջոցի նկատմամբ, ինչպիսին փոխհատուցումն է<sup>292</sup>:

Այսպիսով, վստահաբար կարելի է պնդել, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովման համար որպես Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց կարող են հանդես գալ միայն կանխարգելիչ միջոցները, որպիսիք, սակայն, բացակայում են մեր իրավական համակարգում:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետների ապահովման հարցում դատական պրակտիկայի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

1. քրեական դատավարության օրենսգրքի մոտեցումներին համահունչ՝ ամրագրել քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ,

2. ապահովել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի՝ գործի քննության տևողության ողջամտության ապահովմանն առնչվող պահանջների պատշաճ կենսագործումը,

3. վերանայել թարգմանություն իրականացնող ստորաբաժանման հաստիքների քանակը, կամ, ռուսերեն և անգլերեն լեզուներից թարգմանությունները ևս, ըստ ծանրաբեռնվածության, կազմակերպել թարգմանչական ծառայություններ մատուցող ընկերությունների միջոցով,

4. ուսումնասիրել ՀՀ քննչական կոմիտեի և քննչական մյուս մարմիններում քննիչների թվակազմը՝ գործերի քանակի համադրմամբ և ըստ անհրաժեշտության ավելացնել հաստիքներ կամ թափուր հաստիքների առկայության դեպքում՝ համալրել դրանք,

5. ներպետական օրենսդրությամբ ամրագրել արդյունավետ կառուցակարգեր, որոնք ուղղված կլինեն ինչպես գործերի քննության ողջամիտ ժամկետի խախտումները կանխելուն, այնպես էլ խախտված իրավունքների դեպքում դրանց լիարժեք վերականգնմանը:

---

<sup>291</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2002\)034-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2002)034-e), հղումով, կետ 64, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>292</sup> Տե՛ս Միլիչն ընդդեմ Մոնտենեգրոյի և Սերբիայի (Milić v. Montenegro and Serbia) գործով 2013 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 28359/05, կետ 73:



ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ  
ՄԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները

Մարդու իրավունքների համակարգում առաջնային նշանակություն ունեցող իրավունքներից հատկապես կարևորվում է անձնական ազատության իրավունքը:

Անձնական ազատության իրավունքի երաշխավորման հետ կապված համակարգային խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի 2016, 2017 և 2018 թվականների գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումներում, այնպես էլ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային գեկույցի շրջանակներում<sup>293</sup>:

2019 թվականի ընթացքում ևս ազատությունից զրկելիս անձի նվազագույն իրավունքների ապահովման վերաբերյալ ստացվել են բողոքներ: Բողոք ներկայացրած անձանց գերակշիռ մասը պնդել է, որ արգելանքի վերցնելիս (քրեական և վարչական վարույթներով) չեն տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին, չեն ծանուցվել իրենց իրավունքների մասին, Ոստիկանության բաժնում պահվել են օրենքով սահմանված ժամանակից ավելի: Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը պնդել է, որ իրեն և ընտանիքի անդամներին բերման են ենթարկել Ոստիկանության բաժին, որտեղ պահվել են 5 ժամից ավելի:

2019 թվականի ընթացքում նաև արձանագրվել են դեպքեր, երբ Պաշտպանի աշխատակազմի թե՛ զծի հեռախոսահամարին ներկայացրած ահազանգերով բերման ենթարկված անձինք ցանկացել են տեղեկանալ իրենց նվազագույն իրավունքների մասին:

Անձի անձնական ազատության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական մոտեցումների և սահմանադրաիրավական երաշխիքների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջ են քաշվել հետևյալ իրավական չափանիշները՝

- անձի անձնական ազատության իրավունքին միջամտության՝ «ազատությունից զրկման» փաստը որոշելիս որոշիչ գործոններ են ազատությունից զրկելու բնույթը, ազատությունից զրկելու օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Օբյեկտիվ կողմը ներառում է ազատությունից զրկման վայրը և պահման ժամանակը, սուբյեկտիվ կողմը՝ անձի համաձայնությունը<sup>294</sup>.

- ազատությունից զրկել է համարվում, երբ իրավապահ մարմինը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր կամ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին: «Ազատությունից զրկել» է համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը<sup>295</sup> կամ օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման<sup>296</sup>.

<sup>293</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդումը, էջ 149-154, 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային գեկույց, էջ 41-59:

<sup>294</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը, էջեր 5-7, հասանելի է [http://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_5\\_ENG.pdf](http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>295</sup> Տե՛ս 'u Գիլլանն ու Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillan & Quinton v. the United Kingdom) գործով 2010 թվականի հունվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 4158/05, կետ 57:

<sup>296</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցի 17-ից 18-րդ էջերը, հասանելի է [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf) հղումով, 12.02.20թ., Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով 2011 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 30194/09, կետ 49:



- ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ: Որոշիչ է միայն այն հանգամանքը, որ անձն այլևս չի կարող լքել իր գտնվելու վայրը<sup>297</sup>, որը կարող է լինել ոչ միայն իր նպատակային նշանակությամբ որպես այդպիսին օգտագործվող տարածքը (օրինակ՝ խուցը), այլև ցանկացած վայր, այդ թվում՝ տրանսպորտային միջոց<sup>298</sup>.

- անձն ազատությունից զրկվածի կարգավիճակ է ձեռք բերում անգամ այն դեպքերում, երբ կամովին ներկայանալով ոստիկանություն՝ հնարավորություն չի ունենում լքել այն.

- անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում.

- իրավասու պետական մարմինների գործունեության հիմքում պետք է ընկած լինի այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ անձին ազատությունից զրկելու փաստի ուժով՝ անկախ վարությանն առանձնահատկություններից (քրեական, վարչական), ֆորմալ ընթացակարգերի առկայությունից կամ բացակայությունից, օպերատիվ միջոցառումների իրականացումից, պետք է ապահովվի իրավունքների՝ սահմանադրությամբ և միջազգային իրավական նորմերով երաշխավորված իրավունքների նվազագույն ծավալ.

- այլ կերպ ասած, անձին ազատությունից զրկելը՝ անկախ նրանից, թե դա իրականացվել է, ասենք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կամ քրեական դատավարության շրջանակներում, ձերբակալման կամ բերման ենթարկելու ինստիտուտների շրջանակներում, պետք է ուղեկցվի անձին որոշակի նվազագույն իրավունքներ տրամադրելով և միասնական երաշխիքներ ամրագրելով:

Ընդ որում, նվազագույն իրավունքների ապահովման պահանջն ուղղված է ոչ միայն անձի անձնական ազատության իրավունքի, այլև վատ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունքի ապահովմանը: Այս պահանջից ելնելով՝ Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում ամրագրված են ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքները. փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված ցանկացած ընթացակարգի շրջանակներում ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք (ազատությունից զրկելու փաստը պետք է դիտարկել վերը նշված չափանիշների շրջանակում), միջազգային պահանջների ձևակերպմամբ, պետք է ունենա առնվազն հետևյալ իրավունքները.

1. անհապաղ տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին՝ իրեն հասկանալի լեզվով.
2. պահպանել լռություն,
3. իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը,
4. հրավիրել փաստաբան,
5. իր պահանջով ենթարկվել բժշկական գնման, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից,

<sup>297</sup> Տե՛ս Ղե Ուալդը, Ումսը և Վերսիպյան ընդդեմ Բելգիայի (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) գործով 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը, գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66, կետ 65:

<sup>298</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցը, էջ 18, հասանելի է [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

6. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկել և դատարանի կողմից ազատ արձակվել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

2. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու թերի կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները

Հանցանքի կատարման կասկածանքի հիման վրա ազատությունից զրկելու դեպքերից բացի ՀՀ օրենսդրությամբ առկա է նաև անձին վարչական իրավախախտում կատարելու հիմքով ազատությունից զրկելու հնարավորություն:

Մինչդեռ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու՝ օրենքով ամրագրված հստակ կառուցակարգերը և ընթացակարգերը բացակայում են: Իսկ ոստիկանության կողմից ազատության իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների ցանկն ու դրանց ծանուցման կարգն իրենց ամրագրումն են ստացել ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ:

Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, գործնականում չեն ապահովվում անգամ Վառավարության վերը նշված որոշման պահանջները:

Հատկանշական է, որ Ոստիկանությունից ստացված տեղեկության համաձայն՝ բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց նվազագույն իրավունքների ապահովման նպատակով, այդ թվում՝ հավաքների ընթացքում հասարակական կարգի ապահովման գործընթացում ներգրավվող Ոստիկանության ծառայողներին հրահանգավորվում է.

- անձի կողմից իրավախախտում թույլ տալու դեպքում պարզաբանել իրավախախտման բնույթը՝ պահանջելով դադարեցնել այն,

- ոստիկանության ծառայողի օրինական պահանջին չենթարկվելու դեպքում իրավախախտին տեղեկացնել վերջինիս նկատմամբ ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ գործադրելու ոստիկանության ծառայողի օրենքով նախատեսված իրավունքի մասին,

- խուսափել իրավախախտ անձի հետ վիճաբանելուց, համոզելու միջոցով իրավախախտին դուրս բերել մարդաշատ վայրից կամ հրավիրել նրան ոստիկանության հենակետ,

- արձանագրություն կազմելիս խախտողին բացատրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները /այդ մասին արձանագրության մեջ կատարվում է համապատասխան նշում/:

Սա, իհարկե, Ոստիկանության կողմից գործադրված ողջունելի և կարևոր քայլ է, այնուամենայնիվ պետք է բացառել պրակտիկայում ընդհանուր պահանջից որևէ շեղում:

Խնդրի համակարգային բնույթի, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների անկատարության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել էր վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ոչ լիարժեք կանոնակարգումների և դրանով պայմանավորված՝ իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության հարց: Արդյունքում, Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի որոշմամբ տրվեցին անձի անձնական ազատության երաշխավորման վերոնշյալ չափանիշներին համահունչ իրավական հստակ գնահատականներ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ներպետական իրավական կարգավորումները համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն

որի՝ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից սկսած ազատությունից զրկված անձի համար ապահովվում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ, և ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միշտ պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով (Անձնական ազատությունը) և 64-րդ հոդվածի 1-ին մասով (իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը) սահմանված իրավունքները:

Ավելին, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի օրենսդրական կանոնակարգման անկատարությանը, ընդգծել է, որ «անձի ազատության իրավունքի ապահովման բնագավառում ձևավորվել է ոչ պատշաճ իրավակիրառ պրակտիկա՝ հնարավոր դարձնելով անգամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի՝ ոստիկանության կողմից շարունակական կիրառումը, ինչն իր հերթին երկրում սահմանադրական օրինականությանն ուղղված լուրջ սպառնալիք է»՝ ըստ այդմ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի համարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը<sup>299</sup>:

Նման պրակտիկայի շարունակականությունը փաստվում է նաև 2019 թվականի ընթացքում արձանագրված խնդիրներով<sup>300</sup>:

Մասնավորապես, Պաշտպանին ներկայացված բողոքներով, ինչպես նաև Ոստիկանության բաժին կատարված այցերի շրջանակներում բերման ենթարկված անձինք Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հիմնականում տեղեկացրել են, որ բերման ենթարկելու հիմքերն իրենց չեն պարզաբանել:

Արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանության բաժին կամովին կամ ոստիկանի «հրավերով» ներկայացած քաղաքացիները ժամեր շարունակ պահվել են այնտեղ և դուրս գալու հնարավորություն չեն ունեցել:

Բացի այդ, բողոքների ուսումնասիրությունը հիմք է տալիս արձանագրելու, որ անձանց ոստիկանության բաժին «հրավիրելու» և վերջիններիս՝ ազատությունից փաստացի զրկմամբ պայմանավորված իրավունքները չապահովելու պրակտիկան իրավապահ մարմինների կողմից որոշ դեպքերում արդարացվում է այն հիմնավորմամբ, որ անձին բերման ենթարկելու մասին որոշում չի կայացվել, քանի որ նրան հրավիրել են բաժին օպերատիվ միջոցառում իրականացնելու շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ նման դեպքերը նույնպես պետք է համարվեն ազատությունից զրկում, և այդ անձինք պետք է օժտվեն անհրաժեշտ իրավունքներով ու դրանք ապահովող երաշխիքներով: Սա պետք է դառնա իրավապահ մարմինների գործունեության սկզբունք: Ինչ վերաբերում է «օպերատիվ միջոցառումներ իրականացնելու» պետական մարմնի

<sup>299</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1339 որոշումը:

<sup>300</sup> Քրեական գործով վարույթի շրջանակներում ազատությունից զրկման ընթացակարգերի (արգելանքի վերցվելու պահից իրավունքների երաշխավորում, բերման ենթարկվածի կարգավիճակ և այլն) հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների մասին խոսվել է սույն զեկույցի՝ «Փաստացի քրեական հետապնդումից» անձի պաշտպանության՝ օրենսդրական երաշխիքների և գործնական միջոցառումների բավարարությունը պարագրաֆում:

արդարացումներին, դրանք չեն կարող ընդունելի լինել, իսկ նման պրակտիկան պետք է պարզապես բացառել:

Ոստիկանություն «հրավիրելու» ընթացակարգի կիրառության հետ կապված՝ ՀՀ ոստիկանության կողմից տեղեկություն է ներկայացվել, որ մշակվել է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով նախատեսվում է կարգավորել Ոստիկանության բաժիններ «հրավիրված» անձանց վերաբերյալ առկա խնդիրները: Սրա հետ կապված, կարևոր է նկատել, որ «հրավիրելու» որպես ոստիկանություն կամավոր ներկայանալու գործընթացի՝ օրենքով ամրագրումը որևէ կերպ չի կարող ընդգրկել փաստացի ազատությունից զրկման վերը նշված և ոչ մի դեպք:

Այսպիսով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունքում իրականացրած անմիջական դիտարկումների և կատարված իրավական վերլուծության արդյունքները փաստում են, որ անհրաժեշտ է ազատությունից զրկում ենթադրող ընթացակարգերի (վարչական ձերբակալում, բերման ենթարկել և խախտողի բերում)՝ օրենքով հստակ կանոնակարգում:

Ուստի, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման առաջնահերթությամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

1. ապահովել ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխան իրավակիրառում: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու հստակ և որոշակի ընթացակարգեր,

2. անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ կատարել Ոստիկանության գործունեության ներքին կանոնակարգման ակտերում, ինչպես նաև Ոստիկանության՝ քաղաքացիների հետ անմիջականորեն շփվող ծառայողների վերապատրաստումն իրականացնել այնպես, որ յուրաքանչյուր ոստիկան տիրապետի քաղաքացիների նվազագույն իրավունքներին ու դրանց թղթակցող իր պարտականություններին:

ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ  
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի իրավունքների ապահովման տեսանկյունից շարունակում է խնդրահարույց լինել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ համաչափ սահմանափակման պրակտիկան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի համաձայն՝ չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը, նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին:

Անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները մուտքագրվում են Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ (ՄԷԿՏ) ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» թիվ 884-Ն որոշմամբ նախատեսված կարգով: ՄԷԿՏ համակարգի խնդիրը Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների կողմից ՀՀ մուտք (ելք) գործող անձանց և տրանսպորտային միջոցների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի ձևավորումն է, տեղեկատվության ստացման, կուտակման և մշակման ապահովումն է, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ մարմիններին անհրաժեշտ տվյալների տրամադրումն է:

Խնդիրն այն է, որ գործնականում շարունակել են արձանագրվել դեպքեր, որ խափանման միջոցի վերացման դեպքում համապատասխան գրառում ՄԷԿՏ համակարգում չի արվել, և երբ անձը ցանկացել է հատել ՀՀ պետական սահմանը տեղեկացվել է, որ իր նկատմամբ դեռևս առկա է արգելք:

Ինչպես 2017, 2018, այնպես էլ 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի քննությանն առնված դեպքերում չնայած անձինք կրած են եղել դատարանի կողմից նշանակված պատիժը (անկախ պատժի տեսակից՝ տուգանք, ազատազրկում և այլն), սակայն վերջիններիս՝ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը ՄԷԿՏ համակարգից չէր հանվել՝ դեռևս նախաքննության փուլում կիրառված արգելանքի հիման վրա: Օրինակ՝ անձը Պաշտպանին տեղեկացրել է, որ իր նկատմամբ դատավճռով նշանակված տուգանքն ամբողջությամբ մուծվել է, անդորրագիրը՝ ներկայացվել դատարան, սակայն ՄԷԿՏ համակարգում չի արվել համապատասխան գրառում այդ մասին, արդյունքում՝ անձին չի թույլատրվել հանրապետությունից դուրս գալ:

Մեկ այլ դեպքում ահագանգ է ներկայացվել այն մասին, որ քրեական գործով վարույթի ընթացքում քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու և ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին, սակայն անձին դարձյալ չի թույլատրվել լքել ՀՀ պետական սահմանը: Ահագանգերից մեկով անձը տեղեկացրել է, որ դատավճռով որոշում է կայացվել նշանակված ազատազրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 տարի ժամկետով: Նա պնդել է, որ փորձաշրջանն ամիսներ

առաջ ավարտվել է, սակայն ՄԷԿՏ համակարգում դեռևս առկա են տվյալներ, արդյունքում՝ իր էլքը ՀՀ-ից չի թույլատրվել:

Ահազանգերից մեկով անձը նշել է, որ իր նկատմամբ իրականացնող քրեական հետապնդումը դադարեցվել է, վարույթն իրականացնող քննիչն այդ մասին գրությամբ տեղեկացրել է Ոստիկանությանը, սակայն ՄԷԿՏ համակարգում տվյալները չեն մուտքագրվել, արդյունքում՝ չի կարողացել լքել Հայաստանի Հանրապետությունը:

Նշված բոլոր դեպքերը իրավասու պետական մարմինների՝ Ոստիկանության, քննչական մարմինների և դատարանների հետ հնարավորին անհապաղ քննարկվել և համագործակցության արդյունքում լուծում են ստացել:

Ներկայացված բողոքների շարունակականության, ինչպես նաև խնդրի համակարգային բնույթի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը համակողմանի ուսումնասիրության առարկա է դարձրել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ապահովման սահմանադրաիրավական հիմքերն ու միջազգային իրավական սկզբունքները, արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը, ոլորտի ներպետական օրենսդրական կարգավորումների որոշակիությունն ու կանխատեսելիությունը:

Արդյունքում, Պաշտպանը խնդիրը ներկայացրել է օրենսդրության և իրավակիրառման սահմանադրականության տեսանկյունից՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու գործառույթի իրացմամբ: Արդյունքում, ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արտահայտել է իրավակիրառ պրակտիկայի իրավաչափությունը կանխորոշող պայմաններ՝ նշելով, որ «նման կանոնակարգման առկայության պայմաններում և նման կառուցակարգի միջոցով անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու պարագայում այն պետք է իրացվի բացառապես խափանման միջոցի վերացման մասին որոշում ընդունելու վերաբերյալ տեղեկատվությունը ևս նույն համակարգում տեղադրելու՝ իրավասու մարմնի հստակ պարտականության իրացման և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները վերացնելու պայմանով»՝ միաժամանակ արձանագրելով օրենսդրության մեջ այս պահանջի վարույթն իրականացնող մարմնի վրա դրված հստակ պարտականության տեսքով ուղղակի ամրագրման բացակայությունը:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների բովանդակության<sup>301</sup> ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ ՀՀ կառավարության խնդրո առարկա որոշման<sup>302</sup> մեջ խափանման միջոցի վերացման մասին որոշման վերաբերյալ տեղեկատվությունը ՄԷԿՏ համակարգ ուղարկելու ուղղակի պարտականության բացակայությունը հարցականի տակ է դնում այդ ընթացակարգի որոշակիությունը, քանի որ կոնկրետ իրավասու մարմնի վրա դրված այդպիսի պարտականություն չկա:

Քանի դեռ օրենսդրական համապատասխան փոփոխություններ չեն նախաձեռնվել, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն սկզբունքով, որ խափանման միջոցի կիրառմամբ իրավասու մարմնին տեղեկություններ տրամադրելու պարտականությանը զուգահեռ ապահովվի հակառակի՝ խափանման միջոցի վերացման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը:

<sup>301</sup> Բողոքների նկարագրությունը Սահմանադրական դատարան է ներկայացվել առանց անհատականացնող տվյալների մատնանշման:

<sup>302</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի 22 հունիսի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշումը:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված նույնաբովանդակ բողոքների շարունակականությունն ինքնին վկայում է ոչ միասնական իրավակիրառ պրակտիկայի մասին: Սա առաջին հերթին արդյունք է այն բանի, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները վերացվելու դեպքում ՄԷԿՏ համակարգում տեղեկատվությունը տեղադրելու կառուցակարգերը դեռևս բացակայում են: Այլ խոսքով՝ դեռևս հստակեցված չէ, թե որ մարմինը պետք է հանձն առնի անձի նկատմամբ կիրառված արգելքի սահմանափակման մասին ՄԷԿՏ համակարգը վարող մարմին տեղեկացնելու պարտականությունը:

Մեկ այլ խնդիր է այն, որ ներկայում ՄԷԿՏ համակարգը վարող Ոստիկանությանը համապատասխան տեղեկատվությունը փոխանցվում է փոստային առաքման միջոցով, ինչն ինքնին բարդացնում է ընթացակարգը՝ խլում ավելորդ ռեսուրս և ժամանակ:

Ոստի, Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ խնդրի լուծումը պետք է տրվի օրենսդրական բացի հաղթահարման ճանապարհով՝ համապատասխան ընթացակարգերի ամրագրմամբ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ, եթե անձն ունի որևէ դատավարական կարգավիճակ, օրինակ՝ մեղադրյալի, սակայն նրա նկատմամբ խափանման միջոց կիրառված չէ, ապա որևէ կերպ չի կարող սահմանափակվել հանրապետությունից դուրս գալու նրա իրավունքը:

Դրական է, որ ոլորտի պատասխանատուների, մասնավորապես Ոստիկանության կողմից ջանքեր են գործադրվում օրենսդրության բարելավման նպատակով: Ոստիկանությունը լրամշակել և 2019 թվականին դարձյալ Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և Հայաստանի Հանրապետությունից ելքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որի վերաբերյալ Պաշտպանի կողմից ներկայացվել են դիտարկումներ<sup>303</sup>:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

1. ապահովել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացման պահին այդպիսի սահմանափակման վերացման վերաբերյալ տեղեկությունների պարտադիր տրամադրումը ՄԷԿՏ համակարգը վարող իրավասու մարմին,

2. տեղեկությունները ՄԷԿՏ համակարգը վարող իրավասու մարմին տրամադրել էլեկտրոնային եղանակով՝ ապահովելով դրա անհապաղ փոխանցումն ու մուտքագրումը համակարգ,

3. հնարավորին սեղմ ժամկետում ընդունել օրենսդրական վերը նշված կարգավորումները՝ հստակ ամրագրելով իրավասու մարմնի կոնկրետ պարտականությունը նաև այն դեպքերում, երբ արգելանքը վերացվում է դատաքննության փուլում, ինչպես նաև պատժի կրումից հետո:

<sup>303</sup> Նախատեսվող դրույթների ուսումնասիրության արդյունքում պարզ չէ, սակայն, թե անձի ելքի արգելքի մասին որոշումը իրավասու մարմնի կողմից կայացված խափանման միջոցի կիրառման մասին որոշման բաղկացուցիչ մաս է կազմելու, թե՛ ոչ: Պարզ չէ նաև դրա հիմնավորվածության և բողոքարկման հնարավորության հարցը: Այս հարցերը վտանգում են անձի իրավունքների իրացումը: Պաշտպանի դիրքորոշմամբ՝ անձը պետք է իրավունք ունենա ծանոթանալ ՄԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման վերաբերյալ որոշմանը, որի անհրաժեշտությունը պետք է պատշաճ հիմնավորված լինի, ինչպես նաև քաղաքացուն պետք է պարզաբանվի իր իրավունքներն ու պարտականությունները և հնարավորություն ընձեռնվի բողոքարկել այդ որոշումը:

2. Դատարանի կողմից մեղադրյալի ելքը ՀՀ-ից թույլատրելու դեպքում ՄԷԿՏ համակարգում տվյալներ չմուտքագրելու ոչ իրավաչափ պրակտիկան

2019 թվականին Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ դիմել է դատարան և խնդրել իր պաշտպանյալին թույլատրել որոշ ժամանակահատվածով մեկնել ՀՀ-ից: Ըստ փաստաբանի՝ դատարանը բավարարել է խնդրանքը և համապատասխան գրություն ուղարկել Ոստիկանություն, այնուամենայնիվ, նրա ելքն արգելվել է, երբ փորձել է հատել ՀՀ պետական սահմանը:

Բողոքի քննարկման շրջանակում Ոստիկանությունը պարզաբանել է, որ դատարանի գրությունը սկզբունքորեն որևէ տեղեկություն չի պարունակել համապատասխան ձևի պահպանմամբ ընդունված որոշման մասին: Ուստի, դատարանի գրությունը ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ առկա սահմանափակումը (ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվության (ՄԷԿՏ) համակարգում մուտքագրված տեղեկությունները) ժամանակավորապես դադարեցնելու պատշաճ հիմք չի համարվել և թողնվել է առանց կատարման:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծել է, որ բողոքի քննարկումը և դրա արդյունքում կայացված՝ «Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին» որոշումը նպատակ չի ունեցել գնահատական տալու կոնկրետ գործով դատական ակտերի կամ այնպիսի հարցերի, որոնք դատական վարույթի կամ դատական վիճարկման առարկա են և գտնվում են կոնկրետ գործով դատարանի լիազորությունների տիրույթում: Որոշմամբ բոլոր հարցերին անդրադարձերը կատարվել են բացառապես Պաշտպանի իրավասության տեսանկյունից:

Քրեական վարույթի ընթացակարգերը ռիսկային են մարդու իրավունքների տեսանկյունից և պարունակում են այդ իրավունքներին միջամտության հնարավորություններ: Քրեական դատավարություն նախաձեռնելով՝ պետությունն իրացնում է հանցավորության պայքարի ու, առհասարակ, քրեական քաղաքականության իր հիմնարար գործառույթը: Մի կողմից սա հասկանալի է, քանի որ հանցավորությունից պաշտպանությունը պահանջում է առավելագույն ջանքեր, որպեսզի քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով պատասխանատվության ենթարկվի: Մյուս կողմից, պետք է երաշխավորել քրեական դատավարության ընթացքում անձի իրավունքների լիարժեք իրացումը, ապահովել դրա ամուր պաշտպանությունը ցանկացած տեսակի խախտումից կամ խախտման վտանգից: Միայն այս կերպ է հնարավոր հասնել արդարադատության սպառիչ իրականացման՝ այդ ընթացքում ապահովելով քրեական արդարադատության ոլորտում հանրային ու մասնավոր շահերի իրական հավասարակշռված պաշտպանություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Ըստ այդմ, Քրեական դատավարության օրենսգիրքը սահմանել է քրեական դատավարության մասնակիցների հստակ շրջանակ, ամրագրել է նրանցից յուրաքանչյուրի դերը և գործառույթները ու դրանով պայմանավորված՝ իրավական կարգավիճակի սահմանները: Քրեական դատավարության մասնակից հանրային մարմինների դեպքում այս հարցն ունի առավել մեծ գործնական կարևորություն, քանի որ նրանց իրավական



կարգավիճակն ունի հստակ կարգավորում: Դա ինքնին մարդու իրավունքների ապահովման կարևոր երաշխիք է:

Քրեադատավարական օրենսդրությունը սահմանել է նաև քրեական վարույթի ընթացքում կիրառման ենթակա դատավարական հարկադրանքի միջոցների սպառիչ ցանկը, հստակ կարգավորել է դրանց կիրառության հիմքերն ու կարգը: Այս կարգավորումները մի կողմից նպատակ ունեն կոնկրետ դատավարական ձև ամրագրելու միջոցով ապահովել քրեական հետապնդման մարմինների և դատարանի գործողությունների կամ անգործության ու որոշումների հստակությունը, դրանց կանխատեսելիությունը, մյուս կողմից՝ ապահովել ամուր երաշխիքներ անձի իրավունքների համար: Դատավարական կարգավորման նկատմամբ պահանջներն առավել խիստ են, երբ հարցն, ի թիվս այլնի, վերաբերում է անձի անձնական ազատության ու ազատ տեղաշարժման իրավունքներին:

Ազատ տեղաշարժվելու իրավունքը Սահմանադրությամբ և ստանձնած միջազգային պայմանագրերով երաշխավորված հիմնական իրավունքներից է: Այն երկրի ժողովրդավարական հիմքերից է և անձի ազատ զարգացման անփոխարինելի նախապայման: Ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները ոչ միայն պետք է ծառայեն Սահմանադրությամբ ու միջազգային պայմանագրերով սահմանված իրավաչափ նպատակներին, այլև անհրաժեշտ և բավարար լինեն այդ նպատակներին հասնելու համար: Այդ սահմանափակումները պետք է համապատասխանեն համաչափության սկզբունքին, պետք է ծառայեն քրեական վարույթով հետապնդվող նպատակին, լինեն առկա միջոցներից հնարավոր նվազ սահմանափակողը՝ երաշխավորելով խիստ սահմանափակումների կիրառումը՝ որպես բացառության:

Քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «Չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին: Կասկածյալից կամ մեղադրյալից չհեռանալու մասին ստորագրությունը վերցնում է քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

Խափանման այս միջոցի իրավաչափության պայմաններից է այն, որ կասկածյալը կամ մեղադրյալը չեն կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը:

Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի իրավաչափության նշված պայմանը ենթադրում է, որ խախտում չի համարվի, եթե մեղադրյալն այլ տեղանք մեկնի հիշյալ մարմիններից որևէ մեկի թույլտվությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե նրանցից ում վարույթում է գտնվում գործը և ով է պատասխանատու դատավարության կոնկրետ փուլում գործով վարույթի համար: Դա նաև նշանակում է, որ այդ թույլտվությունը պատշաճ իրավական հիմք է այն մարմինների համար, ում համար առաջանում է քրեական վարույթն իրականացնող մարմնի այդ ակտի պահանջի կատարման պարտականություն: Ընդ որում, օրենքը չի կոնկրետացնում, թե ինչ կոնկրետ ձև կամ ինչ բովանդակային բաղադրիչներ պետք է ունենա այդ թույլտվությունը: Ավելին, օրենքը վերջիններիս չի վերապահում այդ ակտը վիճարկելու կամ կասկածի տակ դնելու հնարավորություն:

Կոնկրետ իրավիճակում վարույթն իրականացնող մարմինը եղել է դատարանը, որը մեղադրյալի ելքի սահմանափակումը ժամանակավորապես վերացնելու հարցով գրություն է հասցեագրել Ոստիկանության իրավասու ստորաբաժանմանը՝ վերջինիս վրա, ըստ էության, դնելով իր ակտի պահանջի կատարումը:

Չնայած դատարանի այդ գրությանը՝ Ոստիկանությունը հրաժարվել է կատարել այն մարմնի, կոնկրետ դեպքում՝ դատարանի գրության մեջ ձևակերպված դիրքորոշումը՝ թույլատրելու մեղադրյալի ելքը ՀՀ-ից որոշակի ժամանակահատվածով, որի վարույթում գտնվում է քրեական գործը՝ պատճառաբանելով, որ գրությունը սկզբունքորեն որևէ տեղեկություն չի պարունակել ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ առկա սահմանափակումը վերացնելու մասին համապատասխան ձևի պահպանմամբ ընդունված որոշման վերաբերյալ:

Ոստիկանության այս դիրքորոշման կապակցությամբ փաստաբանը Պաշտպանին հասցեագրած բողոքով նշել է, որ Ոստիկանության մեկնաբանությունը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ և 199-րդ հոդվածներին: Փաստաբանի եզրահանգմամբ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդության քննարկման և լուծման արդյունքում որոշում կայացվում է միայն «միջնորդությունը մերժելու կամ դրա քննարկումը հետաձգելու դեպքում»: Փաստաբանն այդ կերպ փորձել է ցույց տալ, որ Ոստիկանության առաջադրած պահանջը՝ համապատասխան ձևի պահպանմամբ ընդունված որոշման առկայության վերաբերյալ, չունի օրենքով նախատեսված հենք:

Փաստաբանի վկայակոչած՝ Քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածը, ըստ որի՝ միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե նույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ (2-րդ մաս), ամրագրված է օրենսգրքի ընդհանուր մասում և վերաբերում է ողջ քրեական դատավարությանը:

Բողոք ներկայացրած անձի մատնանշած մյուս օրենսդրական նորմը՝ Քրեական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածն ամրագրված է «Նախնական քննություն» վերտառությամբ գլխում և սահմանում է դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի պարտականությունը քննարկելու նախնական քննության մասնակիցների հարուցած բոլոր միջնորդությունները: Դրանից բացի, այն նախատեսում է, որ գրավոր և բանավոր միջնորդությունները պետք է քննարկվեն և լուծվեն 5 օրվա ընթացքում: Միջնորդությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու մասին կայացվում է պատճառաբանված որոշում:

Մարդու իրավունքների պաշտպանը գտել է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածը վերաբերում է նախնական, այլ ոչ թե դատական քննությանը և պարտականություն է սահմանում միայն դատախազի, քննիչի և հետաքննության մարմնի համար մինչդատական վարույթում, ուստի այն կիրառելի չէ սույն որոշմամբ քննարկվող հարցի նկատմամբ:

Այնուամենայնիվ, ընդունելի չի համարվել Ոստիկանության պարզաբանումն առ այն, որ դատարանի գրությունը «տեղեկություն չի պարունակել» ընդունված որոշման մասին և իրավակիրառ պրակտիկայում չի բարձրացվում դատարանի որոշման պատճենի առկայության հարց, այլ բավական է միայն որոշման առկայության մասին նշումը գրության մեջ:

Ոստիկանության այս պարզաբանումն ընդունելի չէ հատկապես այն պատճառով, որ եթե անգամ Ոստիկանությունը նման պահանջ առաջադրելով փորձում է պարզել, իր բնորոշմամբ, «համապատասխան ձևի պահպանմամբ որոշում կայացված լինելու փաստը», ապա «որոշում» եզրույթի հիշատակումը գրության մեջ անպայմանորեն չի վկայում առանձին փաստաթղթի ձևով այդպիսի առանձին գրավոր որոշման առկայության մասին:

Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը «որոշում» եզրույթը մեկնաբանում է հետևյալ կերպ. «քրեական գործով դատարանի որոշումները, բացի դատավճռից, ինչպես նաև մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կայացրած որոշումները»: Սրա հետ կապված՝ քրեական

դատավարությունում իրավունքի պաշտպանության երաշխիքը ենթադրում է, որ եթե չկա գրավոր որոշման մասին հատուկ պահանջ, ապա այն կարող է կայացվել նաև բանավոր, երբ հատկապես խոսքը վերաբերում է ոչ թե իրավունքի սահմանափակմանը, այլ այդ իրավունքի նկատմամբ սահմանափակումը վերացնելուն:

Այսինքն՝ օրենսգրքի ձևակերպումից ևս միանշանակ չէ, որ որոշումը պետք է ունենա միայն գրավոր ձև: Ուստի, «որոշում» եզրույթի առկայությունը Ոստիկանության համար դեռևս չի կարող երաշխիք լինել, որ դատարանը կայացրել է Ոստիկանության կողմից ակնկալվող «համապատասխան ձևի պահպանմամբ որոշում»: Ավելին՝ Քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածը բավարար է համարում վարույթն իրականացնող մարմնի «թույլտվությունը», այսինքն՝ նրա դիրքորոշումը կամ կամքը՝ առանց կոնկրետացնելու, թե այն ինչ ձև պետք է ունենա և ինչ կոնկրետ պահանջների համապատասխանի: Ինչը ևս հիմք է տալիս եզրահանգելու, որ գործող օրենսդրությամբ մեղադրյալի այլ տեղանք մեկնելը հնարավոր է առանց գրավոր ձևի պահպանմամբ կայացված որոշման:

Վերը նշվածից բացի, պետք է արձանագրել, որ քրեական դատավարությունում որոշակի դեպքերում Ոստիկանության համապատասխան մարմինները հանդես են գալիս՝ որպես հետաքննության մարմին, սակայն քննարկվող իրավիճակում Ոստիկանության գործողությունները հետաքննության հետ առնչություն չունեն: Սա ևս իր հերթին նշանակում է, որ Ոստիկանությունը կոնկրետ իրավիճակում քրեական դատավարության մասնակից չի հանդիսացել, իսկ քրեական գործն էլ արդեն գտնվել է դատական քննության փուլում՝ լինելով դատարանի վարույթում:

Ոստիկանության իրավասությունն այս դեպքում պետք է սահմանափակվեր վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշումը կամ կամքն արտահայտող՝ կոնկրետ դեպքում դատարանի կազմած ակտում (օրինակ՝ պաշտոնական ձևաթղթի վրա, ստորագրված և կնքված փաստաթուղթ) ձևակերպված հանձնարարության կատարմամբ: Ոստիկանությունը տվյալ դեպքում պետք է միայն հավաստիանար, որ առկա է վարույթն իրականացնող մարմնի թույլտվություն և այն առերևույթ անօրինական չէ:

Վերը նշվածի հիման վրա Պաշտպանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող դատարանի հանձնարարականը պետք է ենթակա լինի կատարման այն մարմնի կողմից, ում դա ուղղված է, երբ այդ մասին Ոստիկանությանն ուղղված փաստաթղթով, կոնկրետ դեպքում՝ գրությամբ հստակ է վարույթն իրականացնող մարմնի՝ կոնկրետ դեպքում դատարանի դիրքորոշումը կամ կամքը որոշակի վարքագիծ թույլատրելու կամ չթույլատրելու մասին: Այս պնդումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ այն անձի համար կանխատեսելի է դարձնում իր վարքագծի թույլատրելիությունը, ով դրան համապատասխան էլ կառուցում է իր վարքագիծը:

Ուստի, նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը հանգել է նրան, որ Ոստիկանությունը, չլինելով քրեական դատավարության մասնակից, կոնկրետ իրավիճակի պայմաններում չէր կարող գնահատել վարույթն իրականացնող մարմնի գործողությունների համապատասխանությունը Քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին՝ պատճառաբանելով այն, թե արդյոք վարույթն իրականացնող, այսինքն՝ դատավարության կոնկրետ փուլի ու քրեական հետապնդման ենթարկվող անձի վարքագծի համար պատասխանատու մարմինը որոշման ֆորմալ առկայության մասին հավաստիացում անում է Ոստիկանությանը:

Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարել նաև անդրադառնալ քննարկվող կոնկրետ հարցի առնչությամբ դատարանի կողմից գրությամբ, այլ ոչ թե որոշմամբ անդրադառնալուն ու դրա հետ կապված դատական պրակտիկային:

Մասնավորապես, քրեական գործը քննող դատարանի՝ մարդու իրավունքներին առնչվող ակտերը պետք է կայացվեն որոշումների ձևով բոլոր այն դեպքերում, երբ դատարանն առնչվում կամ հաղորդակցվում է արտաքին աշխարհի, այսինքն՝ դատավարության մասնակից չհանդիսացող սուբյեկտների հետ: Ավելին, պետք է կայացվեն գրավոր ձև ունեցող որոշումներ: Մա կապահովի դատարանի ամուր դերն այլ սուբյեկտների հետ հարաբերություններում և չի հանգեցնի այնպիսի իրավիճակների, երբ, ասենք, այս կամ այն հանրային մարմին իրեն թույլ կտա չկատարել դատարանի որոշումը:

Որոշումն այն փաստաթուղթն է, որով դատարանը ներկայացնում է իր որոշման կայացման հիմքերն ու պատճառները: Այս առումով, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանել է, որ ցանկացած տեսակի խափանման միջոց կարող է կիրառվել միայն որոշմամբ: Մասնավորապես, ըստ օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի. «Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում»:  
Նշված օրենսդրական դրույթը վերաբերում է նաև ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցին և դատարանի կողմից այն կիրառելուն:

Քրեական դատավարության օրենսգիրքը չի կարգավորել այն, թե դատարանն ինչ ակտով պետք է լուծի այն իրավիճակները, երբ իր վարույթում գտնվող գործով՝ անհրաժեշտություն է առաջանում թույլատրել անձի մեկնելն այլ տեղանք, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու միջոցով: Ստացվում է՝ անորոշ է, այն, թե դատարանն ինչպես պետք է արտահայտի իր դիրքորոշումը, որը որոշակի և պարզ կլինի դատավարության թե՛ մասնավոր սուբյեկտների, թե՛ հանրային մարմինների համար:

Առավել խնդրահարույց են այն իրավիճակները, երբ քրեական վարույթի ընթացքը կասեցված է, այսինքն՝ ընդմիջված է անորոշ ժամանակով, և դատարանը պետք է լուծի անձի այլ տեղանք մեկնելու հարցը (վարույթը կասեցված գործով մարդու իրավունքների պաշտպանության հնարավորությունների մասին առավել մանրամասն խոսվում է սույն որոշման հետագա շարադրանքում): Այստեղ առաջնային ծագող հարցն այն է, թե կասեցված վարույթով՝ ինչպես դատարանը կարող է կայացնել որևէ ակտ, առավել ևս որոշում:

Մարդու իրավունքների պաշտպանը սա համարում է համակարգային նշանակության հարց և արձանագրում է, որ այն պետք է ստանա օրենսդրական կարգավորում: Դրանով հանդերձ՝ չնայած օրենսդրական նման կարգավորումների բացակայությանը՝ հաշվի առնելով, որ կոնկրետ իրավիճակում խոսքը գնում է մարդու հիմնարար, այն է՝ ազատ տեղաշարժման իրավունքի մասին, դատարանը՝ որպես քրեական դատավարությունում մարդու իրավունքների գլխավոր երաշխավոր, պետք է հարցը վեր դիտարկի ֆորմալ ընթացակարգերի մակարդակից և այն լուծի որոշում կայացնելու միջոցով:

Ակնհայտ է, որ կոնկրետ դեպքում որոշումից բացի այլ փաստաթուղթ չի կարող ունենալ իրավական պատշաճ նշանակություն, առավել ևս երբ խոսքը վերաբերում է «գրությանը»: Փաստաթղթի այսպիսի տեսակ Քրեական դատավարության օրենսգրքով կամ քրեական վարույթի կարգ սահմանող որևէ այլ իրավական ակտով նախատեսված էլ չէ:

Վերը նշվածի հաշվառմամբ անհրաժեշտ է պրակտիկական զարգացնել այնպես, որ բոլոր այն իրավիճակներում, երբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի պայմաններում առկա է որոշակի վարքագիծ թույլատրելու մասին վարույթն իրականացնող դատարանի գրավոր դիրքորոշում, որն առերևույթ անօրինական չէ, կատարվի առանց տվյալ

մարմնի վարքագծի համապատասխանությունը քրեադատավարական օրենսդրության պահանջներին ոչ իրավաչափորեն գնահատելու:

3. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը և կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու ոչ իրավաչափ պրակտիկան

«Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների ապահովման մեկ այլ խնդիր է վերջինիս անձնագիրը վերցնելու իրավաչափության շրջանակները: Այս հարցը ևս քննարկման առարկա է դարձել Մարդու իրավունքների պաշտպանի 2016, 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներով, ինչպես նաև Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով<sup>304</sup>:

Քրեական դատավարության օրենսգրքի և «Քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի<sup>305</sup> համադրության մեջ դիտարկման արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է, որ քրեական դատավարության կամ դրա առանձին փուլերի խնդիրների իրագործմանն ուղղված վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն, այդ թվում՝ դատավարական կարգավիճակ ունեցող անձի անձնագիրը վերցնելը, պետք է իրավական հիմք ունենա հենց Քրեական դատավարության օրենսգրքում:

Ավելին, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի խնդրո առարկա հոդվածի կարգավորումը, համաձայն որի՝ կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես, ևս վկայում է, որ անձի անձնագիրը վերցնելու՝ օրենքով ամրագրված այդպիսի կառուցակարգը չի համապատասխանում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի քրեադատավարական կարգավորումներին:

Խնդիրն այն է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հետապնդման դադարեցումը քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումն է առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին:

Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը: Դատավարական այս կարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ ընտրված խափանման միջոցը կարող է վերացվել նաև քրեական հետապնդման իրականացման պայմաններում: Ստացվում է, որ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորմամբ անձի անձնագիրը կարող է հետ չվերադարձվել անգամ այն ժամանակ, երբ վերացվել է վերջինիս նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Քննարկելով կասկածյալի, մեղադրյալի նկատմամբ «Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոց կիրառելու դեպքում անձնագիրը վերցնելու կանոնակարգման սահմանադրականության հարցը՝ Սահմանադրական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել, որ այն դեպքերում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի

<sup>304</sup> ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի մասին տե՛ս սույն գլխի առաջին պարագրաֆում:

<sup>305</sup> «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը: (...) Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես»:

կողմից, առանց խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին) կիրառման, վերցվում է կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը, բացակայում է նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նրանց կողմից դատավճռի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ կասկածը: Հետևաբար՝ բացակայում է նաև հանցագործությունները կանխելու կամ բացահայտելու, այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով անձնագիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը:

Արդյունքում, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում: Եվ խափանման միջոցի վերացման պահին անձի անձնագիրը ենթակա է անհապաղ վերադարձման:

Վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ «Ներկայումս ձևավորված պրակտիկան, երբ անձի անձնագիրը պահվում է իրավասու մարմնի մոտ «ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու դեպքում, խախտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը»:

Բացի այդ, քրեական գործով վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիր վերցնելը դիտարկվել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության համաչափության տեսանկյունից:

Մինչդեռ, հարկ է նշել, որ Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարանում քննության ընդունվելուց հետո անձնագիրը վերցնելիս փոխարինող փաստաթղթի տրամադրման վերաբերյալ բարձրացված խնդրի օրենսդրական կարգավորումները փոփոխվեցին: Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821-Ն որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 4-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչվեց:

Մինչ փոփոխությունները՝ ուժը կորցրած դրույթը սահմանում էր, որ կալանքի տակ չգտնվող կասկածյալներին և մեղադրյալներին հետաքննության կամ նախաքննության մարմիններն անձնագրի փոխարեն տալիս են անձը հաստատող փաստաթուղթ՝ առանց Հայաստանի Հանրապետությունից մեկնելու թույլտվության, որի ձևը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

Խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել էր քաղաքացու անձնագիրը վերցնելիս անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի տրամադրման վերաբերյալ այս դրույթի գործնական կիրարկումն ապահովող օրենսդրական կառուցակարգերի ոչ լիարժեքության տեսանկյունից:

Սյսպես, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի 2012 թվականի փետրվարի 13-ի թիվ 2-Ն հրամանով հաստատվել են Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և նույնականացման քարտը վերցնելու փաստը հավաստող տեղեկանքների ձևերը, որոնք, պարունակելով անձի անձնագիրը վերցնելու փաստի, դրա հիմքերի, ժամանակի, անձնագիրը վերցրած պաշտոնատար անձի մասին տվյալներ, այդուհանդերձ, չեն կարող հանդես գալ որպես անձը հաստատող փոխարինող փաստաթուղթ՝ անձն անհատականացնող բավարար տվյալներ չպարունակելու պատճառով (օրինակ, լուսանկարի բացակայությունը): Բացի այդ, հրամանի ընդունման

իրավական հիմքը «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասերի՝ անձնագիրը կամ նույնականացման քարտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դրույթներն են: Հետևաբար, հրամանի կարգավորման շրջանակները ևս սահմանափակվում են այդ դեպքերով՝ չանդրադառնալով խնդրո առարկա հարցին:

Անձի անձնագիրը վերցնելու դեպքում տրամադրվող ժամանակավոր փաստաթղթի նմուշը սահմանող՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքում քաղաքացու ցանկությամբ ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի տրամադրման կարգը և ձևը սահմանելու մասին» թիվ 1660-Ն որոշման կարգավորումները տարածվում են միայն այն դեպքերի վրա, երբ քաղաքացին ինքը դիմում է ներկայացնում այդպիսի փաստաթուղթ ստանալու խնդրանքով՝ անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու դեպքերում:

Մինչդեռ, կատարված փոփոխությունների արդյունքում, փաստորեն, կասկածյալին կամ մեղադրյալին անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ դրույթն ուղղակի հանվեց՝ առանց փոխարենը նոր կառուցակարգերի ամրագրման: Քննարկվող դրույթի գործողության դադարեցման պայմաններում Սահմանադրական դատարանն, այդուհանդերձ, որոշման եզրափակիչ մասում արձանագրել է, որ Կառավարության որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը (Կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշման խմբագրությամբ) «համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, ում նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին»:

Ստացվում է, որ քննարկվող դեպքերում կասկածյալին կամ մեղադրյալին անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական կարգավորումների բացակայությունն այնքանով, որքանով արդեն իսկ չկան որևէ սահմանադրաիրավական ընկալման և մեկնաբանության հիմքեր, խնդիրներ կարող է առաջացնել Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման տեսանկյունից:

Ուստի, խնդրի լուծումը պետք է տրվի օրենսդրական բացի հաղթահարման ճանապարհով՝ համապատասխան ընթացակարգերի ամրագրմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

1. բացառել քրեական գործով վարույթի ընթացքում խափանման միջոցի կիրառման շրջանակներից դուրս կասկածյալի և մեղադրյալի անձնագիր վերցնելու կամ պահելու պրակտիկան,

2 ամրագրել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելիս դրա փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական պահանջ և դրա ապահովմանն ուղղված ընթացակարգեր:

4. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ ՀՀ-ից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի անձնագիրը վերցնելու և ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտելու պրակտիկան ոչ իրավաչափ դրսևորումներ է ունեցել նաև այն առումով, որ այդպիսի սահմանափակումները կիրառվել են քրեական վարույթի շրջանակներում վկայի կամ տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող, կամ առհասարակ դատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդպիսի գործողության իրավական հիմքերի բացակայության պայմաններում: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնում է տարեկան հաղորդումներում: 2019 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին խնդրի առնչությամբ բողոքներ են հասցեագրվել:

Այսպես, օրինակ, քրեական գործով վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննվել է, օրեր անց ցանկացել է մեկնել այլ երկիր, սակայն «Զվարթնոց» օդանավակայանում տեղեկացրել են, որ սահմանափակված է ՀՀ-ից դուրս գալու իր իրավունքը: Անձը տեղեկացվել է, որ ելքը սահմանափակելու համար հիմք է հանդիսացել Ոստիկանության գրությունը:

Դրանից բացի, Դատախազությունը պարզաբանել է, որ արձանագրվել է մեկ դեպք, երբ վերցվել է վկայի անձնագիրը: Դատախազության պարզաբանմամբ՝ քննիչին հանձնարարվել է վերացնել խախտումը: Նման ահազանգեր ստացվել են նաև Պաշտպանի աշխատակազմում:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց նկատմամբ նման սահմանափակումների կիրառման պրակտիկան, անկախ հետապնդվող նպատակից, օրինական և հիմնավորված կարող է լինել միայն, եթե ունի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

Հարցի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ որևէ իրավական ակտով վկայից, տուժողից անձնագիր վերցնելու կամ այդ անձի վերաբերյալ տեղեկությունները ՄԵԿՏ համակարգ տեղադրելու պահանջ չի նախատեսվում:

Ի լրումն ասվածի, անհրաժեշտ է նշել, որ Ոստիկանության կողմից լրամշակված և Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի ուղարկված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և Հայաստանի Հանրապետությունից ելքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ելքի իրավունքը կարող է ժամանակավորապես սահմանափակվել, եթե քաղաքացին հանցագործության կասկածանքի հիման վրա բերման ենթարկվելու կամ քրեադատավարական ձերբակալման նպատակով հետապնդվում (որոնվում) է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող կամ քրեական հետապնդման մարմնի կողմից: Մինչդեռ, վերոնշյալ ձևակերպումը մտավախության տեղիք է տալիս:

Վերահաստատելով Նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ ներկայացրած մտահոգությունը՝ Պաշտպանն արձանագրել է, որ անգամ եթե նման սահմանափակումը վարույթի մասնակցի դատավարական պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, օրինական և հիմնավորված կարող է լինել միայն, եթե այդ նպատակի իրագործմանն ուղղված ընթացակարգն ունի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:



Նշվածի հաշվառմամբ՝ ընդգծվել է Նախագծի խնդրո առարկա դրույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումների համատեքստում քննարկելու անհրաժեշտությունը: Սկզբունքային է, որ քրեական հետապնդման մարմնի ցանկացած որոշում, առավել ևս իրավունքներին միջամտություն ենթադրող, պետք է ունենա քրեադատավարական հիմք և համաչափ լինի անձի դատավարական կարգավիճակին: Մինչդեռ, Նախագծով առաջարկվող կարգավորմամբ ստացվում է, որ ՀՀ քաղաքացու ելքի իրավունքը կարող է ժամանակավորապես սահմանափակվել, եթե քաղաքացին հանցագործության կասկածանքի հիման վրա բերման է ենթարկվել: Պաշտպանի դիրքորոշմամբ՝ նախատեսված ձևակերպումները խիստ ընդհանրական են, որի արդյունքում չի բացառվում վկաների կամ տուժողների ելքի իրավունքի ոչ համաչափ սահմանափակման հնարավորությունը: Ուստի առաջարկվել է Նախագծով հստակ ամրագրել քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց տեղաշարժվելու իրավունքը ՄԷԿՏ համակարգի կիրառմամբ և առանց որևէ իրավական հիմքերի սահմանափակելու պրակտիկան բացառող դեպքերը:

Ասվածը հիմք ընդունելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է՝

1. քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը չպետք է սահմանափակել՝ վերջինիս անձնագիրը վերցնելու կամ ՄԷԿՏ համակարգով համակարգում հանրապետությունից դուրս գալու արգելքի մասին տվյալ մուտքագրելու եղանակով. դրա օրենսդրական հիմքերը բացակայում են,

2. անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի նմանատիպ ցանկացած խախտում պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով առաջ բերի պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարց:

ԳԼՈՒԽ 4. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Փաստաբանի մասնագիտական գործունեությունը ու նրա դերի ճիշտ ընկալումը հասարակությունում

Փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքների տեսանկյունից չափազանց կարևոր է հանրության շրջանում փաստաբանի դերի և գործառույթների ճիշտ ընկալումը և համապատասխան վերաբերմունքը նաև նրա անձի նկատմամբ:

Գաղտնիք չէ, որ 2018 և 2019 թվականների ընթացքում կտրուկ աճեց հանրային հետաքրքրություն ունեցող քրեական գործերի թիվը:

Տվյալ քրեական գործերի հետ կապված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ առանձին դեպքերում պաշտոնատար անձինք հանդես են գալիս այնպիսի հայտարարություններով ու գնահատականներով, որոնք ակնհայտորեն առաջացնում են անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ հասարակական ընկալում:

Սա իր հերթին նպաստում է նաև փաստաբանների մասնագիտական աշխատանքի վերաբերյալ սխալ ընկալումների ձևավորմանը, սոցիալական մեղիայում փաստաբաններին ուղղված վիրավորական մեկնաբանություններին ու նույնիսկ սպառնալիքներին: Այսպիսի մեկնաբանություններ են արձանագրվել նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնող մի շարք անձանց կողմից<sup>306</sup>:

Սոցիալական ցանցերի նպատակային դիտարկումը ևս վկայում է, որ հաճախակի են դարձել դեպքերը, երբ մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանը նույնացվում է իր վստահորդի հետ: Մասնավորապես, սոցիալական մեղիայում արձանագրվում են վիրավորանք ու նույնիսկ սպառնալիք պարունակող մեկնաբանություններ: Ազդեցիվություն է նկատվում հատկապես այն մեկնաբանություններում, որոնք արվում են առերևույթ կեղծ օգտատերերի կողմից: Սրան գումարվում է նաև այն, որ ներկայում ակնհայտորեն բարձր է սոցիալական ցանցերում ընդգրկված քաղաքացիների թիվը<sup>307</sup>: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարություններով:

Որոշ քրեական գործերով ներգրավված փաստաբանների և նրանց ընտանիքների անդամների հասցեին հատկապես սոցիալական ցանցերում ատելության խոսք ու նրանց արժանապատվությունը վիրավորող գրառումներ, սպառնալիքներ ու անգամ բռնության կոչեր են արձանագրվել: Ավելին, Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված դիտարկումը վկայում էր, որ այդ մեկնաբանություններն ու գրառումները դրսևորում են աճի միտումներ, և յուրաքանչյուր դատական նիստը լուսաբանող կամ գործին առնչվող ցանկացած հրապարակման հետ նման գրառումների նոր ալիք էր բարձրանում:

Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է հատկապես փաստաբանների մասնագիտական անկաշկանդ աշխատանքի տեսանկյունից:

Ժողովրդավարական կարևոր արժեք է փաստաբանի հանրային հեղինակությունը: Այն ձեռք է բերվում փաստաբանի բարդ աշխատանքի շնորհիվ և դառնում կարևոր երաշխիք ոչ միայն նրա վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանության, այլև երկրում իրավապաշտպան աշխատանքի զարգացման անհրաժեշտ գրավական: Սա է իրավունքի

<sup>306</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունը հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/510> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>307</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/499> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետություն կայացնելու հիմնարար ցուցիչներից մեկը:

Այս հարցում կարևոր է նաև զանգվածային լրատվամիջոցների դերը: Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը բոլոր լրատվամիջոցներին պարբերաբար հորդորել է հեռացնել վիրավորանք, ծաղրանք կամ ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները՝ անկախ նրանից դրանք արվում են առերևույթ կեղծ, թե իրական օգտատերերի կողմից<sup>308</sup>:

Մրա հետ կապված հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանելով ազատ արտահայտվելու իրավունքը, նախատեսում է նաև այն սահմանափակելու հնարավորություն: Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված ազատ արտահայտվելու իրավունքը չի կարող բացարձակ մեկնաբանվել, իսկ ատելության խոսքը և վիրավորանքներն այդ իրավունքի չարաշահման լուրջ վտանգ են ներկայացնում<sup>309</sup>:

Հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ մշակել և շրջանառության մեջ է դրել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով առաջարկվում է պատասխանատվություն նախատեսել փաստաբանին կամ նոտարին՝ կապված նրա մասնագիտական գործունեության կամ լիազորությունների իրականացման հետ, վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք ներկայացնելու համար: Նաև առաջարկվում է սահմանել պատասխանատվություն փաստաբանին զրպարտելու համար:

Նշված նախագծով նախատեսվող փոփոխությունն ամբողջովին համընկնում է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշակված նախագծի տրամաբանությանը<sup>310</sup>:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փաստաբանը ներկայացնում ու պաշտպանում է անձի, ում պետությունը կասկածում կամ մեղադրում է կոնկրետ, բայց ենթադրյալ հանցանքի կատարման մեջ: Փաստաբանի առաքելությունն է այդ անձի համար քրեական վարույթի ընթացքում ապահովել որակյալ իրավաբանական օգնություն, իրավական պատշաճ պաշտպանություն մեղադրանքից: Մա որևէ կերպ չի նշանակում, թե փաստաբանն արդարացնում է հանցագործությունները կամ ապահովում անպատժելիություն: Փաստաբանի մասնագիտական գործունեությունն ուղղված է հնարավոր ապօրինի հետապնդումից կամ ապօրինի ազատազրկումից յուրաքանչյուրի պաշտպանությանը:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա նման իրավիճակներ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունն ինքը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների, դրա արդյունքում դատարանի ու փաստաբանների նկատմամբ ճնշման ձևավորմանը, միևնույն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու, դատական իշխանության անկախության բարձր արժեքի

<sup>308</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/464> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>309</sup> Կոնվենցիայի իրավունքների չարաշահման արգելքին վերաբերող 17-րդ հոդվածի մասով տես, օրինակ, Հիզբ Ութ-Թահիրիբը և այլոք ընդդեմ Գերմանիայի (HIZB UT-TAHRIR and others v. Germany) գործով 2012 թվականի հունիսի 12-ի վճիռը, զանգատ թիվ 31098/08, կետ 72:

<sup>310</sup> Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշակված՝ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս «Ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը» պարագրաֆում:

երաշխավորումը, ինչպես նաև փաստաբանների անխոչընդոտ մասնագիտական աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Դա անհրաժեշտ է անել հենց այն նկատառումից ելնելով, որ նման իրավիճակները կարող են ձևավորել դատական իշխանության անկախությանը միջամտության վտանգավոր նախադեպ<sup>311</sup>:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է զերծ մնալ փաստաբաններին ուղղված վիրավորանք, ծաղրանք կամ ատելության խոսք պարունակող մեկնաբանություններից՝ փաստաբանի դերի և իրավապաշտպան աշխատանքի նկատմամբ հասարակական ճիշտ ընկալում ձևավորելու նպատակով:

Պետք է հատուկ արձանագրել, որ Հայաստանում փաստաբանությունը կայացած է, և փաստաբաններն ունեն իրավապաշտպան առաքելություն:

2. Իրավաբանական օգնության իրավունքը և փաստաբանի մատչելիությունը՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի այլ իրավունքների ապահովման երաշխիք

Իրավաբանական օգնություն ստանալու անձի սահմանադրական իրավունքի իրացման գործում իր ուրույն տեղն ունի փաստաբանության ինստիտուտը: Պատահական չէ, որ Սահմանադրությամբ իր ամրագրումն է գտել նաև իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեության երաշխավորման պահանջը:

Փաստաբանի կարգավիճակն ու նրա դերի ճիշտ ընկալումը հասարակությունում Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթ ուշադրության արժանի հարցերից են: Փաստաբանի պաշտպանված մասնագիտական գործունեությունը երկրում մարդու իրավունքների պաշտպանության համակարգը պայմանավորող գործոններից է, արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում այն ունի առանցքային կարևորություն:

Ինչպես նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ է և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար<sup>312</sup>:

Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայում: Մասնավորապես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն այլ իրավունքների թվում ներառում է նաև իր փաստաբանին հրավիրելու իրավունքը<sup>313</sup>:

Փաստաբանի մատչելիության իրավունքի տեսանկյունից կարևոր է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2018 թվականին ուժի մեջ մտած փոփոխությունների արդյունքում ամրագրվեց, որ մինչև ձերբակալման արձանագրությունն անձին

<sup>311</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/659> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>312</sup> Տե՛ս Էլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Elci and others v. Turkey) գործով 2004 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 23145/93 և 25091/94, կետ 669:

<sup>313</sup> Տե՛ս Գազիկ Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործով կայացված որոշումը:

հայտարարելն արգելանքի վերցված անձն, ի թիվս այլնի, իրավունք ունի փաստաբան հրավիրելու:

Չնայած դրան, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների շարունակականությունը վկայում է, որ իրավակիրառ պրակտիկայում դեռևս առկա են իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր փաստաբանի մուտքը խոչընդոտելու դեպքեր:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի գործունեության ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանին թույլ չի տրվել մուտք գործել ազատությունից զրկման վայր, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկ, Ոստիկանության բաժին: Մի քանի այլ դեպքերում, փաստաբանները տեղեկացրել են, որ իրենց վստահորդներին բերման են ենթարկել ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժին, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, և իրենց չեն թույլատրում հանդիպել նրանց հետ:

Փաստաբանի մուտքը խոչընդոտելու վերաբերյալ Պաշտպանին ներկայացված յուրաքանչյուր բողոքի դեպքում, նկատի առնելով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից դրա կարևորությունը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվում է անհապաղ միջամտություն:

Այլ կերպ ասած, բարձրացված հարցն անհապաղ բանավոր ընթացակարգով քննարկվում է իրավասու պետական մարմնի ներկայացուցչի հետ, իսկ նման ընթացակարգով հարցը չլուծվելու դեպքում՝ արագ արձագանքման ձևով կազմակերպվում է այց տվյալ բաժին: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ մեծամասամբ խնդիրը բանավոր ընթացակարգով ստանում է լուծում, և այդ առնչությամբ Պաշտպանը բարձր է գնահատում Ոստիկանության և Քննչական կոմիտեի հետ հաստատված կայուն համագործակցությունը:

Նույնաբնույթ խնդիրները հատկապես կարևոր են, քանի որ փաստաբանի մուտքն ու վստահորդին տեսակցելն ինքնանպատակ չէ, այն ուղղված է ապահովելու իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացմանը և մի շարք դեպքերում կարող է ուղղակիորեն հանգեցնել անձի պաշտպանության իրավունքի ոտնահարմանը:

Հատկանշական է, որ վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանների մուտքն արգելելու վերաբերյալ իրավապահ մարմինների ներկայացուցիչները ներկայացրել են տարաբնույթ պատճառաբանություններ:

Որոշ դեպքերում իրավապահ մարմինները պատճառաբանել են, որ անձը հրաժարվել է իրավաբանական օգնություն ստանալու իր իրավունքից, և փաստաբանի մուտքի արգելքը պայմանավորված է եղել այդ հանգամանքով: Նշված դեպքերով նույնպես արագ արձագանքման այցեր են իրականացվել տվյալ մարմիններ, և իրականացվել են առանձնագրույցներ ազատությունից զրկված անձանց հետ: Ընդ որում, արձանագրվել են դեպքեր, երբ առանձնագրույցի ընթացքում անձը հայտարարել է, որ իրեն չի ներկայացվել փաստաբան ունենալու իր իրավունքը, ինքը փաստաբանից չի հրաժարվել և չի տեղեկացվել, որ իր պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանը ցանկանում է մուտք գործել վարչական շենք:

Նման պրակտիկան խիստ մտահոգիչ է և վտանգում է վարույթն իրականացնող մարմնի վարչական շենքում գտնվող անձանց՝ հատկապես քրեական հետապնդման ենթարկվող անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրական իրացումը:

Դեռևս 2016, 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը, անդրադառնալով նշված խնդրին, դիրքորոշում է արտահայտել, որ անհրաժեշտ է փաստաբանական անխոչընդոտ գործունեության ապահովման նպատակով վերջինիս կողմից իր լիազորությունների իրականացմանը խոչընդոտող վարքագծի քրեականացում:

Բանն այն է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 332<sup>3</sup>-րդ հոդվածի առաջին մասը հանցագործություն է համարում պաշտոնատար անձի կողմից փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը:

Մեջբերված նորմի այսպիսի կարգավորումը սուբյեկտային առումով քրեաիրավական ազդեցության նեղ շրջանակ է սահմանում: Մինչդեռ, փաստաբանի գործունեությունը խոչընդոտող սուբյեկտների շրջանակը գործնականում կարող է շատ ավելի լայն լինել: Առկա օրենսդրական կարգավորումը չի ընդգրկում այն իրավիճակները, երբ, օրինակ, ոչ թե պաշտոնատար անձն է ուղղակիորեն խոչընդոտում փաստաբանի աշխատանքը, այլ պաշտոնատար անձ չհանդիսացող անձինք՝ վերջիններիս դրդմամբ կամ հրահրմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի համանման կարգավորումների համեմատական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խնդրահարույց է նաև 332<sup>3</sup>-րդ հոդվածով նախատեսված սանկցիան: Մասնավորապես, կարծում ենք՝ փաստաբանների կողմից իրենց գործունեության պատշաճ իրականացման համար առկա է անհրաժեշտություն ավելի բարձր մակարդակի պաշտպանություն ապահովել նշված հոդվածի սանկցիայի շրջանակներում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում առկա են կարգավորումներ, որոնք պատասխանատվություն են նախատեսում քրեական գործով վարույթի մասնակիցների, այդ թվում՝ փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար՝ առանց սուբյեկտների շրջանակի սահմանափակման:

Այսպես, Սերբիայի քրեական օրենսգրքի արդարադատությանը խոչընդոտելու վերաբերյալ 336-րդ «բ» հոդվածի համաձայն՝ հանցանք կատարելու, ուժի, սպառնալիքի կիրառմամբ կամ այլ կերպ դատավորի, դատախազի, դատախազի տեղակալի կամ փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ դրանք կանխելը պատժվում է ազատազրկմամբ՝ 6 ամսից մինչև 5 տարի ժամկետով և տուգանքով:

Փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ առավել ընդհանրական ձևակերպում պարունակող հանցակազմեր են նախատեսված, օրինակ, Ղազախստանի քրեական օրենսգրքում: Դրա 435-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի և քրեական վարույթի ընթացքում անձի և քաղաքացու իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պաշտպանող այլ անձանց օրինական գործունեությանը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական օգնության մատուցմանը կամ նման գործունեության ինքնուրույնությանը և անկախությանը խոչընդոտելը, եթե այդ գործունեությունն էական վնաս է պատճառել անձանց իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, իրավաբանական անձանց իրավունքներին և օրինական շահերին, պետության և հասարակության օրենքով պահպանվող շահերին, պատժվում է՝ տուգանքով, տուգանքի չափով ուղղիչ աշխատանքներով, մինչև 2 տարի ազատության սահմանափակումով կամ նույն ժամկետով ազատազրկմամբ:

Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է անձի կողմից իր պաշտոնական դիրքի չարաշահմամբ՝ պատժվում է՝ տուգանքով, տուգանքի չափով ուղղիչ աշխատանքներով, մինչև 3 տարի ազատության սահմանափակումով կամ նույն ժամկետով ազատազրկմամբ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա:

Ըստ Լիտվայի քրեական օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի՝ անձը, ով, ցանկացած եղանակով, խոչընդոտում է դատավորի, դատախազի, մինչդատական վարույթն իրականացնող անձի, փաստաբանի (...) պարտականությունների կատարմանը (...)՝ պատժվում է՝ տուգանքով կամ ազատության սահմանափակմամբ կամ ազատազրկմամբ մինչև 2 տարի ժամկետով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ ՀՀ քրեական օրենսգրքի 332<sup>3</sup>-րդ հոդվածով նախատեսված սանկցիայի հետ համեմատած ուսումնասիրության առարկա դարձած վերոհիշյալ պետությունների քրեական օրենսգրքերով ոչ միայն նախատեսված է խոչընդոտող սուբյեկտների ավելի լայն շրջանակ, այլ նաև անհամեմատ ավելի խիստ սանկցիա:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են նաև փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու վերաբերյալ բողոքներ, որոնք կապված չեն ազատությունից զրկելու վայրեր մուտք գործելու հետ, այլ ցույց են տալիս, որ փաստաբանի մատչելիությունը չապահովելը կարող է վտանգել քրեական հետապնդման ենթարկվող մարդու մյուս իրավունքները:

Մասնավորապես, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի փաստաբանները, Պաշտպանին բանավոր բողոք են ներկայացրել այն մասին, որ Դ. Գրիգորյանի աշխատասենյակում քրեական գործի շրջանակում կատարված խուզարկության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը ոչ միայն դատավոր Դավիթ Գրիգորյանին, այլ նաև նրա փաստաբաններին չի թույլատրել ներկա լինել կամ մասնակցել դատավորի աշխատասենյակում կատարվող առգրավմանը: Փոխարենը՝ քննիչն առգրավմանը մասնակից է դարձրել դատարանի աշխատակցի, ով այդ աշխատասենյակի հետ առնչություն չունի: Ընդ որում, քննիչը Դ. Գրիգորյանի մասնակցությունն իր աշխատասենյակում կատարվող առգրավմանը մերժել է՝ պատճառաբանելով, որ նրա մասնակցությունը քննչական գործողությանը նախատեսված չէ:

Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ<sup>314</sup> և արձանագրել, որ անձի աշխատասենյակում կատարվող առգրավումը նրա մասնավոր կյանքին միջամտող քննչական գործողություն է, իսկ քրեադատավարական իմաստով աշխատասենյակը հավասարեցված է բնակարանին: Այդ աշխատասենյակի նկատմամբ մասնավորության ակնկալիք (expectation of privacy) ունի հենց այն անձը, ում հատկացված է այդ աշխատասենյակը և ով զբաղեցնում է այն: Այս երաշխիքը պատահական չէ. այն նպատակ ունի երաշխավորելու մասնավոր կյանքի պաշտպանության իրավաչափ անհրաժեշտությունը: Ուստի, անձի և նրա փաստաբանի ներկայությունը կամ մասնակցությունը իր աշխատասենյակում կատարվող առգրավմանը, անկախ նրա դատավարական կարգավիճակից, պետք է ցանկացած գործով միշտ դիտարկվի հենց այդ տեսանկյունից: Դա ապահովելու անմիջական պարտականություն կրում է քննչական գործողությունը կատարողը, եթե իհարկե հնարավոր չէ դա օբյեկտիվ պատճառներով: Դ. Գրիգորյանի դեպքում այս պահանջի ապահովումն առավել առանձնահատուկ է, քանի որ խոսքը հատուկ պաշտպանվող սուբյեկտի՝ դատավորի նկատմամբ կատարվող գործողության մասին է:

Նշվածից բացի, ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած բողոքում պնդել է փաստաբանը, քանի որ խոսքը վերաբերում է առգրավմանը, ապա հենց առգրավման պարագայում է իր վստահորդի մասնակցությունն այդ գործողությանը եղել առանցքային:

Հարցն այն է, որ Հայաստանի օրենսդրությամբ՝ առգրավման մասին որոշումը ներկայացնելուց և հրապարակելուց հետո է քննիչն առաջարկում կամովին հանձնել առգրավման ենթակա առարկաները և փաստաթղթերը, իսկ առաջարկը մերժվելու դեպքում առգրավումը կատարում է հարկադիր կարգով: Միայն առգրավման ենթակա առարկաները առգրավման մասին որոշման մեջ նշված տեղում չհայտնաբերելու դեպքում է հնարավոր կատարել խուզարկություն:

<sup>314</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/905> հղումով:

Մարդու իրավունքների պաշտպանը տեղին է համարում փաստաբանի պնդումն այն մասին, որ քննիչին անհրաժեշտ առարկաների կամ փաստաթղթերի առկայության մասին ստույգ տեղեկությունների կարող էր տիրապետել միայն այն անձը, ում հատկացված է համապատասխան աշխատասենյակը կամ ով զբաղեցնում է աշխատասենյակը: Այդ անձն է հաստատապես տիրապետում առգրավման ենթակա առարկաների ու դրանց գտնվելու կոնկրետ տեղի մասին տվյալների: Ըստ փաստաբանի՝ այդ առաջարկը պետք է արվեր ու հնարավորությունը տրվեր իր վստահորդին:

Պետք է նկատի ունենալ նաև, որ վերը նկարագրվածից բացի, Հայաստանի օրենսդրությունը նախատեսել է դատավորի՝ իբրև պաշտպանության ենթակա հատուկ սուբյեկտի առանձին երաշխիքներ: Դրանք իրենց հերթին պայմանավորված են դատավորի աշխատանքի ու դատական իշխանության հեղինակության երաշխավորման կարևորությամբ (Բարձրագույն դատական խորհրդին ու դատավորին իրազեկում և այլն): Ուսումնասիրությունը վկայում է այս երաշխիքների հարցում ակնհայտ խնդիրների մասին:

Միջազգային, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությունն առավել խիստ պահանջներ է ներկայացնում խուզարկության նկատմամբ: Բանն այն է, որ խուզարկությունն առավել մեծ ծավալով է միջամտում անձի մասնավոր կյանքին և կարող է պարունակել նաև քրեական հետապնդման տարրեր: Ուստի, սկզբունքային նշանակություն ունի աշխատասենյակում խուզարկության կատարմանն այն անձի ու իրավաբանական օգնության համար հրավիրված նրա փաստաբանի մասնակցությունը, ում դա հատկացված է և ով ունի մասնավորության ակնկալիք (expectation of privacy) այդ աշխատասենյակի նկատմամբ:

Կոնկրետ գործով քննիչը չի թույլատրել փաստաբանի մասնակցությունը խուզարկությանը՝ պատճառաբանելով, թե դա նախատեսված չէ, չնայած փաստաբանի համապատասխան միջնորդությանը և նրան, որ Դ.Գիզորյանն ինքն է խնդրել թույլ տալ իր փաստաբանի մասնակցությունն իր իսկ աշխատասենյակում կատարվող խուզարկությանը: Քրեական հետապնդման մարմնի նման գործողություններն անթույլատրելի են և կոպտորեն խախտում են իրավաբանական օգնություն ստանալու անձի իրավունքը:

Նշվածի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ ըստ Դատախազությունից ստացված տեղեկության՝ 2019 թվականի ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ Դատախազություն ստացվել է մեկ հաղորդում, ինչի առթիվ նախապատրաստված նյութերով հանցագործության դեպքի բացակայության հիմքով որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու արձանագրված դեպքերին զուգահեռ հարուցված քրեական գործերի բացակայությունը հաստատում է ՀՀ քրեական օրենսգրքով համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Ընդ որում, ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց փաստաբանի մատչելիության իրավունքի սահմանափակման, պաշտպանի մասնակցությունը քննչական և դատավարական գործողություններին չապահովելու վերաբերյալ 2019 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացվել է 2 նախնական ուսումնասիրություն, որոնցից մեկով քրեական գործով վարույթն իրականացնող քննիչի նկատմամբ կիրառվել է «զգուշացում» կարգապահական տույժը: Իսկ մյուս դեպքով ներքին անվտանգության վարչությունը հանգել է հետևության, որ դատավարության մասնակիցների իրավունքները և շահերը քննիչի կողմից չեն խախտվել, ուստի կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չկան:



Փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների նման ցածր ցուցանիշը ևս փաստում է, որ գերատեսչական վերահսկողության շրջանակներում հնարավոր չէ կանխարգելել նմանատիպ դեպքերը և անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ՝ փաստաբանների անխոչընդոտ գործունեությունն ապահովելու համար:

Առկա խնդիրների օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում դեռևս 2017 թվականի ընթացքում մշակվել և շրջանառության է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ<sup>315</sup>: Նշված նախագիծով առաջարկվում է՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 332<sup>3</sup>-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել այնպիսի փոփոխության, որով այս հանցակազմի սուբյեկտ պաշտոնատար անձից բացի կհամարվի ցանկացած այլ այնպիսի անձ, ով խոչընդոտել է փաստաբանի օրինական գործունեությանը.

- ՀՀ քրեական օրենսգրքի 332<sup>3</sup>-րդ հոդվածով պաշտոնատար անձի կողմից փաստաբանի կամ նոտարի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար նախատեսված պատժաչափը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ և 319-րդ հոդվածներին՝ խստացնելով փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար նախատեսված սանկցիան.

- նշված հոդվածը լրացնել նոր մասով, որը պատասխանատվություն կնախատեսի փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

Հարկ է նկատել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծով փորձ է արվել ամրապնդել ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման քրեաիրավական երաշխիքները: Մասնավորապես, նախագիծ 447-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվել իրավասու անձի կողմից՝ քրեական հետապնդման ենթարկված անձի պաշտպանության իրավունքի իրականացմանը խոչընդոտելու՝ իր դատավարական իրավունքների, իրեն առաջադրվող մեղադրանքի, ձեռքարկվման կամ կալանավորման պատճառների մասին վերջինիս հասանելի եղանակով չտեղեկացնելու, իրավաբանական օգնություն ստանալու, պաշտպան ունենալու կամ վերջինիս հետ հանդիպելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելու համար: Նախագիծով նշված արարքի կատարման համար սահմանվել է նաև առավելագույնը չորս տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ<sup>316</sup>:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝

1. անհրաժեշտ է բացառել փաստաբանի մուտքի արգելքի ցանկացած դրսևորում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն ունի երկու հիմնարար բաղադրիչ՝ անձի պաշտպանության իրավունքի և փաստաբանի մասնագիտական օրինական աշխատանքի անխոչընդոտ, պատշաճ ապահովում,

2. անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում օրենսդրական փոփոխությունների միջոցով ապահովել փաստաբանի մասնագիտական գործունեության ավելի բարձր մակարդակի պաշտպանություն:

<sup>315</sup> Տե՛ս Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1478/about> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>316</sup> Տե՛ս Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում, հասանելի է <https://www.e-draft.am/projects/496> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

3. Մեղադրյալի և փաստաբանի հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառելու, որպես ապացույց քրեական գործի շրջանակում օգտագործելու ոչ իրավաչափ պրակտիկան

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել այն մասին, որ քրեական վարույթի ընթացքում գաղտնալսվել են փաստաբանի և նրա պաշտպանյալի հեռախոսային խոսակցությունները:

Բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ քրեական գործի նյութերում առկա են իր և իր պաշտպանյալների միջև եղած խոսակցությունների գննության արձանագրությունները: Մեկ այլ բողոքով փաստաբանն իր մտահոգությունն է հայտնել, որ պաշտպանյալի, վստահորդի և իր հեռախոսային խոսակցությունների ձայնագրառումներն ուղարկվել են վարույթն իրականացնող քննիչին, ով իր հերթին գնել է նշված հեռախոսային խոսակցությունները և հարցաքննությունների ընթացքում դրանց հիման վրա հարցեր է տվել:

Նմանատիպ մտահոգություններ են ներկայացրել նաև մի շարք փաստաբաններ «Փաստաբանների նկատմամբ առկա ճնշումները» թեմայով քննարկման ժամանակ՝ նշելով, որ դա եզակի երևույթ չէ: Փաստաբաններից մեկը նշել է, որ փաստաբանների նկատմամբ ճնշումները՝ կապված մասնագիտական պարտականությունների և դրանց խոչընդոտելու հետ, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Ճնշման առաջին խումբը կապված է իշխանությունների կողմից փաստաբանների և վստահորդների հարաբերություններին միջամտելու հետ, երբ գաղտնալսում են փաստաբանի և նրա վստահորդի հեռախոսային խոսակցությունները, կոտրում են էլեկտրոնային փոստի հասցեն՝ մատչելի դարձնելով այնտեղ առկա տեղեկությունները: Երկրորդն, ըստ փաստաբանի՝ նրանց նկատմամբ բարոյական և ֆիզիկական ճնշումներն են: Անդրադառնալով փաստաբանի և նրա պաշտպանյալի հեռախոսային խոսակցությունը գաղտնալսելու վերաբերյալ մի դեպքի՝ փաստաբաններից մեկը նաև իր մտահոգությունն է հայտնել այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինն արձանագրությունները կցել է քրեական գործին և օրենքով սահմանված կարգով չի ոչնչացրել<sup>317</sup>:

Նշված պրակտիկան խիստ մտահոգիչ է անձի պաշտպանության իրավունքի և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Մեղադրյալի՝ իր պաշտպանի հետ խորհրդապահական կարգով հաղորդակցվելու իրավունքը պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչ է, որի վերաբերյալ միջազգային իրավաբանությունը կարևոր երաշխիքներ է նախատեսում:

Այսպես, «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ (2000)21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետն ամրագրում է, որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունը՝ առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության կողմից ոչ իրավաչափ միջամտության, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի լույսի ներքո: Նույն սկզբունքի 4-րդ կետն ամրագրում է, որ փաստաբանները չպետք է ենթարկվեն որևէ պատժամիջոցի, ճնշման կամ դրանց սպառնալիքի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան: Հանձնարարականի 1-ին սկզբունքի 6-րդ կետի համաձայն՝ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու փաստաբան-

<sup>317</sup> «Փաստաբանների նկատմամբ առկա ճնշումները» թեմայով քննարկման տեսանկյունից հասանելի է <https://www.tert.am/am/news/2020/02/17/live/3213000> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

վստահորդ հաղորդակցության գաղտնիությունը: Այս կանոնից բացառությունները թույլատրելի են, միայն եթե դրանք համահունչ են իրավունքի գերակայությանը<sup>318</sup>:

Պաշտպանի հետ երրորդ անձի լսողությունից դուրս հաղորդակցվելու իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի մաս և բխում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետից: Եթե փաստաբանը հնարավորություն չունենա խորհրդակցել իր պաշտպանյալի հետ և նրանից ստանալ գաղտնի ցուցումներ՝ առանց հսկողության, նրա օգնությունը կկորցնի իր օգտակարության մեծ մասը, մինչդեռ՝ Կոնվենցիան նպատակ ունի երաշխավորել գործնական և արդյունավետ իրավունքներ<sup>319</sup>:

Եվրոպական դատարանը գտել է, որ դիմումատուի՝ իր փաստաբանի հետ ունեցած հեռախոսագրույցը լսելը խախտել է նրա պաշտպանության արդյունավետ իրականացման իրավունքը: Հետևաբար, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ միասին<sup>320</sup>:

Փաստաբանական գաղտնիքի կարևորությունը քննարկելիս՝ Եվրոպական դատարանը նշել է, որ դրան անհամաչափ միջամտությունը կարող է ազդեցություն ունենալ արդարադատության պատշաճ իրականացման և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների վրա: Դա կարող է բացասաբար ազդել փաստաբանի մասնագիտական հեղինակության վրա՝ ինչպես իր վստահորդների, այնպես էլ ողջ հասարակության շրջանում<sup>321</sup>:

Ավելին, ըստ Եվրոպական դատարանի՝ փաստաբանի հետ հաղորդակցությանն առավել խիստ միջամտությունը, մասնավորապես՝ նամակագրության բովանդակությանը ծանոթանալը թույլատրելի է միայն բացառիկ դեպքերում և կարող է արդարացվել միայն հիմնավոր պատճառով (reasonable cause) առ այն, որ այդ արտոնությունը չարաշահվում է, և հաղորդակցության բովանդակությունը սպառնում է հիմնարկի կամ այլոց անվտանգությանը կամ իր բնույթով քրեորեն պատժելի է<sup>322</sup>:

Ընդհանրապես, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ ցանկացած միջամտություն՝ անկախ նրանից, թե ներպետական օրենսդրությամբ ինչ ընթացակարգի շրջանակներում է իրականացվում, իրավաչափ կարող է համարվել, միայն եթե պահպանված են այդպիսի միջամտության օրինականությունն ու համաչափությունը:

Նշվածի վերաբերյալ ՌԴ սահմանադրական դատարանը 2010 թվականի նոյեմբերի 29-ի որոշմամբ ևս դիրքորոշում է հայտնել այն մասին, որ իրավունքի գերակայության և իրավական հավասարության հիմնարար սկզբունքների ուժով կասկածյալների և մեղադրյալների կողմից փաստաբանի (պաշտպանի) որակյալ իրավաբանական օգնություն ստանալու ընթացքում ձևավորվող հարաբերությունների կոնֆիդենցիալ (խորհրդապահական) բնույթին պետության միջամտությունը չպետք է լինի կամայական: Բացի դրանից, այն չպետք է խախտի հավասարակշռությունը հանրության շահերի պահանջների և անձի հիմնական իրավունքների պաշտպանության անհրաժեշտ

<sup>318</sup> Հասանելի է <https://rm.coe.int/16804d0fc8> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>319</sup> Տե՛ս Բրեննանն ընդդեմ Միացյալ Թագավորության (BRENNAN v. THE UNITED KINGDOM) գործով 2002 թվականի հունվարի 16-ի վճիռը, գանգատ թիվ 39846/98, կետ 58:

<sup>320</sup> Տե՛ս Ջագարիան ընդդեմ Իտալիայի (Zagaria v. Italy) գործով 2008 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 58295/00, կետ 36:

<sup>321</sup> Նիմիցն ընդդեմ Գերմանիայի (Niemietz v. Germany) գործով 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 37:

<sup>322</sup> Տե՛ս Բորիս Պոպովն ընդդեմ Ռուսաստանի (Boris Popov v. Russia) գործով 2010 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23284/04, կետ 111, Պետրովն ընդդեմ Բուլղարիայի (Petrov v. Bulgaria) գործով 2008 թվականի օգոստոսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 15197/02, կետ 43:

պայմանների միջև: Դա ենթադրում է ողջամիտ համաչափություն գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև, որպեսզի ապահովվի սահմանադրությամբ պաշտպանվող արժեքների հավասարակշռություն<sup>323</sup>:

Ուստի Պաշտպանն անթույլատրելի է համարում փաստաբան-վստահորդ գաղտնի հաղորդակցության, այդ թվում՝ անձի պաշտպանությունն իրականացնելու հետ կապված ցանկացած տեղեկության նկատմամբ հսկողություն, որը կարող է վտանգել նման միջամտության իրավաչափ նպատակով չպայմանավորված այլ տեղեկությունների գաղտնիությունը:

Փաստաբան-վստահորդ հաղորդակցության գաղտնիության վերաբերյալ որոշակի երաշխիքներ են նախատեսված նաև ներպետական օրենսդրությամբ:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը: Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ պետական մարմիններում և հիմնարկներում, տեղական ինքնակառավարման մարմիններում, այդ թվում՝ դատական մարմիններում: Պետական և դատական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովելու փաստաբանի՝ վստահորդի հետ առանձին, անարգել և մեկուսի հաղորդակցվելու իրավունքը:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով արգելվում է անցկացնել ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Անհապաղ ոչնչացման են ենթակա նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում այդ միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները:

Մեղադրյալի և նրա փաստաբանի հեռախոսային խոսակցությունները վերահսկելու արգելքի օրենսդրական պահանջի գործնականում ապահովման նպատակով, դրա հետևանքները վերացնելու հետ զուգահեռ հարկ է նաև այն կանխելու հատուկ մեխանիզմներ մշակել:

Ասվածի վերաբերյալ հարկ է նկատել, որ տարբեր երկրներ տարբեր հավելյալ երաշխիքներ են ստեղծել փաստաբան-վստահորդ հեռախոսային խոսակցությունները լսելու հավանականությունը նվազագույնի հասցնելու համար: Օրինակ, ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Շարլոտի շրջանի Շերիֆի գրասենյակը մշակել է քաղաքականություն, որը իրավաբաններին թույլ է տալիս իրենց հեռախոսահամարները տեղադրել չհսկվող հեռախոսահամարների ցանկում<sup>324</sup>:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների քննարկման ընթացքում ստացված պարզաբանումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ եղել են դեպքեր, երբ դատախազական հսկողության շրջանակում վարույթն իրականացնող մարմնին

<sup>323</sup> Հասանելի է <http://doc.ksrf.ru/decision/KSRFDecision48708.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>324</sup> Հասանելի է <https://www.prisonlegalnews.org/news/2008/aug/15/authorities-listen-in-on-attorney-client-calls-at-jails-in-fl-ca-and-tx/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հանձնարարվել է ոչնչացնել փաստաբանի և իր վստահորդի հեռախոսային խոսակցությունների ձայնագրառումները, ինչպես նաև զննության արձանագրություններում արտացոլված դրանց վերաբերելի տեղեկությունները: Սակայն, արձանագրվել են նաև դեպքեր, երբ թեև խոսակցությունների գաղտնալսումները զննելու արձանագրություններն առաջադրված մեղադրանքի հիմքում չեն դրվել և որպես ապացույց մեղադրական եզրակացությունում չեն նշվել, այնուամենայնիվ դրանք վերացնելու վերաբերյալ փաստաբանի միջնորդությունը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ մերժվել է:

Փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունների անհապաղ ոչնչացման պահանջի պահպանումն արդար դատաքննության երաշխիք է և անթույլատրելի ապացույցների հիման վրա վարույթն իրականացնող մարմնի մոտ ներքին համոզմունք չձևավորելու անհրաժեշտ պայման: Ուստի, իրավաչափ նպատակով չպայմանավորված փաստաբան-վստահորդ հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում ձեռք բերված տեղեկություններն ամեն դեպքում պետք է ոչնչացվեն:

Նշվածի հաշվառմամբ Պաշտպանն արձանագրում է, որ՝

1. անհրաժեշտ է հատուկ մեխանիզմներ մշակել, որոնք հնարավորություն կտան առաջին հերթին կանխել փաստաբան-վստահորդ հեռախոսային խոսակցություններն անիրավաչափորեն վերահսկելու դեպքերը,

2. անհրաժեշտ է նաև բացառել մեղադրյալի և նրա փաստաբանի հեռախոսային խոսակցությունները վերահսկելու արդյունքում ձեռք բերված տվյալները քրեական գործին կցելը և հատկապես այն որևէ ձևով դատարանին հասանելի դարձնելը:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՔՐԵԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Ինչպես 2018 թվականը, այնպես էլ 2019 թվականն առանձնահատուկ էր արդարադատության ոլորտին առնչվող գործընթացներով:

2019 թվականի ընթացքում շարունակեցին քննվել նախկինում հարուցված քրեական գործեր, հարուցվեցին նոր քրեական գործեր, որոնց շրջանակում նախաձեռնվեցին քրեական հետապնդումներ հանրային հետաքրքրության հարցերի առնչությամբ կամ հանրային ճանաչում ունեցող անձանց նկատմամբ: Անցնող տարին առանձնացավ նաև նրանով, որ հանրային հետաքրքրության առարկա որոշ քրեական վարույթներով սկսվեցին հրապարակային դատաքննություններ:

Հանրային ճանաչում ունեցող անձանց ներգրավումը քրեական գործերում անխուսափելիորեն հանգեցնում է քրեական գործերի նկատմամբ հանրային հետաքրքրության աճին: Ինչպես բազմիցս նշվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից՝ այս գործերի արդյունավետ քննությունն ու դրանց ընթացքի մասին հանրությանը պատշաճ իրազեկելը դառնում են այդ գործերի, իսկ առանձին դեպքերում նաև երկրի ողջ իրավապահ ու դատական համակարգերի նկատմամբ հանրության վստահության ապահովման հրամայականը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ 2019 թվականին ևս պետական իրավասու մարմինների կողմից հանրային մեծ հետաքրքրություն վայելող քրեական վարույթների վերաբերյալ պարբերաբար տրամադրվել են որոշակի ծավալով տեղեկություններ:

Հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունների վերաբերյալ հանրությանն իրազեկելու անհրաժեշտությունը նաև միջազգային պահանջ է: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ նմանօրինակ դեպքերում պետության հայեցողությունը սահմանափակվում է ժողովրդավար հասարակության շահերով, ապահովելու համար լրատվության՝ որպես «հասարակական դիտորդի» (“public watchdog”) դերը հասարակության լուրջ մտահոգության առարկա հանդիսացող գործերի վերաբերյալ տեղեկության տարածելու հարցում<sup>325</sup>: Հանրային հնչելություն ունեցող քրեական վարույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը, իրավապահ մարմինների հիմնական գործողությունների մասին տեղեկությունների պարբերաբար տրամադրման անհրաժեշտությունը և զանգվածային լրատվության միջոցների կարևորությունն ընդգծվել է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ» 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ Rec(2003)13 հանձնարարականով:

1. 2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ և դրան փոխկապակցված մյուս քրեական գործերի քննությունը

2008 թվականի մարտի 1-ի տասը զոհերի մահվան փաստով կատարվող նախաքննությանը և դրա վերաբերյալ հասարակության իրազեկված լինելուն առնչող հարցին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016 թվականների տարեկան հաղորդումներում: Այն իր առանձին տեղն է ունեցել 2016, 2017 և 2018 թվականների գործունեության հաղորդումներում:

<sup>325</sup> Sté u Snúsupleogu Fílánú Uu և Հաուկոմն ընդդեմ Նորվեգիայի (Tonsbergs Blad AS. and Haukom v. Norway) գործով 2007 թվականի մարտի 1-ի վճիռը, զանգատ թիվ 510/04, կետեր 82:

Մինչ Մարտի 1-ի իրադարձություններին առնչվող կոնկրետ վարույթներին կամ դրանց մասերին անդրադառնալը, Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ այս գործերը, դրանց առնչվող հարցերը հասկանալի պատճառներով ունեն հանրային մեծ նշանակություն և զգայուն ընկալում հասարակությունում: Դրանք սկզբունքային նշանակություն ունեն նաև մեր երկրում իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կայացման տեսանկյունից:

Նշված բոլոր գործոններն առավել մեծ պատասխանատվություն են դնում իրավապահ մարմինների ու դատարանի վրա՝ քրեական գործի քննության բարձր իրավական նշանակությունը ամրագրելով: Քննությանը ներկայացվող իրավական չափանիշներն այս պարագայում առավել բարձր են՝ բացառելու համար որևէ տարրնկալում և երաշխավորելու համար վստահություն քննության ընթացքի ու արդյունքների նկատմամբ:

Հենց դա է պատճառը, որ 2017 թվականի գործունեության հաղորդումից սկսած՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այս գործերը ներկայացվում են «Հանրային վստահության հատուկ բաղադրիչ ունեցող քրեական գործերով վարույթներ» վերտառության ներքո՝ հաշվի առնելով դրանց կարևորագույն նշանակությունը հանրության վերաբերմունքի ու իրավապահ և դատական մարմինների նկատմամբ հանրության վստահության տեսանկյունից:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ նախորդ տարիների ընթացքում մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ քննվող հանրային նման հետաքրքրություն ունեցող վարույթի վերաբերյալ հանրությանը չեն տրամադրվել բավարար տեղեկություններ՝ չնայած դրա հանրային մեծ պահանջին, չի իրականացվել զոհերի հարազատների և հանրության շրջանում պատշաճ իրազեկում այդ գործերի քննության վիճակի մասին: Դրանից բացի, Պաշտպանի տարեկան հաղորդումներում անընդհատ նշվել է, որ անհրաժեշտ է արագացման սկզբունքով ապահովել հարուցված քրեական գործերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

Այս գործին առնչվող զարգացում էր այն, որ ՀՀ Ազգային ժողովը 2019 թվականի հունիսի 4-ին ընդունել է «2008 թվականի մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները: Օրենքն ամրագրում է, որ աջակցություն ստանալու իրավունք ունի՝ այդ գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) անձի՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով իրավահաջորդի կարգավիճակ ունեցող անձը: Բացի դրանից, աջակցություն ստանալու իրավունք ունի նաև այն անձը, որի առողջությանը այդ գործողությունների ժամանակ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս: Այդ գործողությունների ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ծանր կամ միջին ծանրության վնաս ստացած անձն աջակցություն ստանալու իրավունք ունի, եթե նշված գործողություններին իր մասնակցության առնչությամբ չի ենթարկվել քրեական հետապնդման, ինչպես նաև նրա նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող հիմքով կամ կայացվել է արդարացման դատավճիռ:

Աջակցության ձևը, չափը և տրամադրման կարգը, ինչպես նաև աջակցություն տրամադրելու համար դիմումի ձևը, կցվող փաստաթղթերի ցանկը և քննարկման կարգը սահմանվել են Կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 990-Ն որոշմամբ:

Ինչպես 2018, այնպես էլ 2019 թվականներն առանձնացան զգալի զարգացումներով:

2019 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից համապատասխան հարցումներ են արվել Գլխավոր

դատախազություն և Հատուկ քննչական ծառայություն: Ըստ ստացած տեղեկությունների՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների առթիվ հարուցված քրեական գործից տարիների ընթացքում նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ցուցումների համաձայն 10 անձանց մահվան յուրաքանչյուր դեպքով անջատվել են վարույթներ և քննվել են առանձին քրեական գործեր: 2018 թվականին դարձյալ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ցուցումով բոլոր քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

2019 թվականին քրեական գործից առանձին վարույթում անջատվել է Ռոբերտ Քոչարյանի, Յուրի Խաչատուրովի, Մեյրան Օհանյանի և Արմեն Գևորգյանի վերաբերյալ գործը, որը 2019 թվականի ապրիլի 29-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան և ընթանում է հրապարակային դատաքննություն:

2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին առնչվող քրեական վարույթի շրջանակում քրեական հետապնդում է իրականացվում նաև այդ իրադարձությունների առթիվ քննվող քրեական գործի քննչական խմբի նախկին ղեկավար Վահագն Հարությունյանի նկատմամբ: Նա մեղադրյալ է ներգրավվել Քրեական օրենսգրքի 38-349 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 309-րդ հոդվածի 2-րդ մասով: Ներկայում նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել:

2019 թվականին նույն քրեական գործի շրջանակում որոշում կայացվեց ՀՀ նախկին գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ նախկին ներկայացուցիչ, ԱԺ Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախկին նախագահ Գևորգ Կոստանյանին Քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրյալ ներգրավելու մասին:

Մարդու իրավունքների պաշտպանն ուսումնասիրել է Մարտի 1-ի քրեական գործին Գևորգ Կոստանյանի առնչության հետ կապված Հատուկ քննչական ծառայության հրապարակային հայտարարությունը: Ուսումնասիրվել է նաև Գևորգ Կոստանյանի՝ լրատվամիջոցներին տրված մեկնաբանություններն ու պնդումներն իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման վերաբերյալ: Խոսքը վերաբերում է նրա հրապարակային պնդումներին այն մասին, որ իրեն վերագրվող արարքի կատարման մեղադրանքն անհիմն է, քննչական մարմնի գործությունները խախտում են իր իրավունքները և իրականում 10 զոհերին դիտավորությամբ ապօրինի կյանքից զրկելու մեջ իրական մեղավոր անձանց բացահայտելու նպատակ չունեն: Ըստ Գևորգ Կոստանյանի՝ իրականում քրեական հետապնդման մարմինն այս ուղղությամբ միջոց չի ձեռնարկում:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը նաև բողոքներ է ստացել Գևորգ Կոստանյանի պաշտպաններից, նախաձեռնվել է քննարկման ընթացակարգ, պարզաբանումներ են պահանջվել քրեական հետապնդման մարմիններից: Այնուհետև, Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ և ամրագրել այն չափանիշները, որոնցով ղեկավարվում է Մարտի 1-ի քրեական գործի քննության նկատմամբ Պաշտպանի իրավասության սահմաններում վերահսկողություն իրականացնելիս<sup>326</sup>: Քննարկման ընթացակարգը շարունակվում է:

<sup>326</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/995> հղումով:



Քրեական հետապնդման մարմինների հավաստմամբ՝ 10 անձանց մահվան հանգամանքների վերաբերյալ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, 2019 թվականի ընթացքում նշված հանգամանքները բացահայտելու ուղղությամբ ձեռնարկվել են մեծածավալ քննչական և դատավարական գործողություններ, մասնավորապես՝ հարցաքննվել են բազմաթիվ անձինք, նշանակվել են մի շարք փորձաքննություններ, կատարվել են առգրավումներ, գնություններ և հետաքննության մարմիններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ գրավոր հանձնարարություններ:

2019 թվականի ընթացքում նշված իրադարձությունների կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է 5 քրեական գործ, ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով ու 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ 1 քրեական գործ: Դատախազությունից ստացված տեղեկություններով՝ նշված բոլոր քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, ներկայում 14 անձ ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ, նախաքննությունը շարունակվում է:

Դրանից բացի նշվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով 2019 թվականի ընթացքում նշված իրադարձությունների կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել:

Քննարկվող քրեական գործերի քննությունը Մարտի 1-ին առնչվող քրեական գործերի նկատմամբ հանրային հետաքրքրության նոր ալիք բարձրացրեց նաև այն պատճառով, որ դրա շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավվեց և հետագայում կալանավորվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող նախագահ, Արցախի Հանրապետության պաշտոնաթող նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Դեռ 2018 թվականից այս գործի առնչությամբ հանրային քննարկումներն առավել ակտիվացան այն բանից հետո, երբ հրապարակվեցին բարձրաստիճան պաշտոնատար անձանց հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները: Հետագայում հանրային քննարկումների ակտիվությունը տարբեր առիթներով շարունակեց պահպանվել: Նախ, նման առիթներից էր այն, որ սկսվեց հրապարակային դատավարություն: Այն սկսեց ընթանալ հասարակությանը հետաքրքրող զգայուն հարցերի քննարկմամբ և պարբերաբար նախկին ու ներկա հանրային գործիչների կամ պաշտոնատար անձանց վարույթին ներգրավմամբ:

Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործի քննարկման ընթացքում Պաշտպանին պարբերաբար բողոքներ են հասցեագրել նրա փաստաբանները և փաստաբանների հետ ապահովվել է մշտական կապ: Իրականացվել են նաև այցեր Արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ, որտեղ տեղի են ունեցել առանձնագրույցներ Ռոբերտ Քոչարյանի հետ: Փաստաբանների հետ համագործակցությունը, ինչպես նաև առանձնագրույցները Ռոբերտ Քոչարյանի հետ Պաշտպանին տվել են անմիջականորեն տեղեկությունների տիրապետելու ու իր իրավասության շրջանակներում համապատասխան լիազորություններն առավել արդյունավետ գործադրելու հնարավորություն:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ Ռոբերտ Քոչարյանի իրավունքների ապահովման կապակցությամբ նախաձեռնված քննարկումը նպատակ չունի գնահատական տալու կոնկրետ գործով դատական ակտերի կամ այնպիսի հարցերի, որոնք դատական վարույթի կամ դատական վիճարկման առարկա են և գտնվում են կոնկրետ գործով դատարանի լիազորությունների տիրույթում, բոլոր հարցերին անդրադարձերը կատարված են բացառապես Պաշտպանի իրավասության տեսանկյունից:

2019 թվականի մայիսի 18-ին Ռոբերտ Քոչարյանը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ անձնական երաշխավորության կիրառմամբ ազատ

արձակվեց: Ապա, մոտ մեկ ամիս անց՝ Վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ 2019 թվականի հունիսի 25-ին դարձյալ կալանավորվեց: Կալանավորումից հետո տեղի է ունեցել այց «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում և առանձնագրույց նրա հետ, ուսումնասիրվել են պահման պայմաններն ու քննարկվել են Պաշտպանի իրավասությանն առնչվող հարցեր:

Ռոբերտ Քոչարյանը քրեակատարողական հիմնարկի ծառայողների վերաբերմունքի առնչությամբ դժգոհություններ կամ բողոքներ չի ներկայացրել:

Առանձնագրույցի ընթացքում Ռ:Քոչարյանը բարձրացրել է մի շարք հարցեր, որոնք օրենքով Պաշտպանին վերապահված իրավասության շրջանակներում ուղղվել են համապատասխան մարմիններին:

Բողոքների քննարկման արդյունքում Պաշտպանի միջամտությամբ Ռոբերտ Քոչարյանին խցում առանց ինտերնետ համացանցի հասանելիության տրամադրվեց համակարգիչ կամ համարժեք էլեկտրոնային միջոց ունենալու թույլտվություն, բացի այդ, վերացվեց Ռոբերտ Քոչարյանի կենսաթոշակային հաշվեհամարի վրա դրված կալանքը: Գույքի որոշ մասի վրա կիրառված կալանքն, այնուամենայնիվ, շարունակում է պահպանվել:

2018 թվականին փաստաբանների բողոքի հիման վրա քննարկված և մասնակի լուծում ստացած հարցերից էր նաև մերձավոր ազգականների նկատմամբ կիրառված տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների արգելքի հարցը: Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ մասնակի վերացվեց արգելքը, այն պահպանվեց միայն մերձավոր ազգականներից մեկի նկատմամբ:

Ըստ փաստաբանի՝ մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների և այլ անձանց հետ կապի արգելքի մասին 2018 թվականի հուլիսի 28-ին քննիչի որոշումը կիրառության համար չունի հիմքեր: Մասնավորապես, ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքում նշել է փաստաբանը, քրեակատարողական հիմնարկը Ռոբերտ Քոչարյանի տեսակցությունները և հեռախոսային խոսակցություններն արգելելու համար հիմք է ընդունել դեռևս նախաքննության փուլում ու դեռ նրա առաջին կալանավորումից անմիջապես հետո քննիչի կայացրած որոշումը՝ չնայած նրան, որ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործը դատարանի վարույթում է ու վերջին անգամ նա կալանավորվել է հենց դատարանի վարույթում գործի գտնվելու ընթացքում:

Ընդհանրապես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումն ինքնին խնդրահարույց է: Այն չի պարունակում կալանավորված անձի՝ օրինական ներկայացուցչի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության արգելքի կիրառության հստակ չափանիշներ՝ սահմանափակման հիմքում դնելով միայն «քննության շահ» գնահատողական ձևակերպումը: Օրենքը չի նախատեսում տեսակցությունների արգելքի պատճառաբանության և հիմնավորվածության, ինչպես նաև արգելքի կիրառության ժամկետների, այդ որոշման պարբերական վերանայման հստակ պահանջներ<sup>327</sup>:

Կոնկրետ բողոքի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ռոբերտ Քոչարյանի տեսակցությունները և հեռախոսային խոսակցությունները, այդ թվում՝ ընտանիքի անդամների հետ արգելելու համար փաստացի հիմք է ընդունվել դեռևս նախաքննության փուլում, դեռ նրա առաջին կալանավորման ժամանակ քննիչի կայացրած որոշումը՝ չնայած նրան, որ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործն արդեն գտնվում է դատարանի վարույթում: Ավելի կոնկրետ, Ռոբերտ Քոչարյանի իրավունքի նկատմամբ արգելքը քննիչի որոշմամբ

<sup>327</sup> Կալանավորված անձի տեսակցությունների կարգավորման ու այս առնչությամբ գործանականում մարդու իրավունքների հետ կապված հարցերի մասին առավել մանրամասն խոսվում է սույն հաղորդման նախորդ շարադրանքում:

սահմանվել է 2018 թվականի հուլիսի 28-ին: Դրանից հետո Ռոբերտ Քոչարյանն ազատ է արձակվել օգոստոսի 13-ին և շուրջ չորս ամիս մնացել ազատության մեջ: Այնուհետև, նա կրկին կալանավորվել է 2018 թվականի դեկտեմբերի 7-ին, իսկ 2019 թվականի մայիսի 18-ին դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց է կիրառվել անձնական երաշխավորությունը և նա շուրջ մեկ ամիս դարձյալ գտնվել է ազատության մեջ: Ազատության մեջ գտնվելու ընթացքում բնականաբար Ռոբերտ Քոչարյանն ունեցել է բազմաթիվ շփումներ, այդ թվում ընտանիքի անդամների և ընտանիքի այն անդամի հետ, ում հետ տեսակցություն չի թույլատրվում:

Վերջին անգամ Ռոբերտ Քոչարյանը կալանավորվել է դատարանի կողմից և գործի հենց դատարանի վարույթում գտնվելու ընթացքում: Ընդ որում, ինչպես պնդում են փաստաբանները, դատարանն այդ հարցին չի անդրադարձել, այդ թվում՝ գործը վարույթ ընդունելիս: Պարզվել է, որ դատարանի նման որոշում առկա չէ: Այդ դեպքում առաջ է գալիս հարց այն մասին, թե արդյոք քննիչի՝ մեկ և կես տարուց ավելի վաղեմություն ունեցող որոշումը չի կորցրել արդիականությունը մեղադրյալի՝ ազատության մեջ հայտնվելու պատճառով կամ արդյոք շարունակում է ծառայել որոշմամբ հետապնդվող նպատակին:

Ռոբերտ Քոչարյանի, ինչպես նաև նրա փաստաբանների, մի շարք քաղաքացիների բարձրացրած մյուս հիմնական հարցը վերաբերում է նրան, որ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կիրառված կալանքն իրավաչափ չէ: Փաստաբանները նշել են, որ դատարանին հասցեագրած իրենց միջնորդությունները, այդ թվում՝ կապված կալանքից ազատ արձակելու, գրավի կիրառության հետ, դատարանն առհասարակ քննության չի արժանացնում, չեն նշանակվում դատական նիստեր՝ չնայած նույնիսկ այն հանգամանքին, որ տեղի է ունեցել դատավորի փոխարինում նորով:

Փաստաբանների բարձրացրած՝ վերը նշված հարցերը բնույթով այնպիսին են, որոնք պետք է կոնկրետ գործով քննարկման առարկա դարձնի միայն այդ գործով վարույթն իրականացնող մարմինը, կոնկրետ դեպքում՝ դատարանը:

Նկատի ունենալով այն, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը Պաշտպանին արգելում է միջամտություն ցուցաբերել կամ քննարկման առարկա դարձնել այն հարցերը, որոնք առնչվում են կոնկրետ գործերով դատավորների լիազորությունների իրականացմանը, Պաշտպանը քննարկման շրջանակում ձեռնպահ է մնում որևէ այնպիսի գնահատական տալուց կամ գործողություն կատարելուց, որը դուրս է մեջբերված օրենսդրական արգելքի շրջանակից: Այդուհանդերձ, նշված հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են և գտնվում են մշտադիտարկման ներքո, քանի որ առնչվում են մարդու սահմանադրական իրավունքներին:

Այս տեսանկյունից Պաշտպանն արձանագրում է, որ կալանքի ու, առհասարակ, ազատությունից զրկելուն վերաբերող հարցերը դրանց հասցեատեր մարմիններից ու պաշտոնատար անձանցից պետության պոզիտիվ պարտականության ուժով պահանջում են առավելագույն ջանքեր՝ ապահովելու համար ազատությունից զրկված ցանկացած մարդու իրավունքների երաշխավորումը: Բոլոր դեպքերում, պետք է հաշվի առնել, որ կալանքը բարձր աստիճանի միջամտություն է անձի անձնական ազատությանը, ուստի դրա հետ կապված հարցերը պահանջում են հետաձգում չհանդուրժող քայլեր հանրային իշխանության կողմից՝ դրանց ցանկացած այնպիսի վիճարկման դեպքում, որը վերաբերում է անազատության մեջ գտնվելու իրավաչափությանը: Հարցն առավել արդիական է գործը քննող դատավորի փոփոխության պարագայում, երբ քննությունը պետք է սկսվի նորից ու կալանքին առնչվող հարցերը լինեն այնպիսիների թվում, որոնց պետք է անդրադարձ կատարվի հետաձգում չհանդուրժող դատավարական քայլերով: Այս մասին արձանագրված է նաև Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակային հայտարարությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նաև ուսումնասիրվել է Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թ. սեպտեմբերի 4-ի ՄԴՈ-1476 որոշումը: Այդ որոշմամբ դատարանը սահմանել է ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր միջոցներ: Պաշտպանը, սակայն, չի անդրադառնում Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված անհատական միջոցներին, քանի որ դրանք առնչվում են Ռոբերտ Քոչարյանին վերաբերող գործին և հետևաբար՝ գտնվում են բացառապես կոնկրետ գործի վարույթը ստանձնած դատարանի իրավասության տիրույթում:

Սահմանադրական դատարանի սահմանած ընդհանուր միջոցներն ունեն համակարգային բնույթ և վերաբերում են կամ կարող են վերաբերել նույն իրավիճակում հայտնված, դատարանի բնորոշմամբ, հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց իրավունքներին առհասարակ, ուստի դրանք պետք է լուծում ստանան համակարգային մակարդակում:

Ռոբերտ Քոչարյանի պաշտպանները Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով հայտնել են, որ դատական նիստերի ընթացքում, դրանցից առաջ և հետո Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթի նստավայրի վարչական շենքում, բակում հավաքված անձինք անհարգալից և վիրավորանք պարունակող արտահայտություններ են հնչեցնում իրենց և իրենց պաշտպանյալի հասցեին: Ըստ փաստաբանների՝ նման միջադեպերը տեղի են ունենում Ոստիկանության ծառայողների և դատական կարգադրիչների ներկայությամբ, իսկ վերջիններս դրանք կանխելու ուղղությամբ պատշաճ միջոցներ չեն ձեռնարկում: Փաստաբանները նշել են, որ այդ միջադեպերը կրում են պարբերական բնույթ և նպատակ են հետապնդում բարդացնել պաշտպանական կողմի աշխատանքը:

Այս բողոքի ուսումնասիրությամբ գրություններ են հասցեագրվել Ոստիկանություն և Դատական դեպարտամենտ:

Ձեռնպահ մնալով քրեական վարույթի ընթացիկ գործով որևէ գնահատական տալուց՝ Մարդու իրավունքների պաշտպանն, այնուամենայնիվ, անհրաժեշտ է համարում ընդգծել, որ հանրային բարձր հետաքրքրություն ունեցող քրեական գործեր քննելիս պետությունը ստանձնում է առավել պատասխանատվություն հետևողականորեն երաշխավորելու քրեորեն հետապնդելի արարքում մեղադրվող ցանկացած անձի անմեղության կանխավարկածը: Դա միայն ցույց է տալիս՝ որքան բարձր է պետությունը գնահատում հանցավորության դեմ պայքարի իր հանձնառությունը՝ այդ պայքարի արդյունքների կայուն հավաստիությունը ապահովելու տեսանկյունից: Ավելին, քրեական արդարադատության համակարգը կրում է քրեական վարույթին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ հանրությանը տրամադրելու և այդ կերպ հաշվետու քննություն ապահովելու պարտադիր բեռը: Սա իր հերթին կոչված է երաշխավորելու հանրության վստահությունն առ այն, որ քրեական կոնկրետ վարույթն իրականացվում է իրավունքի գերակայության մշտական պահպանմամբ:

2. 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների կապակցությամբ քննվող քրեական գործերը և դրանցում ներգրավված անձանց մասնակցությամբ այլ գործեր

Հուլիսյան իրադարձությունների շրջանակում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քննությունը շարունակում է հանրային մեծ հետաքրքրվածություն վայելել: 2016 թվականի հուլիսյան իրադարձություններն, իհարկե, մարդու իրավունքների տեսանկյունից լուրջ մարտահրավերների առաջ կանգնեցրին մեր երկիրը: Դրա հետ միասին, այդ իրադարձությունները լրացուցիչ ազդակ էին հասկանալու երկրում առկա համակարգային

խնդիրները, դրանց նպաստող պատճառներն ու պայմանները: Այդ նպատակով էր նաև, որ 2017 թվականին հրապարակվեց «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը: Չեկույցում հանգամանորեն քննարկվեցին հուլիսյան դեպքերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ներկայացվեցին մանրամասն գնահատականներ: Արձանագրվեցին նաև հուլիսի 17-ից 31-ի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող խնդիրներ, որը բարձր գնահատվեց նաև միջազգային գործընկերների կողմից<sup>328</sup>:

Ինչպես 2017 և 2018 թվականի տարեկան հաղորդումներով, սույն հաղորդմամբ ևս անդրադարձ է կատարվել 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների ընթացքում Ոստիկանության գործողությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի քննությանը: Սա պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ Պաշտպանն անհրաժեշտ է համարում տվյալ գործերի ընթացքի մասին հանրային բարձր իրազեկվածությունը<sup>329</sup>:

Հուլիսյան իրադարձություններին առնչվող քրեական գործերի հիմնական մասը գտնվում է դատաքննության փուլում: Հրապարակային դատաքննության պայմաններում հասարակությունը հնարավորություն ունի հետևելու գործերի ընթացքին՝ ամենայն մանրամասնությամբ: Տեղի ունեցող դատական նիստերը մշտապես գտնվում են զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում և ակտիվ լուսաբանվում են: Նկատի ունենալով այս քրեական գործերի առանձնահատկությունը, հասարակության վերաբերմունքն ու հետաքրքրվածությունը, ինչպես նաև դատավարության մասնակիցների, գործի հետ առնչություն ունեցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը, դատավարության մասնակիցների միջև առկա լարվածությունն ու հուզականությունը, Պաշտպանը հորդորում է թեմային առնչվող տեղեկություններ հրապարակելիս առավել զգոն լինել՝ ընդհուպ մինչև ձևակերպումների ընտրության հարցում:

Ինչպես ներկայացվել էր Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ՝ 2016 թվականի հուլիսի 17-ին տեղի ունեցած իրադարձությունների առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունն իրականացվում է ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ նախաքննությունն իրականացվում է քննչական խմբի կողմից: Այդ քրեական գործից որոշ գործեր անջատվել, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերով դատարան ուղարկված գործերով կայացվել են մեղադրական դատավճիռներ (օրինակ, «Արմենիա» հեռուստաընկերության լրագրող Ալբերտ Գալստյանի, «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյանի, «news.am» կայքի լրագրող Խորեն Գրիգորյանի, լրագրող Դավիթ Հարությունյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու ենթադրյալ դեպքերի առթիվ կայացված դատավճիռները):

Բացի դրանից, 2019 թվականին Պաշտպանին բողոք է ներկայացրել հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով մեղադրյալ Արա Ալեքսանդր Կոմշույանը (Ալեք Ենիգոմշյան): Բողոքով նա հայտնել է, որ իրեն ՀՀ քրեական օրենսգրքի 38-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքների ենթադրյալ կատարման համար մեղադրանք է առաջադրվել դեռևս 2016 թվականի հուլիս-

<sup>328</sup> Տե՛ս «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/831269377eb9300ea711f6f312c9de1a.pdf>:

<sup>329</sup> 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների առթիվ քրեական գործերի, այդ կապակցությամբ Պաշտպանի ձեռնարկած միջոցների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Պաշտպանի 2018 թվականի հաղորդումը, էջ 321-325:

օգոստոս ամիսներին: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ իրեն մեղադրանք առաջադրելուց անցել է շուրջ 963 օր, սակայն քրեական գործը դեռ գտնվում է նախաքննության փուլում, չնայած նրան, որ սկզբնական գործը, որից իր նկատմամբ գործ է անջատվել, հարուցումից շուրջ 8-9 ամիս անց ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար: Ա. Կոմշույանը պնդել է, որ այդ գործով նախաքննությունն փաստացի չի իրականացվում, քանի որ չեն կատարվում քննչական կամ այլ դատավարական գործողություններ, ուստի խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը քրեական գործով նախաքննության ավարտ հայտարարելու հարցում:

Բողոքում բարձրացված հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Գլխավոր դատախազություն: Դատախազությունը պարզաբանել է, որ կազմակերպված խմբի կողմից ապօրինի կերպով հրազեն, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու, փոխադրելու և 2016 թվականի հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի տարածք մուտք գործելու, նշված ստորաբաժանման վարչական շենքը և հարակից տարածքը զավթելու, պահելու դեպքերի առթիվ հարուցված, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով հիշյալ հանցագործությունների կատարմանն անմիջականորեն մասնակցելու և դրանց կատարմանն օժանդակելու համար մեղադրվող 7 անձանց մասով նախաքննությունը դեռևս շարունակվում է:

Միաժամանակ պարզաբանվել է, որ 2019 թվականի ապրիլի 12-ին որոշում է կայացվել հանցակազմի բացակայության հիմքով մեղադրյալ Ա. Կոմշույանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցնելու, ՀՀ քրեական օրենսգրքի 38-218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չիրականացնելու և ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին:

Դատարանի շենքում ամբաստանյալների նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու ենթադրյալ դեպքի առթիվ քննվող քրեական գործը. Հուլիսյան իրադարձությունների շրջանակներում անհրաժեշտ է անդրադարձ կատարել հանրային նշանակության մեկ այլ՝ 2017 թվականի հունիսի 28-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի շենքում Ոստիկանության ծառայողների կողմից ամբաստանյալներին ենթադրաբար ծեծի ենթարկելու տեղեկությունների առնչությամբ հարուցված քրեական գործի քննությանը:

Դեռևս 2018 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ Պաշտպանին ներկայացված տեղեկության համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու ենթադրաբար տեղի ունեցած վերոնշյալ դեպքի առթիվ 2017 թվականի հուլիսի 3-ին Հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ: Նախաքննության ընթացքում Արեգ Կյուրեղյանը, Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանը, Մխիթար Ավետիսյանը և Գագիկ Եղիազարյանը ճանաչվել են տուժող: Արեգ Կյուրեղյանն ու Մխիթար Ավետիսյանը հրաժարվել են ցուցմունք տալ, իսկ Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանն ու Գագիկ Եղիազարյանը հարցաքննվել են և դեպքի վերաբերյալ տվել ցուցմունքներ:

2019 թվականի ընթացքում ևս Պաշտպանը մշտապես ուշադրության ներքո է պահել հարուցված քրեական գործի ընթացքը: Դրանից բացի, Պաշտպանի անմիջական հանձնարարությամբ, ծեծի ենթարկվելու ահազանգից անմիջապես հետո լուսադեմին է Պաշտպանի աշխատակազմը նրանց տեսակցել ՔԿՀ-ում և արձանագրել ստացած վնասվածքները:

Դատախազության և Հատուկ քննչական ծառայության պարզաբանմամբ՝ քրեական գործի շրջանակում որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ

մասի 4-րդ կետով (խոշտանգումը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից) նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի ենթադրյալ կատարման համար Երևանի վարչության ուղեկցող գումարտակի հրամանատարին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որևէ անձ դատարանի դատավճռով չի դատապարտվել, նախաքննությունը շարունակվում է:

Պաշտպանը հարկ է համարում հատուկ ընդգծել խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննության անհրաժեշտությունն ու միջազգային իրավաբանությանը հայտնի չափանիշները: Այս գործի քննությունը միջազգային չափանիշներին համապատասխան ընթանալու տեսանկյունից խնդրահարույց հարցեր է առաջացնում:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ քննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե որևէ արդյունքի հասնելու, այլ միջոցներ ձեռնարկելու պարտականություն է». պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգեցնի այնպիսի եզրակացության, որը համընկնում է պահանջ ներկայացրած անձի՝ դեպքերի մասին տված ցուցմունքներին. այնուամենայնիվ, դրա միջոցով սկզբունքորեն պետք է հնարավոր լինի պարզել գործի փաստերը և, այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ էին, ապա նաև բացահայտել և, հիմնավորված լինելու դեպքում, պատժել պատասխանատու անձանց<sup>330</sup>: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ ցանկացած դեպքում իշխանությունները պետք է ձգտեն պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, և հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունները չպետք է հիմք ընդունվեն իրենց քննությունն ավարտելու համար կամ դրվեն իրենց որոշումների հիմքում: Պետք է ձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցները, այդ թվում՝ ականատեսների ցուցմունքները, դատաբժշկական և այլ ապացույցներ ապահովելու համար: Քննության ցանկացած թերություն, որը խոչընդոտում է վնասվածքների պատճառը կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնությունը պարզելը, կանգնեցնում է այս չափանիշը խախտելու վտանգի առջև<sup>331</sup>: Դրանից բացի, որպեսզի պետական մարմինների կողմից ցուցաբերված ենթադրյալ վատ վերաբերմունքի գործով քննությունն արդյունավետ լինի, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն<sup>332</sup>:

### 3. Իրավապաշտպանների նկատմամբ թույլ տրված արարքների առնչությամբ քրեական վարույթները

Հանրային վստահության բաղադրիչ ունեցող պետք է համարել այն գործերը, որոնք վերաբերում են իրավապաշտպաններին, նրանց հասցված սպառնալիքներին ու անգամ նրանց նկատմամբ կիրառվող հնարավոր ճնշումներին: Ընդ որում, խոսքն ինչպես իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին, այնպես էլ անհատների

<sup>330</sup> Տե՛ս Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի (Matevosyan v. Armenia) գործով 2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 52316/09, կետ 73:

<sup>331</sup> Տե՛ս Միխեյևն ընդդեմ Ռուսաստանի (Mikheyev v. Russia) գործով 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, կետ 108, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի (Virabyan v. Armenia) գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 162:

<sup>332</sup> Տե՛ս Օգյուրն ընդդեմ Թուրքիայի (Ogur v. Turkey) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետ 91, Մեհմեթ Էմին Յուկսելն ընդդեմ Թուրքիայի (Mehmet Emin Yuksel v. Turkey) գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 40154/98, կետ 37, Երգին ընդդեմ Թուրքիայի (Ergi v. Turkey) գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 66/1997/850/1057, կետ 83:

մասին է: Իրավապաշտպանների նկատմամբ քրեորեն պատժելի արարքներ թույլ տրվելու դեպքում պետք է անհապաղ իրականացնել քրեական վարույթ ու ապահովել հանցանքի բոլոր հանգամանքների բացահայտումը՝ բացառելու համար նաև նման արարքները հետագայում:

Օրինակ՝ 2017 թվականի հունիսի 6-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը տեղեկություններ էր հրապարակել իրեն կյանքից զրկելու սպառնալիքների վերաբերյալ<sup>333</sup>: Հրապարակված տեղեկությունների համաձայն՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի էջում կատարած գրառման կապակցությամբ ցանցի մեկ այլ օգտատեր մեկնաբանություն է տեղադրել դիմահար կրակոցով Ա. Սաքունցին կյանքից զրկելու վերաբերյալ:

Նշված հրապարակումների հիման վրա՝ հաշվի առնելով իրավապաշտպան գործունեության հանրային նշանակությունն ու նման ցանկացած դեպքի անթույլատրելիությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ սկսվել է քննարկման ընթացակարգ: Պաշտպանի կողմից անձամբ հարցը քննարկվել է Ա. Սաքունցի հետ:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով Պաշտպանը նույնպես անմիջապես դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող վերոնշյալ դեպքերով վարույթ նախաձեռնելու խնդրով: Հարուցված քրեական գործով իրավապաշտպանը ճանաչվել է տուժող: Դրանից հետո, Ա. Սաքունցը Պաշտպանին է ներկայացրել մտահոգություններ՝ կապված քրեական գործի դանդաղ ընթացքի, ինչպես նաև գործի շրջանակներում քննչական գործողությունների հարցի հետ:

Հետագայում Պաշտպանին տրամադրած պարզաբանումների համաձայն՝ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Պաշտպանի համար մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր վարույթի արդյունավետ քննության հարցն, առավել ևս, երբ այն ուղղակիորեն առնչվում է իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց իրավունքների ապահովմանը: Հարցը կարևոր է հատկապես իրավապաշտպանների անկաշկանդ աշխատանքի տեսանկյունից: Պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու և հետագայում այդպիսի ոտնձգությունները կանխարգելելու պահանջը ենթադրում է, որ իրավասու մարմինների կողմից պետք է ձեռնարկվեն օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ դեպքի հանգամանքները պարզելու և ոտնձգություն կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

Հասկանալի է նաև, որ սոցիալական ցանցերի միջոցով կատարված հանցագործությունների քննությունն ունի որոշակի բարդություններ, հատկապես պայմանավորված սոցիալական ցանցի կառավարման մարմնի հետ համագործակցության, ըստ այդմ՝ օգտատիրոջ բացահայտման և նույնականացման հնարավորության մասով:

Նման քրեական գործերը գտնվում են Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո, այդ իսկ պատճառով քննության վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ են պահանջվում քրեական հետապնդման մարմիններից:

#### 4. Զանգվածային լրատվության միջոցների գործունեության երաշխիքների ապահովումը

Լրագրողների գործունեությունը նպատակ ունի նպաստելու հասարակության տեղեկացված լինելու իրավունքին և պետական մարմինների գործունեության

<sup>333</sup>Տե՛ս՝ <https://www.armtimes.com/hy/article/114198,%20http://www.1in.am/2153667.html> հղումներով:



հաշվետվողականությանը, ուստի դրանով այդ գործունեությունը ձեռք է բերում հանրային նշանակություն:

Լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է արժանանա պետության պատշաճ իրավական արձագանքին: Այդպիսի ցանկացած ոտնձգություն վտանգում է ոչ միայն լրագրողի իրավունքները, այլև իր բացասական ազդեցությունն է թողնում հասարակության տեղեկացվածության իրավունքի լիարժեք ապահովմանը:

Լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով:

Դրանից բացի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ» 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ Rec(2003)13 հանձնարարականի 5-րդ սկզբունքով՝ «Ընդգծվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից արձանագրման կարևորությունը՝ հանրությանը քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու, քրեական օրենքի կանխարգելիչ նշանակության տեսանկյունից, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից»:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ լրատվամիջոցների ու լրագրողների մասնագիտական աշխատանքի, նրանց գործունեությանը ցանկացած տեսակի միջամտության հետ կապված հարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո<sup>334</sup>:

Լրագրողական գործունեությանն առնչվող ցանկացած գործողություն կամ միջամտություն միշտ պետք է իրականացվի իրավական պահանջներին խիստ համապատասխան՝ առանց լրագրողի գործունեությունը խոչընդոտելու կամ միջամտելու: Լրագրող-քրեական հետապնդման մարմին փոխհարաբերակցության հարցի զգայունության հաշվառմամբ, ինչպես նաև գիտակցելով, որ վերը նշված դեպքերը կարող են դառնալ վտանգավոր նախադեպեր՝ Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում վերահաստատել իր դիրքորոշումն առ այն, որ պետության ներկայացուցիչը պարտավոր է ղեկավարվել լրագրողի օրինավորության և բարեխղճության կանխավարկածով: Խոսքի ազատությունը պետք է լայն պաշտպանություն ունենա՝ ընդգրկելով այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են՝ լրագրողի տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը, լուրերի և տեղեկությունների հավաքման գործընթացի պաշտպանվածությունը, խմբագրման ու ներկայացման ինքնավարությունը և այլն: Միաժամանակ, հարցազրույցի ընթացքում կամ լրագրողին գրավոր փոխանցված տեղեկությունների տարածմանը նպաստելու համար լրագրողին պատասխանատվության ենթարկելը կամ որևէ այլ ներգործությունը լրջորեն կխաթարեն մամուլի ներդրումը հանրային հետաքրքրության հարցերի քննարկմանը, և այն չպետք է նախատեսված լինի, քանի դեռ դրա համար հատուկ ծանրակշիռ պատճառներ չկան:

2019 թվականի ընթացքում Պաշտպանի անմիջական ուշադրությանն արժանացավ 2019 թվականի մարտի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված հոդվածի հետ կապված հարց, որի կապակցությամբ Հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի

<sup>334</sup> Պաշտպանի 2018 թվականի հաղորդմամբ անդրադարձ էր կատարվել «News.am», «Aysor.am» լրատվամիջոցների հետ առնչվող որոշ խնդիրների, առավել մանրամասն տե՛ս էջ 326-329:

342-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով<sup>335</sup> հարուցվել էր քրեական գործ:

«Ժողովուրդ» օրաթերթի հրապարակմամբ՝ հատուկ քննչական ծառայության հաղորդման ձևակերպումներում «գրեթե սպառնալիք կա, (...), որը ոչ այլ ինչ է, քան ճնշում մամուլի, ազատ խոսքի նկատմամբ: Ըստ հրապարակման՝ օրաթերթը քննվող քրեական գործով կողմ չէ, հետևաբար ազատ է իր գործողություններում՝ հրապարակելու այն, ինչ չի արգելում լրագրողական էթիկան կամ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը<sup>336</sup>:

Վերոգրյալի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին մտահոգություն է հայտնել նաև Հայաստանի ժուռնալիստների միության նախագահը:

Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշմամբ՝ Հատուկ քննչական ծառայության հաղորդմամբ տրվել են այնպիսի ձևակերպումներ, որոնք խնդրահարույց են: Մասնավորապես, տպավորություն են ստեղծվում, թե իրականում քրեական գործը հարուցվել է լրատվամիջոցի կամ լրագրողի կողմից մասնագիտական գործունեության իրականացման՝ հոդվածի հրապարակման փաստով, այլ ոչ թե հատուկ սուբյեկտի կողմից նախաքննության տվյալները հրապարակելու փաստով: Պաշտոնական հաղորդագրությունից կարող է ենթադրություն արվել, որ քննության ուշադրության կենտրոնում գտնվում է առաջին հերթին մասնագիտական գործունեություն իրականացնող տվյալ զանգվածային լրատվության միջոցը: Դրանից բացի, նման պայմաններում անմեղության կանխավարկածի օրենսդրական ձևակերպման մեխանիզմական շարադրումը հրապարակման վերջում տեղադրելը դեռևս բավարար չէ սահմանադրական այդ երաշխիքի պահպանման տեսանկյունից: Ավելին, կոնկրետ հայտարարության համատեքստում պարզ էլ չէ այդ երաշխիքի մեջբերման նշանակությունը:

Հարկ է նկատել, որ զանգվածային լրատվության միջոցի վերը նշված կարևորագույն առաքելության պատշաճ իրականացումն ապահովելու, լրագրողի մասնագիտական գործունեությանը հնարավոր ապօրինի միջամտությունից պաշտպանելու համար թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրությամբ սահմանված են երաշխիքներ:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(2000)7 հանձնարարականը սահմանել է չափանիշներ, որոնց դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կհամարվի օրինաչափ: Մասնավորապես, փաստաթղթում նշվում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի (Արտահայտվելու ազատություն) համաձայն՝ լրագրողների այս իրավունքը բացարձակ չէ և ենթակա է սահմանափակման Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում: Մասնավորապես, հանձնարարականի 38-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության աղբյուրը բացահայտելու մեջ հասարակական շահը կարող է գերակշռող լինել, եթե այդպիսի բացահայտումն անհրաժեշտ է «անձի կյանքի պաշտպանության», «ծանր հանցագործության կանխման», «ծանր հանցագործության մեջ մեղադրվող կամ դատապարտված անձի պաշտպանության» համար:

Նույն հանձնարարականի բացատրական հուշագրում նշվում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից շարունակաբար մատնանշվում է այն հանգամանքը, որ տեղեկատվության աղբյուրի պաշտպանության սահմանափակումները պետք է «նախատեսված լինեն օրենքով»:

<sup>335</sup> Առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը:

<sup>336</sup> Հրապարակումը հասանելի է <https://armlur.am/886335/> հղումով:

Բացատրական հուշագիրը մասնավորեցնում է նաև բոլոր այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում կարող են կիրառվել տեղեկատվության աղբյուրի պաշտպանության սահմանափակումներ: Դրանք են՝

ա) այլընտրանքային միջոցների սպառում

բ) օրինական շահերի գերակշռում

գ) անձի կյանքի պաշտպանություն

դ) ծանր հանցագործության կանխում

ե) ծանր հանցագործության մեջ մեղադրվող կամ ծանր հանցագործություն կատարելու համար դատապարտված անձի պաշտպանություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը բացարձակ իրավունք չէ և այն կարող է սահմանափակվել: Սահմանափակումն ինքնին միջամտություն է այդ իրավունքին, սակայն կարևոր է, որ միջամտությունը լինի արդարացված<sup>337</sup>: Նշված գործով Եվրոպական դատարանն առանձնացրել է իրավունքների սահմանափակման հիմքերը<sup>338</sup>: Մասնավորապես, ըստ Եվրոպական դատարանի, այդ իրավունքները կարող են սահմանափակվել հետևյալ չափանիշների առկայության դեպքում՝

ա) նախատեսված են օրենքով,

բ) հետապնդում են իրավաչափ նպատակ,

գ) անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության համար:

Բացի դրանից, մեկ այլ գործով<sup>339</sup> Եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության համար առանցքային նշանակություն ունի, ուստի այս իրավունքի նկատմամբ իշխանությունների կողմից միջամտությունը պետք է իրականացվի հստակ ընթացակարգային-իրավական երաշխիքներով: Ըստ Եվրոպական դատարանի՝ նման երաշխիքների մեջ առաջնայինն աղբյուրի բացահայտման որոշման նկատմամբ դատարանի կամ այլ անկախ մարմնի կողմից վերահսկողության առկայությունն է:

Վերը նշված փաստաթղթերի և միջազգային դատական ատյանների դիրքորոշումներին համապատասխան՝ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում ամրագրվել է իրավական դրույթ, որի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դոնփակ:

Անհրաժեշտ է նկատել, որ խնդրո առարկա համարվող հարցին 2015 թվականի հոկտեմբերի 20-ի ՍԴՈ-1234 որոշմամբ<sup>340</sup> անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական

<sup>337</sup> Տե՛ս, օրինակ՝ Գուդվինն Միացյալ Թագավորության (Goodwin v. The United Kingdom) գործով 2002 թվականի հուլիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 17488/90, կետ 29-46:

<sup>338</sup> Նույն տեղը՝ կետ 29-46:

<sup>339</sup> Տե՛ս Մանոմա Ուիտգեյթս ընդդեմ Նիդերլանդների (Sanoma Uitgevers B. V. v. The Netherlands) գործով 2010 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 38224/03, կետ 88:

<sup>340</sup> Հասնելի է <http://concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf> հղումով:

դատարանը: Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար: Ընդ որում, Սահմանադրական դատարանը հստակ արձանագրել է, որ նշված իրավապայմաններից առնվազն մեկի առկայությունը միայն իրավաչափ հիմք կարող է հանդիսանալ օրենքով սահմանված կարգով ու վեճի առարկա դրույթում նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտման համար:

Պետության կողմից նշված երաշխիքների պահպանումը հարուցված քրեական վարույթի շրջանակներում ունի կարևոր նշանակություն երկրում խոսքի ազատության ու լրագրողների պաշտպանված մասնագիտական աշխատանքի տեսանկյունից: Մյուս կողմից, հասկանալի է նաև, որ կարող է պետությունն ունենալ իրավաչափ շահ հանցագործությունների բացահայտման ու հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով պաշտպանել այդ նպատակի համար անհրաժեշտ տեղեկությունները: Այդուհանդերձ, պետք է մշտապես նկատի ունենալ նկարագրված բարձր չափանիշները:

Բացի դրանից, 2019 թվականի դեկտեմբերի 14-ին զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվել է ««Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագրին գաղտնալսել են» վերտառությամբ հոդվածը<sup>341</sup>, որտեղ, մասնավորապես, նշվել է, որ հրապարակող լրատվամիջոցի տեղեկություններով՝ վարույթն իրականացնող մարմինը ձեռք է բերել լրագրողի հեռախոսային խոսակցությունների վերձանումները՝ փորձելով բացահայտել լրագրողի տեղեկատվության աղբյուրը: Ըստ հրապարակման՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը հնարավոր է նաև գաղտնալսել է լրագրողի հեռախոսային խոսակցությունները:

Քննչական գործողությունը թույլատրելու մասին խնդրո առարկա դատական ակտը բողոքարկվեց վերաքննության կարգով, արդյունքում՝ Վերաքննիչ քրեական դատարանը 2020 թվականի հունվարի 23-ին ոչ իրավաչափ ճանաչեց «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիր Քնար Մանուկյանի հեռախոսային խոսակցությունները վերձանելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը:

Նշվածից բացի, 2019 թվականի դեկտեմբերի 19-ին Պաշտպանին դիմել է «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիր Քնար Մանուկյանը և հայտնել, որ անհայտ անձինք ներխուժել են օրաթերթի խմբագրություն: Գլխավոր խմբագրի տեղեկացմամբ՝ առավոտյան ժամը 10:30-ին, խմբագրության աշխատակիցը ներկայացել է աշխատանքի և նկատել, որ խմբագրությունում խառնաշփոթ վիճակ է: Ըստ նրա՝ դեպքի կապակցությամբ ահազանգ է ներկայացվել Ոստիկանություն:

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարականով ներկայացուցիչները նույն օրը՝ ժամը 11:30-ի սահմաններում, այց են իրականացրել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն: Այնուհետ, դեպքի վայր են ժամանել նաև Ոստիկանության ծառայողները: Ըստ Ք. Մանուկյանի՝ խմբագրությունում եղել են թանկարժեք իրեր և գումար, որոնք չեն

<sup>341</sup> Հասանելի է <https://168.am/2019/12/14/1223059.html> հղումով:

հափշտակվել, ըստ նրա, ներխուժումը շահադիտական նպատակ չի հետապնդել, հետևաբար այն ուղղված է լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելուն:

Պաշտպանի ներկայացուցիչների արձանագրած տվյալներն ամփոփվել ու գրություններ են ուղարկվել իրավապահ մարմիններ: ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի և 164-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, իրականացվում է նախաքննություն:

2019 թվականի հոկտեմբերի 5-ին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ են հրապարակվել այն մասին, որ չորս անձ ի նշան բողոքի ձվեր են նետել «Հայելի» մամուլի ակումբի դռան ուղղությամբ, փակցրել են պաստառներ<sup>342</sup>:

Նշված դեպքի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային արձագանքով այն մասին, որ լրագրողի կամ լրատվամիջոցի նկատմամբ ոտնձգությունը մասնագիտական գործունեության կապակցությամբ վտանգում է խոսքի ազատությունն ու այլակարծությունը:

Նույն հրապարակմամբ ընդգծվել է, որ պետք է անհապաղ գործադրվեն օրենքով նախատեսված միջոցներ տեղի ունեցածի առնչությամբ՝ բացառելու համար որևէ նման դեպքի կրկնություն:

Պաշտպանի նախաձեռնած վարույթի ընթացքում պարբերաբար տեղեկություններ են ստացվել «Հայելի» մամուլի ակումբի ղեկավար Անժելա Թովմասյանի ներկայացուցիչ, փաստաբան Զարուհի Փոստանջյանից, շարունակական գրագրություն է իրականացվել Գլխավոր դատախազության հետ:

Պարզվել է, որ դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, չորս անձի առաջադրվել է մեղադրանք, Անժելա Թովմասյանը ճանաչվել է տուժող:

Վերը նշվածից բացի 2019 թվականին Քննչական կոմիտեի իրավասու ներկայացուցիչը հրապարակային պարզաբանում է տարածել այն մասին, որ «Armlur.am» և «Hayeli.am» լրատվական կայքերի խմբագրություններին ուղարկել է գրություններ կապված Ոստիկանության նախկին պետ Հայկ Հարությունյանի մահվան դեպքի առիթով հարուցված քրեական գործի հետ: Ըստ քննչական մարմնի՝ այդ գրությունների նպատակն է պարզել հոդվածների հեղինակներին և նրանց հարցաքննել գործով պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ<sup>343</sup> զգուշացնելով քննչական և իրավապահ մյուս մարմիններին, որ լրատվական գործունեություն իրականացնողների ու լրագրողների մասնագիտական աշխատանքը պաշտպանված է կոնկրետ երաշխիքներով՝ կապված որևէ քրեական գործով վարույթի նրանց ներգրավվածության հետ: Նրանց տեղեկատվության աղբյուրի բացահայտում կարող է պարտադրվել բացառապես օրենքով նախատեսված սպառիչ կարգավորում ունեցող իրավական պայմանների դեպքում (դատարանի որոշում, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակ, հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցների սպառված լինելը և այլն): Ընդ որում, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հավաստել այս պայմանների միաժամանակյա առկայությունը<sup>344</sup>:

<sup>342</sup> Հասանելի է <https://hraparak.am/post/2a240aa0afb0345dd94843bc020a5451> հղումով:

<sup>343</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/939> հղումով:

<sup>344</sup> Հրապարակային հաղորդումը հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/939> հղումով:

2019 թվականին շարունակել է Պաշտպանի ուշադրության ներքո լինել քրեական գործը, որի շրջանակում «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակում կատարվել էր խուզարկություն:

Խնդիրն այն էր, որ Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության և Քննչական կոմիտեի ծառայողների կողմից խուզարկություն էր կատարվել «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակում: Խուզարկության ավարտից հետո, լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը, պատասխանելով լրագրողների հարցերին, հայտարարել է, որ խուզարկությունը կատարվել է կոպիտ խախտումներով և այն նպատակ է հետապնդել վնասել իրենց լրագրողական գործունեությանը: Ըստ գլխավոր խմբագրի՝ խուզարկությունն ավարտելուց հետո Քննչական կոմիտեի ծառայողներն արձանագրել են, որ նախաքննությանը հետաքրքրող որևէ առարկա չի հայտնաբերվել, այնուամենայնիվ առգրավել են իր աշխատանքային համակարգիչը, ինչպես նաև խմբագրության աշխատակիցների համակարգիչների կոշտ սկավառակները՝ արդյունքում անորոշ ժամկետով խաթարվել է իրենց բնականոն աշխատանքը:

Հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում է լրատվամիջոցի խմբագրությունում իրականացված խուզարկությանը, Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ սկսվել էր քննարկման ընթացակարգ, որի շրջանակում քրեական վարույթի ընթացքում լրատվամիջոցի լրատվական գործունեության բնականոն ընթացքի ապահովման կապակցությամբ, այդ թվում՝ լրագրողական գործունեության համար անհրաժեշտ առգրավված իրերը վերադարձնելու հարցի քննարկման նպատակով գրություն է հասցեագրվել Գլխավոր դատախազություն:

Շարունակական գրավոր հաղորդակցության ընթացքում Դատախազությունը լրացուցիչ տեղեկություններ է ներկայացրել այն մասին, որ «Yerevan.Today» լրատվական կայքի գրասենյակից առգրավվել է մեկ պրոցեսոր և հիշողության կոշտ կրիչներ, նշանակվել է դատահամակարգչատեխնիկական փորձաքննություն: Ավելի ուշ Դատախազությունը տեղեկացրել է, որ առգրավված առարկանները վերադարձվել են գրասենյակին, չնայած նշանակված դատահամակարգչատեխնիկական փորձաքննության եզրակացությունը դեռևս ստացված չի եղել, իսկ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Հարկ ենք համարում ընդգծել, որ լրագրողական պաշտպանված աշխատանքի երաշխիքները պահանջում են, որպեսզի քրեական հետապնդման մարմինները ցուցաբերեն առավել մեծ ուշադրություն մասնագիտական գործունեության կապակցությամբ լրագրողին քրեական դատավարության ոլորտ ներգրավվելու հարցում կամ նրանց վերաբերյալ հայտարարություններ անելիս՝ անկախ կարգավիճակից, և հանրային բոլոր մարմիններն ու պաշտոնատար անձինք նույնպես պետք է նկատի ունենան այս երաշխիքները իրենց գործողություններում:

Լրագրողական մասնագիտական աշխատանքն ուղղակիորեն բխում է Հայաստանի Սահմանադրությամբ ու միջազգային պարտավորություններով ամրագրված խոսքի ազատության հիմնարար արժեքից, նպաստում է պետության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովմանը և պետք է ունենա հատուկ պաշտպանություն:

Մարդու իրավունքների պաշտպանի համար լրագրողի մասնագիտական աշխատանքն ունի ռազմավարական կարևորություն:

ԲԱԺԻՆ 9. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

Հավաքների ազատությունը, խաղաղ հավաքների այդ հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունքը ժողովրդավարական պետության համար հիմնարար նշանակության արժեք են: Խաղաղ հավաքների ազատությունը պետությունում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներից է, այն հասարակության կողմից պետության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարևորագույն գործառույթ է:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին մեր երկրում տեղի ունեցան նախադեպ չունեցող իրադարձություններ:

Քաղաքացին հնարավորություն ստացավ իր կամքի ազատ իրացման շնորհիվ ու ժողովրդավարական ճանապարհով հասնել սկզբունքային փոփոխությունների: Կարևորագույն այս իրադարձություններն ակնհայտորեն բարձրացրին քաղաքացու վստահությունը հանրային իշխանության նկատմամբ, ինչն էլ փոխադարձաբար հանգեցրեց հանրային իշխանության հաշվետվողականության բարձրացման:

Այս հավաքներն ուշագրավ էին նրանով, որ ուղեկցվում էին հավաքների կազմակերպիչների հավաքների խաղաղ բնույթը չխաթարելու, միմյանց ու Ոստիկանության ծառայողների նկատմամբ հարգանք դրսևորելու կարևոր կոչերով ու հավաքների մասնակիցներին ուղղված հորդորներով:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների իրադարձությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից գործադրվում էին սահմանադրական կարգավիճակի առավելագույն հնարավորությունները, ինչի շնորհիվ Պաշտպանի հաստատությունը ոչ միայն հանդես եկավ իբրև մարդու իրավունքները և ազատությունները կոնկրետ խախտումների դեպքում պաշտպանող, դրանց ապահովման հարցերը մշտադիտարկող, այլև շատ դեպքերում ստանձնեց իրավունքների խախտումների կանխման, խախտված իրավունքների վերականգնման երաշխավորի և այդպիսով չարաշահումները զսպողի կարևոր դերակատարություն:

Ասվածն առավել առարկայական դրսևորվեց հատկապես հավաքի մասնակիցների, ազատությունից զրկված անձանց իրավունքների, ինչպես նաև լրագրողների մասնագիտական գործունեության, երեխաների իրավունքների երաշխավորման հարցում կատարված աշխատանքներով ու առկա համակարգային խնդիրների վերհանմամբ, որոնք հանգամանալից արձանագրվել և վերլուծվել են ինչպես 2018, այնպես էլ 2019 թվականների գործունեությանը վերաբերող հաղորդումներում:

Մասնավորապես, այդ հավաքների մշտադիտարկման արդյունքները վեր հանեցին խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացմանը և պետության պարտավորություններին առնչվող խնդիրներ, որոնք ունեն նաև համակարգային բնույթ:

Քանի որ այդ հարցերն ունեն համակարգային բնույթ և դրանց սպառիչ լուծումը կունենա կարևոր նշանակություն մարդու իրավունքների հետագա զարգացման տեսանկյունից, սույն հաղորդման շրջանակում վերլուծվել են ինչպես 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին արձանագրված խնդիրները, այնպես էլ այն խնդիրները, որոնք արձանագրվել են 2019 թվականին:

Ըստ այդմ, լայնամասշտաբ հավաքների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից մշտադիտարկման առարկա դարձավ Ոստիկանության իբրև պետություն-քաղաքացի շփման առաջնային օղակի գործունեությունը:

Չնայած ապրիլ-մայիս ամիսների հավաքների խաղաղ բնույթին և Ոստիկանության կողմից հավաքները ցրելուն ուղղված լայնամասշտաբ գործողություններ չիրականացնելուն՝

դիտարկման արդյունքներով իրականացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդուհանդերձ, մեր երկրում դեռևս հավաքների ընթացքում ոստիկանական պրակտիկան չի համապատասխանում միջազգային չափանիշներին ու մոտեցումներին՝ պայմանավորված ինչպես օրենսդրական, այնպես էլ կադրային, կազմակերպական, մեթոդաբանական, ընդհուպ մինչև արժեքաբանական և ընկալումների հետ կապված խնդիրներով:

Օբյեկտիվության համար պետք է նշել, որ Ոստիկանությունը 2019 թվականի ընթացքում սկսել է գործադրել ավելի ակտիվ միջոցներ՝ ուղղված Ոստիկանության ծառայողների կարողությունների, իրազեկման աստիճանի բարձրացմանը (օրինակ՝ պատրաստել է համապատասխան իրազեկող տեսանյութ, իրազեկող այլ նյութեր): Մարդու իրավունքների պաշտպանի և Ոստիկանության պետի պաշտոնակատարի միջև տեղի են ունեցել մի շարք քննարկումներ:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ արձանագրում է, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականի ընթացքում Ոստիկանության կողմից Պաշտպանի աշխատանքները խոչընդոտելու որևէ դեպք չի արձանագրվել. արձանագրվել է աշխատանքի կարևոր արդյունքներ ապահովող համագործակցություն:

Պաշտպանի 2018 թվականի գործունեության տարեկան հաղորդման մեջ, մասնավորապես, բարձրացվել էին մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին՝ հավաքների մասնակիցների զանգվածային ձերբակալումները (բերման ենթարկելը), ազատությունից զրկելու ընթացակարգերի և երաշխիքների չպահպանումը, ոստիկանության ծառայողների ինքնության չբացահայտումը քաղաքացու հետ հարաբերվելիս, քաղաքացիական տրանսպորտի ոչ իրավաչափ գործածումը, հատուկ միջոցների կիրառման կանոնների չպահպանումը, Ոստիկանության ծառայողների կողմից ոչ բարեկիրթ վերաբերմունքն ու անհամաչափ ուժի գործադրումը և այլն:

2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում վեր հանվեցին ոստիկանական գործողությունների լայնամասշտաբությամբ պայմանավորված՝ ոչ բավարար կազմակերպվածության և մարդու իրավունքների երաշխավորման առումով անհատականացված մոտեցման բացակայության համակարգային լուրջ խնդիր:

Թերևս այդ խնդիրները գործնական առարկայական դրսևորում ստացան 2018 թվականի ապրիլյան հավաքների՝ իբրև նախադեպը չունեցող միջոցառումների պայմաններում, որպիսի մեծածավալ հավաքներ 2019 թվականի ընթացքում տեղի չեն ունեցել: Այդուհանդերձ, վեր հանված խնդիրները բնութթով ինստիտուցիոնալ և համակարգային էին և այդպիսով կանխորոշում էին խնդրի լուծմանն ուղղված սկզբունքային փոփոխությունների անհրաժեշտությունը:

Հետևաբար, 2019 թվականի ընթացքում հավաքների ազատության երաշխավորմանն առնչվող խնդիրների դիտարկումը հիմնվել է ոչ միայն այդ ժամանակահատվածում կազմակերպված հավաքների մշտադիտարկման, այլև նախանշված համակարգային խնդիրների լուծմանն ուղղությամբ ձեռնարկված քայլերի տեսանկյունից:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանը, հավատարիմ մնալով հավաքների մշտադիտարկման աշխատանքային սկզբունքներին ու որդեգրած մոտեցումներին, 2019 թվականին կազմակերպված հավաքները ևս մշտադիտարկել է մի քանի հիմնական ուղղություններով՝ հավաքների անցկացման վայրում աշխատանքային խմբեր ուղարկելով և տեղում բարձրացված խնդիրներն ուսումնասիրելով, հավաքների մասնակիցներին բերման ենթարկելիս (ձերբակալելիս) նվազագույն իրավունքների ապահովման վիճակը դիտարկելով (ձերբակալվածներին պահելու վայրեր այցելելի, առանձնագրույցների միջոցով), իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց հետ խնդիրներն օպերատիվ եղանակով քննարկելով, ինչպես նաև հրապարակային հայտարարությունների միջոցով: Պարբերական



հայտարարություններով Պաշտպանը ներկայացրել է ինչպես իրավական դիտարկումներ ու մտահոգություններ, այնպես էլ իրականացրել է հավաքներին առնչվող իրավունքների և ազատությունների իրացման հնարավորությունների վերաբերյալ պարբերաբար իրազեկումներ<sup>345</sup>:

2019 թվականի ընթացքում ամբողջ ծավալով դիտարկման առարկա դարձան 2019 թվականի հուլիսին Իջևան քաղաքում և Ամուլսարի տարածքում տեղի ունեցած հավաքները, ինչպես նաև Երևան քաղաքում տեղի ունեցած հավաքները: Արդյունքում, 2019 թվականի ընթացքում արձանագրվեցին մի շարք խնդիրների շարունակականությունը:

1. Հավաքի մասնակից՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների գործնական երաշխավորման խնդիրների շարունակականությունը

Հավաքների ազատության երաշխավորման համատեքստում ոստիկանական պրակտիկայում շարունակում է խնդրահարույց մնալ անձանց բերման ենթարկելու հիմքերը ու պատճառներն անհապաղ չներկայացնելը. սա 2019 թվականի ընթացքում դիտարկված ամենատարածված խնդիրներից մեկն է:

Այսպես, 2019 թվականի հուլիսի 11-ին Ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման ենթարկված 6 անձանց պնդմամբ՝ իրենք բերման էին ենթարկվել առանց իրավական հիմքերի: Ըստ վերջիններիս՝ իրենց ավելի ուշ Ոստիկանության բաժնում տեղեկացրել են, որ բերման ենթարկելու հիմքը Ոստիկանության օրինական պահանջին չենթարկվելն է: Մինչդեռ, ըստ բերման ենթարկվածների՝ Ոստիկանության ծառայողներն իրենց ուղղված ոչ մի պահանջ, այդ թվում՝ օրինական պահանջ, չեն ներկայացրել:

2019 թվականի հուլիսի 17-ին Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհի Իջևան քաղաքի Երևանյան և Իջևանյան փողոցների խաչմերուկի հատվածում քաղաքացիների և Ոստիկանության միջև բախումներով պայմանավորված՝ անձինք են բերման ենթարկվել: Առանձնագրույցի ընթացքում 10 բերման ենթարկվածներ տեղեկացրել են, որ իրենց փաստացի արգելանքի տակ վերցնելու պահին չեն ներկայացվել ազատությունից զրկման պատճառները, դրանք ներկայացվել են Ոստիկանության վարչությունում:

2019 թվականի օգոստոսի 19-ին Ամուլսարի հանքի շահագործման դեմ իրականացվող հավաքների մասնակից՝ բերման ենթարկված հինգ անձինք առանձնագրույցների ընթացքում նշել են, որ իրենց բերման ենթարկելիս կիրառվել է անհամաչափ ֆիզիկական ուժ, և չեն ներկայացվել բերման ենթարկելու հիմքերը: Վերջիններիս պնդմամբ՝ բերման ենթարկելու պատճառները, ինչպես նաև իրենց իրավունքներն ու պարտականությունները բաժին բերվելուց տևական ժամանակ անց չեն ներկայացվել: Պաշտպանի աշխատակազմի՝ տեղում կատարված այցի արդյունքներով անմիջականորեն արձանագրվել է անձանց վերը նշված պնդումները, ինչպես նաև այն փաստը, որ մոտ մեկ ժամ վերջիններիս մասնակցությամբ որևէ գործողություն չի իրականացվել:

2019 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության շենքի մոտ հավաքի 15 մասնակիցների հետ առանձնագրույցի ընթացքում վերջիններս տեղեկացրել են, որ բերման ենթարկելու հիմքերն ու պատճառներն իրենց տեղում չեն ներկայացրել, այլ պարզաբանել են միայն Ոստիկանության բաժնում: Ոստիկանության պարզաբանմամբ՝ մինչ բերման ենթարկելը շուրջ երեսուն բուլտ դրսևորվել է հանդուրժողականություն՝ հավաքի մասնակիցներին բարձրախոսներով կոչ անելով ձեռնպահ մնալ Երևան քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց փակելուն ուղղված

<sup>345</sup> Պաշտպանի հրապարակային հայտարարությունները հասանելի են հետևյալ հղումներով. <https://ombuds.am/am/site/ViewNews/1105>, <https://ombuds.am/am/site/ViewNews/781>, <https://ombuds.am/am/site/ViewNews/743>,

գործողություններ իրականացնելուց: Մինչդեռ, բերման ենթարկված անձանց պնդմամբ՝ Ոստիկանության ծառայողները որևէ օրինական պահանջ չեն ներկայացրել և չեն պարզաբանել իրենց բերման ենթարկելու հիմքերն ու պատճառները: Ըստ վերջիններիս՝ դրանք պարզաբանվել են Ոստիկանության բաժնում:

Գործնականում արձանագրված խնդիրները վկայում են, որ իրավակիրառման պրակտիկան դեռևս ընթանում է ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքների չպահպանմամբ:

Ուստի, հարկ ենք համարում վերահաստատել, որ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք պետք է իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվի ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Սա ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված իրավունք է, որն ուղղակիորեն բխում է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածից:

Այս կանոնը կոչված է ապահովելու, որպեսզի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ հստակ իմանա՝ ինչու է ինքը զրկվել ազատությունից: Այն նաև երաշխիք է մյուս իրավունքների իրացման համար և հանդիսանում է այդ համակարգի բաղկացուցիչ մասը: Օրինակ՝ երբ անձը տեղեկացնում է փաստաբան հրավիրելու իրավունքի մասին, դա ստեղծում է իրական հնարավորություն օգտվելու իրավաբանական օգնությունից վարույթի սկզբնական փուլերում, որոնք իրավունքների երաշխավորման տեսանկյունից ռիսկային են:

Պետք է պարզ, անձի համար հասկանալի լեզվով բացատրվեն իրեն ազատությունից զրկելու հիմքերը, որոնք պետք է ունենան փաստական և իրավական հիմնավորում: Դա պետք է արվի այնպես, որ ազատությունից զրկվող անձն անհրաժեշտության դեպքում կարողանա, օրինակ, հրավիրել փաստաբան կամ դիմել դատարան՝ ազատությունից զրկման իրավաչափությունը վիճարկելու համար: Մեխանիկական մոտեցումն այստեղ անթույլատրելի է:

Քննարկվող իրավունքի գործնականում երաշխավորումը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի լույսի ներքո, պետք է դիտարկել «անհապաղ» և «անձին հասկանալի լեզվով» եզրույթների իրավական բովանդակության համատեքստում: Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «անհապաղությունը» պետք է գնահատվի կոնկրետ գործի առանձնահատուկ հանգամանքների հաշվառմամբ: Այս տեղեկատվությունը պետք է հաղորդվի «անհապաղ», սակայն պարտադիր չէ, որ այն ամբողջությամբ բացահայտվի ձերբակալությունն իրականացնող ոստիկանի կողմից անմիջապես ձերբակալման պահին: Անձը պետք է պարզ, ոչ տեխնիկական՝ իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իր ձերբակալության հիմնական իրավական և փաստական հիմքերի մասին<sup>346</sup>:

Այդուհանդերձ, ինչպես 2018 թվականի ապրիլյան հավաքների, այնպես էլ 2019 թվականի հավաքների մշտադիտարկումը վկայում է, որ անձին արգելանքի վերցնելու պահին նրա նկատմամբ իրավունքների սահմանափակման փաստական և իրավական հիմքերի ներկայացման խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված: Ընդ որում, խոսքը չի վերաբերում անձին «վարչական իրավախախտման կատարման կասկածանքի» ոչ անհատականացված, տիպային ձևակերպմամբ անձին տեղեկացնելուն, քանի որ այդպիսով

<sup>346</sup> Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom), 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, Շարք Ա թիվ 182, էջ 19, կետ 40, և Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. the United Kingdom), 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Շարք Ա թիվ 300-Ա, էջ 31, կետ 72:

իրեն ազատությունից զրկելու պատճառներն իմանալու անձի իրավունքը կարծես ինքնանպատակ է դառնում:

Ավելորդ չենք համարում նշել, որ անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելու, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու, այդ թվում՝ այլ անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու, փաստաբանի և բժշկի մուտքը ոստիկանության բաժին չթույլատրելու, վարչական ձերբակալման ժամկետը սխալ հաշվելու հետ կապված խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական դիմումի առարկա են դարձել, ինչի հիման վրա 2017 թվականի հունվարի 24-ի ՄԴՈ-1339 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը: Իսկ մինչ այդ դատական պրակտիկան պետք է հնարավորինս առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 3-րդ և 27-րդ հոդվածների այն դրույթների պահանջներով, որոնց համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» և «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների ...մասին», «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով»:

Չնայած դրան, արձանագրված խնդիրների շարունակականությունը վկայում է, որ անգամ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների առկայության պայմաններում գործող օրենսդրական կարգավորումները չեն ապահովում պատշաճ իրավակիրառում, և օրհասական է դառնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ իրավունքներին միջամտություն ենթադրող վարչական ձերբակալման, բերման ենթարկելու և իրավախախտի բերման ընթացակարգերի սկզբունքային վերանայման անհրաժեշտությունը:

2. Սահմանված ժամկետներից ավելի անձին անազատության մեջ պահելը. ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը

2019 թվականի ընթացքում ևս արձանագրվել են խնդիրներ՝ կապված կազմակերպական ծանրաբեռնվածության պատճառով անձանց սահմանված ժամկետներից ավելի Ոստիկանության բաժիններում պահելու հետ:

Այսպես, 2019 թվականի մարտի 19-ի Ոստիկանության Կենտրոնականի բաժին այցի շրջանակներում արձանագրվել է, որ բերման ենթարկված 10 անձին պահելու ժամկետները լրացել էին: Ոստիկանության պարզաբանմամբ՝ դա պայմանավորված է բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանների լրացման և անձանց ստորագրելու գործընթացի կազմակերպմամբ: Միննույն ժամանակ, պետք է արձանագրել, որ բերման ենթարկված անձինք տեղեկացվել են ցանկացած պահի բաժնից դուրս գալու իրենց իրավունքի մասին, ինչի արդյունքում բերման ենթարկված անձինք լքել են Ոստիկանության բաժինն առանց մատյանում ստորագրության:

Այս առումով, սկզբունքորեն պետք է ընդգծել, որ ցանկացած պարագայում պետական մարմնի ռեսուրսների ոչ բավարար լինելը չի կարող արդարացնել, օրինակ, անձին օրենքով սահմանված ժամկետից ավելի անազատության մեջ պահելը: Ոստիկանության բաժիններում համապատասխան մատյանները պետք է պատշաճ լրացվեն՝ անկախ նրանից, թե անձը որքան ժամանակ է պահվել բաժնում, քանի բերման ենթարկված անձ կա և այլն:

Ազատությունից զրկելու տևողության հաշվարկման հետ կապված խնդիրը ևս շարունակական է եղել: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է անձին փաստացի ազատությունից զրկելու սկզբնական պահի հաշվարկման խնդրին: Այսպես, 2019 թվականի հուլիսի 17-ին Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը փակելու դեպքով բերման ենթարկվածների հետ առանձնագրույցների և «Ոստիկանության ստորաբաժանում բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանի» գրառումների համադրմամբ արձանագրվել է, որ իբրև ազատությունից զրկելու սկզբնական պահ՝ նշվել է ոչ թե բերման ենթարկված անձանց փաստացի արգելանքի վերցնելու, այլ Ոստիկանության ստորաբաժանում բերվելու պահը, և ազատությունից զրկելու սկզբնական պահն էլ հաշվվել է հենց այդ պահից:

Անձին ազատությունից զրկելու սկզբնական պահի ճիշտ արձանագրումը սկզբունքային նշանակություն ունի թե՛ անձի՝ ազատությունից զրկվածի կարգավիճակից բխող երաշխիքների ապահովման, թե՛ ընթացակարգի՝ օրենքով ամրագրված առավելագույն ժամկետների պահպանման առումով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է մինչև 3 ժամով անձին ազատությունից զրկելու օրենսդրական հնարավորությանը: Ընդ որում, Իջևանում տեղի ունեցած հավաքների դիտարկման արդյունքներով այս հարցն առավել կարևորվել է՝ հաշվի առնելով, որ կոնկրետ դեպքում մարդիկ Երևան էին տեղափոխվում Իջևանից, իսկ այդ ժամանակը նույնպես պետք է հաշվել ազատությունից զրկելու ժամանակի մեջ:

Հարցն այն է, որ միջազգային իրավաբանությամբ՝ մարդը համարվում է ազատությունից զրկված այն պահից սկսած, երբ նա ստիպված է հետևել ոստիկանի կամքին և չի կարող ինքնակամ լքել իր գտնվելու վայրը: Հետևաբար, ժամանակն էլ պետք է հաշվել հենց այդ, այսինքն՝ ազատությունից փաստացի զրկելու պահից՝ անկախ նրանից, թե ինչ վարույթ է իրականացվում (քրեական, վարչական կամ այլ), աշխարհագրորեն որտեղ է այդ վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրը կամ որն է վարույթի համար որոշված ենթակայությունը:

Ազատությունից զրկելու մեխանիզմի գործադրման սկզբնական պահ պետք է համարել անձին փաստացի արգելանքի վերցնելը՝ անկախ նրա նկատմամբ կիրառվող ներգործության միջոցի ֆորմալ անվանումից կամ անձի կարգավիճակից:

Օրենքով ամրագրված առավելագույն ժամկետների չպահպանման խնդիրն ուղղակիորեն առնչվում է նաև բերման ենթարկելու (ձերբակալման) գործընթացի ոչ պատշաճ փաստաթղթավորման հետ:

Այսպես, օրինակ, 2019 թվականի օգոստոսի 19-ին Ամուլսարի հանքի շահագործման դեմ իրականացվող հավաքների մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ բերման ենթարկված անձանց տվյալները մուտքագրվում են վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը նախապատրաստելուց հետո՝ անձին ազատ արձակելու ընթացքում, այսինքն՝ բաժին բերելուց անմիջապես հետո վերջիններիս վերաբերյալ մատյանում որևէ նշում չի կատարվում:

Մինչդեռ, ասվածի հաշվառմամբ՝ հարկ է ընդգծել, որ սկզբունքային է, որ քաղաքացու հետ առնչվող իրավապահ մարմնի յուրաքանչյուր ներկայացուցչի պարտականությունը պետք է լինի բոլոր այն գործողությունների անհապաղ արձանագրումը, որոնք ինքը կատարում է քաղաքացու հետ կամ նրա մասնակցությամբ:

3. Ազատությունից զրկված անձի իրավունքը՝ իր նախընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը

2019 թվականի ընթացքում իրականացված հավաքների դիտարկման արդյունքները վեր հանեցին մեկ այլ շարունակական խնդիր՝ կապված անազատության մեջ գտնվող անձի՝ այդ մասին անհապաղ իր ընտրած անձին տեղեկացնելու իրավունքի ապահովման հետ:

Այսպես, ըստ բերման ենթարկված և ձերբակալված անձանց՝ իրենց գտնվելու վայրի մասին իրենց ընտրած անձին հնարավորություն են ունեցել տեղեկացնել միայն Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչությունում՝ Երևանում: Ըստ Պաշտպանի աշխատակազմին փոխանցած տեղեկությունների՝ այս իրավունքի հետաձգման համար պատճառաբանություն չի ներկայացվել, և որևէ ակտ չի կայացվել:

Վերը նշված ոչ իրավաչափ պրակտիկայի շարունակականությունը հիմք է տալիս վերահաստատել, որ այդպիսով խախտվում են անձի այդ իրավունքի սահմանափակման միջազգային և սահմանադրական պայմանները:

Այսպես, Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշների համաձայն՝ ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք հիմնարար իրավունքներն են՝ փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները, ինչպես նաև անձի՝ ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը:

Ներպետական մակարդակում ազատությունից զրկված անձի այս իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

Սահմանադրության 27-րդ հոդվածից ուղղակիորեն բխում է, որ ազատությունից զրկված անձի այդ իրավունքի իրականացման հետաձգման հնարավորություն սահմանադիրը նախատեսել է միայն հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանմամբ՝ հետաձգումը միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով և հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով: Ասվածը՝ մասնավորապես հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով պայմանավորված, ենթադրում է, որ խոսքը վերաբերում է քրեական, այլ ոչ թե վարչական իրավախախտման վարույթին:

Ստացվում է, որ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ իր նախընտրած անձին տեղեկացվելու անձի իրավունքի ապահովման անհապաղության պահանջից որևէ բացառություն ուղղակիորեն հակասում է սահմանադրական պահանջին:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2017 թվականի հունվարի 24-ի ՄԴՈ-1339 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրությունը չի բացառել այն, որ անհապաղ տեղեկացումը կարող է հանգեցնել նաև այլ անձանց կողմից համապատասխան տեղեկատվություն ստանալուն, ինչը կարող է դժվարացնել հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը: Հնարավոր հանցագործությունները կարող են առնչվել պետական անվտանգությանը, հասարակական կարգին, այլոց հիմնական իրավունքներին և ազատություններին, որոնց պաշտպանությունը ևս պետության խնդիրն է: Միաժամանակ, հաշվի առնելով ազատությունից զրկելու հարկադիր միջոցառման բնույթը, չի կարող բացառվել այդպիսի միջոցառման իրականացմանը խոչընդոտող հանգամանքների գոյությունը, որոնք օբյեկտիվորեն դժվարացնում են անձի իրավունքների իրացմանն ուղղված պարտականությունների անհապաղ կատարումը: Այլ խնդիր է, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը չի վերաբերում միայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված տվյալ նպատակին, այլ վերաբերում է անձնական ազատությունից զրկելու բոլոր դեպքերին, այդ թվում՝ վարչական

իրավախախտումներին, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության պահանջների հետ:»:

Արդյունքում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը, որով ամրագրվում էր Ոստիկանության պարտականությունը ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, տեղյակ պահել նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին, ճանաչվել են Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում անհրաժեշտ իրավական երաշխիքներ:

Նշվածով հանդերձ, սակայն, պետք է արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկայում դեռևս շարունակական են ազատությունից զրկված անձի քննարկվող իրավունքի անհարկի ձգձգումները, որոնք փաստացի հակասում են սահմանադրական պահանջներին:

4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ

2019 թվականի հավաքների դիտարկման արդյունքներով դրական զարգացումների հետ միասին, արձանագրվեց պրակտիկա՝ կապված ազատությունից զրկելիս անձանց նկատմամբ ոչ համաչափ ուժի գործադրման և առհասարակ ոչ բարեկիրթ վերաբերմունք դրսևորելու հետ:

Այսպես, 2019 թվականի մարտի 19-ին Ոստիկանության Կենտրոնականի բաժին բերման ենթարկված 19 անձանց հետ առանձնազրույցների ընթացքում մի քաղաքացի տեղեկացրել է, որ իրեն բերման ենթարկելիս Ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական ուժ է գործադրվել: Ըստ մեկ այլ բերման ենթարկվածի՝ իր նկատմամբ ուժ է կիրառվել, ծառայողները քաշքշել են իրեն, իսկ նրանցից մեկի կողմից ստացել է գլխի շրջանում հարված:

2019 թվականի հուլիսի 17-ին Իջևանում հավաքի մասնակից բերման ենթարկված անձանց և նրանց ազգականների հետ առանձնազրույցների արդյունքները ևս վկայում էին նման ոչ իրավաչափ պրակտիկայի վերաբերյալ: Այսպես, բերման ենթարկվածներից մեկի ծնողներն առանձնազրույցի ընթացքում տեղեկացրել են, որ իրենց որդուն արգելանքի են վերցրել բնակարանից գիշերը ժամը 03:00-ին: Վերջիններս տեղեկացրել են, որ բերման ենթարկելիս Ոստիկանության ծառայողները ֆիզիկական ուժ են գործադրել որդու նկատմամբ, ինչի արդյունքում վերջինս ուսի շրջանում վնասվածք է ստացել: Մեկ այլ բերման ենթարկվածի ծնող ևս տեղեկացրել է, որ որդուն Ոստիկանության 12 ծառայողներ բերման են ենթարկել գիշերը 03:00-ի սահմաններում՝ ֆիզիկական ուժի գործադրմամբ և առանց բերման ենթարկելու հիմքերի և պատճառների մասին տեղեկացնելու: Ըստ անձի՝ ֆիզիկական ուժի գործադրման արդյունքում որդին դեմքի շրջանում վնասվածք է ստացել: Ավելին, քաղաքացին նշել է, որ բերման ենթարկելու գործընթացն իրականացվել է մանկահասակ թոռների ներկայությամբ, ինչի արդյունքում վերջիններիս մոտ վախի զգացողություն է առաջացել:

Մեկ այլ դեպքում քաղաքացին հայտնել է, որ իր ամուսնուն և որդուն բերման ենթարկելիս Ոստիկանության ծառայողները դիմակավորված են եղել, ֆիզիկական ուժ են գործադրել ընտանիքի անդամների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող մյուս որդու նկատմամբ: Բերման ենթարկելու գործընթացը, ըստ քաղաքացու, իրականացվել է մանկահասակ թոռների ներկայությամբ՝ վախի զգացողություն առաջացնելով վերջիններիս մոտ:

Իջևան քաղաքում հավաք իրականացնող անձանց և Ոստիկանության ծառայողների միջև բախումների դեպքի շրջանակներում կալանավորված անձինք նշել են, որ իրենք

մասնակցել են խաղաղ հավաքի, Ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն չեն գործադրել: Մեկ կալանավորվածի պնդմամբ էլ իրեն բերման են ենթարկել (ձերբակալել) են դիմակավորված ոստիկաններ՝ մանկահասակ երեխաների ներկայությամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելով, ձեռնաշղթայի, կայծային պարպչի գործադրմամբ և իրեն հատակին քարշ տալով:

2019 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության շենքի մոտ հավաքի մասնակիցներից մեկի պնդմամբ՝ Ոստիկանության ծառայողները հարվածել են իր գլխին և վիրավորական արտահայտություններ հնչեցրել:

2019 թվականի հուլիսի 17-ին Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը փակելու դեպքով բերման ենթարկված երկու քաղաքացի տեղեկացրել են, որ բերման ենթարկելիս իրենց հագնվելու հնարավորություն չի տրվել. մի դեպքում՝ անձին Ոստիկանության բաժնում է տրամադրվել ոստիկանության համազգեստի տաբատ, իսկ երկրորդ դեպքում անձը հագուստը ստացել է Ոստիկանության ստորաբաժանում բերվելուց հետո՝ ազգականների միջոցով:

Նշված անձանցից մեկի պնդմամբ՝ իր նկատմամբ դրսևորվել է վատ վերաբերմունք, իր հասցեին հնչել են հայհոյանքներ: Վերջինիս գլխի վերին հատվածում վնասվածքներ են արձանագրվել, որոնք, ըստ անձի, հասցվել են Ոստիկանության ծառայողների հետ նախորդ օրը տեղի ունեցած բախումների հետևանքով: Պաշտպանի աշխատակազմի միջամտությամբ կազմակերպվել է անձի բժշկական օգնությունն ու սպասարկումը:

2019 թվականի օգոստոսի 19-ին Ամուլսարի հանքի շահագործման դեմ իրականացվող հավաքների մասնակից՝ բերման ենթարկված անձանցից երկուսն առանձնազրույցի ընթացքում հայտնել են, որ կիրառված անհամաչափ ուժի արդյունքում վնասվածքներ են ստացել: Դրանք արձանագրվել են նաև Պաշտպանի ներկայացուցիչների կողմից:

Բացի այդ, բերման ենթարկելիս Ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական ուժ գործադրելու, անձանց վիրավորելու մասին ազատությունից զրկված անձանց պնդումներն արդարացված մտահոգություն էին առաջացնում, որ որոշ դեպքերում խնդիրը ոչ թե ֆիզիկական ուժի համաչափության հարթությունում էր, այլ խոսքը վերաբերում էր անձին՝ ձերբակալելու կամ բերման ենթարկելու գործողությունների հետ առնչություն չունեցող՝ մարդու կյանքի, առողջության և արժանապատվության դեմ ոտնձգություններին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որդեգրած մոտեցման համաձայն՝ եթե համապատասխան իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծ մասամբ գտնվում են իշխանությունների բացառիկ իմացության դաշտում, ինչպես, օրինակ, ազատությունից զրկման մեջ իշխանությունների հսկողության ներքո գտնվող անձանց պարագայում է, այդ մարմնական վնասվածքների առնչությամբ կծագեն փաստերին վերաբերող լուրջ կանխավարկածներ: Եթե իշխանությունները չեն ներկայացնում մարմնական վնասվածքների պատճառի գոհացուցիչ և համոզիչ բացատրություն, ապա Եվրոպական դատարանը հակված է լինում ընդունել առերևույթ վատ վերաբերմունքի մասին զանգատաբերի ներկայացրած պնդումները:

Այս սկզբունքը, ըստ Դատարանի, տարածվում է նաև ոստիկանության բաժնում անձի ինքնությունը ստուգելու նպատակով նրան ազատությունից զրկելու կամ նման տարածքներում պարզ հարցազրույց անցկացնելու իրավիճակների նկատմամբ: Այն կիրառելի է նաև հասարակական վայրերի կամ բոլոր այլ տարածքների նկատմամբ, որոնցում իրավապահ մարմիններն իրականացնում են այն գործողությունը, որի ընթացքում գործադրել են ուժ:

Ֆիզիկական ուժի ցանկացած գործադրում՝ անգամ ապտակը, որը խիստ անհրաժեշտ չի դարձել տվյալ անձի վարքագծի պատճառով, և կիրառվել է իրավապահ համակարգում

աշխատող անձանց կողմից, նսեմացնում է մարդու արժանապատվությունը և առաջացնում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում<sup>347</sup>:

Բացի այդ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ուժի կամ հատուկ միջոցների գործադրմամբ մարմնական վնասվածքներ կամ այլ վնասներ պատճառելուց հետո հնարավորինս կարճ ժամկետում պատշաճ բուժօգնություն չցուցաբերելն առաջ է բերում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման հարց<sup>348</sup>:

1990 թվականին ընդունված «Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման» ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներն ուրվագծում են ուժի կիրառման հիմնական սկզբունքները, որոնք կիրառելի են ոստիկանության բոլոր ծառայողների նկատմամբ: «Հիմնական սկզբունքները» ընդգծում են, որ ուժի կիրառումը պետք է միշտ լինի ծայրահեղ միջոց՝ ոչ թե նորմ, և այն պետք է լինի համաչափ՝ միտված մարդու կյանքը պաշտպանելուն:

Նախքան հավաքի ընթացքում ուժի կիրառման հարցը դիտարկելը, ոստիկանությունը պետք է նախ քննարկի դրա անհրաժեշտությունը: Եթե նույն նպատակին հնարավոր է հասնել խաղաղ միջոցներով, ապա հարկ չկա ուժ կիրառել: Երկրորդ, ուժի կիրառման պարագայում հարկ է նկատի առնել դրա համաչափությունը ոստիկանական գործողության օրինական նպատակին հասնելու համար: Երբ հավաքի նկատմամբ ուժ է կիրառվում, ոստիկանության ղեկավարությունը (ռազմավարական, օպերատիվ և մարտավարական մակարդակներում) պետք է կարողանա բացատրել հանրությանը՝ հասարակական կարգի պահպանման ի՞նչ նպատակի են ուզում հասնել (աջակցում, զսպում, շուրջկալում կամ ցրում), և տվյալ հանգամանքներում ինչու՞ է ընտրված մոտեցումն ամենապատշաճ տարբերակը: Չափազանց կարևոր է նաև, որ պլանավորման և հավաքի սպասարկման ողջ ընթացքում հրամանատարական մակարդակների միջև լինի հաղորդակցություն և երկխոսություն, հատկապես երբ խոսքը ուժի կիրառման մասին է: Ապօրինի հրամանները չպետք է կատարվեն<sup>349</sup>:

Համապատասխան ծառայողը պարտավոր է արձանագրել ուժի կիրառման ցանկացած դեպք, ինչպես նաև պետք է գործեն ընթացակարգեր, որոնք երաշխավորում են ուժի կիրառման մասին վերադասին հնարավորինս արագ զեկուցելը: Երբ որպես մարտավարական տարբերակ կայացվում է ուժ կիրառելու որոշում, հրամանատարը պետք է արձանագրի իր որոշման հիմնավորումը և արդյունքը: Եթե առկա է համոզվածություն կամ կասկած, որ ուժի նմանօրինակ կիրառումն ապօրինի է, ապա պետք է կատարվի հանգամանքների լիարժեք քննություն:

Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ բերման ենթարկելիս կամ ձերբակալելիս փաստացի արգելանքի վերցնելու կամ որ նույնն է՝ ազատությունից զրկելու սկզբնական փուլերում անձի նվազագույն իրավունքների երաշխավորման, նրա նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ապահովման հարցերը շարունակում են համակարգային առումով լինել խնդրահարույց: Պատճառն այն է, որ դրանք

<sup>347</sup> Բույիդն ընդդեմ Բելգիայի (Bouyid v Belgium) գործով 2015 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, զանգատ թիվ 23380/09, Մուրադովան ընդդեմ Ադրբեյջանի (Muradova v. Azerbaijan) գործով 2009 թվականի ապրիլի 2-ի վճիռը, զանգատ թիվ 22684/05:

<sup>348</sup> Շամանև և այլք ընդդեմ Վրաստանի և Ռուսաստանի (Shamayev and Others v Georgia and Russia) գործով 2005 թվականի ապրիլի 12-ի վճիռը, զանգատ թիվ 36378/02:

<sup>349</sup> «Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքներ» (Հավանա, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրես, 1990թ.,

<https://www.osce.org/hy/odihr/425663?download=true>



չունեն ինստիտուցիոնալ հիմքեր, իսկ օրենսդրությունը չի բովանդակում երաշխիքների պատշաճ կարգավորում:

Այս առումով, դեռևս արդիական է մտահոգությունը, որ Մահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների առկայության պայմաններում գործող օրենսդրական կարգավորումները չեն ապահովում պատշաճ իրավակիրառում, և օրհասական է դառնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ իրավունքներին միջամտություն ենթադրող վարչական ձեռքարկման, բերման ենթարկելու և իրավախախտի բերման ընթացակարգերի սկզբունքային վերանայման անհրաժեշտությունը:

Այսպիսով, 2019 թվականի ընթացքում արձանագրված վերը նշված խնդիրներն արդիական են դարձնում Պաշտպանի նախկինում արտահայտված մտահոգությունները: Ուստի, ավելորդ չենք համարում վերահաստատելու մարդու իրավունքների և իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից սկզբունքային դիրքորոշումները: Այսպես,

-Խաղաղ հավաքների ազատության երաշխավորումը, ոստիկանության գործողությունների իրավաչափությունն ու մարդու իրավունքների հարգման առաջնային պարտականության անշեղ կատարումը պետության ժողովրդավարության ցուցիչ են:

-Հավաքների ազատության իրավունքի իրացման դեպքում առավելագույնս դրսևորվում են ինչպես հասարակական իրավագիտակցությունը՝ իրավունքների իրացման իրավական հնարավորությունները ճիշտ գործադրելու առումով, այնպես էլ պետության՝ ի դեմս հասարակական կարգի պահպանության և պետություն-քաղաքացի անմիջական շփման առաջնային օղակ հանդիսացող Ոստիկանության պատրաստվածությունը՝ ցանկացած իրավիճակում առաջնորդվելու մարդու իրավունքների հարգման հիմնարար գաղափարով, դրսևորելու առավելագույնս հանդուրժողականություն և հարգանք յուրաքանչյուր անձի նկատմամբ, ինչպես նաև յուրաքանչյուր իրավիճակում պահպանելու իր գործողությունների օրինականությունն ու համաչափությունը՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռմամբ:

-Յուրաքանչյուր պաշտոնատար անձ պարտավոր է միշտ հիշել մարդու արժանապատվության անխախտելիության և իրավունքների ու ազատությունների հիմքում ընկած լինելու սահմանադրական բացարձակ կանոնները և պահպանել դրանք իր ամենօրյա աշխատանքում: Այդ կանոնները պետք է դրվեն բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների հիմքում:

-Պաշտոնատար անձը պարտավոր է քաղաքացու նկատմամբ ցուցաբերել հարգանք և նրա հետ հարաբերություններում լինել հանդուրժող: Միայն այս սկզբունքների պահպանմամբ է հնարավոր հասնել ժողովրդավարական երկրում իրավունքների իրական երաշխավորման հաստատուն պրակտիկայի: Այդ պրակտիկան ենթադրում է նաև արդյունավետ պայքար իրավախախտումների դեմ ու դրա հետ միասին՝ պատասխանատվության անխուսափելի ու խիստ միջոցների կիրառում լիազորությունները գերազանցած կամ ապօրինի գործադրած պաշտոնատար անձանց նկատմամբ:

-Ավելի կոնկրետ՝ իրավախախտումը կամ հանրության համար վտանգ ներկայացնող արարքը կանխելու նպատակով պետության իրավասու մարմինների կողմից անձի նկատմամբ ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցի գործադրման ցանկացած դեպք պետք է կոնկրետ իրավիճակի տեսանկյունից լինի պատշաճ հիմնավորված: Այն պետք է լինի անհրաժեշտ և համաչափ՝ կանխելու համար այն իրավախախտումը կամ վտանգը, որն այլ եղանակով հնարավոր չէր անել:

-Պետք է բացառել օրենքով արգելված վերաբերմունքի որևէ դրսևորում պետության կողմից ենթադրյալ իրավախախտում կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող՝ ազատությունից զրկված ցանկացած անձի նկատմամբ: Այս բացարձակ արգելքը պայմանավորված է նաև այն հիմնարար գաղափարով, որ պետությունը, զրկելով այդ անձին

ազատությունից, ստանձնում է նաև նրա երաշխավորված պաշտպանության հանձնառություն: Ուստի, այս բացարձակ կանոնից ցանկացած շեղում պետք է դառնա քրեական վարույթի առարկա<sup>350</sup>:

5. Հավաքների ընթացքում տեղի ունեցած դեպքերի արդյունավետ քննության ապահովումը

2018 թվականի ապրիլյան հավաքների մշտադիտարկման արդյունքում մարդու իրավունքների խախտման, այդ թվում՝ անհամաչափ ուժի գործադրման, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու, հատուկ միջոցների կիրառման կանոնների չպահպանման վեր հանված համակարգային խնդիրների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն առանձին անդրադարձ կատարեց առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքերի առնչությամբ քննությունների իրականացմանը:

Մասնավորապես, 2018 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանն ընդգծել է, որ «Կարևոր է, որ հավաքի մասնակիցների նկատմամբ բռնության գործադրման, ինչպես նաև պայթուցիկ միջոցների ոչ իրավաչափ կիրառման դեպքերի կապակցությամբ քրեական գործով վարույթներ են նախաձեռնվել»:

Այսպես, Գլխավոր դատախազության ներկայացրած պարզաբանումների համաձայն՝ 2018 թվականի ապրիլի 16-ից ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում պետական ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության և իրավապահ մարմինների այլ աշխատակիցները, պաշտոնատար անձինք Երևան քաղաքի Մ. Բաղդասյան պողոտայից, Արցախի, Էրեբունու, Աբովյան և այլ փողոցներից ու վայրերից քաղաքացիներին հեռացնելիս, բերման ենթարկելիս, ինչպես նաև դրանից առաջ գործադրել են բռնություն՝ նրանց պատճառելով մարմնական վնասվածքներ, կիրառել են հատուկ միջոցներ, սահմանված կարգի խախտմամբ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ բերման են ենթարկել ու թույլատրելի ժամկետից ավելի պահել մի շարք քաղաքացիների, ինչը զուգորդվել է վերջիններիս մի շարք իրավունքների սահմանափակմամբ:

Ընդհանուր առմամբ, հարուցված քրեական գործով ընթացք է տրվել 104 քաղաքացիների նկատմամբ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց վատ վերաբերմունքի, բռնությունների վերաբերյալ հայտարարությունների, դիմումների:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Երևան քաղաքում, ինչպես նաև ՀՀ մի շարք մարզերում իրականացված բազմամարդ հավաքների ընթացքում պետական ծառայություն իրականացնող ՀՀ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց կողմից ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում չի կայացվել:<sup>351</sup>

Հաշվի առնելով հավաքների ազատության իրավունքի համատեքստում քրեական գործերով արդյունավետ քննության պահանջի կարևորությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկման առարկա են դարձել այդ գործերի քննության հետագա ընթացքն ու

<sup>350</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցը, էջեր 60-67.

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/e014052ce8bdca5513f5a7d68deb6224.pdf>

<sup>351</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 386-387. <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf>

արդյունքները 2019 թվականի ընթացքում: Միաժամանակ, հարկ է ընդգծել նաև հասարակության՝ գործերի քննության ընթացքի վերաբերյալ պատշաճ տեղեկացվածության ապահովման կարևորությունը՝ իհարկե քննության շահի և նախաքննության գաղտնիքի հարգմամբ:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանի հարցումներին ի պատասխան՝ Գլխավոր դատախազության կողմից ներկայացվել են վարույթների ընթացքի վերաբերյալ տեղեկություններ 2019 թվականի ժամանակահատվածի համար:

Այսպես, ըստ Գլխավոր դատախազության ներկայացրած տեղեկությունների՝ 2018 թվականի ապրիլի 16-ին և ապրիլի 22-ին համապատասխանաբար՝ Երևան քաղաքի Բաղրամյան և Արցախի պողոտաներում ՀՀ ոստիկանության զորքերի ծառայողների կողմից պայթուցիկ և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու և դրանով մարդու առողջությանն անգգուշությամբ թեթև և միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերի առթիվ քրեական գործով վարույթի շրջանակներում 2019 թվականի մարտի 1-ին մեղադրանք է առաջադրվել Ոստիկանության զորքերի նախկին հրամանատարին ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, գործն այդ մասով անջատվել է և 2019 թվականի մարտի 19-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Ընդ որում, գործի քննությամբ արձանագրվել է, որ ցույցի մասնակիցներից 8 անձի առողջությանը պատճառվել է թեթև վնաս, իսկ 4 անձ ստացել է առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ քննությամբ չպարզված դիմակավորված երկու զինծառայողների գործողությունների արդյունքում: Քրեական գործով վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կասեցվել է:

2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում տեղի ունեցած դեպքերի առթիվ հարուցված քրեական գործով՝ ՀՀ ոստիկանության զորքերի երկու ծառայողների մասով, համաներման մասին օրենքի ընդունման հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումներ են կայացվել:

Ինչ վերաբերում է 2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում խուլիգանության և զանգվածային անկարգությունների ենթադրյալ հանցանքների վերաբերյալ գործերին, ըստ Դատախազության տեղեկատվության, ենթադրյալ հանցագործությանը մասնակցած անհայտ անձանց մասով հարուցված քրեական գործի շրջանակներում որոշումներ են կայացվել երկու անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումները դադարեցնելու վերաբերյալ, իսկ քրեական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2018 թվականի ապրիլի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 3-րդ մասով, 308-րդ հոդվածի 1-ին մասով, 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ՝ 2018 թվականի ապրիլի 13-ից Երևան քաղաքի փողոցներում և հրապարակներում տեղի ունեցած քաղաքացիների բազմամարդ հավաքների ընթացքում քաղաքացիների կողմից ներկայացված հաղորդումների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների առթիվ:

Ներկայացված հաղորդումներն ու մամուլի հրապարակումները տեղեկություններ են պարունակել այն մասին, որ 2018 թվականի ապրիլի 16-ից մինչև ապրիլի 23-ն ընկած ժամանակահատվածում պետական ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության և իրավապահ մարմինների այլ աշխատակիցները, պաշտոնատար անձինք Երևան քաղաքի Մ.Բաղրամյան պողոտայից, Արցախի, Էրեբունու, Աբովյան և այլ փողոցներից ու վայրերից քաղաքացիներին հեռացնելիս, բերման ենթարկելիս, ինչպես նաև դրանից առաջ գործադրել են բռնություն՝ նրանց պատճառելով մարմնական վնասվածքներ, կիրառել են հատուկ

միջոցներ, սահմանված կարգի խախտմամբ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ բերման են ենթարկել ու թույլատրելի ժամկետից ավելի պահել մի շարք քաղաքացիների, որպիսի գործողությունները զուգորդվել են վերջիններիս մի շարք իրավունքների սահմանափակմամբ: Միաժամանակ, պաշտոնատար անձինք իրենց պաշտոնական դիրքն օգտագործելով, բռնության գործադրմամբ և դրա սպառնալիքով խոչընդոտել են նույն վայրերում հավաքները լուսաբանող 7 լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը:

Հետագայում, մեկ վարույթում նախաքննություն կատարելու նպատակով վերը նշված քրեական գործին են միացվել թվով 7 քրեական գործեր, որոնք ևս վերաբերել են պետական ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից պաշտոնական լրագրությունները չարաշահելու, այդ լրագրությունները բռնություն գործադրելով զուգորդված անցնելուն, ինչպես նաև լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելուն:

Ընդհանուր առմամբ ընթացք է տրվել 104 քաղաքացիների նկատմամբ իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց վատ վերաբերմունքի, բռնությունների վերաբերյալ հայտարարությունների, դիմումների, որոնց շարքում են եղել նաև երկու անչափահաս անձանց իրավունքների խախտումների, ավտոմեքենաների վնասման դեպքերը: Նախաքննության ընթացքում պետական ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության հինգ ծառայողներ ներգրավվել են որպես մեղադրյալ, նրանց վերաբերյալ քրեական գործերն ուղարկվել են դատարան, որոնց մի մասով մեղադրական դատավճիռները մտել են օրինական ուժի մեջ:

Քրեական գործերով իրականացված դատավարական գործողությունների ընթացքի առումով, համաձայն Գլխավոր դատախազության տեղեկատվության, հարցաքննվել են 200-ից ավելի անձինք, որոնցից 55-ը ճանաչվել են տուժողներ, նշանակվել են բազմաթիվ փորձաքննություններ, գննվել են դեպքերի վայրերը, ձեռք են բերվել դեպքերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող բոլոր հնարավոր տեսագրությունները, որոնք գննվել են և այլն:

Դրանով հանդերձ, պետք է նշել, որ 2019 թվականի օգոստոսի 9-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քրեական գործով վարույթը կասեցվել է՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով: Ենթադրյալ հանցանք կատարած մյուս անձանց հայտնաբերելու, նրանց գործողություններին քրեաիրավական գնահատականներ տալուն ուղղված քննչական, օպերատիվ-հետախուզական գործողությունները շարունակվում են:

2018 թվականի ընթացքում ապրիլ-մայիս ամիսներին անցկացված հավաքների ընթացքում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերով քրեական գործ ոստիկանության Նոր Նորքի բաժնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով լրագրող Անի Գրիգորյանի գործունեությանը խոչընդոտելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը միացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի վարույթում քննված քրեական գործին, որի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցվել է:

Քրեական գործերով քննության ընթացքի վերաբերյալ տեղեկությունների համադրմամբ ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ 2019 թվականին այդ ուղղությամբ ձեռնարկվել են դատավարական գործողություններ, ինչի արդյունքում ներգրավվել են մեղադրյալներ, կան նաև դատարան ուղարկված գործեր, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր: Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ նշված քրեական գործերի վարույթները մի քանի դրվագներով, այդ թվում՝ դիմակավորված երկու

զինծառայողների գործողությունների, ինչպես նաև լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերով կասեցված են քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Ասվածի հաշվառմամբ՝ հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ անհրաժեշտ է առավելագույն ջանքեր գործադրել քրեական գործերի քննության արդյունավետության, հանցանք կատարած անձանց հայտնաբերման և վերջիններիս քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման համար: Մա ոչ միայն կոնկրետ դեպքերով տուժողների իրավունքների վերականգնման, այլև մարդու իրավունքներին և մասնավորապես խաղաղ հավաքների ազատությանը հետագա ոտնձգությունների կանխման անհրաժեշտ նախադրյալ է:

6. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու ընթացակարգերի իրավաչափ նպատակի չպահպանումը

Վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձանց բերման ենթարկելու (ձերբակալելու) ընթացակարգային երաշխիքների չպահպանումն առաջ է բերում հիմնավոր կասկած, որ այդպիսիք որոշ դեպքերում չեն հետապնդել այն իրավաչափ նպատակը, որի կենսագործմանը պետք է ուղղված լիներ վարչական իրավախախտման վարույթն՝ առհասարակ և վարչական ձերբակալման ու բերման ենթարկելու ընթացակարգերը՝ մասնավորապես:

2019 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վարչական շենքի մուտքի մոտ հավաք իրականացնող քսան քաղաքացիներ բերման են ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի և Էրեբունու բաժիններ: Բաժիններ իրականացված այցերի և առանձնագրույցների արդյունքում վերջիններս նշել են, որ բերման ենթարկելիս իրենց չեն ներկայացվել դրա հիմքերն ու պատճառները, այլ այդպիսիք պարզաբանվել են միայն Ոստիկանության բաժնում:

Ոստիկանության ծառայողները պարզաբանել են, որ անձինք բերման են ենթարկվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության գործերի զինծառայողի կամ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու կասկածանքով:

2019 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընթացքում անձանց առանց իրավաչափ նպատակի բերման ենթարկելու պրակտիկայի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին իրենց մտահոգությունն են հայտնել հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ՝ նշելով, որ բերման ենթարկելու ընթացակարգն իրենց նկատմամբ ոչ իրավաչափ է կիրառվել՝ հետապնդելով կազմակերպված ակցիան ցրելու նպատակ:

Այսպիսով, արձանագրված վերոնշյալ դեպքերի հաշվառմամբ՝ չփարատված է մնում մտահոգությունն առ այն, որ հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելն ուղղված է եղել ոչ թե բերման այդ ընթացակարգի՝ օրենքով ամրագրված նպատակների իրագործմանը (վարչական պատասխանատվության հարցի քննարկումը), այլ զուտ հավաքի անցկացման վայրից անձանց հեռացնելուն՝ այդպիսով առաջ բերելով հավաքի ազատության ոչ համաչափ սահմանափակում: Այս եզրահանգումը հիմնված է միմյանց հետ փոխկապակցված մի շարք հանգամանքների համադրման վրա:

Նախ, 2019 թվականի ընթացքում ևս հավաքի անցկացման վայրից անձանց բերման ենթարկելու (վարչական ձերբակալման) և վարչական իրավախախտման վարույթն ավարտին հասցնելու քանակական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ փաստորեն

գերակշռող դեպքերում վարչական իրավախախտման վարույթը, որպես այդպիսին, սահմանափակվել է անձանց ազատությունից զրկելով:

Այսպես, Ոստիկանության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընթացքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված իրավախախտում կատարելու համար բերվել է հավաքների մասնակից 90 անձ, որոնցից 6-ը ուղարկվել են ՀՀ վարչական դատարան, 63-ի վերաբերյալ հայցադիմումներ ՀՀ վարչական դատարան չեն ներկայացվել՝ արարքը հիմնավորող ապացույցների ոչ բավարար լինելու հիմքով, իսկ 21-ը գտնվում են քննարկման փուլում:

Ասվածն ամեննին չի նշանակում, թե անձին բերման ենթարկելով՝ Ոստիկանությունը պարտավորվում է անձին վարչական պատասխանատվության վերաբերյալ հայցադիմում ներկայացնել: Խնդիրը հենց ի սկզբանե վարչական իրավախախտումը հիմնավորող փաստական և իրավական հիմքերի բավարար լինելու գնահատումն է ոչ թե դատարան հայցադիմում ներկայացնելու հարցը քննարկելիս, այլ անձանց բերման ենթարկելու փուլում:

Երկրորդ, հավաքի մասնակիցներին բերման ենթարկելու և արարքը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով ամրագրված՝ Ոստիկանության գորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը) հիմնավորող ապացույցների ոչ բավարար լինելու հիմքով դատարան չուղարկելու դեպքերի անհամամասնությանն իբրև գործոն լրացնում են անձանց այն պնդումները, որ բերման ենթարկելիս իրենց որևէ օրինական պահանջ չի ներկայացվել, և բերման ենթարկելու հիմքերն ու պատճառները ևս չեն պարզաբանվել:

Մրա հետ կապված, ավելորդ չենք համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական այն դիրքորոշմանը, որ անձի ձերբակալումը կարող է ոչ իրավաչափ լինել, եթե դրա առերևույթ նպատակը տարբերվում է իրականից<sup>352</sup>:

Երրորդ, խնդրի դիտարկումը որոշակիորեն պայմանավորված է նաև հավաքի մասնակիցներին բերման ենթարկելու նյութաիրավական հիմքի՝ Ոստիկանության գորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու զանցակազմի օրենսդրական բնորոշման և դրա գործնական կիրառության հետ կապված խնդիրներով:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն՝ «Հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության գորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով»:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1291 որոշմամբ, անդրադառնալով խնդրո առարկա զանցակազմի բովանդակությանը, նախանշել է դրա կիրառության շրջանակները: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ հոդվածում ամրագրված «օրինական պահանջ» եզրույթի բովանդակային ծավալն ընդգրկում է փոխկապակցված հետևյալ բաղադրատարրերը.

ա) պահանջը պետք է ներկայացվի իրավասու սուբյեկտի, կոնկրետ դեպքում՝ ոստիկանության գորքերի զինձառայողի, ոստիկանության ծառայողի կողմից,

<sup>352</sup> Տե՛ս Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի (Khodorkovskiy v. Russia) գործով 2011 թվականի մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետեր 141-142:

բ) իրավասու սուբյեկտի կողմից ներկայացվող պահանջը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, այսինքն՝ իրավասու սուբյեկտի հանրային-իրավական վարքագիծը պետք է բխի իր լիազորություններից, կոնկրետ դեպքում՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության ոստիկանության գործերի զինձառայողի, ոստիկանության ծառայողի լիազորություններից:

Խնդրո առարկա դրույթի սահմանադրաիրավական բովանդակության իմաստով պահանջի օրինականությունը, մեր համոզմամբ, պետք է կանխորոշվի ոչ միայն իշխանության ներկայացուցչի լիազորությունների հետ կապի առկայության հավաստմամբ, այլև նման պահանջի բովանդակությամբ, այսինքն՝ որքանով է անձին ներկայացված պահանջն ուղղված, մասնավորապես, հասարակական կարգը խախտող վարքագիծը դադարեցնելուն կամ հասարակական կարգը պահպանող վարքագիծ ապահովելուն:

Մինչդեռ, ինչպես 2018 թվականի ապրիլյան հավաքների, այնպես էլ 2019 թվականին իրականացված հավաքների մշտադիտարկումներն առնվազն չփարատված են թողնում մտահոգությունն առ այն, որ խնդիրը շատ դեպքերում ոչ միայն անձանց ազատությունից զրկելիս իրավական հիմքերի չներկայացնելն է, այլև առհասարակ նման հիմքի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով ամրագրված զանցակազմի առկայությունը՝ Սահմանադրական դատարանի առաջ քաշած պայմանների հավաստմամբ:

7. Երեխաների մասնակցությունը հավաքներին. «Երեխայի լավագույն շահը» և «գիտակցված մասնակցությունը»՝ որպես իրավունքի իրական երաշխավորման նախադրյալներ

Երեխայի՝ հավաքների ազատության իրական երաշխավորման և վերջիններիս գիտակցված մասնակցության ապահովման խնդիրը դիտարկվել էր ինչպես 2018 թվականի, այնպես էլ 2019 թվականի հավաքների ընթացքում:

Այսպես, 2019 թվականի մայիսի 14-ին Երևանի ընդհանուր իրավասության դատարանի բակում բողոքի ակցիայի ժամանակ երկու մասի բաժանված ակցիաներն ուղեկցվել են փոխադարձ վիրավորանքներով, անհանդուրժողականություն ու ատելության խոսք պարունակող վանկարկումներով: Ակցիային մասնակցել են նաև երեխաներ: Նրանց մոտ առկա պաստառների վրա նույնպես եղել են վիրավորանքի, անհանդուրժողականության ու ատելության խոսքի տարրեր պարունակող գրառումներ:

Լրատվամիջոցներում տարածված տեսանյութերում երեխաներն իրենք են նշել, որ մասնակցում են ակցիային առանց ծնողների իմացության և չեն կարողացել հստակ բացատրել՝ իրենց մասնակցության նպատակը, ինչպես նաև չեն կարողացել բացատրել իրենց պարզաձև պաստառների վրայի գրառումները:

Երեխաների մասնակցության գործոնով պայմանավորված՝ խնդրի կարևորությունը հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ հրապարակային հայտարարությամբ՝ նշելով, որ հստակ գիտակցում է երեխայի՝ միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավունքների երաշխավորման կարևորությունը, այդ թվում՝ հավաքների կամ այլ զանգվածային միջոցառումների մասնակցության իրավունքը: Այսքանով հանդերձ, սկզբունքային է այն, որ երեխայի նշված իրավունքների իրացման հարցը գնահատելիս պարտադիր է երեխայի լավագույն շահով դեկավարվելը՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակի հանգամանքները: Երեխայի իրավունքների իրացումը որևէ դեպքում չի կարող ինքնանպատակ լինել: Այն պետք է ուղղված լինի հենց երեխայի՝ հասարակական կյանքին լիարժեք և գիտակցված այնպիսի ներգրավվածության ապահովմանը, որը ծառայում է երեխայի լավագույն շահին:

Ասվածը հիմք ընդունելով՝ Պաշտպանն անթույլատրելի է համարել կոնկրետ իրավիճակում երեխաների մասնակցությունը նշված բողոքի ակցիային ու նաև հետագայում նմանատիպ ակցիաներին՝ հորդորելով բոլոր կողմերին ձեռնպահ մնալ երեխաներին այդպիսի ակցիաների ներգրավելու փորձերից<sup>353</sup>:

Արձանագրված խնդիրների շարունակականության հաշվառմամբ՝ հարկ է վերահաստատել միջազգային պրակտիկայում առկա մոտեցումներն ու նախանշված լուծումները:

Այսպես, ըստ ՄԱԿ-ի միջազգային մարմինների իրավական չափանիշների՝ երեխաներն ունեն խաղաղ, այդ թվում՝ քաղաքական բնույթ կրող հավաքներին գիտակցված մասնակցելու իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թեև երեխայի իրավունքների երաշխավորման նվազագույն տարիք չի նախատեսում, սակայն ամրագրում է այսպես կոչված «երեխայի զարգացող հնարավորությունների» գաղափարը, երբ երեխայի զարգացմանը զուգահեռ մեծանում է սեփական իրավունքներն ինքնուրույն իրացնելու վերջինիս կարողությունը: Միևնույն ժամանակ, երեխաների իրավունքների երաշխավորման հարցում առանցքային է համարվում ընտանիքի և ծնողների դերակատարությունը: Կոնվենցիոն մակարդակում ընտանիքը հռչակվում է իբրև հասարակության հիմնարար խմբային միավոր և երեխայի աճի ու բարեկեցության բնական միջավայր, ինչպես նաև վերջինիս դերակատարությունն իր իրավունքներն իրականացնելիս երեխային ուղղություն տալու հարցում:

Երեխայի հիմնարար իրավունքները, այդ թվում՝ խաղաղ հավաքներին մասնակցության իրավունքը երաշխավորող ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության ուղենշային սկզբունքներից է նաև երեխայի մասնակցության իրավունքը: Այն առարկայանում է որոշումների կայացման գործընթացներին երեխայի մասնակցության և դրանց վրա ներազդելու իրավունքի ապահովմամբ՝ լինի դա ընտանիքում, դպրոցում, թե հասարակության մեջ: Այս սկզբունքն ամրապնդում է երեխայի՝ հասարակության լիարժեք անդամ լինելու իրավունքը, ով ունի իրեն վերաբերող ցանկացած հարցի առնչությամբ կարծիքն արտահայտելու, այն լսելի դարձնելու և պատշաճ ուշադրության իրավունք՝ իր տարիքին և հասունությանը համապատասխան: Երեխայի մասնակցության սկզբունքը հռչակում է վերջինիս ներուժը՝ որոշումների կայացմանը նպաստելու, իր հեռանկարները կիսելու և իբրև քաղաքացի ու փոփոխությունների դերակատար մասնակցելու առումներով:

Միևնույն ժամանակ, ըստ միջազգային իրավական մոտեցումների՝ երեխայի մասնակցությունն իսկական չէ (non-genuine participation), եթե վերջինս հնարավորություն չունի հասկանալու իր արտահայտած կարծիքի ազդեցությունն ու հետևանքները, ինչպես նաև երբ երեխայի մտահոգություններն ու առաջարկությունները քննության առարկա չեն դառնում<sup>354</sup>:

Եվ այս առումով, երեխաների իրավունքները երաշխավորող միջազգային փաստաթղթերը կարևորում են երեխայի տեղեկացված մասնակցությունը, երբ վերջինս, մասնավորապես, գիտակցում է որոշակի գործընթացներին իր մասնակցության նպատակը, ում կողմից է կայացվել իր մասնակցության վերաբերյալ որոշումը և ինչու, իր դերակատարությունը բովանդակային, այլ ոչ թե ձևական առումով, և ի վերջո տեղեկացված լինելու պայմաններում վերջինիս կամահայտնությունը:

<sup>353</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/781> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>354</sup> Հասանելի է <https://www.unicef.org/crc/files/Right-to-Participation.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



Նույն միջազգային փաստաթղթերն անընդունելի են համարում երեխաների՝ որոշակի գործընթացներին մասնակցության այնպիսի դրսևորումներ, երբ երեխան մասնակից է դառնում մի գործընթացի, որի էությունն ու նպատակը չի գիտակցում, կամ երբ երեխաները մեծահասակների կողմից ներգրավվում են ոչ թե այն պատճառով, որ խնդիրն առնչվում է նրանց շահերին, այլ այդպիսով ապահովվում է խնդրի ցուցադրականությունը (միջազգային իրավական տերմինաբանությամբ նման ոչ իրավաչափ դրսևորումները բնորոշվում են «մանիպուլյացիա», «դեկորացիա» և «տոկենիզմ» անվանումներով)<sup>355</sup>:

«Մեյվ դը չիլդրենի» մշակած՝ երեխաների մասնակցության գործնական չափանիշների շարքում ամրագրված է երեխայի մասնակցության վերաբերելիության և կամավորության չափանիշը (Չափանիշ 2): Ըստ դրա՝ երեխաները մասնակցում են գործընթացներին և բարձրացնում հարցեր, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց առնչվում են, և մասնակցության հարցում ընտրության հնարավորություն ունեն: Այս չափանիշը նպատակ է հետապնդում ապահովելու, որ երեխաների մասնակցությունը հիմնված լինի վերջիններիս անձնական գիտելիքների՝ սեփական կյանքի, միջավայրի և իրենց առնչվող հարցերի վերաբերյալ երեխաների ունեցած տեղեկությունների և աշխարհայացքի վրա:

Բացի այդ, նույն փաստաթղթում նախանշվում են երեխայի մասնակցության չափանիշի ապահովման նախապայմանները, որոնք են, մասնավորապես, երեխայի կողմից գործընթացին մասնակցության որոշում կայացնելու համար բավարար ժամանակ և հնարավորություն՝ արտահայտելու իր անձնական և իրազեկված համաձայնությունը, երեխաների այլ պարտականությունների (օրինակ՝ տանը, դպրոցում կամ աշխատավայրում) հաշվառում ու համատեղում և այլն<sup>356</sup>:

Այսպիսով, իբրև ելակետային իրավական արժեքներ՝ մի կողմից՝ պետք է հաշվի առնվեն երեխայի իրավունքների՝ իր տարիքին ու հասունությանը համապատասխան ծավալով երաշխավորման պահանջը, մյուս կողմից՝ երեխայի համար անվտանգ միջավայրի ապահովումն ու այդ հարցում ծնողի, ինչպես նաև պետության ու հասարակության պարտականությունները:

8. Հավաքների ազատության երաշխավորման հարցում Ոստիկանության պրակտիկայի կատարելագործմանն ուղղված ռազմավարական փոփոխությունների անհրաժեշտությունը

Արձանագրված համակարգային խնդիրների շարունակականությունը թերևս վկայում է դրանք իբրև ռազմավարական միջոցառումներ ամրագրելու անհրաժեշտությունը:

Մրա հետ կապված, հարկ է նկատել, որ 2019 թվականին ՀՀ ոստիկանությունը շրջանառել էր ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունն ու դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի նախագիծը:

Մարդու իրավունքների պաշտպանը ռազմավարական փաստաթղթի առնչությամբ ներկայացրել է մի շարք սկզբունքային նկատառումներ ու առաջարկություններ՝ հիմնվելով նաև հավաքների ազատության երաշխավորման հարցում ոստիկանական պրակտիկայի՝ տարիների կտրվածքով դիտարկումների և վեր հանված խնդիրների վրա:

Հարկ է նկատել, որ 2020 թվականին փետրվարին ՀՀ արդարադատության նախարարության կողմից հանրային քննարկման դրվեց ռազմավարական փաստաթղթի նոր

<sup>355</sup> Տե՛ս «Երեխաների մասնակցությունը. տոկենիզմից մինչ քաղաքացիություն» էջ 9, հասանելի է [https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens\\_participation.pdf](https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens_participation.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>356</sup> Հասանելի է [https://www.unicef.org/publications/files/A\\_Human\\_Rights\\_Based\\_Approach\\_to\\_Education\\_for\\_All.pdf](https://www.unicef.org/publications/files/A_Human_Rights_Based_Approach_to_Education_for_All.pdf) հղումով, էջեր 131-133, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

տարբերակ<sup>357</sup>: Ի տարբերություն Ոստիկանության մշակած՝ օրենսդրական դրույթների մանրամասնեցման սկզբունքով շարադրված նախագծի (որպիսի մի շարք կարգավորումներ Մարդու իրավունքների պաշտպանի սկզբունքային առարկությունների և մտահոգությունների առարկա էին դարձել)՝ նախագծի լրամշակված տարբերակում անդրադարձ չի կատարվում այդ կարգավորումներին, օրինակ, Ոստիկանության խափանիչ միջոցառումների վերաբերյալ:

Փոխարենը, Ռազմավարության լրամշակված նախագծի՝ «Մարդու իրավունքների պաշտպանության զգայուն հարցեր» առաջնահերթ ուղղությամբ նշվում է. «Որպես իրավախախտների հետ շփման պետության առաջին օղակ, ոստիկանությունում պետք է բարելավել քրեաիրավական ու վարչաիրավական կարգով ներգրավվող անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները, մասնավորապես՝ խոսքը խոշտանգումների կանխարգելման միջոցառումների, բերման ենթարկվող անձանց իրենց հասկանալի լեզվով իրավունքների մասին գրավոր ծանուցումների, ձեռքարկվածների պահման վայրերում բժշկական ծառայությունների ապահովման, ինչպես նաև ոստիկանության տարբեր ծառայությունների կողմից անձանց սվյալների պաշտպանության հարցերի (ներառյալ շտեմարանների վարման, տեղեկությունների փոխանցման և պահպանման տեսանկյունից) մասին է»:

Իսկ գործողությունների ծրագրում Ոստիկանության հասարակական կարգի պահպանության ուղղության շրջանակում իբրև ընդհանրական միջոցառում ամրագրված է «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենսդրական նախագծի մշակումը:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում վերահաստատել հավաքների ազատության լիարժեք իրացման մի շարք հիմնաքարային սկզբունքներ և մոտեցումներ, որոնք պետք է հաշվի առնվեն թե՛ Ոստիկանության պրակտիկայի, թե՛ ներպետական օրենսդրության հետագա փոփոխություններն իրականացնելիս: Այսպես,

1. «Անձին հրավիրելու» ընթացակարգն օրենսդրորեն ամրագրելու մոտեցման հետ կապված՝ հարկ ենք համարում արձանագրել, որ Պաշտպանին ներկայացված բողոքների շարունակականությունը վկայում է, որ դեռևս արդիական է խնդիրը, երբ ոստիկանության բաժին կամովին կամ ոստիկանի «հրավերով» ներկայացած քաղաքացիները ժամեր շարունակ պահվում են այնտեղ և դուրս գալու հնարավորություն չեն ունենում:

Բացի այդ, բողոքների ուսումնասիրությունը հիմք է տալիս արձանագրելու, որ անձանց ոստիկանության բաժին «հրավիրելու» և վերջիններիս՝ ազատությունից փաստացի զրկմամբ պայմանավորված իրավունքները չապահովելու պրակտիկան իրավապահ մարմինների կողմից որոշ դեպքերում արդարացվում է այն հիմնավորմամբ, որ անձին բերման ենթարկելու մասին որոշում չի կայացվել, քանի որ նրան հրավիրել են բաժին օպերատիվ միջոցառում իրականացնելու շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ նման դեպքերը նույնպես պետք է համարվեն ազատությունից զրկում, և այդ անձինք պետք է օժտվեն անհրաժեշտ իրավունքներով ու դրանք ապահովող երաշխիքներով: Մա պետք է դառնա իրավապահ մարմինների գործունեության սկզբունք: Ինչ վերաբերում է «օպերատիվ միջոցառումներ իրականացնելու» պետական մարմնի արդարացումներին, դրանք չեն կարող ընդունելի լինել, իսկ նման պրակտիկան պետք է պարզապես բացառել:

<sup>357</sup> Հասանելի է <https://www.e-draft.am/projects/2274/about> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հետևաբար, «հրավիրելու»՝ որպես ոստիկանություն կամավոր ներկայանալու գործընթացի՝ օրենքով ամրագրումը որևէ կերպ չի կարող ընդգրկել փաստացի ազատությունից զրկման վերը նշված և ոչ մի դեպք:

Այս առումով, ընդունելի չի կարող համարվել նախագծով սկզբնապես որդեգրված այն մոտեցումը, որ անձին հրավիրելը ոստիկանության ծառայողի իրավունքն է, եթե հիմքեր կան ենթադրելու, որ անձը տիրապետում է այնպիսի տեղեկությունների, որոնք անհրաժեշտ են ոստիկանությանն իր գործառույթներն իրականացնելու համար: Անձին հրավիրելը՝ իբրև Ոստիկանության ծառայողի իրավունք ամրագրելու, ինչպես նաև ոստիկանության գործառույթների համար անհրաժեշտ տեղեկություններին տիրապետելու խիստ ընդհանրական հիմքի ամրագրումը ոչ միայն չի փարատում փաստացի ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման խնդիրը, այլև խնդրահարույց է՝ «հրավիրելու» և «ոչ պաշտոնական զրույցների» պրակտիկան օրենքով ամրագրելու ուժով լեգիտիմացնելու վտանգի տեսանկյունից:

Ընդ որում, գրավոր ծանուցման ու ծանուցագրում անձին հրավիրելու նպատակի ամրագրումը չի կարող փարատել նշված մտահոգություններն այն բանի հաշվառմամբ, որ այդպիսով օրենքի մակարդակում չի կանխորոշվում, թե ոստիկանություն ներկայանալն ի վերջո կամավոր է, թե ծանուցագրի ստացման փաստի ուժով առաջ է բերում անձի պարտականություն, չի երաշխավորվում ոստիկանության այդպիսի պահանջի իրավական և փաստական հիմքերի անհատականացումը:

Հարկ է նկատել, որ ոստիկանական նման պրակտիկային անդրադարձել է Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն 28-րդ ընդհանուր զեկույցում, որտեղ, մասնավորապես, նշել է, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի հավանականությունն ավելի մեծ է այսպես կոչված «ոչ պաշտոնական զրույցների» պարզեցված ընթացակարգերի կիրառման դեպքում, երբ այդպիսի հարցման կիրառությունը չարաշահվում է ընթացակարգային երաշխիքների չապահովման նպատակով, որոնք կիրառելի կլինեին իբրև կասկածյալ ճանաչված անձանց նկատմամբ<sup>358</sup>: Ընդ որում, հրավիրելու և անձին հարցաքննելու պրակտիկայի ոչ իրավաչափ դրսևորումներին ԽԿԿ-ն անդրադարձել է նաև Հայաստանի վերաբերյալ իր դիտարկումներում<sup>359</sup>:

2. Քաղաքացու իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև սահմանափակումներ ենթադրող միջոցառումների ու գործողությունների կարգավորումները պետք է բավարարեն հստակության, որոշակիության և կանխատեսելիության պահանջները: Ընդ որում, չափազանց կարևոր է օրենքի տառի հստակությունն այն հարցում, թե այս կամ այն ընթացակարգն անձի համար ինչ կարգավիճակ է ենթադրում՝ դրանից բխող բոլոր երաշխիքների ամրագրմամբ:

Խոսքը, օրինակ, վերաբերում է անձի հարցմանը, որը նախագծում սկզբնապես ամրագրված էր իբրև կամավոր ընթացակարգ: Մինչդեռ, հարցման ենթարկելու այնպիսի հիմքերի ամրագրումը, ինչպիսին է, օրինակ, անձն իր արտաքին հատկանիշներով նման է հետախուզման մեջ գտնվող անձի, բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը կատարել է կամ կատարելու է իրավախախտում ուղղակիորեն կապված է հակաիրավական արարք կատարելու կասկածանքի հետ, որպիսի պայմաններում առաջ է գալու կամավոր հարցման և հարցաքննության ընթացակարգերի տարանջատման հարց՝ հանգեցնելով ընթացակարգային երաշխիքների չապահովման, իրավունքների չապահովման խնդրի:

<sup>358</sup> Հասանելի է <https://rm.coe.int/16809420e3> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>359</sup> Հասանելի է

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f>

հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Բացի այդ, նշված հիմքերից երկուսը՝ «բավարար հիմքեր կան ենթադրելու, որ անձը կատարելու է իրավախախտում» և «անձը տիրապետում է այնպիսի տեղեկությունների, որոնք անհրաժեշտ են ոստիկանությանն իր գործառույթներն իրականացնելու համար», շատ ընդհանրական են:

3. Պաշտպանի արտահայտած մտահոգությունների առարկա է նաև վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում համեմատական հետազոտումների նմուշներ վերցնելու ընթացակարգի թե՛ օրենսդրական կանոնակարգման նախագծային մոտեցումը ռազմավարության սկզբնական տարբերակում, թե՛ Ոստիկանության պրակտիկան, որը դիտարկվել է 2018 թվականի ապրիլյան հավաքների ընթացքում:

Այսպես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի գործող իրավակարգավորումների ընդհանուր ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձնական և իրերի զննությունները պետք է բավարարեն որոշակի ընթացակարգային կանոնների, իսկ անձանց լուսանկարելու, խուզարկելու և մատնադրոշման ընթացակարգեր առհասարակ նախատեսված չեն:

Հետևաբար, անթույլատրելի է ցանկացած գործողություն, որը կշրջանցի վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձի իրավունքներին միջամտություն կամ սահմանափակում ենթադրող ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների գործող շրջանակը:

Այս առումով, հարկ ենք համարում անդրադառնալ չպարզված անձի նույնականացման նպատակով համեմատական հետազոտումների նմուշներ հարկադրաբար վերցնելու ընթացակարգի ամրագրման՝ ռազմավարության նախագծում սկզբնապես առկա մոտեցմանը՝ սկզբունքային հետևյալ դիտարկումներով.

1. Նախ, հարկ է նկատել, որ իբրև նման հարկադրանքի նպատակ ամրագրված էր «Ոստիկանության ծառայողի՝ օրենքով վերապահված լիազորություններն իրականացնելիս հարցման ենթակա անձի ինքնությունը պարզելը»: Մինչդեռ, նույն Ռազմավարության նախագծով հարցումն ամրագրված էր իբրև կամավոր գործընթաց և անձի իրավունք, որպիսի պայմաններում ցանկացած հարկադրանքի կիրառումն ինքնին կլինի ոչ իրավաչափ:

Հետևաբար, օրենսդրական կանոնակարգման տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի քննարկվող ընթացակարգի և դրանով հետապնդվող նպատակի միջև առկա կապի հստակեցումն ու համաչափությունը:

2. Առաջարկվող ձևակերպումները որոշակիություն չեն ապահովում, թե խոսքը վերաբերում է ձերբակալված կամ այլ կերպ ազատությունից զրկված անձին, թե ոչ, ազատությունից զրկելու պատճառն ինքնին դիտարկվում է անձի չներկայանալը, թե առկա պետք է լինի իրավախախտման նյութաիրավական հիմքը: Խնդրի առնչությամբ դեռևս 2018 թվականի ապրիլյան հավաքների մշտադիտարկման արդյունքներով Պաշտպանն արձանագրել է, որ թեև վարչական ձերբակալման նպատակներից մեկն անձի ինքնությունը պարզելն է, իրավասու մարմնի պահանջով ինքնությունը չներկայացնելն ինքնին չի կարող դիտարկվել իբրև վարչական ձերբակալման ինքնություն և բավարար հիմք: Այլ կերպ ասած, ոստիկանի պահանջով անձի կողմից անուն, ազգանունը չհայտնելն ինքնին վարչական իրավախախտում չէ, և վարչական ձերբակալման նյութաիրավական հիմք չէ: Ոստիկանության պահանջով ինքնությունը չբացահայտելու հիմքով անձին ազատությունից զրկելու հարցի հետ կապված՝ Վասիլյան ընդդեմ Դանիայի գործով վճռում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի իմաստով «օրենքով նախատեսված պարտավորության կատարումն ապահովելու» հիմքը ենթադրում է այնպիսի պարտավորություն, որն ամրագրված է օրենքով: Հետևաբար, անձին ազատությունից զրկման նման դեպքում առնվազն պետք է առկա լինի չկատարված

պարտավորություն, և ձերբակալումը պետք է նպատակ հետապնդի ապահովելու դրա կատարումը և իր բնույթով չլինի պատժիչ: Անձի պարտավորության կատարման պահից սկսած՝ Կոնվենցիայի նշված դրույթի իմաստով ձերբակալման հիմքը դադարում է<sup>360</sup>:

3. Վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում նման հարկադրական միջոցների կիրառությունը կարող է ոչ միայն անհամաչափ լինել վարույթի բնույթին ու հետապնդվող նպատակներին, այլև առաջ բերել անձի նկատմամբ հարկադրանքի անհամաչափության ու վատ վերաբերմունքի հարց: Այս առնչությամբ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը թույլատրելի է համարում մատնահետքերի և բջիջների նմուշների հարկադիր ստացումը քրեական վարույթի շրջանակներում<sup>361</sup>:

Վերը նշված շարունակական դիտարկման արդյունքները վկայում են, որ թե՛ հավաքների ազատության երաշխավորման, թե՛ ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման Ոստիկանական պրակտիկան պետք է թիրախավորվի հենց ռազմավարական առումով:

Կարևոր է ընդգծել, որ ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողը Հայաստանի վերաբերյալ 2019 թվականի զեկույցում որպես Կառավարությանն ուղղված առաջարկ՝ նշել է «կատարել մարդու իրավունքների և մասնավորապես հավաքների և միավորումների ազատության իրավունքների երաշխավորման կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումներն ու առաջարկությունները»:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է ոլորտի բարեփոխմանն ուղղված հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. Վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքները չապահովելու ոչ իրավաչափ պրակտիկան դեռևս շարունակական է, ինչը վերահաստատում է վարչական ձերբակալման, բերման ենթարկելու ու իրավախախտի բերման՝ որպես ազատությունից զրկելու գործընթացների օրենսդրական կարգավորումների սկզբունքային վերանայման առաջնահերթ անհրաժեշտությունը:

2. Զանգվածային ձերբակալումների հետևանքով ոստիկանության կազմակերպական և մարդկային ռեսուրսների անբավարարությունը չի կարող արդարացնել ազատությունից զրկված անձանց իրավունքների չապահովումն ու օրենքով նախատեսված ժամկետից ավել անազատության մեջ պահելը:

3. Ապրիլյան հավաքների ընթացքում համատարած պրակտիկա էր, որ ոստիկանության ծառայողի օրինական պահանջին չենթարկվելու (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդված) զանցակազմը մեկնաբանվում և կիրառվում էր դրա սահմանադրաիրավական մեկնաբանությանը ոչ համապատասխան: Մա փաստվում էր հավաքի մասնակիցների նկատմամբ վարչական իրավախախտման վարույթների հանգամանքների դիտարկմամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «օրինական պահանջին» որպես հանրային իշխանություն-քաղաքացի կոնկրետ փոխհարաբերությունից բխող և կոնկրետ բովանդակություն ունեցող պահանջին, որն իր հերթին պետք է բխի ոստիկանության ծառայողի գործառույթներից և ուղղված լինի դրանց ապահովմանը:

4. Սկզբունքային է, որ հատկապես խաղաղ հավաքների ընթացքում մասնակիցների նկատմամբ վարչաիրավական միջոցները, այդ թվում՝ վարչական ձերբակալումներն ու

<sup>360</sup> Տե՛ս Վասիլևան ընդդեմ Դանիայի (Vasileva v. Denmark) գործով 2003 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, զանգատ թիվ 52792/99, կետեր 32-43:

<sup>361</sup> Տե՛ս Ս-ն և Մարփերն ընդդեմ Միացյալ Թագավորության (S. and Marper v. the United Kingdom) գործով 2008 թվականի դեկտեմբերի 04-ի վճիռը, զանգատներ թիվ 30562/04, 30566/04, կետեր 45-46:

բերման ենթարկելը լինեն խիստ համաչափ՝ բացառելու համար խաղաղ հավաքների ազատությանը չարդարացված որևէ միջամտություն:

5. Գործնականում պետք է բացառվի օրենքով չնախատեսված դեպքերում ոստիկանության ծառայողի կողմից այլ անձին պատկանող տրանսպորտային միջոցը տրամադրելու որևէ պահանջ: Առավել ևս անընդունելի է ոստիկանության ծառայող չհանդիսացող անձին վարչական ձեռքարկման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնելու ցանկացած փորձ:

6. Ոստիկանության ծառայողի՝ իշխանության ներկայացուցչի կարգավիճակն ու գործողություններն ընկալելի և կանխատեսելի պետք է լինեն իրավունքների սահմանափակման, այդ թվում՝ վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկվող անձի համար:

7. Գործնականում պետք է բացառվի վարչական ձեռքարկման կամ բերման ենթարկելու ընթացակարգերի օրենսդրական կարգավորումներից չբխող որևէ գործողություն, ինչպիսիք են՝ անձանց լուսանկարումը, մատնադրոշմներ վերցնելը, անձնական իրերի խուզարկությունը: Անձի համաձայնությունը չի կարող դիտարկվել իբրև ոստիկանության ծառայողի իրավական կարգավիճակից և լիազորություններից չբխող գործողությունների կատարման բավարար իրավական հիմք:

8. Օրենսդրորեն պետք է ամրագրվեն անչափահասների նկատմամբ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկման ընթացակարգերի հատուկ կանոններ՝ միջազգային իրավական պահանջների արտացոլմամբ:

9. Անձի անձնական ազատության և պաշտպանության իրավունքների երաշխավորման տեսանկյունից անընդունելի պրակտիկա է անձի վարչական ձեռքարկումը՝ քրեական գործով վարույթին վերջինիս ներգրավվածությունն ապահովելու նպատակով: Պետք է բացառել վարչական ձեռքարկում-վկայի կարգավիճակով նախաքննության մարմնին ներկայացում-քրեադատավարական ձեռքարկում մեխանիզմի գործադրումը՝ քրեադատավարական պահանջները շրջանցելու նպատակով:

10. Գործնականում պետք է բացառվի տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու պրակտիկան բոլոր այն վարչական իրավախախտումների դեպքում, որոնք օրենքով նման հարկադիր միջոց կիրառելու հիմք չեն հանդիսանում: Նման հարկադիր միջոց կիրառելու յուրաքանչյուր դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ նրա ներկայացուցիչը պետք է պատշաճ տեղեկացվի տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի մասին:

11. Երեխայի՝ հավաքների ազատության միջազգայնորեն երաշխավորված իրավունքը պետք է ապահովվի՝ երեխայի լավագույն շահի և գիտակցված մասնակցության սկզբունքների պահպանմամբ: Յուրաքանչյուր դեպքում առաջնահերթ է երեխայի անվտանգության ապահովումը: Պետք է բացառել երեխաներին հավաքների անցկացմանը ներքաշելու ցանկացած փորձ, որը կհակասի սույն հաղորդման շրջանակում վերը նշված միջազգային սկզբունքներին:

12. Խաղաղ հավաքների նկատմամբ պետության հանդուրժողականության պահանջը ենթադրում է, որ անգամ այն դեպքերում, երբ հավաքների ընթացում դրվագային կամ առանձին խումբ անձանց կողմից բռնություններ են հրահրվում, պետական արձագանքը՝ հավաքի ազատության սահմանափակումների առումով, պետք է լինի թիրախային՝ ուղղված բռնությունների դեպքերի կանխմանն ու այդպիսով նաև խաղաղ ցուցարարների անվտանգության ապահովմանը:

13. Գործնականում պետք է բացառել հավաքների ընթացքում Ոստիկանության կողմից հատուկ միջոցների այնպիսի գործադրման պրակտիկան, որը կհակասի այդ միջոցների կիրառման տեխնիկական և առողջապահական չափանիշներին: Հատուկ միջոցների

գործադրման վերաբերյալ Ոստիկանության իրազեկումը պետք է միշտ լինի կոնկրետ և հասցեական՝ բացառելով նման միջոցներ կիրառելու ոստիկանության իրավասության վերաբերյալ միայն ընդհանրական հայտարարությունները:

14. Լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է պատշաճ իրավական գնահատական ստանա: Հատկապես անթույլատրելի է, երբ լրագրողները թիրախավորվում են, և նրանց նկատմամբ ոտնձգություններն իրականացվում են հենց լրագրողական գործունեությունը խոչընդոտելու նպատակով: Պետությունը բարձր պատասխանատվություն է կրում հատկապես հավաքների ընթացքում մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողների պաշտպանվածությունն ապահովելու հարցում:

15. Ապրիլյան հավաքների և դրան հաջորդող օրերին սոցիալական մեդիայում խիստ մտահոգիչ էին ատելության խոսքն ու անհանդուրժողականությունը: Նման միտումների շարունակականությունը սպառնալիք էին պարունակում մարդու իրավունքների պաշտպանության ողջ համակարգի համար՝ թիրախավորելով ոչ միայն հանրային գործիչներին, Ոստիկանության ծառայողներին, այլև այլակարծություն պարունակող ցանկացած դիրքորոշում՝ անկախ այն արտահայտողի անձից: Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է սկզբունքային դիրքորոշումն առ այն, որ իրավունքի գերակայության և ժողովրդավարական սկզբունքներին հակասող այս երևույթն իսպառ պետք է վերացվի: Այս հարցում կարևոր դերակատարություն պետք է ունենան պատասխանատու լրագրությամբ ղեկավարվող լրատվամիջոցները, ինչպես նաև հանրային իշխանության ողջ համակարգն ու հասարակությունն առհասարակ<sup>362</sup>:

Հետևաբար, սկզբունքային ենք համարում Ռազմավարությամբ իբրև Ոստիկանության գործունեության բարեփոխման ուղղություն՝ հավաքների ազատության ու Ոստիկանության հանդիպակաց պարտականությունների օրենսդրական և գործնական երաշխավորումը: Կարծում ենք, որ վերը նշված իրավական գնահատականներն ու առաջարկները պետք է թիրախավորվեն իբրև այդ ռազմավարական նպատակին ուղղված գործողություններ:

9. Իրավունքահեն մոտեցումը և մարդու իրավունքների կրթության առանցքային դերը հավաքների ազատության երաշխավորման ոստիկանական պրակտիկայում

Դեռևս նախորդ տարիներին արձանագրված և ինստիտուցիոնալ լուծումների տեսանկյունից արդիական խնդիր է հավաքների ազատության երաշխավորման հարցում Ոստիկանության իրավունքահեն մոտեցման ամրապնդումը:

Հավաքների ազատության իրավունքի իրացման համատեքստում այդ պատրաստվածությունը հատկապես կարևորվում է՝ հաշվի առնելով ոստիկանական գործողությունների մանրակրկիտ պլանավորման, գործողությունների և իրավիճակային տարբեր զարգացումների դեպքում համարժեք արձագանքի, իրավունքահեն և անհատականացված մոտեցման անհրաժեշտությունը՝ թե՛ հրահրումների կամ առանձին դեպքերում բռնության դրսևորումների թիրախավորված կանխման, թե՛ բերման ենթարկելու (ձերբակալելու), թե՛ հատուկ միջոցների կիրառման ժամանակ:

Միևնույն ժամանակ, հավաքների ընթացքում ոստիկանական գործունեության իրավունքահեն մոտեցումը ենթադրում է, որ պետությունը պետք է ընկալի այս հարցում իր՝ իբրև հավաքների ազատության իրավունքի իրացմանը նպաստողի առաջնահերթ

<sup>362</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 330-410.

<https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf>

դերակատարությունը, և թերևս հարկադրանք ու իրավունքին միջամտություն ենթադրող գործողությունները պետք է բխեն հենց այդ խաղաղ հավաքների երաշխավորման տրամաբանությունից:

Ասվածը հիմք է տալիս արձանագրելու, որ իբրև ոլորտի բարեփոխման կարևորագույն ուղղություն՝ պետք է դիտարկվեն հավաքների ազատության թեմայով թիրախային և շարունակական դասընթացներն ու վերապատրաստումները:

Այս ուղղությամբ ձեռնարկված քայլերի առումով հարկ է նկատել, որ Ոստիկանության՝ 2019 թվականի վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ոստիկանության 316 ծառայողների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացների ուսումնական թեմատիկ պլաններում ներառվել են նաև խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի ապահովմանը վերաբերող համապատասխան թեմաներ:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների միջոցառումների ծրագրում իբրև միջոցառում ամրագրված է հավելված 2-ի 57-րդ կետը, որը նախատեսում է վերապատրաստումներ իրականացնել հավաքների ազատության թեմայով՝ միջազգային չափանիշների վերաբերյալ՝ իբրև ակնկալվող անմիջական արդյունք ամրագրելով ոստիկանների 24%-ի վերապատրաստումը:

Նույն հավելվածի 58-րդ կետի համաձայն՝ պետք է օրենսդրորեն սահմանվեն հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունների կարգը և պայմանները՝ միջազգային չափանիշներին համապատասխան՝ ՀՀ ոստիկանության գործողությունները կանոնակարգող կառավարության որոշման ընդունմամբ:

ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունն ու դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի նախագծով սահմանված են ըստ անհրաժեշտության կրթական ծրագրերի փոփոխման և կրթական միջավայրի բարելավման միջոցառումները:

Մինևույն ժամանակ, գործնականում արձանագրված մի շարք համակարգային խնդիրների շարունակականությունը փաստում է, որ ոստիկանության պրակտիկայում, հատկապես՝ հավաքների ազատության երաշխավորման համատեքստում, դեռևս պետք է արմատանան մի շարք սկզբունքային մոտեցումներ՝

1. Ոստիկանության ծառայողը՝ իբրև հասարակական կարգի պահպանության պատասխանատու անձ, պետք է գործի բացառապես իր իրավական կարգավիճակի շրջանակում, գիտակցի իրավական ամրագրում ստացած իր պարտավորությունները չկատարելուց բխող հետևանքները:

2. Ընդ որում, ոստիկանության պրակտիկայում պետք է բացառվեն ոչ իրավաչափ վարքագծի այնպիսի արդարացումներ, ինչպիսիք են՝ այս կամ այն ընթացակարգի «կամավոր» բնույթը և միայն անձի համաձայնության դեպքում գործադրելը: Սկզբունքորեն պետք է նկատի ունենալ, որ անկախ անձի համաձայնությունից կամ անհամաձայնությունից՝ պաշտոնատար անձի (իշխանության ներկայացուցչի) իրավական կարգավիճակից բխող լիազորությունները, մինևույն է, չեն կարող գերազանցել օրենքով նախատեսված շրջանակները:

3. Անձի իրավունքներին ոչ իրավաչափ միջամտությունը որևէ պարագայում չի կարող արդարացվել նման «հանձնարարականի»՝ իբրև խնդրահարույց գործողությունների իրավական հիմքի վկայակոչմամբ: Այստեղ է, որ պետք է գործի գիտակցումն առ այն, որ Ոստիկանության ծառայողի գործողությունների իրավաչափությունը կանխորոշվում է միայն ու միայն օրենքով՝ իրավունքների երաշխավորման ընդհանուր սկզբունքների լույսի ներքո դրա մեկնաբանությամբ ու կիրառությամբ: Ավելին, «հանձնարարականի» կատարումը, որպես այդպիսին, իրավունքների խախտում թույլ տված Ոստիկանության ծառայողի



հանրային-իրավական, այդ թվում՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք չէ:

4. Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման յուրաքանչյուր դեպքում պետք է ելակետային լինի սկզբունքն առ այն, որ իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում պետք է լինի օրենքով նախատեսված, հետապնդի իրավաչափ նպատակ և համաչափ լինի հետապնդվող նպատակին:

5. Ոստիկանության ծառայողը նաև պետք է հստակ գիտակցի, թե որ պահից ազատությունից զրկված կհամարվի այն անձը, ում ինքը մոտեցել է, և որ պահից ինքը պետք է այդ անձի համար երաշխավորի իրավունքներից օգտվելը: Ընդ որում, դա պետք է արվի այնպես, որ յուրաքանչյուր մարդ իր վրա զգա ոստիկանության այդ գիտելիքի սպառիչ արդյունքը: Այս գիտելիքների բացակայությունը պետք է հիմք լինի ոստիկանության ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու կամ պատասխանատվության խիստ միջոցների ենթարկելու համար:

6. Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է սկզբունքային դիրքորոշումն առ այն, որ ցուցարարի կամ ցանկացած այլ անձի հետ շփվող յուրաքանչյուր ոստիկան պետք է սպառիչ տիրապետի ինչպես անձի իրավունքներին, այնպես էլ այդ իրավունքների իրացումն ապահովող Ոստիկանության պարտականություններին: Խոսքը հատկապես վերաբերում է անձի իրավունքներին միջամտություն ենթադրող ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, հրազենի և մարտական տեխնիկայի գործադրմանը, որոնք պահանջում են, որ ոստիկանության ծառայողը նմանատիպ իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ անցնի և ունենա հատուկ որակավորում:

7. Առաջնային խնդիրներից է պետություն-քաղաքացի անմիջական շփման առաջնային օղակ հանդիսացող Ոստիկանության պատրաստվածությունը՝ ցանկացած իրավիճակում առաջնորդվելու մարդու իրավունքների հարգման հիմնարար գաղափարով, դրսևորելու առավելագույնս հանդուրժողականություն և հարգանք յուրաքանչյուր անձի նկատմամբ, ինչպես նաև յուրաքանչյուր իրավիճակում պահպանելու իր գործողությունների օրինականությունն ու համաչափությունը՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռմամբ:

10. Հավաքների ազատությունն ամրագրող ներպետական օրենսդրության համապատասխանությունը միջազգային մոտեցումներին

Հավաքների ազատության երաշխավորման՝ երկրում առկա վիճակի դիտարկման արդյունքները վկայում են, որ հավաքների ազատության ոստիկանական պրակտիկայի՝ միջազգային չափանիշներին համապատասխանության հետ մեկտեղ այդ անհրաժեշտությունն առկա է ներպետական օրենսդրական կարգավորումների համատեքստում ևս: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հավաքների ազատության իրավունքի բովանդակային շրջանակներին, ինչպես նաև դրա իրացման ընթացակարգային պահանջներին:

Ստորև անդրադարձ է կատարվում ոլորտի միջազգային մոտեցումների, այդ թվում՝ Հայաստանի վերաբերյալ միջազգային գնահատականների և ներպետական որոշ օրենսդրական դրույթների համադրմանը: Ընդ որում, ուսումնասիրության են ենթարկվել 2019 թվականին հրապարակված այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը<sup>363</sup>, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական

<sup>363</sup> Հասանելի է

հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույցները (3-րդ հրատարակությունը)<sup>364</sup> և այլն:

1. Հակադարձ ուղղվածությամբ հավաքների երաշխավորման տեսանկյունից

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի համատեղ միջանկյալ կարծիքում անդրադարձ է կատարվում «Հավաքների ազատության մասին» օրենքի<sup>365</sup> նախագծային մի շարք դրույթների, որոնք արդիական են նաև գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում:

Այսպես, կարծիքի 25-րդ կետում անդրադարձ է կատարվում օրենքի գործող խմբագրությամբ 18-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորմանը, համաձայն որի՝ հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Հակառակ դեպքում ավելի ուշ իրազեկված հավաքի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Մինչդեռ, ըստ միջազգային մոտեցումների՝ թեև հակընդդեմ հավաքի իրավունքը չի տարածվում այլոց հավաքների ազատությունը սահմանափակելու վրա, այդուհանդերձ, «բախման անմիջական վտանգը» չի կարող ինքնաբերաբար պատճառ դառնալ նույն ժամանակահատվածում և տարածքում իրականացվող հավաքներից մեկի արգելման համար: Այստեղ շեշտադրումը պետք է դրվի պետության պարտականության վրա՝ պաշտպանելու և նպաստելու դրանցից յուրաքանչյուրին՝ համարժեք ոստիկանական ռեսուրսներ հատկացնելով միմյանցից տեսանելի և լսելի հեռավորության վրա:

Ասվածի հիմքում ընկած է միջազգայնորեն կիրառելի այն մոտեցումը, որ թե՛ միջազգային և եվրոպական գործիքներով, թե՛ երկրի Սահմանադրությամբ և ներպետական օրենսդրությամբ «իրավաչափ նպատակի» ամրագրումն ինքնին չպետք է դիտարկվի իբրև սահմանափակումներ կիրառելու թույլտվություն, և իշխանություններն են կրում նման սահմանափակումների արդարացվածությունը հիմնավորելու բեռը: Նման արդարացումները պետք է լինեն վերաբերելի, բավարար և համոզիչ, ինչպես նաև հիմնված լինեն վերաբերելի փաստերի գնահատման վրա<sup>366</sup>:

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի հետ համատեղ հրապարակած ԺՀՄԻԳ-ի՝ «Խաղաղ հավաքների ազատության մասին ուղեցույցները» մարդու իրավունքների միջազգային չափանիշների համաձայն՝ այն փաստը, որ հավաքը, ամենայն հավանականությամբ, կհանդիպի հակընդդեմ բռնի բողոքի կամ նույնիսկ կենթարկվի հակառակ կարծիք ունեցող անձանց ուղղակի հարձակմանը, չի կարող սկզբունքորեն հանգեցնել խաղաղ հավաքի արգելմանը: Այս դեպքում խաղաղ հավաքի մասնակիցների պաշտպանությունը հակընդդեմ բողոքի ակցիայի մասնակիցների հարձակումներից կամ բռնությունից ոստիկանության պարտականությունն է<sup>367</sup>:

<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G19/136/82/PDF/G1913682.pdf?OpenElement> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>364</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2019\)017-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2019)017-e) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>365</sup> Սույն պարագրաֆում՝ այսուհետ՝ Օրենք:

<sup>366</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)049-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)049-e) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>367</sup> Հասանելի է <https://www.osce.org/hy/odihr/425663?download=true> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հետևաբար, օրենսդրական այս սահմանափակումը կիրառելիս պետք է սկզբունքորեն բացառել, որ այն վերաճի ընդհանուր արգելքի՝ առանց կոնկրետ իրավիճակից բխող պատշաճ հիմնավորվածության:

2. Հավաքների ազատության իրավունքին առնչվող ընդհանուր արգելքի տեսանկյունից  
Հաջորդ օրենսդրական խնդիրը վերաբերում է հավաքների ազատության ընդհանուր արգելքին՝ կապված հավաքների անցկացման որոշակի վայրերի հետ:

Այսպես, օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հավաքն անցկացվելու է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը:

Մրա հետ կապված, Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի համատեղ միջանկյալ կարծիքում այս կարգավորումը խնդրահարույց է գնահատվել միջազգայնորեն ընդունված հետևյալ սկզբունքների հաշվառմամբ՝

-որպես ընդհանուր կանոն՝ հավաքները պետք է երաշխավորվեն թիրախային լսարանի համար տեսանելի և լսելի հեռավորության վրա, և սահմանափակումները չպետք է խոչընդոտեն հաղորդակցումը:

-Բնական է, որ հավաքներն անցկացվեն կարևոր որոշումներ ընդունող մարմինների առաջ, ինչպիսիք են, օրինակ, Կառավարության շենքը, Նախագահի նստավայրը, դատարանները կամ Խորհրդարանը: Միայն անմիջական բռնության գործոնը կարող է արդարացնել հավաքների արգելումը:

-Համընդհանուր օրենսդրական նորմերը, որոնք արգելում են հավաքները հատուկ ժամերի կամ հատուկ տարածքներում (վայրերում), ավելի մեծ հիմնավորում են պահանջում, քան առանձին հավաքների սահմանափակումները:

-Հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի առանձնահատուկ հանգամանքները՝ օրենսդրության մեջ նման ընդհանուր նորմերի ներառումը (և դրանց կիրառումը) կարող է համարվել անհամաչափ, քանի դեռ ճնշող սոցիալական ճնշող պահանջ չկա:

-Թեև հավաքը չպետք է արգելի այդ (Կառավարություն, Նախագահ, դատարանները կամ Խորհրդարան) հաստատություններին գործառնափակումը, այդուհանդերձ, այն փաստը, որ դա կարող է որոշակի անհարմարություններ պատճառել, չպետք է հանգեցնի արգելքի կամ որևէ էական սահմանափակման:

Ավելին, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ խաղաղ հավաքների վերաբերյալ 2019 թվականի ուղեցույցների 133-րդ կետն ամրագրում է «Ոչ մի համընդհանուր արգելքներ» սկզբունքը, համաձայն որի՝ համընդհանուր իրավական սահմանափակումները, օրինակ՝ բոլոր հավաքների արգելքը որոշակի ժամանակահատվածում կամ որոշակի տարածքներում կամ հավաքներ անցկացնելու առումով հարմար հանրային վայրերում, որպես կանոն պարունակում են անհամաչափ և հավաքների ազատության իրավունքը խախտող սահմանափակումներ:

Հետաքրքրական է ուղեցույցներում արձանագրված այն մոտեցումը, որ հավաքների անցկացման վայրի կամ ժամանակի արգելք նախատեսող այս սահմանափակումները իբրև կանոն ամրագրելը և այնուհետև այդ սահմանափակումներից բացառությունները հակադարձ հարաբերակցության մեջ են դնում իրավունքն ու դրա սահմանափակումները՝ այդպիսով իրավունքը վերածելով արտոնության:

Այդ պատճառով համընդհանուր արգելքները կարող են ձախողել համաչափության չափանիշը, քանի որ դրանք չեն տարբերակում հավաքների ազատության իրավունքի

իրացման եղանակները և այդպիսով բացառում են յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունների հաշվառումը:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդհանուր դիրքորոշման համաձայն՝ բռնության հրահրման կամ ժողովրդական սկզբունքների մերժման դեպքերից բացի հավաքների և արտահայտվելու ազատությունը ճնշելուն ուղղված կանխարգելիչ բնույթի միջոցները, որքան էլ որոշակի մոտեցումներ կամ գործածված խոսքեր ցնցող և անընդունելի թվան իշխանություններին, կամ ներկայացված պահանջները լինեն անօրինական, վնասում կամ անգամ վտանգում են ժողովրդավարությունը<sup>368</sup>:

Ասվածի հաշվառմամբ, հարկ է արձանագրել, որ մեջբերված օրենսդրական դրույթի տառը հավաքների ազատության ընդհանուր արգելքի տեսանկյունից համահունչ չէ միջազգային իրավական մոտեցումներին:

### 3. Հավաքների իրազեկման ընթացակարգային պահանջների տեսանկյունից

Օրենքի 12-րդ հոդվածն ամրագրում է, որ իրազեկումը կարող է ներկայացվել հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուտ, քան 30 օր առաջ:

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն այս առնչությամբ արձանագրել են, որ իրազեկման յոթօրյա ժամկետի սահմանումը սովորականից ավելի երկար է: Իրազեկման նման երկար ժամկետի ամրագրումն անխուսափելիորեն հանգեցնում է մարդկանց հնարավորությունների սահմանափակմանը՝ ողջամիտ արագությամբ արձագանքելու այն իրադարձություններին, ինչի առթիվ վերջիններս ցանկանում են անցկացնել հավաք: Մասնավորապես, օրենսդրական այս կարգավորումը կարող է խնդրահարույց լինել այն դեպքերում, երբ անձինք, օրինակ, հավաք անցկացնելու ցանկություն են ունենում, օրինակ, երեք, չորս, հինգ կամ վեց օր առաջ, ինչը, ստացվում է, թույլատրելի չէ: Այդ պայմաններում էլ եթե այդպիսի հավաքն անգամ դիտարկվի իբրև ինքնաբերական կամ շտապ հավաք՝ դրա նկատմամբ կիրառելի կլինի օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանափակումը՝ վեց ժամից ավելի հավաքն անցկացնելու արգելքի առումով:

Զափագանց երկար այս ժամկետը, Վենետիկի հանձնաժողովի դիտարկմամբ, որոշակի հանգամանքներում հանգեցնելու է պետության ձախողմանը՝ իր պոզիտիվ պարտականությունների կատարման և հավաքների ազատությանը նպաստելու առումով:

Վենետիկի հանձնաժողովը քննարկվող ժամկետների առնչությամբ նաև դիրքորոշում է հայտնել, որ անգամ նախնական իրազեկման չորս օրվա ժամկետի սահմանումը եվրոպական առաջադեմ փորձի համեմատ երկար է<sup>369</sup>:

Խաղաղ հավաքների վերաբերյալ 2019 թվականի ուղեցույցների 112-րդ կետն ամրագրում է, որ նախնական իրազեկման պահանջը դե ֆակտո հավաքների ազատության նկատմամբ միջամտություն է, և հետևաբար ցանկացած այդպիսի սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով, լինի անհրաժեշտ և համաչափ: Ավելին, այդպիսի կարգավորումները չպետք է թաքնված խոչընդոտ պարունակեն հավաքների ազատության կոնվենցիոն իրավունքի իրացման համար: Այնուհետև, նախնական իրազեկման կանոնների կիրառումն ինքնին չպետք է կանխորոշի գործընթացի ավարտ: Այլ կերպ ասած, իրազեկման պահանջի չպահպանման դեպքում հավաքը չպետք է դիտարկվի անօրինական և ինքնին հավաքի մասնակիցների իրավունքների սահմանափակման կամ հավաքը ցրելու հիմք հանդիսանա:

<sup>368</sup> Association of Citizens Radko & Paunkovski v. the Former Yugoslav Republic of Macedonia, 2009 թվականի հունվարի 15-ի վճիռ, գանգատ թիվ 74651/01, կետ 76:

<sup>369</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)049-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)049-e) հղումով, էջեր 10-11, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մինչդեռ, հարկ է վկայակոչել Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ եթե հավաքն անցկացվում է սույն օրենքի 2-րդ գլխով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, ապա ոստիկանությունը պարտավոր է բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության: Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին:

ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողը Հայաստանի վերաբերյալ 2019 թվականի զեկույցում ևս, ի թիվս այլ դրույթների, անդրադարձել է օրենքի քննարկվող կարգավորմանը՝ մտահոգություն հայտնելով օրենսդրության կիրառության հարցում մարդու իրավունքների երաշխավորման հնարավոր մարտահրավերների առնչությամբ:

Մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքի համաձայն՝ ներպետական օրենսդրությամբ հավաքի մասին նախնական իրազեկման պահանջ սահմանելը պարտադիր չէ: Իրականում, բաց հասարակությունում հավաքների բազմաթիվ ձևերի համար պետական որևէ կարգավորում չի պահանջվում: Նախնական իրազեկումը, հետևաբար, պետք է պահանջվի միայն այն դեպքերում, երբ պետությունը պարտավոր է ձեռնարկել հավաքների ազատության ապահովման և ազգային կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ<sup>370</sup>:

Օրենքում ամրագրված ցանկացած նմանատիպ դրույթ պետք է պահանջի հավաքի կազմակերպիչներից ներկայացնել մտադրության մասին ծանուցում, ոչ թե թույլտվության հայտ: Իրազեկման գործընթացը չպետք է լինի բարդ կամ բյուրոկրատական, իսկ իրազեկման ժամկետը՝ անհարկի երկար: Փոխարենը, իրազեկման ժամկետը սահմանվում է այնպես, որ՝

ա. համապատասխան մարմինները բավարար ժամանակ ունենան անհրաժեշտ պլանները մշակելու և իրենց դրական պարտավորությունների կատարմանը նախապատրաստվելու համար, և

բ. կազմակերպիչները բավարար ժամանակ ունենան հարկադրված սահմանափակումների հետ անհամաձայնության դեպքում դրանք բողոքարկելու և դատարանի որոշում ստանալու համար<sup>371</sup>:

Ասվածը հիմք է տալիս եզրահանգելու, որ նախնական ծանուցման՝ օրենքով սահմանված ժամկետները պետք է վերանայվեն՝ միջազգային առաջադեմ պրակտիկային համահունչ:

<sup>370</sup> Հասանելի է <https://www.osce.org/hy/odihr/425663?download=true> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>371</sup> Հասանելի է <https://www.osce.org/hy/odihr/425663?download=true> հղումով, էջեր 22-23, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2015 թվականի սահմանադրական փոփոխություններով սահմանվեց Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթը՝ հետևելու կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Մահմանադրության հիման վրա «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքն ամրագրեց, որ Պաշտպանը քննարկում է հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից է գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանությունը, որի հիմնական նպատակն է գործարար միջավայրի բարելավումը, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց իրավունքների պաշտպանությունը ոչ պատշաճ վարչարարությունից, հարկային և մաքսային քաղաքականության արդյունավետության բարձրացումը: Այն խթանող ազդեցություն կարող է ունենալ ձեռնարկատիրական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման, տնտեսավարող սուբյեկտների ու պետության միջև գործընկերային հարաբերությունների հաստատման, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության համար:

Պաշտպանի այս գործառույթների իրականացումն ապահովվում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործող Գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանման միջոցով:

2019 թվականի ընթացքում հաստատված է եղել արդյունավետ համագործակցություն Պետական եկամուտների կոմիտեի հետ: Մասնավորապես, Կոմիտեի ղեկավարի և Պաշտպանի միջև տեղի են ունեցել պարբերական քննարկումներ ոլորտի խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ: Վերաբերելի մասերով համատեղ աշխատանք է ընթացել նաև Էկոնոմիկայի նախարարության, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

2019 թվականին ընդունվել են Գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանման մշակված հետևյալ օրենսդրական առաջարկները.

1. Գնումների կազմակերպման գործընթացում պետական մարմինների կողմից որոշակիության և հստակության ապահովումը

Տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, իրավունքի պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է: Այն իրականացվում է ինչպես տնտեսավարողների հասցեագրած անհատական բողոքները քննարկելու, այնպես էլ համակարգային մակարդակում կանխարգելիչ քայլեր ձեռնարկելու միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը մասնակցում է պետական գնումների բողոքների քննության նիստերին:

Պետական կարիքների համար կազմակերպված հրատապ բաց մրցույթի արդյունքների հետ անհամաձայնության դեպքերում տնտեսավարողները դիմում են պետական գնումների

բողոքները քննող անձին՝ միաժամանակ ներկայացնելով միջնորդություն Մարդու իրավունքների պաշտպանին՝ բողոքի քննությանը որպես կողմ ներգրավելու համար:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ գնումների գործընթացում հայտերի բացման նիստում անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում մասնակցին այդ մասին տեղեկացնելիս հստակ չի նշվում, թե կոնկրետ որ հարցին է վերաբերում անհամապատասխանությունը:

Գնումների կազմակերպման գործընթացում պետական մարմինների կողմից որոշակիության և հստակության սկզբունքների պահպանման անհրաժեշտությունից ելնելով՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Մասնավորապես, նախագծով առաջարկվել է գնումների գործընթացում հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում, մասնակցին այդ մասին տեղեկացնելիս, հստակ նշել, թե կոնկրետ որ հարցին է վերաբերում անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 10-ին նիստում ընդունել է «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1422-Ն որոշումը, որում ներառվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները:

Այսուհետ գնումների գործընթացում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրելիս հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցելու է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը՝ մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրելով այն:

Ընդունված փոփոխությունները կապահովեն գնումների կազմակերպման գործընթացում պետական մարմինների կողմից որոշակիության և հստակության սկզբունքների պահպանումը:

## 2. Ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի սահմանափակումներ

Պաշտպանի աշխատակազմում դեռևս 2017 թվականին ՀՀ օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ բացակայում է ինտերնետ շահումով խաղերի և վիճակախաղերի գովազդի մանրամասն իրավական կարգավորումը:

Մինչդեռ, բնակչության շրջանում ընդհանրապես և անչափահասների շրջանում հատկապես, ինտերնետ շահումով խաղերի և տոտալիզատորների (վիճակախաղերի) գովազդի նկատմամբ դյուրահավատությունն ավելի բարձր է՝ հաշվի առնելով դրանց հասանելիության աստիճանը: Հետևաբար, տոտալիզատորների (վիճակախաղերի) և ինտերնետ շահումով խաղերի գովազդի հատուկ կարգավորում չնախատեսելն անհիմն է և կարող է անձանց իրավունքների (մասնավորապես անչափահասների) խախտման պատճառ հանդիսանալ: Նման գովազդը չի կարող առաջարկվել այն կայքերում, որոնք հիմնականում ուղղված են անչափահասներին: Դրանից բացի, նման գովազդները պետք է ուղեկցվեն անչափահասների մասնակցության արգելքի վերաբերյալ նախագուշացմամբ, ինչպես նաև չպետք է մոլորեցնեն մասնակցին խաղում հաղթելու հնարավորության երաշխավորմամբ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծ:

Նախագծով առաջարկվել է՝ հեռուստահաղորդակցության ալիքով վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի, ինչպես նաև դրանց կազմակերպիչների գովազդի հեռարձակումը թույլատրել ժամը 24.00-ից մինչև 06.00-ն ներառյալ: Վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդի ժամանակ արգելել որևէ կերպ դիմել անչափահասներին, մարդկանց կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործելը, տպավորություն ստեղծել, թե խաղին մասնակցելն ապահովում է պարբերաբար եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորությունը կամ աշխատանքի այլընտրանք է, տպավորություն ստեղծել, թե եկամուտ (շահույթ) ստանալը երաշխավորված է, ներշնչել, որ խաղի միջոցով հնարավոր է հասնել հասարակական, մասնագիտական, սպորտային կամ անձնական հաջողության, քննադատել վիճակախաղին կամ ինտերնետ շահումով խաղին չմասնակցելը: Առաջարկվել է նաև օրենքում ամրագրել, որ վիճակախաղի և ինտերնետ շահումով խաղի գովազդը պետք է պարունակի ոչ սթափ կամ հոգեճնշող վիճակում խաղալու անթույլատրելիության վերաբերյալ նախագգուշացնող տեղեկատվություն:

Նախագծի փաթեթը քննարկվել և լրամշակվել է ՀՀ կառավարության, ինչպես նաև Ազգային ժողովի հետ համատեղ աշխատանքային քննարկումների արդյունքում:

2019 թվականի հունիսի 19-ին ՀՀ Ազգային ժողովում ընդունվեց «Գովազդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Մասնավորապես, ընդունված փոփոխություններով սահմանվեց, որ յուրաքանչյուր հեռուստահաղորդակցության ալիքով հեռարձակվող յուրաքանչյուր վիճակախաղի գովազդը թույլատրվում է ժամը 22:00-ից մինչև 07:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ՝ ռադիոյով՝ ժամը 08:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում, բացառությամբ՝ մանկապատանեկան հաղորդումներին նախորդող և հաջորդող մեկ ժամվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում գովազդի ընդհանուր տևողությունը, այդ թվում՝ գովազդային հաղորդումները և գովազդային տեղեկատվությունները վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին, չի կարող գերազանցել 3 րոպեն, որը մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի և ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 60 վայրկյանը:

Ընդունված օրենքով սահմանվեցին վիճակախաղերի գովազդի որոշակի սահմանափակումներ:

3. Ֆիզիկական անձանցից անձնական օգտագործման գույքն օտարելու դեպքում եկամտային հարկի գանձումը

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել անձնական օգտագործման գույքն օտարելու դեպքում ֆիզիկական անձանցից եկամտային հարկի վճարման պահանջներ ներկայացնելու վերաբերյալ:

Մինչև 2019 թվականի հունիսի 25-ը գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում էր համարվում անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման նույն տեսակի գույքի՝ տարվա ընթացքում երկրորդ և ավելի թվով օտարումը, եթե դրանց և՛ ձեռքբերումը, և՛ օտարումը տեղի էր ունեցել մեկ տարվա ընթացքում: Ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում էր համարվում նաև արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը:



Վերոնշյալ կարգավորման նպատակն էր հարկային պարտավորություն սահմանել այն անձանց համար, ովքեր, փաստացի զբաղվելով շահույթ հետապնդող գործունեությամբ, հարկ վճարելու պարտականություն օրենքով չունեին: Մակայն գործնականում հաճախ տուժել են այն անձինք, ովքեր գույքն օտարել են անձնական կարիքներից ելնելով և շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդել:

Մարդու իրավունքների պաշտպանը 2018 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձել էր ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման գույքն օտարելիս եկամտային հարկի վճարման պարտավորություն ունենալու խնդրին<sup>372</sup>:

Մասնավորապես, տարեկան հաղորդմամբ Պաշտպանն առաջարկել էր.

1) հարկային օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական համարվող գործունեության հասկացությունը վերաձևակերպել և անձի կողմից անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման նույն տեսակի գույքի օտարումը որակել ձեռնարկատիրական միայն պարբերական բնույթ կրելու դեպքում,

2) հարկային օրենսգրքում բացառել ըստ գույքի նշանակության տեսակների հարկման նկատմամբ առկա տարբերակված մոտեցումը (արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույք, ներառյալ՝ շենքեր, շինություններ (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր կամ գույք):

ՀՀ կառավարությունն Ազգային ժողով է ներկայացրել, ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխությունների փաթեթը, որտեղ ներառվել էին անհրաժեշտ կարգավորումները: 2019 թվականի հունիսի 25-ին Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին օրենքը»:

Այսպիսով, հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում ֆիզիկական անձանց պատկանող գույքի, ինչպես նաև հողամասի (անկախ հողամասի նպատակային նշանակությունից) օտարումը չի համարվի ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում և եկամտային հարկի հարկման բազան որոշելիս ֆիզիկական անձանց կողմից նշված գույքի օտարումից ստացվող եկամուտները կհամարվեն նվազեցվող: Ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում կհամարվի ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվել է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում:

Գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանումը 2019 թվականին մշակել և հրապարակել է իրազեկվածության բարձրացմանն ուղղված հարկ վճարողների հարկային ստուգումների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև ջրամատակարարման և գազամատակարարման ոլորտներում սպառողների իրավունքների վերաբերյալ ուղեցույցները:

<sup>372</sup> Տե՛ս 2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և զագատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 183-186:

## ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. ՀԴՄ-ների կիրառության կանոնների խախտման համար տուգանքների անհամաչափությունը և անհատական մոտեցման բացակայությունն օրենքով

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար սահմանված տուգանքների միասնական չափերի վերաբերյալ:

Բողոքների համաձայն՝ տուգանքները չեն անհատականացվում և տուգանելիս հաշվի չեն առնվում կոնկրետ իրավախախտման հանգամանքները և չափերը: Արդյունքում՝ անհամաչափորեն սահմանափակվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց իրավունքները:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով մարդիկ բարձրաձայնել են գյուղական համայնքներում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց համար խնդրո առարկա իրավակարգավորումների բացասական հետևանքների մասին: Ներկայացվել է, որ տնտեսվարող սուբյեկտը գյուղական համայնքներից մեկում ունի փոքր մթերային խանութ՝ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Տնտեսվարողի պնդմամբ՝ հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների խախտման համար նշանակվել է 150 հազար դրամի չափով տուգանք, ինչն իր համար ծանր տնտեսական հետևանքներ է առաջացրել:

Ըստ բողոքի՝ գյուղական համայնքում տեղակայված խանութի պարագայում 150 հազար և երկրորդ անգամ 300 հազար դրամի չափով տուգանք նշանակելն իրատեսական չէ, քանի որ սահմանված շեմը բավականին բարձր է: Այն հանգեցնելու է ձեռնարկատիրական գործունեության դադարեցմանը: Տվյալ պարագայում հիմնական մտահոգությունը հարկային տուգանքների անհատականացման բացակայությունն է: Տուգանք նշանակելիս հաշվի չի առնվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողի շրջանառության ծավալը:

Մի խումբ քաղաքացիներ բարձրաձայնել են նորաբաց հաստատության համար իրավանորմերի կիրառության արդյունքում վրա հասած բացասական հետևանքների մասին: Այսպես, նորաբաց սրճարանի սեփականատերը տեղեկացրել է, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար նշանակվել է 600 հազար դրամի չափով տուգանք:

Սրճարանի սեփականատիրոջ պնդմամբ՝ բացման օրվանից ի վեր իր գուտ եկամուտն անգամ չի հասել 600 հազար դրամի, իսկ տուգանքի՝ նման չափի պարագայում այլևս հնարավորություն չի ունենա շարունակելու իր գործունեությունը: Քաղաքացին նշել է նաև, որ տարբերակված մոտեցման բացակայության հետևանքով նույն չափի տուգանք նշանակելու դեպքում, նորաբաց կամ փոքր հաստատությունները, ի տարբերություն տարիներ շարունակ գործող և մեծ հաստատությունների, հայտնվում են առավել անբարենպաստ վիճակում: Չդիմանալով տուգանքների չափերի ծանրությանը՝ նրանք զրկվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորությունից:

Նշվածից բացի, տնտեսվարողները բարձրաձայնում են նաև այն, որ առաջին անգամ իրավախախտումը հայտնաբերելիս իրենց նկատմամբ անմիջապես կիրառվում է տուգանք՝ նախապես որոշված չափով ու դրանից որևէ բացառություն արված չէ: Ավելին, տարանջատում չկա նաև փոքր և խոշոր գումարի չափով գնումներ կատարելիս հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնները չտրամադրելու դեպքերի համար:

Հարցն այն է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1 մասերի վերլուծությունը վկայում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ-

դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար ամրագրված են տուգանքների կոնկրետ չափեր:

Ըստ հարկային օրենսգրքի՝ հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 300 հազար դրամի չափով: Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով նույն իրավախախտման համար սահմանված է 1 միլիոն դրամի չափով տուգանք:

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար սահմանված է 150 հազար դրամի չափով տուգանք, իսկ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ 600 հազար դրամի չափով տուգանք:

Ընդ որում, հարկային օրենսգիրքը տարբերակում նախատեսում է միայն սննդի օբյեկտների համար, իսկ կախված ձեռնարկատիրական գործունեության այլ պայմաններից (օրինակ՝ նորաբաց լինելը, գյուղական համայնքում աշխատելը) որևէ տարբերակում նախատեսված չէ:

Ստեղծված իրավիճակում տուգանքների առանց տարբերակման կամ անհատականացման, միասնական չափերի կիրառումը կարող է տարբեր աստիճանի ներգործություն ունենալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մեծ և փոքր ձեռնարկատիրության համար՝ առանց դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները հաշվի առնելու:

Ավելին, այն դեպքում, երբ մեծ ձեռնարկատիրության համար այդ տուգանքի չափը կարող է աննշան լինել՝ հաշվի առնելով ձեռնարկատիրության ֆինանսական դրությունը, փոքր ձեռնարկատիրության համար այն կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ առհասարակ և հանգեցնել ձեռնարկատիրական գործունեության ծավալման արգելքի: Տուգանքի և ձեռնարկատիրության ֆինանսական դրության անհամապատասխանությունը կարող է պատճառ դառնալ այդ գործունեությունը շարունակելու անհնարինության համար:

Անհամաչափության խնդիրը վերաբերում է նաև հարկային այլ իրավախախտումների համար նախատեսված տուգանքներին: Խոսքը վերաբերում է, օրինակ, լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու համար սահմանված տուգանքներին:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանը հարկային իրավախախտումների համար սահմանված տուգանքների անհամաչափության հարցը պարբերաբար բարձրացրել է Կառավարության մարմինների հետ քննարկումներում: Այդ քննարկումների ընթացքում քննարկվել են Կառավարության կողմից հարցի լուծման, այս ոլորտում բարեփոխումների իրականացման հարցեր, ձեռք են բերվել համապատասխան պայմանավորվածություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վերանայել հարկային իրավախախտումների, մասնավորապես՝ ՀԴՄ-ների կիրառության կանոնների խախտման համար սահմանված տուգանքների չափերը համաչափության սկզբունքի տեսանկյունից և սահմանել տուգանքների նվազագույն և առավելագույն չափեր: Ընդ որում, դա պետք է անել այնպես, որ հնարավոր լինի ցուցաբերել անհատական մոտեցում՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում իրավախախտման կոնկրետ հանգամանքները:

2. Հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի աշխատանքների թափանցիկության ապահովումը

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների Պաշտպանը ստացել է ՊԵԿ-ի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) աշխատակարգին առնչվող բողոքներ:

Բողոքների համաձայն՝ հաճախ Հանձնաժողովին դիմում-բողոք ներկայացրած անձր տեղյակ չի լինում բողոքի կապակցությամբ կայացրած որոշման բովանդակությանը, ինչն առաջացնում է բողոքը բավարարված լինելու ակնկալիք: Նման դեպքում, որոշման հետ անհամաձայնության պարագայում անձը բաց է թողնում օրենսդրությամբ սահմանված բողոքարկման ժամկետները: Մինչդեռ, Հանձնաժողովի որոշումը, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից, իսկ դիմում-բողոք ներկայացրած անձին այն տրամադրվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պաշտպանին հասցեագրված բողոքների համաձայն՝ թեև Հանձնաժողովի որոշումները ձևական առումով դիմում-բողոք ներկայացրած անձանց ուղարկվում են եռօրյա ժամկետում, դա նրանք ստանում են ավելի ուշ:

ՀՀ հարկային օրենսգրքով և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքով Հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու իրավասությունը վերապահված է ՊԵԿ-ին:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ 2018 թվականի փետրվարի 28-ի ՊԵԿ նախագահի թիվ 102-Ն հրամանով (այսուհետ նաև՝ Հրաման) սահմանվել է հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի աշխատակարգը:

Ըստ Հրամանի՝ Հանձնաժողովի նիստերը դռնբաց են և ձայնագրվում են: Չայնագրությունները պահվում են 2 տարի, որից հետո ոչնչացվում են:

Այս կարգավորումների հետ կապված պետք է նշել, որ վարչարարությունը կոչված է կանոնակարգելու մասնավոր անձի և հանրային իշխանություն կրող մարմնի փոխհարաբերություններն այնպիսի հիմնարար արժեքների պահպանմամբ, ինչպիսիք են մարդու իրավունքներն ու ազատությունները, իրավունքի գերակայությունը, կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունը: Կառավարումը պետք է իր նպատակներին հասնի այնպիսի հիմնարար արժեքների պահպանման միջոցով, ինչպիսիք են օրինականությունը, թափանցիկությունը, հաշվետու լինելը, քաղաքացիների նկատմամբ հարգանքը և այլն<sup>373</sup>:

Հանձնաժողովի աշխատանքների թափանցիկության բարձրացման նպատակով անհրաժեշտ է, օրինակ, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակման օրինակով սահմանել նաև հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի նիստերի առցանց հեռարձակման պահանջ: Սա կապահովի և կամրապնդի Հանձնաժողովի որոշումների օբյեկտիվության ու անկողմնակալության, ինչպես նաև արտադատական կարգով վեճերի լուծման նկատմամբ վստահությունը: Բացառություն կարող է սահմանվել այն դեպքերի համար, երբ դիմում-բողոք ներկայացրած անձը, օրինակ, առևտրային գաղտնիքի պահպանման նպատակով ներկայացնում է նիստն առցանց չհեռարձակելու կամ դռնփակ անցկացնելու միջնորդություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը ՊԵԿ-ին հասցեագրած գրությամբ առաջարկել էր սահմանել Հանձնաժողովի նիստերի առցանց հեռարձակման պահանջ:

Պատասխան գրությամբ ՊԵԿ-ը տեղեկացրել է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակման օրինակով Հանձնաժողովի նիստերն առցանց

<sup>373</sup> Տե՛ս Կ. Զարիկյան «Վարչական մարմինների փոխօգնության ինստիտուտի կատարելագործման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»-Երևան 2013թ.:

հեռարձակելը նպատակահարմար չէ: Ըստ ՊԵԿ-ի՝ Հանձնաժողովի նիստերի առցանց հեռարձակման պարտադիր պահանջը դիմում-բողոք ներկայացրած անձի համար կարող է առաջացնել անցանկալի հետևանքներ, բացի այդ, հարկային մարմնի կողմից կիսախտվի հարկային գաղտնիքի պահպանման պահանջը:

Ըստ պարզաբանման՝ հարկային մարմինը պարտավոր է պահպանել հարկային գաղտնիքը և այդպիսին համարվող տեղեկատվությունն օրենքով սահմանված դեպքերում ՀՀ կառավարության սահմանված կարգով տրամադրել այդ տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարելու իրավասություն ունեցող պետական մարմիններին:

ՊԵԿ-ի այսպիսի մոտեցման հետ հնարավոր չէ համաձայնել: Այսպես, Հրամանի համաձայն՝ Հանձնաժողովի նիստերը դռնբաց են և ձայնագրվում են, իսկ դիմում-բողոք ներկայացրած անձի գրավոր միջնորդությամբ նիստերը կարող են անցկացվել դռնփակ:

Պաշտպանի կողմից առաջարկվում է Հրամանով սահմանել Հանձնաժողովի նիստերի առցանց հեռարձակման պարտադիր պահանջ՝ բացառություն նախատեսելով այն դեպքերի համար, երբ դիմում-բողոք բերած անձը նիստն առցանց չհեռարձակելու միջնորդություն է ներկայացնում, օրինակ՝ առևտրային գաղտնիքի պահպանման նկատառումներով:

Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովման կարևոր գործոն կարող է դառնալ որոշման հրապարակման փուլ նախատեսելը:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներով ամրագրված է պատշաճ վարչարարության իրավունքը:

Բանն այն է, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք՝ վարչարարության օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, հայեցողական լիազորությունների սահմանափակման, կամայականության արգելքի, վարչարարության համաչափության, տնտեսվարության, հավաստիության կանխավարկածի և առավելագույնի սկզբունքների պահպանմամբ:

Վարչական վարույթը բաղկացած է վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

Պաշտպանն առաջարկել էր Հանձնաժողովում հարուցված վարչական վարույթի եզրափակիչ փուլում նաև նախատեսել կայացրած որոշման հրապարակման փուլ և սահմանել, որ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հանձնաժողովի որոշման ուժի մեջ մտնելու մասով ներկայացված առաջարկության վերաբերյալ ՊԵԿ-ից պարզաբանել են, որ այն առաջացնում է ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն, քանի որ Հանձնաժողովի որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանված է հարկային օրենսգրքով:

Դրանից բացի, ըստ ՊԵԿ-ի, բողոք ներկայացրած անձանց կամ նրանց լիազորված ներկայացուցիչների համար որևէ սահմանափակում նախատեսված չէ բողոքի վերաբերյալ որոշման կայացմանը մասնակցելու համար:

Չնայած ՊԵԿ-ը որոշակի միջոցներ ձեռնարկում է Հանձնաժողովի գործունեության թափանցիկության բարձրացման ուղղությամբ, այնուամենայնիվ Պաշտպանի առաջարկներն իրականացնելու դեպքում կապահովվի և կամրապնդվի Հանձնաժողովի որոշումների օբյեկտիվության ու անկողմնակալության, ինչպես նաև արտադատական կարգով վեճերի լուծման նկատմամբ վստահությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. սահմանել Հանձնաժողովի նիստերի առցանց հեռարձակման պարտադիր պահանջ,
2. Հանձնաժողովում հարուցված վարչական վարույթի եզրափակիչ փուլում նախատեսել որոշման հրապարակման փուլ:

3. Մաքսակետերում գոյացող հերթերը և պետական եկամուտների կոմիտեի հեռախոսագանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելը

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ կապված մաքսագերծում իրականացնելիս մաքսակետերում, այդ թվում՝ Հյուսիսային մաքսատուն-վարչությունում, առաջացող հերթերի, ինչպես նաև այն մասին, որ ՊԵԿ-ի հեռախոսագանգերի կենտրոնը չի գործում մշտական հիմունքներով:

Մասնավորապես, ըստ բողոքների, մաքսակետերում գոյացող հերթերի պատճառով մարդիկ չեն կարողանում մաքսագերծման գործընթացն օրենքով սահմանված ժամկետում ավարտին հասցնել և ստիպված են ավտոմեքենաները կամ ապրանքները հանձնել մաքսային պահպանության տարածք:

Բողոքների համաձայն՝ Հյուսիսային մաքսատուն-վարչությունում հերթերը մշտական բնույթ են կրում, իսկ գիշերային ժամերին իրականացվում է հերթերի անօրինական «վաճառք», ինչն էլ հանգեցնում է դժգոհությունների: Դրանից բացի, ներկրողներն ավտոմեքենաները կայանում են բնակելի շենքերի շրջակայքում, շենքերի նրբանցքներում, երբեմն էլ սեփական տների բակերում՝ խոչընդոտելով բնակիչների տեղաշարժը:

Հյուսիսային մաքսատուն-վարչությունում հերթերի հարցի լուծման կապակցությամբ ՊԵԿ-ը Պաշտպանին պարզաբանել է, որ Հայաստանի Հանրապետություն ներկրվող տրանսպորտային միջոցների աննախադեպ քանակների պայմաններում Գյումրիում տեղակայված ԱՏԳ-ի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով Հյուսիսային մաքսատուն-վարչությունում 2019 թվականի վերջին սահմանվել է յոթնօրյա աշխատանքային շաբաթ, հերթափոխային ռեժիմով աշխատաժամանակը սահմանվել է ժամը 09:00–21:00-ն, առանձին օրերի ԱՏԳ-ում տեղակայված մաքսային ծառայությունը գործել է շուրջօրյա ռեժիմով:

Ըստ ՊԵԿ-ի պարզաբանումների՝ պետական սահմանի անցակետերում մշակվել և ներդրվել են մաքսային հսկողության իրականացման ռիսկի պրոֆիլներ: Մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գանձման և հաշվառման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, անցման կետերում կուտակումների և հերթերի հավանականությունը նվազեցնելու, ինչպես նաև ԵՏՄ երկրներից ժամանող ավտոտրանսպորտային միջոցների սահմանահատման գործընթացը պարզեցնելու նպատակով՝ նախաձեռնվել է ԵՏՄ անդամ երկրներում հաշվառված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների սահմանահատման գործընթացում Մաքսային մուտքի օրդերների լրացման պահանջի դադարեցում: Ըստ ՊԵԿ-ի՝ վերոնշյալ փոփոխությունն արագացրել է ավտոտրանսպորտային միջոցների սահմանահատման գործընթացը, ինչը դրական ազդեցություն է ունեցել մաքսային մարմինների ծանրաբեռնվածության թոթափման հարցում:

Դրանից բացի, ՊԵԿ-ից տեղեկացրել են, որ 2019 թվականի վերջին ՀՀ ներկրվող տրանսպորտային միջոցների աննախադեպ քանակի և դրանց արդյունքում առաջացած հերթերի կանոնակարգման նպատակով՝ առաջարկել են կիրառել նախնական հայտարարագրման ինստիտուտը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներում նշվում է նաև, որ սահմանային անցակետում մարդիկ, խնդիրներ ունենալով մաքսային ծառայության աշխատակիցների հետ, փորձել են ՊԵԿ-ի հեռախոսագանգերի կենտրոնից իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ստանալ տեղեկատվություն, սակայն չեն կարողացել, քանի որ այն գիշերային ժամերին չի գործում:

Նույն խնդրի հետ առնչվում են նաև այլ մարմինների կամ կազմակերպությունների աշխատակիցները, որոնք քաղաքացիների՝ հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կամ քաղաքացիների բարձրացրած խնդիրներին արագ լուծում տալու համար հնարավորություն չեն ունենում կապ հաստատել ՊԵԿ-ի հեռախոսագանգերի կենտրոնի հետ:

Ըստ ՊԵԿ-ի պաշտոնական կայքում առկա տվյալների՝ հեռախոսագանգերի կենտրոնի նպատակն է՝ կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների, հարկերի, մաքսատուրքերի, մաքսային և այլ պարտադիր վճարների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը: Այն իրականացնում է նաև հարկային ու մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավասությունների և լիազորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև ընդունում է առաջարկություններ և բողոքներ:

Այս առումով խնդրահարույց է, որ հեռախոսագանգերի կենտրոնի աշխատանքը չի իրականացվում շաբաթվա բոլոր օրերին և շուրջօրյա: Մինչդեռ, օրինակ, ՊԵԿ-ի մաքսային ծառայության աշխատանքը շուրջօրյա է: Օրվա տարբեր ժամերին Հայաստանի Հանրապետություն են ներկրվում և արտահանվում ապրանքներ: Շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում մարդկանց բարձրացրած հարցերի վերաբերյալ իրականացնել արագ արձագանքում: Հեռախոսագանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելու պատճառով բողոքները տեղ չեն հասնում և հետևաբար արագ չեն լուծվում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք երկրներում մաքսային ծառայության թե՛ զծի հեռախոսահամարը գործում է շուրջօրյա (Գերմանիա, Իտալիա, ԱՄՆ, Ավստրալիա, Մոլդովա, Հոնկոնգ, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Ղազախստան)<sup>374</sup>:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

1. մաքսակետերում գոյացող հերթերի նվազեցման նպատակով բարձրացնել մաքսային վարչարարության արդյունավետությունը,

2. ՊԵԿ-ի հեռախոսագանգերի կենտրոնի աշխատանքը դարձնել մշտական հիմունքներով:

#### 4. Հարկային և մաքսային ստուգումների թափանցիկության ապահովումը

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել հարկային և մաքսային ստուգումների ընթացքում ծառայողների անհարգալից և անօրինական վարքագծի վերաբերյալ:

Օրինակ՝ բողոքներից մեկի համաձայն՝ անձը մաքսակետում հայտարարել է, որ ցանկանում է, ՊԵԿ-ի հեռախոսագանգերի կենտրոնի հետ կապ հաստատելով, տեղեկացնել իր հանդեպ դրսևորած անօրինական վարքագծի վերաբերյալ: Ի պատասխան՝ մաքսային ծառայողները սպառնացել են, որ հեռախոսագանգերի կենտրոնի հետ կապ հաստատելը կհանգեցնի բացասական հետևանքների:

Մեկ այլ դեպքում նշվել է, որ մաքսակետում իրականացվել է ապրանքների գնում, որի արդյունքում անձի պայուսակից անհետացել են իրեր:

Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել նաև հարկային ծառայողների կողմից առանց համապատասխան իրավական հիմքի հարկ վճարողի տարածք մուտք գործելու և նկարահանումներ իրականացնելու վերաբերյալ:

<sup>374</sup> Տե՛ս [https://www.zoll.de/EN/Contact/Other\\_contacts/other\\_contacts\\_node.html](https://www.zoll.de/EN/Contact/Other_contacts/other_contacts_node.html), <http://www.gdf.gov.it/servizi-per-il-cittadino/contatti/come-contattare-la-guardia-di-finanza>, <https://www.usa.gov/federal-agencies/u-s-customs-and-border-protection>. 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ՊԵԿ-ի պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից, քաղաքացիներից և ՀՀ պետական այլ մարմիններից՝ ծառայողի վարքագծի կանոնները խախտելու վերաբերյալ ստացվել է տասը դիմում-բողոք և գրություն: Ստացված դիմում-բողոքների և գրությունների հիման վրա իրականացվել է (իրականացվում է) թվով ութ ծառայողական քննություն, իսկ երկուսի դեպքում ծառայողական քննության անցկացումը մերժվել է: Թվով չորս ծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ մեկ դեպքում ծառայողական քննությունը կասեցվել է, և նյութերն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Ըստ ՊԵԿ-ի՝ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի եզրակացությունների արդյունքում հրապարակված հրամաններին կից առանձին դեպքերով նախապատրաստվել են համապատասխան հանձնարարականներ:

Սույն պարագրաֆում քննարկվող հարցի կապակցությամբ պետք է նշել, որ դեռևս 2018 թվականին Պաշտպանն առաջարկել էր ստուգումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով հարկային և մաքսային ծառայողների հանդերձանքին ամրացնել դյուրակիր տեսախցիկներ: Ըստ ՊԵԿ-ի պատասխան պարզաբանման՝ արդյունավետության տեսանկյունից ստուգումների գործընթացի տեսաձայնագրման անհրաժեշտությունը բացակայում է:

Սույն հաղորդման կապակցությամբ ՊԵԿ-ը տրամադրել է տեղեկություն այն մասին, որ հարկային և մաքսային ծառայողների հանդերձանքի վրա դյուրակիր տեսաձայնագրող սարքերի ամրացման հետ կապված որևէ օրենսդրական նախաձեռնություն առկա չէ: Այնուամենայնիվ, հարկային մարմնում քննարկվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումների ժամանակ տեսաձայնագրող սարքերի կիրառման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության իրականացումը, որի միջոցով հնարավոր կլինի ամրապնդել խախտման փաստի ապացուցողականությունը:

Պաշտպանն արձանագրում է, որ ինչպես վկայում է միջազգային փորձը, վերջին տարիներին իրավապահ մարմինների կողմից լայնորեն կիրառվում են տեխնոլոգիական նորամուծություններ, որոնցից են նաև դյուրակիր տեսախցիկները:

Օրինակ՝ Հայաստանում Ոստիկանության դեպքում դյուրակիր տեսախցիկները ցույց են տվել կիրառության արդյունավետություն: Դրանք կարող են կիրառելի լինել նաև մաքսային և հարկային մարմինների աշխատանքում:

Այսպես, ԱՄՆ-ի Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալությունը, որն իրավապահ մարմին է, 2013 թվականից ի վեր կիրառում է տեսախցիկներ ինչպես գործակալության տրանսպորտային միջոցների, այնպես էլ սպաների հանդերձանքի վրա: Տեսախցիկները սպաների հանդերձանքի վրա ամրացվել են ավտոմեքենաներից հեռու գտնվելու դեպքում սպաներին ուղեկցելու նպատակով<sup>375</sup>:

Պետական մարմինների աշխատանքի հաշվետվողականության ապահովման նպատակով տեսախցիկների կիրառման վերաբերյալ կարգավորումներ առկա են Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում, Սլովակիայում, Թունիսում և այլն<sup>376</sup>:

<sup>375</sup> Տե՛ս ԱՄՆ-ի «Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալությունը դյուրակիր տեսախցիկներով ապահովելու մասին» զեկույց, հասանելի է <https://www.aclu.org/other/strengthening-cbp-use-body-worn-cameras> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>376</sup> Տե՛ս Ֆրանսիայի Ներքին անվտանգության օրենսգիրք, Code de la Sécurité Intérieure, art. L-251 and following, Ոստիկանության հաշվետվողականության համար դյուրակիր տեսախցիկների կիրառումը, Gary Cutlack, 'Police "body cams" make criminals 90 per cent more likely to confess' (Gizmodo, 21 August 2013) [accessed 18 March 2015], Հաշվետվողականության ամրապնդումը Թունիսում, հասանելի է [http://procurement-notices.undp.org/view\\_notice.cfm?notice\\_id=51998](http://procurement-notices.undp.org/view_notice.cfm?notice_id=51998) հղումով և այլն, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



Քաղաքացիների հետ անմիջական շփում ունեցող ստուգումներ իրականացնող (այդ թվում՝ մաքսակետերում) մաքսային և հարկային ծառայողների հանդերձանքի վրա դյուրակիր տեսախցիկների ամրացումը կնպաստի նրանց գործունեության թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, բողոքներում բարձրացված հարցերի արդյունավետ լուծմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է քննարկել քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների հետ ստուգումների ընթացքում անմիջական շփում ունեցող հարկային և մաքսային ծառայողների հանդերձանքին դյուրակիր տեսախցիկներ կիրառելու հարցը:

## 5. Ապրանքը մաքսազերծելիս գործարքի գնի մեթոդը չկիրառելը

Մարդու իրավունքների պաշտպանները իրենց զեկույցներում ու հաղորդումներում բարձրաձայնել են ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծումն անհիմն մերժելու խնդրի մասին:

Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականին ևս բողոքներ է ստացել այն մասին, որ ՊԵԿ-ի մաքսային ծառայությունը տրանսպորտային միջոցների ձեռքբերման գնով մաքսազերծումը մերժում է: Որպես պատճառաբանություն՝ նշվում է փաստաթղթերում ոչ էական, շտկելի թերությունների առկայությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի արժանահավաստության վերաբերյալ մաքսային մարմնի ունեցած կասկածները:

Այս դեպքում հարկ է անդրադարձ կատարել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքին, որի՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդը սահմանող 78-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ եթե մաքսային մարմինները հիմքեր ունեն համարելու, որ հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը հավաստի չեն կամ կեղծ են, ապա նրանք այդ փաստաթղթերի հավաստիության ստուգման նպատակով օգտվում են նույն օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվությունից՝ նշյալ օրենքի 86-րդ հոդվածով նախատեսված մերժման ժամանակ գրավոր ներկայացնելով մերժման հիմք համարվող տեղեկատվությունը և դրա աղբյուրները:

Այդ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած «մաքսային մարմինները հիմքեր ունեն համարելու, որ հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը հավաստի չեն կամ կեղծ են» ձևակերպումը խնդրահարույց է որոշակիության տեսանկյունից, քանի որ թույլ չի տալիս քաղաքացիներին դրա հետ համատեղելու իրենց վարքագիծը և հայեցողական վարքագիծ թույլատրելու պատճառով ստեղծում է կամայական մոտեցման հնարավորություն:

ՀՀ սահմանադրական դատարանը 2014 թվականի թիվ ՄԴՈ-1176 որոշմամբ արտահայտել է հստակ դիրքորոշում այն մասին, որ մաքսազերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից, մինչդեռ, գործնականում հակառակ պատկերն է:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար մաքսային մարմիններին լիազորություն չի ընձեռվում սեփական հայեցողությամբ որոշելու հայտարարատուի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը:

Մասնավորապես, Եվրոպական Միության Մաքսային օրենսգրքով, Նորվեգիայի, Ուկրաինայի, Վրաստանի օրենսդրությամբ հստակ սահմանված են ապրանքների մաքսային

արժեքի որոշման մեթոդները<sup>377</sup>: Ընդ որում, նշված իրավական ակտերում սահմանվում է, որ ապրանքների մաքսային արժեքի յուրաքանչյուր հաջորդ մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ ապրանքների մաքսային արժեքը հնարավոր չէ որոշել նախորդող մեթոդով:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարող ենք նշել, որ նկարագրված օրենսդրական կարգավորումների պատճառով գործում է խնդրահարույց պրակտիկա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է բացառել անհիմն պատճառներով գործարքի գնի մեթոդով մաքսագերծման մերժման դեպքերը:

6. Մտավոր սեփականությամբ պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավատերերի իրավունքների երաշխավորումը

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել մտավոր սեփականությամբ պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավատերերի համար առաջացող խնդիրների վերաբերյալ:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքն իրավատիրոջն իրավունք է վերապահում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների տեղափոխման վերաբերյալ բավարար հիմքեր ունենալու դեպքում դիմել մաքսային մարմնին՝ ապրանքների բաց թողնումը կասեցնելու խնդրանքով: Մաքսային մարմնին ապրանքների բաց թողնումը կասեցնելու դիմումը բավարարում կամ մերժում է յոթնօրյա ժամկետում:

Եթե ապրանքների բաց թողնման կասեցման մասին իրավատիրոջը տեղեկացնելուց հետո տասն օրվա ընթացքում մաքսային մարմինը չի տեղեկացվում, որ գործը հանձնված է դատական մարմիններ, և դատարանը ձեռնարկել է ապրանքների բաց թողնման կասեցումը երկարաձգող հայցի ապահովման միջոց, ապրանքների բաց թողնումը կասեցնելու որոշումը չեղյալ է համարվում: Եթե հայտատուն ապացուցում է դատարան հայցադիմում ներկայացնելու, բայց դատարանի կատարողական թերթը դեռևս ստացած չլինելու փաստը, սկզբնապես կիրառված կասեցման ժամկետը մաքսային մարմինը կարող է երկարաձգել տասն օրը չգերազանցող ժամկետով:

Ստացվում է, որ օրենսդիրը ՀՀ ներմուծվող մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների բաց թողնման առավել երկար ժամկետով կասեցնելու լիազորությունը վերապահել է դատարանին:

Վերոգրյալից հետևում է, որ ապրանքների բաց թողնման կասեցումը երկարաձգող հայցի ապահովման միջոց չկիրառելու հետևանքով վեճի առարկա ապրանքները բաց կթողնվեն և կհայտնվեն ազատ շրջանառության մեջ: Նշվածը կբարդացնի կամ նույնիսկ անհնարին կդարձնի հայցվորի իրավունքների հետագա պաշտպանությունը, մասնավորապես վեճի առարկա ապրանքների հայտնաբերումը և պատասխանողի միջոցներով ոչնչացումը:

Մի շարք դեպքերում իրավատերը մտավոր սեփականության օբյեկտի՝ մաքսային սահմանով ապօրինի տեղափոխումը դադարեցնելու նպատակով հայց է ներկայացնում դատարան: Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնում է

<sup>377</sup> Տե՛ս «Եվրոպական պառլամենտի և խորհրդի կանոնները», հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32013R0952&from=LV> հղումով, Նորվեգիայի «Մաքսային տուրքերի և ապրանքների տեղափոխման մասին ակտ» [https://www.toll.no/contentassets/71f70c1b980a45b8b57098ded3069fd9/act\\_on\\_customs\\_duties\\_and\\_movement\\_of\\_goods\\_0718.pdf](https://www.toll.no/contentassets/71f70c1b980a45b8b57098ded3069fd9/act_on_customs_duties_and_movement_of_goods_0718.pdf), Վրաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, հասանելի է <https://matsne.gov.ge/en/document/download/1043717/105/ru/pdf> հղումով և այլն, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

յոթնօրյա ժամկետում, իսկ վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրվանից ետոյա ժամկետում այն ուղարկում է գործին մասնակցող անձանց:

Լինում են դեպքեր, երբ հայցադիմումի թերությունները վերացնելու նպատակով դատարանն այն վերադարձնում է: Նման դեպքերում հայցադիմումը վարույթ ընդունելու ժամկետը երկարացվում է, սակայն ապրանքների բաց թողնման ժամկետը՝ ոչ: Ստեղծված իրավիճակում իրավատերը հնարավորություն չի ունենում ներկայացնել գործը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը, և մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքները բաց են թողնվում և իրացվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ապրանքային նշանի իրավատիրոջը տրված է բացառիկ իրավունք տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը, այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը: Գրանցված ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի արգելելու երրորդ անձանց առանց իր թույլտվության առևտրային գործունեության ընթացքում օգտագործել ցանկացած նիշ:

Ընդ որում՝ ապրանքային նշանի օգտագործում է համարվում նաև այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների ներմուծումը կամ արտահանումը:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով անդամ պետությունների տարածքներում կիրառվում է ապրանքային նշանի, Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ապառման սկզբունքը<sup>378</sup>:

Նշվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է մտավոր սեփականության իրավունքների սպառման տարածքային սկզբունքը: Ներկայում ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրներից ապրանքների ներմուծումը սահմանափակվել է: Ինչը նշանակում է, որ եթե իրավատերն իր ապրանքային նշանը գրանցել է մաքսային մարմնում, միայն պաշտոնական մատակարարն իրավունք ունի դրանք ներմուծել Հայաստանի Հանրապետություն:

Այսպիսով, մտավոր սեփականության օբյեկտների իրավատերերի իրավունքների պաշտպանության, ինչպես նաև անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի երաշխավորման նպատակով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխությունների իրականացումն անհրաժեշտ է դառնում:

Հաշվի առնելով այն, որ մտավոր սեփականությունն անկյունաքարային դեր ունի գրեթե յուրաքանչյուր տնտեսվարողի համար, և մտավոր սեփականության իրավունքների պատշաճ պաշտպանության ապահովումը կարևոր է տնտեսվարողի գործունեության հաջողության համար՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագծով առաջարկվում է մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման գործընթացի վերաբերյալ գործերի վարույթն ընդգրկել հատուկ հայցային վարույթներում, սահմանել դատարանում նշված գործերի քննության առավելագույն ժամկետ: Մասնավորապես, առաջարկվում է նախատեսել մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման գործընթացի վերաբերյալ գործերը դատարանում քննելու և լուծելու եռամսյա ժամկետ: Սահմանել, որ դատարանը, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնում է ետոյա ժամկետում: Հայցադիմումը վերադարձնելու դեպքում այն կրկին ստացվելուց հետո դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է ոչ ուշ,

<sup>378</sup> Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 26-րդ հավելվածի «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության և պաշտպանության մասին» արձանագրություն:

քան այն կրկին ստացվելու հաջորդ օրը: Նախագծով առաջարկվում է սահմանել, որ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ որոշում է մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման բաց թողնումը մաքսային մարմինների կողմից ժամանակավորապես՝ մինչև գործով վերջնական դատական ակտի կայացումը, կասեցնելու հարցը: Առաջարկվում է նաև սահմանել, որ պատասխանողի շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ դատարանը որոշում է կայացնում կասեցված ապրանքների մաքսային արժեքի հինգ տոկոսի չափով ապահովված գումարը պետական գանձապետական հաշվից դատարանի դեպոզիտ փոխանցելու մասին:

Նախագիծը ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա կազմվել է ամփոփաթեթ, որը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից Նախագիծն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն սահմանված կարգով ընթացք տալու նպատակով և տեղադրվել է իրավական նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ անցնելով հանրային քննարկում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

## 7. Գրքերի բոլոր տեսակների օտարումն ավելացված արժեքի հարկից ազատելը

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել գրքերի օտարման դեպքում ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գանձման վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ օրենսդրությամբ տպագրական որոշակի նյութերի օտարումն ազատված է ԱԱՀ-ից: Մինչդեռ, որևէ արտոնություն նախատեսված չէ, օրինակ, գեղարվեստական գրքերի օտարման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Նախագծով առաջարկվում է գրքերի (այդ թվում՝ էլեկտրոնային) բոլոր տեսակների օտարումն ազատել ԱԱՀ-ից:

ՀՀ հարկային օրենսգրքով ԱԱՀ-ից ազատված են դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը: Ընդ որում, սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

Մինչդեռ, կրթության, մշակույթի, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են: Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը նույնպես պետության քաղաքականության հիմնական նպատակներից է:

Ձեռնարկատիրական գործունեության խթանման կարևոր գործոններ են հարկային բեռի, այդ թվում՝ հարկերի դրույքաչափերի կրճատումը, առանձին հարկերի վերացումը, հարկերի տարբերակված դրույքաչափերի կիրառումը:

Պետք է նշել, որ վերջին տարիներին աշխարհի շատ երկրներ նվազեցրել են գրքերի օտարման հարկային բեռը՝ ընդհուպ մինչև առանձին հարկատեսակների վերացումը:

Այսպես, օրինակ, 2015 թվականին Հրատարակիչների միջազգային ասոցիացիան հրապարակել է զեկույց տպագիր և էլեկտրոնային գրքերի համար նախատեսված ավելացված արժեքի հարկի չափերի վերաբերյալ: Համաձայն նշված զեկույցի՝ աշխարհի 31 երկրում, ինչպիսիք են, օրինակ, Կանադան, Լիբանանը, Հորդանանը, Մեծ Բրիտանիան, Ուկրաինան, Նորվեգիան, Հարավային Ամերիկայի երկրները, տպագրված գրքերի համար սահմանվում է 0% ԱԱՀ: Աշխարհի 31 երկրում, ինչպիսիք են, օրինակ, Մինգապուրը, Ճապոնիան, Թայլանդը, Իռլանդիան, Բելգիան, Կիպրոսը, տպագրված գրքերի համար սահմանվում է նվազեցված ԱԱՀ<sup>379</sup>:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնութագրվում է անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշռով: ԱԱՀ-ն, լինելով պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման հիմնական աղբյուր, բացի զուտ ֆիսկալային գործառնությունից, ունի նաև կարգավորիչ գործառնություն: Հանդիսանալով անուղղակի հարկ և ներառվելով ապրանքի գնագոյացման մեջ՝ այն ապրանքի շուկայական առաջարկի ու պահանջարկի ձևավորման կարևոր գործոն է և անմիջականորեն ազդում է արտադրության ու իրացման ծավալների և որպես հետևանք՝ նաև երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

Գրքերի միջոցով է նաև իրականացվում կրթության իրավունքի ապահովումը, ժողովրդի գրական-մշակութային ժառանգության պահպանումը, զարգացումը, տարածումը, բարեկիրթ քաղաքացիական հասարակության ձևավորումը: Այս տեսանկյունից կարևորագույն բարեփոխում կհամարվի գրքերի (այդ թվում՝ էլեկտրոնային) բոլոր տեսակների օտարումն ԱԱՀ-ից ազատելը:

Նախագծի ընդունումը կնպաստի ՀՀ-ում հրատարակչական գործի, մշակութի, կրթության զարգացմանը: Այն դրական ազդեցություն կունենա նաև ձեռնարկատիրության խթանման համար:

Նախագիծը ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա այն լրամշակվել է և կազմվել է ամփոփաթերթ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է գրքերի բոլոր տեսակների օտարումն ազատել ԱԱՀ-ից:

8. Հակամենաշնորհային կոմպլանսի ինստիտուտի ներդրումը որպես գործարարության պաշտպանության երաշխիք

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների վերաբերյալ:

Բողոքների կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել է ուսումնասիրություն: Պարզվել է, որ ՀՀ-ում բացակայում են տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների կանխարգելման այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան տնտեսվարողին կազմակերպության ներսում բացահայտել խախտումները և վերացնել: Սա մի կողմից հնարավորություն կտա տնտեսվարողին խուսափել տուգանքներից, մյուս կողմից՝ կթեթևացնի վարչարարություն իրականացնող մարմնի ծանրաբեռնվածությունը:

<sup>379</sup> Տե՛ս Նորվեգիայի «Ավելացված արժեքի մասին ակտը», հասանելի է <https://www.skatteetaten.no/globalassets/bedrift-og-organisasjon/avgifter/merverdiavgift/refusjon-av-mva---avgiftsinfo/vat-act---oversatt-versjon-av-merverdiavgiftsloven-updatet-may-2014.pdf> հղումով, Իռլանդիայի «Ավելացված արժեքի կոնսոլիդացիայի մասին ակտը», հասանելի է <http://www.irishstatutebook.ie/eli/2010/act/31/enacted/en/pdf> հղումով, Միացյալ թագավորության «Ավելացված արժեքի մասին ակտը», հասանելի է <http://www.legislation.gov.uk/ukpga/1994/23/contents> հղումով և այլն, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում լայնորեն կիրառվում են տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման ներքին զսպման մեխանիզմներ: Այդ մեխանիզմներից է, օրինակ, հակամենաշնորհային կոմպլանսը:

Այն կազմակերպչական և իրավական միջոցառումների ամբողջությունն է, որն ուղղված է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահանջների պահպանմանը և խախտումների կանխարգելմանը:

Հակամենաշնորհային կոմպլանսի ներդրմամբ տնտեսվարողը կազմակերպության ներսում սահմանում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման և վերահսկողության կանոններ: Արդյունքում տնտեսվարողը հնարավորություն է ունենում կազմակերպության ներսում բացահայտել խախտումները և վերացնել: Սա նաև հնարավորություն է տալիս նրան խուսափել տուգանքներից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է ներպետական օրենսդրության մեջ ներդնել հակամենաշնորհային կոմպլանսի ինստիտուտը:

Հակամենաշնորհային կոմպլանսի ներդրմամբ օրենսդրությամբ իրավասու մարմինն իրավունք կվերապահվի սահմանելու հակամենաշնորհային պահանջների պահպանման արտաքին կանոններ: Այս կանոնների հիման վրա տնտեսվարողը ներքին ակտով կսահմանի տնտեսական մրցակցության օրենսդրության պաշտպանության ներքին կանոններ: Օրինակ՝ տնտեսվարողի ներքին ակտով կսահմանվեն հակամենաշնորհային օրենսդրության խախտման ռիսկերի նվազեցմանը, տնտեսվարողի կողմից հակամենաշնորհային կոմպլանսի կիրառման նկատմամբ հսկողության իրականացմանն ուղղված միջոցառումներ և այլն: Հակամենաշնորհային կոմպլանսի ներդրմամբ տնտեսվարողները հնարավորություն կունենան պարզել կազմակերպությունում առկա տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները և կանխել դրանց հետագա տարածումը:

Կոմպլանսը կարևոր նշանակություն կունենա նաև խախտումների հայտնաբերման դեպքում տնտեսվարողի մեղքի հաստատման, իրավախախտման պատճառների վերհանման և պատասխանատվության համաչափության ապահովման տեսանկյունից:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է հակամենաշնորհային կոմպլանսի ներդրման միջազգային փորձը:

Այսպես, Եվրոպական միությունում մրցակցային հարաբերությունները կարգավորվում են Եվրոպական միության պայմանագրով, որը կոմպլանսի մասին նորմեր չի պարունակում: Մակայն անդամ պետությունների հակամրցակցային մարմիններն ընդունել են խորհրդատվական բնույթի փաստաթղթեր, որտեղ սահմանված են կոմպլանսի հիմնական հատկանիշները:

Եվրոպական հանձնաժողովը 2011 թվականին հրապարակեց տեղեկատվական թերթիկ «Կոմպլանսի հարցեր» վերնագրով<sup>380</sup>: Այստեղ մանրամասն պարզաբանվում է հակամրցակցային օրենսդրությունը պահպանելու պարտավորությունը, մրցակցային շուկայի հիմնական կանոնները, իրավախախտ տնտեսվարողի ռիսկերը, սահմանվում է նաև կոմպլանսի ներդրման ռազմավարությունը:

Եվրոպական Միության անդամ մի շարք երկրներում ազգային մակարդակով ուսումնասիրվում են պատժաչափերի իջեցման հնարավորությունը

<sup>380</sup> Տե՛ս Եվրոպական միության մրցակցային օրենսդրության խախտումների համար տուգանքները, հասանելի է [http://ec.europa.eu/competition/antitrust/compliance/index\\_en.html](http://ec.europa.eu/competition/antitrust/compliance/index_en.html) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կազմակերպությունների կողմից հակամենաշնորհային կոմպլանսի առկայության և նրա պահանջների պահպանման դեպքում: Այսպես, Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում հակամենաշնորհային կոմպլանսի առկայության և նրա պահանջների պահպանման դեպքերում նախատեսվում է տուգանքի իջեցում 10%-ով, իսկ Իտալիայում՝ 15%-ով:

Մեծ Բրիտանիայում 2011 թվականին հրապարակվեց «Ինչպես ձեր բիզնեսը համապատասխանել հակամրցակցային իրավունքի նորմերին» ուղեցույցը<sup>381</sup>, որով կազմակերպություններին առաջարկվեց կիրառել հակամենաշնորհային կոմպլանսը:

ԱՄՆ-ում դատարանները որպես մեղմացուցիչ հանգամանք հաշվի են առնում կազմակերպությունում կոմպլանսի ծրագրի ներդրումը: Սակայն սա չի վերաբերում խոշոր հակամենաշնորհային խախտումներին, օրինակ՝ կարտելային փոխհամաձայնություններին<sup>382</sup>:

2017 թվականի հունվարի 1-ին Ղազախստանի Հանրապետության «Մրցակցության և բնակարանաշինության պետական աջակցության օրենսդրական ակտերում փոփոխություններ մտցնելու մասին» օրենքում ամրագրվեց հակամենաշնորհային կոմպլանսի հասկացությունը<sup>383</sup>:

Ռուսաստանի Դաշնության նախագահի 2019 թվականի մարտի 1-ի Մրցակցության զարգացման պետական քաղաքականության մասին հրամանագրով սահմանվեց իշխանության ֆեդերալ և տարածաշրջանային մարմինների գործունեության մեջ հակամենաշնորհային կոմպլանսի ներդրման պահանջ:

ԱՄՆ-ի հակամենաշնորհային հիմնական օրենքը՝ Շերմանի ակտը, հակամենաշնորհային կոմպլանսի մասին նորմեր չի պարունակում: Սակայն դատարանները պատիժ նշանակելիս, այդ թվում մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման համար, օգտվում են ԱՄՆ-ի դաշնային պատասխանատվության վերաբերյալ ուղեցույցից<sup>384</sup>: Այն խորհրդատվական բնույթի փաստաթուղթ է, որով դատարաններին առաջարկվում է հակամենաշնորհային գործերը քննելիս հաշվի առնել կազմակերպությունում արդյունավետ ներդրված հակամենաշնորհային կոմպլանսի առկայությունը:

Հակամենաշնորհային կոմպլանսի օրենսդրորեն ամրագրումը կապահովագրի տնտեսվարողներին հակամենաշնորհային օրենսդրության խախտումներից և հնարավորություն կտա խուսափել տուգանքներից, մյուս կողմից՝ պետության կողմից կապահովվի տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը և անբարեխիղճ մրցակցության և գերիշխող դիրքի չարաշահման սահմանափակման քաղաքականության իրականացումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ

<sup>381</sup> Տե՛ս «Ինչպես ձեր բիզնեսը համապատասխանել հակամրցակցային իրավունքի նորմերին» ուղեցույց 2011, հասանելի է [https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/284402/oft1341.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/284402/oft1341.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>382</sup> Տե՛ս «Հակամենաշնորհային կոմպլանսի գնահատումը հակամենաշնորհային քրեական հետաքննություն իրականացնելիս», հասանելի է <http://www.justice.gov/atr/public/speeches/308499.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>383</sup> Տե՛ս «Մրցակցության և բնակարանաշինության պետական աջակցության օրենսդրական ակտերում փոփոխություններ մտցնելու մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքը, հասանելի է [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=38924913#pos=2;-256](https://online.zakon.kz/Document/?doc_id=38924913#pos=2;-256) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>384</sup> Տե՛ս Ֆեդերալ դատավճիռների կայացման ուղեցույց, հասանելի է <http://www.ussc.gov/guidelines-manual/2011/2011-8b21> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Նախագծերով առաջարկվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ներդնել հակամենաշնորհային կոմպլանենսի ինստիտուտը:

Առաջարկվում է հակամենաշնորհային կոմպլանենս ներդրած կազմակերպության ներքին ակտով սահմանել տնտեսվարող սուբյեկտի գործունեության իրականացման հետ կապված տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման ռիսկերի գնահատման իրականացման կարգի պահանջներ, տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման ռիսկերի նվազեցման և հակամենաշնորհային կոմպլանենսի կիրարկման նկատմամբ հսկողության իրականացմանն ուղղված միջոցառումներ, հակամենաշնորհային կոմպլանենսի կիրարկման համար պատասխանատու անձանց շրջանակ և այլն:

Նախագծերով առաջարկվում է նաև տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքում տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելիս հակամենաշնորհային կոմպլանենսի ներդրումը և կիրարկումը դիտարկել որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Նախագծերի փաթեթը քննարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ: Այն ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա կազմվել է ամփոփաթեթը և նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:

Հաշվի առնելով վերոնշյալը անհրաժեշտ է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ամրագրել հակամենաշնորհային կոմպլանենսի ինստիտուտը:

9. Հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի օրենսդրությամբ կարգավորման բացակայություն

Դեռևս 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմում ՀՀ օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև հարակից այլ օրենքներով բացակայում է հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման իրավական կարգավորումը: Մինչդեռ, այդ իրավական բացը գործնականում կարող է դառնալ քաղաքացիների իրավունքների խախտման պատճառ:

Այսպես, «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է շահումով խաղի հասկացությունը: Միննույն ժամանակ, համաձայն նույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի՝ նշյալ օրենքի գործողությունը չի տարածվում հեռահաղորդակցության որևէ կապի միջոցով շահումով խաղերի կազմակերպման գործունեության վրա, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

Հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող օրենսդրության, «Վիճակախաղերի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթների համապարփակ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակման և կազմակերպման գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ չի կարգավորվում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է օրենքի նախագիծ, որով առաջարկվում է՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը



փոփոխել այնպես, որ նման խաղերը հեռարձակել հնարավոր լինի միայն գիշերային ժամերին՝ 24:00-ից մինչև 06:00-ն:

Դրանից բացի՝ նախագծով առաջարկվում է սահմանել, որ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հեռարձակողը պարտավոր է հրապարակել առկա զանգերի ծավալի և միացման հնարավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ողջ եթերի ընթացքում տեղյակ պահել զանգի վճարովի լինելու մասին և այդ ամենի հետ մեկտեղ սակագնի վերաբերյալ հավաստի ինֆորմացիան պետք է լինի տեսանելի կամ լսելի: Առաջարկվում է սահմանել նաև անչափահասների մասնակցության արգելքի վերաբերյալ նախագուշացման պարտադիր պահանջ:

Նախագծի մշակման փուլում, ուսումնասիրվել են Ուկրաինայի, Լատվիայի, Մակեդոնիայի, Սերբիայի և Մեծ Բրիտանիայի օրենսդրությունները: Վերոնշյալ բոլոր երկրներում էլ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող շահումով խաղերի հեռարձակմանը տրված է առանձնահատուկ իրավական կարգավորումներ<sup>385</sup>:

Նախագիծը ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա կազմվել է ամփոփաթերթ, և նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

#### 10. Շրջիկ և շրջածախ առևտրի կազմակերպում

2019 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել օրենսդրությամբ շրջիկ և շրջածախ առևտրի իրականացման չափանիշներն ու պայմանները համայնքի ավագանու իրավասությանը վերապահելու վերաբերյալ:

Շրջիկ և շրջածախ առևտրի տեսակներին Պաշտպանն անդրադարձել է 2018 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում<sup>386</sup>:

Բանն այն է, որ նշված հասկացությունների հստակ չտարանջատման հետևանքով օրենսդրության կիրառության պրակտիկան հանգեցնում էր այնպիսի իրավիճակների, երբ Ոստիկանությունը խոչընդոտում էր առևտրի իրականացմանը

2018 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանի կողմից բարձրացվել էր նաև այն հարցը, որ շրջիկ առևտուրը դիտարկվում էր որպես մանրածախ առևտրի տեսակ, սակայն օրենքով որևէ այլ կարգավորում չի նախատեսվում: Մասնավորապես, բացակայում էին դրույթներն այն մասին, թե ովքեր և ինչ ընթացակարգով կարող էին զբաղվել գործունեության նշված տեսակներով, ինչը գործնականում խնդիրներ էր առաջացնում տնտեսվարողների համար:

2019 թվականի հունվարի 24-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ««Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Նշված օրենքով կարգավորում ստացան Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայությունների մատուցման մի շարք հարցեր: Սահմանվեց նաև, որ Երևան համայնքի վարչական տարածքում շրջածախ

<sup>385</sup> Տե՛ս 1994 թվականի փետրվարի 22-ի Օրենքը 2012 թվականի փետրվարի 9-ի փոփոխություններով, [http://search.ligazakon.ua/l\\_doc2.nsf/link1/T124386.html](http://search.ligazakon.ua/l_doc2.nsf/link1/T124386.html), Տե՛ս 07.12.2005 թվականի օրենքը, <https://likumi.lv/doc.php?id=122941> և այլն, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>386</sup> Տե՛ս 2018 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 194-196:

առևտուրը պետք է իրականացվի Երևանի քաղաքապետի կամ նրա որոշմամբ վարչական շրջանի ղեկավարի թույլտվությամբ:

Այնուամենայնիվ, օրենքում տեղ չեն գտել շրջիկ և շրջածախ առևտուր իրականացնողների բարձրացրած մի շարք հարցադրումներ: Այսպես, ոլորտի ներկայացուցիչները, դիմելով Պաշտպանին, առաջարկել էին շրջիկ և շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների տեսակները, շրջիկ առևտրի կետերի միջոցով առևտրի իրականացման չափանիշներն ու վայրերը սահմանել կառավարության որոշմամբ կամ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով, այլ ոչ` համայնքի ավագանու որոշմամբ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Ռուսաստանը, Բելառուսը, շրջիկ և շրջածախ առևտրի իրականացման պայմանները սահմանվում են օրենքով կամ կառավարության որոշմամբ<sup>387</sup>: Սա նպաստում է նաև տարբեր բնակավայրերում միանման առևտրի տեսակների չափանիշների միասնականության ապահովմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը` անհրաժեշտ է օրենքով կամ կառավարության որոշմամբ հստակ իրավական կարգավորման ենթարկել շրջիկ և շրջածախ առևտրի տեսակների իրականացման պայմանները և չափանիշները:

---

<sup>387</sup> Տե՛ս ՌԴ կառավարության 19.01.1998թ. թիվ 55 որոշում, ՌԴ հարկային օրենսգիրք, Բելառուսի Հանրապետության Նախարարների խորհրդի 15.01.2009 թ.թիվ 31 որոշում:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մատուցված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը

2019 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու դեպքում ջրամատակարարում ապահովող ընկերության կողմից բաժանորդների ջրամատակարարումը դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշման (այսուհետ՝ Կանոններ) 74-րդ կետով սահմանված է, որ մատակարարն իրավունք ունի, առնվազն մեկ օր առաջ տեղեկացնելով, դադարեցնել բաժանորդին ծառայությունների մատուցումը բաժանորդի կողմից մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում մատակարարի կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով բաժանորդին զգուշացնելու պահից սկսած 3 օրվա ընթացքում կրկին չվճարելու դեպքում: Ծառայությունների մատուցումը կարող է դադարեցվել նաև այն դեպքում, երբ բաժանորդը մատակարարի ներկայացուցչին առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման կամ ապահավաքակցման նպատակով իր սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք թույլ չի տվել մուտք գործել կամ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը չի հաղորդել:

2019 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Հանձնաժողովին հասցեագրված գրությամբ Պաշտպանը հարցադրում էր արել, թե արդյոք ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը նախատեսում է Կանոններում իրականացնել այնպիսի փոփոխություններ, որով մատուցված ջրամատակարարման ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու դեպքում անձն ամբողջովին չի զրկվի ջրի իրավունքից:

Հանձնաժողովից ստացվել է պարզաբանում այն մասին, որ մատակարարի կողմից նման պահանջի իրագործումը գործնականում անհնար է, քանի որ տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել բաժանորդին մատուցվող ծառայության ոչ ամբողջական՝ մասնակի դադարեցում:

Ըստ Հանձնաժողովի՝ Կանոններով սահմանված մատուցված ծառայության դիմաց չվճարումը չի ենթադրում մատուցվող ծառայության անմիջապես դադարեցում և այն մատակարարի համար սահմանված է ոչ որպես պարտադիր պահանջ, այլ՝ որպես իրավունք: Ընդ որում, Կանոնների 77-րդ կետով որպես լրացուցիչ հնարավորություն սահմանված է, որ մատակարարը չի դադարեցնում բաժանորդին ծառայությունների մատուցումը, եթե վերջինս ներկայացրել է իր կողմից վճարման ենթակա գումարի՝ մատակարարի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ կամ մատակարարի հետ կազմել է դրա մարման ժամանակացույց: Բաժանորդի կողմից նշյալ կետով նախատեսված երաշխիքները կամ ժամանակացույցը խախտելու դեպքում մատակարարն իրավունք ունի, առնվազն մեկ օր առաջ տեղեկացնելով, դադարեցնել բաժանորդին ծառայությունների մատուցումը: Մակայն, եթե բաժանորդը համաձայն չէ վճարման ենթակա գումարի վճարման պահանջի հետ, ապա Կանոնների 35.3, 44-րդ, 47.4, 47.5, 50-րդ կետերով սահմանված դեպքերում մատակարարը վեճը լուծում է դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով բաժանորդին ծառայությունների մատուցումը: Ըստ Հանձնաժողովի պարզաբանումների՝ Կանոնների 35.3, 47.4 և 47.5 կետերով նշված պահանջները սահմանվել են Հանձնաժողովի

2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 455-Ն որոշմամբ Կանոնների լրամշակման արդյունքում:

Այսպիսով, Կանոններով մատակարարին որպես հայեցողական լիազորություն է տրված մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը: Մինչդեռ, բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը չպիտի հանգեցնի վերջինիս ջրի իրավունքից զրկելուն: Թեև մատակարարը գործնականում հաճախ չի օգտվում բաժանորդի ջրամատակարարման դադարեցնելու իր իրավունքից, այնուամենայնիվ Կանոններով պետք է սահմանվի նաև բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու մատակարարի պարտականությունը:

2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 բանաձևով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչվեց որպես մարդու իրավունք և ընդունվեց այն փաստը, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար<sup>388</sup>: Մասնավորապես, ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուրի համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի իրավունքը՝ նրա ամենօրյա պահանջմունքների բավարարման համար: Անվտանգ ջրի աղեկվատ քանակությունն անհրաժեշտ պայման է ջրագրկման հետևանքով առաջացող մահերի կանխարգելման, ամենօրյա անորակ ջրի օգտագործումից առաջացող հիվանդությունների ռիսկերի նվազման համար<sup>389</sup>:

Եթե ջրամատակարարման ծառայություններն իրականացնում են ոչ պետական սուբյեկտները, պետությունը շարունակում է պահպանել ջրի իրավունքի պաշտպանությունն իրականացնելու իր պարտավորությունը: Ջրի իրավունքի իրացման կարևորագույն երաշխիքներն են հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները: Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը սահմանում է, որ կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Ինչպես մարդու մյուս իրավունքները, ջրի իրավունքը ևս ենթադրում է պետության պարտավորությունը հարգելու, պաշտպանելու և իրագործելու այն:

Ջրամատակարարման ծառայությունների տնտեսապես հասանելիության հետ անմիջականորեն կապված է ջրամատակարարման դադարեցման խնդիրը: Ջրամատակարարման դադարեցման դեպքում անձը պետք է ունենա նվազագույն չափաքանակով ջուր՝ անկախ նրա անվճարունակ լինելու հանգամանքից: Վճարումների չկատարման դեպքում պետք է ապահովվի յուրաքանչյուրի իրավունքը օգտվելու ջրի նվազագույն անհրաժեշտ քանակից: Կարևոր է, որպեսզի ջրանջատումը չհանդիսանա սանիտացիայի օգտագործումից զրկվելու պատճառ<sup>390</sup>:

Կոլումբիայի Սահմանադրական դատարանը Կարոլինա Մուրսիա Օտալորան ընդդեմ Էմպրեսաս Պուբլիկաս դե Նեյվա ընկերության գործի քննության ընթացքում արձանագրել է, որ թեև, որպես ընդհանուր կանոն, ջրի և սանիտարական ծառայությունների մատուցումը

<sup>388</sup>Տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձև 2010 թվական (64/292) հասանելի է [http://www.un.org/waterforlifedecade/human\\_right\\_to\\_water.shtml](http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>389</sup> Տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային համաձայնագրի 11-12-րդ հոդվածներ:

<sup>390</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անկախ փորձագիտական զեկույցը խմելու ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ, հասանելի է <https://digitallibrary.un.org/record/685823> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կարող է դադարեցվել վճարումների չիրականացման արդյունքում, այդ հնարավորության ամրագրումը սահմանադրությամբ անթույլատրելի է և ջրամատակարարման ծառայությունը դադարեցնելիս պետք է հաշվի առնել վճարումների չիրականացման պատճառները և այն հիմնարար իրավունքները, որոնք կխախտվեն ջրամատակարարումը դադարեցնելու պարագայում<sup>391</sup>:

Ֆլոր Էնիդ Խիմենես դե Կորեան ընդդեմ Էմպրեսաս Պուբլիկաս դե Մեդելինի գործով Կոլումբիայի Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ջրի իրավունքն ինքնուրույն սոցիալական իրավունք է և պետական մարմինները պարտավոր են առանց որևէ խտրականության ապահովել այդ իրավունքի իրականացումը: Իսկ խոցելի խմբում գտնվող անվճարունակ անձի կողմից վճարում չիրականացնելու հետևանքով ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցումը հակասում է Կոլումբիայի Սահմանադրությանը և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին<sup>392</sup>:

Պորտուգալիայում Ա Էքս Էպալ-Էմպրեսաս Պուբլիկաս դա Ագուաս դե Լիզբոա գործով դատարանն արձանագրել էր, որ մենաշնորհային դիրք ունեցող ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից կյանքի կարևորագույն աղբյուր հանդիսացող ջրի իրավունքը չի կարող սահմանափակվել պայմանագրային պարտավորությունների հիմքով: Այն սահմանեց, որ Սահմանադրությամբ երաշխավորվում է բավարար կենսապայմանների անձի իրավունքը, որի համար կարևոր նշանակություն ունի ջրի հասանելիությունը<sup>393</sup>:

ՌԴ Գերագույն դատարանի 2017 թվականի հունիսի 27-ի պարզաբանումների համաձայն՝ ՌԴ-ն, հանդիսանալով սոցիալական պետություն, սահմանում է սոցիալական աջակցության երաշխիքներ: Սոցիալական աջակցության միջոցներից են բնակելի տարածության և կոմունալ ծառայությունների վճարների համար սուբսիդիաների հատկացումը, կոմունալ վճարումների ծախսերի հատուցումը, սոցիալական աջակցության այլ միջոցներ սահմանումը (բնակելի տարածության և կոմունալ ծառայությունների վճարներից ազատվելը)<sup>394</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարումն իրականացվում է մասնավոր՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ջրամատակարարման իրականացումը մասնավոր ընկերությանը փոխանցելու դեպքում պետությունը պահպանում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելու ու պաշտպանելու Սահմանադրությամբ ամրագրված իր պարտականությունը: Հետևաբար՝ մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չվճարման դեպքում անձն ամբողջովին չպետք է զրկվի ջրի իրավունքից, փոխարենը կարող է կրճատվել ջրամատակարարման տևողությունը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է արձանագրել, որ պետության պոզիտիվ պարտավորությունն է ջրի հասանելիության ապահովումը հասարակության բոլոր շերտերի համար՝ ներառյալ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց, ինչպես օրինակ՝ երեխաները,

<sup>391</sup> Տե՛ս Կարոլինա Մուրսիա Օտալորան ընդդեմ Էմպրեսաս Պուբլիկաս դե Նեյվա ընկերության գործով (Carolina Murcia Otálora c/ Empresas Públicas de Neiva ESP) 2009 թվականի Կոլումբիայի Սահմանադրական դատարանի որոշումը, գործ թիվ T-546/09, 29.03.2009թ.:

<sup>392</sup> Տե՛ս Ֆլոր Էնիդ Խիմենես դե Կորեան ընդդեմ Էմպրեսաս Պուբլիկաս դե Մեդելինի գործով, (Flor Enid Jiménez de Correa c/ Empresas Públicas de Medellín) 2007 թվականի Կոլումբիայի Սահմանադրական դատարանի որոշումը, գործ թիվ T-270/07:

<sup>393</sup> Տե՛ս Ա Էքս Էպալ-Էմպրեսաս Պուբլիկաս դա Ագուաս դե Լիզբոայի գործով (A xEPAL – Empresa Pública das Águas de Lisboa) 2004 թվականի վճիռը, գործ թիվ 685/2004:

<sup>394</sup> Տե՛ս ՌԴ Գերագույն Դատարանի 2017 թվականի հունիսի 27-ի թիվ 22 որոշումը:

տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք: Այս տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում սահմանել այն հաստատությունների ցանկը, որոնք պետք է ապահովված լինեն շուրջօրյա ջրամատակարարմամբ (դպրոցներ, հիվանդանոցներ, ծերանոցներ, նախադպրոցական հաստատություններ, քրեակատարողական հիմնարկներ):

Բացի այդ, անհրաժեշտ է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի թիվ 378-Ն որոշման մեջ կատարել լրացում, որով կսահմանվի, որ նշյալ որոշմամբ նախատեսված դեպքերում ջրամատակարարման դադարեցում իրականացնելիս մատակարարը պարտավոր է խոցելի խմբին դասվող բաժանորդների նվազագույն կարիքների համար ջուր մատակարարել :

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. կատարել յուրաքանչյուր անձին անհրաժեշտ նվազագույն ջրի քանակի հաշվարկներ,
2. փոփոխություններ իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի թիվ 378-Ն որոշման մեջ՝ սահմանելով սպառած ջրի դիմաց սահմանված վարձավճարը չվճարելու դեպքում անձին նվազագույն ջրի քանակով ապահովելու պահանջ:

## 2. Խմելու ջրի մատակարարման խափանումներ

2019 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել բնակելի տներում խմելու ջրի մատակարարումն ըստ սահմանված ժամանակացույցի չիրականացնելու, ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ:

Բարձրացված հարցերի կապակցությամբ ջրամատակարարում իրականացնող ընկերության պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում ջրամատակարարման գրաֆիկների խախտումներ արձանագրվել են պլանային և վթարային ջրանջատումների, պոմպակայաններում առաջացող խնդիրների, այդ թվում՝ հոսանքազրկումների, այլ իրավաբանական անձանց դիմումով կատարված ջրանջատումների ժամանակ:

Ըստ ընկերության՝ հրապարակված գրաֆիկներին համապատասխան ջրամատակարարման ապահովումը գտնվում է ընկերության ուշադրության կենտրոնում, պարբերաբար մշակվում են ինժեներական լուծումներ, որոնք ուղղված են դրանց թվի նվազեցմանը, իսկ հրապարակվող գրաֆիկների ցանկացած փոփոխություն միտված է միայն գոյություն ունեցող պայմանների բարելավմանը:

ՄԱԿ-ի սպառողների պաշտպանության 2016 թվականի ուղեցույցի 72-րդ կետում սահմանվում է ջրամատակարարման ոլորտում անդամ պետությունների պարտավորությունը մշակել, իրականացնել և ամրապնդել խմելու ջրի մատակարարման, բաշխման և որակի բարելավման ազգային քաղաքականություն: Ընդ որում, նշվում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ծառայությունների մատուցման մակարդակի, որակի և տեխնոլոգիայի բարձրացմանը, կարգավորող վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև սպառողների իրազեկման և ծրագրերին հասարակության մասնակցության կարևորությանը<sup>395</sup>:

Չնայած մատակարար ընկերությունն իրականացնում է ջրամատակարարման ընդհատումների թվի նվազեցմանն ուղղված գործողություններ, այնուամենայնիվ, խմելու ջրի ընդհատումների վերաբերյալ շարունակվում են բողոքներ հասցեագրվել Պաշտպանին:

<sup>395</sup> Տե՛ս «Սպառողների իրավունքների պաշտպանության համար» ՄԱԿ-ի ուղեցույց, հասանելի է [http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1\\_en.pdf](http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1_en.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ուսումնասիրել հաճախակի վթարների պատճառները և աշխատանքներ իրականացնել դրանք կանխարգելելու ուղղությամբ:

3. Առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով ջրամատակարարում իրականացնող ընկերության կատարած վերահաշվարկի հետ անհամաձայնություն

2019 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարքերը փոխարինելուց հետո իրականացված վերահաշվարկների վերաբերյալ:

Բողոքների համաձայն՝ ջրամատակարարում իրականացնող ընկերությունը փոխարինել է բաժանորդների ներքին ցանցում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերը, որից հետո դրանք ստուգաչափվել են չափագիտական մարմնի կողմից: Փորձագիտական եզրակացությամբ պարզվել է, որ օրինակ՝ բացակայում է, վնասվել կամ կեղծվել է առևտրային հաշվառքի սարքի կապարակնիքը: Առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով իրականացվել է վերահաշվարկ և այն վճարելու պարտավորությունը դրվել է բաժանորդի վրա:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշման 5-րդ կետով սահմանված է, որ բաժանորդը պատասխանատվություն է կրում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են իր սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածքում տեղակայված առևտրային հաշվառքի սարքի խախտմանը:

Մինչդեռ, հնարավոր է առևտրային հաշվառքի սարքը վնասվեր, օրինակ, ջրամատակարարում իրականացնող ընկերության աշխատակցի կողմից այն ապահավաքակցելու ընթացքում: Հետևաբար, խնդրահարույց իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը, առանց մեղքի ապացուցման, բաժանորդին ներկայացնելը:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականին առևտրային հաշվառքի սարքերը նորով փոխարինելուց հետո իրականացված ստուգաչափման արդյունքներով իրականացված վերահաշվարկների վերաբերյալ հանձնաժողովը ստացել է 126 դիմում: Հարուցվել են վարչական վարույթներ, որոնցից 56-ի դեպքում փաստվել է, որ մատակարարի կողմից խախտում չկա, 63 դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման արձանագրությունները կազմվել են սահմանված ընթացակարգի խախտմամբ: Արդյունքում հանձնաժողովը որոշել է, որ խմելու ջրի վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարը ջրամատակարարում իրականացնող ընկերությունն իրավունք ունի բաժանորդից պահանջելու միայն դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով ծառայությունների մատուցումը: Հանձնաժողով ներկայացրած դիմումներից 7-ը ստացել են դրական լուծում (նշանակված տուգանքի գումարը նվազեցվել է): Ըստ Հանձնաժողովի՝ հարուցված վարչական վարույթներից 108-ի դեպքում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման և ստուգաչափման գործընթացում կանոններով սահմանված ժամկետների և այլ պահանջների խախտման համար մատակարարին պարտավորեցվել է բաժանորդին վճարել տուժանք՝ մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկված միջին ամսական գումարի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2000 դրամը:

Այնուամենայնիվ, առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով վերահաշվարկված գումարը բաժանորդին ներկայացնելու հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ բացակայում են վերահսկողության պատշաճ մեխանիզմները, ինչը գործնականում հանգեցնում է մատակարարի կողմից չարաշահումների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է սահմանել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության առավել խիստ մեխանիզմներ:

4. Տիգրիկական ներգործության միջոցով գազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում առանց մեղքի ապացուցման բաժանորդին պատասխանատվության ենթարկելը

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ առևտրային հաշվառքի սարքերի (գազահաշվիչի) խափանման կամ վնասման դեպքում գազամատակարարում իրականացնող ընկերության կողմից բաժանորդներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Ըստ բողոքների՝ ընկերությունն իրականացրել է գազահաշվիչների փոխարինում և ստուգաչափումներ: Ստուգաչափումների արդյունքներով գազահաշվիչների վրա հայտնաբերվել են խախտումներ և կատարվել են գազի քանակի և արժեքի վերահաշվարկներ: Ներկայացված արդյունքների վերաբերյալ, սակայն, բաժանորդները հայտնել են իրենց անհամաձայնությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի N 95 Ն որոշման 4.1 կետով սահմանվում է, որ բազմաբնակարան շենքերի և առանձնատների բնակիչների, ինչպես նաև կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը՝ տեղակայվում են նրանց բնակարանից կամ սեփականության տարածքից դուրս՝ սպառողներին պատկանող (օգտագործվող) տարածքի արտաքին պատին հնարավոր ամենամոտ կետում: Ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման կետը որոշվում է մատակարարի և դիմող անձի փոխհամաձայնությամբ, որն ամրագրվում է նաև պայմանագրում:

Այսպես, եթե չափազիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտում, որն ըստ մատակարարի պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով և դա վերջին երկու տարիներին առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով:

Եթե երկու տարվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքի մեկից ավելի խախտում հայտնաբերվել է միննույն բաժանորդի մոտ և չափազիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերը, ըստ մատակարարի, պայմանավորված են եղել բաժանորդի միտումնավոր գործողություններով, մատակարարն իրավունք ունի վերահաշվարկված գազի արժեքի կրկնապատիկի չափով հաշվարկելու տույժ:

Այսպիսով, բազմաբնակարան շենքերի և առանձնատների առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են բաժանորդի սեփականության տարածքից դուրս: Սակայն, գազահաշվիչի խափանման դեպքում, եթե ըստ մատակարարի այն պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով, պատասխանատվությունը դրվում է բաժանորդի վրա:



ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում մարդկային գործոնով պայմանավորված՝ բնական գազի առևտրային հաշվառքի սարքի խախտման վերաբերյալ (որը հանգեցրել է բաժանորդի ծախսած բնական գազի քանակի սխալ հաշվառման) հանձնաժողով է ներկայացվել 28 դիմում: Նշված դիմումների հիման վրա իրականացված վարչական վարույթների արդյունքում 4-ի դեպքում չեղարկվել է բաժանորդների ծախսած բնական գազի քանակի վերահաշվարկը, 3-ի դեպքում՝ հարուցված վարչական վարույթները կարճվել են (դիմումատուի՝ բողոք չունենալու մասին գրության հիման վրա), 21 դիմումի դեպքում արձանագրվել է մատակարար ընկերության խախտման բացակայությունը:

Գազամատակարարում իրականացնող ընկերության տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականին ընկերությունը գազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում բաժանորդին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ստացել է 1726 դիմում-բողոք: «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության մշտական գործող համապատասխան հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վերոնշյալ դեպքերը և որոշում է կայացվել թվով 1471 բնակիչ-բաժանորդների և թվով 82 բաժանորդ-կազմակերպությունների ընդառաջել՝ ազատելով վերահաշվարկված բնական գազի արժեքի և տույժի վճարման պատասխանատվությունից:

Այնուամենայնիվ, շարունակում է խնդրահարույց մնալ բազմաբնակարան շենքերի և առանձնատների առևտրային հաշվառքի սարքերը բաժանորդի սեփականության տարածքից դուրս տեղակայված լինելու դեպքում բաժանորդին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ելնելով վերը նշվածից՝ կանոնակարգման ենթակա է առևտրային հաշվառքի սարքերի՝ բաժանորդների սեփականության և վերահսկողության տարածք տեղափոխելու կամ օպերատորի կողմից առևտրային հաշվառքի սարքերի անվտանգությունն ապահովող շուրջօրյա վերահսկողության համապատասխան մեխանիզմներ կիրառելու հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ 95-Ն որոշման մեջ:

5. Էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցումներ և Էլեկտրամատակարարող ընկերության ներկայացրած վճարման հաշիվների հետ անհամաձայնություն

2019 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել Էլեկտրամատակարարող ընկերության կողմից առանց նախապես ծանուցելու կամ սպառած Էլեկտրաէներգիայի համար չվճարելու դեպքերում Էլեկտրաէներգիայի դադարեցման, ընկերության ներկայացրած վճարման հաշիվների հետ անհամաձայնության վերաբերյալ:

Բողոքների համաձայն՝ առանց նախապես ծանուցելու՝ ընկերությունը դադարեցրել է Էլեկտրաէներգիայի մատակարարումը, ինչի հետևանքով նյութական վնաս է պատճառվել քաղաքացիներին:

Անձինք բողոքներ են ներկայացրել նաև Էլեկտրաէներգիա մատակարարող ընկերության ներկայացրած վճարման հաշիվների վերաբերյալ: Ըստ բողոքների՝ մատակարար ընկերության ներկայացրած վճարման հաշիվները չեն համապատասխանում բաժանորդների փաստացի սպառած Էլեկտրաէներգիայի քանակին:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից տեղեկացրել են, որ 2019 թվականի ընթացքում Էլեկտրամատակարարման դադարեցման վերաբերյալ հանձնաժողով է ներկայացվել հինգ դիմում, որից երկուսի դեպքում արձանագրվել է էներգամատակարարող ընկերության կողմից խախտման բացակայությունը՝ քանի որ

էներգամատակարարումը դադարեցվել է առաջացած պարտքի թերվճարումների արդյունքում: Հանձնաժողով ներկայացրած մյուս երեք դիմումի դեպքում էլեկտրամատակարարումը վերականգնվել է, որոնցից մեկի դեպքում էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունն իր՝ «Սպառողների առանձին խմբերին բարեգործական օգնություն տրամադրելու» ծրագրի շրջանակում մարել է բաժանորդի պարտքը, մյուսի դեպքում՝ բաժանորդը վճարել է իր պարտքը, երրորդի դեպքում՝ բաժանորդի գրավոր պարտավորագրի ներկայացման հիման վրա էլեկտրամատակարարումը վերականգնվել է:

Էլեկտրաէներգիա մատակարարող ընկերության պարզաբանումների համաձայն՝ ընկերությունն ունի մշակված և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված տասնամյա ներդրումային ծրագիր, որի ամբողջական իրականացումից հետո էապես կբարելավվի էլեկտրաէներգիայի մատակարարման որակն ու կլրճատվի ընդհատումների թիվը:

Էլեկտրաէներգիայի վթարային արտապլանային ընդհատումների հետ կապված, ընկերությունից տեղեկացրել են, որ նշված տեղեկատվությունը հասանելի է ընկերության կայքում, ինչպես նաև ընկերության շուրջօրյա գործող հեռախոսահամարով:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի սպառողների պաշտպանության ուղեցույցում սահմանված է անդամ պետությունների պարտավորությունը միջազգային փաստաթղթերին համապատասխան մշակելու, զարգացնելու և կատարելագործելու սպառողների պաշտպանության հստակ քաղաքականություն<sup>396</sup>: Ընդ որում, յուրաքանչյուր անդամ պետություն պետք է սահմանի սպառողների իրավունքների պաշտպանության առաջնահերթ ուղղությունները՝ հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական, շրջակա միջավայրի պայմաններն ու բնակչության պահանջումները:

Ըստ նշված ուղեցույցի՝ բոլոր կազմակերպությունները պետք է հարգեն այն պետությունների օրենքները, որտեղ իրականացնում են իրենց գործունեությունը: Գործարարությունը պետք է իրականացվի արդարության և հավասար վերաբերմունքի սկզբունքների պահպանմամբ՝ խուսափելով հատկապես խոցելի խմբերին և անբարենպաստ պայմաններում գտնվող սպառողներին վնասող գործելաճից:

Ուղեցույցում առանձնացվում են կոնկրետ ոլորտներում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, էլեկտրաէներգիայի մատակարարման ոլորտում անդամ պետությունները պետք է իրենց տնտեսական հնարավորություններին համապատասխան ապահովեն համընդհանուր հնարավորություն մաքուր էներգիայի աղբյուրներից օգտվելու համար, մշակեն և իրականացնեն ազգային քաղաքականություն սպառողներին մատչելի գնով էլեկտրաէներգիա մատակարարելու, մատակարարվող էլեկտրաէներգիայի և մատակարարման որակը բարձրացնելու ուղղությամբ: Ուշադրություն պետք է դարձնել նաև նշված ոլորտում սպառողների իրազեկվածության ծրագրերին և հասարակության մասնակցությանը:

Համաձայն նշված ուղեցույցի՝ հանրային ծառայությունների ոլորտում անդամ պետությունները պետք է աջակցեն հանրային ծառայությունների համընդհանուր հասանելիության ապահովմանը, ինչպես նաև մշակեն, իրականացնեն և ամրապնդեն ազգային քաղաքականությունը ծառայությունների մատուցման վերաբերյալ նորմերի և պահանջների կատարելագործման ուղղությամբ՝ հաշվի առնելով խոցելի խմբերում և անբարենպաստ պայմաններում գտնվող սպառողների կարիքները:

<sup>396</sup> Տե՛ս «Սպառողների իրավունքների պաշտպանության համար» ՄԱԿ-ի ուղեցույց, հասանելի է [http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1\\_en.pdf](http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1_en.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Չնայած ձեռնարկված որոշակի քայլերին, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ էլեկտրաէներգիայի մատակարարման ոլորտում բացակայում են այն անհրաժեշտ մեխանիզմները, որոնք կապահովեն սպառողներին, հատկապես խոցելի խմբերում գտնվող, էլեկտրաէներգիայի հասանելիությունը և հնարավորինս կապահովագրեն մատակարար ընկերության չարաշահումներից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ուսումնասիրել վթարային արտապլանային ընդհատումների պատճառները և աշխատանքներ իրականացնել դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ,
2. մշակել վճարումների չիրականացման դեպքերում խոցելի խմբերի սպառողներին էլեկտրաէներգիայի հասանելիության ապահովման մեխանիզմներ:

## 6. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ

2019 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ոռոգման ջրի մատակարարման խափանումների կամ բացակայության վերաբերյալ:

Բողոքների համաձայն՝ որոշ համայնքներում ոռոգման ջրի բացակայության հետևանքով բնակիչները ստիպված են ջուր մատակարարել սեփական ուժերով՝ դույլերով աղբյուրներից ջուր բերելով:

Մեկ այլ բողոքի համաձայն՝ համայնքում կառուցված պոմպակայանը չի գործում, ինչի արդյունքում համայնքի բնակիչների մի մասը զրկված է ոռոգման ջրից:

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի ներկայացրած պարզաբանումների համաձայն՝ ոռոգման ջրի մատակարարման խախտումների վերաբերյալ ստացված դիմումները հիմնականում վերաբերել են ոռոգման ջրի վարձավճարների ճշգրտմանը, արտոնությունների տրամադրման խնդրանքին, ոռոգման համակարգերի վատթար վիճակին, խորքային հորերի շահագործման թույլտվություններին և ներքին ցանցի վերանորոգմանը: Դիմումներին ընթացք տալու նպատակով համապատասխան հանձնարարականներ են տրվել համակարգի ընկերություններին, և դրանց ընթացքը վերահսկվել է:

Ըստ Ջրային կոմիտեի ներկայացրած տեղեկությունների՝ ոռոգման համակարգերի խնդիրներով դիմած քաղաքացիներին օպերատիվ արձագանք է տրվել. փոքրածավալ վթարները տեղում վերացվել են, իսկ ավելի մեծերին տրվել են ժամանակավոր լուծումներ՝ հետագայում ոռոգման համակարգերի հիմնանորոգման ծրագրերում դրանք ներառելու համար:

Չնայած իրականացված որոշակի քայլերին՝ պետք է փաստել, որ ոռոգման ջրի մատակարարման ոլորտը կարգավորման կարիք ունի և խնդիրների համակարգային լուծման ուղղությամբ դեռևս պետք է իրականացնել շարունակական գործողություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել ըստ բաշխման ժամանակացույցի ոռոգման ջրի մատակարարումը և ջրօգտագործման պահանջների կատարումը:

1. Դատարան ներկայացվող ածանցյալ և հիմնական պահանջների ընդդատությունը և փոխկապակցվածությունը

Դեռևս արդիական է Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացված այն օրենսդրական բացը, երբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվում բնույթով ածանցյալ նշանակություն ունեցող պահանջ, որը թեպետ ՀՀ վարչական դատարանի իրավասության տիրույթում է, այնուհանդերձ, չի կարող արդյունավետ գնահատվել առանց հիմնական (քաղաքացիաիրավական) իրավահարաբերությունները գնահատելու:

Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկն ընդդատյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկը ենթակա է առաջին ատյանի դատարանին, իսկ մյուսը՝ վարչական դատարանին, քննում է այն դատարանը, որին ենթակա է հիմնական պահանջը:

Վերը նշված կարգավորումների համապարփակ վերլուծությամբ՝ կարող ենք փաստել, որ հիմնական գործի որոշման հարցում երկու օրենսգրքերն էլ նախատեսում են միևնույն կանոնը և կարգավորումներն այն դեպքերի վերաբերյալ, երբ դատարան ներկայացվում է մեկից ավելի պահանջ և պետք է որոշվի, թե որ դատարանն է քննելու գործը: Հիմնական պահանջի հաշվառմամբ գործի բաշխման տրամաբանությունը ևս մասնագիտական և ընթացակարգային առանձնահատկությունների ապահովմամբ դատական պաշտպանության իրավունքի իրացումն է: Կարևոր է նշել նաև, որ հիմնական և ածանցյալ պահանջների պարագայում ցանկալի է այդ երկուսի միասին քննությունը, որպեսզի ապահովվի գործի լիարժեք քննությունը: Մասնավորապես, հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծման ելքը:

Չնայած վերոգրյալին՝ Պաշտպանին հասցեագրված դիմումներում բարձրաձայնվում է, որ այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորում չեն ստացել բոլոր դեպքերը, ինչի արդյունքում գործը կարող է քննվել այն դատարանի կողմից, որը նման իրավասություն չունի:

Օրինակ՝ դիմումներից մեկով ներկայացված դեպքի շրջանակներում անձը պահանջը ներկայացրել է գործի՝ բացառապես Վարչական դատարանին ընդդատյա մասով: Գործի քննության ընթացքում պարզվել է, որ այդ պահանջի լուծումը կարելի է տալ բացառապես խնդրի մնացյալ հատվածին՝ տվյալ պարագայում իր բնույթով հիմնական քաղաքացիաիրավական հարցին անդրադառնալով: Նշվածի հաշվառմամբ՝ ստացվում է, որ եթե անձը ներկայացնել էր կու պահանջով հայցադիմում, ապա գործը կքննվեր քաղաքացիական դատավարության կանոններով, բայց հանգամանքների բերումով, գործը քննվել է վարչական դատավարության կանոններով՝ միաժամանակ Վարչական դատարանն անդրադարձել է նաև հիմնական՝ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող պահանջին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Սահմանադրության 63-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Անձն իր իրավունքների ենթադրյալ խախտման դեպքում կարող է դիմել դատարան՝ պահպանելով օրենսդրությամբ ամրագրված համապատասխան որոշակի պարտադիր կանոններ:

Օրինակ՝ դատարան դիմելիս հայցվորը դիմում է ոչ թե ցանկացած դատարան, այլ պարտավոր է դիմել այն դատարան, որն իրավասու է ըստ էության քննել և լուծել առկա վեճը: Ստացվում է, որ արդար դատաքննության իրավունքի իրացման համար առաջին քայլն ընդդատությունը որոշելն է, ինչը կարևոր նախապայման է արդարադատության մատչելիության տեսանկյունից: Դատարանների միջև գործերի բաշխումը նաև կարևոր է գործի մասնագիտական առանձնահատկությունների հաշվի առնման և ընթացակարգային հատուկ կարգավորումների նախատեսման տեսանկյունից՝ գործի քննության հարցում ապահովելով մասնագիտական մոտեցում:

Վերոնշյալ տրամաբանության տեսանկյունից էլ դատավարական օրենսգրքերում նախատեսված են կարգավորումներ գործերի ընդդատության և դատարանների միջև գործերի բաշխման տեսանկյունից:

Ըստ այդմ, ստացվում է, որ խնդրո առարկա հոդվածի իրավակարգավորման առարկայում չեն ներառվում այն իրավիճակները, երբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվում բնույթով ածանցյալ նշանակություն ունեցող մեկ պահանջ, որն ինքնին թեպետ ձևական իմաստով ներառվում է Վարչական դատարանի իրավասության տիրույթում, սակայն դրա իրավաչափությանն ու հիմնավորվածությանը գնահատական տալու համար անհրաժեշտ է քննարկել և վերլուծել նաև հիմնական՝ բնույթով քաղաքացիական իրավահարաբերությունը:

Հարցի ուսումնասիրությամբ՝ առաջ է քաշվել նաև այն հարցը, որ երկու օրենսգրքերում միևնույն ինստիտուտը նկարագրելիս օգտագործվում են տարբեր հասկացություններ: Այսպես, երկու օրենսգրքերում առկա են նույնանման կարգավորումներ և երկու դեպքում էլ կանոնակարգվում է այն հարցը, թե որ դատարանը պետք է լուծի փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, սակայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքում օգտագործվում է «ենթակայություն», իսկ վարչական դատավարության օրենսգրքում՝ «ընդդատություն» եզրույթը:

Այսպես, ընդդատությունը դատական ինստիտուտ է, որը կարգավորում է դատարանին ենթակա բոլոր քաղաքացիական գործերի բաշխումը ՀՀ դատական համակարգի առաջին ատյանի կոնկրետ դատարանների միջև<sup>397</sup>:

Դատական ենթակայությունը գործերի շրջանակ է, որոնց քննարկումը և լուծումը ՀՀ օրենսդրությամբ հանձնված է դատական մարմինների իրավասությանը<sup>398</sup>:

Ընդդատությունը ենթակայությունից սահմանազատվում է այն մասով, որ ենթակայության պարագայում որոշվում է, թե արդյոք գործը ենթակա է դատական մարմիններին, թե՛ ոչ, իսկ ընդդատությամբ որոշվում է, թե կոնկրետ որ դատարանը կարող է քննել տվյալ գործը: Այսինքն՝ ընդդատությունը միայն դատարանների (և ոչ թե տարբեր պետական մարմինների) միջև իրավաբանական վեճ լուծելու լիազորության տեղաբաշխումն է, ենթակայությունն իրավաբանական գործերը լուծելու լիազորությունների տեղաբաշխումն է դատական և ոչ դատական մարմինների միջև, իսկ դատական ենթակայության դեպքում գործ ունենք դատական մարմինների իրավասությանը հանձնված գործերի շրջանակի հետ: Ընդդատությունն իրենից ներկայացնում է ենթակայության հետագա զարգացումը:

<sup>397</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունը սխեմաներում, Ս.Գ. Մեղրյան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011 թվական, էջ 75:

<sup>398</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 66:

Ենթակայությունը և ընդդատությունը, չնույնանալով միմյանց հետ, ուղղված են կոնկրետ գործը քննելու և լուծելու հարցում դատարանի լիազորությունների պարզմանը: Սկզբում դատարանին անհրաժեշտ է պարզել, թե տվյալ վեճը ենթակա է արդյոք ընդհանուր իրավասության դատարանին ընդհանրապես, որից հետո պարզել, թե միասեռ դատարաններից կոնկրետ որին է այն ընդդատյա:

Վճռաբեկ դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՎԴ/3465/05/09 քաղաքացիական գործով հայտնել է դիրքորոշում, որ միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճը, եթե այդ պահանջներից մեկն ընդդատյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը:

Վճռաբեկ դատարանը միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճի առարկայական ընդդատության (ենթակայության) մասին խոսելիս կիրառում է «ընդդատություն» բառը: Մինչդեռ, Քաղաքացիական օրենսգրքում և Վարչական դատավարության օրենսգրքում գործող եզրութային տարբերությունը գործնականում կարող է առաջացնել խնդիրներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նշված ակտերում կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ:

## 2. Սնանկության գործերով վարույթների հետ կապված խնդիրներ

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են սնանկության վարույթի և ոլորտը կարգավորող օրենսդրական բացերի վերաբերյալ բազմաբնույթ բողոքներ: Մարդու իրավունքների պաշտպանին 2019 թվականին հասցեագրված այլ բողոքների վերաբերյալ հարկ է նշել, որ 2019 թվականի սկզբին ՀՀ արդարադատության նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, ինչպես նաև հարակից այլ օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագիծ: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացված խնդիրներից մի քանիսի վերաբերյալ ներկայացվել էին հնարավոր կարգավորումներ, սակայն որոշների վերաբերյալ կարգավորումները բացակայում էին: Մարդու իրավունքների պաշտպանի՝ նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքը ներառել է նաև ոլորտում առկա, սակայն նախագծում չներառված խնդիրները կարգավորող առաջարկներ: Պետք է փաստել, որ Պաշտպանի նախագծի շուրջ ներկայացված առաջարկներն ընդունվել են և ներառվել նախագծում: Ազգային ժողովի կողմից նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է 2019 թվականի դեկտեմբերի 12-ին՝ այդպիսով օրենսդրական կարգավորումներ սահմանելով 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդմամբ ներկայացված խնդիրների վերաբերյալ:

Չնայած վերոգրյալին՝ պետք է փաստել, որ 2019 թվականի ողջ ընթացքում ներքոնշյալ հարցերը մնացել են խնդրահարույց, որոնց արդիականության մասին է վկայում Պաշտպանին շարունակաբար հասցեագրվող բողոքները:

Այսպես, խնդիրներից մեկն այն մասին էր, որ օրենքով բավարար կերպով կարգավորված չէր աշխատավարձի նկատմամբ սնանկության վարույթում բռնագանձում տարածելու հարցը: Այսպես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում էր, որ ֆինանսական առողջացման ծրագիր հաստատված չլինելու դեպքում պարտապան ֆիզիկական անձի վաճառքի ենթակա գույքի կազմում չէր ներառվում վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված գույքը,

բացառությամբ դրան հաջորդող 180 օրվա ընթացքում ժառանգությամբ ստացված կամ ժառանգություն բացելու դեպքում ստացման ենթակա գույքի, ինչպես նաև այն գույքի, որը ստացվել էր մինչև սնանկության դիմում ներկայացնելը պարտապանի կնքած գործարքի արդյունքում:

Նշված կարգավորումը չէր բացահայտում, թե աշխատավարձը վաճառքի ենթակա գույք է, թե՛ ոչ: Գործնականում սույն մասով առաջացող հարաբերությունների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ վերը նշված նորմը տարակերպ մեկնաբանությունների էր ենթարկվում և կիրառվում: Մասնավորապես, սնանկության կառավարիչներից շատերը ելնում էին այն կանխավարկածից, որ աշխատավարձը վաճառքի ենթակա գույք է, քանի որ այն տրվում է ՀՀ դրամով: Մակայն պետք է նկատել, որ նշված հոդվածի իմաստով, ինչպես նաև քաղաքացիական օրենսդրության ուսումնասիրությամբ չենք կարող միանշանակ պնդել սնանկության կառավարիչների ներկայացրած դիրքորոշումը: Պետք է փաստել, սակայն, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մի շարք դիմումներ, որոնցով ներկայացվել է վերը նշված պատկերը: Արդյունքում, օրենսդրական կարգավորումն ընկալվում և կիրառվում էր տարակերպ՝ այդ կերպ առաջացնելով հակասություններ սնանկության կառավարիչների, սնանկ ճանաչվող անձանց միջև, ինչի հետևանքով էլ խաթարվում էր ինչպես սնանկ ճանաչվող անձանց, այնպես էլ՝ պարտատերի իրավունքների իրացումը:

Նշված խնդրին օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասով տրվել է կարգավորում առ այն, որ նշված հոդվածը չի տարածվում պարտապանի աշխատավարձից կատարվող գանձումների վրա:

Շարունակելով սնանկության վարույթի վերաբերյալ թեման՝ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել է սնանկության կառավարիչի՝ սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի գրություններին կամ հարցումներին արձագանքելու օրենսդրորեն կոնկրետ ժամկետ սահմանված չլինելու խնդիրը: Ըստ Պաշտպանին հասցեագրած դիմումների՝ նշվածի հետևանքով սնանկության կառավարիչներին հնարավորություն էր տրվում ցուցաբերել անտարբեր վերաբերմունք և կամայականություններ: Չնայած այն հանգամանքին, որ սնանկության կառավարչին, որոշակի դեպքերում, ներկայացված դիմումներին պատասխանելու համար անհրաժեշտ է իրականացնել վերլուծական աշխատանքներ, սակայն պետք է փաստել նաև, որ ժամկետներ սահմանող օրենսդրական կառուցակարգերի բացակայության պարագայում սնանկության գործերով կառավարիչները կաշկանդված չլինելով հնարավորություն ունենան անբարեխղճորեն երկարաձգելու պատասխանի տրամադրումը: Արդյունքում, այդ իրավիճակը խոչընդոտում էր մարդու այս կամ այն իրավունքի իրացմանը:

Սույն հարցի լուծումն ապահովելու համար 29-րդ հոդվածի «Ժա.2» կետով նախատեսվել է, որ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը պատասխանում է պարտապանի կամ պարտատիրոջ դիմումներին և հարցումներին դիմումը կամ հարցումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորման վերլուծությամբ պարզ է դառնում, որ երրորդ անձ գրավատուն իրավունք է ունենում տեղեկանալ և իր հայեցողությամբ որոշակի գործողություններ կատարելով իր գույքի գրավադրումը դադարեցնել:

Սակայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքը որևէ կերպ չէր կարգավորում այն հարցը, թե երբ, ինչ ժամկետներում և ինչ կարգով պետք է երրորդ անձ գրավատուն տեղեկացվի օրենքի 43-րդ հոդվածի դրույթների ուժով ձագող իր իրավունքների մասին:

Քննարկվող հարցը կարգավորող դրույթներ չեն պարունակում նաև Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը:

Բացի այդ, խնդրո առարկա հարցին անդրադարձ է կատարել նաև «Մնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպությունը, նշելով, որ խնդիրն օրենքով կարգավորված չլինելու հետևանքով միասնական պրակտիկա որպես այդպիսին գոյություն չունի, և սնանկության գործով յուրաքանչյուր կառավարիչ աշխատում էր յուրովի:

Վերոգրյալը ստեղծում էր այնպիսի իրավիճակ, երբ օրենսդրորեն սահմանված չէր երրորդ անձ գրավատուին իր գույքի գրավադրումը դադարեցնելու իրավունքի մասին ծանուցելու ընթացակարգ և այդ հիմքով չէր ապահովվում երրորդ անձ գրավատուի՝ իր գույքի գրավադրումը դադարեցնելու իրավունքի իրականացումը, ինչն իր հերթին կարող էր խախտել մարդու սեփականության իրավունքը:

Վերը նշված խնդրի կարգավորումն ապահովելու համար օրենքի 43-րդ հոդվածում նշվել է, որ եթե պարտապանը հանդես է գալիս որպես երրորդ անձ գրավատու, ապա կառավարիչն այդ մասին տեղեկանալու օրվանից հնգօրյա ժամկետում ծանուցում է այդ գրավով գրավատուին պարտապանի չմարված պարտավորությունների մասին:

### 3. Խտրականությունը սեռական կողմնորոշման հիմքով

Խտրականության արգելքը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթից այլ հանգամանքներից, սահմանված է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով:

Խտրականության չենթարկվելու բացարձակ արգելքի գործնական կիրառությունը ենթադրում է նաև բավարար օրենսդրական հիմքերի, մասնավորապես՝ իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի առկայություն, որպիսիք ներպետական օրենսդրությամբ ներկայում բացակայում են:

Ներպետական օրենսդրության պայմաններում անձի սեռական կողմնորոշմամբ պայմանավորված ատելության հիմքով կատարված հանցագործությունները չեն ազդում հանցագործության որակման և պատժի չափի որոշման վրա: Նշվածը կապված է այն հանգամանքի հետ, որ ՀՀ քրեական օրենսգրքի «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները» վերտառությամբ 63-րդ հոդվածով արարքն ատելության հիմքով կատարված լինելու շարժառիթ նախատեսված է միայն ազգային, ռասայական կամ կրոնական ատելությունը, անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ որպես ատելության հիմքով կատարված հանցագործության որակյալ հատկանիշ, ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով նախատեսված չէ: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորմանը, նշել է, որ խտրականությունն անձի սեռական կողմնորոշման հիմքով նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը: Այս հարցը խնդրահարույց է համարել նաև Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած իր այցի արդյունքում ներկայացրած զեկույցում<sup>399</sup>:

<sup>399</sup> Տե՛ս <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149>, էջ 40:



2019 թվականին արձանագրվել են դեպքեր, երբ Մարդու իրավունքների պաշտպանին անձինք դիմել են իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ խնդրով՝ կապված իրենց սեռական կողմնորոշման հետ:

Այսպես, անձն ահագանգով Պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել է, որ ընկերոջ նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքով դիմել է Ոստիկանություն, սակայն Ոստիկանության կողմից պատշաճ գործողություններ չեն իրականացվել՝ պայմանավորված տուժողի սեռական կողմնորոշմամբ:

Խնդրի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմը խնդիրը քննարկել է Ոստիկանության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս պատրաստակամություն է հայտնել դեպքի կապակցությամբ հաղորդում ընդունված չլինելու դեպքում հնարավորինս սեղմ ժամկետներում կապ հաստատել հաղորդում ներկայացրած անձի հետ և ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները: Արդյունքում, բարձրացված խնդիրը դրական լուծում է ստացել:

Մեկ այլ դեպքում բողոք ներկայացրած փաստաբանի պնդմամբ՝ իր վստահորդների նկատմամբ Ոստիկանության բաժնում դրսևորվել է վատ վերաբերմունք՝ կապված իրենց սեռական կողմնորոշման հետ:

2019 թվականի ապրիլի 5-ին խորհրդարանում տեղի ունեցած քննարկմանը հաջորդած իրադարձությունների հետ կապված Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային հայտարարությամբ հանդես եկավ՝ արձանագրելով, որ ասելության ցանկացած խոսք, սպառնալիք կամ բռնության կոչ անթույլատրելի է: Այս երևույթը հատկապես նկատելի է սոցիալական մեդիայում: Ատելությունը, սպառնալիքը կամ բռնության կոչը չի պաշտպանվում խոսքի ազատության երաշխիքներով:

Հայաստանի Սահմանադրությունն ու օրենքները երաշխավորում են բոլորի հավասարությունն օրենքի առջև և բոլոր քաղաքացիների պաշտպանությունը ցանկացած տեսակի բռնությունից կամ դրա սպառնալիքից:

Ըստ այդմ, պետության բոլոր իրավասու մարմիններն են կրում հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ապահովման պարտականություն<sup>400</sup>:

Անընդունելի է վատ վերաբերմունքի, այդ թվում՝ բռնության ցանկացած դրսևորում՝ անկախ նրանից, թե ում նկատմամբ է կատարվել և որտեղ: Յուրաքանչյուր դեպքի առնչությամբ պետությունը պարտավոր է ապահովել բոլոր հանգամանքների ուսումնասիրություն և գործի անաչառ քննություն: Պետք է միջոցներ ձեռնարկվեն նաև միջադեպից տուժած անձանց իրենց անվտանգության վերաբերյալ մտահոգությունների առնչությամբ:

Նման պարտավորություն պետությունն ունի իր բոլոր քաղաքացիների հանդեպ ու այս պահանջը, ինչպես նշվեց, վերաբերում է բոլոր մարմիններին՝ առանց որևէ բացառության:

#### 4. Աղմուկի հետևանքով համակեցության կանոնների խախտումը

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ, որոնք վերաբերել են հանրային սննդի ծառայություն կամ ժամանց կազմակերպելու (ռեստորան, բար-սրճարան և այլն) հետևանքով հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոնների չպահպանմանը: Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած

400

<https://ombuds.am/am/site/ViewNews/750?fbclid=IwAR0g467RR6qDVhl47098TJSXlhwHRxzs V5jidxMZvuBHHYuz hppInQfHw>

բողոքներով ներկայացվել է, որ շենքերի հարևանությամբ գործող ռեստորանները, սրճարանները և հանրային սննդի ծառայություն մատուցող այլ կազմակերպություններ իրենց գործունեությամբ անհանգստություն են պատճառում շենքերի բնակիչներին: Ըստ բողոքների՝ նշված հանրային նշանակության օբյեկտներից օրվա տարբեր ժամերին (հատկապես երեկոյան ժամը 20.00-ից մինչև 23.00-ն) հնչող բարձր երաժշտության և աղմուկի պատճառով խաթարվում է շենքերի բնակիչների հանգիստն ու անդորրը: Խնդրի կարգավորման կապակցությամբ մարդիկ դիմել են տարբեր իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, սակայն արդյունքի չեն հասել:

Նշվածի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից գերակշռող դեպքերում առաջարկվում է դիմել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին՝ աղմուկի մակարդակի չափումներ կատարելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու համար: ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի պարզաբանումների համաձայն՝ որոշ դեպքերում ինչ-ինչ պատճառներով աղմուկի մակարդակի գործիքային չափումներ չի հաջողվում կատարել, որոշ դեպքերում պարզաբանվում է, որ գործիքային չափումներն իրականացնելու պահին խախտումներ չեն արձանագրվել, որոշ դեպքերում էլ՝ աղմուկի մակարդակի չափման արդյունքում արձանագրվում են խախտումներ և իրավախախտները ենթարկվում են վարչական պատասխանատվության: Սակայն հանրային նշանակության նշված օբյեկտները շարունակում են իրենց գործունեությունը շենքերի հարակից տարածքներում և օբյեկտներից հնչող աղմուկը շարունակում է անհանգստություն պատճառել հարակից շենքերի բնակիչներին: Արդյունքում խնդիրը չի կարգավորվում և հարցը շարունակում է համակարգային առումով չլուծված մնալ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 60-րդ հոդվածով սահմանված է, որ առևտրի և սպասարկման բնագավառում քաղաքապետը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի, կենցաղային և սահմանափակման ենթակա ծառայությունների ոլորտում:

Նույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված է, որ հասարակական կարգի պահպանության բնագավառում քաղաքապետը հետևում է համակեցության կանոնների պահպանմանը:

Երևանի քաղաքապետի 2015 թվականի հունիսի 4-ի թիվ 1704-Ա որոշմամբ սահմանված է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության գործառույթներից է նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում գործող հանրային նշանակության օբյեկտներում լրության պահպանման նկատմամբ հսկողությունը:

Երևանի քաղաքապետարանի պարզաբանման համաձայն՝ աղմուկի հետևանքով բնակիչներին անհանգստացնելու վերաբերյալ քաղաքապետարանը ստացել է 178 բողոք, որոնց վերաբերյալ հաղորդումները ուղարկվել են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին: Խնդիրը կարգավորելու համար Երևան քաղաքի ավագանին 2019 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունել է «Երևան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լրությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին» թիվ 175-Ն որոշումը:

Որոշման ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այն կարգավորում է Երևան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում գործունեություն իրականացնող անձանց կողմից լրությունը և (կամ) անդորրն ապահովելը միայն գիշերային ժամերին՝ (23.00-ից մինչև 7.00-ը): Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունները վկայում

են, որ հանրային նշանակության օբյեկտների կողմից հարակից շենքերի բնակիչների լուծումը և (կամ) անդորրը հիմնականում խախտվում է երեկոյան ժամերին մինչև 23.00-ն: Հարկ է նշել նաև, որ նշված որոշումը չի պարունակում «համակեցության կանոն» հասկացությունը սահմանող դրույթ: Սահմանված չեն նաև ծառայությունների բնագավառում գործող օբյեկտներում համակեցության կանոնների պահպանման նկատմամբ քաղաքապետի հսկողության իրականացման բովանդակությունը և միջոցները, համապատասխան ծառայությունը կազմակերպելու կանոնները, որոնք կկանխարգելեն շահառու անձանց հետ հարաբերվելու համակեցության կանոնների խախտումները: Այսպիսով, համակեցության կանոնների չպահպանումը շարունակում է արդիական և համակարգային առումով չլուծված մնալ:

Բացի վերոգրյալից, առկա է նաև Երևանի կենտրոնական փողոցներում զբոսաշրջային սեզոնին թափառաշրջիկ երաժիշտների ամենօրյա երաժշտական գործունեության հետևանքով հարակից շենքերի բնակիչների հանգիստը և անդորրը խանգարելու խնդիրը: Պաշտպանին հասցեագրած բողոքների համաձայն՝ երաժիշտներն իրենց երաժշտական գործունեությունն իրականացրել են Հյուսիսային պողոտայի տարբեր հատվածներում, օրվա բոլոր ժամերին: Ընդ որում՝ բացի սովորական երաժշտական գործիքներից, երաժիշտների կողմից օգտագործվում են նաև էլեկտրադինամիկ բարձրախոսներ, ինչի պատճառով երաժշտությունն առավել բարձր է հնչում և առաջացնում ընդհարումներ տվյալ բնակավայրի բնակիչների և երաժիշտների միջև:

Երևանի քաղաքապետարանից պարզաբանել են, որ օրենքով բացահայտված չէ համակեցության կանոնների հասկացությունը, դրա շրջանակը, այդ թվում՝ նախատեսված չէ վարչական պատասխանատվություն նշված կանոնների խախտման դեպքում: Մեկ այլ պարզաբանման համաձայն՝ ժամը 23.00-ից մինչև 7.00-ը բարձրաձայն երգելու և երաժշտական գործիքներով նվագելու համար կարգազանց անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության, իսկ ժամը 7.00-ից մինչև 23.00-ը շրջիկ երաժիշտների կողմից կազմակերպվող գործունեության իրականացումը չի սահմանափակվում կամ արգելվում ՀՀ օրենսդրությամբ:

ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածով սահմանված է, որ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Քննարկվող խնդրի շրջանակներում հարկ է անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկային: Այսպես, դատարանն իր որոշումներում անդրադարձել է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին՝ նշելով, որ թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ուղղակիորեն չի պաշտպանում առողջ, խաղաղ միջավայր ունենալու իրավունքը, բայց երբ անհատը լրջորեն և ուղղակիորեն վնաս է կրում աղմուկից կամ աղտոտումից, հարցը հայտնվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում<sup>401</sup>:

<sup>401</sup> Sté u Կիրտատոսն ընդդեմ Հունաստանի (Kyratos v. Greece) գործով 2003 թվականի օգոստոսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 41666/98, կետ 52: 410 Sté u Հաթոնը և ուրիշներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom) գործով 2003 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 36022/97, կետ 96: Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain) գործով 2005 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 4143/02, կետ 54:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ բարձրացված հարցը համակեցության կանոնների պահպանման առումով ևս ունի Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարգավորման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է ընդունել հանրային սննդի օբյեկտների և (կամ) թափառաշրջիկ երաժիշտների կողմից հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու կանոններ սահմանող իրավական ակտեր՝ նախատեսելով համակեցության կանոնների որոշակի շրջանակ դրանց պահպանման համար վերահսկողական մեխանիզմներ և պատասխանատվության միջոցներ:

5. Հանրային ուղևորատար տրանսպորտի գերձանրաբեռնվածության, սպասարկման որակի և այլ խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրաձայնել է հասարակական ուղևորատար տրանսպորտի գերձանրաբեռնվածության, տրանսպորտի սպասարկման որակի և այլ խնդիրներ: Հասարակական ուղևորատար տրանսպորտն այն ոլորտն է, որի հետ առնչվում է գրեթե յուրաքանչյուր մարդ:

Տարիներ շարունակ Երևան քաղաքն ունեցել է տրանսպորտային համակարգի հիմնախնդիրներ, որոնց բարելավումը և վերահսկումն օրվա հրամայական է դարձել: Քաղաքային հասարակական տրանսպորտն ապահովում է բնակչության հիմնական մասի տրանսպորտային շարժունակությունը: Այդ իսկ պատճառով, ուղևորատար տրանսպորտի թերզարգացվածությունը մարդկանց համար առաջացնում է մի շարք սոցիալական և այլ տեսակի խնդիրներ և անհարմարություններ:

Հանրային տրանսպորտի աշխատանքը քաղաքային կյանքի որակի կարևոր ցուցիչն է և տեղական իշխանությունների գործունեության գնահատման չափանիշներից մեկը: Քաղաքային ուղևորատար տրանսպորտի հիմնական նպատակն է բնակչությանը տեղափոխել՝ ծախսելով դրա վրա նվազագույն ժամանակ և միջոցներ, ապահովել բարձր հարմարավետություն, անվտանգություն և սահմանել նվազագույն ինքնարժեք:

Հասարակական ուղևորատար տրանսպորտը ոչ միայն տեղափոխում է ուղևորներին, այլ նաև երաշխիք է անձի ազատ տեղաշարժի անխոչընդոտ իրականացման համար: Հասարակական ուղևորատար տրանսպորտի պատշաճ աշխատանքը հնարավորություն է տալիս նաև տրանսպորտից չօգտվող մարդկանց ևս ազատորեն օգտվել ճանապարհներից, քանի որ նվազում է խցանումների քանակը: Ուղևորությունը տնից մինչև աշխատավայր ավտոմեքենայով զբաղեցնում է շատ անգամ ավել քաղաքային տարածություն, մակերես ու ենթակառուցվածքներ, քան մետրոպոլիտենի միջոցով, և շատ անգամ ավելի տարածություն, քան ուղևորությունն ավտոբուսով: Ներկայում մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի սպասարկումն իրականացվում է ավտոբուսներով, տրոլեյբուսներով, միկրոավտոբուսներով և մետրոպոլիտենով:

Նկատի ունենալով վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտի քանակի աճի միտումը՝ անհրաժեշտ է, որ քաղաքային իշխանությունն իրականացնի քաղաքային երթուղային ցանցում մեծ տեղատարողության շարժակազմերի (ավտոբուսների և տրոլեյբուսների) տեսակարար կշիռն ավելացնելու և, զուգահեռաբար, միկրոավտոբուսների շահագործումը բացառելու քաղաքականություն:

Երևան քաղաքի հանրային ուղևորատար տրանսպորտի սպասարկման ընդհանուր որակի անբավարարության խնդիրները 2019 թվականին ևս շարունակում են արդիական մնալ: Ինչպես նախորդ տարի, այնպես էլ ընթացիկ տարում նշված համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Երևանի քաղաքապետարանը պարզաբանել է, որ Երևան քաղաքի հասարակական ուղևորատար

տրանսպորտի բարեփոխումների ամբողջ ծրագիրը (դրա շրջանակներում նոր երթուղային ցանցի ներդրման աշխատանքները) նախատեսվում է իրականացնել 2-4 տարվա ընթացքում: Ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2019 թվականի ընթացքում, քաղաքացիները բազմիցս արտահայտել են դժգոհություններ Երևանի հասարակական տրանսպորտի, հատկապես՝ ավտոբուսների ու միկրոավտոբուսների ոչ պատշաճ աշխատանքի վերաբերյալ:

Այսպես, ընթացիկ տարում բողոքներով ներկայացվել է Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի հասարակական տրանսպորտի ոչ պատշաճ սպասարկման խնդիրը: Մասնավորապես, բողոքի համաձայն՝ Նուբարաշենում գործող միակ հասարակական տրանսպորտը 10 համարի ավտոբուսն է, որն առավոտյան ժամերին ծանրաբեռնված է լինում, ինչի պատճառով բոլորը չէ, որ կարողանում են օգտվել տրանսպորտից: Ըստ բողոքի՝ բնակիչները բազմիցս դիմել են Երևանի քաղաքապետարան, սակայն խնդրին լուծում չի տրվել: Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ 2020 թվականից Երևան քաղաքում ներդրվելու է հասարակական տրանսպորտի նոր ցանց, որի շրջանակներում կկարգավորվի նաև Նուբարաշենի տրանսպորտի հարցը:

2019 թվականին ևս Պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲ ընկերության կողմից մետրոյով երթևեկողների թվի աճին զուգընթաց ուղևորափոխադրումն անվտանգ կազմակերպելու համար շարժակազմի և վագոնների թվի ավելացման հարցի վերաբերյալ:

Ըստ բողոքի՝ Երևանի մետրոպոլիտենն առավոտյան (8.30-9.30 սահմաններում) և երեկոյան, ժամերին աշխատում է խիստ ծանրաբեռնված ռեժիմով, իսկ երեկոյան (18.40-19.30 սահմաններում) շուրջ 5-7 բուպե պարբերականությամբ: Ընդ որում՝ աշխատանքը սովորաբար կազմակերպվում է 2 վագոնով, իսկ խիստ հազվադեպ դեպքերում՝ 3 վագոնով:

Երևանի քաղաքապետարանից ստացված պարզաբանման համաձայն՝ 2019 թվականին ևս Երևանի մետրոպոլիտենով երթևեկողների թվի աճին զուգընթաց ուղևորափոխադրումն առավել անվտանգ և հարմարավետ կազմակերպելու, ուղևորների սպասարկման վիճակը բարելավելու նպատակով մշտապես դիտարկվել է գնացքների երթևեկության չվացուցակը՝ այն դարձնելով ավել արդյունավետ: Մասնավորապես, առավոտյան և երեկոյան ծանրաբեռնված ժամերին երթևեկության գրաֆիկների մեջ կատարվել են փոփոխություններ՝ գիծ է դուրս բերվել լրացուցիչ գնացք, որի արդյունքում փոքրացել են շարժման միջակայքերը:

2020 թվականին, կանխատեսելով մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների ծավալների հետագա աճ, վագոնների նորոգումից հետո նախատեսվում է ավելացնել դրանց թիվը չորսով: Կայարանային համալիրներում մշտական ուշադրության տակ է պահվում լուսավորության և սանիտարական վիճակի բարելավումը՝ դրանք դարձնելով ուղևորների համար առավել գրավիչ: Թեև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրումներն առավել անվտանգ և հարմարավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկում է մի շարք միջոցառումներ, սակայն հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ անհրաժեշտ է մշտական դիտարկումներ իրականացնել նշված աշխատանքներն ուղևորահոսքի աճին զուգընթաց կազմակերպելու ուղղությամբ: Միաժամանակ, շատ կարևոր է քայլեր ձեռնարկել մետրոպոլիտենի ցանցի զարգացման, այն է՝ նոր կայարանի/ների ավելացման ուղղությամբ, ինչը էականորեն կբեռնաթափի մայրաքաղաքի վերգետնյա տրանսպորտային երթևեկությունը:

Անթույլատրելի է, որ հանրապետությունում դեռևս կան այնպիսի համայնքներ, որտեղ առհասարակ չի գործում հասարակական տրանսպորտ: Այսպես, օրինակ, Շիրակի մարզի

Բարձրաշեն համայնքում բացակայում է հասարակական տրանսպորտը<sup>402</sup>: Տրանսպորտի բացակայության պատճառով շատ համայնքների բնակիչներ մեծ դժվարությամբ են հասնում անգամ մարզկենտրոններ<sup>403</sup>: Հասարակական տրանսպորտի բացակայության մասին խոսվում է բազմիցս և պետք է հստակորեն փաստել, որ տրանսպորտի բացակայությունը իրական խոչընդոտ է ստեղծում այնպիսի իրավունքների իրացման համար, ինչպիսիք են՝ կրթության կամ առողջության պահպանման իրավունքները:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացվել են տվյալներ, որ 2019 թվականի ընթացքում իրականացվել են քայլեր ուղորտում առկա բացերը և խնդիրները հնարավորինս շտկելու ուղղությամբ: Մասնավորապես, ըստ նախարարության՝ նոր երթուղիներ են ավելացվել Կոտայքի մարզում՝ երկու բնակավայր ապահովվել է հասարակական տրանսպորտային կապով, իսկ Տավուշի մարզի Բերդ համայնքում գործարկվել է 6 նոր երթուղի: Մինչդեռ, այլ մարզերում նոր երթուղիներ չեն ավելացել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ հանրային ուղևորատար տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ,

2. միջոցներ ձեռնարկել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի (երթուղային ցանցի) բարեփոխման ծրագիրն առավել սեղմ ժամկետում իրականացնելու ուղղությամբ,

3. Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի նոր ցանցի ներդրման ընթացքում առաջին հերթին իրականացնել հասարակական տրանսպորտի ծառայություններն ապահովել այն վարչական շրջաններում, որտեղ առավել ակնառու է խնդրի կարգավորման անհրաժեշտությունը,

4. Երևանի մետրոպոլիտենով ուղևորահոսքի աճի մշտական դիտարկումների միջոցով ուղևորափոխադրումներն իրականացնել ուղևորահոսքի աճին զուգընթաց՝ ավելացնելով շարժակազմը և ընդլայնելով մետրոպոլիտենի ցանցը,

5. միջոցներ ձեռնարկել հանրապետության բոլոր մարզերում հասարակական տրանսպորտի ապահովման ուղղությամբ:

## 6. Ճանապարհների անբարեկարգությունը

Ճանապարհների անբարեկարգության վերաբերյալ խնդիրը Պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրաձայնվում է դեռևս 2015 թվականից: Այս խնդիրն իր բացասական ազդեցությունն է ունենում ինչպես մարդու տեղաշարժման և արժանավայել կյանքի իրավունքների իրացման վրա, այնպես էլ արգելակ է դառնում տուրիզմի, ապրանքափոխանակման և այլ ոլորտների զարգացման ճանապարհին, որոնք առանցքային են պետության զարգացման համար: Ոլորտի պատասխանատու գերատեսչությունների ներկայացրած տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ տարվա կտրվածքով իրականացվում են ճանապարհների բարեկարգման և վերանորոգման զգալի աշխատանքներ, այնուամենայնիվ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս շատ ճանապարհներ գտնվում են ոչ լավ վիճակում:

<sup>402</sup>Տե՛ս «Շիրակի մարզի Բարձրաշեն՝ Բաբրդու լուծարված գյուղի խնդիրները 1 ցուցահանդեսում», հասանելի է <https://www.shantnews.am/news/view/472138.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>403</sup>Տե՛ս «Ընդամենը չորս գյուղ կա, որ ունի տրանսպորտ դեպի Մարալիկ. Մոֆյա Հովսեփյան», հասանելի է <https://azat.tv/yndameny-4-gyux-ka-vor-uni-transport-depi-maralik/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Այսպես, 2019 թվականին բարձրացվել է այն հարցը, որ Հյուսիս-հարավ մայրուղու շինարարության պատճառով բեռնատարների հոսքը Երևան-Գյումրի ճանապարհից Գյումրի-Արմավիր հատված տեղափոխվելու հետևանքով Շիրակի մարզի մոտ 10 կմ ճանապարհահատված դարձել է գրեթե անանցանելի: Մասնավորապես, ըստ զանգվածային լրատվության միջոցներում առկա տվյալների՝ վատ վիճակում է գտնվում, մասնավորապես, Հայկաձորից Ջրափի գյուղ տանող հատվածը, որտեղ առկա փոսերը մեծ դժվարություններ են առաջացնում վարորդների համար<sup>404</sup>: Ճանապարհների անբարեկարգությունը նաև ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների պատճառ է դառնում, այդ թվում՝ մարդու կյանքն ու առողջությունը վտանգող վթարների<sup>405</sup>:

Ճանապարհների անբարեկարգության մասին բարձրաձայնել են Արագածոտնի մարզի Եղնիկ համայնքի բնակիչները՝ նշելով, որ երկար տարիներ համայնքի ճանապարհները չեն վերանորոգվել և գտնվում են անբարեկարգ վիճակում: Ճանապարհների նման վիճակն անհանգստացնում է թե՛ այն բնակիչներին, ովքեր երթևեկում են մեքենայով և փոսերի պատճառով վնասում են սեփական փոխադրամիջոցները, թե՛ այն բնակիչներին, ովքեր ստիպված են օգտվել տաքսի ծառայություններից: Խնդիրը նրանում է, որ տաքսու վարորդները խուսափում, իսկ շատ հաճախ հրաժարվում են մատուցել ծառայություն՝ մատնանշելով համայնքի անանցանելի ճանապարհները<sup>406</sup>:

Ճանապարհների վիճակի բարելավումը, բնականաբար, ենթադրում է շինարարական աշխատանքների պարբերական և մշտական իրականացում: Սակայն խնդրի առավել խորքային և համակարգային լուծումը կապված է ոչ միայն վերջինիս, այլ նաև տարբեր ռազմավարությունների և ոլորտը կարգավորող փաստաթղթերի մշակմամբ և ընդունմամբ: Սրա հետ կապված, պետք է նկատել, որ դեռևս 2018 թվականին շրջանառվել էր, ՀՀ ճանապարհային ռազմավարությունը:

Տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում հանրապետության թե՛ միջպետական, թե՛ ներպետական բազմաթիվ ճանապարհների կամ դրանց առանձին հատվածներում իրականացվել են շինարարական և վերանորոգման աշխատանքներ, իսկ մի շարք ճանապարհահատվածների բարեկարգման աշխատանքներն ընդգրկված են առաջիկա ճանապարհաշինարարական ծրագրերի ցանկում:

Սակայն ուսումնասիրված տեղեկությունները թույլ են տալիս փաստել, որ չնայած կատարված աշխատանքներին՝ հանրապետությունում դեռևս կան հիմնանորոգման կարիք ունեցող ճանապարհահատվածներ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ավելացնել ներքաղաքային և մարզային նշանակություն ունեցող ճանապարհների բարեկարգման համար նախատեսվող ֆինանսավորումը:

## 7. Արտաքին լուսավորությամբ ապահովելու անհրաժեշտություն

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են բողոքներ հանրապետության մարզերի որոշ համայնքների փողոցներում արտաքին լուսավորության ցանցի բացակայության, ինչպես

<sup>404</sup>Տե՛ս «Գյումրի-Արմավիր ճանապարհահատվածը գրեթե անանցանելի է դարձել», հասանելի է <https://www.azatutyun.am/a/30237511.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>405</sup>Տե՛ս <https://shamshyan.com/hy/article/2019/04/20/1122805/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>406</sup>Տե՛ս «Գյուղի ճանապարհը 25 տարի չի նորոգվել. մարդիկ լցնում են փոսերը և կրկնակի վճարում տաքսիներին» հասանելի է <https://armeniasputnik.am/society/20190415/18068445/gyuxi-janaparhy-25-tari-chi-norogvel.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

նան մայրուղային ավտոճանապարհներն արտաքին լուսավորությամբ ապահովված չլինելու վերաբերյալ: Դեռևս 2018 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով բարձրացվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Նոր Խարբերդ 4-րդ փողոցի արտաքին լուսավորության բացակայության հարցը: Ըստ բողոքի՝ նշվածի հետևանքով ժամը 18.00-ից հետո սահմանափակվում է փողոցի բնակիչների տեղաշարժը: Դեռևս նախորդ տարի խնդրի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ արտաքին լուսավորության կառուցման աշխատանքները կնախատեսվեն տարածքի բարեկարգման ծրագրերի հետ: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ վերոնշյալ փողոցի արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքներ չեն իրականացվել: Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ են պահանջվել Երևանի քաղաքապետարանից, որոնց համաձայն՝ 2019 թվականի ընթացքում ապահովվել է թվով 65 փողոցի, փողոցների հատվածների և բակային տարածքների արտաքին լուսավորությունը: 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից «Երքաղլույս» ՓԲ ընկերությանը ներկայացրած չլուսավորված փողոցների, բակային տարածքների և թաղամասերի մոտավոր քանակը հետևյալն է.

Կենտրոն վարչական շրջան-25, Արաբկիր վարչական շրջան-41, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան-28, Աջափնյակ վարչական շրջան-16, Դավթաշեն վարչական շրջան-14, Էրեբունի վարչական շրջան-79, Շենգավիթ վարչական շրջան-84, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան-19, Ավան վարչական շրջան-10, Նոր Նորք վարչական շրջան-3, Նորք-Մարաշ վարչական շրջան-7, Նուբարաշեն վարչական շրջան-15: Վերոնշյալ տեղեկությունների ուսումնասիրությունից հետևում է, որ չնայած իրականացված քայլերին՝ խնդիրն ընդհանուր առմամբ շարունակում է մնալ արդիական, այդ թվում՝ հանրապետության մայրաքաղաքում շտապ լուծման կարիք ունի: Հայտնի է, որ փողոցների արտաքին պատշաճ լուսավորությունը նպաստում է հանցագործությունների թվի նվազմանն ու անկման օրվա երեկոյան և գիշերվա ժամերին: Փաստն այն է, որ գիշերային ժամերին լուսավորության բացակայությունն հանցավորության զգալի աճի ռիսկ է պարունակում:

Վերոգրյալից բացի հարկ է նշել, որ համայնքային զարգացման կարևոր նախապայմաններից է արտաքին լուսավորության էներգախնայող համակարգի ներդրումը, այն է՝ շրջակա միջավայրի ու հանրային առողջության համար անվտանգ արդիական ու էներգախնայող լուսադիոդային (LED) լուսատուների համակարգը: Նշված համակարգի ներդրման արդյունքում էապես կկրճատվեն հանրապետության համայնքների բյուջետային ծախսերը՝ թույլ տալով դրանք ուղղել այլ խնդիրների լուծմանը: Քանի որ, ի տարբերություն այլ լամպերի, լուսադիոդային (LED) լուսատուներն առավել արդյունավետ ու դիմացկուն են, կարող են անհամեմատ ավելի երկար ծառայել՝ սպառելով անհամեմատ պակաս էլեկտրաէներգիա:

Արձանագրենք նաև, որ այսօր դեռևս արտաքին լուսավորության մալուխները գրեթե ամբողջությամբ վերգետնյա են և անցնում են հենասյուների վրայով, որոնց վրայով անցնում են նաև այլ մալուխներ: Վերգետնյա մալուխներով ծանրաբեռնված հենասյուները, ինչպես նաև դրանց ոչ արդյունավետ բաշխվածությունը համայնքների բնակչության և երթևեկի համար ստեղծում է բավականին վտանգավոր իրավիճակ: Գեղագիտական առումով ևս դրանք բացասաբար են ազդում մայրաքաղաքում և հանրապետության այլ քաղաքներում արտաքին տեսքի վրա: Ուստի խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է գոյություն ունեցող մալուխային ցանցերն անցկացնել ստորգետնյա խրամուղիներով, ինչը կբարձրացնի հետիոտնի և երթևեկի անվտանգության աստիճանը, ինչպես նաև կբարելավի հանրապետության քաղաքների արտաքին տեսքը:



Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

1. առաջիկա տարիներին միջոցներ ձեռնարկել ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ հանրապետության այլ քաղաքների և գյուղերի փողոցներն ու հանրապետության մայրուղային և այլ ճանապարհներն արտաքին լուսավորության ցանցով ամբողջովին ապահովելու ուղղությամբ,

2. նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսումները, այն է՝ այլ լամպերի փոխարեն հանրապետության ամբողջ տարածքում աստիճանաբար ներդնել շրջակա միջավայրի ու հանրային առողջության համար անվտանգ արդիական ու էներգախնայող լուսադիոդային (LED) լուսատուների համակարգեր,

3. գոյություն ունեցող մալուխային ցանցերն անցկացնել ստորգետնյա խրամուղիներով:

8. Թափառող շների վնասազերծման և ստերիլիզացման խնդիր

Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են մի շարք բողոքներ, որոնք վերաբերել են Երևան համայնքում և հանրապետության այլ համայնքներում թափառող կենդանիների (շներ) վնասազերծման և թվաքանակի կանոնակարգման խնդրին:

Հայտնի է, որ Երևան համայնքում մինչև 2018 թվականի հուլիսի 3-ը թափառող շների վնասազերծմամբ և ստերիլիզացմամբ զբաղվել է ընկերություն, որն իրականացրել է նաև վտանգ ներկայացնող թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքներ: Այնուհետև նշված ընկերությունն գործունեությունը դադարեցրել է և երկար ժամանակ որևէ կազմակերպություն թափառող կենդանիների վնասազերծմամբ, ստերիլիզացմամբ և դրանց թվաքանակի կանոնակարգմամբ չի զբաղվել: 2019 թվականի մարտի 12-ին ստեղծվել է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը: Կազմակերպության նպատակները և խնդիրները սահմանված են Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 7-ի թիվ 259-Ա որոշմամբ, որով վերջինս լիազորված է իրականացնել կենդանիների վնասազերծման և դրանց թվաքանակի կանոնակարգման համալիր ծրագրեր: Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրած բողոքների համաձայն՝ թափառող շները Երևան քաղաքի տարբեր հատվածներում հաճախ են հարձակվում անցորդների վրա: Ընդ որում՝ ըստ բողոքների՝ քաղաքացիների վրա հարձակվող թափառող շներից շատերի ականջներին ամրացված են կողավորված տեղեկություն պարունակող հատուկ պիտակներ, այսինքն՝ այդ շներից շատերի նկատմամբ նոր ստեղծված համայնքային կազմակերպության կողմից արդեն իսկ որոշակի ծառայություններ (ախտորոշումներ, պատվաստումներ, բուժումներ, վիրահատություններ, խնամք և այլն) են իրականացվել: Սակայն, նույնիսկ այդ ստերիլիզացված շները Երևան քաղաքի տարբեր հատվածներում (այդ թվում՝ դպրոցների և մանկապարտեզների մոտ) շրջում են խմբերով, հարձակվում մարդկանց (երեխաների) վրա, գրանցվել են նաև կծելու դեպքեր:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել նաև ՀՀ մարզերում թափառող շների խնդրահարույց վնասազերծման վերաբերյալ: Մասնավորապես, բողոքներից մեկի համաձայն՝ Գյումրի համայնքի Փանյան փողոցի վրա գտնվող կարի արտադրամասի մոտակայքում գրեթե ամեն օր երեխաների ներկայությամբ իրականացվում է թափառող շների զանգվածային սպանդ: Ըստ բողոքի՝ բարձրացված հարցով դիմել են Գյումրու համայնքապետարան և Շիրակի մարզպետարան: Գյումրու համայնքապետարանից Պաշտպանին ներկայացված պարզաբանման համաձայն՝ Գյումրի համայնքի տարածքում թափառող շների վնասազերծման ծառայությունը մատուցվում է «Գյումրու զբոսայգիներ և պուրակներ» ՀՈԱԿ-ի կողմից 2019 թվականի ապրիլին կնքված պայմանագրի հիման վրա: Թափառող կենդանիների հիմնախնդրի լուծման գործընթացը

ներառում է քաղաքում առկա թափառող շների վիճակագրության, քարտեզագրման, նույնականացման և խնամքի ապահովման աշխատանքներ: Ոլորտում առկա խնդիրների լուծումը պահանջում է բավականին մեծ գումարներ, իսկ բյուջեի սղության պատճառով հնարավոր չէ տվյալ պահին նշված խնդիրների համապարփակ լուծումը: Ըստ պարզաբանման՝ համայնքում չկան ո՛չ հատուկ կացարաններ թափառող շներին հավաքելու, բուժելու համար, ո՛չ կազմակերպություններ, որոնք կգրադվեն կենդանիների հետագա խնամքով, ո՛չ էլ համապատասխան մասնագետներ: Քաղաքացիների կողմից ահազանգեր են ստացվում քաղաքի տարբեր հատվածներում թափառող շներին վնասազերծելու խնդրանքով, այդ իսկ պատճառով քաղաքի մարդաշատ վայրերում առաջնահերթ վնասազերծվում են թափառող շների առավել ագրեսիվ տեսակները, որոնք վտանգ են ներկայացնում բնակչության համար: Վնասազերծումը կատարվում է վաղ առավոտյան՝ ժամը 06.00-ից սկսած՝ մինչև բնակիչների անցուդարձը սկսվելը. երեխաների ներկայությամբ շների զանգվածային սպանդ տեղի չի ունեցել: Համայնքապետարանից հավաստիացրել են, որ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ՝ բնակչության անվտանգությունն ապահովելու և թափառող շներին ավելի քաղաքակիրթ եղանակներով վնասազերծելու ուղղությամբ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ Երևան համայնքում ստեղծվել է համայնքային կազմակերպություն, որը կանոնադրության համաձայն՝ պետք է իրականացնի Երևան քաղաքում թափառող կենդանիների (շներ) վնասազերծման և նրանց թվաքանակի կանոնակարգման համալիր ծրագիր մշակում, քաղաքում առկա թափառող շների վիճակագրության ուսումնասիրություններ, համարակալման, քարտեզագրման, նույնականացման և խնամքի աշխատանքներ: Սակայն կազմակերպությունը նշված աշխատանքները պատշաճ չի կազմակերպում: Նշվածի պատճառով էլ թափառող շների թվաքանակն անկանոն ավելանում է, արձանագրվում են ագրեսիվ պահվածքի և մարդկանց (երեխաների) վրա հարձակվելու և նույնիսկ կծելու դեպքեր: Գյումրի համայնքում և հանրապետության մարզերի այլ համայնքներում չկան հատուկ կացարաններ թափառող շներին հավաքելու, բուժելու համար, ինչպես նաև կազմակերպություններ, որոնք կգրադվեն կենդանիների հետագա խնամքով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով Ընտանի կենդանիների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի դրույթներին, արձանագրել է, որ երբ կողմը համարում է, որ թափառող կենդանիների թիվն իրենից խնդիր է ներկայացնում, պետք է ձեռնարկի համապատասխան օրենսդրական և/կամ վարչական միջոցառումներ դրանց թվի կրճատման համար, այն միջոցներով, որոնք չեն առաջացնում ցավ, խոշտանգում և տառապանք<sup>407</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը և խնդրի կարգավորման հրատապությունը՝ անհրաժեշտ է՝

1. Երևան համայնքում իրականացնել թափառող կենդանիների (շներ) վնասազերծման և դրանց թվաքանակի կանոնակարգման պատշաճ միջոցառումներ,
2. Գյումրի համայնքում և հանրապետության այլ համայնքներում սեփական միջոցներով և (կամ) դոնոր կազմակերպությունների օգնությամբ ստեղծել թափառող շներին հավաքելու և բուժելու համար հատուկ կացարաններ, ինչպես նաև կազմակերպություններ, որոնք կգրադվեն կենդանիների հետագա խնամքով, վնասազերծման և դրանց թվաքանակի կանոնակարգման աշխատանքներով:

<sup>407</sup> Տե՛ս Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 9718/03, կետ 49: Տե՛ս Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 9718/03, կետ 33:

Զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը: Սահմանադրության այս դրույթը փոխարկացվում է սահմանադրական մեկ այլ պահանջով՝ «զինված ուժերը... քաղաքացիական վերահսկողության ներքո են»<sup>408</sup>: Իրավունքի գերակայության և ժողովրդավարական վերահսկման մեխանիզմների անհրաժեշտությունն ըստ էության ընդգծված է ոչ միայն սահմանադրական մակարդակում: Այն ամրագրված է օրենսդրական հարթություններում նույնպես: Պատահական չէ և հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը ենթակա է կազմակերպման և իրականացման, ի թիվս այլնի, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա<sup>409</sup>:

Դրանով է պայմանավորված մոտեցումը և պնդումն այն մասին, որ ժողովրդավարական ցանկացած երկիր իր անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից պետք է համարի մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները: Եվ դա ունի սկզբունքային նշանակություն, քանի որ անվտանգությունը չի հակադրվում ժողովրդավարությանը: Ավելին՝ անվտանգությունը և ժողովրդավարությունը համարժեք երևույթներ ու միմյանց լրացնող արժեքներ են: Այս հարաբերակցությունն առավել արդյունավետ է դարձնում թե՛ մեկի, թե՛ մյուսի ապահովումը:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում 1994 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններով» ամրագրվել է, որ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական (քաղաքացիական) վերահսկողությունը կայունության և անվտանգության անբաժանելի մասն է: Նաև ընդգծվել է, որ քաղաքացիական հասարակությանը զինված ուժերի ինտեգրումը ոչ այլ ինչ է, քան ժողովրդավարության կարևորագույն դրսևորում<sup>410</sup>:

Վարքագծի այդ կանոններն ամրագրում են չորս հիմնական սկզբունքներ<sup>411</sup>, որոնցում ընդգծված է «համազգեստով քաղաքացի» գաղափարը: Այս գաղափարի կամ հայեցակարգի էությունն այն է, որ յուրաքանչյուր պետությունում միջազգային իրավական նորմերի լույսի ներքո պետք է ապահովվի զինձառայողների՝ մյուս քաղաքացիների հետ հավասար և նույն իրավունքներն ունենալու հնարավորությունը: Այն մշտապես զուգակցվում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքի հետ, իսկ վերջինիս ամրապնդման և երաշխավորման գործում իր յուրահատուկ դերն ունեն Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները:

Ասվածը հատկապես արտահայտված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մեջ՝ նկատի ունենալով յուրաքանչյուր անձի՝ Պաշտպանի աջակցությունը ստանալու սահմանադրական իրավունքը և սահմանադրական օրենքով Պաշտպանին վերապահված լիազորությունների շրջանակը:

<sup>408</sup> ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

<sup>409</sup> «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված:

<sup>410</sup> Տե՛ս Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններ, կետ 20, <http://www.osce.org/fsc/41355>:

<sup>411</sup> Այս մասին նաև՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 266:

Մույն տարեկան հաղորդման մեջ արտացոլված են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող և ոլորտում առկա տարբեր հարցեր, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների, ինչպես նաև զինապարտության փուլերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված խնդիրներ:

Խնդիրները վեր են հանվել երեք հարթություններում՝ նախքան զինվորական ծառայությունը, զինվորական ծառայության ընթացքում և ծառայությունից հետո: Ուստի, վերլուծությունները չեն սահմանափակվում միայն զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հարցերով, այլ ընդգրկում են ավելի լայն շրջանակ՝ ընդհանրապես զինված ուժերում համակարգային խնդիրները:

Ուսումնասիրություններն արվել են, և խնդիրները վեր են հանվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, զինվորական հաստատություններ չհայտարարված այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների՝ զինապարտների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն առնչվող հրապարակումների հիման վրա:

Նկատի ունենալով պաշտպանության և անվտանգության ոլորտի կարևորությունը և դրանում առկա խնդիրներին պատշաճ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը, ինչպես և նախորդ տարիներին, չի սահմանափակվել հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացրել է նաև լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների լուծումը ժողովրդավարական յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է: Հայաստանի համար այն է՝ ավելի կարևոր է, քանի որ հանրային ընկալումներում բանական արդարացիորեն համարվում է անկախ պետականության ամենաարժեքավոր ձեռքբերումներից մեկը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ զինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են: Սա ենթադրում է, որ երկրում, ի թիվս այլնի, պետք է ձևավորված լինեն և անընդհատ կատարելագործվեն այն մեխանիզմները, որոնք արդյունավետ են դարձնում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը (protection and promotion):

Զինված ուժերի անձնակազմի համար կարևոր է, որ նրանք ծառայության ընթացքում իրենց խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն: Ավելին՝ յուրաքանչյուր զինծառայող ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, ընդ որում՝ այդ մարմինը կարող է դատական չլինել, սակայն պետությունն, ըստ էության, պետք է ապահովի այն նույն երաշխիքները, որով օժտված են դատական մարմինները՝ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար<sup>412</sup>:

Չնայած զինված ուժերում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ զինվորական աստիճանակարգության վերահսկողության ներքո չգտնվող անկախ օմբուդսմանի ինստիտուտների նպատակն է քննության առնել զինված ուժերում ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների վերաբերյալ գանգատները, ինչպես նաև զինվորական քաղաքականության բացերը և զինված ուժերի համակարգային հիմնախնդիրները: Այս առումով, օմբուդսմանի դերը կարևորվում է մի քանի առումներով՝

1) նրա անկախ վերահսկողությունը բարձրացնում է վստահությունը զինված ուժերի նկատմամբ՝ վարչարարության գործընթացում ավելի մեծ թափանցիկություն ստեղծելով և չվնասելով ենթակայության աստիճանակարգը.

2) որպես վերահսկող անկախ մարմին՝ խթանում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը.

3) զինված ուժերում ուժեղացնում է պատշաճ կառավարման, քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքները.

4) զինծառայողներին պաշտպանում է նրանց իրավունքների խախտումներից, չարաշահումներից և անարդարացի որոշումներից.

5) զինվորական հրամանատարներին օգնում է հասնել ներքին բարեփոխումների և կատարելագործել զինված ուժերի ներքին ծառայությունը:

Արդյունքում, օմբուդսմանը դրական ներգործություն է ունենում զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու և զորքերի մարտական համախմբվածության վրա:

<sup>412</sup> Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագիր, բաժին «ԻԲ»:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես ինքնուրույն գործառույթներ իրականացնող և անկախ սահմանադրական ինստիտուտ, ըստ էության, դարձել է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության միակ հաստատությունը, որն ունի իրավապաշտպան բնույթի վերահսկողական սահմանադրական ընդհանուր մանդատ: 2016 թվականին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը, որի շնորհիվ էլ ավելի ամրապնդվեց Մարդու իրավունքների պաշտպանի՝ զինված ուժերում անձանց իրավունքների ապահովման գործիքակազմը:

Պաշտպանի առաջնահերթություններից է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, ներառյալ՝ զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների ապահովումը: Այդ պաշտպանության համար Պաշտպանն ունի մասնագիտացված և անհրաժեշտ ու բավարար կարողություններ՝ հետևելու զինված ուժերում իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների ապահովմանը:

Դեռևս 2016 թվականին հունիսին Պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Քրեադատավարական և զինձառայողների իրավունքների պաշտպանության վարչությունը, իսկ 2017 թվականի հունիսին՝ Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, որը մասնագիտական ստորաբաժանում է և գործում է նույն թվականի մայիսին ստեղծված՝ Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում: Բաժնի գործունեությունը համակարգում է Դեպարտամենտի ղեկավարը:

Առանձին բաժնի ստեղծումը պայմանավորված էր ինչպես Պաշտպանին հասցեագրվող բողոքների շարունակական աճով, այնպես էլ համակարգային ուսումնասիրությունների և ոլորտում առկա օրենսդրական խնդիրները լուծելու համար առաջարկություններ ներկայացնելու պահանջով: Բաժինը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանությամբ բոլոր փուլերում (զինվորական հաշվառում և գորակոչ, զինվորական ծառայության բուն ընթացք, պահեստագոր):

Պաշտպանին զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աջակցող մյուս մարմինը Պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով խորհուրդն է: Պաշտպանին առընթեր գործող այդ խորհրդում ընդգրկված են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և հոգեբանության, սոցիոլոգիայի ոլորտի անկախ մասնագետներ, ինչպես նաև կապիտան, ապրիլյան պատերազմի հերոս Արմենակ Ուրֆանյանի մայրը: Զինձառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելու նպատակով կազմակերպվել են խորհրդի նիստեր, որոնց ընթացքում կատարվել են զինձառայողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված ուսումնասիրություններ, վերլուծություններ, վեր են հանվել համակարգային խնդիրներ և դրանց հիման վրա մշակվել են համապատասխան առաջարկներ:

Խորհրդի աշխատանքների արդյունավետությունն ապահովող կարևոր գործոն է նաև այն, որ դրան մասնակցում են քաղաքացիական հասարակության և Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչներ: Խորհուրդը լայն հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության և իրավասու պետական կառույցների ներգրավմամբ կազմակերպելու մասնագիտական քննարկումներ՝ զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող բազմաթիվ կարևորագույն հարցերի շուրջ<sup>413</sup>:

<sup>413</sup> Խորհրդի նիստում բարձրացվում են պաշտպանության և անվտանգության ոլորտում առկա խնդիրներ, դրանք համատեղ քննարկվում են, և առաջարկվում խնդրի լուծման տարբերակներ: Արդյունքում, այդ

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացվում է 3 գլխավոր ուղղություններով՝ 1) մինչև զինվորական ծառայության անցնելը զինապարտների իրավունքների պաշտպանություն, 2) զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանություն, 3) զինվորական ծառայության ավարտից հետո նախկին զինծառայողների իրավունքների պաշտպանություն:

Այս ամենով հանդերձ՝ Պաշտպանի ուշադրության կենտրոնում են ոչ միայն զինապարտների, այլ նաև նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությունը:

2. Հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը

Մարդու իրավունքների պաշտպանի առաքելություններից է լինել կապող օղակ կամ կամուրջ պետության և քաղաքացիական հասարակության միջև: Պաշտպանի համար այս առաքելության իրականացումը մեծապես կարևորվում է բանակին առնչվող խնդիրների մասով: Այս առումով, 2019 թվականի ընթացքում էլ ավելի ակտիվացել համագործակցությունը պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, բանակում մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ հանրային կառույցների հետ:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցություն է եղել ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի և մի շարք այլ մարմինների հետ: Ընդ որում, որպես պետական մարմինների հետ համագործակցության լավագույն և հաջողված օրինակ, առանձնացման ենթակա է Պաշտպանության նախարարության ղեկավարության հետ ձևավորված համագործակցությունը, որը դրականորեն է անդրադարձել նաև կառույցների ստորաբաժանումների միջև փոխգործակցությանը: Հատկապես կարևորվում է ՀՀ պաշտպանության նախարարության մի շարք կառույցների, այդ թվում՝ Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի, զինկոմիսարիատների, ռազմաբժշկական վարչության, ռազմաբժշկական հանձնաժողովների, հոսպիտալների պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործուն համագործակցության առումով: Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետք է ողջունելի համարել Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեությունը, որը ներառում է նաև Պաշտպանության նախարարության թեժ գծի աշխատանքի համակարգումը<sup>44</sup>: Այս առումով, կարևոր է թվում Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվության ինստիտուտը, ինչը թույլ է տալիս ոչ միայն հրապարակային, այլև տեսանելի դարձնել կատարված աշխատանքը:

Պաշտպանի ներկայացուցիչների կողմից չհայտարարված այցեր են իրականացվել նաև կայագորային զինվորական հոսպիտալներ, որտեղ Մարդու իրավունքների պաշտպանին

---

առաջարկները Պաշտպանի աշխատակազմում ամփոփվում և ըստ անհրաժեշտության ներկայացվում են իրավասու գերատեսչություններին: Օրինակ, 2019 թվականի հունիսի 8-ին տեղի է ունեցել Պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստը, որի ընթացքում ներկայացվել ու քննարկվել է Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ արտացոլված ՀՀ զինված ուժերում առկա խնդիրներն ու առաջարկվող լուծումները: Նիստին նաև մասնակցել են Պաշտպանության նախարարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ (հասանելի է <http://www.pashtpan.am/media/13165.html> հղումով):

<sup>44</sup> Ըստ ներկայացված հաշվետվության՝ 2019 թվականին ստացված զանգերը մոտ 12%-ով շատ են եղել 2018 թվականին ստացված զանգերից:

հասցեագրված բողոքների շրջանակներում ուսումնասիրվել են զինծառայողների բուժման ընթացքը, արդյունքները և զինծառայողների բժշկական փաստաթղթերը, տեղի են ունեցել քննարկումներ հոսպիտալների հրամանատարական կազմի հետ: Պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել Կենտրոնական բժշկական և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների նիստերին, ստացված բողոքների շրջանակներում համատեղ քննարկվել են զինապարտ քաղաքացիների առողջական վիճակին առնչվող հարցերը: Պաշտպանության նախարարության հետ համատեղ քննարկումների և այցերի արդյունքում նշանակվել են առողջական վիճակի կրկնակի փորձաքննություններ, գորակոչիկները ստացել են տարկետման իրավունք, զինծառայողներն ուղեգրվել են զինվորական հոսպիտալներ և ստացել համապատասխան բուժում:

Դրականի հետ մեկտեղ՝ կան հարցեր, որոնք շարունակում են մնալ չլուծված: Խոսքը մեծապես վերաբերում է Պաշտպանի նախորդ զեկույցներում կամ իրավունքների ու ազատությունների խախտում արձանագրող Պաշտպանի որոշումներում տեղ գտած առանձին առաջարկությունների չկատարմանը: Սա խնդրահարույց է, երբ խոսքը ոչ թե համակարգային խնդիր վերահանող առաջարկությունների կատարման, այլ պարզ կարգավորում ենթադրող խնդիրների լուծման մասին է: Օրինակ՝ 2017 և 2018 թվականի տարեկան հաղորդումներում առաջարկվել էր զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը կամ դիմումը նախատեսել՝ որպես ծառայողական քննության անցկացնելու հիմք: Այս առաջարկությունն ընդամենը ենթադրում է Պաշտպանության նախարարի հրամանում լրացում: Չնայած առաջարկի վերաբերյալ Պաշտպանության նախարարության միանշանակ դրական արձագանքին՝ հրամանում լրացումը դեռևս արված չէ:

2019 թվականին Պաշտպանության նախարարության հրավերով Պաշտպանի աշխատակազմի Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի ներկայացուցիչները մասնակցել են կառավարության մի քանի որոշումների նախագծերի վերաբերյալ արդյունավետ քննարկումների: Բացի դրանից, Պաշտպանի աշխատակազմի և Պաշտպանության նախարարության մի շարք ստորաբաժանումների միջև տեղի են ունեցել քննարկումներ՝ փոխգործակցության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության որոշ խնդիրների կապակցությամբ: Քննարկվել են խնդիրների լուծման կոնկրետ ուղիները, ինչպես նաև հստակեցվել են Պաշտպանության նախարարության և ԶՈԻ Գլխավոր շտաբի ստորաբաժանումների հետ հետագա համագործակցության ուղղությունները: Կարևորվել են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար նման քննարկումները, որոնք նպաստում են խնդիրների կապակցությամբ արագ լուծումներ գտնելուն<sup>415</sup>:

Դրական արդյունքներ է տվել նաև պետական մյուս կառույցների հետ համագործակցությունը՝ հատկապես գորակոչների ընթացքում: Օրինակ՝ գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող 18 տարին չլրացած անձանց, ինչպես նաև միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող անձանց տարկետում տրամադրելու և այլ հարցերի առնչությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության արդյունքում բարձրացված խնդիրները ստացել են լուծում:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից կարևոր է նաև համագործակցությունը փաստաբանների

<sup>415</sup>Տե՛ս

[https://ombuds.am/am/site/ViewNews/1091?fbclid=IwAR2NN1bzebGbg3amoz454wBUJSjHBZB6NB2\\_v7E7kEv1xWOe\\_hKWJSFz\\_mZg](https://ombuds.am/am/site/ViewNews/1091?fbclid=IwAR2NN1bzebGbg3amoz454wBUJSjHBZB6NB2_v7E7kEv1xWOe_hKWJSFz_mZg):



հետ, ինչը կրել է պարբերական և մասնագիտական բնույթ: Իրենց վստահորդներ հանդիսացող զինծառայողների իրավունքների համատեղ պաշտպանությունը դարձել է ամենօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասը:

Լինելով կամուրջ հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության միջև՝ Մարդու իրավունքների պաշտպանի համար չափազանց կարևոր է միասնական հարթակ ստեղծել բանակում առկա խնդիրները վեր հանելու, դրանք քննարկելու և անհրաժեշտ լուծումներ գտնելու ուղղությամբ: Այստեղ չափազանց կարևոր է հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացումը, որը հնարավորություն կտա արդյունավետ և պրոֆեսիոնալ կերպով իրականացնել ոլորտի մշտադիտարկումն ու առկա թերությունների մասին իրազեկումը: Այս ուղղությամբ 2019 թվականին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործնական և համակարգային խնդիրներին նվիրված մի շարք կլոր սեղան քննարկումներ և աշխատաժողովներ:

Պաշտպանի համար նաև խիստ կարևոր է սեփական գործունեության հրապարակայնությունը, ինչպես նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնողների աշխատանքի տեսանելի լինելը:

3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում

Մարդու իրավունքների պաշտպանի համար առաջնահերթություններից է միջազգային, այդ թվում՝ եվրոպական իրավական չափանիշների կիրարկումը զինվորական օրենսդրությունում: Այստեղ մեծապես կարևորվում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային մասնագիտացված կառույցների հետ համագործակցության կատարելագործումը:

Մարդու իրավունքների իրավական չափանիշների ներդրման գործում կարևոր է եղել «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանի զինված ուժերում» Եվրոպայի Խորհրդի ծրագիրը, որին 2019 թվականի մարտին հաջորդել է «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի Հանրապետության զինված ուժերում» ծրագիրը: Վերը նշված ծրագրի հիմնական գործընկերներից է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ, կլոր սեղան քննարկումներ, աշխատաժողովներ, որոնք ուղղված են եղել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանը, միաժամանակ, այդ միջոցառումներին ներգրավված են եղել նաև հասարակական կազմակերպությունների և պետական այլ կառույցների ներկայացուցիչներ: Մի շարք աշխատաժողովների և ճանաչողական այցերի միջոցով Պաշտպանի ներկայացուցիչները միջազգային համագործակցության շրջանակներում ուսումնասիրել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննվող գործերում որպես երրորդ կողմ Օմբուդսմանի հաստատության ներգրավվածության, ինչպես նաև դատարանի վճիռների կատարման գործընթացում վերջինիս մասնակցության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների զարգացմանը:

Անվտանգության ոլորտի վերահսկողության վերաբերյալ միջազգային չափանիշների ներդրման գործում չափազանց կարևոր է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության «Անվտանգության ոլորտի կառավարումը Հայաստանում» ծրագիրը, որի հիմնական շահառուներից է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբերի 16-18-

ը Պաշտպանի աշխատակազմի (այդ թվում՝ մարզային ստորաբաժանումների) ներկայացուցիչների համար իրականացվել է դասընթացավարների վերապատրաստման դասընթաց: Ծրագրի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի համար մշակվում է «Անվտանգության ոլորտի գործերի վարման մոդելային չափանիշներ» ձեռնարկը, որի նպատակն է նպաստել անվտանգության ոլորտում, այդ թվում՝ զինված ուժերում, մշտադիտարկման և բողոքների քննության մեխանիզմների զարգացմանը:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը, որպես աշխատանքի նոր ուղղություն, 2018 թվականից սկսած Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե է ներկայացնում հատուկ դիրքորոշումներ՝ կապված Հայաստանի դեմ կայացված ՄԻԵԴ վճիռների կատարման հետ: Սա էապես ամրապնդում է Եվրոպայի խորհրդի մասնագիտացված կառույցների, այդ թվում՝ ԵԽ Նախարարների կոմիտեի ՄԻԵԴ վճիռների կատարման դեպարտամենտի հետ համագործակցությունը: Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Եվրոպայի խորհրդի աջակցությամբ 2019 թվականի փետրվարին Ստրասբուրգում կազմակերպվել է ճանաչողական այց՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննվող գործերում որպես երրորդ կողմ Օմբուդսմանի հաստատության ներգրավվածության, ինչպես նաև դատարանի վճիռների կատարման գործընթացում վերջինիս մասնակցության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների զարգացման նպատակով: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Եվրոպական դատարանի վճիռներին, որոնք առնչվում են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը: Եվրոպայի խորհրդի աջակցությամբ 2019 թվականին Ծաղկաձորում կազմակերպվել է սեմինար, որի ընթացքում քննարկվել է նաև ՄԻԵԴ վճիռների կատարման փուլում ձեռնարկվող միջոցառումները:

ՄԻԵԴ վճիռների կատարմանը Հայաստանի մարդու իրավունքների ազգային հաստատության մասնակցությունը միջազգային լավագույն փորձի օրինակներից է: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նման դիրքորոշում ներկայացնելը կարևոր նշանակություն ունի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման ու հետագայում նման խախտումները բացառելու գործում: Սա հատկապես կարևոր է այն առումով, որ Պաշտպանն օգտագործում է միջազգային կառուցակարգերի հավելյալ հնարավորությունները՝ զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրները վեր հանելու, իր առաջարկություններն այլընտրանքային ուղիներով ներկայացնելու և դրանք կատարելուն հետևողականորեն խորամուխ լինելու առումով:

Որպես օրինակ, կարելի է նշել զինծառայողների իրավունքների հարցով «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման շրջանակներում ներկայացված դիրքորոշումը<sup>416</sup>, որն առաջին քայլն էր տվյալ ուղղությունում: Հատկանշական է, որ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրքում կատարված փոփոխություններով հատուկ դիրքորոշման մեջ կարգապահության ամրապնդման ոլորտում Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկները սկզբունքորեն ընդունվել են:

Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարը, որպես 2018 թվականին Յոհաննեսբուրգում

<sup>416</sup> Հատուկ դիրքորոշման մեջ անդրադարձ է կատարվել «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» վճռի կատարման համար սկզբունքային մի շարք խնդիրների, ներառյալ՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և զինված ուժերի կարգապահության ամրապնդման անհրաժեշտության հարցերին: Այդ ուղղությամբ Պաշտպանի կողմից արվել են կոնկրետ առաջարկություններ:

կայացած 10-րդ վեհաժողովի շարունակություն, 2019 թվականի հոկտեմբերին մասնակցել է Զինված ուժերի հարցերով օմբուդսմանական հաստատությունների միջազգային կոնֆերանսի (ICOAF) տարեկան հանդիպմանը, որն անցկացվել է Բոսնիա և Հերցեգովինայի մայրաքաղաք Սարաևոյում:

Միջոցառման ընթացքում Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ԺՆՆԻ կենտրոնի և ավելի քան 45 երկրներից (Աֆրիկյան երկրներ, Իսրայել, ԱՄՆ, Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ և այլն) ժամանած օմբուդսմանների հաստատությունների 100-ից ավելի ներկայացուցիչների միջև փորձի փոխանակման նպատակով տեղի են ունեցել մասնագիտական քննարկումներ օմբուդսմանական հաստատությունների կարողությունների զարգացման, սպառնալիքներին դիմակայելու և փոփոխվող ու դժվար միջավայրերին հարմարվելու վերաբերյալ: Քննարկվել է նաև, թե ինչպես օմբուդսմանական հաստատությունները, չվտանգելով իրենց մանդատը, կարող են խուսափել կառույցի քաղաքականացումից, ինչպես նաև անաչառության ու անկախության վրա հնարավոր հարձակումներից: Վեհաժողովի ընթացքում հատուկ ընդգծվել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի փորձը՝ որպես զանգվածային լրատվության միջոցների հետ նախականիսիչ աշխատանքներ իրականացնելու լավագույն օրինակ:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1. Զինվորական հաշվառման և գորակոչի կազմակերպման գործընթացը

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 49-րդ կետի համաձայն՝ պոտենցիալ գորակոչիկները պետք է ստանան լիարժեք և մանրամասն տեղեկություններ գորակոչի բոլոր ասպեկտների, զինվորական ծառայությունը սկսելու և զինվորական ծառայություն անցնելու շրջանում ընդգրկված պարտավորությունների առանձնահատուկ բնույթի մասին:

Զինապարտ քաղաքացիների ծանուցման գործընթացի, այդ թվում՝ գորակոչիկների պատշաճ ծանուցված լինելու, զինվորական կոմիսարիատների տրամադրած ծանուցագրերի ձևերի և միատեսակ պրակտիկայի ապահովման տեսանկյունից կարևոր է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշմամբ հաստատվել է «Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի անցկացման կարգը»<sup>417</sup>:

Զորակոչիկների իրազեկվածության բարձրացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն 2018 թվականին հրապարկված «Տեղեկատվական գրքույկ գորակոչիկների համար» և «Զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները» տեղեկատվական գրքույկները, որոնք, սակայն, Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում դեռևս չեն հրապարակվել: Դրա անհրաժեշտության մասին նշվել էր նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման մեջ:

Զորակոչի ընթացքում ծանուցման գործընթացի հետ կապված խնդիրներ են արձանագրվել նաև 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքում:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետը:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 8-րդ կետի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը շարքային կազմի պարտադիր զինվորական գորակոչի ենթակա քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ զինվորական կոմիսարիատին քաղաքացու տրամադրած էլեկտրոնային հասցեին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Կառավարության նշված որոշման կարգավորումներից, սակայն, պարզ չէ, թե ինչ գործողություններ պետք է իրականացնի զինվորական կոմիսարիատն այն դեպքերում, երբ ծանուցագիրը քաղաքացուն առձեռն հանձնել չի հաջողվել, և բացակայում է նրա էլեկտրոնային հասցեն:

<sup>417</sup> Կարգն ընդունելու անհրաժեշտության հարցը բարձրացվել էր 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդմամբ, էջ 272:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքով պարզվել է, որ քաղաքացին 2019 թվականի ամառային գորակոչին զինկոմիսարիատ ներկայանալու համար չէր ծանուցվել, սակայն դեպքի առթիվ հարուցվել է քրեական հետապնդում:

Զինվորական կենտրոնական դատախազությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ զինկոմիսարիատի աշխատակիցներն այցելել են գորակոչիկի բնակության հասցե՝ զինկոմիսարիատ ներկայանալու վերաբերյալ նրան գրավոր ծանուցագրեր հանձնելու նպատակով, սակայն երկու դեպքում էլ բնակարանի դուռը փակ է եղել, իսկ հարևանների հայտարարությամբ նա գտնվել է արտերկրում, և որևէ տեղեկություն հայտնի չի եղել վերադառնալու մասին, ինչի կապակցությամբ կազմվել են համապատասխան զեկուցագրեր:

Ճիշտ է, բողոքի քննարկման արդյունքում՝ քաղաքացու նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, սակայն պարզ չէ, թե նման իրավիճակներում քաղաքացուն ծանուցված համարելու համար հստակ ինչ գործողություններ պետք է իրականացնի զինվորական կոմիսարիատը (օրինակ, ՀՀ քրեական դատավարության, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով առկա է անձին ծանուցված համարելու նպատակով տարբեր պետական մարմինների կողմից իրականացվող գործողությունների հաջորդականություն):

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ քաղաքացիներին պահեստագործում չհաշվառելու վերաբերյալ:

Օրինակ՝ քաղաքացուն նախկինում նպատակային ուսումնառության համար տրվել էր տարկետում մինչև 2019 թվականի հուլիսի 15-ը, իսկ մինչև 2019 թվականի ձմեռային գորակոչն սկսվելը լրացել էր քաղաքացու 27 տարեկանը: Այսպիսով, քաղաքացին 2019 թվականի ամառային գորակոչի ընթացքում չի գորակոչվել զինված ուժեր, քանի որ ամառային գորակոչը հայտարարված է եղել այն քաղաքացիների համար, ում նախկինում տրված տարկետումը դադարում է մինչև 2019 թվականի հունիսի 30-ը ներառյալ, իսկ դրանից հետո չէր կարող գորակոչվել, քանի որ լրացել էր նրա 27 տարեկանը:

Արդյունքում, քաղաքացին չի գորակոչվել զինված ուժեր, սակայն զինվորական կոմիսարիատը հրաժարվել է նրան հաշվառել պահեստագործում, ինչի պատճառով քաղաքացին չէր կարողանում ստանալ անձնագիր և ուսումնառության նպատակով մեկնել արտերկիր:

Մինչդեռ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են քաղաքացիներին պահեստագործում հաշվառելու հիմքերը, իսկ նույն մասի 10-րդ կետով սահմանվում է, որ պահեստագործում հաշվառվում են նաև օրենքով սահմանված կարգով զինվորական հաշվառման ենթակա այլ կարգավիճակ ունեցող քաղաքացիները:

Ճիշտ է, բողոքի քննարկման արդյունքում քաղաքացին հաշվառվել է զինված ուժերի պահեստագործում, սակայն Պաշտպանին բողոք հասցեագրած մեկ այլ քաղաքացի, ում տարկետում տրվել էր երկար ժամկետով, և նա նույնպես չի կարող գորակոչվել 27 տարեկանը լրացած լինելու պատճառով, դեռևս չի հաշվառվել պահեստագործում: Նմանատիպ դեպքերը խնդրահարույց են քաղաքացիների ազատ տեղաշարժման, կրթության և այլ հիմնարար իրավունքների տեսանկյունից:

Մեկ այլ խնդիր է արձանագրվել նաև զինվորական գրքույկում սխալ (թերի) գրառում կատարելու հետևանքով քաղաքացուն զինվորական կոմիսարիատում չհաշվառելու հետ կապված: Մասնավորապես, զինվորական կոմիսարիատում չհաշվառելու պատճառ է հանդիսացել պարտադիր զինվորական ծառայության համար քաղաքացու ոչ պիտանի

ճանաչվելու հիմք հանդիսացած՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածի կոնկրետ հոդվածը զինվորական գրքույկում նշված չլինելը:

Բողոքի քննարկման արդյունքում, զինվորական գրքույկում առկա թերությունը վերացվել է, և քաղաքացին հաշվառվել է զինվորական կոմիսարիատում:

Անհրաժեշտ է նշել, որ բացառապես զինվորական գրքույկում որոշակի թերությունների առկայության պատճառաբանությամբ քաղաքացիներին չհաշվառելու դեպքեր Պաշտպանը նախկինում չի արձանագրել, սակայն նշվածը խնդրահարույց է քաղաքացիների վրա հավելյալ բեռ դնելու տեսանկյունից: Զինվորական կոմիսարիատները մեկ միասնական համակարգի մաս են, ուստի անհրաժեշտ է ձևավորել միասնական պրակտիկա և հետագայում բացառել նմանատիպ դեպքերը:

Կարևոր է ընդգծել «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» («Պատիվ ունեմ») և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած շարքային կազմի պարտադիր զինծառայողի հետ պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» («Ես եմ») որոշումների առկայությունը: Նշված ծրագրերը մի դեպքում հնարավորություն են տալիս գորակոչիկներին ուսումնառության նպատակով ստանալ տարկետում և ուսումնառությունից հետո ավելի խորը մասնագիտական գիտելիքներով գորակոչվել ծառայության, իսկ մյուս դեպքում՝ ծառայություն անցնել հատուկ պայմաններով, ինչպես նաև ստանալ որոշակի արտոնություններ ծառայության ընթացքում և դրանից հետո: Այս ծրագրերի իրականացումն, իհարկե, մեծապես ուղղված է Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայությունն ավելի գրավիչ դարձնելուն և քաղաքացիների մեջ ծառայության անցնելու ցանկությունը բարձրացնելուն:

Ըստ Պաշտպանության նախարարության վերոնշյալ ծրագրերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով Երևան քաղաքում և բոլոր մարզերում կազմակերպվել են խորհրդակցություններ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ուսումնական հաստատությունների տնօրենների մասնակցությամբ: Զորակոչիկների և նրանց ծնողների շրջանում առաջարկվող ծրագրերի վերաբերյալ տարվել են բացատրական աշխատանքներ, իսկ գորակոչի ենթակա բոլոր գորակոչիկները գրավոր ծանոթացվել են վերը նշված ծրագրերով զինվորական ծառայության գորակոչվելու պայմաններին:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ Պաշտպանին հասցեագրված բողոքներով քաղաքացիների կողմից բարձրացվել են վերոնշյալ ծրագրերի վերաբերյալ իրազեկված չլինելու և դրա արդյունքում այդ ծրագրերով ծառայություն անցնելու դիմումներ չներկայացնելու հետ կապված հարցեր:

Քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու, նմանատիպ ծրագրերի առկայության, պայմանների և դիմելու կարգի պարզաբանման ուղղությամբ աշխատանքները պետք է իրականացվեն կցագրման գործընթացն իրականացնելուց սկսած, ինչն էլ ավելի արդյունավետ կդարձնի և կխթանի այդ ծրագրերով ծառայություն անցնելու ցանկություն ունեցող քաղաքացիների թվի բարձրացումը: Իրազեկվածության բարձրացմանն ուղղված այդպիսի աշխատանքները հնարավոր է իրականացնել ինչպես զինվորական կոմիսարիատների կողմից, այնպես էլ իրազեկման այլ եղանակներով (օրինակ՝ հանրակրթական հաստատությունները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակներում):

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. հրապարակված տեղեկատվական նյութերն էլեկտրոնայնացնել և տեղադրել Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում, որի շնորհիվ մինչև զորակոչային տարիքի հասնելը քաղաքացիները կկարողանան իրազեկված լինել զինծառայողների իրավունքներին և պարտականություններին,

2. մշակել ծանուցագիրը քաղաքացուն առձեռն հանձնելու անհնարինության, ինչպես նաև էլեկտրոնային հասցե տրամադրված չլինելու դեպքերում՝ քաղաքացուն ծանուցված համարելու նպատակով զինվորական կոմիսարիատի կողմից իրականացվող գործողությունների հաջորդականություն,

3. քաղաքացիներին տրամադրված տարկետումն ուշ ավարտվելու և այնուհետև նրանց զորակոչային տարիքը լրացած լինելու հանգամանքով պայմանավորված՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու անհնարինության դեպքում նրանց հաշվառել պահեստագործում՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի հիմքով,

4. զորակոչիկներին տարկետման ժամկետները տրամադրելու միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով իրականացնել դասընթացներ, ինչպես նաև զինվորական կոմիսարների համար մշակել ուղեցույցներ,

5. միջոցներ ձեռնարկել զինվորական կոմիսարիատների կողմից զինգրքույկներում լրացումներն առանց թերությունների կատարելու, ինչպես նաև միայն այդ հանգամանքով պայմանավորված՝ քաղաքացիներին չհաշվառելու դեպքերը բացառելու ուղղությամբ,

6. մշակել և իրականացնել զինվորական ծառայության տարբեր ծրագրերով անցնելու հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ ներգրավելով ինչպես զինվորական կոմիսարիատները, այնպես էլ այլ հաստատությունները:

## 2. Զորակոչված քաղաքացիներին ծառայության վայրեր նշանակելու գործընթացը

2019 թվականի ընթացքում քաղաքացիների կողմից Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել օրենքով սահմանված հիմքերով կոնկրետ վայրեր ծառայության չնշանակելու վերաբերյալ:

Այսպես, օրինակ, Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ ավագ որդին 2017 թվականին զորակոչվել է զինված ուժեր և ծառայության նշանակվել պատվոպահակային վաշտում: Քաղաքացին նաև տեղեկացրել է, որ կրտսեր որդին 2018 թվականին ենթակա է զորակոչման, դիմել է Պաշտպանության նախարարություն եղբոր ծառայության վայրի զորամասում ծառայության նշանակելու համար, սակայն մերժում է ստացել:

Պաշտպանության նախարարությունը պարզաբանել է, որ Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 17-Ն հրամանի 1-ին կետի 4-րդ մասի «բ» ենթակետի պահանջների համաձայն՝ կրտսեր եղբայրը չէր կարող հանրապետական հավաքակալայինից զորակոչվել ավագ եղբոր ծառայության վայրի զորամաս՝ պատվո պահակային վաշտ, քանի որ տվյալ վաշտում ծառայելու պայմաններին բավարարելը որոշվում է համապատասխան հանձնաժողովի դիտումներին մասնակցելուց հետո տրված եզրակացության հիման վրա, իսկ նա այդ դիտումներին չէր մասնակցել:

Մինչդեռ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի (խնդրի պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր

ծառայության վայրի գործառնում, եթե եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը:

Բողոքի քննարկման արդյունքում՝ Պաշտպանության նախարարությունից առաջարկվել է եղբայրներին միասին ծառայության նշանակել մեկ այլ գործառնում, սակայն քաղաքացիները հրաժարվել են: Թեև Պաշտպանության նախարարությունն, ըստ էության, նման առաջարկով փորձել է ապահովել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով ամրագրված արտոնություն նախատեսող դրույթը, այնուամենայնիվ, տվյալ պահին գործող կարգավորման պայմաններում Պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգի վկայակոչմամբ քաղաքացուն եղբոր ծառայության վայրի գործառնում գորակոչելու ֆորմալ մերժումը խնդրահարույց է:

Պետք է նշել, որ 2019 թվականի հունիսի 4-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվեց լրացում, ըստ որի՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի գործառնում, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը, կամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում այնպիսի գործառնում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում գորակոչվող եղբոր կողմից: Ճիշտ է, նշված օրենսդրական փոփոխությամբ փորձ կատարվեց խուսափել հետագայում նմանատիպ խնդիրներից, սակայն վերոնշյալ ձևակերպումը չի արտացոլում կարգավորման նպատակը:

Այսպես, հասկանալի է, որ կատարված լրացման նպատակն է եղել եղբայրներին ծառայության նույն վայր նշանակելու երկու բացառություն նախատեսելը, եթե՝ 1) արդեն իսկ ծառայություն անցնող եղբոր ծառայության ժամկետը գերազանցում է 17 ամիսը, 2) եղբայրը ծառայություն է անցնում այնպիսի գործառնում, որտեղ ծառայություն անցնելու համար գորակոչվող եղբայրը չի բավարարում անհրաժեշտ պայմանները: Սակայն, ներկայում առկա շարադրանքի վերլուծությունից ստացվում է, որ եղբայրները կարող են ծառայել նույն գործառնում, եթե ծառայության անցնող եղբայրը չի բավարարում անհրաժեշտ պայմանները: Սա հանգեցնելու է պրակտիկայում նոր (լրացուցիչ) խնդիրների:

Ուստի, անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությամբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել:

2019 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել նաև առանձին վայրեր ծառայության նշանակելու հետ կապված բողոքներ:

Չնայած դրան՝ Պաշտպանին հասցեագրած բողոքներով քաղաքացիները բարձրացրել են Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանով նախատեսված՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քաղաքացիներին զինված ուժերի երգի և պարի համույթում, գործասերի նվազախմբերում, արդի տեխնոլոգիաների մշակումների խմբում, տեխնոլոգիական (գիտական) վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով ընտրության մրցույթի անցկացման կարգի չպահպանման վերաբերյալ խնդիրներ:

Օրինակ՝ քաղաքացին Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ որդին 2019 թվականի ամառային գորակոչին մասնակցել է զինված ուժերի երգի և պարի համույթում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների ընտրության մրցույթին, որի կարգն, ըստ պնդման, չի պահպանվել, իսկ որդին նշված համույթում ծառայության չի նշանակվել: Քաղաքացին հայտնել է, որ դիտումների ընթացքը չի տեսաձայնագրվել, իր որդու քննության տևողությունը, ի տարբերություն մյուս



մասնակիցների, եղել է ավելի երկար, դիտումներին մասնակցող մեկ այլ գորակոչիկ կատարողական վարպետության հինգ հիմնական մասերից իրականացրել է միայն մի մասը և նույնպես գնահատվել «գերազանց»:

Բողոքի քննարկման արդյունքում՝ զինծառայողը տեղափոխվել և պարտադիր զինվորական ծառայության է նշանակվել զինված ուժերի երգի և պարի համույթում:

Թեև Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ մասնագիտական դիտումները և վիճակահանությունն անցկացվել են բացառապես օրենքի շրջանակներում՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանի պահանջների համաձայն, և արդյունքում զինծառայողը տեղափոխվել ու պարտադիր զինվորական ծառայության է նշանակվել զինված ուժերի երգի և պարի համույթում, սակայն 2019 թվականի ընթացքում մրցույթների անցկացման կարգի պահպանման հետ կապված՝ Պաշտպանին հասցեագրված բողոքների թիվը մտահոգիչ է:

Մեկ այլ բողոքով, օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ որդին մասնակցել է գլխավոր շտաբի զինվորական նվագախմբում և զորամասերի նվագախմբերում զինվորական ծառայության նշանակելու նպատակով գորակոչի ենթակա քաղաքացիների մրցույթին, որին մեկ օրվա ընթացքում մասնակիցների շատ լինելու պատճառով որոշ գորակոչիկներ քննությունը հանձնել են գիշերային ժամի:

Պաշտպանության նախարարությունից պարզաբանվել է, որ գիշերային ժամին քննությունն իրականացվել է բացառապես մասնակիցների համաձայնությամբ, այնուամենայնիվ, դա խնդրահարույց է մրցույթի մասնակիցների համար հավասար պայմանների ապահովման տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. ուժեղացնել հսկողությունը մրցութային հանձնաժողովների գործունեության նկատմամբ,

2. բացի լուումներին մասնակից անձանց առավելագույն քանակից՝ նախատեսել նաև մեկ օրվա համար լուումների անցկացման առավելագույն տևողություն:

3. Զինվորական հաշվառման փաստաթղթեր ստանալու իրավունքը

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագրի «Ժ» բաժնի համաձայն՝ ներկա և նախկին զինծառայողներին պետք է դիմումի հիման վրա հասանելի լինի զինվորական իշխանության մարմինների կողմից պահվող իրենց անհատական տվյալները ստանալու իրավունքը: Անհատական տվյալները ներառում են ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է ֆիզիկական անձի, ում ինքնությունը հաստատված է կամ հնարավոր է հաստատել:

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածը երաշխավորում է անձի պահանջի դեպքում պետական մարմինների կողմից նրա վերաբերյալ պահվող պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ զինվորական հաշվառման նպատակով զինվորական կոմիսարիատում կազմվում է զինապարտի անձնական գործ, որում մուտքագրվում են զինապարտի ծննդյան և անձնագրային, անհրաժեշտ կենսաչափական, հաշվառման վայրի, ընտանեկան դրության, կրթության, աշխատանքային գործունեության, առողջական վիճակի, դատվածության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ներառվում են այդ տվյալների վերաբերյալ համապատասխան բնօրինակ փաստաթղթերը կամ դրանց պատճենները: Տվյալների

միասնականությունը և համակարգված կիրառումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը վարում է զինվորական հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշմամբ սահմանվել է զինվորական հաշվառման կարգը: Կարգով սահմանվել են քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի տեսակները: Բացի դրանից, նշվել է, որ քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը կարող է հաստատվել նաև զինվորական կոմիսարիատի կողմից ըստ անհրաժեշտության տրված տեղեկանքով: Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալ իր զինվորական հաշվառման վերաբերյալ տվյալներին, դրանցում շտկումներ կատարելու համար ներկայացնել առաջարկություններ:

Չնայած վերը նշված իրավական կարգավորումներին՝ քաղաքացու զինվորական հաշվառման փաստը հաստատող փաստաթղթերը ստանալու իրավունքն ապահովելու հարցում գործնականում 2019 թվականի ընթացքում արձանագրվել են խնդիրներ:

Օրինակ՝ պահեստազորում հաշվառված քաղաքացին տեղեկացրել է, որ սեղմ ժամկետում նոր անձնագիր ստանալու համար իրենից պահանջվում է ներկայացնել զինգրքույկ կամ զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող այլ փաստաթուղթ: Ըստ քաղաքացու՝ զինկոմիսարիատը տևական ժամանակ է՝ ձգձգում է համապատասխան փաստաթղթի տրամադրումը, ինչն էլ խոչընդոտում է անձնագիր ստանալուն:

Արդյունքում՝ Պաշտպանի աջակցությամբ քաղաքացուն տրամադրվել է զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանքը՝ ապահովելով անձնագիր ստանալու հնարավորությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է քաղաքացու պահանջի դեպքում տրամադրել նրա՝ զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերը:

#### 4. Զինվորական գրքույկում մարտերին մասնակցելու վերաբերյալ գրառում չկատարելը

Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման մեջ արձանագրվել էր 2016 թվականի ապրիլի 2-6-ը տեղի ունեցած մարտերին մասնակցած ժամկետային պարտադիր ծառայողների զինգրքույկներում մարտերին մասնակցելու վերաբերյալ գրառումներ չկատարելու խնդիրը: Առաջարկվել էր 2016 թվականի ապրիլի 2-6-ը հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացրած զինծառայողների զինվորական գրքույկներում կատարել մարտերին մասնակցից լինելու վերաբերյալ գրառումներ: Հատկանշական է, որ Պաշտպանության նախարարությունից տրամադրված պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ գրառումներ կատարելու դիմում է ներկայացրել 2 քաղաքացի, որոնց տրվել է դրական լուծում: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ նշված հարցով Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, և խնդիրը դեռևս շարունակում է մնալ չլուծված:

Պաշտպանության նախարարությունը շարունակում է պնդել, որ մարտերին մասնակցելու վերաբերյալ գրառում չկատարելը տվյալ զինծառայողների կողմից ոչ թե մարտերին մասնակցելու, այլ մարտական հերթապահություն իրականացնելու հետևանք է: Մինչդեռ, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ իր հետ նույն ստորաբաժանման կազմում ծառայած և նույն գործառույթներն իրականացրած

(մարտական հերթապահություն) այլ զինձառայողի զինվորական գրքույկում կատարվել է «Մասնակցել է ապրիլյան մարտական գործողություններին» գրառումը, իսկ իր զինգրքույկում՝ ոչ:

Արդյունքում, ստացվում է, որ նույն ստորաբաժանման կազմում ծառայություն իրականացրած երկու զինձառայողների զինգրքույկներում կատարվել են տարբեր գրառումներ:

Նշված իրավիճակը խնդրահարույց է խտրականության արգելքի սկզբունքի տեսանկյունից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ համեմատաբար նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ վերաբերմունքում տարբերությունը խտրական է, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և հիմնավոր արդարացում, այլ կերպ ասած՝ եթե դա չի հետապնդում օրինական նպատակ կամ եթե չկա համապատասխան հիմնավոր կապ կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև: Պայմանավորվող պետությունները կիրառում են հայեցողության լայն շրջանակ, երբ գնահատում են, թե արդյոք առկա են տարբերություններ, և եթե այո, ապա ինչ չափով են դրանք այլ նման իրավիճակներում արդարացնում վերաբերմունքի տարբերությունները<sup>418</sup>: Այսպիսով, Եվրոպական դատարանը խտրական վերաբերմունք է տեսնում այն դեպքերում, երբ նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ կիրառվում է տարբեր մոտեցում, սակայն այն չի հետապնդում օրինական նպատակ:

Բողոքի քննարկման արդյունքում՝ Պաշտպանը կայացրել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, որով արձանագրել էր, որ նույն ստորաբաժանման կազմում նույն պարտականությունները (մարտական հերթապահություն) կատարած<sup>419</sup> մեկ զինձառայողի զինվորական գրքույկում «Մասնակցել է ապրիլյան մարտական գործողություններին» գրառում կատարված լինելու պարագայում մյուս զինձառայողի զինվորական գրքույկում նույնաբովանդակ գրառում չկատարելը հանգեցրել է նրա նկատմամբ տարբերակված մոտեցման: Արդյունքում, առաջարկել է միջոցներ ձեռնարկել քաղաքացու զինվորական գրքույկում ապրիլյան մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ գրառում կատարելու ուղղությամբ: Պաշտպանը նաև ընդգծել է, որ հետագա պրակտիկան անհրաժեշտ է ձևավորել այնպես, որ նույն ստորաբաժանման կազմում մարտական հերթապահություն իրականացրած կամ մարտերին մասնակցած զինձառայողների զինվորական գրքույկներում կատարվեն նույնաբովանդակ գրառումներ:

Ուստի, անհրաժեշտ է բացառել հակառակորդի հետ շփման գծում նույն ստորաբաժանման կազմում մարտական հերթապահություն իրականացրած կամ մարտերին մասնակցած զինձառայողների զինվորական գրքույկներում տարբեր գրառումներ կատարելու պրակտիկան:

<sup>418</sup> Տե՛ս Բուրդենն ընդդեմ Անգլիայի գործով (Burden v. The United Kingdom) 2008 թվականի ապրիլի 29-ի վճիռը, զանգատ թիվ 13378/05, կետ 60:

<sup>419</sup> Պաշտպանության նախարարությունը չի հիմնավորել, որ երկու զինձառայողները կատարել են տարբեր պարտականություններ:

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Առողջական վիճակի պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության խնդիրները

Միջազգային իրավաբանությունը կարևորում է գորակոչիկների պատշաճ բժշկական հետազոտություն և փորձաքննություն անցնելու իրավունքի երաշխավորումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն, օրինակ, իր դիրքորոշումներում նշել է, որ թեև պետությունն է որոշում գորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշները, այնուամենայնիվ գորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների մարտահրավերներին: Նրանք պետք է պատրաստ լինեն նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականության ու պատասխանատվության բարձրացմանը: Երիտասարդ առողջ մարդու համար զինվորական ծառայությունը կարող է որևէ խնդիր չառաջացնել: Մինչդեռ, այն կարող է լուրջ բեռ դառնալ անձի համար, ով առողջական խնդիրների պատճառով չունի բավարար ֆիզիկական տոկունություն: Հետևաբար, հաշվի առնելով զինվորական ծառայության պահանջները, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու գորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի<sup>420</sup>: Մեկ այլ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետությունը պետք է գործնական միջոցներ ձեռնարկի գորակոչիկների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով նրանց առողջությանը սպառնացող ռիսկը՝ ի թիվս այլնի տրամադրելով նաև պահանջվող բժշկական օգնություն<sup>421</sup>: Զինվորական բժշկական հանձնաժողովներն իրենց գործունեությունը պետք է այնպես կազմակերպեն, որպեսզի պարտադիր զինվորական ծառայության համար առողջական խնդիրների պատճառով ոչ պիտանի անձինք չգորակոչվեն զինվորական ծառայության<sup>422</sup>:

Զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի բժշկական հետազոտության և փորձաքննության նպատակը նրանց պիտանիության աստիճանի որոշումն է: Եվ հատկանշական է, որ ներպետական օրենսդրությունը համապատասխան կարգավորումներ է ամրագրում տվյալ նպատակին հասնելու համար<sup>423</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ զինապարտ քաղաքացու պիտանիության աստիճանից է կախված պարտադիր զինվորական ծառայության գորակոչից կամ զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու, զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու հնարավորությունը: Հետևաբար, զինապարտ քաղաքացու պիտանիության աստիճանի և առողջական վիճակի պատճառով գորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից արձակվելու միջև առկա է իրավաբանական նշանակություն ունեցող ուղղակի պատճառական կապ: Միաժամանակ, առողջական վիճակի

<sup>420</sup> Տե՛ս Կայանկին ընդդեմ Ռուսաստանի գործով (Kayankin v. Russia) վճիռ, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

<sup>421</sup> Տե՛ս Քիլինջը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Kilinc and thers v. Turkey) գործով վճիռ, գանգատ թիվ 40145/98, կետեր 41, 42:

<sup>422</sup> Տե՛ս Կայանկին ընդդեմ Ռուսաստանի վճիռը (Kayankin v. Russia), 2010 թվականի մայիսի 11, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

<sup>423</sup> Տե՛ս, օրինակ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 2-րդ կետը:

բժշկական հետազոտություն և փորձաքննություն պատշաճ անցկացնելն անհրաժեշտ է զինապարտ քաղաքացիների առողջության պահպանման համար:

Դրանով է պայմանավորված փորձաքննություն իրականացնող մարմինների դերի կարևորությունը: Այլ կերպ ասած, զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտություն և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները պարտավոր են իրականացնել առողջական վիճակի պատշաճ (մանրամասն և ամբողջական) փորձաքննություն՝ բացառելու համար առողջությամբ պայմանավորված ոչ պիտանի քաղաքացիների գորակոչը Հայաստանի Հանրապետության զինված ուժեր:

Զինապարտ քաղաքացիների պատշաճ բժշկական հետազոտություններն ու փորձաքննությունները Պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում են: Ինչպես նախկինում, 2019 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են զինապարտներին պատշաճ բժշկական հետազոտության ենթարկելու, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների (եզրակացության) արդյունքների հիմնավորվածությամբ պայմանավորված՝ այդ որոշումների բողոքարկման և պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքների տրամադրման խնդիրների վերաբերյալ բողոքներ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ 2017 և 2018 թվականների հետ համեմատած՝ բժշկական հետազոտությունների, օգնության և փորձաքննությունների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվող բողոքների թիվը 2019 թվականին զգալիորեն նվազել է, ինչն առաջին հերթին զինվորական կոմիսարիատների, բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների, ինչպես նաև Պաշտպանության նախարարության ձեռնարկած քայլերի արդյունք է: Միննույն ժամանակ, տվյալ ոլորտում դեռևս շարունակում են մնալ չլուծված խնդիրներ:

Շարունակում են նաև արդիական մնալ գորակոչիկների պատշաճ փորձաքննության, դրա արդյունքում զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանի որոշման հետ կապված խնդիրները: 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքների քննարկման արդյունքում առաջնային փորձաքննությամբ զինվորական ծառայության համար պիտանի (սահմանափակումով պիտանի) ճանաչված գորակոչիկներին լրացուցիչ հետազոտությունների արդյունքում առողջական վիճակի պատճառով տրվել է տարկետում:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ որդին 2018 թվականի երկու գորակոչերից առողջական վիճակի պատճառով ստացել է տարկետում, որդու մոտ ախտորոշվել էր «Երկարացված սիգմա՝ հաստ աղու մոտոր-էվակուատոր ֆունկցիայի արտահայտված դանդաղումով, լյարդի ֆերմենտազոյացման ֆունկցիայի աննշան խանգարումով, հաստ աղու ֆունկցիայի դանդաղումը՝ 144 ժամ»: Ըստ քաղաքացու՝ 2018 թվականի ձմեռային գորակոչի ավարտից հետո որդին մոտոր-էվակուատոր ֆունկցիայի խանգարման հետ կապված բուժում չի ստացել, սակայն ֆունկցիայի դանդաղումը նշվել է 72 ժամ, և 2019 թվականի ամառային գորակոչին որդին սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Բողոքի քննարկման արդյունքում՝ կատարվել են գորակոչիկի առողջական վիճակի լրացուցիչ հետազոտություններ, և նրան տրվել է տարկետում:

Բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների հետ կապված խնդիրներ են արձանագրվել նաև առանց լրացուցիչ հետազոտությունների կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ: Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ 2018 թվականի ձմեռային գորակոչի ընթացքում զինվորական կոմիսարիատի ուղեգրերով անցել է բժշկական հետազոտություններ, կայացված ախտորոշումներով արյան մեջ անուղղակի բիլիռուբինը նշվել է 40 մկմոլ/լ-ից պակաս:

Քաղաքացին սեփական նախաձեռնությամբ և միջոցներով անցել է հետազոտություններ, որոնց արդյունքում արյան մեջ անուղղակի բիլիռուբինը նշվել է 47,7, 40,5 և 49,1 մկմոլ/լ: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված ցանկի 30-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ զորակոչիկը համարվում է բուժման կարիք ունեցող, երբ արյան մեջ անուղղակի բիլիռուբինը կայուն 40 մկմոլ/լ-ից ավելի է: Հետազոտությունների արդյունքներով պայմանավորված՝ զորակոչիկը բողոքարկել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը՝ խնդրելով իրականացնել լրացուցիչ հետազոտություն, սակայն Կենտրոնական բժշկական հանձնաժողովը կրկնակի փորձաքննություն է իրականացրել առանց լրացուցիչ հետազոտություն իրականացնելու:

Խնդրի վերաբերյալ Պաշտպանության նախարարությունից պարզաբանվել է, որ քաղաքացու նախաձեռնությամբ իրականացված հետազոտման արդյունքները հաշվի են առնվել, բայց չէին կարող հիմք հանդիսանալ նրա պիտանիության վերաբերյալ որոշում ընդունելու համար, քանի որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությունն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի թիվ 2712-Ս հրամանով նախատեսված բուժհաստատության կողմից տրված առողջական վիճակի վերաբերյալ ակտերի հիման վրա:

Այսպիսով, ստացվում է, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից կրկնակի փորձաքննությունն իրականացվել է միայն նախկինում կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա: Նման դեպքերում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի լրացուցիչ փորձաքննությունները կարող են կրել ձևական բնույթ, ինչը խնդրահարույց է զորակոչիկների առողջական օբյեկտիվ վիճակը պարզելու տեսանկյունից:

Մեկ այլ դեպքում Պաշտպանին հասցեագրած բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդն անցնում է պարտադիր զինվորական ծառայություն և ունի առողջական խնդիրներ, որոնց կապակցությամբ անհրաժեշտ է իրականացնել բժշկական հետազոտություններ: Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանը զինծառայողի առողջական վիճակը պարզելու նպատակով գրություններ է հասցեագրել Պաշտպանության նախարարություն:

Արդյունքում, զինծառայողը ստացիոնար հետազոտության նպատակով տեղափոխվել է զինվորական հոսպիտալ, կատարվել են անհրաժեշտ բժշկական հետազոտությունները, որից հետո զինծառայողը փորձաքննվել է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից և ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար (միաժամանակ նշվել է, որ զինծառայողը հիվանդությունը ձեռք է բերել զինվորական ծառայության ընթացքում):

Զորակոչիկների առողջական օբյեկտիվ վիճակը պարզելու տեսանկյունից խնդրահարույց է նաև նրանց կողմից սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով անցած հետազոտությունների և ուղեգրով կատարված հետազոտությունների միջև էական հակասությունների առկայության դեպքում զորակոչիկներին լրացուցիչ հետազոտության չուղեգրելը: Խնդիրն ավելի արդիական է դառնում այն դեպքերում, երբ զորակոչիկների միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքներով պայմանավորված՝ կարող է փոփոխվել նաև նրանց զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքով զորակոչիկը տեղեկացրել է, որ զորակոչին աչքերի հետ կապված առողջական խնդիրների կապակցությամբ բժշկական հետազոտություններ է անցել միայն Ս. Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնում, որտեղ ախտորոշվել է «Աջ աչք՝ 2-րդ աստիճանի կեռատոկոնուս, ձախ աչք՝ սկսվող կեռատոկոնուս»: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ նշված բժշկական կենտրոնում անցած հետազոտությունների արդյունքում իր առողջական վիճակի վերաբերյալ թերի ախտորոշումներ են ներկայացվել, որի պատճառով Կենտրոնական բժշկական

հանձնաժողովի եզրակացությամբ սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Ըստ զորակոչիկի՝ զորակոչի ընթացքում սեփական նախաձեռնությամբ և միջոցներով 3 տարբեր բժշկական կենտրոններում անցել է աչքերի հետազոտություններ, որոնց արդյունքում իր մոտ ախտորոշվել է «Աջ աչք՝ 3-րդ աստիճանի կեռատոկոնուս»<sup>424</sup>, դիմել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝ իրեն ստուգիչ բժշկական հետազոտության ուղեգրելու համար, սակայն մերժում է ստացել:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ զորակոչիկն այլ բժշկական կենտրոնում չի հետազոտվել, քանի որ ախտորոշումը հաստատելու համար անհրաժեշտ բոլոր հետազոտությունները կատարվել են և բավարար են եղել եզրակացություն ներկայացնելու համար:

Ընդունելի է Պաշտպանության նախարարության կողմից բերված այն փաստարկը, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությունն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի թիվ 2712-Ա հրամանով նախատեսված բուժհաստատության կողմից տրված առողջական վիճակի վերաբերյալ ակտերի հիման վրա, և զորակոչիկների սեփական միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքները չեն կարող հիմք ընդունվել նրանց պիտանիության աստիճանը որոշելիս: Սակայն, չբացատրվում են հետազոտություններն անցկացնելիս որոշակի տեխնիկական սխալների կամ բժիշկների տարբերվող դիրքորոշումների հնարավորությունը, և կարևորելով առողջ քաղաքացիներին զորակոչելու անհրաժեշտությունը՝ մի քանի հետազոտություններում (այդ թվում՝ սեփական միջոցներով իրականացված) առկա էապես տարբերվող, և հատկապես պիտանիության աստիճանը փոփոխող ախտորոշումների դեպքում, անհրաժեշտ է իրականացնել զորակոչիկների լրացուցիչ բժշկական հետազոտություններ: Փորձը ցույց է տալիս, որ լինում են դեպքեր, երբ տրվում են էականորեն տարբերվող պատասխաններ, իսկ դա փոխում է ծառայության համար պիտանիության աստիճանը:

Առանձին խնդիր է նաև զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ գանգատների առկայության դեպքում նրանց Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը չներկայացնելը:

Այսպես, Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ որդու մոտ մինչև 2019 թվականի ամառային զորակոչն ախտորոշվել է Կվինկեի այտուց, որի կապակցությամբ զորակոչի ընթացքում հետազոտություն չի իրականացվել, թեև զորակոչիկը խնդրի վերաբերյալ գանգատներ էր ներկայացրել: Արդյունքում, առանց նշված առողջական խնդրի վերաբերյալ հետազոտությունների իրականացման և առանց Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննության ներկայացվելու՝ զորակոչիկը սահմանափակումով պիտանի էր ճանաչվել զինվորական ծառայության համար: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 39-րդ կետի համաձայն՝ եթե զորակոչիկը համաձայն չէ իր՝ զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությանը, կարող է այն բողոքարկել ԿԲՀ-ին և փորձաքննություն անցել ԿԲՀ-ի կողմից:

<sup>424</sup> ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածով նախատեսված ցանկի 78-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ միակողմանի երրորդ և չորրորդ աստիճանների կեռատոկոնուսների առկայության դեպքում զորակոչիկները ճանաչվում են ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են զինվորական կոմիսարիատ, ներկա գտնվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, ինչպես նաև հանդիպել զորակոչիկի հաշվառման վայրի զինվորական կոմիսարի հետ: Արդյունքում, Կվինկեի այտուցի կապակցությամբ հետազոտություն անցնելու համար զորակոչիկին տրամադրվել է ուղեգիր, որից հետո նա ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը:

Բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների օբյեկտիվության ապահովումն, ի թիվս այլ հանգամանքների, կախված է հանձնաժողովների կազմում ընդգրկված անդամների պրոֆեսիոնալիզմից և անաչառությունից: Զինապարտ քաղաքացիները պետք է վստահ լինեն, որ բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովներն իրենց պիտանիության վերաբերյալ կայացրել են օբյեկտիվ որոշում: Այդ նպատակով նրանք պետք է հնարավորություն ունենան որպես խորհրդատու փորձաքննությանը ներգրավել նաև իրենց հրավիրած մասնագետների: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգը նախատեսում է բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների անդամների սպառիչ ցանկ, ինչը զորակոչիկներին և զինձառայողներին հնարավորություն չի տալիս փորձաքննություններին ներգրավել նաև իր նախընտրած մասնագետին: Այս առումով հատկանշական է, որ բժշկասոցիալական փորձաքննությանն անձը կարող է որպես խորհրդատու ներգրավել համապատասխան մասնագետի:

Կարծում ենք, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննությունների կարգում նմանատիպ դրույթի ավելացումը կարող է նպաստել փորձաքննվողի վերաբերյալ կայացված եզրակացության օբյեկտիվության ապահովմանը: Մասնավորապես, շատ դեպքերում փորձաքննվողները հանձնաժողովների եզրակացությունները բողոքարկելիս չեն տիրապետում բժշկական գիտելիքների, ինչը մի դեպքում անհիմն բողոքարկումների, իսկ մյուս դեպքում՝ խնդրահարույց եզրակացությունների չբողոքարկման հիմք են դառնում: Իսկ փորձաքննություններին որպես խորհրդատու մասնակցած բժիշկ-մասնագետը կարող է իր խորհուրդներով աջակցել փորձաքննվողներին:

Անհրաժեշտ է նաև անդրադառնալ առանց տարկետում տալու զորակոչիկի պիտանիության որոշումը հաջորդ զորակոչին թողնելու խնդրին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 41-րդ կետի համաձայն՝ «լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված զորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում ԿԲՀ-ն այդ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացնում և նրա փորձաքննությունն իրականացնում է հաջորդ զորակոչի ժամանակ: Դեռևս Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ նույն խնդրին անդրադարձ կատարելիս նշվել է, որ «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով առողջական վիճակի փորձաքննության արդյունքում զինվորական ծառայության պիտանելիության վերաբերյալ որոշում չկայացնելու հնարավորություն նախատեսված չէ: Ավելին, նույն օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, այնուհետև հստակ սահմանված են քաղաքացու պիտանիության վերաբերյալ եզրակացությունների տեսակները: Ստացվում է, որ Կառավարության որոշմամբ Կենտրոնական բժշկական հանձնաժողովին տրվել է օրենքով չնախատեսված լիազորություն:

Բացի դրանից, «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից



տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և գորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից»: Հետևաբար, առանց տարկետում տալու՝ փորձաքննությունը հաջորդ գորակոչի ընթացքում իրականացնելու դեպքում, երբ հետազոտության ավարտից հետո պարզվում է, որ բուժման կամ ժամանակավորապես ոչ պիտանի լինելու պատճառով անձն ուներ տարկետման իրավունք, անձը զրկվում է տարկետման իրավաբանական նշանակություն ունեցող հետևանքից:

Բացի այդ, Կենտրոնական բժշկական հանձնաժողովների նիստերին գտնվելու ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ մեկ օրվա ընթացքում փորձաքննվում են մեծ թվով գորակոչիկներ, ինչը կարող է ազդել փորձաքննության որակի և գորակոչիկների պիտանիության աստիճանը որոշելիս հանգեցնել որոշակի սխալների: Նշված խնդիրն արձանագրվել էր նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ և առաջարկվել նախատեսել մեկ օրվա ընթացքում փորձաքննվողների հստակ թվաքանակ, սակայն այս առաջարկը դեռևս չի իրացվել:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

1. Էապես հակասող բժշկական փաստաթղթերի առկայության դեպքում կրկնակի փորձաքննությունից առաջ իրականացնել նաև լրացուցիչ բժշկական հետազոտություններ,

2. գորակոչիկների սեփական նախաձեռնությամբ և միջոցներով իրականացված հետազոտությունների ախտորոշումներում ուղեգրով կատարված հետազոտությունների արդյունքներից էապես տարբերվող և պիտանիության աստիճանի հնարավոր փոփոխության հանգեցնող տվյալների առկայության դեպքում՝ գորակոչիկներին ուղեգրել լրացուցիչ հետազոտությունների,

3. փորձաքննությունները պատշաճ իրականացնելու նպատակով բժշկական հետազոտություններն անցկացնել առավել թիրախային գործիքակազմով՝ ապահովելով զինապարտների առողջական վիճակի վերաբերյալ մանրամասն և հստակ տեղեկություններ ստանալու գործընթացի արդյունավետությունը,

4. զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հետ համաձայն չլինելու բոլոր դեպքերում գորակոչիկներին ներկայացնել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը՝ ապահովելով գործող իրավակարգավորումների պահանջը,

5. սահմանել մեկ օրվա ընթացքում առողջական վիճակի փորձաքննություն իրականացնելու զինապարտ քաղաքացիների առավելագույն թվաքանակը,

6. վերանայել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման կարգավորումը և ամրագրել, որ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված գորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում գորակոչիկները ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մինչև հաջորդ գորակոչ,

7. Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանել, որ փորձաքննվողը բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների նիստերին որպես խորհրդատու կարող է ներգրավել համապատասխան մասնագետի:

2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը

Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքի պաշտպանության խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2016, 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներում: Մասնավորապես, նշվել է, որ բացակայում են «հիվանդությունների որակական փունջ» (այլ ոչ թե որոշակի քանակի հիվանդություններ) ունենալու դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը: Բժշկական հանձնաժողովը «հիվանդությունների որակական փունջ» չունենալու դեպքում այդ հիվանդությունները գնահատում է առանձին-առանձին՝ այլ ոչ թե ընդհանուր վերցրած, և արդյունքում ստացվում է, որ անձը ենթակա է զինվորական ծառայության: Սակայն, զորակոչվելու դեպքում զինապարտի փաստացի առողջական վիճակը թույլ չի տա լիարժեք կերպով կատարել զինվորական պարտականությունները, և նույնիսկ մեծ հավանականություն կա, որ ծառայության ընթացքում ավելի կխորանան առկա հիվանդությունները կամ անձը ձեռք կբերի հաշմանդամություն:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 8-ի թիվ 405-ն որոշման համաձայն՝ այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով հինգ և ավելի տարբեր հիվանդություններով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող և նրանց տրվում է տարկետում մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման նպատակով:

Մինչդեռ, որոշմամբ սահմանված չէ զինվորական ծառայությունից ազատելու հնարավորություն այն դեպքերի համար, երբ, օրինակ, հինգերորդ հիվանդությունն անձը ձեռք է բերում ծառայության ընթացքում: Արդյունքում ստացվում է, որ նույն առողջական վիճակն ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է, իսկ այն պարտադիր ժամկետային զինծառայողները, որոնց առողջական վիճակը վատթարանում է ծառայության ընթացքում, տարկետում չեն ստանում:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. հիվանդությունների քանակական փնջի հետ միասին քննարկել «հիվանդությունների որակական փունջ», ինչպես նաև անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմ սահմանելու հարցը,

2. նախատեսել, որ զինվորական ծառայության ընթացքում հինգերորդ հիվանդության ձեռքբերումը հիմք է զինծառայողի պիտանիության վերանայման համար:

3. Զինապարտ քաղաքացիների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ չնայած այն հանգամանքին, որ պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և պիտանելիության չափանիշները, սակայն զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների մարտահրավերներին, ինչպես նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականությունների և պատասխանատվության բարձրացմանը: Երիտասարդ առողջ մարդու համար զինվորական ծառայությունը կարող է որևէ խնդիր չառաջացնել, մինչդեռ, այն կարող է լուրջ բեռ դառնալ անձի համար, ով առողջական խնդիրների պատճառով չունի բավարար ֆիզիկական տոկոսություն: Հետևաբար, հաշվի

առնելով զինվորական ծառայության պահանջները, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի<sup>425</sup>:

Վերոնշյալի համատեքստում չափազանց կարևոր է ի սկզբանե ծառայության զորակոչել առողջ քաղաքացիների, իսկ որոշակի առողջական խնդիրների առկայության դեպքում հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դրանք լինեն համատեղելի ծառայության հետ և զինծառայողների համար չդառնան անհամաչափ բեռ:

Այս առումով առանցքային նշանակություն ունի զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունները սահմանող ցանկի կատարելագործման շարունակականությունը:

2019 թվականին «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման մեջ կատարվեց փոփոխություն, որով ուժը կորցրած ճանաչվեց որոշման 1-ին հավելվածով սահմանված ցանկի 1-ին հոդվածի «գ» կետը (թեթև աստիճանի, այլ մտավոր հետամնացություն՝ առանց վարքային խանգարումների, սոցմանկավարժական բարձրագույն վիճակներ): Արդյունքում, նշված առողջական խնդիրներով քաղաքացիներն այլևս չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

Ըստ Պաշտպանության նախարարության նշված փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ առանց վարքային խանգարումների թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող անձանց մոտ զինվորական ծառայության ընթացքում հարմարվողականության և զինծառայողի համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման առումով առաջանում էին խնդիրներ, ինչը բացասաբար էր անդրադառնում զինվորական ծառայության պատշաճ կազմակերպման վրա:

Մարդու իրավունքների պաշտպանը ողջունելի է համարում այն, որ Պաշտպանության նախարարության կողմից իրականացվում են ընթացիկ վիճակի գնահատման, տարբեր հիվանդություններ ունեցող զինծառայողների՝ ծառայությանը հարմարվելու և զինվորական ծառայությունը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ նախապայմանների գնահատման աշխատանքներ, և կատարվում են համապատասխան փոփոխություններ: Հատկանշական է նաև, որ ըստ ստացված տեղեկությունների՝ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումներում փոփոխությունների նախագիծ մշակելու նպատակով, գործընթացն ընթացքի մեջ է, իրականացվելու են բովանդակային փոփոխություններ: Միաժամանակ, անհրաժեշտ է նաև անդրադառնալ մի քանի հիվանդությունների, որոնց առկայությամբ զինծառայողներին զորակոչելը նույնպես կարող է հանգեցնել ծառայությանը հարմարվողականության և հետագայում նրանց առողջական վիճակի վատթարացման:

Այսպես, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշումը փոխարինեց զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը սահմանող՝ Պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410-Ն հրամանին: Թեև հիմնականում հիվանդությունների ցանկը նույնությամբ պահպանվեց, սակայն կատարվեցին նաև մի շարք փոփոխություններ:

<sup>425</sup> Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի վճիռը (Kayankin v. Russia), 2010 թվականի մայիսի 11, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

Օրինակ՝ Պաշտպանության նախարարի հրամանով սահմանված ցանկով «գիշերամիզություն» ունեցող քաղաքացիները ոչ պիտանի էին զինվորական ծառայության համար, սակայն Կառավարության որոշմամբ սահմանվեց, որ այդպիսի հիվանդություն ունեցող քաղաքացիները մի դեպքում պիտանի են, մյուս դեպքում՝ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար: Կառավարության տվյալ որոշման նախագծի տեղեկանք-հիմնավորում հատվածում, սակայն, առկա չէ հիմնավորում, թե ինչով է պայմանավորված նման փոփոխությունն իրականացնելը, արդյոք հաշվի են առնվել «գիշերամիզություն» ունեցող քաղաքացիներին ծառայության գորակոչելու հնարավոր ռիսկերը և այլն:

Հատկանշական է, որ ըստ Պաշտպանության նախարարության՝ 2019 թվականի ընթացքում «գիշերամիզություն» ախտորոշմամբ պարտադիր զինվորական ծառայության է զորակոչվել 75 քաղաքացի՝ նշանակվելով ծառայության օրվա հեշտացված կարգացուցակով: Նշված քաղաքացիների կողմից առանձնացված ստորաբաժանումներում ծառայություն չանցնելու խնդրանքով դիմումներ Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունում չեն ստացվել: Պաշտպանության նախարարության թեժ գիծը 2019 թվականին նույնպես նման բովանդակությամբ զանգեր չի ստացել: Նաև նշվել է, որ «գիշերամիզություն» հիվանդությունն ունեցող զինծառայողների համար ընտրվում են այնպիսի զորամասեր, որտեղ հիմնականում չեն ծառայում ժամկետային պարտադիր զինծառայողներ:

Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ, որոնցով քաղաքացիները մտահոգություն են բարձրացրել նման հիվանդությամբ զինծառայողների ծառայության պայմաններին հարմարվելու, արժանապատվության, ինչպես նաև ծառայությունը զինծառայողների համար բեռ դառնալու վերաբերյալ: Նշված խնդիրը քննարկվել է նաև 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կայացած՝ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստի ժամանակ, որի ընթացքում «գիշերամիզություն» ունեցող անձանց զորակոչելը խնդրահարույց է համարվել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից: Նշված հարցը քննարկվել է նաև Պաշտպանի աշխատակազմում Պաշտպանության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած աշխատանքային քննարկման ընթացքում:

Պաշտպանի ներկայացուցիչները 2019 թվականի ընթացքում այցեր են իրականացրել տարբեր զորամասեր, այդ թվում՝ «գիշերամիզություն» հիվանդությունն ունեցող զինծառայողների ծառայության վայրի զորամասեր: Արձանագրվել է, որ նշված զինծառայողները ծառայություն են անցնում օրվա հեշտացված կարգացուցակով, նրանց համար օրական նախատեսված են 4 դասաժամ պարապմունքներ, ինչպես նաև 3 ժամ ինքնապատրաստություն, դաստիարակչական և իրավական աշխատանքներ, սպորտային միջոցառումներ, նրանք նաև ընդգրկված չեն մարտական հերթապահության մեջ:

Սակայն, զինծառայողների հետ առանձնազրույցի ընթացքում պարզվել է, որ ուսումնական պարապմունքներ համեմատաբար քիչ են անցկացվում, զինծառայողները հիմնականում կատարում են հսկիչ-անցագրային կետի օրապահի պարտականություններ, ինչպես նաև զբաղվում տարածքների բարեկարգմամբ:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ հարց է առաջանում, թե արդյոք քննարկվել է «գիշերամիզություն» հիվանդությամբ քաղաքացիներին զինված ուժեր զորակոչելու անհրաժեշտությունը, արդյոք ծառայության հարմարվողականության հետ կապված խնդիրների առաջացման կամ առողջական վիճակի վատթարացման և հնարավոր ռիսկերի առաջացման գնահատման ուղղությամբ իրականացվել են աշխատանքներ:

Մեկ այլ խնդիր է առկա ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածով նախատեսված ցանկի 30-րդ հոդվածով նախատեսված հիվանդություն ունեցող քաղաքացիներին ծառայության գորակոչելու վերաբերյալ: Այսպես, նախկինում Պաշտպանության նախարարի հրամանով սահմանված հիվանդությունների ցանկի 30-րդ հոդվածի համաձայն՝ արյան մեջ անուղղակի բիլիռուբինը կայուն 25 մկմոլ/լ-ից ավելի լինելու դեպքում գորակոչիկներին տրվում էր տարկետում մինչև մեկ տարի ժամկետով, որից հետո նշանակվում էր կրկնակի փորձաքննություն: Կատարված փոփոխությունների արդյունքում և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկի 30-րդ հոդվածի համաձայն՝ գորակոչիկներին տարկետում է տրվում արյան մեջ անուղղակի բիլիռուբինը կայուն 40 մկմոլ/լ-ից ավելի լինելու դեպքում:

Նշված առողջական խնդիրն ունեցող գորակոչիկների կողմից 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ: Օրինակ, բողոքներից մեկով գորակոչիկը տեղեկացրել է, որ զինվորական կոմիսարիատի ուղեգրով անցած երկու հետազոտությունների արդյունքում իր արյան մեջ անուղղակի բիլիռուբինը նշվել է 34 և 33,3 մկմոլ/լ, սակայն իր սեփական նախաձեռնությամբ և միջոցներով անցած երեք հետազոտությունների արդյունքում արյան մեջ անուղղակի բիլիռուբինը եղել է 40 մկմոլ/լ-ից ավելի:

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ երկու հարցի: Առաջին հերթին՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշումն ընդունելիս ներկայացված չի եղել անուղղակի բիլիռուբինի ցուցանիշը 25-ից 40 մկմոլ/լ բարձրացնելու հիմնավորում, ինչի պատճառով պարզ չէ, թե որն է եղել այդպիսի փոփոխության համար հիմք հանդիսացած հանգամանքը: Երկրորդ՝ ինչպես նախորդ, այնպես էլ գործող կարգավորումներից պարզ չէ, թե ինչ չափանիշներով է որոշվում արյան մեջ բիլիռուբինի 40 մկմոլ/լ-ից բարձր լինելու կայունությունը: Ինչպես նշվեց, եղել են դեպքեր, երբ հետազոտությունների երկու արդյունքներով անուղղակի բիլիռուբինն արյան մեջ եղել է 40 մկմոլ/լ-ից ցածր, իսկ երեք արդյունքներով՝ բարձր: Այս դեպքում պարզ չէ, թե անուղղակի բիլիռուբինի 40 մկմոլ/լ-ից ավելի լինելը կայուն է համարվում բոլոր հետազոտություններով միաժամանակ բարձր լինելու դեպքում, և արդյոք, օրինակ, հինգ հետազոտություններից միայն մեկով 40-ից ցածր լինելն արդեն համարվում է ոչ կայուն:

Առանց հիմնավորումների է փոփոխվել նաև նախկին հիվանդությունների ցանկի 36-րդ հոդվածը, որով արձանագրված էր, որ 3-րդ աստիճանի կիֆոզի ծովածության անկյունը կազմում է 66-80 աստիճան՝ առանց ողների օստեոխոնդրոպաթիայի նշանների, կամ 61-68 աստիճան՝ ողների օստեոխոնդրոպաթիայի առկայությամբ, իսկ նոր կարգավորմամբ՝ ծովածության անկյունը կազմում է 68-80 աստիճան կամ 61-67 աստիճան՝ առնվազն 3 սեպաձև ողերի առկայությամբ: Փոփոխվել է նաև մոտոր-էվակուատոր ֆունկցիայի դանդաղման ցուցանիշը և այլն:

Վերոնշյալի հաշվառմամբ և հաշվի առնելով առանձին հիվանդությունների հետ կապված խնդրահարույց դեպքերի առկայությունը՝ առաջարկվում է զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում իրականացնել անհրաժեշտ փոփոխությունները:

4. Բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների հայեցողության սահմանը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի թիվ 405-Ն որոշումը հստակ սահմանում են բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների իրավասությունը:

Չնայած գործող իրավակարգավորումներին՝ 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման և ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են հանձնաժողովներին վերապահված հայեցողական լիազորությունների ոչ ճիշտ կիրառման դեպքեր:

Օրինակ, քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ որդին աչքերի և սրտի հետ կապված առողջական խնդիրների կապակցությամբ անցել է մի շարք բժշկական հետազոտություններ, որոնց արդյունքում արձանագրվել են առողջական խնդիրները: Մինչդեռ, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը եզրակացություն է ներկայացրել միայն աչքերի մասով, իսկ սրտի առողջական խնդիրներին անդրադարձ չի կատարել:

Պաշտպանի գրության հիման վրա գորակոչիկը կրկին ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը, որի եզրակացությամբ արձանագրվել է և՛ սրտի և՛ աչքերի հետ կապված առողջական խնդիրները: Այնուհետև, քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած լրացուցիչ բողոքով հայտնել է, որ որդին ճանաչվել է զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի:

Այս օրինակը կարևոր է այն առումով, որ բժշկական փորձաքննություն իրականացող հանձնաժողովը պետք է շահագրգռված լինի արձանագրելու առողջական բոլոր խնդիրները, առավել ևս, եթե կարող է փոխվել գորակոչիկի պիտանիության աստիճանը:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ արձանագրվել է մեկ այլ խնդիր:

Այսպես՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները:

Մինչդեռ, քննարկման ընդունված բողոքներում նշված դրույթը պահպանված չէր, և հանձնաժողովի եզրակացության մեջ տեղ չէին գտել քաղաքացու առողջական վիճակն արտացոլող ամբողջական տվյալները:

2019 թվականի ընթացքում հայեցողական լիազորությունների առումով արձանագրվել է մեկ այլ խնդիր: Քաղաքացիները տեղեկացրել են, որ «անգլիոտրոֆոններոզ» հիվանդության պատճառով ձմեռային գորակոչից ստացել են տարկետում մինչև հաջորդ՝ ամառային գորակոչ: Որոշ բողոքներով հայտնել են, որ նույն հիվանդության պատճառով ամառային գորակոչից տարկետում է տրվել մինչև հաջորդ տարվա ամառային գորակոչ:

Պաշտպանին հասցեագրված բողոքները, ինչպես նաև դրանցում առկա բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ «անգլիոտրոֆոններոզ» հիվանդության արդյունքները կախված եղանակից տարբերվում են, որի հետևանքով ամառային գորակոչին փորձաքննվողը ճանաչվում է պիտանի կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

Նշված խնդիրը բարձրացվել էր նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>426</sup>: Այս հարցը քննարկվել է նաև 2019 թվականի հոկտեմբերի 11-ի Մարդու իրավունքների պաշտպանին առնթեր զինված ուժերում մարդու իրավունքների

<sup>426</sup> Տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 467-469:

պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստին, որտեղ ներկա էին նաև Պաշտպանության նախարարության, ինչպես նաև Ռազմաբժշկական վարչության ներկայացուցիչներ:

Ուշագրավ է նաև պետական իրավասու մարմինների տրամադրած վիճակագրությունը:

Ըստ Քննչական կոմիտեի՝ ժամկետային զինվորական ծառայության հերթական գորակոչից խուսափելու հանցակազմի հատկանիշներով հարուցված քրեական գործերի քննության շրջանակներում 2019 թվականի ընթացքում կատարված դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննությունների եզրակացություններով զինվորական ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվել 314 անձ, որից 162-ը՝ ժամանակավորապես ոչ պիտանի և բուժման կարիք ունեցող:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի կողմից ներկայացված ութ որոշում քաղաքացու կողմից բողոքարկվել է դատական կարգով, որոնցից 3-ը՝ ավարտվել են հաշտությամբ, 5-ը՝ ընթացքի մեջ են:

2019 թվականի ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 178 եզրակացություն բողոքարկվել է վարչական կարգով, արդյունքում՝ 22 եզրակացություն փոփոխվել է: 35 զինծառայող հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար, որից հետո փորձաքննություն են անցել Պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից: Արդյունքում՝ 1 զինծառայող ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար, 27-ը՝ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, իսկ մնացածը 7-ը՝ դուրս են գրվել տարբեր պատճառներով (օրինակ՝ ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ տրվել է հիվանդության պատճառական կապ զինվորական ծառայության հետ և այլն):

Մտահոգիչ է տրամադրված տեղեկությունն այն մասին, որ վիճակագրություն չի վարվում, թե քանի պարտադիր ժամկետային զինծառայող է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի փորձաքննությամբ ճանաչվում պիտանի (կամ սահմանափակումով պիտանի), սակայն հետագայում՝ ոչ պիտանի:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. մի քանի առողջական խնդիրներ ունեցող զինապարտի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ, նույնիսկ եթե առողջական խնդիրներից մեկով հիմքեր կան քաղաքացուն տարկետում տրամադրելու համար,

2. քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ ներկայացվող եզրակացության ներածական, նկարագրական, պատճառաբանական մասերը, ախտորոշումը, ինչպես նաև եզրափակիչ մասը լրացնել ամբողջությամբ,

3. «անգիտորոճոններով» հիվանդություն ունեցող գորակոչիկների փաստացի առողջական վիճակը պարզելու համար նրանց բժշկական հետազոտություններն ու փորձաքննությունը կազմակերպել ձմեռային գորակոչին (տարկետման ժամկետը որոշելիս պարտադիր հաշվի առնել, որ կախված եղանակից հիվանդության արդյունքներն էականորեն կարող են տարբերվել)՝ նկատի ունենալով, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովն ունի «մինչև մեկ տարի» ժամկետով տարկետում տրամադրելու հայեցողություն և հաշվի առնելով, որ նշված հիվանդությունն առավել արտահայտվում է ցուրտ եղանակին,

4. Պաշտպանության նախարարությունում վարել համապատասխան վիճակագրություն, թե քանի զինծառայող է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից իրականացված փորձաքննության արդյունքում ճանաչվել պիտանի

(կամ սահմանափակումով պիտանի) զինվորական ծառայության համար և հետագայում ոչ պիտանի ճանաչվել զինվորական ծառայության համար: Նաև պետք է ուշադրություն դարձնել այն հարցին, թե արդյոք ռազմաբժշկական փորձաքննությունների միջև ընկած ժամանակահատվածում զինծառայողի առողջական վիճակը վատթարացել է:

#### 5. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը

Բժշկական փաստաթղթերին ծանոթանալու, դրանք ստանալու իրավունքն ամրագրված է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական փաստաթղթերով:

Այսպես, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 50-րդ կետը սահմանում է, որ գործող և նախկին զինծառայողների համար իրենց անձնական տվյալները, այդ թվում՝ բժշկական փաստաթղթերը պետք է լինեն հասանելի:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածի 36-րդ կետի 4-րդ պարբերության համաձայն՝ բուժհաստատությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշմամբ հաստատված՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի» 1-ին հավելվածի 28-րդ կետը սահմանում է, որ բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումները, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից բժշկական գննության եզրակացության ակտերը տրամադրվում են պարտադիր կարգով:

Չնայած վերը նշված իրավական հստակ չափորոշիչների առկայությանը՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականի ընթացքում ստացել է բողոքներ առողջական վիճակի, բժշկական հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, արդյունքների վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև ռազմաբժշկական ու բժշկական փորձաքննության արդյունքներով կայացված որոշումները և այլ բժշկական փաստաթղթերը չտրամադրելու վերաբերյալ:

Օրինակ, զորակոչիկը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ այցելել է տարածքային զինվորական կոմիսարիատ իր առողջական վիճակի հետազոտման արդյունքներով տրված բժշկական փաստաթղթերը ստանալու



նպատակով, սակայն զինկոմիսարիատում առանց պատճառաբանության հրաժարվել են դրանք տրամադրել:

Բողոքի քննարկման արդյունքում գորակոչիկը ստացել է պահանջվող բժշկական փաստաթղթերի պատճենները:

Բողոքներ են ստացվել նաև Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությունները զինձառայողին չտրամադրելու վերաբերյալ:

Այսպես, զինձառայողի հայրը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ որդին ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում բուժում ստանալուց հետո ներկայացվել է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի փորձաքննությանը, որի եզրակացությամբ սահմանափակումով պիտանի ճանաչվել զինվորական ձառայության համար: Նշել է, որ որդին նշված եզրակացությունը ստանալու համար դիմել է Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, սակայն եզրակացությունը չեն տրամադրել:

Ճիշտ է՝ Պաշտպանի աջակցությամբ հարցը լուծվել է, բայց մտահոգիչ է իրավական կարգավորումների պարագայում նմանատիպ դեպքերի առկայությունը:

Հետևաբար, բժշկական փաստաթղթերը ստանալու քաղաքացիների իրավունքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է խստացնել հսկողությունը զինկոմիսարիատների, բժշկական հաստատությունների, զինվորական հոսպիտալների, բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների գործունեության նկատմամբ:

ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԸ

1. Անընդհատ և շարունակական կրթության իրավունքը

Կրթության իրավունքն անձի կարևորագույն իրավունքներից է, ինչը պայմանավորված է ոչ միայն կրթությունն ստացող անձի կատարելագործման, այլև տարբեր ոլորտներում պրոֆեսիոնալ մասնագետներ ունենալու հանգամանքներով, ինչը նաև բերում է պետության և հասարակության զարգացման: Առանց պետության կողմից անհրաժեշտ նախապայմանների և հավասար հնարավորությունների ստեղծման՝ կրթության իրավունքի պատշաճ ապահովումը հնարավոր չի լինի: Պատահական չէ, որ կրթության իրավունքը՝ որպես անձի հիմնական իրավունք, ամրագրված է միջազգային և ներպետական մի շարք իրավական փաստաթղթերում: Միաժամանակ, այդ իրավունքի երաշխավորումը չպետք է հակադրվի պետության պարտականությանը մասնակցելու սահմանադրական պարտականության հետ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է անվճար լինի: Տարրական կրթությունը պետք է պարտադիր լինի: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետք է ապահովվի երեխաների և երիտասարդների՝ տարրական և միջնակարգ դպրոցներում անվճար կրթությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38-րդ հոդվածում նույնպես ամրագրված է անձի կրթության իրավունքը:

Ուստի, զինվորական ծառայության կազմակերպման ընթացքում նույնպես պետք է հաշվի առնվի քաղաքացու կրթությունն ստանալու իրավունքը: Այլ կերպ ասած՝ զինվորական ծառայությունը չպետք է պատճառ հանդիսանա քաղաքացուն կրթությունն ստանալու իրավունքից զրկելու համար:

Կրթության իրավունքի իրացման հետ կապված 2019 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել են որոշակի խնդիրներ: Օրինակ, Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացիները տեղեկացրել են, որ միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորում են պետական քոլեջում, լրացել է իրենց 18 տարեկանը և առանց կրթությունն ավարտելու՝ իրենց պատրաստվում են զորակոչել ՀՀ զինված ուժեր:

Վերոնշյալ խնդիրն առաջացել էր «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում առկա թերի կարգավորման արդյունքում: Բանն այն է, որ չնայած «Կրթության մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պարտադիր լինելուն՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում էր միայն Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին (միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողներին տարկետում չէր տրվում):

Անհրաժեշտ է նշել, որ Պաշտպանի կողմից վերոնշյալ խնդիրը բարձրացնելուց հետո՝ 2019 թվականի հունիսի 4-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի

մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում կատարվեց լրացում և նախատեսվեց պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տրամադրել նաև Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողին: Նշված լրացումը շատ կարևոր էր պարտադիր կրթության իրավունքի իրացման տեսանկյունից:

2019 թվականին արձանագրվել է կրթության իրավունքի իրացման հետ կապված մեկ այլ խնդիր:

Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ որդին 2019 թվականին ընդունվել է արտերկրում գտնվող համալսարան, մինչև ուսումնառության ավարտը զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու խնդրանքով 2019 թվականի ապրիլի 23-ին դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Քաղաքացուն Կառավարության որոշմամբ տարկետում չի տրվել զինվորական ծառայության անցնելու պարտականությունը 2019 թվականի ձմեռային գորակոչին ծագելու պատճառաբանությամբ: Այսպիսով, քաղաքացին, ով 2019 թվականի սեպտեմբերին պետք է ուսումնառության նպատակով մեկնեք արտերկիր, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 451-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու նպատակով պետք է մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը ներկայացնեք դիմում:

Պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի թիվ 590-Ն որոշման 1-ին կետով 2019 թվականի մայիս-հուլիս ամիսներին հայտարարվել էր այն քաղաքացիների գորակոչը, ում 18 տարին լրանում էր մինչև 2019 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 451-Ն որոշմամբ տարկետում ստանալու նպատակով դիմում ներկայացնելու հնարավորությունը միայն ընթացիկ գորակոչի ժամանակահատվածում գորակոչային տարիքի հասած անձանց համար նախատեսված լինելու պարագայում՝ այն քաղաքացիները, ում ուսումնական գործընթացն սկսվում էր 2019 թվական սեպտեմբերին, և ում 18 տարին լրանում էր 2019 թվականի հունիսի 30-ից հետո, փաստացի չէին կարողանա մեկնել ուսումնական հաստատություն և օգտվել համապատասխան տարկետման իրավունքից:

Արդյունքում, ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետում 2019 թվականի հոկտեմբերի 3-ին կատարվեց փոփոխություն և սահմանվեց, որ գիտության և կրթության բնագավառներում գործունեության համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու նպատակով դիմումը ներկայացնելու պահին 17 տարին լրացած քաղաքացին կարող է տվյալ տարվա ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը կամ հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը դիմում ներկայացնել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Նշված փոփոխությունը կարևոր էր կրթության իրավունքի իրացումն ապահովելու, միայն դիմում ներկայացնելու համար քաղաքացիների վրա հավելյալ բեռ չդնելու, ինչպես նաև ուսումնական գործընթացն արտերկրում ծրագրավորելու և չընդհատելու տեսանկյունից մինչև ուսումնառությունն սկսվելը գորակոչից արդեն իսկ տարկետում ստացած լինելու տեսանկյունից:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման հետ կապված որոշ խնդիրներ, որոնք արձանագրվել էին Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ, շարունակում են մնալ չլուծված:

Օրինակ՝ Կառավարության տվյալ որոշմամբ նշվում է, որ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր

զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև դիմում ներկայացրած քաղաքացին կամ նրա ծնողները կամ նրա կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր քաղաքացու մասով՝ մեկ անձից ոչ ավելի: Նման կարգավորումն իրավաչափ համարվել չի կարող՝ հատկապես նկատի ունենալով, որ վարչական վարույթի ընթացքում անձը չպետք է կաշկանդված լինի իր ներկայացուցիչների քանակով: Սա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածում ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից:

Բացի այդ, սահմանված չեն այն դեպքերը, երբ հանձնաժողովի անդամը, շահերի բախման կամ այլ հանգամանքներով պայմանավորված, չի կարող մասնակցել հանձնաժողովի նիստին (օրինակ՝ դիմորդն իր ընտանիքի անդամն է կամ աշակերտը):

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. վերացնել Հանձնաժողովի նիստերին յուրաքանչյուր քաղաքացու կողմից մեկ անձ ներկա գտնվելու սահմանափակումը,
2. սահմանել այն դեպքերը, երբ հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հանձնաժողովի նիստին:

## 2. Նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետման իրավունքը: Ըստ նշված դրույթի մեկնաբանության՝ զինապարտ քաղաքացին կրթությունը շարունակելու համար տարկետում կարող է ստանալ Բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսուցմամբ սովորելիս՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին Պաշտպանության նախարարության հետ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու դեպքում («Պատիվ ունեն» ծրագիր):

2019 թվականին ստացված բողոքների արդյունքում Պաշտպանը խնդիրներ է բացահայտել նպատակային ուսումնառության համար 18 տարին չլրացած անձանց և Պաշտպանության նախարարության միջև քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու հետ կապված: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 18 տարին չլրացած անձանց հետ վերը նշված պայմանագիրը կնքելիս նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնությունը չի ստացվում:

Ավելին՝ «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 430-Ն որոշմամբ հաստատված պայմանագրի ձևում նույնպես նախատեսված չէ անչափահասի հետ պայմանագրի կնքման դեպքում նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնության ստացման հնարավորություն:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

Հետևաբար, առանց անչափահասի օրինական ներկայացուցիչների համաձայնության կնքված պայմանագիրը հետագայում կարող է անվավեր ճանաչվել, որի հետևանքով պայմանագրի դրույթների կատարումից հրաժարվելու դեպքում ուսումնառության

տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը բարձրագույն ուսումնական հաստատությանը վճարելու պարտավորություն անձի համար չի կարող առաջանալ:

Հատկանշական է, որ Կառավարության վերը նշված թիվ 430-Ն որոշման մեջ առկա խնդիրների կարգավորման նպատակով դեռևս նախագծի քննարկման շրջանակներում Պաշտպանը ներկայացրել է նկատառումներ, որոնց մեծ մասն ընդունվել են (օրինակ՝ թեստավորման արդյունքների բողոքարկման հնարավորություն նախատեսելը, առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչվելու կամ ազատագրկման դատապարտվելու պատճառով պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքերում հրաժարագին վճարելու պարտավորությունից ազատելը և այլն): Դրա հետ մեկտեղ, սակայն, կան չլուծված խնդիրներ:

Օրինակ, «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 455-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետով սահմանվում են զինվորական պատրաստությունից քաղաքացիների հեռացման դեպքերը, որոնց թվում է նաև ռազմաուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը չպահպանելը (անկարգապահությունը):

Նախ, պետք է սահմանել, թե կարգի իմաստով որ արարքներն են համարվում ռազմաուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը չպահպանել: Բացի այդ, քանի որ զինվորական պատրաստությունից հեռացումը քաղաքացու համար առաջացնում է իրավական հետևանքներ, այդ թվում՝ հրաժարագին վճարելու պարտավորության առաջացում, ուստի տվյալ դեպքերում անհրաժեշտ է անցկացնել ծառայողական քննություն՝ պարզելու, թե արդյոք քաղաքացին թույլ է տվել կարգուկանոնի խախտում, պարզել նրա մեղավորության աստիճանը և այլ հանգամանքներ՝ այդ կերպ բացառելով հնարավոր սուբյեկտիվ մոտեցումը: Մինչդեռ, գործող իրավակարգավորումների պարագայում տվյալ դեպքերում ծառայողական քննություն անցկացնել հնարավոր չէ, քանի որ «Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի թիվ 991-Ն հրամանով ռազմաուսումնական հաստատություններում զինվորական պատրաստություն անցնող քաղաքացիների կողմից ռազմաուսումնական հաստատությունների կարգուկանոնը չպահպանելու (անկարգապահության) դեպքերում ծառայողական քննություն անցնելու հնարավորություն նախատեսված չէ:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 430-Ն որոշմամբ նախատեսել, որ անչափահասի հետ պայմանագիր կնքելիս նրա օրինական ներկայացուցչի (ներկայացուցիչների) համաձայնությունը պարտադիր է,

2. Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում համապատասխան ռազմաուսումնական հաստատությունում զինվորական պատրաստություն անցնող անձանց կողմից ռազմաուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը չպահպանելու (անկարգապահության) դեպքում նախատեսել ծառայողական քննության անցկացում: Այդ նպատակով համապատասխան փոփոխություն կատարել նաև «Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի թիվ 991-Ն հրամանում:

3. Կրթությունը շարունակելու նպատակով տարկետում ստանալու համար ուսումնական հաստատությունից տեղեկանք ներկայացնելու պահանջը

«Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում կարող է տրվել ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 451-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի համաձայն՝ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացուն ՀՀ կառավարության որոշմամբ տարկետում տրվում է համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ժամկետով՝ սակայն ոչ ավելի, քան մինչև քաղաքացու 26 տարին լրանալու օրը:

«Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային գորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի թիվ 912-Ա որոշմամբ տարկետում է տրվել բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական ծրագրերով սովորող քաղաքացիներին: Նշված որոշման 4-րդ կետի համաձայն՝ տրված տարկետումներն ուժի մեջ են մտնում մինչև 2019 թվականի հուլիսի 29-ը ներառյալ՝ իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ ներկայացված՝ համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա: «Եթե մինչև 2019 թվականի հուլիսի 29-ը ներառյալ քաղաքացիներն իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ չեն ներկայացնում համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, ապա նրանք համարվում են տարկետման իրավունք չունեցող և ենթակա են պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված 2019 թվականի ամառային գորակոչի ընթացքում»:

Ստացվում է, որ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին 2019 թվականի ամառային գորակոչից տրվել է տարկետում՝ համապատասխան ուսումնական հաստատություն ընդունված լինելու մասին տեղեկանքը մինչև 2019 թվականի հուլիսի 29-ը զինկոմիսարիատ ներկայացնելու պայմանով:

Տվյալ ժամկետի սահմանմամբ գործնականում առաջացել են խնդիրներ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ:

Օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ ասպիրանտուրայի կրթական ծրագրով ընդունվել է Բուխարեստի համալսարան և ընդգրկվել ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի թիվ 912-Ա որոշմամբ սահմանված տարկետում ստացածների անվանացանկում: Նշել է, որ մինչև 2019 թվականի հուլիսի 29-ը չի կարողացել համալսարանից տեղեկանք ներկայացնել, քանի որ Ռումինիայում ընդունելության արդյունքները և ուսանողների հրամանագրումները իրականացվում են սեպտեմբեր ամսվա ընթացքում: Արդյունքում, գորակոչն ավարտվելուց հետո զինկոմիսարիատի կողմից իր վերաբերյալ կազմված նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե, և զինվորական ծառայությունից խուսափելու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: Քաղաքացին ներկայացրել է Ռումինիայում ՀՀ դեսպանությունից տրամադրված տեղեկանքն այն մասին, որ Ռումինիայում ասպիրանտուրայում ընդունելությունը ձևակերպվում է սեպտեմբեր ամսին: Հետագայում՝ 2019 թվականի սեպտեմբերի 24-ին, Բուխարեստի համալսարանի

ռեկտորի կողմից տրվել է քաղաքացու՝ ասպիրանտուրա ընդունված լինելու մասին տեղեկանք:

Այսպիսով, փաստացի հանդիսանալով Բուխարեստի համալսարանի ասպիրանտ՝ զուտ տեխնիկական պատճառներով և իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված՝ քաղաքացին սահմանված ժամկետում չի կարողացել զինկոմիսարիատ ներկայացնել ուսումնական հաստատություն ընդունված լինելու մասին տեղեկանքը: Այն ներկայացրել է 2019 թվականի սեպտեմբերին:

Բողոքի քննարկման արդյունքում քաղաքացուն տրված տարկետումը պահպանվել է, իսկ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ ընդունվել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ և ՀՀ կառավարության որոշմամբ ստացել տարկետում: Նշել է, որ ուսումնական հաստատություն ընդունված լինելու մասին տեղեկանքը մինչև 2019 թվականի հուլիսի 29-ը պետք է ներկայացնի զինկոմիսարիատ, հակառակ դեպքում իրեն տրված տարկետումն ուժի մեջ չի մտնի: Հավելել է, որ բազմիցս դիմել է Երևանի պետական համալսարան՝ ուսումնառության ընդունվելու մասին տեղեկանք ստանալու նպատակով, սակայն մերժում է ստացել՝ հրամանագրերը դեռևս պատրաստ չլինելու պատճառաբանությամբ:

Բողոքի քննարկման արդյունքում ուսումնական հաստատությունից 2019 թվականի օգոստոսի 2-ին տրվել է տեղեկանք, որը նույն օրը ներկայացվել է զինկոմիսարիատ: Զինկոմիսարիատից ստացված պարզաբանմամբ՝ տեղեկանքի հիման վրա քաղաքացուն տրված տարկետումն ուժի մեջ է մտել: Այսինքն, ստացվում է, որ եթե բուհի տեղեկանքը ևս որոշ ժամանակով ուշացվեր կամ չլինեին քաղաքացու համապատասխան ակտիվ գործողությունները՝ նրա նկատմամբ նույնպես կհարուցվեր քրեական հետապնդում:

Այսպիսով, «Կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային գորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի թիվ 912-Ս որոշման 4-րդ կետով սահմանված ժամկետում ուսումնական հաստատությունից տեղեկանք ներկայացնելու պահանջը պրակտիկայում հանգեցրել են որոշակի խնդիրների՝ կապված ուսումնական հաստատության կողմից ուսանողներին հրամանագրելու գործընթացի հետ:

Ուստի, նկատի ունենալով պրակտիկայում արձանագրված տվյալ խնդիրները, և խնդրահարույց համարելով իրավական կարգավորման ֆորմալ կատարման պայմաններում կրթության իրավունքի հնարավոր սահմանափակման հանգեցնելը՝ առաջարկվում է վերանայել նշված կարգավորումը և տալ այնպիսի լուծում (ըստ անհրաժեշտության նաև անհատական), որը կապահովի քաղաքացու կրթության իրավունքի իրացումը:

#### 4. Ընտանեկան պայմաններից ելնելով գորակոչից տարկետում ստանալու իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նաև ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու իրավունք (24-րդ հոդված):

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են ընտանեկան պայմաններից ելնելով գորակոչից տարկետում տրամադրելու վերաբերյալ մի շարք բողոքներ:

Այսպես, հասարակական կազմակերպության ներկայացուցիչը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ 2019 թվականի ամառային գորակոչին զինկոմիսարիատը գորակոչիկին ծանուցել է զինված ուժեր գորակոչվելու մասին:

Մինչդեռ, գորակոչի ընթացքում մահացել է գորակոչիկի հայրը, իսկ երկու տարի առաջ մահացել էր մայրը: Ըստ ներկայացված բողոքի՝ գորակոչվելու դեպքում նաև առանց մշակման կմնա նրանց տնտեսությունը, քանի որ քույրերն ամուսնացած են և բնակվում են առանձին: Հասարակական կազմակերպության ներկայացուցիչը խնդրել է Պաշտպանի աջակցությունը գորակոչիկին ընտանեկան պայմաններից ելնելով ընթացիկ գորակոչից տարկետում տրամադրելու հարցում:

Տվյալ իրավիճակում խնդիրն այն է, որ նկարագրված դեպքում գորակոչիկին ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու օրենսդրական հիմքն առկա չէ: Չնայած դրան, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և գորակոչիկի փաստացի ընտանեկան պայմանները՝ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները բարձրացված հարցը հրատապ կարգով քննարկել են իրավասու պետական մարմինների հետ: Կոնկրետ դեպքում արդյունքը եղավ այն, որ տվյալ գորակոչիկին տրվեց պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում: Սակայն տարկետումը տրվեց առողջական վիճակի պատճառով: Եվ ստացվում է, որ նրա առողջական խնդիրների բացակայության պարագայում հնարավոր չէր լինելու բարձրացված հարցն ըստ էության լուծել, քանի որ ընտանեկան կարգավիճակի հիմքով տարկետում տրամադրելու օրենսդրական հիմքը բացակայում է:

Հայտարարված գորակոչի ընթացքում ընտանիքի անդամի (հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) մահվան դեպքում գորակոչիկի ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու օրենսդրական հիմք սահմանելը կարևոր է նախևառաջ այն առումով, որ ընտանիքի անդամի մահվան դեպքում անձը դառնում է հոգեպես ճնշված: Տվյալ հոգեվիճակում քաղաքացիական կյանքից զինվորական միջավայրի անցմամբ խնդիրներ կարող են առաջանալ ոչ միայն հարմարվողականության, այլև զինվորական ծառայության մեջ ներգրավվելու հարցերում: Մինչդեռ, որոշակի ժամկետով տարկետում տրամադրելու դեպքում գորակոչիկը կարող է վերականգնել հոգեկան հավասարակշռությունը՝ հարմարվելով ընտանիքի անդամի կորստի փաստին:

Պետք է նշել, որ նշված խնդիրը կարող է կարգավորվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ պատգամավորական նախաձեռնությամբ ներկայացված նախագծի ընդունմամբ, որում առաջարկվում է ընտանեկան պայմաններից ելնելով 6 ամիս ժամկետով տարկետում տրամադրել գորակոչի ենթակա այն քաղաքացուն, ում ընտանիքի անդամը մահացել է տվյալ գորակոչի ընթացքում:

Այս կապակցությամբ ուշագրավ է նաև, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ ի թիվս այլնի, շարքային կազմի պարտադիր ժամկետային զինծառայողի ընտանիքի անդամի մահվան դեպքում նրան տրվում է 5 օրացուցային օր տևողությամբ լրացուցիչ արձակուրդ:

Չնայած այն հանգամանքին, որ զինվորական ծառայության մեջ գտնվող անձն ադապտացված է լինում ծառայության պայմաններին՝ այնուամենայնիվ, հոգեպես վերականգնվելու համար նրան ևս անհրաժեշտ է որոշակի ժամանակ: Տվյալ պարագայում հարց է առաջանում, թե արդյոք լրացուցիչ արձակուրդի տրամադրումը 5 օրացուցային օր տևողությամբ բավարար ժամանակ է վերականգնվելու և կրկին զինվորական ծառայության ներգրավվելու համար:

Հարկ է անդրադառնալ նաև մեկ այլ խնդրի: Նախկինում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի<sup>427</sup> 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում էր տրամադրվում

<sup>427</sup> Ուժը կորցրել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին:



գորակոչիկին, ով ուներ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կին: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով<sup>428</sup> ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու նշված հիմքը չի նախատեսվել:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետումը վերաբերում է ոչ միայն (նույնիսկ ոչ այնքան) գորակոչիկներին, այլ նախևառաջ՝ նրանց ընտանիքների անդամներին: Ուստի, տվյալ պարագայում տարկետում տրամադրելը կարող է հետապնդել գորակոչիկի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կնոջն առանց խնամքի չթողնելու իրավաչափ նպատակ:

Տվյալ համատեքստում խնդրահարույց տարրեր կան նաև այլ իրավակարգավորման մեջ: Օրինակ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետման հիմք ստացած քաղաքացին իր դիմումի համաձայն կարող է հրաժարվել տարկետման իրավունքից և գորակոչվել զինծառայության: Մտացվում է, որ միայն նրա ցանկությունը (իրավունքից հրաժարվելը) բավարար է և գերակշռում է այլ անձանց շահերի նկատմամբ, մասնավորապես՝ նրանց, ում կարգավիճակով պայմանավորված պետությունը տրամադրում է զինվորական ծառայության չանցնելու արտոնություն: Ավելին՝ որևէ կերպ չի շոշափվում այն հարցը, թե արդյոք կարևոր չէ ընտանիքի տվյալ անդամի կարծիքը: Ուշադրության է արժանի նաև այն հարցը, թե տարկետումից հրաժարվելուց և գորակոչվելուց հետո՝ զինծառայողն արդյոք կարող է ցանկություն հայտնել և արձակվել զինված ուժերից: Սրանք հարցեր են, որոնք ևս լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

1. օրենսդրական փոփոխությամբ սահմանել, որ հայտարարված գորակոչի ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպքում գորակոչի ենթակա քաղաքացուն տրամադրվում է տարկետում մինչև հաջորդ գորակոչ,
2. քննարկել պարտադիր ժամկետային զինծառայողի ընտանիքի անդամի մահվան դեպքում լրացուցիչ արձակուրդն ավելի երկար ժամանակով տրամադրելու հարցը,
3. քննարկել 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կին ունեցող գորակոչիկների տարկետում տրամադրելու հնարավորության հարցը (իհարկե, եթե նրանք համատեղ են բնակվում):

<sup>428</sup> Ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ին:

1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում

1966 թվականի դեկտեմբերի 16-ի ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը: Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այս իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով ձեռնարկվող միջոցներն ընդգրկում են միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են այնպիսի պայմանների ստեղծման համար, որոնք հիվանդության դեպքում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն և բժշկական խնամք:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 70-րդ կետի համաձայն՝ զինծառայողները պետք է օգտվեն առողջապահական ծառայությունների հասանելիությունից և բժշկական օգնություն ստանալու իրավունքից:

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուրի, այդ թվում՝ զինծառայողների առողջության պահպանման իրավունքը ենթակա է լիարժեք պաշտպանության: Այդ իրավունքի երաշխավորման հիմքերն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում: Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողները և գորակոչիկներն իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ պետք է փաստել, որ պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքն ամրագրող միջազգային իրավական կարգավորումների և ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրականացման համար պետությունը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք ուղղված են զինծառայողների առողջության պահպանմանը:

2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների մի զգալի մաս առնչվել է պատշաճ բժշկական հետազոտություն և բուժում իրականացնելու խնդիրներին:

Բողոքների քննարկման ընթացքում գրավոր պարզաբանումներ են պահանջվել ՀՀ պաշտպանության նախարարությունից, իրականացվել են այցեր զինվորական

հոսպիտալներ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել Պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի նիստերին:

Իհարկե, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ նախորդ տարիների համեմատ՝ այդպիսի բողոքների թիվը նվազել է, սակայն որոշ խնդիրներ դեռևս շարունակում են մնալ արդիական: Բողոքներով արձանագրված յուրաքանչյուր դեպքում պարտադիր է ստուգել զինապարտ քաղաքացու փաստացի առողջական վիճակը և հավաստիանալ նրա մոտ առողջական խնդրի առկայության կամ բացակայության մասին:

2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության և քննարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ պարտադիր ժամկետային զինձառայողին պատշաճ բժշկական օգնություն չի տրամադրվել:

Օրինակ՝ քաղաքացին Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ որդին անցնում է պարտադիր զինվորական ծառայություն, ունի ալերգիկ, սրտի և ատամնաշարի հետ կապված առողջական խնդիրներ: Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են զինվորական հոսպիտալ, որտեղ պարզվել է, որ զինձառայողը մեկ անգամ անցել է հոլտեր-մոնիտորինգ հետազոտություն, երկրորդ անգամ հոլտեր-մոնիտորինգ հետազոտություն չի իրականացվել անհրաժեշտ սարքավորման տեխնիկական խնդրի պատճառով: Պարզվել է նաև, որ զինձառայողի մոտ հայտնաբերվել է քթի միջնապատի ծովածություն և ատամնաշարի հետ կապված առողջական խնդիրներ, և ցուցվել է իրականացնել ատամնաշարի պլանային բուժում:

Պաշտպանի ներկայացուցիչների և հոսպիտալի ղեկավար անձնակազմի համատեղ քննարկման արդյունքում որոշում է կայացվել իրականացնել զինձառայողի լրացուցիչ հոլտեր-մոնիտորինգ հետազոտություն: Իրականացվել են նաև զինձառայողի առողջական վիճակը պարզելու համար անհրաժեշտ բոլոր հետազոտությունները, ինչպես նաև նրա ատամնաշարի պլանային բուժումը:

2019 թվականին ստացվել են մի շարք բողոքներ պլանային վիրահատությունների ձգձգման վերաբերյալ: Օրինակ, Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ որդուն ծառայության ընթացքում ցուցվել է իրականացնել քթի միջնապատի պլանային վիրահատություն, ծառայության ավարտին մնացել է շուրջ 2 ամիս, սակայն վիրահատության իրականացումը ձգձգվում է: Բողոքի քննարկման արդյունքում զինձառայողի վիրահատությունն իրականացվել է:

Խնդրի կապակցությամբ պետք է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մատնանշելով նաև ձևավորված կայուն պրակտիկան, նշել է, որ պետությունը պետք է պաշտպանի անձանց ֆիզիկական անվտանգությունը, որոնք հայտնվում են անօգնական վիճակում իշխանությունների հսկողության ներքո գտնվելու հետևանքով, ինչպիսիք են, օրինակ, ազատությունից զրկված անձինք կամ գորակոչված զինձառայողները: Այդուհանդերձ, պետության այս պարտականությունը չունի սահմանափակումներ զինվորական կամ ուղղիչ հաստատություններում: Այդպես է նաև այն իրավիճակներում, երբ անձի ֆիզիկական անվտանգությունը մեծամասամբ կախված է իշխանությունների գործողություններից, որոնք օրենքի համաձայն պարտավոր են միջոցներ ձեռնարկել իրենց իրավասության սահմաններում, ինչը կարող է անհրաժեշտ լինել կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելուց խուսափելու համար<sup>429</sup>:

Ստացվում է, որ թե՛ ՀՀ Սահմանադրության, և թե՛ ոլորտին առնչվող միջազգային փաստաթղթերի և, հատկապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

<sup>429</sup> Տե՛ս, օրինակ, Դենիս Վասիլևն ընդդեմ Ռուսաստանի (Denis Vasilyev v. Russia) գործով 2010 թվականի մարտի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32704/04, 115 կետ):

իրավաբանության համաձայն՝ պետության հոգածության ներքո գտնվելու հետևանքով պարտադիր զինծառայողները և ազատությունից զրկված անձինք օգտվում են պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից: Հետևաբար, ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական օգնություն ստանալու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եզրահանգումները վերաբերելի են նաև պարտադիր ժամկետային զինծառայողներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում նշել է, որ միայն այն հանգամանքը, որ բժիշկը գննել է ազատությունից զրկված անձին (Եվրոպական դատարանի՝ վերը նշված մոտեցման համաձայն՝ նաև պարտադիր ժամկետային զինծառայողին) և համապատասխան բուժում նշանակել, չի կարող ինքնաբերաբար անձին պատշաճ բժշկական օգնություն տրամադրված լինելու մասին եզրահանգման հանգեցնել: Իշխանությունները պարտավոր են ապահովել ոչ միայն այն, որ բժիշկն այցելի և լսի հիվանդին, այլ պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն նշանակված բուժումը փաստացի իրականացվելու ուղղությամբ<sup>430</sup>:

Ուստի, անհրաժեշտ է արձանագրել, որ պարտադիր ժամկետային զինծառայողները զինվորական ծառայության ընթացքում պետք է ստանան պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում: Միայն այն հանգամանքը, որ զինվորական ծառայության ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայողը գննվել է բժշկի կողմից, և գնման արդյունքում համապատասխան բուժում է նշանակել, չի կարող բավարար համարվել:

Հատկանշական է, որ պլանային վիրահատությունների հետ կապված խնդրին անդրադարձ է եղել նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդման մեջ: Մասնավորապես, նշվել էր, որ պլանային վիրահատությունների ձգձգումը կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ առկա չէ պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև զինծառայողների հաշվառման կարգ: Նշված խնդիրը վեր է հանվել ինչպես 2018, այնպես էլ 2019 թվականների ընթացքում գորամասեր կատարված այցերի արդյունքում:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ բժշկական գնումների և դիսպանսերիզացիայի արդյունքում հայտնաբերված այն զինծառայողները, որոնք ունեն պլանային վիրահատության կարիք ցուցակագրվում են գորամասային բժշկական ծառայության կողմից: Ցուցակագրումը կազմակերպվում է՝ համագործակցելով կայազորային ռազմաբժշկական հաստատությունների հետ: Պլանային վիրահատության կարիք ունեցող զինծառայողների ցուցակագրումն ու բուժումն իրականացվում է՝ հաշվի առնելով բժշկական ցուցումները, գորակոչը և այլն: Ելնելով զինված ուժերի կողմից իրականացվող գործառնություններից՝ լինում են դեպքեր, երբ նախապես պլանավորված բուժման ժամկետները չեն պահպանվում, ինչն ունի օբյեկտիվ պատճառներ: Պլանային վիրահատության վերաբերյալ զինծառայողները տեղեկացվում են:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրվել է պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրամադրելու գործընթացի հետ կապված բողոք:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրվում է գորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ բուժում

<sup>430</sup> Տե՛ս նաև Հումմատովն ընդդեմ Ադրբեյջանի (Hummatov v. Azerbaijan) գործով 2008 թվականի փետրվարի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 9852/03 և 13413/04, 116 կետ:

իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության կամ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի տեղեկանքի հիման վրա:

Ստացվում է, որ յուրաքանչյուր դեպքում զինծառայողին հիվանդության պատճառով արձակուրդ տրամադրելու նպատակով Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը զորամասի հրամանատարին պետք է ուղարկի տեղեկանք, որի հիման վրա՝ զորամասի հրամանատարը պետք է տա արձակուրդ տրամադրելու հրաման:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ բոլոր փորձաքննվող զինծառայողները, ովքեր, համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման, կարիք են ունեցել վերականգնողական արձակուրդի, ստացել են արձակուրդ: Զինծառայողների կամ նրանց հարազատների բողոքները հիմնականում ունեցել են հետևյալ բովանդակությունը՝ 1) կրկնակի վերականգնողական արձակուրդի պահանջ, 2) արձակուրդի տրամադրման պահանջ այն անձանց, ում նշված որոշումով արձակուրդ չի նախատեսվում:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ զինծառայողներին վերականգնողական արձակուրդ տրամադրելու գործընթացում առաջանում են խնդիրներ: Մասնավորապես, քաղաքացին Պաշտպանին տեղեկացրել է, որ զինծառայողը ստացիոնար բուժում է ստացել Պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում, որից հետո Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ նշվել է զինծառայողին վերականգնողական արձակուրդ տրամադրելու անհրաժեշտության մասին: Վերականգնողական արձակուրդը, սակայն, զինծառայողին չի տրամադրվել: Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ զինծառայողին վերականգնողական արձակուրդը չի տրամադրվել նրա ծառայության մշտական վայրի զորամասից արձակուրդ տրամադրելու վերաբերյալ հրամանն ուղարկված չլինելու պատճառով:

Իհարկե, բողոքի քննարկման արդյունքում զինծառայողին տրամադրվել է վերականգնողական արձակուրդ, սակայն հետագայում նման տեխնիկական խնդիրները բացառելու ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ:

2019 թվականին զորամասեր կատարված այցերի ընթացքում արձանագրվել են նաև բժշկական օգնության հետ կապված այլ խնդիրներ:

Այսպես, ուսումնական զորամասերի զինծառայողները տեղեկացրել են, որ բուժման նպատակով զինվորական հոսպիտալ տեղափոխվելու, որոշակի ժամանակահատված բուժման մեջ գտնվելու և ուսումնական պարապմունքները բաց թողնելու դեպքում զրկվում են քննություններին մասնակցելու և սերժանտի կոչում ստանալու հնարավորությունից: Զինծառայողների տեղեկացմամբ լինում են դեպքեր, երբ զինծառայողները, իմանալով իրենց մոտ առողջական խնդրի առկայության և բուժման անհրաժեշտության մասին, քննություններին մասնակցությունից չզրկվելու նպատակով չեն բարձրաձայնում առողջական խնդիրների մասին:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ նշված հարաբերությունները կարգավորվում են Պաշտպանության նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1213 հրամանով հաստատված՝ «Ուսումնական զորամասերում ու ստորաբաժանումներում կրտսեր հրամանատարների և մասնագետների պատրաստության ուսումնական գործընթացի կազմակերպման և ստուգման կանոնակարգով»: Կանոնակարգի ընդհանուր դրույթների 21-րդ կետի համաձայն՝ ավարտական քննություններին մասնակցելու թույլտվություն ունեն ուսուցման լրիվ դասընթացն անցած (հիվանդության և այլ պատճառով ընդհանուր դասաժամերի ոչ ավելի, քան 20% ուսումնական ժամ բացակայած), հրաձգության ու մեքենավարման, այդ թվում՝ համաձայն օրագրի, հաստիքային արկով կամ դրանց փոխարինիչներով բոլոր վարժությունները կատարած,

քննության չնախատեսված առարկաներից դրական գնահատված կուրսանտները: Ուսուցման լրիվ դասընթացն անցած, բայց հիվանդության և այլ հարգելի պատճառներով սահմանված օրերին քննությունները չհանձնած կուրսանտները դրանք հանձնում են ուսումնական գործառնախ (ստորաբաժանման) հրամանատարի հրամանով կազմավորված հանձնաժողովին:

Իհարկե, հասկանալի է, որ սերժանտի կոչում ստանալու և անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ունենալու տեսանկյունից զինծառայողները պետք է տիրապետեն որոշակի հմտությունների, անցնեն անհրաժեշտ պատրաստություն և դասընթացներ, սակայն նշված պարտավորությունները չպետք է հակադրվեն զինծառայողների առողջության պահպանման, բժշկական օգնության պատշաճ ապահովման իրավունքների հետ:

2019 թվականի ընթացքում զինվորական հոսպիտալներ իրականացրած այցերի ընթացքում արձանագրվել է, որ կան նաև «վարիկոզ» հիվանդություն ունեցող զինծառայողներ, ում ցուցված է պլանային վիրահատություն: Պարզվել է, որ ցուցված վիրահատությունները չեն իրականացվում համապատասխան բժիշկ-մասնագետների բացակայության պատճառով: Բացի այդ, արձանագրվել է նաև, որ զինվորական հոսպիտալներում առկա են բավական շատ թափուր հաստիքներ<sup>431</sup>: Հոսպիտալի ղեկավար անձնակազմը Պաշտպանի ներկայացուցիչներին տեղեկացրել է, որ նշված մասնագետների պակասը չափազանց բարդացնում է զինծառայողներին անհրաժեշտ բուժօգնության տրամադրումը:

Անհրաժեշտ է նշել նաև «վարիկոզ» հիվանդության հետ կապված մեկ այլ խնդիր առաջանալու հնարավորության մասին: Այսպես, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված ցանկի 48-րդ հոդվածի «բ» կետի մեկնաբանության համաձայն՝ «վարիկոզ» հիվանդության որոշակի աստիճանի դեպքում ցողունային երակահատումներ իրականացվելուց հետո զինծառայողները պետք է ճանաչվեն ոչ պիտանի և արձակվեն զինվորական ծառայությունից: Հնարավոր խնդիրները կանխարգելելու տեսանկյունից կարևոր է, որ միայն զինվորական ծառայության համար զինծառայողի պիտանիության աստիճանի փոփոխության հնարավորությունը հիմք չդառնա նրան անհրաժեշտ բժշկական օգնությունը, այդ թվում՝ վիրահատություն չիրականացնելու համար:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. առողջական վիճակի վերաբերյալ զանգատի դեպքում անհապաղ իրականացնել զինծառայողի պատշաճ հետազոտությունը և բուժումը,

2. միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի նկատմամբ նշանակված բուժումը փաստացի իրականացվի,

3. մշակել պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև պլանային վիրահատության կարիք ունեցող զինծառայողների հաշվառման կարգ,

4. ուսումնական գործառնախում քննությունների անցկացման վերաբերյալ կարգավորումներում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնց արդյունքում բացառապես քննություններին մասնակցելու և սերժանտի կոչում ստանալու հնարավորություններից զրկվելու ռիսկով պայմանավորված՝ կբացառվի զինծառայողներին պատշաճ բժշկական օգնություն չտրամադրելու պրակտիկան,

5. միջոցներ ձեռնարկել տեխնիկական խնդիրների հետևանքով զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ չտրամադրելու դեպքերը բացառելու ուղղությամբ,

<sup>431</sup> Օրինակ, Զանգեզուրի կայազորային հոսպիտալում թափուր են 4 վիրաբույժներից 2-ի, 2 անեսթեզիոլոգներից 1-ի, 3 թերապևտներից 1-ի, ֆիզիոթերապիայի բաժանմունքի պետի և այլ հաստիքներ:

6. միջոցներ ձեռնարկել զինվորական հոսպիտալներում անհրաժեշտ բժշկամասնագետների թափուր հաստիքները համալրելու ուղղությամբ, ինչը կհանգեցնի զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի առավել արդյունավետ իրացմանը:

2. Զինծառայողների առաջնահերթ հետազոտման, փորձաքննության և բուժման իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, ներառյալ՝ զորահավաքային գորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու դեպքերում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Նշված օրենսդրական կարգավորումից, ինչպես նաև զինվորական հոսպիտալներ կատարված այցերի արդյունքում պարզվել է, որ զինծառայողների պարագայում առաջնահերթ բժշկական օգնություն և սպասարկում նախատեսված չէ, և զինծառայողների հետազոտությունն իրականացվում է ընդհանուր հիմունքներով: Արդյունքում, զինծառայողների հետազոտությունները ձգձգվում են, որի հետևանքով զինվորական հոսպիտալներում նրանց մնալը երկարացվում է:

Մինչդեռ, հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատկությունները՝ զինծառայողների բժշկական հետազոտություններն անհրաժեշտ է իրականացնել առաջնահերթ և սեղմ ժամկետներում:

Խնդիրը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ զինվորական հոսպիտալները բավարար չափով հագեցված չեն համապատասխան գործիքային ախտորոշիչ սարքավորումներով (օրինակ՝ ՄՌՏ, ներկերակրափոդային էխոկարդիոգրաֆիա, էլեկտրոնէյրոմիոգրաֆիա և այլն), կամ առկա սարքավորումների քանակը բավարար չէ զինծառայողների հետազոտությունները պատշաճ իրականացնելու համար (օրինակ՝ հոլտեր-մոնիտորներ): Ուստի, անհրաժեշտ է նշված հետազոտություններն իրականացնել քաղաքացիական բժշկական հաստատություններում:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ Առողջապահության նախարարության և քաղաքացիական բժշկական կազմակերպությունների հետ առկա ամենօրյա փոխհամագործակցության շրջանակներում արվում է առավելագույնը՝ զինծառայողներին անհրաժեշտ հետազոտությունները և բուժական միջամտություններն առանց հերթագրման կազմակերպելու համար:

Ըստ Առողջապահության նախարարության՝ զինծառայողներին բժշկական օգնությունը և սպասարկումն առաջնահերթ կազմակերպելու նպատակով բժշկական կազմակերպությունները նախագուշացվում են, ինչպես նաև սերտ համագործակցություն է իրականացվում Պաշտպանության նախարարության ռազմաբժշկական վարչության հետ: Բժշկական կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների համար կիրառվում է փոխհատուցման հետվճարային սկզբունքը, որով հերթագրումները և ծառայությունների մատուցման անհարկի ուշացումները հասցվում են նվազագույնի:

Չնայած դրան՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ խնդրի համակարգային կարգավորման համար զինծառայողների առաջնահերթ բժշկական օգնության և սպասարկման իրավունքն անհրաժեշտ է ամրագրել օրենքի մակարդակով:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում ամրագրել, որ զինծառայողների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում,

2. մինչև վերը նշված օրենսդրական փոփոխությունը միջոցներ ձեռնարկել զինծառայողներին անհրաժեշտ հետազոտությունները հնարավորին սեղմ ժամկետներում իրականացնելու ուղղությամբ,

3. զինվորական հոսպիտալներն ապահովել զինծառայողների հետազոտությունների համար անհրաժեշտ գործիքային ախտորոշիչ սարքավորումներով:

3. Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը

2019 թվականին Պաշտպանին ներկայացված բողոքների, ինչպես նաև դրանց հիման վրա Պաշտպանության նախարարության Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք կատարված այցերի արդյունքում պարզվել է, որ զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն:

Մասնավորապես՝

1) արձանագրվել են հոգեբուժական բաժանմունքի ոչ բարվոք շենքային պայմաններ (շինությունն ակնհայտ փոքր է). հոգեբուժական բաժանմունքում առկա է 7 ննջասենյակ, որոնցում ընդհանուր առմամբ՝ 45 մահճակալ, 2 ցնցուղարան, 2 զուգարան: Բաժանմունքի անձնակազմը տեղեկացրել է, որ դեպքեր են եղել, երբ բաժանմունքում գտնվել են 100-ից ավելի պարտադիր ժամկետային զինծառայողներ.

2) հոգեբուժական բաժանմունքում ստացիոնար բուժման ընդունելիս զինծառայողների ցանկությունը հաշվի չի առնվում: Հոսպիտալի անձնակազմը տեղեկացրել է, որ զինծառայողին հարկադիր բուժման ենթարկելու նպատակով դատարան դիմելու դեպք երբևէ չի արձանագրվել.

3) բուժումը, այդ թվում՝ դեղորայք ներարկելն իրականացվում է առանց զինծառայողների համաձայնության.

4) զինծառայողները չեն իրազեկվում իրենց իրավունքների, հոգեբուժական հաստատությունում գտնվելու նպատակի և պատճառների մասին.

5) խոչընդոտներ են առաջանում զինծառայողների բջջային հեռախոսներից օգտվելու հետ կապված<sup>432</sup>.

6) բաժանմունքի տարածքում առկա չէ բանկոմատ<sup>433</sup>, որի պատճառով զինծառայողները չեն կարողանում առաջին անհրաժեշտության իրեր և պարագաներ ձեռք բերել.

7) զինծառայողները զբոսանքի են դուրս գալիս օրական 15-20 րոպե, դեպքեր են լինում, երբ մի քանի օր շարունակ բաժանմունքից դուրս չեն գալիս: Ըստ պարզաբանման՝ բուժում ստացող զինծառայողների զբոսանքի կազմակերպման դժվարությունների պատճառը շենքային պայմանների անբավարարությունն է. զինծառայողների համար նախատեսված բացօթյա միակ տարածքը շենքի ներսում

<sup>432</sup> Մասնավորապես, զինծառայողների հեռախոսները պահվում են բաժանմունքի աշխատասենյակներից մեկում, հեռախոսներից օրական թույլատրվում է օգտվել մինչև 2 ժամ, որից առաջ աշխատակիցը բաժանում է պահվող հեռախոսները, սակայն, ըստ զինծառայողների, լինում են օրեր, երբ տվյալ աշխատակիցը տարբեր պատճառներով ծառայության վայրում չի լինում, և այդ օրերին իրենք չեն կարողանում օգտվել հեռախոսներից նույնիսկ թույլատրելի ժամերին:

<sup>433</sup> Բանկոմատ առկա է միայն հոսպիտալի տարածքից դուրս՝ հսկիչ-անցագրային կետի մոտ:



առանձնացված ծխարանն է, որն ակնհայտ փոքր է: Բաժանմունքի պետի հավաստմամբ՝ երբեմն զինձառայողների զբոսանքն իրենց հսկողությամբ կազմակերպվում է բաժանմունքից դուրս՝ հոսպիտալի տարածքում, ինչը տվյալ բաժանմունքում բուժում ստացող զինձառայողների առողջական խնդիրների հաշվառմամբ խնդրահարույց է:

8) Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից փորձաքննվելուց և զինձառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչվելուց հետո զորամաս տեղափոխվելու փոխարեն զինձառայողներն օրեր շարունակում պահվում են հոգեբուժական բաժանմունքում:

9) զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելուց հետո զինձառայողները շարունակում են պահվել հոգեբուժական բաժանմունքում<sup>434</sup>: Հոգեբուժական բաժանմունքի պետի պարզաբանմամբ՝ խնդիրն ավելի շատ պայմանավորված է Պաշտպանության նախարարին զեկուցելու և զինձառայողին ծառայությունից արձակելու միջև ժամանակահատվածով:

10) զինձառայողները հնարավորություն չունեն սեփական միջոցների հաշվին գնության ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից:

Վերը նշված խնդիրների կապակցությամբ կատարվել է միջազգային փաստաթղթերի և ներպետական իրավական ակտերի համադիր ուսումնասիրություն, վեր են հանվել մի քանի երաշխիքներ (չափանիշներ), որոնք առնչվում են հոգեբուժական հաստատություններում հետազոտություն և բուժում ստացող անձանց:

Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1991 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձևով ընդունված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության սկզբունքների համաձայն՝ պացիենտի բուժումը և խնամքը պարտադիր պետք է քննարկվի նրա հետ և պարբերաբար վերանայվի (9-րդ սկզբունքի 2-րդ կետ): Որևէ բուժում չպետք է իրականացվի առանց անձի նախապես ծանուցված համաձայնությունը ստանալու՝ բացառությամբ հատուկ սահմանված դեպքերի (11-րդ սկզբունքի 1-ին կետ): Պացիենտը, նրա օրինական ներկայացուցիչը և խնամակալը պետք է իրավունք ունենան հաճախել, մասնակցել և անձամբ լսված լինել գործի լուումների ընթացքում (18-րդ սկզբունքի 5-րդ կետ): Յուրաքանչյուր պացիենտ (այդ թվում՝ նախկին) պետք է իրավունք ունենա բողոք ներկայացնել՝ օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան (21-րդ սկզբունք): Նշվում է նաև, որ պետությունները պետք է կիրառեն նշված սկզբունքները համապատասխան օրենսդրական, դատական, վարչական, կրթական և այլ միջոցառումների միջոցով, որոնք նրանք պետք է պարբերաբար վերանայեն (23-րդ սկզբունքի 1-ին կետ):

«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարգավիճակի մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1977 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 818(1977) հանձնարարականի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիրների կապակցությամբ բուժում ստացող անձն ունի լսված լինելու իրավունք (17-րդ կետ):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Հարկադիր հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձանց իրավական պաշտպանության մասին» 1983 թվականի փետրվարի 22-ի թիվ R(83)2 հանձնարարականի համաձայն՝ պացիենտը պետք է անմիջապես տեղեկացվի իր իրավունքների մասին և պետք է իրավունք ունենա

<sup>434</sup> Օրինակ, արձանագրվել է, որ զինձառայողներից մեկը զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելուց հետո ավելի քան 10 օր գտնվում էր հոգեբուժական բաժանմունքում:

դատական կարգով բողոքարկել իրեն հոգեբուժարանում տեղավորելը (4-րդ հոդվածի 2-րդ կետ): Հանձնարարականով նույնպես կարևորում է անձի՝ անձնապես լաված լինելու իրավունքը (4-րդ հոդվածի 3-րդ կետ): Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը պետք է լինի սահմանափակ ժամկետով, և դրա անհրաժեշտությունը պետք է պարբերաբար վերանայվի: Պացիենտը կարող է պահանջել դատական կարգով ողջամիտ պարբերականությամբ վերանայել իրեն հոգեբուժական հաստատությունում պահելու անհրաժեշտությունը: Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը կարող է ընդհատվել բժշկի կամ իրավասու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ, կամ երբ այդ մասին պահանջ է ներկայացնում պացիենտը կամ այլ շահագրգիռ անձ (8-րդ հոդված):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» 1999 թվականի փետրվարի 23-ի թիվ R(99)4 հանձնարարականում սահմանված են անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության սկզբունքները, և նշված հանձնարարականով պետություններին առաջարկվում է համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել մի շարք սկզբունքներով: Այդ սկզբունքներից է, մասնավորապես, այն, որ պաշտպանական միջոցները չպետք է ինքնաբերաբար անձին գրկեն իր առողջությանը միջամտելու համաձայնություն տալու կամ չտալու իրավունքից կամ ցանկացած ժամանակ այլ անձնական բնույթի որոշումներ կայացնելու հնարավորությունից, եթե նա ունակ է նման որոշումներ կայացնել (3-րդ սկզբունքի 2-րդ կետ): Չափահաս անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոց կարող է սահմանվել միայն նրա լիարժեք և կամավոր համաձայնությամբ (5-րդ սկզբունքի 1-ին կետ): Այն դեպքում, երբ պացիենտը, նույնիսկ ում նկատմամբ պաշտպանական միջոց է կիրառվել, իր առողջությանը միջամտության վերաբերյալ փաստացի ունակ է տրամադրել կամավոր և տեղեկացված համաձայնություն, նշված միջամտությունը կարող է իրականացվել միայն նրա համաձայնությամբ: Նշված համաձայնությունը ստանալու համար անձին պետք է դիմի միջամտություն իրականացնելու իրավասություն ունեցողը (22-րդ սկզբունքի 1-ին կետ): Այն դեպքում, երբ պացիենտը իր առողջությանը միջամտության վերաբերյալ փաստացի ունակ չէ տրամադրել կամավոր և տեղեկացված համաձայնություն, նշված միջամտությունը, այնուամենայնիվ, կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե դա բխում է անձի շահերից և նրա ներկայացուցչի կամ օրենքով լիազորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից ստացվել է թույլտվություն (22-րդ սկզբունքի 2-րդ կետ): Օրենքը պետք է պաշտպանության միջոցներ ապահովի, որպեսզի կարևոր բժշկական միջամտությունից առաջ անձը հնարավորություն ունենա լավել անկախ պետական մարմնի կողմից (23-րդ սկզբունքի 3-րդ կետ):

Վերը նշված խնդրի վերաբերյալ նախադեպ է ձևավորել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ ցանկացած պաշտպանիչ միջոց պետք է հնարավորինս արտացոլի իրենց կամքն արտահայտելու ունակ անձանց ցանկությունները: Նրանց կարծիքը չհարցնելը կարող է հանգեցնել խոցելի անձանց իրավունքների իրականացման չարաշահման և խոչընդոտման իրավիճակների<sup>435</sup>:

Անձին առանց նրա համաձայնության և դատարանի համապատասխան որոշման հոգեբուժական բաժանմունքում տեղավորելը և պահելը Եվրոպական դատարանը

<sup>435</sup> Տե՛ս՝ Ստանևն ընդդեմ Բուլղարիայի (Stanev v. Bulgaria) 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 153:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դիտարկել է որպես անձի ազատության ապօրինի սահմանափակում: Տվյալ պարագայում Եվրոպական դատարանը էական չի համարել պարզել, թե արդյոք անձը ուներ հարկադիր հոգեբուժական օգնություն պահանջող հոգեկան առողջության խնդիր, թե ոչ<sup>436</sup>:

Հոգեկան առողջության հիման վրա անձին ազատությունից զրկելու համատեքստում Եվրոպական դատարանը սահմանել է, որ անձը կարող է դիտվել որպես ազատությունից զրկված նույնիսկ այն ժամանակահատվածում, երբ կանոնավոր գտնվել է բաց տիպի հիվանդասենյակում՝ առանց հսկողության մուտք ունենալով հիվանդանոցի բակ և ունենալով հիվանդանոցից առանց ուղեկցության հեռանալու հնարավորություն<sup>437</sup>:

Ավելին՝ ազատությունից զրկելու հասկացությունը կազմված չէ միայն անձին ոչ կարճ ժամանակահատվածով որոշակի սահմանափակ տարածությունում պահելու օբյեկտիվ տարրից: Անձը կարող է համարվել ազատությունից զրկված, եթե որպես լրացուցիչ սուբյեկտիվ տարր, նա օրինական կերպով չի համաձայնել քննարկվող ազատազրկմանը<sup>438</sup>:

Ինչ վերաբերում է հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց ազատությունից զրկելուն, Եվրոպական դատարանի դիտարկմամբ, անձը չի կարող ազատությունից զրկվել որպես «հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձ», եթե հետևյալ երեք նվազագույն պայմանները բավարարված չեն. առաջին՝ պետք է վստահորեն հիմնավորվի, որ նա հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունի, երկրորդ՝ այդ խնդիրները պետք է լինեն հարկադիր ազատազրկում պահանջող տեսակի կամ աստիճանի, երրորդ՝ շարունակական ազատազրկման օրինաչափությունը կախված է այդպիսի հիվանդության կայունությունից<sup>439</sup>:

Եվրոպական դատարանը, անձին հոգեբուժական հաստատությունում տեղավորելը համարելով անձի ազատության սահմանափակում, նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետում հիշատակվող դատական քննությունները պարտադիր չէ, որ միջտ ուղեկցվեն այն նույն երաշխիքներով, որոնք պահանջվում են 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն քաղաքացիական կամ քրեական դատավարությունների համար: Այնուամենայնիվ, էական է, որ շահագրգիռ անձի համար մատչելի լինի դատարանը, և նա հնարավորություն ունենա լսված լինելու կամ անմիջականորեն կամ, անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչության որևէ ձևով<sup>440</sup>:

Խնդրի կապակցությամբ ուսումնասիրվել է նաև առաջատար երկրների միջազգային փորձը: Ուսումնասիրության երկրներում (օրինակ՝ Ավստրիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա,

<sup>436</sup> Տես՝ Սթորքն ընդդեմ Գերմանիայի (Storck v. Germany) 2005 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61603/00, կետ 112:

<sup>437</sup> Տես՝ Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ashingdane v. The United Kingdom) 1985 թվականի մայիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 8225/78, կետ 42):

<sup>438</sup> Տես՝ Սթորքն ընդդեմ Գերմանիայի (Storck v. Germany) 2005 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61603/00, կետ 74:

<sup>439</sup> Տես՝ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի (Shtukaturov v. Russia) 2008 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 44009/05, կետ 114:

<sup>440</sup> Տես՝ Ստանևն ընդդեմ Բուլղարիայի (Stanev v. Bulgaria) 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 171:

Թուրքիա և այլն) անձի կամքին հակառակ հոգեբուժական հաստատությունում երկարաժամկետ տեղավորելու վերաբերյալ որոշումը ուղղակիորեն ընդունվում կամ հաստատվում է դատավորի կողմից:

Նմանատիպ երաշխիքներ սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրազեկ լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար: Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից: Ըստ նույն օրենքի 16-րդ հոդվածի՝ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ հոգեկան խանգարումով տառապող անձի<sup>41</sup> բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա: Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կարող է իրականացվել առանց նրա կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության՝ միայն օրենքով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման և ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքերում:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ հոգեկան խանգարումով տառապող անձը կամ նրա օրինական ներկայացուցչին իրավունք ունի հրաժարվելու առաջարկված բուժօգնությունից կամ դադարեցնելու այն, բացառությամբ օրենքով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման և ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքերի:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոսպիտալացման հիմք է անձի հոգեկան խանգարման առկայությունը և բժիշկ-հոգեբույժի ստացիոնար հետազոտության կամ բուժման մասին եզրակացությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

<sup>41</sup> Սույն հատորման սույն բաժնում «հոգեկան խանգարմամբ տառապող անձ» եզրույթն օգտագործվում է բացառապես այն դեպքում, երբ հղում է կատարվում գործող իրավական ակտերի, մասնավորապես Օրենքի դրույթներին: Նշյալ եզրույթի օգտագործումը խնդրահարույց է և չի ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության հարգման երաշխիքների իրացումը, քանի որ այն գնահատողական է և պիտակավորում է հոգեկան հաշմանդամություն ունեցող անձին և հաշմանդամություն ունենալու արդյունքում անձի հոգեվիճակը: Բոլոր այն դեպքերում, երբ սույն բաժնում հղում չի կատարվում իրավական ակտին, օգտագործվում է «հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ» եզրույթը:

սահմանված դեպքերում հոգեբուժական փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտությունը:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հոգեբուժական հետազոտումն իրականացվում է հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ հիվանդի վիճակի և հետազոտման բնույթի վերաբերյալ վերջիններիս լիարժեք տեղեկություն տալուց հետո: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հոգեբուժական հետազոտումը կարող է իրականացվել առանց հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության միայն այն դեպքերում, երբ հետազոտվողը, հոգեկան վիճակից ելնելով, անկարող է արտահայտել իր ազատ կամքը և չունի օրինական ներկայացուցիչ:

Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հոժարակամ (կամավոր) կարգով գտնվող հիվանդի դուրսգրումը կատարվում է հոգեբույժի եզրակացության հիման վրա կամ հիվանդի պահանջով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի: Նշված դեպքերում հոգեբուժական կազմակերպության տնօրենը սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով դիմում է դատարան:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի կողմից պարտադիր հետազոտվելուց հետո, եթե 1) նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, կամ 2) բուժում չիրականացնելը կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերը նշված դեպքերում հոգեբուժական հանձնաժողովի կողմից հոսպիտալացման մասնագիտական հիմնավորվածությունը հաստատելու դեպքում համապատասխան հոգեբուժական կազմակերպության տնօրենը հոգեկան խանգարումներով տառապող անձի կողմից բուժումից հրաժարվելու կամ բուժումը դադարեցնելու պահանջ ներկայացնելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում, դիմում է դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու համար:

Օրենքով հստակ սահմանվում են նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մյուս նվազագույն իրավունքները, որոնք, ըստ բուժում ստացող զինձառայողների, Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում չեն ապահովվում:

Մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարում ունեցող անձինք իրազեկվում են իրենց իրավունքների, հոգեբուժական հաստատությունում գտնվելու նպատակի և պատճառների մասին՝ դրանց վերաբերյալ նշում կատարելով բժշկական փաստաթղթերում: Օրենքի Հավելվածի 6-րդ բաժնի 5-րդ կետի համաձայն՝ եթե հոգեկան խանգարումով տառապող անձն ի վիճակի չէ հասկանալ իր իրավունքները կամ ստորագրել իր իրավունքների իրազեկման թերթիկը, ապա տվյալ անձի իրավունքները բացատրվում են անձի օրինական ներկայացուցչին, եթե այդպիսին առկա է, որն էլ ստորագրում է նշված իրազեկման թերթիկը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք իրավունք ունեն հաստատել նամակագրական կապ, օգտվել հեռախոսակապից, հանդիպել այցելուների հետ, ունենալ և ձեռք բերել առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ: Նշված անձինք ունեն նաև հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ

մարմնամարզության իրավունք: Օրենքի Հավելվածի 1-ին բաժնի 1-ին կետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ տաքսոֆոն՝ հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար հասանելի վայրում: Օրենքի Հավելվածի 2-րդ բաժնի 3-րդ կետի համաձայն՝ հոգեկան խանգարումներով տառապող անձինք իրենց միջոցների հաշվին ձեռք են բերում առաջին անհրաժեշտության իրեր և պարագաներ, բացառությամբ ծակող, կտրող իրերի, իրենց օրինական ներկայացուցիչների կամ հոգեբուժական կազմակերպության ավագ բուժքրոջ միջոցով, կամ եթե տվյալ հոգեբուժական կազմակերպության տարածքում տեղակայված է վաճառք իրականացնող կրպակ, ապա հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձը կարող է առաջին անհրաժեշտության իրեր և պարագաներ կրպակից գնել անձամբ (Կարծում ենք, նշված իրավունքի իրացմանը կարող է խոչընդոտել հոսպիտալի տարածքում բանկոմատի բացակայությունը):

Ամփոփելով վերը նշված ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ միջազգային և ներպետական այն չափանիշները, որոնք սահմանված են հոգեբուժական հաստատությունների համար, Պաշտպանության ենթակայության հոգեբուժական բաժանմունքում չեն պահպանվում, ինչը խիստ մտահոգիչ է, և խնդիրը հրատապ լուծման կարիք ունի:

Չափազանց կարևոր է անձին հոգեբուժական բաժանմունքում տեղավորելիս հաշվի առնել նրա համաձայնությունը, հակառակ դեպքում՝ այն կարող է իրականացվել միայն դատարանի որոշման հիման վրա: Բացի դրանից, անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը կոնկրետ միջոցներ ձեռնարկի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված նվազագույն երաշխիքները Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում ապահովելու ուղղությամբ:

Հատկանշական է նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունվարի 30-ի թիվ ՍԴՈ-1504 որոշմամբ, ի թիվս այլնի, Սահմանադրությանը հակասող է ճանաչել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման» և «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքների այն դրույթները, որոնք չեն ապահովում անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին՝ չսահմանելով իրազեկված համաձայնություն ստանալու պահանջ, ինչպես նաև չեն ապահովում նշված անձանց՝ իրենց վերաբերյալ բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքը:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. բարելավել Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի շենքային պայմանները, այդ թվում՝ նոր շենքային պայմաններ ապահովելու միջոցով,
2. բացառել առանց զինձառայողների գրավոր համաձայնության կամ դատարանի որոշման զինձառայողներին հոգեբուժական բաժանմունք ընդունելու, ինչպես նաև նրանց հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու դեպքերը,
3. հոգեբուժական բաժանմունքում զինձառայողներին իրազեկել նրանց իրավունքների, գտնվելու նպատակի և պատճառների մասին,
4. հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինձառայողների բջջային հեռախոսներից օգտվելը կազմակերպել այնպես, ինչպես հոսպիտալների այլ բաժանմունքներում,
5. ապահովել հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինձառայողների հասանելիությունը բանկոմատին և խանութին (թեյարանին),
6. ապահովել հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինձառայողների ամենօրյա առնվազն մեկ ժամ զբոսանքի իրավունքը,

7. հոգեբուժական բաժանմունքում բուժման կամ փորձաքննության ավարտից հետո լուծել զինճառայողներին բաժանմունքից դուրս գրելու հարցը,

8. զինճառայողներին հնարավորություն ընձեռնել սեփական միջոցների հաշվին ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից գննության:

4. Ձինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը

«Ձինվորական ծառայության և զինճառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինճառայողները, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած խեղման կամ վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինճառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են օրենքով սահմանված կարգով:

Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշակի դեպքերում ծառայության ընթացքում հիվանդություն ձեռք բերած նախկին զինճառայողները չեն օգտվում անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունքից: Մասնավորապես

1) պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ովքեր զինվորական ծառայության ընթացքում ձեռք են բերել հիվանդություն, որը հիմք չի հանդիսացել նրանց ոչ պիտանի ճանաչելու համար, սակայն զորացրվել են ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից:

2) պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ում զինվորական ծառայության ընթացքում ցուցվել է բժշկական օգնություն, սակայն զինվորական ծառայության ընթացքում չի իրականացվել, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից:

3) զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ում նկատմամբ բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամության խումբ չի սահմանվել, օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ միայն բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից կազմված վերականգնողական անհատական ծրագրի շրջանակներում:

4) այն պայմանագրային զինճառայողները, ովքեր զինվորական ծառայությունից արձակվել են պահեստազոր ոչ թե երկարամյա ծառայության կամ ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով, այլ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնությունից նույնիսկ այն դեպքում, երբ հիվանդությունը ձեռք են բերել ծառայության ընթացքում:

Նշված խնդիրները բարձրացվել են նաև Պաշտպանի 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներով, որոնց հիման վրա առաջարկվել է սահմանել, որ ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս պարտադիր ժամկետային զինճառայողների մոտ բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է նրանց տրամադրել անվճար բժշկական օգնություն և սպասարկում: Առաջարկվել է ամրագրել նաև, որ եթե զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինճառայողների առողջական խնդիրները, ապա ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով պետք է իրականացվի զինվորական ծառայությունից արձակվելուց հետո:

Պաշտպանն արձանագրում է, որ 2019 թվականին խնդրի վերաբերյալ Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ:

Թեև բողոքների քննարկման արդյունքում գորացրված նախկին զինծառայողները ստացել են անվճար բժշկական օգնություն և սպասարկում, սակայն խնդիրը շարունակում է մնալ, և այն պահանջում է հստակ և միասնական լուծումներ:

Պաշտպանության նախարարությունը նույնպես տեղեկացրել է, որ 2019 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հաշմանդամություն չունեցող կամ երկարամյա զինվորական ծառայության կենսաթոշակառու չհանդիսացող նախկին զինծառայողների բուժումը կազմակերպվել է զինվորական ծառայության ավարտից հետո՝ ռազմաբժշկական հաստատություններում: Նման դեպքերը կապված են եղել զինվորական ծառայության ընթացքում սկսած բուժումն ավարտին չհասցնելու հետ (օրինակ՝ վնասվածքների ժամանակ տեղադրված մետաղական կոնստրուկցիաների հեռացման երկրորդ փուլի վիրահատության կազմակերպումը և այլն):

Ուստի, անհրաժեշտ է՝

1. Կառավարության որոշմամբ սահմանել, որ ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս պարտադիր ժամկետային զինծառայողների մոտ բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում նրանց տրամադրել անվճար բժշկական օգնություն և սպասարկում,

2. սահմանել, որ այն դեպքում, երբ զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինծառայողների առողջական խնդիրները, ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով պետք է իրականացվի զինվորական ծառայությունից արձակվելուց հետո,

3. օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով գորացրված անձինք օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ անկախ հաշմանդամության ձեռք բերելու հանգամանքից,

4. օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ նախկին պայմանագրային զինծառայողներն օգտվում են զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության կապակցությամբ անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ անկախ զինվորական ծառայությունից արձակվելու հիմքից:

5. Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը

Պետության անմիջական պարտականությունն է զինծառայողի համար առավելագույն չափով ապահովել առողջական սահմանափակումներին համապատասխան այնպիսի ծառայողական պայմաններ, որոնք հնարավորություն կընձեռեն զինծառայողին շարունակելու ծառայությունը և չեն հանգեցնի առողջական վիճակի վատթարացման:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ պետությունը պետք է գործնական միջոցներ ձեռնարկի գորակոչված քաղաքացիների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով առողջությանը սպառնացող ռիսկը՝ այլնի հետ մեկտեղ տրամադրելով նրանց պահանջվող բժշկական օգնություն<sup>442</sup>: Մեկ այլ գործով դատարանն արձանագրել է, որ պետությունը

<sup>442</sup> Տե՛ս Քիլինջը և այլք ընդդեմ Թուրքիայի (Kilinc and others v. Turkey) գործով 2005 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, 41-րդ և 42-րդ կետեր:



պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված են՝ այլնի հետ մեկտեղ տրամադրելով նրան պահանջվող բժշկական օգնություն: Պետության առաջնային պարտականությունն է անձին զինվորական ծառայության գորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով<sup>443</sup>:

2018 թվականի տարեկան հաղորդման մեջ նշվել էր, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները չպահպանելու վերաբերյալ:

2019 թվականի ընթացքում ինչպես զինծառայողներից, այնպես էլ նրանց ընտանիքների անդամներից Պաշտպանը շարունակել է ստանալ տվյալ խնդրի վերաբերյալ բողոքներ: Ավելին, զորամասեր կատարած այցերի և պարտադիր ժամկետային զինծառայողների հետ առանձնազրույցների ընթացքում ևս արձանագրվել են առողջական վիճակով պայմանավորված սահմանափակումների հողվածները խստորեն չպահպանելու դեպքեր:

Օրինակ, զորամասում առանձնազրույցի ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայողներից մեկը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածի 26-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

ՀՀ կառավարության նշված որոշման 2-րդ հավելվածով սահմանվում է, որ 26-րդ հոդվածի «դ» կետով զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված քաղաքացին ազատվում է 4x100, 400, 1000, 3000 մետր և ավելի վազք ներառող վարժություններից, ինչպես նաև արգելագոտու հաղթահարումից:

Մինչդեռ, զինծառայողը նշել է, որ մյուս զինծառայողների հետ հավասարապես կատարում է նշված վարժությունները:

Չնայած զորամասի հրամանատարությունը պատրաստակամություն է հայտնել խնդիրը կարգավորել, այնուամենայնիվ, խիստ մտահոգիչ է նմանատիպ դեպքերի առկայությունը:

Հետևաբար, անհրաժեշտ է խստացնել հսկողությունը պարտադիր ժամկետային զինծառայողների առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները հետևողականորեն պահպանելու նկատմամբ:

**ԳԼՈՒԽ 6. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

**1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը**

Պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, պետք է հնարավորություն ունենա

<sup>443</sup> Տե՛ս Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (Chember v. Russia) գործով 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից: Հանրային ծառայության անցնելու իրավունքը երաշխավորվում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական ակտերով:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրվել է աշխատանքի ընտրության ազատության իրավունքը, իսկ 49-րդ հոդվածով՝ քաղաքացիների հանրային ծառայության անցնելու իրավունքը:

ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 12-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունք:

1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն:

«Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ 1742 (2006) հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները համազգեստով քաղաքացիներ են, ովքեր, հաշվի առնելով զինվորական ծառայության սահմանափակումները, ունեն նույն իրավունքներն ու ազատությունները և դրանց պաշտպանության իրավունքը, ինչպես մյուս քաղաքացիները:

Հետևաբար, պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, պետք է հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից:

ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայության ավարտից հետո պայմանագրային հիմունքներով ծառայության է անցել 535 քաղաքացի: Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2019 թվականի ընթացքում զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքեր (կրոնական համոզմունքներով և դավանանքով, սեռով և այլ հանգամանքներով պայմանավորված) չեն արձանագրվել:

2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր քաղաքացու դատվածությունը մարված լինելու պարագայում նրան պայմանագրային զինվորական ծառայության ընդունելը մերժելու խնդիր: Նշվել էր, որ նախկինում միայն դատվածություն ունենալու պատճառով քաղաքացու հետ զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքելուց հրաժարվելը խտրականության դրսևորում է<sup>444</sup>:

Չնայած 2019 թվականին չեն ստացվել պայմանագրային զինվորական ծառայության ընդունելը մերժելու հետ կապված բողոքներ՝ այնուամենայնիվ, զինվորական ծառայության ներգրավելիս քաղաքացիների իրավունքների ապահովման ուղղությամբ պետք է մշտական աշխատանքներ տանել՝ արդյունքում զինվորական ծառայությունը դարձնելով ավելի գրավիչ:

Պայմանագրային զինվորական ծառայության անցնելու գործընթացը հնարավորին հստակեցնելու համար կարևոր է ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի

<sup>444</sup> Տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 483-486:

դեկտեմբերի 17-ի թիվ 1550-Ն հրամանը, որով հաստատվել է «ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու կարգը»:

Զինվորական ծառայության անցնելիս անձանց իրավունքների ապահովման հարցերին անդրադարձ է կատարվել 2019 թվականի հոկտեմբերի 11-ի Պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստի ընթացքում, հատուկ ընդգծվել է, որ զինծառայողի կարգավիճակի բարձրացումը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի առաջնային սկզբունքներից է<sup>445</sup>:

Նաև այդ նպատակով Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին վերապահված ոչ ֆինանսական և այլ արտոնությունների վերաբերյալ մի շարք երկրների փորձը: Արդյունքում, ներկայացվել են կոնկրետ առաջարկներ, որոնց ներդրման արդյունքում բանակում ծառայությունը կդառնա ավելի գրավիչ<sup>446</sup>:

Զինվորական ծառայության ներգրավման բարձրացման հարցում առանցքային է ՀՀ նախագահի 2018 թվականի փետրվարի 17-ի ՆՀ-103-Ս հրամանագրով հաստատված՝ «ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը»: Ծրագրով ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունը 2018-2024 թվականներին շարունակելու է պահել և զարգացնել իր հասանելի ռեսուրսների համեմատ մեծաթիվ, խառը (գորակոչային և պայմանագրային) համալրմամբ զինված ուժեր, միջոցներ կձեռնարկի զինված ուժերում ծառայության տեսակների ընդլայնման, զինվորական ծառայության նկատմամբ սոցիալական ու մասնագիտական գրավչության, կոռուպցիայի դեմ պայքարի և հանրային վստահության բարձրացման, կադրային և մասնագիտական առաջխաղացման արդարության սկզբունքների վերաարժևորման հարցերում:

Ծրագրի 6-րդ նպատակի համաձայն՝ «Ձևավորվելու է պարտադիր և պայմանագրային ծառայության փոխկապակցված համակարգ, որը կառաջարկի պարտադիր զինվորական ծառայության այլընտրանքային լուծումներ և կապահովի պայմանագրային հիմունքներով զինված ուժերի համալրումն արհեստավարժ կադրերով»:

Քաղաքացիներին պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու ուղղությամբ ուշագրավ է Գերմանիայի փորձը, որտեղ գործում է «կարիերայի խորհրդատուների» կամ «երիտասարդ սպաների» ինստիտուտը: Վերջիններս քաղաքացիներին բանակ ներգրավելու, ծառայության առավելությունները ներկայացնելու համար այցելում են դպրոցներ, բուհեր, ուսուցիչների շրջանում կազմակերպում են վերապատրաստումներ, տրամադրում խորհրդատվություններ: Նրանք նաև երիտասարդների համար կազմակերպում են այցելություններ գորամասեր<sup>447</sup>:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. նպաստել հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը՝ պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանը նպատակաուղղված ծրագրերի, բարեփոխումների վերաբերյալ,
2. բարձրացնել հանրության շրջանում իրազեկվածությունը պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ընթացակարգերի վերաբերյալ,
3. հաճախակի իրականացնել իրազեկման արշավներ (օրինակ՝ հեռուստատեսությամբ) զինծառայողներին տրվող սոցիալական արտոնությունների մասին,

<sup>445</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/963>:

<sup>446</sup> Առաջարկների մասին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ սույն բաժնի «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ոչ ֆինանսական բնույթի արտոնությունները» թեմայում:

<sup>447</sup> [https://wri-irg.org/en/programmes/world\\_survey/reports/Germany](https://wri-irg.org/en/programmes/world_survey/reports/Germany):

4. սահմանել պայմանագրային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության առավել բարձր երաշխիքներ,

5. խստացնել հսկողությունը զինված ուժեր մուտք գործող անձանց իրավունքների երաշխավորման, հավասար հնարավորությունների ապահովման հարցերում՝ բացառելով խտրականության որևէ դրսևորում,

6. բարձրացնել ռազմական կրթության որակը, ռազմակրթական ոլորտն ապահովել ժամանակակից կրթական ու մեթոդական ծրագրերով՝ առավել գրավիչ դարձնելով ռազմական կրթությունը,

7. զինված ուժեր ներգրավելիս վերանայել մոտեցումները: Սա նշանակում է, որ զինված ուժերը պետք է արդյունավետորեն մրցակցեն աշխատանքի շուկայում բարձր մակարդակի մասնագետներին ներգրավելու համար՝ առավելապես շեշտը դնելով որակական ցուցանիշների վրա:

2. Պայմանագրային զինծառայողներին շաբաթ օրը ծառայության ներգրավելը, այլ գորամաս տեղափոխելը և գործուղելը

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ զինծառայողների աշխատանքային շաբաթվա համար սահմանված ժամանակահատվածը չպահպանելու վերաբերյալ: Խնդրի մասին պայմանագրային զինծառայողները հայտնել են նաև գորամասեր կատարված այցերի ընթացքում: Մասնավորապես, զինծառայողները նշել են, որ ներգրավվում են շաբաթ օրերին գորամասերում անցկացվող հավաքակայանային-տնտեսական միջոցառումներին, սակայն հաջորդ շաբաթվա մեջ դրա փոխարեն հանգստյան օր չեն ստանում:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ոչ աշխատանքային օրերին պայմանագրային զինծառայողներին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավվելու և շաբաթվա մեջ այլ հանգստյան օր չտրամադրելու վերաբերյալ ստացվել է 19 բողոք:

Մինչդեռ, զինծառայողների աշխատանքային շաբաթվա համար սահմանված ժամանակահատվածը և զինծառայողների հանգստի իրավունքը պահպանելու անհրաժեշտությունը կարևորվում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական փաստաթղթերով: Այսպես, 2-րդ կետի համաձայն՝ զինվորական կյանքի առանձնահատկությունները հաշվի առնելով հանդերձ՝ զինծառայողներն, անկախ իրենց կարգավիճակից, օգտվում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական սոցիալական խարտիայով (վերանայված), ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ այլ համապատասխան փաստաթղթերով երաշխավորված իրավունքներից այնքանով, որքանով պետությունները ստանձնում են այդ պարտավորությունները:

Խարտիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրական և շաբաթական աշխատանքային ժամերի ողջամիտ տևողությունն ապահովելու նպատակով աշխատանքային շաբաթը պետք է աստիճանաբար կրճատվի այն չափով, որը թույլատրվում է արտադրական աճով և այլ համապատասխան գործոններով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աշխատանքի արդար պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են տրամադրել շաբաթական հանգիստ, որը հնարավորին չափով պետք է համընկնի համապատասխան երկրում կամ տարածաշրջանում ավանդույթով կամ սովորույթով որպես հանգստի օր ճանաչված օրվա հետ:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 67-րդ կետի համաձայն՝ զինծառայողները պետք է իրավունք ունենան օգտվելու հանգստի ժամանակահատվածներից: Հանգստի ժամանակահատվածները պետք է հնարավորինս ներառվեն նաև ռազմական պատրաստության և գործողությունների պլանավորման փուլերում:

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

Պետք է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսում է, որ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: Հետևաբար, տվյալ պարագայում կիրառելի են նաև Աշխատանքային օրենսգրքի դրույթները:

Այսպես, Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովումը (ներառյալ՝ հանգստի իրավունքը):

Աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

Աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գործատուն պարտավոր է ստույգ հաշվառել յուրաքանչյուր աշխատողի օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը, ըստ որի՝ կապահովվի այն տեղեկատվությունը, որով հնարավոր կլինի աշխատաժամանակի վերաբերյալ սահմանված նորմերի պահանջների կատարումը:

Աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում ընդհանուր հանգստյան օրը շաբաթը և կիրակին են: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանգստյան օրերին աշխատողներին արգելվում է ներգրավել աշխատանքներում՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սպաների, ենթասպաների, պայմանագրով զինվորական ծառայության անցած զինվորների, սերժանտների, ավագների, ինչպես նաև կին զինծառայողների համար ծառայողական շաբաթվա տևողությունը սահմանվում է հնգօրյա շաբաթ՝ հանգստյան երկու օրով:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 227-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանգստյան և տոնական օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված սպաներին ու ենթասպաներին զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշումով հանգիստ է տրվում շաբաթվա մյուս օրերին՝ ծառայության շահերի հաշվառմամբ: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին և կին զինծառայողներին

շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավելու և այն շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու անհնարինության դեպքում այդ ժամանակը գումարվում և զինծառայողին է տրվում հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հիմնական արձակուրդներին:

Վերը նշված իրավանորմերի համադիր վերլուծության արդյունքում գործերից մեկով Պաշտպանը կայացրել է Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության որոշում, որով արձանագրել է, որ զինծառայողների համար սահմանված է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով: Ընդ որում, զինծառայողների աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից: Բացի այդ, գործատուն պարտավոր է ստույգ հաշվառել յուրաքանչյուր զինծառայողի օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը, որպեսզի ապահովվի զինծառայողների հանգստի իրավունքը: Հանգստյան օրերին զինծառայողի կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողին մեկ ամսվա ընթացքում պետք է տրամադրվի վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը պետք է ավելացվի նրա ամենամյա արձակուրդին: Այն դեպքերում, երբ հանգստյան օրերին կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողին վճարովի այլ հանգստյան օր չի տրամադրվել կամ այն չի ավելացվել ամենամյա արձակուրդին, անհրաժեշտ է զինծառայողին տրամադրել համապատասխան չափի դրամական հավելում: Այն դեպքերում, երբ զինվորական ծառայության ընթացքում հանգստյան օրերին կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողին վճարովի այլ հանգստյան օր չի տրամադրվել կամ այն չի ավելացվել ամենամյա արձակուրդին, ինչպես նաև դրամական հավելում չի տրամադրվել, անհրաժեշտ է այն փոխհատուցել զինվորական ծառայությունից արձակվելիս կատարվող վերջնահաշվարկի ժամանակ:

Պայմանագրային զինվորական ծառայությունը կազմակերպելու գործընթացը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել մի քանի օրենսդրական փոփոխություններ:

Այսպես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված է հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող սպայական կազմի պայմանագրային զինծառայողներին ծառայության նոր վայր տեղափոխելու հնարավորություն: Մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պլանային փոխարինման կարգով ծառայության նոր վայր տեղափոխման ենթակա են հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող սպայական կազմի պայմանագրային զինծառայողները: Հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողությունը և տեղափոխման կարգը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը: Տեղափոխվող պայմանագրային զինծառայողները չեն օգտվում ծառայության նոր վայրն ընտրելու իրավունքից: Նրանք նշանակվում են հավասար կամ բարձր զինվորական պաշտոնի՝ իրավասու պաշտոնատար անձի հրամանով:

Պաշտպանության նախարարությունից նախկինում ստացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ զինված ուժերի սպայական կազմի պլանային տեղափոխման կարգը սահմանված է ՀՀ պաշտպանության նախարարի գաղտնի հրամանով, քանի որ պարունակում է զորամասերի տեղակայման վայրերի և կարգայնության հետ կապված տվյալներ: Այստեղ կա որոշակի խնդիր, քանի որ զորամասերի տեղակայման վայրերը և կարգայնությունը, ինչպես նաև հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողությունն ու տեղափոխման կարգը չհիմնավորված ներառվել են մեկ ակտում, ինչն առաջացրել է դրանք հրապարակայնացնելու խնդիր:

Այսպես, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում են պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների

շրջանակը: Նշված օրենքի դրույթների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ որոշակի տեղեկությունների համար գաղտնիություն սահմանելն ինքնանպատակ չէ. գաղտնիության սահմանումը պետք է ունենա իրավաչափ նպատակ՝ կանխարգելելու դրանց տարածման հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե ենթադրյալ, այլ իրական ռիսկերին:

Ճիշտ է, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների շարքին է դասվում նաև գործառնաբան տեղակայման վայրերի վերաբերյալ տեղեկությունը, սակայն նշված չեն և չէին էլ կարող նշված լինել հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողությունը և տեղափոխման կարգը:

Բացի դրանից, զինծառայողների իրավունքների վերաբերյալ տվյալները պետք է հասանելի լինեն նրանց, որպեսզի կարողանան արդյունավետ կերպով իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը:

Վերը նշված տեղեկությունների հրապարակային չլինելը կարող է պատճառ հանդիսանալ, որ հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող զինծառայողները սահմանված ժամկետը լրանալուց հետո չտեղափոխվեն ծառայության նոր վայր:

Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ, սակայն խնդիրը դեռևս չի կարգավորվել:

Զինվորական օրենսդրությամբ բացահայտվել է մեկ այլ օրենսդրական խնդիր: Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է զինծառայողներին Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում մինչև վեց ամիս ժամկետով վերապատրաստման գործուղելու հնարավորություն: Մինչդեռ, սահմանված չէ գործուղումից վերադառնալիս զինծառայողին մինչև գործուղվելը զբաղեցրած պաշտոնին կամ հավասարազոր պաշտոնի կամ զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի նշանակելու օրենսդրական պահանջ:

Պետք է նշել, որ վերապատրաստման գործուղման նպատակը զինծառայողների մասնագիտական կարողությունների զարգացումն է, ուստի տրամաբանական կլինի վերապատրաստումը հաջողությամբ անցնելու դեպքում գործուղումից վերադառնալիս նրանց նշանակել ավելի բարձր կամ առնվազն հավասարազոր պաշտոնի:

Հատկանշական է, որ նման երաշխիք ամրագրված է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում, որի 14-րդ հոդվածի 9.1-րդ մասի համաձայն՝ ուսման կամ այլ պետական մարմիններ կամ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով միջազգային կազմակերպություններ գործուղված ոստիկանության ծառայողները գործուղումից վերադառնալիս նշանակվում են մինչև գործուղվելը զբաղեցրած պաշտոնին կամ հավասարազոր պաշտոնի կամ զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. միջոցներ ձեռնարկել զինծառայողների օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը պահպանելու ուղղությամբ: Հանգստյան օրերին զինծառայողների կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողներին տրամադրել այլ հանգստյան օր կամ այդ օրն ավելացնել նրանց ամենամյա արձակուրդին կամ զինծառայողներին վճարել համապատասխան չափի դրամական հավելում,

2. հրապարակայնացնել հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողության և տեղափոխման կարգի վերաբերյալ տեղեկությունները,

3. հսկողություն իրականացնել պլանային տեղափոխման գործընթացի նկատմամբ,

4. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում ամրագրել, որ վերապատրաստման գործուղված զինծառայողները գործուղումից

վերադառնալիս նշանակվում են մինչև գործուղվելը զբաղեցրած պաշտոնին կամ հավասարագոր պաշտոնի կամ զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի:

### 3. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը

Ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական փաստաթղթերը հռչակում և երաշխավորում են զինված ուժերի կազմից զինծառայողների դուրս գալու իրավունքի լիարժեք իրացումը:

Այսպես, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 16-րդ կետի բովանդակության համաձայն՝ զինված ուժերի անդամներն ունեն զինված ուժերից դուրս գալու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք: Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում նշվում է, որ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում համոզմունքներից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը:

Չնայած այս հանգամանքին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետն՝ ամբողջությամբ և իր համատեքստում, ուղղված է միայն պարտադիր զինվորական ծառայությանն այն երկրներում, ուր այն գոյություն ունի երկու պատճառով. մի կողմից՝ կապված համոզմունքների հիման վրա ծառայություն հրաժարվող անձանց հետ, որոնք ամենայն հավանականությամբ նորակոչիկներ են և ոչ կադրային զինվորականներ, իսկ մյուս կողմից՝ պարբերության վերջում նշված զինվորական պարտադիր ծառայության հստակ վկայակոչման հետ կապված<sup>448</sup>: Հետևաբար, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության՝ կոնվենցիոն վերը նշված դրույթը չի կարող տարածվել պայմանագրային զինվորական ծառայության նկատմամբ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չճանաչված ժամկետ: Նույն օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ պայմանագրային զինվորական ծառայությունից չարձակվելու վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքով զինծառայողը տեղեկացրել է, որ 2016 թվականին ռազմաուսումնական հաստատությունն ավարտելուց հետո անցնել է պայմանագրային զինվորական ծառայության: 2019 թվականին զեկուցագիր է ներկայացրել վերադաս հրամանատարությանը զինվորական ծառայությունից

<sup>448</sup> Տե՛ս Շիտոսն ընդդեմ Հունաստանի (Chitos v. Greece) գործով 2015 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 51637/12, կետ 83:



վաղաժամկետ արձակվելու համար, արդյունքում ստացել է պարզաբանում, որ զինվորական ծառայությունից կարող է արձակվել միայն ուսման ծախսերի գումարը վճարելուց հետո: Զինծառայողը նշել է, որ համաձայն չէ ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափի հետ և ցանկանում է արձակվել զինված ուժերից:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 347-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «Զինծառայողին հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում զինվորական ծառայությունից արձակելիս պայմանագրային պարտավորությունն անպատշաճ կատարելու համար իրավական հետևանքի կիրառման» կարգի 8-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված հիմքով զինվորական ծառայությունից արձակման ենթակա զինծառայողի կողմից օրենքով սահմանված տուժանքը սահմանված ժամկետում չվճարելու կամ վճարելուց հրաժարվելու դեպքում, ինչպես նաև եթե զինծառայողը ցանկություն չի հայտնել շարունակելու զինվորական ծառայությունը, պետական լիազոր մարմնի կադրային ստորաբաժանումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրականացնում է զինծառայողի արձակումը զինվորական ծառայությունից և արձակման մասին հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում զինծառայողի և տուժանքի ընդհանուր գումարի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է պետական լիազոր մարմնի իրավաբանական ստորաբաժանում՝ օրենքով սահմանված տուժանքը դատական կարգով բռնագանձելու համար: Նմանատիպ կարգավորում է նախատեսվել նաև ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 393-Ն որոշմամբ:

Հետևաբար, վերը նշված օրենքի և Կառավարության որոշման կարգավորումների համաձայն՝ եթե զինծառայողը հրաժարվում է փոխհատուցել ուսման ծախսերը, ապա նա պետք է ազատվի զինվորական ծառայությունից և հաշվառվի պահեստագործում, իսկ ուսման ծախսերի բռնագանձումն իրականացվի դատական կարգով:

Պաշտպանության նախարարության հետ բարձրացրած հարցի քննարկման արդյունքում զինծառայողն արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստագործ:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ զինվորական ծառայությունից արձակվելու հարցում արհեստական խոչընդոտներ ստեղծելու միտում չկա, և այն իրականացվում է սահմանված ժամկետներում: Նախարարությունը նաև հայտնել է, որ զինվորական ծառայությունից արձակման գործընթացի ձգձգման 43 դեպքերն աշխատանքային կարգով լուծում են ստացել:

2018 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն առաջարկել էր կատարել ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վեր հանելու պայմանագրային զինծառայողների՝ պայմանագրից հրաժարվելու և զինվորական ծառայությունից արձակվելու պատճառները: Նշվել էր, որ միայն այդ պատճառների վերհանման և դրանց լուծման միջոցով հնարավոր կլինի ՀՀ զինված ուժերում ծառայությունը դարձնել գրավիչ, ինչն իր հերթին կավելացնի զինված ուժերում ծառայություն անցնելու ցանկություն հայտնող անձանց քանակը և կնվազեցնի զինված ուժերից արձակվող զինծառայողների թիվը<sup>449</sup>:

Այս կապակցությամբ 2019 թվականին Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ յուրաքանչյուր եռամսյակում գորամասերի հրամանատարներին խնդիր է դրվում գրուցել յուրաքանչյուր պահեստագործ արձակվողի հետ և պարզել արձակման պատճառները: Ըստ նախարարության՝ զինված ուժերից արձակման հիմնական պատճառը սոցիալ-կենցաղային է:

<sup>449</sup> Տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 488-489:

Անհրաժեշտ է արձանագրել, որ 2019 թվականին զինված ուժերից արձակվելու գործընթացի վերաբերյալ բողոքները նվազել են, այնուամենայնիվ, շարունակում է մտահոգիչ մնալ տվյալ հարցի վերաբերյալ բողոքների առկայությունը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. ձգձգումները բացառելու նպատակով խստացնել հսկողությունը պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու գործընթացի նկատմամբ,

2. լրացուցիչ մեխանիզմների ներդրմամբ (օրինակ՝ սոցիալական) առավել բարձրացնել զինծառայողի կարգավիճակը, ինչը կնվազեցնի զինված ուժերից արձակվող զինծառայողների քանակը:

4. Առողջական վիճակով պայմանավորված զինվորական ծառայությունից արձակելը

2019 թվականին Պաշտպանին հասցեագրվել են առողջական վիճակի պատճառով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու հետ կապված բողոքներ: Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված ցանկով նախատեսված են որոշակի հիվանդություններ, որոնց առկայության դեպքում զորամասի (ՊՆ, ՁՈՒ ԳՇ կառուցվածքային միավորի) հրամանատարի (պետի) միջնորդությամբ, պարտադիր հաշվի առնելով փորձաքննվողի՝ ծառայությունը շարունակելու անձնական ցանկությունը, կարող է անհատապես կայացվել որոշում՝ «Սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար»:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ առողջական վիճակի պատճառով «սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար» որոշումը կայացնելու նպատակով ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին է ներկայացվել թվով 142 միջնորդություն, որոնցից 130 միջնորդության Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետը տվել է իր համաձայնությունը:

Նշված կարգավորման վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ դրանով զորամասերի հրամանատարներին տրվում է հայեցողական լիազորություն, ինչը, իհարկե, հասկանալի է այն տեսանկյունից, որ կոնկրետ զորամասում ծառայության կազմակերպումը, պայմանների և որևէ զինծառայողի առողջական վիճակի կամ մասնագիտական ունակությունների համատեղելիությունը գնահատում է հենց հրամանատարը: Սակայն, կարևոր է, որ այդպիսի հայեցողությունը չհանգեցնի չարաշահումների կամ սխալ կիրառելիության:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքով Պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության պայմանագրային զինծառայողը տեղեկացրել է, որ իր մոտ առաջացել է առողջական խնդիր, որի առկայության դեպքում՝ սահմանափակումով պիտանի կարող է ճանաչվել միայն հրամանատարի միջնորդությամբ: Ռազմական ոստիկանությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ նշված քաղաքացին բարեխիղճ զինծառայող է, սակայն առկա է մտահոգություն, որ նրա առողջական վիճակը թույլ չի տա շարունակել զինվորական ծառայությունը:

Արդյունքում՝ զինծառայողի հրամանատարի կողմից ներկայացվել է միջնորդություն, և նա Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Մեկ այլ դեպքում՝ պայմանագրային զինծառայողը Պաշտպանին տեղեկացրել է, որ իր մոտ հայտնաբերվել է այնպիսի հիվանդություն, որի առկայության պայմաններում սահմանափակումով պիտանի կարող է ճանաչվել հրամանատարի միջնորդությամբ, սակայն հրամանատարը միջնորդություն չի ներկայացրել:

Պաշտպանության նախարարությունից պարզաբանվել է, որ զինծառայողի ծառայության վայրի գորամասը մարտական հերթապահություն է իրականացնում այնպիսի պայմաններում, որոնք անհամատեղելի են զինծառայողի մոտ առկա հիվանդության հետ: Միաժամանակ, ի հավելումն առողջական վիճակի, նշվել է, որ զինծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարել է թերացումներով, որի համար ենթարկվել է նաև կարգապահական պատասխանատվության:

Հասկանալի է հիվանդության և զինվորական ծառայության անհամատեղելիության պայմաններում հրամանատարի կողմից միջնորդություն չներկայացնելը, սակայն մտահոգիչ է այն, որ առողջական վիճակով պայմանավորված միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունն առաջանալիս կարող է նաև հիմք ընդունվել զինծառայողի նախկինում կարգապահական խախտումներ կատարած լինելու հանգամանքը: Հենց սա էլ հանդիսանում է հայեցողության այն սահմանը, որը չպետք է խախտվի գորամասերի հրամանատարների կողմից: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքով նախատեսված են կարգապահական խախտումներ կատարած զինծառայողներին տրվող տույժերի տեսակները, որոնցից ամենախիստը զինվորական ծառայությունից արձակումն է: Եթե զինծառայողը կատարել է այնպիսի կարգապահական խախտումներ, որոնք օրենքի տեսանկյունից անհամատեղելի են ծառայության հետ, ապա նրան ծառայությունից արձակելը պետք է իրականացվի հենց նշված տույժը կիրառելու իրավական ընթացակարգով: Հետևաբար, Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ նախատեսված որոշակի հիվանդությունների առկայության դեպքում գորամասի հրամանատարի միջնորդություն ներկայացնելը պետք է դիտարկվի բացառապես զինծառայողի առողջական վիճակի, նրա մոտ առկա հիվանդության և զինվորական ծառայության հետ համատեղելիության տեսանկյունից: Հակառակ դեպքում՝ զինծառայողի կարգապահությունն առողջական վիճակով պայմանավորված միջնորդություն չներկայացնելու համար հիմք ընդունելը կարող է դիտարկվել որպես ծառայությունից արձակելու քողարկված հիմք:

Բացի այդ, վերոնշյալ միջնորդության վերաբերյալ կարգավորումից պարզ չէ, թե այդպիսի հնարավորություն նախատեսված է զինծառայողի անմիջական, թե նաև վերադաս հրամանատարության համար, ինչը կարող է տարակերպ մեկնաբանությունների առիթ հանդիսանալ: Մակայն, անհրաժեշտ է նշել, որ հնարավոր են դեպքեր, երբ զինծառայողի մոտ առկա հիվանդությունը խոչընդոտի նրա ծառայությանը կոնկրետ գորամասում իրականացնելուն (պայմանավորված, օրինակ, մարտական հերթապահության մեջ ընդգրկված լինելու կամ գորամասի բարձրադիր գոտում գտնվելու և այլ հանգամանքներով), համատեղելի լինի մեկ այլ գորամասի պայմանների հետ: Հետևաբար, զինծառայողին ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչելու միջնորդություն ներկայացնելու հնարավորություն կարող է ունենալ նաև ոչ միայն նրա անմիջական, այլև վերադաս հրամանատարությունը՝ հնարավորության դեպքում քննարկելով զինծառայողին այլ գորամաս տեղափոխելու հարցը (օրինակ՝ գորամիավորման հրամանատարը՝ տվյալ գորամիավորման սահմաններում):

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. պայմանագրային զինծառայողի մոտ որոշակի հիվանդությունների առաջացման և նրա հրամանատարի կողմից ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչվելու համար միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության դեպքում՝ միջնորդություն ներկայացնելը կամ չներկայացնելը պայմանավորել բացառապես զինծառայողի առողջական վիճակով և ծառայության պայմանների հետ դրա համատեղելիությամբ,

2. մշակել այնպիսի կառուցակարգ (մեխանիզմ, ընթացակարգ), որի պայմաններում հնարավոր կլինի կոնկրետ գորամասի պայմանների և պայմանագրային զինծառայողի առողջական վիճակի անհամատեղելիության դեպքում պարտադիր քննարկման առարկա դարձնել նաև նրան այլ գորամաս տեղափոխելու հարցը:

5. Ձինծառայողների իրավունքների պաշտպանությունը գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս

Աշխատանքային հարաբերություններում աշխատողների իրավունքների ապահովման և երաշխավորման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի պայմանագրի կայունությունը: Երբ, օրինակ, Ձինված ուժերում մի քանի տարով կնքվում է պայմանագիր, զինծառայողները պայմանագրով սահմանված ժամկետով ծառայությունն իրականացնելու ներքին համոզմունք և վստահություն են ունենում: Իհարկե, նաև հնարավոր են դեպքեր, երբ ծառայությունը ոչ զինծառայողի մեղքով դադարեցվում է պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ (օրինակ՝ հաստիքների կրճատում, ստորաբաժանման լուծարում և այլն), և նման դեպքերում կարևոր է, որ երաշխավորվեն անձի իրավունքները:

Մինչդեռ, 2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ պայմանագիրը լուծելիս զինծառայողների որոշ իրավունքներ չեն պահպանվում, օրինակ՝ նախկին զինծառայողներին չի տրամադրվում չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում:

Խնդիրը կայանում է նրանում, որ «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով<sup>450</sup> սահմանված էր, որ զինվորական ծառայությունից արձակվող և ոչ ավելի, քան 2 տարվա (զինվորական ծառայությունից ազատվելու և դրան նախորդող տարում) հերթական արձակուրդից չօգտված (կամ մասամբ օգտված) զինծառայողներին չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց տրվում է փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած չափով: Պաշտպանության նախարարության մեկնաբանությամբ՝ նշված օրենքով նախատեսված էր չօգտագործված արձակուրդների համար փոխհատուցում տրամադրելու ժամանակային սահմանափակում:

Դեռևս 2018 թվականին Պաշտպանի կողմից կայացված՝ մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշմամբ նշվել էր, որ օրենքի տվյալ իրավակարգավորումը վերաբերում է այն դեպքերին, երբ զորացրված զինծառայողը հերթական արձակուրդից չի օգտվել ոչ ավելի, քանի 2 տարի (զինվորական ծառայությունից ազատվելու և դրան նախորդող տարում), ինչը կիրառելի չէ հերթական արձակուրդից 2 տարուց ավելի չօգտված զինծառայողների պարագայում: Այսինքն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մատնանշված դրույթը կարգավորում է միայն որոշակի խումբ զինծառայողների չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց տրվող փոխհատուցման չափի հետ կապված հարցերը: Այդ դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ այդ կատեգորիայի մեջ չմտնող անձինք գրկվեն փոխհատուցում ստանալու իրավունքից:

Այնուհետև՝ 2017 թվականի դեկտեմբերի 16-ին ուժի մեջ է մտել «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, որի 61-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց: Այսինքն, ընդունված

<sup>450</sup> Ուժը կորցրել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին:

նոր օրենքով նախատեսվել է չօգտագործված արձակուրդները տրամադրելու հստակ ժամանակային սահմանափակում:

Խնդրի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության որոշման խնդրանքով: Նշված դիմումի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել է դիրքորոշում, որով նշվել է, որ զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում չտրամադրելը խտրականության դրսևորում է, բացի այդ հանգեցնում է անձի սեփականության իրավունքի խախտման: Վկայակոչելով ոլորտի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները՝ նշվել է, որ չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում տրամադրելու հարցում զինծառայողների աշխատանքային հարաբերությունների կարգավորումները տարբերվում են այլ պետական ծառայողների ու աշխատակիցների, ինչպես նաև մասնավոր ոլորտում աշխատող անձանց աշխատանքային հարաբերությունների կարգավորումներից: Ընդ որում, պարզ չէ, թե ինչ օրինական նպատակ է հետապնդում կամ զինվորական ծառայության ինչ առանձնահատկություններով է պայմանավորված նման տարբերակված մոտեցումը: Ուստի, տվյալ դեպքում տարբերակված կարգավորումները օբյեկտիվ ու հիմնավոր չեն և հանգեցնում են աշխատանքային իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց համար խտրական վերաբերմունքի:

Միաժամանակ, հիմնավորվել է, որ զինծառայողների նկատմամբ նման խտրականության դրսևորումն ուղղակիորեն միջամտում է նրանց սեփականության իրավունքին, և այն զինծառայողները, ովքեր հերթական արձակուրդից չեն օգտվել ավելի քան երկու տարի, զրկվել են չօգտագործած արձակուրդի դրամական հատուցում ստանալու իրավունքից, ուստի նաև խախտվել է վերջիններիս սեփականության իրավունքը:

Արդյունքում, ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է. «...իրավակարգավորման այդպիսի պայմաններում, երբ կոնկրետ ժամանակահատվածում չի եղել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու ժամկետային սահմանափակումը, սակայն զինծառայողը զրկված է եղել այդ արձակուրդային օրերն օգտագործելու կամ դրանց դիմաց առանց ծառայությունից արձակվելու փոխհատուցում պահանջելու և ստանալու հնարավորությունից, ապա զինծառայողի համար առկա են եղել «օրինական ակնկալիքի» հիմքեր: Հետևաբար, նշված դեպքերում պետք է երաշխավորվի փոխհատուցում ստանալու՝ անձի հնարավորությունը՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության իրագործում:»<sup>451</sup>:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ զինվորական ծառայության ամբողջ ժամանակահատվածում չօգտագործված արձակուրդի օրերի համար փոխհատուցում ստանալու վերաբերյալ ստացվել է 21 դիմում, որոնց տրվել են համապատասխան պարզաբանումներ գործող օրենքների վերաբերյալ: Միաժամանակ, Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման շրջանակում Պաշտպանության նախարարությունը պարզաբանել է, որ նույնաբովանդակ խնդրի շրջանակներում նախարարությունը ներգրավված է դատական գործընթացի մեջ և առաջարկել է հարցին անդրադառնալ դատական գործի արդյունքներով պայմանավորված:

2019 թվականին նույնպես վերոնշյալ խնդրի կապակցությամբ Պաշտպանը բողոքներից մեկով կայացրել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, որով արձանագրել է, որ չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց

<sup>451</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի հուլիսի 10-ի թիվ ՄԴՈ 1424-րդ որոշման 4.2-րդ կետը:

փոխհատուցում տրամադրելու համար առկա են եղել և կան բավարար իրավական հիմքեր, և նոր իրավական ակտ, այդ թվում՝ դատական, ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է: Արդյունքում, Պաշտպանն առաջարկել է նախկին զինծառայողին տրամադրել զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում, իսկ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու համար սահմանել հսկողություն զինծառայողներին հերթական արձակուրդները սահմանված ժամկետում տրամադրելու նկատմամբ: Պաշտպանության նախարարությունը, սակայն, խնդրի լուծման նպատակով միջոցներ դեռևս չի ձեռնարկել:

Չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց նախկին զինծառայողներին փոխհատուցում տրամադրելու մասով ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/5524/05/16 գործով 2018 թվականի հոկտեմբերի 16-ի վճռով նշել է, որ «...հատուկ կարգավորման բացակայության պայմաններում գործում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածը, որը թույլատրում է աշխատանքից ազատվելիս հատուցում ստանալ չօգտագործված արձակուրդների համար առանց ժամկետային սահմանափակման: Ուստի, հիմնավոր է չօգտագործված արձակուրդների համար առանց ժամկետային սահմանափակման հատուցում ստանալու հայցվորի պահանջը, իսկ պատասխանողի առարկությունները (հատկապես Սահմանադրական դատարանի որոշումից հետո դրանք պնդելը) անհիմն են»: Վարչական դատարանը չօգտագործված արձակուրդների դիմաց հատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին քաղաքացու հայցն ընդդեմ Պաշտպանության նախարարության բավարարել է: Պաշտպանության նախարարության ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է, ինչպես նաև մերժվել է վճարել բողոքը վարույթ ընդունելը, և Վարչական դատարանի վճիռը 2020 թվականի հունվարի 22-ից մտել է օրինական ուժի մեջ:

2019 թվականի ընթացքում արձանագրվել է նաև Ոստիկանությունում ծառայությունից արձակվելիս նախկին Ոստիկանության ծառայողների իրավունքների ապահովման հետ կապված խնդիր:

Այսպես, Պաշտպանին հասցեագրած բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդը գործուղման մեջ գտնվելու ընթացքում ազատվել է զբաղեցրած պաշտոնից և գրանցվել Ոստիկանության կադրերի ռեզերվում: Փաստաբանը հավելել է նաև, որ չնայած «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ կադրերի ռեզերվում Ոստիկանության ծառայողի միանգամյա գտնվելու առավելագույն 6-ամսյա ժամկետ սահմանված լինելուն՝ իր վստահորդը կադրերի ռեզերվում է գտնվել շուրջ 19 ամիս, և այդ ընթացքում իրեն զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճան ցածր պաշտոն չի առաջարկվել (բողոքի քննարկմամբ պարզվել է, որ առաջարկված պաշտոնները եղել են Ոստիկանության ծառայողի զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճանից ավելի ցածր պաշտոններ): Այնուհետև, ծառայողն արձակվել է Ոստիկանությունում ծառայությունից:

Ոստիկանությունից տրամադրված պարգաբանումների համաձայն՝ սահմանված ժամկետից ավել ՀՀ ոստիկանության կադրերի ռեզերվում ծառայողի գտնվելը պայմանավորված է եղել համապատասխան թափուր հաստիքի բացակայությամբ, ուստի սահմանված ժամկետում նրան հնարավոր չի եղել առաջարկել համապատասխան պաշտոն: Բացի այդ, Ոստիկանությունից նշվել են ծառայողին առաջարկված պաշտոնները, պարգաբանվել, որ պաշտոններն առաջարկվել են ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանված կարգի 6-րդ կետի հիմքով՝ հաշվի առնելով նրա մասնագիտական գիտելիքները և թափուր հաստիքների առկայությունը: Միաժամանակ նշվել է, որ այդ դրույթը որևէ սահմանափակում չի պարունակում կադրերի ռեզերվում գտնվող ծառայողին առաջարկվող պաշտոնների՝ նախկինում նրա զբաղեցրած պաշտոնից կոնկրետ աստիճանով ցածր լինելու վերաբերյալ:

Գործուղման մեջ գտնվելիս ծառայողին պաշտոնից արձակելու մասով Ոստիկանությունը պարզաբանել է, որ կադրերի ռեզերվում գրանցելու մասին հրամանն արձակվել է ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված:

Վերոնշյալ հանգամանքները խնդրահարույց են մի քանի տեսանկյունից: Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործուղման մեկնած աշխատողներին երաշխավորվում է նրանց աշխատատեղի (պաշտոնի) և աշխատավարձի պահպանումը գործուղման ամբողջ ժամանակահատվածում: Պետք է նկատի ունենալ, որ գործուղման մեջ գտնվելու ընթացքում պաշտոնը պահպանելու օրենսդրական պահանջը ինքնանպատակ չէ. այն պայմանավորված է անձի նյութական և ընթացակարգային իրավունքները պահպանելու և իր կողմից դրանք պաշտպանելու իրական հնարավորությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

Բացի այդ, Ոստիկանության ծառայողին պաշտոնից ազատելու և կադրերի ռեզերվում գրանցելու հիմքերը սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, «հայտարարում գրադեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին»<sup>452</sup> և «մեկ աստիճանով պաշտոնի իջեցում» կարգապահական տույժերի ենթարկված ոստիկանության ծառայողները, ինչպես նաև նշված օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով (հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ) և 3-րդ կետով (սահմանափակ առողջական վիճակի պատճառով՝ ծառայության սահմանափակ պիտանիության կապակցությամբ՝ ոստիկանության բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան թափուր հաստիքների բացակայության պատճառով տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինության դեպքում) նախատեսված հիմքերով գրադեցրած պաշտոնից ազատված Ոստիկանության ծառայողները:

Ինչպես նշվել է վերևում, Ոստիկանության ծառայողը պաշտոնից ազատվել և կադրերի ռեզերվում է գրանցվել ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի «դ» ենթակետի հիմքով, ըստ որի՝ կադրերի ռեզերվում գրանցվում են ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ոստիկանության ծառայողին այլ պաշտոնի փոխադրելիս՝ գրադեցրած պաշտոնին համարժեք կամ գրադեցրած պաշտոնից մեկ աստիճան ցածր թափուր պաշտոն չլինելու դեպքում: Հատկանշական է, որ ծառայողին կադրերի ռեզերվում գրանցելու այդպիսի հիմք «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ, ավելին՝ այդպիսի հիմք նախատեսված չէ նաև ծառայողին գրադեցրած պաշտոնից ազատելու համար:

Պաշտոնից ազատելու և կադրերի ռեզերվում գրանցելու հիմքերը սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, իսկ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ պետք է սահմանվի միայն Ոստիկանության ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու և ռեզերվից հանելու կարգը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը կայացրել է Ոստիկանության նախկին ծառայողի իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, որով առաջարկել է նախկին ծառայողին վերականգնել Ոստիկանությունում ծառայության՝ նրան նշանակելով իր գրադեցրած վերջին պաշտոնին համարժեք կամ մեկ աստիճան ցածր պաշտոնի, մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ՝ 2-րդ հավելվածից հանելով կադրերի ռեզերվում ծառայողին գրանցելու օրենքով չնախատեսված հիմքը, ինչպես նաև մինչև նշված օրենսդրական փոփոխությունը բացառել Ոստիկանության ծառայողներին

<sup>452</sup> Ուժը կորցրել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին:

օրենքով չնախատեսված հիմքով պաշտոնից ազատելու և կադրերի ռեզերվում գրանցելու պրակտիկան:

Արդյունքում, Ոստիկանությունից տեղեկացվել է, որ Ոստիկանության նախկին ծառայողին առաջին իսկ հնարավորության դեպքում կառաջարկվի համապատասխան պաշտոն, Կառավարության վերոնշյալ որոշման մեջ փոփոխություն կատարելու նպատակով կմշակվի փոփոխությունների նախագիծ, իսկ մինչ փոփոխություն կատարելը, անմիջականորեն կկիրառվի «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև Պաշտպանի առաջարկները հաշվի կառնվեն իրավակիրառ պրակտիկայում շտկելով իրականացվող վարչարարությունը:

Դրական գնահատելով անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու կապակցությամբ Ոստիկանության պատրաստակամությունը՝ միաժամանակ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման մեջ անհրաժեշտ փոփոխությունը դեռևս չի կատարվել:

Զինվորական ծառայությունից արձակվելու գործընթացում քաղաքացիների իրավունքների ապահովման տեսանկյունից Պաշտպանը քննարկված բողոքների արդյունքում արձանագրվել է մեկ այլ խնդիր:

Այսպես, Պաշտպանին հասցեագրած բողոքով պայմանագրային նախկին զինծառայողը տեղեկացրել է, որ Զինված ուժերի վարչություններից մեկում զբաղեցրել է բաժնի պետի պաշտոնը, որը կրճատվել է բաժնի լուծարման հետևանքով, ինքը թողնվել է կադրերի տրամադրության տակ: Ըստ պնդման՝ իր հաստիքի կրճատումից և երկու բաժանմունք կազմավորվելուց հետո տվյալ բաժանմունքներում իրեն պաշտոնի նշանակելու առաջարկներ չի արվել: Կադրերի տրամադրության տակ գտնվելու ընթացքում իրեն բանավոր առաջարկվել է իր զինվորական կոչմանը և զբաղեցրած վերջին պաշտոնից շատ ավելի ցածր դասակարգմամբ պաշտոններ, որոնցից ինքը հրաժարվել է: Բողոք ներկայացրած անձը նաև հայտնել է, որ հինգ ամիս գտնվել է կադրերի տրամադրության տակ և իր մասնագիտական ունակություններին, զբաղեցրած վերջին պաշտոնին համապատասխան պաշտոնի առաջարկներ չի ստացել:

Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ զինծառայողի ծառայության նախկին վարչությունում նրան պաշտոններ չեն առաջարկվել համապատասխան գիտելիքների և փորձի բացակայության, իսկ այլ վարչություններում իր նախկին պաշտոնին համարժեք պաշտոններ չեն առաջարկվել համապատասխան հաստիքների բացակայության պատճառով: Արդյունքում, նախկին զինծառայողին առաջարկված պաշտոններն իր վերջին զբաղեցրած պաշտոնից մի քանի աստիճան ցածր են եղել:

Խնդրի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման դեպքում, եթե առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի (5-րդ կետ), կամ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման հիմքով կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու դեպքում, եթե առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի (6-րդ կետ): Խնդիրն այն է, սակայն, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված չէ, թե, օրինակ, հաստիքների կրճատման հիմքով կադրերի տրամադրության տակ գտնվող զինծառայողին իր զբաղեցրած նախկին պաշտոնից քանի աստիճան ցածր պաշտոն կարող է առաջարկվել: Նույն իրավիճակն առկա է նաև փրկարար ծառայության, Ոստիկանության,



քրեակատարողական ծառայողներին և դատախազներին պաշտոններ առաջարկելու մասով:

Վերոգրյալի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Նշված պահանջի նախատեսումն ինքնանպատակ չէ. այն նպատակ ունի հաստիքների կրճատման հիմքով պաշտոնից ազատված անձանց գործատուի հնարավորությունների սահմանում ապահովել այլ համարժեք աշխատանքով: Եթե որոշակի պաշտոն զբաղեցնող անձը պատշաճ կատարում է իր վրա դրված պարտականությունները, պաշտոնից չի ազատվում այդ պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով, այլ ազատման հիմք է հանդիսանում միայն զբաղեցրած հաստիքի կրճատումը, ապա արդարացի է առկայության դեպքում նշված անձին իր զբաղեցրած նախկին պաշտոնին համարժեք պաշտոն առաջարկելը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. խստացնել հսկողությունը ծառայության ընթացքում պայմանագրային զինծառայողներին իրենց հասանելիք արձակուրդները տրամադրելու ուղղությամբ,

2. միջոցներ ձեռնարկել ծառայությունից արձակվելիս նախկին զինծառայողների կողմից չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց հատուցում տրամադրելու ուղղությամբ,

3. ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ 2-րդ հավելվածից հանելով կադրերի ռեզերվում ծառայողին գրանցելու օրենքով չնախատեսված հիմքը,

4. ծառայության այն համակարգերում, որտեղ պաշտոնից ազատվելիս անձինք հաստիքների կրճատման կամ ստորաբաժանման լուծարման հիմքով գրանցվում են կադրերի ռեզերվում, նախատեսել, որ հաստիքի առկայության դեպքում ծառայողին առաջարկվում է իր նախկին պաշտոնին համարժեք պաշտոն, իսկ այդպիսի հաստիքի բացակայության պարագայում, ծառայողի համաձայնությամբ, յուրաքանչյուր դեպքում մեկական աստիճանով ցածր պաշտոն:

ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի «ԻԲ» կետի համաձայն՝ զինձառայողներն իրենց իրավունքները պաշտպանելու համար պետք է ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն:

Զնայած զինված ուժերում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ աշխարհի տարբեր երկրներ ունեն օմբուդսմանի ինստիտուտ, որի նպատակն է քննության առնել գանգատները՝ զինված ուժերում իրավունքներ խախտող վարքագծի դրսևորումների, զինվորական քաղաքականության բացերի, ինչպես նաև զինված ուժերի համակարգային հիմնախնդիրների մասին: Այս գանգատները և բացերը քննության առնելուց հետո օմբուդսմանը մշակում է իրավիճակը շտկող գործողությունների վերաբերյալ հանձնարարականներ<sup>453</sup>:

Զինձառայողների իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս հատկապես կարևորվում է զինվորական կարգապահության ամրապնդումը, ինչպես նաև ձառայողական քննությունների ընթացքում զինձառայողների իրավունքների պաշտպանությունը:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում դեռևս 2016 թվականին հիմնվել է Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտը, որի կազմում 2017 թվականին ձևավորվել է զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը:

Ոլորտում Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններն են՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի, ոլորտում առկա խնդիրների, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների հետ կապված հարցերը: Դրանք վեր են հանվում ստացված բողոքների, զինվորական հաստատություններ չհայտարարված այցերի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

Ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով մշակվում են օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր, կարծիքի ներկայացված նախագծերի վերաբերյալ առաջարկներ, ինչպես նաև Սահմանադրական դատարան են ներկայացվում դիմումներ և հատուկ դիրքորոշումներ: Անհրաժեշտության դեպքում մշակվում են Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ՄԻԵԴ վճիռների կատարման փուլում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումներ:

Զինվորական կարգապահության ամրապնդման, ինչպես նաև ձառայողական քննության ընթացքում զինձառայողների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով դեռևս 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառվել էին «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի նախագծերը:

<sup>453</sup> Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 2008 թվական, էջ 321:

Մասնավորապես, ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում առաջարկվել է՝

1) իրավախախտումը համարել ծանրացող միայն այն դեպքերում, երբ դատվածությունը հանված կամ մարված չէ:

2) կարգապահական տույժի ենթարկվելու մասին հրամանին ծանոթանալու պատշաճ ընթացակարգի և զինծառայողի կողմից այն բողոքարկելու իրավունքի ապահովման նպատակով սահմանել, որ կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Չինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում են նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները:

3) ծառայողական քննության ընթացքում զինծառայողների ընթացակարգային իրավունքների պաշտպանության նպատակով սահմանել, որ ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին գրավոր բացատրում է օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները:

4) բողոքարկման արդյունքում զինծառայողին տրված կարգապահական տույժը հանելու կառուցակարգի հստակեցման նպատակով սահմանել, որ բողոքարկման արդյունքներով վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունի գրավոր հրաման ընդունել զինծառայողին տրված կարգապահական տույժը չեղյալ ճանաչելու կամ ուժի մեջ թողնելու մասին:

ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում առաջարկվել է:

1) զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը նախատեսել որպես ծառայողական քննություն անցկացնելու հիմք:

2) սահմանել ծառայողական քննությունը դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

Այս առումով պետք է նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ վճիռների կատարման և բարեկամական կարգավորման պայմանների վերահսկողության կանոնների 9-րդ կանոնի 2-րդ կետի<sup>454</sup> հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Պաշտպանը՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե էր ներկայացրել հատուկ դիրքորոշում՝ կապված «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման հետ<sup>455</sup>, և բարձրացված խնդիրների առնչությամբ Պաշտպանի հատուկ դիրքորոշման մեջ ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ: Մասնավորապես՝ ներկայացված դիրքորոշման մեջ նշվել է վերը նկարագրված օրենսդրական փոփոխություններն իրականացնելու անհրաժեշտությունը՝ որպես զինվորական կարգապահության ամրապնդման միջոց: Բացի այդ, կարևորվել է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության զարգացման անհրաժեշտությունը: Այդ նպատակով նշվել է, որ անհրաժեշտ է կարգապահական վարույթի հարուցման կարգ սահմանող իրավական ակտով ամրագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումը հիմք է հանդիսանում

<sup>454</sup> Նախարարների կոմիտեն իրավունք ունի դիտարկել ոչ կառավարական կազմակերպություններից, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կողմից վճիռների կատարման ընթացքի մասին ուղարկված ցանկացած նկատառում:

<sup>455</sup> [https://hudoc.exec.coe.int/eng#%7B%22EXECIdentifier%22:%5B%22DH-DD\(2018\)961E%22%5D%7D](https://hudoc.exec.coe.int/eng#%7B%22EXECIdentifier%22:%5B%22DH-DD(2018)961E%22%5D%7D);

ծառայողական քննություն սկսելու համար: Նշվել է նաև Պաշտպանության նախարարությունում շուրջօրյա թեժ գիծ ունենալու անհրաժեշտությունը:

Պաշտպանի ներկայացրած հատուկ դիրքորոշման կապակցությամբ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 3-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացված պատասխանում նշվել է, որ ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանության գործում Պաշտպանի գործունեությունը և կարևորել ներկայացված առաջարկությունների նշանակությունը:

Դրական քայլ էր այն, որ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրքում 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կատարվեցին փոփոխություններ, որի արդյունքում Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկները սկզբունքորեն ընդունվեցին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում Պաշտպանի կողմից առաջարկված փոփոխությունները դեռևս չեն կատարվել: Կարևոր է ընդգծել, որ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ Պաշտպանության նախարարի վերոնշյալ հրամանում անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների կատարման գործընթացը կիրականացվի Զինված ուժերի կարգապահական կանոնադրքում իրականացված փոփոխությունների հիման վրա:

Պետք է նշել նաև, որ Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ամրապնդելու տեսանկյունից կարևոր է, որ, ի թիվս այլ տեղեկությունների, հասարակությանը և Ազգային ժողովին ներկայացվեն կարգապահական վարույթների մասին տեղեկություններ այնքանով, որքանով դրանք չեն բացահայտի ծառայողական և պետական գաղտնիք<sup>456</sup>:

2019 թվականի ընթացքում գործնական կատարած այցելությունների ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ ընդհանուր առմամբ ծառայողական քննություններն անցկացվում են Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, սակայն, որ որոշ դեպքերում զինծառայողները ծանոթացված չեն եղել ծառայողական քննության նյութերին կամ տույժի մասին հրամանին: Արձանագրվել է նաև, որ թեև ծառայողական քննությունների նյութերին կցվում էին զինծառայողների բնութագրերը, սակայն ծառայողական քննության եզրակացությամբ, ինչպես նաև տույժ տալու մասին հրամանում անդրադարձ չի կատարվել խախտումը կատարելու մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. ուժեղացնել հսկողությունը Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի պահանջները, այդ թվում՝ ծառայողական քննության նյութերին և տույժի մասին հրամանին զինծառայողների ծանոթացումը, խախտումը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին անդրադառնալը խստորեն պահպանելու ուղղությամբ,

2. ծառայողական քննությունների անցկացման գործընթացում առկա խնդիրները նվազագույնի հասցնելու նպատակով Պաշտպանության նախարարի վերոնշյալ հրամանում

<sup>456</sup> Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2019 թվականի ընթացքում Զինված ուժերի զինծառայողներից կարգապահական տույժ են ստացել 2075-ը, որից սպայական կազմ՝ 1586, ավագ և կրտսեր ենթասպայական կազմ՝ 414, շարքային կազմի պայմանագրային զինծառայող՝ 75: Առավել հաճախ կիրառվել են «Նկատողություն», «Խիստ նկատողություն» և «Նախագուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժերը:

կատարել Պաշտպանի աշխատակազմում մշակված նախագծով առաջարկվող փոփոխությունները:

2. Իրավունքի գերակայության ներքո ամուր կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գրավական

Ձորքերում ամուր կարգապահությունը մարդու իրավունքների պաշտպանության լավագույն գրավականներից է: Կարգապահության ամրապնդումը մարդու իրավունքների պաշտպանության մեկ այլ ասպեկտ է: Հետևաբար, ՀՀ զինված ուժերի կարևորագույն հիմնահարցերից է զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի շարունակական ամրապնդումը: Մա պայմանավորված է այն հանգամանքով, որ զինվորական կարգապահությունը միտված է բանակի մարտունակության բարձրացմանը, ինչպես նաև «համազգեստով քաղաքացիների» իրավունքների ապահովմանը:

Զինճառայողը, գտնվելով հատուկ իրավական վիճակում (նրա որոշ իրավունքներ և ազատությունների սահմանափակվում են, պարտականությունների շրջանակը լայնացվում), հանդիսանում է պետության պաշտպանության ներքո գտնվող անձ, ում իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պետք է հարգվեն, իսկ դրանք խախտած անձինք՝ ենթարկվեն պատասխանատվության:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 17-րդ կետը սահմանում է, որ պետությունն իրավասու է կազմակերպել զինվորական կարգապահության սեփական համակարգը և այդ հարցում ունի հայեցողության որոշակի շրջանակ:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության՝ զինվորական կարգապահության համակարգը, որն իր բնույթով ենթադրում է ճառայողների իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումներ, չի հակասում Կոնվենցիայի ներքո պետությունների ստանձնած պարտավորություններին<sup>457</sup>: Եվրոպական դատարանը նույնպես նշել է, որ յուրաքանչյուր պետություն իրավասու է կազմակերպելու զինվորական կարգապահության սեփական համակարգը և այս հարցում որոշակի հայեցողության շրջանակ ունի, քանի որ տարբեր պետությունների համակարգերը միմյանցից շատ տարբեր են<sup>458</sup>:

ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինճառայողի կողմից ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինճառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

Զինված ուժերի առանձնահատկություններից մեկը, որով այն տարբերվում է այլ աշխատանքներից և ճառայություններից, վերաբերում է զինվորական կարգապահությանը: Զինվորական կարգապահության հիմնական նպատակն է համակարգել զինճառայողների

<sup>457</sup> Տե՛ս Էնգելը և այլոք ընդդեմ Նիդերլանդների (Engel and others v. Netherlands) գործով 1976 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 5100/71, կետ 57:

<sup>458</sup> Տե՛ս նույն տեղում՝ 57-59-րդ կետեր:

վարքագիծը և գործողությունները, նրանց միջև հաստատել հարաբերությունների այնպիսի կառուցակարգ, որը կապահովի կարգուկանոն:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումները, գորամասեր կատարված մշտադիտարկման այցերը ցույց են տալիս, որ զինված ուժերում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունն առաջնային խնդիր է:

Զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի պահպանման ու ամրապնդման հարցերի վերաբերյալ հատուկ քննարկումներ են տեղի ունեցել 2019 թվականի ապրիլի 26-ի և հոկտեմբերի 11-ի Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստերի ընթացքում: Մասնավորապես, քննարկվել են մահվան դեպքերի նվազման հետ կապված, գորամասերում քրեական ենթամշակույթի, կոլեկտիվ պատիժների, կարգապահական վարույթի ընթացքում զինծառայողների իրավունքների ապահովման և այլ հարցեր: Հատուկ կարևորվել է զինծառայողին պատասխանատվության ենթարկելուց առաջ նրա կողմից կատարած իրավախախտման պատճառները վեր հանելը, որը հետագայում կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն:

2019 թվականի ընթացքում զինված ուժերում կարգապահությանն առնչվող քաղաքացիների բողոքների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, գորամասը ինքնական թողնելու, բռնություն գործադրելու և այլն) կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ է պահանջել իրավասու պետական մարմիններից<sup>459</sup>: Զորամասեր կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում մշտապես հատուկ ուշադրություն է դարձվել կարգապահական հարցերին, առանձնագրույցներ են տեղի ունեցել պարտադիր ժամկետային ու սպայական կազմի զինծառայողների հետ, ուսումնասիրվել ծառայողական քննությունների նյութերը, տեղում լուծում պահանջող հարցերը քննարկվել են գորամասերի հրամանատարության հետ, իսկ համակարգային խնդիրները վերացնելու նպատակով առաջարկներ են ներկայացվել Պաշտպանության նախարարություն<sup>460</sup>:

Զորամասերից մեկում զինծառայողները հայտնել են, որ գորամասի հրամանատարի բարոյահոգեբանական աշխատանքների ապահովման գծով տեղակալը հաճախ բարոյահոգեբանական աշխատանքներ է տանում իրենց հետ և կարևորում միմյանց հանդեպ հանդուրժողականություն դրսևորելու անհրաժեշտությունը:

Մեկ այլ գորամասում սպա-հոգեբանը տեղեկացրել է, որ ամեն օր զրույց է ունենում զինծառայողների հետ, անցկացնում զիտելիքների ստուգման տարբեր թեստեր, որոնց զինծառայողները մասնակցում են հետաքրքրվածությամբ: Զորամասի սպա-հոգեբանի դիրքորոշմամբ՝ գորամասերում սպա-հոգեբանների կարգավիճակն անհրաժեշտ է

<sup>459</sup> Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2019 թվականի ընթացքում արձանագրվել է 208 զինծառայողների մասնակցությամբ փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտում, 122 զինծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Ըստ Քննչական կոմիտեի՝ 2019 թվականի ընթացքում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 809 քրեական գործ, որից 234-ով վարույթը կարճվել է, իսկ 293-ն ուղարկվել է դատարան:

<sup>460</sup> Օրինակ, առաջարկվել է ծառայողական քննության ընթացքում զինծառայողներին ծանոթացնել իրենց իրավունքներին: Զորամասեր կատարված այցերի ընթացքում արձանագրվել է, որ զինծառայողների տվյալ իրավունքն ապահովվում է: Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառվել են «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի նախագծերը:

բարձրացնել: Ըստ սպա-հոգեբանի՝ առավել շատ անձնակազմ ունեցող զորամասերում պետք է լինեն մի քանի սպա-հոգեբաններ, նրանք չպետք է ընդգրկվեն այլ ծառայություններում (օրինակ՝ վերակարգում), այլ ամենօրյա ռեժիմով պետք է շփում ունենան զինծառայողների հետ՝ բացահայտելու նրանց բարոյահոգեբանական վիճակը:

Այցերից պարզվել է նաև, որ որոշ զորամասերում առկա չեն սպա-հոգեբանների հաստիքներ, իսկ մի քանիսում՝ հաստիքները թափուր են:

Մինչդեռ, ամենօրյա ռեժիմով հատուկ ուշադրություն պետք է դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին: Հոգեբանական աջակցության ուժեղացումը, զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունները, հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, զինծառայողների (հատկապես նորակոչիկների) հետ անհատական աշխատանքներն իրավախախտումների կանխարգելման լավագույն միջոց կարող են հանդիսանալ: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որ բոլոր զորամասերում առկա լինեն սպա-հոգեբանի հաստիքներ, իսկ թափուր հաստիքները պետք է համալրել: Համալրման նպատակով կարելի է քննարկել նաև նման մասնագետների պատրաստմանը խթանելու հնարավորությունները (օրինակ, Ռազմական համալսարաններում կադրերի պատրաստման միջոցով):

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ 2019 թվականի ընթացքում զորամասերի հրամանատարների բարոյահոգեբանական ապահովման աշխատանքների գծով տեղակալների, ավագ սպա-իրավաբանների մասնակցությամբ անցկացվել է «Զինծառայողների միջև ոչ կանոնագրքային փոխհարաբերություններին նպաստող պայմանները և դրանց կանխարգելման ուղիները» թեմայով կոնֆերանս, որտեղ քննարկվել և նախանշվել են անհրաժեշտ քայլերը՝ դրանց թիվը նվազագույնի հասցնելու համար: Հրամանատարների կողմից կոնկրետ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով արձակվել են ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի հրամաններ: Նախարարության տեղեկացմամբ՝ Ռազմական ոստիկանության ծառայողները նույնպես, ամենօրյա ռեժիմով զինծառայողների շրջանում իրականացնում են կանխարգելիչ աշխատանքներ:

Այս առումով չափազանց կարևոր է, որ վերապատրաստման դասընթացները՝ հատկապես զորամասերի հրամանատարների բարոյահոգեբանական աշխատանքների գծով տեղակալների մասնակցությամբ, հաճախակի կազմակերպվեն: Ոչ պակաս կարևոր է նաև դասընթացավարների ճիշտ ընտրությունն ու նրանց պրոֆեսիոնալիզմը: Այդ պրոֆեսիոնալիզմն է, որ պետք է էապես բարձրացնի հարգանքը դեպքի զինվորի, ենթասպայի ու սպայի արժանապատվությունը: Ավելին՝ զինված ուժերում կարգապահության ամրապնդման ցանկացած մեխանիզմ ներդնելիս հիմքում պետք է ունենալ զինծառայողի արժանապատվության պաշտպանության և նրա իրավունքների խթանման բարձր ձգտումը:

Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը միայն բարոյական պարտականություն չէ: Նման պահանջը մարդու իրավունքների միջազգային իրավունքի մասն է կազմում, ինչով պայմանավորված՝ պետությունը և առանձին անձինք պարտականություն են կրում հարգել և պաշտպանել մարդու իրավունքները բանակում: Զինծառայողներին՝ որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելն ակնհայտորեն բխում է զինված ուժերը հասարակության մեջ ինտեգրելու նպատակից՝ ի տարբերություն այն մոտեցման, թե զինված ուժերը մեկուսացված են քաղաքական և հասարակական կյանքից: Զինված ուժերի մարտունակության առաջնային հրամայականն է թիմային համախմբվածության և հրամանատարների ու նրանց ենթակաների միջև վստահության և հավատարմության պահպանումը:

Պետությունը պարտավորություն է կրում ապահովել զինծառայության այնպիսի պայմաններ, որոնք կհամապատասխանեն անձի արժանապատվությանը, իսկ

զինծառայության մեթոդներն ու ընթացքը զինծառայողներին տանջանքների ու սթրեսի չեն ենթարկի և չեն անցնի կարգապահության ապահովման համար կիրառվող մեթոդների խստության սահմանը:

Աներկբա է, որ զինված ուժերում կարգապահության ամրապնդման հարցում առանցքային է իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանումը, կանխարգելման նպատակով կոնկրետ գործողությունների ծրագրի մշակումը:

Անհրաժեշտ է կատարել անձի ռիսկերի գնահատում և բացահայտված խնդիրների հիման վրա պլանավորել և իրականացնել անհատական աշխատանքներ: Դա կարող է իրականացվել երկու փուլով: Առաջին փուլում դպրոցը և համայնքային ոստիկանությունն անձի վերաբերյալ տվյալները (բնավորություն, վարք, սոցիալական և հոգեբանական մի շարք գործոններ, գիտելիքների աստիճան և այլն) պետք է փոխանցեն զինկոմիսարիատ: Երկրորդ փուլում՝ զորակոչվելուց հետո, զինկոմիսարիատում հավաքագրված այդ տվյալները փոխանցվում են զորամաս, որտեղ արդեն սպայական անձնակազմը հնարավորություն է ունենում վերլուծել անձի վերաբերյալ տվյալները և նրա հետ տանել թիրախային աշխատանքներ՝ նրա հնարավոր հակաիրավական վարքագիծը կանխելու նպատակով<sup>461</sup>:

Մեկ այլ խնդիր է կոնկրետ խումբ զինծառայողների շրջանում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը: Դա հատկապես վերաբերում է պարտադիր ժամկետային զինծառայողներին: Իրավական իրազեկվածության պակասն էլ իր հերթին կարող է լինել ոչ կանոնադրային հարաբերությունների հաստատման պատճառներից մեկը:

Օրինակ, զինծառայողների մեծ մասը տեղյակ չէ, որ կարգապահական տույժերը տրվում են գրավոր հրամանով, և իրենք ունեն դրանց հետ ծանոթանալու ու բողոքարկման իրավունք: Ջորամասեր կատարած այցերը, զինծառայողների հետ առանձնագրույցները ցույց են տալիս, որ զինված ուժերում զինծառայողների կողմից կարգապահական տույժերի բողոքարկման պրակտիկան կայացած չէ և գրեթե չի գործում:

ՀՀ կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ զինծառայողը, ում նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, ծառայողական քննությանը մասնակցելու պահից գրավոր ծանոթացվում է անցկացվող ծառայողական քննության շրջանակներում իր իրավունքներին և պարտականություններին, իրավունք ունի ծառայողական քննության անցկացման ժամանակ ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությանը, սույն օրենքով սահմանված կարգով այն բողոքարկելու:

Ջորամասեր կատարված այցերի ընթացքում ծառայողական քննություններն անցկացնող իրավաբան-սպաներին մշտապես առաջարկվում է զինծառայողին նրա իրավունքները գրավոր իրազեկելու հետ մեկտեղ, բանավոր ևս պարզաբանել նրա իրավունքները, այդ թվում տեղեկացնել տույժը բողոքարկելու իրավունքի մասին:

Զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման գործում սկզբունքային է նաև իրավախախտումներից տուժած անձանց պաշտպանությունը:

<sup>461</sup> Այս մեթոդը կարող է օգնել զորամասի հրամանատարությանը և Ռազմական ոստիկանությանը, օրինակ, կրիմինոգեն կամ քրեածին երևույթների, ներառյալ՝ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետ միջոցներ գտնելու կամ անձին նրա գիտելիքներին համապատասխան ծառայության ներգրավելու հարցերում:



Ջինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի «Դ» բաժնի համաձայն՝ արդյունավետ պաշտպանության համար առանցքային կարևորություն ունի այն, որ զինվորական կարգապահությանը և էթիկային հակասող վարքագծի մասին իրավասու մարմիններն անհապաղ տեղեկացվեն, և առանց ձգձգման քննություն իրականացվի: Ինչ վերաբերում է կարգապահական վարույթներին, ապա դրանք պետք է ընթանան Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին համահունչ, զանցանքի համար մեղադրվողը պետք է պատշաճորեն տեղեկացվի մեղադրանքի կամ իր գործով կարգապահական վարույթ սկսելու մասին: Կարգապահական զանցանքը, որի համար անձը պատժվում է, պետք է լինի այն, որի համար նրան մեղադրում էին: Այն դեպքում, երբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի է, այս դրույթի բոլոր երաշխիքները պետք է ապահովվեն: Պետք է նաև հնարավորություն լինի բողոքարկելու ավելի բարձր մարմնի, որն անկախ է հրամանատարական շղթայից:

Հարկ է նկատի ունենալ, որ բանակում կարգապահության ամրապնդման համար «պատասխանատվության խստացումը կբարձրացնի կարգապահությունը» սկզբունքով առաջնորդվելը լավագույն միջոցը չէ: Ոչ միշտ է պատասխանատվության խստությունը կանխում կամ բացառում անձի ոչ իրավաչափ վարքագիծը: Պատժի խստության աստիճանը պետք է մշտապես լինի գործած իրավախախտմանը խիստ համաչափ: Անթույլատրելի է խմբակային պատժամիջոցները, որոնց պարագայում պատասխանատվության է ենթարկվում նաև անձը, ով խախտմանն առնչություն չի ունեցել: Դա կարող է հանգեցնել միջանձնային հարաբերություններում խնդիրների՝ խարխուլելով զինվորական կոլեկտիվի համախմբվածությունը:

Ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական կազմը պետք է հանդես գա գորամասերում տեղի ունեցող իրավախախտումների պայքարի առաջին գծում: Նրանց ղեկավարումը կարևորագույն նշանակություն ունի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու համար: Այս առումով հրամանատարները պարտավոր են ակտիվ լինել (նախաձեռնող դեր ունենալ) զինվորականների միջև փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտ ձևավորելու համար և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրենց ենթակաների անօրինական գործողությունները կանխելու համար: Առավել ևս, որ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման համար պատասխանատու են բոլոր խմբերի հրամանատարները (պետերը), մյուս սպայական ու ենթասպայական անձնակազմը:

Հատկապես կարևոր է զինված ուժերում սերժանտների՝ որպես շարքային կազմի զինծառայողների հետ առաջնային և անմիջական շփում ունեցող զինվորականների դերի բարձրացումը:

Որպես ամփոփում՝ մնում է հավելել, որ բանակում ամուր կարգապահություն ապահովելու գրավականներից է գրագետ զինծառայողների արհեստավարժ մոտեցումը ծառայության նկատմամբ: Դա իր հերթին անխուսափելիորեն ենթադրում է մարդու իրավունքների ապահովում, ներառյալ՝ հարգանք մարդու արժանապատվության հանդեպ:

Որպեսզի զորքերում կարգապահությունը լինի կայուն և երաշխավորված՝ զինվորականների կողմից «լիազորությունների գրագետ կատարումը» պետք է ուղեկցվի «ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցմամբ», իսկ այստեղ անպայմանորեն պետք է բացառվի «ենթակայի նկատմամբ ոչ արժանապատիվ վերաբերմունքը»:

Գ + Պ - Վ = Կ

Այստեղ՝ «Գ»-ն լիազորությունների գրագետ կատարումն է (գրագիտություն), «Պ»-ն՝ ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցումը (պատասխանատվություն), «Վ»-ն՝

ոչ արժանապատիվ վերաբերմունքը ենթակայի նկատմամբ (վերաբերմունք), իսկ «Կ»-ն՝ զինվորական կարգապահությունը:

Սա է պրոֆեսիոնալ միջոցների իրականացմամբ զինվորական կարգապահության ամրապնդման ողջամիտ բանաձևը: Նման մոտեցմամբ հնարավոր է ապահովել թե՛ զինվորական կարգապահությունը, թե՛ իրավունքի գերակայության ներքո մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը:

Վերոգրյալի հաշվառմամբ անհրաժեշտ է՝

1. ուսումնասիրել ՋՈւ ամբողջ համակարգում մարդու իրավունքների խախտումների միտումները՝ նպատակ ունենալով որոշել, թե որքանով է գիտելիքների հնարավոր անբավարարությունը հանգեցնում մարդու իրավունքների խախտումների,

2. կոնկրետ հասցեատերերի համար մշակել ուսուցման մեթոդներ (դասընթացներ, իրազեկման ու տեղեկատվական թերթիկներ և այլն),

3. ուսումնասիրել Ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դասերի պլանը և կատարել զինված ուժերի կարիքներից բխող անհրաժեշտ լրացումներ ու փոփոխություններ (որպես ապագա սպաներ՝ զինված ուժերում մարդու իրավունքներին վերաբերող հարցերին նրանց իրազեկվածությունն առավել կարևոր է),

4. կատարելագործել Ռազմական ոստիկանության ծառայողների գիտելիքներն ու կարողությունները, որպեսզի նրանք կարողանան զորամասերում համապատասխան աշխատանքներ իրականացնել, ներառյալ՝ բռնության կանխարգելման աշխատանքներ, և արդյունավետ համագործակցել զորամասի հրամանատարության հետ,

5. բոլոր զորամասերն ապահովել սպա-հոգեբաններով՝ նրանց համար պարբերաբար իրականացնելով վերապատրաստման դասընթացներ,

6. հանրակրթական հաստատությունների տնօրենների և համայնքային ոստիկանության ծառայողների համար սահմանել զորակոչային տարիքի քաղաքացիների վերաբերյալ տվյալները (բնավորություն, վարք, սոցիալ-հոգեբանական մի շարք գործոններ, գիտելիք և այլն) տարածքային զինկոմիսարիատ ներկայացնելու պարտականություն,

7. զինծառայողների շրջանում տանել իրավագիտակցության բարձրացման հետևողական աշխատանքներ՝ նրանց տրամադրելով իրավունքների իրազեկման ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, կազմակերպել դասընթացներ,

8. զարգացնել խրախուսանքի միջոցներ կիրառելու ինստիտուտը, քանի որ խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինծառայողների դաստիարակման հայտնի միջոց է:

3. Հրաման չկատարելու և զինգրքույկը կորցնելու համար կարգապահական տույժ կիրառելու պրակտիկան

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 17-րդ և 19-րդ կետերի համաձայն՝ յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու է կազմակերպել զինվորական կարգապահության սեփական համակարգը և այդ հարցում ունի հայեցողական որոշակի շրջանակ: Սակայն միայն զինվորական կարգապահության, կարգուկանոնի, ապահովության կամ անվտանգության սպառնալիք հանդիսացող վարքագիծը կարող է համարվել կարգապահական իրավախախտում: Ցանկացած պատժի խստության աստիճանը պետք է լինի իրավախախտմանը համաչափ: Զինծառայողների գործողությունները կամ անգործությունը, որոնք հավասարազոր են կարգապահական խախտումների, կարգապահական վարույթի շրջանակներում կիրառվող ընթացակարգերը, նշանակվող պատիժների տեսակները և տևողությունը, նման պատիժ նշանակելու

իրավասություն ունեցող մարմինը և այդ պատիժները բողոքարկելու իրավունքը պետք է նախատեսվեն օրենքով:

2019 թվականի ընթացքում բողոքների քննարկման և գործառնաքննության իրականացված այցերի արդյունքում Պաշտպանն արձանագրել է, որ զինծառայողների կողմից զինվորական գրքույկը կորցնելու դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով իրականացվում են ծառայողական քննություններ, որոնց արդյունքում զինծառայողներին տրվում են կարգապահական տույժեր: Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում զինվորական գրքույկը կորցնելու հանգամանքները պարզելու նպատակով անցկացվել է 42 ծառայողական քննություն, զինծառայողներից 3-ը տույժի չի ենթարկվել մեղավորություն չունենալու, իսկ 1-ը՝ վաղեմության ժամկետն անցնելու պատճառով: Հիմնականում կիրառվել են «նկատողություն» և «խիստ նկատողություն» տույժերը: Այսպիսով, ստացվում է, որ զինվորական գրքույկը կորցնելու համար կարգապահական պատասխանատվության է ենթարկվել 38 զինծառայող:

Վերոնշյալը խնդրահարույց է հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի (այսուհետ՝ Կարգապահական կանոնագիրք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգապահական խախտում (զանցանք) է համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ոտնձգող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար նույն օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական խախտում է համարվում նաև սպայական կազմի զինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառնությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ սպայի պատվի կանոնների խախտումը:

Կարգապահական կանոնագրքի 5-րդ գլխով նախատեսված են կարգապահական իրավախախտումների տեսակները, որոնց շարքում առկա չէ զինծառայողի կողմից զինվորական գրքույկը կորցնելը: Ըստ Պաշտպանության նախարարության՝ զինվորական գրքույկը կորցնելու համար կարգապահական տույժերը զինծառայողներին տրվել են զինվորական գրքույկի ծանոթացման բաժնի 1-ին կետի հիմքով: ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման ձև 3-ով նախատեսված է զինվորական գրքույկը, որի «Զինվորական հաշվառման և զինվորական գրքույկի վերաբերյալ» կանոնների 1-ին կետի համաձայն՝ զինծառայողները, ինչպես նաև պահեստագործում հաշվառված քաղաքացիները պարտավոր են խնամքով պահել զինվորական գրքույկը, այն կորցնելու դեպքում զինծառայողներն անհապաղ այդ մասին զեկուցում են անմիջական պետին, իսկ պահեստագործում հաշվառված քաղաքացիները՝ զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Այդ դեպքում զինվորական գրքույկը համարվում է անվավեր և տրվում է նոր զինվորական գրքույկ: Զինծառայողները զինվորական գրքույկը կորցնելու դեպքում ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

Մինչդեռ, զինծառայողներին զինվորական գրքույկը կորցնելու համար պատասխանատվության ենթարկելու հիմք Կարգապահական կանոնագրքով նախատեսված չէ, առկա չէ նաև բլանկետային նորմ առ այն, որ զինծառայողները պատասխանատվության են ենթարկվում զինվորական գրքույկի «Զինվորական հաշվառման և զինվորական գրքույկի վերաբերյալ կանոնները» խախտելու համար, սակայն զինծառայողները բացառապես զինվորական գրքույկով նախատեսված կանոնի հիման վրա՝ ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

Զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված խնդիր էր բացահայտվել կարգապահական իրավախախտումը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով (հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը)

որակելու հետ կապված: Այս խնդիրն արձանագրվել էր դեռևս Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ:

Մասնավորապես, նախկինում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով պարզվել էր, որ սպան, ով ծառայության վայր էր ներկայացել ոչ սթափ վիճակում, ենթարկվել է «զինվորական ծառայությունից արձակում» կարգապահական պատասխանատվության, քանի որ, Պաշտպանության նախարարության մեկնաբանությամբ, այդ կերպ խախտել էր ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «ՀՀ զինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին» թիվ 992-Ն հրամանով հաստատված կանոնների 6-րդ (արժևորել սեփական խոսքը, խուսափել անհարկի խոստումներից, պահպանել տրված խոստումը՝ միաժամանակ գիտակցելով տրված խոստման հնարավոր բացասական հետևանքները) և 12-րդ (իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի ձևավորմանը և պահպանմանը, որ զինվորական ծառայության համակարգը հիմնված է ազնվության, արդարության ու Հայրենիքի պաշտպանության գաղափարի վրա) կետերի պահանջները:

Պաշտպանի 2018 թվականի հաղորդմամբ նշվել էր, որ այս պարագայում, էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով սահմանված վարքագծի կանոնները խախտելը կարող է որակվել Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով, և թե արդյոք հրամանը պետք է ուղղված լինի անորոշ շրջանակի, թե՛ կոնկրետ զինծառայողների:

Այսպես, 31-րդ հոդվածի համաձայն՝ հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

Զինծառայողները կարող են պատասխանատվության ենթարկվել միայն օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

«Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» զանցանքի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել «հրաման» և «պետ» հասկացությունների բովանդակությունը:

Այսպես, ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով (այսուհետ՝ Ներքին ծառայության կանոնագիրք) սահմանվում է հրաման հասկացությունը: Այսպես՝ 37-րդ հոդվածի համաձայն՝ հրամանը հրամանատարի (պետի) կարգադրություն է՝ ուղղված ենթականերին, որ պահանջում է որոշակի գործողություններ կատարել, այս կամ այն կանոնը պահպանել, սահմանում է ինչ-որ կարգ, դիրք: Հրամանը կարող է տրվել գրավոր, բանավոր, կապի տեխնիկական միջոցներով՝ մեկ զինծառայողի, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը): Գրավոր հրամանը զինվորական կառավարման հիմնական կարգադրիչ, պաշտոնական փաստաթուղթ է (իրավական ակտ), որ միանձնյա ղեկավարման իրավունքով հրապարակում են զորամասերի հրամանատարները (հիմնարկների պետերը): Բանավոր հրամաններ տալիս են բոլոր հրամանատարները (պետերը):

Այսպիսով, որպեսզի հրամանը համարվի օրինական և սահմանված կարգով տրված, ի թիվս այլ պահանջների, այն պետք է ուղղված լինի մեկ զինծառայողի, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը):

Հետևաբար, Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանի պահանջները չկատարելը չի կարող հանգեցել Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով սահմանված զանցանքի կատարմանը, քանի որ դրանով վարքագծի կանոններ են սահմանվում բոլոր զինծառայողների համար: Ներքին ծառայության կանոնագրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հրամանատարի (պետի) հրամանը պետք է կատարվի անվերապահորեն,

ճշտորեն և նշված ժամկետում (Ավելին՝ զինծառայողը, ստանալով հրամանը, պատասխանում է «Լսում եմ» և հետո կատարում այն):

Նշված դրույթը նաև հստակեցնում է, որ անհրաժեշտության դեպքում, տրված հրամանի ճիշտ ընկալումը ստուգելու նպատակով հրամանատարը (պետը) կարող է պահանջել նրա համառոտ կրկնությունը, իսկ զինծառայողը, ստանալով հրամանը, դիմել հրամանատարին (պետին) այն կրկնելու խնդրանքով: Մտացված հրամանի կատարման մասին զինծառայողը պարտավոր է զեկուցել հրաման տված պետին և իր անմիջական պետին:

Այնինչ, Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանների դեպքում զինծառայողները դրա մասին չեն զեկուցում իրենց անմիջական պետերին, այդ հրամանների կատարման համար ժամկետ նշված չէ:

Ներքին ծառայության կանոնագրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ պետերը, որոնց զինծառայողները ենթարկվում են ծառայության բերումով, թեկուզ և ժամանակավորապես, ուղղակի պետեր են համարվում: Ենթակային ամենամոտ ուղղակի պետը կոչվում է անմիջական պետ:

Հատկանշական է, որ հրամանը՝ որպես իրավական ակտի տեսակ, օրենքից և կառավարության որոշումից ցածր իրավաբանական ուժ ունի, սակայն դրա համար նախատեսված է խիստ պատասխանատվություն, որը կապված է այն հանգամանքի հետ, որ դրանով խախտվում է զինվորական ծառայության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ «Միանձնյա ղեկավարությունը»: Համաձայն Ներքին ծառայության կանոնագրքի 31-րդ հոդվածի՝ միանձնյա ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման, ղեկավարման և զինծառայողների փոխհարաբերության սկզբունքներից մեկն է: Դա հրամանատարին (պետին) իր ենթակաների նկատմամբ ողջ կարգադրողական իշխանությամբ օժտելն է և նրա վրա պետության հանդեպ անձնական պատասխանատվություն դնելը գորամասի, ստորաբաժանման և ամեն մի զինծառայողի կյանքի ու գործունեության բոլոր կողմերի համար:

Ավելին՝ միանձնյա ղեկավարությունը դրսևորվում է հրամանատարի (պետի)՝ իրադրության համակողմանի գնահատումից ելնելով՝ միանձնյա կերպով որոշումներ ընդունելու, օրենքներին ու զինվորական կանոնադրություններին խստիվ համապատասխան հրամաններ արձակելու և դրանց կատարումն ապահովելու իրավունքի մեջ:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածով սահմանված հանցագործությունը Կարգապահական կանոնագրքով սահմանված կարգապահական զանցանքից տարբերվում է միայն առաջացրած հետևանքով, այն է՝ ծառայության շահերին էական վնաս պատճառելը:

Հետևաբար, արարքը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով դրակելու համար անհրաժեշտ է հանցակազմի համար սահմանված բոլոր հատկանիշները՝ բացառությամբ հետևանքի:

Այս հանցագործության անմիջական օբյեկտը զինվորական ենթակայության կարգն է, և դրանով խախտվում է զինված ուժերի կազմավորման և գործունեության այնպիսի կարևոր սկզբունք, ինչպիսին է միանձնյա ղեկավարումը (այդ թվում՝ անմիջական ենթակայությունը):

Հրամանը պետի կողմից կոնկրետ ստորադասին կամ ստորադասների խմբին ուղղված պարտադիր պահանջ է՝ կատարելու կամ չկատարելու այս կամ այն գործողությունը:

Հրամանից պետք է տարբերել այն պահանջները, որոնք նախատեսված են զինվորական կանոնադրություններում ու կանոնագրքերում և ուղղված են զինծառայողների անորոշ շրջանակի<sup>462</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «ՀՀ զինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին» թիվ 992-Ն հրամանով հաստատված կանոնները խախտելու համար սահմանված պատասխանատվությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ կարգապահական խախտում է համարվում, ի թիվս այլնի, նաև սպայական կազմի զինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ սպայի պատվի կանոնները խախտելը:

Հողվածի 3-րդ մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունն ապահովվում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմամբ, ինչպես նաև հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ճշգրիտ ու ժամանակին կատարմամբ:

Այս բնորոշումից պարզ է դառնում, որ բոլոր իրավական ակտերը, որոնցով պարտականություններ են սահմանված զինծառայողների համար, զինվորական կարգապահության բաղկացուցիչ մասն են կազմում:

Այլ կերպ ասած, թեև Կարգապահական կանոնագրքով նշվում է, որ սպայի պատվի կանոնները խախտելը հանդիսանում է կարգապահական զանցանք, սակայն նշված չէ, թե Կարգապահական կանոնագրքով սահմանված 15 զանցանքից կոնկրետ որ զանցանքն է: Ավելին՝ սպայի պատվի կանոնները խախտելու համար ուղղակիորեն պատասխանատվություն կամ տույժի տեսակ սահմանված չէ: Հետևաբար, սպայի պատվի կանոնների խախտման դեպքում անհրաժեշտ է ծառայողական քննությամբ պարզել, թե զինծառայողը Կարգապահական կանոնագրքով նախատեսված որ զանցանքն է կատարել (օրինակ՝ հնարավոր է, որ դա հանգեցնի «Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը» կամ «Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ» կարգապահական զանցանքներին):

Բոլոր դեպքերում զինծառայողներին վերագրվող իրավախախտումները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության չափանիշներին:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի<sup>463</sup>:

Հետևաբար, Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելը որպես կարգապահական տույժ սահմանված լինելն ինքնին բավարար չէ այդ կանոնները խախտելը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով որակելու համար: Արդյունքում, առաջարկվել էր Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելու համար սահմանել առանձին զանցանք, սակայն առաջարկը դեռևս չի իրացվել:

<sup>462</sup> Սա հստակ է նաև մասնագիտական տեսական գրականության մեջ, տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2012թ.:

<sup>463</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 3-ի թիվ ՍԴՌ-1270 որոշումը:

Թեև 2019 թվականի ընթացքում Պաշտպանին նմանատիպ բողոքներ չեն հասցեագրվել, սակայն նշված թեման, կարևորությամբ պայմանավորված, շարունակում է մնալ Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Խնդրին մշտապես ուշադրություն է դարձվել ինչպես Պաշտպանի աշխատակազմում կատարվող ուսումնասիրությունների, այնպես էլ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից գորամասեր իրականացվող այցերի շրջանակներում:

Խնդրին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում Պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ղեկավար կազմի հետ 2019 թվականի հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած աշխատանքային քննարկման ընթացքում: Պաշտպանության նախարարության ներկայացուցիչներն ընդունել են «Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» զանցանքի որակման հետ կապված պրակտիկ խնդրի առկայությունը և ընդգծել հետագա պրակտիկան փոփոխելու անհրաժեշտությունը:

Բացի այդ, 2020 թվականին Պաշտպանին կրկին հասցեագրվել է բողոք, որով զինծառայողը բարձրացրել է ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով սահմանված վարքագծի կանոնները խախտելը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով որակելու և դրա արդյունքում տվյալ զանցանքին համապատասխան կարգապահական տույժ կիրառելու հետ կապված խնդիր: Նման բողոքի առկայությունը վկայում է, որ պրակտիկայում խնդիրը դեռևս չի լուծվել, ինչը խիստ մտահոգիչ է:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. բացառել օրենքով չնախատեսված արարք կատարելու, մասնավորապես՝ զինվորական գրքույկը կորցնելու համար զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան,

2. բացառել Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանները խախտելու համար զինծառայողներին Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով նախատեսված զանցանք (Հրաման չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) վերագրելու պրակտիկան,

3. Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելու համար սահմանել առանձին զանցանք:

4. Պարտադիր զինծառայողին մշտական տեղակայման գորամասից այլ գորամաս տեղափոխելու պրակտիկան

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ, ընտանեկան պայմաններից ելնելով, առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, ռազմաուսումնական հաստատությունից հեռացվելու (ազատվելու) կամ առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում կարող են տեղափոխվել ծառայության այլ վայր:

Զինծառայողները ծառայության այլ վայր կարող են տեղափոխվել նաև ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործով նախաքննության իրականացման նկատառումներից ելնելով:

Չնայած օրենսդրական կարգավորումներին՝ 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ զինծառայողին մշտական տեղակայման գորամասից այլ գորամաս տեղափոխելու վերաբերյալ:

Օրինակ, պարտադիր ժամկետային զինծառայողի մայրը տեղեկացրել է, որ որդու մոտ առկա է գիշերամիզություն, ինչի պատճառով ծառայություն է անցնում օրվա հեշտացված կարգացուցակով, հարմարեցված պայմաններ ունեցող զորամասում և նշված հիվանդությունը չունեցող այլ զինծառայողներից անջատ:

Քաղաքացին նշել է, որ որդին դատական նիստին մասնակցելու համար մշտական ծառայության վայրի զորամասից տեղափոխվել է Երևան, դատական նիստը մի քանի օրով հետաձգվել է, և մինչ հաջորդ դատական նիստը որդին տեղափոխվել է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանություն, որտեղ առկա չեն որդու առողջական վիճակին համադրելի պայմաններ: Բացի այդ, որդին Ռազմական ոստիկանությունում գտնվում է գիշերամիզություն չունեցող այլ զինծառայողների հետ:

Արագ արձագանքման շրջանակներում Պաշտպանի աջակցությամբ զինծառայողը տեղափոխվել է մշտական տեղակայման վայրի զորամաս:

Զինծառայողներից և նրանց ընտանիքների անդամներից մի շարք բողոքներ են ստացվել մշտական տեղակայման վայրի զորամասից Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժին տեղափոխելու վերաբերյալ:

Խնդիրն այն է, որ զինծառայողը մշտական տեղակայման զորամասից տեղափոխվում է Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժին (երբեմն չունենալով դատավարական կարգավիճակ) և տևական ժամանակ պահվում այնտեղ: Ավելին, քրեական գործով տարբեր դատավարական կարգավիճակ ունեցող անձինք, օրինակ՝ վկա, հրամանատարության հսկողությանը հանձնված, ինչպես նաև որևէ կարգավիճակ չունեցող զինծառայողներ պահվում են ընդունիչ-բաշխիչ բաժնում միասին, նրանց օրվա կարգացուցակում չկան տարբերություններ:

Խնդիրը նաև նրանում է, որ ընդունիչ-բաշխիչ բաժնում գտնվող զինծառայողների վիճակն անորոշ է, նրանք չգիտեն, թե որքան ժամանակ են պահվելու այնտեղ: Սա միայն Ռազմական ոստիկանության խնդիրը չէ, այլ նաև հատկապես վարույթն իրականացնող մարմնի:

Չնայած իրավասու մարմինների պնդմանը, որ զինծառայողներն ընդունիչ-բաշխիչ բաժնում գտնվում են զորանոցային պայմաններում՝ այնուամենայնիվ, թե՛ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը և թե՛ Պաշտպանի ներկայացուցիչների այցերը ցույց են տալիս, որ առկա են զորամասերում և Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժիններում զինվորական ծառայության տարբերություններ: Օրինակ, ըստ բողոքների՝ ընդունիչ-բաշխիչ բաժիններում չկան սպորտային անկյուններ, չի տրամադրվում ազատ արձակում, հեռախոսազանգի հնարավորություն է տրվում շաբաթը մեկ անգամ:

Մեկ այլ խնդիր.

ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1675-Ն որոշմամբ («Ես եմ» ծրագիր), ի թիվս այլ հիմքերի, սահմանվում է, որ որպես պաշտպանության միջոց ծառայության վայրը փոխելու դեպքում ծրագրի շահառու զինծառայողի հետ կնքված պայմանագիրը լուծվում է:

Ստացվում է, որ, օրինակ, հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու դեպքում զինծառայողի նկատմամբ կարող է կիրառվել պաշտպանության միջոց, փոխվել զորամասը, և վաղաժամկետ լուծվել Պայմանագիրը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1675-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Պաշտպանն առաջարկել է քննարկել ծրագրի շահառուի կարգավիճակը պահպանելը նրան այլ զորամաս տեղափոխելու և մարտական հերթապահության ներգրավելու միջոցով: Ըստ Պաշտպանության նախարարության դիրքորոշման՝ պաշտպանության միջոց կիրառելու դեպքում հնարավոր չէ պահպանել ծրագրի շահառուի



կարգավիճակի պահպանումը, քանի որ զինծառայողի նկատմամբ ծառայության վայրը փոխելու միջոցով պաշտպանության միջոցի կիրառումն իրականացվում է Ռազմական ոստիկանության ենթակա զորամասերում, որոնք ընդգրկված չեն մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի ցանկում: Հարկ է նկատի ունենալ, որ օրենքով որևէ արգելք առկա չէ պաշտպանության միջոց կիրառելու դեպքում զինծառայողին մարտական հերթապահություն իրականացնող զորամաս տեղափոխելու վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

1. մշտական ծառայության վայրի զորամասից այլ զորամաս տեղափոխելիս, ի թիվս այլնի, առանձնահատուկ ուշադրություն դարձնել նոր զորամասում զինծառայողի առողջական վիճակին համադրելի ծառայողական պայմանների ապահովմանը,

2. «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնողի նկատմամբ պաշտպանության միջոց կիրառելիս չլուծել պայմանագիրը և նրան մշտական ծառայության զորամասից տեղափոխել այլ զորամաս՝ հնարավորություն ընձեռելով ներգրավելու մարտական հերթապահության,

3. Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժինների պայմանները համապատասխանեցնել զորամասերի զորանոցային պայմաններին,

4. Ռազմական ոստիկանությունում գտնվող դատավարական կարգավիճակ ունեցող (օրինակ՝ վկա, հրամանատարության հսկողությանը հանձնված և այլն) և կարգավիճակ չունեցող (օրինակ՝ ծառայության վայրի զորամասը փոխելու նպատակով) զինծառայողներին պահել անջատ,

5. իրավասու մարմինների կողմից (Պաշտպանության նախարարություն, Դատախազություն, Քննչական կոմիտե) խստացնել հսկողությունը Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժնում զինծառայողների գտնվելու ժամկետների նկատմամբ՝ բացառելով տևական ժամանակ զինծառայողների այնտեղ գտնվելը:

ԳԼՈՒԽ 8. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային իրազեկումը

Կյանքի իրավունքը՝ որպես բնական, հիմնարար և անօտարելի արժեք, ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով: Պետության անվերապահ պարտականությունն է խաղաղ պայմաններում պաշտպանել իր հսկողության ներքո գտնվող անձանց, այդ թվում՝ զինճառայողների կյանքը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ Պաշտպանության նախարարության ներկայացրած տվյալների հիման վրա ուսումնասիրվել է 2019 թվականի ընթացքում զինճառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը:

Մասնավորապես, ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում գրանցվել է 49 զինճառայողի մահվան ելքով 47 դեպք: Հակառակորդի զինված ուժերի կողմից արձակված կրակոցների հետևանքով գոհվել է 4 զինճառայող: Մնացած 45 մահը տեղի է ունեցել՝ սպանության (4), զենքի օգտագործման կանոնները խախտելու (1), հիվանդության (13), ավտովթարի (15), դժբախտ պատահարի (2), ինչպես նաև ինքնասպանության (10) հետևանքով: Դատախազությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում արձանագրված զինճառայողների մահվան դեպքերով հարուցվել են՝ 19 քրեական գործեր, նախապատրաստվել՝ 1 նյութ:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2019 թվականի ընթացքում արձանագրվել է ինքնավնասումների 97 դեպք, որից 76-ով հարուցվել են քրեական գործեր ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի (Անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելը) հատկանիշներով:

Զնայած այն հանգամանքին, որ 2018 թվականի համեմատությամբ զինված ուժերում մահվան դեպքերը նվազել են (2018 թվականին արձանագրվել էր մահվան 63 դեպք, այսինքն՝ 16-ով նվազել է)՝ այնուամենայնիվ, զինված ուժերում մահվան դեպքերի քանակը, ինչպես նաև ինքնավնասումների դեպքերի աճը (2018 թվականին արձանագրվել էր ինքնավնասման 57 դեպք, այսինքն՝ 40-ով ավելացել է) խիստ մտահոգիչ է: Անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը հստակ և տեսանելի քայլեր ձեռնարկի դրանց պատճառներն ու նպաստող պայմանները վերհանելու, դրանց համակարգային լուծումներ տալու և արդյունքում՝ դրանք բացառելու ուղղությամբ:

Իհարկե, պետք է ընդգծել ՀՀ պաշտպանության նախարարության կատարած կարևոր աշխատանքը: Մասնավորապես, Պաշտպանության նախարարությունը տրամադրել է տեղեկություններ այն մասին, որ՝

1) անցկացվել են ճառայողական քննություններ՝ պարզելու ճառայության կազմակերպման ու իրականացման ժամանակ տեղ գտած թերություններն ու բացթողումները:

2) արձակվել են հրամաններ և կրկնությունը բացառելու նպատակով զորամասերի հրամանատարական կազմին կոնկրետ հանձնարարականներ են տրվել, նախանշվել կանխարգելիչ աշխատանքների ուղղությունները:

3) ճառայողական քննությունների արդյունքներով արձակված վերադաս, ինչպես նաև զորամասերի հրամանատարության հրամաններով՝ պարտականությունների կատարման մեջ թերացած զինճառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

4) ինքնավաստման դեպքերի կանխարգելմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով զինվորական կոլեկտիվներում իրականացվել են սոցիալ-հոգեբանական գործընթացների, զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություններ, հոգեբանական խորհրդատվության տրամադրման և անհատական-դաստիարակչական աշխատանքներ:

5) զորամասերի ստորաբաժանումների հրամանատարների բարոյահոգեբանական աշխատանքների գծով տեղակալների և սպա-հոգեբանների հետ Երևանի պետական համալսարանում անցկացվել են վերապատրաստման դասընթացներ՝ նրանց հոգեբանական պատրաստության մակարդակը, ինչպես նաև գործնական հմտությունները կատարելագործելու նպատակով: 2019 ուսումնական տարվա ընթացքում վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 60 սպա:

Այս ուղղությամբ, ըստ ստացված տեղեկությունների, կարևոր աշխատանք է կատարել ՀՀ զինվորական դատախազությունը: Մասնավորապես, նշվել է, որ կատարված ուսումնասիրությունների հիման վրա կայագործների զինվորական դատախազներին, ի թիվս այլնի, առաջարկվել է՝

1) յուրաքանչյուր գործով քննության ընթացքում, կախված առկա ելակետային տվյալներից, իսկզբանե առաջ քաշել զինծառայողին մահ պատճառելու հանգամանքների, հանցավորի մեղքի ձևի վերաբերյալ տարբեր վարկածներ, և դրանք հերքված համարել միայն համապատասխան ապացույցների բավարար համակցության գնահատման արդյունքում:

2) յուրաքանչյուր գործով մանրակրկիտ ստուգման ենթարկել մեղադրյալների կողմից բերվող պատճառաբանությունները՝ հանցավոր արարքների պատճառների վերաբերյալ, հասնել հանցագործությունների կատարման իրական պատճառների վերհանմանը, դրանց կանխարգելմանը և չեզոքացմանը:

3) հանձնարարել յուրաքանչյուր գործով պարզել և վեր հանել կատարված հանցագործությանը նպաստող պայմանները և դրանց հետ կապված հնարավոր այլ հանցագործությունները:

4) ըստ առանձին զորամասերի՝ վերլուծել հանցավորության աճի կամ նվազման պատճառներն ու նպաստող պայմանները՝ նախանշելով դատախազական ներգործության արդյունքում դրանց վերացման ուղիներն ու միջոցները:

5) կայագործների զինվորական դատախազությունների, քննչական բաժինների և ռազմական ոստիկանության աշխատակիցների, ինչպես նաև զորամասերի հրամանատարության հետ համատեղ ուսումնասիրել դեպքերի ու հանցագործությունների պատճառները և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ, այն է՝ կատարել զինծառայողների իրավական գիտելիքների մակարդակը բարձրացնելուն ուղղված դաստիարակչական և բացատրական աշխատանքներ:

6) ձեռնարկել միջոցառումներ և հասնել նրան, որ զորամասերի հրամանատարությունը լրիվ ծավալով շարունակի օժանդակել հետաքննության և նախաքննության մարմիններին՝ ցանկացած դեպքի իրական հանգամանքները բացահայտելու ուղղությամբ, բացառի նշված մարմիններին այդ հարցում խոչընդոտելու և դեպքերն այլ կերպ ներկայացնելու փաստերը, քանզի յուրաքանչյուր դեպքին արագ արձագանքելը և դրան համապատասխան ընթացք տալը կանխարգելիչ ազդեցություն կունենա հետագայում հանցագործության առաջացման, կամ տեղի ունեցածն ավելի ծանր հանցագործության վերաճելը թույլ չտալու առումով:

Կարծում ենք, վերը նշված քայլերն անհրաժեշտ, բայց դեռևս բավարար չեն բանակում մահվան և ինքնավաստման դեպքերը կանխելու համար: Այստեղ անհրաժեշտ է, նախ, հասկանալ, թե ինչ պարտականություններ ունի պետությունը զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Այսպես, զինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանության առումով պետությունն ունի նյութական և ընթացակարգային պարտականություններ: Պետության նյութական պարտավորություններն իրենց հերթին բաղկացած են նեգատիվ և պոզիտիվ պարտականություններից:

Զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության պետության նեգատիվ պարտականության էությունը զինված ուժերի պաշտոնատար անձանց կողմից այլ անձանց կյանքից զրկելուց զերծ մնալն է, իսկ պոզիտիվ պարտականությունը պահանջում է զինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված ողջամիտ քայլեր ձեռնարկելու պարտականություն:

Այս առումով, չափազանց կարևոր և հրատապ է ունենալ բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ (ծրագիր, քայլերի հերթականություն), որի շնորհիվ յուրաքանչյուր դեպքի հանգամանքների ուսումնասիրության և այլ դեպքերի հետ համադրության արդյունքում հնարավոր կլինի հասնել խնդրի համակարգային լուծման:

Զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության պետության պոզիտիվ պարտականություններից է զինված ուժերում կարգապահության ամրապնդումը, որի համար առանցքային է իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանումը, կանխարգելման նպատակով կոնկրետ գործողությունների ծրագրի մշակումը<sup>464</sup>:

Եթե, այդուհանդերձ, զինձառայողը զրկվել է կյանքից, ապա առաջ է գալիս պետության ընթացակարգային պարտականությունը՝ զինձառայողների մահվանը հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով իրականացնել արդյունավետ քննություն (effective investigation):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ ինչպես կալանավորված անձինք, պարտադիր ժամկետային զինձառայողները նույնպես գտնվում են անմիջականորեն «պետության ձեռքերում», և բանակի հետ կապված ցանկացած իրադարձություն ամբողջությամբ կամ մեծ մասամբ ընկնում է իշխանությունների բացառիկ իրավասության ներքո: Հետևաբար, պետությունը պարտավոր է նաև պատասխանատվություն կրել բանակում տեղի ունեցած ցանկացած վնասվածքի կամ մահվան դեպքի համար<sup>465</sup>: Բոլոր այն դեպքերում, երբ պետական մարմիններն օբյեկտիվ պատճառներով գործի ճշգրիտ հանգամանքները չեն կարող պարզել, պետք է բավարար և համոզիչ կերպով բացատրեն իրադարձությունների հաջորդականությունը և ներկայացնեն դիմումատուի պնդումները հերքող հիմնավոր ապացույցներ<sup>466</sup>:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 7-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ստեղծեն անկախ և արդյունավետ մեխանիզմներ զինձառայողների մահվան կամ նրանց կյանքի իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների պատշաճ քննության համար: Ավելին՝ զինված ուժերի յուրաքանչյուր անդամի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը:

Կարևոր է ընդգծել, որ միջազգային իրավաբանության ներքո քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է, որ այն բավարարի հետևյալ չորս միաժամանակյա

<sup>464</sup> Ավելի մանրամասն ներկայացված է սույն բաժնի «Իրավունքի գերակայության ներքո ամուր կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գրավական» թեմայում:

<sup>465</sup> Տե՛ս Բեքերն ընդդեմ Թուրքիայի (Beker v. Turkey) 2009 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 27866/03, կետ 41:

<sup>466</sup> Տե՛ս Մարինա Ալեքսեևան ընդդեմ Ռուսաստանի (Marina Alekseyeva v. Russia) 2014 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 22490/05, 121 և 122 կետեր:

պահանջները՝ 1) անկախություն (independence), 2) պատշաճություն (adequacy), 3) անհապաղ և ողջամիտ ժամկետ (promptness and reasonable expedition) և 4) հանրային վերահսկողություն, ներառյալ՝ տուժողի իրավահաջորդի ներգրավվածություն (public scrutiny and the participation of the next-of-kin):

Ընդ որում, նշված պահանջների պահպանման անհրաժեշտությունը հստակ ընդգծված է նաև ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրով<sup>467</sup>: Մասնավորապես.

1) Գործի քննությունը պետք է լինի անկախ, մասնավորապես, երբ կան կասկածներ առ այն, թե ինչպես է զինձառայողը մահացել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այս կապակցությամբ նշել է, որ կյանքի իրավունքի դատավարական պաշտպանությունը պետք է ներառի անկախ քննություն իրականացնելու որոշակի հնարավորություն, որի նպատակն է պարզել, թե ինչ հանգամանքներում է մահը վրա հասել, և հաստատել, թե ով պետք է պատասխանատվություն կրի<sup>468</sup>: Քննություն իրականացնելու համար պատասխանատու անձինք պետք է լինեն իրադարձություններում ներգրավված անձանցից անկախ<sup>469</sup>:

2) Պետության պարտավորության մասն է արդյունավետ պաշտպանության համար օրենսդրական և վարչական կառուցակարգի ապահովումը, որը ներառում է ապացույցներ հավաքելու համար պատշաճ ընթացակարգերը՝ պատասխանատվության կարգապահական կամ քրեական բնույթը պարզելու համար<sup>470</sup>:

3) Քննությունը պետք է կատարվի անհապաղ և ողջամիտ ժամկետում, մասնավորապես՝ երբ քննությունը վերաբերում է զինձառայողների կողմից ուժի գործադրման հետևանքով առաջացած մահվանը<sup>471</sup>: «Անհապաղ» նշանակում է, որ գործի քննությունը պետք է սկսել մահվան վրա հասնելուց հետո հնարավորին շուտ, և «ողջամիտ ժամկետում» եզրույթը ենթադրում է, որ քննությունը չպետք է անհարկի ձգձգվի: Այն դեպքերում, երբ մահը վրա է հասել ուժի կիրառման հետևանքով, Եվրոպական դատարանը համարել է, որ քննություն իրականացնող մարմինների կողմից անհապաղ քննություն իրականացնելն էական է՝ վերջիններիս օրենքի գերակայության սկզբունքներին հավատարիմ լինելու առումով հանրության վստահությունը պահպանելու, ինչպես նաև անօրինական արարքների շուրջ գաղտնի համաձայնության գալու կամ դրանց նկատմամբ հանդուրժողականության ցանկացած դրսևորում կանխելու համար<sup>472</sup>:

4) Պետք է առկա լինի քննության կամ դրա արդյունքների նկատմամբ բավարար հանրային վերահսկողություն՝ ապահովելու համար քննության հաշվետվողականությունն ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն: Հանրային վերահսկողության նվազագույն պահանջն այն է, որ տուժողի իրավահաջորդը դատավարության գործընթացում

<sup>467</sup> Մանրամասն հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/16805cf943>:

<sup>468</sup> Տե՛ս Սալգինն ընդդեմ Թուրքիայի (Salgin v. Turkey) 2007 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 46748/99, կետ 86:

<sup>469</sup> Տե՛ս Մրքթերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (McKerr v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 112:

<sup>470</sup> Տե՛ս Քիլինջը և այլք ընդդեմ Թուրքիայի (Kilinc and others v. Turkey) 2005 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, կետ 41:

<sup>471</sup> Տե՛ս Հյու Ջորդանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Hugh Jordan v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, 107 և 108 կետեր:

<sup>472</sup> Տե՛ս Քելլին և այլք ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Kelly and others v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 30054/96, կետ 97:

պետք է լինի բավարար չափով ներգրավված, որպեսզի կարողանա երաշխավորել իր օրինական շահերի պաշտպանությունը<sup>473</sup>:

Այս ամենից բացի՝ գործի քննությունը պետք է լինի նաև մանրակրկիտ (thorough): Ըստ Եվրոպական դատարանի՝ իշխանությունները մշտապես պետք է լուրջ ջանքեր գործադրեն՝ պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել, նրանք չպետք է ապավինեն հապճեպ կամ վատ հիմնավորված հետևությունների՝ գործի քննությունը դադարեցնելու կամ այլ որոշումներ կայացնելու համար<sup>474</sup>:

Հատկանշական է, որ զինծառայողների մահվան դեպքերի արդյունավետ քննության անհրաժեշտությունը Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների հետ քննարկվել է նաև 2019 թվականի փետրվարի 15-ին Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի մասնակցությամբ կազմակերպված կլոր սեղան-քննարկման շրջանակներում, որին մասնակցել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչության, դատական դեպարտամենտի, Պաշտպանության և Արդարադատության նախարարությունների, Ռազմական ոստիկանության, Քննչական կոմիտեի, Հատուկ քննչական ծառայության, Դատախազության, Արդարադատության ակադեմիայի, ԵՄ Գլխավոր տնօրինության ՄԻԵԴ վճիռների կատարման դեպարտամենտի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են քրեական վարույթի արդյունավետ քննությանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել ոլորտի հետ կապված Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարմանն ուղղված՝ Կառավարության կողմից ներկայացվող գործողությունների ծրագրերին, խնդիրների լուծմանն ուղղված համակարգային միջոցներին: Հատուկ ուշադրություն է դարձվել «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ վճիռի կատարման հետ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացված հատուկ դիրքորոշմանը:

Միաժամանակ, պետք է նշել, որ Հայաստանում Ձինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են: Նրանք գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում, ուստի զինված ուժերում յուրաքանչյուր մահվան դեպքի վերաբերյալ պետք է հանրությանը ճշգրիտ տեղեկատվություն տրամադրվի իրավասու աղբյուրից:

Այս առումով մտահոգիչ է 2019 թվականի հունվարի 1-ին պայմանագրային զինծառայողի մահվան դեպքի վերաբերյալ տեղեկությունը միայն օրեր անց, ընդ որում՝ ոչ Պաշտպանության նախարարության կողմից հրապարակվելու հանգամանքը: Ըստ զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկությունների՝ նշված դեպքը չի եղել եզակի:

Այս կապակցությամբ կարևոր է հաշվի առնել, որ զինված ուժերում մահվան դեպքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ցանկացած հապաղում կարող է հիմք հանդիսանալ չստուգված աղբյուրներից տեղեկության հրապարակման, ինչն իր հերթին կարող է բացասաբար ազդել հանրային վստահության վրա: Ձինված ուժերում մահվան յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տեղեկությունների ճշգրիտ և ժամանակին հրապարակումն ունի նաև հանրության շրջանում լարվածության մթնոլորտի ձևավորումը կանխարգելող նշանակություն:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

<sup>473</sup> Տե՛ս ՄըքԲերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (McKerr v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 115:

<sup>474</sup> Տե՛ս Զելիլոֆն ընդդեմ Հունաստանի (Zelilof v. Greece) 2007 թվականի օգոստոսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 56:

1. զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի կանխարգելման և ընդհանուր իրազեկվածության բարձրացման ուղղությամբ ձեռնարկել գործուն միջոցներ, այդ թվում՝ զինծառայողների հետ տարվող անհատական հոգեբանական աշխատանքների իրականացման միջոցով,

2. մշակել բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ (ծրագիր, քայլերի հերթականություն), որի շնորհիվ յուրաքանչյուր դեպքի հանգամանքների ուսումնասիրության և այլ դեպքերի հետ համադրության արդյունքում հնարավոր կլինի հասնել խնդրի համակարգային լուծմանը,

3. բանակում յուրաքանչյուր մահվան դեպքի մասին հանրությանն առաջնային աղբյուրից տրամադրել ճշգրիտ տեղեկություններ:

## 2. Զինված ուժերում բռնության արգելքը

Բռնության ցանկացած դրսևորում անընդունելի է: Ի տարբերություն մարդու շատ այլ իրավունքների՝ այս արգելքը չի ենթադրում որևէ բացառություն: Այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ: Այս սկզբունքային մոտեցումը պայմանավորված է նրանով, որ բռնությունների և ոչ պատշաճ վերաբերմունքի օբյեկտը՝ անձի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիությունը, մարդու կարևորագույն արժեքներից է, որը ոչ մի պարագայում չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության: Այն չի կարող արդարացվել և հիմնավորվել նույնիսկ պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության ու հանցավորության դեմ պայքարից թելադրվող անհրաժեշտությամբ: Բռնությունը և ոչ պատշաճ վերաբերմունքն արգելվում է՝ անկախ անձի վարքագծից:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի՝ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 10-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն զինծառայողներին բռնություններից և ոչ պատշաճ վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի առավել խոցելի կատեգորիաներին, ինչպիսիք են, օրինակ, նորակոչիկները (պարտադիր զինծառայողները):

Հետևաբար, պետությունը պոզիտիվ պարտականություն ունի կանխել զինված ուժերում բռնության և ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելու դեպքերը, իսկ իրականացված լինելու դեպքերում՝ իրականացնել արդյունավետ հետաքննություն, հայտնաբերել մեղավորներին և պատժել: Պետության ձեռնարկած միջոցառումները պետք է արդյունավետ լինեն և ծառայեն իրենց նպատակին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված են: Պետության առաջնային պարտականությունն է անձին զինվորական ծառայության գորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա

առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով<sup>475</sup>:

2019 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է բողոքներ զինծառայողների նկատմամբ ենթադրյալ բռնություն և ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Մասնավորապես, պարտադիր ժամկետային զինծառայողի պահման վայրի, նրան բժշկական օգնություն չտրամադրելու, նրա նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելու, այդ թվում՝ Երևանի կայազորային զինվորական հոսպիտալում և Ռազմական ոստիկանությունում ծեծելու, ապօրինաբար Ռազմական ոստիկանությունում պահելու ենթադրյալ դեպքերի առթիվ Մարդու իրավունքների պաշտպանին է դիմել փաստաբանը և տեղեկացրել, որ վերը նշվածի վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ առաջարկելով տրամադրել տեղեկություններ փաստաբանի ներկայացրած հաղորդման քննարկման ընթացքի և դրա արդյունքների մասին:

Պաշտպանի գրությանն ի պատասխան Դատախազությունից տրամադրվել է տեղեկություն այն մասին, որ փաստաբանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին ներկայացրած «հանցագործության մասին հաղորդում» վերտառությամբ դիմումն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 4-րդ կայազորային քննչական բաժին և հանձնարարվել քննության առարկա դարձնել դիմումում ներկայացված փաստերն ու հանգամանքները: Այս կապակցությամբ պետք է նշել, որ նշված քրեական գործի վարույթը դեռևս չի ավարտվել, և փաստաբանի կողմից բարձրացված հարցերը շարունակվում են գտնվել Պաշտպանի ուշադրության ներքո:

Մեկ այլ բողոք ստացվել է պարտադիր ժամկետային զինծառայողին զորամասում ծաղրելու վերաբերյալ: Մարդու իրավունքների պաշտպանին է դիմել փաստաբանը և խնդրել զորամասում առաջացած խնդիրները պարզելու նպատակով այցելել իր վստահորդին: Պաշտպանի ներկայացուցիչներն անմիջապես այց են իրականացրել զորամաս և առանձնազրույց ունեցել զինծառայողի հետ, ով նույնպես հաստատել է զորամասում իրեն ծաղրելու հանգամանքը:

Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով իրականացվել է ծառայողական քննություն, սակայն զինծառայողի պնդումները չեն հաստատվել:

Չնայած նշվածին՝ Պաշտպանին հասցեագրված բողոքների առկայությունն արդեն իսկ մտահոգիչ է: Մտահոգիչ է հատկապես այն առումով, որ պրակտիկայում չեն դադարում բանակում բռնության և (կամ) ոչ պատշաճ վերաբերմունքի դրսևորումները: Այս չարիքի դեմ հարկավոր է պայքարել կոշտ միջոցներով և օրենքին համապատասխան: Բռնությունը և ոչ պատշաճ վերաբերմունքի դրսևորումները պետք է տեղ չունենան մեր բանակում: Նման արարքները պետք է ունենան զրո հանդուրժողականություն:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել զինված ուժերում զինծառայողներին բռնություններից և ոչ պատշաճ վերաբերմունքից պաշտպանելու համար, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել պարտադիր զինծառայողներին բռնություններից պաշտպանելու հարցին,

<sup>475</sup> Տե՛ս Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (Chember v. Russia) գործով 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:



2. զինված ուժերում բնության վերաբերյալ ցանկացած տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության առարկա:

**1. Կանանց կարևորությունը զինված ուժերում**

Կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման համար Հայաստանը 1993 թվականին վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կանանց իրավունքներն ամրագրող մի շարք միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ: Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով: Միաժամանակ, կանանց և տղամարդկանց հավասարությամբ պայմանավորված՝ այս սկզբունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածում, համաձայն որի՝ կանայք և տղամարդիկ իրավահավասար են: Բացի այդ, ըստ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ է ամրագրվել կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում, որը, սակայն, կոնկրետ դեպքերում իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման կառուցակարգեր չնախատեսելու պատճառով շարունակում է մնալ չկիրառված: Ավելին, որպես կայուն զարգացման նպատակ է ամրագրված նաև կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովումը<sup>476</sup>:

Կանանց նկատմամբ խտրականության բացառման և կանանց ու տղամարդկանց հավասար հնարավորությունների ամրապնդման առումով չափազանց կարևոր է միասնական պետական քաղաքականություն ունենալը, որի նպատակով 2019 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության թիվ 1334-Լ որոշումը: Անհրաժեշտ է ընդգծել, որ ուղղությամբ պետական միասնական քաղաքականությունն ամրագրող ռազմավարական փաստաթղթի ընդունումը պետք է դիտարկել իբրև դրական քայլ՝ հաշվի առնելով դրա արդիականությունն ու տևական ժամանակ բացակայությունը:

Կանանց և տղամարդկանց հավասարության պահպանումն առավել կարևորվում է ՀՀ զինված ուժերում, քանի որ պաշտպանության բնագավառում կանայք առավել խոցելի են: Դրան է նպաստում նաև հանրության մոտ ձևավորված այն կարծրատիպը, թե զինվորական ծառայությունը նախատեսված է միայն տղամարդկանց համար: Այդ կարծրատիպի ձևավորմանը նպաստում է նաև այն, որ ՀՀ-ում պարտադիր զինվորական ծառայության ենթակա են միայն տղամարդիկ, իսկ կանայք զինվորական ծառայության ներգրավվում են միայն պայմանագրային հիմունքներով:

Զինված ուժերում կանանց մասնակցությունը նախևառաջ վերաբերում է կանանց՝ զինվորականի մասնագիտության մատչելիության իրավունքին: Պետության պաշտպանությանը մասնակցելը և զինված ուժերին անդամակցելը քաղաքացիությունից բխող իրավունքների և պարտականությունների բաղկացուցիչ մասն է: Զինված ուժերի պես կարևոր պետական ինստիտուտում ներգրավվելու իրավունքից զրկված լինելու պարագայում կանայք և տղամարդիկ կհայտնվեն անհավասար պայմաններում: Զինված

<sup>476</sup> Sustainable Development Goals (SDG) N 5, <https://sustainabledevelopment.un.org/sdg5>:

ուժերում ներգրավվածության փորձի բացակայության պարագայում կանայք ավելի քիչ հնարավորություն կունենան արտահայտելու իրենց կարծիքն անվտանգությանն առնչվող խնդիրների վերաբերյալ: Մինչդեռ, Ջինված ուժերում կանանց մասնակցությունը հանգուցային նշանակություն ունի հակամարտությունների կարգավորմանն ու լուծմանը նրանց մասնակցության տեսանկյունից:

Այսպես, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2000 թվականի թիվ 1325 բանաձևը կարևորում է կանանց դերը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, ինչպես նաև խաղաղաշինության գործում: Այն պետություններին կոչ է անում ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և հանգուցալուծման ազգային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների ընդունմանը բոլոր մակարդակներում: Բանաձևը հաստատում է, որ որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության բացակայությունը և նրանց նկատմամբ թիրախավորված բռնության տարածվածությունը երկարաձգում են հակամարտությունները, ապակայունացնում ամբողջական տարածաշրջաններ և խոչընդոտում հակամարտությունների խաղաղ կարգավորմանը:

Պետք է նշել նաև, որ հայ ժողովրդի պատմության ամենածանր ժամանակաշրջաններում տեղի ունեցած մարտական գործողությունների, այդ թվում՝ Արցախյան ազատամարտի ժամանակ իրենց ուրույն դերն են ունեցել նաև կանայք: Դժվար է թերագնահատել կանանց դերը նաև այժմյան զինված ուժերում: Հետևաբար, պետությունը պետք է ջանքեր չինայի ՀՀ զինված ուժերում կանանց իրավունքների երաշխավորման ուղղությամբ:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 2-րդ կետում նշվում է, որ ավելի մեծ թվով կանանց անձնակազմում ներգրավելն ու պահելը դարձել է զինված ուժերի կարևորագույն խնդիրներից մեկը: Մակայն, չնայած այն փաստին, որ վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի բանակներն աստիճանաբար ավելի դրական են վերաբերվում զինված ուժերը կանանցով համալրելու հարցին՝ կանայք զինված ուժերում և հատկապես՝ հրամանատարական բարձր կոչումներ ունեցող անձանց շարքերում, դեռևս շարունակում են փոքրամասնություն կազմել: Բանաձևի 3-րդ կետում նշվում է, որ զինված ուժերին միացող կանայք հայտնվում են տղամարդկանց կողմից և հենց նրանց համար մշակված միջավայրում: Նրանք ենթարկվում են տարատեսակ խտրականությունների, բախվում են կոշտ աշխատանքային ռեժիմով աշխատելու և կարծր մտածելակերպի խնդիրներին, որոնք դեռևս արմատացած են զինված ուժերին բնորոշ «տղամարդկային մոտեցումներում»:

Ջինված ուժերում քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության խթանումն ապահովելու նպատակով 2019 թվականի հոկտեմբերին ՀՀ զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչության կազմում ձևավորվել է կին զինծառայողների հետ տարվող աշխատանքների բաժանմունք, որի գործունեության նպատակն է զինված ուժերում կանանց զինվորական ծառայության կազմակերպման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումն ու վերլուծումը, բարձրացված հարցերի ու խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:

Հասարակությունում կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերը կոտրելու լավագույն օրինակներից է Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած՝ կանանց հաջողության պատմությունների հանրային իրազեկման արշավը: Արշավի շրջանակներում ներկայացվել է նաև հրետանային զորամասի կառավարման դասակի կին հրամանատարի հաջողության պատմությունը, որտեղ հատուկ շեշտադրվել է կին զինծառայողներին տղամարդ

զինծառայողների հետ հավասար վերաբերվելու անհրաժեշտությունը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցության կարևորությունը:

Զինված ուժերում կանանց դերի բարձրացմանը խթանող գործիք է նաև 2019 թվականի մարտին մեկնարկած՝ «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի Հանրապետության զինված ուժերում» ծրագիրը, որի հիմնական գործընկերներից են Պաշտպանության նախարարությունը և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

## 2. Զինված ուժերում կանանց իրավունքների երաշխիքները

Միանշանակ է, որ կանանց իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում երաշխավորելու ամենակարևոր քայլերից մեկը զինվորական օրենսդրությամբ համապատասխան երաշխիքների ամրագրումն է: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ զինվորական օրենսդրության ընդհանուր ուսումնասիրության արդյունքում կանանց նկատմամբ ակնհայտ խտրականություն պարունակող նորմեր չեն հայտնաբերվել: Դրանք հիմնականում գենդերային չեզոք են (gender-neutral), և հաճախ խնդիրներ առաջանում են հենց սեռային առանձնահատկությունները հաշվի առնված չլինելու պատճառով: Աշխատանքային իրավունքների սահմանափակման դեպքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք հիմնականում առաջանում են կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում: Ուստի, կին զինծառայողների իրավունքներն առավել արդյունավետ պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է կատարել մի քանի օրենսդրական փոփոխություններ:

Այսպես, արձանագրվել է օրենսդրական խնդիր, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ իգական սեռի ներկայացուցիչների զինվորական հաշվառման համար:

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառման վերցվում են նաև 18 տարին լրացած և զինվորական մասնագիտություն ստացած կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած, ինչպես նաև զինվորական հաշվառման ենթակա մասնագիտություններ ունեցող իգական սեռի քաղաքացիները:

Մինչդեռ, որևէ իրավական ակտում հրապարակված չեն, թե որոնք են իգական սեռի քաղաքացիներին հասանելի զինվորական հաշվառման ենթակա մասնագիտությունները, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ զինվորական հաշվառման նպատակով իգական սեռի քաղաքացիների դիմելու և հետագայում զինվորական ծառայություն անցնելու համար:

Պետք է նշել նաև, որ զինծառայող և քաղաքացիական ծառայող, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների համար առկա չեն համատեղ ծառայության բավարար օրենսդրական երաշխիքներ:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայող ամուսիններից մեկին, սույն հոդվածի համաձայն, ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում միաժամանակ որոշում է կայացվում ծառայության նոր վայր տեղափոխել նաև մյուս ամուսնուն, եթե փոխվում է ընտանիքի բնակության վայրը: Եթե հնարավոր չէ զինծառայող ամուսիններին ծառայության նոր վայրում միաժամանակ նշանակել զինվորական պաշտոնների, ապա տեղափոխությունը կատարվում է միայն զինծառայողի համաձայնությամբ:

Նմանատիպ կարգավորում առկա է նաև «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքում, որի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ազգային անվտանգության մարմիններում միաժամանակ ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում որոշում է կայացվում նույն բնակավայր ծառայության տեղափոխել նաև ամուսնուն (կնոջը) նրա (նրանց) համաձայնությամբ, եթե

փոխվում է մշտական բնակության վայրը: Դրա անհնարինության դեպքում ծառայության նոր վայր տեղափոխումը չի կատարվում:

Միևնույն ժամանակ, առկա չեն օրենսդրական երաշխիքներ պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսնուն (կնոջը) նրա հետ ծառայության նոր վայր տեղափոխելու, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում մյուս ամուսնուն հնարավորին մոտ զորամասում ծառայության տեղափոխելու վերաբերյալ:

Այստեղ հատկանշական է Ձինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «Է» կետը, որի համաձայն՝ զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի համար կարևոր է, որպեսզի նրանք հնարավորության սահմաններում կարողանան կապ պահպանել իրենց մտերիմների, այդ թվում՝ հարազատների և զուգընկերոջ հետ: Անդամ պետությունները պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն, որպեսզի զինծառայողներն օգտվեն այս հատուկ իրավունքից:

Խնդրահարույց է նաև զինվորական օրենսդրությամբ զինծառայողին մինչև վեց ամիս ժամկետով վերապատրաստման գործուղելու դեպքում զինծառայող հանդիսացող նրա ամուսնուն (կնոջը) նրա հետ գործուղելու կամ դրա անհնարինության դեպքում՝ չվճարվող արձակուրդ տրամադրելու հնարավորություն չնախատեսելը:

Այսպես, «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ մինչև վեց ամիս ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու դեպքում պայմանագրային զինծառայողի զինվորական պաշտոնը պահպանվում է:

Մինչդեռ, նշված օրենքով նախատեսված չեն բավարար երաշխիքներ վերապատրաստման գործուղվող զինծառայողի և նրա ամուսնու (կնոջ) համատեղ բնակվելու համար: Խնդիրն այն է, որ օրենքով սահմանված չէ նշված դեպքերում զինծառայողի հետ զինծառայող ամուսնուն (կնոջը) վերապատրաստման գործուղելու հնարավորության դիտարկումը, ինչպես նաև սահմանված չէ դրա անհնարինության դեպքում՝ գործուղվող զինծառայողի ամուսնուն (կնոջը) չվճարվող արձակուրդ տրամադրելու հնարավորություն: Դրա հետևանքով, ամուսինները ստիպված են ընտրություն կատարել՝ կամ հրաժարվել վերապատրաստման գործուղումից, կամ վերապատրաստման գործուղման ժամանակահատվածում բնակվել առանձին, կամ վերապատրաստման գործուղվող զինծառայողի ամուսինը (կինը) ստիպված է ազատվել զինվորական ծառայությունից, որպեսզի ամուսնու (կնոջ) հետ միասին բնակվի: Բացի այդ, այն կարող է թաքնված պատճառ հանդիսանալ խնդիրներից խուսափելու նպատակով զինծառայող ամուսիններից մեկին վերապատրաստման չգործուղելու համար:

Մեկ այլ խնդիր: Ձինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 264-րդ հոդվածի համաձայն՝ խաղաղ ժամանակ կին զինծառայողները օրվա վերակարգի կազմում չեն նշանակվում՝ բացառությամբ հանրակացարանի օրվա վերակարգի: Անհրաժեշտության դեպքում նրանք, ըստ իրենց զինվորական կոչման և զբաղեցրած պաշտոնի, կարող են նշանակվել որպես հերթապահ բժիշկ (բուժակ), շտաբի հերթապահ և թղթատար (ցրիչ):

Նշված կարգավորումը ոչ միայն խնդրահարույց է կին և տղամարդ զինծառայողների միջև տարբերակված մոտեցում դրսևորելու տեսանկյունից, այլ նաև կարող է խոչընդոտ

հանդիսանալ նրանց զինված ուժեր ներգրավելու համար: Օրինակ, 2019 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերի զորամասեր կատարված այցերի ընթացքում զորամասերից մեկի հրամանատարը հայտնել է, որ կին զինծառայողներին վերակարգի նշանակման արգելքի պատճառով, որպեսզի պակասեցնի տղամարդ զինծառայողների վերակարգերի ծանրաբեռնվածությունը, հաճախ չի կարողանում կանանց ընդունել զինվորական ծառայության՝ նախապատվությունը տալով տղամարդ թեկնածուներին:

Զինվորական օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ առկա չեն խրախուսական նորմեր այն կին զինծառայողների համար, ովքեր ունեն մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չեն օգտվել<sup>477</sup>: Խրախուսական նորմերի բացակայությունը կին զինծառայողների ծառայության վերադառնալու որոշում կայացնելու համար կարող է խոչընդոտ հանդիսանալ: Մինչդեռ, պետության քաղաքականություններից է նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց աշխատանքի վերադարձնելը, որի նպատակով նաև նախատեսված է մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության իրավունք<sup>478</sup>:

Խրախուսական նորմերի բացակայությունը գործնականում առաջացնում է խնդիրներ: Օրինակ, 2019 թվականին Մարդու իրավունքները պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով կին զինծառայողը տեղեկացրել է, որ խնամքին ունի 1 տարեկան 8 ամսեկան երեխա, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից ամբողջությամբ չի օգտվել և իր ցանկությամբ վերադարձել է աշխատանքի: Նշել է, որ զորամիավորման կապի ստորաբաժանումներում զորամասի տարածքից հեռու անցկացվելու է մարտավարական-մասնագիտական զորավարություն, որին զորամասի անձնակազմի հետ որպես կապավոր նախատեսվել է ներգրավել նաև իրեն, որի դեպքում երեխան կմնա առանց խնամքի:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված խնդրի մասին զեկուցել է վերադաս հրամանատարին և խնդրել երեխայի խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված՝ իրեն չներգրավել զորավարություններին, սակայն մերժում է ստացել:

Չնայած տվյալ պարագայում զինծառայողին զորավարությունների ընդգրկելու համար օրենսդրական սահմանափակումների բացակայությանը՝ արագ արձագանքման շրջանակներում Պաշտպանի աջակցությամբ խնդիրը կարգավորվել է՝ հաշվի առնելով երեխայի խնամքի անհրաժեշտությունը:

Բացի այդ, խնդրահարույց է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, որը հնարավորություն չի տալիս հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հաշվի առնել հերթական զինվորական կոչում շնորհելու համար: Նշված կարգավորումը կարող է հանդիսանալ այն հիմնական խոչընդոտներից մեկը, որի պատճառով կին զինծառայողները դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում և հիմնականում զրկված են առաջխաղացման հնարավորությունից: Բացի այդ, նշված սահմանափակման հետևանքով կին զինծառայողները կարող են կանգնել մի կողմից՝ ընտանիք և երեխաներ, մյուս կողմից՝ աշխատանք և աշխատանքում առաջընթաց ունենալու երկրնտրանքի առջև:

<sup>477</sup> «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կին զինծառայողին իր ցանկությամբ տրվում է երեխայի խնամքի համար արձակուրդ՝ մինչև երեխայի երեք տարին լրանալը, որը նա կարող է օգտագործել լրիվ կամ մաս-մաս: Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին զինծառայողի ծառայության տեղն ու պաշտոնը պահպանվում են:

<sup>478</sup> «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.2-րդ մաս:

Խնդիրներից մեկն էլ վերաբերում է կին զինծառայողներին հատկացվող համազգեստի ժամկետներին, որը բացահայտվել է ՀՀ զինված ուժերի գործառնաբեր ինչպես 2018, այնպես էլ 2019 թվականին կատարված այցերի ընթացքում: Կին զինծառայողներն իրենց դժգոհությունն են հայտնել, որ իրենք ավելի քիչ հաճախականությամբ են զինվորական համազգեստ ստանում, քան տղամարդ զինծառայողները:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինծառայողները, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կարող են ստանալ իրային ապահովություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Իրային ապահովության կարգը ներառում է իրային միջոցներով ապահովման ենթակա անձնակազմի շրջանակը, ինչպես նաև իրային միջոցների ցանկը:

Նշված խնդրի կապակցությամբ ուսումնասիրվել է ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշմամբ սահմանված՝ զինծառայողների իրային ապահովության չափաքանակները:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նույն գործառնություններն իրականացնող կին զինծառայողներին տրվող իրային ապահովության չափաքանակները, բացառությամբ որոշակի տեսակների, էապես տարբերվում են (ավելի քիչ հաճախականությամբ են ստանում) տղամարդ զինծառայողներին տրվող իրային ապահովության չափաքանակներից:

Բացի այդ, պետք է նշել, որ տարբերություններ են առկա նաև մարտական հերթապահությունում ընդգրկված կին զինծառայողներին և մարտական հերթապահություն իրականացնող տղամարդ զինծառայողներին տրվող զինվորական համազգեստների չափաքանակներում:

Ընդ որում, կին զինծառայողներին տրամադրվող իրային ապահովումը տղամարդ զինծառայողների իրային ապահովումից պակաս լինելը պայմանավորված է ոչ թե նրանց ծառայության բնույթով, այլ միայն նրանց կին լինելու հանգամանքով, ինչն անթույլատրելի է:

Պետք է նկատել նաև, որ ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշմամբ սահմանազատված չեն գործառնասային պայմաններում զինվորական ծառայություն անցնող զինծառայողների (այդ թվում՝ կին) և ոչ գործառնասային պայմաններում (օրինակ՝ Պաշտպանության նախարարության վարչական շենքում) զինվորական ծառայություն անցնող զինծառայողների իրային ապահովման չափաքանակները: Մինչդեռ, ակնհայտ է, որ գործառնասային պայմաններում ծառայություն իրականացնելու դեպքում զինծառայողների համազգեստի մաշվելու կամ այլ կերպ վնասվելու հավանականությունն ավելի մեծ է:

Նշված խնդիրն արձանագրվել էր նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ: Խնդրի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ զինված ուժերի անձնակազմին իրային միջոցներով ապահովման գործող չափաքանակները լրամշակվում են, և դրանք կներկայացվեն Պաշտպանության նախարարի հաստատմանը:

Բացի այդ, 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշման ուսումնասիրությամբ պարզվել է, որ հղի կին ծառայողների համար հատուկ հանդերձանք նախատեսված չէ: Մինչդեռ, հղի կանանց համազգեստի հարմարավետության տեսանկյունից, հաշվի առնելով նաև այլ երկրների փորձը (օրինակ՝ Միացյալ Թագավորության) ճիշտ կլինի նրանց համար նախատեսել հատուկ համազգեստ:

Զինվորական օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ սահմանված չէ հղի կին զինծառայողներին մարտական հերթապահության մեջ ընդգրկելու արգելք: Ճիշտ է, հղի կին զինծառայողներին մարտական հերթապահության ընդգրկելու վերաբերյալ Պաշտպանը տվյալներ չի ստացել (ենթադրելի է, որ պրակտիկայում չկան նման դեպքեր), սակայն

Պաշտպանը կարևոր է համարում նման արգելքի ֆորմալ սահմանումը, հատկապես քանի որ խոսքը վերաբերում է կնոջ և պտղի կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. հրապարակել զինվորական հաշվառման ենթակա մասնագիտությունները, որոնք ունեցող իգական սեռի ներկայացուցիչները կարող են դիմել զինվորական հաշվառման համար,

2. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նրա հետ ծառայության նոր վայր է տեղափոխվում նաև նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսինը (կինը): Դրա անհնարինության դեպքում ծառայության նոր վայր տեղափոխումը չի կատարվում: Սահմանել նաև, որ տարբեր համակարգերում ծառայող ամուսինները ծառայության են նշանակվում միմյանց հնարավորինս մոտ զորամասերում, որպեսզի կարողան միասին բնակվել,

3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ զինծառայողին վերապատրաստման գործուղելիս հնարավորության դեպքում նրա հետ վերապատրաստման է գործուղվում նրա զինծառայող ամուսինը (կինը), անհնարինության դեպքում՝ վերջինիս տրամադրվում է չվճարվող արձակուրդ ստանալու հնարավորություն,

4. օրենսդրական փոփոխությամբ վերացնել Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի 264-րդ հոդվածով սահմանված՝ օրվա վերակարգի կազմում կին զինծառայողների նշանակման սահմանափակումը,

5. զինվորական օրենսդրությամբ խրախուսական նորմեր նախատեսել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն ունեցող, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չօգտված կին զինծառայողների համար, որպեսզի նրանք կարողանան ծառայությունը համատեղել երեխայի խնամքի հետ,

6. օրենսդրական փոփոխությամբ վերացնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորմամբ սահմանված՝ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի չառնելու սահմանափակումը,

7. մանրամասն ուսումնասիրել ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշման դրույթները, և կին զինծառայողների իրային ապահովումը համապատասխանեցնել նույնաբնույթ ծառայություն անցնող տղամարդ զինծառայողների իրային ապահովմանը,

8. զինծառայողների իրային ապահովման հաճախականությունը սահմանազատել ըստ (պայմանական անվանմամբ) զորամասային և ոչ զորամասային պայմաններում ծառայություն իրականացնելու հանգամանքի,

9. հղի կին ծառայողների համար նախատեսել հատուկ հանդերձանք,

10. Զինվորական օրենսդրությամբ սահմանել հղի կին զինծառայողներին մարտական հերթապահության մեջ ընդգրկելու արգելք:

### **3. Զինված ուժերում կանանց ներգրավվածությունը և առաջխաղացումը**

Մեռային հատկանիշներով պայմանավորված ցանկացած խտրականություն բացառելու նպատակով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված են մի շարք երաշխիքներ:



Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ անկախ նրանց սեռից: Նույն օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառվի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն:

Խտրականության արգելքի սկզբունքը սահմանված է նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով<sup>479</sup>:

Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ ՀՀ զինված ուժերում փաստացի շարունակվում է նկատվել կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն: Խնդիրն այն է, որ կանայք բարդություններ են ունենում թե՛ զինվորական ծառայության անցնելիս (այդ թվում՝ զինվորական մասնագիտություն ընտրելիս), թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, թե՛ զինվորական ծառայությունում առաջխաղացման տեսանկյունից<sup>480</sup>:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներով, ինչպես նաև մի շարք միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվում է կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքում լիարժեք ներգրավման անհրաժեշտության հարցը: Թեև առկա ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց<sup>481</sup>, այնուամենայնիվ, դեռևս առկա է զինվորական ծառայության պաշտոններում կանանց ցածր ներգրավվածության խնդիր:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների՝ ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության անձնակազմի ընդհանուր թվաքանակի 9.10-ը կազմում են կին զինծառայողներ: Ընդ որում՝ ՀՀ ՁՈՒ անձնակազմի 3.8%-ը կին սպաներ են, 23.1%-ը՝ ավագ ենթասպայական կազմ, 8.3%-ը՝ կրտսեր ենթասպայական կազմ, 8%-ը՝ շարքային կազմի պայմանագրային զինծառայողներ:

Վերոնշյալ վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների տոկոսային հարաբերակցությունը տղամարդ զինծառայողների համեմատությամբ, բավական ցածր է: Ավելին՝ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում, և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում կայացնողների դիտարկման հարցում<sup>482</sup>: Արդյունքում, կին զինծառայողները հիմնականում զրկված են առաջխաղացման հնարավորությունից:

Խնդրի վերաբերյալ պետք է ընդգծել, մասնավորապես, ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակ 5.5-ը, ըստ որի՝ պետք է ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և առաջնորդության համար հավասար հնարավորությունների

<sup>479</sup> Խտրականության արգելքի սկզբունքն օրենքում ամրագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությամբ:

<sup>480</sup> Կանանց աշխատանքային իրավունքների խնդիրներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ սույն հաղորդման՝ «Կանանց նկատմամբ խտրականության բացառում» գլխում:

<sup>481</sup> ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, [http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf):

<sup>482</sup> Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:

ապահովումը քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԹ» կետում նշվում է, որ կին զինճառայողները տղամարդ զինճառայողների նման պետք է պաշտոնական առաջխաղացման հարցերում ունենան հավասար հնարավորություններ և զինված ուժերում աշխատելիս արժանանան հավասար վերաբերմունքի: Մեռի հիմքով նրանք չպետք է դուրս թողնվեն մասնագիտությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ տեսակի մասնագիտական գործունեության բնույթով կամ համատեքստով պայմանավորված, սեռը հանդիսանում է իրական վճռորոշ հանգամանք:

Զինված ուժերում կին զինճառայողների ներգրավման բարձրացման անհրաժեշտության մասին է խոսվում նաև ՀՀ նախագահի 2018 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրով»: Մասնավորապես, 6-րդ նպատակով նախատեսվում է զինվորական ծառայության մեջ կամավորության սկզբունքի հիման վրա կին զինճառայողների ներգրավումն աստիճանաբար ավելացնել՝ սկզբում նյութատեխնիկական ապահովման, այնուհետև՝ մյուս ոլորտներում:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ կին զինճառայողների կողմից ստացվել է երկու բողոք՝ հրամանատարի կողմից արժանապատվության ոտնահարման վերաբերյալ (որը չի հաստատվել), և առողջարանային բուժման նպատակով հրամանատարության կողմից հերթական արձակուրդ չտրամադրելու վերաբերյալ, որի առնչությամբ ծառայողական քննության արդյունքում բողոքը բավարարվել է:

Ըստ իրավասու գերատեսչության՝ զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում իրականացվում են կանանց ներգրավման խթանմանն ուղղված քարոզչական միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով խաղաղապահ առաքելություններին մասնակցող ստորաբաժանումներում կանանց ընդգրկմանը: 2018 թվականի համեմատությամբ խաղաղապահ բրիգադի կազմում կին զինճառայողների թվաքանակն աճել է շուրջ 8%-ով: Պաշտպանության համակարգում քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության խթանումն ապահովելու նպատակով 2019 թվականի հոկտեմբերին ձևավորվել է կին զինճառայողների հետ տարվող աշխատանքների բաժանմունք, որի գործունեության նպատակն է զինված ուժերում կանանց զինճառայության կազմակերպման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումն ու վերլուծումը, բարձրացված հարցերի ու խնդիրների լուծմանն ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:

Ողջունելի է կին զինճառայողների ներգրավվածությանն ուղղությամբ ձեռնարկված քայլերը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ կին զինճառայողների ներգրավումը տեղի ունենա ՀՀ զինված ուժերի բոլոր գորամասերում: Այս առումով, չափազանց կարևոր քայլ կարող է հանդիսանալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325, ինչպես նաև «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» բանաձևերի տեղայնացումը Հայաստանում: Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ այս կապակցությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես՝

1) ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցության 2019 թվականի ծրագրի շրջանակներում Պաշտպանության նախարարության խաղաղապահ բրիգադի կանանց խաղաղապահ դասակի զինճառայողների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ զինված ուժերում կանանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերի վերաբերյալ:

2) Խաղաղապահ բրիգադի կին զինծառայողների մասին «Զինուժ» մեդիայի հետ համատեղ նկարահանվել է «Ինչպես ես դարձա խաղաղապահ» խորագիրը կրող հոլովակների շարք: Հոլովակներից յուրաքանչյուրը բացահայտում է կանանց խաղաղապահ դասակի զինծառայողներից մեկին՝ շեշտը դնելով մասնագիտական ընտրության պատճառների, առավելությունների, հասարակության կողմից պարտադրվող կարծրատիպերի պատճառով առկա բարդությունների բացահայտման վրա:

3) Խաղաղապահ բրիգադի կանանց խաղաղապահ դասակի կին զինծառայողների շրջանում անցկացվել է վերապատրաստում՝ հակամարտությունների ժամանակ կանանց նկատմամբ բռնության հնարավոր դրսևորումների և դրանց կանխարգելման հարցում խաղաղապահների դերի և գործողությունների վերաբերյալ:

4) Շիրակի մարզում տեղակայված զորամասերի զինծառայողների հետ հանդիպումների շրջանակներում հանդիպում է անցկացվել նաև մարզի հանրակրթական դպրոցների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչների հետ՝ առարկայի շրջանակներում կանանց իրավունքների և զինված ուժերում կանանց ներգրավման հիմնահարցերն ինտեգրելու վերաբերյալ:

5) Պաշտպանության նախարարության Վ. Մարգարյանի անվան ռազմական համալսարանում և Մարշալ Ա. Խանփեդյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում դասավանդվող «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի ուսումնական ծրագրում ներառվել են նաև կանանց իրավունքների վերաբերյալ մոդուլներ:

Կարծում ենք, վերը նշված քայլերն անհրաժեշտ, բայց դեռևս բավարար չեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325, ինչպես նաև «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» բանաձևերի տեղայնացումը Հայաստանում լիակատար ապահովելու համար: Այս առումով, որպես միջազգային լավագույն փորձի օրինակ՝ կարելի է վկայակոչել Միացյալ Թագավորությունում նշված բանաձևերի տեղայնացման նպատակով ընդունված՝ «Մարդու անվտանգությունը զինվորական գործողությունների ընթացքում» միասնական ղեկավարման փաստաթուղթը (JSP 1325)<sup>483</sup>:

JSP 1325-ն ընդգծում է, որ կանանց պետք է հնարավորություն ընձեռվի իրենց ներդրումն ունենալ հասարակության համար անվտանգության միջոցառումներ իրականացնելիս, քանի որ նրանք բոլորից լավ գիտեն բոլոր վտանգները և սպառնալիքները, որոնց կարող են բախվել: Ակնհայտ է, որ առանց կանանց մասնակցության՝ չի կարող լավ կազմակերպվել նրանց պաշտպանությունը: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել խաղաղ պայմաններում և հակամարտությունների ժամանակ գենդերային դինամիկայի վերլուծություն, որը հնարավորություն կտա զինվորական ծրագրեր կազմողներին ավելի լավ հասկանալ հակամարտության մեջ գտնվող հասարակություններին՝ նկատի ունենալով, որ պետությունները, որտեղ կանայք և տղամարդիկ ունեն հավասար հնարավորություններ, ավելի ապահով են և առավել քիչ են ներգրավվում հակամարտությունների մեջ: Զինվորական ծրագրեր կազմողները կարող են ավելի լավ պատկերացում ունենալ բնակչության կարիքների վերաբերյալ, եթե օգտագործեն տվյալ հասարակությունում սեռային և տարիքային տարբերակվածության վերաբերյալ տվյալներ: Այդ տվյալների պատշաճ հավաքագրումը, օգտագործումը և վերլուծությունը ծրագրեր կազմողներին հնարավորություն է տալիս առավել լավ կազմակերպել քաղաքացիական բնակչության պաշտպանությունը:

JSP 1325-ը նշում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի տեղայնացման առաջին քայլը իրավիճակի վերլուծությունն է, որի նպատակով անհրաժեշտ է իրականացնել՝

<sup>483</sup> <https://www.gov.uk/government/publications/human-security-in-military-operations-jsp-1325>:

1) տվյալների հավաքագրում և վերլուծություն ըստ խմբերի (սեռ, տարիք, էթնիկ խումբ և այլն)՝ հասկանալու համար օրենսդրական բացերը և խնդիրները,

2) գենդերային զգայունության ցուցիչների սահմանում (չափեր, թվեր, փաստեր, կարծիքներ և այլն),

3) գործնական կարիքների գնահատում (հասարակության մեջ կանանց և աղջիկների դերով պայմանավորված),

4) մասնակցության տվյալների հավաքագրում (հասարակության քարտեզագրում, ինտերակտիվ ներկայացումներ, գործողությունների պլանավորում, նպատակաուղղված խմբային քննարկումներ և այլն):

Այս առումով չափազանց կարևոր դեր ունեն կին զինձառայողների իրավունքների խախտումների վերաբերյալ վաղ նախազգուշացման ցուցիչները (քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, ենթակառուցվածքների, տեղեկատվական, զինվորական կամ անվտանգության, առողջության, կրթական, իրավական)՝ առանց որոնց չափազանց բարդ կլինի բացահայտել գենդերային անհավասարությանը նպաստող պայմանները և պայքարել դրանց վերացման դեմ:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 6-րդ կետով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ներկայացվում են հստակ առաջարկություններ:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկությունները, անհրաժեշտ է՝

1. միջոցներ ձեռնարկել հասարակությանը զինված ուժերում կանանց դերի և կարևորության ընդգծման ուղղությամբ,

2. զանգվածային լրատվության միջոցներով ավելացնել կանանց զինվորական առօրյան լուսաբանող տեղեկատվությունը՝ շեշտադրելով կանանց առանցքային դերը զինվորական ծառայության մեջ,

3. կատարել ակտիվ հանձնառություն՝ փոխելու մտածողությունը բոլոր հրամանատարական մակարդակներում և փոխելու զինված ուժերի ներքին մշակույթն այնպես, որ բոլոր տարբերությունները դրականորեն ընդունվեն և հաշվի առնվեն,

4. ներառել ուսուցում սեռերի հավասարության վերաբերյալ ռազմական ուսուցման բոլոր փուլերում և ռազմական ուսումնական հաստատություններում ապահովել թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց դասավանդումը,

5. կատարել ուսումնասիրություններ (այդ թվում՝ հարցումների միջոցով)՝ ՀՀ զինված ուժերում ընդգրկված իգական սեռի ներկայացուցիչների՝ ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու դրդապատճառները պարզելու նպատակով,

6. կանանց համար հասանելի դարձնել ՀՀ զինված ուժերի բոլոր պաշտոնները բոլոր տեսակի զորքերում,

7. միջոցներ ձեռնարկել կանանց հավաքագրելու և նրանց այն դերերում ներգրավելու ուղղությամբ, որոնցից նրանք նախկինում դուրս են թողնվել, դիտարկել այդ մասնագիտությունների համալրման ժամանակ կիրառված ֆիզիկական չափանիշները և փորձնական ծրագրերի նպատակահարմարությունը՝ կանանց համալրումն այդ մասնագիտություններում խթանելու նպատակով,

8. հասկանալու համար օրենսդրական բացերը և խնդիրները՝ իրականացնել գենդերային տվյալների հավաքագրում ու վերլուծություն ըստ խմբերի, սահմանել գենդերային զգայունության ցուցիչներ, կատարել գործնական կարիքների գնահատում և մասնակցության տվյալների հավաքագրում, մշակել կին զինձառայողներ իրավունքների խախտումների վերաբերյալ վաղ նախազգուշացման ցուցիչներ,

9. զինվորական ծառայությանն առնչվող տարբեր քննարկումների ու դասընթացների ժամանակ կանոնավոր կերպով ընդգրկել բոլորի իրավահավասարության, տվյալ դեպքում՝ կանանց իրավունքներին վերաբերող հարցեր,

10. ստեղծել կին զինծառայողների միավորումներ և աջակցել դրանց գործունեությանը:

ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 62-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի յուրաքանչյուր անդամ ունի համարժեք ստանդարտներին համապատասխանող, առողջության և հիգիենայի հիմնական պահանջները բավարարող բնակության վայր ունենալու իրավունք:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքների զգալի մասը վերաբերվել է զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման հետ կապված խնդիրներին: Այս առումով պետք է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ամենախոցելի սոցիալական հիմնախնդիրներից է զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության իրավունքի իրացումը:

2019 թվականի ընթացքում բնակարանային ապահովման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները հիմնականում վերաբերել են 1) ձառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով չապահովելուն, 2) ձառայողական բնակարանների կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման հետ կապված խնդիրներին, 3) նախկին զինձառայողներին բնակելի տարածությունից հանելուն, 4) որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված նախկին զինձառայողների և զոհված (մահացած) զինձառայողների ընտանիքների բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալուն, 5) այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ձառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդությունների արդյունքում հաշմանդամություն ձեռք բերած զինձառայողների (ազատամարտիկների) ընտանիքներին բնակարանային ապահովում չտրամադրելուն, 6) հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներին և այլն: Այսպես.

Ծառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով չապահովելու խնդիր: Դրական է այն, որ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ անհատույց սեփականության իրավունքով բնակարաններ է տրամադրվել 151 պայմանագրային զինձառայողների, ինչպես նաև կառուցվել և շուտով շահագործման են հանձնվելու ձառայողական 2 բնակելի շենքեր՝ 44 և 33 բնակարանով: Սակայն, հարկ է նշել, որ 2019 թվականի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները զորամասեր իրականացրած այցերի ընթացքում Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքում տեղակայված զորամասին կից ձառայողական բնակարաններում արձանագրել են գազի մատակարարում չլինելու խնդիր: Զինձառայողները նշել են, որ ջեռուցումն իրականացվում է էլեկտրաէներգիայով (պետության կողմից տարեկան իրենց անվճար տրամադրվում է 1500 կվտ էլեկտրաէներգիա, որը, սակայն, ջեռուցման խնդիրը լուծելու համար չի բավարարում): Զինձառայողները հարցի լուծումը տեսնում են զորամասի ջեռուցման համակարգը սպայական շենքին միացմամբ: Դրա համար անհրաժեշտ է համապատասխան խողովակներ և տրամադրվող վառելանյութի ավելացում:

Վարձակալության գումարի փոխհատուցում չտրամադրելու խնդիրներ: 2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով պայմանագրային զինձառայողները տեղեկացրել են, որ Հայաստանի Հանրապետության տարածքում չունեն սեփականության

իրավունքով բնակելի տարածություն, անհատույց օգտագործման իրավունքով բնակելի տարածություններ իրենց չեն հատկացվել, բնակվում են վարձակալությամբ, սակայն վարձակալած բնակարանի դիմաց դրամական փոխհատուցում չեն ստանում, քանի որ զինվորական ծառայության վայրից 30 կիլոմետր հեռավորությամբ ունեն մշտական հաշվառում:

Անհրաժեշտ է նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողները ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են ծառայողական բնակարաններով: Ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք է համարվում ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալը: Ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափերով:

Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ զինծառայողին դրամական փոխհատուցում տրամադրվում է բնակարան վարձակալելու նպատակով, իսկ օրենքի վերը նշված սահմանափակման տրամաբանությունից բխում է, որ փոխհատուցումը չի տրամադրվում, եթե զինծառայողն ունի մշտական (փաստացի) հաշվառման վայր և այնտեղ չի բնակվում վարձակալությամբ: Հետևաբար, եթե զինծառայողը չունի սեփականության իրավունքով բնակելի տարածություն, ունի մշտական (փաստացի) հաշվառման վայր, սակայն այնտեղ բնակվում է վարձակալությամբ, ապա նրան պետք է տրամադրվի ծառայողական բնակարան կամ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում:

Հատկանշական է, որ պայմանագրային զինծառայողները հաշվառված են եղել վարձակալած բնակարաններում, և դրա հաշվառմամբ էլ բողոքների քննարկման արդյունքում պայմանագրային զինծառայողներին բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցումը վճարվել է:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ դրամական փոխհատուցման տրամադրման վերաբերյալ Պաշտպանության նախարարություն է հասցեագրվել 18 բողոք՝ փոխհատուցման սկզբնաժամկետների վերաբերյալ:

Հատկանշական է, որ Պաշտպանի կողմից խնդրի բարձրացումից հետո ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ 2019 թվականի օգոստոսի 29-ին կատարված փոփոխության համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման վճարումը շարունակելու, ինչպես նաև փոխհատուցում ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքերում ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ մշտական բնակության հաշվառում չունենալու պայմանը վարձակալած բնակարանում հաշվառված զինծառայողների վրա չի տարածվում: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ նույն բացառությունը նախատեսված չէ վարձակալության դիմաց փոխհատուցումը նշանակելիս: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման հավելվածով նախատեսված կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից չի օգտվում այն շահառուն, ով ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորից (համայնքից), իսկ բազմաբնակավայր համայնքի դեպքում՝

տվյալ բնակավայրից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ ունի մշտական բնակության հաշվառում կամ սեփականության իրավունքով բնակելի տարածություն:

Հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը, ինչպես նաև Կառավարության որոշմամբ արդեն իսկ կատարված փոփոխությունը՝ տրամաբանական է, որ վարձակալած բնակարանում հաշվառված զինձառայողների համար ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ մշտական բնակության հաշվառում չունենալու պայմանի մասով բացառությունը պետք է գործի ի սկզբանե՝ վարձակալության գումարի փոխհատուցում նշանակելիս:

Պայմանագրային զինձառայողներին վարձակալության դիմաց փոխհատուցում չտրամադրելու հետ կապված արձանագրվել է մեկ այլ խնդիր ևս:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրած բողոքով պայմանագրային զինձառայողներից մեկը տեղեկացրել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարան, 10 հոգով հաշվառված են հեռավոր ազգականին պատկանող՝ 30.55 քառակուսի մետր բնակելի մակերես կազմող բնակարանում: Բնակելի մակերեսը ոչ բավարար լինելու հանգամանքով պայմանավորված՝ զինձառայողն ընտանիքի հետ 2014 թվականից բնակվում է վարձակալած բնակարանում, սակայն Պաշտպանության նախարարությունից վարձակալության գումարի փոխհատուցում չի ստանում: Մյուս պայմանագրային զինձառայողի տեղեկացմամբ՝ թեև հաշվառման վայրի բնակարանի համասեփականատեր է, սակայն ինքը նույնպես, բնակելի մակերեսը չբավարարելու պատճառով, ընտանիքի հետ բնակվում է վարձակալած բնակարանում և նույնպես չի ստանում փոխհատուցում: Հատկանշական է, որ երկու զինձառայողներն էլ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ նախատեսված կարգով, զինձառայողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի բնակելի մակերեսով ապահովվածությունը 7 ու 7-ից պակաս քառակուսի մետր կազմելու հիմքով՝ վերցված են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինձառայողների հաշվառման:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ զինձառայողներին բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելը մերժվել է, քանի որ ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորի (համայնքի) ու շահառուի մշտական բնակության հաշվառման կամ սեփականության իրավունքով բնակելի տարածության գտնվելու վայրի վարչատարածքային միավորի (համայնքի) միջև հեռավորությունը կազմել է մինչև 30 կիլոմետր:

Հարկ է նկատի ունենալ, որ մի կողմից՝ պետությունը կարիքավոր պայմանագրային զինձառայողների համար նախատեսում էր բնակարանային պայմանների բարելավման հնարավորություն<sup>484</sup>: Մյուս կողմից՝ բնակության (հաշվառման) վայրից 30 կիլոմետր և ավելի հեռավորությամբ ծառայության անցկացման վայրում մշտական բնակելի տարածություն չունեցող զինձառայողներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է բնակելի տարածություն, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վարձակալության գումարի փոխհատուցում:

Մինչդեռ, պրակտիկայում առաջանում են խնդիրներ: Մասնավորապես, ծառայության վայրից 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ հաշվառման վայր չունենալը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Իրավական կարգավորումը տառացի մեկնաբանելու պարագայում ստացվում է, որ ծառայության վայրից 30 կիլոմետր հեռավորությամբ ցանկացած՝ նույնիսկ

<sup>484</sup> Ներկայում գործում է մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագիր:



մեկ քառակուսի մետր տարածությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն ունենալու դեպքում զինծառայողներին չի կարող հատկացվել անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ վարձակալության գումարի փոխհատուցում:

Ստացվում է, որ պետությունը պայմանագրային զինծառայողների համար սահմանել է որոշակի սոցիալական արտոնություն՝ կապված իրենց ծառայության բնույթով, և այդ արտոնությունը պատշաճ կիրառելու տեսանկյունից անհրաժեշտ է մեկնաբանել և ճիշտ ընկալել դրա տրամաբանությունն ու նպատակը, որպեսզի նշված արտոնությունը փաստացի հնարավոր լինի տրամադրել իրականում դրա կարիքն ունեցող զինծառայողներին: Հետևաբար, Կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված իրավակարգավորման բուն էությունը ոչ թե ֆորմալ առումով սեփականություն կամ հաշվառում ունենալն է, այլ սեփականություն իրավունքով պատկանող կամ հաշվառման վայրի տարածությունում զինծառայողների բնակվելու իրական հնարավորություն չունենալու դեպքում նրանց սոցիալական արտոնություն տրամադրելը: Կոնկրետ վերոնշյալ երկու զինծառայողների դեպքում, նրանցից մեկը թեև բնակելի տարածության համասեփականատեր է, սակայն այնտեղ փաստացի բնակվել չի կարող, քանի որ բնակելի տարածության մակերեսը չի բավարարում: Իսկ մյուս զինծառայողն ընդհանրապես չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածություն, հաշվառված է հեռավոր ազգականի բնակարանում, սակայն նույնպես այնտեղ բնակվելու իրական հնարավորություն չունի: Փաստացի, երկու զինծառայողներն էլ իրական հնարավորության բացակայությամբ պայմանավորված՝ բնակվում են վարձակալված բնակարաններում, հետևաբար նրանց պետք է տրամադրվի վարձակալության գումարի փոխհատուցում:

Նախկին զինծառայողներին բնակելի տարածությունից հանելու խնդիր: Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ ծառայության ընթացքում՝ 1991 թվականին, զինվորական ավանում օրդերի հիման վրա ստացել է բնակարան: Այնուհետև արձակվել է Զինված ուժերի պահեստագոր, սակայն շարունակել է բնակվել նշված բնակարանում: Ըստ քաղաքացու՝ շենքի վերանորոգման նպատակով 2013 թվականին պահանջել են ընտանիքի հետ միասին ազատել բնակարանը: Մեկ այլ պնդմամբ՝ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո նույն շենքում բնակվող նախկին զինծառայողները կրկին վերադարձել են իրենց հատկացված բնակարաններ, իսկ իր բնակարանը հատկացվել է այլ անձի: Քաղաքացին խնդրի առնչությամբ դիմել է Պաշտպանության նախարարություն և ստացել պատասխան, որ տվյալ բնակելի շենքն ունի ծառայողական կարգավիճակ և հատկացվել է միայն զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողներին:

Պաշտպանի գրություններին ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ ՀՀ զինված ուժերում ծառայելու ընթացքում քաղաքացին որպես մշտական բնակմակերեսի կարիքավոր բնակարանային հաշվառման չի ընդգրկվել, իսկ գործող կարգի համաձայն՝ զինվորական կենսաթոշակի անցած նախկին զինծառայողների բնակարանային ապահովման հարցը ՀՀ պաշտպանության նախարարությունում կարող է քննարկվել, եթե զինծառայողը ծառայության ընթացքում գտնվել է բնակարանային հաշվառման մեջ: Միաժամանակ նշվել է, որ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի պահանջների համաձայն՝ նշված բնակելի տարածություններում բնակվող զինծառայողների ծառայության նոր վայր փոխադրման կամ զինվորական ծառայությունից արձակման դեպքում այդ բնակելի տարածությունները ենթակա են հանձնման: Նշված դրույթն ամրագրված է նաև զորամասի հրամանատարության և շահառուների միջև կնքված բնակելի տարածության անհատույց օգտագործման պայմանագրի 2.2-րդ կետում: Նշվել է նաև, որ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 16-ը գործող օրենսդրությամբ, ինչպես նաև դրանից հետո ուժի մեջ մտած

իրավակարգավորումներով շահառուների կողմից բնակարանային հաշվառման մեջ գտնվելու կամ չգտնվելու հանգամանքը իրավական հիմք չի հանդիսանում զինծառայողների կամ ծառայությունից արձակված նախկին զինծառայողների կողմից ծառայության նոր վայր տեղափոխվելիս կամ ծառայությունից արձակվելիս նշված բնակելի տարածությունները սահմանված կարգով գորամասին չհանձնելու համար<sup>485</sup>:

Վերոնշյալի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ քաղաքացուն բնակարան հատկացնելու օրդերի վերաբերյալ նշում առկա է ՀՀ բնակարանային օրենսգրքի<sup>486</sup> 49-րդ հոդվածում, որի համաձայն՝ պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տանը բնակելի տարածություն հատկացնելու վերաբերյալ քաղաքացուն տրվում է օրդեր, որը հատկացված բնակելի տարածությունը զբաղեցնելու միակ հիմքն է: Նույն օրենսգրքի 90-րդ հոդվածի համաձայն՝ ծառայությունից պաշտոնաթող արված կամ պահեստի արձակված զինծառայողները, ինչպես նաև նրանց հետ համատեղ բնակվող անձինք կարող են վտարվել զինվորական ավաններում իրենց զբաղեցրած բնակելի տարածություններից՝ մեկ այլ բարեկարգ բնակելի տարածություն հատկացնելով:

Պաշտպանության նախարարության վկայակոչած՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման կարգավորումների մասով անհրաժեշտ է նշել, որ տվյալ որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակարաններն ազատում են, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովված են այլ բնակելի տարածությամբ:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ վերոնշյալ կարգի 8-րդ կետի համաձայն՝ Պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող և Պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով կարող են տրամադրվել բնակավայրից (հաշվառման վայրից) 30 կիլոմետր և ավելի հեռավորությամբ ծառայության անցկացման վայրում մշտական բնակելի տարածություն չունեցող զինծառայողներին՝ անկախ բնակարանային հաշվառման մեջ գտնվելու հանգամանքից: Հատկանշական է, որ բնակարանային հաշվառման մեջ գտնվելու հստակ պահանջ նախատեսված է միայն նույն կարգի 9-րդ կետով Պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող և նույն կարգի 3-րդ կետի համաձայն Պաշտպանության նախարարի հաստատած ցանկում չընդգրկված բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքերի համար:

Այսպիսով, զինծառայողներին Պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելիս բնակարանային հաշվառման մեջ գտնվելու օրենսդրական պահանջ

---

<sup>485</sup> Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, հաշվառված և սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված ՀՀ մարզերի 119 նախկին զինծառայողներից 23-ը, ովքեր զբաղեցնում են անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված ծառայողական բնակարաններ, ներկայացրել են պարտավորագիր՝ բնակարան ձեռք բերելուց հետո 15-օրյա ժամկետում ազատել իրենց կողմից զբաղեցրած ծառայողական բնակարանները: Բնակարանային պայմանների կարիքավոր շահառու չհաշվառված 6 նախկին զինծառայողների առաջարկվել է մեկամսյա ժամկետում ազատել անհատույց օգտագործման իրավունքով նախկինում իրենց տրամադրված ծառայողական բնակարանները՝ ծառայության մեջ գտնվող այլ կարիքավոր զինծառայողների հանձնելու նպատակով:

<sup>486</sup> Ուժը կորցրել է 2005 թվականի նոյեմբերի 26-ին:

նախատեսված չէ: Այդպիսի պահանջ նախատեսված չէ նաև այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու դեպքում նախկին զինծառայողների կողմից բնակարաններն ազատելու դեպքերի համար: Հետևաբար, առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներին Պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածություններն ազատելու պահանջ չի կարող ներկայացվել (անկախ բնակարանային հաշվառման հանգամանքից), եթե Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովված չեն այլ բնակելի տարածությամբ:

Զինվորական ծառայությունից արձակվելուց հետո վարձակալության գումարի փոխհատուցման խնդիր: Դեռևս Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման Հավելվածի 16-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը դադարեցվում է ծառայությունից շահառուի արձակվելու դեպքում: Մինչդեռ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակարանների պարագայում իրավիճակն այլ է. ՀՀ տարածքում բնակելի տարածությամբ չապահովված և առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները չեն ազատում ծառայողական բնակարանները: Ստացվում է, որ եթե զինծառայողին տրամադրվել է ծառայողական բնակարան, նշված հիմքերով ծառայությունից արձակվելիս նա շարունակում է բնակվել ծառայողական բնակարանում, իսկ նույն կարգավիճակում գտնվող զինծառայողը, ում վարձակալության դիմաց տրամադրվում է դրամական փոխհատուցում, դադարում է այն ստանալ: Հետևաբար, տարբերակված մոտեցում է դրսևորվում մինևնույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ, և նման մոտեցումը չունի օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ:

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր վերոնշյալ հիմքերով ծառայությունից արձակված զինծառայողներին վարձակալության գումարի փոխհատուցում տրամադրելը չդադարեցնել, սակայն նշված առաջարկը դեռևս չի իրացվել:

Հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներ: 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկի հիման վրա՝ ներդրվել է պայմանագրային զինծառայողների՝ բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագիրը, սակայն 2019 թվականին այն գործնական կիրառություն չի ստացել:

2019 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 1091-Ն որոշումը, որով սահմանվել են «Սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի սպայական ու ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման կամ բնակելի տան կառուցման նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները»:

Վերոնշյալի հետ կապված, սակայն, գործնականում առկա են որոշ խնդրահարույց հարցեր: Այսպես, հիփոթեքային վարկավորմանն առնչվող Կառավարության որոշման

նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել էր դիտարկումներ և առաջարկներ, որոնց մեծ մասն ընդունվել է<sup>487</sup>, սակայն որոշ խնդիրներ շարունակում են մնալ չլուծված:

Օրինակ, Պաշտպանը 2018 թվականի տարեկան հաղորդամաք արձանագրել էր, որ մինչև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունումը բնակարանային հաշվառման կարող էին վերցվել բոլոր պայմանագրային զինծառայողները: Մինչդեռ, Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել էր, որ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից կարող են օգտվել միայն սպայական կազմի պայմանագրային զինծառայողները: Այս իրավիճակը Պաշտպանի կողմից գնահատվել է մտահոգիչ այն առումով, որ շարքային և ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողներն այլևս չեն կարող վերցվել բնակարանային հաշվառման, ինչպես նաև չեն կարող օգտվել հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից: Արդյունքում, առաջարկվել էր հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև շարքային և ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողների համար: Նշված առաջարկն ընդունվել է միայն ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների մասով<sup>488</sup>: Այսինքն, շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները ներկայում զրկված են վերոնշյալ ծրագրից օգտվելու հնարավորությունից:

Մեկ այլ խնդիր է այն, որ նշված ծրագրից չեն կարողանալու օգտվել Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողները: Դեռևս 2018 թվականին Պաշտպանի քննարկմանն ուղարկված նախագծով նախատեսվում էր, որ յուրաքանչյուր տարի ծրագրի շահառու կարող է դառնալ 1) Պաշտպանության նախարարության 400 զինծառայող, 2) Ոստիկանության 40 ծառայող, 3) Ազգային անվտանգության 40 ծառայող և 4) քրեակատարողական ծառայության 20 ծառայող: Սակայն արդեն ընդունված որոշմամբ Կառավարությունը սահմանել է, որ ծրագրի շահառու են հանդիսանում միայն Պաշտպանության նախարարության զինծառայողները:

Մինչդեռ, երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորությունը նախատեսվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնի<sup>489</sup> 65-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 6-րդ բաժնի դրույթները տարածվում են պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության և ոստիկանության ծառայողների վրա:

Այսպիսով, ստացվում է, որ Կառավարության որոշմամբ վերը նշված երեք համակարգերի ծառայողների համար չի նախատեսվել օրենքով սահմանված արտոնությունից օգտվելու հնարավորություն:

Ծառայության ընթացքում բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված նախկին զինծառայողների բնակարանային պայմանները բարելավելու հետ կապված խնդիրներ: 2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ ամուսինը ծառայության ընթացքում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների ցուցակում,

<sup>487</sup> Օրինակ՝ զինծառայողին ծառայությունից անհիմն արձակելու և հետագայում ծառայությունում վերականգնելու դեպքում՝ անհիմն արձակված լինելու ժամանակահատվածի համար պետության կողմից վարկի տոկոսի սուբսիդավորումը և եկամտային հարկի վերադարձը վերականգնելը, զինվորական ծառայությունից արձակվելուց հետո վարձու աշխատող հանդիսանալու դեպքում նախկին զինծառայողի եկամտային հարկի վերադարձման գործընթացն օրենքով սահմանված կարգով իրականացնելը և այլն:

<sup>488</sup> «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում 2019 թվականի հունիսի 4-ին կատարվել է փոփոխություն:

<sup>489</sup> «Զինծառայողների դրամական ապահովությունը և սոցիալական ապահովությունը»:

ունի առողջական խնդիրներ, իսկ Պաշտպանության նախարարությունից բանավոր հայտնել են, որ ամուսնու մահանալու դեպքում իրենք կհանվեն բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակից: Բողոքի քննարկման ընթացքում ստացվել են տեղեկություններ, որ նախկին զինծառայողը մահացել է:

Պաշտպանության նախարարությունից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի մայիսի 10-ին ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-ն որոշումը լրացվել է<sup>490</sup> և նախատեսվել, որ զինվորական ծառայությունից արձակվելուց հետո շահառուի մահվան դեպքում անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրվում է նրա ընտանիքին:

Արդյունքում, քաղաքացին պահպանել է բնակարանային հաշվառման մեջ գտնվելու և բնակարանային պայմանների բարելավման արտոնությունից օգտվելու իրավունքը:

Այս առումով, սակայն, անհրաժեշտ է նշել, որ 2019 թվականին ՀՀ կառավարության նշված որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված նկատառումներով առաջարկվել էր սահմանել, որ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար հասանելիք սենյակների թիվը որոշելիս բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում ընդգրկված անձինք հաշվի են առնվում՝ անկախ հաշվառումից հետո նրանց մահվան կամ կարգավիճակի փոփոխություններից: Դրական գնահատելով նախկին զինծառայողների մահվան դեպքում նրանց ընտանիքների անդամների իրավունքը պահպանելու ուղղությամբ Պաշտպանության նախարարության ձեռնարկած միջոցները՝ պետք է ընդգծել, որ Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-ն որոշման հավելվածով նախատեսված կարգում լրացված 17.4-րդ կետի 1-ին ենթակետով, այնուամենայնիվ, նախատեսվել է, որ զինվորական ծառայությունից արձակվելուց հետո մահացած շահառուի ընտանիքին անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելիս հասանելիք սենյակների թիվը որոշվում է՝ առանց մահացած շահառուի անձը հաշվի առնելու:

Ըստ Պաշտպանության նախարարության ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն և 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 540-Ն որոշումներով սահմանված կարգերի համաձայն՝ Պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, հաշվառված և սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված նախկին զինծառայողներին տրամադրվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն<sup>491</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշման մեջ փոփոխությունների նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է կարծիք, որով անդրադարձել է տրամադրվող ֆինանսական աջակցության չափի կարգավորմանը: Այսպես, նախագծով նշված էր, որ անհատույց պետական ֆինանսական աջակցությունը հաշվարկվում է աջակցություն տրամադրելու եզրակացության կայացման օրվան նախորդող եռամսյակի դրությամբ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաբանական միջինի 50%-ի չափով: Ըստ նախագծի հիմնավորումների՝ աջակցության նման չափը պայմանավորված է նրանով, որ բնակարանների միջին շուկայական արժեքներն արհեստականորեն բարձր են առաջնային շուկայում (նորակառույց շենքեր) և Կենտրոն վարչական տարածքում ձևավորված գների

<sup>490</sup> Փոփոխությունները կատարվել են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 540-Ն որոշմամբ:

<sup>491</sup> 2019 թվականի ընթացքում 119 նախկին զինծառայողների բնակարանի գնման վկայագրերի տրամադրման միջոցով ցուցաբերվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ ընդհանուր 822.864.000 ՀՀ դրամի չափով:

պատճառով, և որ նախատեսվող չափը սկզբունքորեն բավարար է երկրորդային շուկայից բնակարան ձեռք բերելու համար:

Մինչդեռ, Պաշտպանն արձանագրում է, որ պետք է ապահովվի նախկին զինծառայողների՝ բնակության համար նվազագույն պայմանները բավարարող բնակարան ձեռք բերելու իրական հնարավորությունը՝ առանց աջակցություն ստացողի միջոցների հաշվին գնի տարբերությունը լրացնելու անհրաժեշտության:

Բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալու հետ կապված խնդիրներ: Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով բարելավվել են Պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները<sup>492</sup>:

2019 թվականի ընթացքում, սակայն, Պաշտպանին կրկին հասցեագրվել են բնակարանային պայմանների բարելավման հետ կապված բողոքներ: Մասնավորապես, կրկին արձանագրվել են ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշմամբ իրականացված համապատասխանեցման արդյունքում բնակարանային հաշվառման հերթացուցակից հանվելու հետ կապված խնդիրներ:

Օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ ամուսինը մարտական գործողությունների մասնակցության արդյունքում ձեռք է բերել առողջության հետ կապված խնդիրներ, նրա նկատմամբ սահմանվել է հաշմանդամության երկրորդ խումբ: Տեղեկացրել է նաև, որ ամուսինը 2006 թվականին ընդգրկվել է բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների հերթացուցակում: 2018 թվականին, սակայն, պարզվել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման 2-րդ հոդվածի հիման վրա իրականացված բնակարանային գործերի համապատասխանեցման արդյունքում իրենց ընտանիքը հանվել է բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակից:

Պաշտպանի գրություններին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ Երևան քաղաքում նախկին զինծառայողին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանել է երեք սենյականոց բնակարան, որը 2017 թվականի ընթացքում օտարվել է: Միաժամանակ, նշվել է, որ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման հավելվածով նախատեսված կարգի 5-րդ կետի համաձայն՝ այն քաղաքացիները, որոնք բնակարանային պայմաններն արհեստականորեն վատթարացրել են փոխանակելու, օտարելու միջոցով, կարող են բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդունվել իրենց բնակարանային պայմանները վատթարացնելու օրվանից 5 տարի անցնելուց հետո: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ նշված կարգավորման առկայության պայմաններում նախկին զինծառայողի ընտանիքը չէր կարող ընդգրկվել Պաշտպանության նախարարություն ուղարկվող շահառուների ցուցակում:

Բողոքի կապակցությամբ Պաշտպանը կայացրել է նախկին զինծառայողի իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում: Պաշտպանն արձանագրել է, որ հաշվառվելով բնակարանային պայմանների բարելավման շահառուների հերթացուցակում՝ նախկին զինծառայողը ձեռք է բերել անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու պահանջի իրավունք, ունեցել է բավականաչափ իրավական հիմքեր վստահելու իրեն նշված հերթացուցակում հաշվառող ակտի իրավաչափ լինելուն,

<sup>492</sup> Բարելավման արդյունքում 47 ընտանիք ապահովվել է բնակարանով, իսկ 75 ընտանիք ստացել է բնակարանի գնման վկայագրեր՝ ընդհանուր 385.340.000 ՀՀ դրամի չափով:

ուստի ունեցել է Եվրոպական կոնվենցիայի դրույթներով պաշտպանության ենթակա գույքային իրավունք, այն է՝ բնակարանային պայմանների բարելավման օրինական ակնկալիք: Բացի այդ, Պաշտպանն անդրադարձել է նմանատիպ հանգամանքների առկայության պարագայում համապատասխանեցման՝ անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթ հանդիսանալուն, ինդրահարույց համարել նաև հետադարձ ուժ ստացած համապատասխանեցման ընթացքում իրականացված վարչարարությունը<sup>493</sup>:

Վերլուծվել է նաև ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման հավելվածով նախատեսված կարգի 5-րդ կետով ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ բնակարանային պայմաններն արհեստականորեն վատթարացրած անձինք կարող են բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդունվել իրենց բնակարանային պայմանները վատթարացնելու օրվանից 5 տարի անցնելուց հետո: Այս կապակցությամբ պետք է նշել, որ զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովությունն իրականացվում է ըստ շահառուների միասնական հերթացուցակի, որում ընդգրկվում են որոշման իմաստով անօթևան, այսինքն՝ ինչպես բնակարան չունեցող, այնպես էլ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձինք: Կարևոր է ընդգծել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման 2-րդ կետով նախատեսված՝ բնակարանային գործերի համապատասխանեցումը չի համարվում շահառուների նոր հաշվառում, այսինքն՝ բնակարանային հաշվառման ժամկետի սկիզբ է համարվում ոչ թե համապատասխանեցման, այլ՝ առաջնային հաշվառման օրը: Պատահական չէ, որ համապատասխանեցման արդյունքում վերահաշվառված անձանց բնակարանային ապահովման հերթացուցակի հաջորդականությունը պահպանվել է: ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի տրամաբանությունը հանգում է նրան, որ բնակարանային պայմանների բարելավման հաշվառման արգելքը վերաբերում է միայն այն անձանց, ովքեր ի սկզբանե չէին կարող հաշվառվել և վերջին 5 տարվա ընթացքում միտումնավոր կատարել են բնակարանային պայմանների վատթարացում՝ հաշվառման ցուցակում ընդգրկվելու նպատակով: Ավելին՝ ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման 2-րդ կետի հիման վրա՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերը համապատասխանեցնելու ժամանակահատվածում նախկին զինծառայողի կողմից իրեն պատկանող բնակելի տարածությունն օտարած չլինելու պարագայում նույնպես նա կմնար բնակարանային պայմանների բարելավման հաշվառման և շահառուների միասնական հերթացուցակում: Հատկանշական է նաև, որ բնակարանային պայմաններն արհեստականորեն վատթարացնելը հանդիսանում է բնակարանային հաշվառման վերցնելու արգելք, այլ ոչ թե հաշվառումից հետո բնակարանն օտարած անձին հաշվառումից հանելու հնարավորություն:

Հետևաբար, միասնական հերթացուցակում արդեն իսկ հաշվառված անձի կողմից բնակարանային պայմանների հաշվառման վերցնելու չափանիշներին համապատասխանող, ինչպես նաև հաշվառման ցուցակում ընդգրկվելու համար վճռորոշ

---

<sup>493</sup> Խնդիրն արձանագրվել էր դեռևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ, նշվել, որ բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում ընդգրկված անձինք համապատասխանեցման արդյունքում այդ հերթացուցակից դուրս մնալու մասին տեղեկացել են գործընթացի ավարտից հետո՝ արդյունքում փաստացի չկարողանալով արդյունավետ կերպով պաշտպանել իրենց իրավունքները: Փաստորեն, ստացվում է, որ նշված դեպքերում չի ապահովվել նախկին զինծառայողների և նրանց ընտանիքների՝ վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքը (տե՛ս, 2018 թվականի տարեկան հաղորդումը, էջ 521):

նշանակություն չունեցող բնակելի տարածությունը (մասնաբաժինը) օտարելը չի կարող համարվել բնակարանային պայմանների արհեստական վատթարացում, քանի որ այն չի կատարվել շահառուների հերթացուցակում միտումնավոր գրանցվելու նպատակով:

Վերլուծելով իրավական որոշակիության վերաբերյալ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական կարգավորումները՝ Պաշտպանը նաև ընդգծել է, որ ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման կարգավորումներով հաշվառված նախկին զինծառայողը չէր կարող կանխատեսել այն հանգամանքը, որ 2017 թվականին կատարվելու էր համապատասխանեցում, որի արդյունքում իր կողմից բնակելի տարածությունն օտարելը կարող էր մեկնաբանվել որպես բնակարանային պայմանների արհեստական վատթարացում:

Արդյունքում, Պաշտպանը եզրահանգել է, որ նույնիսկ ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշմամբ նախատեսված խնդրահարույց համապատասխանեցումը նախկին զինծառայողի նկատմամբ սխալ է կիրառվել, նա չպետք է համարվեր բնակարանային պայմաններն արհեստականորեն վատթարացրած անձ և պետք է ընդգրկվեր Պաշտպանության նախարարություն ներկայացված ցուցակներում: Երևանի քաղաքապետարանի կողմից Պաշտպանության նախարարության ներկայացված ցուցակում նախկին զինծառայողին չընդգրկելը տեղի է ունեցել ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի սխալ մեկնաբանման և կիրառման արդյունքում:

Պաշտպանը Երևանի քաղաքապետին առաջարկել է նախկին զինծառայողին վերականգնել Պաշտպանության նախարարություն ներկայացված՝ բնակարանային պայմանների բարելավման ցուցակներում, հետագա պրակտիկան ձևավորել այնպես, որ բնակարանային պայմանների բարելավման հաշվառման չափանիշներին համապատասխանող բնակարանն օտարելը չհամարվի բնակարանային պայմանների արհեստական վատթարացում:

Բողոքի քննարկման արդյունքում Երևանի քաղաքապետարանից տեղեկացվել է, որ հաշվի առնելով Պաշտպանի առաջարկությունը՝ շահառուի բնակարանային փաթեթը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից առաքվել է Պաշտպանության նախարարություն՝ բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովում շահառուի ընտանիքի բնակարանային կարիքավորության հարցը քննարկելու նպատակով:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ օրինակ ՀՀ Շիրակի մարզում համապատասխանեցման արդյունքում բնակարանային պայմանների բարելավման հաշվառումից 1 ընտանիք հանվել է բնակարանային պայմանների արհեստական վատթարացման հիմքով: Հատկանշական է նաև, որ ՀՀ Սյունիքի մարզում նույն հիմքով շահառուների հերթացուցակից մեկ ընտանիք հանվել է նաև 2019 թվականին: Հետևաբար, նշված խնդիրը դեռևս շարունակում է մնալ չլուծված:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված տեղեկություններով նաև նշվել է, որ, օրինակ, անհրաժեշտ փաստաթղթեր<sup>494</sup> չունենալու պատճառով 2017 թվականին իրականացված համապատասխանեցման արդյունքում չի վերահաշվառվել ՀՀ Արմավիրի մարզում՝ 9, Կոտայքի մարզում՝ 1, Շիրակի մարզում՝ 26, Վայոց Ձորի մարզում՝ 2 ընտանիք:

<sup>494</sup> Ըստ ստացված տեղեկությունների՝ անհրաժեշտ փաստաթղթերի թվում են, օրինակ, հաշմանդամություն ունենալու, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի տարածություն ունենալու կամ չունենալու և այլ փաստաթղթերը:



Վերոնշյալ իրավիճակը ևս խնդրահարույց է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավաբանությամբ ամրագրված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձության արգելքի սկզբունքի տեսանկյունից: Թեև ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշմամբ բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր համարվելու համար անհրաժեշտ պայմաններից մեկը հաշմանդամության խումբ ունենալն է, սակայն նույն որոշմամբ նախատեսված չէ շահառուների հերթացուցակում ընդգրկվելուց հետո հաշմանդամության խումբը հանվելու պարագայում հաշվառման ցուցակից հանելու հիմք և ընթացակարգ:

Այլ գորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին (ազատամարտիկներին) բնակարանային ապահովում չտրամադրելու հետ կապված խնդիր: 2019 թվականին միջոցներ չեն ձեռնարկվել 2017 և 2018 թվականների տարեկան հաղորդումներով բարձրացված՝ այլ գորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային ապահովման ուղղությամբ<sup>495</sup>: Նշված հարցի վերաբերյալ ներկայացված բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանը կայացրել է Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում: Որոշմամբ արձանագրվել է, որ անձանց որոշակի արտոնություններ տրամադրելու (տվյալ դեպքում՝ բնակարանային հաշվառման վերցնելու) հանգամանքն անթույլատրելի է պայմանավորել տարբեր համակարգերի կազմում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած լինելու փաստի հետ: Նաև նշվել է, որ միևնույն պետական մարմնի կողմից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչված, սակայն տարբեր համակարգերում ծառայություն անցած զինծառայողների համար ներպետական օրենսդրությամբ բնակարանային ապահովման տարբեր կարգեր սահմանելը խնդրահարույց է, քանի որ հանգեցնում է միևնույն կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման: Արդյունքում, առաջարկվել է՝ բողոք ներկայացրած անձին և բնակարանային հաշվառման՝ նմանատիպ մերժում ստացած մյուս անձանց ընտանիքներին վերականգնել բնակարանային հաշվառման հերթացուցակում և միջոցներ ձեռնարկել նրանց բնակարանային ապահովության ուղղությամբ, սակայն նշված առաջարկը դեռևս չի իրացվել:

Բնակարանային ապահովման առաջնահերթության հետ կապված խնդիր: ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշման համաձայն՝ բնակարանային ապահովումն իրականացվում է հաշվի առնելով հետևյալ առաջնահերթությունը՝ 1) զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներ, 2) 1-ին խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ, 3) 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ, 4) նախկինում հաշվառված (ՀՀ կառավարության նախկին որոշումներով<sup>496</sup>) 2-րդ, ինչպես նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ: Միևնույն ժամանակ, Կառավարության նշված որոշմամբ սահմանված չէ բնակելի տարածություն չունեցող և բնակելի պայմանների բարելավման կարիք ունեցող շահառուների բնակարանային ապահովումն իրականացնելու հաջորդականությունը:

<sup>495</sup> Տես, օրինակ, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, 294-295 էջեր:

<sup>496</sup> ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն և 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշումներ:

Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկի քննարկման շրջանակներում Պաշտպանության նախարարությունից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ շահառուների բնակարանային ապահովումն իրականացվում է ըստ վերոնշյալ առաջնահերթության՝ առանց տարբերակում դնելու բնակելի տարածություն չունեցող և բնակելի պայմանների բարելավման կարիք ունեցող շահառուների միջև: Նշված հաջորդականությունից, սակայն, նաև պարզ չէ, թե յուրաքանչյուր խմբի շահառուների բնակարանային ապահովումն իրականացնելիս ինչպես է որոշվում՝ առաջին հերթին իրականացվում է բնակելի տարածություն չունեցող, թե բնակելի պայմանների բարելավման կարիք ունեցող շահառուների ապահովումը:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

1. միջոցներ հատկացնել Պաշտպանության նախարարության հաշվեկշռում առկա բնակարանները բարեկարգելու, նոր շենքեր կառուցելու և դրանք կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելու նպատակով,

2. Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և նախատեսել, որ վարձակալության գումարի փոխհատուցում նշանակելիս վարձակալած բնակարանում հաշվառված զինծառայողների նկատմամբ չի տարածվում մշտական բնակության հաշվառում չունենալու պայմանը,

3. նախատեսել պայմանագրային զինծառայողներին սեփականության իրավունքով ֆորմալ պատկանող բնակելի տարածություններում կամ հաշվառման վայրի բնակարաններում բնակվելու իրական հնարավորությունը պարզելու և դրանով պայմանավորված էլ վարձակալության գումարի փոխհատուցում տրամադրելու հարցը քննարկելու կառուցակարգ (մեխանիզմ)՝ անհրաժեշտության դեպքում կատարելով նաև օրենսդրական փոփոխություններ,

4. առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողների, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու և Պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածություններում բնակվելու դեպքում՝ բացառել այդ բնակելի տարածություններն ազատելու պահանջ ներկայացնելու պրակտիկան՝ անկախ բնակարանային հաշվառման մեջ գտնվելու հանգամանքից,

5. Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները շարունակում են վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալ, եթե ՀՀ տարածքում ապահովված չեն բնակելի տարածությամբ,

6. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն և երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար,

7. Կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1091-Ն որոշմամբ երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողների համար՝ ապահովելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նրանց տրված արտոնությունից օգտվելու հնարավորությունը,

8. Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն նախատեսելով, որ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար հասանելիք սենյակների թիվը որոշելիս բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում ընդգրկված անձինք հաշվի են առնվում՝ անկախ հաշվառումից հետո նրանց մահվան կամ կարգավիճակի փոփոխություններից,

9. կատարել ուսումնասիրություններ՝ հավաստիանալու, որ Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող նախկին զինծառայողները Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ նախատեսված աջակցության չափի շրջանակներում իրական հնարավորություն ունեն ձեռք բերել բնակության համար նվազագույն պայմաններ ունեցող բնակարան,

10. բացառել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման չափանիշներին համապատասխանող բնակարանն օտարելն արհեստական վատթարացում համարելու պրակտիկան,

11. կոնկրետ միջոցներ ձեռնարկել այլ գորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային ապահովման ուղղությամբ,

12. ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հստակեցնել բնակարան չունեցող և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հերթականությունը:

## 2. Զինծառայողների կենսաթոշակի իրավունքի ապահովումը

Սոցիալական իրավունքների ապահովումը ենթադրում է կյանքի համար արժանավայել կենսապայմանների և սոցիալական պաշտպանվածության որոշակի մակարդակ: Սոցիալական իրավունքների խմբում կարևորագույններից է կենսաթոշակային ապահովումը: Կենսաթոշակի իրավունքի իրացումը պատշաճ ապահովելը սերտորեն կապված է նաև արժանապատիվ կենսամակարդակի իրավունքի հետ:

Չնայած կենսաթոշակային ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական իրավական կարգավորումներին՝ կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնականում առաջանում են այդ իրավունքի պատշաճ իրացման խոչընդոտներ:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ զինված ուժերի ամենախոցելի սոցիալական հիմնախնդիրներից շարունակում է մնալ զինծառայողների կենսաթոշակային ապահովության իրավունքի իրացումը:

Բողոքները հիմնականում վերաբերել են 1) զինվորական կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումներին, 2) զինվորական կենսաթոշակ չնշանակելուն, 3) երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելուն, 4) զինվորական կենսաթոշակը դադարեցնելուն և այլն:

Այսպես, 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ 45 տարեկանը լրանալուց հետո զինվորական ծառայության անցած ժամանակահատվածը կենսաթոշակ նշանակելիս ստաժում չհաշվարկելու վերաբերյալ:

Օրինակ, նախկին զինծառայողը տեղեկացրել է, որ զինված ուժերից արձակվելուց հետո երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու խնդրանքով դիմել է Պաշտպանության նախարարություն, սակայն մերժում է ստացել այն

պատճառաբանությամբ, որ զինվորական ծառայության անցնելիս իր սահմանային 45 տարեկանը լրացած է եղել:

Նախկին զինծառայողի պնդմամբ՝ զինվորական ծառայության անցնելիս ներկայացրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում իր հետ կնքվել է զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար զինվորական ծառայության սկիզբ համարվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ գորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ ժամկետային զինծառայության ամբողջ ժամանակաշրջանը: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում են այն ժամանակահատվածները, որոնք չեն հաշվարկվում զինվորական ծառայության ժամկետում:

Ստացվում է՝ կոնկրետ դեպքում պահպանված չէ զինվորական ծառայության անցնելու պահանջը, սակայն բողոք ներկայացրած անձը փաստացի անցել է զինվորական ծառայություն, և դրա ողջ ընթացքում նրա՝ օրենքի խախտմամբ ծառայության անցնելու հարց պետության կողմից չի բարձրացվել: Առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ բացակայում է նաև որևէ փաստաթուղթ, որը կվկայեր նախկին զինծառայողի անբարեխիղճ լինելու մասին:

Բարձրացված խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը սկսել է քննարկման ընթացակարգ, գրություններ է հասցեագրել Պաշտպանության նախարարություն:

Հաշվի առնելով տվյալ խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը՝ Պաշտպանության նախարարությունը որոշում է կայացրել սահմանային տարիքը լրանալուց հետո փաստացի զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածը ևս օրացուցային հաշվարկով հաշվառել զինծառայողին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում:

Արդյունքում, նախկին զինծառայողին նշանակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ: Ավելին, Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ զինվորական կենսաթոշակ է նշանակվել նաև նմանատիպ հարցով նախկինում մերժում ստացած քաղաքացիներին:

Մեկ այլ խնդիր վերաբերում է զինվորական կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումներին:

Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ կենսաթոշակի նշանակման ձգձգումներ եղել են 2018 թվականի հունվարից մինչև 2019 թվականի հունվարը: Այնուհետև, «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական ծրագրային համակարգի ներդրումից հետո 2019 թվականի փետրվարից կենսաթոշակի նշանակման գործընթացում ձգձգումներ չեն եղել, և նշանակումները կատարվել են օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում տվյալ խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ստանալ բողոքներ: Օրինակ, 2019 թվականի մայիսին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրել է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում, անցել է չորս

ամիս, սակայն դեռևս կենսաթոշակ չի նշանակվել: Քաղաքացին նշել է, որ բազմիցս դիմել է Պաշտպանության նախարարություն, սակայն բավարար պատասխան չի ստացել:

Բողոքի քննարկման արդյունքում քաղաքացուն նշանակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ՝ վճարման սկիզբ համարելով կենսաթոշակային մարմին դիմելու օրը:

Դեռևս 2018 թվականի տարեկան հաղորդմամբ հարց էր բարձրացվել կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն տեղափոխելու հիմքով անձի զինվորական կենսաթոշակ դադարեցնելու վերաբերյալ:

Քաղաքացին տեղեկացրել էր, որ հաստիքների կրճատման հիմքով 1992 թվականին արձակվել է ՀՀ զինված ուժերից և 19 տարի 11 ամիս 4 օր զինվորական ծառայության ստաժով իրեն նշանակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, որը ստացել է 1992 թվականի օգոստոսից մինչև 2013 թվականի հուլիս ամիսը: Այնուհետև, կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն ուղարկելու հիմքով Հայաստանի Հանրապետությունում դադարեցվել է կենսաթոշակ ստանալու իրավունքը: Քաղաքացին նշել էր, որ 2017 թվականի նոյեմբերին իր կենսաթոշակի վերաբերյալ գործը Ռուսաստանի Դաշնությունից ուղարկվել է Հայաստանի Հանրապետություն, որից հետո դիմել է կենսաթոշակային մարմին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար, սակայն մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, որ չունի 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

Այսինքն, նախկին զինծառայողը 1992-2013 թվականներին Հայաստանի Հանրապետությունում ստացել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, սակայն կենսաթոշակային գործը Ռուսաստանի Դաշնություն ուղարկելուց, այնուհետև հետ վերադարձնելուց հետո փաստացի զրկվել է այդ իրավունքից:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ քանի որ նախկին զինծառայողի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է կենսաթոշակի գործը ՌԴ ուղարկելու հիմքով, նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող վերականգնվել: Կարող է քննարկվել նրան ընդհանուր հիմունքներով, դիմելու օրվանից կենսաթոշակ նշանակելու հարցը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը վկայակոչել է 1992 թվականի մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» և 1992 թվականի մայիսի 15-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» համաձայնագրերը, որոնց համաձայն՝ համաձայնագրերի մասնակից պետությունից Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության մեկնած զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող քաղաքացիներին զինվորական կենսաթոշակ է նշանակվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պաշտպանության նախարարության պարզաբանմամբ՝ նախկին զինծառայողին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակել հնարավոր չէ, քանի որ չունի «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժը:

Մարդու իրավունքների պաշտպանը վերը նկարագրված խնդիրը դիտարկել է միջազգային և ներպատական իրավակարգավորումներում ամրագրված պահանջների, այդ թվում՝ զինծառայողների համար սահմանված սոցիալ-իրավական երաշխիքների լույսի

ներքո: Արդյունքում, Պաշտպանը կայացրել է Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին որոշում: Որոշմամբ Պաշտպանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն ուղարկելու, այնուհետև հետ վերադարձնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը չվերականգնելը չի կարող հետապնդել իրավաչափ նպատակ, ուստի անհամաչափորեն սահմանափակում է անձի կենսաթոշակի իրավունքը: Այլ կերպ ասած՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալը, լինելով նախկինում կատարած ծառայության համար անժամկետ հատուցում, չպետք է վերացվի, քանի որ դա բերում է զինծառայողների կենսաթոշակի իրավունքի էության աղավաղմանը՝ միաժամանակ հանգեցնելով սոցիալական ապահովության իրավունքի իրականացման խախտման<sup>497</sup>:

Հետևաբար, կենսաթոշակային գործը Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն տեղափոխելու հիմքով անձը չի կորցնում կենսաթոշակի իրավունքը, այլ դադարեցվում է նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը, ուստի անթույլատրելի, որ օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով անձը զրկվի Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերած կենսաթոշակի իրավունքից, երբ վերջինիս կենսաթոշակային գործն այլ պետությունից վերադարձվում է Հայաստանի Հանրապետություն:

Արդյունքում, վերականգնվել է քաղաքացու երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը: Լրացումներ են կատարվել նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում:

Արձանագրված խնդիրներից մյուսն էլ վերաբերում է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածը հաշվի չառնելուն:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին (այսուհետ՝ զինծառայող), ով զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ կամ սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս, կամ հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են համապատասխան մարմինների համակարգերի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմերի պաշտոններում զինծառայության, քրեակատարողական ծառայողի և հարկադիր

<sup>497</sup> Տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 528:

կատարողի ծառայության, ինչպես նաև համապատասխան մարմինների ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից:

Ստացվում է՝ եթե անձն անցել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայությունը, որի ընթացքում որոշակի ժամանակ եղել է կադրերի տրամադրության տակ, չի կարող օգտվել իր նկատմամբ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակվելու իրավունքից, քանի որ գործող օրենսդրական կարգավորումների պարագայում կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածը զինվորական ծառայության ստաժում չի հաշվարկվում:

Մինչդեռ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է դրամական ապահովությունը՝ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու կամ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

Հետևաբար, օրենսդրի տրամաբանությունն այն է, որ որոշակի հիմքերով կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածում անձը պետք է ստանա դրամական ապահովում, ուստի անտրամաբանական է նշված ժամկետը զինվորական ծառայությունում չհաշվարկելը:

Մեկ այլ խնդիր է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելը:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է  $\Phi = \Sigma x \text{ ԶԱԳ} + \text{ԶՍ} \times \text{ԶԱ}$  բանաձևով, որտեղ՝  $\Phi$ -ն կենսաթոշակի ամսական գումարն է,  $\Sigma$ -ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,  $\text{ԶՍ}$ -ն՝ զինվորական ծառայության ստաժի տարիները,  $\text{ԶԱ}$ -ն՝ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը,  $\text{ԶԱԳ}$ -ն՝ զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործակիցը:

Ստացվում է, որ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկելիս որևէ կերպ հաշվի չի առնվում անձանց զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը:

Ներկա իրավակարգավորումների պարագայում հավասարաչափ կենսաթոշակ են ստանում ինչպես միայն երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, այնպես էլ նույն ժամկետով երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, ովքեր, բացի զինվորական ծառայությունը, կատարել են նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հավասար պայմաններում զինվորական ծառայություն անցած անձանց չի կարող հավասար չափի կենսաթոշակ նշանակվել, եթե նրանցից մեկը կատարել է նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք:

Խնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>498</sup>: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարզաբանել է, որ նշված առաջարկությունն էապես կավելացնի կենսաթոշակային ապահովության համակարգի ծախսերը: Նշվել է, որ անհրաժեշտ լրացուցիչ միջոցները ներկա պահին հնարավոր չէ հաշվարկել՝ ելակետային տվյալների բացակայության պատճառով: Նշվել է, որ խնդրին հնարավոր է անդրադառնալ առաջիկայում՝ կենսաթոշակային ապահովության համակարգի ֆինանսավորմանը հատկացվող միջոցների չափը հստակեցնելու, ինչպես նաև ոլորտում վարվող քաղաքականության թիրախային նպատակադրումներն ու ծախսային առաջնահերթությունները որոշելու աշխատանքների շրջանակներում:

Պետք է նշել, որ խնդիրը դեռևս չի կարգավորվել և Մարդու իրավունքների պաշտպանը շարունակում է ստանալ բողոքներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

1. խստացնել հսկողությունը զինվորական կենսաթոշակ նշանակելու գործընթացի նկատմամբ՝ ձգձգումները բացառելու նպատակով,

2. օրենսդրական փոփոխությունների արդյունքում զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկում ներառել նաև հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու ժամանակահատվածները: Զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկում ներառել նաև արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ուստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ ՀՀ կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված լինելու և կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածները,

3. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություն, որի շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական

<sup>498</sup> Տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 529:



ծառայության ստաժի որոշակի տոկոսի չափով հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը:

### 3. Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու պրակտիկան

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ հաշվի առնելով միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը:

ՀՀ պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը, այդ թվում՝ միջգերատեսչական հանձնաժողովի լիազորությունները սահմանող ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778-Ն որոշումը, 2018 թվականի օգոստոսի 18-ին ճանաչվել էր ուժը կորցրած, և մինչև 2019 թվականի նոյեմբեր ամիսն առկա չէր նշված իրավահարաբերությունները կարգավորող նոր որոշում:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքներով քաղաքացիները տեղեկացրել են, որ 1991-1993 թվականներին մասնակցել են ՀՀ սահմանների պաշտպանության մարտական գործողություններին, սակայն նախկինում չեն դիմել և չեն ստացել մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ: Նշել են, որ կարգավիճակը հաստատելու նպատակով դիմել են ՀՀ պաշտպանության նախարարություն, սակայն մերժում են ստացել միջգերատեսչական հանձնաժողով չլինելու պատճառաբանությամբ: Քաղաքացիները դժգոհություն են հայտնել, որ Կառավարության համապատասխան որոշման բացակայության պատճառով չեն կարողանում օգտվել սոցիալական արտոնություններից:

Անձին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելն ինքնանպատակ չէ. այն ունի որոշակի սոցիալական ուղղվածություն և, ըստ էության, նշված կարգավիճակն անձի համար հիմք է որոշակի արտոնություններից և սոցիալական ապահովության միջոցներից օգտվելու համար: Նրանք պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ, ունեն բնակարանային ապահովության, քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու, դրամական աջակցության, զինվորական կենսաթոշակի իրավունք: Նրանց հուղարկավորության հետ կապված ծախսերը հատուցվում են պետական բյուջեի հաշվին:

Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր միջոցներ ձեռնարկել «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ: Նաև առաջարկվել է նախկինում մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստացած և վկայականն ուժը կորցրած անձանց առանց կարգավիճակի վերանայման հնարավորության տրամադրել նոր վկայական:

Այս կապակցությամբ կարևոր է արձանագրել, որ 2019 թվականի նոյեմբերի 21-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1664-Ն որոշումը: Ուղղունելի է, որ տվյալ որոշմամբ ուժի մեջ է թողնվել ՀՀ պաշտպանությանը մասնակցած անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով տրված մարտական գործողությունների և (կամ) երկրապահ կամավորականի կարգավիճակները:

Պետք է նշել, որ դեռևս առկա է խնդիր այն դեպքում, երբ անձը նոր է ցանկանում ստանալ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ: Բանն այն է, որ Կառավարության վերը նշված որոշման հավելվածով հաստատված կարգի 10-րդ կետով սահմանվում են փաստաթղթերի ցանկը, որոնք անձը պետք է ներկայացնի միջգերատեսչական հանձնաժողով, այդ թվում՝ մարտական գործողություններին մասնակցած հրամանատարի կողմից տրված մարտական ուղի, սահմանված կարգով գրանցված կամավորական ջոկատների կազմում գտնվելու մասին փաստաթուղթ, մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը հաստատող փաստաթուղթ:

Մինչդեռ, բազմաթիվ դեպքերում անձինք մարտական գործողություններին մասնակցած լինելու փաստը հավաստող փաստաթղթերը (օրինակ՝ ստաժն արտոնյալ պայմաններով հաշվարկելու համար) նախկինում արդեն իսկ ներկայացրած են լինում, և օբյեկտիվ պատճառներով այլևս անհնար է լինում դրանք կրկին ներկայացնել:

Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար նախկինում ներկայացված փաստաթղթերը կրկին չներկայացնելու անհրաժեշտության հարցին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների 2018 թվականի տարեկան հաղորդմամբ:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանել, որ եթե անձը նախկինում արդեն իսկ ներկայացրել է հրամանատարի կողմից տրված մարտական ուղի, սահմանված կարգով գրանցված կամավորական ջոկատների կազմում գտնվելու մասին փաստաթուղթ, մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը հաստատող փաստաթուղթ, և դրանք իրավական հետևանք են առաջացրել, ապա մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար նա այլևս չի ներկայացնում նույն փաստաթղթերը:

#### 4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հարցերը, առկա խնդիրների վերհանումն ու կոնկրետ լուծումներ առաջարկելը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը սահմանում է, որ Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն: Նշվածը կարևորվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների արդյունավետ պահպանության, նրանց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ մեծ թվով անհատական բողոքների ուսումնասիրման, ինչպես նաև համակարգային խնդիրների և կանխարգելիչ գործառույթների արդյունավետ լուծման տեսանկյունից<sup>499</sup>:

<sup>499</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող հարցերին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ սույն հաղորդման՝ «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը և կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ զինվորական հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են բախվել իրենց իրավունքների իրացման դժվարությունների:

Բողոքները հիմնականում վերաբերել են գորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված չլինելուն, զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց միջև տարբերակված մոտեցում դրսևորելուն, զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը չհաստատելուն, բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներին բնակարան չտրամադրելուն և այլն:

Չորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված չլինելու խնդիրը կրում է համակարգային բնույթ: Դրանց վերաբերյալ 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ: Օրինակ՝ սպան տեղեկացրել է, որ ունի 3-րդ խմբի հաշմանդամություն և չնայած առողջական խնդիրներին՝ ցանկություն է հայտնել շարունակելու զինվորական ծառայությունը: Սպայի տեղեկացմամբ՝ ծառայություն է անցնում գորամասի ուսումնական գումարտակում, որտեղ ծառայությունն առավել բարդ է և անհամատեղելի իր առողջական վիճակին: Ավելին՝ որպես հաշմանդամություն ունեցող անձ, ուսումնական գումարտակում իր առողջական վիճակին համադրելի պայմաններ առկա չեն, մասնավորապես՝ ֆիզիկական միջավայրը մատչելի չէ, սանհանգույցը հարմարեցված չէ, իրականացնում է օրվա պատասխանատուի պարտականություններ, որն առաջացնում է լրացուցիչ ֆիզիկական ծանրաբեռնվածություն: Ըստ սպայի՝ ծառայողական պայմանների պատճառով առողջական վիճակը վատթարացել է: Նա խնդրել է աջակցել իր առողջական վիճակին և մասնագիտական ունակություններին համապատասխան հաստիքի նշանակելու հարցում:

Պաշտպանության նախարարության պարզաբանմամբ՝ զինծառայողին այլ գորամասում առաջարկվել է համալրման բաժանմունքի սպայի պաշտոնը, որից նա գրավոր հրաժարվել է հաստիքը 2 կողով ցածր լինելու պատճառով՝ միաժամանակ հրաժարվելով նաև բնակավայրից հեռու որևէ գորամասում ծառայելու առաջարկից: Նախարարությունը պատրաստակամություն է հայտնել սպայի բարձրացրած խնդրին անդրադառնալ բնակավայրից հեռու որևէ գորամասի շտաբային օղակում համապատասխան պաշտոնի նշանակվելու վերաբերյալ վերջինիս կողմից պատրաստակամություն հայտնելու դեպքում:

Մինչդեռ, խնդիրը ոչ թե հաշմանդամություն ունեցող զինծառայողին այլ գորամաս կամ ավելի թեթև ծանրաբեռնվածության ծառայության տեղափոխելն է, այլ նրա ծառայության վայրում ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովումը:

Վերը նկարագրված խնդիրն անհրաժեշտ է դիտարկել միջազգային և ներպատական իրավակարգավորումներում ամրագրված պահանջների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավական երաշխիքների լույսի ներքո:

Այսպես, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի մատչելիությունը: Ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, այդ թվում՝ աշխատավայրերի մատչելիությունը:

Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող անձն ունի այլ անձանց հետ հավասար հիմունքներով աշխատանքի իրավունք, որը, ի թիվս

այլնի, ներառում է բաց, ընդգրկուն ու մատչելի աշխատանքային միջավայր ունենալու իրավունքը:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների<sup>500</sup> սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածն արգելում է բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածի 120-րդ կետը սահմանում է, որ գորամասի հրամանատարը զինծառայողի համար ապահովում է նրա առողջական վիճակին համապատասխան ծառայողական այնպիսի պայմաններ, որոնք, չնայած զինծառայողի առողջական սահմանափակումներին, հնարավորություն կընձեռեն նրան շարունակել ծառայությունն իր պաշտոնում:

Չնայած միջազգային և ներպետական իրավակարգավորումներին՝ զինված ուժերում ֆիզիկական մատչելիության ապահովման բավարար մեխանիզմներ գործնականում առկա չեն: Դա է փաստում նաև Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից մի շարք գործառնություններում կատարված մշտադիտարկման աշխատանքները (օրինակ, առկա չեն թեքահարթակներ, հարմարեցված չեն սանհանգույցները և այլն):

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելի միջավայրի ապահովումն առաջանային է նրանց կողմից իրենց իրավունքներից ինքնուրույն օգտվելու տեսանկյունից:

Հետևաբար, հաշմանդամություն ունեցող զինծառայողի համար պետք է ապահովել ծառայողական այնպիսի պայմաններ, այդ թվում՝ կենցաղային, որոնք ֆիզիկական միջավայրը նրա համար կդարձնեն առավելագույն մատչելի և կբացառեն ծառայողական պայմաններով պայմանավորված առողջական վիճակի վատթարացումը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով զինվորական հաշմանդամություն ունեցող անձը բարձրացրել է ԽՍՀՄ զինված ուժերի և ՀՀ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց միջև տարբերակված մոտեցման դրսևորելու հարց:

Պաշտպանը բողոքի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ խնդիրը պայմանավորված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշմամբ սահմանված կարգավորումներով:

Այսպես, Կառավարության նշված որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում միայն 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք են ստանում 5000 և 3000 ՀՀ դրամ չափերով պարգևավճար, իսկ 3-րդ խմբի համար՝ պարգևավճար սահմանված չէ:

Մինչդեռ, նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պարգևավճար ստանում են համապատասխան պետական մարմիններում զինվորական ծառայության ընթացքում 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ համապատասխանաբար՝ 19000, 17000, 15000 ՀՀ դրամ չափերով:

---

<sup>500</sup> Սույն հաղորդման սույն բաժնում «հաշմանդամ» եզրույթն օգտագործվում է բացառապես այն դեպքում, երբ հղում է կատարվում գործող իրավական ակտերի դրույթներին: Նշյալ եզրույթի օգտագործումը խնդրահարույց է և չի ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության հարգման երաշխիքների իրացումը, քանի որ այն գնահատողական է և պիտակավորում է հաշմանդամություն ունեցող անձին: Բոլոր այն դեպքերում, երբ սույն բաժնում հղում չի կատարվում իրավական ակտին, օգտագործվում է «հաշմանդամություն ունեցող անձ» եզրույթը:

Մի կողմ թողնելով պարզևավճարի տարբեր չափերը՝ ստացվում է, որ Կառավարության նշված որոշումը փաստորեն տարբերակված մոտեցում է ցուցաբերում ԽՍՀՄ զինված ուժերի և ՀՀ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց միջև՝ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձանց դեպքում չսահմանելով պարզևավճար:

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին» 1992 թվականի փետրվարի 14-ի համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ զինծառայողները, զինվորական ծառայությունից զորացրված և Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում բնակվող անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներն օգտվում են նախկին ԽՍՀ Միության օրենքներով և այլ նորմատիվ ակտերով սահմանված իրավունքների և արտոնությունների մակարդակից: Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների նշված իրավունքների և արտոնությունների միակողմանի սահմանափակումներ չեն թույլատրվում: Իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանվել է, որ Համագործակցության մասնակից պետություններն իրավունք ունեն միջոցներ ձեռնարկել զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ուժեղացման համար:

Տվյալ խնդրի կապակցությամբ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ամենամսյա պարզևավճարի չափերը, պարզևավճար նշանակելու և վճարելու կարգը, պարզևավճար նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացնելիս՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է պարզևավճար սահմանել նաև ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար: Սակայն նախագիծը դեռևս չի ընդունվել:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին մի շարք բողոքներ են հասցեագրվել նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումների վերաբերյալ:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ՊՆ «Թեժ գիծը» ևս ստացել է հաշմանդամության զինվորական կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումների վերաբերյալ բողոքներ: Որպես ձգձգումների պատճառ՝ Պաշտպանության նախարարությունը նշել է բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից հաշմանդամությունը հաստատող կամ վերահաստատող տեղեկանքը Պաշտպանության նախարարություն ուշ առաքումը:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 74-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի շարքերը լքող պրոֆեսիոնալ ծառայողները պետք է ապահովված լինեն փոխհատուցումների համապատասխան փաթեթներով և ծրագրերով, որոնք կօգնեն նրան նախապատրաստվել քաղաքացիական կյանքին:

Պետք է նշել, որ հիվանդության, խեղման, վնասվածքի պատճառական կապը զինվորական ծառայության հետ հաստատված լինելու պարագայում անձի նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելն ինքնանպատակ չէ: Դրանով պետությունը հստակեցնում է ստանձնած պարտավորությունների շրջանակը իր քաղաքացու հանդեպ՝ նրան տրամադրելով սոցիալական ու իրավական լրացուցիչ պաշտպանության երաշխիքներ: Հետևաբար, անթույլատրելի է հաշմանդամության զինվորական

կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումներն այն պարագայում, երբ անձի նկատմամբ սահմանվել է հաշմանդամություն, և առկա է զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը:

Ճիշտ է, Պաշտպանության նախարարության հետ համագործակցության արդյունքում քաղաքացիներին նշանակվել է հաշմանդամության զինվորական կենսաթոշակ, այնուամենայնիվ մտահոգիչ է, որ Պաշտպանը շարունակում է ստանալ նմանատիպ բողոքներ:

Մեկ այլ խնդիր է հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման հարցը:

Խնդրի կարգավորման համար կարևոր էր ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշումը, որով սահմանվել են շահառուների բնակարանային ապահովման հաջորդական առաջնահերթությունը (գոհված զինծառայողների ընտանիքներ, 1-ին և 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ և այլն):

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2019 թվականի ընթացքում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և գոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման արդյունքում 47 ընտանիք ապահովվել է բնակարանով, իսկ 75 ընտանիքի տրամադրվել է բնակարանի գնման վկայագրեր:

Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման վերաբերյալ: Բողոքներով զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողները հայտնել են, որ հաշվառված լինելով որպես բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր՝ դեռևս բնակարան չեն ստացել:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշակվել են զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ տրամադրելու առաջարկներ<sup>501</sup>, որոնց իրական շահառուներ կարող են լինել նաև հաշմանդամություն ունեցող զինծառայողները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

1. հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար ապահովել առողջական վիճակի համադրելի այնպիսի ծառայողական պայմաններ (օրինակ՝ սանհանգույց, թեքահարթակ և այլն), որոնք ֆիզիկական միջավայրը նրա համար մատչելի դարձնելուն զուգահեռ՝ կբացառեն ծառայողական պայմաններով պայմանավորված առողջական վիճակի վատթարացումը,

2. ապահովել նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող գորամասերի, ենթակառուցվածքների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար,

3. խստացնել հսկողությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից հաշմանդամությունը հաստատող կամ վերահաստատող տեղեկանքը Պաշտպանության նախարարություն ներկայացնելու ժամկետների նկատմամբ՝ դրանով իսկ բացառելով կենսաթոշակի նշանակման ձգձգումները,

4. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու միջոցով պարզևավճար սահմանել նաև ԽՍՀՄ զինված ուժերի կազմում

<sup>501</sup> Տե՛ս հաջորդ թեմայում:

զինվորական ծառայության ընթացքում 3-րդ խմբի հաշմանդամությունն ձեռք բերած անձանց համար:

5. Արտոնություններ զինծառայողների և նրանց ընտանիքների համար

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, ներառյալ՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների ապահովման վիճակի անընդմեջ բարելավումը:

Պաշտպանը չի սահմանափակվում հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացնում է նաև դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուսումնասիրության ենթարկված և ներկայացված առաջարկների գլխավոր խնդիրներից են՝ 1) ստեղծել օրենսդրական հիմքեր, որպեսզի հասարակության բոլոր անդամները ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հիման վրա իրենց գործունեության շրջանակներում ներգրավված լինեն, նպաստեն կամ օժանդակեն զինված ուժերի խնդիրների լուծմանը, 2) սահմանել հասարակական բոլոր ոլորտներում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ, որոնք իրենց համակցության մեջ կբարձրացնեն ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող կամ անցած զինծառայողների, հատկապես՝ սպայական կազմի զինծառայողների կարգավիճակը և զինվորական ծառայության հեղինակությունը, 3) մշակել իրավական ակտեր կամ գործող իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք կսահմանեն ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում զինվորական ծառայություն անցած կամ անցնող սպայական կազմի, ինչպես նաև Հայաստանի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած, մահացած կամ զոհված զինծառայողների ընտանիքների անդամների առաջնահերթության իրավունքը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից սահմանված բոլոր ընթացակարգերում:

Ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրել հետևյալ ոչ ֆինանսական արտոնությունները՝ 1) աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք, 2) չվճարվող արձակուրդի տրամադրման պարտադիր կարգ, 3) ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության արտոնություն, 4) առաջին աշխատատեղի իրավունք, 5) զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք, 6) ուսումնական հաստատությունը փոխելու իրավունք:

Մասնավորապես, առաջարկվել է՝

1. աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք վերապահել պայմանագրային զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինծառայողների և պարտադիր զինծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներին և նրանց ընտանիքների անդամներին, ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին, ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին.

2. մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալն աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ ստանալու հնարավորություն ընձեռել պայմանագրային զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինծառայողների և պարտադիր զինծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անդամներին, ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների անդամներին, ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին.

3. ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության իրավունք վերապահել պայմանագրային զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինծառայողների և պարտադիր զինծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անդամներին, ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների անդամներին, ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին.

4. աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրել ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին՝ տարեկան մինչև 14 օր տևողությամբ.

5. աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (այսուհետ՝ քվոտա) սահմանել նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում լիազորված մարմնում հաշվառված և համապատասխան մասնագիտություն ունեցող անձանց համար.

6. աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման չափանիշ համարել նաև ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ՀՀ զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամ հանդիսանալը.

7. սահմանել, որ պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածում զինծառայողի ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված՝ ընտանիքի բնակության վայրը փոխելու դեպքում զինծառայողի ընտանիքների անդամները, ովքեր ուսումնառություն են անցնում ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ուսումնական հաստատություններում, զինվորական ծառայության նոր վայրում գործող ուսումնական հաստատություններում ունեն ընդհանուր մրցութից դուրս, առանձին մրցութի ընդունելության իրավունք:



Նշված ուսումնասիրության արդյունքներն ու խնդրի կարգավորման համար առաջարկված կոնկրետ լուծումները տեղ են գտել նաև Մարդու իրավունքների 2017 թվականի և 2018 թվականի տարեկան հաղորդումներում<sup>502</sup>:

Ներկայացված առաջարկությունների իրական շահառուներ կարող են լինել տարբեր կատեգորիայի զինծառայողներ և (կամ) նրանց ընտանիքների անդամներ, այդ թվում՝ ա) ժամկետային պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները, բ) ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները, գ) ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողները, նրանց և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամները, դ) ՀՀ կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցած կամ մասնակցող անձինք կամ նրանց ընտանիքների անդամները և այլն:

Առաջարկները կարող են վերաբերելի համարվել և կիրառվել իրենց բնույթով զինվորական ծառայությանը հավասարեցված պետական այլ ծառայություն իրականացնող անձանց, օրինակ՝ քրեակատարողական ծառայողների համար նույնպես:

Հայաստանի Հանրապետությունում կոնկրետ գործառնություններ իրականացնող հանրային ծառայողների, տվյալ դեպքում՝ զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների համար ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ նախատեսելը կունենա սոցիալական կարևոր նշանակություն և ռազմավարական տեսանկյունից խթանող բնույթ:

Ավելին՝ ներկայացված առաջարկների կենսագործումը և դրանց արդյունավետ ապահովումը կարող է հանրության մոտ էապես մեծացնել զինվորական ծառայության հանդեպ համակրանքն ու հետաքրքրությունը, ինչպես նաև բարձրացնել ծառայություն անցնող կամ անցած զինծառայողների կարգավիճակը:

Դրանից բացի, ոչ ֆինանսական բնույթի արտոնությունների ներդրման արդյունքում բանակում ծառայությունը կդառնա ավելի գրավիչ նաև հենց ծառայության մեջ գտնվողների և նրանց ընտանիքների համար:

Առաջարկները կենսագործելու նպատակով 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել են «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում», «Զբաղվածության մասին» և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնք կենսագործելու նպատակով ուղարկվել են Վարչապետին: Վարչապետի հանձնարարությամբ նախագծերը ներկայացվել են շահագրգիռ քննարկման:

Ուստի, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոչ ֆինանսական բնույթի արտոնությունները զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վերապահելու նպատակով վերը նշված օրենքների նախագծերն ընդունելու ուղղությամբ, ինչը կարևոր նշանակություն կարող է ունենալ զինծառայողի կարգավիճակի է՛լ ավելի բարձրացման և զինվորական ծառայության նկատմամբ հետաքրքրության է՛լ ավելի մեծացման գործում:

<sup>502</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 և 2018 թվականի տարեկան հաղորդումները, էջեր 296-302 և 539-541:

Օրենքի առջև հավասարությունը և խտրականության արգելքը ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքներ են: Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև: Սահմանադրության 29-րդ հոդվածն ամրագրում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն առանձին ամրագրումն է ստացել 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածով:

Բացի այդ, ըստ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ է ամրագրվել կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում, որը, սակայն, առավելապես ամրագրում է ընդհանրական կարգավորումներ (օրինակ՝ գենդերային հավասարության ապահովման ոլորտում պետական քաղաքականության ընդհանուր սկզբունքներն ու ուղղությունները), և կոնկրետ դեպքերում իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման հատուկ կառուցակարգեր չի նախատեսում: Խտրականությունն արգելող դրույթներ առկա են նաև կարգավորման տարբեր առարկա ունեցող օրենքներում:

1993 թվականին վավերացնելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, ինչպես նաև կանանց իրավունքներն ամրագրող միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման պարտականություն:

Իրավահավասարության ամրապնդումը և կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից մեկն է, որի 5-րդ նպատակը սահմանում է գենդերային հավասարությունը:

Չնայած առկա ներպետական օրենսդրական կարգավորումներին՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության փաստացի իրագործման համար դեռևս առկա չեն բավարար երաշխիքներ, ինչի արդյունքում 2019 թվականի ընթացքում Հայաստանում շարունակվել են արձանագրվել կանանց իրավունքների ոտնահարման և նրանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքեր:

Նման դեպքերի առկայությունը վկայում է կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարունակական և համակարգված գործունեության իրականացման անհրաժեշտության մասին՝ հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերը փոխելու, կանանց հնարավորությունները՝ կրթական, տնտեսական, սոցիալական և քաղաքական ներուժը վեր հանելու ու օգտագործելու նպատակով:

Ոլորտում առկա խնդիրների վերացման և դրանց հաղթահարման պետական քաղաքականության լիարժեք իրագործմանը խոչընդոտում են հասարակությունում կանանց դերի ընկալման հարցում առկա կարծրատիպերը: Ուստի, կարծրատիպերի հաղթահարումը պետության առաջնահերթություններից պետք է լինի, և դրանց վերացման դեմ քայլերը պետք է իրագործվեն առաջնահերթորեն և կրեն պարբերական բնույթ: Կարծրատիպերը ոչ միայն

ինքնին խտրականությանը կամ իրավունքների սահմանափակմանը նպաստող երևույթներ են, այլև մեծապես խոչընդոտում են տարբեր խնդիրների դեմ պայքարի և վերացման համար քայլերի իրականացումը:

Չափազանց կարևոր է միասնական պետական քաղաքականության վարելը խնդիրների հաղթահարման նպատակով: Այս առնչությամբ հարկ է նշել ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1334-Լ որոշման ընդունումը: Անհրաժեշտ է ընդգծել, որ կանանց նկատմամբ խտրականության բացառման և կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ամրապնդման ուղղությամբ պետական միասնական քաղաքականությունն ամրագրող ռազմավարական փաստաթղթի ընդունումը պետք է դիտարկել իբրև դրական քայլ՝ հաշվի առնելով դրա արդիականությունն ու տևական ժամանակ դրա բացակայությունը:

Հասարակությունում առկա կարծրատիպերի, թյուր պատկերացումներ ու ընկալումներ ունենալու խնդիրներն առավել ընդգծվեցին «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա), ստորագրմանը հաջորդած վավերացման գործընթացներում: Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ վավերացման գործընթացի շրջանակներում տեղի ունեցան հասարակության տարբեր ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումներ, բանավեճեր: Վավերացման խնդրի շուրջ, ընդհանուր առմամբ, թե՛ մասնագիտական, թե՛ հասարակության տարբեր շրջանակներում ձևավորվեցին Կոնվենցիայի վավերացման վերաբերյալ դրական և բացասական դիրքորոշում ունեցող անձանց խմբեր: Մի խումբը, կողմ լինելով վավերացմանը, իրականացնում էր դրա ջատագովությունը (advocacy): Մյուս խումբը, դեմ չլինելով ընտանիքում բռնության կանխարգելմանը կամ դրա դեմ պայքարին, այդուհանդերձ, դեմ էր արտահայտվում Կոնվենցիայի վավերացմանը:

Հակասական այս քննադատությունները, կողմ ու դեմ արտահայտվող խմբերի բաժանումը, ընդհանուր առմամբ, հասարակությունում առկա կարծրատիպերի, ընտանիքում բռնության երևույթի վերաբերյալ թյուր ընկալումների և, մասնավորապես, Կոնվենցիայի դրույթների ու կարգավորման առարկայի շուրջ պատշաճ տեղեկացվածության պակասի արդյունք էին:

Չնայած որ վավերացման գործընթացի շուրջ առաջացած տարրնկալումների խնդրի լուծման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը հրապարակել էր Կոնվենցիայի որոշ դրույթների վերաբերյալ մեկնաբանություններ, սակայն դրանք ինքնին բավարար չէին հասարակության մտահոգությունները փարատելու համար: Խնդիրների հաղթահարման նպատակով պետությունը պետք է իրականացնի կարծրատիպերի դեմ համալիր, պարբերական բնույթ ունեցող միջոցառումներ:

Կանանց իրավունքների պաշտպանությունը և կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառումը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հիմնարար ուղղություններից է: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական և կրթական կենտրոնի ղեկավարն Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անդամ է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» N 1685-Ա որոշման: Բացի այդ, աշխատակազմի ներկայացուցիչները Հայաստանի Հանրապետությունում կանանց հարցերով խորհրդի և խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անդամներ են՝ համաձայն ՀՀ վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի

Հանրապետությունում կանանց հարցերով խորհուրդ և աշխատանքային խումբ ստեղծելու, դրանց անհատական կազմերը, կանանց հարցերով խորհրդի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի մարտի 30-ի N 213-Ա, 2010 թվականի հուլիսի 30-ի N 605-Ա, 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1152-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1740-Ա որոշման:

Որպես աշխատանքային առաջնահերթ ուղղություն՝ 2019 թվականին ևս այս ոլորտում իրականացվել են տարբեր ծրագրեր:

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացրել է կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման իրազեկմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես, կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման հարցում Պաշտպանի դերին, ինչպես նաև օրենսդրության իրազեկմանը վերաբերող միջոցառումներ՝ #դեմեմբռնությանը կոչով: Միջոցառումները միտված են հասարակության լայն շրջանակներում տարածված կարծրատիպերի և բռնության երևույթի թյուր ընկալումների դեմ պայքարին և դրանց հաղթահարմանը, ինչպես նաև հասարակության անդամների վերաբերյալ իրավագիտակցության բարձրացմանը:

Ինչպես նախորդ տարիներին, 2019 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը շարունակաբար իրականացրել է հանրապետության մարզերում կանանց իրավունքների պաշտպանության և պահպանության վերաբերյալ իրազեկմանն ուղղված հանդիպումներ ու քննարկումներ:

Մասնավորապես, պարբերաբար քննարկումներ են իրականացվել Գեղարքունիքի մարզում. որոնց ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել տեղի իրավասու մարմինների ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, լրագրողների և ուսանողների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են կանանց ու հաշմանդամություն ունեցող անձանց տնտեսական, սոցիալական կարողությունների զարգացմանն առնչվող հարցեր: Բացի այդ քննարկվել են կանանց զբաղվածության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցության ուղիները, կանանց կարողությունների զարգացման և տնտեսական առաջխաղացման հնարավորությունները, ինչպես նաև հարցեր՝ կապված աշխատանքային իրավունքների խախտումների, կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, առողջության պահպանման իրավունքի հետ:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը պարբերական հանդիպումներ է ունեցել Գեղարքունիքի մարզում՝ կանանց իրավունքների պաշտպանության թեմաներով տարբեր քննարկումներ իրականացնելով տեղի ուսումնական հաստատության ուսանողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

#### 1. Կանանց նկատմամբ բռնություն և ընտանիքում բռնություն

Բռնությունը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում է կանանց նկատմամբ խտրականության առավել տարածված ձև<sup>503</sup>: Ունենալով դրսևորման տարբեր ձևեր՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական, և մակարդակներ՝ այն հիմնականում դրսևորվում է ընտանեկան միջավայրում:

<sup>503</sup> Տե՛ս օրինակ՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարական, հասանելի է

<http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ընտանիքի անդամների միջև բռնի արարքների և այլ գործողությունների կամ անգործության դրսևորումներն ունեն թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ազդեցություն, ինչի մասին են վկայում միջազգային կազմակերպությունների՝ ոլորտի խնդիրների վերաբերյալ դիտարկումները<sup>504</sup>: Ուշադրության է արժանի, որ ընտանիքի անդամները, մասնավորապես՝ երեխաները, բռնության միջավայրում ականատես լինելով, ևս բռնության են ենթարկվում անուղղակի կերպով՝ առանց բռնության ուղղակի օբյեկտ լինելու<sup>505</sup>:

Բռնության երևույթը բացասաբար է ազդում բռնության ենթարկված անձի ֆիզիկական և հոգեկան առողջության վրա. այն ոչ միայն անձի հիմնական իրավունքների խախտում է, այլև խոչընդոտ է հանդիսանում անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար, ունենում բացասական հետևանքներ անձի ձևավորման, հասարակությունում ինտեգրման և ազատ գործելու ու ինքնադրսևորվելու առումով:

Ընտանիքում բռնությունը խարխուլում է ընտանեկան արժեքները: Ընտանիքում բռնության կանխարգելումն ընտանեկան համերաշխության ապահովման միջոց է: Ընտանիքն է հասարակության հիմքը, այնտեղ է ձևավորվում Հայաստանի վաղվա քաղաքացին, հասարակության լիարժեք անդամը: Առանց բռնության ընտանիքն ապահովում է հասարակության բնականոն զարգացումը և ընտանիքի անդամների իրավունքների լիարժեք իրացման հիմնաքարերից է:

Ընտանեկան բռնությունը համաշխարհային խնդիր է, որն իր ազդեցությունն է ունենում բոլոր հասարակությունների վրա: Այս երևույթը տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ ունի Հայաստանում, որի մասին են վկայում իրավասու մարմինները, հասարակական կազմակերպությունները և միջազգային կառույցները:

Դեռևս 2015 թվականին երկրորդ շրջանի ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման ժամանակ մի շարք երկրներ Հայաստանին առաջարկել են քայլեր ձեռնարկել այս ոլորտում խնդիրների լուծման ուղղությամբ<sup>506</sup>: Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության հարցին է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած այցի հիման վրա մշակված զեկույցում<sup>507</sup>:

Կանանց իրավունքների պաշտպանությունը, կնոջ նկատմամբ ցանկացած տեսակի բռնության կանխումն ու դրա դեմ պայքարը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է: Ընտանիքում բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության իրականացման նպատակով Պաշտպանը 2019 թվականին իրականացրել է մի շարք աշխատանքներ՝ համագործակցելով նաև իրավասու պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Կանանց իրավունքների պաշտպանության և պահպանության վերաբերյալ իրազեկման բարձրացման ծրագրեր շարունակվել են իրականացվել նաև 2019 թվականին: Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է հանրապետության տարբեր մարզերում քննարկումների իրականացումը, որտեղ իրավահավասարության և այլ խնդիրների քննարկման հետ զուգընթաց նաև քննարկվել են ընտանիքում բռնության խնդիրը և դրա դեմ

<sup>504</sup> Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 132:

<sup>505</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

<sup>506</sup> Տե՛ս <https://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMIndex.aspx> կայքէջը, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>507</sup> Տե՛ս <https://rm.coe.int/-/2018-16-20-/1680920149> կայքէջը, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պայքարի համար ընդունված ներպետական օրենսդրությունը, ինչպես նաև միջազգային չափանիշները:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը իրականացրել է կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման հարցում Պաշտպանի դերին, ինչպես նաև օրենսդրության իրազեկմանը վերաբերող միջոցառումներ՝ #դեմեմբռնությանը կոչով: Իրազեկման աշխատանքների իրականացումը նպատակ է հետապնդել բարձրացնել խնդրի վերաբերյալ հասարակության անդամների իրավագիտակցությունը և հաղթահարել հասարակության լայն շրջանակներում տարածված կարծրատիպերը և պայքարել բռնության երևույթի թյուր ընկալումների դեմ:

Նկարահանվել և հանրությանն է ներկայացվել ընտանիքում բռնության ենթարկված անձի պաշտպանության օրենսդրական հնարավորությունները, ընտանիքում հավասարությունը խրախուսող ուղերձով տեսանյութ, Երևանի կանգառներում տեղադրվել են պոստերներ, որոնք քաղաքացիներին հնարավորություն են ընձեռել Arloopa հավելվածի միջոցով ակտիվացնել լուսանկարը և դիտել տեսաուղերձը: Պատրաստվել են նաև ընտանիքում բռնության ենթարկվելու դեպքում Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու վերաբերյալ ուղեցույցներ հայերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով, բրայլյան գրով: Բացի այդ, միջոցառումների շրջանակում նաև իրականացվել է պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված քայլեր: Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև իրավապաշտպանների կարողությունների զարգացման համար մշակվել է առանձին ձեռնարկ, որի մեթոդաբանությունը կիրառվում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ զրույցների ժամանակ: Մոցիալական ցանցերով, հեռուստատեսությամբ և իրազեկման բարձրացման տարբեր եղանակներով իրականացվող իրազեկման այս միջոցառումները թե՛ խնդրի դեմ պայքարի, թե՛ մեծապես դրա կանխարգելման նպատակ են հետապնդել:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանն ընտանիքում բռնության դեպքերի մասին ստացել է ահազանգեր: Հասցեագրված բողոքների թիվը 2019 թվականին կրկնապատկվել է նախորդ տարվա բողոքների քանակի համեմատ:

Անհատական բողոքներում բարձրացված խնդիրների ուսումնասիրությամբ կարելի է փաստել, որ դրանք, ըստ էության, ոչ միայն անձի հիմնարար իրավունքների և ազատությունների խախտումներ են, այլև ազդում են անձանց այլ իրավունքների իրականացմանը, մասնավորապես՝ կանանց՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացման վրա, որն էլ իր հերթին բերում է մի շարք իրավունքների խախտման և այդ խախտված իրավունքների վերականգնման դժվարությունների:

Անհատական բողոքների ուսումնասիրությունից վեր են հանվել համակարգային խնդիրներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի մասի՝

1.1 ընտանիքում բռնության դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական թերի կարգավորումներ կամ կարգավորումների բացակայություն,

1.2 կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ,

1.3 Պետության կողմից տրամադրվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն,

1.4 ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն,

1.5 պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական պատրաստվածություն և իրազեկման պակաս:

1.1 Ընտանիքում բռնության դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական թերի կարգավորումներ կամ կարգավորումների բացակայություն

Օրենսդրական թերի կարգավորումները խոչընդոտներ են ստեղծում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և նման դեպքերի հետագա կանխարգելման ուղղությամբ: Ուսումնասիրությունները վկայում են, որ չնայած կատարված օրենսդրական փոփոխություններին, դեռևս առկա են օրենսդրական բացեր և թերի կարգավորումներ:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների քննարկման արդյունքներով վեր են հանվել օրենսդրական խնդիրներ: Մասնավորապես, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոցներ չկիրառելը:

Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքների ուսումնասիրությամբ կարելի է նշել, որ այս կարգավորման պարագայում ստացվում է մի իրավիճակ, երբ բռնության դրսևորման դեպքում բռնության ենթարկված անձի պաշտպանության համար որևէ քայլ չի կարող իրականացվել իրավասու մարմինների ներկայացուցիչների կողմից այս բացառության սահմանման պարագայում:

Բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ պարբերաբար բռնության է ենթարկվում հաշմանդամություն ունեցող անձի կողմից, սակայն ոստիկանության ներկայացուցիչները բռնության վերացման կամ դրա կանխարգելման նպատակով գործուն քայլեր չեն իրականացնում՝ հաշվի առնելով հաշմանդամության առկայությունը: Հաշմանդամության առկայության հիմքով հաշվառման իրականացման բացառման արդյունքում գործնականում նման խնդիր է առաջանում:

Սրա հետ կապված, հարկ է նկատել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձիք մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն իրավունակություն կյանքի բոլոր ոլորտներում: ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ կոմիտեն վերահաստատում է, որ հաշմանդամություն ունենալը հիմք չէ իրավունակության կամ 12-րդ հոդվածով ամրագրված ցանկացած իրավունքի մերժման համար: Գործնականում 12-րդ հոդվածը խախտող դեպքերը պետք է վերացվեն՝ ապահովելով բոլորի հետ հավասար լիարժեք իրավական գործունակություն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Օրենքի առջև հավասար ճանաչման համար իրավական կարողությունները չպետք է մերժվեն խտրականորեն: Իրավական գործունակության մերժումը չպետք է հիմնված լինի այնպիսի անձնական հատկությունների վրա, ինչպիսիք են՝ սեռը, ռասան կամ հաշմանդամություն ունենալը, և դա չպետք է ունենա մարդուն այլ կերպ վերաբերվելու նպատակ կամ ազդեցություն<sup>508</sup>:

Գործունակության հիմքով խտրական վերաբերմունքի արգելքը պետք է դիտարկել նաև հաշմանդամություն ունեցող անձանց գործողությունների իրավական հետևանքների առումով: Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը հաշմանդամություն հիմքով անձանց քրեական պատասխանատվությունից ինքնաբերաբար ազատելը համարել է խտրական և անօրինական: Փոխարենը, հանցակազմի սուբյեկտիվ կողմին վերաբերող դրույթները պետք է հաշմանդամության առումով չեզոք լինեն և հաշվի

<sup>508</sup> Տե՛ս ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանությունը, կետեր 9 և 32, հասանելի է <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/031/20/PDF/G1403120.pdf?OpenElement> հղումով:

առնեն կոնկրետ անձի դրությունը: Քրեական իրավունքի ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության ճանաչումը պահանջում է վերացնել նրանց պաշտպանությունը, որը հիմնված կլինի հոգեկան և մտավոր հաշմանդամության հիմքով քրեական պատասխանատվությունը մերժելու վրա<sup>509</sup>:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները նաև կանխարգելիչ նպատակ ունեն և չափազանց կարևոր են բռնության ենթարկված անձանց պաշտպանության տեսանկյունից:

Բացի այդ, պետք է նշել, որ ընտանիքում բռնության գործերով ընտանիքում բռնություն գործադրած անձի իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու մոտեցումը հակասում է միջազգային չափանիշներին: Առանձնակի պետք է ընդգծել, որ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն նշել է, որ բռնություն գործադրողի իրավունքները չեն կարող գերադասվել կանանց կյանքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքներին<sup>510</sup>:

Ավելին, ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի թիվ 15-Լ հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ «մասնագիտացված ստորաբաժանումում կանխարգելիչ հաշվառման չեն վերցվում քրոնիկ հոգեկան հիվանդություն, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, սկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով իր գործողությունների վտանգավորությունը չգիտակցող անձը (չափահաս և անչափահաս), ով հաշվառված է բժշկական հաստատությունում: Բացի այդ, ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի թիվ 15-Լ հրամանի 1-ին հավելվածի 45-րդ կետը սահմանում է, որ հաշվառման մեջ գտնվող անչափահասի վերաբերյալ կազմված քարտի վարումը դադարում է, ի թիվս այլնի, եթե անչափահասը հաշվառման մեջ գտնվելու ընթացքում ձեռք է բերել հոգեկան հիվանդություն և հաշվառվել համապատասխան բժշկական հաստատությունում (2019 թվականի թիվ 15-Լ հրամանի 1-ին հավելվածի 45-րդ կետի 1-ին ենթակետ):

Խնդրի առնչությամբ պետք է ընդգծել, որ ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի 15-Լ որոշման 5-րդ կետի կարգավորումը հակասում է օրենքի 12-րդ հոդվածի կարգավորումներին, քանի որ «անգործունակության» և որոշմամբ տրված ձևակերպումները բովանդակային առումով չեն համընկնում: Ավելին, որոշման ձևակերպման հիմքում ընկած է Քրեական օրենսգրքի՝ անմեղսունակության հասկացությունը:

Ընդունելի չէ աշխատանքային քննարկումների ժամանակ Ոստիկանության ներկայացուցիչների այն պարզաբանումը, որ այդ կատեգորիայի անձանց՝ ընտանեկան բռնության դեպքի շրջանակներում կանխարգելիչ հաշվառումն արդյունավետ չէ, և վերջիններս Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշման 26-րդ կետի ուժով արդեն իսկ պրոֆիլակտիկ հաշվառման են վերցվում առողջապահական հիմնարկներում հաշվառված, շրջապատի համար վտանգ ներկայացնող՝ հոգեկան հիվանդություններով տառապող անձանց՝ մինչև առողջապահական մարմիններում հաշվառումից հանելը: Վերջինս, սակայն ընտանիքում բռնության դեպքերի հաշվառման՝ որպես նման դեպքերի կանխարգելիչ միջոց չի կարող դիտարկվել:

Ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշվառումը կանխարգելիչ նպատակ է հետապնդում, որի շրջանակում չափահաս անձի ընտանիքում բռնություն գործադրելը

<sup>509</sup> Տե՛ս <https://www2.ohchr.org/english/bodies/hrcouncil/docs/10session/A.HRC.10.48.pdf> հղումով, կետ 47: Հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>510</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե CEDAW/C/39/D/6/2005\*, կետ 12.1.5, հասանելի է <https://opcedaw.files.wordpress.com/2012/01/yildirim-v-austria.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկում է իրականացվում<sup>511</sup>: Հաշվառման վերցնելու գործառույթը չափազանց կարևոր նշանակություն ունի անձի վարքագծի դրսևորումների մշտադիտարկման տեսանկյունից, ինչն ինքնին կանխարգելիչ ու պաշտպանական նշանակություն ունի: Սակայն խնդիրն այն է, որ գործնականում կանխարգելիչ նպատակ հետապնդող հաշվառումը և բռնություն գործադրած անձանց մշտադիտարկումը պատշաճ չի իրականացվում:<sup>512</sup> Բացի այդ, ՀՀ ոստիկանության պետի վերոնշյալ հրամանն ուղղակի խոչընդոտ է ընտանիքում բռնության դեպքերի կանխարգելման նպատակ հետապնդող հաշվառման իրականացման համար:

Տուժողի իրավունքների պաշտպանության արդյունավետության տեսանկյունից դիտարկված այլ օրենսդրական խնդիրներ ներկայացվում են ստորև, որոնք Պաշտպանը դիտարկել է խնդրահարույց դեռևս 2018 թվականին: Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ տարեկան հաղորդմամբ բարձրացված խնդիրների հաշվառմամբ ՀՀ ոստիկանությունը 2019 թվականին մշակել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը շրջանառվել է, և ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի: Քննարկված օրենսդրական խնդիրներն արտացոլում են գտել օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ներկայացված կարծիքում:

Այսպես, ի հակադրություն «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա), որով նախատեսվում է անհետաձգելի արգելող որոշման կայացում միակողմանի կարգով՝ անմիջապես ուժի մեջ մտնելով՝ Հայաստանում դրանք ուժի մեջ են մտնում բռնություն գործադրած անձին հեռախոսով ծանուցելուց, նրա հաշվառման վայր էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով հանձնելուց և հանձնման մասին վերջինիս ստորագրություն ստանալուց հետո («Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս): Ավելին, գրանցման հասցեն կարող է լինել այն տունը, որտեղ գտնվելը բռնություն գործադրող անձին պետք է արգելվի: Արդյունքում, բռնություն գործադրած անձի՝ այնտեղ պահանջվող ներկայությունը (ծանուցում ստանալու համար) կարող է վտանգել տուժողի անվտանգությունը: Այլ կերպ՝ Հայաստանում այս որոշման ուժի մեջ մտնելու ժամկետն անորոշ է, այլ ոչ թե անմիջապես:

Վերոնշյալ ընթացակարգը կարող է ժամանակատար լինել, և դրանով, ինչն ավելի խնդրահարույց է, բռնություն գործադրած անձի դատավարական իրավունքները գերադասվում են տուժողի կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ՝ խախտելով միջազգային չափանիշները: Տուժողի հետ կապ հաստատելու շարունակական քայլերը չեն համարվի անհետաձգելի միջամտության որոշումների խախտում, քանի որ այն ուժի մեջ մտած չի լինի՝ ընթացակարգային ձգձգումների պատճառով: Վերջապես, անհետաձգելի միջամտության որոշումների կատարման ուշացումները կարող են հիմք հանդիսանալ այդ որոշումների խախտումների համար:

Ավելին, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված

<sup>511</sup> «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>512</sup> Պաշտպանության միջոցների խախտումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության տվյալների ուսումնասիրությունից կարելի է նկատել, որ խախտումների վերաբերյալ ահազանգերը հիմնականում շարունակում են ստանալ ընտանիքում բռնության ենթարկված անձանց կողմից, և 124 խախտման դեպքերից միայն 34 դեպքն է ՀՀ ոստիկանությունը հայտնաբերել:

անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ նախազգուշացում կիրառելու մասին որոշումը ենթակա է բողոքարկման դրա մասին իրազեկելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Քանի որ ոստիկանության որոշումները վարչական ակտեր են, ապա բողոքարկումները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որով նախատեսվում է կասեցնող ազդեցություն<sup>513</sup>:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում կայացված պաշտպանության միջոցներից վերադասության կարգով բողոքարկվել է 13-ը, որոնց վերաբերյալ հարուցվել է վարչական վարույթ: 12-ով որոշում է կայացվել բողոքը մերժելու մասին, 1-ով՝ կայացված որոշումը վերացվել է:

Նախազգուշացում կիրառելու որոշումը բողոքարկելու կասեցնող ազդեցությունը կարող է վտանգներ պարունակել, քանի որ այդ ընթացքում բռնություն գործադրած անձը կարող է խախտել նախազգուշացումը, որը, սակայն, այդպիսին չի համարվի՝ այդպիսով նվազեցնելով տուժողին տրամադրված պաշտպանության մակարդակը:

Ընտանիքում բռնության դեմ պայքարի կառուցակարգերի ոչ լիարժեքության մեկ այլ դրսևորում է պատասխանատվության ինստիտուտի անկատարությունը: Այսպես, Ընտանիքում բռնության ոչ բոլոր տեսակների համար է նախատեսված պատասխանատվության մեխանիզմ ներպետական օրենսդրությամբ, ըստ այդմ, իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ այդ դեպքերին: ՀՀ քրեական օրենսդրությամբ քրեորեն պատժելի արարքներ են համարվում ֆիզիկական բռնության որոշ տեսակները, ինչպես նաև սեռական բռնությունը: ՀՀ օրենսդրությունը որոշ առումով կարգավորում է նաև հոգեբանական բռնությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածը սահմանում է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը):

Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությամբ իբրև հակաիրավական արարք՝ ամրագրված չէ, օրինակ, հետամտումը («պարբերաբար մեկ այլ անձի հետապնդելը, մեկ այլ անձի հետ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը կամ անձին հետևելու մասին իմաց տալը»): Խոսքը տուժողին ֆիզիկապես հետևելու, նրա աշխատանքի վայր, սպորտային կամ կրթական հաստատություն այցելելու, ինչպես նաև տուժողին վիրտուալ աշխարհում հետևելու, (...) մեկ այլ անձի գույքը վնասելու, անձի անձնական իրերի վրա աննշան հետքեր թողնելու, անձի տվյալներով առցանց կեղծ անուններով հաշիվներ բացելու կամ սուտ տեղեկություններ տարածելու մասին է)<sup>514</sup> հարկադիր ամուսնությունը, հղիության արհեստական ընդհատումը հարկադիր կատարելը և այլն:

Մինչդեռ, միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ բռնության դեմ պայքարի միջոցներից է այդ արարքը կատարած անձանց համար պատասխանատվության միջոցների նախատեսումը<sup>515</sup>: Միջազգային փաստաթղթերի և մի շարք երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանիքում բռնության դեմ պայքարի արդյունավետ միջոց է դրա քրեականացումը: Ընդ որում, դա կարող է դրսևորվել կամ մեկ հանցակազմի նախատեսմամբ կամ ընդհանուր հանցակազմերով

<sup>513</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը՝ բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման, եւ այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

<sup>514</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 34:

<sup>515</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդվածներ 33-40:

գործը քննելիս որպես պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք՝ տուժողի և բռնություն գործադրած անձի միջև ընտանեկան կապը նախատեսելը<sup>516</sup>:

Ընտանիքում բռնության դեպքերին արդյունավետ արձագանքելուն կարող է խոչընդոտել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքը, այն է՝ տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը: Ընտանիքում բռնության դեպքում նման մեղմացնող հանգամանք նախատեսելը համահունչ չէ միջազգային չափանիշներին: Մասնավորապես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների անընդունելի արդարացումներ են համարվում՝ այսպես կոչված, «հանուն պատվի» կատարվող հանցագործությունները: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, սոցիալական կամ ավանդույթային նորմերը կամ սովորույթները, որոնք արդարացումներ են հանդիսանում բռնության գործադրման համար:

Մեկ այլ խնդիր է ընտանիքում բռնության դեպքերում հանրային և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի իրավական կարգավորումները: Նշված խնդրի լուծման կապակցությամբ 2017 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը լրացվեց 4-րդ մասով՝ նախատեսելով, որ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով հարուցել քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում<sup>517</sup>:

Քրեական դատավարության օրենսգրքում հստակ ձևակերպված նոր չափանիշը գնահատելիս կարևոր է հաշվի առնել, որ ի տարբերություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջ քաշած չափորոշիչների, որոնցով գնահատվում է ոտնձգողի վարքագիծը, քննարկվող ներպետական կարգավորումը տրված է՝ հիմք ընդունելով տուժողի դրությունը:

Այսպես, Օփուգն ընդդեմ Թուրքիայի գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանվել են հետևյալ չափանիշները՝ իրավախախտման ծանրությունը, զոհի վնասվածքները ֆիզիկական են, թե՛ հոգեբանական, եթե բռնություն գործադրած անձը զենք է կիրառել, եթե բռնություն գործադրած անձը հարձակումից հետո որևէ ձևով սպառնացել է, եթե բռնություն գործադրած անձը պլանավորել է հարձակումը, ընտանիքում ապրող որևէ երեխայի վրա ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), բռնություն գործադրած անձի՝ նորից իրավախախտում կատարելու հնարավորությունները, տուժողի կամ ցանկացած այլ անձի, որը կարող էր ներգրավված լինել, առողջությանը և անվտանգությանը ներկայացվող շարունակական սպառնալիքը, զոհի ներկայիս հարաբերությունը բռնություն գործադրած անձի հետ և զոհի ցանկություններին հակառակ իրականացվող քրեական հետապնդման հետ մեկտեղ շարունակվող հարաբերության վրա ազդեցությունը, հարաբերության պատմությունը, մասնավորապես, եթե նախկինում տեղի է

<sup>516</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 46:

<sup>517</sup> Նշված կարգավորումն ուժի մեջ է մտել 2018 թվականից:

ունեցել բռնության այլ դեպք, ինչպես նաև բռնություն գործադրած անձի քրեական անցյալը, մասնավորապես՝ նախկինում բռնություն կատարելը<sup>518</sup>:

Չնայած վերոնշյալի՝ ընտանիքում բռնության գործերը հանրային մեղադրանքի կարգով քննելու պրակտիկան արդեն իսկ կիրառվել է ՀՀ դատախազության կողմից, ինչը դրական միտում է: Այսպես, 2019 թվականի ընթացքում ընտանիքում բռնության մասնավոր մեղադրանքի դեպքերով, անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելու հանգամանքից, երբ անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարողացել պաշտպանել իր իրավաչափ շահերը, ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, հարուցվել է 25 քրեական գործ: Ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 458 քրեական գործ, որոնցից 269-ով վարույթը կարճվել է քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական հետապնդում չի իրականացվել: Ի թիվս այլ հիմքերի, 62 քրեական գործ կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, երբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը:

Ընտանիքում բռնության դեմ արդյունավետ պայքարին խոչընդոտում է նաև տուժողների համար պաշտպանական բավարար միջոցների բացակայությունը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Նույն օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանության միջոցներն են, օրինակ՝ անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը և այլն: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրենքով սահմանված այս միջոցները և դրանց ապահովման համար անհրաժեշտ իրավական կարգավորումները բավարար չեն և ընտանիքում բռնության դեպքերում չեն կիրառվում: Այսպես, ՀՀ քննչական կոմիտեի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար 2018 թվականի ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված պաշտպանության միջոց չի կիրառվել:

Վերոնշյալ խնդիրները դեռևս 2017 թվականից բարձրացվել են Պաշտպանի կողմից Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացված՝ ՀՀ քրեական օրենսդրության և միջազգային չափանիշների համեմատական վերլուծության զեկույցում, որտեղ ներկայացվել են նաև հստակ առաջարկներ: Այնուամենայնիվ, առաջարկներն առ այսօր չեն կատարվել, ինչը խնդրահարույց է:

<sup>518</sup> Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, 138-րդ կետ:

## 1.2 Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և անվստահություն պետական մարմինների նկատմամբ

Բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում մեծագույն մարտահրավեր է կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության վերաբերյալ առկա թյուր պատկերացումները և կարծրատիպերը:

Հանրապետության մի շարք մարզերում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ իրականացված քննարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքների քննությամբ պարզ է դառնում, որ այս կարծրատիպերն առկա են հասարակության տարբեր շրջանակներում, այդ թվում՝ բռնության ենթարկված անձանց պաշտպանություն իրականացնող իրավասու մարմինների ներկայացուցիչ:

Այս նպատակով 2019 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ ձեռնամուխ է եղել կանանց նկատմամբ բռնության, մասնավորապես՝ ընտանիքում բռնության դեմ պայքարի և դրա կանխարգելման իրազեկմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, որը միտված է հասարակության լայն շրջանակներում տարածված կարծրատիպերի և բռնության երևույթի թյուր ընկալումների դեմ պայքարին և դրանց հաղթահարմանը, ինչպես նաև հասարակության անդամների վերաբերյալ իրավագիտակցության բարձրացմանը:

Կարծրատիպային մտածելակերպի հետևանքով ի հայտ են գալիս մի շարք այլ խնդիրներ: Բազմաթիվ դեպքերում նման կարծրատիպային մտածելակերպն ուղղակիորեն բացասական ազդեցություն է ունենում բռնության ենթարկված անձի բռնության մասին բարձրաձայնելու հարցում: Խնդիրը, հատկապես ակնհայտ է գյուղական համայնքներում, որտեղ հարցերի քննարկումը կրում է ներընտանեկան բնույթ:

Կարծրատիպային մոտեցումն իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների կողմից շատ հաճախ բերում է կրկնակի զոհացման, ինչը կարող է խոչընդոտել հետագայում նման դեպքերի բացահայտումը, որի արդյունքում մեծամասամբ տուժողները խուսափում են կրկին դիմել իրավասու մարմիններին<sup>519,520</sup>:

Հասարակությունում առկա կարծրատիպերի մասին են վկայում ուսումնասիրություններ: Այսպես, ընտանիքում բռնության դրսևորումների վերաբերյալ քննարկումների անքակտելի մաս է բռնության հրահրման և առաջացման համար կողմերից որևէ մեկի վրա ընտանիքում լարվածության էսկալացիայի մեղքը բարդելը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հարցվածների 35.7 %-ը, որից 44.6 %-ը տղամարդ են և 27.8 %-ը՝ կանայք, համաձայն են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն

<sup>519</sup> Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվել է նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառման դեպքեր, որի հիմքով էլ խախտվել է տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը, հասանելի է <http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>520</sup> Խնդրի մասին բարձրաձայնել է նաև Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն, որը նշել է, որ բռնության դեպքերի մասին բարձրաձայնման խոչընդոտ է հանդիսանում իրավապահ մարմինների կողմից կարծրատիպերի պատճառով բռնությունն արդարացնելը: Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի՝ Հայաստանի 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ,

[http://tbinternet.ohchr.org/Treaties/CAT/Shared%20Documents/ARM/INT\\_CAT\\_COC\\_ARM\\_25977\\_E.pdf](http://tbinternet.ohchr.org/Treaties/CAT/Shared%20Documents/ARM/INT_CAT_COC_ARM_25977_E.pdf), 2020

թվականի մարտի 31-ի դրությամբ:

ընտանիքի միասնության<sup>521</sup>: Որոշ դեպքերում «կինը ծեծի է արժանի» անդաման հետ համաձայն է հարցվածների 27.7 %-ը, որից 35.2 %-ը տղամարդ և 21 %-ը կին են<sup>522</sup>:

Որոշ դեպքերում կնոջը համարում են ընտանիքում լարվածության, վեճերի ու կոնֆլիկտների էսկալացիայի հրահրող<sup>523</sup>: Մակայն հատկանշական է, որ մեղքը կնոջ վրա բարդելու միտումը հատուկ է միայն բռնության ոչ պարբերական դրվագների վերաբերյալ քննարկումներին, մինչդեռ, բռնության շարունակական, պարբերաբար կրկնվող և ծայրահեղ դրսևորումների պարագայում մասնակիցները հակված չեն էսկալացիայի մեղքը բարդել կնոջ վրա<sup>524</sup>: Մասնակիցները նշում են դեպքեր, երբ իրենց կարծիքով կնոջ վարքագիծը նպաստում է ընտանիքում լարվածությունը բռնության վերաճելուն, ամուսնու գործազրկության կամ ընտանիքի բարեկեցության ակնկալիքներին անհամապատասխան վաստակի դեպքում տնտեսական անհամարժեք պահանջներ ներկայացնելը, ակոհողի կամ թմրադեղերի ազդեցության տակ գտնվող ամուսնուն որոշակի պահանջներ ներկայացնելը, դիտավորյալ թաքցրած հաշմանդամությունը<sup>525</sup>:

Հասարակությունում կանանց դերի և բռնության վերաբերյալ թյուր պատկերացումներ են ձևավորվում նաև զանգվածային լրատվության միջոցների բռնության վերաբերյալ սխալ տեղեկատվության ներկայացնելու պատճառով: Ավելին, հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումները և ֆիլմերը ևս կարող են բացասական ազդեցություն ունենալ բռնության վերաբերյալ սխալ պատկերացումների ձևավորման մասին:

Նշված խնդրի մասին բազմիցս բարձրաձայնել են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները մարզերում Պաշտպանի ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքում: Խնդրին անդրադարձել են նաև տարբեր հետազոտություններ: Այսպես, ուսումնասիրություններից մեկին մասնակցած անձինք նշել են, որ լրատվամիջոցների և, հատկապես, հեռուստատեսության ազդեցություն է ունենում ընտանիքում կոնֆլիկտները լուծելու մոդելների վրա: Նման ազդեցության հիմքում բռնության այս կամ այն տեսակն է՝ հատկապես հոգեբանական և տնտեսական: Ըստ մասնակիցներից շատերի՝ դրանք ակնհայտորեն նպաստում են կնոջ և տղամարդու դերերի ավանդական ընկալման և հայրիշխանական կարծրատիպերի վերարտադրությանը: Մասնակիցները միաձայն են այն հարցում, որ ընտանիքում բռնություն հրահրող գործոններից մեկն էլ հայկական հեռուստատեսիվներն են, որոնց հիմնական լսարանը կանայք են, և որտեղ տղամարդու դրական կերպարը հաճախ ներկայացվում է որպես իշխող, կնոջը որոշումների գործընթացում չներառող, կոնֆլիկտներն ուժի, երբեմն անգամ ծեծի միջոցով լուծող, իսկ կինը՝ որպես հնազանդ, առօրյան սուրճի բաժակի շուրջ անցկացնող և մանր դավադրություններ հյուսող: Մասնակիցների կարծիքով՝ քանի որ մեդիան նման կերպարները չի ներկայացնում որպես անընդունելի և անգամ դատապարտելի, այլ հակառակը, արդարացնում է նման մոտեցումը նրանով, թե «մենք արտապատկերում ենք

<sup>521</sup> Տե՛ս <http://www.unfpa.am/sites/default/files/IMAGES-executive%20summary-Arm.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>522</sup> Տե՛ս [լույն տեղում](#):

<sup>523</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf) հղումով 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>524</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>525</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf) հղումով, էջ 15, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

իրականությունը», նույն անընդունելի իրականությունը շարունակվում է վերարտադրվել, հատկապես երիտասարդների շրջանում<sup>526</sup>:

Այս նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը միջազգային գործընկերների հետ համատեղ իրականացրել է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների վերապատրաստում ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ հաղորդումների պատրաստման հարցերի շուրջ: Բացի այդ, 2019 թվականի ընթացքում պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ են իրականացվել ՀՀ մարզերում տեղի հասարակական կազմակերպությունների, իրավասու մարմինների, զանգվածային լրատվության միջոցների, ուսանողների և հասարակության այլ ներկայացուցիչների հետ:

### 1.3 Պետության կողմից տրամադրվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայություն

Հաշվի առնելով ընտանիքում բռնության առանձնահատկությունները, ինչպես նաև բռնության այս տեսակի բացասական հոգեբանական ազդեցությունը դրանից տուժած և դրան ակնատես եղած անձանց նկատմամբ՝ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի աջակցության տարբեր միջոցները հասանելի դարձնելու ուղղությամբ: Ըստ այդմ, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ նախատեսվել է բռնությունից տուժած անձանց համար բազմաթիվ ծառայությունների մատուցման անհրաժեշտություն: Այսպես, օրենքը նախատեսում է աջակցության կենտրոնների և ապաստարանների ստեղծում (հոդվածներ 19 և 20):

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ 2019 թվականին ևս պետության կողմից բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին լիարժեք աջակցություն հարցը շարունակել է խնդրահարույց մնալ:

Խնդիրն այն է, որ որոշ աջակցության կենտրոններ հիմնադրվել են միայն 2019 թվականին և այդ ընթացքում հանրապետությունում գործել է ընդամենը 6 աջակցության կենտրոններ, որոնցից երեքը՝ Երևանում, մյուս երեքը՝ Սյունիքի, Շիրակի և Լուռու մարզերում:

Մեկ այլ խնդիր է, որ 2019 թվականի ողջ ընթացքում Հայաստանում չեն գործել պետության կողմից շահագործվող կացարաններ, ինչպես նաև խնդրահարույց է մնում անվճար հատուկ թեժ գիծ ծառայության ապահովումը, որոնք մատչելի կլինեն յուրաքանչյուրի համար (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար), որոնք շուրջօրյա աջակցություն և խորհրդատվություն կտրամադրեն դրա կարիքն ունեցող անձանց:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ

<sup>526</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաուղղորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված որակական հետազոտություն», հասանելի է [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն: Ի պատասխան նշյալ ծառայության հասանելիության, դրանց վերաբերյալ հրապարակումների իրականացման հարցման՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հայտնել են, որ աջակցության բոլոր կենտրոններում գործում է «Թեժ գիծ», որի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է նախարարության պաշտոնական կայքէջում (հետևյալ հղմամբ՝ [http://www.mlsa.am/?page\\_id=19928](http://www.mlsa.am/?page_id=19928), 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ):

Այս առնչությամբ, սակայն հարկ է ընդգծել, որ նշյալ հղմամբ 2019 թվականին գործող 6 աջակցության կենտրոններից միայն 3 կենտրոններում է նշված, որ հեռախոսահամարը թեժ գծի է, որոնցից միայն 2 կենտրոնի հեռախոսահամարն է նշված, որ գործում է շուրջօրյա: «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ծառայություններ տրամադրող մյուս կառույցները՝ ըստ մարզերի» տեղեկատվությունը պարունակում է «թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարներ, սակայն այդ կենտրոնները գործում են 2020 թվականից:

Վիճակի ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս ամփոփել, որ ընտանիքում բռնությունից տուժած անձանց համար այս և այլ ծառայությունները, ինչպես նախկինում, 2019 թվականին ևս շարունակել են խնդրահարույց մնալ և հիմնականում իրականացրել են հասարակական կազմակերպությունները:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է պետության կողմից ապաստարանների, աջակցության կենտրոնների ստեղծման, ինչպես նաև այլ ծառայությունների մատուցման հնարավորությունը: Ըստ նույն օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի՝ աջակցության կենտրոնների և ապաստարանների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից մեկ տարի հետո: Սակայն ապաստարանները 2019 թվականի ընթացքում հասանելի չեն եղել շահառուների համար:

Ապաստարանների առկայության խնդրի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում պետական ֆինանսավորմամբ ապաստարաններ չեն գործել: Ապաստարանի ծառայություններ են տրամադրվել 2 հասարակական կառույցների կողմից, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է նախարարության պաշտոնական կայքէջում: 2019 թվականին նախարարությունը ներկայացրել է 2 նոր՝ «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» և «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ ծառայություններ» նախաձեռնություններ, որոնք ներառվել են ՀՀ պետական 2020 թվականի բյուջեում: 2019 թվականին նախարարությունը հայտարարել է պետական համաֆինանսավորմամբ ընտանեկան բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների տրամադրման դրամաշնորհային մրցույթներ, որի արդյունքում նախատեսվել է ՀՀ տարածքում ունենալ ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար թվով 2 ապաստարան, որտեղ համապատասխան ծառայություններ կտրամադրվեն շուրջ 60 անձանց: Մրցույթների իրականացման արդյունքում 2020 թվականից ՀՀ տարածքում գործելու է պետական համաֆինանսավորմամբ թվով 2 ապաստարան:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում ստացված ընտանիքում բռնության վերաբերյալ 796 ահազանգով կայացվել են նախազգուշացում, իսկ 260-ով՝ անհետաձգելի միջամտության որոշումներ: Կայացված պաշտպանության միջոցներից խախտվել է 124-ը, որից՝ 90-ի խախտման մասին ոստիկանությանը հայտնել է ընտանիքում



բռնության ենթարկված անձր, իսկ 34-ը՝ հայտնաբերվել է ոստիկանության ծառայողի կողմից:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքում բռնություն գործադրած անձը, որի նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող չափահաս անձանց ՀՀ ոստիկանությունը վերցնում է կանխարգելիչ հաշվառման: Կանխարգելիչ հաշվառման շրջանակում չափահաս անձի ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկումն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի սոցիալական աշխատողը, իսկ անչափահաս անձի պարագայում՝ ՀՀ ոստիկանությունը՝ համապատասխանաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ ՀՀ ոստիկանության պետի սահմանած կարգով: Սակայն խնդիրն այն է, որ գործնականում կանխարգելիչ նպատակ հետապնդող հաշվառումը և բռնություն գործադրած անձանց մշտադիտարկումը պատշաճ չի իրականացվում: Պաշտպանության միջոցների խախտումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության տվյալների ուսումնասիրությունից կարելի է նկատել, որ խախտումների վերաբերյալ ահազանգերը հիմնականում շարունակում են ստանալ ընտանիքում բռնության ենթարկված անձանց կողմից և 124 խախտման դեպքերից միայն 34 դեպքն է ՀՀ ոստիկանությունը հայտնաբերել: Հաշվառման վերցնելու գործառնությունը չափազանց կարևոր նշանակություն ունի անձի վարքագծի դրսևորումների մշտադիտարկման տեսանկյունից, ինչն ինքնին կանխարգելիչ ու պաշտպանական նշանակություն ունի:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել մեկ այլ խնդիր՝ ընտանիքում բռնության ենթադրյալ դեպքերի կապակցությամբ նյութերի նախապատրաստության փուլում ՀՀ ոստիկանության ծառայողների և ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների միջև համագործակցության բացակայության մասին: Չնայած նման համագործակցության իրականացումը կարգավորվում է ՀՀ ոստիկանության պետի հրամանով՝ այդուհանդերձ, գործնականում առաջանում են խնդիրներ:

Համագործակցության անխափան իրականացումը չափազանց կարևոր է անձին ճիշտ ուղղորդման և ենթադրյալ տուժողին աջակցությանն ուղղված այլ գործողությունների իրականացման, մասնավորապես՝ գոհակենտրոն և տուժողների կարիքներին համապատասխան մասնագիտական օգնության տրամադրման նպատակով: Պաշտպանին հասցեագրված բողոքների քննությամբ արձանագրվել են դեպքեր, երբ համակարգի անկատարության և պետական մարմինների միջև համագործակցության բացակայության արդյունքում հնարավոր չի եղել նաև աջակցություն ցուցաբերել օրենքով ամրագրված միջոցների օգտագործմամբ: Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ընտանիքում բռնությունից տուժած անձանց կյանքի և առողջության պահպանմանն ուղղված պոզիտիվ պարտականություն ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական կանոնների ուժով: Ընդ որում, թե՛ ներպետական իրավական կարգավորումները և թե՛ միջազգային չափանիշներն ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն ապահովելու համար նախատեսում են բազմամասնագիտական աջակցության տրամադրման սկզբունքներ և բռնության ենթարկված անձանց պաշտպանության առաջնահերթության չափանիշներ:

Այսպես, Կոնվենցիայի (Հայաստանի կողմից ստորագրվել է 2018 թվականի հունվարի 18-ին, սակայն դեռ չի վավերացվել) 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարվող բռնության այն արարքները կանխելու, դրանց նկատմամբ քննություն իրականացնելու, պատասխանատվության ենթարկելու և հատուցում ապահովելու ուղղությամբ, որոնք մտնում են Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ:

Ավելին, Կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ բռնության ենթարկված անձի իրավունքները դիտարկվեն որպես բոլոր միջոցների կենտրոնում գտնվող և իրականացվեն բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, ինստիտուտների և կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով: Սույն հոդվածի ներքո ձեռնարկված բոլոր միջոցառումները պետք է ընդգրկեն բոլոր շահագրգիռ դերակատարներին, ինչպիսիք են՝ պետական, համապետական, տարածքային և տեղական մարմինները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Կոնվենցիայի 19-րդ հոդվածը սահմանում է, որ պետությունները պետք է ապահովեն օրենսդրական և անհրաժեշտ այլ միջոցները տուժողներին հասանելի աջակցության և իրավական պաշտպանության միջոցների մասին իրենց համար հասկանալի լեզվով ժամանակին պատշաճ տեղեկատվություն տրամադրելու համար:

«Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարականը<sup>527</sup> ճանաչում է այն, որ պետությունները պետք է ցուցաբերեն պատշաճ ջանասիրություն, որպեսզի կանխվի, քննություն իրականացվի և պատասխանատվություն կիրառվի բռնություն գործադրած անձանց նկատմամբ: Հանձնարարականի 3-րդ կետի համաձայն՝ պետությունները պետք է բռնության դեմ պայքարի քաղաքականություն մշակելիս հիմք ընդունեն բռնության ենթարկված անձանց անվտանգությունը: Հանձնարարականի 58-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է քաջալերեն բռնությունից տուժած անձանց պաշտպանության նախաձեռնող (pro-active) ծառայություններ, որոնց շնորհիվ բռնությունից տուժած անձանց հետ կապ կհաստատվի անմիջապես ոստիկանությանը դեպքի մասին հայտնի դառնալու պահից: Նույն կետի «ե» ենթակետը նախատեսում է նաև, որ անդամ պետությունները պետք է ապահովեն արդյունավետ համագործակցություն բոլոր իրավասու մարմինների միջև, ինչպիսիք են՝ ոստիկանությունը, դատարանները և բռնությունից տուժած անձանց պաշտպանության ծառայությունները, որպեսզի տուժողներին հնարավորություն ընձեռվի կիրառելու աջակցություն ստանալու համար անհրաժեշտ բոլոր հնարավոր իրավական և գործնական քայլերը:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով ամրագրվում են ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառնությունների շրջանակներում իրականացնող իրավասու պետական մարմինները, որոնց թվում է նաև ՀՀ ոստիկանությունը: Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են

<sup>527</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարական, հասանելի է [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805e2612](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ընտանիքում բռնության դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում են լիազոր մարմնի հետ<sup>528</sup>: Ստացվում է, որ նշյալ օրենքը ևս նախատեսում է բազմամասնագիտական աջակցության ցուցաբերում ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար:

Ըստ այդմ՝ Օրենքի 15-րդ հոդվածով ամրագրվում են ոստիկանության լիազորություններն ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում: Այդ գործառնությունները ենթադրում են թե՛ իրենց նկատմամբ ընտանիքում բռնություն կիրառված լինելու մասին հաղորդմամբ դիմած անձանց նրանց իրավունքների և հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորության վերաբերյալ պարզաբանման ներկայացում (Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), թե՛ օրենքով նախատեսված երեք պաշտպանական միջոցներից ոստիկանության կողմից կիրառման ենթակա երկու պաշտպանական միջոցների կիրառում (Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝ նախազգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը, որոնք կիրառվում են ՀՀ ոստիկանության կողմից, ինչպես նաև պաշտպանական որոշումը, որը կիրառվում է դատարանի որոշման հիման վրա): Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է երաշխիքներ առ այն, որ պաշտպանության միջոցները կիրառվում են՝ առաջնորդվելով սույն օրենքով սահմանված սկզբունքներով և ապահովելով միջամտության համաչափությունը: Դրանց կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելուն և քրեական հետապնդում իրականացնելուն: Այսինքն՝ սույն կարգավորումը թույլ է տալիս ենթադրել, որ անձի պաշտպանությունը կապված չէ քրեական հետապնդում իրականացնելու հետ և որպես առաջնային հարց է դիտարկվում բռնության ենթարկված անձի պաշտպանությունը:

Օրենքով նախատեսվում են ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար առկա նաև այլ միջոցներ: Այսպես՝ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառնությունների շրջանակներում իրականացնում են նաև ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները, որոնք են՝ աջակցության կենտրոնները և ապաստարանները: Ավելին, 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիազոր մարմինը հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում նաև նրանց համար մատչելի օգնություն:

Պաշտպանության համար առկա բոլոր մեխանիզմների կիրառման համար Օրենքով ամրագրվել են նաև այլ հստակ կարգավորումներ: Օրինակ՝ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանությունը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացնում ընտանիքում բռնության ենթարկվածներին ապաստարանում տեղավորելու մասին: Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկվածներն իրենց դիմումի դեպքում կարող

<sup>528</sup> Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ լիազոր մարմինն է սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմինը:

են ապաստարանում տեղավորվել, եթե առկա է բռնության կրկնման կամ շարունակման վտանգի վերաբերյալ հիմնավոր ենթադրություն:

Ըստ այդմ՝ Օրենքով նախատեսվում է ընտանիքում բռնության ենթարկված անձի պաշտպանության համակարգ, որը կարող է արդյունավետ գործել բացառապես դրանց փաստացի գործարկման (օրինակ՝ ապաստարանների և աջակցության կենտրոնների հիմնադրման), ինչպես նաև իրավասու մարմինների միջև համագործակցության գործուն մեխանիզմների նախատեսման պարագայում: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ պետական աջակցությունը կազմակերպելը հնարավոր չէ, այն պետք է իրականացվի նաև ոլորտում մասնագիտացված և ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ, որի հնարավորությունը նախատեսում է նաև Օրենքը: Այսպես, Օրենքի 2-րդ հոդվածով ամրագրվում են ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքները, որոնցից է համագործակցությունը պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության սկզբունքներով:

Օրենքն ամրագրում է պաշտպանության կարիք ունեցող անձանց պաշտպանության գործիքակազմ, որի շրջանակներում գործիքներից մեկի բացակայությունը կամ առկա գործիքի չկիրառումը խարխլում է բռնության ենթարկված անձանց պաշտպանության համակարգը՝ վտանգելով անձի կյանքը և առողջությունը:

2019 թվականի ընթացքում այլ իրավասու պետական մարմինների հետ տեղեկատվության փոխանակման, բռնության դեմքերին արձագանքելիս բազմամասնագիտական աջակցության տրամադրման ապահովման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ ՀՀ դատախազության տվյալների համաձայն՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչը, ընդգրկված լինելով Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի կազմում, մասնակցել է խորհրդի նիստերին, որի ընթացքում քննարկվել են բռնության դեմքերին արձագանքելիս բազմամասնագիտական աջակցության տրամադրման ապահովման հետ կապված հարցեր:

2019 թվականին ընդունվել է «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որի հիման վրա հնարավոր կլինի ապահովել ընտանիքում բռնության դեպքերի կապակցությամբ իրավասու տարբեր մարմինների կողմից հնարավորինս ամբողջական տեղեկատվության հավաքագրումը:

Ոստիկանության պարզաբանման համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում իրականացվող աշխատանքների շրջանակներում ՀՀ ոստիկանությունը համագործակցել է ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտում գործառույթներ իրականացնող պետական շահագրգիռ կառույցների հետ: Ընտանիքում բռնության ենթարկված անձանց համապատասխան աջակցություն տրամադրելու նպատակով համագործակցել է մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական աջակցության տարածքային մարմինների, ընտանիքում բռնության դեպքերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

2019 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության նախաձեռնությամբ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ փոխհամագործակցության շրջանակներում, իրականացվել են փորձագիտական խմբի այցելություններ ՀՀ մարզեր, որի ընթացքում վերը թվարկված մարմինների աշխատակիցներին ներկայացվել են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքից բխող իրավասու

մարմինների գործառույթները և քննարկվել ու պարզաբանվել են հետագա միջգերատեսչական փոխհամագործակցության վերաբերյալ հարցեր:

Ձեռնարկված միջոցառումների հաշվառմամբ՝ այդուհանդերձ, հարկ է ընդգծել, որ 2019 թվականին համակարգային այս խնդիրը շարունակվել է չլուծված մնալ, քանի որ հարցի շուրջ բացակայում է իրավասու գերատեսչությունների կողմից համակարգված ձեռնարկումների իրականացումը: Իրականացված քայլերը կրում են էպիզոդիկ բնույթ և չեն իրականացվում համակարգված կերպով: Խնդիրների ուսումնասիրությամբ՝ պետք է նշել, որ ընդհանուր առմամբ ընտանիքում բռնության դեմ պայքարի և դրանից տուժած անձանց բազմամասնագիտական պայքարի համակարգը կայացած չէ, ինչի պատճառով դեռևս 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում:

Այլ իրավասու պետական մարմինների հետ տեղեկատվության փոխանակման, բռնության դեպքերին արձագանքելիս բազմամասնագիտական աջակցության տրամադրման ապահովման նպատակով քայլերի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնել են, որ 2019 թվականի ընթացքում Առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի N 3177-Ա հրամանով հաստատված «Ընտանիքում բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց վերաբերյալ տեղեկության գրանցման և հաղորդման կարգ»-ի համաձայն, բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց վերաբերյալ տեղեկությունը պետք է գրանցվի և հաղորդվի ոստիկանությանը, քննչական կոմիտեին կամ դատախազությանը, ինչպես նաև Առողջապահության նախարարությանը:

Բացի այդ, 2019 թվականին ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթների իրականացման համար առողջապահական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստում կամ կարողությունների զարգացման համար նյութերի պատրաստման հարցին ի պատասխան՝ Առողջապահության նախարարությունից տվյալներ են ստացվել, որ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթների իրականացման համար բուժաշխատողների վերապատրաստում կամ կարողությունների զարգացման համար նյութերի պատրաստման աշխատանքներ նախատեսվում են 2020 թվականի ընթացքում:

Խնդիրն այն է, որ բացակայում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ընտանեկան բռնության երևույթի բազմաչափ խնդիրներն արդյունավետ հասցեագրելու համար նախատեսվում է 2020 թվականին մշակել և մինչև տարեվերջ ընդունել ընտանիքում բռնության դեմ պայքարի վերաբերյալ ռազմավարություն և գործողությունների ծրագիր:

2019 թվականին մշակվել և ընդունվել է ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1334-Լ որոշումը, սակայն վերջինս չի ներառում ընտանիքում բռնության հիմնախնդիրները, այն նպատակով, որ ընտանիքում բռնության դեմ և դրա կանխարգելման հիմնախնդիրները հասցեագրվեն առանձին ռազմավարությամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ ընտանիքում բռնության երևույթի բազմաչափ խնդիրներն արդյունավետ հասցեագրելու համար նախատեսվում է 2020 թվականին մշակել և մինչև տարեվերջ ընդունել ընտանիքում բռնության դեմ պայքարի վերաբերյալ ռազմավարություն և գործողությունների ծրագիր:

Ընտանիքում բռնության ոլորտում անհրաժեշտ է առավել համապարփակ քաղաքականության մշակում, որի արդյունքում կներդրվի բազմամասնագիտական աջակցություն տրամադրելու ինստիտուտը: Վերջինս հնարավոր է ապահովել առանձին գործողությունների ծրագրի սահմանման միջոցով:

#### 1.4 Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն

Հայաստանում, ինչպես նախորդ տարիներին, 2019 թվականին շարունակել է խնդրահարույց մնալ ընտանեկան բռնության վիճակագրական ճշգրիտ համակարգված տվյալների բացակայությունը: Բռնության այս տեսակի վերաբերյալ առկա տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշներն ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրավիճակի իրական պատկերը, քանի որ դեռևս Հայաստանում ընտանիքում բռնության դեպքերի միասնական վիճակագրություն չի վարվում: Այս մասին տարիներ շարունակ բարձրաձայնել է Պաշտպանը, պետական իրավասու մարմինները, ինչպես նաև հասարակական և միջազգային կազմակերպությունները<sup>529</sup>:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի<sup>530</sup> 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում:

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ օրենքի ընդունումից հետո՝ 2017 թվականից ի վեր միասնական վիճակագրություն ևս չի իրականացվել, քանի որ այդ ընթացքում Կառավարության համապատասխան որոշումը չէր ընդունվել: Միայն 2019 թվականի հոկտեմբերին ընդունվեց ՀՀ կառավարության «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշումը, սակայն դեռևս գործնական կիրառություն չի ստացել, այսինքն՝ լիազոր մարմինը դեռ չի ամփոփել և ներկայացրել միասնական վիճակագրական տվյալները:

Որոշման համաձայն՝ լիազոր մարմինը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, յուրաքանչյուր կիսամյակ ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ հավաքագրած տեղեկությունները ստանալուց և ամփոփելուց հետո պաշտոնական կայքում հրապարակելու է սահմանված ժամանակահատվածի (տեղեկատվությունը հրապարակվում է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ) վիճակագրական հաշվետվությունը: Ըստ նախարարության տվյալների՝ առաջին համապարփակ վիճակագրությունը կհրապարակվի 2020 թվականի ապրիլին:

Բացի այդ, ընտանիքում բռնությունը հայտնի է որպես լատենտային բնույթ ունեցող բռնության տեսակ, ինչը նշանակում է, որ բռնության այս տեսակի վերաբերյալ տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշներն ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրավիճակի իրական պատկերը: Վիճակագրական ճշգրտության վրա ազդում են նաև այլ գործոններ, որոնցից են, օրինակ, հասարակական այն ընկալումը, թե նման դեպքերը մասնավոր բնույթ ունեն, ինչի մասին բարձրաձայնելն ամոթալի է: Ուստի, հասարակության

<sup>529</sup> Այս մասին նշվել է նաև «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» ՄԱԿ-ի կոմիտեի կողմից, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 37:

<sup>530</sup> Սույն բաժնում այսուհետ՝ Օրենք:

շատ անդամներ խուսափում են բռնության՝ իրենց հայտնի դեպքերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց:

Այնուամենայնիվ, առկա վիճակագրական տվյալները թույլ են տալիս փաստել երևույթի առկայության մասին: Իրավասու մարմինների կողմից տրամադրված տվյալները վկայում են, որ ընտանիքում բռնությունն անհամամասնորեն ազդում է հատկապես կանանց վրա:

Այսպես, ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում քննվել է ընտանիքում բռնության 485 դեպք, որից՝ կենակցի կողմից՝ 2, ամուսնու կողմից կնոջ նկատմամբ՝ 329, կնոջ կողմից ամուսնու նկատմամբ՝ 10, ծնողի կողմից գավակի նկատմամբ՝ 41, գավակի կողմից ծնողի նկատմամբ՝ 53, ընտանիքի այլ անդամների կողմից՝ 50 դեպք: 2019 թվականի ընթացքում քննված՝ ընտանիքում բռնության 485 դեպքից 469-ը ֆիզիկական, 14-ը հոգեբանական, 2-ը տնտեսական բռնության դեպքեր են, իսկ ըստ տարիքի՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց հաշվառում չի իրականացվում: Նշված 485 դեպքերից քրեական գործեր են հարուցվել 126 դեպքով, 359 դեպքով քրեական գործի հարուցումը մերժվել է, որից 353-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով (սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը), 3-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով (անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար), 2-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով (դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում:), 1-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով (ընդունվել է համաներման մասին օրենք): 126 դեպքով հարուցված քրեական գործերից կարճվել են 93-ը, իսկ 33-ն ուղարկվել է դատարան:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանությունում ստացված ընտանիքում բռնության վերաբերյալ 796 ահազանգով կայացվել են նախազգուշացումներ, իսկ 260-ով՝ անհետաձգելի միջամտության որոշումներ:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում հարուցվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 418 քրեական գործ: ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 635 քրեական գործ: 2019 թվականի ընթացքում ավարտվել է ընտանեկան բռնության վերաբերյալ 468 քրեական գործի վարույթ, այդ թվում՝ 326-ի վերաբերյալ վարույթը կարճվել է, որից 129-ը՝ արդարացման հիմքով, 197-ը՝ ոչ արդարացման հիմքով, 128-ն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ, 14-ը՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու մասին որոշմամբ, կասեցվել է 33 քրեական գործի վարույթ, որից 18-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 15-ը՝ այլ հիմքով:

Ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում ընտանիքում բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 458 քրեական գործ:

Նշված քրեական գործերից 108-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, 6-ը դատարան են ուղարկվել բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ: Նշված քրեական գործերից 269-ով վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել կամ քրեական հետապնդում չի իրականացվել, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ 3-ը, 2-րդ կետով՝ 94-ը, 4-րդ կետով՝ 62-ը, 5-րդ կետով՝ 104-ը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված կարգով՝ 6-ը: Նշված քրեական գործերից 14-ով

վարույթը կասեցվել է, որից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով՝ 5-ը, 2-րդ կետով՝ 9-ը:

Քրեական գործերի քննության վերը նշված պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ.

1. քրեական գործերի գերակշռող մեծամասնությունը ֆիզիկական բնության դրսևորումներին են վերաբերում. 2019 թվականի ընթացքում դրանք կազմել են ընտանեկան բնության դեպքերի շուրջ 96%-ը: Սա պայմանավորված է ինչպես հասարակական որոշակի ընկալումներով, որ ֆիզիկական բնության դեպքում է, որ թերևս կարելի է արդարացնել տուժողի՝ իրավապահ մարմինների աջակցությանը դիմելու վարքագիծը, այնպես էլ ընտանեկան բնության այլ տեսակների դեպքում քրեաիրավական համարժեք արձագանք ապահովող օրենսդրական հիմքերի բացակայությամբ,

2. բավական մեծ է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների տեսակարար կշիռը՝ ներկայացված հաղորդումների ընդհանուր քանակի հաշվառմամբ: Այսպես, 2019 թվականի ընթացքում 359 դեպքով ընթացք չի տրվել, ինչը կազմում է ընդհանուր դեպքերի շուրջ 74%-ը,

3. ավելին, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները շուրջ 98% դեպքերում կայացվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, այն է՝ (սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը),

4. 2019 թվականի ընթացքում ավարտված 468 վարույթների շուրջ 69%-ը կարճվել է, իսկ կարճված գործերի շուրջ 60%-ը իրենց հերթին՝ ոչ արդարացման հիմքով,

Բացի դրանից, հարկ է նկատել, որ ընտանեկան բնության գործերով քրեական վարույթների ընթացքին վերաբերող քանակական այս տվյալներն ինքնին չեն բացահայտում ընտանեկան բնություն երևույթի պատճառներն ու նպաստող պայմանները, դրա սոցիալ-հոգեբանական ասպեկտները, դրսևորման օրինաչափ եղանակները: Ասվածը վկայում է միասնական և համապարփակ վիճակագրության վարման անհրաժեշտության մասին, որը ոչ միայն կներառի ոլորտում պետական մարմինների գործունեության քանակական կողմը, այլև հնարավորություն կտա նախանշելու ընտանեկան բնության երևույթի ընդհանուր և հատուկ կանխարգելման ուղղված միջոցառումները:

1.5 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական պատրաստվածություն և իրազեկման պակաս

2019 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ իրավասու մարմինների կողմից ընտանիքում բնությունից տուժած անձանց, հատկապես՝ կանանց բավարար աջակցություն տրամադրման բացակայության խնդրի շուրջ: Խնդիրն այն է, որ կարծրատիպեր առկա են նաև տարբեր իրավասու մարմինների ներկայացուցիչների շրջանում, որը խոչընդոտ է պաշտպանություն տրամադրելուն: Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականին մի շարք բողոքներ է ստացել իրավասու մարմին ներկայացրած բողոքների կապակցությամբ միջոցներ չձեռնարկելու վերաբերյալ: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքի շուրջ նախաձեռնված քննարկման շրջանակում պարզվել է, որ քաղաքացու կողմից ներկայացրած հաղորդման հիման վրա Ոստիկանության ծառայողների կողմից չեն ձեռնարկվել պատշաճ գործողություններ, մասնավորապես, չի կայացվել Օրենքով նախատեսված որոշումներից մեկը:

Նման խնդիրները հիմնականում առաջ են գալիս իրավասու մարմինների ներկայացուցիչների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածության,



մասնավորապես՝ ընտանիքում բռնության դեպքերի շուրջ առանձին կարողություններ դրսևորելու հմտությունների բացակայության հետևանքով: Նշված պրակտիկան բռնությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ընտանեկան բռնության դեպքերի հետագա կանխարգելման տեսանկյունից խնդրահարույց է:

Ընտանեկան բռնության դեպքերի նման մոտեցումը, ըստ էության, իրավունքների կրկնակի խախտման է հանգեցնում այն առումով, որ փաստացի սահմանափակում է բռնության ենթարկված անձանց՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը, ինչն էլ իր հերթին բերում է խախտված իրավունքների վերականգնման դժվարությունների:

Բացի այդ դատական համակարգում առկա կարծրատիպերը ևս խնդրահարույց են, որի մասին բարձրաձայնում են նաև տարբեր հասարակական կազմակերպություններ: Ըստ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի դիտարկումների՝ դատական պրակտիկան ցույց է տալիս, որ ընտանիքում բռնության գործեր քննելիս՝ դատարանները շատ հաճախ հաշվի չեն առնում հանցագործության նախապատմությունը, ամբաստանյալի գործած հանցանքի շարժառիթը, հասարակության համար վտանգավորության աստիճանը: Հակառակ՝ ընտանիքում բռնության և կնասպանության գործերի մեծ մասով դատարանները պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատաքննությամբ առհասարակ չեն հայտնաբերում<sup>531</sup>:

Ըստ իրավասու մարմինների տրամադրած տեղեկությունների՝ 2019 թվականի ընթացքում իրականացվել են ոլորտի պատասխանատուների վերապատրաստումներ: Այսպես, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2019 թվականի մայիսի 27-ին կազմակերպվել է ազգային համաժողով՝ նվիրված ընտանեկան բռնության կանխարգելմանն ու աջակցությանը: Պարբերաբար կազմակերպվել են ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն ցուցաբերող կենտրոնների աշխատակիցների վերապատրաստումներ՝ մի քանի փուլերից՝ զարգացնելով վերջիններիս կարողություններն ու հմտությունները՝ շահառուներին առավել որակյալ ու արդյունավետ ծառայության տրամադրման համար: Իրականացվել են վերապատրաստումներ նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գծի, Արտակարգ իրավիճակների նախարարության 911 թեժ գծի աշխատակիցների համար:

Ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, անհրաժեշտ գիտելիքներ, առաջավոր փորձի կիրառման, գործնական հմտություններ և ունակություններ ձեռք բերելու նպատակով ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքների ծառայողների համար կազմակերպվել և անց են կացվել վերապատրաստման դասընթացներ: Բացի այդ, ոստիկանության այլ ծառայությունների ծառայողներ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կազմակերպվող վերապատրաստման դասընթացների ընթացքում առանձին թեմայով իրազեկվել են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի և դրանով ՀՀ ոստիկանությանը վերապահված լիազորությունների մասին: Վերապատրաստման դասընթացներ կազմակերպվել և անց են կացվել նաև միջազգային փորձագետների և հոգեբանների կողմից՝ Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի և

<sup>531</sup> Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվել է նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառման դեպքեր, որի հիմքով էլ խախտվել է տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը, հասանելի է <http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321> հղումով, էջեր 4-5, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ, ինչպես նաև ընտանիքում բռնության դեպքերի հետ աշխատող հասարակական կազմակերպությունների կողմից:

Ընդհանուր առմամբ վերապատրաստվել են ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժնի, բաժանմունքների (խմբերի) բոլոր ծառայողները (թվով 306 ծառայող): Վերապատրաստման դասընթացների ընթացքում Ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները ձեռք են բերել անհրաժեշտ և կիրառելի գործիքակազմ՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ աշխատելու համար:

Սակայն Պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ քրեական հետապնդման տարբեր փուլերում տուժողակենտրոն, կրկնակի զոհականացման խնդիրները շարունակվում են, մասնավորապես, բողոքը հետ վերցնելու կամ չբողոքելուն համոզելու դեպքերը, հաշտեցման փորձերը, բարոյախրատական միջամտությունը:

Որպես ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում պետական ռազմավարության, դրանից բխող ծրագրերի, օրենսդրական բարեփոխումների, հանրության իրազեկման միջոցառումների և այլ հարցերով պետական մեխանիզմ՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ձևավորվել է ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ, Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1685-Ս որոշմամբ, այնուհետև լրամշակվել և ընդունվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 3-ի N 1110-Ս որոշմամբ: Ըստ 2019 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2019 թվականի ընթացքում գումարվել է 2 նիստ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ այն համապատասխանեցնելով կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին, մասնավորապես նախատեսելով պատասխանատվության միջոցներ կանանց նկատմամբ և ընտանիքում բռնություն համարվող բոլոր արարքների համար,

2. փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ բացառելով տուժողի հակաբարոյական արարքը՝ որպես պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկելը,

3. փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասում՝ այն համապատասխանեցնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած չափանիշներին,

4. փոփոխություններ կատարել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում՝ վերացնելով բացերը և խնդրահարույց դրույթները,

5. սեղմ ժամկետներում ապահովել հանրապետության ամբողջ տարածքում բազմամասնագիտական աջակցության տրամադրման գործուն մեխանիզմի՝ աջակցության կենտրոնների, հիմնադրումը՝ երաշխավորելով ծառայությունների անխափան մատուցման համար բոլոր անհրաժեշտ միջոցները,

6. հնարավորինս սեղմ ժամկետում ընդունել ապաստարան հիմնադրելու հավաստագրի տրամադրման կարգը սահմանող կառավարության որոշումը,

7. կազմակերպել համապատասխան մասնագետների (քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ բռնության վերացման և դրա դեմ պայքարի ու կանխարգելման ՀՀ օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք նաև ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացմանը,

8. բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ,

9. մշակել և իրականացնել իրազեկման բարձրացման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության կանխարգելմանը,

10. մշակել և ընդունել պետական ռազմավարություն և դրան կից գործողությունների ծրագիր ընտանիքում բռնության կանխարգելման, դրա դեմ պայքարի և բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար:

## 2. Թրաֆիքինգ և շահագործում

Կանանց նկատմամբ բռնության ձևերից է թրաֆիքինգը կամ շահագործումը: Դրա պատճառները կարող են լինել շատ տարբեր, սակայն պետք է նշել, որ տնտեսական կայունության բացակայությունը, հաճախ տնտեսապես մեկ այլ անձից կախյալ լինելու հանգամանքը կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրները գործոններ են, որոնք բռնության այս տեսակի համար կանանց առավել խոցելի են դարձնում: Կանայք, և ոչ միայն, ապրուստի միջոց փնտրելիս առավել հաճախ կարող են ենթարկվել սեռական շահագործման, հարկադիր աշխատանքների կատարման կամ թրաֆիքինգի այլ տեսակների: Կանայք խոցելի են նաև թրաֆիքինգի և շահագործման բռնության այս տեսակի ենթարկման դեպքերում:

Չնայած իրականացված աշխատանքներին՝ սակայն դեռևս առկա է թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշները չբավարարելու խնդիրը, ինչի արդյունքում Հայաստանը մնացել է 2-րդ խմբի երկրների շարքում՝ համաձայն ԱՄՆ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին Հայաստանի վերաբերյալ 2019 թվականի զեկույցի<sup>532</sup>: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ներգրավված են ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով խորհրդում և խորհրդին կից աշխատանքային խմբում:

Խնդրի առնչությամբ հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանը ձեռնամուխ է եղել հանրապետության տարբեր մարզերում մարդկանց իրավունքների պաշտպանության և պահպանության վերաբերյալ իրազեկման բարձրացման արշավի իրականացման ծրագրի, որի ընթացքում այլ խնդիրների քննարկման հետ զուգընթաց նաև քննարկվում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ խնդիրները և դրա դեմ պայքարի համար ընդունված ներպետական օրենսդրությունն, ինչպես նաև միջազգային չափանիշները:

Բռնության այս տեսակը կարող է գործոններով պայմանավորված լինել, սակայն պետք է նշել, որ կանանց տնտեսական կայունության բացակայությունը, հաճախ տնտեսապես մեկ այլ անձից կախյալ լինելու հանգամանքը կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրները նպաստում են բռնության այս տեսակի հնարավոր դեպքերի վրա: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումներից է նաև կանանց տնտեսական զարգացումը և դրան ուղղված քայլերի իրականացումը, հատկապես գյուղական բնակավայրերում:

<sup>532</sup> ԱՄՆ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին Հայաստանի վերաբերյալ 2019 թվականի զեկույց, հասանելի է <https://www.state.gov/reports/2019-trafficking-in-persons-report-2/armenia/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Այդ նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պարբերաբար կազմակերպում է տեղեկացվածության բարձրացմանն ուղղված արշավներ և քննարկումներ: Դրանց շրջանակում ճանաչողական այցով Պաշտպանի աշխատակազմ են այցելել նաև Երևանի և ՀՀ մարզերի մի շարք ուսումնական հաստատություններից կամ երեխաների խնամք իրականացնող կենտրոններից: Այցերի ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների պահպանության ու պաշտպանությանն ուղղված հարցեր, որոնց ընթացքում ներկայացվել են նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ հարցեր: Այցերը կրում են շարունակական բնույթ և իրականացվել են թե՛ նախորդ տարիներին, թե՛ 2019 թվականի ընթացքում:

Ուստի, անհրաժեշտ է շարունակել իրազեկման արշավները մարդկանց թրաֆիքինգի և շահագործման երևույթի, դրանից զերծ մնալու ուղիների և այդ դեպքերում առկա պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:

### 3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ

Համակարգային առումով դեռևս լուծված չէ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը: Վերջին տարիներին խնդրի դեմ պայքարի նպատակով ձեռնարկված չափազանց կարևոր քայլերը և համալիր ջանքերը դրական տեղաշարժի են նպաստել՝ նպաստելով նորածինների սեռերի հարաբերակցության գործակցի բարելավում: Սակայն խնդիրը դեռ շարունակվում է արդիական մնալ: Խնդիրն այն է, որ նախապատվություն է տրվում տղա երեխաներին, ինչի պատճառով հղիությունն ընդհատվում է, երբ պարզվում է երեխայի սեռը: Այս երևույթը կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է, ինչի պատճառ են ինչպես հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումները (օրինակ՝ արու զավակ ունենալու նախապատվությունը), այնպես էլ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումները: Ավելին, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ հաճախ կնոջն են մեղադրում տղա երեխա չունենալու համար: Դեռևս մինչ հղիությունը, հղիության ողջ ընթացքում, ծննդաբերությունից հետո և հատկապես միայն աղջիկ երեխաներ ունեցող կանայք մշտապես քննադատվում են<sup>533</sup>: Առկա է նաև կարծիք, որ կանայք ևս շատ են ձգտում անպայման տղա ունենալ, քանի որ դա իրական հնարավորություն է ընտանիքում դիրքավորվելու, կարգավիճակն ամրապնդելու և ապագայի համար կայունության երաշխիք ունենալու: Ընտանիքներում երիտասարդ կանանց ավելի ստորադասված և ենթակա դիրքով պայմանավորված «տղա ունեցավ, ոտքը տեղ բռնեց» արտահայտության արժեքը նկատվում է նաև մեր օրերում<sup>534</sup>:

Տարբեր մարզերում տեղի ունեցած քննարկումների ժամանակ Մարդու իրավունքների պաշտպանին և ներկայացուցիչներին ներկայացվել են տվյալներ առ այն, որ շատ հաճախ կանայք իրենք չեն կայացնում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման որոշում: Նրանք այդ քայլին դիմում են ընտանիքի անդամների կողմից սպառնալիքների և հարկադրանքի ներքո:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ մի շարք միջազգային կազմակերպություններ կոչ են արել հրատապ միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ<sup>535</sup>: Հայաստանում

<sup>533</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 10, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>534</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 10, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>535</sup> 1995 թվականին Պեկինում անցկացված «Կանանց մասին» 4-րդ համաշխարհային գիտաժողովի ժամանակ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը նկարագրվել է որպես կանանց դեմ բռնության

կանանց և տղամարդկանց սեռերի հարաբերակցության նորմայից շեղումը սկսել է նկատվել դեռևս 1991 թվականից, իսկ 2000 թվականին այն հասել է մինչև 120 տղա - 100 աղջիկ հարաբերակցության այն դեպքում, երբ նման հարաբերակցության համար սահմանված նորման կազմում է 102-103 տղա - 100 աղջիկ հարաբերակցությունը<sup>536</sup>:

2017 թվականի տվյալները վկայում են դրական տեղաշարժի մասին: Այսպես՝ նորածինների սեռերի հարաբերակցության գործակիցը 2015 թվականին եղել է 1.13, իսկ արդեն 2017 թվականին դարձել է 1.10<sup>537</sup>: Սակայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019 թվականի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ 2018 թվականին նորածինների սեռերի հարաբերակցության գործակիցը բացասական հետընթաց է ունեցել՝ դառնալով 1.11<sup>538</sup>:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2008-2012 թվականներին նորածինների սեռերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 100-115, 2014 թվականին՝ 100-113,4, 2015 թվականին՝ 100-112,7, 2016 թվականին՝ 100-111,9, 2017 թվականին՝ 100-109,8, 2018 թվականին՝ 100-111, 2019 թվականի 9 ամսում՝ 100-110:

Այս տվյալները վկայում են խնդրի առկայության մասին: Ավելին, խնդիրը, հատկապես ընդգծվում է երրորդ երեխայի դեպքում: Ըստ տվյալների, որոնք ներկայացնում են սեռերի հարաբերակցության գործակիցն, ըստ ծննդի կարգի՝ առաջին երեխայի դեպքում գործակիցը 1.04 է, երկրորդի դեպքում՝ 1.05, իսկ երրորդի դեպքում՝ 1.40<sup>539</sup>: ՀՀ վիճակագրական ծառայության՝ սեռի հարաբերակցության գործակիցների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, դրական տեղաշարժ կա առաջին երեխայի դեպքում, իսկ հաջորդ երեխաների դեպքում հարաբերակցության գործակիցների բացասական միտում կա: Նախորդ տարվա ցուցիչներն են՝ առաջին երեխայի դեպքում՝ 1.07, երկրորդ երեխայի դեպքում՝ 1.03, երրորդ երեխայի դեպքում՝ 1.30-ը<sup>540</sup>:

Խնդրի իրական պատկերը վեր հանելու նպատակով մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել հասարակական կազմակերպությունների կողմից: Այսպես, 2017 թվականին հրապարակված հետազոտություններից մեկի շրջանակներում պարզվել է նաև, որ Հայաստանի բոլոր մարզերում հստակ արտահայտված է տղա առաջնեկ ունենալու նախապատվությունը: Նման նախապատվությունն առավել արտահայտված է Վայոց ձորի, Արարատի, Շիրակի և Լոռու մարզերում, մինչդեռ, Երևանի և Սյունիքի կանանց

---

դրստորում: Երեք տարի անց ՄԱԿ-ի Գլխավոր գազաթաժողովում «Աղջիկ երեխաների մասին» բանաձևը հավանության արժանացավ և Պետություններին կոչ արվեց «ընդունել և կիրառել օրենսդրություն»: Դեռևս 2011 թվականի ԵՄԽԿ-ի թիվ 1829 հանձնարարականով Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները [http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7\\_28](http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28), 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>536</sup> Տե՛ս [http://unfpa.am/sites/default/files/Sex-selective\\_abortions\\_report\\_Arm.pdf](http://unfpa.am/sites/default/files/Sex-selective_abortions_report_Arm.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>537</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2018\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2018_3.pdf) հղումով, էջ 72, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>538</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2019\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2019_3.pdf) հղումով, էջ 72, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>539</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2019\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2019_3.pdf) հղումով, էջ 72, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>540</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2018\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2018_3.pdf) հղումով, էջ 72, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 61.6% և 62.4%) առաջին հղիության ժամանակ առաջնեկի սեռը չի կարևորել<sup>541</sup>:

Ըստ հետազոտությունների՝ սեռով պայմանավորված հղիության ընդհատման երկու մեխանիզմ է կիրառվում՝ սեփական ուժերով և բժշկական աբորտ: Որոշ հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ հատկապես մարզերում որոշ բուժաշխատողներ ևս ներգրավված են տղա երեխայի ընտրության հաշվարկներում<sup>542</sup>: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռի ընտրության վերջին փուլը հղիության արհեստական ընդհատումն է այն պարագայում, երբ երեխան աղջիկ է<sup>543</sup>:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքը, համաձայն որի՝ բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է: ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1116-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 180-Ն որոշումը սահմանում է հղիության արհեստական ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումները, ինչպես նաև աբորտների իրականացման կարգը և պայմանները:

Մինևույն ժամանակ պետք է նշել, որ խնդրի բացառապես օրենսդրական ճանապարհով կարգավորումը չի կարող ապահովել ակնկալվող արդյունքները և խնդիր լուծման համար պետք է համալիր միջոցառումներ պետք է իրականացվեն և երևույթի դեմ պայքարը պետք է ուղղված լինի առավելապես դրա խորքային պատճառների վերացմանը: Խնդրի մշտադիտարկման շուրջ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդիրը կարող է լատենտային բնույթ ստանալ, ինչպես նաև մասնագետները նշում են, որ արդեն հնարավոր է պտղի սեռը որոշել առավել վաղ ժամկետներում՝ հաշվի առնելով բժշկական տեխնոլոգիաների հարաճուն զարգացումը<sup>544</sup>:

ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում չեն արձանագրվել դեպքեր, երբ հղիության 12-րդ շաբաթը լրանալուց հետո հղիության արհեստական ընդհատում իրականացնելու նպատակով, բուժաշխատողի կողմից բժշկասոցիալական ցուցումները դիտավորյալ կեղծվել են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորաբար մարզային փոքր բժշկական կենտրոններում սեռով պայմանավորված աբորտներ չեն իրականացվում, մասնակիցների կարծիքներով տեղական բժշկական այն կենտրոններում, որտեղ հնարավոր է աբորտ իրականացնել, այն իրականացնում են գաղտնի, առանց գրանցման, երեկոյան ժամերին կամ

<sup>541</sup> Տե՛ս Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույց, <https://ichd.org/?laid=2&com=module&module=menu&id=8>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>542</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով, էջ 27, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>543</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով, էջ 36, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>544</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «ՀՀ-ում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման զեկույցը» կետ 68, հասանելի է <https://cutt.ly/qtlovQM> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ոչ աշխատանքային օրերին: Առավել տարածված է դիմել բժշկի աջակցությանն ավելի մեծ քաղաքներում և հատկապես Երևանում<sup>545</sup>:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրին լուծում տալու համար միջոցառում է նախատեսվել նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» № 483-Ն որոշմամբ:

2019 թվականին շարունակվել են նաև պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների թվի նվազեցմանն ուղղված աշխատանքները: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ՝ «Տղաների նախընտրության և աղջիկների թերարժևորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում Սյունիքի և Կոտայքի մարզերի մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների մանկաբարձ-գինեկոլոգների և սոնոգրաֆիստների համար կազմակերպել են 1-օրյա դասընթացներ:

Չնայած վերոնշյալ քայլերին՝ խնդիրը համակարգային առումով դեռևս լուծված չէ: Հաշվի առնելով, որ խնդիրը կրում է համակարգային բնույթ՝ խնդրի լուծումը բացառապես բուժաշխատողների և պացիենտների հետ տարվող աշխատանքներով չի կարող սահմանափակվել: Անհրաժեշտ է այն կանխարգելել շարունակական բնույթ կրող միջոցառումների իրականացման միջոցով՝ կանանց կարողությունների զարգացման, որոշումների կայացման ազատության և այլ իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև բուժաշխատողների նկատմամբ վերահսկողության ուժեղացման միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. զանգվածային լրատվության միջոցներով, կրթական ծրագրերում համապատասխան ուղղություններ ներառելով, ինչպես նաև այլ միջոցներով՝ ընդգծել կնոջ՝ որպես որոշում կայացնողի, հասարակության լիիրավ անդամի,
2. ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մշակել և կիրառել պարտադիր բնույթ կրող մեխանիզմներ՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցիչների պահպանումը:

#### 4. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին

Հասարակական և քաղաքական կյանքում կանանց ներգրավվածության հարցը համակարգային առումով շարունակվում է խնդրահարույց մնալ նաև 2019 թվականին, որի մասին տարիներ շարունակ բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում, ինչպես նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից: Քաղաքական, ընդհանուր առմամբ հասարակական կյանքին կանանց ներգրավվածությունը շարունակաբար ցածր է մնում՝ չնայած առկա ուսումնասիրությունների համաձայն, Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց<sup>546</sup>:

Կանանց դերի, կարողությունների և հասարակական կյանքում նրանց ներգրավվածության շուրջ առկա կարծրատիպերը և այլ երկրորդական գործոններ մեծապես

<sup>545</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով, էջ 39, 2020 թվականի մարտի 10-ի դրությամբ:

<sup>546</sup> Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, հասանելի է [http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



ազդում են հասարակական կյանքում կանանց ակտիվության վրա: Նրանք հաճախ չեն դիտարկվում որպես որոշում կայացնողներ, քաղաքականություն մշակողներ ու իրականացնողներ: Կանանց դերի շուրջ հասարակության տարբեր շրջանակներում առկա այս պատկերացումները խոչընդոտներ են դառնում հասարակական և քաղաքական գործընթացներում կանանց մասնակցության հարցում:

Կնոջը քաղաքական կամ ցանկացած այլ քննարկման շրջանակում վիրավորելը՝ առավել ևս նրա սեռը թիրախավորելով ու դա այնպես անելը, որ վիրավորանք հասցվի նրա անձնական կամ ընտանեկան կյանքին, բացարձակ մերժելի երևույթ է<sup>547</sup>: Հարկ է կրկին արձանագրել, որ նման թիրախավորումը խիստ մերժելի է, առավել ևս եթե հարցը վերաբերում էրեխաների՝ անկախ նրանից խոսքը պաշտոնյայի ընտանիքի մասին է, թե ոչ<sup>548</sup>: Առավել անընդունելի է, երբ դա արվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից, ով անմիջական պատասխանատվություն ունի պայքարելու կարծրատիպերի դեմ ու խրախուսելու կանանց դերը որոշումների կայացման գործում: Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականի ընթացքում արձանագրել է նաև ՀՀ վարչապետի դստեր նկատմամբ վիրավորանքներ ու ատելության խոսքի դրսևորումներ:

Արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքի վտանգավոր հետևանքների մասին բազմիցս բարձրաձայնվել է 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի տարբեր հայտարարություններում: Նման երևույթները բացարձակ անթույլատրելի են, առավել ևս որ մեր դիտարկմամբ՝ հաճախ դա արվում է այնպես, որ վիրավորանք հասցվի Վարչապետի դստերը՝ թիրախավորելով նրա սեռը և տարիքը: Նման երևույթները խաթարում են իրավական ու բարոյական բոլոր արժեքները և վտանգում են համերաշխությունը հասարակությունում:

2019 թվականի ընթացքում դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ մարդու արժանապատվությունը վիրավորելը, նսեմացնելը չափազանց վտանգավոր չափերի են հասել: Մասնավոր կամ ընտանեկան կյանքը թիրախավորելը սկզբունքորեն է անթույլատրելի՝ առանց բացառության, առավել ևս եթե խոսքը կնոջ մասին է: Կանանց նկատմամբ հասարակությունում պետք է լինի արժանապատիվ, հավասար վերաբերմունք: Հակառակ դեպքում չենք էլ ունենա համերաշխություն հասարակությունում:

Բացի այդ, կարծրատիպերի դեմ պայքարում և հասարակության համերաշխության հաստատման գործում հատուկ կարևորություն ունեն հասարակական ու քաղաքական գործիչների դատապարտող հայտարարությունները նման արարքների առնչությամբ:

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների արդյունքում պատգամավորի մանդատ ստացած 132 թեկնածուներից միայն 32-ն է կին, իսկ 2019 թվականին լիազորությունները վաղաժամկետ դադարեցրել է մեկ կին:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ տվյալների ուսումնասիրությամբ ևս ակնհայտ է, որ կանայք այս մարմիններում ևս բավարար ներկայացված չեն: Այսպես, Հայաստանի Հանրապետության համայնքներում 499 համայնքի ղեկավարներից միայն 9-ն են կանայք, իսկ ավագանու 3729 անդամներից միայն 220-ն են կին: Ավելին, 2019 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների

<sup>547</sup> Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը, հասանելի է [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=552625972003279&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=552625972003279&id=100017676420633) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>548</sup> Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը, հասանելի է [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=563172594281950&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=563172594281950&id=100017676420633) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



ընտրությունների արդյունքները կրկին չեն վկայում որևէ դրական տեղաշարժի մասին, քանի որ ընտրված 60 համայնքի ղեկավարներից 1-ն է կին, իսկ ավագանու 178 անդամներից՝ 17-ը:

2019 թվականին ՀՀ կառավարության բարձր պաշտոններում ևս կանանց թիվը շարունակել է փոքր մնալ: 2019 թվականին երկու փոխվարչապետներից և տասներկու նախարարներից միայն մեկն է կին: Նախարարների 45 տեղակալներից միայն 11-ն են կին, ընդ որում՝ 3 նախարարություններ ունեն առաջին տեղակալի պաշտոն, բոլոր 3-ն էլ տղամարդիկ են զբաղեցնում<sup>549</sup>:

Կանանց ներկայացվածության և որոշումների կայացման գործընթացում ներգրավվածության անբավարար լինելու մասին են վկայում նաև պետական այլ մարմիններում աշխատողների սեռային հարաբերակցության պաշտոնական տվյալները: Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի տվյալների՝ ներկայացվել է քաղաքացիական ծառայողների թվաքանակը, ըստ պաշտոնների խմբերի, 2018 թվականի հունիսի 30-ի դրությամբ: Այսպես, բարձրագույն պաշտոնի խմբի 103 ծառայողներից ընդամենը 15-ն են կին, գլխավոր պաշտոնի խմբի 3221 ծառայողներից 1582 են կին, իսկ առաջատար պաշտոնի խմբի ծառայողների 2189 ընդհանուր թվից կին ծառայողներ են 1319-ը, սակայն հատկանշական է, որ կրտսեր պաշտոնի խմբի ծառայողների 860 ընդհանուր թվից 612 կին ծառայողներ են, իսկ 248-ը՝ տղամարդ: Վիճակագրական այս տվյալներն առավել ակնառու են դարձնում խնդիրը:

Նշված տվյալների համադիր վերլուծությունը վկայում է, որ կանանց թիվը գերակայում է տղամարդկանց թվին միայն ցածր աստիճանի պաշտոններում: Ինչ վերաբերում է արդեն բարձրագույն պաշտոններին՝ այստեղ ակնհայտ գերակայում է տղամարդկանց թիվը: Ավելին, այն հարցին ի պատասխան, թե ինչ գործողություններ են ձեռնարկվել բարձրագույն պաշտոններում կանանց ներգրավման բարձրացման ուղղությամբ՝ ստացվել է պատասխան առ այն, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի երկարաժամկետ ռազմավարության ծրագրերից է քաղաքացիական ծառայության համակարգի բարձրագույն պաշտոններում կանանց ներգրավվածության ուղղությամբ կատարվելիք աշխատանքները: Մասնավորապես՝ բարձրագույն պաշտոններում կանանց ներգրավվածությունն ապահովելու նպատակով նշյալ գրասենյակը նախատեսում է միջոցառումներ կարողությունների հզորացման ուղղությամբ: Նման մեկնաբանության հետևանքով ստացվում է, որ անուղղակիորեն մատնանշվում է այն, որ կանայք չեն զբաղեցնում բարձրագույն պաշտոններ իրենց կարողությունների ցածր լինելու պատճառով, ինչն արդեն իսկ խտրականության դրսևորում է:

Վերոնշյալ վիճակագրական տվյալները վկայում են, որ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում կայացնողների դիտարկման հարցում<sup>550</sup>: Խնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեռային տարբերությունների հաշվադրմամբ պետք է ստեղծվեն նախապայմաններ կանանց ներուժի լիարժեք, արդյունավետ և թիրախային օգտագործման համար: Այսինքն՝ խնդրի լուծման նպատակով սկզբնական քայլեր կարող են հանդիսանալ հատուկ թիրախային ծրագրերի իրականացմամբ, այն է՝ արհեստական իթանիչների, քվոտաների կամ այլ մեխանիզմների նախատեսում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային քայլեր՝

<sup>549</sup> ՀՀ կառավարության պաշտոնական կայք. կառուցվածք <https://www.gov.am/am/structure/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>550</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄՄԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:

11. հասարակությանն իրազեկել կանանց դերի, կանանց քաղաքական ներգրավվածության և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորության ընդգծման ուղղությամբ,

12. բարձրացնել կանանց քաղաքական և իրավական գիտակցության մակարդակը, նպաստել երիտասարդ կանանց մոտ քաղաքական համակարգի, գործընթացների և արդյունավետ որոշումների ընդունման մեթոդաբանության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը, երաշխավորել քաղաքական մրցակցության հավասար պայմաններ,

13. զանգվածային լրատվության, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ:

## 5. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ

Կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության խնդիրը շարունակում է խնդրահարույց մնալ նաև 2019 թվականին: Անմատչելիության խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանները բարձրաձայնում են դեռևս 2015 թվականից:

Առողջապահական ծառայությունների անմատչելիության դեպքերի մասին 2019 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է ահազանգեր, որոնք հատկապես մարզային և գյուղական բնակավայրերից են եղել: Անհատական բողոքների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ խնդիրներն առանձին բժշկական ծառայությունների հասանելիությունն է: Մասնավորապես, կանայք հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով հետազոտվել և ստանալ համապատասխան բուժօգնություն:

Խնդիրները հատկապես առաջանում են հաշմանդամություն ունեցող կանանց դեպքում, որոնք բժշկական օգնություն ստանալու սահմանափակումներ են ունենում՝ խտրականության ենթարկվելով տարբեր պատճառներով, այդ թվում՝ բժշկական ծառայությունների անմատչելիության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի արդյունքում: Ոլորտում 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս ուղղությունը տարիներ շարունակ որևէ փոփոխության չի ենթարկվել:

Վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու վերաբերյալ նախարարության տվյալների համաձայն՝ նախաձեռնողյան հսկողությունն ու ծննդօգնությունն անվճար է բոլորի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար: Գինեկոլոգիական հիվանդությունների և անհետաձգելի վիճակների դեպքում հաշմանդամություն ունեցող կանանց բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետական պատվերի շրջանակներում: Կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N 568-Ն որոշման մեջ 2019 թվականին կատարված փոփոխության արդյունքում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների, այդ թվում՝ արտամարմնային բեղմնավորման կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող շահառուների ցանկում ընդգրկվել են նաև այն ամուսնական զույգերը, որոնցում զույգերից մեկի մոտ առկա է հաշմանդամություն, եթե կնոջ մոտ չկա հղիությունը կրելու հակացուցում:

Այս տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձնահատուկ քայլեր վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ չեն ձեռնարկվել: Իրականացված քայլերը, ընդհանուր առմամբ, առողջապահական ծառայությունների՝ հաշմանդամություն ունեցող

անձանց համար մատչելի դարձնելուն ուղղված քայլերը ևս կարող են որոշակի առումով լուծել վերարտադրողական առողջության համար դիմած հաշմանդամություն ունեցող կանանց որոշակի խնդիրներ կամ ընդհանուր ծառայությունները, որոնք մատչելի են բոլոր անձանց համար, ինչը չի ապահովում խնդիրների համակարգային լուծումներ: Հատկապես խնդրահարույց է առողջապահական տեղեկությունների, առողջապահական օժանդակ նյութերի՝ տեսողական խնդիրներ ունեցող կանանց անմատչելիությունը՝ հանդիսանալով մեծ խոչընդոտ հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական իրավունքի իրականացման համար: Նման տեղեկատվության պատշաճ առկայության համար պահանջվում է ընտանիքի անդամների կամ ծանոթների աջակցությունը, ինչը կարող է խախտել գաղտնիության իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի համատեղ դեռևս 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունը վկայում է, որ խտրական վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ սեռական և վերարտադրողական առողջության, այդ թվում՝ հղիության արհեստական ընդհատումների և հետաբորտային բուժօգնության իրավունքների առումով նույնպես կապված է կարծրատիպերի, ենթադրությունների և համատարած կեղծ համոզումների հետ, ըստ որոնց, հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող օգտվել իրենց վերարտադրողական իրավունքներից, հատկապես եթե խոսքը մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց մասին է<sup>551</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ քաղաքականություն մշակող մարմին է առաջադրվում հարցադրում առ այն, թե արդյոք ձեռնարկվել են քայլեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս սպասարկելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացմանը: Ըստ պարզաբանման՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս սպասարկելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացմանն ուղղված 2018-2019 թվականներին «Հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփման և սպասարկման էթիկա» դասընթացը ներառված է եղել «Ընտանեկան բժշկություն», «Առողջապահության կառավարում և կազմակերպում» կլինիկական օրդինատուրայի և կատարելագործման դասընթացների ծրագրերում<sup>552</sup>:

Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների իրացման տեսանկյունից հատուկ քայլեր չեն ձեռնարկվում և խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված:

Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանի կողմից առաջադրվում են հետևյալ քայլեր՝

1. կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով,

2. բարձրացնել կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ երաշխավորելով ծառայությունների անխտրական պատշաճ իրականացում,

3. զանգվածային լրատվության, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց առողջապահական իրավունքների վերաբերյալ:

<sup>551</sup> Տե՛ս [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Public%20inquiry%20report\\_arm\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Public%20inquiry%20report_arm_0.pdf) հղումով, էջ 105, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ

<sup>552</sup> Տե՛ս սույն հատորի «Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջադրված քայլեր» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

## 6. Աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ

Աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց անհավասարության խնդիրները շարունակում են համակարգային առումով խնդրահարույց մնալ նաև 2019 թվականի ընթացքում: Խնդրի մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնում է տարիներ շարունակ:

Այս առնչությամբ պետք է նշել, որ ինչպես տարբեր իրավական ակտերում, այնպես էլ աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ ամրագրված է խտրականության արգելքի սկզբունքը: Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ անկախ նրանց սեռից: Նույն օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն:

Աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման առարկա ունեցող իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խտրական նորմեր չկան սահմանված և այդ իրավական ակտերը հիմնականում գենդերային չեզոք են (gender-neutral), սակայն հաճախ խնդիրներ առաջանում են այդ չեզոքության պարագայում, քանի որ հաշվի առնված չեն սեռային առանձնահատկությունները: Այս պարագայում ստացվում է, որ չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ փաստացի գոյություն ունի կանանց նկատմամբ ուղղահայաց (ծառայողական առաջխաղացման կամ բարձր պաշտոններ զբաղեցնելու ոչ հավասար հնարավորություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն:

Աշխատանքային իրավունքների սահմանափակման դեպքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք հիմնականում առաջանում են կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում հավելյալ երաշխիքների բացակայության պատճառով, ինչպես նաև կանանց զբաղվածության, որոշակի աշխատանքներում ներգրավվածության և առհասարակ կնոջ դերի շուրջ առկա կարծրատիպերի հետևանք են:

Խնդիրն այն է, որ կանայք բարդություններ են ունենում թե՛ աշխատանքի ընդունվելիս, թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, թե՛ աշխատավայրում առաջխաղացման տեսանկյունից: Կանայք հաճախ խնդիրների են բխվում աշխատանքի ընտրության հարցում: Աշխատանքի թափուր տեղերի համար տրվող հայտարարությունների և այդ թափուր հաստիքների համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք շատ հաճախ պարունակում են խտրական դրսևորումներ: Մասնավորապես, հաճախ հանդիպում են աշխատանքի հայտարարություններ, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ՝ կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը: Որոշ դեպքերում խտրականության դրսևորման հետևանքով կնոջն աշխատանքի չեն ընդունում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին: Խնդիրն ավելի ակնառու է կանանց պարագայում, ում դեպքում գործատուները վախենում են կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հավանականությունից և նախապատվություն տալիս են այլ թեկնածուների:

Այդ նպատակով կարևոր է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1-րդ հոդվածի ընդունումը, որն ամրագրում է խտրականության արգելքը:

Աշխատանքի ընդունվելուց զատ կանայք նաև խնդիրներ են ունենում մայրության արձակուրդից վերադառնալու պարագայում: Համակարգային այս հարցը կանանց համար աշխատաշուկայում մրցակցության խոչընդոտներ է ստեղծում, որը պետք է դիտարկել երկու մակարդակներում: Նախ, ծնողները խնդիրներ են ունենում երեխայի խնամքի կազմակերպման հարցում, ապա նրանք բարդությունների են հանդիպում երեխայի խնամքի արձակուրդից վերադառնալիս: Խնդիրն այն է, որ այդ պարագայում նրանք իրենց կարողություններով օբյեկտիվորեն կարող են զիջել գործընկերներին:

Այսպես, նախ երեխայի խնամքի կազմակերպման բարդություններ են առաջ գալիս այն պատճառով, որ նախադպրոցական կրթական հաստատությունները երեխաների ընդունելությունը հազվադեպ դեպքերում են կազմակերպում մինչև երեխայի 2-3 տարեկան լրանալը, իսկ աջակցության այլ ծրագրեր առկա չեն: Նշվածի հետևանքով կինը շատ հաճախ կանգնում է մայրանալու կամ աշխատելու ընտրության առջև, ինչը կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ ծնելիության ցուցանիշի վրա՝ առաջացնելով ժողովրդագրական խնդիրներ: Ավելին, աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելը գործնականում խնդիրներ է առաջացնում նաև այն պատճառով, որ նախադպրոցական կրթական հաստատություններում երեխաների նախադպրոցական կրթությունն իրականացվում է մինչև ժամը 17:00-ն, իսկ աշխատանքային ժամերը Հայաստանում մինչև 18:00-ն են: Նշվածը հավելյալ բարդություններ է ստեղծում աշխատող ծնողների, հատկապես՝ աշխատող մայրերի համար: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը որևէ արտոնություն չի նախատեսում նման դեպքերի համար: Բարձրացված խնդրի հաշվառմամբ՝ պետք է նշել, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 2019 թվականին մշակել է «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, ըստ որի՝ եթե աշխատանքային օրվա ավարտը սահմանված է 18:00-ն, ապա նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխա խնամող աշխատողի պահանջով, մինչև երեխայի նախադպրոցական տարիքի ավարտը, աշխատանքային օրվա ավարտ կարող է սահմանվել ժամը 17:00-ն: Եթե սահմանված է աշխատանքային օրվա ավարտի այլ ժամ, ապա նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխա խնամող աշխատողին կարող է տրամադրվել 1 ժամ ժամանակ՝ 17:00-18:00-ը, որը չի ներառվում սահմանված աշխատաժամանակում<sup>553</sup>: Սակայն նախագիծը դեռ չի ընդունվել:

Բացի այդ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների կարճ աշխատաժամերի պատճառով երեխաների ծնողների աշխատանքային ժամերի հետ անհամապատասխանության հարցի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում երեխաներին պահելու տևողություն է սահմանված ժամը 8:30-17:30-ն՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 30-ի 2833-Ա որոշմամբ: Աշխատող ծնողներին ընդառաջելու նպատակով Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 161 մանկապարտեզներից 78-ում մատուցվում է վճարովի երկարօրյա ծառայություն՝ 5000 դրամ վարձավճարով ժամը 17:30-19:00-ն: Նշյալ խմբերում ընդգրկված են 781 երեխա: Սակայն խնդիրն այն է, որ նախադպրոցական ուսումնական հաստատություններում երկարօրյա ծառայությունը վճարովի է և առկա է միայն որոշ մանկապարտեզներում, այսինքն՝ այն հասանելի է միայն անձանց նեղ շրջանակի համար՝ ծնողների համար ավելացնելով հավելյալ ֆինանսական բեռ:

Պետք է նաև նշել, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 665-Ն որոշման 23-րդ հավելվածով

<sup>553</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1664/about> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հաստատված մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրման ծրագրի իրականացման կարգը դրական է աշխատանքին զուգահեռ երեխայի խնամքի իրականացման համար: Սակայն ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ, ինչպես նաև այս աջակցությունը սահմանափակ է և չի ընդգրկում հասարակության լայն հատվածին: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2018 թվականից իրականացվում են «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» և «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում» ծրագրերը, որոնց հիմնական շահառուները կանայք են (վերջին ծրագրում հնարավոր է նաև տղամարդկանց ընդգրկվածությունը): Այդ ծրագրերում ընդգրկվել են համապատասխանաբար 107 և 398 շահառու (որոնցից 2-ը՝ տղամարդ):

ՀՀ-ում 2018 թվականից իրականացվում են կանանց զբաղվածության ապահովմանն ուղղված «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» և «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում» ծրագրերը, որոնցում 2019 թվականի ընթացքում ընդգրկվել են համապատասխանաբար 111 և 453 շահառուներ:

Այսպես, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձինք, որոնք մինչև երեխայի երկու տարին լրանալը ցանկանում են վերադառնալ աշխատանքի՝ երեխայի խնամքը ծրագրի միջոցով կազմակերպելով, պետք է նախապես հաշվառված լինեն իրենց բնակության վայրի զբաղվածության տարածքային կենտրոններում: Ծրագրում ընդգրկվել ցանկացող անձանց թիվը ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի թիվը գերազանցելու դեպքում (նախատեսված է ծրագիրն իրականացնել 200 շահառուի համար) ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն տրվում է հետևյալ անձանց՝

1) ում միջին ամսական աշխատավարձը չի գերազանցում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված՝ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի չափը,

2) ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ են կամ

3) ունեն մինչև երկու տարեկան երկու և ավելի երեխա կամ

4) ունեն երեք և ավելի երեխա կամ

5) ունեն հաշմանդամություն ունեցող երեխա:

Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքում ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է տարածքային կենտրոնում առավել երկար ժամկետով հաշվառված անձանց: Սակայն խնդիրն այն է, որ այս ծրագիրը վերաբերում է միայն սահմանափակ թվով շահառուներին, ինչի արդյունքում համակարգային առումով խնդիրը շարունակել է արդիական լինել:

Բացի այդ, երեխայի խնամքի համար արձակուրդից վերադառնալով՝ կանայք շատ հաճախ օբյեկտիվորեն անմրցունակ են դառնում կամ զիջում են իրենց գործընկերներին

որոշակի ժամանակահատվածով չաշխատելու հանգամանքով: Թե՛ հանրային, թե՛ մասնավոր ոլորտներում նման դեպքերում աշխատանքի վերադառնալու պարագայում աջակցության, կարողությունների կամ գիտելիքների զարգացման ծրագրեր նրանց համար չեն իրականացվում: Թեպետ հանրային ծառայողների՝ վերապատրաստումներին մասնակցությունը պարտադիր է, այն իրականացվում է վերապատրաստման կարիքների գնահատման վրա հիմնված անհատական ծրագրի կազմամբ, սակայն այս պարագայում չի ապահովվում վերապատրաստման թիրախավորված ու ժամանակին իրականացումը, այսինքն՝ հաշվի չի առնվում այն աշխատողների անհատական կարիքները, որոնք աշխատանքի են վերադառնում հղիության և ծննդաբերության, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից: Վերապատրաստման թիրախավորված, ժամանակին ու հրատապության կարգով չապահովելու հետևանքով կանայք օբյեկտիվորեն մրցունակ չլինելով՝ նրանք հաճախ կորցնում են իրենց աշխատանքը: Վերապատրաստումները կարևոր են նպատակային արձակուրդ մեկնած անձանց համար աշխատանքից երկար բացակայելուց հետո առավելագույնս արդյունավետ աշխատանքում վերաինտեգրվելու և կարողություններ ու գիտելիքների զարգացմամբ հավասար մրցակցության հնարավորություն ունենալու համար:

Մեկ այլ խնդիր է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 2308-Ն որոշումը: Հարցին անդրադարձել է նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեն՝ առաջարկելով վերացնել կանանց, անչափահասների և աշխատանքի համար սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար վտանգավոր աշխատատեղերի և մասնագիտությունների ցանկը<sup>554</sup>:

Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման ընթացքում կանայք ենթարկվում են նաև հորիզոնական խտրականության, ինչը ենթադրում է կանանց համար սահմանափակումներ՝ ըստ մասնագիտությունների և աշխատանքի ոլորտների: Դեռևս առկա են կնոջը «հարիր» և «հարմար» աշխատատեղերի մասին հանրային կարծրատիպեր: Այսպես, կանանց թվաքանակը հատկապես մեծ է կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական ապահովության, առևտրի, մշակող արդյունաբերության, իսկ տղամարդկանցը՝ պետական կառավարման և պաշտպանության, առևտրի, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում<sup>555</sup>:

Ավելին, դեռևս 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կանանց ամսական միջին աշխատավարձը տնտեսության բոլոր հատվածներում զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձին, և այդ ձեռքվածքը կազմում է 35.9%<sup>556</sup>: Ըստ նույն ուսումնասիրության՝ կանանց աշխատավարձի ձեռքվածքը տարբերվում է՝ ըստ տնտեսության ոլորտների: Գյուղատնտեսությունում կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 83.8%-ը, կրթությունում՝ 81.3, առողջապահությունում և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ 75.1, հանրային կառավարման հատվածում՝ 67.9 և ֆինանսական ու ապահովագրական հատվածում՝ 54.9 %-ը: Նման պրակտիկան բխում է ոչ միայն աշխատաշուկայի կառուցվածքից, այլև առաջին հերթին հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերից (օրինակ՝

<sup>554</sup> Տե՛ս <https://www.refworld.org/publisher,CEDAW,,ARM,,0.html>, էջ 8, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>555</sup> Տե՛ս <http://ampop.am/unemployment-in-armenia/#imageclose-2735>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>556</sup> Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ձեռքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, հասանելի է [http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում ընդունված է կարծել, որ տղամարդը պետք է աշխատի, կինը՝ խնամի երեխաներին և զբաղվի տնտեսությամբ):

Դրա հետ մեկտեղ, աշխատանքային իրավունքների և աշխատող-գործատու հարաբերությունների ստուգման և համակարգման համար պատասխանատու պետական իրավասու մարմնի բացակայության պարագայում խնդրի վերհանումն էլ ավելի է բարդանում<sup>557</sup>:

Ավելին, պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոքր է կանանց ներգրավվածությունը պետական որոշ համակարգերում ևս: Դրանք նաև կարծրատիպերի արդյունք են, քանի որ որոշ մասնագիտություններ չեն համարվում կանանց համար «հարմար»: Այդ աշխատանքներում կանանց ներգրավվածությունը կազմում է միջինում 10 %: Այսպես, ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ 2019 թվականին Կոմիտե իգական սեռի ներկայացուցիչները 70-ն են, որը կազմում է ծառայողների 10.5%-ը: Իգական սեռի ծառայողների 37%-ը ծառայում է Կոմիտեի Երևան քաղաքի, իսկ 63%-ը մարզային ստորաբաժանումներում: Վերջիններս ըստ թվային տվյալների ունեն հետևյալ դասային աստիճանները և զբաղեցնում են հետևյալ պաշտոնները՝ արդարադատության առաջին դասի խորհրդական՝ 1 ծառայող, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ 11 ծառայող, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ 15 ծառայող, առաջին դասի խորհրդական՝ 6 ծառայող, երկրորդ դասի խորհրդական՝ 15 ծառայող, երրորդ դասի խորհրդական՝ 22 ծառայող, ստորաբաժանման պետ՝ 1 ծառայող, ստորաբաժանման պետի տեղակալ (ՀԿԳ ավագ քննիչ)՝ 1 ծառայող, ՀԿԳ ավագ քննիչ՝ 7 ծառայող, ՀԿԳ քննիչ՝ 9 ծառայող, ավագ քննիչ՝ 22 ծառայող, քննիչ՝ 30 ծառայող:

2019 թվականին Կոմիտեում ծառայության նշանակվել է 78 անձ, որից 18-ը իգական սեռի ներկայացուցիչ: Վերոնշյալ ժամանակահատվածում Կոմիտեի Երևան քաղաքի ստորաբաժանումներում ծառայության նշանակվել է 10 իգական, 28 արական (նշանակվածների 48.7%-ը), իսկ ՀՀ մարզային, ԼՂՀ ստորաբաժանումներում 8 իգական և 32 արական (նշանակվածների 51.2%-ը) սեռի ներկայացուցիչ:

ՀՀ դատախազությունում տվյալների համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ ՀՀ դատախազության համակարգում կին դատախազները կազմում են դատախազների ընդհանուր թվի 13%-ը, ՀՀ գլխավոր դատախազությունում կին դատախազները կազմում են ՀՀ գլխավոր դատախազության դատախազների ընդհանուր թվի 15 %-ը, Երևան քաղաքի և վարչական շրջանների կին դատախազները կազմում են Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազների ընդհանուր թվի 20 %-ը, ՀՀ մարզերի դատախազությունների կին դատախազները կազմում են ՀՀ մարզերի դատախազությունների դատախազների ընդհանուր թվի 7 %-ը, ՀՀ զինվորական դատախազությունում կին դատախազները կազմում են ՀՀ զինվորական դատախազության դատախազների ընդհանուր թվի 10 %-ը:

ՀՀ դատախազության համակարգում կին դատախազների տոկոսային արտահայտությունն՝ ըստ դասային աստիճանների՝ արդարադատության 1-ին դասի խորհրդական՝ 9%, արդարադատության 2-րդ դասի խորհրդական՝ 9%, արդարադատության 3-րդ դասի խորհրդական՝ 11%, 1-ին դասի խորհրդական՝ 26%, 2-րդ դասի խորհրդական՝ 21%, 3-րդ դասի խորհրդական՝ 30%: ՀՀ դատախազության համակարգում կին դատախազների թիվն ըստ պաշտոնների՝ կին ստորաբաժանման ղեկավար չկա, իսկ ստորաբաժանման ղեկավարի տեղակալ՝ 7%, ստորաբաժանման ավագ դատախազ՝ 14%, ստորաբաժանման դատախազ՝ 19%: Ավելին, 2019 թվականին նշանակված դատախազների 21 %-ն է կին:

<sup>557</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Աշխատանքային իրավունքներ» գլխում:



Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների՝ 2019 թվականի հունվարի դրությամբ զինված ուժերում սպայական և ենթասպայական կազմերի հաստիքներում հաշվառված է 1893 կին զինծառայող: Շարքային կազմի պայմանագրային զինծառայողների թվաքանակում կանայք կազմում են 10 %, ընդ որում, Երևանում՝ 7.4 %, իսկ մարզերում՝ 2.6%: Ըստ նախարարության՝ զինված ուժերի տարբեր օղակներում կանանց ծառայության ներգրավվածությանը խոչընդոտող հանգամանքներ, որպես այդպիսին, չեն գրանցվել: Հնարավոր բացասական կարծրատիպերը կոտրելու, ինչպես նաև կանանց ներգրավվածությունը խթանելու նպատակով ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ ՀՀ ՊՆ ՄԻԲԿ ամենամյա համագործակցության ծրագրի շրջանակներում անցկացվել են իրազեկվածության բարձրացման, հավասար հնարավորությունների ապահովման, սեռով պայմանավորված խտրականության կանխարգելման և այլ հարակից թեմաներով միջոցառումներ:

Համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման նպատակով 2017 թվականին ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատվել է պլան-ժամանակացույց՝ ՀՀ ՊՆ զորամասերում կին զինծառայողներով համալրված ստորաբաժանումների կազմավորման փորձնական ներդրման և ներքին ու պահակային ծառայությունների կատարելագործման աշխատանքների իրականացման համար:

Ընտրվել են թիրախային ստորաբաժանումներ կին զինծառայողներով համալրելու համար: Համաձայն պլան-ժամանակացույցի՝ շահագրգիռ վարչությունների պետերի, տարածքային զինկոմիսարիատների զինկոմիսարների, զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարների հետ համատեղ տարվել են աշխատանքներ տվյալ ստորաբաժանումները համալրելու համար կին զինծառայողներ հավաքագրելու ուղղությամբ: Օրինակ՝ ՊՆ N զորամասի դասակը, 2019 թվականի հունվարի դրությամբ ամբողջությամբ համալրված է կին զինծառայողներով: 2018 թվականին ՀՀ զինված ուժերում ծառայության են անցել շարքային կազմի պայմանագրային թվով 399 կին զինծառայողներ:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում կին ծառայողները կազմում են Երևան քաղաքի վարչության ծառայողների 8.8%-ը, ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում՝ 6.9%-ը, Արարատի մարզային վարչությունում՝ 6.6%-ը, Արմավիրի մարզային վարչությունում՝ 11.2%-ը, Գեղարքունիքի մարզային վարչությունում՝ 2.8%-ը, Լոռու մարզային վարչությունում՝ 5.1%-ը, Շիրակի մարզային վարչությունում՝ 9.1%-ը, Կոտայքի մարզային վարչությունում՝ 7.2%-ը, Սյունիքի մարզային վարչությունում՝ 6%-ը, Վայոց Ձորի մարզային վարչությունում՝ 3.4%-ը, Տավուշի մարզային վարչությունում՝ 5.9%-ը: Գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք կազմում են գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների 5.5%-ը, ավագ խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք՝ 11%, միջին խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք՝ 13%, կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք՝ 5%: «Գնդապետ» կոչում ունեցող կանայք կազմում են «գնդապետ» կոչում ունեցող ծառայողների 7%-ը, «փոխգնդապետ» կոչում ունեցող կանայք՝ 16%, «մայոր» կոչում ունեցող կանայք՝ 13%, «կապիտան» կոչում ունեցող կանայք՝ 13%, «ավագ լեյտենանտ» կոչում ունեցող կանայք՝ 13%, «լեյտենանտ» կոչում ունեցող կանայք՝ 16%, կրտսեր խմբի կոչումներ ունեցող կանայք՝ 5%:

Ի պատասխան այն հարցին, թե ինչ քայլեր են ձեռնարկվել 2019 թվականի ընթացքում համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման ուղղությամբ և արդյոք նրանց թիվը ներկայում քավարար է ըստ անհրաժեշտության իգական սեռի ներկայացուցիչ ոստիկանների ներգրավման համար՝ ՀՀ ոստիկանությունից ստացվել է պատասխան, որ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների մասնագիտացված ծառայության աշխատակիցների շուրջ 30 %-ը կազմում են իգական սեռի ներկայացուցիչներ, ինչը քավարար է սեռական բռնության ենթարկված, երեխաների և կանանց մասնակցությամբ

դեպքերին համապատասխան ընթացք տալու և վերջիններիս հետ աշխատանքներ իրականացնելու համար: Հարկ է նշել, որ Ոստիկանության կողմից որդեգրած քաղաքականության արդյունքում տարեցտարի ավելացնում է ոստիկանության համակարգ, ինչպես նաև Ոստիկանության կրթահամալիր ընդունվող իգական սեռի ներկայացուցիչների թիվը: 2019 թվականի ընթացքում համակարգում կանանց ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են իգական սեռի ներկայացուցիչների ընդունելության և տարբեր ծառայությունների տեղաբաշխման աշխատանքներ:

Բարձրագույն դատական խորհրդի տվյալների համաձայն՝ 2019 թվականին դատավորների ընդհանուր թվի 28%-ը կազմել են կին դատավորներ, ինչը ներկա պահին դատավորների ընդհանուր թվի մեջ գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն տոկոսաչափը: Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 5-րդ մասով, այն է՝ եթե որևէ սեռի դատավորների թիվը պակաս է դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից, ապա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում երաշխավորվում է առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած այդ սեռի ներկայացուցիչների համար մինչև 50 տոկոս տեղ, սահմանված է սեռային համամասնության ապահովմանն ուղղված դրույթ: Սակայն նախ 25 տոկոս է սահմանված, ինչպես նաև սահմանված նվազագույն տոկոսը պահպանվում է միայն դատավորների ընդհանուր թվի համամասնության տվյալների դեպքում:

Տարբեր ատյանների և մարզերում դատավորների սեռային համամասնության տվյալներ ուսումնասիրությամբ՝ պետք է նշել, որ մարզերում կանանց ներկայացվածությունը նվազ է 20 տոկոսից՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան՝ 10%, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ 14%, Արագածոտնի մարզի առաջին ատյանի դատարան՝ 17%: Մնանկության դատարանում 12 դատավորներից միայն մեկն է կին: Վերաքննիչ քրեական դատարանում կին դատավորները կազմում են ընդհանուր թվի 17%-ը, Վերաքննիչ վարչական դատարանում՝ 20%, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 37%:

Աշխատանքային տարբեր ոլորտներում սեռային համամասնության խնդրի ուսումնասիրությամբ կարելի է փաստել, որ քանակական տվյալներն առավել ցայտուն են դարձնում կանանց ներգրավվածության ցածր մակարդակի համակարգային այս խնդիրը, որը տարածում ունի բոլոր ոլորտներում և մակարդակներում: Մի շարք ոլորտներ դեռևս շարունակում են կանանց համար անմատչելի մնալ՝ առաջացնելով աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. խթանել կանանց հնարավորությունները՝ հաշվարկելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը և կիրառելիությունն աշխատաշուկայի համապատասխան հատվածներում,

2. մշակել և ներդնել աշխատաշուկայում տղամարդկանց և կանանց միջև մրցակցության ապահովման բաց և արդյունավետ մեխանիզմներ,

3. նախատեսել ծրագրեր մայրության արձակուրդից վերադարձող կանանց՝ աշխատավայրում վերաինտեգրելու ուղղությամբ,

4. նախատեսել առավել արդյունավետ մեխանիզմներ երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի ավարտը կազմակերպելու համար,

5. զանգվածային լրատվական միջոցներով նպաստել աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը,

6. փոփոխել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 2308-Ն որոշումը՝ դրանում առկա կարգավորումները համապատասխանեցնելով Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի առաջարկներին:

ԲԱԺԻՆ 14. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ԵՐԵՒԱՅԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ  
ՄԱՐՄԻՆ

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը սահմանում է, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

Երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություններից է և գտնվում են անմիջական ուշադրության ներքո՝ սկսած անօթևան երեխաների վիճակից, ընտանիքում ապրելու երեխայի իրավունքից մինչև հաստատություններում երեխաների իրավունքների ու նրանց շահագործման հետ կապված հարցերը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի առաջարկության հիման վրա «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանվեց, որ «Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն»: Ընդ որում, այս կարգավիճակը Մարդու իրավունքների պաշտպանին վերապահելու առաջարկով էր հանդես եկել նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը:

Մինչ այդ, Պաշտպանի որոշմամբ 2016 թվականին աշխատակազմում արդեն ստեղծվել էր Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին:

2019 թվականի ընթացքում Պաշտպանին երեխաների իրավունքների հարցով վերաբերյալ հասցեագրվել է 700 գրավոր և բանավոր բողոք, որոնց մեծ մասը վերաբերել է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանը, երեխայի՝ ծնողի հետ շփվելու իրավունքի իրացմանը, դպրոցում երեխաների նկատմամբ վերաբերմունքին և իրավունքների պաշտպանությանը:

Պաշտպանի աշխատակազմի մասնագետները կատարել են մշտադիտարկման այցեր երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ՝ երեխաների իրավունքների պաշտպանության վիճակին ծանոթանալու, նրանց խնամքի պայմաններն ուսումնասիրելու և հնարավոր խախտումների դեպքում դրանց վերացմանը նպաստելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, համագործակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ, իրականացրել է «Աջակցություն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին՝ երեխայի իրավունքների ոտնահարումների դեպքերին առավել արհեստավարժ արձագանքելու նպատակով կարողությունների բարելավման գործընթացում» ծրագիրը: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում.

1. երեխաների իրավունքների պաշտպանության թեմաներով իրականացվել են վերապատրաստումներ Պաշտպանի աշխատակազմի, Շիրակի և Լոռու մարզերի դպրոցների հասարակագիտության թվով 50 ուսուցիչների համար.

2. հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար մշակվել է երեխաների իրավունքների պաշտպանությանը նվիրված ձեռնարկ: Այն ուղարկվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և երաշխավորումից հետո կօգտագործվի դպրոցներում և այլ հանրակրթական հաստատություններում՝ որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ.

3. հաշվի առնելով երեխաների մասնակցության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի մեթոդաբանությունը, Պաշտպանի աշխատակազմը, համագործակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Սեյվ դը չիլդրեն Հայաստանի հետ, նախաձեռնել է ուսումնասիրություն՝ ՀՀ-

ում երեխաների մասնակցության վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքներն արտահերթ զեկույցի տեսքով կիրառարակվեն 2020 թվականին:

Պաշտպանի աշխատակազմը, համագործակցելով Սեյվ դը չիլդրեն Հայաստանի հետ, կազմակերպել է երկօրյա վերապատրաստում լրագրողների համար՝ «Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը» թեմայով:

2019 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմը մասնակցել է Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի աշխատանքներին, որը միավորում է 42 անկախ անդամների և նպատակն ունի խրախուսել երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի լիարժեք իրականացումը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը<sup>558</sup>:

Ընդ որում, պետք է նշել, որ 2018 թվականին տեղի ունեցավ կարևոր իրադարձություն. Մարդու իրավունքների պաշտպանը դարձավ Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի լիիրավ անդամ:

Պաշտպանի աշխատակազմի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ղեկավարը մասնակցել է Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների կոմիտեի աշխատանքներին՝ որպես Երեխայի իրավունքների կոմիտեի բյուրոյի անդամ, իսկ հետո ընտրվել է կոմիտեի փոխնախագահ:

### 1. Այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են կատարել երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող պետական և ոչ պետական 7 հաստատություններ<sup>559</sup>:

Բոլոր այցերն եղել են չհայտարարված և իրականացվել են այդ նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2018 թվականին մշակված մեթոդաբանության համաձայն՝ Հայաստանի իրավական համակարգին տեղայնացված ուղեցույցի հիման վրա<sup>560</sup>: Այցերը եղել են ինչպես բողոքների հիման վրա, այնպես էլ մշտադիտարկման բնույթի:

Այցերի ընթացքում իրականացվել է երեխաների խնամքի պայմանների և հաստատությունում գտնվելու հիմք հանդիսացող փաստաթղթերի ուսումնասիրություն: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն առանձնագրույցներ են ունեցել երեխաների (ինչպես երեխաների խմբերի, այնպես էլ առանձին երեխաների հետ), ինչպես նաև հաստատությունների աշխատակիցների հետ:

Բարձրացված խնդիրներն արձանագրվել են, դրանց վերաբերյալ քննարկումներ են տեղի ունեցել հաստատությունների տնօրինության և անձնակազմի, ինչպես նաև համապատասխան վերադաս մարմինների հետ: Ձեռք բերված տեղեկությունների, փաստաթղթերի, օրենսդրության վերլուծության և Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքներով կազմվել են ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական առաջարկներ: Ամբողջականության նպատակով ուսումնասիրվել են միջազգային և

<sup>558</sup> Տե՛ս Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի կայքէջը, հասանելի է <http://enoc.eu/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>559</sup> Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր, Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց, Երևանի Մանկան տուն, Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր, Գավառի մանկատուն, Գավառի թիվ 1 հատուկ դպրոց, «Թռչունյան տուն» կրթահամալիր-մանկատուն:

<sup>560</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայքէջը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/2f01b9fdae9273bcfd85a14940df721.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակած նյութերն ու զեկույցները:

Այցերի արդյունքներն ամփոփվել և ուղարկվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններ, ինչպես նաև այլ մարմիններ՝ ըստ անհրաժեշտության: Մշտադիտարկման այցերի վերաբերյալ ստացված պատասխանները հիմնականում եղել են ընդհանրական բնույթի կամ պարզապես վերահասցեագրել են մշտադիտարկման ենթարկված հաստատությունների պատասխանները՝ առանց նշելու նախարարությունների կողմից ձեռնարկված քայլերի մասին:

Վերոնշյալ այցերի ընթացքում վեր հանված խնդիրների մասին Պաշտպանն արել է հայտարարություններ:

Պաշտպանը հետևողական է լինելու, որ վերացվեն թերությունները, ինչպես նաև առանձնահատուկ ուշադրություն դարձվի հաստատություններում խնամվող երեխաների իրավունքների պաշտպանությանը:

### 1.1 Մինևույն հաստատությունում տարբեր խնդիրներ ունեցող երեխաների գտնվելը

Մշտադիտարկումների ընթացքում պարզվել է, որ գործնականում մի շարք հատուկ հանրակրթական հաստատությունների տիպեր չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն և ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի թիվ 381-Ն որոշումներով սահմանված տիպերին, որի հետևանքով, այդտեղ միաժամանակ ծառայություններ են մատուցվում տարբեր կարիքներ ունեցող երեխաների: Խնդիրն այն է, որ այդ պարագայում մատուցվող ծառայությունները լիարժեք և արդյունավետ չեն, քանի որ մատուցվող ծառայությունները չեն համապատասխանում տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաների կարիքներին:

Հատուկ հանրակրթական դպրոցների կանոնադրությունները հիմնականում հաստատվել են 2003 թվականին, այսինքն՝ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման ընդունումից հետո: Վերոնշյալ որոշմամբ սահմանված են պետական հատուկ հանրակրթական հաստատությունների հետևյալ տիպերը.

ա) լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.

բ) տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.

գ) խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.

դ) հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.

ե) մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն.

զ) հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն.

է) արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն:

Այսինքն՝ ՀՀ կառավարությունը չի սահմանել հաստատության այնպիսի տեսակ, որը հնարավորություն կտար մեկ հաստատությունում իրականացնել տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների խնամքն ու դաստիարակությունը: Ավելին, ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում

երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 381-Ն որոշմամբ ևս մեկ անգամ հաստատվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերը, այդ թվում՝ հատուկ հանրակրթական:

Վերը շարադրվածը վկայում է, որ ՀՀ օրենսդրությամբ հատուկ կարիքներ ունեցող և առանց ծնողական խնամքի մնացած անձանց համար նախատեսված հաստատությունները տարանջատված են:

Մինչդեռ, մշտադիտարկված հաստատությունների կանոնադրություններում նշված է, որ այդտեղ կարող են խնամք և դաստիարակություն ստանալ «մտավոր թերզարգացում ունեցող» երեխաները, ինչպես նաև ծնողազուրկ երեխաները (օրինակ՝ Գավառի թիվ 1 հատուկ դպրոց) կամ «մտավոր թերզարգացում ունեցող» երեխաները, ինչպես նաև լսողության խանգարումներ ունեցող երեխաները (օրինակ՝ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր):

Մեկ հաստատությունում տարբեր խնդիրներ ունեցող անձանց գտնվելու փաստը դպրոցների վարչակազմերը հիմնականում հիմնավորում են կանոնադրությամբ նախատեսված լինելով: Նման հիմնավորումները, սակայն, ընդունելի լինել չեն կարող:

Այսպիսով, հաստատությունների կանոնադրությունները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի թիվ 381-Ն և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 2179-Ն որոշումներով սահմանված տիպերին:

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2019 թվականին տրամադրված պարզաբանման՝ հաստատությունների տիպերը կհամապատասխանեցվեն օրենքի պահանջներին միայն 2019 թվականին մի շարք հաստատությունների փակման կամ վերակազմակերպման գործընթացից հետո: Սակայն վերոնշյալ հաստատությունների կանոնադրությունները դեռևս չեն փոխվել:

Նշվածը բնականաբար անթույլատրելի է: Այդ երեխաներին անհրաժեշտ են մասնագիտական աջակցություն և ծառայություններ, որոնց լիարժեք մատուցումը հնարավոր է միայն հաստատությունը օրենքով նախատեսված չափանիշներին համապատասխանելու դեպքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է առավելագույն սեղմ ժամկետներում՝

1. հաստատությունների տիպերը համապատասխանեցնել ՀՀ կառավարության վերոնշյալ իրավական ակտերով հաստատված տիպերին և համապատասխան փոփոխություններ կատարել կանոնադրություններում՝ հստակեցնելով, թե որ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին պետք է ծառայություններ մատուցվեն,

2. իրականացնել հաստատություններում սովորող երեխաների հատուկ կրթական կարիքների վերագնահատումը, ինչպես նաև գնահատել նրանց ընտանիքների սոցիալական կարիքները՝ նրանց ընտանիքներ կամ այլ հաստատություններ տեղափոխելու գործընթաց սկսելու նպատակով,

3. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ապահովել նրանց հետագա ուսումն իրենց կարիքներին համապատասխան, այդ թվում՝ հատուկ կրթություն տրամադրող հաստատությունում կամ հնարավորության դեպքում, ներառական կրթություն տրամադրող հանրակրթական դպրոցում:

1.2 Ընդունելության համար օրենսդրությամբ անհրաժեշտ համարվող փաստաթղթերի ոչ լիարժեք լինելը

Հաստատություններ կատարած այցերի պահին երեխաներից շատերի անձնական գործերում բացակայել են ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ դրանք ամբողջական չեն եղել:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հատուկ հանրակրթական դպրոց է համարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը: Նույն օրենքի 17.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը:

Վերոնշյալ օրենքի 17.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի տված՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար պահանջվում է ծնողի կամ ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումը, եթե առկա է ծնողի համաձայնությունը: Այնուհետև, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը հաստատում է տարածքային կառավարման պետական մարմինը՝ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի եզրակացության հիման վրա:

ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1058-Ն «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» 2-րդ հավելվածի 20-րդ կետի համաձայն՝ եզրակացությունը տրամադրում է կենտրոնը՝ գնահատելով երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Դրա հիման վրա՝ տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Այսինքն՝ նշյալ օրենքով ամրագրված պահանջն այն մասին, որ երեխայի՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունենալու փաստը պետք է ամրագրվի նախ համապատասխան եզրակացությամբ, իսկ հետո տրամադրվի վկայագիր տարածքային կառավարման մարմնի կողմից, սահմանվում է նաև նշված որոշմամբ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 15-րդ կետով հստակ ամրագրվում է փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են սովորողին դպրոց ընդունելու համար և ներկայացվում են ծնողի կողմից:

Այցերի ընթացքում ուսումնասիրվել են հաստատություններում խնամք և դաստիարակություն ստացող երեխաների և չափահաս անձանց անձնական գործերը՝ ընդունելության փաստաթղթերի ամբողջականությունը և դրանց համապատասխանությունը պարզելու նպատակով: Ինչպես արդեն նշվեց վերևում, անձնական գործերում այդ փաստաթղթերն առհասարակ բացակայել են կամ ամբողջական չեն եղել: Մասնավորապես, այլ հատուկ հանրակրթական հաստատություններից տեղափոխված մի շարք երեխաների անձնական գործերում առկա է եղել միայն հիմնական



դպրոցի ավարտական վկայականը, բացակայել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիրը, ծնողների դիմումները, ուղեգրերը:

Օրինակ՝ Հանրապետական թիվ 1 կրթահամալիրում սովորող 1 երեխա, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում սովորող 2 երեխա, Գավառի մանկատանը խնամվող 2 երեխա չեն ունեցել ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերից մեկը կամ մի քանիսը (վկայագրեր, մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից տրամադրված եզրակացություններ և այլն):

Նշված խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է՝

1. անհապաղ իրականացնել անհատական սկզբունքով ստուգում և ապահովել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ հատուկ հանրակրթական հաստատություններ ընդունելության համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը,

2. բացառել առանց համապատասխան փաստաթղթերի առկայության երեխաների հաստատություն ընդունումը կամ գտնվելը:

### 1.3 Շենքային և բնակության պայմանները

Այցերի ընթացքում ուսումնասիրվել են հաստատությունների շենքային և բնակության պայմանները: Հատուկ ուշադրություն է դարձվել ննջարանների, սանհանգույցների, լոգարանների, խոհանոցի, ճաշարանի, դասասենյակների, մարզադահլիճի, պահեստային ու նկուղային, ինչպես նաև հաստատությունների մյուս հատվածների պայմաններին, որոնց ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ խնդիրներ:

#### Լոգարաններ և սանհանգույցներ

Մաքուր ջրի, զուգարանների առկայությունը և հիգիենայի ճիշտ պահպանումը կարևոր են երեխաների առողջության պահպանման և զարգացման համար:

Այսօր աշխարհում շուրջ 2,4 միլիարդ մարդ չի օգտագործում բարելավված սանիտարական միջոցներ, իսկ 663 միլիոնը չունի մաքուր ջուր: Հինգ տարեկան երեխաների համար ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված հիվանդությունները մահվան գլխավոր պատճառներից են: Ամբողջ աշխարհում ամեն օր 800-ից ավելի երեխա է մահանում վատ ջրից առաջացող կանխարգելման ենթարկվող հիվանդություններից և վատ սանիտարահիգիենիկ պայմաններից<sup>561</sup>:

Ջրի և սանիտացիայի հասանելիության ապահովումն այն առաջնային հարցերից է, որը բազմաթիվ պետություններում և միջազգային կազմակերպություններում քննարկման առարկա է: Վերջինի խոսուն փաստը «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ն է, որն ընդունվել է աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015 թվականի սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի գագաթնաժողովի ժամանակ: Օրակարգում ներառված 17 նպատակներում անմասն չեն մնացել նաև այնպիսի հարցեր, որոնք անդրադառնում են ջրի և սանիտացիայի հասանելիության խնդրին: Մասնավորապես, «Օրակարգ 2030»-ով նպատակ է դրված բոլորի համար ապահովել ջրի ու սանիտարական պայմանների հասանելիությունը և վերջիններիս կայուն ձևով կառավարումը, այդ ճանապարհին լուծելով անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր, հավասար հասանելիությունից ընդհուպ մինչև բոլորի համար համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման և ջրամատակարարման ու ջրահեռացման կառավարման բարելավման ոլորտներում առկա խնդիրները<sup>562</sup>:

<sup>561</sup> Տե՛ս ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կայքէջը, հասանելի է <https://www.unicef.org/wash/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>562</sup> Տե՛ս <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանի աշխատակազմը մշտադիտարկման աշխատանքներ է իրականացրել հանրակրթական և նախադպրոցական հաստատություններում, ինչպես նաև մանկատներում և գիշերօթիկ խնամքի հաստատություններում՝ ջրի և սանիտացիայի հասանելիության առկա վիճակին, բացերին, խնդիրներին և առաջնահերթություններին ծանոթանալու համար: Ուսումնասիրության արդյունքները հրապարակվել են արտահերթ զեկույցի տեսքով<sup>563</sup>:

2019 թվականին մշտադիտարկման այցերի ընթացքում հայտնաբերվել են հաստատությունների սանիտարահիգիենիկ պայմաններին, ինչպես նաև լոգարանի և սանհանգույցների մատչելիությանն առնչվող խնդիրներ:

Օրինակ՝ «Գավառի թիվ 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում, Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում, «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ում և «Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում սանհանգույցները հարմարեցված չեն եղել հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Որոշ սանհանգույցներ միմյանցից բաժանված են եղել միջնորմներով, սակայն չեն ունեցել դռներ: Օրինակ՝ Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում և «Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում:

Չուգարանի թղթի և օձառի բացակայության խնդիրն առկա է եղել «Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում: Մասնավորապես, ճաշարանի մոտ գտնվող սանհանգույցում չի եղել օձառ և Չուգարանի թուղթ: Օձառ չի եղել նաև ճաշարանի նախասրահում գտնվող լվացարանային հատվածում:

«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում սանհանգույցները գտնվել են սանիտարահիգիենիկ բավարար վիճակում, սակայն որոշ Չուգարանակոնքեր և լվացարաններ վնասված են եղել: Մասնավորապես, կոտրված են եղել Չուգարանակոնքերի նստատեղերը, մի քանի ծորակներ վնասված են եղել կամ բացակայել են:

Երեխայի իրավունքների կոմիտեի 2016 թվականի «Երեխաները և միջավայրը» զեկույցի Երեխաների իրավունքների պաշտպանությունը միջավայրի վնասից 4.1 բաժնում նշվում է, որ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածի համատեքստում պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու երեխաների համար առողջ միջավայր, որը սերտորեն կապված է այլ իրավունքների հետ: Սա ներառում է կյանքի, գոյատևման և զարգացման, սննդի, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների, կրթության, տնտեսական շահագործման չենթարկվելու, տեղեկացված լինելու և ապրուստի բավարար պայմանների իրավունք: Հավասարության և խտրական մոտեցման չենթարկվելու իրավունքները ենթադրում են, որ բոլոր երեխաները պետք է ունենան առողջ և ապահով միջավայր<sup>564</sup>:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցը սահմանում է դպրոցների համար սանիտարահիգիենիկ պահանջները: Մասնավորապես՝ դպրոցների սանհանգույցները պետք է մաքրվեն օրական առնվազն մեկ անգամ՝ օգտագործելով ախտահանիչ նյութեր, որոնք չպետք է օգտագործվեն մեծ քանակությամբ, որպեսզի չվնասեն

<sup>563</sup> Տե՛ս նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայքէջում, հասանելի է <https://ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>564</sup> Տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտեի 2016 թվականի «Երեխաները և միջավայրը» զեկույցի Երեխաների իրավունքների պաշտպանությունը միջավայրի վնասից 4.1 բաժնի, հասանելի է <https://www.ohchr.org/Documents/HRBodies/CRC/Discussions/2016/DGDoutcomereport-May2017.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

սովորողների առողջությանը: Սանհանգույցները պետք է ապահովված լինեն թղթով և օճառով<sup>565</sup>:

Մեկ այլ դեպքում, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ 2016 թվականի զեկույցում պահանջել է ապահովել նյարդահոգեբուժական կենտրոնի սանհանգույցի և լոգարանի վերանորոգումը<sup>566</sup>:

«Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Որոշում) հաստատված հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների օգնությամբ: Որոշման 17-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը երեխային ապահովում է կյանքի համար անվտանգ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի տարածությամբ՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը և առողջական վիճակը:

Անդրադառնալով վերը նշված հաստատություններում սանհանգույցների մատչելիության խնդրին՝ հարկ է նշել, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ֆիզիկական միջավայրի մատչելիության և հարմարեցվածության անհրաժեշտությունն ամրագրված է թե՛ ներպետական և թե՛ միջազգային փաստաթղթերով:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող երեխայի համար պետք է ապահովվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ: Նույն կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում<sup>567</sup>:

<sup>565</sup> Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցը, էջ 24, հասանելի է [http://www.who.int/water\\_sanitation\\_health/publications/wash\\_standards\\_school.pdf](http://www.who.int/water_sanitation_health/publications/wash_standards_school.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>566</sup> Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ ԽԿԿ-ի 2016 թվականի զեկույցի 181-րդ կետը, հասանելի է <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-mda-20150914-en-37> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>567</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ և 9-րդ հոդվածները, հասանելի է [http://www.un.org/res/un%20Treaties/III\\_15.pdf](http://www.un.org/res/un%20Treaties/III_15.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցով սահմանվում են դպրոցների համար սանիտարահիգիենիկ պահանջներ: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույցների համար սահմանված չափորոշիչները ներառում են թեքահարթակ, լայն դուռ, ներսում բավականաչափ տարածք անվասայլակով տեղաշարժման համար, հարմարեցված զուգարանակոնք և բռնակներ<sup>568</sup>: Նշված չափորոշիչներով ևս պահանջվում է, որպեսզի յուրաքանչյուր սանհանգույց պարտադիր ունենա դռներ:

Ուստի, խնդրահարույց է նաև հաստատությունների տարածքում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ապահովել հաստատությունների ողջ տարածքում, ներառյալ՝ մասնաշենքերի ներսում, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ պայմաններ,
2. ապահովել լոգարանի և սանհանգույցների սանիտարահիգիենիկ պատշաճ պայմանները,
3. սանհանգույցներում ապահովել զուգարանի թղթի, իսկ լվացարաններում՝ հեղուկ օձառի մշտական առկայությունը:

#### Ննջասենյակների պայմաններ

Այցերի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են մեծ թվով խնդիրներ հաստատությունների ննջասենյակներում:

«Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում ննջասենյակներում ոչ բոլոր երեխաներն են ունեցել անհատական կողապահարան: Այցի ընթացքում արձանագրվել է, որ տղաների ննջասենյակների կողապահարաններում առկա չի եղել ատամի մածուկ, իսկ ատամի խոզանակները պահվել են առանց պաշտպանիչ պատյանների: Այցի ընթացքում նշված խնդիրը բարձրաձայնվել է Պաշտպանի իրավասու ներկայացուցիչների կողմից, որին ի պատասխան կրթահամալիրի աշխատակիցները հայտնել են, որ տղաներին ատամի մածուկ տրվում է հաստատության աշխատակցի կողմից, քանի որ նրանք չունեն այն պատշաճ կերպով օգտագործելու հմտություններ:

«Գավառի թիվ 1 հատուկ դպրոց» կատարած այցի ընթացքում պարզվել է, որ երեխաների ատամի խոզանակները պահվում են առանձին սենյակում և երեխաներին են տրամադրվում հաստատության աշխատակցի կողմից: Ատամի խոզանակների վրա նշված էին երեխաների անունները և ազգանունները: Ուշագրավ է, որ երեխաների ատամի խոզանակները պահվում էին ոչ հիգիենիկ վիճակում, բոլորը մեկ տարրայի մեջ՝ առանց պաշտպանիչ գլխիկների:

«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում այցի ընթացքում արձանագրվել է, որ ոչ բոլոր սաների համար էր նախատեսված անձնական տարածք, պահարան կամ կողապահարան: Ննջասենյակներում առկա չէին այդտեղ գիշերող երեխաների թվին համապատասխան պահարաններ (օրինակ՝ չորս երեխայի հաշվով նախատեսված էր մեկ կամ երկու պահարան), որի պատճառով երեխաների հագուստը գտնվում էր ընդհանուր պահարանում: Արձանագրվել է, որ դպրոցի ննջասենյակներում սաների անձնական իրեր, այդ թվում՝ հիգիենայի պարագաներ (օրինակ՝ ատամի մածուկ) կամ նրանց հետաքրքրությունների

<sup>568</sup> Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցը, էջ 22, հասանելի է [http://www.who.int/water\\_sanitation\\_health/publications/wash\\_standards\\_school.pdf](http://www.who.int/water_sanitation_health/publications/wash_standards_school.pdf), հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

վերաբերյալ առարկաներ առկա չեն եղել: Այս կապակցությամբ ԽԿԿ-ն Խորվաթիայի վերաբերյալ 2013, ինչպես նաև Ադրբեջանի վերաբերյալ 2014 թվականների զեկույցներում սոցիալական խնամքի հաստատությունների առնչությամբ կարևորել է բնակիչների՝ անձնական, կողպելու հնարավորություն ունեցող պահարան, ինչպես նաև սենյակներում բնակիչների անհատականության և դա ընդգծող անձնական իրերի առկայության խթանումը<sup>569</sup>:

«Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ում երեխաների հազուստը, այդ թվում՝ ներքնահազուստը չի եղել անհատականացված և նույն խմբի երեխաներին հազուստը տրամադրվում էր պատահականության սկզբունքով: Զգեստապահարաններում և կողապահարաններում սաների հազուստից բացի պահվում էին նաև անկողնային պարագաները: Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն հավելվածով հաստատված 6-րդ չափորոշչի 14-րդ կետի համաձայն՝ մանկատունը և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը երեխային ապահովում է հազուստով և անձնական օգտագործման պարագաներով՝ ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից:

Մի շարք երկրների (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ) փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաստատություններում խնամվող երեխաները հնարավորություն ունեն ընտրելու իրենց հազուստը, ինչպես նաև միմիայն իրենց կողմից օգտագործման ենթակա հազուստ և անձնական իրեր:

Վերոնշյալ հաստատություններում զգեստապահարանների և կողապահարանների հետ կապված խնդիրը պետք է դիտարկել անձնական կյանքի իրավունքի տեսանկյունից: Այլ կերպ ասած՝ երեխաների համար պետք է երաշխավորվի մասնավորության նրանց իրավունքը: Այն, որ երեխաները գտնվում են հաստատությունում չի նշանակում, որ պետք է ընդհանրապես զրկված լինեն այդ իրավաչափ ակնկալիքից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հաստատություններում գիշերող երեխաներին ապահովել անհատական կողապահարաններով՝ երաշխավորելու համար մասնավորության նրանց իրավաչափ ակնկալիքը,

2. ապահովել, որ հաստատությունում խնամվող յուրաքանչյուր երեխա ունենա անձնական տարածք և անհատական հազուստ,

3. երեխաներին ապահովել անձնական հիգիենայի անհրաժեշտ պարագաներով, ինչպես նաև երեխաների հետ տանել ուսուցողական աշխատանքներ՝ սովորեցնելով անձնական հիգիենայի պարագաների օգտագործման հմտություններ:

<sup>569</sup> Տե՛ս Խորվաթիայի վերաբերյալ ԽԿԿ 2013 թվականի զեկույցի 117-րդ կետը, հասանելի է <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-hrv-20120918-en-35> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս նաև Ադրբեջանի վերաբերյալ ԽԿԿ 2014 թվականի զեկույցի 52-րդ կետը, հասանելի է <http://hudoc.cpt.coe.int/eng?i=p-aze-20131119-en-14> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

#### 1.4 Բժշկական օգնություն և սպասարկում

Հաստատություններում բացահայտվել են խնդիրներ, որոնք կապված են բժշկական թափոնների, բժշկական ծառայության կազմակերպման, դեղամիջոցների պահպանման և տրամադրման հետ և այլն:

Օրինակ՝ «Գավառի թիվ 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում երեխաներին տրամադրվում էր դեղորայք և իրականացվում էր բժշկական միջամտություն առանց այդ մասին բժշկական փաստաթղթերում ամրագրելու: Բժշկական փաստաթղթերի վարման կարգի բացակայության պատճառով երեխաներին տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ չէր արձանագրվում: Բժշկական միջամտության անհրաժեշտության պարագայում նախատեսված չեն ընթացակարգեր՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի և երեխայի իրազեկված համաձայնությունը ստանալու համար: Այս խնդիրն արձանագրվել է նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող այլ հաստատություններ կատարած այցերի ընթացքում, որը վկայում է այն մասին, որ խնդիրը կրում է համակարգային բնույթ: Օրինակ, նման խնդիր առկա էր նաև «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում և «Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում:

Ավելին, «Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում սաներին տրամադրվում էր դեղորայք՝ առանց բժշկի հիմնավորման: Ամբուլատոր մատյանում արձանագրվում էր միայն ախտանիշը և հատկացվող դեղատեսակը: Նման իրավիճակը ռիսկային է, քանի որ անձի նկատմամբ բժշկական ցանկացած միջամտություն պետք է իրականացնել բժշկական համապատասխան ցուցման առկայության պարագայում: Կրթահամալիրի սաների նկատմամբ պարբերաբար իրականացվում էր հելմինթոզների համաճարակաբանական հետազոտություն, սակայն այդ մասին որևէ արձանագրություն առկա չէր:

Հաստատությունում իրականացվող բուժման կամ բժշկական ցանկացած միջամտության պարագայում, բացառությամբ կյանքին սպառնացող վտանգի ժամանակ իրականացվող անհետաձգելի բժշկական օգնության, անհրաժեշտ է այդ մասին գրավոր կամ բանավոր եղանակով իրազեկել երեխայի ծնողին կամ օրինական ներկայացուցչին, ստանալ վերջինիս իրազեկված համաձայնությունը և բժշկական փաստաթղթերում կազմել արձանագրություն:

Վերոնշյալ հարցերն ունեն համակարգային լուծման կարիք: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել անչափահասների նկատմամբ դպրոցներում և խնամքի կենտրոններում բժշկական օգնության կիրառման մեխանիզմներ և այդ նպատակով կիրառվող թույլատրելի դեղատեսակներ և դրանց չափաբաժինները:

Այցերի ընթացքում մի շարք հաստատություններում հայտնաբերվել են ժամկետանց դեղեր:

Օրինակ՝ «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ում հայտնաբերվել է ժամկետանց «Օտրիվին բեբի» դեղամիջոց, որի պիտանելիության ժամկետը լրացել էր 2018 թվականի դեկտեմբեր ամսին:

«Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի բուժկետում նույնպես արձանագրվել են ժամկետանց դեղեր: Մասնավորապես, դեղորայքի պահարանում առկա էին ժամկետանց «Դեքսամեթազոն» 0,5 մգ, «Նո-Շպա» հիդրոքլորիդ 40 մգ, ամոնիակի 10%-անոց լուծույթ, վիտամին C (ասկորբինաթթու), կատվախտի լուծույթ 30 մլ: Բուժկետում առկա էր նաև «Նո-Շպա» դրոտավերին 40 մգ, որը պիտանիության ժամկետի մակնշման մասից կտրված էր, որի հետևանքով հնարավոր չէր պարզել տվյալ դեղորայքի պիտանիության ժամկետը:

«Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի բուժկետում այցի ընթացքում արձանագրվել են ժամկետանց դեղեր՝ «Յոդ» սպիրտային լուծույթ, «Ալբուցիտ լիկվո» աչքի կաթիլներ, «Վազելին» արտաքին օգտագործման քսուք և «Ամիակի» լուծույթ:

Մի շարք հաստատություններում առկա չէին ժամկետանց դեղերի հաշվառման, դուրս գրման և ոչնչացման մեխանիզմներ: Բժշկական թափոնները թափվում էին կենցաղային աղբի հետ: Օրինակ՝ «Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում դեղամիջոցների մի մասը տեղադրված էր առաջին օգտագործման պայուսակում, որով այցի օրը պետք է ուղեկցեին երեխաներին էքսկուրսիայի ժամանակ: Նշված դեղամիջոցների ոչ պիտանի լինելը պարզելուց հետո դրանք նետվեցին աղբամանի մեջ: Ավելին, բժշկական անձնակազմը ծանոթ չէր բժշկական թափոնների վարակազերծման ընթացակարգերին:

Բժշկական թափոնների հետ կապված խնդիրներ հայտնաբերվել են նաև «Գավառի թիվ 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում, «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ում, «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում և «Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում: Օրինակ՝ «Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչների կողմից դեղամիջոցների ոչ պիտանի լինելը պարզելուց հետո բժշկուհին դրանք նետել էր աղբամանի մեջ:

Այս առումով հարկ է նշել, որ վերոնշյալ իրավիճակը հակասում է ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով սահմանված կարգավորումներին:

Հարկ է նշել, որ տարբեր հաստատություններ կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ երեխաների առողջական վիճակի վերաբերյալ վարվում են արձանագրման տարբեր ձևաչափի բժշկական քարտեր և մատյաններ, որը վկայում է այն մասին, որ տվյալ հարցի կապակցությամբ առկա չէ միասնական քաղաքականություն և խնդիրն ունի համակարգային բնույթ:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է՝

1. ապահովել դեղորայքի, ախտահանիչ նյութերի պահման անվտանգ և պատշաճ պայմաններ,
2. բացառել ժամկետանց դեղերի առկայությունը և դրանց օգտագործումը,
3. բժշկական փաստաթղթերի վարման կարգում նախատեսել դեղորայքի տրամադրման հիմնավորումներ,
4. բժշկական միջամտություններն իրականացնել երեխայի, ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի իրազեկված համաձայնությունը ստանալուց հետո,
5. մշակել բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև առողջական վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման, պահպանման և վարման կարգեր,
6. երեխաների նկատմամբ ցանկացած բժշկական միջամտություն իրականացնել միայն բժշկի կողմից համապատասխան ցուցման պարագայում, բացառությամբ շտապ բուժօգնության տրամադրման,
7. ապահովել բժշկական թափոնների՝ օրենքով նախատեսված կարգով հեռացումը:

## 1.5 Մանկի կազմակերպում

Հաստատություններում արձանագրվել են խնդիրներ կապված խոհանոցների, ճաշարանների, սննդի պահման պահեստների սանիտարահիգիենիկ վիճակի, պատրաստի կերակրատեսակների նմուշառման կարգի և վերցված նմուշների պահպանման պայմանների, բուժաշխատողի կողմից խոհանոցի աշխատակիցների զննման ոչ պատշաճ կատարման, ճաշացանկերի, ժամկետանց և սննդակարգում օգտագործման համար անթույլատրելի սննդի, ինչպես նաև կոտրված եզրերով, վնասված սպասքի առկայության հետ:

Որոշ հաստատությունների խոհանոցներում, ճաշարաններում և սննդի պահման պահեստներում արձանագրվել են սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ: Օրինակ՝ Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի խոհանոցը գտնվում էր սանիտարահիգիենիկ ոչ բավարար վիճակում՝ սպասքի պահման դարակներում առկա էին կապույտ գույնի մաքրող փոշու մնացորդներ, ինչպես նաև տարայով մաքրող նյութ և ոչ մաքուր սպունգ: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի կողմից նշված հանգամանքը հայտնաբերելուց հետո խոհանոցի աշխատակիցը տարան տեղափոխել էր մեկ այլ դարակ՝ այն թողնելով նույն հակահիգիենիկ վիճակում: Բացի այդ, դպրոցի սննդի պահեստում նպարեղենը պահվում էր փակ դարակներում, որոնցում օդը ծանր էր և օդափոխության կարիք կար:

Մի շարք հաստատություններում պահպանված չէին պատրաստի կերակրատեսակների նմուշառման կարգը և վերցված նմուշների պահպանման պայմանները: Օրինակ՝ Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում առկա էին պատրաստի կերակրատեսակների նմուշները, սակայն տարաների վրա ամրագրված չէր պատրաստի սնունդ վերցնելու ժամը: Բացի այդ, խոհանոցի աշխատակիցների տեղեկացմամբ՝ պատրաստի կերակրատեսակների նմուշառումն իրականացվում էր միայն բուժքրոջ կողմից: Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցում ևս նախորդ երկու օրերին պատրաստված կերակրատեսակների նմուշների տարաների վրա ամրագրված չէր պատրաստի սնունդ վերցնելու ժամը, ինչպես նաև բացակայում էին այցի օրը պատրաստված կերակրատեսակների նմուշները: Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրի խոհանոցի աշխատակիցների տեղեկացմամբ՝ նմուշառումն իրականացվում էր խոհարարի կողմից՝ բժշկի և բուժքրոջ ներկայությամբ: Այցի պահին տվյալ օրվա նախաճաշի նմուշառումն արդեն կատարված էր, սակայն տարայի վրա ամրագրված չէր պատրաստի սնունդ վերցնելու օրը, ամիսը և ժամը: Ավելին, այցի պահին երեխաներն արդեն նախաճաշել էին, սակայն հաստատության բժիշկը դեռևս չէր եկել աշխատանքի, այսինքն, պատրաստի կերակրատեսակի նմուշառումը և բացթողումն իրականացվել էր առանց բժշկի ներկայության:

Մի քանի հաստատություններում չէր պահպանվում բուժաշխատողի կողմից խոհանոցի աշխատակիցների զննման կարգը:

Պարզվել է, որ օրինակ՝ Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրի խոհանոցի աշխատակիցներն այցի օրը կատարել էին պատրաստի կերակրատեսակի նմուշառում և երեխաներին մատուցել էին նախաճաշ առանց աշխատանքները սկսելուց առաջ բժշկի կողմից իրենց ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննման, քանի որ հաստատության բժիշկն այդ պահին կրթահամալիրում չէր: Խոհանոցի աշխատակիցների պնդմամբ՝ բժիշկն այցի օրն ուշացել էր աշխատանքից, սակայն վերջինս յուրաքանչյուր օր զննում է իրենց ձեռքերի եղունգները և զննման արդյունքները գրանցվում են Առողջության մատյանում, որը վարվում էր բժշկի կողմից: Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի խոհանոցի աշխատակիցների տեղեկացմամբ՝ յուրաքանչյուր օր՝ նախքան աշխատանքները սկսելը,



բուժքրոջ կողմից իրականացվում է իրենց ձեռքերի եղունգների զննում, սակայն զննման արդյունքները չեն գրանցվում Առողջության մատյանում: Բուժքրոջ մոտ առկա էր միայն համապատասխան ստուգաթերթ, որտեղ նշումներ էին արված այն մասին, որ խոհանոցի աշխատակիցներն առողջ են: Բուժքույրը դժվարացել էր պատասխանել այն հարցին, թե ինչ զննության հիման վրա է նման ախտորոշում կայացվում: Ավելին, դպրոցի աշխատակիցների տեղեկացմամբ՝ ավագ խոհարարն աշխատանքի է գալիս առավոտյան ժամը 07:00-ին, խոհարարի օգնականը՝ ժամը 08:00-08:30, երեխաների նախաճաշը տրամադրվում է ժամը 8:30-ին, իսկ բուժքույրն աշխատանքի է գալիս ժամը 09:00-ին: Տվյալ պարագայում պարզ չէ, թե ինչպես է բուժքույրը ներկա լինում պատրաստի կերակրատեսակի նմուշառմանը, ինչպես նաև կատարում խոհանոցի աշխատակիցների ձեռքերի եղունգների զննում՝ նախքան աշխատանքները սկսելը:

Ճաշացանկերի ուսումնասիրությունից պարզվել է, որ հաստատություններում սովորող և (կամ) խնամվող երեխաներին տրամադրվում է ոչ բավարար քանակի ձկնեղեն, կաթնեղեն, միրգ, հյութ: Բացի այդ, մի քանի հաստատություններում երեխաներին տրամադրվել է տվյալ հաստատություններում սննդակարգում օգտագործման համար անթույլատրելի սնունդ:

Պարզվել է, որ օրինակ՝ Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մեկ ամսվա ճաշացանկից ընդհանրապես բացակայում էին ձուկը և կաթը, իսկ միրգ մեկ ամսվա ընթացքում մատուցվել էր ընդամենը 5, հյութ՝ 13, կաթնաշոռ՝ 2 անգամ:

Ավելին, դպրոցի սննդի պահեստը գրեթե դատարկ էր և այնտեղ ընդհանրապես չկար միրգ: Դպրոցի աշակերտներից մեկը Պաշտպանի ներկայացուցչի հետ առանձնազրույցի ընթացքում հայտնել է, որ իրենց ամենօրյա ճաշացանկում միրգ հազվադեպ են ներառում և ինքը չի հիշում, թե վերջին անգամ երբ են իրենց միրգ մատուցել: Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի մեկ ամսվա ճաշացանկից ևս ընդհանրապես բացակայում էր ձուկը: Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցի մեկ ամսվա ճաշացանկի ուսումնասիրությունից պարզվել է, որ դպրոցի աշակերտներին տրամադրվել է աղացած մսով մակարոն և տապակած կարտոֆիլ, որը, սահմանված սանիտարական նորմերի համաձայն, հաստատությունների սննդակարգում օգտագործման համար անթույլատրելի սնունդ է: Բացի այդ, պարզվել է, որ երեխաներին մեկ ամսվա ընթացքում խնձորից բացի որևէ այլ տեսակի միրգ չի մատուցվել: Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրի մեկ ամսվա ճաշացանկի ուսումնասիրությունից պարզվել է, որ երեխաներին ձուկ տրամադրվել է ընդամենը 6 անգամ, կաթ՝ 9 անգամ, հյութ՝ 4 անգամ, կաթնաշոռ՝ 7 անգամ:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնների և նորմեր հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանի 24-րդ կետի համաձայն՝ ամենօրյա ճաշացուցակում ներառվում են միսը, կաթը, սերուցքային կարագը և բուսական յուղը, հացը՝ ցորենի և տարեկանի, շաքարը, կարտոֆիլը, բանջարեղենը, միրգը, հյութերը, ձավարեղենը և յոդացված աղը: Ձուկը, ձուն (հավկիթը), պանիրը, կաթնաշոռը և կաթնաթթվային սննդամթերքը տրվում են 2-3 օրը մեկ:

Նշված հրամանի 26-րդ կետով ամրագրված են սննդային գործոնով պայմանավորված զանգվածային վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների առաջացման ու տարածման, ինչպես նաև զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով ուսումնական հաստատություններում օգտագործման համար անթույլատրելի սննդամթերքի, ինչպես նաև այն ճաշատեսակների ու խոհարարական կերակրատեսակների ցանկը, որոնք չի կարելի պատրաստել: Մասնավորապես, նշված հրամանի 26-րդ կետի 11-

րդ և 17-րդ ենթակետերի համաձայն՝ չի թույլատրվում սննդակարգում օգտագործել աղացած մսով մակարոն, տապակած կերակրատեսակներ, այդ թվում՝ ֆրիտյուրի մեջ (ճարպով, յուղով)՝ կարկանդակներ, փքաբլիթներ, կարտոֆիլ, մսով կամ կաթնաշոռով պատրաստված բարակաբլիթներ (բլինչիկներ), չիպս և այլն:

Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի սննդի պահեստում հայտնաբերվել է ժամկետանց բժշկական երշիկ:

Որոշ հաստատությունների խոհանոցում առկա էր կոտրված եզրերով, վնասված սպասք: Օրինակ՝ Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի խոհանոցում առկա էին վնասված ափսեներ և բաժակներ՝ կոտրված եզրերով, չնայած այն հանգամանքին, որ պահեստում առկա էր ամբողջովին նոր, դեռևս չօգտագործված սպասք: Նշված հանգամանքն անընդունելի է, քանի որ կոտրված եզրերով սպասքի օգտագործումը ոչ միայն կարող է վնասվածքներ առաջացնել, այլ նաև մանրէների զարգացման համար նպաստավոր միջավայր լինել:

Այս առումով հատկանշական է, որ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 34-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկերը, որոնք անմիջական շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, անհրաժեշտ է կառուցված լինեն հիգիենայի պահանջները բավարարող նյութերից և պահվեն նորոգ ու բարվոք վիճակում, որպեսզի աղտոտման ցանկացած վտանգ հասցվի նվազագույնի:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ կատարած մշտադիտարկման այցերի արդյունքում պարզ է դարձել, որ սննդի կազմակերպման հսկողությանը ներկայացվող պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ հաստատությունների աշխատակազմի տեղեկացվածության պակասը կրում է համակարգային բնույթ, հետևաբար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել աշխատակազմի տվյալ բնագավառում վերապատրաստումների իրականացման անհրաժեշտությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ապահովել խոհանոցի, ճաշարանի և սննդի պահեստի սանիտարահիգիենիկ պատշաճ պայմաններ,

2. ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատրաստի կերակրատեսակների նմուշառման կատարումը և վերցված նմուշների պահպանումը,

3. յուրաքանչյուր օր, աշխատանքները սկսելուց առաջ, բուժաշխատողի կողմից իրականացնել խոհանոցի աշխատակիցների ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննում՝ թարախային վերքերի առկայության, ինչպես նաև վերին շնչուղիների կատարալ երևույթների և անզինանների նկատմամբ: Տվյալ զննման արդյունքները գրանցել «Առողջության մատյան»-ում,

4. մշակել նոր՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափորոշիչներին համապատասխան ամենօրյա ճաշացանկ, բացառել անթույլատրելի սննդատեսակների տրամադրումը, ինչպես նաև ժամանակին տրամադրել անհրաժեշտ տեսակի և քանակի սննդամթերք,

5. բացառել ժամկետանց սննդամթերքի օգտագործումը,

6. ապահովել սպասքի պահման պատշաճ պայմաններ և բացառել կոտրված եզրերով, վնասված սպասքի օգտագործումը,

7. իրականացնել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատակազմի վերապատրաստումներ՝ սննդի կազմակերպման հսկողությանը ներկայացվող պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ:

## 1.6 Վերաբերմունքը հաստատությունների սաների նկատմամբ

Այցերի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվել հաստատություններում սովորող և (կամ) խնամվող երեխաների միջև հարաբերություններին, ինչպես նաև նրանց նկատմամբ աշխատակիցների վերաբերմունքին: Այդ նպատակով տեղի են ունեցել առանձնագրույցներ և խմբային գրույցներ երեխաների ու աշխատակիցների հետ:

Առանձնագրույցների ընթացքում ստացվել են տեղեկություններ մի շարք հաստատություններում երեխաների միջև, նրանց նկատմամբ և նրանց կողմից աշխատակիցների նկատմամբ տեղի ունեցած բռնության դեպքերի մասին:

Մասնավորապես, Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրում երեխաների հետ տեղի ունեցած առանձնագրույցների և խմբային գրույցի ընթացքում մի քանի երեխաներ բողոքում էին աշխատակազմի՝ հատկապես գիշերային խնամքն իրականացնող աշխատակիցների կոպիտ վերաբերմունքից: Կրթահամալիրի աշխատակիցների տեղեկացմամբ՝ 2019 թվականի մայիս ամսին կրթահամալիրի երկու սաներ ծեծի են ենթարկել աշխատակիցներից մեկին, մասնավորապես, երեխաներից մեկը բռնել է ուսուցչի ձեռքերը, իսկ մյուսը փայտով հարվածել է նրան: Ըստ աշխատակիցների՝ կրթահամալիրի տնօրինությունը տվյալ միջադեպի մասին տեղյակ է պահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը: Բացի այդ, կրթահամալիրի աշխատակիցների տեղեկացմամբ, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցներով հրապարակված տեղեկությունների համաձայն<sup>570</sup>՝ կրթահամալիրի 14-ամյա սանը նույն կրթահամալիրի 16-ամյա սանի կողմից ենթարկվել է սեռական բռնության: Նշված փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ, որը 2019 թվականի մայիսի 31-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Մտահոգիչ է, որ վերոնշյալ միջադեպերն արձանագրված չէին կրթահամալիրում վարվող Մովորողների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցամատյանում: Այցի պահի դրությամբ գրանցամատյանում ընդամենը մեկ դեպք էր գրանցված, որի վերաբերյալ արձանագրված էր, որ երեխան վնասվածքը ստացել էր տանը, այլ ոչ թե կրթահամալիրում:

Գավառի մանկատան սոցիալական աշխատողները վարում էին հաստատությունում խնամվող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցամատյան, որտեղ այցի պահի դրությամբ որևէ դեպք հաշվառված չէր: Չնայած այս փաստին, առանձնագրույցների ընթացքում պարզվել է, որ 2019 թվականի սեպտեմբերի 8-ին երկու աղջիկների միջև տեղի է ունեցել վիճաբանություն, որի արդյունքում երեխաները ստացել են մարմնական վնասվածքներ: Ըստ բժշկական անձնակազմի՝ իրենք տեղյակ չեն եղել վիճաբանությունից և սաների ստացած վնասվածքներից այն դեպքում, երբ վիճաբանությանը մասնակցած երեխաներից մեկը, ըստ ամբուլատոր հաճախումների մատյանի, 2019 թվականի սեպտեմբերի 9-ին՝ դեպքի հաջորդ օրը, գլխացավ ունենալու զանգատով դիմել է բժշկական անձնակազմին՝ բժշկական օգնություն ստանալու համար: Դեպքի ուսումնասիրության նպատակով երեխաներից մեկից բացատրագիր է վերցվել տեղի ունեցածի վերաբերյալ: Բացատրագրի բովանդակությունը վկայում է այն մասին, որ երեխաների միջև տեղի է ունեցել լուրջ միջադեպ, որի մասին տեղյակ են եղել մնացած երեխաները և հաստատության աշխատակազմը, սակայն վերոնշյալ դեպքը որևէ կերպ չի արձանագրվել գրանցամատյանում՝ որպես երեխաների միջև տեղի ունեցած բռնության դեպք:

<sup>570</sup> Տե՛ս նյութը, հասանելի է <https://news.am/arm/news/517518.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշման հավելվածով հաստատված «Երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներ»-ի 2-րդ չափորոշիչի 7-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է ունենա երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 27.01.2017թ. թիվ 7-Ա/1 և ՀՀ կրթության և գիտության նախարարի 28.04.2017թ. թիվ 464-Ա/2 համատեղ հրամանով հաստատվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը:

Այնուամենայնիվ, գրեթե որևէ հաստատություն չի վարում երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան: Մի քանի հաստատությունում նշված գրանցամատյաններն առկա էին, սակայն խնդրահարույց էր դրանց պատշաճ վարման ապահովումը, քանի որ դրանք հիմնականում լրացված չէին և աշխատակազմը տեղեկացված չէր գրանցամատյանի վարման, ինչպես նաև իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդելու կարգի մասին:

Հաստատություններում երեխաների նկատմամբ, ինչպես նաև նրանց միջև բռնության դեպքերի հետ կապված կատարվել է նաև միջազգային չափանիշների ուսումնասիրություն: Մասնավորապես, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները՝ պաշտպանելու երեխային ծնողների, խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ սեռական շահագործում:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 13-րդ ընդհանուր մեկնաբանությունների 4-րդ կետով նախատեսվում է, որ այդ փաստաթղթի իմաստով «բռնություն» նշանակում է «ֆիզիկական կամ մտավոր որևէ տեսակի բռնություն, վնասվածք կամ չարաշահում, անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունք, վատ վերաբերմունք կամ շահագործում, ներառյալ սեռական շահագործում»՝ ինչպես նշված է Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին մասում:

Նշված մեկնաբանությունների 5-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի բոլոր անձինք, ովքեր իրենց աշխատանքի շրջանակներում պատասխանատու են բռնությունների կանխարգելման, դրանցից պաշտպանության և դրանց արձագանքելու համար, ինչպես նաև դատական համակարգում աշխատող անձինք հաշվի առնեն երեխաների կարիքները և հարգեն նրանց իրավունքները: Նույն փաստաթղթի 17-րդ կետով սահմանվում է, որ բռնության արգելքի որևէ բացառություն չի կարող լինել:

Նույն մեկնաբանությունների 19-րդ կետի համաձայն՝ բռնությունների տեսակների ոչ սպառիչ ցանկը վերաբերում է բոլոր պայմաններում կամ պայմանների անցման փուլերում գտնվող բոլոր երեխաներին: Երեխաները կարող են ենթարկվել բռնության մեծահասակների կողմից, ինչպես նաև բռնությունը կարող է տեղի ունենալ երեխաների միջև: Առկա է ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների՝ յուրաքանչյուր տեսակի բռնության ենթարկվելու վտանգ:

Ավելին, նշված մեկնաբանությունների 20-րդ կետի համաձայն՝ երեխաների նկատմամբ «անուշադրություն» նշանակում է երեխաների ֆիզիկական և հոգեբանական կարիքները չբավարարելը, նրանց վտանգից չպաշտպանելը, չտրամադրելը բժշկական, ծննդի գրանցման կամ այլ ծառայություններ, երբ երեխաների խնամքի համար պատասխանատու անձինք ունեն դրանք մատուցելու համար անհրաժեշտ միջոցներ, գիտելիք և ծառայությունների հասանելիություն: Այս առումով նույն կետի ա) ենթակետում նշվում է, որ «ֆիզիկական անուշադրություն» նշանակում է չպաշտպանելը երեխային վնասից, ներառյալ՝ վերահսկողության պակասի կամ երեխայի համար անհրաժեշտ նվազագույն պայմաններ՝ բավարար սնունդ, կացարան, հագուստ և նվազագույն բժշկական սպասարկում, չտրամադրելու պատճառով:

Երեխաների միջև բռնության հետ կապված (նման դեպքերի վերաբերյալ տեղեկություններ ստացվել էին նաև այցերի ընթացքում) հարկ է նշել, որ նույն փաստաթղթի 27-րդ կետով նախատեսվում է «երեխաների միջև բռնության» մեկնաբանությունը: Դա ներառում է ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնությունը, հաճախ ահաբեկելու միջոցով, որն իրականացվում է երեխաների կողմից այլ երեխաների դեմ՝ հաճախ երեխաների խմբի կողմից: Այն ոչ միայն վնասում է երեխայի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանն ու բարեկեցությանը, այլ նաև բացասաբար է անդրադառնում նրա զարգացման, կրթության և սոցիալական ինտեգրման վրա: Նույն կետում նշվում է նաև, որ չնայած երեխաներն են դա իրականացնում, այնուամենայնիվ, նրանց համար պատասխանատու մեծահասակների դերը կարևոր է յուրաքանչյուր դեպքում՝ պատշաճ կերպով դրանց արձագանքելու և բռնությունը կանխարգելելու, ապահովելու, որպեսզի բռնության դեպքերը չկրեն պատժիչ բնույթ և չկիրառվի բռնություն բռնության դեմ:

Ուշադրության է արժանի այն, որ նշված փաստաթղթի 32-րդ կետը սահմանում է իրավասու մարմինների պատասխանատվությունը նման իրավիճակներում: Մասնավորապես, երեխաներին բռնությունների բոլոր ձևերից պաշտպանված լինելու համար պատասխանատու մարմինները կարող են ուղղակի կամ անուղղակի կերպով վնաս պատճառել, քանի որ չունեն Կոնվենցիայով ստանձնած պարտականությունների իրականացման միջոցներ: Նման բացթողումները ներառում են օրենսդրություն չընդունելը, օրենքներին և այլ կարգավորումներին չհետևելը, ինչպես նաև անհրաժեշտ նյութական, տեխնիկական և մարդկային ռեսուրսների ու կարողությունների բացակայությունը, որը պետք է ուղղված լինի բացահայտելու, կանխելու և արձագանքելու երեխաների հանդեպ բռնությունը<sup>571</sup>:

Ասվածը նշանակում է, որ երեխաների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության ցանկացած դրսևորում՝ անկախ նրանից դա իրականացվել է հաստատության աշխատակիցների կողմից, թե երեխաների միջև, պետք է առաջացնի իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաստատություններում սովորող և (կամ) խնամվող երեխաների հանդեպ և նրանց միջև հնարավոր բռնության դեպքերը բացառելու համար: Ներդնել նման կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմ,

<sup>571</sup> Տե՛ս Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 13-րդ ընդհանուր մեկնաբանությունների 4-րդ, 5-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 27-րդ և 32-րդ կետերը, հասանելի է [https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13\\_en.pdf](https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2. հաստատություններում վարել երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան՝ ապահովելով նման բոլոր դեպքերի պատշաճ կարգով արձանագրումը,

3. հաստատություններում սովորող և (կամ) խնամվող երեխաների՝ իրենց ընտանիքի անդամների և այլ անձանց հետ կապն ապահովելու, այդ թվում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծին զանգահարելու հնարավորություն ապահովելու նպատակով՝ տեղադրել հեռախոս ու ապահովել հեռախոսակապի հասանելիությունը,

4. իրականացնել խորացված և շարունակական բնույթ կրող վերապատրաստումներ հաստատությունների աշխատակազմի համար՝ իրավասու մարմիններին, այդ թվում՝ ոստիկանությանն այդ մասին ժամանակին հայտնելու և համապատասխան մատյաններ վարելու, կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու ընթացակարգերի վերաբերյալ:

### 1.7 Հաստատության սաների դիմում կամ բողոք ներկայացնելու իրավունքը

Հաստատություններում առկա չեն եղել սաների կողմից բողոք կամ առաջարկություն ներկայացնելու հնարավորություններ, ինչպես նաև բողոքների և առաջարկությունների համար նախատեսված արկղեր: Որոշ դեպքերում այդ արկղերը գտնվել են հաստատության վարչակազմի ներկայացուցիչներից մեկի սենյակում, ինչը հակասում է երեխայի լաված լինելու իրավունքին: Օրինակ՝ Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրում առկա չէր բողոքների և առաջարկությունների համար նախատեսված արկղ: Երեխաների հետ առանձնագրույցներից պարզվել է, որ նրանք որևէ կերպ տեղեկացված չեն բողոքարկման ընթացակարգերի վերաբերյալ: Ավելին, կրթահամալիրի աշխատակազմը ևս տեղեկացված չէր հաստատությունում բողոքների և առաջարկությունների արկղի տեղադրման անհրաժեշտության վերաբերյալ: Գավառի թիվ 1 հատուկ դպրոցում առկա էր բողոքների և առաջարկությունների համար նախատեսված արկղ, որը, սակայն, տեղադրված էր հոգեբանի սենյակում: Երեխաների հետ տեղի ունեցած առանձնագրույցներից պարզ է դարձել, որ նրանց մեծ մասը տեղյակ չէ բողոքարկման արկղի առկայության վերաբերյալ: Նշված իրավիճակը բարդացնում է նման հաստատություններում բռնության դեպքերի բացահայտումը և դրանց կանխարգելումը:

Հաստատություններում առկա չի եղել արկղերը բացելու, դիմումները և բողոքները հաշվառելու և դրանց արձագանքելու ներդրված մեխանիզմ: Հաստատությունները չունենին նաև երեխաների համար մատչելի ձևով պատրաստված տեղեկատվական նյութեր՝ երեխաների կողմից որևէ պետական մարմնին կամ Մարդու իրավունքների պաշտպանին բողոք հասցեագրելու վերաբերյալ:

Գրեթե բոլոր հաստատություններում երեխաների հետ առանձնագրույցներից պարզվել է, որ երեխաները չունեն բավարար գիտելիքներ իրենց իրավունքների խախտումների դեպքում իրավասու մարմիններին դիմելու վերաբերյալ: Սա ևս մեկ խոչընդոտ է երեխաների իրավունքների և լավագույն շահերի ապահովման տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ երեխան ունի ազատ արտահայտվելու և լաված լինելու սահմանադրական իրավունք:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Երեխայի՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը երաշխավորվում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով: Ավելին, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ հաստատվել են երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները: Նշված որոշման 2-րդ չափորոշիչի 4-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի և նրա շահերից հանդես եկող անձանց (ծնողական իրավունքից չզրկված ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ, հարազատներ)՝ մանկատան անձնակազմի անօրինական գործողությունները բողոքարկելու իրավունքի իրացումը, սահմանում է օրենքին համապատասխանող բողոքարկման ներքին կարգ և պահում հատուկ արկղ՝ բողոքների և առաջարկությունների համար:

Նկարագրված խնդրին Պաշտպանն անդրադարձել է նաև առանձին վերլուծությամբ<sup>572</sup>, որտեղ ներկայացվել են երեխաների հետ իրականացված ֆոկուս-խմբերի քննարկումների արդյունքները, ինչպես նաև խնդրին վերաբերող միջազգային փորձը: Օրինակ՝ Անգլիայի անչափահաս իրավախախտների հաստատություններում գործում է բողոքարկման հատուկ մեխանիզմ: Մասնավորապես, երեխաներն իրենց բողոքները ներկայացնում են փակ ծրարով, որն անմիջապես փոխանցվում է հաստատությունը վերահսկող մարմնին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հաստատություններում՝ երեխաների համար մատչելի վայրում, տեղադրել բողոքարկման արկղ, սահմանել այն բացելու, բողոքները հաշվառելու և հասցեատիրոջն ուղարկելու ընթացակարգ՝ ապահովելով գաղտնիության պահպանմամբ դիմում-բողոք գրելու հնարավորությունը,

2. նշված արկղերի վրա կամ տեսանելի այլ վայրում փակցնել դիմում-բողոքներ գրելու վերաբերյալ տեղեկություններ,

3. ապահովել երեխաների իրազեկվածությունը բողոքարկման մեխանիզմների մասին,

4. իրազեկել երեխաներին Պաշտպանի աշխատակազմում գործող՝ բողոք կամ դիմում ներկայացնելու և կարծիք արտահայտելու հեռախոսային և առցանց հնարավորությունների մասին,

5. ստեղծել առանձնացված հեռախոսային կապի հնարավորություն, որի միջոցով երեխաները կարող են ներկայացնել իրենց բողոքը Մարդու իրավունքների պաշտպանին կամ տվյալ հաստատության գործունեությունը վերահսկող լիազոր պետական մարմնին:

## 2. Մանկական աղքատության հիմնախնդիրը

Մանկական աղքատությունը կարող է երկարաժամկետ բացասական հետևանքներ ունենալ երեխաների կյանքի որակի և հետագայում որպես չափահաս մարդ հասարակության լիարժեք անդամ լինելու վրա: Աղքատության մեջ ապրող երեխաները հաճախ զրկվում են առողջապահական ծառայություններից, կրթությունն ավարտին հասցնելու և պատշաճ կենսապայմաններում ապրելու հնարավորությունից:

Այն երեխաները, ովքեր չեն իրացնում իրենց լիարժեք ներուժը, չեն կարող ամբողջական մասնակցություն ունենալ սոցիալական, քաղաքական և տնտեսական աճին: Աղքատության մեջ մեծացող երեխաների՝ չափահաս տարիքում ևս անապահով լինելու

<sup>572</sup> Տե՛ս [http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/Guidelines-for-Ombudsman\\_arm.pdf](http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/Guidelines-for-Ombudsman_arm.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հավանականությունն առավել մեծ է: Յուրաքանչյուր պետության երկարաժամկետ քաղաքականությունը պետք է լինի երեխաների զարգացումը և երեխայակենտրոն սոցիալական պաշտպանության ծրագրերի ստեղծումը՝ մանկական աղքատության կանխարգելման և հաղթահարման համար:

Մանկության շրջանում աղքատությունն առաջ բերող ռիսկերն առավել մեծ են, քան՝ չափահաս տարիքում: Ավելին, աղքատությունը շատ դեպքերում առավել խոցելի է դարձնում հաշմանդամություն ունեցող, բազմանդամ ընտանիքներում, հեռավոր գյուղական համայնքներում ապրող երեխաներին:

Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով և ներպետական իրավական ակտերով ամրագրված են երաշխիքներ՝ ուղղված երեխայի բարեկեցության պահպանմանը:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ երեխան իրավունք ունի օգտվելու սոցիալական ապահովությունից (ներառյալ՝ սոցիալական ապահովագրությունից), և տվյալ պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ համաձայն իր ազգային օրենսդրության:

Կոնվենցիայի 27-րդ հոդվածով ամրագրված է, որ պետությունը պետք է ծնողներին և երեխային դաստիարակող այլ անձանց օգնություն ցույց տա և հարկ եղած դեպքում ցուցաբերի նյութական աջակցություն ու սատարում հատկապես՝ սննդով, հագուստով և բնակարանով ապահովելու ծրագրերով:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված է երեխայի սոցիալական ապահովության իրավունքը, իսկ Կոնվենցիայով ամրագրված է նաև երեխայի՝ անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը: Կոնվենցիան վավերացրած բոլոր երկրներն ընդունել են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի, որի ապահովման իրացման գործում կարևոր դեր ունի պետությունը:

2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի<sup>573</sup> առաջին նպատակի համաձայն՝ մինչև 2030 թվականը պետք է առնվազն կիսով չափ կրճատվի ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը:

Սակայն պետք է նշել, որ չնայած վերոգրյալ երաշխիքներին՝ Հայաստանում դեռևս կան բազմաթիվ երեխաներ, ովքեր աղքատ կամ ծայրահեղ աղքատ են:

Երեխաների աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են Հայաստանի հանրապետության վիճակագրական կոմիտեի 2019 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցում<sup>574</sup>: Տվյալ զեկույցում նշվում է, որ 2018թ.-ին 0-5 և 6-9 տարեկան երեխաների շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր է այլ տարիքային խմբերի համեմատ: Բազմանդամ և երեխաներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է:

Հայաստանում մինչև 6 տարեկան երեք և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսություններն (ըստ բնակչության) ունեն աղքատության 3 անգամ ավելի բարձր ռիսկ (71.2%)՝ հանրապետական միջին մակարդակի համեմատ (23.5%): Հայաստանում

<sup>573</sup> Տե՛ս Կայուն զարգացման նպատակները, հասանելի է <https://sustainabledevelopment.un.org/?menu=1300> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>574</sup> Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջում, հասանելի է <https://www.armstat.am/am/?nid=82&id=2217> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



յուրաքանչյուր չորս երեխաներից մեկը և յուրաքանչյուր չորս կանանցից մեկն ապրում են բազմաչափ աղքատության մեջ:

Վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2018թ-ին մինչև 18 տարեկան երեխաների 1.5%-ն ապրել է ծայրահեղ աղքատության, իսկ 29.2%-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է Հայաստանի Հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 1.0 և 23.5%-ը: Այսպիսով, երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ, քան ամբողջ բնակչությունը: 2018թ.-ին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 23.9%-ը ստացել է ընտանեկան նպաստ: Ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 34.7%-ը, ծայրահեղ աղքատների՝ 55.6%-ը և ոչ աղքատների՝ 22.7%-ը: 2018թ.-ի տվյալները ցույց են տալիս մանկական աղքատության փոքր տարբերությունն ըստ սեռի. աղքատ է աղջիկների 28.6 և տղաների՝ 29.8%-ը (բոլոր երեխաների 29.2%-ը): Մանկական աղքատությունն ըստ տարածաշրջանների հետևյալն է. քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.7%՝ գյուղական բնակավայրերում բնակվող երեխաների 1.3%-ի համեմատ, իսկ երեխաների ընդհանուր աղքատության մակարդակը, համապատասխանաբար 31.2%՝ 26.4%-ի համեմատ:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ աղքատության ռիսկը նվազում է, երբ երեխան ապրում է այնպիսի տնային տնտեսությունում, որտեղ գլխավորի կրթական մակարդակը բարձր է: Աղքատ լինելու հավանականությունն էապես ավելի բարձր է այն երեխաների շրջանում, որոնք ապրում են այնպիսի տնային տնտեսություններում, որոնց գլխավորը կրթություն չունի կամ ունի տարրական կրթություն (43.5%), ունի ոչ լրիվ միջնակարգ կրթություն (46.2%), ունի միջնակարգ ընդհանուր կրթություն (33.1%), միջին մասնագիտական կրթություն (25.4%), համեմատ այն երեխաների, որոնք բնակվում են այնպիսի տնային տնտեսություններում, որտեղ գլխավորն ունի բարձրագույն կրթություն (15.3%): Ծայրահեղ աղքատության ռիսկն ամենաբարձրն է այն երեխաների շրջանում, որոնք բնակվում են ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողի գլխավորությամբ տնային տնտեսություններում: Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության կարգավիճակը նույնպես մանկական աղքատությունը կանխորոշող կարևոր գործոն է:

Վիճակագրական կոմիտեի տվյալներով աղքատության մեջ ապրող երեխաները հաճախ բնակվում են կացարանային կարևոր հարմարություններից զուրկ տներում: Տներում բացակայում է հոսող տաք ջուր, կենտրոնացված գազամատակարարում, ստացիոնար հեռախոս, լոգարան կամ ցնցուղ: Երեխաների ընդհանուր թվաքանակի 22%-ը բնակվում է վատ կամ շատ վատ համարվող կացարանային պայմաններ ունեցող տնային տնտեսություններում, աղքատ երեխաների շրջանում այն կազմում է 33%, իսկ ծայրահեղ աղքատ երեխաների շրջանում՝ 59%:

Անդրադառնալով նախորդ տարվա վիճակագրական տվյալներին, նշենք, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2018 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցի<sup>575</sup> համաձայն՝ 2017թ.-ին մինչև 18 տարեկան երեխաների 2.1%-ն ապրել է ծայրահեղ աղքատության, իսկ 30.8%-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է եղել Հայաստանի Հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 1.4%-ը և 25.7%-ը: Նշված վիճակագրական պատկերը համեմատելով «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2017 թվականի զեկույցի շրջանակներում հրապարակված տվյալների հետ, ըստ որոնց՝ 2016թ.-ին

<sup>575</sup> Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջում, հասանելի է <https://www.armstat.am/am/?nid=82&id=2095> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

երեխաների 2%-ն է ապրել է ծայրահեղ աղքատության, իսկ 34.2%-ն՝ աղքատության մեջ՝ կարող ենք նշել, որ 2016 թվականի համեմատ երեխաների աղքատության ցուցանիշները 2017 թվականին աճել են:

2018 թվականին աղքատության ցուցանիշները նվազել են ծայրահեղ աղքատության դեպքում 0.6, իսկ աղքատության՝ 1.6 տոկոսով: Աղքատության վիճակագրական տվյալների նվազումը դրական է, սակայն դեռևս կան երեխաներ, որոնք աղքատ կամ ծայրահեղ աղքատության մեջ են ապրում, որը բնականաբար բացասաբար է անդրադառնում երեխաների իրավունքների իրացման վրա:

ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2019 թվականի վիճակագրական վերլուծական զեկույցում մանկական աղքատությունը ներկայացված է նաև ըստ տարածաշրջանների:

Մանկական աղքատության մակարդակն էապես տարբերվում է ըստ մարզերի: Մարզերի միջև տարբերությունները զգալի են թե՛ ծայրահեղ, թե՛ ընդհանուր աղքատության առումով: Ծայրահեղ մանկական աղքատությունը տատանվում է ամենացածր՝ 0.0%-ից (Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի և Սյունիքի մարզեր) մինչև ամենաբարձր՝ 4.2% (Լոռու մարզ): Նմանատիպ միտում է նկատվում նաև երեխաների աղքատության ընդհանուր մակարդակի առումով: Արագածոտնում երեխաների աղքատության մակարդակն ամենացածրն է՝ 15.4%, իսկ Շիրակի մարզում ամենաբարձրը՝ 46.0%:

Ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտն ազդում է մանկական աղքատության միջին մակարդակի վրա: Երեխաների ընդհանուր թվաքանակի 23.9%-ն ապրում է այնպիսի տնային տնտեսություններում, որոնք ստանում են ընտանեկան նպաստ: Տնային տնտեսության ընդհանուր ծախսերից ընտանեկան նպաստները հանելու դեպքում մանկական ծայրահեղ աղքատության մակարդակն աճում է՝ 1.5%-ից հասնելով 7.0%-ի, իսկ մանկական աղքատության ընդհանուր մակարդակն աճում է 4.5 տոկոսային կետով՝ 29.2%-ից հասնելով 33.7%-ի: Դա վկայում է այն մասին, որ ընտանեկան նպաստի տեսքով ստացվող եկամուտը շատ կարևոր է ծայրահեղ աղքատ և աղքատ տնային տնտեսությունների համար:

Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2019 թվականի զեկույցի՝ 2018թ.-ին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 23.9%-ը ստացել է ընտանեկան նպաստ: Ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 34.7%-ը, ծայրահեղ աղքատների՝ 55.6%-ը և ոչ աղքատների՝ 22.7%-ը:

Ստացվում է, որ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների կեսից ավելին ստանում ընտանեկան նպաստ, իսկ ոչ աղքատ տնային տնտեսությունների զգալի մասը՝ 22.7%-ը, օգտվում է ընտանեկան նպաստի տրամադրման պետական ծրագրերից: Պետք է նշել, որ ընտանեկան նպաստի համակարգը կարևոր գործոն է աղքատության նվազեցման ուղղությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում ընտանեկան նպաստների համակարգի բարելավման և հասցեականության բարձրացման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր:

Ըստ Նախարարության տրամադրած տեղեկությունների՝ շարունակվել են «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի իրականացման աշխատանքները, որի շրջանակներում տրամադրվող ընտանեկան նպաստը սահմանում է ընտանիքի մինչև 18 տարեկան անդամներին տրվող հավելումներ, որոնց չափը տարբերակվում է՝ ելնելով ընտանիքի անապահովությունից, ընտանիքի մինչև 18 տարեկան անդամների թվից և ընտանիքի բնակության վայրից (բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր):

2019 թ. ընտանեկան նպաստ է ստացել միջինը 62734 ընտանիք, որտեղ մինչև 18 տարեկան անդամների միջին թիվը կազմել է 145750:

Ընտանիքների անապահովության համակարգում հասցեականության և թափանցիկության բարձրացման նպատակով 2019 թ. ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2019 թ. հունվարի 17-ի N 22-Ն, 2019 թ. ապրիլի 18-ի N 459-Ն, 2019 թ. ապրիլի 25-ի N 474-Ն, 2019 թ. մայիսի 16-ի N 567-Ն, 2019 թ. սեպտեմբերի 19-ի N 1249-Ն և 2019 թ. դեկտեմբերի 26-ի N 1923-Ն որոշումներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման մեջ, որոնցով վերանայվել են անապահովության գնահատման մոտեցումներն ու մեթոդաբանությունը՝ հիմք ընդունելով ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը՝ հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին ուղղված սկզբունքային մոտեցումը:

ՀՀ կառավարության 2014 թ. հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ կատարվել է լրացում, համաձայն որի՝ սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներն ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չեն մտնում, իսկ 2020 թ. ապրիլի 1-ից ուժի մեջ կմտնի նաև դրույթ, համաձայն որի՝ ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքի աշխատունակ անդամների աշխատանքի անցնելու դեպքում ընտանիքը վեց ամիս կշարունակի ստանալ նպաստ: Համակարգում կատարված փոփոխությունները հնարավորություն են տալիս ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկելու նաև այն ընտանիքներին, որոնք չունեն որոշակի բնակչության վայր և ընտանիքի բոլոր անդամները հաշվառված չեն բնակչության պետական ռեգիստրում (ընտանիքն անապահովության գնահատման համակարգում կհաշվառվի տարածքային կենտրոնի հասցեով):

Հարկ է նշել նաև, որ ընտանեկան և սոցիալական նպաստների համակարգում առկա խնդիրների բացահայտման, համակարգի հասցեականության և արդյունավետության բարձրացման, նպաստառուների համար կայուն եկամտի ստեղծմանն ուղղված համակարգի ներդրման նպատակով ՀՀ վարչապետի 2019 թ. փետրվարի 26-ի N 180-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ և հաստատվել դրա անհատական կազմը:

Այսպիսով, նկարագրված խնդրի լուծման կապակցությամբ ձեռնարկվել են քայլեր, սակայն վիճակագրական տվյալներից երևում է, որ խնդիրը շարունակում է մնալ արդիական և վերջին տարիներին երեխաների իրավունքների պաշտպանության լրջագույն մարտահրավերներից մեկն է: Սա պարտավորեցնում է պետությանն անհապաղ քայլեր ձեռնարկել մանկական աղքատության կրճատման ու վերացման ուղղությամբ:

Երեխաների աղքատության դեմ պայքարի համար կարևոր նշանակություն ունի պետության կողմից ընտանիքի աջակցության ծրագրերի իրականացումը, երեխաների աղքատության ռազմավարության մշակումը և իրականացումը, ինչպես նաև թիրախավորված սոցիալական ծրագրերի ներդրումը:

Ելնելով վերոգրյալից՝ երեխաների աղքատության հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է՝

1. բարձրացնել բնակչության իրազեկվածությունը գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ,
2. մշակել թիրախային աջակցության ծրագրեր՝ հաշվի առնելով երեխաների աղքատության ցուցանիշներն՝ ըստ մարզերի,

3. բարձրացնել ծայրահեղ աղքատ և աղքատ ընտանիքների ընդգրկվածության մակարդակն ընտանեկան նպաստի համակարգում այնպես, որ ապահովվի աղքատության իրական ու հիմնարար հաղթահարում:

### 3. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը

Երեխայի նկատմամբ բռնությունը նրա իրավունքները, այդ թվում՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը խախտող, երեխայի լավագույն շահերին հակասող երևույթ է: Այն կարող է հանդիպել դպրոցում, ընտանիքում և այլ վայրերում: 2019 թվականի ընթացքում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը ստացել է տեղեկություններ և բողոքներ երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ երեխաների նկատմամբ բռնության հարցերով հատուկ ներկայացուցիչն իր զեկույցում ներկայացրել է դպրոցներում երեխաների նկատմամբ բռնության չորս տեսակ՝ բուլլինգ, ֆիզիկական բռնություն, հոգեբանական բռնություն և դպրոցից դուրս կատարվող բռնություն<sup>576</sup>: Զեկույցը նաև առանձնացնում է սեռական բռնությունը՝ որպես տարածված երևույթ: Ամբողջ աշխարհում 13-15 տարեկան 150 միլիոն երեխա դպրոցի տարածքում կամ դպրոցի տարածքից դուրս իրենց հասակակիցների կողմից ենթարկվում է բռնության: 720 միլիոն դպրոցահասակ երեխա ապրում է այն երկրներում, որտեղ դպրոցներում մարմնական պատիժներն ամբողջությամբ արգելված չեն<sup>577</sup>:

Դպրոցը կամ ուսումնական այլ հաստատություն կարող է կանխարգելիչ նշանակություն ունենալ երեխային աշխատանքի մեջ ներգրավման, վաղ ամուսնության համար, ինչպես նաև բռնության ենթարկված երեխայի համար լինել ապահով վայր: Սակայն պետք է նշել, որ ապահով, երեխայակենտրոն, ներառական և ընկերական միջավայրի փոխարեն դպրոցում հնարավոր է հանդիպել նաև երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի:

Բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու երեխայի իրավունքը երաշխավորվում է մի շարք ներպետական և միջազգային իրավական ակտերով: Այն ամրագրված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, որի 19-րդ հոդվածով սահմանվում է երեխայի՝ ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից պաշտպանված լինելու իրավունքը:

Կոնվենցիայի 28-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով: Ավելին, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հանրակրթությունը նպատակառոտված է, ի թիվս այլնի, յուրաքանչյուր սովորողի մարդկային արժանապատվության պահպանմանը: Բացի այդ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

<sup>576</sup> Տե՛ս

[https://violenceagainstchildren.un.org/sites/violenceagainstchildren.un.org/files/documents/publications/10\\_tackling\\_violence\\_in\\_schools\\_a\\_global\\_perspective.pdf](https://violenceagainstchildren.un.org/sites/violenceagainstchildren.un.org/files/documents/publications/10_tackling_violence_in_schools_a_global_perspective.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>577</sup> Տե՛ս [https://www.unicef.org/publications/files/An\\_Everyday\\_Lesson-ENDviolence\\_in\\_Schools.pdf](https://www.unicef.org/publications/files/An_Everyday_Lesson-ENDviolence_in_Schools.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ՄԱԿ-ի կողմից հրապարակված երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ անկախ փորձագիտական ուսումնասիրությամբ նշվում է, որ երեխայի նկատմամբ բռնությունը հաճախ թաքնված երևույթ է, քանի որ երեխաները վախենում են հայտնել բռնության դեպքերի մասին: Բռնության մասին չի բարձրաձայնվում, քանի որ այն ընդունելի է հասարակության կողմից որպես կարգապահական մեթոդ<sup>578</sup>:

Երեխաների նկատմամբ բռնության լատենտայնությունը նպաստում է հասարակությունում այդ երևույթի ոչ ճիշտ ընկալումը: «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի թիվ 30 արձանագրային որոշման թիվ 1 հավելվածի հիմնախնդիրներ բաժնում որպես երեխաների իրավունքների հիմնախնդիր նշվում է երեխայի նկատմամբ բռնության երևույթի հանդեպ հասարակական հանդուրժողականությունը:

Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 28-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը հաստատելու մասին» N7-Ս/1 և N464Ս/2 համատեղ հրամանով ստեղծվել են հաստատություններում սովորողների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման, բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման համար ընթացակարգեր:

Նմանատիպ դրական փորձը կարող է կիրառվել նաև հանրակրթական դպրոցներում բռնության կանխարգելման և վերացման նպատակով: Մինչդեռ, ներկայում դպրոցներում չի գործում բռնության դեպքերի բացահայտման և հաղորդման ընթացակարգ: Չնայած վերոնշյալ համատեղ հրամանի առկայությանը, գրեթե որևէ հաստատություններում պատշաճ ձևով չեն արձանագրվում երեխաների նկատմամբ և երեխաների միջև տեղի ունեցած բռնության դեպքերը (առավել մանրամասն տե՛ս սույն բաժնի 1.6 պարագրաֆը):

Հիմնվելով Պաշտպանին հասցեագրվող բողոքների, դեպքերի ուսումնասիրության և աշակերտների հետ գրույցների վրա՝ Պաշտպանի տարեկան հաղորդումներում բազմիցս բարձրաձայնվել է բռնության դեպքերի հայտնաբերման և կանխարգելման կարևորության մասին: 2019 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմը ստացել է դպրոցներում և մանկապարտեզներում անձնակազմի կողմից երեխայի նկատմամբ բռնության դեպքերի վերաբերյալ բողոքներ, որոնք հիմնականում ներկայացվել են ծնողների կողմից:

Օրինակ՝ դպրոցներում բռնությունների վերաբերյալ 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմում քննարկված բողոքներից մեկով ծնողները բարձրացրել են մարզի դպրոցներից մեկի ֆիզկուլտուրայի ուսուցչի կողմից աշակերտների նկատմամբ գործադրված և նույն ուսուցչի դրդմամբ աշակերտների միջև տեղի ունեցած բռնության հարցը:

Մասնավորապես, ֆիզկուլտուրայի ուսուցիչը դասերի ժամանակ պարբերաբար բռնություն է գործադրել երեխաների նկատմամբ, ինչպես նաև հրահրել է աշակերտներին միմյանց նկատմամբ բռնություն գործադրել: Ներկայացվել են ֆիզկուլտուրայի ուսուցչի

<sup>578</sup> Տե՛ս [https://www.unicef.org/violencestudy/reports/SG\\_violencestudy\\_en.pdf](https://www.unicef.org/violencestudy/reports/SG_violencestudy_en.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

կողմից երեխաների նկատմամբ գործադրված թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնության դեպքեր:

Պաշտպանի կողմից հարցը բարձրացնելուց հետո ֆիզկուլտուրայի ուսուցչին դպրոցի տնօրենի հրամանով տրվել է նկատողություն: Տեղեկացրել են նաև, որ դասարանի բնականոն դասընթացը չխաթարելու նպատակով տնօրենի հրամանով տվյալ դասարանի ֆիզկուլտուրայի դասաժամերը տրվել են դասավանդելու այլ ուսուցչի: Դպրոցի տնօրենին հանձնարարվել է դպրոցի սկսնակ և երիտասարդ ուսուցիչների, այդ թվում՝ ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ տանել համապատասխան բացատրական աշխատանք՝ դպրոցում բացառապես մանկավարժական մեթոդներ կիրառելու, ուսումնական գործընթացի բնականոն ընթացքը խստագույնս պահպանելու, հետևողական լինելու, դպրոցին և մանկավարժին ոչ հարիր ցանկացած երևույթի նկատմամբ անհանդուրժող լինելու, ուսուցիչների և աշակերտների միջև հաղորդակցման ավելի լայն հնարավորություններ ստեղծելու նպատակով և կատարած միջոցառումների մասին պարբերաբար տեղյակ պահել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով բարձրացվել է այն հարցը, որ դպրոցի անձնակազմը պատշաճ չի արձագանքել երեխաների միջև բռնության դեպքերին:

Մասնավորապես, բողոքով նշվել է, որ դպրոցում հաճախ լինում են բռնության դրսևորումներ երեխաների միջև, սակայն դպրոցի աշխատակազմը քայլեր չի ձեռնարկում խնդիրը լուծելու համար: Արդյունքում, դպրոցում ստեղծվել է այնպիսի մթնոլորտ, որ երեխան չի ցանկացել հաճախել տվյալ դպրոց: Հարկ է նշել, որ նման բողոքներ Պաշտպանին հասցեագրվել են նաև 2018 թվականին, որի մասին նշվել է 2018 թվականի տարեկան հաղորդմամբ:

Նշվածը վկայում է այն մասին, որ դպրոցներում չեն արձանագրում բռնության դեպքերը և պատշաճ լուծում չի տրվում խնդրին, որի արդյունքում երեխաները չեն կարողանում լիարժեք ձևով իրացնել իրենց կրթություն ստանալու իրավունքը:

Հայաստանի տարբեր մարզերից և Երևանից Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այցով այցելած երեխաները ևս հայտնել են դպրոցում բռնության դեպքերի մասին:

Բողոքների մեծ մասը վերաբերել է ուսուցչի կողմից երեխաների նկատմամբ գործադրված ֆիզիկական և հոգեբանական բռնությանը, երեխաների միջև բռնության դեպքերին (բուլինգ): Դպրոցներում բռնության դեպքերի վերաբերյալ նշվել է նաև 2019 թվականի տարեկան հաղորդմամբ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացվել է նաև մանկապարտեզներում բռնության գործադրման խնդիրը: Մասնավորապես, բողոքներից մեկով նշվել է, որ մանկապարտեզում երեխայի նկատմամբ գործադրվել է հոգեբանական բռնություն և հնչեցվել են վիրավորական արտահայտություններ: Բողոքներով նշվել է նաև ֆիզիկական բռնության գործադրման հարցը:

Բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյան մանկապարտեզներում կիրառելու վերաբերյալ Պաշտպանի հարցադրման կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից ստացվել է պարզաբանում, որ այդպիսի մատյան ներդնելու կարիք և պահանջ չկա: Մա անընդունելի պատճառաբանություն է:

Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակներում Երևանի քաղաքապետարան ուղղված հարցադրումներին ի պատասխան կրկին ստացվել են պարզաբանումներ, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում բռնության դեպքեր չեն արձանագրվել: Մինևույն ժամանակ, նույն հարցադրման շրջանակներում պարզաբանվել է, որ ընդամենը մեկ մանկապարտեզում ստացվել է բողոք դաստիարակի կողմից երեխայի նկատմամբ կոպիտ վերաբերմունքի կապակցությամբ, որի համար դաստիարակին տրվել է նկատողություն: Տվյալ պարագայում, անընդունելի է

Երևանի քաղաքապետարանի կողմից տրված պարզաբանումը մանկապարտեզներում բռնության դեպքերի բացակայության վերաբերյալ այն պարագայում, երբ կոնկրետ մանկապարտեզում դաստիարակին տրվել է նկատողություն:

Կրկին հարկ է ընդգծել, որ Պաշտպանը շարունակում է ստանալ բողոքներ մանկապարտեզներում բռնության դեպքերի վերաբերյալ, սակայն Երևանի քաղաքապետարանի պարզաբանումներով հայտնում են, որ նման դեպքեր չկան:

Վերոգրյալը վկայում է, որ մանկապարտեզներում բռնության դեպքերի նկատմամբ չկա պատշաճ հսկողություն տնօրինության և վերահսկողություն Երևանի քաղաքապետարանի կողմից:

Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման և վերացման տեսանկյունից կարևոր է, որ երեխաները բարձր տեղեկացվածություն ունենան իրենց իրավունքների վերաբերյալ: Անկախ դեպքերի քանակից՝ պետք է լինեն հստակ ընթացակարգեր, կանխարգելիչ գործիքներ, այդ թվում՝ մատյաններ վարելը:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ անչափահասների իրավական գիտելիքների բարձրացման, նրանց կողմից կատարվող հանցագործությունները կանխարգելելու, բռնությունից գերծ պահելու, վերջիններիս հանցավոր գործունեության մեջ ներգրավելու և շահագործման ենթարկելու դեպքերը բացառելու նպատակով ոստիկանության ծառայողների կողմից հանրապետության տարածքում գործող հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում կազմակերպվել և անցկացվել են տարբեր իրավական թեմաներով զրույցներ և հանդիպումներ, ինչպես անչափահասների, այնպես էլ վերջիններիս ծնողների և մանկավարժական կոլեկտիվների շրջանում: ՀՀ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման նախաձեռնությամբ, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ, 2019 թվականի նոյեմբերի 25-ից սպասարկվող հանրակրթական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների աշակերտների շրջանում կազմակերպվել և անցկացվել է հանդիպում-զրույցների մեկամսյակ՝ «Անչափահասը և ընտանիքում բռնության տեսակները» թեմայով:

2017 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այցերով պարբերաբար այցելող երեխաները պատմել են դպրոցներում ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնության դեպքերի առկայության մասին: Այդ երեխաներից շատերը չգիտեին, որ ուսուցիչներն իրավունք չունեն ապտակել կամ ծաղրել աշակերտներին, եթե, օրինակ՝ նրանք խանգարում են դասընթացի անցկացմանը: Նույն պատկերն է արձանագրվել նաև 2018 և 2019 թվականներին Պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաների պարագայում, ովքեր ևս քիչ են տեղեկացված բռնությունից պաշտպանված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Թեև Պաշտպանի աշխատակազմում երեխաներին մանրամասն ներկայացվում են իրենց իրավունքները, սակայն խնդրի վերաբերյալ պետք է աշխատանք տարվի նաև դպրոցներում երեխաների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության, բռնության դեպքերի հաղորդման վերաբերյալ ընթացակարգերի միջոցով:

Երեխայի նկատմամբ բռնության դրսևորումները լինում են նաև ընտանիքում: ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում գրանցվել է անչափահասների նկատմամբ բռնության 154 դեպք, որից՝ ընտանիքում բռնության 15 դեպք, 15-ը՝ ծեծ: 154 դեպքից 127-ով հարուցվել է քրեական գործ, 27 նյութերով կայացվել է քրեական գործ հարուցելը մերժվելու մասին որոշում, դատարան է ուղարկվել 44-ը, կարճվել է 16-ը, կասեցվել է 13-ը: Նշված դեպքերից կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ՝ 78 դեպք, անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ՝ 8 դեպք, սեռական անձեռնմխելիության և սեռական

ազատության դեմ ուղղված հանցագործություններ՝ 60 դեպք, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություն՝ 4 դեպք, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ՝ 1 դեպք, հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ՝ 3 դեպք:

Ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի պատճառ հաճախ կարող է լինել ծնողավարման հատկությունների բացակայությունը: Ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին վաղ մանկական զարգացման վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը կարող է մեծացնել դրական ծնողավարման մեթոդների կիրառման հավանականությունը, որը բնականաբար նվազեցնում է ընտանիքում բռնության վտանգը:

Խնդիրների համակարգային լուծման և նման դեպքերի կանխարգելման համար, ի թիվս այլնի անհրաժեշտ է ստեղծել նաև երեխաների պաշտպանության գործուն համակարգ: Դրա մասին բազմիցս նշվել է ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացում Հայաստանին ուղղված առաջարկներում<sup>579</sup>: Մի շարք կազմակերպություններ մշակել են դրական ծնողավարության վերաբերյալ տարբեր ձեռնարկներ և պարբերաբար իրականացնում են իրազեկման ծրագրեր՝ բարձրաձայնելով դրական ծնողավարման անչափ կարևոր դերակատարումը երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման գործընթացում<sup>580</sup>:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը ներկայացրել է երեխաների հանդեպ կիրառվող բռնությունը կանխելուն ուղղված որոշակի քայլեր<sup>581</sup>: Նշված քայլերն են ծնողներին, խնամակալներին և ընտանիքներին աջակցելը, նրանց վաղ մանկական զարգացման վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը, երեխաներին ու դեռահասներին ռիսկերն ու մարտահրավերները կառավարելու հարցում օգնելը և աջակցելը բռնություն գործադրելու խնդիրներն ու մարտահրավերները հաղթահարելու գործում, բռնությունը և խտրականությունը քաջալերող սոցիալական նորմերն ու սովորույթները փոխելը:

Հաշվի առնելով դրական ծնողավարության անգնահատելի կարևորությունը երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելման գործընթացում՝ հարկ է ընդգծել, որ տարբեր կազմակերպությունների կողմից դրական ծնողավարության վերաբերյալ պարբերաբար իրականացվող ծրագրերն ու մշակվող ձեռնարկները դեռևս բավարար երաշխիք չեն երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելմանն ուղղված գործընթացի արդյունավետության համար: Տվյալ խնդրի լուծմանն ուղղված գործընթացի շարունակականության և կայունության ապահովման երաշխավորը պետք է լինի պետությունը: Մասնավորապես, դա կարող է դրսևորվել պետության կողմից դրական ծնողավարության վերաբերյալ նոր ծրագրերի ներդրմամբ, երիտասարդ ընտանիքների համար իրազեկման դասընթացների/սեմինարների կազմակերպմամբ, ինչպես նաև դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությամբ:

Երեխաների սեռական շահագործումը, ինչպես նաև երեխաների սեռական չարաշահման բոլոր ձևերը կործանիչ են երեխայի առողջության և հոգեբանական ու սոցիալական զարգացման համար: 2007 թվականին Եվրոպայի խորհուրդն ընդունեց «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության

<sup>579</sup> Տե՛ս Համընդհանուր պարբերական դիտարկումը, հասանելի է [https://www.upr-info.org/database/index.php?limit=0&f\\_SUR=8&f\\_SMR=All&order=&orderDir=ASC&orderP=true&f\\_Issue=All&searchReco=&resultMax=300&response=&action\\_type=&session=&SuRRgrp=&SuROrg=&SMRRgrp=&SMROrg=&pledges=RecoOnly](https://www.upr-info.org/database/index.php?limit=0&f_SUR=8&f_SMR=All&order=&orderDir=ASC&orderP=true&f_Issue=All&searchReco=&resultMax=300&response=&action_type=&session=&SuRRgrp=&SuROrg=&SMRRgrp=&SMROrg=&pledges=RecoOnly) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>580</sup> Տե՛ս [https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Manual%20for%20Positive%20Disciplining\\_opt\\_opt.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Manual%20for%20Positive%20Disciplining_opt_opt.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>581</sup> Տե՛ս <https://www.unicef.org/armenia> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



մասին» կոնվենցիան<sup>582</sup>, որի երեք հիմնական նպատակներն են երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելումը և դրանց դեմ պայքարը, սեռական շահագործումից և սեռական չարաշահումից տուժող երեխաների իրավունքների պաշտպանությունը, նշված երևույթի դեմ պայքարում ներպետական և միջազգային համագործակցության խթանումը: Կոնվենցիայում առաջին անգամ սահմանվում է երեխայի նկատմամբ սեռական չարաշահման հանցագործությունը:

Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին ստորագրել է վերոնշյալ Կոնվենցիան, սակայն այն դեռևս չի վավերացվել: Կոնվենցիայի վավերացմամբ հնարավորություն կստեղծվի ՀՀ-ում համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել ուղղված երեխաների սեռական շահագործման և նրանց հանդեպ սեռական բնույթի բռնության դեմ կանխարգելմանն ու պայքարելուն և սեռական շահագործումից ու սեռական բռնությունից տուժած երեխաների իրավունքները պաշտպանելուն: Ավելին, Կոնվենցիայի վավերացումը կնպաստի երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում երեխայի լավագույն շահերի ապահովմանն առաջնահերթ ուշադրություն դարձնելուն և կխթանի Կոնվենցիայի կողմերի միջև միջազգային համագործակցությունը:

Ուստի, անհրաժեշտ է՝

1. մշակել երեխաների նկատմամբ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բռնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման ընթացակարգեր հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների համար,

2. երեխաներին մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ,

3. իրականացնել վերապատրաստումներ մանկավարժների և վարչական աշխատողների համար՝ երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,

4. ներդնել դրական ծնողավարության զարգացմանն ուղղված համայնքահեն ծրագրեր՝ մեծ ուշադրություն դարձնելով ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության արդյունավետ կանխարգելմանը,

5. ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներին և վավերացնել «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանսարոտեի կոնվենցիան):

#### 4. Երեխայի ինքնության իրավունքը

Պաշտպանի տարեկան հաղորդումներով բազմիցս նշվել է, որ երեխայի ինքնության իրավունքի իրացման խնդիրներով ստացվում են բողոքներ: 2019 թվականին ևս հասցեագրվել են բողոքներ երեխաների ինքնության իրավունքի ճանաչման ոչ իրավաչափ սահմանափակումների վերաբերյալ:

Երեխան, ում ծննդյան փաստը գրանցված չէ, զրկվում է անվան և քաղաքացիության իրավունքներից՝ կանգնելով հասարակությունից դուրս մնալու վտանգի առաջ: Ծննդյան վկայական չունեցող երեխան զրկվում է նաև կրթության, առողջության պահպանման, մասնակցության և պաշտպանված լինելու հնարավորություններից:

Չգրանցված երեխան առավել «գրավիչ» կարող է լինել թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու տեսանկյունից, իսկ առավել մեծ տարիքում չգրանցված երեխան չի կարող դիմել անձնագիր ստանալու, բանկային հաշիվ բացելու կամ աշխատանք ունենալու համար

<sup>582</sup> Տե՛ս

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046e1e4>

հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

և այլն: Չգրանցված երեխան առավել հաճախ կարող է ենթարկվել խտրականության, անուշադրության կամ բռնության<sup>583</sup>:

Ծննդի գրանցումը նաև Պետության կողմից մշակվող երեխաների իրավունքների արդյունավետ ռազմավարության ձևավորման էական տարր է:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք: Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանվում է երեխայի ինքնություն ունենալու իրավունքը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ Կոնվենցիայի իրականացման ձեռնարկի<sup>584</sup> համաձայն՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածն արտացոլում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 24-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված դրույթները: Մասնավորապես, դաշնագրով սահմանվում է, որ յուրաքանչյուր երեխա պետք է գրանցվի ծնվելուց անմիջապես հետո, ունենա անուն, նշվում է նաև յուրաքանչյուր երեխայի՝ քաղաքացիությունը ձեռք բերելու իրավունք ունենալու մասին:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթներից բխում է նաև երեխայի՝ իր ծնողներին ճանաչելու և իր ծնողների կողմից խնամվելու իրավունքը: Երեխայի ծննդյան փաստի գրանցումը փոխկապակցված է Կոնվենցիայով սահմանված երեխայի այնպիսի իրավունքների հետ, ինչպիսիք են երեխայի ինքնությունը՝ ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը պահպանելու, ընտանիքում ապրելու, ընտանիքի վերամիավորման և պետության կողմից հատուկ պաշտպանության ստանալու իրավունքները:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով ևս ամրագրված է, որ յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք: Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը:

2019 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2019 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել ««Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով սահմանվել է «մեկ պատուհան ծառայությունը» ՔԿԱԳ ոլորտում, ինչը հնարավորություն է ընձեռել բոլոր գրանցումները, այդ թվում՝ ծնունդները գրանցել դիմողի կողմից նախընտրած ՔԿԱԳ տարածքային մարմնում կամ ՔԿԱԳ գործակալությունում, անկախ ծնողների բնակության վայրից կամ երեխայի գտնվելու վարչական տարածքից: Ըստ նախարարության՝ մշակվել է և շրջանառության մեջ է դրվել ծննդի պետական վկայականում ու ծննդի պետական գրանցման մասին տեղեկանքում՝ երեխայի հանրային ծառայությունների համարանիշը ներառելու վերաբերյալ օրենսդրական նախագծերի փաթեթ: Մշակվել և շրջանառության մեջ են դրվել օրենքից բխող ՀՀ արդարադատության նախարարի հրամանների նախագծերի փաթեթը:

2019 թվականի ընթացքում Պաշտպանին, այնուամենայնիվ, շարունակվել են հասցեագրվել բողոքներ երեխային ծննդյան վկայական չտրամադրելու կամ տրամադրման գործընթացը երկարաձգելու վերաբերյալ:

<sup>583</sup> Տե՛ս <https://www.unicef-irc.org/publications/pdf/digest9e.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>584</sup>

Տե՛ս

[https://www.unicef.org/publications/files/Implementation\\_Handbook\\_for\\_the\\_Convention\\_on\\_the\\_Rights\\_of\\_the\\_Child\\_Part\\_1\\_of\\_3.pdf](https://www.unicef.org/publications/files/Implementation_Handbook_for_the_Convention_on_the_Rights_of_the_Child_Part_1_of_3.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Օրինակ՝ բողոքներից մեկում երեխաների ծննդյան փաստի գրանցումը չի կատարվել, քանի որ երեխաների մայրը չի ունեցել երեխայի ծնունդը հավաստող փաստաթուղթ՝ տրված ծննդատան կողմից: Դա այն դեպքում, երբ երեխաները ծնվել են ծննդատանը: Տվյալ դեպքում երեխաները տարիներ շարունակ չեն ունեցել ծննդյան վկայական և զրկված են եղել մի շարք իրավունքների իրացման հնարավորությունից: Ավելին, երեխայի ծննդի պետական գրանցումը չի իրականացվել այնքան ժամանակ, որ լրացել է երեխաներից մեկի չափահասության տարիքը:

Տվյալ դեպքում, ինչպես նշել է Պաշտպանը, ՀՀ արդարադատության նախարարությունը պետք է աջակցի ծնողին նշված փաստաթղթերի ձեռքբերման հարցում: Տվյալ կոնկրետ բողոքով դեռևս շարունակվում է քննարկման ընթացակարգը, քանի որ դեռ ձեռք չեն բերվել անհրաժեշտ փաստաթղթերը ծննդի պետական գրանցման գործընթացն ապահովելու համար: Այսինքն՝ նույնիսկ այն դեպքում, երբ իրավասու պետական մարմինն հայտնի է, որ երեխան չունի ծննդյան վկայական և զրկված է մի շարք իրավունքներ իրացնելու հնարավորությունից, երեխայի ծննդի պետական գրանցումը պահանջում է երկար ժամանակ:

2019 թվականին Պաշտպանի արձանագրած խնդիրներից մեկն էլ կապված է մանկատան սանի ծննդի փաստի պետական գրանցման հետ: Այսպես, երեխան, բնակվելով մանկատանը, չի ունեցել ծննդի պետական գրանցում: Այսինքն՝ երեխան հաշվառվել է մանկատանն առանց համապատասխան փաստաթղթերի: Տվյալ դեպքում նույնպես երեխայի ծննդի պետական գրանցումը տեղի չի ունեցել 2019 թվականին, որը նշանակում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված չլինելով՝ երեխան չի կարողացել իրացնել իր բոլոր իրավունքները:

Ծննդյան փաստի պետական գրանցմանը վերաբերող բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ ծննդյան փաստի պետական գրանցման վերաբերյալ բողոքները ստացվում են երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների կամ իրավասու անհատների կողմից, քանի որ երեխաների ծնողները տվյալ հարցի, ինչպես նաև իրենց իրավունքների վերաբերյալ ունեն ցածր իրազեկվածություն:

Քննարկվող հարցի լուծման համար անհրաժեշտ է, որպեսզի համայնքում լինի համագործակցություն ՔԿԱԳ մարմինների, բժշկական հաստատությունների, խնամակալության և հոգաբարձության մարմինների և սոցիալական ծառայությունների միջև: Նշված մարմինների միջև արդյունավետ համագործակցության արդյունքում ծննդյան պետական գրանցում չունեցող երեխաները կհայտնաբերվեն ավելի վաղ տարիքում, որը հնարավորություն կտա բացառել երեխաների իրավունքների հետագա խախտումները:

Այսպիսով, կարող ենք նշել, որ երեխայի ծննդյան փաստի գրանցումը պետք է լինի անմիջապես, իսկ այն դեպքերում, երբ ծագում են անհրաժեշտ փաստաթղթերի հետ կապված խնդիրներ, անհրաժեշտ է ապահովել երեխայի ծննդի փաստի օրենքով սահմանված ժամկետներում գրանցումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ապահովել երեխաների ծննդյան հետ կապված բոլոր օղակների միջև համագործակցություն՝ ներառելով բուժհաստատությունները, սոցիալական ծառայությունները, խնամակալության և հոգաբարձության մարմինները,

2. ՔԿԱԳ-ները, ծննդատները, պոլիկլինիկաներն ապահովել երեխաների ծննդյան փաստի գրանցման վերաբերյալ իրազեկող պաստառներով և թերթիկներով,

3. վերապատրաստել ՔԿԱԳ աշխատակիցներին՝ բարձրացնելով նրանց կարողությունները, որպեսզի հնարավոր լինի ծնողներին տրամադրել խորհրդատվություն

նան այն դեպքերում, երբ հարցերը վերաբերում են օրենսդրությամբ չկարգավորվող դեպքերին, ինչպես նաև աջակցել նրանց՝ երեխայի ծննդի փաստը գրանցելու համար:

#### 5. Խնամակալության և հոգաբարձության մարմինները (հանձնաժողովները)

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրաձայնել է Խնամակալության և հոգաբարձության մարմինների (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ ԽՀՄ) գործունեության հետ կապված բազմաթիվ խնդիրներ: 2019 թվականին նույնպես Պաշտպանը ստացել է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ ԽՀՀ) գործունեությանը վերաբերող դիմում-բողոքներ: Դրանք հիմնականում վերաբերել են երեխայի՝ իր ծնողի, տատերի, պապերի և այլ ազգականների հետ շփվելու, ծնողների դաստիարակությունը ստանալու իրավունքների իրացմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են, որ 2019 թվականի ընթացքում ԽՀՀ-ների գործունեության վերաբերյալ ստացվել է «շուրջ 5 բողոք»: Ըստ նախարարության՝ ԽՀՄ-ների գործունեության բարելավման ուղղությամբ տվյալ մարմիններին տրամադրվել է մեթոդական աջակցություն, միաժամանակ առանձին համայնքների համար կազմակերպվել են վերապատրաստումներ:

Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ 2019 թվականի ընթացքում ԽՀՀ-ների գործունեության վերաբերյալ ստացվել է 21 դիմում-բողոք՝ երեխայի բնակության վայրի, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու վերաբերյալ ԽՀՀ-ների կողմից տրված եզրակացությունների, ինչպես նաև մերձավոր ազգականների հետ երեխայի շփման կարգ սահմանելու մասին որոշումների հետ կապված: Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի միջնորդությամբ մանրամասն ուսումնասիրվել են ԽՀՀ-ների կողմից, ըստ անհրաժեշտության՝ բաժնի ներկայացուցիչների և կողմերի մասնակցությամբ հրավիրվել են հանձնաժողովի նիստեր, կրկին լսվել են բարձրացված հարցերը և տրվել պատասխաններ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից տեղեկացրել են, որ 2019 թվականի ընթացքում ԽՀՀ-ների գործունեության վերաբերյալ մեկական բողոք է ստացվել միայն ՀՀ Արմավիրի և ՀՀ Լոռու մարզպետարաններ:

Ուշագրավ է, որ ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 2019 թվականին ՀՀ մարզպետարաններ գրեթե չեն հասցեագրվել բողոքներ ԽՀՀ-ների գործունեության առնչությամբ: Սա այն պարագայում, երբ Մարդու իրավունքների պաշտպանին ԽՀՀ-ների գործունեությանը վերաբերող բողոքներ են հասցեագրվել ՀՀ բոլոր մարզերից, առավելապես՝ Արմավիրի և Լոռու մարզերից:

Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր բացառել ԽՀՀ-ների անդամների աշխատանքի կամավորության սկզբունքը և ներգրավել վճարովի հիմունքներով աշխատող մասնագետներ (այդ թվում՝ սոցիալական աշխատող): Դրական է, որ ՀՀ Արագածոտնի մարզում ԽՀՀ-ների գործունեությունը բարելավելու նպատակով 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին կատարվել է ԽՀՀ-ների վերակազմավորում և հնարավորության դեպքում ԽՀՀ-ների կազմում ընդգրկվել է սոցիալական աշխատող: Նշված առաջարկն անհրաժեշտ է իրականացնել նաև ՀՀ մյուս մարզերում և Երևանում՝ ԽՀՀ-ների գործունեության մեջ հնարավորինս ներգրավելով վճարովի հիմունքներով աշխատող մասնագետներ:

2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները ցույց են տվել, որ ԽՀՀ-ները չեն ցուցաբերում հետևողականություն ու պատշաճ ներգրավվածություն երեխայի՝

իր ծնողների, տատերի, պապերի և այլ ազգականների հետ շփվելու, ծնողների կողմից դաստիարակություն ստանալու իրավունքների պատշաճ իրացումն ապահովելու գործում, ինչպես նաև չունեն մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն: Այս խնդիրն առկա է տարիներ շարունակ և ներկայումս ևս արդիական է:

Եղել են դեպքեր, երբ երեխային տեսակցելու և երեխայի հետ շփվելու հնարավորությունից զրկված ծնողը դիմել է ԽՀՄ-ին, սակայն այդ մարմինը պատշաճ միջոցներ չի ձեռնարկել անհրաժեշտ ուսումնասիրություն կատարելու և երեխայի լավագույն շահերից բխող որոշում կայացնելու համար: Արձանագրվել են դեպքեր այն մասին, որ ԽՀՄ-ն երեխայից առանձին բնակվող ծնողին ուղղորդել ու համոզել է վերադառնալ նախկին ամուսնու մոտ՝ երեխայի հետ շփումը պահպանելու նպատակով, հակառակ պարագայում սպառնալով նրան զրկել ծնողական իրավունքներից:

Քաղաքացիները Պաշտպանին հասցեագրել են նաև բողոքներ ԽՀՄ-ին հասցեագրած իրենց գրավոր դիմումները նշված մարմնի կողմից անհիմն չընդունելու, դրանց ոչ պատշաճ պատասխան տրամադրելու կամ առհասարակ պատասխան չտրամադրելու, սահմանված կարգով ընթացք չտալու, ինչպես նաև ԽՀՀ-ի հրատապ նիստ հրավիրելու անհրաժեշտության պարագայում նիստն ուշացումով հրավիրելու վերաբերյալ:

Դրանից բացի, ԽՀՄ-ի կողմից որոշում կայացնելիս նախապատվությունը հիմնականում տրվում է տվյալ համայնքում կամ վարչական շրջանում բնակվող ծնողին՝ առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու և երեխայի լավագույն շահերը հաշվի առնելու: ԽՀՄ-ների կողմից ցուցաբերվող նման մոտեցումն անթույլատրելի է:

Մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին ներկայացրել է «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույց<sup>585</sup>, որով ներկայացվել են նախորդ տարեկան հաղորդումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում առանձնացված մի շարք հիմնական խնդիրներ:

Մասնավորապես, զեկույցով նշվել է, որ ԽՀՀ գործունեությունն իրականացվում է կամավորության սկզբունքով: ԽՀՄ/ԽՀՀ անդամները, զբաղված լինելով իրենց հիմնական գործունեությամբ, լիարժեք ներգրավվածություն չեն ունենում ԽՀՄ/ԽՀՀ գործառույթների իրականացմանը, իսկ երբեմն էլ վերաբերում են տվյալ աշխատանքին որպես ավելորդ ծանրաբեռնվածություն:

Արտահերթ զեկույցով նշվել է նաև, որ ԽՀՄ/ԽՀՀ անդամների ճնշող մեծամասնությունը չունի համապատասխան որակավորում: Նրանց գործունեությունը սերտորեն կապված լինելով երեխաների սոցիալ-հոգեբանական և առողջական բարօրության հետ, պետք է զուգորդվի հոգեբանական գիտելիքների և հաղորդակցման հմտությունների հետ:

Խնդրահարույց է նաև այն, որ ԽՀՄ/ԽՀՀ անդամների մեծամասնությունը, հատկապես մարզային համայնքներում, լիարժեք իրազեկված չէ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ, իրենց գործունեության ընթացքում պատշաճ կերպով չեն գնահատում երեխայի և ընտանիքի կարիքները և տալիս են եզրակացություններ, որոնց հիմքում հաճախ ընդամենը մեկ տնային այցելություն է: Այցելություններին, որպես կանոն, չեն մասնակցում համապատասխան մասնագետներ (օրինակ՝ հոգեբան, սոցիալական աշխատող):

<sup>585</sup> Տե՛ս <http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/GTC-report.pdf> հղումով, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ԽՀՄ/ԽՀՀ գործունեության նկատմամբ առկա չէ պատշաճ վերահսկողություն, իսկ անդամների պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները ոչ լիարժեք են, ուստի ԽՀՄ/ԽՀՀ գործունեությունը սկսում է կրել արհեստական և սուբյեկտիվ բնույթ:

Հարկ է նշել, որ ԽՀՄ կանոնադրությամբ նշված չեն երեխայի կարծիքը հաշվի առնելու և երեխայի լաված լինելու իրավունքի իրացումն ապահովելու համար անհրաժեշտ մեխանիզմներ և սկզբունքներ, մինչդեռ, համայնքում երեխայի իրավունքների պաշտպանության պատասխանատու մարմնի գործունեության կարևոր սկզբունքներից պետք է լինեն իրեն վերաբերող հարցերում երեխայի կարծիքը լսելը և հաշվի առնելը:

ԽՀՀ-ների հետ կապված խնդիրների մասին նշվել է նաև Հայաստանի Հանրապետությունում Երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր)<sup>586</sup>:

Պաշտպանը Սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների աշխատողների համար դասընթացների իրականացումն արձանագրել է որպես դրական քայլ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման հավելվածով հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 14-րդ կետի համաձայն՝ ԽՀՀ-ների կազմում կարող են ընդգրկվել նաև Սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, սոցիալական աշխատանքի մասնագետներ: Այնուամենայնիվ, միայն Սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների աշխատողների համար դասընթացների իրականացման միջոցով հնարավոր չէ բարելավել ԽՀՀ-ների գործունեության որակը, քանի որ անհրաժեշտ են վերապատրաստումներ ԽՀՀ-ների բոլոր անդամների համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են, որ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը Եվրամիության ֆինանսական աջակցությամբ «Տղաների նախընտրության և աղջիկների թերաբժնորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում իրականացրել է դասընթաց՝ համայնքներում ԽՀՀ-ների անդամների և դեպք վարողների համար:

Ինչ վերաբերում է 2019-2021թթ. ԽՀՀ-ների անդամների և համայնքների համապատասխան ոլորտի աշխատակիցների 50 տոկոսի վերապատրաստմանը, ապա պետք է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ Ռազմավարական ծրագրի իրականացված միջոցառումների վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունն այդ մասին տվյալներ չի պարունակում, ուստի չի բացահայտվում դրա իրագործված լինել կամ չլինելու փաստը:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք նշել, որ 2019 թվականին համայնքային մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարելավման ուղղությամբ գործուն քայլեր չեն ձեռնարկվել:

Ուստի՝ վերահաստատելով նաև «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում կատարած նկատառումները՝ քննարկվող հարցի կապակցությամբ առաջարկվում է.

1. արդյունավետ աշխատանքներ տանել ԽՀՀ-ների անդամների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ,

<sup>586</sup> Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114901> հղումով, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2. հնարավորության սահմաններում բացառել ԽՀՀ-ների անդամների աշխատանքի կամավորության սկզբունքը և ներգրավել վճարովի հիմունքներով աշխատող մասնագետներ (օրինակ՝ սոցիալական աշխատող, հոգեբան),

3. ԽՀՀ-ների համար մշակել մեթոդաբանական ուղեցույց, ինչպես նաև համապատասխան ռեսուրսներ տրամադրել գործառույթների լիարժեք իրականացման համար,

4. ԽՀՄ կանոնադրությամբ ամրագրել երեխային վերաբերող հարցերում իր մասնակցության և լաված լինելու սկզբունքը՝ անկախ տարիքից, ինչպես նաև ապահովել նշված սկզբունքի կիրառումը ԽՀՄ-ների գործունեության ընթացքում,

5. ԽՀՄ/ԽՀՀ-ներին դիմող քաղաքացիներին տրամադրել ԽՀՄ/ԽՀՀ-ների գործունեության վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ, որտեղ նշված կլինի նաև, թե ինչպես կարելի է բողոքարկել ԽՀՄ/ԽՀՀ-ների գործողությունները կամ անգործությունը:

6. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելը և նրանց աջակցություն տրամադրելը

Երեխաների՝ մուրացիկությամբ զբաղվելու հարցը շարունակում է խնդրահարույց լինել ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Պաշտպանի հաղորդումներով այս խնդիրը նշվում է արդեն տարիներ շարունակ:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ գրեթե 150 միլիոն երեխա գտնվում է փողոցում՝ տարբեր պատճառներից ելնելով: Դժվարին իրավիճակում հայտնվելու հետևանքով այդ երեխաներից շատերը զբաղվում են մանր աշխատանքներով: Նրանք զրկվում են կրթություն ստանալու և արժանապատիվ ապագա ունենալու հնարավորությունից<sup>587</sup>:

Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների խնդիրներին դեռևս 2013 թվականին անդրադարձել է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ Հայաստանի համար իր եզրափակիչ դիտարկումներում նշելով, որ մտահոգիչ է մուրացկանության մեջ ներգրավված երեխաների աճող թիվը<sup>588</sup>:

2019 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում ՀՀ ոստիկանության տրամադրած տվյալների համաձայն՝ անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության և տարածքային ստորաբաժանումների իրավասու ծառայողների կողմից 2019 թվականի ընթացքում մուրացիկ-թափառաշրջիկ միջոցառման շրջանակներում հայտնաբերվել է 46 անչափահաս (նշված անչափահասներից ումանք մեկից ավել անգամ, վերջիններիս գերակշիռ մասը զբաղվել է տարբեր իրերի վաճառքով): Նշված 46 անչափահասից 3-ը եղել են իգական սեռի ներկայացուցիչներ: Միջոցառումների ընթացքում հայտնաբերված 46 անչափահասից 44-ը հայտնաբերվել է Երևան քաղաքում, 2-ը՝ Կոտայքի մարզում:

Բացի այդ, Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում հայտնաբերվել է մուրացկանությամբ զբաղվող 35 երեխա և մանկահասակ երեխայի հետ մուրացկանությամբ զբաղվող 2 կին:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ մասնագիտացված ստորաբաժանումների իրավասու ծառայողների կողմից 2019 թվականի ապրիլի 23-ից մինչև մայիսի 20-ը ՀՀ

<sup>587</sup> Տե՛ս <http://www.unesco.org/new/en/social-and-human-sciences/themes/fight-against-discrimination/education-of-children-in-need/street-children/> հղումով, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>588</sup> Տե՛ս <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

տարածքում գործող հանրակրթական դպրոցներում սովորողների, ուսուցիչների և ծնողների շրջանում անցկացվել են զրույցներ, հանդիպումներ և սեմինարներ: Հանդիպումների և զրույցների ընթացքում Ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումների իրավասու ծառայողների կողմից ներկայացվել են կանանց և երեխաների շահագործման տեսակները, շահագործման վտանգներն ու քրեորեն պատժելի լինելը: Ոստիկանությունից տեղեկացրել են, որ ՀՀ ոստիկանության պետի հրամանով 2013թ. գործում է միջգերատեսչական աշխատանքային խումբը, որի կազմում են Ոստիկանության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, Ոստիկանության հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Պետք է նշել առանձին, որ մուրացկանությամբ զբաղվող երեխաները, որպես կանոն, դուրս են մնում կրթությունից: Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության` ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը մշակել է «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Այս որոշման նախագծում ամրագրվել է «Կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացությունը: Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության` նախատեսվում է իրավական ակտի նախագծով կարգավորել նաև պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման (կրթության մեջ ներառման), բոլոր շահագրգիռ և պատասխանատու կառույցների համագործակցության հետ կապված հարաբերությունները: Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգ սահմանելու առաջարկն արվել է Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ և ողջունելի է տվյալ կարգի նախագծի մշակումը Նախարարության կողմից:

Չնայած ձեռնարկվող քայլերին, վերջին տարիներին երեխաների` մուրացկանությամբ զբաղվելու վերաբերյալ տվյալները գրեթե չեն փոխվել<sup>589</sup>: Երեխաների շրջանում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելը կանխարգելելու և վերացնելու նպատակով պետք է առկա լինի կայուն համագործակցություն իրավասու մարմինների միջև: Երեխաներին հայտնաբերելուց և համայնքային մարմին ուղղորդելուց հետո պետք է յուրաքանչյուր երեխայի համար մշակվի աջակցության ծրագիր, որպեսզի կանխարգելվի այդ երեխայի` մուրացկանությամբ կրկին զբաղվելու ռիսկը:

Մուրացկանությամբ զբաղվող երեխաների և նրանց ընտանիքների հետ մշտապես պետք է աշխատանք տանեն համայնքային մարմինները:

Պետք է երաշխավորված լինի Խնամակալության և հոգաբարձության մարմինների արդյունավետ համագործակցությունը ոչ միայն Ոստիկանության, այլ նաև ինտեգրված սոցիալական ծառայությունների հետ, որպեսզի երեխաները և նրանց ընտանիքները ստանան շարունակական աջակցություն:

Հաշվի առնելով վերոգրյալը` անհրաժեշտ է`

1. ամրացնել ՀՀ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ծառայությունների համագործակցությունը` երաշխավորելու համար մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերումը և աջակցության տրամադրումը,

<sup>589</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդումը, էջ 378, «ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն` 2017 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից տարածքային ստորաբաժանումներ են ներկայացվել մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ, այդ թվում ծաղիկ և տարբեր իրերի վաճառքով/գործողությունները զուգորդվել են մուրացկանությամբ/ զբաղվող ընդհանուր թվով 53 երեխա»:



2. ընդունել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և ուղղորդման կարգը:

7. Ապահաստիտուցիոնալացումը և ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է, որ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են:

Ընտանիքում ապրելու իրավունքը երեխայի հիմնարար իրավունքներից է, որը երաշխավորված է ոչ միայն «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով<sup>590</sup>, այլ նաև մի շարք այլ միջազգային փաստաթղթերով և ներպետական իրավական ակտերով: Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում և արտահերթ հրապարակային զեկույցներում<sup>591</sup> մշտապես անդրադարձել է ընտանիքում ապրելու յուրաքանչյուր երեխայի իրավունքի կարևորությանը և այդ իրավունքը երաշխավորելու պետության պարտավորությանը:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի նախաբանում ամրագրված է, որ «ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում»: Նշված կոնվենցիայի նախաբանում նաև սահմանված է, որ «երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում»:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականին: Միանալով նշված կոնվենցիային՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ընտանիքում ապրելու երեխայի իրավունքն ապահովելու պարտավորություն: Պետությունն ունի նաև ընտանիքների վերամիավորմանն աջակցելու պարտավորություն: Պետության նշված պարտավորությունները նախատեսված են նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետությունում եղել են երեխաներ, ովքեր ընտանիքների բավարար ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով զրկվել են ընտանիքում ապրելու իրենց իրավունքն իրացնելու հնարավորությունից և տեղավորվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում: Ընդ որում, ընտանիքների աղքատությունը եղել է այդ երեխաներին հաստատություններում տեղավորելու միակ պատճառը, քանի որ երեխաների մեծ մասն ունեցել են առնվազն մեկ ծնող: Երեխաներին առանց բավարար հիմքերի առկայության հաստատություններում տեղավորելու խնդիրը ներկայումս ևս արդիական է, որի լուծման նպատակով պետությունը պարտավոր է հստակ միջոցներ ձեռնարկել:

Բացի այդ, Պաշտպանի կողմից երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ իրականացվող այցերը վկայում են, որ հաստատություններում առկա

<sup>590</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան; հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>591</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2018թ., էջ 63-78:

են բազմաթիվ խնդիրներ՝ կապված երեխաների հիմնարար իրավունքների պաշտպանության հետ (առավել մանրամասն տե՛ս սույն բաժնի 1-ին պարագրաֆը):

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Կոմիտե)՝ Հայաստանի Հանրապետության 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2013 թվականի եզրափակիչ դիտարկումների (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Եզրափակիչ դիտարկումներ)<sup>592</sup> 29-րդ կետով մտահոգիչ է համարել այն, որ սոցիալական վիճակի, երեխաների կրթության ծախսերը կամ տարրական կարիքները հոգալու անկարողության պատճառով որոշ ընտանիքներ ստիպված են լինում իրենց երեխաներին տեղավորել գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում:

Կոմիտեն, Եզրափակիչ դիտարկումների 31-րդ կետով, արձանագրել է, որ ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամքի ծառայությունները բավարար չեն, առկա են միայն մի քանի խնամատար ընտանիքներ, աճում է առնվազն մեկ ծնող ունեցող և խոցելի իրավիճակում հայտնված ընտանիքներից հաստատություններում տեղավորվող երեխաների թիվը, առկա չեն երաշխիքներ, որ երեխաներին հաստատություններում տեղավորելն իրապես իրականացվում է միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում, ինչպես նաև հաստատություններից դուրս եկող երեխաներին տրամադրվող աջակցությունը շարունակում է մնալ ոչ բավարար:

Եզրափակիչ դիտարկումների 32-րդ կետով Կոմիտեն առաջարկել է ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար ապահովել ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամքի տարբերակներ, ավելացնել խոցելի իրավիճակում հայտնված ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը՝ համապարփակ և թիրախային ծառայությունների միջոցով զարգացնելով նրանց ծնողավարման հմտությունները և նրանց ներգրավելով սոցիալական աջակցության ծրագրերում: Կոմիտեն կարևորել է, որ երեխաներին հաստատություններում տեղավորելու նպատակահարմարությունը գնահատելիս հաշվի առնվեն երեխաների լավագույն շահերը և նրանց կարիքների վրա հիմնված հստակ չափորոշիչները: Կոմիտեի առաջարկներից է նաև այն, որ պետությունը հաստատություններից դուրս եկող երեխաներին ուսման և/կամ աշխատանքի հնարավորություններ գտնելու հարցում ցուցաբերի առավելագույն աջակցություն, ինչպես նաև նրանց ապահովի կացարանով:

Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր երեխայի ապրելու և մեծանալու համար բնական և լավագույն միջավայրն ընտանեկան միջավայրն է, և պետությունը պարտավոր է գործուն քայլեր ձեռնարկել ընտանիքում ապրելու երեխաների իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու ուղղությամբ: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև ներպետական իրավական ակտերով սահմանված դրույթները, Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվել են ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը երաշխավորելուն ուղղված միջոցառումներ:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրով (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր)<sup>593</sup> ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի

<sup>592</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության 3-4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ 2013 թվականի հունիսի 14-ի եզրափակիչ դիտարկումները, հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>593</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների

իրացման ապահովումը դիտարկվել է որպես առաջնահերթություն: Այն նախատեսված էր նաև Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրով<sup>594</sup>:

Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի երաշխավորման միջոցներից է ապահիստիտուցիոնալացումը, որի գլխավոր նպատակներից պետք է լինի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատությունները վերակազմակերպելու կամ լուծարելու միջոցով նշված հաստատություններից երեխաներին ընտանիք վերադարձնելը և պետական միջոցներն այդ ընտանիքներին աջակցություն ցուցաբերելուն ուղղելը: Երեխաների կենսաբանական ընտանիք վերադառնալու անհնարինության դեպքում պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի տվյալ երեխաներին ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամքով ապահովելու ուղղությամբ:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից բխող կարևոր սկզբունքներից է այն, որ պետությունը պետք է իրականացնի ընտանիքի հնարավոր վերամիավորմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ (օրինակ՝ դրական ծնողավարության դասընթացների կազմակերպում), ինչպես նաև երեխաներին ու նրանց ընտանիքներին տրամադրի համապատասխան բնաիրային և սոցիալ-հոգեբանական աջակցություն: Այսինքն՝ պետությունը, առաջնահերթ ուշադրություն դարձնելով երեխաների լավագույն շահերին, պետք է նպաստի ընտանիքների հնարավոր վերամիավորմանը: Դրա անհնարինության պարագայում պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ երեխաներին ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամքով (խնամակալություն, խնամատարություն, որդեգրում) ապահովելու նպատակով:

Այսպիսով, երեխաների խնամքն ընտանեկան միջավայրում կազմակերպելը ենթադրում է ոչ միայն երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձը, այլ նաև դրա անհնարինության պարագայում երեխայի խնամքի կազմակերպումը խնամակալի, խնամատար կամ որդեգրող ընտանիքի կողմից: Երեխաներին հաստատություններում տեղավորելը՝ որպես այլընտրանքային միջոց, պետության կողմից պետք է կիրառվի միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում:

2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկել է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների ընտանիք վերադարձն ապահովելուն ուղղված որոշակի միջոցներ: Մասնավորապես, լուծարվել են Գյումրու N 1, Դիլիջանի, Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունները և Վանաձորի մանկատունը, իսկ Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատության լուծարումը նախատեսված է 2020 թ. հուլիսի 1-ից:

Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2, թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոցները, Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ կրթահամալիրը և Երևանի թիվ 12 հատուկ դպրոցը վերանվանվել են համապատասխանաբար՝ Երևանի N 1, N 2, N 3 և N 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների:

---

ռազմավարական ծրագիրը; հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114901> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>594</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը; հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94050> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել է, որ իրականացվել են դպրոցների երեխաների, ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) և ուսուցիչների իրազեկման աշխատանքներ, ինչպես նաև անհատական աշխատանքներ են տարվել հատուկ դպրոցներից երեխաներին հանրակրթական դպրոցներ տեղափոխելու ուղղությամբ և ապահովվել է բոլոր աշակերտների կրթություն ստանալու իրավունքը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոցը և Արթիկի N 1 հատուկ դպրոցը վերանվանվել են համապատասխանաբար՝ Շիրակի և Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների: Միաժամանակ, ՀՀ Արագածոտնի մարզում Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցը վերանվանվել է Աշտարակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի:

Այսպիսով, 2019 թվականի ընթացքում 7 հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում ձևավորվել են 7 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ Երևան քաղաքում նախկինում գործող 4 հատուկ դպրոցների 316 աշակերտները հիմնականում տեղափոխվել են հանրակրթական դպրոցներ: Դպրոցներում իրականացվել են աշխատանքներ հատուկ դպրոցներից տեղափոխված երեխաների սահուն ներառումն ապահովելու ուղղությամբ:

ՀՀ Շիրակի մարզում հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում երեխաները տեղափոխվել և իրենց ուսումը շարունակում են ըստ իրենց բնակության վայրի՝ հարակից կամ համապատասխան պայմաններով ապահովված պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում: ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի վերակազմակերպման արդյունքում երեխաները տեղափոխվել և իրենց ուսումը շարունակում են ինչպես Արագածոտնի, այնպես էլ Արմավիրի, Լոռու, Կոտայքի մարզերի և Երևանի ուսումնական հաստատություններում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում հաստատություններից շուրջ 230 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք: Հաստատություններից ընտանիք վերադարձած 230 երեխաներից 210-ը հաստատությունների լուծարման արդյունքում են ընտանիք վերադարձել, որոնք և ընդգրկված են աջակցության ծրագրերում: Այդ ընտանիքները ստանում են բնաիրային փաթեթներ (սնունդ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ, ջեռուցման վարձի գումար): Ընտանիքներին ըստ կարիքի տրամադրվել է նաև գույք՝ կահույք, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ համատեղ նախատեսվում է ըստ կարիքի իրականացնել նրանց բնակարանների վերանորոգում կամ ձեռքբերում: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում նաև այն երեխաների ընտանիքների հետ, որոնք ևս վերադառնալու են կենսաբանական ընտանիքներ, մասնավորապես, այդ երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվում է բնաիրային և սոցիալ-հոգեբանական աջակցություն: Նախատեսվում է նաև ըստ կարիքի իրականացնել նրանց բնակարանների վերանորոգում կամ ձեռքբերում: Ընտանիք վերադարձած 20 երեխաներ աջակցության ծրագրերում չեն ընդգրկվել, քանի որ այդ ընտանիքները դրա կարիքը չեն ունեցել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ հաստատությունների վերակազմակերպման գործընթացի շրջանակներում նախարարության և գործընկեր կազմակերպությունների (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ,

Վորլդ Վիժն Հայաստան և «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ) ջանքերով հաստատություններում խնամվող բոլոր երեխաների կարիքները նախապես գնահատվել են, ինչպես նաև մշակվել են երեխաների և նրանց ընտանիքների անհատական զարգացման ծրագրերը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ գնահատված կարիքների արդյունքում պարզվել է, որ երեխաների մեծամասնությունը կարող է վերամիավորվել իրենց կենսաբանական ընտանիքների հետ:

Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի լուծարման արդյունքում շուրջ 70 երեխա չի կարողացել ընտանիք վերադառնալ, քանի որ գնահատված կարիքների համաձայն նրանց վերադարձը կենսաբանական ընտանիք գնահատվել է բարձր ռիսկային: Հիմնական պատճառներից են եղել երեխաների կյանքին և առողջությանը վտանգ սպառնալը, ծնողների ոչ ադեկվատ վարքագիծը, բռնություն իրականացնելու նախադրյալների առկայությունը, ընտանիքներում առկա բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը և այլն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի լուծարման արդյունքում 38 երեխաներից կենսաբանական ընտանիք է վերադարձել 5 երեխա: Կենսաբանական ընտանիք վերադառնալու հնարավորություն չունեցող երեխաներից 7-ի խնամքը կազմակերպվել է խնամատար ընտանիքում, 5-ի խնամքը՝ «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամում, 1 երեխայի համար նշանակվել է խնամակալ, 6 չափահաս սաներ բնակվում են «Հայկական կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության «Սաբինե» փոքր խմբով տանը, 5 չափահաս սաներ՝ բարեգործի միջոցով վարձակալված բնակարանում, 1 չափահաս սան նախընտրում է ապրել ինքնուրույն, վարձակալել է բնակարան և աշխատում է, իսկ հատուկ կարիքներով 8 երեխաների խնամքը ներկայումս իրականացվում է Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնում, որտեղ երեխաները ստանում են մասնագիտացված ծառայություններ, հետագայում նրանց մասնագիտացված խնամատարության ուղղորդելու նպատակով:

Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների լուծարման արդյունքում երեխաները հիմնականում վերադարձել են կենսաբանական ընտանիք, իսկ այն երեխաները, որոնց ընտանիք վերադարձը հնարավոր չի եղել կազմակերպել ժամանակավորապես խնամվում են Գյումրու Ֆրիտոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատությունում, որի գործունեության դադարեցումը նախատեսվում է 2020 թվականի հունիսի 25-ից (հաստատությունը լուծարվելու է 2020 թ. հուլիսի 1-ից):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշել է, որ նախատեսվում է շուրջ 30 խոշոր բնակավայրերում հիմնել ցերեկային կենտրոններ, որոնք ծառայություններ կտրամադրեն շուրջ 3800 երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող: Ընդ որում, ցերեկային ծառայությունը ներառում է շարժական թիմի և սոցիալական օգնականի ծառայության բաղադրիչները՝ հնարավոր դարձնելով ծառայությունների տրամադրումը նաև շրջակա գյուղական համայնքներին: Նշված միջոցառումներն իրականացվելու են Երևանում և Հայաստանի Հանրապետության 10 մարզերում հասարակական կազմակերպություններին պատվիրակման միջոցով: Միջոցառումներն անցկացնելու նպատակով իրականացվում են մրցույթներ: Մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպությունները 2020 թվականից իրականացնելու են վերոնշյալ ծրագրերը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ Ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվության համաձայն՝ երեխաների խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքներում իրականացնելու նպատակով ՀՀ

կառավարությունը ընդունել է որոշում<sup>595</sup>, ինչպես նաև խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնաձևելու անձանց կենտրոնացված հաշվառման իրականացման նպատակով ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցները վերապատրաստվել են:

Դրա համար անհրաժեշտ է ավելացնել խնամատար ընտանիքների թիվը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մասնագիտացված խնամատարության զարգացմանը: Կարևոր է նաև ապահովել, որ խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնաձևելու և խնամատար ծնողները պարբերաբար անցնեն համապատասխան վերապատրաստումներ՝ ըստ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման հավելված N 2-ի համաձայն հաստատված կարգի:

ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 630-Ն որոշման<sup>596</sup> համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել է «Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի կազմակերպում և անցկացում» ծրագիրը: ՀՀ կառավարության առաջարկությունների հիման վրա լրամշակման փուլում է «Ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Հարցը համարելով առանձնակի կարևորություն ունեցող՝ Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և Երևանի քաղաքապետարանին հղել է հատուկ հարցադրում: Վերջիններս հավաստիացրել են, որ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործընթացի շրջանակներում նախկին հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում 2019 թվականին որևէ երեխա դուրս չի մնացել կրթությունից: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ այդ նպատակով նախապես իրականացվել են հատուկ դպրոցներից դուրս եկող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդունող հանրակրթական դպրոցների քարտեզագրման աշխատանքներ: Միաժամանակ, նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններն ունեն իրենց ամրագրված սպասարկման տարածքներ և այդ տարածքներում իրականացնում են գործող ուսումնական հաստատությունների սովորողների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում:

Վերը նշվածով հանդերձ, հաստատությունների վերակազմակերպման գործընթացում առկա են նաև որոշ ռիսկային գործոններ (օրինակ՝ համընդհանուր ներառական կրթությունից երեխաների դուրս մնալու, ծնողների կամ երեխաների խնամքն իրականացնող այլ անձանց կողմից նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, կենցաղային անհրաժեշտ պայմանների բացակայության, բժշկական և վերականգնողական պատշաճ ծառայություններ չստանալու հավանականությունը և այլն), որոնք ևս անհրաժեշտ է հաշվի առնել և ձեռնարկել դրանց կանխարգելմանն ու բացառմանն ուղղված միջոցներ:

Ուշագրավ է, որ չնայած ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից և Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ հատուկ դպրոցների վերակազմակերպման գործընթացի արդյունքում որևէ երեխա դուրս չի մնացել կրթությունից, այնուամենայնիվ, 2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների

<sup>595</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշումը; հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=131790> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>596</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 630-Ն որոշումը; հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=131046> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

պաշտպանի աշխատակազմ են ստացվել ահազանգեր՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման հետևանքով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող որոշ երեխաների՝ համընդհանուր ներառական կրթությունից դուրս մնալու վերաբերյալ: Մասնավորապես, ծնողների տեղեկացմամբ՝ իրենց բնակավայրերից դեպի մոտակա դպրոց տանող ճանապարհները և դպրոցների շենքային պայմանները հարմարեցված չեն իրենց երեխաների հատուկ կարիքներին, ինչպես նաև այդ դպրոցներում չկան հատուկ մանկավարժներ, որի հետևանքով երեխաների համար սահմանվել է տնային ուսուցում և նրանք զրկվել են համընդհանուր ներառական կրթություն ստանալու հնարավորությունից: Նման իրավիճակը խիստ մտահոգիչ է և իրավասու մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն հաստատությունների վերակազմակերպումից հետո բոլոր երեխաների՝ համընդհանուր ներառական կրթություն ստանալու իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է հանրակրթական դպրոցների շենքային պայմանները հարմարեցնել երեխաների հատուկ կարիքներին, ինչպես նաև բոլոր դպրոցներում ներդնել հատուկ մանկավարժի հաստիք:

Հարկ է նշել, որ համայնքային մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կարևոր դեր ունեն խնամակալության և հոգաբարձության մարմինները (առավել մանրամասն տե՛ս սույն բաժնի 5-րդ պարագրաֆը): Հաստատությունների վերակազմակերպման գործընթացում կարևոր է նաև ապահովել իրավասու մարմինների մշտական և սերտ համագործակցությունը ընտանիք վերադարձած երեխաների իրավունքների պաշտպանության նկատմամբ պատշաճ վերահսկողություն ապահովելու նպատակով:

Չնայած հաստատությունների վերակազմակերպման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում սկսվել էր շատ ավելի վաղ, 2019 թվականին ՀՀ կառավարության որոշումների հիման վրա երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպումն առանձնահատուկ հանրային քննարկումների առիթ դարձավ և առաջ բերեց տարակարծիք մեկնաբանություններ: Հաստատությունների վերակազմակերպման գործընթացի նպատակահարմարության վերաբերյալ կան տարբեր և հակասական կարծիքներ: Խնդիրը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ի սկզբանե իրավասու պետական մարմինների կողմից չեն իրականացվել պատշաճ իրազեկման աշխատանքներ նշված որոշման ընդունման նպատակի և անհրաժեշտության վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող մարմին, կարևորում է ընտանիքում ապրելու յուրաքանչյուր երեխայի իրավունքի իրացումն ապահովելու նպատակով հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիք վերադարձնելուն կամ դրա անհնարինության պարագայում այդ երեխաներին ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամք տրամադրելուն ուղղված՝ ապահինստիտուցիոնալացման պետության քաղաքականությունը:

Հաշվի առնելով բարձրացված հարցի կարևորությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականին սեփական նախաձեռնությամբ քննարկման ընթացակարգեր է սկսել՝ հաստատությունների վերակազմակերպման գործընթացում նշված հաստատություններում սովորող և/կամ խնամվող երեխաների կրթության իրավունքի իրացման, նրանց հետագա խնամքի և դաստիարակության կազմակերպման հարցերի վերաբերյալ:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման գործընթացի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համագործակցության

շրջանակում կազմակերպվել և Պաշտպանի աշխատակազմում տեղի են ունեցել քննարկումներ, որոնց մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչներ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Նկատի ունենալով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված պարզաբանումները, հաստատությունների վերակազմակերպման գործընթացի ընթացիկ վիճակում գտնվելը, ինչպես նաև այն, որ Գյումրու Ֆրիտոյֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատությունը լուծարվելու է 2020 թվականի հուլիսի 1-ից և դեռևս գործում են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող այլ հաստատություններ, հաստատությունների վերակազմակերպման գործընթացը գտնվելու է Պաշտպանի ուշադրության ներքո:

Անհրաժեշտ է, որպեսզի 2020 թվականին պետական իրավասու մարմինները պատշաճ միջոցներ ձեռնարկեն ընտանիք վերադարձած երեխաների խնամքի պայմանների, նրանց կրթություն ստանալու և անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքների պատշաճ իրացումն ապահովելու նպատակով:

Պաշտպանը հետևողական է լինելու հաստատությունների վերակազմակերպման գործընթացի պատշաճ և բոլոր շահագրգիռ կողմերի իրավունքների ապահովմամբ կազմակերպման, ինչպես նաև դրան հաջորդող ժամանակահատվածում երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով իրավասու մարմինների կողմից իրականացվող վերահսկողության նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հասարակության շրջանում իրականացնել ապահինստիտուցիոնալացման քաղաքականության նպատակի և այդ գործընթացի էական սկզբունքների պատշաճ իրազեկման աշխատանքներ,

2. կարիքների գնահատման հիման վրա՝ ապահովել ընտանիք վերադարձած երեխաներին և նրանց ընտանիքներին անհրաժեշտ բնաիրային և սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրումը,

3. երեխաների ընտանիք վերադառնալն ապահովելուն զուգահեռ ընդլայնել այլընտրանքային ծառայությունները Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում,

4. ապահովել կենսաբանական ընտանիք վերադառնալու հնարավորություն չունեցող երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումն ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամքի միջոցով (խնամակալություն, խնամատարություն և որդեգրում),

5. ավելացնել խնամատար ընտանիքների թիվը (այդ թվում՝ մասնագիտացված)՝ պարբերաբար վերապատրաստումներ իրականացնելով խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձանց և խնամատար ծնողների հետ,

6. ձեռնարկել միջոցներ հաստատությունների վերակազմակերպումից հետո բոլոր երեխաների՝ համընդհանուր ներառական կրթություն ստանալու իրավունքի իրացումն ապահովելու ուղղությամբ,

7. հանրակրթական դպրոցների շենքային պայմանները հարմարեցնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հատուկ կարիքներին,

8. Հայաստանի Հանրապետության հանրակրթական բոլոր դպրոցներում ներդնել հատուկ մանկավարժի հաստիք,

9. մշակել հաստատությունների վերակազմակերպման արդյունքում ընտանիք վերադարձած երեխաների խնամքի պայմանների, նրանց կրթություն ստանալու և



անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքների պատշաճ իրացումն ապահովելու նկատմամբ վերահսկողության հստակ ընթացակարգեր,

10. հաշվի առնելով համայնքային մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում խնամակալության և հոգաբարձության մարմինների դերը՝ նկատի ունենալ նաև սույն բաժնի 5-րդ պարագրաֆում ներկայացված առաջարկները:

#### 8. Երեխաների որդեգրման գործընթացը և ոլորտի խնդիրները

Երեխաները ծննդյան պահից ծնողական խնամքի կարիք ունեն: Ընտանիքում խնամվելը հետագայում երեխայի երջանիկ և առողջ լինելու գրավականներից է: Ցավոք, լինում են դեպքեր, երբ երեխաները, զրկված լինելով ընտանեկան միջավայրից, հայտնվում են համապատասխան հաստատություններում: Երեխաների խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու անհնարինության դեպքում պետք է ջանքեր գործադրվեն այլընտրանքային խնամքի տարբերակներ ապահովելու համար<sup>597</sup>: Նշված տարբերակներից է երեխայի որդեգրումը: Որդեգրումը սոցիալական և իրավական գործընթաց է, որի միջոցով երեխան դառնում է նոր ընտանիքի անդամ, եթե նա չի կարող դաստիարակություն և խնամք ստանալ իր կենսաբանական ընտանիքում<sup>598</sup>: Որդեգրման համակարգում, մասնավորապես որոշումների կայացման գործընթացում պետք է առաջնային ուշադրության արժանանան երեխայի լավագույն շահերը:

Երեխայի որդեգրումը կարգավորող դրույթներ սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային կոնվենցիաներով: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու և խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան մանկատներում տեղավորելու միջոցով: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ որդեգրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման նախապատվելի ձևը:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան միջավայրից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի միջավայրում մնալ չկարողացող երեխան պետության կողմից տրամադրվող հատուկ պաշտպանության և օգնության իրավունք ունի:

«Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի թիվ 33 կոնվենցիան ևս ընդունել է, որ երեխան իր անձի լիարժեք և ներդաշնակ զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան շրջապատում: Պետությունը՝ որպես առաջնահերթ խնդիր, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի երեխայի խնամքն իրականացնի նրա հարազատ ընտանիքը: Օտարերկրյա որդեգրումը կարող է առավելություններ տրամադրել երեխային, որի համար հնարավոր չէ գտնել հարմար ընտանիք նրա ծագման պետությունում, սակայն պետք է այնպիսի միջոցներ ձեռնարկել, որ օտարերկրյա որդեգրումը կատարվի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը, նրա հիմնական իրավունքները և երեխաների առևանգումը կամ վաճառքը կանխելու կարևորությունը:

<sup>597</sup> Տե՛ս [https://www.unicef.org/childfamily/index\\_24511.html](https://www.unicef.org/childfamily/index_24511.html) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>598</sup> Տե՛ս <https://resourcecentre.savethechildren.net/sites/default/files/documents/6029.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Այսպիսով, որդեգրումը հնարավորություն է տալիս երեխային մեծանալու ընտանեկան միջավայրում, ինչն ամենալավն է երեխայի իրավունքների տեսանկյունից, սակայն լինում են դեպքեր, երբ որդեգրման գործընթացում խախտվում են երեխայի իրավունքները:

Երեխաների որդեգրման հարցին անդրադարձել է ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն: Կոմիտեի ՀՀ-ի վերաբերյալ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում Կոմիտեն ողջունել է նշված կոնվենցիայի վավերացումը, սակայն Կոմիտեն մտահոգություն է հայտնել դրանց իրագործման թերությունների առնչությամբ<sup>599</sup>:

Մասնավորապես, Կոմիտեին մտահոգել են, որ որդեգրման գործընթացի մշտադիտարկումը և վերանայումը կենտրոնացված չեն և իրականացվում են մարզային մակարդակով՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների կողմից, մինչդեռ, որոշումերը կայացվում են տեղական դատարանների կողմից, որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները չափազանց ֆորմալ են և հիմնված են պոտենցիալ ծնողների նյութական վիճակի, այլ ոչ՝ ծնողավարման հմտությունների վրա, որդեգրման գործընթացին մասնակցող սուբյեկտների մասնավոր գաղտնիքի պաշտպանությունն օգտագործվում է որպես հիմք՝ որդեգրման գործընթացի մշտադիտարկման սահմանափակումներն արդարացնելու նպատակով:

Առաջարկվել է ստեղծել արդյունավետ մեխանիզմներ Հաագայի թիվ 33 կոնվենցիայի և որդեգրման վերոնշյալ կարգի կատարումն ապահովելու ուղղությամբ:

Մասնավորապես, ստեղծել որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված համակարգ, սահմանել որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն ոչ միայն նրանց նյութական վիճակի, այլ նաև՝ այլ պայմանների վրա, որոնք երեխային հնարավորություն կընձեռեն՝ մեծանալ առողջ և ապահով միջավայրում՝ պատասխանատու ծնողների հետ, սահմանել կարգ՝ որդեգրող ծնողներին որդեգրումից առաջ վերապատրաստման և օժանդակության ծառայություններ մատուցելու մասին, և ստեղծել որդեգրման գործընթացի բոլոր քայլերի՝ անկախ մարմի կողմից մշտադիտարկման համակարգ:

Հաագայի թիվ 33 կոնվենցիայի լավագույն փորձի ներդրման վերաբերյալ ուղեցույցի համաձայն՝ որդեգրման վերաբերյալ հսկողություն իրականացնող կենտրոնական մարմինները կարող են նաև որդեգրման մասին անանուն ինֆորմացիա ստանալ ծնողներից որդեգրման գործընթացի ընթացքում խնդիրների բացահայտման համար: Ուղեցույցով նշված է նաև, որ պետությունը որդեգրումից հետո պետք է տրամադրի ծառայությունների ամբողջություն, որոնց նպատակը կլինի ապահովել երեխայի լավագույն ինտեգրումը իր համար նոր միջավայրում<sup>600</sup>:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում որդեգրվել է 43 երեխա: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրվել է 18 երեխա, որից 6-ը՝ առողջական խնդիրներով, իսկ օտարերկրյա քաղաքացիների կողմից 25-ը, որոնք բոլորն էլ ունեցել են առողջության հետ կապված խնդիրներ: Նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում որդեգրվել է 19 երեխա, որից 8-ը օտարերկրյա քաղաքացիների կողմից: ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված երեխաները չեն ունեցել առողջության հետ կապված խնդիրներ, իսկ օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվածներից 5-ը ունեցել են հաշմանդամություն:

<sup>599</sup> Տե՛ս <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>600</sup> Տե՛ս <https://assets.hcch.net/docs/bb168262-1696-4e7f-acf3-fbbd85504af6.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ՀՀ-ում որդեգրման վերաբերյալ օրենսդրությունում տարբեր ժամանակաշրջաններում կատարվել են որոշակի փոփոխություններ: 2017 թվականի դեկտեմբերին ընդունված Ընտանեկան օրենսգրքի փոփոխությունների համաձայն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման հետ կապված բոլոր որոշումները հիմնված են երեխայի լավագույն շահերի ապահովման և նրա կարիքների բազմամասնագիտական գնահատման վրա: Պետք է համապատասխանեն հետևյալ երկու հիմնական նպատակներին՝ ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանեկան միջավայրում, իսկ անհնարինության դեպքում՝ դրան առավել մոտ միջավայրում, ապահովել երեխայի կրթությունը, խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանները:

Օրենսգրքի փոփոխությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձանց կյանքի պայմանների հետազոտություն, ովքեր հավակնում են երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ նաև սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրված եզրակացությունը՝ երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին:

Վերանայվել են նաև որդեգրման վերացման հիմքերը, որտեղ առանցքային են երեխայի լավագույն շահերը: Մասնավորապես, ըստ օրենսգրքի որդեգրումը կարող է վերացվել, երբ որդեգրողը խուսափում է իր վրա դրված ծնողական պարտականությունները կատարելուց, չի փոխում իր վարքագիծը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում, առանց հարգելի պատճառի հրաժարվել է վերցնել իր երեխային՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից, ինչպես նաև մի շարք այլ հիմքեր, որոնք բխում են երեխայի շահերից:

Նախարարության 2019 թվականի տվյալների համաձայն՝ որդեգրման գործընթացի մշտադիտարկման արդյունավետության բարձրացմանը, որդեգրված ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների կյանքի և դաստիարակության նկատմամբ հետագա վերահսկողության ընթացակարգերի ներդրմանը, ինչպես նաև որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչների սահմանմանն ուղղված ՀՀ կառավարության նախագիծը մշակման փուլում է: Ըստ Նախարարության՝ 2019 թվականին իրականացվել են որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչների վերանայման, որդեգրված ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների կյանքի և դաստիարակության նկատմամբ հետագա վերահսկողության ընթացակարգերի ներդրման աշխատանքներ:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների որդեգրման համակարգի բարեփոխման, ինչպես նաև փաստահավաք գործունեության իրականացման նպատակով ՀՀ վարչապետի 2019 թ. օգոստոսի 26-ի N 1197-Ա որոշմամբ հաստատվել է աշխատանքային խմբի անհատական կազմը, որում ընդգրկված է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի իրավասու ներկայացուցիչը: Որդեգրված երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ՝ որդեգրել ցանկացող անձին հոգեբանական, մանկավարժական և իրավական աջակցություն տրամադրելու նպատակով որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի կազմակերպման և անցկացման գործընթացները սահմանելու նպատակով 2019 թ. մայիսի 23-ին ընդունվել է ՀՀ

կառավարության «Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի կազմակերպում և անցկացում» N 630-Ն որոշումը:

Չնայած վերոգրյալին՝ որդեգրման գործընթացի գործող պետական երաշխիքները բավարար չեն, ինչն էլ հանգեցնում է խնդիրների: Այսպես, 2019 թվականին Ազգային անվտանգության ծառայությունը հրապարակեց տեղեկություններ այն մասին, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների արդյունքում բացահայտել է օտարերկրացիների կողմից հայաստանյան օրենսդրության կոպիտ խախտմամբ բազմաթիվ երեխաների որդեգրման դեպքեր<sup>601</sup>: Այս տվյալները շատ արագ լայն տարածում ստացան լրատվամիջոցներում և հանրության շրջանակներում<sup>602</sup>:

ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննվում էր օտարերկրացիների կողմից երեխաների ապօրինի որդեգրման դեպքերի առթիվ հարուցված քրեական գործը: Այս տեղեկությունների հիման վրա պաշտպանը իրականացրել է համակարգված մշտադիտարկում, ինչպես նաև հարցումներ է ուղղել համապատասխան մարմիններին:

ՀՀ քննչական կոմիտեն, պատասխանել է, որ նշված տվյալներով վերոգրյալ դեպքերի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ, 168-րդ, 169-րդ, 200-րդ, 214-րդ, 308-րդ հոդվածի հատկանիշներով, ինչպես նաև 16.01.2020 թվականի տվյալներով քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված են հինգ անձինք:

Այսպիսով, որդեգրման համակարգում արված փոփոխությունները դրական են ՀՀ-ում որդեգրվող և հետագայում ՀՀ-ում բնակվող երեխաների որդեգրման գործընթացի տեսանկյունից, սակայն առանձնակի ուշադրություն պետք է դարձվի նաև օտարերկրյա որդեգրումների գործընթացին՝ հաշվի առնելով այլ երկրի քաղաքացիների կողմից որդեգրված ՀՀ քաղաքացի երեխաների հետագա կյանքի նկատմամբ վերահսկողության կառավարման դժվարությունները: Նկարագրվածը վկայում է այն մասին, որ չնայած ՀՀ-ն ստանձնել է միջազգային պարտավորություններ, սակայն դեռ չի ստեղծել որդեգրումների պատշաճ գործող վերահսկողական համակարգ:

Պետության կողմից պետք է երաշխավորվի, որ այլ երկրում որդեգրվող երեխան օգուվի այնպիսի պաշտպանությունից ու ստանդարտներից, որոնք համարժեք են ներպետական որդեգրման դեպքում գործող պաշտպանությանը և չափանիշներին: Սույն դրությամբ ամրագրված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 21-րդ հոդվածով:

Այլ երկրում որդեգրվող երեխայի խնամքի նկատմամբ պետք է իրականացվի պատշաճ վերահսկողություն: ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված որդեգրման կարգի 64-րդ կետով սահմանվում է նաև, որ կենտրոնական մարմինն օտարերկրյա պետություն որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչև որդեգրման 5 տարին լրանալը, դիմում է համապատասխան պետության իրավասու մարմին:

Վերոնշյալ թիվ 269-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածով սահմանված կարգով, որդեգրված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով կենտրոնական մարմինը երեխայի որդեգրման մասին տեղեկությունները տրամադրում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ Հայաստանի

<sup>601</sup> Տե՛ս <http://investigative.am/news/view/aporini-vordegum.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>602</sup> Տե՛ս <https://www.azatutyun.am/a/30270644.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների իրականացման համար: Վերջինս որդեգրված երեխայի մասին տեղեկություններն ուղարկում է որդեգրողների մշտական բնակության վայրում գտնվող ՀՀ հյուպատոսական համապատասխան հիմնարկ: Հյուպատոսական հիմնարկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող որդեգրված երեխայի հաշվառումն իրականացնում է հաշվառման մատյանում կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգով՝ որդեգրման մասին տեղեկատվությունն ստանալուց հետո:

Ուշագրավ է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ վերահսկողության միատեսակ կարգ հյուպատոսական հիմնարկների կողմից ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների օտարերկրյա որդեգրումների նկատմամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 128.1 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և մարզպետարանի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) կողմից՝ համատեղ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից: Հայաստանի Հանրապետությունից այլ պետությունում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում, եթե այլ բան նախատեսված չէ մյուս պետության օրենքով:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

Ընտանեկան օրենսգրքով հստակ նշված չէ վերահսկողության ժամանակահատվածը օտարերկրյա որդեգրումների համար, այլ տրված է ընդհանուր ձևակերպում որդեգրման վերահսկողության համար: Ստացվում է, որ 2010 թվականի մարտի 18-ի N 269-Ն որոշմամբ սահմանված կարգով վերահսկողությունը օտարերկրյա որդեգրումների նկատմամբ իրականացվում է հինգ տարվա ընթացքում: Ուստի անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ ընտանեկան օրենսգրքով հստակ սահմանվի, օտարերկրյա որդեգրումների նկատմամբ վերահսկողության ժամկետը:

Տվյալ ոլորտում վերահսկողության միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որդեգրումից հետո պետք է պահանջվեն համապատասխան հաշվետվություններ կենտրոնական մարմնի կողմից որդեգրման ավարտից հետո առաջին հինգ տարվա ընթացքում: Առաջին տարվա ընթացքում պահանջվում են որդեգրման երեք զեկույց 3-րդ, 6-րդ և 12-րդ ամիսներին: Որդեգրման 2-րդ տարվա ընթացքում պահանջվում է 2 հաշվետվություն 6-րդ և 12-րդ ամսում: 3-րդ, 4-րդ և 5-րդ տարիների ընթացքում տրվում է մեկ հաշվետվություն յուրաքանչյուր տարի: Հաշվետվությունները ուղարկվում են որդեգրման համար պատասխանատու կենտրոնական մարմին<sup>603</sup>:

Այսպիսով, շարունակում է խնդրահարույց մնալ որդեգրման գործընթացի նկատմամբ անկախ վերահսկողական մեխանիզմի ներդրումը, քանի որ կառավարության համապատասխան որոշումը դեռևս մշակման փուլում է:

<sup>603</sup> Տե՛ս օրինակ՝ <https://travel.state.gov/content/travel/en/Intercountry-Adoption/Intercountry-Adoption-Country-Information/Spain.html> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի որդեգրման համակարգի միջոցով իրացման ապահովման համար անհրաժեշտ է՝

1. ներդնել միջազգային որդեգրումների հետագա վերահսկողության արդյունավետ և հստակ համակարգ՝ ապահովելով վերջինիս թափանցիկությունը,

2. որդեգրման կարգի փոփոխություններում հաշվի առնել օտարերկրյա որդեգրումների վերահսկողության մեխանիզմներ՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը,

3. հնարավորինս սեղմ ժամկետներում մշակել և շրջանառել որդեգրման գործընթացի մշտադիտարկման արդյունավետության բարձրացմանը, որդեգրված ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների կյանքի և դաստիարակության նկատմամբ հետագա վերահսկողության ընթացակարգերի ներդրմանը ուղղված ՀՀ կառավարության որոշումը:

9. Երեխայի լավագույն շահերի ապահովումը ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթների ընթացքում

Մարդու իրավունքների պաշտպանին 2019 թվականի ընթացքում հասցեագրել են բողոքներ այն մասին, որ հաճախ խնդրահարույց է ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում (սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Ծառայություն) հարուցված կատարողական վարույթների ընթացքում երեխաների լավագույն շահերով առաջնորդվելով կատարողական թերթի պահանջների կատարման ապահովումը:

Երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթների կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ Ծառայությունը հիմնականում ստանում է երեխայի հետ ծնողի տեսակցությունն ապահովելու վերաբերյալ կատարողական թերթեր:

Երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով հարկադիր կատարողների վերապատրաստումների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ 2019 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպվել են հարկադիր կատարողների վերապատրաստման դասընթացներ, որոնց ընթացքում քննարկվել են երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու և երեխայի հետ ծնողի տեսակցությունների կայացումն ապահովելու վերաբերյալ կատարողական թերթերի պահանջների կատարման առանձնահատկություններին վերաբերող հարցեր:

Չնայած վերոնշյալ հանգամանքին, երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով Ծառայության գործունեության վերաբերյալ 2019 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք հիմնականում կապված են եղել հարկադիր կատարողի ցուցաբերած անգործության, կատարողական վարույթի անհիմն կասեցման, կասեցումն առաջացրած հանգամանքները վերանայուց հետո կատարողական վարույթը չվերսկսելու, փորձաքննություն նշանակելու հիմքով կատարողական վարույթի կասեցմամբ պայմանավորված երկարատև ձգձգումների, փորձաքննություն նշանակելիս մշտապես միևնույն հոգեբանական կենտրոնի («Ժեստ» հոգեբանական կենտրոնի) հետ աշխատելու, նշված հոգեբանական կենտրոնի կողմից տրամադրված եզրակացությունների հիմնավորվածության, կատարողական թերթում նշված պահանջների պարզաբանման նպատակով հարկադիր կատարողի կողմից դատարան դիմելու անհրաժեշտության դեպքում վերջինիս կողմից դատարան չդիմելու, ինչպես նաև այնպիսի դեպքերի հետ, երբ երեխան՝ երկարատև շփման բացակայության, ծնողի հոգեբանական ճնշումների հետևանքով չի ցանկացել տեսակցել մյուս ծնողին, իսկ հարկադիր կատարողը պատշաճ միջոցներ չի ձեռնարկել կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ արդարադատության նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում ալիմենտային, երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու և երեխայի հետ ծնողի տեսակցությունների կայացումն ապահովելու վերաբերյալ գործերով Ծառայության դեմ վարչական կարգով ներկայացվել է 25 բողոք, իսկ դատական կարգով՝ 9 բողոք:

«Ժեստ» հոգեբանական կենտրոնի կողմից տրամադրված եզրակացությունների դեմ բողոքների քանակով պայմանավորված հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի շրջանակներում փորձաքննություն նշանակելիս՝ այլընտրանքային հոգեբանական կենտրոն ներգրավելու կապակցությամբ, ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ Ծառայությունը 2019 թվականի հուլիսի 26-ից սկսած երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու, երեխայի հետ ծնողի տեսակցության կայացումն ապահովելու վերաբերյալ կատարողական թերթերի կատարման շրջանակում աշխատել է ոչ միայն «Ժեստ» հոգեբանական կենտրոնի, այլ նաև «Մանդալա հոգեբանական կենտրոն» հասարակական կազմակերպության հետ, որն ընտրվել է օրենքով սահմանված կարգով անցկացված մրցույթով:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը յուրաքանչյուր դատարանի կայացրած վճռի/դատավճռի կատարումը դիտարկում է որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մաս<sup>604</sup>: Այսինքն, արդար դատաքննության իրավունքի իրացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նաև ապահովել կայացված դատական ակտի պատշաճ կատարումը, որի իրավասու մարմինը Ծառայությունն է:

#### 9.1 Երեխայի և ծնողի տեսակցությունների կայացմանը խոչընդոտելը

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են բողոքներ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված՝ երեխայի և ծնողի տեսակցությունների կայացմանը մյուս ծնողի կողմից խոչընդոտելու, հարկադիր կատարողի կողմից նշված խոչընդոտումները չարձանագրելու և ՀՀ քրեական օրենսգրքի 167.1 հոդվածով նախատեսված՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու հանցակազմի առկայությունը ստուգելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազություն չդիմելու վերաբերյալ:

Խնդիրը կայանում է նրանում, որ լայն տարածում ունեն այն իրավիճակները, երբ ծնողներից մեկը (հիմնականում՝ հայրը) առերևույթ կամայական արգելում է մյուս ծնողի շփումը երեխայի հետ և խոչընդոտում տեսակցությունների կայացմանը: Նման պարագայում է, որ անհրաժեշտ է իրավասու մարմնի՝ Ծառայության միջամտությունը՝ կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու համար:

Խնդրահարույց է, որ դատական ակտով սահմանված՝ ծնողի և երեխայի տեսակցությունների կայացմանը երեխայի հետ համատեղ բնակվող ծնողի կողմից խոչընդոտելու հանգամանքը հաճախ չի արձանագրվում հարկադիր կատարողի կողմից, որի հետևանքով հնարավոր չի լինում տեսակցությունների կայացման հետագա հնարավոր խոչընդոտները բացառելու նպատակով համապատասխան միջոցներ ձեռնարկել:

ՀՀ արդարադատության նախարարության տվյալների համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167.1 հոդվածով նախատեսված՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու հանցակազմի հատկանիշների

<sup>604</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հորնսբին ընդդեմ Հունաստանի (Hornsby v. Greece) գործով 1997 թվականի մարտի 19-ի վճիռը, գանգատ թիվ 18357/91, կետ 40:

հնարավոր առկայությունը ստուգելու նպատակով 2019 թվականին Ծառայության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն են ուղարկվել 16 համապատասխան գործ, որոնցից 7-ը մերժվել է (6-ը բողոքարկվել է), իսկ 9-ը դեռևս ընթացքի մեջ է:

Հարկ է արձանագրել, որ ծնողներից մեկի կողմից մյուս ծնողի հետ երեխայի շփումն ու տեսակցությունն արգելելու կամ դրան խոչընդոտելու հարցն ունի համակարգային բնույթ: Այս առումով անհրաժեշտ է, որպեսզի իրավասու մարմինները մշակեն հստակ ընթացակարգեր՝ երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով ստեղծված խնդրահարույց իրավիճակներում հարկադիր կատարողների կողմից կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ՝ երեխայի լավագույն շահերից բխող անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու, ինչպես նաև առավել հետևողական և արդյունավետ գործունեություն իրականացնելու նպատակով: Կարևոր է նաև հատուկ ուշադրություն դարձնել երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով հարկադիր կատարողների վերապատրաստումների իրականացման հարցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. պարբերաբար իրականացնել հարկադիր կատարողների վերապատրաստումներ՝ երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով կատարողական գործողություններ իրականացնելիս՝ երեխաների լավագույն շահերից բխող և երեխայակենտրոն մոտեցում ցուցաբերելու նպատակով,

2. արձանագրել երեխայի հետ ծնողի տեսակցությունների կայացմանը խոչընդոտելու բոլոր դեպքերը և սահմանված կարգով համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանց բացառման ուղղությամբ,

3. իրավասու մարմինների կողմից մշակել հստակ ընթացակարգեր՝ երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով ստեղծված խնդրահարույց իրավիճակներում հարկադիր կատարողների կողմից կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ՝ երեխայի լավագույն շահերից բխող անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

## 9.2 Կատարողական թերթում նշված պահանջների պարզաբանման անհրաժեշտությունը

2019 թվականին Ծառայության գործունեության դեմ Պաշտպանին հասցեագրած բողոքների քննարկման ընթացքում խնդրահարույց են եղել նաև այն իրավիճակները, երբ կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է եղել, որպեսզի հարկադիր կատարողը տվյալ կատարողական թերթում նշված պահանջները պարզաբանելու նպատակով դիմի կատարողական թերթ տված դատարան, սակայն չի դիմել: Նշված դեպքերում հարկադիր կատարողների կողմից որպես կատարողական թերթ տված դատարան չդիմելու պատճառաբանություն նշվել է միայն այն հանգամանքը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթում նշված պահանջները պարզ չլինելու դեպքում այն պարզաբանելու համար դատարան դիմելը հարկադիր կատարողի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը:

Խնդրահարույց է, որ Ծառայության կողմից չեն ներկայացվել հիմնավոր պատճառաբանություններ՝ կատարողական թերթի պարզաբանման նպատակով դատարան դիմելու անհրաժեշտության բացակայության վերաբերյալ: Ավելին, կատարողական թերթի պահանջների վերաբերյալ դատարանի պարզաբանումները ստանալն էական նշանակություն է ունեցել տվյալ կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու համար, քանի որ կատարողական վարույթի մասնակիցների միջև առկա է եղել վեճ՝ կապված կատարողական թերթի բովանդակության մեկնաբանման հետ, որի



հետևանքով հնարավոր չի եղել ապահովել դրա կատարումը: Նշված հարցով Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկի կապակցությամբ միայն Պաշտպանի միջամտության և կատարողական թերթի պահանջների պարզաբանման նպատակով դատարան չդիմելու պարագայում դրանց կատարումն ապահովելու անհնարինության հիմնավորման արդյունքում է, որ հարկադիր կատարողն ի վերջո դիմել է կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու նպատակով: Հարկադիր կատարողի կողմից ցուցաբերած նման մոտեցումն անընդունելի է:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ կատարողական թերթում կատարողական գործողությունների իրականացման (օրինակ՝ երեխայի և ծնողի տեսակցությունների կայացման) վայր սահմանված չլինելու պարագայում այն ծնողը, որի հետ բնակվում է երեխան, արգելում է իր բնակության վայրից դուրս երեխայի և մյուս ծնողի տեսակցությունների կայացումը, իսկ հարկադիր կատարողը միջոցներ չի ձեռնարկում նրանց տեսակցությունը տվյալ կատարողական վարույթով պարտատեր ծնողի առաջարկած՝ չեզոք և երեխայի համար բարենպաստ միջավայրում կազմակերպելու նպատակով: Նման դեպքերում հարկադիր կատարողի կողմից որպես պատճառաբանություն նշվում է այն հանգամանքը, որ կատարողական թերթում տվյալ վայրը նշված չէ որպես տեսակցությունների կայացման վայր, հետևաբար հնարավոր չէ տեսակցությունների կայացումն ապահովել այլ վայրում:

Կատարողական թերթում տեսակցությունների կայացման վայրի վերաբերյալ նշման բացակայությունը չպետք է հարկադիր կատարողի կողմից մեկնաբանվի որպես բացառապես երեխայի բնակության վայրում տեսակցությունների կայացումն ապահովելու պահանջ: Ավելին, կատարողական թերթն ընդհանրապես չպետք է մեկնաբանվի հարկադիր կատարողի կողմից, քանի որ վերջինս նման իրավասություն չունի: Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Ծառայության իրավասությունն է կատարողական թերթի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման համար միջոցներ ձեռնարկելը, այլ ոչ թե դատական ակտի և կիրառման ենթակա օրենքի մեկնաբանությունը<sup>605</sup>:

Նման դեպքում ծնողները պետք է փորձեն փոխադարձ համաձայնության գալ տեսակցությունների կայացման վայրի վերաբերյալ, իսկ դրա անհնարինության պարագայում հարկադիր կատարողը պետք է կատարողական թերթում նշված պահանջները պարզաբանելու նպատակով անմիջապես դիմի կատարողական թերթ տված դատարան: Այնուամենայնիվ, երեխայի լավագույն շահերից է բխում, որպեսզի հարկադիր կատարողը տվյալ հիմքով կատարողական վարույթը կասեցնելու իր իրավունքից օգտվի միայն բացառիկ դեպքերում՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում և առաջնորդվելով երեխայի լավագույն շահերով: Մնացած բոլոր դեպքերում հարկադիր կատարողը պետք է մինչև դատարանի կողմից համապատասխան պարզաբանում տրամադրելը ևս ապահովի կատարողական թերթի պահանջների կատարումը՝ չեզոք և երեխայի համար բարենպաստ միջավայրում, քանի որ կատարողական թերթում տեսակցությունների կայացման վայրի վերաբերյալ նշման բացակայությունը ենթադրում է, որ տեսակցությունների համար սահմանված օրերին և ժամերին դրանք կարող են կայանալ ցանկացած վայրում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է բոլոր այն դեպքերում, երբ կատարողական թերթում նշված պահանջները պարզաբանելու անհրաժեշտություն է առաջանում, բացառել հարկադիր կատարողների կողմից այդ պահանջների մեկնաբանումը (այդ թվում՝

<sup>605</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մարտի 22-ի թիվ ՄԴՈ-1262 որոշումը, կետ 9, հասանելի է <http://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1262.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

տեսակցության կայացման վայրի վերաբերյալ) և անմիջապես դիմել կատարողական թերթ տված դատարան՝ այն պարզաբանելու համար:

### 9.3 Կատարողական վարույթի կասեցումը

Նմանատիպ իրավիճակ է նաև հարկադիր կատարողի կողմից փորձաքննություն նշանակելու հիմքով կատարողական վարույթը կասեցնելու դեպքում, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ հիմքով կատարողական վարույթը կասեցնելը հարկադիր կատարողի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը: Այսինքն, փորձաքննություն նշանակելիս պարտադիր չէ, որպեսզի հարկադիր կատարողը կասեցնի կատարողական վարույթը՝ կատարողական վարույթով պարտատեր հանդիսացող անձին տվյալ ժամանակահատվածում զրկելով Ծառայության միջոցով կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու հնարավորությունից: Հարկադիր կատարողի կողմից նման մոտեցում ցուցաբերելը հատկապես կարևոր է այն կատարողական վարույթներով, որոնց կասեցման պարագայում որևէ կերպ հնարավոր չէ ապահովել դատական ակտի կատարումը (օրինակ՝ երեխայի ծնողների միջև միմյանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի, մշտական տարաձայնությունների առկայության և ծնողներից մեկի կողմից մյուս ծնողի հետ երեխայի շփումն արգելելու և տեսակցությունների կայացմանը խոչընդոտելու դեպքերում):

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության պարագայում կատարողական վարույթը, գրեթե միշտ, կասեցվում է հարկադիր կատարողի կողմից: Ավելին, փորձաքննություն նշանակելու հիմքով կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշման մեջ հարկադիր կատարողը որպես հիմնավորում նշում է միայն այն հանգամանքը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարողն իրավունք ունի կասեցնել կատարողական վարույթը, եթե նշանակել է փորձաքննություն: Նշված որոշմամբ չի ներկայացվում որևէ հիմնավորում՝ փորձաքննություն նշանակելու հիմքով կատարողական վարույթը կասեցնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Խնդրահարույց է նաև այն, որ կատարողական վարույթը կասեցնելու հետևանքով հնարավոր չի լինում երեխայի և ծնողի միջև շփումը վերականգնելու, երեխայի հետ պարբերաբար համապատասխան աշխատանք տանելու նպատակով ներգրավել հոգեբան, իսկ երեխայի հետ համատեղ բնակվող ծնողը սովորաբար չի թույլատրում, որպեսզի մյուս ծնողն իր միջոցներով երեխային տանի հոգեբանի մոտ: Հարկադիր կատարողների կողմից ցուցաբերած նման մոտեցումը չի բխում երեխայի լավագույն շահերից և անընդունելի է:

Իրավական որոշակիության սկզբունքի ապահովման և երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի հարկադիր կատարողը կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշման մեջ վարույթը կասեցնելու իր իրավունքից օգտվելու անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում ներկայացնելու պարտավորություն ունենա: Ներկայումս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նման կարգավորում նախատեսված չէ, որի հետևանքով կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշման մեջ (օրինակ՝ փորձաքննություն նշանակելու հիմքով) հարկադիր կատարողի կողմից միայն նշվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ համապատասխան հիմքով վարույթը կասեցնելու հարկադիր կատարողի իրավունքը՝ առանց կասեցման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է սահմանել կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշման մեջ վարույթը կասեցնելու իր իրավունքից օգտվելու անհրաժեշտության վերաբերյալ հարկադիր կատարողի կողմից հիմնավորում ներկայացնելու պարտավորություն: Նշվածը վերաբերում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կատարողական վարույթը կասեցնելու դեպքերին, որոնց առկայության պարագայում կատարողական վարույթը կասեցնելը հարկադիր կատարողի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը:

#### 9.4 Հոգեբանների, մանկավարժների և սոցիալական աշխատողների ներգրավումը երեխաների մասնակցությամբ կատարողական գործողություններին

Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ ծնողի հետ երեխայի շփման երկարատև բացակայության, երեխայի հետ համատեղ բնակվող ծնողի կողմից երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշումներ գործադրելու և մյուս ծնողի հետ տեսակցությունների կայացմանը խոչընդոտելու հետևանքով երեխան չի ցանկանում տեսակցել մյուս ծնողի հետ:

Խնդրահարույց է, որ նման իրավիճակներում հարկադիր կատարողը փորձաքննություն նշանակելու հիմքով գրեթե միշտ կասեցնում է կատարողական վարույթը, որի հետևանքով տվյալ ժամանակահատվածում հնարավոր չի լինում երեխայի լավագույն շահերով առաջնորդվելով՝ ապահովել կատարողական թերթի պահանջների կատարումը:

ՀՀ Արդարադատության նախարարության տվյալների համաձայն՝ քիչ չեն դեպքերը, երբ երեխան չի ցանկանում տեսակցել տվյալ կատարողական վարույթով պահանջատեր ծնողի հետ, որի հետևանքով կատարողական թերթի կատարումն ապահովելիս խոչընդոտներ են առաջանում: Նման դեպքերում հարկադիր կատարողը, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, երեխայի կամքի վրա հնարավոր բացասական ազդեցության առկայության կամ բացակայության փաստը պարզելու նպատակով նշանակում է փորձագետ: Այնուհետև, փորձագետի համապատասխան եզրակացության հիման վրա կատարողական վարույթով իրականացվում են հետագա կատարողական գործողությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ նման իրավիճակներում հարկադիր կատարողը փորձագետ նշանակելու հիմքով կասեցնում է կատարողական վարույթը և փորձաքննությունը սովորաբար երկարատև ընթացք է ունենում, անձը զրկվում է տվյալ ժամանակահատվածում կատարողական թերթի պահանջների կատարումը Օտոայության միջոցով ապահովելու հնարավորությունից: Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրվել է բողոք այն մասին, որ փորձաքննություն նշանակելու հիմքով կատարողական վարույթը հարկադիր կատարողի կողմից կասեցնելու, փորձաքննության անհարկի ձգձգման, ինչպես նաև երեխայի հետ համատեղ բնակվող ծնողի կողմից երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշումներ գործադրելու և մյուս ծնողի հետ տեսակցությունների կայացմանը խոչընդոտելու հետևանքով քաղաքացին մոտ տասն ամիս զրկվել է իր երեխային տեսակցելու և նրա հետ շփվելու հնարավորությունից: Ավելին, երկարատև շփման բացակայության հետևանքով երեխան օտարացել է ծնողից և չի ցանկացել տեսակցել նրա հետ ու այցելել վերջինիս բնակարան: Տվյալ պարագայում միայն կատարողական վարույթի վերսկսման դեպքում հնարավոր կլիներ ապահովել կատարողական թերթի պահանջների կատարումը, որը, սակայն, հարկադիր կատարողի կողմից չի արվել: Ներկայացված իրավիճակի հետևանքով երեխան զրկվել է ՀՀ Սահմանադրությամբ և ներպետական նորմատիվ իրավական ակտերով երաշխավորված՝ ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Նմանատիպ իրավիճակներում անհրաժեշտ է, որ հարկադիր կատարողը կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելիս առաջնահերթ ուշադրություն դարձնի երեխայի լավագույն շահերին: Երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու և կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու նպատակով՝ կարևոր է կատարողական գործողություններին ըստ անհրաժեշտության՝ հոգեբանի, մանկավարժի և/կամ սոցիալական աշխատողի ներգրավումը: Խնդրահարույց է, որ կատարողական վարույթի կասեցված լինելու պայմաններում հնարավոր չի լինում ապահովել հոգեբանի, մանկավարժի և/կամ սոցիալական աշխատողի կողմից երեխայի հետ պարբերաբար համապատասխան աշխատանքներ տանելը, քանի որ երեխայի հետ բնակվող ծնողը հիմնականում չի թույլատրում մյուս ծնողի նախաձեռնությամբ երեխայի հետ նշված մասնագետների աշխատանք տանելը: Ավելին, Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ անգամ կատարողական վարույթը կասեցված չլինելու պարագայում հարկադիր կատարողները կատարողական գործողություններին ըստ անհրաժեշտության չեն ներգրավում համապատասխան մասնագետների:

Այս առումով հարկ է նշել, որ երեխաների մասնակցությամբ կատարողական թերթի պահանջների կատարման ապահովման նպատակով տարբեր երկրներում կիրառվում են տարբեր մոտեցումներ: Օրինակ՝ Խորվաթիայի Հանրապետությունում երեխաների խնամքի կազմակերպմանը և դաստիարակությանը վերաբերող դատական ակտերի կատարման ապահովումը վերապահված է սոցիալական աջակցության կենտրոններին: Նշված կենտրոնները ներպետական սոցիալական աջակցության համակարգի կարևորագույն հաստատություններն են և գործում են համայնքային մակարդակով:

Խորվաթիայում սոցիալական աջակցության կենտրոնների բոլոր աշխատակիցներն անցնում են տարաբնույթ վերապատրաստումներ: Բացի այդ, սոցիալական աշխատանքի բոլոր մասնագետները համալսարանի տվյալ ֆակուլտետն ավարտելուց հետո մեկ տարի ժամկետով պարտադիր կարգով աշխատում են տվյալ ոլորտում և հանձնում են մասնագիտական քննություն: Սոցիալական աշխատողների համար նախատեսված է նաև պարտադիր լիցենզավորում, որը տրվում է Սոցիալական աշխատողների պալատի կողմից: Նմանատիպ համակարգ է գործում նաև սոցիալական աջակցության կենտրոնների հոգեբանների համար: Նշված մասնագետների համար լրացուցիչ մասնագիտացված դասընթացներ են առաջարկում նաև իրավասու նախարարությունները, հասարակական կազմակերպությունները և տվյալ ոլորտի այլ գործընկերները (օրինակ՝ դասընթացների մի մասը կազմակերպվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ):

Խորվաթիայում սոցիալական աջակցության կենտրոնների բոլոր աշխատակիցները սոցիալական աշխատանքի, հոգեբանության և այլ բնագավառներում հավատարմագրված մասնագետներ են՝ ըստ տվյալ սոցիալական աջակցության կենտրոնի շահառուների կարիքների: Սոցիալական աջակցության յուրաքանչյուր կենտրոնի գործունեությունը համակարգվում է համապատասխան նախարարության կողմից: Մասնագետների հարաբերակցությունը և քանակը տարբեր է լինում՝ կախված տարաբնույթ գործոններից, այդ թվում՝ տվյալ սոցիալական աջակցության կենտրոնի կողմից սպասարկվող տարածքի բնակչության քանակից:

Խորվաթիայում գործում է երեխայի ընտանիքի մանրամասն գնահատման ընթացակարգ, ներառյալ՝ ընտանիքում երեխայի անվտանգության և ընդհանուր զարգացման հնարավոր ռիսկերի գնահատումը: Սոցիալական աջակցության կենտրոնի գործերով պատասխանատուն յուրաքանչյուր երեխայի համար մշակում է անհատական ծրագիր, որը հնարավորություն է տալիս պատշաճ մշակել և վերահսկել կատարվող միջամտությունները: Նշված գործընթացները կարգավորված են Խորվաթիայի ներպետական օրենսդրությամբ: Այնուամենայնիվ, կարևոր է ընդգծել, որ դատական ակտերի հարկադիր կատարման

խորվաթական համակարգում ևս առկա են խնդիրներ կապված երկարատև, ձգձգվող դատավարությունների և դրանց հիման վրա կայացված դատական ակտերի կատարումն ապահովելու հետ: Մասնավորապես, Խորվաթիայում ևս առկա է ամուսնալուծությունների հետևանքով երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման, երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ դատական ակտերի կատարման ապահովմանն ուղղված ընթացակարգերի բարելավման անհրաժեշտություն<sup>606</sup>:

Բուլղարիայի Հանրապետությունում 2011 թվականից գոյություն ունի մեթոդական ուղեցույց ռիսկային իրավիճակներում հայտնված երեխաներին իրենց ծնողներից կամ նրանցից մեկից վերցնելու գործընթացի վերաբերյալ, որը նաև ներառում է այդ երեխաներին և նրանց ծնողներին սոցիալական ծառայություններ տրամադրելը: Նման սոցիալական աջակցություն ցուցաբերում են, օրինակ, համայնքային աջակցության կենտրոնները, որոնք ունեն սոցիալական աշխատողներ, հոգեբաններ և այլ մանկավարժներ: Բուլղարիայում գործում են նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (օրինակ՝ Բուլղարիայի միջազգային սոցիալական ծառայությունը), որոնք ունեն կենտրոններ՝ ծնողներից բաժանված երեխաների և նրանց ամուսնալուծության գործընթացում գտնվող կամ ամուսնալուծված ծնողների տեսակցությունների կազմակերպման համար<sup>607</sup>:

Երեխաների և ծնողների տեսակցությունների կազմակերպման կենտրոններում առաջնահերթ ուշադրություն են դարձնում երեխայի լավագույն շահերին՝ ծնողի և/կամ ընտանիքի այլ անդամի և նրանցից առանձին բնակվող երեխայի տեսակցությունները կազմակերպելով չեզոք, ապահով և ընկերական միջավայրում: Նման կենտրոններում տեսակցությունների կազմակերպումը նվազեցնում է երեխաների՝ ծնողների միջև առկա տարաձայնություններին և ռիսկային իրավիճակներին ականատես լինելու և դրանցում ներգրավվելու հնարավորությունը, ինչպես նաև աջակցում է ծնողների միջանձնային հարաբերությունները կարգավորելուն և երեխայի հետ տեսակցությունների կազմակերպման հարցում փոխադարձ համաձայնություն ձեռք բերելուն: Կենտրոններ հաճախող թիրախային խումբ են կազմում այն ծնողները, որոնք ամուսնալուծության կամ ամուսնալուծության գործընթացում գտնվելու հետևանքով չեն կարողանում համաձայնության գալ երեխայի խնամքի կազմակերպման և տեսակցությունների կազմակերպման վերաբերյալ, ունեն այնպիսի դժվար հաղթահարելի տարաձայնություններ, որոնք բացասաբար են անդրադառնում երեխայի վրա, երեխայի և նրանից առանձին բնակվող ծնողի շփումը կազմակերպելիս խնդիրների առկայության պատճառով անհրաժեշտ է մասնագետների աջակցություն, ինչպես նաև առկա են մտավախություններ տեսակցությունների ընթացքում երեխայի հոգեբանական վիճակի վերաբերյալ և այլն<sup>608</sup>:

Այսպիսով, Խորվաթիայում և Բուլղարիայում երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով հարկադիր կատարումը հիմնականում կազմակերպվում է սոցիալական աջակցության կենտրոնների կողմից՝ սոցիալական աշխատողների և հոգեբանների մասնակցությամբ: Նշված երկրներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դատական ակտի կատարումն ապահովելու գործընթացում երեխաների հետ անհրաժեշտ աշխատանքներ տանելու համար համապատասխան կրթություն ստացած և լիցենզավորված մասնագետների ներգրավմանը և նրանց հետ պարբերաբար վերապատրաստումներ իրականացնելուն:

<sup>606</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Խորվաթիայի գրասենյակ:

<sup>607</sup> Աղբյուրը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Բուլղարիայի գրասենյակ:

<sup>608</sup> Տե՛ս <http://www.iss-bg.org/bg/kontakten-tsentar-za-detsa-i-roditeli-sled-razdyala-v-protsedura-na-razvod-ili-sled-razvod/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Նկատի ունենալով վերը նշվածը, անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Հանրապետությունում ևս հոգեբանները, մանկավարժները և սոցիալական աշխատողները հնարավորինս ներգրավվեն երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներում և համապատասխան աշխատանքներ տանեն թե՛ երեխայի, թե՛ նրա ծնողների հետ: Այդ նպատակով կարևոր է երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներով հարկադիր կատարողների կողմից կատարողական գործողություններին համապատասխան մասնագետների ներգրավելը և տվյալ մասնագետների հետ մշտական սերտ համագործակցություն ապահովելը: Նման մոտեցումը զգալիորեն կնպաստի երեխայի լավագույն շահերով առաջնորդվելով և երեխայի ու վերջինիս ծնողների հիմնարար իրավունքների իրացումը երաշխավորելով դատական ակտերի կատարման ապահովմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներում հնարավորինս սերտ համագործակցել հոգեբանների, մանկավարժների և սոցիալական աշխատողների հետ՝ երեխաների լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելով կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովելու նպատակով,

2. ըստ անհրաժեշտության՝ ծնողի միջնորդության հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, կատարողական գործողություններին ներգրավել հոգեբան, մանկավարժ և/կամ սոցիալական աշխատող՝ երեխայի հետ լրացուցիչ աշխատանքներ տանելու նպատակով:

ԲԱԺԻՆ 15. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը մշտապես գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրություն ներքո:

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին վերապահվեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի<sup>609</sup> դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության իրավական կարգավիճակ<sup>610</sup>: Այս կարգավիճակը նախատեսված է նշված կոնվենցիայով և նպատակ ունի ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունն անկախ մարմնի կողմից:

Կոնվենցիոն նշված կարգավիճակի արդյունավետ իրացման ու մասնագիտացված մոտեցում ապահովելու նպատակով 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժին: Բաժինն ապահովում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից հաշմանդամություն ունեցող անձանց խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության գործառույթների իրականացումը: Բողոքների հիման վրա և սեփական նախաձեռնությամբ քննարկումներից բացի, բաժինն ապահովում է նաև Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, հաշմանդամություն ունեցող անձանց գտնվելու վայրերի հաստատություններ այցերի իրականացումը: Այս բաժինը համագործակցում է նաև ոլորտի հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների հետ՝ աջակցելու հավասար հնարավորությունների, իրավունքներն ապահովող միջավայրի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես սահմանադրական անկախ մարմնի գործունեության հիմնական ուղղություններից է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը: Այս ոլորտում Պաշտպանի գործունեությունը հիմնված է մի քանի հիմնարար սկզբունքների վրա: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի բարելավման համար Պաշտպանը հատկապես կարևորում է հարգանքը հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացման հնարավորությունների և նրանց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ, ինչպես նաև հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը: Պաշտպանն իր ելույթներում և հրապարակումներում մշտապես ընդգծում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը՝ երաշխավորելու հավասար հնարավորությունների և իրավունքների միջավայրի ստեղծումը, անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացումը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում նրանց ինքնուրույնությունը և մասնակցությունը:

Կարևորելով թե՛ օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման, թե՛ իրավունքների մասին իրազեկման ու կարծրատիպերը վերացնելու

<sup>609</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա:

<sup>610</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, հոդված 2, մաս 4:

անհրաժեշտությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները 2019 թվականի ընթացքում մի շարք աշխատանքային քննարկումներ են ունեցել պետական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ: Ընդ որում, հանդիպումները տեղի են ունեցել ոչ միայն Երևանում, այլ նաև ՀՀ մարզերում:

Այս հանդիպումների ընթացքում Պաշտպանն առանձնացրել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ հանրային կյանքում լիակատար մասնակցությունն ու ներգրավվածությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների և հնարավորությունների մատչելիության ապահովումը՝ իբրև առկա կարծրատիպերի վերացման անհրաժեշտ նախապայմաններ:

Ավելին, Պաշտպանը հրապարակել է նաև իրազեկող նյութեր և տեսանյութեր, որոնց նպատակն է բարձրաձայնել հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ առօրյա կյանքում հանդիպող խոչընդոտների, ինչպես նաև իրենց իրավունքների ինքնուրույն իրացման<sup>611</sup>, հաշմանդամություն ունեցող մարդկանց հավասար հնարավորությունների ապահովման և միջավայրային խոչընդոտների վերացման անհրաժեշտության մասին<sup>612</sup>:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ուղեցույց, որը ներառում է այն հարցերի պատասխանները, որոնք կօգնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց լիարժեք իրացնել իրենց իրավունքները (օրինակ՝ ի՞նչ իրավունքներ ունի հաշմանդամություն ունեցող անձը, ու՞մ կարող է դիմել իրավունքների պաշտպանության համար, ինչպե՞ս ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը և այլն)<sup>613</sup>:

Նշենք նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությունը կազմակերպել է ժեստերի լեզվի դասընթաց լսողական խնդիրներ ունեցող մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու նպատակով<sup>614</sup>:

Չնայած ձեռնարկվող շարունակական քայլերի, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ շարունակում են բախվել խտրականության և իրենց իրավունքների իրացման դժվարությունների, ինչի արդյունքում խախտվում են վերջիններիս կրթության, աշխատանքային, սպորտային և մշակութային կյանքին մասնակցելու, ազատ տեղաշարժի, ընտրելու, առողջության պահպանման և այլ իրավունքներ, որոնք ներկայացվել և ուսումնասիրության են ենթարկվել սույն բաժնում:

<sup>611</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն իրացնել իր իրավունքները» տեսանյութը, հասանելի է <https://www.youtube.com/watch?v=qL60ILwters> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>612</sup> Տե՛ս «Հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները» տեսանյութը, հասանելի է <https://www.youtube.com/watch?v=SrHoHKYpgSA> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>613</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը, հասանելի է <https://ombuds.am/images/files/6b1240e8a415a6a64093981708d29cc3.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>614</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները սովորում են հաղորդակցվել ժեստերի լեզվով. դասընթաց», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/890> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



1. Հասարակությունում առկա կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ

Կոնվենցիայի 8-րդ հոդվածն ամրագրում է պետությունների պարտավորությունն անհապաղ, արդյունավետ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պայքարելու համար հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող, նաև սեռային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարծրատիպերի, նախապաշարմունքների և վնասակար ավանդույթների դեմ կյանքի բոլոր բնագավառներում:

Հայաստանում տարիներ շարունակ կիրառվող հաշմանդամության բժշկական մոդելի պատճառով հաշմանդամություն ունեցող մարդիկ չեն դիտվել որպես իրավունքի լիիրավ սուբյեկտներ, և չի կարևորվել նրանց անկախ ապրելու իրավունքը: Ստեղծված իրավիճակի արդյունք է այն, որ այդ անձանց իրավունքների իրացումն առնչվել է բացառապես վերջիններիս օգնություն տրամադրելու (օրինակ՝ նպաստների, բարեգործական օգնության) ձևով: Այդ պատճառով հաշմանդամություն ունեցող մարդիկ մեկուսացել են հասարակությունից՝ ենթարկվելով խտրական վերաբերմունքի և զրկվելով իրենց իրավունքներն ինքնուրույն իրացնելու հնարավորությունից:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների քննարկումները, մշտադիտարկման արդյունքները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ քննարկումները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ առկա են բազմաթիվ կարծրատիպեր ու դա ունի համակարգային բնույթ:

Ընդ որում, կարծրատիպերի հաղթահարման խնդիր կա ոչ միայն հասարակության, այլ նաև իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների շրջանում:

Այդ կարծրատիպերն ու խտրական վերաբերմունքը դրսևորվում են կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում՝ սկսած գործածվող տերմինաբանությունից ու վերաբերմունքից:

Ասվածն ավելի առարկայական է դառնում Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության արդյունքում. դրանցում գործածվող եզրութաբանությունը շատ դեպքերում խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների, այդ թվում՝ արժանապատվության հարգման տեսանկյունից: Օրինակ՝ նախագծերում շարունակվում են օգտագործվել «հաշմանդամ», «տեսողությունից հաշմանդամ», «տառապում է ծանր հիվանդությամբ» տերմինները, որոնք հասարակությունում ձևավորում են կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ:

Թեև, հարկ է նկատել, որ նման խնդրահարույց ձևակերպումներ կիրառվում են նաև գործող իրավական ակտերում: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը մինչ օրս օգտագործում է «հաշմանդամ» տերմինը, կամ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը նշում է, որ սահմանված խնամքի տրամադրումն անձին կարող է մերժվել, եթե նա քրոնիկ ալկոհոլամոլ և (կամ) թմրամոլ է, վարակակիր է, տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնց բուժումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություններում:

Այնինչ, թե՛ իրավական ակտերում, թե՛ առօրյա կյանքում պետք է օգտագործել այնպիսի արտահայտություններ, որոնք կօգնեն հաղթահարել հասարակությունում առկա կարծրատիպերը: Օրինակ՝ «թերաթեք կամ անկարող», «աուտիկ», «դաուն», «գաճաճ», «մտավոր հետամնաց», «սայլակին գամված», «խուլուհամր» արտահայտությունների փոխարեն անհրաժեշտ է օգտագործել համապատասխանաբար «հաշմանդամություն

ունեցող», «աուտիզմ ունեցող», «դաունի համախտանիշ ունեցող», «փոքր հասակ ունեցող», «մտավոր հաշմանդամություն ունեցող», «սայլակով տեղաշարժվող», «լսողության խնդիրներ ունեցող», «ժեստերի լեզվող հաղորդակցվող» ձևակերպումները<sup>615</sup>:

Գործնականում կարծրատիպային մոտեցումները խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրների մասին բարձրաձայնելու հարցում: Օրինակ՝ «Արև երեխաներ» ՀԿ-ի ներկայացուցչի փոխանցմամբ՝ դաունի համախտանիշով մարդիկ և նրանց ծնողներն առօրյայում բախվում են բազմաթիվ խնդիրների ինչպես կրթական, այնպես էլ առողջապահական ոլորտներում, ինչի հետևանքով վերջիններս խարանի ու խտրականության են ենթարկվում<sup>616</sup>: Մինչդեռ, անհրաժեշտ է գիտակցել, որ դաունի համախտանիշը հիվանդություն չէ. նման մարդիկ, այդ թվում՝ երեխաներն ուղղակի առանձնահատուկ են:

Մեկ այլ խնդիր է այն, որ տարիներ շարունակ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը մեր երկրում եղել է երեխաներին և ընտանիքներին աջակցություն տրամադրող հիմնական միջոցը, ինչը, սակայն, ավելի է նպաստել հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով երեխաների վերաբերյալ կարծրատիպերի և նրանց նկատմամբ խարանի խորացմանը<sup>617</sup>:

Նշյալ խնդիրն առկա է նաև հոգեբուժական հաստատություններում գտնվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շրջանում: Հոգեբուժական կազմակերպություններում պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդիկ արտաքին աշխարհի հետ կապի պահպանման տեսանկյունից գտնվում են խոցելի վիճակում, քանի որ երկարատև ժամանակահատվածով գտնվելով հաստատությունում, ըստ էության, կորցնում են կապն իրենց ազգականների հետ: Արդյունքում, նրանք հաճախ են հայտնվում են սոցիալական մեկուսացման մեջ և ենթարկվում խարանի:

Հարցը հատկապես զգայուն է այն առումով, որ վերաբերում է անձանց, ովքեր հոգեբուժական կազմակերպություններում կարող են պահվել սեփական կամքին հակառակ կամ իրենց առողջական վիճակով պայմանավորված՝ չեն կարող բարձրաձայնել իրենց հուզող խնդիրները, իրենց իրավունքների ոտնահարման կամ անտեսման դեպքերը:

Ուստի, հոգեկան առողջության պահպանման առաջնահերթ ուղղություններից պետք է լինի հենց հոգեբուժական բժշկական ծառայություններին այլընտրանք խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների համակարգի ձևավորումն ու զարգացումը:

Բացի այդ, անհրաժեշտ է գործադրել ջանքեր, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ լինեն հասարակության լիարժեք անդամ՝ նրանց կարողությունները բացահայտելու և նրանց ներուժը գնահատելու միջոցով:

Ավելին, ՀՀ-ում շարունակում են գործել ուսումնական հաստատություններ, որոնք անվանման մեջ ունեն «մտավոր թերզարգացում» ձևակերպումը, և այս խնդիրը Պաշտպանը շարունակաբար բարձրաձայնում է իր տարեկան հաղորդումներում: Օրինակ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոցը: Սա սկզբունքային անթույլատրելի է, քանի որ հաստատությունների նման անվանումներն

<sup>615</sup> Տե՛ս «Ինչպե՞ս ճիշտ խոսել հաշմանդամության մասին», հասանելի է <https://www.facebook.com/Armenianombudsman/photos/a.538216176365851/1235087370012058/?type=3&theater> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>616</sup> Տե՛ս [http://surboravor.am/post/view/arev-erekhaner-hk-n-handipic-mardu-iravunqneri-pashtpanin?fbclid=IwAR2qGrKkDcqB0LKD6gAbaftYo99\\_dTTZx7Ufjo6K\\_5X4IHftMhUJq1Ll9z4](http://surboravor.am/post/view/arev-erekhaner-hk-n-handipic-mardu-iravunqneri-pashtpanin?fbclid=IwAR2qGrKkDcqB0LKD6gAbaftYo99_dTTZx7Ufjo6K_5X4IHftMhUJq1Ll9z4), 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>617</sup> Տե՛ս «Հատուկ հաստատությունների ճիշտ վերակազմակերպումը բխում է երեխայի լավագույն շահից. Պաշտպանն ուսումնասիրում է մտահոգությունները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/923> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ինքնին խտրականության և երեխաներին խարանի ենթարկելու վտանգ են պարունակում: Արդյունքում, խախտվում է ոչ միայն երեխաների կրթությունն ստանալու իրավունքը, այլև նման անվանումով հաստատության հետ ասոսացումն ուղեկցում է երեխային կյանքի հետագա տարիներին:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ զարգացած եվրոպական երկրներում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների ընտրված անվանումները չեզոք են և որևէ կերպ հիմք չեն ստեղծում երեխաներին խտրականության ենթարկելու համար: Օրինակ՝ Դանիայում և Նիդեռլանդներում օգտագործվում են «Խնամքի տներ» կամ պարզապես «Տներ» և այլն: Ուստի, նմանատիպ անվանումներն ավելի ընդունելի են:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպերի հաղթահարման, վերջիններիս խնդիրների մասին հասարակությանն իրազեկելու, նրանց նկատմամբ հարգանք ձևավորելու հարցում չափազանց կարևոր է լրագրողների և մամուլի ներկայացուցիչների դերը: Այն պայմանավորված է վերջիններիս խնդիրների մասին տեղեկատվության տրամադրումն ապահովելով, որը չպետք է իրականացվի հաշմանդամություն ունեցող անձանց անարդար անհավասարության մեջ դնելով և զգացմունքային լեզվով նրանց նկատմամբ խղճահարություն առաջացնելու միջոցով: Այլ կերպ ասած, այստեղ մամուլի դերակատարությունը երկակի կարևորություն ունի այն առումով, որ մի կողմից, մամուլի միջոցով են հասարակական շրջանակները տեղեկանում հաշմանդամություն ունեցող անձանց կենսական, ամենօրյա դժվարությունների մասին, մյուս կողմից՝ մամուլը պետք է ստանձնի նաև այդ խնդիրները ճիշտ՝ արժանապատիվ և մարդու իրավունքների համընդհանուր մոտեցումներին համապատասխան ներկայացնելու պարտավորությունը:

Անդրադառնալով հեռարձակման սահմանափակումներ նախատեսող կանոնակարգումներին՝ հարկ է նշել, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի թիվ 90-Ա որոշմամբ ընդունված չափորոշիչների համաձայն՝ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն հեռուստառադիոհաղորդումները (ֆիլմերը), այլ տեսաձայնաշարային նյութերը, որոնք ծաղրում կամ ծաղրելով նմանակում են հաշմանդամություն (ֆիզիկական և/կամ մտավոր) ունեցող անձանց: Ժամը 6.00-24.00 ընկած ժամանակահատվածում ցուցադրվող հաղորդումները չեն կարող պարունակել նման տեսարաններ: Ընդ որում, նման չափորոշիչների սահմանման համար հիմք է հանդիսացել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը: Մասնավորապես, անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն:

Վերը նշված կարգավորման տրամաբանությունից ստացվում է, որ ինքնին նման ծաղրերի տեսարանները ժխտելի չեն, այնինչ լսարանի, հատկապես՝ անչափահասների շահերից ելնելով՝ դրանց ցուցադրման ժամանակային սահմանափակումներ են սահմանվում: Այլ կերպ ասած, նման կանոնակարգման հասցեատերը ոչ թե հաշմանդամություն ունեցող անձն է՝ իր արժանապատվությամբ, այլ անչափահաս լսարանը: Այսպիսի մոտեցումը չի համապատասխանում ո՛չ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության սկզբունքներին, ո՛չ առհասարակ մարդկային և արժեքանական պատկերացումներին: Բացի այդ, անընդունելի է ծաղրել հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես այն դեպքում, երբ դա ուղեկցվում է հեռուստատեսության կամ ռադիոյի միջոցով՝ հիմք ընդունելով տեղեկատվության տարածման սահմանները և նշանակությունը հասարակությունում կարծիք և վերաբերմունք ձևավորելու հարցում:

Այսպես, հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է ձեռնարկ, որը ներկայացնում է, թե ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը: Ձեռնարկում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվում նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող խնդիրների լուսաբանման կանոններին և սկզբունքներին<sup>618</sup>:

Ավելին, 2019 թվականին լրագրողների համար կազմակերպվել են դասընթացներ, որոնց ընթացքում Պաշտպանը ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ու հաշմանդամություն ունեցող երեխաներին առնչվող թեմաների լուսաբանման նրբությունները:

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ առօրյա կյանքում հանդիպող խոչընդոտների մասին, ինչպես նաև իրենց իրավունքների ինքնուրույն իրացման, հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների ապահովման և միջավայրային խոչընդոտների վերացման անհրաժեշտության մասին բարձրաձայնելու նպատակով Պաշտպանը 2019 թվականի ընթացքում հրապարակել է իրազեկող նյութեր և տեսանյութեր:

Այնուհետև, առկա կարծրատիպերը երեխաների շրջանում հենց վաղ հասակից հաղթահարելուն ուղղված մեկ այլ արդյունավետ նախաձեռնություն էր Պաշտպանի աշխատակազմի կազմակերպած՝ ներառական կրթության խրախուսմանն ուղղված իրազեկման արշավը<sup>619</sup>, որի շրջանակում հայտարարվել է «Իմ ընկեր...» թեմայով շարադրությունների մրցույթ: Ըստ մրցույթի պայմանների՝ երեխաները պետք է ներկայացնեին, թե ինչ է իրենց պատկերացմամբ ներառական կրթությունը, ինչպես կարող են ստեղծել ներառական միջավայր՝ պատմելով իրական պատմություններ իրենց և հաշմանդամություն ունեցող իրենց ընկերների մասին, որոնք օրինակելի կլինեն հասարակության համար<sup>620</sup>: Արդյունքում, Երևանից և մարզերից ստացած 700 շարադրություններից ընտրվել են լավագույն 28-ը, որոնց հեղինակներին շնորհվել են խրախուսական մրցանակներ: Իրազեկման արշավն ամփոփվել է դրա շրջանակում նկարահանված 4 հերոսների մասին պատմող տեսանյութի և «Միասին կարող ենք փոխել աշխարհը» տեսահոլովակի ներկայացմամբ<sup>621</sup>:

Հաշվի առնելով հասարակությունում առկա հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ կարծրատիպերը՝ անհրաժեշտ է կազմակերպել իրազեկման արշավներ, պատրաստել տեսանյութեր, ինչպես նաև համապատասխան մասնագետների (օրինակ՝ բուժաշխատակիցներ, ուսուցիչներ, լրագրողներ) մասնակցությամբ և հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավմամբ կազմակերպել պարտադիր և շարունակական դասընթացներ օրենսդրական կարգավորումների և միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք ուղղված կլինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ կարծրատիպերի վերացմանը:

<sup>618</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի «Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը» ձեռնարկը, հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/702> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>619</sup> Տե՛ս «#փոխիրաշխարհը. Մարդու իրավունքների պաշտպանը ներառական կրթության խրախուսմանն ուղղված իրազեկման արշավի մեկնարկը սկսել է դպրոցից», հասանելի է <https://ombuds.am/am/site/VideoGalleryView/276> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>620</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը ներառական կրթության խրախուսման համար հայտարարում է շարադրությունների մրցույթ», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/971> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>621</sup> Տե՛ս «Յուրաքանչյուր երեխայի պետք է տալ աշխարհը փոխելու հնարավորություն. Մարդու իրավունքների պաշտպանն ամփոփել է #փոխիրաշխարհը իրազեկման արշավը», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/984> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգը

1993 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հետ կապված հարցերը: Մինչդեռ, նշված օրենքում ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, քանի որ այն ամբողջական չի ներառում սոցիալական մոդելի սկզբունքը՝ միջազգային մոտեցումներին համապատասխան: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնում է իր տարեկան հաղորդումներում:

2019 թվականին մշակվել և ընդունվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող ոլորտի կանոնակարգմանն ուղղված սկզբունքային փաստաթղթեր:

Այսպես, 2019 թվականին շրջանառության է դրվել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակը: Նախագծով պետությունը երաշխավորություն է ստանձնում հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլ անձանց հետ համահավասար անկախ կյանքի և համայնքում ներառվելու համար անհրաժեշտ պայմաններ և հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ: Նախագծային լուծումներով հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող հասարակական կազմակերպությունները իրենց շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնելու իրավունք են ստանում<sup>622</sup>:

Օրենքի նախագիծը ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի, որի շրջանակում ոլորտի միջազգային չափանիշների հաշվառմամբ ներկայացվել են մի շարք սկզբունքային դիտարկումներ, որոնք քննարկման առարկա պետք է դառնան հենց Նախագծի մշակման փուլում: Մասնավորապես, նախագծով չի սահմանվում այն անձանց շրջանակը, ովքեր կարող են լինել անձնական օգնական, սահմանափակ են հեռուստահաղորդումների հեռարձակման մատչելիության եղանակները, ինչպես նաև դրանց չափաքանակները:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ մեկտեղ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է «Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագծի կարգավորման նպատակն է հաշմանդամության սահմանման մոդելից անցնել ֆունկցիոնալության գնահատման մոդելի, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել ըստ անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի, նրա գործունեության և մասնակցության վրա միջավայրային գործոնների ունեցած ազդեցության: Նախատեսվում է նաև հաշմանդամության խմբերի փոխարեն (1-ին, 2-րդ, 3-րդ խումբ և հաշմանդամ երեխա), սահմանել անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ թեթև, միջին, ծանր, խորը:

Նախագծի կարգավորումների՝ ընդհանրության մեջ դիտարկումը սկզբունքային մտահոգության տեղիք է տալիս առ այն, որ փաստորեն անձի ֆունկցիոնալության գնահատման և հաշմանդամության որոշման հետ կապված հարաբերությունների՝

<sup>622</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1849/justification> հղումով:

նախագծով տրված կարգավորումներն ընդհանրական բնույթի են: Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում սկզբունքային մի շարք հարցերին լուծումները տրվել են ոչ թե նորմատիվային կամ ուղենշային բովանդակություն ունեցող դրույթների, այլ ենթաօրենսդրական ակտերին հղում պարունակող բլանկետային նորմերի միջոցով:

Մինչդեռ, ընթացակարգային հարցերի հետ կապված այնպիսի խնդիրների, ինչպիսիք են, օրինակ՝ փորձաքննությանն անձի ընտրած բուժող բժշկին մասնակից դարձնելուն ուղղված մեխանիզմների բացակայությունը, բողոքարկման մեխանիզմների անարդյունավետությունը, դրանց շարունակականության ու համակարգային բնույթը ցույց է տալիս, որ դրանց հետ կապված հարցերը պետք է լուծում ստանան օրենսդրական կառուցակարգերի հստակեցման, անձի համար դրանց կանխատեսելիության ապահովման միջոցով, իսկ ոլորտը կարգավորող օրենքը՝ կարծիքի ներկայացված նախագիծը, թերևս պետք է պարունակի բովանդակային ուղենիշներ ու երաշխիքներ:

Հետևաբար, ֆունկցիոնալության գնահատման իրականացմանն առնչվող հիմնական հարցերը պետք է կարգավորվեն հենց ոլորտի իրավական ակտով, այսինքն՝ օրենքի մակարդակում<sup>623</sup>:

Անհրաժեշտ է հատուկ ընդգծել նաև քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավման կարևորությունը և շարունակականությունը, ինչն օրենսդրական գործընթացը դարձնում է լիակատար և ներառական:

Հարկ է նկատել, որ ազգային օրենսդրության՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցումը նախատեսված է ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում<sup>624</sup>, որը ևս ընդունվել է 2019 թվականին:

ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N 1292-Լ որոշմամբ հաստատվել է նաև Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը: Կառավարության վերոնշյալ որոշման նախագծի վերաբերյալ նկատառումներ է ներկայացրել նաև Մարդու իրավունքների պաշտպանը:

Որոշման դրույթների ուսումնասիրմամբ պարզ է դառնում, որ Նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած ոչ բոլոր առաջարկներն են արտացոլվել վերոնշյալ փաստաթղթում: Ընդ որում, նշված առաջարկների ներկայացման համար հիմք են հանդիսացել Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում և արտահերթ զեկույցներում տարիներ շարունակ արձանագրած խնդիրների հիման վրա կատարված առաջարկները: Օրինակ, խնդրահարույց է ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ դասագրքերի հարցը, որի ապահովման առաջնահերթությունը պայմանավորված է համընդհանուր ներառական կրթության անցմանն ուղղված ներկայում ընթացող գործընթացով, ինչը, սակայն, չի արտացոլվել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան միջոցառումների ցանկում:

Միևնույն ժամանակ, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումները և ակնկալվող արդյունքները բավականին լայն են ձևակերպված,

<sup>623</sup> Հարկ է նկատել, որ քննարկվող օրենքների նախագծերը 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ դեռևս չեն ընդունվել:

<sup>624</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը:

որոնք իբրև հստակ ուղենիշ չեն կարող ծառայել իրավակիրառ սուբյեկտի համար: Համապատասխան միջոցառումները հստակեցնելու անհրաժեշտությունն արդարացված ենք համարում այն հիմնավորմամբ, որ ոլորտի պատասխանատու մարմինների կամ նրաներկայացուցիչների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելիս մատչելիության ապահովումը նույնականացվում է միայն թեքահարթակների ապահովմամբ: Վերոնշյալի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ ոլորտը կարգավորող ռազմավարությամբ պետք է հստակ և մանրամասն սահմանվեն միջոցառումներ հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ապահովման ուղղությամբ:

Պետք է արձանագրել, որ Հայաստանը մինչ օրս չի վավերացրել ՄԱԿ-ի 2006 թվականի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, որի հետևանքով նախադրյալներ չեն ստեղծվում Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ պետության խախտումների մասին անհատական և խմբային բողոքներ հասցեագրել ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին<sup>625</sup>: Հարցի վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն՝ 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում<sup>626</sup>:

Ըստ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ Կամընտիր արձանագրությունը վավերացնելու նպատակով իրականացվում են ներպետական ընթացակարգեր՝ համաձայն «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթների:

Այս կապակցությամբ մտահոգության տեղիք է տալիս այն, որ արդեն տևական ժամանակ է, ինչ ընթանում է Կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացման գործընթացը: Նշվածը հիմնավորվում է նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությամբ՝ որպես 2015-2016 թվականների համար նախատեսված միջոցառում սահմանված է Կամընտիր արձանագրության վավերացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների իրականացումը: Մինչդեռ, սահմանված ժամկետներում այն չվավերացնելու հետևանքով դրա անհրաժեշտությունը վերահաստատվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագրում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ընդունել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման մասին» ՀՀ օրենքների նախագիծը՝ ապահովելով Կոնվենցիայի դրույթների համապատասխանեցումը, ինչպես նաև թիրախավորելով ոլորտի գործնական խնդիրները,

2. որոշումների կայացման գործընթացում ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց մասնակցությունը,

3. վավերացնել Կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը:

### 3. Ֆիզիկական միջավայրի մատչելիություն

Կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով պետությունը ստանձնում է պարտավորություն հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում

<sup>625</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոմիտե

<sup>626</sup> Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովի ֆիզիկական միջավայրի մատչելիությունը: Ընդ որում, հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, դպրոցների, բնակելի տարածքների, ինչպես նաև բժշկական հաստատությունների մատչելիությունը:

Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ մատչելի ֆիզիկական միջավայրն անհրաժեշտ է ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդու, այլև բոլորի համար, և այն ենթադրում է ոչ միայն շինությունների մատչելիությունը, այլ նաև մայթերի հարմարեցումը և հետիոտների շարժը սահմանափակող այլ խոչընդոտների վերացումը<sup>627</sup>: Ընդ որում, միջավայրը պետք է մատչելի լինի հաշմանդամության բոլոր տեսակների համար:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ 2019 թվականի ընթացքում համակարգային առումով լուծում չի ստացել ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիրը: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրաձայնում է իր տարեկան հաղորդումներում և զեկույցներում:

Խնդրի կարևորությունն ընդգծելու համար պետք է նշել, որ ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովումն առաջնային է հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ իրենց իրավունքներից ինքնուրույն օգտվելու տեսանկյունից: Արդյունքում, համակարգային առումով լուծում չստացած խնդիրը հանգեցնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթություն ստանալու, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առողջության պահպանման, մշակութային կյանքին մասնակցելու և այլ իրավունքների ինքնուրույն իրականացման սահմանափակման:

Թե՛ պետական կառույցները, թե՛ մասնավոր ծառայություն մատուցող կազմակերպությունների շինությունները (օրինակ՝ սրճարանները, խանութները և ժամանցային ու սպասարկման ոլորտի բազմաթիվ այլ վայրերը) մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Շինությունների ներսում տեղաշարժը և ենթակառուցվածքներից օգտվելը ևս շարունակում է մնալ անմատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ավելին, Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման այցերի արդյունքներով պարզվել է, որ ֆիզիկական մատչելիության խնդիրն անգամ առկա է այն վայրերում, որտեղ գտնվում են հասարակության առավել խոցելի խմբերը: Օրինակ՝ «Հանս Քրիստիան Կոֆոեդ» հիմնադրամի անօթևանների ժամանակավոր կացարանը<sup>628</sup>, Գավառի թիվ 1 հատուկ դպրոցը<sup>629</sup>, «Գորիս» ՔԿՀ-ը<sup>630</sup>, «Արթիկ» ՔԿՀ-ը<sup>631</sup>, Գյումրու հոգեկան առողջության

<sup>627</sup> Տե՛ս «Մատչելիություն. Կոնվենցիայի ուղենշային սկզբունք», հասանելի է <http://www.un.org/esa/socdev/enable/disacc.htm> հղումով:

<sup>628</sup> Տե՛ս «Խախտումներ «Հանս Քրիստիան Կոֆոեդ» հիմնադրամի անօթևանների ժամանակավոր կացարանում. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի չհայտարարված այց», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1028> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>629</sup> Տե՛ս «Խախտումներ Գավառի թիվ 1 հատուկ դպրոցում. Մարդու իրավունքների պաշտպանն ամփոփել է մշտադիտարկման արդյունքները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1014> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>630</sup> Տե՛ս «Խախտումներ «Գորիս» ՔԿՀ-ում. Մարդու իրավունքների պաշտպանն ամփոփել է մշտադիտարկման արդյունքները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/985> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>631</sup> Տե՛ս «Խախտումներ «Արթիկ» ՔԿՀ-ում. Մարդու իրավունքների պաշտպանն ամփոփել է մշտադիտարկման այցի արդյունքները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/952> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



կենտրոնը<sup>632</sup>, «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնը<sup>633</sup> հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Մի շարք դեպքերում հարմարեցումները սահմանափակվում են մուտքի և ելքի մոտ թեքահարթակի առկայությամբ: Ըստ այդմ, ոլորտի պատասխանատու մարմինների կամ նրաներկայացուցիչների կատարած աշխատանքների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացնելիս մատչելիության ապահովումը նույնականացվում է միայն թեքահարթակների ապահովմամբ:

Օրինակ՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար անհրաժեշտ են այնպիսի հարմարություններ, ինչպիսիք են՝ հետիոտնային անցումներում տեղադրվող դեղին գույնի գոգավոր հատուկ սալիկները, որոնք կզգուշացնեն մայթի մոտալուստ վերջնամասի վերաբերյալ:

Մեկ այլ օրինակ սահմանված է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» 2007 թվականի հունիսի 28-ի թիվ N 955-Ն որոշմամբ, համաձայն որի՝ ճանապարհների վրա կույր հետիոտների հաճախակի գտնվելու վայրերում, երթևեկելի մասը հատելու հնարավորության մասին նրանց տեղեկացնելու համար լուսացույցի կանաչ լուսային ազդանշանը կարող է ուղեկցվել տրանսպորտային միջոցների ձայնային (հատուկ) ազդանշաններից տարբերվող ձայնային ազդանշանով:

Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ «կույր հետիոտների հաճախակի գտնվելու վայրերում» ձևակերպումը մտահոգության տեղիք է տալիս, քանի որ պետության պարտականության շրջանակը նեղացվում է մատչելիության խնդրի ձեռնարկման ուղղությամբ՝ հիմք ընդունելով միայն հաճախակի գտնվելու հանգամանքը: Այնինչ, պետք է ընդգծել, որ պետությունը պարտավոր է ապահովել մատչելի միջավայր յուրաքանչյուրի համար:

Մեկ այլ խնդիր է այն, որ մայրաքաղաքում, ինչպես նաև մարզերում հարմարեցված չեն ստորգետնյա և վերգետնյա անցումները: Ավելին, Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականին Երևան քաղաքում գտնվող ստորգետնյա և վերգետնյա անցումներում հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգ տեղաշարժն ապահովելու վերաբերյալ միջոցառումներ չեն իրականացվել:

Արդյունքում, հարկ է արձանագրել, որ չնայած տարեցտարի աճում է այդպիսի անցումների թիվը, այնուամենայնիվ, հաշմանդամություն ունեցող մարդիկ չեն կարողանում օգտվել դրանցից անհրաժեշտ վերելակների կամ հատուկ հարմարանքների բացակայության պատճառով:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիության ապահովման խնդիրներ են արձանագրվել նաև միջոցառումների շրջանակներում ժամանակավոր մետաղական կառուցվածքների դեպքում: Մասնավորապես, Երևանի քաղաքապետարանը Հանրապետության հրապարակում Ամանորի օրերին՝ մինչև հունվարի 13-ը, պատվիրել էր վերգետնյա անցում, որպեսզի քաղաքացիները կարողանան հեշտությամբ մոտենալ

<sup>632</sup> Տե՛ս «Խախտումներ Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում. Մարդու իրավունքների պաշտպանն ամփոփել է մշտադիտարկման արդյունքները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/964> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>633</sup> Տե՛ս «Ժամկետանց սննդամթերք, ժամկետանց դեղեր, բժշկական պարագաներ, գերբնակեցում և այլն. Պաշտպանն ամփոփել է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում մշտադիտարկման արդյունքները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/693> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

տոնաձառին<sup>634</sup>: Մինչդեռ, պարզվել է, որ վերգետնյա անցումը հարմարեցված չի եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար: Խնդրի մասին ահազանգ է ներկայացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանին: Քաղաքապետարանի պարզաբանումների համաձայն՝ հնարավոր չի եղել կամրջի ներառականության հարցը պատշաճ ձևով լուծել. մետաղական ժամանակավոր կոնստրուկցիայի առանձնահատկությունը, ինչպես նաև ժամանակի սղությունը, բարդացրել են սայլակով տեղաշարժվող անձանց համար վերելակի տեղադրման հարցը, իսկ բարձրության անկյան մեծությունն անհնար է դարձնում թեքահարթակների գոյությունը:

Միաժամանակ նշվել է, որ տեղում հերթապահություն անող ճանապարհային ոստիկանության կարգախմբերը և պարեկային ծառայություն անցկացնող ոստիկանները պատրաստակամ են բոլոր սայլակ օգտագործող մարդկանց օգնել ճանապարհն անցնելու հարցում<sup>635</sup>: Մինչդեռ, Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ այդ հարցում ոստիկանները ևս հրաժարվել են օգնել:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ նշված այլընտրանքային լուծումները չի կարելի լիարժեք համարել, քանի որ հաշմանդամություն ունեցող մարդիկ, միևնույն է, ստիպված պետք է դիմեն այլոց օգնության, ինչը չի ապահովում իրավունքների ինքնուրույն իրացումը:

Քննարկվող խնդրի մեկ այլ դրսևորում է Երևան քաղաքի 2800-ամյակին նվիրված այգում անվտանգ և անարգել միջավայրի բացակայությունը, ինչի մասին բարձրաձայնում է նաև «ԷԽՈ» հասարակական կազմակերպությունը: Մասնավորապես, մայթից դեպի այգի տանող երկու թեքահարթակ կա, որոնց ո՛չ թեքությունը և ո՛չ էլ լայնությունը չեն համապատասխանում սահմանված չափորոշիչներին, իսկ դեպի հուշարձան տանող հատվածում միայն աստիճաններ են, չկա թեքահարթակ:

Այգում լուրջ խնդիրներ կան տարածական կողմնորոշման առումով, քանի որ չկան ուղենշող և նախազգուշացնող համակարգեր: Առանց ուղենշող և նախազգուշացնող համակարգերի՝ տարածական կողմնորոշման խնդիրներ ունեցող մարդկանց տեղաշարժը ոչ միայն հարմարավետ չէ, այլ նաև վտանգավոր է, ինչի պատճառը նախևառաջ այգում տեղադրված նստարանների, հուշարձանների և շատրվանների դասավորվածությունն է:

Նախազգուշացնող համակարգերով կահավորված չեն նաև փողոցից դեպի այգի տանող թեքահարթակները: Այգում կա շուրջ մեկ տասնյակի հասնող ցուցանակներ, սակայն բացակայում է դրանց բրայլյան տարբերակները<sup>636</sup>:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է բնակավայրերի նախազգումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախազգային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար:

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը կազմում են քաղաքաշինական բնագավառի իրավական ակտերի համակարգի բաղկացուցիչ մասը և հիմք են ծառայում փորձաքննության, քաղաքաշինական գործունեության վերահսկողության, վիճելի հարցերի լուծման համար:

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար:

<sup>634</sup> Տե՛ս <https://armenpress.am/arm/news/998478/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>635</sup> Տե՛ս <https://168.am/2019/12/25/1229081.html>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>636</sup> Տե՛ս <https://ekho.am/2019/05/15/accessyerevan/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Համայնքի ղեկավարը տալիս է քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք<sup>637</sup>, որում նշվում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջներ<sup>638</sup>:

Ավելին, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը նախատեսում է համապատասխան պատասխանատվություն շինարարության ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կամ ընդունման նորմերի, ինչպես նաև ստանդարտների խախտումներ թույլ տալու դեպքում:

Այսպես, 2019 թվականի նոյեմբեր ամսին ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից ստուգումներ են իրականացվել Տիգրան Մեծի պողոտայի, Վ. Սարգսյան փողոցի և Երևանյան խճուղում կատարվող շինարարական աշխատանքներում, ինչի արդյունքում արձանագրվել են մի շարք նախագծի և շինարարական նորմերի խախտումներ, այդ թվում՝ արձանագրվել է, որ թվով 4 թեքահարթակների տեղադրման նիշերը 3-5 սմ-ով բարձր են եղել նախագծայինից:

Արդյունքում, երեք կապալառու կազմակերպությունները, տեխնիկական և հեղինակային հսկողություններ իրականացնող կազմակերպությունը ենթարկվել են պատասխանատվության «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածներով, նրանց և կառուցապատողին տրվել են պարտադիր կատարման ցուցումներ՝ սահմանված ժամկետում արձանագրված թերությունները վերացնելու վերաբերյալ<sup>639</sup>:

Չնայած օրենսդրական պահանջներին՝ պետք է արձանագրել, որ ֆիզիկական մատչելիության վերահսկողական մեխանիզմները գործնականում բավարար արդյունավետ չեն, ինչի պատճառով հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են ազատ տեղաշարժի հնարավորությունից: Արդյունքում, հարմարեցումներն իրականացվում են շինարարական նորմերի խախտմամբ կամ տեղաշարժը սահմանափակվում է թեքահարթակների դիմաց մեքենաների կայանման արդյունքում: Սա նաև վկայում է այն համակարգային խնդրի մասին, որ շատերն իրագեկված չեն թեքահարթակների օգտագործման կարևորության մասին:

Որոշ դեպքերում շինությունների հարմարեցված չլինելու խնդիրը պայմանավորված է այն հանգամանքով, որ շինարարությունն իրականացվել է մինչև համապատասխան շինարարական նորմերի և կանոնների հաստատումը:

2019 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության համար ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման համար ձեռնարկվել են որոշ քայլեր: Օրինակ՝ Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով 2019 թվականի ընթացքում կառուցվել են 226 թեքահարթակ: Կույր կամ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար 34 հասցեներում տեղադրվել են հատուկ գոգավոր դեղին գույնի սալիկներ: Տարվա ընթացքում ՀՀ ճանապարհային ուստիկանության կողմից պատվիրակվել և Երևան քաղաքում ձայնաազդանշանային սարքերով կահավորվել է 6 խաչմերուկ:

Կոտայքի մարզում 2019 թվականի ընթացքում 2 պետական և 3 համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատված օբյեկտների առաջին հարկերը

<sup>637</sup> Տե՛ս «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 6:

<sup>638</sup> Տե՛ս «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 2:

<sup>639</sup> Տե՛ս <https://www.utfsib.am/am/news/116>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժին: Այս մասին են վկայում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալները:

Չնայած վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության համար անարգել միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումներին՝ իրավիճակը Երևանում, ինչպես նաև մարզերում համակարգային առումով շարունակում է մնալ անբավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել հանրային, այդ թվում՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, տեղական ինքնակառավարման ու բոլոր մյուս մարմինների սեփականություն հանդիսացող շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար,

2. ապահովել շարունակական վերահսկողություն նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նպատակով:

#### 4. Փոխադրամիջոցների մատչելիություն

Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով փոխադրամիջոցների մատչելիության ապահովման նպատակով պետությունը համապատասխան միջոցներ ձեռնարկելու պարտավորություն է ստանձնել:

Տրանսպորտային միջոցների մատչելիությունը դիտարկվում է որպես առաջնահերթություն հաշմանդամություն ունեցող մարդկանց կողմից իրենց իրավունքների ինքնուրույն իրացման, ինչպես նաև անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության համար:

2019 թվականի ընթացքում ՀՀ-ում համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ միջմարզային և քաղաքային տրանսպորտային միջոցներում հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմանների ապահովման խնդիրը: Հարցը, հատկապես խնդրահարույց է մարզերում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզերում հարմարեցված հասարակական տրանսպորտային միջոցներ չկան և 2019 թվականին այդ ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ խնդրի լուծման համար անհրաժեշտ են համակարգային լուծումներ, քանի որ մի քանի տրանսպորտային միջոցի հարմարեցումը չի կարող բավարար կերպով ապահովել հավասար հնարավորություններ:

Փոխադրամիջոցների մատչելիության ապահովման օրինակ է այն, որ ավտոբուսներն ունենում են վերելակ, իսկ սրահում միշտ կան ազատ տեղեր սայլակով անձանց համար՝ համալրված հատուկ ազդանշանով ու բռնակով: Մետրոյում տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղադրվում են վառ գունավորմամբ ռելիեֆային հարթակներ: Կանգառներում տրանսպորտի ժամանակացույցը գրվում է նաև բրայլյան այբուբենով, իսկ սրահում ամեն կանգառ բարձրաձայն հայտարարվում է: Հարմարություններ պետք է ստեղծված լինեն նաև լսողական խնդիրներ ունեցող անձանց համար: Հանրային տրանսպորտում կանգառները պետք է հատուկ տեսատախտակի վրա գրվեն, ինչպես նաև կահավորված լինեն ավտոբուսից իջնելու մասին տեղեկացման ազդանշան<sup>60</sup>: Իսկ

Տե՛ս

<https://www.civilnet.am/news/2018/05/06/%D5%8D%D5%BA%D5%A1%D5%BD%D5%A5%D5%AC%D5%B8%D5%BE-%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%BA%D5%B8%D6%80%D5%BF%D5%AB->

հասարակական տրանսպորտի կայանների կողքին հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ է նախատեսել ծածկած հարթակներ, պետք է տեղակայված լինեն նաև թիկնակով նստարաններ և ազատ տարածություն՝ սայլակների համար: Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից օգտագործվող հետիոտնուղիների վերնածածկույթը պետք է լինի կոշտ, ամուր՝ բացառելով սայթաքումները:

Վերոնշյալ խնդրի մասին Պաշտպանը բարձրաձայնել է նաև Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագրի նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքում: Խնդիրն այն է, որ ծրագրով նախատեսվում է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու իրավունքը, մինչդեռ, նշված միջոցառումը և ակնկալվող արդյունքը բավականին լայն են ձևակերպված, որոնք իբրև հստակ ուղենիշ չեն կարող ծառայել իրավակիրառ սուբյեկտի համար: Այսինքն, վերոնշյալ արդյունքը բավարար կերպով չի արտացոլում այն պայմանները, որոնք անհրաժեշտ են տրանսպորտային միջոցները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ:

2019 թվականի մայիս-հունիս ամիսներին իրականացված դիտարկումները ցույց են տալիս, որ հարմարեցված ավտոբուսներն իրենց ողջ ներուժով չեն օգտագործվում: Այսպես, երթուղիներում շահագործվող «հարմարեցված» ավտոբուսների գերակշիռ մասը չունեն վերելակներ, թեև ավտոբուսների վրա առկա են սայլակից օգտվող անձանց տեղափոխող տրանսպորտային միջոցի տարբերանշանք: Ըստ հարցվողի՝ դիտարկված 25 ավտոբուսներից միայն մեկն է ունեցել շահագործվող վերելակ, երկրորդն ունեցել է խնդիր, քանի որ մինչև վերջ չի բացվել, երրորդն անջատված էր հոսանքից, վարորդի պնդմամբ այն աշխատում է, սակայն հենց միացնում են ավտոբուսը հեսանքազրկվում է: Մյուս կողմից, խնդրահարույց է մատչելի տրանսպորտի անկանոն գրաֆիկը: Ավելին, Երևանի քաղաքապետարանի կայքում նշվում է, որ «Հիգեր» մակնիշի թվով 25 հարմարեցված ավտոբուսները շահագործվում են 4 երթուղիներում (հ.հ.14, 20, 22, 28), սակայն հետազոտության տվյալները փաստում են, որ դրանք ուղղակի չկան<sup>641</sup>:

Մտահոգության տեղիք է տալիս նաև տրանսպորտային միջոցների վարորդների՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ անհարգալից ու արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը:

Այսպես, 2019 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ վարորդը հրաժարվել է սպասարկել հաշմանդամություն ունեցող անձին, ինչի արդյունքում վերջինս հնարավորություն չի ունեցել օգտվել տրանսպորտային միջոցից<sup>642</sup>:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագրով առաջարկվել է տրանսպորտային միջոցներով ծառայություն մատուցողների, այդ թվում՝ վարորդների շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների և նրանց հավասար հնարավորությունների վերաբերյալ, որը որպես միջոցառում ներառվել է տարեկան ծրագրում:

[%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A5%D5%B2%D5%A1%D5%B7%D6%80%D5%BB%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A8/336085](#),

2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>641</sup> Տե՛ս «Երևան քաղաքում տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց տրանսպորտային ծառայությունների մատուցման արդյունավետությունը» գեկույցը, հասանելի է [http://www.foi.am/u\\_files/file/subgrants/ArmCamp\\_MatcheliTransport\\_1.pdf](http://www.foi.am/u_files/file/subgrants/ArmCamp_MatcheliTransport_1.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>642</sup>Տե՛ս <https://www.facebook.com/photo.php?fbid=1010217885980770&set=a.220266981642535&type=3&theater>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2019 թվականին շարունակվել է չլուծված մնալ Երևանի մետրոպոլիտենի մատչելիության հարցը: Թեև մետրոպոլիտենի գետնանցումի մուտքերը կահավորված են թեքահարթակներով, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող (հենաշարժական համակարգի կամ տեսողության հետ խնդիրներ ունեցող) մարդը չի կարող օգտվել Երևանի մետրոպոլիտենից:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ մետրոպոլիտենի հարմարեցման ուղղությամբ 2019 թվականի ընթացքում աշխատանքներ չեն իրականացվել:

Տրանսպորտային միջոցների հարմարեցվածության հետ մեկտեղ անհրաժեշտ է բարձրաձայնել նաև կանգառների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջների անհամապատասխանության խնդիրը:

2019 թվականի ընթացքում ՀՀ մարզերում հասարակական տրանսպորտի կանգառներում տեսողական խնդիր ունեցող կամ կույր մարդկանց համար հատուկ սալիկների տեղադրման կամ այլ հարմարեցումներ նախատեսելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել՝ չնայած նրա, որ մարզերում բարեկարգվել և նորոգվել են մի շարք կանգառներ: Միայն Գյումրի քաղաքի 12 փողոցների և 2 հրապարակների վերակառուցման աշխատանքներում նախատեսվել և անհրաժեշտ հատվածներում տեղադրվել են տեսողական խնդիր ունեցող կամ կույր անձանց համար հատուկ սալիկներ կամ այլ հարմարեցումներ: Այդ մասին են վկայում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալները:

Երևան քաղաքում ևս տեսողական խնդիր ունեցող կամ կույր անձանց համար հատուկ սալիկների տեղադրում կամ այլ հարմարեցումներ չեն իրականացվել՝ չնայած նրա, որ 287 կանգառասրահներում իրականացվել են մասնակի բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ:

Մինևույն ժամանակ, Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկի 2.2-րդ կետով նախատեսվում է մատչելի տրանսպորտով ապահովում, մասնավորապես՝ միջքաղաքային, ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովում, ինչպես նաև մայթերի, կանգառների, ավտոկայանատեղերի, ավտոկայանների, ավտոկայարանների հարմարեցում, հատուկ ձայնային ազդանշանների տեղադրում լուսացույցների վրա: Նշյալ գործողությունների համար վերջնաժամկետ է նախատեսված 2021 թվականը: Ավելին, ակնկալվող ցուցանիշների ուսումնասիրությունը նաև վկայում է, որ համակարգն ամբողջովին հարմարեցված չի լինելու: Այսպես, ցուցանիշն է՝ հանրապետություն ներկրվող տրանսպորտային միջոցների առնվազն 30%-ը մատչելի է, կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների առնվազն 25%-ը վերազինվել են հատուկ սարքավորումներով, իսկ մյուս թիրախային ցուցանիշների համար նախատեսված է 50%: Այստեղից ակնհայտ է դառնում, որ մինչև 2021 թվականը Հայաստանում դեռևս հնարավոր չի լինի ապահովել ամբողջական մատչելիություն:

Բացի այդ, հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1025-Լ որոշման Հավելված N 2-ի 2.7-րդ կետով նախատեսվել է տարվա ընթացքում ներքաղաքային և միջքաղաքային երթուղիներում շահագործվող ավտոբուսների վրա հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ վերելակային հարմարանքների և ավտոբուսների ուղեսրահներում կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման սարքերի, ինչպես նաև խոսքի խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված կանգառի ազդանշանի սեղմակի տեղադրում: 2019 թվականի ընթացքում նախատեսվել է նաև ձեռք բերել հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տրանսպորտային միջոցներ:

Մինչդեռ, Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ նշված միջոցառումները չեն իրականացվել, քանի որ 2014-2018 թվականների ընթացքում տեղադրված վերելակների, կանգառների անվանումների հայտարարման սարքերի շահագործման ընթացքում առաջ են եկել անսարքություններ, կառուցվածքային և տեխնիկական տարբեր բնույթի հարցեր, ուստի նպատակահարմար է գտնվել նախատեսված աշխատանքները 2019 թվականին ևս չի իրականացվել, (Երևան համայնքի բյուջեով գումարներ չի նախատեսվել), դրանք հետաձգել՝ մինչև նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում հարցի կարգավորումը:

Քաղաքապետարանը նշել է նաև, որ հասարակական տրանսպորտի շարժակազմերը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և հարմարավետ դարձնելու ուղղությամբ կոնկրետ աշխատանքներ չեն իրականացվել:

Ինչ վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տրանսպորտային միջոցներ ձեռք բերելուն ուղղված միջոցառմանը, ըստ Քաղաքապետարանի տվյալների՝ այդ միջոցառումը ևս հետաձգվել է և կդիտարկվի Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում քաղաքային ավտոբուսների ներկրման աշխատանքների ընդհանուր համատեքստում:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտի մատչելիության հարցը համակարգային առումով շարունակում է մնալ չլուծված: Այն մեր երկրում առաջնահերթ լուծում պահանջող հարցերից է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի փոխադրամիջոցների մատչելիության ուղղությամբ՝ նախատեսելով առանձնացված և մանրամասն գործողությունների՝ հստակ ժամակացույցով ծրագիր Երևանում և ՀՀ բոլոր մարզերում տրանսպորտի համակարգի, ինչպես նաև կանգառների ամբողջական հարմարեցման համար:

## 5. Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիություն

Յուրաքանչյուրի տեղեկություններ ստանալու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով: Երաշխիքներ են նախատեսված նաև Կոնվենցիայի 21-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով:

Այսպես, պետությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրականացնել խոսքի ու կարծիքի ազատության իրավունքը, ինչպես նաև փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով: Անհրաժեշտ է երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություն ստանալու իրավունքը մատչելի ձևով, ճիշտ ժամանակին և առանց հավելյալ ծախսերի:

Տեղեկություններ ստանալու իրավունքի իրացումն էական նշանակություն ունի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ինքնուրույն որոշումների կայացման, իրենց իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկման և հասարակություն լիարժեք ինտեգրման համար: Պատշաճ տեղեկացվածությունը ոչ միայն անձի՝ տեղեկություններ ստանալու իրավունքի իրացում է, այլև անհրաժեշտ նախադրյալ է մարդու այլ աշխատանքային, կրթության, առողջության պահպանման իրավունքների գործնական երաշխավորման համար:



Տեղեկատվություն ստանալու նպատակով հարցում ներկայացնողը բնօրինակը կամ պատճենն ուսումնասիրելու ընտրության կամ իր ընտրությամբ դրա պատճենը հնարավոր ցանկացած ձևով կամ ձևաչափով ստանալու իրավունք ունի<sup>643</sup>: Ըստ այդմ, պետությունը պարտավոր է հնարավորության սահմաններում տրամադրել հարցվողի՝ իր նախընտրած ձևաչափով տեղեկատվությունը:

Ուստի, չափազանց կարևոր է, որ օրինակ՝ գնապիտակները, աշխատանքի ընդունման հայտարարությունները, առողջապահական տեղեկատվություն պարունակող բուկլետները, կայքէջերը մատչելի և հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

2019 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման առնչությամբ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր:

Խնդիրները նախևառաջ պայմանավորված են համարժեք օրենսդրական կարգավորումների և գործնական կառուցակարգերի բացակայությամբ:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի իմաստով տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներից է տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը: Ըստ այդմ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի կարգավորումներով տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը: Մինչդեռ, կարծում ենք, որ տվյալ սկզբունքի իրացման համար անհրաժեշտ են համապատասխան իրավական կառուցակարգեր և գործուն կարգավորումներ, որոնք պետք է սահմանվեն օրենքով:

Օրինակ՝ Կանադայի «Տեղեկատվության մատչելիության մասին» ակտի 12-րդ հոդվածի համաձայն՝ տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձն, ում պետք է հանձնվի ամբողջական փաստաթղթի կամ դրա մի մասի վերաբերյալ տվյալներ, կարող է դիմել, որպեսզի դրանք նրան տրամադրվի այլընտրանքային տարբերակով: Ընդ որում, վերոնշյալ տվյալները վերջինիս են հանձնվում՝ անմիջապես, եթե ամբողջական փաստաթղթի կամ դրա մի մասի վերաբերյալ տվյալներն արդեն իսկ գոյություն ունեն այլընտրանքային տարբերակով համապատասխան մարմնի մոտ, և այդ ձևաչափն ընդունելի է անձի համար կամ ողջամիտ ժամկետներում, եթե տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձը գտնում է, որ տեղեկատվությունը տվյալ ձևաչափով անհրաժեշտ է անձի իրավունքների իրականացման համար և ողջամիտ է ամբողջական փաստաթղթի կամ դրա մի մասի վերաբերյալ տվյալների փոխանցումը տվյալ ձևաչափի վրա: Ավելին, տվյալ ակտի 3-րդ հոդվածը նախատեսում է այլընտրանքային ձևաչափի սահմանումը, որի համաձայն՝ վերջինս թույլ է տալիս տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց ստանալ (կարդալ, լսել) անհրաժեշտ տեղեկատվությունը<sup>644</sup>:

Ընդ որում, հատուկ կարգավորումներ են անհրաժեշտ նախատեսել ինչպես պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը կարգավորող հոդվածներում (օրինակ՝ Նախագծի 7-րդ հոդված), այնպես էլ տեղեկությունների տրամադրման կարգը և պայմանները և պատասխանին ներկայացվող պահանջները սահմանող հոդվածներում: Արդյունքում, կառուցակարգերի բացակայության պարագայում օրենքը գործնականում

<sup>643</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիա, հոդված 6, հասանելի է <https://rm.coe.int/1680084826> հղումով:

<sup>644</sup> Տե՛ս Կանադայի «Տեղեկատվության մատչելիության մասին» ակտ, հասանելի է <http://laws-lois.justice.gc.ca/PDF/A-1.pdf> հղումով:



միատեսակ չի կիրառվում, ինչի արդյունքում հաշմանդամություն ունեցող մարդիկ զրկվում են իրենց հետաքրքրող տեղեկությունների ինքնուրույն, արժանապատվորեն ծանոթանալու հնարավորությունից:

Այս առումով, հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N 1292-Լ որոշմամբ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան միջոցառումների ցանկով նախատեսվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային:

Մինչդեռ, պետք է արձանագրել, որ հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք իրացումն ապահովելու համար անհրաժեշտ է նախատեսել օրենսդրական կարգավորումներ այլ ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերում:

Օրինակ՝ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկությունների մատչելիության վերաբերյալ կարգավորումներ առկա չեն: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն ամրագրում է յուրաքանչյուրի՝ մատչելի ձևով իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին տեղեկություն ստանալու իրավունքը, սակայն դրանում բացակայում են գործուն մեխանիզմներ հենց տեղեկատվական նյութերի մատչելիության վերաբերյալ:

Ուշագրավ է, որ 2019 թվականի արդյունքներով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը չի ուսումնասիրել, թե արդյոք Հանրային հեռուստաընկերության և Հայաստանի Հանրապետությունում գործող և մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից իրենց ծրագրերում ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հեռարձակվող քանի հաղորդում է ցուցադրվում և որ ժամերին և օրենքով նման ուսումնասիրություններ իրականացնելու գործառույթ վերապահված չէ:

Մինչդեռ, նման մոտեցումն անընդունելի է՝ հաշվի առնելով այն, որ հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման և վերահսկողական մեխանիզմները սահմանված են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով: Այսպես, Հանձնաժողովն իրականացնում է հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում: Այն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ կաբելային (մալուխային) հեռուստառադիոհեռարձակման դեպքում նաև հեռուստառադիոընկերությունում տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին:

Ստացվում է, որ օրենքը հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման առումով լիազորությունների լայն շրջանակ է սահմանում Հանձնաժողովի համար:

Մեկ այլ խնդիր է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածով սահմանված մատչելիության եղանակները, որոնք սահմանափակ են: Ընդ որում, օրենքով հեռուստահաղորդումների հեռարձակման համար նախատեսվում է այլընտրանքային տարբերակ՝ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով: Մինևույն

Ժամանակ, գտնում ենք, որ օրենքով սահմանված հեռարձակվող հեռուստահաղորդումների չափաքանակները, դրանք են՝ օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում, բավականին քիչ են հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվության ստանալու մատչելիության ապահովման տեսանկյունից:

«Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՇԿ-ի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ լսողության խնդիրներ ունեցող մարդիկ փաստում են, որ լուրերի թողարկումների ժամանակ տեսապատկերները չեն համապատասխանում ենթագրերի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ուսումնասիրել է նաև մի շարք կայքէջեր, որոնցում գետեղված առաջնային համարվող տեղեկատվությունը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այսպես, 2019 թվականի դրությամբ դեռևս լուծում չի ստացել «Իրավական ակտերի նախագծերի միասնական կայքէջ»՝ «e-draft.am» և Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ՝ «arlis.am» կայքերի մատչելիության ապահովման հարցը, ինչը լուրջ խոչընդոտներ է ստեղծում հաշմանդամություն ունեցող մարդկանց ինքնուրույն որոշումների կայացման, իրենց իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկման և սոցիալական ներառման համար:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է իր գործունեության ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց՝ մատչելի ձևով տեղեկություններ ստանալու իրավունքի արդյունավետ իրացումը: Ըստ այդմ, 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջը վերագործարկվել է և հատուկ ծրագրային լուծումների շնորհիվ հարմարեցվել է հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Բացի այդ, Պաշտպանի կողմից հրապարակվող իրազեկող նյութերը և տեսանյութերը մատչելի են հավասարապես բոլոր անձանց, այդ թվում՝ տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար: Օրինակ՝ 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանն իրականացրել է կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման հարցում Պաշտպանի դերին, ինչպես նաև օրենսդրության իրազեկմանը վերաբերող միջոցառումներ՝ #դեմեմբռնությանը կոչով: Իրազեկման միջոցառումների շրջանակում, ի թիվս այլ միջոցառումների, ընտանիքում բռնության խնդիրներով պատրաստվել են Պաշտպանի աջակցությունը ստանալու վերաբերյալ բրայլյան գրով տպագրված բուկլետներ, որոնք տարածվել են շահագրգիռ անձանց շրջանում<sup>645</sup>:

2019 թվականի ընթացքում քայլեր են ձեռնարկվել նաև Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի ստորագրման առնչությամբ: Կոնվենցիայի ստորագրման վերաբերյալ դիրքորոշում է ներկայացրել նաև Մարդու իրավունքների պաշտպանը: Այն առաջին միջազգային պարտադիր իրավական գործիքն է, որը ճանաչում է պետական մարմինների կողմից տնօրինվող պաշտոնական փաստաթղթերին հասանելիության ընդհանուր իրավունքը: Ըստ այդմ՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հարցում ներկայացնողը բնօրինակը կամ պատճենն ուսումնասիրելու ընտրության կամ իր ընտրությամբ դրա պատճենը հնարավոր ցանկացած ձևով կամ ձևաչափով ստանալու իրավունք ունի, եթե արտահայտված նախընտրությունն անհիմն չէ:

<sup>645</sup> Տե՛ս «#դեմեմբռնությանը. Պաշտպանը սկսում է կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման իրազեկմանն ուղղված միջոցառումներ», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/901> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Չնայած նկարագրված որոշակի քայլերի՝ հարցը համակարգային առումով չի լուծվել, և բազմաթիվ կայքեր անմատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ պետությունը դեռևս բավարար չափով չի երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվության մատչելիության ազատությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. իրավական ակտերում նախատեսել գործուն մեխանիզմներ (օրինակ՝ խանութներում բրայյան գրերով կամ մատչելի ձևով տպագրված գնապիտակների առկայության պարտադիր պահանջ, առողջապահական հաստատություններում մատչելի տեղեկատվական նյութերի պարտադիր պահանջ, ինտերնետային կայքերի մատչելիության պարտադիր պահանջ,) տեղեկատվության մատչելիության ապահովման համար՝ օրինակ՝

- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում,

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում,

2. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրել հատուկ կարգավորումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ճիշտ ժամանակին, մատչելի ձևով և առանց հավելյալ ֆինանսական բեռի տեղեկատվության տրամադրումն ապահովելու վերաբերյալ,

3. ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության, Հայաստանի Հանրապետությունում գործող ու մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից իրենց ծրագրերում ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հեռարձակվող քանի հաղորդում է ցուցադրվում և որ ժամերին՝ օրենքի համապատասխան կարգավորման արդյունավետությունը գնահատելու համար,

4. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում նախատեսել այնպիսի կարգավորումներ, որի արդյունքում կընդլայնվեն ինչպես հեռուստահաղորդումների հեռարձակման մատչելիության եղանակները, այլ նաև կավելացվեն դրանց չափաքանակները,

5. ստորագրել Եվրոպայի խորհրդի «պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիան:

6. Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին

2019 թվականին մշակութային հիմնարկները և մարզական կառույցները ևս անմատչելի են եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

## Մշակույթ

Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը ճանաչում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը և ըստ այդմ՝ պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ նրանց համար մատչելի լինեն մշակութային գործերը, հեռուստահաղորդումները, ֆիլմերը, թատրոնը և մշակութային գործունեության այլ ձևերը՝ ընդունելի ձևաչափերով:

Մասնավորապես, մշակութային կյանքին մասնակցելու համար անհրաժեշտ են այնպիսի հարմարեցումներ, ինչպիսիք են՝ պատկերասրահներում՝ ցուցադրվող նկարի նկարագրությունը, ֆիլմերի համար՝ տիտրերը, թատրոնների համար՝ ժեստերի լեզվով

թարգմանությունը, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ այլընտրանքային գրքերը<sup>646</sup>:

Մինչդեռ, «Լիարժեք կյանք» ՀԿ-ի տրամադրած տեղեկությունները փաստում են, որ մշակութային շենքերը մնում են անմատչելի ինչպես հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար, ովքեր այցելում են որպես հանդիսատես, այնպես էլ հաշմանդամություն ունեցող դերասանների, երգիչների համար: Ավելին, Հայաստանում գրեթե չեն գործում արվեստի խմբակներ (թատերական, նկարչություն, երգի, պարի և արվեստի այլ խմբակներ), որտեղ ներգրավված կլինեն հաշմանդամություն ունեցող մարդիկ<sup>647</sup>:

Մշակութային և մարզական օբյեկտների անմատչելիության մասին իր մտահոգությունն է հայտնել նաև Կոմիտեն՝ արձանագրելով հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների ոչ բավարար մասնակցությունը մարզական և մշակութային գործունեությանն ու միջոցառումներին, հատկապես գյուղական վայրերում<sup>648</sup>:

Այսպես, մշակութային հաստատությունները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև նշված շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար: Ընդ որում, մի շարք կինոթատրոնների, թատրոնների և այլ մշակութային կառույցների դահլիճներում հենաշարժողական, ինչպես նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված տարածքներ ընդհանրապես նախատեսված չեն:

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2019 թվականին վերականգնվել և վերաշահագործվել է «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ի վերելակը:

Հայաստանը չի վավերացրել «Կույրերի, տեսողական խնդիրներ ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դիտարկելու մասին» Մարաքեշի պայմանագիրը: Վերոնշյալ փաստաթղթի վավերացմամբ կապահովվի կույրերի, տեսողական խնդիրներ կամ ընթերցողության այլ դժվարություններ ունեցող անձանց համար ստեղծագործությունների հասանելի ձևաչափով օրինակների մատչելիությունը: Պետք է նկատել, որ 2019 թվականի ընթացքում նշյալ պայմանագրի վավերացմանն ուղղված իրականացվել են համապատասխան քայլեր, ինչի արդյունքում 2020 թվականի հունվարի 16-ի նիստում ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Մարաքեշի պայմանագիրն վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծին<sup>649</sup>:

<sup>646</sup>Տե՛ս Կոմիտեի 2014 թվականի մայիսի 22-ի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/GC/2&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/GC/2&Lang=en) հղումով:

<sup>647</sup>Տե՛ս [https://www.civilnet.am/news/2018/02/27/%D4%BC%D5%A1%D5%BE-%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF-%D5%A1%D5%B6%D6%81%D5%AF%D5%A1%D6%81%D5%B6%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%A8/330671\\_27.02.2018թ.:](https://www.civilnet.am/news/2018/02/27/%D4%BC%D5%A1%D5%BE-%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF-%D5%A1%D5%B6%D6%81%D5%AF%D5%A1%D6%81%D5%B6%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%A8/330671_27.02.2018թ.)

<sup>648</sup> Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>649</sup> Տե՛ս <https://a1plus.am/hy/article/357490>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մինչ օրս շարունակում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար նախատեսված արտոնությունների հարցը: Խնդրի վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն<sup>650</sup>:

Այսպես, ՀՀ մշակույթի նախարարի 2017 թվականի հուլիսի 6-ի թիվ 368-Ա հրամանով սահմանվում են ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թանգարանների մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիա) տոմսերի գները և արտոնությունները: Մասնավորապես, թանգարանի մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություններ են սահմանվել հաշմանդամություն ունեցող անձանց՝ 1-ին խմբի (ուղեկցողի հետ), հաշմանդամություն ունեցող անձանց՝ 2-րդ և 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի) համար՝ աշխատանքային բոլոր օրերին: Մինչդեռ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները տարբեր հանրային քննարկումների ժամանակ բազմիցս բարձրաձայնում են, որ արտոնության տրամադրումը չպետք է պայմանավորված լինի մարդու մոտ բացառապես հաշմանդամություն ունենալու փաստով: Այն կարող է պայմանավորված լինել, օրինակ, սոցիալ-տնտեսական վիճակի և հաշմանդամության փաստի համակցությամբ: Այլ կերպ ասած, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորմանն ուղղված կառուցողական ցանկացած գործողության հիմքում պետք է ընկած լինի այն սկզբունքը, որով կապահովվի իրավունքների ինքնուրույն իրացման հնարավորությունը:

#### Սպորտ

Կոնվենցիայի 30-րդ հոդվածն ամրագրում է, որ մասնակից պետությունն ապահովում է հատուկ սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև խրախուսում է անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով:

Չնայած վերը նշված միջազգային պարտավորության՝ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած դիմումների ու բողոքների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ մարզադպրոցների շենքերում բացակայում են թեքահարթակները, հանդերձարանները, սանհանգույցները, ինչպես նաև հենց մարզադահլիճները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ավելին, շենքերի ներսում ազատ տեղաշարժի համար առկա չեն անհրաժեշտ հարմարանքներ:

Պետք է ընդգծել նաև, որ կան սպորտաձևեր, օրինակ՝ լողավազանները, որոնք կարող են առողջարար և օգտակար լինել հաշմանդամության որոշակի տեսակների դեպքում: Մինչդեռ, դրանք ֆիզիկապես մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների համար, առկա չեն իրենց տարածքներում կամ անհասանելի են որևէ այլ պատճառով: Երբեմն ծնողները ստիպված են համայնքի մարզիչներին կրկնակի գին վճարել իրենց հաշմանդամություն ունեցող երեխային լողալ սովորեցնելու համար<sup>651</sup>:

<sup>650</sup>Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FARM%2FCO%2F1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FARM%2FCO%2F1&Lang=en) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>651</sup>Տե՛ս ««Ե՛րբ ես կկարողանամ տուն գնալ» Չարաշահումներ և խտրականություն հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ և որակյալ ներառական կրթության մատչելիության պակասը Հայաստանում» զեկույցը, հասանելի է <https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պետության կողմից հաշմանդամային սպորտի զարգացմանն ուղղված բավարար քայլեր ևս չեն ձեռնարկվում: Վերոնշյալ խնդրի մասին բարձրաձայնում են նաև ոլորտի հասարակական կազմակերպության ներկայացուցիչները՝ հայտնելով, որ օրինակ՝ պատերիֆոտինգը՝ հաշմանդամների ծանրամարտ մարզաձևը հնարավոր է զարգացնել շատ արագ ու առանց լրացուցիչ մեծ ծախսերի: Դրա համար պարզապես դահլիճները պետք է հարմարեցնել հաշմանդամություն ունեցողներին<sup>652</sup>:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում հաշմանդամային սպորտի զարգացմանն ուղղված նոր ծրագրեր չեն իրականացվել, սակայն 2019 թվականի հունիսի 25-ին անցկացվել է Ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումը «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնում: Միջոցառմանը մասնակցել են կենտրոնի մտավոր խնդիրներ ունեցող 50 սաներ: Մրցույթն անցկացվել է 30մ վազք, հեռացատկ տեղից և թենիսի գնդակի նետում մրցաձևերից: Հաղթողները և մրցանակակիրները պարգևատրվել են մեդալներով և նվերներով:

Ստահոգության տեղիք է տալիս այն, որ 2019 թվականի ընթացքում սպորտային կառույցները հաշմանդամություն ունեցող անձանց (մատչելի մուտքի, ելքի, հաստատություններում ազատ տեղաշարժի և սանհանգույցներից օգտվելու) հարմարեցվելու ուղղությամբ կառուցման, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ չեն իրականացվել:

Սույն բաժնում տեղ գտած տվյալները վկայում են, որ դեռևս համակարգային առումով լուծում չի ստացել մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցության հարցը:

Հաշմանդամները վերագրյալը՝ անհրաժեշտ է նախատեսել անհրաժեշտ հարմարեցումներ մշակութային շենքերը, վայրերը, միջոցառումները, ինչպես նաև մարզադպրոցներն ու սպորտային միջոցառումները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև մատչելի դարձնել ֆիլմերը, ներկայացումները, ցուցահանդեսները՝ ապահովելով դրանց ձայնային կամ տիտրային լուծումները:

## 7. Կրթության իրավունք

### Նախադպրոցական կրթություն

Վաղ մանկությունն աճի և զարգացման առանցքային փուլ է, քանի որ այդ շրջանի փորձառությունները կարող են ազդել անհատի կյանքի ողջ ընթացքի վրա: Այն նաև կարևորագույն ժամանակաշրջան է հաշմանդամություն կամ զարգացման հապաղումներ ունեցող երեխաների համար՝ ապահովելու այն միջամտությունների հասանելիությունը, որոնք նպաստում են իրենց ողջ ներուժի իրացմանը<sup>653</sup>:

Մինչ օրս նախադպրոցական տարիքի երեխաները չեն ստանում նախադպրոցական ներառական կրթություն, ինչը, իհարկե, խնդրահարույց է վերջիններիս ներուժը լիարժեք գնահատելու և ցանկացած տեսակի մեկուսացումը բացառելու տեսանկյունից:

<sup>652</sup> Տե՛ս <https://sport.mediamax.am/am/news/sport-for-everyone/32188>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>653</sup> Տե՛ս «Նախադպրոցական կրթություն», հասանելի է <https://www.unicef.org/armenia/%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6> հղումով:

Նախադպրոցական ներառական հաստատությունների ոչ բավարար քանակը, շենքային պայմանների և կրթական ծրագրերի անմատչելիությունը բացասական ազդեցություն են ունենում ներառական կրթության որակի և հասանելիության վրա:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 161 մանկապարտեզ, որից միայն 8-ն է իրականացնում ներառական կրթություն<sup>654</sup>:

Մինչդեռ, պետք է արձանագրել, որ հաշմանդամություն ունեցող երեխաների՝ համայնքում ապրելու իրավունքի իրացման ապահովման նպատակով նախադպրոցական բոլոր հաստատությունները պետք է լինեն համընդհանուր ներառական և չսահմանափակվեն միայն ներառական խմբերի ձևով:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզերում հարմարեցված ՆՌԻՀ-երի թիվը մտահոգիչ է: Օրինակ՝ Գեղարքունիքի մարզի 51 մանկապարտեզից 17-ի գլխավոր մուտքի մոտ հաշմանդամություն ունեցող երեխաների մուտքի և ելքի համար առկա են թեքահարթակներ, որոնցից 4-ը կառուցվել է 2019 թվականի ընթացքում: Միննույն ժամանակ, 51 մանկապարտեզի շենքերում հաշմանդամություն ունեցող երեխաների ազատ տեղաշարժի համար նախատեսված հարմարեցումներ չկան: Իսկ Արմավիրի մարզում 2019 թվականի ընթացքում միայն մեկ նախադպրոցական ուսումնական հաստատությունում է կատարվել սանհանգույցների հարմարեցումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ Երևանի և մարզերի ավելի քան 200 ուսումնական հաստատություններ իրականացրած մոնիթորինգային այցերի արդյունքում պարզ է դարձել, որ ուսումնասիրված 80 նախադպրոցական ուսումնական հաստատության միայն 2 սանհանգույց է հարմարեցված եղել հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար<sup>655</sup>:

Գյումրիում որոշ մանկապարտեզներ հրաժարվում են ընդունել հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ հաշվի առնելով, որ իրենք պատրաստ չեն իրականացնել երեխաների խնամքն ինչպես շենքային պայմանների, այնպես էլ անձնակազմի՝ կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի հետ աշխատելու որակավորման պատճառով<sup>656</sup>:

Խնդիրն այն է, որ որևէ փաստաթղթով կամ իրավական ակտով կարգավորված չեն հաշմանդամություն ունեցող և/կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու և վերջինիս ուսուցման կազմակերպման ընթացակարգերը:

Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարությունը 2019 թվականի սեպտեմբերի 19-ի նիստում հավանություն է տվել «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին: Նախագիծը երաշխավորում է համընդհանուր ներառական կրթության միջոցով նախադպրոցական կրթությունը դարձնել մատչելի և հասանելի քաղաքաբնակ ու գյուղաբնակ բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալական ու տնտեսական պատճառներով խոցելի երեխաների համար: Ըստ այդմ՝ ակնկալվում է ապահովել 3-6 տարեկան բոլոր, այդ թվում՝ կրթության

<sup>654</sup>Տե՛ս «Նախադպրոցական կրթություն, 2019», հասանելի է <https://www.yerevan.am/am/pre-school-education/hqումով>:

<sup>655</sup> Տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է <https://ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>656</sup>Տե՛ս <https://www.lragir.am/2018/10/30/391134/>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ներառական և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիություն և 5 տարեկանների առավել ընդգրկվածություն<sup>657</sup>: Արդյունքում, ՀՀ Ազգային ժողովը 2020 թվականի հունվարի 24-ին առաջին ընթերցմամբ ընդունել է Նախագիծը:

Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ տարբեր են նաև ներառական նախադպրոցական կրթության վերաբերյալ ընկալումները: Մասնավորապես, «Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության» հետազոտության մեջ նշվում է, որ գյուղական համայնքների բնակիչներն ավելի հանդուրժող են ներառական նախադպրոցական կրթության հարցում, քան քաղաքային բնակչությունը: Մանկապարտեզներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկվածության վերաբերյալ դրական ընկալման ամենացածր ցուցանիշն ու չեզոք ընկալման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել են Երևանում: Այն հարցվողները, ում երեխան հաճախում է մանկապարտեզ, որտեղ կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, ավելի դրական են տրամադրված նրանց ներառվածության հարցում: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնողները նախաձեռնող չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող իրենց երեխաներին նախադպրոցական ուսումնական հաստատություն տանելու հարցում՝ նախընտրելով հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները<sup>658</sup>:

2019 թվականին Երևանի թիվ 92 մանկապարտեզի ծնողական խորհրդի անդամ հանդիսացող 23 ծնողներ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրած դիմումով տեղեկացրել են մանկապարտեզում հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար իրականացվող նախադպրոցական կրթության ծրագրի հնարավոր վերակազմակերպման և ֆինանսավորման դադարեցման մասին: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ ծրագիրը դրական ազդեցություն ունի մանկապարտեզ հաճախող հատուկ կարիքներ ունեցող երեխաների վրա:

Այնինչ, պարզվել է, որ մանկապարտեզի հատուկ խմբի մասնագետների աշխատանքային պայմանագրի ժամկետն ավարտվել էր 2019 թվականի դեկտեմբերի 31-ին, ինչի արդյունքում Երևանի թիվ 92 մանկապարտեզի հատուկ խումբը փակվել է<sup>659</sup>:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը համապատասխան գրություններ է հասցեագրել Երևանի քաղաքապետարան՝ հարցի լուծման կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով, ինչպես նաև ակտիվ աշխատանքներ են տարվել մանկապարտեզի և քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ:

Երևանի քաղաքապետարանից ստացվել է պատասխան այն մասին, որ Երևանի թիվ 92 մանկապարտեզում գործող երեք նախաներառական խմբերի գործունեությունը վերսկսվել է՝ ֆինանսավորվելով Երևանի համայնքային բյուջեից:

Մինևույն ժամանակ, քաղաքապետարանը նշել է նաև, որ Երևան քաղաքի մյուս մանկապարտեզները ևս պատրաստ են ընդունելու հատուկ կարիքներ ունեցող բոլոր խմբերի երեխաներին<sup>660</sup>:

<sup>657</sup> Տե՛ս «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1574/justification> հղումով:

<sup>658</sup> Տե՛ս «Հայաստանում նախադպրոցական կրթության մատչելիության հետազոտություն», հասանելի է [https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services\\_ARM.pdf](https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/Assessment%20on%20Access%20to%20Pre-school%20Education%20Services_ARM.pdf) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>659</sup> Տե՛ս <https://168.am/2020/01/10/1235128.html>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>660</sup> Տե՛ս <https://armtimes.com/hy/article/178012>, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



Վերոնշյալի հաշվառմամբ՝ կարող ենք փաստել, որ ներառական նախադպրոցական կրթությունը դեռևս չի ապահովվում բոլոր հաստատություններում և մատչելի չէ հաշմանդամություն ունեցող բոլոր երեխաների համար, ինչի հետևանքով վերջիններս զրկվում են կրթություն ստանալու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ֆինանսական միջոցներ հատկացնել բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններին հաշմանդամություն ունեցող երեխաներին մատչելի դարձնելու համար (ֆիզիկական մատչելիություն),
2. ծնողների, երեխաների շրջանում կազմակերպել ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ,
3. նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար կազմակերպել պարբերաբար վերապատրաստումներ, որոնք հնարավորություն կտան ձեռք բերելու անհրաժեշտ հմտություններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու համար:

### Հանրակրթություն

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն ՀՀ օրենքը նախատեսում է մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում ներդնել համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Այս կապակցությամբ Կոմիտեն նշել է, որ չնայած ներառական կրթության աճող միտմանը, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ սովորում են տարանջատված կրթական համակարգերում և չեն ստանում այն աջակցությունը, որն անհրաժեշտ է ներառական կրթության համակարգում ներգրավելու համար: Կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների մատչելիության և ողջամիտ հարմարեցումների, ինչպես նաև վարչական և ուսումնական անձնակազմի՝ ներառական կրթության մասին ոչ բավարար աջակցության և դասընթացների բացակայությամբ: Կոմիտեն մտահոգված է նաև ներառական կրթությունը քաղաքներում և գյուղական վայրերում խթանող համապարփակ ռազմավարության բացակայությամբ<sup>661</sup>:

Այսպես, հաշմանդամություն ունեցող երեխաների՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ չհաճախելը պայմանավորված է նախ՝ տրանսպորտային միջոցների անմատչելիությամբ, և երկրորդ՝ առկա է շենքային պայմանների և ուսումնական նյութերի և ծրագրերի անմատչելիության խնդիր: Մասնավորապես, բացակայում են վերելակները, դռները դժվար են հրվում, ունեն շեմեր, չկան բռնակներ, բացակայում են հարմար սանհանգույցները: Շենքերը նաև հարմարեցված չեն տեսողության և լսողության խնդիրներ, մտավոր առանձնահատկություններ և այլ դժվարություններ ունեցող անձանց համար (բացակայում են, օրինակ, գունային գծանշումներ և այլն): Առկա է նաև դասագրքերի մատչելիության խնդիրը:

2018 թվականի մայիս-հունիս ամիսներին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ Երևանի և մարզերի ավելի քան 121 հանրակրթական ուսումնական հաստատություն իրականացրած այցերի արդյունքում պարզվել է, որ դրանցից

<sup>661</sup> Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

միայն 8 դպրոցում է եղել սանհանգույցներ հաշմանդամություն ունեցող և սակավաշարժուն խմբերի երեխաների համար<sup>662</sup>:

«Հանրակրթական դպրոցների մատչելիությունը. օրենքը գործնականում» զեկույցի շրջանակում հաշմանդամություն ունեցող քաղաքացիներն ուսումնասիրել են 2007 թվականից հետո Երևանում, Գյումրիում և Վանաձորում կառուցված և վերակառուցված 20 հանրակրթական ուսումնական հաստատությունների համապատասխանությունը ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ մատչելիության շինարարական նորմերի մասին հրամանին: Արդյունքում, պարզվել է, որ դպրոցներից միայն 14-ի (70%) մուտքի մոտ էր առկա թեքահարթակ: Դիտարկվել է նաև, թե առկա թեքահարթակները որքանով են մատչելի օգտագործման համար: Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ առկա 14 թեքահարթակների գրեթե կեսը՝ թվով 6-ը, չեն համապատասխանում մատչելիության նորմերին: Երևանի դպրոցների ներսում սայլակ օգտագործող մարդու համար երթևեկելու հնարավորությունը, ընդհանուր առմամբ, բացասական պատկեր ունի: Այն գնահատվել է 50%-ով բացարձակ անհնարին, 15%-ով՝ միջին հնարավորության և 35%-ով՝ լիովին հնարավոր:

Մատչելիության շինարարական նորմերով ամրագրված է, որ դպրոցի դռներից, սանդուղքներից և թեքահարթակներից առաջ պետք է առկա լինի ակոսավոր կամ հակադրական գույներով նախագուշացնող մակերևույթ: Այս նորմը մոնիթորինգի ենթարկված ոչ մի դպրոցում առկա չէր: Մոնիթորինգի ենթարկված դպրոցներից 2-ում առկա էր գորգ: Գորգերից 1-ը չէր համապատասխանում մատչելիության նորմերին. հաստ էր 1,3 սմ-ից և ամրացված չէր հատակին<sup>663</sup>:

Միաժամանակ, խնդրահարույց է հանրակրթական դպրոցներում դասագրքերի մատչելիության հարցը: Վերոնշյալ խնդրի մասին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրաձայնում է իր տարեկան հաղորդումներում: Այս մասին Պաշտպանը նշել է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ N 1292-Լ որոշման նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքում:

Խնդիրն այն է, որ վերոնշյալ փաստաթղթով նախատեսվում է մշակել, հրատարակել և ձեռք բերել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նյութեր և ձեռնարկներ, որի արդյունքում ակնկալվում է վերջիններիս ապահովել 3 անուն ուսումնամեթոդական նյութերով և ձեռնարկներով: Մինչդեռ, առաջնահերթություն պետք է տրվի դասագրքերի մշակմանը և հրատարակմանը: Խնդրի կարևորությունն ընդգծելու համար հարկ է արձանագրել, որ ներառական կրթության անցումը հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության մաս է կազմում, ինչն ամրագրված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես, օրենքի 4-րդ հոդվածի 2.1-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր

<sup>662</sup> Տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է <https://ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>663</sup> Տե՛ս «Հանրակրթական դպրոցների մատչելիությունը. օրենքը գործնականում» զեկույցը, հասանելի է [https://www.academia.edu/38168880/%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6\\_%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB\\_%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B9%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8\\_%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%A8\\_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4](https://www.academia.edu/38168880/%D5%80%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B9%D5%A5%D5%AC%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8_%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%A8_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4) Accessibility of Public Schools Law in Practice հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Ավելին, հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրականացումը, վերջինիս մատչելիությունը երաշխավորված է ինչպես ներպետական, այնպես էլ՝ միջազգային փաստաթղթերով<sup>664</sup>: Մինչդեռ, հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցումները սահմանափակվում են հիմնականում դպրոցների մուտքի մոտ կառուցված թեքահարթակով: Այնինչ, ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքներին:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆիզիկական մատչելիության խնդրից զատ՝ մեկ այլ լուրջ խնդիր է հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ առկա կարծրատիպային մտածողությունը:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2019 թվականին նախաձեռնած ներառական կրթության իրազեկման արշավի շրջանակում հայտարարած՝ շարադրությունների մրցույթի արդյունքներն ենթարկվել են ուսումնասիրության՝ հասարակության կողմից ներառական կրթության ընկալման տեսանկյունից: Ըստ այդմ՝ պարզվել է, որ հանրակրթական դպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաները շարունակում են առանձնացվել մյուս երեխաներից, և նրանց նկատմամբ կան կարծրատիպային մոտեցումներ: Օրինակ՝ երեխաները իրենց շարադրություններում օգտագործում էին խղճահարություն առաջացնող արտահայտություններ՝ հաշմանդամությունը նույնականացնելով հիվանդության հետ, գործածելով բացասական կարծրատիպեր պարունակող տերմինաբանություն, հաշմանդամություն ունեցող երեխաներին դիտելով՝ իբրև անօգնական վիճակում գտնվողներ:

Խնդիրն այն է, որ կարծրատիպերը հիմնականում ձևավորվում են ծնողների և ուսուցիչների վերաբերմունքի պատճառով, քանի որ հաշմանդամություն չունեցող երեխաները հեշտությամբ են շփվում հաշմանդամություն ունեցող իրենց համադասարանցիների հետ, ինչը դրական կարող է ազդել երեխաների կրթական իրավունքի իրացման վրա:

Այսպես, ներառական կրթությունն ամբողջովին չի կարող գործել, քանի դեռ ընտանիքներում, հասարակությունում խտրական վերաբերմունք կա հաշմանդամություն ունեցող երեխայի նկատմամբ:

Թեև դպրոցների տնօրենների, ուսուցիչների համար կազմակերպվում են վերապատրաստումներ, այնուամենայնիվ պարզ չէ, թե որքանով են դրանք արդյունավետ, և որքանով են ուսուցիչները կարողանում արդյունավետ կիրառել ներառականությունը: Լուրջ անելիքներ կան նաև ուսուցչի օգնականի հաստիքն առավելապես արդյունավետ օգտագործելու ուղղությամբ<sup>665</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով մի շարք ուսուցիչներ բարձրացրել են ներառական կրթության իրականացման հետ կապված խնդիրներ:

<sup>664</sup> Մանրամասն տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

<sup>665</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի՝ Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցը», հասանելի է <https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf> հղումով:

Մասնավորապես, նրանք նշել են, որ համընդհանուր ներառականության իրականացման համար բոլոր դպրոցներում անհրաժեշտ է բազմամասնագիտական թիմի առկայություն, որն անընդհատ կաշխատի երեխաների հետ: Ըստ ուսուցիչների՝ բազմամասնագիտական թիմի առկայությունը միայն տարածքային աջակցման կենտրոններում բավարար չէ և բազմամասնագիտական թիմ պետք է լինի նաև դպրոցում: Ավելին, վերջիններս մտահոգիչ են համարել այն, որ կան դպրոցներ, որտեղ անգամ հոգեբաններ չկան, իսկ առկայության դեպքում հոգեբանն աշխատում է երեխայի հետ դասերից հետո: Երեխայի հետ հոգեբանի աշխատանքն անհրաժեշտ է ոչ միայն դասերի ավարտից հետո, այլև դասաժամերին և խնդիրների առաջացման պահին:

Ուսուցիչների մտահոգության առարկա են նաև ուսուցչի օգնականի հաստիքի հետ կապված խնդիրները:

Բացի այդ, ըստ ուսուցիչների՝ առկա է նաև խիստ անհամապատասխանություն ուսուցչի օգնականի և դասարանում աշակերտների թվի միջև: Հարկ է նշել, որ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը, Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից:

Մեկ այլ խնդիր է երեխայի անհատական ուսուցման պլանը, որը կազմում են ուսուցիչները: Մինչդեռ, ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ այն հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները): Ավելին, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 370-Ն հրամանի 8-րդ կետի համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո առավելագույնը 15-օրյա ժամկետում, աջակցության խումբը ծնողի մասնակցությամբ, մշակում է սովորողի Անհատական ուսուցման պլան (ԱՌԻՊ) (Ձև 5): ԱՌԻՊ-ում ներառված աջակցող ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները որոշվում են սովորողի դպրոցական կամ տարածքային մակարդակների գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա (Աղյուսակ): Մինևնույն ժամանակ, նույն հրամանի 7-րդ կետով սահմանվում է, որ աջակցության խմբի կազմում ընդգրկվում են հաստատության ուսուցչի օգնականը(ները), հատուկ մանկավարժը(ները), հոգեբանը, սոցիալական մանկավարժը և բուժքույրը: Եթե հաստատությունում չկան նշված մասնագետները, ապա նրանք հրավիրվում են տվյալ հաստատությունը սպասարկող Տարածքային կենտրոնից: Դպրոցական մակարդակում աջակցության խումբը, սերտ համագործակցելով ուսուցիչների և սովորողի ծնողների հետ, իրականացնում է դպրոցական մակարդակում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն ու կրթության արդյունավետ կազմակերպումը:

Այսինքն, ստացվում է, որ թեև օրենսդրական կարգավորումներից բխում է, որ աջակցության խմբի պարտականությունն է երեխայի անհատական ուսուցման պլանի մշակումը, գործնականում երեխայի անհատական ուսուցման պլանի մշակման պարտականությունը դրված է միայն ուսուցչի վրա, ինչը հանգեցնում է մի շարք խնդիրների:

Երեխայի անհատական ուսուցման պլանի մշակման գործում ներգրավված են տարբեր մասնագետներ, որոնց մասնակցությունը ինքնանպատակ չէ և բխում է երեխայի բազմակողմանի ուսումնասիրության և գնահատման արդյունքում անհատական մոտեցում ցուցաբերելու պահանջից: Ուստի, վերջիններիս մասնակցության բացակայության պարագայում, միայն ուսուցչի կողմից երեխայի անհատական ուսուցման պլանի մշակումը չի կարող լինել արդյունավետ և չի կարող համապատասխանել սահմանված չափանիշներին:

2019 թվականին հանրակրթական ուսումնական հաստատություններում անմատչելիության խնդրի լուծման կապակցությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր:

Ըստ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2019 թվականին համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրվել է Երևան քաղաքում, Շիրակի և Արագածոտնի մարզերում:

ՀՀ Արագածոտնի մարզի 2 դպրոցի մուտք հարմարեցվել է հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների ազատ տեղաշարժն ապահովելու համար: Կոտայքի մարզի Հրազդանի N 11 հիմնական դպրոցում վերանորոգվել է 2 սանհանգույց՝ հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող 9 դպրոցներ հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և դրանցում ազատ տեղաշարժի համար (սանհանգույց, թեքահարթակ, աջակցման դասասենյակ): Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում Տավուշի մարզում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և դրանցում ազատ տեղաշարժի համար միջոցառումներ չեն իրականացվել: Այս մասին են վկայում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկությունները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեղեկությունների համաձայն՝ Երևանի տեսողության խնդիրներ ունեցող երեխաների թիվ 14 դպրոցից ստացված հայտերի հիման վրա ձեռք է բերվել 2000 հատ բրայլյան տետրեր: Տպագրման է տրվել 6 անուն հանրակրթական դասագիրք՝ բրայլյան տառատեսակով, ինչպես նաև տպագրվել են «Մանկավարժահոգեբանական աջակցության ձեռնարկ (3)» մեթոդական ուղեցույցն իր բրոշյուրներով, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում» մեթոդական ուղեցույց-ձեռնարկները՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ: Նշված նյութերը նախատեսված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող՝ ներառական դպրոցների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների համար:

Հիմք ընդունելով ոլորտում առկա խնդիրները, անհրաժեշտ է ներառական կրթություն իրականացնող դպրոցներում իրականացնել շարունակական համակարգային միջոցառումներ՝

- դպրոցների ֆիզիկական մատչելիության,
- ամբողջ հանրապետության ներառական, ինչպես նաև հատուկ կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում մատչելի դասագրքերի անհրաժեշտ քանակ, ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին համապատասխան մատչելի դասագրքերի տպագրության ֆինանսավորման,
- ծնողների, երեխաների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ կազմակերպելու,

- հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար պարբերաբար վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ:

#### Բարձրագույն կրթություն

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի բարձրագույն կրթությունը:

Ինչպես նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատություններում, այնպես էլ ԲՈՒՀ-երում մատչելիությունը սահմանափակվում է մուտքի թեքահարթակի կամ վերելակի առկայությամբ: Խնդիրը ոչ միայն Խորհրդային միության տարիներին կառուցված շենքերի և հարմարեցումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավությունն է, այլ նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց իրավունքների մասին անիրազեկվածությունը և դրանց լուծման գործընթացում ոչ բավարար ներգրավվածությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» թիվ 1 նիստի քաղվածքով նախատեսվում է մինչև 2021 թվականը միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել մատչելի հիմունքներով կրթություն:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետներ են պատրաստում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (հատուկ կրթության ֆակուլտետ), ինչպես նաև Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը («Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)» և «Աղապտիվ ֆիզիկական կուլտուրա» կրթական ծրագրերով):

Մինչդեռ, պետք է արձանագրել, որ հաշմանդամություն ունեցող ուսանողները դժգոհում են, որ իրենց բարձրագույն կրթության իրավունքն իրացնելիս հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների: Մասնավորապես, հաստատություններում առկա է ուսումնական նյութերի, ինչպես նաև ֆիզիկական մատչելիության խնդիր: Դասախոսները հաճախ պարզապես գնահատական են նշանակում՝ խուսափելով քննություն անցկացնելուց և ժամանակ տրամադրելուց<sup>66</sup>: Ոլորտի փորձագետի կարծիքով՝ Հայաստանի բարձրագույն կրթության ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ բուհերի (դասախոսների) և ուսանողների միջև կա լուր համաձայնություն հետևյալի շուրջ. մենք ձեզ նշանակում ենք դրական գնահատականներ, իսկ դուք չեք խոսում մեր դասավանդման որակի մասին<sup>67</sup>:

Դեռևս 2014 թվականից Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում և հաղորդմամբ բարձրաձայնում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ ընդունվելու և սովորելու հնարավորությունից զրկված լինելու խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության որոշմամբ, որով կարգավորվում է ՀՀ պետական և ոչ պետական ԲՈՒՀ-երի ընդունելության գործընթացը, նախատեսվում է, որ ինստիտուտի մասնագիտական առարկաների

<sup>66</sup>Տե՛ս <https://www.azatutyun.am/a/29035412.html>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>67</sup>Տե՛ս <https://168.am/2018/03/02/915038.html>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

քննությունները ներքուհական քննություններ են և անցկացվում են տվյալ մասնագիտության առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան<sup>668</sup>: ԲՈՒՀ-ի ընդունման կարգից, սակայն, բխում է, որ անկախ ընտրած մասնագիտությունից՝ բոլոր դիմորդները պարտավոր են հանձնել «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան: Բացի այդ, համաձայն ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների կանոնակարգի՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի դիմորդներն ընդունելության քննություններին մասնակցում են բժշկական հանձնաժողովի եզրակացությունից հետո<sup>669</sup>:

Արդյունքում, անտեսվում են հաշմանդամություն ունեցող մարդկանց առանձնահատուկ կարիքները, որի հետևանքով հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդիկ զրկվում են տվյալ ԲՈՒՀ-ում կրթություն ստանալու հնարավորությունից՝ վերոնշյալ առարկայից քննություն հանձնելու հնարավորություն չունենալու պատճառով:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի հատկացվել: Մինչև ժամանակ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կողմից են միջոցներ ձեռնարկվում հաշմանդամություն ունեցող անձանց ուսումնառության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու ուղղությամբ:

Չնայած նրան, որ 2019 թվականին ձեռնարկվել են որոշ քայլեր, այնուամենայնիվ, կրթության իրավունքի լիարժեք իրագործմանը խոչընդոտող թե՛ իրավական, թե՛ գործնական խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ է կատարել համակարգային անհետաձգելի բարեփոխումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ապահովել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի և կրթական ծրագրերի մատչելիությունը,

2. նախատեսել համապատասխան ֆինանսական միջոցներ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում հաշմանդամություն ունեցող անձանց կրթությունը կազմակերպելու համար:

#### 8. Առողջապահական ծառայությունների մատչելիություն

Կոնվենցիայի 4-րդ և 25-րդ հոդվածների ուժով պետությունը պարտավորություն է ստանձնել ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումն առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության:

2019 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող մարդիկ առողջապահական ծառայություններից օգտվելիս հանդիպել են բազմաթիվ դժվարությունների, որոնց մասին տարիներ շարունակ նշվում է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում:

Խնդիրը, նախևառաջ, պայմանավորված է առողջապահական ծառայությունների ու բժշկական հաստատությունների շենքերի անմատչելիությամբ: Այս կապակցությամբ

<sup>668</sup> ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 686-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 597-Ն որոշում:

<sup>669</sup> Տե՛ս «<http://www.asipc.am/index.php?lng=am&page=applicant/procedures>»:



Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ բժշկի կողմից չհետազոտվելու պատճառը եղել է այն, որ վերջինս անվասայլակով տեղաշարժվելու պատճառով չի կարողացել բարձրանալ բժշկական կենտրոնի 2-րդ հարկ (բժշկական կենտրոնը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար), իսկ բժիշկն առաջին հարկում իրեն չի հետազոտել՝ պատճառաբանելով, որ զբաղված է և չի կարող յուրաքանչյուր հիվանդին այդքան ժամանակ տրամադրել:

Բացի այդ, 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի՝ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» կատարած մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրվել է, որ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար բացակայում են ողջամիտ հարմարեցումները<sup>670</sup>: Հարմարեցվածության խնդիր առկա է եղել նաև Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում<sup>671</sup>:

Մշտադիտարկման այցերի արդյունքներով արձանագրվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում հաշմանդամություն ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար մատչելի պայմանների ապահովման խնդիրը: Թեև ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1025-Լ որոշմամբ այս խնդիրը թիրախավորվել է, սակայն մինչ օրս լուծում չի ստացել:

2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը դիմել էր Սահմանադրական դատարան երեխաների և անգործունակ չափահասների բուժման հարցերում վերջիններիս կարծիքը հաշվի չառնելու սահմանադրականությունը վիճարկելու համար:

Հարցն այն է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ անձի օրինական ներկայացուցչի համաձայնությունն արդեն իսկ համարվում է բավարար պայման երեխաների և անգործունակ չափահասների հոգեբուժական օգնության, այդ թվում՝ հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելու համար: Արդյունքում, խախտվում են լսված լինելու և իրազեկված համաձայնությունը տալու նրանց իրավունքները: Վիճարկվող իրավակարգավորումները խնդրահարույց են, քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց ամբողջությամբ զրկում են իրենց իրավունքների իրականացումից տարբեր պատճառներով, այդ թվում՝ հնարավորություն չտալով մասնակցել իրենց ազատությունից զրկելու կամ բժշկական միջամտությունների ու բուժման ընթացքի հետ առնչվող հարցերին:

Արդյունքում, 2020 թվականի հունվարին Սահմանադրական դատարանը Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրությանը հակասող է ճանաչել երեխաների և անգործունակ չափահասների բուժման հարցերում վերջիններիս կարծիքը հաշվի չառնելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները:

Այսպես, դատարանը փաստել է, որ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված կամ 18 տարին չլրացած անձանց հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարգավորելիս օրենքները պետք է սահմանեն այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ այն հաշվով, որ չխախտվի իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի մաս կազմող՝ սահմանափակման համար ընտրված միջոցների՝

<sup>670</sup> Տե՛ս «Խախտումներ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ում. Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/990> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>671</sup> Տե՛ս «Խախտումներ Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում. Մարդու իրավունքների պաշտպանն ամփոփել է մշտադիտարկման արդյունքները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/964> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:



Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ լինելու պահանջը: Վերոնշյալ բոլոր պահանջները պետք է կատարվեն ինչպես անձի՝ իր համաձայնությամբ բժշկական միջամտության ենթարկվելու, այնպես էլ անձի՝ իր առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու իրավունքների իրացման համատեքստում:

Արդյունքում, Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2020 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին մի շարք օրենքների իրավակարգավորումները համապատասխանեցնելու ՄԴ որոշման պահանջներին:

Բժշկական հաստատություններում անմատչելիության խնդրի լուծման ուղղությամբ 2019 թվականին ձեռնարկվել են որոշ քայլեր:

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 2019 թվականին հարմարվեցվել են Ագարակի բժշկական ամբուլատորիան, «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ռենտգեն կաբինետի և դեղատան մուտքի աստիճանները հարմարեցվել են սայլակների տեղաշարժման համար: Մինչդեռ, Նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայությունները մատչելի դարձնելու ուղղությամբ համապատասխան աշխատանքներ չեն իրականացվել, օրինակ, ՀՀ Արմավիրի մարզում:

Լսողության խնդիրներ ունեցող անձանց անհրաժեշտ են ժեստերի լեզվով թարգմանչի ծառայություններ, իսկ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար համապատասխան տեղեկատվական նյութեր (բրայլյան համակարգով, խոշոր տառատեսակով կամ աուդիոգրքերով):

Միաժամանակ, հարկ է նկատել, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Շիրակի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովվել է տեղեկատվության մատչելիությունը բրոշուրների, հուշաթերթիկների և տեղեկատվական այլ նյութերի միջոցով՝ առողջ ապրելակերպի վերաբերյալ:

«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածն ամրագրում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց երաշխավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն պետական բժշկական հիմնարկներում:

Բացի այդ, 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամություն ունեցող երեխաներն ըստ դեղատոմսերի ապահովվում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցողները՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից: Մինչդեռ, «Լիարժեք կյանք» ՀԿ-ի տրամադրած տեղեկությունները փաստում են, որ թանկարժեք վիրահատությունների և բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու ծավալները հիմնականում անվճար չեն կամ արտոնյալ պայմաններով են, այսինքն՝ մասամբ փոխհատուցվում են, որը նույնպես հասանելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց, ինչի պատճառով Հայաստանում բազմաթիվ հաշմանդամություն ունեցող անձինք որակյալ բժշկական օգնություն չեն ստանում: Բացի այդ էլ առկա է հստակ սահմանազատում, որ որոշ ծառայություններ տրամադրվում են հաշմանդամության 1-ին և 2-րդ խումբ ունեցող անձանց, իսկ 3-րդ խումբ ունեցող անձանց դրանք չեն տրամադրվում կամ տրամադրվում են մեծ համավճարով:

Ի թիվս բարձրացված հարցերի, չափազանց կարևոր է նաև բժշկական հաստատությունների անձնակազմի մասնագիտական մոտեցումը հաշմանդամություն

ունեցող անձանց նկատմամբ: Ասվածի հաշվառմամբ, պետք է արձանագրել, որ բժշկական հաստատությունների անձնակազմի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին իրազեկվածության ցածր մակարդակի մասին իր մտահոգությունն է հայտնել Կոմիտեն<sup>672</sup>:

Այսպես, ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս սպասարկելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացմանն ուղղված 2018-2019 թվականներին «Հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփման և սպասարկման էթիկա» դասընթացը ներառված է եղել «Ընտանեկան բժշկություն», «Առողջապահության կառավարում և կազմակերպում» կլինիկական օրդինատորայի և կատարելագործման դասընթացների ծրագրերում:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան լիարժեք իրացնել Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված առողջության պահպանման իրավունքը:

Ուստի, անհրաժեշտ է՝

1. ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումը, այդ թվում՝ ապահովելով բժշկական ծառայությունների և շենքերի, ինչպես նաև տեղեկատվական նյութերի մատչելիությունը վերջիններիս համար,

2. բուժանձնակազմի համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ:

## 9. Աշխատանք և զբաղվածություն

Կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի իրավունքը. սա ներառում է ապրուստի միջոցներ վաստակելու իրավունքն աշխատանքի միջոցով, որը նա ձեռք է բերում իր ազատ ընտրության ու համաձայնության պայմաններում, ինչպես նաև աշխատուժի շուկայում և հաշմանդամություն ունեցող անձի համար բաց, ընդգրկուն ու մատչելի աշխատանքային միջավայրում:

Չնայած վերոնշյալ պահանջի՝ 2019 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման հարցը համակարգային առումով շարունակել է մնալ չլուծված: Խնդիրը պայամանավորված է ոչ բավարար պետական ծրագրերի, միջավայրային արգելքների և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերյալ կարծրատիպերի առկայությամբ:

Հաշվի առնելով Կոնվենցիայի պահանջները և հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցը լուծելու անհրաժեշտությունը՝ 2016 թվականի հունվարի 1-ից պետական մարմինների համար, որոնք ունեն 100-ից ավել աշխատող, գործում էր հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի պարտադիր ապահովման

<sup>672</sup> Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

նորմատիվի պահանջ<sup>673</sup>: Մինչդեռ, հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 16-ի N 909-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Քվտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» N 1308-Ն որոշումը:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չըրացած անձանց աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվի (քվտա) համակարգի փոփոխության ուղղությամբ մշակվել է ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Մինչդեռ, 2019 թվականին Նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ քվտայի ներդրման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ զբաղվածության պետական գործակալության և գործատուների (ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ ՀՀ մարզերի) միջև կայացած հանդիպումների ընթացքում վերջիններս մշտապես բարձրացրել են իրենց մտահոգությունը հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելու հարցում և փաստել, որ, առանց հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող զբաղվածության ծրագրերի, մեծ դժվարություններ ունեն նշված անձանց աշխատանքով ապահովելու հարցում՝ նույնիսկ բավարար գիտելիքներ և հմտություններ ունենալու պարագայում (ինչպես օրինակ՝ աշխատատեղի հարմարեցում, տրանսպորտային փոխադրում, աշխատաժամերի համաձայնեցում): Արդյունքում, Նախարարությունը նշել է, որ դեռևս վաղաժամ է կրկին ներդնել քվտայի համակարգը և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման հարցը նպատակահարմար է լուծել Զբաղվածության պետական գործակալության կողմից իրականացվող ծրագրերի պայմանների բարելավման և ծրագրերում նրանց թվաքանակի ավելացման ճանապարհով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համաձայն՝ 2019 թվականի ընթացքում իրականացվել է 13 զբաղվածության կարգավորման ծրագիր, որում ընդգրկվել է 7290 աշխատանք փնտրող: Նրանցից 425-ը հաշմանդամություն ունեցող մարդիկ են: Զբաղվածության պետական գործակալության միջնորդությամբ, այդ թվում՝ կայուն զբաղվածություն ապահովող ծրագրերի արդյունքում, աշխատանքի է տեղավորվել 13513 աշխատանք փնտրող, որից 2%-ը կամ 275-ը՝ հաշմանդամություն ունեցող մարդիկ, նրանցից 149-ն աշխատանքով ապահովվել է զբաղվածության պետական ծրագրերի միջոցով:

Միևնույն ժամանակ, ուշադրության է արժանի հաշմանդամություն ունեցող երեխաներին խնամող անձանց զբաղվածության ապահովման հարցը, ինչի մասին է վկայում Պաշտպանին հասցեագրվող բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքներով ծնողները վկայակոչել են այն փաստը, որ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ իրավական բավարար երաշխիքներ նախատեսված չեն հաշմանդամություն ունեցող երեխա խնամող ծնողների համար: Այս իրավիճակը դժվարեցնում է երեխայի խնամքի կազմակերպման գործընթացը, ինչի հետևանքով ծնողները մի շարք դեպքերում ստիպված են լինում հրաժարվել իրենց աշխատանքից:

Հատկանշական է, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների վերաբերյալ» թիվ C156 կոնվենցիան

<sup>673</sup> Տե՛ս «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, հոդված 20, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Քվտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1308-Ն որոշում:

նախատեսում է իրավական երաշխիքներ անմիջականորեն ընտանիքի մյուս անդամների հետ կապված ընտանեկան պարտավորություններ ունեցող կին և տղամարդ աշխատողների համար, ովքեր կարիք ունեն խնամքի կամ աջակցության, եթե այդպիսի պարտականությունները սահմանափակում են նրանց՝ տնտեսական գործունեությանը նախապատրաստվելու, ընդունվելու, մասնակցելու կամ առաջխաղացման հնարավորությունները: Մույն դրույթը կիրառելի է հավասարապես այն երեխաների համար, ովքեր գտնվում են աշխատողների հոգածության ներքո<sup>674</sup>:

Այսպես, կին և տղամարդ աշխատողների համար հնարավորության և վերաբերմունքի արդյունավետ հավասարության ստեղծման նպատակով յուրաքանչյուր անդամ պետություն պետք է այն դարձնի ազգային քաղաքականության նպատակ՝ հնարավորություն ընձեռելով ընտանեկան պարտականություններ ունեցող անձանց, ովքեր զբաղվում են կամ ցանկանում են զբաղվել աշխատանքային գործունեությամբ, իրացնել իրենց իրավունքը՝ առանց խտրականության և որքան հնարավոր է առանց նրանց աշխատանքի և ընտանեկան պարտականությունների միջև բախման<sup>675</sup>:

Բացի այդ, պետք է ձեռնարկվող բոլոր միջոցները հաշվի առնեն ընտանեկան պարտականությունները կրող աշխատողների կարիքները համայնքի պլանավորման շրջանակում և զարգացնեն կամ խթանեն համայնքային ծառայությունները, պետական կամ մասնավոր ոլորտներում, ինչպիսիք են՝ երեխաների խնամքի և ընտանեկան ծառայություններն ու հարմարությունները: Ընդ որում, ընտանեկան պարտականությունները չեն կարող համարվել հիմնավոր պատճառ աշխատանքային պայմանագրի լուծման համար<sup>676</sup>:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով, որ այժմ ընթանում են ապահիստիտուցիոնալացման քաղաքականության իրագործմանը, այսինքն՝ երեխայի խնամքի և կրթության շուրջօրյա հաստատությունների փակմանը կամ վերակազմավորման ուղղված գործընթացներ՝ կարծում ենք, որ արդարացված է այս փուլում հաշվի առնել և ըստ այդմ՝ գնահատել հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների կարիքները զբաղվածության ոլորտում՝ վերջիններիս կողմից երեխայի խնամքը կազմակերպելու և աշխատանքային իրավունքների անխոչընդոտ իրացումն ապահովելու նպատակով: Հարկ է նշել, որ վերոնշյալ մտահոգությունը Պաշտպանը ներկայացրել է նաև «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքում:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

<sup>674</sup> Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության «Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների վերաբերյալ» թիվ C156 կոնվենցիա, հոդված 3, մաս 1, հասանելի է [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100\\_INSTRUMENT\\_ID:312301:NO](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100_INSTRUMENT_ID:312301:NO) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>675</sup> Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության «Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների վերաբերյալ» թիվ C156 կոնվենցիա, հոդված 3, մաս 1, հասանելի է [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100\\_INSTRUMENT\\_ID:312301:NO](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100_INSTRUMENT_ID:312301:NO) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>676</sup> Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության «Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների վերաբերյալ» թիվ C156 կոնվենցիա, հոդված 5, հասանելի է [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100\\_INSTRUMENT\\_ID:312301:NO](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100_INSTRUMENT_ID:312301:NO) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

1. քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի, զբաղվածության ապահովման համար արդյունավետ ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ,

2. հնարավորինս սեղմ ժամկետում վերանայել քվոտավորման համակարգը և ներդնել գործուն համակարգ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների իրացման տեսանկյունից,

3. «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսել հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների՝ երեխաների խնամքով պայմանավորված, զբաղվածության ապահովմանն ուղղված աջակցություն տրամադրելուն ուղղված միջոցառում:

10. Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետության առջև դրված խնդիրներից մեկն է, քանի որ ընտանիքում ապրելը և պատշաճ դաստիարակություն ստանալը կարևոր երաշխիք է երեխայի մյուս իրավունքների իրացման և երեխայի զարգացման համար: Այս իրավունքն ամրագրված է ներպետական և միջազգային փաստաթղթերով: Իրավունքն ունիվերսալ է, ուստի նաև ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք ունեն հաշմանդամություն ունեցող երեխաները:

Ընտանիքում ապրելը երեխային հնարավորություն է տալիս զարգանալ և մեծանալ՝ որպես հասարակության լիարժեք անդամ, ով մասնակցություն կունենա նաև պետության կառավարման գործընթացին<sup>677</sup>:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման առաջնահերթությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրից: Այս նպատակին է ուղղված նաև երկրի ապահիստիտուցիոնալացման քաղաքականությունը, որը ուղղված է երեխայի խնամքի և կրթության շուրջօրյա հաստատությունների փակմանը կամ վերակազմավորմանը՝ նպատակ ունենալով երեխաների խնամքը և կրթությունը կազմակերպել ընտանիքահեն և համայնքահեն միջավայրում:

Հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքն ընտանեկան միջավայրում կազմակերպելու, ինչպես նաև նշված երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնում է իր տարեկան հաղորդումներում և զեկույցներում:

2019 թվականին «Հայկական Կարիտաս» կազմակերպությունը մշակել է «Երեխաների քաղաք» ծրագիրը, որի շրջանակում, ըստ նախագծում ներկայացված դրույթների, իրականացվելու են տարբեր սոցիալական ծրագրեր, ինչպես նաև կարողությունների զարգացմանն ուղղված բազմաբովանդակ գործառույթներ<sup>678</sup>: Ծրագրի թիրախ էր ընտրվել կրթության և ինքնազարգացման սահմանված հնարավորությունների պայմաններում ապրող, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաները: Ըստ այդմ՝ 2019 թվականի օգոստոսի 19-ին ՀՀ կառավարությունը որոշել էր Արարատի մարզի Շահումյան և

<sup>677</sup> Մանրամասն տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:

<sup>678</sup> Տե՛ս «Երեխաների քաղաք» ծրագիրը, հասանելի է <https://www.e-draft.am/projects/2021> հղումով:

Տափերական համայնքներում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանն անհատույց սեփականության իրավունքով հողամասեր տրամադրել:

Այս առնչությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր մտահոգությունն է հայտնել վերոնշյալ ծրագրի վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից տրված դրական եզրակացության վերաբերյալ: Պաշտպանի դիրքորոշմամբ՝ ծրագիրը հակասում է երեխայի լավագույն շահին և Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին: Ծրագրի իրականացումն այս տարբերակով կնպաստի հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով երեխաների նկատմամբ կարծրատիպերի և խարանի խորացմանը:

Քաղաքի կառուցումը հակասում է նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի «Երեխայակենտրոն քաղաք» ծրագրի սկզբունքներին: «Երեխայակենտրոն քաղաք» ստեղծելը չի նախատեսում մեկուսացած բնակավայրերի կառուցում: Ավելի քան 35 երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր երկրներն էլ կարևորում են համայնքի ողջ բնակչության ներգրավվածությունը երեխայակենտրոն քաղաքների ստեղծման գործում, այլ ոչ թե դրա կառուցումը երեխաներին հասարակությունից մեկուսացնելու կամ առանձնացնելու սկզբունքով,

Ծրագրով նախատեսված միայն կրթության և ինքնագարգացման սահմանափակ հնարավորությունների պայմաններում ապրող երեխաների և հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությամբ կրթությունը խնդրահարույց է երեխաների ներառականության տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է առաջնորդվի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բարձր առաքելությամբ: Պետությունը պետք է աջակցի, պաշտպանի և ապահովի, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ լիարժեքորեն և հավասարապես իրացնեն իրենց իրավունքները, ինչպես նաև ապահովի հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ:

Պաշտպանը դիրքորոշումը ներկայացրել է ՀՀ կառավարություն՝ առաջարկելով լրամշակել ծրագիրը՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահով: Արդյունքում, Կառավարությունը ուժը կորցրած է ճանաչել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը Շահումյան և Տափերական համայնքներում հողամասեր հատկացնելու որոշումը<sup>679</sup>:

Խնդիրն այն է, որ տարիներ շարունակ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը մեր երկրում եղել է երեխաներին և ընտանիքներին աջակցություն տրամադրող հիմնական միջոցը, որը, սակայն, ավելի է նպաստել հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով երեխաների վերաբերյալ կարծրատիպերի և նրանց նկատմամբ խարանի խորացմանը: Այսինքն, առհասարակ, նման հաստատությունների գոյությունը չի բխում երեխաների լավագույն շահից: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրություններն ու չհայտարարված այցերը վկայում են, որ այդ հաստատություններում առկա են բազմաթիվ, այդ թվում՝ համակարգային բնույթի խնդիրներ<sup>680</sup>:

<sup>679</sup> Տե՛ս «Երեխաների քաղաք» ծրագիրը հակասում է երեխայի լավագույն շահին. Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/927> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>680</sup> Տե՛ս «Հատուկ հաստատությունների ճիշտ վերակազմակերպումը բխում է երեխայի լավագույն շահից. Պաշտպանն ուսումնասիրում է մտահոգությունները», հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/923> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2019 թվականի դրությամբ Խարբերդի մանկատանը խնամվում է 222 հաշմանդամություն ունեցող երեխա, Գյումրու երեխաների տուն մանկատանը՝ 122, Մարի Իզմիրյանի անվան մանկատանը՝ 102, Երևանի մանկան տանը՝ 10, Գավառի մանկատանը՝ 4, Վանաձորի մանկատանը՝ 2:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2019 թվականի հունիսի դրությամբ 835 երեխա շարունակում է խնամք ստանալ պետական և մասնավոր մանկատներում: Այս թիվը նվազել է տարիների ընթացքում (2018 թվական՝ 835, 2008 թվականի՝ 975-ի համեմատ): Հաստատություններում բնակվող երեխաների թվի նվազումը պայմանավորված է առավելապես հաշմանդամություն չունեցող երեխաների՝ հաստատություններից դուրս բերմամբ, մինչդեռ, հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը շարունակում է գրեթե անփոփոխ մնալ: Նույն աղբյուրի համաձայն՝ 835 երեխաներից 468-ը հաշմանդամություն ունեցող երեխաներ են<sup>681</sup>:

Մանկատներում գտնվող և հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը և սոցիալապաշտպան աճում են՝ պայմանավորված ընտանեկան օժանդակության պակասով և ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային տարբերակների անբավարարությամբ: Այս մասին իր մտահոգությունն է հայտնել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն<sup>682</sup>:

Այսպես, 2019 թվականի ընթացքում խնամատարության է հանձնվել թվով 11 երեխա, այդ ընթացքում ընդհանուր թվով 35 խնամատար ընտանիքում խնամվել է 47 երեխա: Ինչ վերաբերում է հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող տեղեկատվությանը, Նախարարությունն այդ առումով տվյալներ չի տրամադրել:

2019 թվականի ընթացքում մշակվել է «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2019-2023 թվականների համալիր ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման նախագիծը, որում ներառվել է որպես գերակայություն՝ շուրջօրյա խնամքի հաստատությունների ապահիստիտուցիոնալացումը՝ ներառյալ ոչ պետական հաստատություններն ու մասնագիտացված խնամքի հաստատությունները: Նախարարության տրամադրած տվյալները վկայում են, որ գուզահեռ ընդլայնվում է հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրող համայնքային կենտրոնների ցանկը:

Միննույն ժամանակ, շարունակում է խնդրահարույց մնալ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման ցածր թիվը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված երեխաներն առողջ են, իսկ օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվածներից 5-ը հաշմանդամություն ունեցող երեխաներ են: Ընդհանուր առմամբ 2019 թվականի ընթացքում որդեգրվել է 19 երեխա, որից 8-ը օտարերկրյա քաղաքացիների կողմից:

<sup>681</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող երեխաների խնամատարության հեռանկարները Հայաստանում», հասանելի է <https://www.evnreport.com/readers-forum/foster-care-for-children-with-disabilities-armenia> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>682</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի՝ Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցը», հասանելի է <https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbc7edd99b443608b0.pdf> հղումով:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաներին որդեգրելու պրակտիկայի զարգացման ուղղությամբ Նախարարության իրականացրած քայլերին, 2019 թվականի մայիսի 23-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացների ծրագրի կազմակերպում և անցկացում» N 630-Ն որոշումը: Արդյունքում, ծրագրի իրականացման նպատակով դրամաշնորհի տրամադրման համար հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում շահած հասարակական կազմակերպությունն իրականացրել է որդեգրել ցանկացող շուրջ 60 անձանց վերապատրաստման դասընթացներ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է առաջնահերթություն տալ հաշմանդամություն ունեցող երեխաների ապահիստիտուցիոնալացմանը և ընտանեկան միջավայրում տեղավորմանը, ինչպես նաև բարելավել ինսամատարության ինստիտուտը և տրամադրել համայնքապետարանի աջակցություն:

11. Մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաների համար կացարանների և զբաղվածության ապահովումը

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մի շարք երաշխիքներ, որոնցից է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորումը, բնակարանի իրավունքի ապահովումը:

Ստացվում է, որ պետության կողմից սահմանված են երաշխիքներ ինչպես հաստատություններում բնակվող, այնպես էլ հաստատություններից դուրս եկած առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով:

Նշվածի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ պետությունը տարիներ շարունակ պատշաճ չի կատարել մանկատան շրջանավարտներին բնակարանով ապահովելու իր պարտականությունները<sup>683</sup>:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականի դրությամբ Խարբերդի մանկատանը խնամվում է 18 տարեկանը լրացած 132 հաշմանդամություն ունեցող անձ, Մարի Իզմիրյանի անվան մանկատանը՝ 19-ը, իսկ սոցիալական կացարանում տեղավորվել է 18 տարին լրացած մանկատան 2 սան: Ինչ վերաբերում է այն հարցին, թե քանի հաշմանդամություն ունեցող շրջանավարտ է հերթագրված սոցիալական կացարան ստանալու համար, ապա Նախարարությունը հայտնել է, որ հաշմանդամություն ունեցող շրջանավարտների վերաբերյալ հատուկ հաշվառում չի իրականացվում, և բնակարանով ապահովելու համար արտոնություններ սահմանված չեն:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ շարունակում են մնալ հաստատություններում նույնիսկ այն ժամանակ, երբ հաստատությունում խնամվելու իրենց տարիքը լրացել է, և որ պետությունը բավարար աջակցություն չի ցուցաբերում հաստատությունների շրջանավարտներին: Կոմիտեն առաջարկել է նաև, որ պետությունն առավելագույն

<sup>683</sup> Մանրամասն տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկող մարմին» բաժնում:



աջակցություն ցուցաբերի հաստատությունների շրջանավարտներին կրթություն ստանալու, աշխատանք ունենալու հարցերում և տրամադրի պատշաճ բնակելի տարածք<sup>684</sup>:

Մինչդեռ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2019 թվականի դրությամբ 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող շրջանավարտներից ոչ ոք չի ապահովվել աշխատանքով:

Իբրև մանկատան շրջանավարտներին աշխատանքով ապահովելու խնդրի լուծման քայլ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտներին ճանաչել աշխատաշուկայում անմրցունակ և ընդգրկել «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» և «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրերում:

Դրական է, որ Նախագծով նախատեսվում է իրականացնել մանկատան շրջանավարտների զբաղվածության ապահովմանն ուղղված դրական միջոցառումներ, որոնց անհրաժեշտության մասին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում: Մինչդեռ, Նախագծին կից ներկայացված հիմնավորումներում նշված չէ, թե ինչու են վերը թվարկված ծրագրերում ընտրվել միայն Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտները: Ուստի, առաջարկվել է ի թիվս Երևան քաղաքից դուրս բնակվող մանկատան շրջանավարտների՝ աշխատաշուկայում անմրցունակ ճանաչել նաև Երևան քաղաքում բնակվող մանկատան շրջանավարտներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց: Այս առաջարկն ընդունվել է, և Կառավարությամբ որոշմամբ կատարվել է փոփոխություն<sup>685</sup>:

Հաշվետու տարվա ընթացքում որպես դրական քայլ՝ կարելի է արձանագրել նաև այն, որ 2019 թվականի հոկտեմբերի 7-ին ընդունված թիվ 1555-Ն որոշմամբ ֆինանսական միջոցներ են ուղղվել Հայաստանի Հանրապետության մանկատան 300 շրջանավարտների բնակարանային ապահովման խնդիրների լուծմանը:

Չնայած իրականացվող միջոցառումների՝ անհրաժեշտ է հաշմանդամություն ունեցող շրջանավարտների վերաբերյալ իրականացնել հատուկ հաշվառում և ներդնել համայնքային ծառայություններ՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու հասարակություն ինտեգրվելու անհրաժեշտությունը:

## 12. Քաղաքական իրավունքներ

Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և մյուսների հետ հավասար հիմունքներով դրանցից օգտվելու հնարավորությունը: Մասնավորապես, պետությունը պարտավորվում է ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ կերպով ընտրված

<sup>684</sup> Տե՛ս «ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>685</sup> Տե՛ս <https://www.e-gov.am/sessions/archive/2019/11/14/>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ներկայացուցիչների միջոցով, արդյունավետ ու լիարժեք կերպով մասնակցություն ունենան քաղաքական ու հասարակական կյանքին՝ ներառյալ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը՝ ապահովելով, որ քվեարկության ընթացակարգերը, վայրերը և միջոցները լինեն մատչելի ու դյուրին հասկանալու և գործածության համար:

ՀՀ ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող<sup>686</sup> ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ: Օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունն ու քվեարկության գաղտնիությունը:

Ըստ այդմ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի «Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին» թիվ 136-Ն որոշմամբ սահմանվում է, որ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով համայնքների ղեկավարները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների և առկա հնարավորությունների հաշվառմամբ տեղամասային կենտրոնները սահմանում են այնպիսի շենքերում և շինություններում, որոնք հարմարեցված են շարժասայլակներով տեղաշարժվելու համար:

Բացի այդ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության կարգի պարզաբանման վերաբերյալ հեռարձակվող տեսանյութերը զուգակցել ժեստային լեզվով (սուրդ-թարգմանությամբ): Համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելիս համայնքի ղեկավարի կողմից, հնարավորության դեպքում հաշվի են առնվում նաև շարժասայլակներով տեղաշարժվող ընտրողների քարոզչական նյութեր փակցնելու համար առանձնացված տեղերին ինքնուրույն մոտենալու և դրանցում փակցված նյութերին ծանոթանալու հնարավորության ապահովումը:

Պետք է արձանագրել, որ 2019 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական և արտահերթ ընտրություններին հաշմանդամություն ունեցող քաղաքացիները հանդիպել են բազմաթիվ դժվարությունների:

Մասնավորապես, «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից տրամադրած տեղեկությունները փաստում են, որ ընտրատեղամասերը հարմարեցված չեն եղել հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար, չեն եղել քվեաթերթիկներ բրայլյան համակարգով, ոչ բոլոր ընտրատեղամասերում են առկա խոշորացնող ոսպնյակներ, քվեախցիկները ևս հարմարեցված չեն անվասայլակ օգտագործող անձանց համար, ընտրական նյութերը հասանելի չեն տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Արդյունքում, նշված խոչընդոտների պատճառով հաշմանդամություն ունեցող մարդիկ չեն կարողացել իրացնել իրենց ընտրելու իրավունքը:

2019 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ձեռնարկվել են որոշ քայլեր:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների համաձայն՝ Արագածոտնի մարզում ընտրատեղամասերը

<sup>686</sup> ՀՀ ընտրական օրենսգրքում կիրառվող ձևակերպում:

տեղակայված են եղել շենք-շինությունների 1-ին հարկերում: Մինչդեռ, օրինակ, Սյունիքի մարզում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ եղել են միայն Գորայք համայնքում (արտահերթ), ընտրությունների ժամանակ կազմավորվել են 4 տեղամասեր, սակայն դրանք հարմարեցված չեն եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար: 2019 թվականին ՏԻՄ ընտրություններ կայացել են նաև Վայոց Ձորի մարզի մեկ համայնքում (Մալիշկա), որտեղ ձևավորվել են 2 ընտրատեղամասեր, որոնցից և ոչ մեկում տեղամասի մուտքը հարմարեցված չի եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար, անհրաժեշտության դեպքում կիրառվել է փայտից ժամանակավոր թեքահարթակներ:

Բացի այդ, հարկ է նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացումն ապահովելու նպատակով, պետք է ձեռնարկվեն այլ միջոցներ, օրինակ՝ քարոզարշավի ընթացքում հեռուստահաղորդումներում հնչող տեքստին համարժեք ապահովել ժեստերի լեզվով թարգմանություն, դրվեն ենթագրեր, հանձնաժողովի անդամների վերապատրաստման նյութերում և դասընթացներում ներառել հաշմանդամություն ունեցող ընտրողների քվեարկության կազմակերպման վերաբերյալ տեղեկատվություն<sup>687</sup>:

Հարկ է ընդգծել նաև հանրային գործերի կառավարման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության և ըստ այդմ՝ որոշումների կայացման փուլում նրանց ներգրավվածության կարևորությունը: Ուստի, խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու հարցը:

Այս կապակցությամբ, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշել է, որ ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց տվյալներ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում բացակայում են, քանի որ «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին բավարարող անձը կարող է նշանակվել ընտրական հանձնաժողովի անդամ, հաշմանդամության առկայության մասին տեղեկատվության հայցում օրենքը չի նախատեսել, հանձնաժողովի անդամներն էլ կամովին նման տեղեկատվություն չեն ներկայացրել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ ընտրատեղամասերի մատչելիությունն ապահովելու ու հաշմանդամություն ունեցող ընտրողների իրավունքի իրականացման համար բոլորի հետ հավասար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը բավարար չեն հարցին համակարգային լուծում տալու համար:

Ուստի, անհրաժեշտ է՝

1. քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական կյանքին մասնակից դարձնելու, այդ թվում՝ ընտրելու իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ, ներառյալ տեղամասային կենտրոններում ազատորեն տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև այլ օրենսդրական կարգավորումների սահմանման միջոցով,

2. ՀՀ ընտրական օրենսգրքով և հարակից իրավական ակտերով կարգավորել հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների հարցը:

<sup>687</sup> Տե՛ս «ԱԳԱԹ» ՀԿ-ի «Ընտրական տեղամասային կենտրոնների մատչելիության վերաբերյալ» հետազոտությունը, <http://agatengo.org/%D5%B0%D6%80%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/?lang=hy> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

### 13. Հաշմանդամություն ունեցող կանայք

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի, և այս նպատակով միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար նրանց՝ մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից լիակատար և հավասար օգտվելը:

Հաշմանդամություն ունեցող կանայք կրկնակի խոցելի են նախ՝ իրենց սեռի, ապա նաև՝ հաշմանդամության հիմքով: Ըստ այդմ, հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների խնդիրները պետք է ենթարկվեն հատուկ ուսումնասիրության, և ըստ նրանց հատուկ կարիքների՝ անհրաժեշտ է ձեռնարկել առանձնահատուկ քայլեր վերջիններիս իրավունքների իրացման հարցում: Հաշմանդամություն ունեցող կանանց խնդիրների վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կոմիտեն<sup>688</sup>:

Այսպես, հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները տնտեսական անկախության տեսանկյունից ևս խոցելի են. նրանք ոչ միայն դժվարությամբ են աշխատանք գտնում, որպես կանոն, իրենց թոշակներն ու նպաստները իրենք չեն ստանում, դրանք ստանում ու տնօրինում են իրենց ընտանիքի անդամները: Ավելին, հաշմանդամություն ունեցող կանայք ցածր մասնակցային տոկոս են կազմում որոշումների կայացման գործընթացում<sup>689</sup>: «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՇԿ-ի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ վերջիններս չեն ընդունվում աշխատանքի զուտ հաշմանդամության հիմքով, քանի որ հիմնականում սպասարկման ոլորտներում գործատուները չեն ցանկանում աշխատանքի ընդունել անձի, ով ունի ֆիզիկական կամ արտաքին տեսքի հետ կապված խնդիր:

Հաշմանդամություն ունեցող կանայք ենթարկվում են խտրականության հատկապես վերարտադրողական առողջության իրավունքներն իրացնելիս: Այս կապակցությամբ, Կոնվենցիան ամրագրում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք մատչելի կերպով օգտվեն առողջապահական այնպիսի ծառայություններից, նաև՝ առողջության վերականգնողական միջոցներից, որոնք հաշվի են առնում գենդերային առանձնահատկությունները: Մինչդեռ, 2019 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց համար շարունակում են անհասանելի մնալ նաև վերարտադրողական ծառայությունները<sup>690</sup>: Խնդիրն այն է, որ առողջապահական ծառայությունները, անհրաժեշտ սարքավորումները, տեղեկատվական նյութերը և ֆիզիկական միջավայրը մատչելի չեն նրանց համար:

Ավելին, բուժաշխատողները բավարար կերպով իրազեկված չեն հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության իրավունքի իրացման վերաբերյալ:

Շատ հաճախ հաշմանդամություն ունեցող կանայք վերարտադրողական ծառայություններից օգտվում են իրենց հարազատների, իսկ երբեմն՝ անձանոթ մարդկանց օգնությամբ: Մինչդեռ, «Վերարտադրողական առողջության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի

<sup>688</sup>Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական գեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&Lang=en) հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>689</sup> Տե՛ս <https://www.aravot.am/2019/11/02/1075477/>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>690</sup>Նշված խնդիրների մասին մանրամասն ներկայացված է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Մեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» (Հետազոտություն) շրջանակում:

1-ին մասի 5-րդ կետն ամրագրում է յուրաքանչյուրի՝ կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական իրավունքները, այն է՝ ստանալ բժշկական խորհրդատվություն և ծառայություններ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ՝ մեկուսի ու գաղտնի պայմաններում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն նշել է, որ կանանց սեռական և վերարտադրողական իրավունքի պաշտպանության համար անհրաժեշտ է, որ «բոլոր առողջապահական ծառայությունները [...] համապատասխանեն կանանց իրավունքներին, ներառյալ ինքնուրույնության, անձնական կյանքի, գաղտնիության, իրազեկ համաձայնության և ընտրության իրավունքներին»<sup>691</sup>: Անհրաժեշտ պայմանների բացակայության պարագայում հաշմանդամություն ունեցող կանայք չեն կարողանում ինքնուրույն, առանց որևէ մեկի օժանդակության օգտվել օրենքով ամրագրված իրավունքից:

Ավելին, ինդրահարույց է նաև այն, որ Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությամբ և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրով որևէ միջոցառում նախատեսված չէ հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության բարելավման ուղղությամբ:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականին «Հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկություններ» թեման ներառվել է «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» մասնագիտությամբ կլինիկական օրդինատուրայի և կատարելագործման դասընթացների ծրագրում:

2019 թվականին ՀՀ Կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի թիվ N 568-Ն որոշման մեջ կատարված փոփոխության արդյունքում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների, այդ թվում՝ արտամարմնային բեղմնավորման կիրառմամբ բժշկական օգնության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող շահառուների ցանկում ընդգրկվել են նաև այն ամուսնական զույգերը, որոնցում զույգերից մեկի մոտ առկա է հաշմանդամություն, եթե կնոջ մոտ չկա հղիությունը կրելու հակացուցում:

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի շրջանակում նախատեսվում է իրականացնել կանանց առողջապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնագետների համար հաշմանդամություն ունեցող կանանց սեռական և վերարտադրողական իրավունքների պաշտպանությանն ուղղված վերապատրաստման ծրագրեր:

Խնդրի համակարգային բնույթի և հետևաբար, սկզբունքային լուծումների անհրաժեշտության մասին է վկայում նաև ռազմավարական փաստաթղթում հաշմանդամություն ունեցող կանանց լիարժեք սոցիալական ներառման ապահովմանն ուղղված միջոցառման թիրախավորումը: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ այդ ռազմավարությամբ որոշակիացված չեն հաշմանդամություն ունեցող կանանց սոցիալական ներառման ընթացակարգերը՝ գործողությունների փուլային և առարկայական ներկայացմամբ:

<sup>691</sup>Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեների հաշմանդամություն ունեցող կանանց համար սեռական և վերարտադրողական առողջությունը և իրավունքները երաշխավորելու վերաբերյալ համատեղ հայտարարությունը», հասանելի է <http://wwda.org.au/crpd-cedaw-joint-statement-reprorights/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Թերևս սրանով պայմանավորված, Կառավարությունը նշված ռազմավարությունը հավանության արժանացնելով հանդերձ, նախատեսում է սոցիալական ներառման բովանդակությունը կազմող նախատեսվող միջոցառումները քննարկել հաշմանդամություն ունեցող կանանց խմբերի հետ, որպեսզի նախատեսվող քայլերը լինեն ավելի հասցեական:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար կրթության, աշխատանքի, առողջապահական և այլ հիմնարար իրավունքների իրականացումը, այդ թվում՝ օրենսդրական կարգավորումներ նախատեսելու միջոցով,
2. համապատասխան միջոցառումների միջոցով բարձրացնել հասարակության և հաշմանդամություն ունեցող կանանց իրազեկվածությունը վերջիններիս իրավունքների վերաբերյալ,
3. իրականացնել իրազեկման աշխատանքներ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների շրջանում հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ:

#### 14. Հաշմանդամության սահմանման ոլորտում առկա խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր հաշմանդամության սահմանման ոլորտում առկա, մասնավորապես, նույն ախտորոշման դեպքում կենսագործունեության սահմանափակման տարբեր աստիճաններ արձանագրելու, ներկայացված բժշկական փաստաթղթերի բազմակողմանի և լրիվ ուսումնասիրություն, ինչպես նաև փորձաքննության ենթարկվող անձի օբյեկտիվ գննություն չկատարելու վերաբերյալ խնդիրներ: Նշվել է, որ բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները պարունակում են դրույթներ, որոնք հիմք են տալիս հանձնաժողովների անդամներին դրսևորել սուբյեկտիվ մոտեցումներ: Որպես լուծում՝ տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր հաշմանդամության խումբ սահմանելու յուրաքանչյուր դեպքով իրականացնել մարդկանց կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերի բազմակողմանի և լրիվ ուսումնասիրություն, ինչպես նաև փորձաքննության ենթարկվող անձի օբյեկտիվ գննություն<sup>692</sup>:

2019 թվականին ստացված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս չլուծված են մնացել բարձրացված խնդիրները:

Այսպես, ըստ բողոքների՝ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրման ժամանակ բժշկասոցիալական հանձնաժողովը շահառուի նկատմամբ երբեմն ցուցաբերում է անհարգալից վերաբերմունք, հնչեցնում վիրավորական արտահայտություններ շահառուների, ինչպես նաև այն բժշկի հասցեին, ով անձին տևական ժամանակ բուժել է: Արդյունքում, հաշմանդամություն չի սահմանվում, միաժամանակ խորությամբ չեն ուսումնասիրվում բժշկական փաստաթղթերը, իսկ փորձաքննվողը պրակտիկայում հայտնվում է անելանելի վիճակում:

2019 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել հաշմանդամություն չսահմանելու, դրանք բողոքարկելու և արդյունքի չհասնելու, ինչպես նաև բողոքարկելու իրավունքի մասին տեղյակ չլինելու պատճառով փորձաքննական որոշումները բողոքարկելու ժամկետները բաց թողնելու վերաբերյալ բողոքներ:

<sup>692</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 607-613:

Օրինակ քաղաքացին տեղեկացրել է, որ ունի մի շարք հիվանդություններ, մի քանի տարի շարունակ իր նկատմամբ սահմանվել է հաշմանդամության 3-րդ խումբ: Վերջինս մտահոգություն է հայտնել, որ առողջության վատթարացումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ (շաքարային դիաբետ տիպ 1 ծանր ձև, կետոզի հակումով, դիաբետիկ միկրոմակրոանգիոպատիա) մասնակցել է բժշկասոցիալական փորձաքննության, արդյունքում հաշմանդամություն չի սահմանվել: Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի որոշումը բողոքարկել է վարչական կարգով, սակայն արդյունքի չի հասել. «նյութափոխանակության ֆունկցիայի աննշան խանգարումը չի հանգեցրել կենսագործունեության որևէ սահմանափակման, ուստի ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշմամբ հաստատված բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչների համաձայն՝ հաշմանդամություն սահմանելու հիմքեր չկան» հիմնավորմամբ:

Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական ակտի բողոքարկման դեպքում հաճախ կատարվում է վարչական ակտի մակերեսային ուսումնասիրություն և որոշումը մեծ մասամբ մնում է անփոփոխ. չի կատարվում ամբողջական՝ անձի ու փաստաթղթային զննություն:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով էլ քաղաքացիները տեղեկացրել են, որ ունի բազմաթիվ հիվանդություններ, որոնցով էլ պայմանավորված չի կարող աշխատել: Բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամություն չի սահմանվել: Երբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում առաջարկվել է բժշկասոցիալական փորձաքննական որոշումը բողոքարկել վերադասության կարգով, պարզվել է, որ բաց է թողել դրա համար սահմանված երկու ամսյա ժամկետը:

Մարդիկ փորձաքննական որոշումների մասին իրազեկվելիս, փաստացի իրազեկվում են բողոքարկման հնարավորության և ընթացակարգի մասին: Սակայն բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ իրազեկումն արդյունավետ և մատչելի չէ: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ փորձաքննական որոշմանը ծանոթանում են մակերեսորեն, ուշադրություն են դարձնում միայն եզրակացությանը:

Մեկ այլ խնդիր է, երբ մարդիկ հաշմանդամություն չսահմանելու վերաբերյալ բողոքներ են ներկայացնում Մարդու իրավունքների պաշտպանին, ինչի կապակցությամբ հաճախ լիազոր մարմնին առաջարկվում է ուսումնասիրել բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կայացրած որոշումների օրինականությունը և հիմնականում ստացվում է պատասխան, որ «առկա պաթոլոգիայով պայմանավորված աննշան խանգարումը չի հանգեցրել կենսագործունեության որևէ սահմանափակման, ուստի ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշմամբ հաստատված բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչների համաձայն՝ հաշմանդամություն սահմանելու հիմքեր չկան»: Քաղաքացիներին հիմնականում առաջարկվում է բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգի դրույթների համաձայն՝ հաշմանդամության սահմանման նպատակով վերափորձաքննության համար կրկին դիմել բնակության վայրն սպասարկող ԲՄՓ հանձնաժողով՝ միայն առողջական վիճակի վատթարացման դեպքում, այն հավաստող նոր բժշկական փաստաթղթերով (անհրաժեշտ ախտորոշիչ, բուժական և վերականգնողական միջոցառումների իրականացումից հետո):

Այս պարագայում էլ հարցն այն է, որ անձի առողջական վիճակի վատթարացման դեպքում այն հավաստող նոր բժշկական փաստաթղթեր ձեռք բերելը դժվար է, քանի որ այն կապված է ֆինանսական ծախսերի հետ:

2019 թվականին ստացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ շատ քաղաքացիներ, ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով, չնայած իրենց առողջական վիճակի փաստացի վատթարացմանը, նոր բժշկական փաստաթղթեր

չեն կարողանում ձեռք բերել: Նշվածի պատճառով էլ չեն կարող ԲՍՓ հանձնաժողովին դիմել բժշկասոցիալական փորձաքննության նպատակով:

ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1527-Ն որոշման համաձայն՝ փորձաքննությանը քաղաքացին կարող է մասնակից դարձնել նաև իր կողմից ընտրած բուժող բժշկին կամ այլ բժիշկ մասնագետի՝ որպես ներկայացուցիչ, որը նպատակ ունի ապահովելու հաշմանդամության սահմանման գործընթացի թափանցիկությունը: Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելը դեռ չի նշանակում ապահովել թափանցիկություն, քանի որ բժշկի դիտարկումները կրում են ձևական բնույթ: Բացի այդ, բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ իրենց բուժող բժիշկները կամ այլ բժիշկ մասնագետներ հիմնականում հրաժարվում են ներկայանալ բժշկասոցիալական փորձաքննությանը:

Որպես հաշմանդամության սահմանումը թափանցիկ դարձնելու կապակցությամբ արձանագրված զարգացում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացրել է, որ աշխատանքներ են տարվում հաշմանդամություն գնահատման նոր մոդել ներդնելու ուղղությամբ: Նպատակն է բժշկասոցիալական փորձաքննությունից անցնել անձի ֆունկցիոնալության գնահատման մոդելի, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել անձի առողջական խնդիրների, նրա կարողությունների և միջավայրային գործոնների ունեցած ազդեցության համատեքստում և որոշել յուրաքանչյուր անձի անհատական ծառայությունների փաթեթը:

Ըստ Նախարարության՝ նոր մոդելի իրավական հիմքերն ապահովելու նպատակով մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և «Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման» ծրագիրը: Համաձայն օրենքի նախագծի՝ նախատեսվում է բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների փոխարեն ստեղծել ֆունկցիոնալության գնահատման կենտրոններ, որոնք կգործեն ինտեգրված սոցիալական ծառայությունների կազմում:

Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր նաև զինվորական անժամկետ հաշմանդամություն ունեցող մարդկանց հսկողական կարգով վերափորձաքննության ենթարկելը և անժամկետ սահմանված հաշմանդամությունը վերացնելու խնդիրը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դեռ նախորդ տարվա պարզաբանման համաձայն՝ խնդրին լուծում տալու նպատակով մշակվել և ՀՀ կառավարություն և շահագրգիռ գերատեսչություններ էր ներկայացվել ««Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Նախագիծով առաջարկվել էր ուժը կորցրած ճանաչել 2018 թվականի ապրիլի 1-ից մինչև 2018 թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված վերափորձաքննության հետևանքով ընդունված վարչական ակտերը՝ ուժի մեջ թողնելով նախկին որոշումները: Նախագիծը քննարկման է ներկայացված եղել 2018 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2018 թվականի սեպտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում և չի ընդունվել:

Նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ զինվորական պատճառական կապով, անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց հսկողական կարգով վերափորձաքննության արդյունքում կայացված փորձաքննական որոշումների իրավաչափության գնահատման նպատակով 2019 թվականի մարտի 28-ին գրություն է



ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ տրամադրելով համապատասխան նյութեր՝ ԲՄՓ գործերի ուսումնասիրության վերաբերյալ: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատուկ կարևորագույն գործերով քննության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով և 315-րդ հոդվածի 1-մասով հարուցվել է թիվ 90151319 քրեական գործը, կատարվում է նախաքննություն: ՀՀ գլխավոր դատախազությունից և ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատուկ կարևորագույն գործերով քննության վարչությունից եզրակացություն դեռևս չի ստացվել:

Այսպիսով, շարունակում է չլուծված մնալ զինվորական անժամկետ հաշմանդամություն ունեցող մարդկանց հսկողական կարգով վերափորձաքննության ենթարկելու և անժամկետ սահմանված հաշմանդամությունը վերացնելու խնդիրը: Նշվածի հետևանքով վերջիններիս նկատմամբ շարունակում են գործել հաշմանդամություն չսահմանելու մասին փորձաքննական որոշումներ, ինչի պատճառով էլ վերջիններս չեն ստանում զինվորական հաշմանդամության կենսաթոշակ, չեն օգտվում այդ կարգավիճակից բխող օրենսդրությամբ սահմանված այլ արտոնություններից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հաշմանդամություն սահմանելու յուրաքանչյուր դեպքով իրականացնել ներկայացված բժշկական փաստաթղթերի բազմակողմանի և լրիվ ուսումնասիրություն, ինչպես նաև փորձաքննության ենթարկվող անձի օբյեկտիվ գնություն,

2. բժշկասոցիալական փորձաքննական որոշումների բողոքարկման վերաբերյալ ներդնել շահառուներին արդյունավետ իրազեկման մեխանիզմներ,

3. իրականացնել վերահսկողություն բժշկասոցիալական հանձնաժողովների անդամների պատշաճ վերաբերմունքը շահառուների, ինչպես նաև բժիշկների նկատմամբ ապահովելու նպատակով,

4. միջոցներ ձեռնարկել մարդկանց կասեցված զինվորական անժամկետ հաշմանդամության խնդիրը լուծելու նպատակով:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է տարեցների արժանապատիվ ապրելու իրավունքը: Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք: Մարդու իրավունքների միջազգային սկզբունքները պահանջում են լիարժեք երաշխավորել տարեցների իրավունքները, ապահովել նրանց առողջ, լիարժեք և արժանավայել կյանքը:

Տարեցների սոցիալական և առողջական հիմնախնդիրների լուծումը, նրանց իրավունքների իրացումը հիմնականում ապահովվում է սոցիալական պաշտպանության հաստատությունների միջոցով: Ընթացիկ տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմը չհայտարարված այցեր է իրականացրել տարեց անձանց խնամքի և պաշտպանությամբ զբաղվող պետական և ոչ պետական հաստատություններ: Մշտադիտարկման արդյունքում վեր են հանվել ինչպես անհատական բնույթի, այնպես էլ համակարգային խնդիրներ:

2019 թվականի ընթացքում տարեցների իրավունքների պաշտպանության ոլորտում որոշ հարցեր ստացել են դրական լուծում: Տարեցների իրավունքներին վերաբերող օրենսդրական և գործնական խնդիրներին առնչվող հարցերով ընթացիկ տարվա ընթացքում կազմակերպվել են կլոր-սեղան քննարկումներ և աշխատաժողովներ, որոնց մասնակցել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները: Աշխատաժողովների ընթացքում ուսումնասիրվել է նաև տարեցների իրավունքների պաշտպանության ոլորտում այլ երկրների փորձը:

Չնայած դրական որոշակի տեղաշարժին՝ ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ օրենսդրական և գործնական խնդիրներ: Խնդիրները վերաբերում են տուն-ինտերնատների, խնամքի տների և ամոքիչ (պալեատիվ) ծառայությունների համար անհրաժեշտ միջոցների անբավարարությանը, տարեցների հասարակությունից մեկուսացմանը, զբաղվածությանը, առողջապահական ծառայություններից օգտվելու անմատչելիությանը, կենսամակարդակի ապահովմանն, աշխատանքում տարիքային խտրականության, խնամքի հարցում աջակցության, տարեցների նկատմամբ բռնություն գործադրելու և այլ հարցերի:

### 1. «Տարեց» ամբողջական հասկացության բացակայությունը

Դեռ 2018 թվականի տարեկան հաղորդմամբ ու այլ հրապարակային հաղորդումներում Պաշտպանը նշել է, որ օրենսդրական թերի կարգավորումները, որոշակի դեպքերում նաև դրանց բացակայությունը խոչընդոտներ են առաջացնում իրավունքների պաշտպանության հարցում:

Այսպես, շարունակում է չլուծված մնալ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացված հարցն այն մասին, որ ՀՀ օրենսդրությունում «տարեց» հասկացությունը հստակ բացահայտված չէ: Խնդիրն այն է, որ ՀՀ օրենսդրությամբ հստակ չէ՝ տարիքային որ խմբին պատկանող անձը կարող է համարվել տարեց:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը օգտագործում է «տարեց» եզրույթը: Մասնավորապես, որպես օրենքի իմաստով տարեց է համարվում է 65 տարեկան և բարձր տարիք ունեցող անձը: Կենսաթոշակային ոլորտում պետության քաղաքականության շրջանակներում տարիքային աշխատանքային կենսաթոշակի անցնելու տարիք է սահմանված 63-ը, այդ տարիքից անձը համարվում է կենսաթոշակառու կամ տարեց: Մինչդեռ, 63-65 տարեկան անձինք զրկվում են տարեցներին մատուցվող խնամքի և սոցիալական աջակցության ծառայություններից օգտվելու հնարավորությունից (օրինակ՝ վերականգնողական օգնություն, կացարանով ապահովելը, խնամքի ծառայություններ տնային պայմաններում):

Խնամքի ծառայությունների տրամադրման համար որոշիչ նշանակություն ունի անձի տարիքը: Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության մեջ դեռևս հստակեցված չէ, թե տարիքային որ խմբին պատկանող անձինք են համարվում տարեց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակեցնել, թե տարիքային որ խմբին պատկանող անձը կարող է համարվել տարեց:

## 2. Տարեցների սոցիալական ապահովության խնդիր

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի իրականացրած բնակչության թվաքանակի կանխատեսումների համաձայն՝ մինչև 2050 թվականը Հայաստանում 63 տարեկանից բարձր անձանց քանակը կկազմի մոտ 22 տոկոս:

2019 թվականին կյանքի սպասվելիք միջին տևողությունը Հայաստանում 75,4 տարի է (կանանց համար՝ 78,7, տղամարդկանց համար՝ 71,9): Կյանքի միջին սպասվող տևողության աշխարհի միջին ցուցանիշը 72 է: Այսինքն, Հայաստանի Հանրապետությունը դասվում է ծերացող երկրների շարքին: Հայաստանում բնակվող աղքատների ընդհանուր թվի մեջ ամենաբարձրը տարեցների տոկոսաբաժինն է (13,8%): Այսինքն, խոցելիության տեսանկյունից աղքատության առավել բարձր ռիսկի առաջ կանգնած են տարեցները: Աղքատությունն ազդում է տարեցների սոցիալ-տնտեսական վիճակի վրա, ազդում է նաև նրանց առողջական վիճակի, հասարակությունում ինտեգրվելու վրա:

Քանի որ տարեցների շրջանում աղքատության պատճառները հիմնականում կապված են սոցիալական գործոնների հետ, աղքատության նվազեցմանն ուղղված պետության քաղաքականությունը պետք է առաջնահերթ ուղղված լինի նրանց սոցիալական պաշտպանությանը:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում տարեցների սոցիալական պաշտպանությունը նույնացվում է նրանց մատուցվող խնամքի և սոցիալական այլ ծառայությունների հետ: Սակայն սոցիալական ծառայությունների գործող համակարգը չի կարող ամբողջովին հոգալ տարեցների հոգեբանական, իրավական, առողջական, բնակարանային կարիքները:

Տարեցների մեծամասնությունը բախվում է խնդիրների այն պատճառով, որ շատ դեպքերում առկա չեն ծառայություններ կամ հաճախ նրանց համար դրանք հասանելի չեն կամ ունեն սահմանափակ հասանելիություն: Սրանից բացի, տարեցների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը պահանջում է, որպեսզի հստակ իրավական ամրագրում ունենան նրանց համար մատչելի իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետությունը պարտավոր է ստեղծել արժանապատիվ կյանքի պայմաններ յուրաքանչյուր տարեց մարդու համար:

Պաշտպանին հասցեագրվող բողոքները և մշտադիտարկումները ցույց են տալիս, որ տարեցները Հայաստանում սոցիալական ապահովության ոլորտում բախվում են սոցիալական արդարության այնպիսի խնդրի, որն անմիջականորեն կապված է կենսաթոշակի և նպաստի չափի հետ:

Կենսաթոշակատուներն իրենց արդարացի դժգոհությունն են հայտնում, որ կենսաթոշակը և սոցիալական նպաստները չեն ապահովում կենսաթոշակատուի անգամ նվազագույն գոյամիջոցներն ու այդպիսով նաև՝ նրանց արժանապատիվ ծերությունը:

Խնդիրն այն է, որ առկա է անհամարժեքություն վճարվող կենսաթոշակի չափի և կենսաթոշակային համակարգի ֆինանսավորմանը մարդկանց մասնակցության չափի միջև: Կենսաթոշակի չափը կախված է կենսաթոշակատուի աշխատանքային ստաժից:

Աշխատանքային գործունեության համար վարձատրությունը փոքր արտահայտություն է ստանում կենսաթոշակի չափի մեջ: Սրան գումարվում է նաև այն, որ կենսաթոշակային համակարգի նկատմամբ վստահությունը ցածր է:

Պետք է նշել, որ սոցիալական նպաստների և կենսաթոշակների չափի ավելացման տեսանկյունից արձանագրվել է որոշակի առաջընթաց:

ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 472-Ն որոշումը: Նույն որոշմամբ սահմանվել է նվազագույն կենսաթոշակ հասկացությունը, սահմանվել է նվազագույն կենսաթոշակի չափ՝ 25500 ՀՀ դրամ: ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության շրջանակներում 2019 թվականի հունվարի 1-ից բարձրացվել են նաև ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում տրվող նպաստների չափերը և սահմանվել 25500 դրամի չափով:

Այնուհետև, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն և 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1920-Ն որոշմամբ հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի չափը բարձրացնելուն համամասնորեն 2020 թվականի հունվարի 1-ից կենսաթոշակներն ավելացել են միջինում 10 տոկոսով, նվազագույն կենսաթոշակի չափը սահմանվել է 26500 դրամ 25500 դրամի փոխարեն:

Անդրադառնալով այս դրական փոփոխություններին՝ պետք է նշել, որ մարդու համար արժանապատիվ կյանքի ապահովման խնդիրը հնարավոր չէ լուծել մեկանգամյա ակտով, ուստի այդ խնդրի լուծմանն ուղղված բոլոր քայլերը պետք է լինեն շարունակական և համապատասխան կոնկրետ ժամանակահատվածի պահանջներին:

Տարեցների իրավունքների պաշտպանությունը, նրանց համար սոցիալական ու այլ երաշխիքների հարցն ունի նաև միջազգային ամրագրում: Դա հետևում է նաև Հայաստանի միջազգային պարտավորություններից: Օրինակ՝ այդ ոլորտի չափանիշներ է ընդունել Եվրոպայի խորհուրդը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային:

Սոցիալական խարտիայի 23-րդ հոդվածում ամրագրված է, որ անդամ պետությունները պարտավորվում են ապահովել, որպեսզի տարեց անձինք հնարավորինս երկար մնան որպես հասարակության լիարժեք անդամներ, ազատորեն ընտրեն իրենց ապրելակերպը, ունենան ազատ կյանք իրենց նախընտրած միջավայրում՝ ինչպես նրանք ցանկանում են և կարող են, երաշխավորելու տարեցների համար նախատեսված հաստատություններում համապատասխան աջակցություն՝ հարգելով նրանց ազատությունն ու մասնակցությունը հաստատություններում նրանց կենսապայմանների վերաբերյալ որոշումների ընդունմանը<sup>693</sup>: Հայաստանը 2004 թվականին վավերացրել է 1996թ. Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիան, բայց չի վավերացրել խարտիայի 23-րդ հոդվածը ու չի ստանձնել դրանով նախատեսված՝ տարեց անձանց սոցիալական ապահովությանն առնչվող պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. շարունակաբար բարձրացնել կենսաթոշակների և տարեցներին վճարվող նպաստների չափերը՝ ապահովելու տարեցի արժանապատիվ գոյության իրավունքը,

<sup>693</sup> Տե՛ս Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա (Council of Europe, European Social Charter (Revised), Մաս 2, հոդված 23:

2. վավերացնել Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի՝ տարեց անձանց իրավունքների սոցիալական պաշտպանության մասին 23-րդ հոդվածը:

3. Օրենսդրական խնդիրներ տարեցների խնամք իրականացնող հաստատություններ տեղավորվելու հետ կապված

Հասարակության տարեց և (կամ) սոցիալապես անապահով անձանց տրամադրվող խնամքի հարցում պետության սոցիալական աջակցությունը ներառում է սոցիալական ծառայությունների ամբողջություն, որոնք իրականացվում են սոցիալական տարբեր հաստատությունների միջոցով: Սոցիալական ծառայություններն առաջին հերթին շուրջօրյա խնամքի ծառայություններ են, որոնք մատուցում են բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունները (տուն-ինտերնատները):

Անկախ սոցիալական պաշտպանության հաստատություններում տարեցների խնամքի արդյունավետությունից՝ նրանց այդ հաստատություններ տեղավորվելու, այնտեղ բնակվելու հետ կապված առկա են որոշակի օրենսդրական խնդիրներ:

Այսպես, 2019 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են ՀՀ օրենսդրությամբ սահմանափակումների և այլընտրանքային եղանակների բացակայության պատճառով ՄԻԱՎ վարակակիր և (կամ) տուբերկուլյոզ հիվանդություն ունեցող, անօթևան, միայնակ տարեց անձանց խնամքը շուրջօրյա խնամքի հաստատությունում կազմակերպելու անհնարինությանը:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ մարդը միայնակ ու անօթևան տարեց է: Վերջինս նաև ՄԻԱՎ վարակակիր է և ունի տուբերկուլյոզ հիվանդություն: Տուբերկուլյոզը, քաղաքացու պնդմամբ, մանրէազատ չէ, այն վտանգ չի ներկայացնում շրջապատի համար, ինչը հաշվի առնելով էլ բժշկական կենտրոնն ավարտել է նրա նկատմամբ դիսպանսերային հսկողությունը: Տարեցների խնամքն իրականացնող պետական և հասարակական կազմակերպությունները հրաժարվում են ընդունել վերջինիս և իրականացնել նրա խնամքը՝ պայմանավորված նշյալ հիվանդություններն ունենալու հետ:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված են հիվանդություններ, որոնց առկայությունը հիմք է տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքն իրականացնող կազմակերպություններում այդպիսի հիվանդություններ ունեցող մարդկանց խնամքն իրականացնելը մերժելու համար:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշմանը: Որոշման թիվ 3 հավելվածի ցանկում ընդգրկված հիվանդություններն են՝ հոգեկան խանգարումները՝ բացառությամբ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն ընդունվելու դեպքերի, քրոնիկ ալկոհոլաբուլությունը կամ թմրամոլությունը, մաշկային վարակիչ հիվանդությունները, սեռավարակները, օնկոլոգիական հիվանդությունները՝ դեկոմպենսացիայի շրջանում՝ բացառությամբ հոսպիտալին օգնության տրամադրման դեպքերի, շրջապատի համար վտանգ ներկայացնող վարակիչ հիվանդությունները, մանրէազատ տուբերկուլյոզը: Կառավարության մեկ այլ՝ 2001 թվականի դեկտեմբերի 27-ի «Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների

ցանկը հաստատելու մասին» N 1286-Ն որոշմամբ էլ հաստատված է շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը: Ցանկում ընդգրկված են նաև ՄԻԱՎ վարակը և տուբերկուլյոզը (բոլոր ձևերը):

Այսպիսով, գործող կարգավորումներով նշված հիվանդությունների առկայությունը հնարավորություն չի տալիս մարդկանց խնամքը կազմակերպել մյուսների հետ հավասար հիմունքներով: Ավելին, նշված հիվանդություններն ունեցող մարդկանց խնամքն իրականացնող այլ՝ այլընտրանքային հաստատություններ մեր երկրում առկա չեն:

Խնդրահարույց է, թե ինչպես պետք է ապահովվի քննարկվող իրավիճակում հայտնված (հայտնվող) անձանց խնամքը և դրա տրամադրումը ՀՀ օրենսդրությամբ առկա սահմանափակումների և այլընտրանքային եղանակների բացակայության պարագայում:

Խնդրի լուծման նպատակով Պաշտպանն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առաջարկել է վերանայել 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշմամբ սահմանված՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քննարկել վերը նշված հիվանդություններն ունեցող անձանց խնամքը կազմակերպելու նպատակով այլընտրանքային խնամքի հաստատություններ և (կամ) ներկայիս խնամքի հաստատություններում հատուկ տարածքներ առանձնացնելու հնարավորությունը՝ հաշվի առնելով նման կարգավիճակ ունեցող անձանց կարիքներն ու հասարակության մեջ ինտեգրվելու անհրաժեշտությունը:

Առկա խնդիրների լուծման նպատակով 2020 թվականին շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Հարկ է նկատել, որ Նախագծում չկա անդրադարձ Որոշմամբ նախատեսված՝ խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկին:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի իմաստով խնամքը պետք է իրականացվի խնամքի կարիք ունեցող տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող մարկանց բոլորի նկատմամբ հավասարապես, մինչդեռ, շատերը չեն կարողանում օգտվել խնամքի որոշակի ծառայություններից օրենսդրությամբ վերը նշված սահմանափակմամբ պայմանավորված: Արդյունքում խնամքի կարիք ունեցող անձանց նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում:

Ըստ այդմ, հարցն անհրաժեշտ է առաջին հերթին դիտարկել տարբերակված մոտեցման և խտրականության տեսանկյունից:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունն ընդհանուր առմամբ ցույց է տալիս, որ վերը նշված հիվանդություններն ունեցող անձանց խնամքի տրամադրումը պետության կողմից երաշխավորված խնամքի հաստատություններում կազմակերպելու կապակցությամբ սահմանափակումներ նախատեսված չեն: Ավելին, ՄԻԱՎ վարակակիր անձանց խնամք չտրամադրելն ըստ միջազգային չափորոշիչների՝ համարվում է խտրականություն<sup>694</sup>:

2019 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են ՀՀ օրենսդրությամբ սահմանափակումների պատճառով աշխատող տարեց անձանց՝ աշխատելու հանգամանքով պայմանավորված բնակչության սոցիալական հաստատությունում խնամքի տրամադրումը մերժելուն:

<sup>694</sup> Հասանելի <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC1490199/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2019 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի համաձայն՝ դիմողը տարեցների շուրջօրյա խնամքն իրականացնող հաստատություններից մեկի շահառու է, միաժամանակ աշխատում է մասնավոր կազմակերպությունում: Վերջինս նշված աշխատանքով ապահովում է իր զբաղվածությունը: Ըստ դիմողի՝ իրեն տեղեկացրել են, որ կհեռացվի հաստատությունից, եթե շարունակի աշխատել:

Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում խնամքն աշխատող տարեցներին չտրամադրելու վերաբերյալ սահմանափակումը նույնպես նախատեսված է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ: Այսպես, Որոշման 6-րդ գլխի 41-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց, միայնակ, չաշխատող կենսաթոշակառուներին»:

Հարկ է նկատել, որ Պաշտպանը նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ ի թիվս այլ հարցերի՝ բարձրացրել է նաև տարեցների զբաղվածության կարևորության հարցը: Աշխատելու հարցում վերը նշված որոշմամբ առկա սահմանափակումը խնդրահարույց է նաև տարեցների զբաղվածության ապահովման տեսանկյունից:

Այս կապակցությամբ հատկանշական է այն, որ Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների զբաղվածության ռազմավարության նախագծով նշվում է, որ ըստ վիճակագրության՝ ի տարբերություն երիտասարդների, տարեցների (50 և ավելի տարիքի անձինք) տեսակարար կշիռը գործազուրկների թվաքանակում աճել է՝ 2013 թվականի 33.9%-ից 2017 թվականին դառնալով 40.1%:

Բարձրացված խնդրի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ Կառավարությունը որդեգրել է ծառայությունների ապահովման ստիպույթն ալացման քաղաքականություն՝ նախատեսելով շուրջօրյա խնամքի մեծ հաստատությունները փոխարինել այլընտրանքային ծառայություններով, մասնավորապես՝ համայնքային փոքր տներով (8-10 անձի համար): Նշվածի շրջանակներում նախատեսվում է ներդնել նոր ծրագիր՝ պահպանված ինքնասպասարկման ունակություններ ունեցող և աշխատող, կացարանի կարիք ունեցող տարեց անձանց համար պետական աջակցությամբ վարձակալել բնակարաններ, ինչը հնարավորություն կընձեռնի նրանց ինքնուրույն և լիարժեք կյանք վարել:

Միաժամանակ, 2020 թվականին շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, առաջարկվող փոփոխություններով վերը նշված խնդրահարույց դրույթը նախատեսվում է հանել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1.վերանայել ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման թիվ 3 հավելվածի հիվանդությունների ցանկը՝ ապահովելու համար ՄԻԱՎ վարակակիր և (կամ) տուբերկուլյոզ հիվանդություն ունեցող մարդկանց խնամքի իրականացումը,

2.հնարավոր սեղմ ժամկետներում ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ նախատեսող, աշխատելու հնարավորությունը սահմանափակող դրույթ չպարունակող իրավական ակտ:

#### 4. Մշտադիտարկման այցեր տարեցների խնամք իրականացնող հաստատություններ

Պետության իրականացրած սոցիալական աջակցությունը սոցիալական տարատեսակ ծառայությունների ամբողջություն է՝ ներառելով նաև հասարակության խոցելի, կարիքավոր, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող խնամքը, սննդի կազմակերպումը, բժշկական, իրավական, սոցիալ-հոգեբանական աջակցությունը, ժամանցի կազմակերպումը, որոնք իրականացվում են սոցիալական տարբեր հաստատությունների միջոցով: Այդ ծառայությունները պետք է բխեն բնակչության պահանջունքներից և պետք է հիմնված լինեն կարիքների գնահատման վրա: Սոցիալական ծառայությունների հավասար հասանելիությունը և միատեսակ որակի ապահովումը մնում են կարևոր և առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետության համար:

2019 թվականին ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ծառայությունների ապահինստիտուցիոնալացման և այլընտրանքային ծառայությունների ներդրման գործընթաց: Գործընթացը ենթադրում է, որ աստիճանաբար պետք է լուծարվեն կամ վերակազմակերպվեն շուրջօրյա խնամքի հաստատությունները, իսկ խնամքի կարիք ունեցող անձինք իրենց՝ գնահատված անհատական կարիքներին համապատասխան ծառայությունները պետք է ստանան ընտանիքներում, փոքր տներում կամ համայնքային այլ ծառայություններում: Գործընթացի իրականացումն ապահովելու նպատակով 2019 թվականին մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների ապահինստիտուցիոնալացման և այլընտրանքային համայնքային ծառայությունների ներդրման ու զարգացման ռազմավարությունը և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների 2020-2024 թվականների պլան-ժամանակացույցը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 20 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Անհրաժեշտ է ապահովել գործընթացի ճիշտ և համակարգված կազմակերպումը: Շատ կարևոր է ապահովել տարեցների այլընտրանքային ծառայությունների համակարգի լիարժեք ներդրմանն ուղղված միջոցառումների շարունակականությունն ու հետևողականությունը, որպեսզի համապատասխան ծառայությունները հասանելի լինեն բոլոր տարեցների համար, ովքեր ունեն դրանց կարիքը:

Հարկ է նկատել, որ չնայած Կառավարությունն արդեն իսկ սկսել է ծառայությունների ապահինստիտուցիոնալացման և այլընտրանքային ծառայությունների ներդրման գործընթացը, սակայն տարեցներին սպասարկող հիմնական ծառայությունները դեռ մնում են շուրջօրյա խնամքի հաստատությունները: Ինչպես արդեն նշվեց, 2019 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևորագույն ուղղություններից է եղել տարեց անձանց խնամքի և պաշտպանությամբ զբաղվող պետական և ոչ պետական հաստատությունների մշտադիտարկումը: 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» և «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի անօթևանների ժամանակավոր կացարան: Կացարան կատարած այցին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի «Մշտադիտարկման այց անօթևանների կացարան» վերտառությամբ բաժնում:

##### 4.1 Տարեցների բնակության պայմանները տուն-ինտերնատներում

2018 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը բարձրացրել էր տուն-ինտերնատներում շենքային և ենթակառուցվածքների բավարար պայմաններ չունենալու



հարցը: Մշտադիտարկման այցերի ընթացքում ուսումնասիրված տուն-ինտերնատներում արձանագրվել էին պահման պայմանների հետ կապված մի շարք խնդիրներ: Խնդիրները վերաբերել են շենքերի ֆիզիկական մատչելիությանը, վերանորոգված չլինելուն, պատշաճ չջեռուցելուն, տաք ջրի բացակայությանը, լոգարանների և սանհանգույցների սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններին<sup>695</sup>:

Նշված խնդիրներն արձանագրվել են նաև 2019 թվականին «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ կատարված այցի շրջանակներում:

Մասնավորապես, 2019 թվականին «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ կատարված այցի շրջանակներում արձանագրվել է, որ հաստատության հիմնական մասնաշենքը գրեթե ամբողջությամբ ունի հիմնանորոգման կարիք (միջանցքների մանրահատակը տեղ-տեղ քանդված է, պատերի ծեփամածիկը՝ թափված), բացառությամբ հիմնական մասնաշենքի մի մասի, որը վերանորոգվել է 2014 թվականին: Արձանագրվել է նաև ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիր: Բացի դրանից՝ հաստատության շահառուները բարձրացրել են ցուրտ օրերին հաստատությունը պատշաճ չջեռուցելու հարցը: «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի հիմնական մասնաշենքի ննջասենյակներում լոգարանները և սանհանգույցները գտնվել են սանիտարահիգիենիկ անբավարար վիճակում, դրանք ունեն վերանորոգման խիստ կարիք: Պատերը եղել են կեղտոտ, լոգարաններում առկա են եղել աղբի մնացորդներ, օդափոխության համակարգը բացակայել է: Հիմնական մասնաշենքի ննջասենյակների լոգարաններում բացակայել է տաք ջուրը:

Տուն-ինտերնատների շենքային պայմանները պետք է լինեն այնպիսին, որպեսզի ապահովվեն նրանցում բնակվող տարեցների կարիքներն ու բարեկեցությունը և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական տեսանկյունից:

Տուն-ինտերնատների շենքային պայմաններին վերաբերելի դրույթներ պարունակում է ինչպես ազգային օրենսդրությունը, այնպես էլ միջազգային փաստաթղթերը:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 730-Ն որոշմամբ հաստատված ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատի գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի նվազագույն չափորոշիչների համաձայն՝ շենքի ներքին կառուցվածքը պետք է հնարավորություն ընձեռի սայլակներով հաշմանդամների ազատ տեղաշարժմանը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանված է, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովվեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում:

Հաշվի առնելով նշվածը՝ այցի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված խնդիրների հիման վրա Պաշտպանն առաջարկել է «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում՝

1. իրականացնել անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ, այդ թվում վերանորոգել հաստատության հիմնական մասնաշենքի միջանցքների մանրահատակը,

<sup>695</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 684-687:

2. շենքային պայմաններն ամբողջական հարմարեցնել հենաշարժողական խնդիրներ ունեցող տարեցների համար,

3. ապահովել օդային և ջերմային ռեժիմի պատշաճ պահպանումը՝ հաշվի առնելով տվյալ տարվա բնակլիմայական պայմանները, ուժեղացնել վերահսկողությունը հաստատությունների պատշաճ ջեռուցման հետ կապված խնդիրների բացահայտման ուղղությամբ, ցուրտ օրերի ընթացքում ապահովել պատշաճ ջերմային ռեժիմ,

4. հիմնական մասնաշենքի ննջասենյակների լոգարաններն ապահովել տաք ջրով:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է տուն-ինտերնատներում արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնած քայլերը՝ շարունակելով տարեցների իրավունքների ապահովումը պահել ուշադրության կենտրոնում և ձեռնարկել հետևողական քայլեր արձանագրված խնդիրների լուծմանը նպաստելու ուղղությամբ: Այս նպատակով 2019 թվականի ընթացքում ուշադրություն է դարձվել նաև նախորդ տարիներին մշտադիտարկման շրջանակներում արձանագրված խնդիրներին, դրանց զարգացման միտումներին և վերացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքին:

Այսպես, ըստ Նախարարության և տուն-ինտերնատների ներկայացրած պարզաբանումների՝ 2019 թվականի ընթացքում լուծվել են տուն-ինտերնատներում շահառուների պահման պայմանների առնչությամբ արձանագրված հետևյալ խնդիրները՝

1.«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում իրականացվել են կաթսայատան տանիքի և 2-րդ, 3-րդ մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ, շենքերի մուտքերը և շենքերում տեղաշարժվելու համար այլ վայրերն ապահովվել են թեքահարթակներով, իսկ հարկից հարկ տեղաշարժվելու համար բոլոր մասնաշենքերն ապահովվել են վերելակներով: Հիմնանորոգվել է անկողնային խնամքի կարիք ունեցող 35 անձի համար նախատեսված առանձնացված բաժանմունքը:

2.«Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում բարեկարգվել և տաք ջրով ապահովվել են խոհանոցը, ճաշարանը, լոգարանները, ինչպես նաև վարչական մասը՝ աշխատակիցների աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով, սակայն բնակիչների սենյակները դեռևս ապահովված չեն տաք ջրով:

3. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում իրականացվել են 2-րդ մասնաշենքի 2-րդ հարկի նախասրահի վերանորոգման աշխատանքներ, որը ծառայում է որպես շահառուների հանգստի և զբաղմունքի տարածք: Այն կահավորված է շահառուների նարդու, շախմատի, շաշկու խմբակների պարապմունքների, մրցաշարերի կազմակերպման նպատակով, ինչպես նաև տեղակայված է հեռուստացույց:

4.«Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում հիմնանորոգվել է հիմնական մասնաշենքի բեռնատար վերելակը, ինչի արդյունքում հաշմանդամություն և (կամ) հենաշարժողական խնդիրներ ունեցող խնամվողները հնարավորություն են ստացել ազատ տեղաշարժման: Կազմակերպության հիմնական մասնաշենքի տարածքում կառուցվել է ևս մեկ թեքահարթակ:

5.Երևանի N1 տուն-ինտերնատում կառուցվել են խաղասենյակներ, որտեղ տեղադրվել են ինտելեկտուալ սեղանի խաղեր (շախմատ, լոտո, նարդի), թենիսի սեղան: Վերանորոգվել և բարեկարգվել են տուն-ինտերնատների հանգստի և զբաղվածության սենյակները, ապահովվել են նաև որոշակի գույքով:

6. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում վերանորոգվել են առաջին հարկի երկու լոգասենյակ, իսկ մյուսները նախատեսվել է վերանորոգել 2020 թվականին: Մանհանգույցներում և լոգարաններում սահելուց խուսափելու նպատակով պատերին տեղադրվել են համապատասխան օժանդակ հարմարանքներ:

2019 թվականի ընթացքում շարունակում են չլուծված մնալ հետևյալ խնդիրները՝

1. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամն ապահովված չէ թեքահարթակներով և վերելակներով,
2. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում առկա է խնամյալների անձնական տարածքների ապահովման խնդիր (խնամյալների անձնական իրերի համար նախատեսված զգեստապահարանները և կողապահարանները չունեն կողպելու հնարավորություն),
3. «Երևանի N1 տուն-ինտերնատ»-ի, Երևանի Նորքի տուն-ինտերնատի և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի բոլոր սենյակներն ապահովված չեն տաք ջրով:

#### 4.2 Տարեցների անձնական խնամքը տուն-ինտերնատներում

Դեռ 2018 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը նշել է, որ անձնական խնամքը մասնավոր կյանքի գաղտնիության մի մասն է, որը ներառում է անձին որպես անհատականություն ու արժանապատվությունը հարգելը: Ուստի, շատ կարևոր է, որ տուն-ինտերնատները հաշվի առնեն այն և խնամքը տրամադրեն այնպես, որ հարգվեն բնակիչների ֆիզիկական և բարոյական իրավունքները<sup>696</sup>:

Ինչպես նախորդ տարիներին տուն-ինտերնատներ իրականացված մշտադիտարկման այցերի ընթացքում, այնպես էլ 2019 թվականին «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ իրականացված այցի ընթացքում արձանագրվել են խնամյալներին տրամադրվող խնամքի ծավալի անբավարար լինելու հետ կապված խնդիրներ: Խնդիրները վերաբերել են անձնական հիգիենայի պարագաների սահմանափակ լինելուն կամ դրանց բացակայությանը, խնամյալների անձնական խնամքի կազմակերպմանը, լոգանքի ոչ պատշաճ կազմակերպմանը:

ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 1112-Ն որոշման թիվ 1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ կենցաղային սպասարկումը մեջ ներառում է նաև լոգանքի կազմակերպումը, ընդ որում, ինքնասպասարկման ունակության մասնակի կորստի դեպքում՝ խնամվողին լողանալիս օգնության ցուցաբերում, իսկ ինքնասպասարկման ունակության լրիվ կորստի դեպքում՝ խնամվողին լողացնելը:

Այսպես, ըստ Նախարարությունից և տուն-ինտերնատներից հայտնած տեղեկությունների՝

1. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում խնամյալները լոգանքից օգտվում են շաբաթական մեկ անգամ պարտադիր: Նաև կա առանձնացված լոգարան, որից խնամյալները կարող են օգտվել ցանկացած ժամանակ,
2. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում բոլոր խնամյալներն ապահովվել են անհատական խնամքի պարագաներով,
3. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ն ունի երեք լոգասենյակ, որոնցից յուրաքանչյուրի պատին փակցվել է խնամյալների՝ ըստ հերթականության լոգանք ընդունելու գրաֆիկը,
4. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ն իրականացնում է անձնական հիգիենայի պարագաների խնամյալներին լիարժեք բաշխում:

Այսպիսով, պետք է նշել, որ տուն-ինտերնատները պետք է ապահովվեն արական սեռի խնամյալ աշխատակիցներով՝ տղամարդ խնամյալների անձնական խնամքն իրականացնելու նպատակով:

<sup>696</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 687-689:

#### 4.3 Տարեցների սնունդը, բժշկական օգնությունն ու սպասարկումը տուն-ինտերնատներում

Տուն-ինտերնատներում բնակվող տարեցների նորմալ կենսագործունեության համար շատ կարևոր է անհրաժեշտ և բավարար սննդով ապահովելու, ինչպես նաև խնամյալների բժշկական սպասարկման պատշաճ տրամադրումը:

Նախորդ տարիներին և 2019 թվականին տուն-ինտերնատներ կատարած այցերի ընթացքում արձանագրվել են սննդի և բժշկական սպասարկման պատշաճ ապահովման խնդիրներ: Խնդիրները վերաբերել են խոհանոցի սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններին, տրամադրվող սննդի միատեսակ, կրկնվող լինելուն, որի վերաբերյալ դժգոհություն են հայտնել խնամյալները, դիետիկ սնունդ չպատրաստելուն, տուն-ինտերնատներում իրականացվող ճաշացանկի կազմման գործընթացին խնամյալների մասնակցությունը չապահովելուն, ճաշատեսակների նմուշառում չիրականացնելուն, ժամկետանց դեղորայքին:

Մասնավորապես, 2019 թվականին «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ իրականացված այցի ընթացքում արձանագրվել է, որ խոհանոցում առկա են սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ: Արձանագրվել է նաև օդափոխման համակարգի խնդիր, քանի որ սարքը չի աշխատել: Պարզվել է նաև, որ չի ապահովվում խնամյալների մասնակցությունը ճաշացանկի ընտրության հարցում, խոհանոցում ընդհանրապես առկա չի եղել և չի վարվել որևէ մատյան, արձանագրվել է նաև դեղորայքի ոչ բավարար լինելու խնդիր: Արձանագրված խնդիրների հիման վրա արվել են համապատասխան առաջարկներ:

Այսպես, ըստ Նախարարության և տուն-ինտերնատների ներկայացրած պարզաբանումների՝ 2019 թվականի ընթացքում տուն-ինտերնատներում լուծվել են սննդի և բժշկական սպասարկման պատշաճ ապահովման հետ կապված հետևյալ խնդիրները՝

1. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում վերանորոգվել է խոհանոցի օդափոխության համակարգը, ինչպես նաև կառուցվել են հատուկ պահարաններ հացի պահպանման համար,

2. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում և «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում իրականացվում է ճաշատեսակների նմուշառում, պահպանվող նմուշների տարաների վրա մակնշվում է պատրաստի սնունդը վերցնելու օրը, ամիսը, տարին և ժամը: Պատրաստված սննդի նմուշը պահվում է 48 ժամ,

3. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում և «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում խնամյալները մասնակցում են ճաշացանկերի կազմման աշխատանքներին,

4. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ն իրականացնում է դեղորայքի գնման գործընթաց:

Այսպիսով, պետք է նշել, որ «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի խոհանոցում համապատասխան մատյաններ չեն վարվում:

#### 4.4 Մշակութային կյանքին մասնակցությունը, զբաղվածությունը, կապն արտաքին աշխարհի հետ, ինչպես նաև բողոք ներկայացնելու իրավունքը

2018 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը կարևորել է տարեցների ներգրավվածությունը մշակութային կյանքին և նրանց զբաղվածությունը: Դա կարևոր է տարեցների հոգեվիճակի և լքված չզգալու համար: Շատ կարևոր է նաև տուն-ինտերնատներում բողոքարկման արդյունավետ մեխանիզմի հասանելիությունը:

Բողոքարկման հնարավորությունը կնպաստի տուն-ինտերնատներում խնամվող մարդկանց իրավունքների ապահովմանը<sup>697</sup>:

Նախորդ տարիներին և 2019 թվականին տուն-ինտերնատներ իրականացված մշտադիտարկման այցերի ընթացքում արտաքին աշխարհի հետ կապի տեսանկյունից արձանագրվել են խնդիրներ, որոնք վերաբերել են հեռախոսակապի բացակայությանը կամ հեռախոսակապից օգտվելու իրավունքի սահմանափակմանը, զբաղվածության ապահովմանը և բողոքարկման ընթացակարգերի բացակայությանը:

Օրինակ՝ 2019 թվականին «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ իրականացված այցի ընթացքում արձանագրվել է, որ հաստատության բոլոր մասնաշենքերում բացակայել են հեռախոսներ:

Նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ տուն-ինտերնատների խնամյալները լիարժեք օգտվում են հեռախոսակապով իրենց հարազատների հետ խոսելու հնարավորությունից, իսկ այն անձինք, ովքեր ունեն հաղորդակցման կամ հեռախոսից օգտվելու դժվարություններ՝ խնամող անձնակազմի օգնությամբ: Ըստ նախարարության պարզաբանման՝ տուն-ինտերնատներում խնամվող անձանց մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության իրավունքը պատշաճ իրացնելու նպատակով խնամվողների հետ տարվում են հետևողական բացատրական աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետները՝ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, ունենում են առանձնագրույցներ նրանց հետ: Շահառուների և նրանց հարազատների առանձնագրույցներն ապահովվելու համար նախատեսվել են հատուկ սենյակներ:

Տուն-ինտերնատների ներկայացրած տեղեկատվության համաձայն՝

1. «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում խնամվողների զբաղվածության ապահովման նպատակով, շահառուների նախասիրություններից ելնելով, կազմակերպվել են ձեռագործ աշխատանքների, փայտամշակման, նկարչության, պարի, երգի, ասմունքի, նարդու, շախմատի, շաշկու խմբակներ: Հաստատությունում իրականացվում է նաև աշխատանքային թերապիա, որի շրջանակներում խնամյալներն զբաղվում են այգեգործությամբ, ծաղկաբուծությամբ, մասնակցում են տարածքի բարեկարգման աշխատանքներին: Խնամյալների առողջ ապրելակերպին աջակցելու նպատակով իրականացվում է բուժական ֆիզկուլտուրա, կազմակերպվում են տարբեր սպորտային միջոցառումներ: Բացվել է «Հիշողության ակումբ» կրթական համալիր ծրագիրը, որը ներառում է ինչպես կրթական, այնպես էլ սպորտային միջոցառումների ապահովումը: Տուն-ինտերնատում աջակցային ցանցի օգնությամբ խնամյալները մասնակցում են տարբեր միջոցառումների: Կազմակերպվում են տարաբնույթ գրական-մշակութային միջոցառումներ, այցելություններ թանգարաններ և մշակութային այլ օջախներ: Տուն-ինտերնատն ունի թատերական խմբակ, որը պարբերաբար ներկայացումներ է բեմադրում մշակութային տարբեր օջախներում և տարբեր միջոցառումների շրջանակներում,

2. «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, ինչի արդյունքում այցելություններ են կազմակերպվում ոչ միայն մշակութային օջախներ, այլև ժամանցային կենտրոններ: Շնորհալի տարեցների համար ապահովվել են հարմարավետ պայմաններ ստեղծագործելու համար,

3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում 2019 թվականին կազմակերպվել է 55 միջոցառում:

<sup>697</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 692-694:

Այսպիսով, պետք է նշել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում բացակայում են բողոքարկման արդյունավետ մեխանիզմները:

4.5 Միջանձնային հարաբերությունները, խնամյալների հանդեպ բնությունը և վատ վերաբերմունքը, եկամուտների պաշտպանված չլինելը

2018 թվականի հաղորդմամբ Պաշտպանը բարձրացրել էր խնդիրներ՝ կապված տուն-ինտերնատներում խնամյալների միջև տարաձայնություն և վեճեր առաջանալու, բնության դեպքերի, դրանց կանխարգելման ու լուծման, կենսաթոշակների վճարման հետ<sup>698</sup>:

Նշված խնդիրներն արձանագրվել են նաև 2019 թվականին:

Ըստ Նախարարության հայտնած տեղեկությունների՝ տուն-ինտերնատների խնամողների միջև ծագող ներանձնային տարաձայնությունների առկայության դեպքում հաստատության համապատասխան մասնագետները՝ սոցիալական աշխատողները, հոգեբանները իրականացնում են սոցիալ-հոգեբանական, բացատրական աշխատանքներ տարաձայնությունները հարթելու նպատակով: Խնամվողների միջև ծագած տարաձայնությունները հիմնականում կրում են կենցաղային բնույթ: Վեճերի և տարաձայնությունների քանակն էականորեն կրճատվել է:

Տուն-ինտերնատներ իրականացրած մշտադիտարկման այցերի արդյունքները, ինչպես նաև խնամյալների Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունները վկայում են, որ խնամյալների միջև բնության, վատ վերաբերմունքի պատճառ է վարքագծի կանոնների բացակայությունը:

Հարկ է նկատել, որ վարքագծի կանոնների բացակայության հետ կապված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նշել է, որ 2019 թվականի ընթացքում տուն-ինտերնատների կանոնակարգերը չեն վերանայվել, քանի որ դրա անհրաժեշտությունը չի եղել:

Մինչդեռ, վարքագծի կանոնների առկայության կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ տուն-ինտերնատներ կատարված այցերի շրջանակներում բազմիցս արձանագրվել են խնդիրներ, ինչպես նաև խնամյալներից Պաշտպանի աշխատակազմ ստացվել են բողոքներ խնամյալների միջև կամ տուն-ինտերնատների աշխատողների և խնամյալների նկատմամբ անհարգալից և ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելու, խնամյալների անդորրը խանգարելու, վարչակազմի՝ խնամյալների նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու, խնամյալներին «պատժելու» համար այլ խնամյալներին օգտագործելու, անհաշտ խնամյալներին նույն սենյակում բնակեցնելու, նույն սենյակում մի խնամյալի ծխախոտ օգտագործելու արդյունքում մյուս խնամյալին անհանգստություն պատճառելու, հիգիենայի և անվտանգության կանոններին չհետևելու, խնամյալներին տրամադրվող իրերը և խնամքի պարագաները վաճառելու և այլնի կապակցությամբ:

Օրինակ՝ «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ կատարված այցի շրջանակներում պարզվել է, որ Հաստատությունում խնամյալները համապատասխան մասնաշենքերում տեղավորվում են ըստ կարիքի և ինքնասպասարկման կարողությունների գնահատման: Մինչդեռ, նշված հաստատություն կատարված այցի շրջանակներում խնամյալներից մեկը բողոքել է իր հետ բնակվող մյուս խնամյալից, քանի որ վերջինս ծխախոտ է օգտագործում:

<sup>698</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 694-699:

Ներքին կանոնակարգի, այդպիսով նաև վարքագծի կանոնների բացակայության պարագայում հստակ և որոշակիորեն սահմանված չեն նաև դրանց չհետևելու կամ հակառակը՝ դրանք պահպանելու արդյունքում առաջացող հետևանքները՝ խրախուսանքի, նկատողության տարբեր ձևերի, ընդհուպ մինչև հաստատություններից հեռացման կարգն ու պայմանները:

Վարքագծի կանոնների առկայության անհրաժեշտության կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն: Մասնավորապես, ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ֆրանսիայի Հանրապետության, Մեծ Բրիտանիայի տուն-ինտերնատներում սահմանված են վարքագծի կանոններ, ինչպես տուն-ինտերնատների խնամյալների, այնպես էլ աշխատակիցների համար:

Օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետությունում «Սուրբ Էլիսաբեթի» անվան տարեցների տուն-ինտերնատի կանոնակարգով սահմանված են ինչպես հաստատության խնամյալների վարքագծի կանոններ (սահմանափակումներ և պարտականություններ, օրինակ՝ վարքագծի կանոնների համաձայն՝ չի թույլատրվում հաստատության սենյակներում ծխախոտ օգտագործել), այնպես էլ վարքագծի կանոնները չպահպանելու արդյունքում կիրառվող պատժի տեսակները (քննություն, նկատողություն, նախազգուշացում, հաստատությունից ժամանակավոր հեռացում, հեռացում)<sup>699</sup>:

Մեծ Բրիտանիայի տուն-ինտերնատներից մեկի կանոնակարգով սահմանված են նաև հաստատության աշխատակիցների վարքագծի կանոնները: Հաստատությունը իր աշխատակիցների համար սահմանելով վարքագծի կանոններ՝ պարտավորվում է ապահովել, որ իր խնամյալների նկատմամբ տարվող խնամքը լինի պրոֆեսիոնալ և նրանց գործողությունները բխեն խնամյալների լավագույն շահից<sup>700</sup>:

2018 թվականի հաղորդմամբ Պաշտպանը բարձրացրել էր նաև տուն-ինտերնատներում տարեցների եկամուտների պաշտպանության խնդիր: Խնդիրը, մասնավորապես, արձանագրվել էր «Վանաձորի տարեցներ տուն» հիմնադրամ կատարված այցի շրջանակներում: Պարզվել էր, որ հաստատությունը խնամյալի հետ կնքում է նվիրաբերության պայմանագիր, որով խնամյալը պարտավորվում է իր կենսաթոշակի որոշակի մասը (չափը որոշում է հաստատության ղեկավարությունը) նվիրաբերել հաստատությանը<sup>701</sup>:

Ըստ այդմ՝ Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդմամբ առաջարկել էր սահմանել վերահսկողական համապատասխան մեխանիզմներ խնամքի ոչ պետական հաստատություններում կենսաթոշակների վճարման վերաբերյալ: Հարկ է նկատել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամում արձանագրված այդ խնդրահարույց պրակտիկան շարունակվել է նաև 2019 թվականի ընթացքում, չեն ներդրվել համապատասխան վերահսկողական մեխանիզմներ:

#### 4.6 Տուն-ինտերնատների աշխատակազմը

Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս նշել է, որ մարդու իրավունքների պաշտպանությունը համակողմանի մոտեցում պահանջող գործընթաց է: Այդպիսով կարևորվել է նաև այն կազմակերպությունների աշխատակիցների վիճակն ու իրավունքների

<sup>699</sup> Հասանելի է <https://www.stelisa.com/uploads/file110331020300.pdf> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>700</sup> Հասանելի է <https://www.hillhouse-nursinghome.co.uk/1911/> հղումով, 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>701</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 697-699:

պաշտպանությունը, ովքեր տարեց անձանց տրամադրում են բժշկական օգնություն և սպասարկում կամ ապահովում են նրանց խնամքը:

Տարեցների խնամքն իրականացնող կազմակերպությունների՝ աշխատակիցների՝ բարենպաստ պայմաններում աշխատելու հնարավորության ապահովման խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում է այն հաշվառմամբ, որ մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է համակարգային մոտեցում և ներառում է նաև աշխատակիցների պաշտպանությունը:

Աշխատանքային պայմանների բարելավման կարևոր նախապայմաններից է տուն-ինտերնատներում թափուր հաստիքների համալրումը, դրանց ավելացումը, որը կհանգեցնի աշխատանքային զբաղվածության աստիճանի նվազեցմանը և կնպաստի նրանց՝ աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարմանը և արդյունավետության բարձրացմանը:

Ուստի, անհրաժեշտ է արձանագրել, որ Հաստատության աշխատակիցների համար պատշաճ սոցիալական երաշխիքների, ինչպես նաև աշխատանքի անհրաժեշտ պայմանների ապահովումն ունեն առանցքային նշանակություն:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ թափուր հաստիքները համալրելու, ինչպես նաև աշխատանքներում անհրաժեշտ մասնագետներ և բավարար չափով անձնակազմ ներգրավելու նպատակով տուն-ինտերնատներում թափուր հաստիք առաջանալու դեպքում, այդ մասին սահմանված կարգով տեղեկացնում են զբաղվածության տարածքային բաժիններին, որոնց տրամադրում են մանրամասն տեղեկատվություն նշված պաշտոնին ներկայացվող պահանջների, պայմանների և աշխատավարձի չափի մասին: Զբաղվածության տարածքային կենտրոններից ուղեգրված այն մասնագետները, որոնց տվյալները համապատասխանում են պաշտոնի անձնագրով սահմանված պահանջներին՝ անցնում են աշխատանքի: Նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականին տուն-ինտերնատների և Նախարարության միջև կայացած քննարկումների, ինչպես նաև աշխատողների կարիքների գնահատման արդյունքում 2020 թվականին 30-50 տոկոսով բարձրացվել են աշխատակիցների աշխատավարձերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. ձեռնարկել հետևողական քայլեր տուն-ինտերնատներում նախկինում արձանագրված և ներկա խնդիրները լուծելու ուղղությամբ,
2. տուն-ինտերնատներում սահմանել վարքագծի կանոններ, առկայության դեպքում՝ վերանայել դրանք,
3. իրականացնել տուն-ինտերնատներում բնակվող մարդկանց, տուն-ինտերնատների աշխատակիցների իրավունքների ապահովման հարցում շարունակական բարեփոխումներ:



Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է:

Հայաստանի Հանրապետության 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան<sup>702</sup> վավերացրել է 1993 թվականի հոկտեմբերի 4-ին, իսկ դրան կից 1967 թվականի Արձանագրությունը<sup>703</sup> նույն թվականի հուլիսի 6-ին:

1999 թվականին ընդունվել է «Փախստականների մասին» ՀՀ օրենքը: Չնայած օրենքի ընդունումը բավականին առաջադիմական քայլ էր, այնուամենայնիվ, դրանում առկա էին դրույթներ, որոնք հետագա մշակման ու կատարելագործման կարիք ունեին:

Ուստի, 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունվեց «Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենքը<sup>704</sup>, որն ուժի մեջ մտավ 2009 թվականի հունվարի 24-ին: Օրենքը համարվում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքներ ապահովման ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը:

## 1. Ընդհանուր տեղեկություն փախստականների և ապաստանի վերաբերյալ

Առաջին խոշոր ներհոսքը Հայաստան եղել է Ադրբեջանից 1988-ից 1992 թվականների ընթացքում: Միգրացիոն ծառայության պաշտոնական տվյալների համաձայն՝ ազգությամբ հայերի թիվն Ադրբեջանի ԽՍՀ խոշոր քաղաքներում կազմել է առավել քան 360,000<sup>705</sup>:

Խոշոր ներհոսքը եղել է Սիրիայի Արաբական Հանրապետությունից, որը պատճառ հանդիսացավ այդ տարածքում տարիներ շարունակ բնակվող ազգությամբ հայերի համար ապաստան հայցելու Հայաստանի Հանրապետությունում: ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնական տվյալների համաձայն՝ 2011 թվականից ի վեր ավելի քան 5.5 միլիոն մարդ լքել է Սիրիան, իսկ 6.6 միլիոն սիրիացիներ համարվում են ներքին տեղահանված անձինք<sup>706</sup>:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության<sup>707</sup> վիճակագրական տվյալները վկայում են, որ 2010-ից մինչև 2018 թվականը Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ են ստացել Սիրիայի Արաբական Հանրապետության 882 քաղաքացի<sup>708</sup>:

2016 թվականի ապրիլին Արցախից Հայաստանի Հանրապետություն հարկադրաբար տեղափոխվեցին և ապաստան ստացան այնտեղ բնակվող մեծ թվով ազգությամբ հայեր: Նշվածին անդրադարձ է կատարվել նաև Արտահերթ զեկույցում: Մասնավորապես, ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի տվյալներին համապատասխան՝ ապրիլյան ռազմական գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն են փնտրել 2247 անձ (մոտավորապես 681 ընտանիք), որոնցից 1429-ը (411 ընտանիք) օգտվել է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված դրամական աջակցությունից: ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական տվյալների համաձայն՝ 2016թ-ի ապրիլին Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման

<sup>702</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Կոնվենցիա:

<sup>703</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Արձանագրություն:

<sup>704</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Օրենք:

<sup>705</sup> Տե՛ս Միգրացիոն ծառայության պաշտոնական կայքէջը, [http://www.smsmta.am/?menu\\_id=93](http://www.smsmta.am/?menu_id=93), հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

<sup>706</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական կայքէջը, <http://www.unhcr.org/syria-emergency.html>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:


<sup>707</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Միգրացիոն ծառայություն:

<sup>708</sup> Տե՛ս Միգրացիոն ծառայության պաշտոնական կայքէջը, [http://www.smsmta.am/?menu\\_id=3](http://www.smsmta.am/?menu_id=3), հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

արդյունքում տեղահանված անձանցից մոտ 600-ը մնում են Հայաստանում և ընդգրկված են աջակցության և ինտեգրման հիմնական ծրագրերում<sup>709</sup>:


Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 248 անձ, փախստականի կարգավիճակ է ստացել 116-ը, իսկ մերժում ստացած ապաստանի հայցերի թիվը կազմել է 42: Ապաստան հայցող անձից 120-ի դիմումները կարճվել կամ կասեցվել են:

**Վիճակագրական տվյալներ 2019 թվականի ընթացքում ապաստանի դիմումների արդյունքների վերաբերյալ**



Ստորև ներկայացվում են վիճակագրական տվյալներ նաև հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող և փախստականի կարգավիճակ ստացած անձանց վերաբերյալ ըստ երկրների՝

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ  
2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ  
ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**





■ Իրան ■ Սիրիա ■ Կուբա ■ Իրաք ■ Թուրքիա ■ Պակիստան ■ Այլ

<sup>709</sup> Տե՛ս ՄԱԿ Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքէջը, <http://www.un.am/hy/agency/UNHCR>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, ապաստան հայցող անձանց մեծամասնությունը եղել են Իրանից՝ ընդհանուր թվի 43%-ը: Մեծ է եղել նաև Սիրիայից և Իրաքից Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների թիվը՝ 15-ական տոկոս: Նշված երկրներից զատ, փախստականի կարգավիճակ են ստացել նաև Լիբանանի, Ադրբեջանի, Հնդկաստանի, Ռուսաստանի և այլ երկրների քաղաքացիներ:

Ըստ Միգրացիոն ծառայության ներկայացրած վիճակագրական տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացածները մեծամասամբ եղել են Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ 45 անձ: Թվաքանակով երկրորդը Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացիներն են՝ 31 անձ:

Ստորև ներկայացվում են նաև վիճակագրական տվյալներ 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող 248 անձանց սեռի և տարիքի վերաբերյալ՝



Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց սեռի վերաբերյալ վիճակագրական տվյալները վկայում են, որ քննարկվող ժամանակահատվածում արական սեռի ապաստան հայցողների թիվը երեք անգամ ավելի է եղել, քան իգական սեռի ապաստան հայցողներինը: 2019 թվականի ընթացքում ապաստան հայցող անչափահասների թիվն ավելի քան չորս անգամ պակաս է եղել չափահասների թվից:

## 2. Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղությունները

2019 թվականի ընթացքում շարունակվել են փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման ոլորտում համապարփակ և բազմակողմանի աշխատանքները: Դրանք ներառել են ինչպես օրենսդրության, այնպես էլ գործնական դաշտի ուսումնասիրություն և հատուկ հաստատությունների մշտադիտարկում: Վերլուծության համար հիմք է հանդիսացել նաև Մարդու իրավունքների պաշտպանին<sup>710</sup> հասցեագրված

<sup>710</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Պաշտպան:

անհատական բողոքները: Այցեր են իրականացվել հատուկ հաստատություններ, ներառյալ՝ պետական սահմանի անցման կետեր և Միգրացիոն ծառայության «Հատուկ կացարան» ՊՈԱԿ<sup>711</sup>:

Ոլորտում Պաշտպանի աշխատանքի մյուս կարևոր ուղղությունը իրավասու պետական մարմինների կարողությունների զարգացումն է: Այս առումով կարևոր են դրանց մասնագիտական գիտելիքների պարբերական զարգացումները: ՄԱԿ ՓԳՀ-ի և Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ փոխգործակցությամբ իրականացվել են ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի<sup>712</sup> վերապատրաստումներ: Ներկայացվել են ապաստանի ընթացակարգն ու սկզբունքները, ինչպես նաև ոլորտում Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններն ու կատարած աշխատանքը:

Մյուս կարևոր ուղղությունը փախստականների և ապաստան հայցող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացումն է: Նրանք, տեղահանվելով իրենց բնակավայրերից և հայտնվելով, որոշ դեպքերում, անձանթ միջավայրում, տեղյակ չեն լինում իրենց իրավունքներից և պարտականություններից: Ավելին, հաճախ փախստականներն ու ապաստան հայցող անձինք տեղյակ չեն լինում նաև իրենց կարգավիճակից բխող իրավունքների մասին:

Նշվածի հաշվառմամբ, Պաշտպանը շարունակաբար իրականացնում է քննարկվող խումբ անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Դեռևս 2017 թվականին յոթ լեզվով (հայերեն, անգլերեն, ռուսերեն, արաբերեն, պարսկերեն, ֆրանսերեն և իսպաներեն) տպագրվել են փախստականների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ, որոնք Պաշտպանի աշխատակազմի և գործընկեր կառույցների միջոցով մինչ այժմ բաժանվում են նրանց: Պետական սահմանի անցման կետերում տեղադրված են ՀՀ ապաստանի ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվական պաստառները նշված յոթ լեզվով: Հաշվետու տարվա ընթացքում նույն լեզուներով տպագրվել են նաև Պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ և պաստառներ, որոնք տարածվելու են փակ հաստատություններում:

Թվարկված աշխատանքներից գատ, Պաշտպանի աշխատակազմն անցկացրել է իրազեկման բարձրացմանն ուղղված հանդիպումներ փախստականների և ապաստան հայցող անձանց, ինչպես նաև ուսանողների և լրագրողների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են ինչպես Պաշտպանի լիազորություններն ու աշխատանքի հիմնական ուղղությունները, այնպես էլ հարկադիր տեղահանված անձանց իրավունքները:

### 3. 2019 թվականի հիմնական զարգացումները

Ուսումնասիրությունները վկայում են, որ Պաշտպանի «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում և տարեկան հաղորդումներում ներկայացված խնդիրների մի մասը լուծվել են: Օրենսդրական և գործնական այլ զարգացումներ նույնպես արձանագրվել են:

Դրական տեղաշարժ է արձանագրվել Ադրբեջանից բռնագաղթած ազգությամբ հայերի բնակարանային խնդրի ապահովման հարցում: «Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին» ՀՀ

<sup>711</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Հատուկ կացարան:

<sup>712</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Սահմանապահ զորքեր:

կառավարության թիվ 1666-Ն որոշման ընդունմամբ նախատեսվում է լուծել Երևան քաղաքի 5 վարչական շրջաններում բնակվող ՀՀ կառավարության կողմից 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված առաջնահերթ ծրագրի շահառու հանդիսացող 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած ժամանակավոր կացարաններում բնակվող 112 ընտանիքների խնդիրը: Միգրացիոն ծառայության տրամադրած տեղեկության համաձայն՝ հետագայում անդրադարձ կկատարվի նաև այլ վարչական շրջաններում և մարզերում բնակվող առաջնահերթ ծրագրի շահառուների բնակարանային հարցին:

Միգրացիոն ծառայության տրամադրած տեղեկության համաձայն՝ 2019 թվականին նախաձեռնվել են ՀՀ-ում գտնվող հարկադիր տեղահանված անձանց ինտեգրման և Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման մեկ միասնական ռազմավարության մշակման աշխատանքներ: Այդ նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ և կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ:

Լուծում ստացած խնդիրներն առնչվել են նաև հատուկ հաստատություններում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովմանը: Օրինակ՝ ՀՀ պետական սահմանի որոշ անցման կետերում գործող՝ ապաստան հայցող անձանց հատուկ կացարաններում լրացվել է անհրաժեշտ գույքը:

Հատուկ հաստատության սանիտարահիգիենիկ պայմաններին առնչվող որոշ խնդիրներ ստացել են լուծումներ: Մասնավորապես, սանհանգույցներն ու լոգարանները վերանորոգվել են: Ավելին, Միգրացիոն ծառայության տրամադրած տեղեկության համաձայն՝ ձեռնարկվել են քայլեր նոր Հատուկ կացարան կառուցելու ուղղությամբ:

Ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցումը նախատեսվում է սկսել 2020 թվականին և շարունակել մինչև 2021 թվականը: Այն կառուցվելու է Աբովյան քաղաքում, և նախատեսվում է կացարանում տեղավորել մոտ 100 ապաստան հայցող:

Պաշտպանի ներկայացրած առաջարկությունն առ այն, որ անհրաժեշտ է մշակել և ընդունել տեսազանգի ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները նույնպես կատարվել է: 2019 թվականի դրությամբ արդեն բոլոր քրեակատարողական հիմնարկներում տեղադրվել են տեսազանգն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ:

Արձանագրված այլ խնդիրներ ևս 2019 թվականի ընթացքում նույնպես լուծում են ստացել:

Չնայած քննարկվող տարվա և դրան նախորդող տարիների ընթացքում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող օրենսդրության զարգացումներին, ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական լուծումներ:

#### 4. 2019 թվականին արձանագրված հիմնական խնդիրները

Հաշվետու տարում շարունակվել է փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման ոլորտի ուսումնասիրությունը: Այն ներառել է ինչպես վերաբերելի կարգավորումները, այնպես էլ պրակտիկան: Ստորև ներկայացվում են արձանագրված խնդիրները:

##### 4.1 Մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման օրենսդրական արգելքի բացակայությունը

Օրենքի 9-րդ հոդված 1-ին մասով սահմանվում է չվերադարձելիության սկզբունքը, ըստ որի արգելվում է փախստականին որևէ կերպ վերադարձնել այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական,

կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների»:՝

Նշվածի հետ կապված անընդունելի է մեջբերված պատճառների թվում կյանքի իրավունքին առնչվող բացառության բացակայությունը: Մասնավորապես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:՝ Նման մոտեցումը համահունչ է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ 2-րդ մասի հոդվածի կարգավորումներին<sup>713</sup>:

Ուստի, անհրաժեշտ է Օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող համապատասխան հոդվածում ներառել նաև մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման արգելքը:

#### 4.2 Փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենսդրությամբ հատուկ կարգավիճակի բացակայություն

Օրենքը, սահմանելով փախստականի հասկացությունը 6-րդ հոդվածի 1-ին մասով, արտացոլել է Կոնվենցիայի և Արձանագրության համապատասխան դրույթով ամրագրված հասկացությունը, այն է՝ «Փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ»:՝ Նույն մասի 2-րդ կետը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը լքել է իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Օրենքը պաշտպանության որևէ այլ միջոց չի նախատեսում, և օրենսդրությունն ընդհանրապես չի սահմանում լրացուցիչ պաշտպանություն տրամադրելու կարգ, որը հնարավորություն կտար չվերադարձնելու սկզբունքով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձին նման պաշտպանություն և համապատասխան կարգավիճակ տալ՝ ապահովելով նրա անվտանգությունը Հայաստանի Հանրապետությունում: Հատկանշական է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Ոստիկանությունը

<sup>713</sup>Տե՛ս Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, [http://www.europarl.europa.eu/charter/pdf/text\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf):

պատասխանատվություն է կրում ապաստանի տրամադրումը մերժելու մասին վերջնական որոշում ստացած օտարերկրյա քաղաքացու կացության կարգավիճակի հարցը ՀՀ օրենսդրությանը համապատասխան լուծելու համար: Սա հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ ապաստանի տրամադրման մերժում ստացած անձի վերադարձն անհնարին է՝ պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի նորմերով:

Այս առումով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի<sup>714</sup> վճիռներում, օրինակ, սահմանված է պետության հայեցողությունը հիմնավոր պատճառների առկայության դեպքում անձին թույլ չտալու մուտք գործել երկիր կամ արտաքսելու հարցում: Այնուամենայնիվ, դատարանը կարևորել է նաև դրա շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի արգելքի ապահովումը, որն ունի բացարձակ բնույթ: Մասնավորապես, Մայիդոն ընդդեմ Նիդեռլանդների գործով 2005 թվականի հուլիսի 5-ի վճռի 46-րդ կետի համաձայն՝ պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և պայմանագրային պարտավորությունները, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը (...): Այնուամենայնիվ, պետության կողմից արտաքսումը կարող է առաջացնել խնդիրներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելքի լույսի ներքո և պատասխանատվություն տվյալ պետության համար, եթե առկա են լուրջ հիմքեր, որ արտաքսվելու դեպքում անձը կարող է ենթարկվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի<sup>715</sup>:

Ավելին, եթե Կոնվենցիան նախատեսում է որոշ բացառություններ չվերադարձելիության սկզբունքից, ապա Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ:»<sup>716</sup>:

Գործնականում այս խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական հիմքերի բացակայությունը տվյալ անձանց, իրավական պաշտպանվածության առումով, թողնում է անապահով վիճակում: Միջազգային իրավաբանությունը նման պարագայում սահմանում է լրացուցիչ պաշտպանության տրամադրման հնարավորություն: Օրինակ՝ Վրաստանում, բացի փախստականի կարգավիճակից, տրամադրվում է նաև մարդասիրական կարգավիճակ, որը ժամանակավորապես տրվում է այն անձանց, ովքեր չեն համապատասխանում փախստականի կարգավիճակի համար սահմանված չափանիշներին, սակայն ստիպված լքել են իրենց երկիրը բռնության, արտաքին ագրեսիայի, բռնազավթման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների և հասարակական կարգի զանգվածային խախտումների հետևանքով, ինչպես նաև այն անձանց, որոնք հարևան երկրներից են եկել և ապաստան են փնտրում բնական աղետներից<sup>717</sup>:

<sup>714</sup>Այսուհետ՝ Եվրոպական դատարան:

<sup>715</sup>Տե՛ս 2005 թվականի հուլիսի 5-ի Մայիդոն ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի (զանգատ թիվ 2345/02) վճռի 46-րդ կետը:

Տե՛ս 2014թ. նոյեմբերի 18-ի Մ.Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (զանգատ թիվ 52589/13) 52-րդ կետը:

<sup>716</sup>Տե՛ս 1984 թվականի դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, <http://www.ohchr.org/documents/professionalinterest/cat.pdf>:

<sup>717</sup>Տե՛ս «Փախստականի և մարդասիրական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի 4-րդ հոդվածը, <http://mra.gov.ge/res/docs/2014022416564743748.pdf>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Պաշտպանության նման մեխանիզմ ամրագրված է նաև Պորտուգալիայի օրենսդրությամբ: Մասնավորապես, սուբսիդիար պաշտպանություն է նախատեսված այն ապաստան հայցողների համար, ում նկատմամբ կիրառելի չեն փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշները, սակայն վերջիններս չեն կարող վերադառնալ իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ զգալի վնաս կրելու վտանգի պատճառով<sup>718</sup>: Նշվածը հնարավորություն է տալիս չվերադարձնելու իրավունքից օգտվող անձանց կոնկրետ իրավական կարգավիճակով բնակվել օտար երկրում և ստանալ միջազգային պաշտպանություն իր՝ ոչ արդյունավետ ազգային պաշտպանության փոխարեն:

Այս առումով հարկ է ընդգծել, որ նշված խնդրի լուծման ուղղությամբ պետությունը ձեռնարկել է որոշ քայլեր: Մասնավորապես, ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և շրջանառվել է «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այն նախատեսում է կարճատև կացության կարգավիճակի տրամադրում ի թիվս այլոց, նաև բոլոր այն օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր չեն կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նրանք կենթարկվեն դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների կատանան կարճաժամկետ կացության կարգավիճակ:

Նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ներկայացրել է առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերում են քոլոր դեպքերում վերը նշված խումբ անձանց կացության կարգավիճակ տրամադրելուն, օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից կարգավիճակի ճանաչման վերաբերյալ դիմում ներկայացնելու ընթացակարգին և այլ հարցերին:

Այնուամենայնիվ, անդրադառնալով գործող օրենսդրական կարգավորումներին և հաշվի առնելով բարձրացված խնդրի արդիականությունը, անհրաժեշտ է ամրագրել անձանց նոր իրավական կարգավիճակ, որը հնարավորություն կտա լրացուցիչ պաշտպանություն սահմանել փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձնելու սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

#### 4.3 Ապաստանի հայցեր ընդունող պետական մարմիններում հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանության բացակայություն

Օրենքի՝ հարցազրույցի անցկացմանն առնչվող 51-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ «Եթե ապաստան հայցողը չունի հայերենի բավարար իմացություն, ապա միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նրան տրամադրում է անվճար թարգմանիչ (...):»: Հետևաբար, Միգրացիոն ծառայությունը օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է հարցազրույցի ընթացքում ապահովել անվճար թարգմանություն: Հատկանշական է նաև, որ Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Միգրացիոն ծառայությունից զատ հարցազրույց ապաստան հայցողի հետ անցկացնելու լիազորություն ունեն նաև Սահմանապահ զորքերը, Ոստիկանությունը և ազատագրկման վայրի վարչակազմը: Դրա հետ միասին ապաստանի հայց ընդունող նշված մարմինների լիազորությունները սահմանող կարգավորումներում բացակայում են թարգմանչական ծառայությունների մատուցման պարտավորությունների մասին դրույթները:

<sup>718</sup>Տե՛ս «Փախստականների / Ապաստանի մասին» Պորտուգալիայի 27/2008 օրենքի 7-րդ հոդվածը, <http://www.refworld.org/docid/48e5c13c8.html>, հասանելի է 2020 թվականի մարտի 31-ի դրությամբ::



Ստացվում է, որ ապաստանի հայց ընդունող մարմինները պարտավոր են տրամադրել անհրաժեշտ տեղեկություն և վարել հարցազրույցներ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնել ցանկացող անձանց հետ, այնուամենայնիվ, նման դեպքերում անձի՝ անվճար թարգմանչի ծառայություններից օգտվելու հնարավորությունն օրենսդրական ամրագրում չի ստացել:

Հետևաբար, անհրաժեշտ է Օրենքում լրացում կատարելու միջոցով ապաստանի հայցեր ընդունող բոլոր պետական մարմինների համար նախատեսել հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանչական ծառայություններ տրամադրելու պարտավորություն:

#### 4.4 Կացարանում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը նախատեսված չէ օրենքով

«Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2016 թվականի օգոստոսի 10-ի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հրամանի հավելված հանդիսացող՝ Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը սահմանում է. «Բնակության ներքին կարգապահական կանոնները 2 և ավելի անգամ խախտելու դեպքում՝ բնակչին տրված «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրը, Կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, կարող է ուժը կորցրած ճանաչվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միզրացիոն ծառայության կողմից»:

Հատկանշական է, որ Միզրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Հատուկ կացարան բնակվող 27 ապաստան հայցողի ուղեգրի անվավեր է ճանաչվել, որից 25-ի դեպքում հիմքը եղել է 7 և ավելի օր բացակայությունը կացարանից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»: Քանի որ Միզրացիոն ծառայության՝ «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ընդունվում է վարչական մարմնի կողմից հանրային իրավունքի բնագավառում, ունի արտաքին ներգործություն և ուղղված է ապաստան հայցողի իրավունքները վերացնելուն՝ այն համարվում է վարչական ակտ: Ուստի, հարցն անհրաժեշտ է քննարկել վարչարարության հիմունքների և վարչական վարույթի շրջանակներում:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված 3-րդ մասով ամրագրված են բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելու համար սահմանված հիմքերը: Նույն մասի բ) կետի համաձայն՝ բարենպաստ վարչական ակտը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե դա թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ: Նշվածից ակնհայտ է դառնում, որ եթե վերապահում նախատեսված չէ, ապա նման սահմանափակում ամրագրող նորմը, որով բարենպաստ վարչական ակտը ուժը կորցրած կճանաչվի, անհրաժեշտ է սահմանել օրենքով:

Նշվածը թույլ է տալիս եզրահանգել, որ անհրաժեշտ է Միզրացիոն ծառայության՝ ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը նախատեսել օրենքով և

ուժը կորցրած ճանաչել Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը:

4.5 Ապաստան հայցողի լսված լինելու իրավունքի բացակայությունը «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու վարույթի ընթացքում

Ինչպես ներկայացվեց վերը նշված կետում, «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչում է Միգրացիոն ծառայությունը՝ Կենտրոնի տնօրենի առաջարկությամբ՝ բնակության ներքին կարգապահական կանոնները 2 և ավելի անգամ խախտելու հիմքով: Հիմնավորվեց նաև, որ ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու գործընթացը պետք է քննարկվի վարչարարության հիմունքների և վարչական վարույթի շրջանակներում:

Այսպես, «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ N 1440-Ն որոշման 12.1-րդ կետի համաձայն՝ Կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած ապաստան հայցողը կենտրոնի տնօրենի կողմից գրավոր նախազգուշացվում է խախտման հետևանքների վերաբերյալ: Բնակության ներքին կարգապահական կանոնների երկու և ավելի անգամ խախտման դեպքում՝ ապաստան հայցողին տրված ուղեգիրը, կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, ուժը կորցրած է ճանաչվում լիազոր մարմնի կողմից:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի վերը քննարկված հրամանի հավելվածի 43-րդ կետի համաձայն՝ (...) բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած բնակիչը Կենտրոնի տնօրենի կողմից բանավոր/գրավոր նախազգուշացվում է խախտման հետևանքների վերաբերյալ: Հետևաբար, տնօրենի 2 և ավելի բանավոր/գրավոր նախազգուշացում կարող է հանգեցնել ուղեգրից զրկման:

Նախ, առկա է ակնհայտ հակասություն նշված կարգավորումների միջև: Դրանցից առաջինը նախատեսում է, որ նախազգուշացումը կարող է ընդունվել բացառապես գրավոր, իսկ երկրորդը՝ նաև բանավոր:

Ավելին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Այնուամենայնիվ, հրամանի 42-րդ կետով նախատեսվում է, որ տնօրենի պահանջով ներկայանալ և տալ բանավոր/գրավոր բացատրություն՝ բնակության ներքին կարգապահական կանոնների խախտման վերաբերյալ: Ստացվում է, որ ըստ նշված կարգավորման, անձը հնարավորություն կարող է ունենալ տալ բացատրություն բացառապես տնօրենի պահանջի առկայության դեպքում:

Հետևաբար, անհրաժեշտ է վերացնել բնակչի՝ բացատրություն տալու համար տնօրենի պահանջի պարտադիր առկայության պայմանը և նախատեսել գրավոր եղանակով վարչական ակտն ընդունելու՝ նախազգուշացնելու պարտադիրություն, ինչպես նաև դրա ընդունման դեպքում անձի լսված լինելու իրավունքը:

4.6 Ապաստան հայցողի բողոքարկելու իրավունքի բացակայությունը «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու վարույթի ընթացքում

Ինչպես ներկայացվեց վերը նշված կետերում, «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու գործընթացը պետք է քննարկվի վարչարարության հիմունքների և վարչական վարույթի շրջանակներում:

«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ N 1440-Ն որոշման 12.2-րդ կետի համաձայն՝ ապաստան հայցողին տրված ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին ապաստան հայցողը գրավոր ծանուցվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին տեղեկանալու օրվանից սկսած եռօրյա ժամկետում ապաստան հայցողն ազատում է զբաղեցրած սենյակը:

Որոշումը չի նախատեսում կարգավորում առ այն, որ անձն ունի վարչական ակտը վարչական կամ դատական կարգով բողոքարկելու իրավունք: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ): Նույն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Նշված կարգավորումների համադրված մեկնաբանմամբ ստացվում է, որ եթե անձը որոշի բողոքարկել ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին վարչական ակտը, նա ամեն դեպքում ստիպված է լինելու ազատել կացարանում իրեն հատկացված սենյակը: Բացակայում է նաև բողոքարկման բավարարման դեպքում անձի ուղեգիրը վերականգնելու պարտադիրությունը:

Ավելին, այս դեպքում նշված անձինք չեն համարվի «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ N 951-Ն որոշման շահառու և չեն ստանա դրանով նախատեսված դրամական օգնությունը:

Ուստի, անհրաժեշտ է նախատեսել «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու դեպքում անձի բողոքարկման իրավունքը:

#### 4.7 Հատուկ կացարանի գերբնակեցումը և սանիտարահիգիենիկ պայմանները

Օրենքի՝ ապաստան հայցող անձանց կենսաապահովման պայմանների վերաբերյալ 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որն այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է:

Ավելին, Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ (...) լիազոր մարմին դիմած ապաստան հայցողներին և (...) նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է (...) Ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց տրամադրվում են սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ (այսուհետ՝ կենսաապահովման պայմաններ): Տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նշել, որ Օրենքում կիրառվող «Ժամանակավոր տեղավորման կենտրոն» եզրույթը վերաբերում է Հատուկ կացարանին:

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների՝ Կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշմամբ հաստատված կարգով: Նշված կարգի 6-րդ կետով սահմանվում է, որ ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելու մասին ապաստան հայցողների դիմումի հիման վրա լիազոր մարմնի կողմից նրանց տրվում է ուղեգիր:

Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Հատուկ կացարան բնակեցվել է ընդհանուր առմամբ 64 ապաստան հայցող:

Հատուկ կացարանում ապաստան հայցող անձանց բնակության և կենսաապահովման պայմաններն, ինչպես նաև նրանց իրավունքների ապահովման վերաբերյալ այլ հարցեր ուսումնասիրելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչները 2019 թվականի ընթացքում իրականացրել են պարբերական այցեր: Դրանց նպատակն է եղել նաև ուսումնասիրել բնակության պայմանները, ինչպես նաև նախկինում ներկայացված առաջարկությունների կատարման մակարդակը: Հատկանշական է, որ այցերին ներգրավվել են Հատուկ կացարանում բնակվող անձանց հետ շփման համար անհրաժեշտ, համապատասխան լեզուների թարգմանիչներ: Այցերի ընթացքում, բացի մշտադիտարկումից, առանձնազրույցներ են տեղի ունեցել բնակիչների հետ:

Այցերի ընթացքում պարզ է դարձել, որ նախկինում ներկայացված որոշ առաջարկություններ մասնակի կամ ամբողջական լուծվել են: Այնուամենայնիվ, այցի ընթացքում արձանագրվել են այլ խնդիրներ, իսկ նախկինում հայտնաբերված որոշ խնդիրներ շարունակում են արդիական մնալ: Խնդրահարույց է, օրինակ՝ Հատուկ կացարանում սենյակների սահմանափակ լինելու և գերբնակեցման հարցը: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում տեղի ունեցած բոլոր այցերի ժամանակ Հատուկ կացարանում արձանագրվել է գերբնակեցում:

Ավելին, Միգրացիոն ծառայության տրամադրած պարզաբանման համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Հատուկ կացարանում ապաստան հայցողների նվազագույն քանակը կազմել է 41 բնակիչ (օգոստոս ամսին), իսկ առավելագույնը՝ 59 բնակիչ (փետրվար ամսին): Ստացվում է, որ առավելագույնը 50 ապաստան հայցողի համար նախատեսված կացարանում ձմռանը բնակվել է 59 բնակիչ, ինչը չափազանց խնդրահարույց է:

Հաջորդ հարցը վերաբերում է կացարանի բնակիչների սանիտարահիգիենիկ պայմաններին: Նախկինում արձանագրված՝ Կացարանում սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ խնդիրները հիմնականում վերաբերում են ընդհանուր օգտագործման խոհանոցին: 2018 թվականին կատարված այցերը վկայում են, որ դրանք հիմնականում լուծվել են՝ խոհանոցը վերանորոգվել է, իրականացվել է ախտահանում հատուկ հեղուկով և տեղադրվել են նոր սառնարաններ և գազօջախ: Ավելին, 2019 թվականին վերանորոգվել են սանհանգույցները: Այնուամենայնիվ, հաշվետու տարվա ընթացքում կատարված այցերի ընթացքում արձանագրվել է խոհանոցի պայմանների վատթարացում, իսկ լվացքատան առաստաղի ծեփամածիկը թափված է եղել:

Ապաստան հայցող անձանց կացարաններում սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված հարցին անդրադարձ է կատարել նաև Եվրոպական դատարանը: Իր՝ Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ միգրանտների համար նախատեսված հատուկ կացարաններում առկա գերծանրաբեռնվածությունը, ինչպես նաև ոչ բավարար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը կարող է հանգեցնել պետության կողմից

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված խոշտանգումների արգելման սկզբունքի խախտման<sup>719</sup>:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նորից արձանագրել, որ այս խնդրի լուծման ուղղությամբ պետության ձեռնարկվող քայլերը: Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցումը կսկսվի 2020 թվականին և կշարունակվի մինչև 2021 թվականը: Այն կառուցվելու է Աբովյան քաղաքում: Կացարանում նախատեսվում է տեղավորել մոտ 100 ապաստան հայցող:

Ուստի, հաշվի առնելով ապաստան հայցող անձանց թվի աճը, անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր հնարավորինս շուտ Հատուկ կացարանի նոր շենք կառուցելու ուղղությամբ:

Կացարանում, մասնավորապես խոհանոցում և լվացքատանը, անհրաժեշտ է ապահովել պատշաճ պայմաններ:

#### 4.8 Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում տրամադրվող դրամական օգնությանն առնչվող խնդիրներ

Պետությունը Հատուկ կացարանում տեղավորելու, այդ թվում՝ գերբնակեցման հիմքով, անհնարինության դեպքերում կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին պետք է տրամադրի դրամական օգնություն: ՀՀ կառավարության «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 951-Ն որոշման 2-րդ կետով սահմանվում է, որ ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին տրամադրվող դրամական օգնության չափը սահմանել՝ դիմումատուին՝ 20.000 դրամ, իսկ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ:

Այս մոտեցումն ինքնին գովելի է, հատկապես հաշվի առնելով վերջին ժամանակաշրջանում ապաստանի հայցերի թվի և, հետևաբար, կացարանի կարիք ունեցող անձանց աճը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ գրեթե միշտ կացարանում առկա գերբնակեցում: Այնուամենայնիվ, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ նշված գումարը հաճախ չի բավականացնում ապաստան հայցող դիմումատուին և նրա ընտանիքի անդամներին հոգալ իրենց նվազագույն կարիքները: Ընդ որում, դրանց մեջ է մտնում նաև բնակարանի վարձը:

Ավելին, դիմումների քննարկումը վկայում է, որ արձանագրվել են դեպքեր, երբ Հատուկ կացարանում տեղավորելու անհնարինության պատճառով կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողին չի տրամադրվել դրամական օգնություն՝ նախատեսված ծավալով և ժամանակին:

Միգրացիոն ծառայության տրամադրած պարզաբանման համաձայն՝ 2019 թվականի ընթացքում Հատուկ կացարանում տեղերի բացակայության, անհնարինության պատճառով չի տեղավորվել 38 ապաստան հայցող: Անհնարինության հիմքով Հատուկ կացարանում չտեղավորված, կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներից 19-ը դրամական օգնություն չեն ստացել՝ քանի որ այդ

<sup>719</sup>Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 222-րդ կետը:

նպատակով ՀՀ պետական բյուջեից Միգրացիոն ծառայությանը տրամադրված ֆինանսական միջոցները սպառված են եղել:



Ստացվում է, որ դրամական օգնություն են ստացել ապաստան հայցող անձանց ճիշտ կեսը, ինչը չափազանց խնդրահարույց է:

Հատուկ կացարանում չբնակվող անձանց նվազագույն կենսաապահովման պայմանների բավարարման նպատակով անհրաժեշտ է մեծացնել տրամադրվող ֆինանսական աջակցության չափը, իսկ նախատեսված չափով դրամական օգնությունը տրամադրել ժամանակին:

#### 4.9 Կրոնի հիմքով հատուկ սննդի բացակայություն

Արդիական է նաև կրոնի կամ ազգության հիմքով ապաստան հայցող անձանց հատուկ սնունդ չհատկացնելու հարցը: Մասնավորապես, Հատուկ կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 19-րդ կետի համաձայն՝ Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին կենտրոնի տնօրինության կողմից տրամադրվում են կենսաապահովման պայմաններ՝ սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ: Նույն կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին օրական հատկացվող սննդամթերքի չափաքանակները և նրանց անկողնային պարագաներով ապահովումը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման համապատասխանաբար NN 2 և 4 հավելվածներով սահմանված նվազագույն չափորոշիչներով:

Քննարկվող հարցի կապակցությամբ խնդիրն առնչվում է առաջին հերթին սննդին և ապաստան հայցողներին տրամադրվող սննդատեսակներին: Մասնավորապես, առանց հաշվի առնելու Կացարանում բնակվող ապաստան հայցողների կրոնական ու ազգային պատկանելությունը և դրանով պայմանավորված որոշակի սննդատեսակներից օգտվելու անհնարինությունը՝ ապաստան հայցողներին տրամադրվում է նույն տեսակի սնունդ: Այնուամենայնիվ, գործնականում այս խնդիրը փորձ է արվում լուծել՝ քննարկելով սննդատեսակը բոլոր բնակիչների հետ: Չնայած դրան, այս դեպքում նույնպես խնդիրը շարունակվում է մնալ այդպիսին:

Այս խնդիրը բարձրացվել է նաև Կացարանում բնակվող ապաստան հայցողների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում: Մասնավորապես, վերջիններս նշել են, որ իրենց կրոնական առանձնահատկություններով պայմանավորված հաճախ ունենում են խնդիրներ մատուցվող սննդատեսակների հետ կապված:

Հատուկ հաստատություններում պահվող ապաստան հայցող անձանց տրամադրվող սննդի չափորոշիչներ և առանձնահատկություններ են սահմանվել նաև ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող

չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցում: Մասնավորապես, փաստաթղթի 48-րդ կետի (xi) պարբերությունը սահմանում է, որ «Կալանավորվածներին պետք է տրամադրվի սննդարար արժեք ունեցող՝ տարիքին, առողջական վիճակին և մշակութային/կրոնական առանձնահատկություններին համապատասխան սնունդ: Հղի կանանց և կերակրող մայրերի համար պետք է ապահովվի համապատասխան սննդակարգ: Մանուկ պատրաստման և ընդունման տարածքները պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ տարրական պահանջներին:»:<sup>720</sup>

Ուստի, անհրաժեշտ է Կացարանում ապաստան հայցողների սննդի տրամադրման հիմքում դնել յուրաքանչյուրի ազգային և կրոնական պատկանելության առանձնահատկությունները, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:

#### 4.10 Պետական սահմանի անցման կետերի հատուկ կացարանների պայմանները

Սույն զեկույցի մշակման նպատակով այցեր են իրականացվել նաև ՀՀ պետական սահմանի անցման կետերի հատուկ կացարաններ: Ուսումնասիրվել են ապաստան հայցողների իրավունքները, հատուկ կացարանների պայմանները և այլն: Արձանագրվել է, որ կացարանների պայմանները և տեղերում ծառայություն իրականացնող սահմանապահ զորքերի՝ ապաստանի ընթացակարգի վերաբերյալ գիտելիքները մեծապես բավարար են: Ինչպես արդեն նշվել է՝ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են վերջինների՝ ապաստանի ընթացակարգի վերաբերյալ վերապատրաստումներին՝ որպես դասընթացավար:

Համաձայն Օրենքի 35-րդ հոդվածի՝ Սահմանապահ զորքերը ՀՀ պետական սահմանի անցման կետերում ստուգում են ապաստան հայցողների փաստաթղթերը, որի արդյունքում օրինական մուտք գործածներին տեղյակ են պահում Միգրացիոն ծառայություն գնալու անհրաժեշտության մասին՝ իրազեկելով այդ մարմնի գտնվելու վայրի և ապաստանի դիմում ներկայացնելու կարգի մասին, իսկ անօրինական մուտք գործածներին՝ գրանցում համապատասխան գրանցամատյանում և տեղավորում սահմանային անցման կետում տեղակայված հատուկ կացարանում:

2019 թվականին այդ կացարաններ կատարված այցերը և ուսումնասիրությունները հնարավորություն են տվել արձանագրել, որ նախկինում արված առաջարկությունները մի մասը կատարվել է: Հատուկ կացարանները համալրվել են կահույքով և կենցաղային իրերով:

Այնուամենայնիվ, շարունակում է արդիական մնալ պետական սահմանի «Շիրակ» անցման կետում հատուկ կացարանի բացակայության հարցը: Ինչպես տեղում ծառայություն իրականացնող սահմանապահ զորքերի, այնպես էլ այնտեղ բնակվող ապաստան հայցող անձանց համար խնդրահարույց է նաև պետական սահմանի «Զվարթնոց» անցման կետի դիրքը (թռիչքուղու հարևանությամբ):

Ուստի, անհրաժեշտ է լուծել պետական սահմանի անցման կետերի հատուկ կացարանների պայմաններին առնչվող վերը ներկայացված խնդիրները:

#### 4.11 Պետական սահմանի անցման կետերում թարգմանության բացակայություն

Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով, Սահմանապահ զորքերը, ի թիվս այլ պետական մարմինների, հարցազրույց են անցկացնում ապաստան հայցողի հետ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ պաշտպանություն գտնելու ցանկության, անձի և ընտանիքի բոլոր ուղեկցող անդամների մասին անձնական տվյալների, ինչպես նաև ծագման

<sup>720</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի (xi) պարբերությունը, <https://www.unhcr.org/publications/legal/505b10ee9/unhcr-detention-guidelines.html>:

երկրից դեպի Հայաստանի Հանրապետություն ուղևորության նկարագրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար: Ապաստան հայցողների հետ հարցազրույցների պատշաճ իրականացումը գործնականում ապահովելու, ինչպես նաև հատուկ կացարաններում բնակվող ապաստան հայցողների իրավունքներն ու պարտականությունները հասկանալի լեզվով իրենց լիարժեք ներկայացնելու նպատակով հնարավորինս անհրաժեշտ է ապահովել թարգմանություն օտար լեզուներով:

Պետական մարմինների կողմից ապաստան հայցող անձանց հետ իրավահարաբերությունների ընթացքում պատշաճ թարգմանություն ապահովելու առնչությամբ Եվրոպական դատարանը Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում, արձանագրել է, որ ապաստանի ընթացակարգի խնդիրներից են նաև տրամադրված տեղեկությունների ոչ հստակ լինելը, պետական մարմինների և ապաստան հայցողի միջև հաղորդակցության ոչ պատշաճ համակարգը, ինչը պայմանավորված է նաև թարգմանիչների պակասով<sup>721</sup>:

ՀՀ պետական սահմանի անցման կետերում և մասնավորապես, հատուկ կացարաններում թարգմանության ապահովումը կարևոր է ինչպես ապաստան հայցող անձանց հասկանալի լեզվով տեղեկացված լինելու և այլ իրավունքների պատշաճ ապահովման, այնպես էլ Սահմանապահ գորքերի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման տեսանկյունից: Կարևոր է նաև Սահմանապահ գորքերի ծառայողների համար կազմակերպել օտար լեզուների դասընթացներ:

Ուստի, անհրաժեշտ է ՀՀ պետական սահմանի անցման կետերում հնարավորինս ապահովել օտար լեզուներով թարգմանության հնարավորություն՝ ապաստան հայցող բոլոր անձանց համար հասկանալի լեզվով իրենց իրավունքներն ու պարտականությունները ներկայացնելու, համապատասխան հարցազրույցներ անցկացնելու, ինչպես նաև Սահմանապահ գորքերի ծառայողների՝ հատուկ կացարաններում գտնվող անձանց հետ առավել լիարժեք շփումն իրականացնելու համար:

#### 4.12 Նույնականացման քարտ չունենալու պատճառով փախստականների՝ սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու անհնարինություն

Պաշտպանին հասցեագրած բողոքներով փախստականի կարգավիճակ ունեցող մի խումբ անձինք բարձրացրել են նույնականացման քարտ ձեռք բերելու հնարավորության բացակայության խնդիրը: Ավելին, բողոքներից մեկի համաձայն՝ փախստականի կարգավիճակ ունեցող անձը սոցիալական փաթեթի շահառու է, սակայն չի կարողանում օգտվել սոցիալական փաթեթի ծառայություններից՝ նույնականացման քարտ չունենալու պատճառով: Անձը նույնականացման քարտ ստանալու նպատակով դիմել է համապատասխան լիազոր մարմին, սակայն արդյունքի չի հասել:

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1691-Ն որոշման<sup>722</sup> 4.7-րդ կետով սահմանված է, որ սկսած 2018 թվականի սեպտեմբերի 1-ից սոցիալական փաթեթի ծառայություններից (այդ թվում՝ առողջապահական փաթեթի ծառայությունները) օգտվելու և (կամ) սոցիալական փաթեթի

<sup>721</sup>Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 301-րդ կետը:

<sup>722</sup> Այսուհետ՝ սույն բաժնում Որոշում:



հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու համար պարտադիր նախապայման է հանդիսանում նույնականացման քարտի առկայությունը:

Նույն որոշման 4.8-րդ կետի համաձայն՝ որոշման 4.7-րդ կետում նշված պայմանը չի տարածվում օտարերկրյա քաղաքացիների վրա, իսկ փախստականի կարգավիճակ ունեցող սոցիալական փաթեթի շահառուների վրա նույն որոշման 4.7-րդ կետում նշված պայմանը տարածվում է 2019 թվականի փետրվարի 1-ից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված Պաշտպանի գրությամբ նախարարությունը սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու մասով խնդրին տվել է ժամանակավոր լուծում: Մասնավորապես, Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 1304-Ն որոշման (ուժի մեջ է մտել 10.10.2019 թվականից) 1-ին կետի 5-րդ ենթակետով փոփոխություն է կատարվել Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման 4.8-րդ կետում, որով փախստականի կարգավիճակ ունեցող անձանց՝ սոցիալական փաթեթից օգտվելու համար նույնականացման քարտի առկայության պարտադիր պահանջը 2019 թվականի փետրվարի 1-ի փոխարեն սահմանվել է 2021 թվականի փետրվարի 1-ից: Ստացվում է, որ խնդրին տրվել է ժամանակավոր լուծում: Այնուամենայնիվ, ողջունելով խնդրի լուծմանն ուղղված քայլերը, անհրաժեշտ է դրան տալ առավել համապարփակ մոտեցում:

Այսպես, փախստականների նույնականացման քարտի տրամադրման գործընթացը սահմանված է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով: Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փախստականի նույնականացման քարտը փախստականի անձը և Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հաստատող փաստաթուղթ է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ոստիկանությունը փախստականներին, սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, տրամադրում է փախստականի նույնականացման քարտ: Մինչև 16 տարեկան փախստականին փախստականի նույնականացման քարտը տրամադրվում է երեք տարի, իսկ 16 տարին լրացած փախստականին՝ 10 տարի վավերականության ժամկետով:

Չնայած փախստականների նույնականացման քարտի տրամադրման գործընթացն օրենքով կարգավորված լինելուն, փախստականի կարգավիճակ ունեցող անձանց ներկայում նույնականացման քարտ չի տրամադրվում: Ոստիկանության պարզաբանման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց համար նույնականացման քարտ ձեռք բերելու նպատակով նախաձեռնվել է մրցութային գործընթաց, որը դեռևս ընթացքի մեջ է: Ավելին, նշված տեխնիկական խնդրի լուծման համար Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը հստակ ժամկետներ չի հստակեցնում:

Ստացվում է, որ տեխնիկական խնդրի պատճառով Հայաստանում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք տևական ժամանակ է զրկված են նշված անձը հաստատող փաստաթուղթը ձեռք բերելու հնարավորությունից: Ավելին, դրա արդյունքում նրանք զրկվում են նաև նույնականացման քարտի միջոցով իրենց օգտին որոշակի գործողություններ իրականացնելու, մասնավորապես՝ սոցիալական աջակցություն ստանալու հնարավորությունից:

Նշվածը խնդրահարույց է նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների տեսանկյունից: Այսպես, «Փախստականների կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե փախստականի կողմից որևէ իրավունքից օգտվելը, որպես կանոն, պահանջում է օտարերկրյա պետության իշխանությունների աջակցություն, որին նա դիմել չի կարող, ապա պետությունը, որի տարածքում նա բնակվում է, հնարավորություն է տալիս, որպեսզի այդ աջակցությունը տրամադրվի իր իսկ

իշխանությունների կամ միջազգային մարմնի կողմից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «1-ին կետում նշված մարմինը կամ իշխանությունները փախստականներին տրամադրում են այն փաստաթղթերը կամ վկայագրերը, կամ իրենց վերահսկողությամբ ապահովում են դրանց տրամադրումը, որոնք, որպես կանոն, կտրամադրվեն օտարերկրացիներին իրենց ներպետական իշխանությունների կողմից կամ միջոցով:

Հարկ է արձանագրել, որ ոչ միայն օրենսդրական թերի կարգավորումները կամ համապատասխան կարգավորումների բացակայությունը, այլ տեխնիկական միջոցների և հնարավորությունների բացակայությունը ևս չպետք է անձի իրավունքների խախտման պատճառ դառնան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հնարավոր սեղմ ժամկետում կարգավորել փախստականի կարգավիճակ ունեցող անձանց նույնականացման քարտի տրամադրմանը խոչընդոտող տեխնիկական բնույթի խնդիրները:

#### 4.13 Ադրբեջանից բռնագաղթած ազգությամբ հայերի բնակարանային ապահովման խնդիր

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են 1988 թվականին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու, տարատեսակ վատթար պայմաններով ժամանակավոր կացարաններում բնակվելու՝ (հանրակացարաններ, հյուրանոցներ, տնակներ և այլն), սակայն մինչ օրս պետության կողմից բնակարաններով չապահովվելու հարցի վերաբերյալ բողոքներ:

1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստականների հիմնախնդիրներից իր սրությամբ կարևորվում է նրանց բնակարանային ապահովության խնդիրը: Այդ խնդրի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչությունը մշակել էր «1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված անձանց բնակարանային ապահովության ծրագիր», որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 14-ի N 56 արձանագրությամբ հավանության էր արժանացել: Այդ ծրագիրը վերաբերում է Ադրբեջանից բռնի տեղահանված ու Հայաստանում ապաստանած, մշտական օթևան չունեցող բոլոր փախստականների բնակարանային հիմնախնդրին՝ նախատեսվելով, որ ծրագրի իրականացման արդյունքում հանրապետությունում հիմնովին կլուծվի այն: Սակայն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մեծածավալ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով այն չի իրականացվել:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2003 թվականի սեպտեմբերի 10-ի N 430-Ս որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության պետի ղեկավարությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը մշակել է «1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիր», որը ՀՀ Կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 747 որոշման ընդունմամբ հաստատվել է: Դեռևս նախորդ տարի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման (ներկայիս տարածքային կառավարման և ենթակառուցվածքների) նախարարության ներկայացրած տվյալների համաձայն՝ ծրագրի իրականացման նպատակով՝ սկսած 2005 թվականից ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են համապատասխան գումարներ, որոնցով 1065 ընտանիք ստացել են բնակարանի գնման վկայագրեր, որոնցից 718-ն իրացրել են դրանք՝ ձեռք բերելով բնակարաններ Երևան քաղաքում և մարզերում: Սակայն 2009 թվականից հետո ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեում միջոցներ չեն

նախատեսվել, չնայած որ Միգրացիոն ծառայությունը յուրաքանչյուր տարի ներկայացրել է համապատասխան գումարի հայտը:

Ադրբեջանից բռնագաղթած մեր հայրենակիցների իրավունքների ապահովման և Հայաստանում նրանց ինտեգրման տեսանկյունից հիմնական խնդիրներից է հենց բնակարանային ապահովման հարցը: Նրանց մի մասը մինչ օրս բնակվում է ժամանակավոր կացարաններում, որոնց շատերի պայմաններն անբավարար են: Դրանք գտնվում են տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ և վերջին ժամանակաշրջանում այդ կացարանների տեխնիկական վիճակի պահպանության և սպասարկման համար անհրաժեշտ գումարներ չեն հատկացվել, ինչի հետևանքով դրանք հայտնվել են տեխնիկապես անմխիթար վիճակում, չեն բավարարում սանիտարահիգիենիկ նվազագույն նորմերի պահանջներին: Այդ շենքերի մի մասը գտնվում է վթարային վիճակում և ապրելու համար խիստ վտանգավոր է:

Այս առումով հարկ է ընդգծել, որ Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանավորվող պետություններն իրենց օրենքներին և սահմանադրություններին համապատասխան գործադրում են իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու նման փախստականների բնակեցումը: Այսինքն, դրական է գնահատվում պետությունների կողմից հնարավորությունների սահմաններում փախստականների բնակարանային ապահովումը:

Այսպես, ՀՀ կառավարությունը դեռևս 2011 թվականի նոյեմբերի 10-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1593-Ն որոշումը, որում բարձրացվել են 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականներին՝ հասարակության մեջ ինտեգրման քաղաքականության իրականացման շարունակականության ապահովման հիմնախնդիրները, որոնց իրականացման կապակցությամբ 2012-2016 թվականներին նախատեսվել է իրականացնել համապատասխան միջոցառումներ և գործողություններ (օրինակ՝ Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների հայթայթման շուրջ բանակցությունների վարում միջազգային դոնոր կազմակերպությունների հետ, Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխան՝ փախստական ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում և այլն): Այսպիսով, ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ նախատեսված միջոցառումները և գործողությունները ծրագրվել էր իրականացնել 2012-2016 թվականներին, սակայն մինչ օրս բավարար քայլեր չեն ձեռնարկվել դրանք իրականացնելու ուղղությամբ և փախստականների բնակապահովման և այլ սոցիալական խնդիրները դեռևս մնում են չլուծված և արդիական:

2019 թվականին նշված համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պարզաբանվել է, որ 2019 թվականի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին» թիվ 1666-Ն որոշումը, որն ուղղված է լուծելու Երևան քաղաքի 5 վարչական շրջաններում բնակվող ՀՀ կառավարության կողմից 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված առաջնահերթ ծրագրի շահառու հանդիսացող 1988-1992 թվականներին

Ադրբեջանից բռնագաղթած ժամանակավոր կացարաններում բնակվող 112 ընտանիքների խնդիրը:

Նշվել է նաև, որ նախատեսվում է հետագայում անդրադարձ կատարել այլ վարչական շրջաններում և մարզերում բնակվող առաջնահերթ ծրագրի շահառուների բնակարանային հարցին: Մասնավորապես, Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ առաջնահերթ ծրագրի շահառուների թիվը կազմում է 895 ընտանիք, որոնցից 641-ը՝ Երևան քաղաքում և 254-ը՝ մարզերում: 2020-2021 թվականների ընթացքում նախատեսվում է տրամադրել բնակարանների գնման վկայագրեր 549 շահառու ընտանիքներին, այդ թվում՝ 2020 թվականին՝ 297 ընտանիքի, իսկ 2021 թվականին՝ 252 ընտանիքի:

Իհարկե ողջունելի է, որ փախստականների բնակապահովման առաջնահերթ ծրագրի իրականացման շրջանակներում երկար տարիների դադարից հետո պետությունը միջոցներ է նախատեսել Ադրբեջանից բռնագաղթած ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների բնակարանային ապահովման խնդիրը լուծելու համար, սակայն Պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են, որ դեռևս համակարգային առումով խնդիրը շարունակում է չլուծված մնալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է առաջնահերթ ծրագրի շրջանակներում՝ ՀՀ պետբյուջեում նախատեսել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված ծրագրի շահառու փախստականների բնակապահովման խնդիրը լուծելու համար՝ ապահովելով նրանց ինտեգրման այս կարևոր բաղադրիչի իրականացումը:

